This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

Usage guidelines

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

+ *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.

+ *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.

+ *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.

+ *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

About Google Book Search

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at http://books.google.com/

A 985,179

THE UNIVERSITY OF MICHIGAN · LIBRARIES

CATALOGUE

DES ANCIENNES TRADUCTIONS ARMÉNIENNES

(SIÈCLES IV—XIII)

ՀԱՅԿԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ
ՆԱԽՆԵԱՑ

Matenadaran haykakan...
487

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

ՆԱԽՆԵԱՑ

783 p.

(Դար Դ — ԺԳ)

ԳՐԱԴԱՐԱՆ
[illegible]
Կարգաթիւ 307

ՎԵՆԵՏԻԿ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ

1889

UNIVERSITY OF MICHIGAN LIBRARIES

Grad
EREN
537
BUHR

Հնգետասան երկար դարերէ 'ի վեր՝ Հայաստան աշխարհ ու եկեղեցի, ինչպէս իր փառաց ու մեծութեան, սանկ տառապանաց ու արտասուաց անշքութեան օրերուն, հաւասար զգածմամբ երախտապարտ սրտից ու մեծարանաց՝ կը յիշէ իրաւացի պարծանօք երկու անուանք, անցելոյն ու ապագային մէջ իր անկապուտ փառաց և սփոփանաց երկնապարգեւ ու աստուածահրաշ առիթք, որ մահուան ու մոռացութեան աշխարհի մէջ՝ անմահանուն պայծառացան սրբափայլ ու սրբակրօն վարուք, աստուածանուէր և ազգասէր եռանդեամբ, ու իրենց բազմապատիկ արդեամբք՝ ճշմարիտ բարերարք երևցան այն հայրենեաց, ուր «մահկանացու ծնեալ՝ անմահական թողին յիշատակ»։

Հա՞րկ է արդեօք երկրորդել մեր հայրասէր և հայրենասէր ընթերցողաց՝ այս երկու անմոռանալի յիշատակաց արժանաւոր անուանքն, զմեծին Սահակայ Պարթեւի և Մեսրովպայ վար-

դապետին, որ տուին մեզ գիր և դպրութեան
ոսկեղէն դար մը, և մեր հայրենեաց՝ սասա-
նական բռնութեան տագնապի ու արհաւրաց
օրերուն, վերահաս և անկանգնելի կրօնական
կործանմանէ մը փրկիչք եղան, պարգևելով ըղ-
թարգմանութիւն աստուածաշունչ մատենից,
և զանհամեմատ գիրս ազգային եկեղեցական
պաշտամանց։ Իրենց վաստակասէր ջանիւք՝ հե-
ռաւոր դարերու սերունդքս, հոգւոյն և սըր-
տից որդիք, իրենցմէ սորվեցանք լսել մեր բնիկ
լեզուով՝ զձայն և զխրատ երկնահրաւէր պա-
տուիրանաց, ընդունելի ընել մեր աղաչանքն
ու պաղատանք առ Աստուած, և հաճոյական
մեր արտասուքն ու հառաչանք։

Այսպիսի առատաբաշխ պարգևաց մեծու-
թիւնն արժանապէս ըմբռնողք՝ լաւագոյն ևս
կ'իմանան վրանին ծանրացող ոչ ինչ նուազ փո-
խարինութեան պարտք մը։ Ուստի և իրաւամբք
անդստին 'ի ժամանակակցացն՝ երախտագիտ
և վարդապետասէր աշակերտք, սիրալի գրչով
և լեզուով փութացան աւանդել մեզ անոնց ան-
արատ վարքն ու քաղաքավարութիւն, պատ-
մեցին և հռչակեցին զարդիւնս՝ որոց առաջին
վայելողքն ըլլալու բաղդն ունեցան։ Այս յօ-
ժարափոյթ և յօժարակամ հարկ երախտաճա-
նաչ սիրոյ՝ դարէ դար յանձնուելով հասաւ
մինչև առ մեզ. և դեռ վերջի տարիներու և
ամսոց մէջ ալ ուրախութեամբ կը լսենք և կը
կարդանք թէ ինչպէս Աշտիշատայ և Օշականի
հին ու սիրալիր յիշատակք կ'արթըննան 'ի հայ-
րենիս և անկէ դուրս գտնուող ազգայնոց սրտե-

րու մէջ. և իմաստասէր ու աստուածասէր սիրտք և բարերար ձեռքեր՝ աւերակաց կոյտերու մէջ կը փնտռեն, ու կը յաջողին գտնել իրենց գրեթէ մոռացեալ ու անչքացեալ հանգըստարան՝ անմահութեան պատուանդան գերեզմաններն, ու իրարու վրայ թաւալեալ կործան անկեալ քարինքն ժողվելով, տաճարք և խորանք կը բարձրանան 'ի պատիւ Նոցա և 'ի փառս։

Պատիւ և փառք իրենց անմահախառն յիշատակին, և գովութիւն այդպիսի ազնուախոհ մտածութեանց։

*
* *

Սակայն սրբոցն Սահակայ և Մեսրովպայ՝ մեծագոյն արդիւնք մ'ալ այն ընտիր, քաջուսումն, երկարոգի աշակերտաց խումբն է, զորս հայրենեաց և ազգի օգտակար ընելու համար՝ նուիրեցին իրենց ամէն ճիգն ու աշխատութիւն, կրթեցին իմաստութեամբ, գրութեամբ և ուսմանց ջանիւք, քաջալերեցին ու խրախուսեցին իրենց աննման ու նախանձելի օրինակաւ, և եղան ժառանգք իրենց մեծ ոգւոյն և սրտին։ Ասոնք են արդէն մեզի ծանօթ և սիրելի Թարգմանիչք, որ երկնից և երկրաւոր հայրենեաց հոգեհրատ ու անծախական սիրով և հրով վառուած, մոռցան աշխարհի ամէն վայելք, պատրանք և հրապոյր, իրենց կեանքն, քիրտն ու աշխատութիւն բոլորանուէր ընծայելով Աստուծոյ և ազգին։ Այս երկու մեծ և սիրալի նուիրմանց արդիւնք և

արգասիք են, ինչ որ այսօր մեր տոհմային մատենագրութեան ամենամեծ ճոխութիւնն ու փառքն է. այնչափ մտաւոր երկք եւ թարգմանութիւնք որ կը զարմացընեն, յաճախելով մեր պարծանքը նաեւ օտար բանասիրութեան առջեւ։

Դժբաղդաբար խիստ կարճատեւ եղաւ իրենց բազմարդիւն գրաւորական գործունէութեան ժամանակը։ Սակայն հետեւորդ դարուց մէջ ալ պակաս չեն նախանձաւորքն եւ հետեւողք, թէպէտ ոչ միշտ նոյն ոսկեղէն գրչովն եւ հմտութեամբ, այլ ոչ նուազ եռանդեամբ եւ ջանիւք։ Քաղաքական իշխանութիւն մերթ ընդ մերթ կորսընցուց իր նախկին փայլն եւ զօրութիւն, եւ այն պատճառաւ որչափ ալ թարգմանչաց ձեռքով վառուած ուսումնասիրական գովելի փոյթ՝ աղօտացաւ ու երբեմն նաեւ անչքացաւ, այլ հայկական դպրութիւնք չիջելափառ չանհետացան. եւ հինգերորդին ոչ անարժան երեւցան ութերորդէն մինչեւ երեքտասաներորդ դարք, յորս սիրուեցաւ ու մեծարուեցաւ փառաւոր անցեալ մը. եւ գովելի ջանքեր ալ եղան անոր արժանաւորք երեւնալու, նորանոր ճոխութիւններ աւելցընելով՝ի գանձարանս հայկական բանասիրութեան։

Ազգերնուս մասնաւոր բարեմասնութեանց մէկն ալ՝ օտար լեզուաց մէջ յառաջադէմ յաջողակութիւնն է։ Թէպէտ եւ մեր հայրենեացաշխարհագրական դիրքին անհրաժեշտ հարկ մը կամ բռնադատ հետեւանք ալ ենթադրուի, այլ անտարակուսելի է թէ սահմանակից ազգաց լեզուք՝ մեր բնիկ լեզուին յստակութեան նկատ-

մամբ ըրած մնասուն հետ, մեծագոյն ու բարե-
բար ազդեցութիւն մ'ալ ունեցած են հայ մատե-
նագրութեան վրայ։ Այսպէս եղած են ասորի,
յոյն, պարսիկ և արաբացի, և վերջին դարերու
մէջ լատին և գաղղիական լեզուք. յորոց ամե-
նէն ալ ունեցեր ենք, ժամանակաց բերմանցն
ու հանգամանաց համեմատ, այլևայլ թարգմա-
նութիւններ։ Համառօտ գրուածքիս վրայ ակ-
նարկ մը ձգողին՝ տարակոյս չի մնար այս խօս-
քին ստուգութեանը. կը տեսնէ թէ ինչպէս նախա-
պատուութիւնն՝ ասորական լեզուի տրուած է,
և որուն անմիջապէս յաջորդեր է յոյնն՝ իր ար-
տադրութեանց անհամեմատ առաւելութեամբ
թէ թուով և ազնուութեամբ և թէ փայլով։
Երբ արաբական արշաւանք և իշխանութիւն
մուտ կը գտնեն 'ի մեր աշխարհ, իրենց լեզուէն
ալ ունեցեր ենք քանի մը թարգմանութիւնք.
ինչպէս երբեմն նաև 'ի պարսից։ Խաչակրաց
յարևելս երևնալուն առթիւ՝ կը ծանօթանան
լատինն և գաղղիական, և յորոց այլևայլ փոխա-
դրութիւնք 'ի հայ։ Այսպէս յօտար մատենա-
գրութենէ 'ի փոխ առնուած գրեթէ տասն դա-
րուց երկք մթերեցան 'ի մերում մատենագրու-
թեան, և իրենց աղէտալի ու անդարման կորըս-
տեամբք ալ պատուական ու նախանձելի մթերք՝
որ իրաւացի գովութեամբ՝ արդարակշիռ զար-
մանաց գաղափար մը ընծայեր են եւրոպական
արդի բանասիրութեան՝ մեք նախնեաց ընտիր
ախորժակին, աշխատասէր ուսումնասիրու-
թեան, և արևմուից մատուցած անհամեմատ
ծառայութեան։

* * *

Վերջի երկու դարերու մէջ երեւցած եւրոպացի բանասիրաց ընդհանուր կարծիքն է այս, որոնք քիչ շատ պարապեցան հայկական ուսմամբ: Բայց մենք անոնցմէ մէկուն միայն հետեւեալ խօսքերը մէջ բերելով գոհ ըլլանք:

Վիլֆռուա, անցեալ դարու անուանի գաղղիացի բանասէրն, ու իր ժամանակին հայագիտաց պարագլուխ, սիրող մեր պատմութեանն ու դպրութեան, Փարիզու արքունական մատենադարանին մէջ գտնուած հայ գրչագրաց ցուցակին 'ի գլուխ՝ իրմէ գրուած ծանօթութեանց մէջ կը գրէր. « Չորեքտասաներորդ Լուդովիկեայ թագաւորութենէն ետքը, կարծես թէ իմաստուն աշխարհի համար՝ Նորագիւտ բան մը երեւնալու յոյսն ալ մնացած չէր. այդչափ հեռու տարբեր էր գրականական աշխարհակալութիւնը՝ այդ յաւերժական յիշատակաց արժանաւոր մեծ իշխանը: Սակայն անշուշտ նոր աշխարհ մը պիտի հանդիսացընէ մեր ընթերցողաց աչքին այս ցուցակն՝ որ ոչ միայն 'ի Գաղղիա, այլ թերեւս բովանդակ Եւրոպիոյ մէջ միակ ու ամենէն ճոխ հաւաքումն է հայկական գրչագրաց: Եւ սակայն կազմուելի մատենադարանի մը այս լոկ սկզբնաւորութիւն մ'է: Հոն կը գտնենք՝ ինչուան հիմա խիստ քիչ ծանօթ, բայց ուսումնասիրաց հետաքննին փութոյն ու ջիրոյն մեծապէս արժանաւոր գրուածներ. և որոնք առաւելագունին ծանօթութենէն

գրկուած ըլլալնուս վրայ՝ իրաւացի ցաւ կ՚ազդեն։ Այս ցաւը՝ կը մեղմանայ յուսով։ Ոչ ոք անգէտ է թէ Ֆլէօրի ծիրանաւորին առատամիտ փութոյն՝ պարտըկան է արքունի մատենադարանը իր այս նոր ճոխութիւնը. և դպրութեանց հետամուտ անձինք իրաւունք ունին յուսալու թէ իր եռանդուն ջանքը պիտի չդադրի 'ի յառաջադէմ զարգացումն հայկական ուսմանց։ Իրմէ ընտրուած երիտասարդ ազնուական մը՝ որդէն 'ի Կոստանդնուպոլիս հասած է, ուստի պիտի անցնի 'ի Հայաստան՝ հայերէն լեզուն սորվելու։ Բարեբաստիկ սկզբնաւորութիւն մը, առհաւատչեայ մեր վստահութեան թէ պետական այս մեծ պաշտօնէին տեսութիւնք և փափաք՝ պիտի շարունակեն ճոխացընել զմեզ, տալով ինչ որ դեռ ևս ցանկալի և յուսալի է մեզ յարևելից, մեր իմաստնագոյն թագաւորին երջանկաւէտ իշխանութեան օրովը։

« Եւ ո՞վ կրնար կարծել թէ այդ աւերեալ ու ամայի գաւառներէն, ուստի մերժուած են գիտութիւնք և մատեանք, կարելի պիտի ըլլար գտնել այդչափ ու այդպիսի պատուական գանձեր։ Ի՞նչ աւելի հետաքննելի և շահագրգիռ քան զպատմութիւն այդ հռչակապանծ թագաւորութեան որ մերթ յաղթական և մերթ ընկճուած, կը տարածէ կը ձգէ իր աշխարհակալութիւնը անդր քան զԵփրատ. կը տիրէ Ազուանից և Միջագետաց։ Հինգ դարուց միջոց, հինգերորդէն մինչև 'ի տասներորդն՝ կրօնական բաժանմանց և երկպառակ տարաձայնութեանց նշաւակ, կը հեծէ ընդ ծանր լծով Պարսից,

Ցունաց և Արաբաց. կը յաջողի, քիչ մը ատենուան համար, թօթափել ղսարխ գերութեան, և դառնալ 'ի ժառանգութիւն իր նախնեաց թագին. բայց այդ ինքնօրինութեան միջոցին ալ՝ աւելի իշխեալ քան իշխեցող, կը բռնադատուի ուր ուրեմն ամփոփել ծրագրել իր սահմաններն՝ մինչև յանձուկս աշխարհին կիլիկեցւոց։

«Այս փոփոխակի իրարու յաջորդող՝ կարճատեւ յաջողութեանց և երկարժամանակեայ աղիտից մէջ, Հայք չեն դադրիր մշակել զգիտութիւն և զդպրութիւն՝ անհաւատալի եռանդեամբ, մինչև 'ի նախանձ գրգռել զՅոյնս, որոց գերազանց կը հանդիսանային 'ի հմտութեան և յուսմնական յաջողութեան նոյն իսկ հինգերորդ դարու մէջ, եթէ արժան է հաւատս ընծայել իրենց ազգին ամենէն աւելի նշանաւոր և մեծարոյ մատենագրաց միոյն՝ Շնորհալւոյ, որ 'ի վիպասանականին կը վկայէ իր ազգակցաց համար՝

Մինչ զի Յունաց գերազանցեալ։

«Իրենց մեծանուն հայրապետք՝ ոչ միայն փառք եղան ազգին խորիմաստ խոհականութեամբ, այլ և գիտութեամբ, ճարտարխօսութեամբ, և յաճախ քերթողական հանճարով։ Թագաւորք և իշխանք՝ չհամարեցան թէ գիտութիւնք, և նոյն իսկ աստուածաբանականին ուսումն՝ չկարենան անհամաձայն և զուգընթաց ըլլալ՝ տէրութեան հասարակաց գործոց և պաշտաման բարեկարգութեան անհրաժեշտ մտա-

գրութեանհետ. որով ոմանք՝ արքունական բար-
ձրութեան անարժան չսեպեցին խոնարհիլ յու-
սումն քերթականականին, և 'ի վարժս բանա-
ստեղծութեան։ Ամբողջ ազգին այս բերումը 'ի
մտաւորական արդիւնս և 'ի գեղեցիկ դպրու-
թիւնս՝ անուանի թարգմանիչներ ալ երևցուց իր
ուսումնական անձանց և նաև հայրապետաց
մէջ։ Այս միջոցով յաջողեցան Հայք գտնել ըզ-
գաղտնիս աւանդապահ ըլլալու գիտութեանց
Եւրոպիոյ և Ասիոյ. իրենց Հոմերոսը՝ 'ի վեցա-
չափ տաղս Եւսեբիոս՝ ամբողջագոյն քան զմերն,
կայսերաց պատմութիւնը, — մեծագին երկա-
սիրութիւնք՝ որոց գիւտին յաջողութենէն պէտք
չէ յուսերնիս կտրենք, — պիտի արդարացընեն
մեր մեծարանք զոր ունինք այս ազգին ճարտար
թարգմանչաց վրայ»։

Ուրիշ տեղ մ'ալ նոյն բանասէրն. «Այն սէրը
զոր ունեցեր են Հայք 'ի գիտութիւն և յուսումն
հռչակաւոր լեզուաց զոր յիշեցինք, պատուա-
կան և մեծապէս սիրելի պէտք է ընէ մեզ այդ
ազգը։ Վասն զի այն միջոցով իրենց մէջ երև-
ցած իմաստունք՝ նոյն լեզուներով գտնուած
ընտրելագոյն երկասիրութիւնները թարգմա-
նելով, ամենէն ամելի իմաստուն գրոց աւան-
դապահ ըրին զՀայաստան աշխարհ»։

* * *

Այսպիսի է իմաստնոյն Վիլֆառւայ դատաստան և կարծիք՝ նախնեաց Թարգմանութեանց վրայ, և որուն արձագանգ եղած է ընդհանրապէս իրմէ ետքը, և յառաջ քան զնա Երևցող Հայագէտ եւրոպական քննադատ բանասիրութիւն։ Բայց որչափ աւելի պիտի ըլլար իրենց զարմանքն և մեծարանք՝ եթէ ուրիշ մատենադարանաց մէջ գտնուած, և դեռ եւս անծանօթ մնացած գրուածոց վրայ տեղեկութիւն ունենային։

Հայկական ուսմանց համար մեծապէս կարեւոր այսպիսի ծառայութիւն մը փափաքեցանք մատուցանել մեր այս հրատարակութեամբ, իբրև լրումն և ամբողջութիւն իր հին մատենագրական պատմութեան։

Սակայն փութանք ըսել՝ թէ երկասիրութեանս ոչ մտածութիւնը, և ոչ նախկին գործադրութիւնը մերն է։ 1825էն 'ի վեր՝ Մխիթարայ Ուխտիս առաջնորդ և արքեպիսկոպոս, Գեր. Սոմալեան, սոյնպիսի վախճան ու նպատակ ունեցող գրուածք մը հրատարակեց, յիտալական լեզու, և զոր կոչեց Պատկեր նախնական թարգմանութեանց 'ի հայ բարբառ։ Այս համառօտ՝ գրեթէ քառասուն տպագրական էջերու մէջ ամփոփուած ծանօթութիւնը՝ մեծապէս հաճոյ և հետաքննելի եղաւ՝ հնախոյզ և իմաստախընդիրն Եւրոպիոյ. մանաւանդ երբ հետզհետէ իրենց լեզուներով հրատարակուեցան Եւսեբեայ

ժամանակականաց, Փիլոնի Ճառից, Արիստիդեայ փիլիսոփայի Հատուածոց, Սեբերիանոսի, Ոսկեբերան Հայրապետի, Անսիզաց Անտիոքայ՝ և ուրիշ ասոնց նման կորուսեալ երկոց Թարգմանութիւնք։ Այսպիսի անակնունելի գրաւորական գիւտք, և բազմագոյնք որ դեռ եւս տըպագրութեան լոյս տեսած չեն, փափաքելի կ'ընէին թէ՝ ազգային և թէ օտար բանասիրաց, միագոյն ծանօթութիւն մը՝ 'ի մեր բազմավաստակ Նախնեաց Թարգմանութեամբ մեզի աւանդուած գրուածոց։ Յօժարութեամբ ու սիրով ձեռք զարկինք այս աշխատութեան։

Աշխատութիւն մը՝ աննշան թերեւս ըստ երեւութին. բայց ոչ այնչափ դիւրին՝ որպիսի կրնայ երեւնալ Հարեւանցի կերպով ակնարկողի մը։ Խոստապահանջք, — և չեն սակաւաթիւք նաև մեր մէջ, — անշուշտ իրենց գիտութեանն և ըղձից համեմատ փափաքելի կատարելութեան Հանգամանք չգտնեն մեր այս երկասիրութեան մէջ ալ։ Այսպիսեաց 'ի դէպ է յիշեցընել թէ գրուածներ կան որոց յամենայնի կատարելութիւնը երկասիրողին կամքէն կախում չունի, այլ ժամանակին և նորանոր հետազօտութեանց արդիւնք և հետեւանք պիտի ըլլայ։ Ներուի մեզ անդրադարձընել — խոստովանութեամբ մեր չափաւոր հմտութեանն, — թէ այս հրատարակութիւնս ալ ասոնց կարգէն է։ Աչուընուս առջև ունեցած նախնական ու ընդունելութեամբն քաջալերիչ գրուածը, ինչպէս ըսինք, համառօտ տետրակ մ'է. իսկ մեր հրատարակածը՝ գրեթէ ութհարիւր մանրագիր

էջերէ ծաւալ ունեցող հատոր մը։ Կը համարինք թէ երկրորդ տպագրութիւն մը մեր յաջորդաց ջանքով և աշխատութեամբ, շատ աւելի ընդարձակութեան կրնայ ընդունակ ըլլալ։

***

Այսպիսի փափաքելի կատարելութեան միջոց մ'ալ մեր կողմանէ պիտի համարձակինք առաջարկել՝ ազգային դպրութեանց յառաջադիմութեան հետամուտ և սիրող սրտերու. և վստահութիւննիս մեծ է թէ սիրայօժար ընդունելութիւն ալ պիտի գտնէ։

Մատակարարուած նիւթոց և աղբերաց առատութեան կամ նուազութեան համեմատական կ'ըլլան նաև հմտութիւն և տրուած տեղեկութիւնք։ — Գիտենք թէ մեր նախնեաց ինչպէս ինքնագիր երկասիրութեանց, սանկ նաև թարգմանութեանց ալ, մասն մի ևեթ, — և այն փոքրիկ մասն, — հասած է առ մեզ. աւերմունք, ամայութիւն, պատերազմունք, հուր և սուր, տարերաց բռնութիւնք, ժամանակաց տգիտութեան և նախապաշարմանց հետ՝ ձեռք ձեռքի տուած, անդարձաբար շատ բան կապտեր յափշտակեր են մեզմէ. ինչուան Գրիգորի Մագիստրոսի ժամանակ դեռ անկորուստ՝ Ողոմպիոդորայ, Կալլիմաքեայ, Անդրոնիկեայ և այլոց քերթուածք և իմաստասիրականք, զորս մեծանուն բանասէրն տեսեր ու կարդացեր էր, չհասան առ մեզ։ Բայց այսչափ աղետալի և

անդարման կորուստներով ալ, մեծապէս սփոփական է գիտնալը թէ դեռ եւս տասն հազար և աւելի հայկական գրչագիրք կան ընդ ամենայն Հայաստան և անկէ դուրս գտնուած մատենադարաններու մէջ։

Ո՜րչափ է այսպիսի ծանրակշիռ հաւաքման մը օգտակարութիւնը՝ և տոհմային մատենագրութեան մատուցած ծառայութիւնը։ — Համեմատաբար խիստ քիչ, չըսենք՝ գրեթէ աննշան, պատճառաւ անոնց անծանօթ մնալուն։ Ասով չենք ուզեր ժխտել՝ միաբանական ուխտից և մասնաւորաց ջանքով եղած բազմաթիւ հրատարակութեանց արդիւնք, որք յաճախ շատ հեռի են ենթադրուածին համեմատ շահաւէտ ըլլալէն. և փորձառուք գիտեն՝ իրենց նիւթական վնասովը, թէ 'ի մեզ բազմաթիւ են խօսքով անոնց լոյս տեսնելուն փափաքողք, և տրուածը չի փնտռողք։ Ազգերնուս այս գիրքին մէջ կարելի չէ յուսալ և սպասել որ 'ի նախնեաց մնացած ամէն երկասիրութիւնք տպագրութեամբ ընդհանուր և հասարակաց ժառանգութիւն մը դառնան։ Սակայն իրաւամբ փափաքելի է որ գէթ գլխաւոր մատենադարանաց մէջ պահուած ամէն հայերէն գրչագրաց ընդհանուր և կարգաւորեալ ցուցակներն հրատարակուին։ Աւելորդ է ըսել թէ այդպիսի հետաքըննական և օգտակար աշխատասիրութեամբ որչափ պիտի շահին հայկական մատենագրութիւն, և անոր հետամուտ բանասէրք։

*

*
* *

Հայկական գրչագրաց հաւաքմանց մէջ գլխաւորներէն կրնան սեպուիլ

Ա. Էջմիածնի աթոռոյն մատենադարան.

Բ. Երուսաղեմի պատրիարքական աթոռոյն.

Գ. Մխիթարեանց 'ի Ս. Ղազար Վենետկոյ.

Դ. Նոյն ուխտին 'ի Վիէննա.

Ե. Անտոնեանց, 'ի Միջագիւղ Պոլսոյ.

Զ. Փարիզու ազգային մատենադարանին։

Ասոնք, գէթ ըստ մեր ծանօթութեան, ուրիշ տեղուանք եղածներէն աւելի ճոխագոյն և պատկառելի վեց հաւաքմունք, յորոց միայն Էջմիածնի մատենադարանին գրչագրաց ցուցակ մը հրատարակուած է՝ գրեթէ քսանըհինգ տարի յառաջ, 'ի ձեռն բանասէր Կարենեան ուսուցչի, 'ի Թիֆլիզ։ Թողլով ցուցակին տպագրութենէն ետքը՝ յայլևայլ եկեղեցեաց և 'ի թեմական առաջնորդաց աւելցած գրաւորական ճոխութիւնք 'ի նոյն մատենադարան, շնորհակալութեամբ իսկ զայն գործածողն թերեւս ամենէն աւելի իմանայ յօրինուածոյն թերութիւնները, անճշդութիւնքն, վրիպական ընթերցուածք, և ոչ գոհացուցիչ դասակարգութիւն։

Արդէն մեր դիտաւորութիւնն էր գրչագրաց ընդհանուր ցուցակի մը յօրինման և հրատարակութեան՝ լոկ մեր կողմանէ առաջարկութիւն մը ընել երկասիրութեանս յառաջաբանին մէջ, որուն անհրաժեշտ պէտքը՝ լաւ կ'ըմբռնէինք մեր այս գուզնաքեայ՝ և իբրև փորձ մը եւեթ

հետաքննին ուսումնասիրութեան ներկայացուած աշխատասիրութեան մէջ, և որուն, — ինչպէս ըսինք, — կատարելութեան մէկ պակասն ալ փափաքելի միջոցաց թերութեան մէջ կը տեսնէինք։ Ուրախութեամբ կարդացինք՝ մանաւանդ ռուսահայոց պարբերականաց մէջ, այլևայլ բանասիրաց կողմանէ եղած գրեթէ նմանօրինակ առաջարկութիւններ, առանց նախընթաց տեղեկութիւն մը ունենալու մեր դիտաւորութեան։

Այսպիսի առաջարկութիւն մը 'ի գլուխ հանելու համար՝ շատ դժուարութիւնք կան. այլ անոնց յաղթելու մէջ է արիութիւնն և արդիւնքը։ Մեզի կ'երևնայ թէ մեծապէս կը դիւրանայ այսպիսի բազմաշահ ձեռնարկ մը՝ եթէ առ այն բաւականութիւն և հմտութիւն ունեցող համամիտ ու համախոհ անձինք փնտռուին մեր վերը յիշած վանական միաբանութեանց մէջ, ու ձեռնհաս իշխանութեան կողմանէ այդ բանիբուն և կարող անձանց յանձնուի անոր գործադրութիւն։ Յօրինման կերպն ու ոճն ալ առ այն սահմանեալ Յանձնաժողովն կրնայ խմբագրել, ու տպագրութեամբ հրատարակել, յառաջ քան զձեռնամուխ լինելն 'ի գործ, որպէս զի կարելի եղածին չափ միակերպութիւն երևնայ յաշխատութեանն. Նոյն ըլլայ տպագրութեան դիրքը, տառք, թուղթ, և այլն. ուր նշանակուին՝ բաց 'ի գրչագրաց թուանիշէն՝ անոնց ինչ նիւթի (մագաղաթ, թուղթ) վրայ և որչափ էջերու մէջ գրուած ըլլալը. տառից որպիսութիւնն (երկաթագիր հին, միջին երկաթագիր, բոլորգիր,

նօտր)․ գրչութեան թուականքն, եթէ ունին, յիշատակարանք, պատկերք, զարդագրոց ոճն և ձեւ, և ամէն մէկուն պարունակութեան նիւթերն՝ զատ զատ։ Այս ոճով և նիւթին կարևոր հմտութեամբ յօրինուած է Փարիզու ազգային մատենադարանին մէջ գտնուած հայկական գրչագրաց ցուցակը՝ բանիբուն ու բազմահմուտ բանասիրի մը ջանքով, և որ օրինակ կրնայ ըլլալ ուրիշ մատենադարանաց ցուցակներու յօրինման։ Հրատարակուած է նոյնպէս տպագրութեամբ Լազարեան ճեմարանին թանգարանին մէջ պահուած հայ ձեռագրաց ցուցակը, որուն միակ թերութիւնն՝ նկատմամբ մեր առաջարկութեան՝ համառօտութիւնն է, և յիշատակարանաց պակասութիւնը։

Այս յիշատակուած մատենադարաններէն դուրս կը մնան՝ մեր բուն հայրենեաց, Հայաստանի բազմաթիւ եկեղեցեաց ու վանքերու մէջ գտնուած կամ պահպանուած հաւաքմունք, զորս կարգի դնելու և ցանկելու համար պակաս չեն բանիբուն, հմուտ ու կարող անձինք, Շահնազարեան, Մխիթարեան Աբէլ և Պետրոսեան Պօղոս նախօրինակ վարդապետաց նման անձինք մեզմէ յառաջ ինքնանուէրք յառաջամատոյցք, և մեր օրերուն՝ Փիրղալէմեան, Աղանեան և մանաւանդ Սրուանձտեանց Գարեգին, հայրենավառ սիրտ, ոգի և գրիչ, որ գիտէ ընծայել Մանանայ, Համով հոտով, Թորոս աղբար, Գրոց ու բրոց, Հնոց և նորոց նման և իրաւամբ ազգին լրութեան հաճոյական ընտիր հատորներ։ Ազգին կը մնայ քաջալերել զայդպիսիս, և խրա-

խօսքը՝ մեծ և անուրանալի տարր մ՚է յառաջադիմութեան. առանց անոր՝ շատ գրիչք կը ջախջախին կը փշրին։

*
* *

Դժուարութիւն մ՚ալ, մանաւանդ ազգերնուս մէջ դժբաղդաբար ընդհանուր դարձած աղքատութեան պատճառաւ, այսպիսի աշխատութեան մը անհրաժեշտ կարևոր գումարն է՝ ՚ի շարադրութիւն և ՚ի տպագրութիւն։ Ասոր դարման՝ մենք պիտի առաջարկենք՝ հոյակապ և քաջանուն ազգասիրին՝ Իզմիրեանց Գրիգորի կտակին գործադրութեան Յանձնաժողովոյն, որ իրմէ թողուած դրամագլխոյն գէթ քանի մը տարուան շահն ու հասոյթ՝ այս նպատակին ու վախճանին գործածուի։ Զենք կարծեր որ մեծախոհ Բարերարին միտաց ու սրտին օտար ըլլայ այս առաջարկութիւնը, որուն քաջալերիչ պարգևն՝ հայկական մատենագրութեան բարգաւաճանքն ունէր իրեն նպատակ։

*
* *

Մեր վերջին խօսքն՝ շնորհակալութեան անկեղծ պարտք մ՚է այն ազնուամիտ ուսումնասիրաց՝ որ յօժարեցան օժանդակել մեզ, կարևոր տեղեկութիւններ հաղորդելով։ Քիչ են թուով, անոր համար մեծագոյն նաև մեր երախտագիտութիւնն։

Հ. ԳԱՐ. Զ.

ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՑ

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

390 *Ս. Սահակ Պարթեւ.*

396 *Սկիզբն քարոզութեան սրբոյն Մեսրովպայ.*

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐ

402 *Ժողով Վաղարշապատու Գ.*
Ակակայ Թուղթ առ Սահակ հայրապետ.

403 *Դանիէլեան նշանագիրք.*

406 *Կարգաւորութիւն հայկական գրոց.*

407 *Սկիզբն հայ թարգմանութեանց: — Յովսէփ Պաղնացի, Յովհան Եկեղեցային: Սողոմոնի առակք, Նոր կտակարան, և այլն.*

425 *Երիցագոյն թարգմանիչք.*

426 *Եզնիկ, Կորիւն, Ղեւոնդ, Թաթուլ և այլք.*
Թարգմանութիւնք Եւսեբեայ պատմութեանն եկեղեցւոյ, Պատարագամատոյցք, եկեղեցական պաշտամանց գիրք.

429 Աքսոր սրբոյն Սահակայ.

432 Դարձ սրբոյն Սահակայ յաքսորանաց.

433 Կրկին թարգմանութիւնք Աստուածաշունչ գրոց. (յասորւոյն և 'ի յունէ).

434 Երեցագոյն աշակերտաց յուղարկեալքն յուսումն հելլենականին.

436 Պրոկղի թուղթ առ Հայս.

440 Վախճան սրբոյն Սահակայ.

» Թարգմանութիւն վարուց սրբոյն Անտոնի յԱթանասէ (յԵրուսաղէմ).

441 Վախճան սրբոյն Մեսրովպայ: Յովսէփ Ա. յաջորդէ.

442 Դարձ աշակերտաց յԱթենայ.

Առաջին թարգմանութիւնք ոսկեղէն դարու. — Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս: — Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի: — Մեկնութիւն Եսայեայ: — Նորին այլևայլ ճառք: — Բարսղի ճառք 'ի վեցօրեայ արարչութիւն: — Նորին զանազան ճառք: — Ճառք Սեբերիանոսի: — Կիւրղի Երուսաղեմի՝ Կոչումն ընծայութեան: — Եւսեբեայ Քրոնիկոն կանոնք ժամանակաց: — Եփրեմի՝ մեկնութիւնք Աստուածաշունչ գրոց: — Փիլոնի ճառք և մեկնութիւնք: — Հարանց վարուց առաջին և մասնական թարգմանութիւն: — Աթանասի մասն ճառից: — Գրիգորի Աստուածաբանի ճառք: — Արիստիդեայ իմաստասիրի ջատագովականք, և այլն.

443 Խորենացի և ընկերք ծաղկին.

451 Կատարումն Վարդանանց.

454 Կատարումն Ղեւոնդեանց.

456 Նախարարք Հայոց դառնան 'ի կապանաց.

461 Խորէն խոստովանող վախճանի.
463 Աբրահամ խոստովանող գաւառայ 'ի Հայս.
465 Գիւտ կաթողիկոս.
466 Մամբրէ և Դաւիթ Անյաղթ.
Թարգմանութիւնք կրտսերագոյն թարգ-
մանչաց. Պատմութիւն Աղեքսանդրի: —
Նոննոսի մեկնութիւն առասպելաց: —
Եպիփանու գրուածք՝ ըստ մասին: —
Գրիգորի Աքանչելագործի ճառք: — Գ.
Նիւսացւոյ յ'ինն երանութիւնս: — Նա-
րին 'ի ժողովողն: — Մեկնութիւն Եր-
գոց երգոյն: — Ճառք: — Աստուածա-
շնչեցի Թուղթք: — Դիոնեսիոսի Թրա-
կացւոյ քերականութիւն: — Պորփիւրի
Ներածութիւն: — Արիստոտելի երկա-
սիրութիւնք: — Դիոնեսիոսի Աղեքսանդրա-
ցւոյ ճառք: — Կիւրղի Աղեքսանդրացւոյ
ճառք: — Թէոփիլեայ Աղեքսանդրացւոյ
ճառք: — Թէոփիլեայ աշակերտին Ոս-
կեբերանի ճառք: — Տիմոթէոսի Աղեք-
սանդրացւոյ ճառք: — Հիւպողիտեայ
Բոստրացւոյ ճառք: — Եւթաղի գր-
րուածք, և այլն:
480 Վախճանի Եղիշէ.
486 Վահան Մամիկոնեան նորոգէ զաշխարհն
Հայոց.
486 Ղազար Փարպեցի.

ՎԵՑԵՐՈՐԴ ԴԱՐ

680 Կիւրիոն կաթողիկոս Վրաց.

694 Աբրահամ կաթուղիկոս Ա.

Թղթակցութիւնք Կիւրիոնի ընդ Աբրահամու.

Թուղթ նորա առ Սմբատ մարզպան.

ԵՕԹՆԵՐՈՐԴ ԴԱՐ

643 Սարգիս աշակերտ Մայրագոմեցւոյն թարգմանէ զգիրս Աղեկսանդրացւոյն.

654 Յովհան Մամիկոնեան պատմիչ։ — Զենոբայ Գլակ պատմութեան թարգմանութիւն.

648 Դաւիթ փիլիսոփայ Բագուանցի.

662 Անանիա Շիրակացի և աշակերտք նորա.

663 Թէոդորոս Քռթենաւոր.

684 Գրիգոր եպիսկոպոս Արշարունեաց.

Փիլոն Տիրակացի, թարգմանիչ Եկեղեցական պատմութեան Սոկրատայ.

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՐ

716 Ստեփանոս Սիւնեցի՝ և Դաւիթ կենաարքունի թարգմանիչք հետեւեալ գրոց.

Դիոնեսիոս Արիսպագացի։ — Ղեւտականի մեկնութիւն։ — Նիւսացւոյն յաղագս բնութեան մարդոյ։ — Կիւրղի Աղեքսանդրացւոյ՝ Գանձուց, Պարապմանց և

Թղթոց: — Նեմեսիոսի յաղագս կազ-
մութեան մարդոյ: — Աթանասի հինգ
ճառից: — Գերմանոսի Թղթոյն առ Հայս.

718 Յովհաննէս Դ. Իմաստասէր.

Թարգմանութիւնք յութերորդ դարու.
Գէորգ Պիսիդէս. — Հիւսիքոս: — Թէո-
դորոսի Անկիւրացւոյ ճառք: — Եւագր:
— Անթիպատրոս Բոստրացի: — Յովհան-
նէս Կլիմաքս: — Տիտոս Կրետացի և այլոց.

ԻՆՆԵՐՈՐԴ ԴԱՐ

836 Բագարատ Բագրատունի իշխան.

837 Նանա սարկաւագապետ, մեկնիչ աւետա-
րանին Յովհաննու: Թարգմանութիւն
գրոց նորա.

880 Յովհաննէս բժիշկ. Թարգմանիչ վարուց
Արիսպագացւոյն.

897 Մաշտոց կաթողիկոս: — Յովհաննէս Զ պատ-
մաբան.

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԴԱՐ

934 Շինի վանքն Հոռոմոսի.

935 Շինի վանքն Նարեկայ.

936 Անանիա Շիրակացի.

937 Վարդուկ հայր, Կարմիր հայր, Դաւիթ
Մաշկոտն, Դաւիթ Մոկացի.

961 Ծնունդ սրբոյն Գ. Նարեկացւոյն.

973 Ս. Գրիգոր Նարեկացի ծաղկի.

1185-6 Լամբրոնացի կը թարգմանէ զնոյն գիրս.

1189 Թուղթ Կղեմայ Գ. առ Լեւոն թագաւոր և առ կաթողիկոսն՝ զորս կը թարգմանէ Լամբրոնացի.

1190 Լամբրոնացի կը թարգմանէ զԹագաւորօրհնէան.

1193 Գէորգ Սկեւռացի՝ Լամբրոնացւոյ տեսչութեամբ կարգի կը դնէ զՀարանցվարս.

» Լամբրոնացի կը թարգմանէ զԲիւզանդական օրինագիրս.

1196 Լամբրոնացի կը թարգմանէ զՔինուորական օրէնս։ Իրեն թարգմանութիւնք են՝ Գրիգորի մեծին՝ Հռովմայ «Վանքաղաքավարութեան հարցն որ յ'Իտալիա փայլեցին։ — Սրբոյն Բենեդիկտոսի սահմանք ընթացից կրօնաւորաց։ — Վըրընջէրի Սահմանք վանից».

1198 Կը վախճանի Լամբրոնացի.

ԴԱՐ ԵՐԵՔՏԱՍԱՆԵՐՈՐԴ

1200 Կը վախճանի Միխայէլ պատրիարք Ասորւոց. իր Պատմութիւնը կը թարգմանուի 'ի հայ յայսմ դարու.

1211 Հեթում Հեղի կը թարգմանէ զՇարադրութիւն կայսերաց և զքահանայապետաց Հռովմայ.

1226 Հեթում որդի Կոստանդեայ Պայլի՝ թարգմանել կուտայ զգիրս արուեստից յարաբ կամ'ի պարսիկ լեզուէ.

1264 Թէոդոր Սմաքրեանց Սսեցի՝ Գրիգորի Ա-

պուլֆարաճ Ասորւոյ մէկ ատենախօսու-
թիւնը կը թարգմանէ 'ի հայ.

1292 Երզնկացին Յովհան կը թարգմանէ զգիրս
որոց Ակուինացւոյն՝ Յաղագս խորհրդոց
եկեղեցւոյ.

1294 Բժշկարան գրեալ վասն Հեթմոյ տեառն
Կոռիկոսի.

ՀԱՅԿԱԿԱՆ
ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ
ՆԱԽՆԵԱՑ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Թարգմանութիւնք ընդհանրապէս. — Հինգերորդ դար հայկական մատենագրութեան. — Յառաջութիւն թարգմանութեանց ու անոր պատճառք.

Ազգաց ու ժողովրդոց մտաւոր հարստութիւնն կամ գրականութիւնը՝ համեմատական և յարաբերական է ընդհանրապէս իրենց երկրին աշխարհագրական դրից, պատմական անցից, մերձաւոր վերաբերութեանց, բնակչաց թուոյն, ուսմանց բարգաւաճ վիճակին, յառաջդիմասէր ջանից, կրթական հաստատութեանց առաւելութեան կամ նուազութեան և անոնց շատ կամ քիչ բարեկարգութեան: Հետևաբար բաւական կամ գոհացուցիչ են՝ թէ՛ ազգային մտաւոր կամ ինքնաստեղծ արտադրութիւնք հոն ուր քիչ կարօտութիւն կայ ներածութեան. իսկ ուր նուազ, մեծագոյն և շատ անգամ անհրաժեշտ է պէտքը՝ 'ի մերձաւոր ու երբեմն նաև հեռաւոր՝ ուսմամբք բարգաւաճ ժողովրդոց և ազգաց փոխ առնուլ զայն՝ որուն թերութիւնն կամ նուազութիւնը զգալի ըլլայ իրենց մէջ: Մտաւոր սնունդն ալ՝ նման է նիւթականին. անոր պէտքն ու կարօտութիւնը ըզ-

դալուն հետեւանքն է գոհացընել զայն կամ յատուկ քերթերով եւ կամ արտաքուստ ընդունուած արդասեօք։

Թարգմանութիւնք՝ ժողովրդոց մատենագրութեան մէջ անկէ ծագումն առած, եւ համեմատական արտադրութիւն կամ բարգաւաճանք ունեցեր են։

Մեր ազգային գրականութեան մէջ, ուսմանց յառաջադիմութիւնն, ինչ որ աւանդուած կը տեսնենք 'ի պատմական յիշատակարանաց, չորրորդ դարու մէջ գրաւոր սկզբնաւորութիւն առած, եւ 'ի հինգերորդին յառաջադիմութեան ծայրն հասած է. բայց այսպիսի ցանկալի ու իրաւամբք նախանձելի բարգաւաճանաց անակնկալ անկումն ալ մէկէն վըրայ հասեր է նոյն հինգերորդ ոսկեղէն դարուն երկրորդ կիսուն մէջ։ Քանի մեծ փայլը, եւ որչափ աղէտալի անկումը. եւ ինչպէս առաջինը՝ իրական ու էական փառք մը սեպուած է ազգային պատմութեան անցելոյն ու ապագային առջեւ, յորմէ մասն մի եւեթ, եւ աւա՜ղ, փոքրիկ մասն՝ դարք իրարու աւանդելով հասուցին առ մեզ, այնպէս անկումն ալ, եւ այնչափ շուտով, մեծ ցաւ եւ կորուստ է թէ ազգային եւ թէ օտար բանասիրութեան։

***

Ինչպէս բուն յատուկ արտադրութեանց՝ ասանկ նաեւ թարգմանութեանց ամենէն նշանաւոր դարն է առ մեզ հինգերորդը։

Լեզուաց փոփոխակի ուսմանն եւ անոնց կիրառութեան՝ արդիւնք եւ հետեւանք են թարգմանութիւնք. բայց այս ուսումնական փոխադարձ ծանօթութենէ, եւ յառաջքան զմտաւորական հաղորդակցութիւն կը կանխէին յաճախ քաղաքային եւ վաճառականական յարաբերութիւնք, որոց առջեւ բնական կամ բանա-

զատ. սահմանածայրք աշխարհաց և տէրութեանց՝ կամ 'ի բանութենէ զինուց զօրաւորագոյն ազգի մը և կամ 'ի պատճառս առևտրոյ՝ կը դադրին անհաղորդական անջրպետ մը ըլլալէ։ Եթէ քիչ են 'այս հաղորդակցութիւնք, համեմատական կ'ըլլան նաև այսպիսի մտաւորական արդեանց իրարմէ փոխանցութեան արգասիք։

Մեր արդի ժամանակաց գիտութեանց և ուսմանց անընդհատ ծաւալման դարուց մէջ, յառաջադիմութեան անքաւ պիտոյից առջև, յորում հանապազօրեայ ճարակ կը փնտռուի մտաց և անյագաբար կը սպառուի, խիստ շատ են թարգմանութիւնք ամէն բարգաւաճ ազգաց և ժողովրդոց մէջ։ Բայց նոյնը չենք տեսներ նաև առ հինս. ոչ լոկ այն պատճառաւ որ գիտութիւնք չունէին այն ընդհանրութիւնը, և զանոնք իրարու հաղորդական ընելու դիւրութիւնն, այլ զի իւրաքանչիւր ազգք ընդհանրապէս միայն իրենցմով գոհ ըլլալու և ընելու գիրքին և ուղղութեան մէջ ապրելու սովոր էին. որ և այն ունէր անշուշտ իր օգուտներն, առիթ և խրախոյս տալով ծաղկեցընելու իրենց յատուկ և տոհմային մատենագրութիւնը։ Օրինակով մը բացատրելու համար, Եգիպտացիք հնագոյնք էին 'ի քաղաքակրթութեան և 'ի գիտութեան քան զԱսորեստանեայս, և սոքա քան զՅոյնս։ Եւ թէպէտ առջի երկուքէն մատենագրական նշանաւոր արտադրութիւն մը հասած չէ առ մեզ, բայց և ոչ յիշատակ մը թէ անոնց մէջ զարգացած գիտութեանց և ուսմանց պատկանող գրութիւնք՝ թարգմանութեամբ անցած ըլլան առ Յոյնս. որ պարզապէս հետևողք եղան առաջնոց, և անոնց գրուածներէն, և մանաւանդ պատմական յիշատակարաններէն օգտուեցան. քաղելով ու մթերելով ինչ որ կարևոր տեսան իրենց տոհմային գրականութեան ճոխութեանն համար։ Կ'աւանդէ պատմու-

թիւն թէ իմաստասիրական գրութիւնք և վարդապետութիւնք կանխագոյն են ժամանակաւ առ եգիպտացիս քան առ հելլէնս. և յոյն իմաստասէրք և Պղատոն ինքնին և Արիստոտէլ օգտուեցան այն հնագոյն իմաստասիրութենէն, առանց ուղղակի կամ անմիջապէս անոնց յատուկ գրութիւնքն թարգմանութեամբ ընծայելու իրենց հայրենակցաց. որով տարբեր գրութիւնք են եգիպտականքն՝ և այլ յունականքն. թէպէտ և շատ կարծեաց մէջ իրենց հիմունքը կամ սկզբնաւորութիւնն պարզապէս ըլլալով առաջինոյն։ Նոյնը կը տեսնենք յետ Յունաց նաև առ Լատինս, որոց մատենագրութիւնը որչափ ալ ըստ մեծի մասին հելլէնականին հետեւողութիւն ենթադրուի, բայց ոչ է թարգմանութիւն։ Օրինակ մը 'ի Վիրգիլ, որ իր անմահ քերթուածոց մէջ ներշնչուած է 'ի Հոմերէ, յԵսիոդեայ, 'ի Թէոկրիտեայ և յայլոց. բայց չենք գտներ անոնց քերթուածոց հին թարգմանութիւնն 'ի լատին բարբառ։

***

Իսկ մեր ազգային մատենագրական պատմութեան մէջ՝ կրնանք ըսել թէ բոլորովին ասոր հակառակ ուղղութեան մը հետեւած կը տեսնենք զնախնիս. որով քան զիսկական և զյատուկ շարագրութիւնս շատ աւելի են թարգմանութիւնք յայլոց, մանաւանդ թէ անհամեմատ առաւելութեամբ։

Ի՞նչ է արդեօք ասոր պատճառը։

Եթէ, ինչպէս ըսինք, ուրիշի ճոխութեան կարօտ ըլլալը՝ յատուկ հարստութեան նուազութիւն կամ բոլորովին պակասութիւն կ'ենթադրէ, հարկ է արդեօք նոյնը ըսենք՝ այսպիսի տարօրինակ երեւոյթ մը մեկնաբանելու համար։

Բայց այսպիսի ենթադրութեան մը, եթէ ըլլուի,

հոկտական բողոքոյ ձայն կը վերցընէ մեր հին Թարգմանչաց անձնականութիւնն, ուսումն և արտադրած գործքերը։

Անոնց անձանց, հմտութեանն ու գիտութեան արժանաւոր գովութեամբ լեցուած կը գտնենք ոչ միայն իրենց ժամանակակից և հետագայ ազգային պատմչաց էջերը, այլ և յաճախ կը հանդիպինք յօտարաց արուած անկանխանձ գրուածոց։ Թէ որչափ մեծ էին սրբոյն Սահակայ և իրեն գործակցին՝ անմահանունն Մեսրովպայ առաքինի քաղաքավարութեան և ուսումնասէր ջանից համարումն և մեծարանք ոչ միայն առ Յոյնս, այլ նաև առ Ասորիս և 'ի դրան Պարսից, որդէն յայտնի է մեր ընթերցողաց. և աւելորդ է հոս կրկնել՝ յիշեցընելով իրենց ընծայուած պատուոյ անուանք, մեծարանք, գովեստք յեկեղեցական և 'ի քաղաքական աստղութեանց, 'ի պատրիարքաց և 'ի կայսերաց Բիւզանդիոնի։ Պրոկղ՝ հետևեալ խօսքերն կ'ուղղէր առ Սահակ Հայրապետ. « Երանի՜ որ հանապազորդ լինիցին 'ի տեսիլ աստուածագեղ երեսացդ. և զի՞ ասեմ հանապազ. այլ գոնեա յաւուրս կամ յամիսս և 'ի տարեկանս... Եւ ուստի՞ ինձ այդ լինիցի, բայց եթէ յաղօթից սրբոյդ. զոր մեծ պատերազմաւ միշտ 'ի վերայ արժանաց և անարժանաց ամենասուրբն Աստուծոյ հատուցանես » ։

Իրենց անուամբ մինչուան առ մեզ հասած և արդէն մեզի ծանօթ երկասիրութիւնք՝ անհակառակելի վկայք և հաւաստիք են իրենց մտաց կորովութեան, իմաստախնդիր հմտութեանց և գիտութեան ընդարձակութեանը. և անով յաջողեցան ոգևորել, ճոխացընել նաև իրենց աշակերտաց միտքն, ու սրել անոնց հանճարը. որով հաւատար իրենց՝ ամենուրեք հռչակեցան հայրենի երկրին մէջ՝ և մանաւանդ անկէ դուրս, ամենուն մտադրութիւնն ու զարմանքը

վրանին հրապուրեցաւ։ Նազիանզացւոյն, Յարագէի և այլոց խօսքերն՝ որով մերթ անանց իւր ուղեցոյց բանադատուեր են գովել 'ի հեռաւոր Հայոց եկած աշակերտակիցքն, հաւատարմութիւն են մեր խօսքին։ Աստուածաբանն Գրիգոր յԱրձանեկանին Յարտաշի ուսումնակցի և մտերմի, կը վկայէ. «Ոչ պարզամիտ ազգ գտանեմ, կ'ըսէ, զՀայոցն. այլ և յոյժ թագուցանողք և նենգաժողք։ Ցայնժամ 'ի յոլովից նմա 'ի սովորականացն և 'ի սիրելեաց՝ ոմանք առ 'ի հօրէ և յառաջնոցն ընկերութենէն, վասն զի յայնմանէ 'ի դպրոց եկեալք հանդիպէին. մերձեցեալք առ նա անդ ստեղծական բարեկամութեամբ։ Բայց էին մախանք և ոչ բարեմտութեան մերձաւորութիւն... իսկ ես աթենացւոց՝ և վայրապար ոչ օգտի զմախանսն... Իսկ նա (Բարսեղ) վաղվաղակի ստոյր զնեալսն. վասն զի և էր իսկ արագամիտ՝ որպէս ոչ այլ ոք. և յօժարամտութեամբն լեալ՝ զի կատարելապէս զնա զեկուցից, ընկրկէր բանիւք ըզքաջսն զայնոսիկ»։ Նազիանզացւոյն են նաև հետեւեալ տողերը, ուղղեալ առ Հայս՝ աշակերտակիցս իւր և մրցակիցս.

« Ի զուր վիճիս, Հայկազնեղ, զուր զօդըս կոծես նանրախօս.
Ի՞բր յաւակնեալ ակն ունիցիս ի հակաճառըս բանից
Ցաղթահարել զայնպիսւոյ առըն թեւակից զԳրիգոր »։

***

Սրբոյն Սահակայ և Մեսրովպայ նախ իրենց և յետոյ աշակերտաց միոյքն ու գրիչը թարգմանութեամբ պարապելուն և զբաղեցընել տալուն գլխաւոր պատճառը՝ ազգին՝ որուն նուիրած էին ինքզինքնին և իրենց ամէն ծառայութիւնը, անհրաժեշտ պէտքն էր. և այդ բուռն և սիրելի հարկին առջև առիպուած էին

հրաժարիլ նաև հեղինակ կոչուելու օրինաւոր փառաւորութենէն․ որուն եթէ ուզենային անսալ՝ թերեւս սահմանափակ միտք ըլլար իրենց մատուցած ազգին ծառայութիւնը․ որովհետև՝ աւելորդ է ըսելը․ հեղինակութիւնն աւելի դժուարին և ժամանակի կարօտ աշխատանք է քան զթարգմանութիւն։

Երկրորդ և գլխաւոր պատճառ մ՚ալ էր յոյն-արեւելեան եկեղեցւոյն այն ատենուան լուսափայլ գիրքը․ բազմաթիւ նուիրական հայրապետաց և աստուածարեալ հարց յաճախութեամբ։ Սահակ և Մեսրովպ՝ արդէն ծանօթք իրենց․ սիրողք և սխրացող այն նախանձելի աստուածապարգև և աստուածիմաստ ճոխութեան, ծանօթացուցին և սիրելի ըրին զայն իրենց աշակերտաց, վարժեցընելով յոյն լեզուին ուսման և դպրութեան, ճանապարհորդել և երկար ատեն դեգերել տալով՝ ուր աւելի բարգաւաճ էր ուսումն և գիտութիւն, և անշուշտ յորդոր և քաջալերութիւն ալ ընդունելով ՚ի կայսերէ և ՚ի պատրիարքաց Կոստանդնուպոլսի, յունական եկեղեցւոյ գիտութեան և ուսմանց հետ՝ նաև իրենց քաղաքական իշխանութեան ազդեցութիւնն աւելի փափաքելի և ընդհանուր ընելու յուսով և փութով։

Իրենց աշխատութեամբ յառաջ բերուած արդեանց՝ նաև ՚ի հայրենիս սիրելի ըլլալուն դէպքն ալ մեծագոյն քաջալերութիւն մ՚էր եւս քան զեւս խրախուսելու ՚ի ջանս և ՚ի վաստակս․ և հաւանական կը թուի թէ Հայաստան աշխարհ պակած չըլլայ յերախտապարտ և ՚ի շնորհընկալ մեծարանն՝ ու բազմարդիւն դաստիարակս իրենց հոգւոյն և մտաց, քանի որ իրենց անընդունելի և ոչ հաճոյ նորութեան մը ջանքն ու փոյթ դեռ չէին տեսներ վրանին․ որով առաջին թարգմանչաց, սրբոյն Սահակայ և Մեսրովպայ նախկին աշակերտաց վրայ առաւելագոյն կ՚երևնայ համարումն, և արժանաւոր մեծա-

բանքը. և անոց ձեռքով և գրչով ընծայուած [illegible] մատենագրութեանց և թարգմանութեանց յարգը. հանճարեղութեանը [illegible] անոնց մէջ՝ հայկական լեզուի ոսկեղէն և խակաշխարհ դրոշմը։

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ, և իրմէ յառաջ ասորական մատենագրական ազդեցութիւնն՚ի Հայաստան, ու անոր մնացորդք հասած մինչև առ մեզ։ — Թուղթ Աբգարու։ — Թադէի առաքելոյ վկայաբանութիւնը։ — Ուրիշ հին՝ բայց ոչ բոլորովին հաւաստի գրութիւնք, ասորի մատենագրութեան դրոշմը կրողք։

Թարգմանչաց դարէն յառաջ՝ ուրիշ անմիջապէս նախընթաց դար մ՚ալ ունինք մեզի ծանօթ հայ գրականութեան. — չորրորդ դարը։ Ասոր մէջ ապրած ու գործած են սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, Զենոբ Գլակ, Յակովբ Մծբնայ, Բիւզանդ Փաւստոս և այլք։

Ասոնց գրուածքը, — դէթ ոմանց, — նաև ըստ կարծեաց հմտագունից, յունականէն դուրս և օտար ազդեցութեան մը դրոշմը վրանին կը կրեն։

Սուրբն Լուսաւորիչ քրիստոնէական հաւատոց աստուածապարգև լոյսը քարոզելէն և ընդ ամենայն Հայաստան սփռելէն ետքը կ՚երթայ 'ի Կեսարիա՝ եպիսկոպոսական ձեռնադրութիւնն ընդունելու. և 'ի դարձին՝ կը խնդրէ և կ՚ընդունի 'ի սրբոյն Ղեւոնդեայ հայրապետէ քանի մը սուրբ սրբասուն և առաքինակրօն անձինք. և անոնց ընկերակցութեամբ

կը վերագրանայ յառաջաբերեցն առաքելութեան իւրոյ: Անոնց 'ի Հայաստան աշխարհի աստուածահաճոյ փառատուելոյ արդիւնքն նկատելով, շնորհակալութեամբ կը գրէ առ սուրբն Ղեւոնդ թէ «իբրեւ զանգիւտս մարգարէից համարիմ աւետեաց զնոսա ինձ»: Եւ կը խնդրէ «վասն մանրամասն սիրոյդ զոր ունիս ընդ իս, աղաչեմ զի զմիւս այլ ընծայն շնորհեսցես... զի հանցես մշակս 'ի հունձս յայսոսիկ: Յորոց միոյն 'ի քաջ մշակաց զոր ես խնդրեմ 'ի քէն՝ Եղիազարոս Նխարրիացւոց եպիսկոպոսն՝ որ էր եղբայր Զենոբայ եպիսկոպոսի. զոր ընդ իս առեալ ձեռնադրեցի երկրէս Մամիկոնէից: Արդ և զդա յղեսցես հանդերձ այլ մշակօք մանկաւուք. մանաւանդ թէ զՏիմոթէոս Ադոնացւոց եպիսկոպոս յղեսցես, զոր դու իսկ զովեիր զհմտութիւն դպրութեանն, որ յոյժ պիտանի է երկրիս այսմիկ»: Կեսարիոյ եպիսկոպոսն ալ կը կատարէ՝ սրբոյ Լուսաւորչին խնդիրքը. «զԵպիփան աշակերտ Անտոնի, կ'ըսէ, հաւանեցուցի գալ առ ձեզ, ունելով ընդ իւր արս քառասուն Ճգնաւորս և խարազնազգեստս, պարկեշտս 'ի վարս և հրաժարեալս յաշխարհէս, զոր առեալ կացուսցես զԵպիփան՝ հայր վանացդ Զենոբայ»: — Ինչո՞ւ ոչ Յոյնք, այլ Ասորիք. և այն այսչափ յաճախութեամբ թուոյ և այդպիսի թախանձանօք: — Տարօրինակ կրնայ սեպուիլ իրաւամբք Գրիգորի այս ընտրութիւնը, եթէ ուրիշ պատճառ մը չուզենանք նկատել:

Այս պատճառը՝ ըստ կարծեաց ոմանց, երկու ընդդիմամարտ ազդեցութեանց, Պարսից և Յունաց ճնշումէն զՀայաստան յապագային փրկելու դիտմամբ կրնար եղած ըլլալ. ուր Ասորիք արդէն կորսնցընելու վրայ ըլլալով իրենց նախկին պատմական կարևորութիւնը՝ ոչ քաղաքական դրիւք և ոչ ուրիշ որ և իցէ նկատմամբ՝ զՀայաստան այդ բռնադատ հարկին հասանաց կամ յորձանաց մէջ ձգելէն հեռու

կրնայի՛ն համարուիլ։ Եթէ քաղաքագիտական այդպիսի հետամուտ նպատակ մ'ալ չունենային՝ ընծայել մեր լուսաւորութեան սուրբ Հօրը, բայց կրօնական ճշմարտութիւն մըն և որդիներ է որ ասորական լեզուին և մատենագրութեան ուսումը՝ ոչ աննշան տեղ մը գրաւած է մեր մատենագրութեան պատմութեան մէջ. չորրորդ դարէն մինչև յերեքտասներորդն՝ և անկէ ալ անդին ունենալով իր միջամտութիւնն։ Այսչափ յերկարատև ասորի գոյութեան կեանք մը, հարկաւ պէտք է ունենայ իր նախընթացը. զոր Աբգարու և իրմէ առաջ կամ յետոյ համանուն թագաւորաց Օսրոենայ և Եդեսիոյ, ըստ այլոց նա և Հայաստանի մէկ մասին վրայ թագաւորութիւնը կրնայ աւելի լուսաբանել, և հաւանականաբար հետևցընել թէ քրիստոնէութեան առաջին դարէն 'ի վեր, և թերևս յառաջ իսկ քան զայն՝ ասորական բարբառն և անոր գործածութիւն չէր անծանօթ առ մեզ։

***

Արդեօք սիրուած էր 'ի նախնեաց մերոց և մեծարուած այդ լեզուն և անոր ուսումը։

Թէպէտև սուրբն Գրիգոր, ինչպէս կը վկայէ Ագաթանգեղոս, կը փութայր քրմաց որդիքը յերկուս դասս բաժնելով. «զոմանս յասորի դպրութիւն կարգել և զոմանս 'ի հելլէն», և աշակերտասէր վարդապետն Մեսրովպ՝ յուսումնախնդիր պանդխտութիւնսն յԵդեսիա, յԱմիդ և 'ի Սամոսատ, «զոմանս յաշակերտացն յասորի դպրութեանն կարգեր, և զոմանս յունական», ինչպէս կ'աւանդեն Կորիւն և այլք. բայց եթէ ուզենանք բացատրութիւններն մէկզի առնուլ, ընդհանրապէս ոչ այնչափ յարգողք և սիրողք թուին մեր նախնիք այդ լե-

զուխն՝ որուն համար ինչուան երկոտասաներորդ դարու մատենագիրք մեր վկայած են, թէ «Շաղփաղփ և այլատարազ գոյ լեզուն ասորի՝ 'ի մերս արամեան ազգ. և լեզու» . և այս խօսքերը՝ հեռաւոր և գոնէ դար մը անցած արձագանգ մ'են հինգերորդ դարէն 'ի վեր յաճախ լսուած և կրկնուած. և Փարպեցի յայտնապէս կը վկայէ թէ իր ժամանակակցացն համար՝ ասորի լեզուն տանջանք մ'էր, և բանադատուած էին «բազմաժամանակեայ դեգերմամբք մաշել զաւուրս իւրեանց 'ի դպրոցս ասորի գիտութեան» . և որ այնչափ աւելի դառն և ծանրատաղտուկ կ'ըլլար՝ որչափ առ 'ի չգոյէ փութոյ և ջանից՝ նոյն ուսման և դպրութեան սէրն նուաղելով, զայն հասկացողք և իմացողք օր ըստ օրէ կը պակսէին: Այս տանջանքն գլխաւոր առիթ մը եղաւ՝ սուրբ Գրոց անզուգական Թարգմանութեան պարգևով մը օժտել և ճոխացընել հայերէն լեզուն և դպրութիւնն:

Այսու հանդերձ մեր գրաւորական պատմութեան և բանասիրութեան մէջ՝ մոռցիր գիտողութեան արժանաւոր կէտ մ'է որ յասորականէ Թարգմանութիւնք 'ի մեր լեզու՝ կանուխ և երիցագոյն են ժամանակաւ քան զյունականսն: Նոյն իսկ սուրբ Գրոց Թարգմանութեան առաջին փորձը յասորականէ եղած է. և յետոյ իբրու անկարևոր կամ ոչ այնչափ կատարեալ՝ 'ի բաց ձգուած, ինչպէս քիչ ետքը առիթ պիտի ունենանք յիշատակելու:

Ասոր պատճառը՝ ասորական - քրիստոնեայ գիտութեան և ուսման կանխելն է առ մերսն՝ յառաջ քան զյունական դպրութիւն և լեզու:

*
* *

Քրիստոնէութեան առաջին դարուն պատկանող կրկին երկասիրութիւնք Թարգմանուած 'ի հայ լե-

-ղու հասած են առ մեզ, որոց վրայ որչափ ալ ժամանակաց հնութեան արգասիք կամ անհրաժեշտ հետեւանք՝ յաւելուածք, զեղչմունք, կերպարանափոխութիւնք ենթադրելու ըլլանք, և թերեւս ոչ առանց պատճառի, բայց նախնական դարուց հնութեան դրոշմն ու կնիք վրանին կրելնին անտարակուսելի է։ Այս երկու գրուածքն են Աբգարու թուղթը, Լաբուբնիա կամ Ղերուբնիա արքունական դիւանագրի գործ և երկասիրութիւն, և միւսն՝ որ ըստ խմէք առաջինին շարունակութիւն կամ մասն կրնայ սեպուիլ, Թէպէտեւ յայլմէ շարագրուած, սրբոյն Թադէի առաքելոյ վկայաբանութիւնն։

Աբգարու Թղթոյն վրայ՝ մեր երկասիրութեան առաջին մասին մէջ բաւական երկար խօսած ենք[1]. և մեզմէ շատ աւելի թէ ազգային և թէ օտար բանիբուն և հետազօտող հմուտ քննադատք, զորս արդէն յիշատակած ենք, և որոց վրայ կ'աւելցընենք նորագոյն գրուած մը 'ի գերման լեզու, հրատարակեալ 'ի 1880 'ի Բրունշվայկ Գերմանիոյ։ Այս երկասիրութեան խորագիրն է Lipsius (Richard Adalbert). Die Edessianische Abgar-Sage ։ Զայս միայն յիշեցընել հարկ համարիմք առթիւս թէ որպիսի՛ և որքան կարեւորութիւն տուած են այս համառօտ գրուածքին եւրոպական իմաստունք, որով արժէքը բազմապատիկ կ'ըլլայ. և թէ ինչպէս ամէնքն համաձայն են յասել և 'ի վկայել թէ ասորական է գրուածքիս առաջին աղբիւրն, և անտի 'ի հայ փոխադրուած. զի արդէն գտած են ասորի բնագիրը, և իրենց քննադատութեանց և հմտական տեսութեանց նիւթ ըրած։ Հայկական Թարգմանութեան ոճն ու լեզուն և անուանց տառադարձութիւնք, — ինչպէս ըստ բաւականին և հմտաբար ակնարկուած է հայ և

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ. տպ. 161-170 ։

գաղղիական տպագրութեանց յառաջաբաններուն և 'ի ստորեւս իմից գրուած ծանօթութեանց մէջ. — յայտնապէս կը հռչակեն թէ յասորի բնագրէ եղած է թարգմանութիւնն 'ի մեր լեզու. թերեւս յառաջ իսկ քան զժամանակ Թարգմանչաց, և կամ աւելի հաւանականաբար՝ անոնց արդիւնաւոր վաստակոց նախընթաց երախայրեաց մէկը։

***

Դառնանք մեր ակնարկած միւս գրուածին վրայ խօսելու, որ գրեթէ առաջինին հաւասար, և թերեւս անկէ ալ համառօտ երկասիրութիւն մըն է, և տպագրութեամբն արդէն ծանօթ ընթերցողաց։ Ինչպէս կանխեցինք ըսել, սոյն Թադէի 'ի Հայս առաքելութեանն ու վկայական մահուան պատմութիւնն է. և իրեն ընկերակից վկայակցաց, որոց մէջ առաջին է իր աշակերտական տոհմէ սերելոյն և անմահախառն փառօք՝ Սանատրկոյ թագաւորի դուստրն նախավկայուհին Սանդուխտ։ Ուրիշ ազգաց քով չհանդիպելով այս սիրելի ու զարմանահրաշ արքունեայն վարուց, մանաւանդ թէ և ոչ անուանն յիշատակութեան, թերեւս կարելի ըլլար ենթադրել թէ ազգային գրչի մը երկասիրութիւնն է, իբրև զայլս նմանիս և բազում՝ յաւելեալս յետ ժամանակաց և դարուց 'ի գանձարան եկեղեցական պատմութեան ազգիս։ Բայց գրուածքին վերջը դրուած ծանօթութիւն կամ յիշատակարան մը այս ենթադրութիւնը կը փարատէ, վկայելով թէ թարգմանութիւն է և ոչ ինքնագիր։ Ահաւասիկ իր խօսքերը. « Ես Սամուէլ եպիսկոպոս անարժան ծառայ Քրիստոսի, թարգմանեցի զվկայութիւնն սուրբ առաքելոյն Թադէոսի, և զսրբոյ կուսին Սանդխտոյ, և ետու ամենայն Հայաստան աշխարհի »։

— Ո՞վ էր Սամուէլ երիցապատն, եւ ո՞րք էին ժամանա-կը: — Խնդիր մ'ը որ մասամբ կրնան պարզել Խորենա-ցւոյն խօսքերն 'ի պատմագրութեան (Բ. ԼԳ). «Գը-տանի, կ'ըսէ, որ ինչ առ սոցա ժամանակաւ՝ յառա-ջագոյն գրեալ յայլոց. զգալուստն առաքելոյն (Թա-դէի) 'ի Հայս. եւ հաւատալ Սանատրուկոյ եւ թողուլ զհաւատն յերկիւղէ նախարարացն Հայոց. եւ կատա-րումն առաքելոյն եւ որք ընդ նմա 'ի գաւառին Շա-ւարշան, որ այժմ կոչի Արտազ. եւ պատառումն քա-րին եւ յիրար գալ եւ ընդունել զմարմին առաքելոյն. եւ առնուլ անտի աշակերտացն, եւ թաղել 'ի դաշտին. եւ մարտիրոսանալ թագաւորի դստերն Սանդխտոյ հուպ 'ի ճանապարհն. եւ ապա ուրեմն յայտնել նշխա-րաց երկոցունց, եւ փոխել յառապարն: Այս ամե-նայն, որպէս ասացաք, այլոց պատմեալ յառաջա-գոյն քան զմեզ, ոչ ինչ կարեւորագոյն համարեցաք ոճով երկրորդել: Նոյնպէս եւ որ ինչ վասն կատար-ման Ադդէի աշակերտի առաքելոյն յԵդեսիայ յորդ-ւոյն Աբգարու, գտանի այլոց պատմեալ յառաջա-գոյն քան զմեզ»:

Խորենացւոյն այս խօսքերը երկմտութեանն տեղի չեն ձգեր թէ իրմէ յառաջ գրուած ու աւանդուած էր յայլոց Թադէի վկայութիւն: Խնդիրը կը մնայ թէ արդեօք այս գրուածքն է, որով կը զբաղինք եւ կը զբաղեցընենք ընթերցողը, եթէ ուրիշ նման եր-կասիրութիւն մ'է: Այս տարակոյսը հարկաւ կը տանի զմեզ Սամուէլի թարգմանչի անունը կրող վը-կայաբանութեան:

Արդէն տպագրուած ըլլալով այս երկասիրու-թիւնն 'ի կարգի Հայկական Սոփերաց[1]՝ տեսնենք նախ հրատարակողաց կարծիքն թէ գրութեան ժամանա-

[1] ՀԱՏՈՐ Ը. Վկայաբանութիւն Թադէոսի առաքելոյն տապա-գտութիւնն եւ փոխադրութիւնն 'ի Հայս եւ կարգաւորութիւնն որ 'ի Բրետոնս:

կին և թէ Թարգմանչին նկատմամբ։ Ասկէ խնդրոյն համար, կը կարդանք 'ի յառաջաբանին. «Ոչ յետ բազմաց զկնի ելից ամացն՝ կարծեմք գրեալ և զվեկայաբանութիւնս յաշակերտաց Թադէի, և 'ի քահէլոյն. ունէաք զարդու մերոյ Թարգմանութեան՝ փոխադրեցեալ 'ի հայ գիր և 'ի բան. որպէս և Թարգմանն յիշատակէ յաւուրս Տեառն. և 'ի ծանօթութիւնս յիշեցի և առ 'ի մեզ 'ի վերջ մատենականս»։ Այս խոստացուած յիշատակութիւնն է հետևեալը. «Սամուէլս այս յայտ է թէ Թարգմանեաց զվկայաբանութիւնս յառաջ քան զպատմագրել Խորենացւոյն. քանզի յիշէ սա այլոց յառաջ քան զինքն գրեալ զԹադէէ և զՍանդխտոյ. իսկ զի սա է տուեալ զայն յընթերցուած ամենայն Հայաստանեայց, թուի թէ մեծաթոռ ոք էր եպիսկոպոսն, և գուցէ նոյն ինքն Շմուէլն առօրի, որ առ մեծաւն Սահակաւ կացուցաւ հակառակ նմին»։

Աւգերեան վարդապետ 'ի ծանօթութիւնս վարուց սրբոց ('ի Հատորն Դ) Խորենացւոյն մեր արդէն յիշատակած հատուածը մէջ բերելէն ետքը՝ կը յաւելու. «Ահա սոյն այս պատմութիւն է որ գրի 'ի Ճառընտիրն Բ (մատենադարանի մերոյ). ըստ որոյ կարգեցաք և զվկայաբանութիւնս. կայ և այլ օրինակ ուրեք ուրեք փոքր ինչ համառօտեալ... իսկ եթէ որչափ հնագոյն իցէ քան զԽորենացին՝ եթէ վկայաբանս, և եթէ գտիչն կամ գրիչն գիւտի նշխարաց, փափաքելի է մեզ գիտել։ Իցէ՛ թէ լինէր ինձ ոք և անվրէպ Թարգման մնաց կարեւոր յիշատակարանին, զոր ընթեռնումք 'ի կատարած վկայաբանութեանս». և որովհետև իր ձեռքն եղած օրինակին մէջ Սամուէլ անունը կը պակսէր, զոր մեք ունիմք այժմ յայլմէ 'ի հնագոյն և յամենընտիր գրչագրէ, ուստի նոր ենթադրութիւն մը մէջ կը բերէ Աւգերեան. «Ուր եթէ ոք, կ'ըսէ, զեպիսկոպոսն առանց յառուկ ա-

նուան 'ի վերայ սուրբ Լուսաւորչին մերոյ տայցին. Թերեւս ոչ սխալէ. զի նմա առաւել 'ի դէպ գոյ առաջնորդ՝ եւրու ամենայն Հայաստան աշխարհին, որ եւ է առաջին կարգադիր չին ամենից մերոյ. բայց թէ և զի յորդւոց եւ 'ի թոռանց նորա, կամ յաշակերտապոսաց եղելոց առ նոքօք իմացիր, առաւելին է պատճառի հնութիւն. այլ թէ 'ի ժամանակս Թարգմանչաց գիցէ ոք՝ եթէ յառաջ քան զգիրս գրոյն եւ եթէ զհնի, թէպէտ եւ լինի առաւելին հնութեամբ երեւելի. բայց համաձայն մեկնութիւն առնէ յայնժամ առեալն թարգմանեացի. այս իմքն կամ յայլ գրոյ 'ի հայ գիր, եւ կամ յայլ բարբառոյ 'ի հայ բարբառ... Այլ եթէ անկեալ իցէ 'ի մատենէ յառաջ անուն եպիսկոպոսին, ժամանակն յայտնեսցէ յայլ օրինակաց զայն անուն» — ինչպէս որ եղաւ:

Այս ենթադրութեան հաւանականութիւնը՝ երկու գրուածոց իրարու համեմատութեան մէջ պէտք է փնտռել: — Կը յիշէ Խորենացի յոյլոց գրեալ զդալուստ Թադէի 'ի Հայս եւ զհաւատալ Թագաւորին եւ բազմաց: Սորայ առաքելոյս վկայաբանութիւնը, որ քննութեանս նիւթն է՝ յայտնապէս կը հաւատարմացընէ մեր Պատմահօր խօսքը. «Սուրբ առաքեալն առնոյր զաշակերտան եւ փութով հասանէր յաշխարհն Հայոց առ Թագաւորն Սանատրուկ, 'ի գաւառն Արտազ, 'ի քաղաքագեղն Շաւարշան, յապարանս արքունի, ուր էին հօրոց գետինք Թագաւորացն Հայոց: Եւ քարոզէր անդ զբանն կենաց, եւ առնէր նշանագործութիւնս 'ի գրան արքունի 'ի համաշխարհազարդ բանակին ... Եւ եկեալք բազումք յարքունական դրանէն առ սուրբ առաքեալն, լսէին 'ի նմանէ զքաղցրաբարբառ քարոզութիւն աւետարանին եւ տեսանէին զնշանսն ... Եւ տեսեալ զամենայն ոքանչելիս՝ բազումք հաւատացին 'ի Քրիստոս»:
Կը պատմէ նաեւ արքայազանցն Սանդխտոյ հաւա-

տալն 'ի Քրիստոս և Թադէի աշակերտիլը. խստե-րաքն և անդուլ Թագաւորին բարկութիւնն 'ի սա-գրելոյ « քրմաժողով դիւցակատար պաշտօնէից » և երբ սիրոյ և սրտին աննման զանձը՝ 'ի բանս և 'ի մահ դատապարտելը. բազմաց հաւատալն 'ի Քրիստոս և համարձակաձայն դաւանելը զհաւատոյն Ճըշմարտութեան՝ զոր Սանատրուկ ամէն ճգամբ կ'ուզէր բնաջնջել անհետ ընել յաշխարհէն Հայոց. և Սանդըխտոյ նահատակուիլն՝ ինչպէս կ'ըսէ Խորենացի. 'ի Ճանապարհի՝ մինչև հասեալ 'ի տեղի վկայական մահուանն, ուր նաև Թադէի վկայական մահը. « Եւ պատուեալ լինին՝ ընկալաւ զմարմին սուրբ առաքելոյն 'ի ներքս, և դարձեալ կնքեցաւ » :

* * *

Կը գտնուի 'ի Ճառընտիրս նաև ուրիշ հին գըրուածք մը հետևեալ խորագրով. « Թադէոսի առաքելոյ և Սամուէլի և Իսրայէլի և այլոց որ բազում ժամանակս կացին ծածկեալ և էին ամբողջ. և յայտնեցան առ ուրումն Ճգնաւորի և սքանչատեսի՝ որ 'ի մանկութենէ վարժեալ էր արժանաւոր կարգօք Կիւրակոս անուն » : Խորենացին յիշատակեց՝ մեր վերը յառաջ բերած հատուածին մէջ, թէ գրուած ըլլայ յայլոց նաև սորին Թադէի և այլոց նահատակակցաց սուրբ նշխարաց յայտնութիւնն : Հաւանական կ'երևնայ թէ զայս գրուածն ուզած ըլլայ ակնարկել, թէպէտ և ոչ ամբողջ հասած առ մեզ. ինչպէս կ'ակնարկէն նաև Սոփերաց հրատարակողք, նշանակելով միանգամայն թէ « Ոչ է մեզ յայտ ո՞վ իցէ Կիւրակոսդ և ո՞վ Դաւիթդ. Անյա՞ղթն արդեօք թէ այլ ոք » : Տաճէն եպիսկոպոսի մ'ալ անուն կը յիշատակուի այս պատմութեան մէջ. և Ջամչեանն ('ի ծանօթութիւնս պատմ. Հայոց) կ'ըսէ. « Եթէ

վերոյիշեալ Ծաջէն եպիսկոպոսն իցէ Ծահակ կամ Ջաւէն, որք նստան կաթուղիկոս յառաջ քան զսուրբն Սահակ Պարթեւ. և եթէ այս Կիւրակոս իցէ այն որ եպիսկոպոս եղև Տայոց, և կոչեցաւ Ծա-հակ ըստ պատմելոյ Բիւզանդայ, այս գիւտն չխարաց լինի քանի մի ամօք յառաջ քան զկաթողիկոսանալ սրբոյն Սահակայ ». որով գրուածքին հնութիւնն կը յայտնուի:

***

Սրբոյն Թադէի և Նահատակակցաց վկայութեան պատմութիւնն, հինն և ստուգապատում, բնակա-նաբար կը հրաւիրէ մեր մտադրութիւնն նաև ուրիշ նման գրուածոց վրայ, որոնք հնութեան և հարա-զատութեան յայտնի և անհակառակելի հետք և նշաններ կը կրեն վրանին, և իրաւամբ փափաքելիք քննադատից և հնասիրաց:

Ինչպէս ուրիշ շատ հին ազգաց քով, ասանկ և առ մեզ կը գտնուին սուրբ առաքելոց և աշակերտաց Քրիստոսի վկայաբանութեանց պատմութիւնք և յի-շատակարանք: Ակնարկ մը ձգելով անոնց վրայ, կը համարձակինք ըսել թէ յաճախ ուրիշներու քով գտնուածներէն շատ աւելի ամբողջութեամբ և ըս-տուգապատում հարազատութեամբ հասած են առ մեզ անոնք:

Այսպիսիք են Պրակք կամ Գործք սրբոց առաքե-լոցն Պետրոսի և Պաւղոսի կոչուած գրութիւնք, ո-րոց բոլորովին համաձայնք կամ ըստ մասին ձեւոյն ու-նիւթով տարբերող երկասիրութիւնք կը գտնուին նաև առ այլ հին ազգս արեւելեայս, և մանաւանդ յասորականն. Նոյնպէս ուրիշ սրբոց առաքելոց վկ-կայաբանութիւնք, յորս ընդարձակագոյնք և յաւե-լուածներով՝ որոց մեր ազգին հետ աւելի մերձաւոր

և ծանօթագոյն եղած են անուամբ և առաքելական վաստակօք, ինչպէս սրբոյն Բարթուղիմեայ՝ որուն հետաքննական մէկ վկայաբանութիւնն կը գտնուի առ մերս՝ նաև երկաթագիր ընտրելագոյն գրչագրաց մէջ, որ և այն միւս նշանակ մ'է հնութեան և հարազատութեան. Թող նոյն իսկ գրուածոց ընթացքին մէջ յաճախ յիշուած և յեղյեղուած հեթանոսական աւանդից, դիպաց, աստուածոց անուանց ու անոնց պաշտաման յիշատակութիւնք. և որոց վրայ աւելի ընդարձակագոյն պիտի խօսինք՝ մեր մատենագրութեան մէջ գտնուած Անվաւեր կամ Անհարազատ կոչուած երկասիրութեանց վրայ ընթերցողին մտադրութիւնն հրաւիրած ատեննիս։ Անցողաբար յիշատակենք առ տեղեաւ՝ թէ հաւանականաբար՝ նաև ըստ կարծեաց սրբախօս հին բանասիրութեան, նախնական քրիստոնէութեան վերաբերեալ այս գրուածոց շատերն՝ մեծ հնութիւն պէտք է ունենան. կամ յառաջ քան զժամանակ Թարգմանչաց՝ և կամ անոնց դարուն պատկանելով. Թէպէտև, — հարկ է խոստովանիլ, — յաճախ աղաւաղեալ, որով շատ անգամ նաև հարազատութիւննին ըստ մասին կեղակարծ, շատ ձեռքերէ և'ի գրչաց անցնելնուն յայտնի պատճառաւ։ Երկրորդ հաւանական կարծիք մը՝ որ առանց կարող ըլլալու ժամանակն ճշդել՝ յասորականէ թարգմանուած ըլլան 'ի մերս. զի այդպիսի անհարազատ երկասիրութեանց յաճախութիւնք՝ քրիստոնէութեան երկրորդ դարուն իրենց երևումն և զարգացումը ունեցած են 'ի Գնոստիկեան աղանդաւորաց, և ասորի լեզուով. և ինչպէս ուրիշ հին ազգաց, սանկ նաև 'ի մեր լեզու փոխադրուելով՝ մասամբ հասան և առ մեզ, և որոց վերայ դրիչք և ընդօրինակողք իրենց կողմանէ յաւելուածներ ալ ըրած կ'երևնան։

Թէ այդպիսի անհարազատ և անվաւեր գրուա-

ծոց թարգմանութիւնք՝ ոչ աննշան թուիմ՝ էին նաեւ
Հայ մատենագրութեան ինչուան վերջին դարուց մէջ,
կը վկայէ նոր գրչագիր մը՝ մէջ բերելով հետեւեալ-
ները. Արամայ կոչին. — Ճիռն օրհնութեան. — Փի-
փիանին. — Գորտոսայնի. — Կիրակոսայնի. — Ղուկիանոսին :
— Պետրոսի տեսիլն. — Դիաքիկն. — Աստուածածնի
պատմութիւնն. — Սեբիոսն. — Փիւսիոնացիքն. — Ման-
կութեան աւետարանն. — Մանեայ մեկնութիւն աւե-
տարանին: Ասոնց վրայ կը յաւելու գրչագիրն նաեւ
աւելի նորագոյն երկասիրութեանց յիշատակու-
թիւն. Լուսաւորչի տեսիլն. — Զանբաքելի (?) մա-
տեանն և Գրիգորիսի և Բարսղի հարցմունքն, և կը
ծանուցանէ. « Այս են անուանք ուխտաւոր սուրբ
գրոց որ եկեալ 'ի հերձուածող Ասորւոց և ոչ յուղ-
ղափառաց Ասորւոցն » :

Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ

(ԱՓՐԱՏ)

Ս. Յակոբ Մծբնայ և իր ազգութիւնը: — Իրեն
ընծայուած Զգօն գիրք: — Յ-Ս. Ասսեմանի և իր
կարծիքը այս գրոց վրայ: — Անիրաւա, և եւրոպա-
կան արդի քննասիրութեան կարծիք: — Իր անուամբ
գտնուած ճառեր: — Գլխակարգութիւնք և նիւթ ճա-
ռից: — Ժամանակ անոնց յօրինման: — Ասորի բը-
նագիրն և հայկականն: — Իրարու հետ համեմատու-
թիւնք: — Հայ թարգմանութեան ժամանակը և ար-
ժէքը: — Մատենախօսական տեղեկութիւնք:

Մեր վերը յիշատակած գրուածներէն զատ առան-
ձինն՝ քննադատութեան և մատենագրութեան արժա-
նաւոր պէտք է սեպուի արժանապէս սրբոյն Յակով-

բայ Մծբնացւոյ անուամբն գանուած և ինչուան առ մեզ հասած Զգօն գիրքը։

Մծբնայ սուրբ և մեծահռչակ հայրապետին ազգին, տոհմին և ցեղին վրայ այլևայլ կարծիք և տարակոյսք յուզուած են, ոմանց ազգակից և հօրաքեռորդի կոչելով զնա սրբոյ Լուսաւորչին, և այլոց՝ չընդունելով այդ ազգակցութիւնն. այդպիսի տարակոյսք նաև առ հինս եղած են. մերոց՝ այդ տոհմակցութեամբ՝ թէ սրբոյ Լուսաւորչին, և թէ իրմով քրիստոսական հաւատոց երկնապարգև ժառանգութիւնն ստացող և վայելող ազգին պատիւն փափաքելով յաճախել. այնպիսի նշանաւոր և եկեղեցւոյ պատմութեան մէջ հռչականուն անձի մը՝ որուն դիմաց կը խոնարհէր արքունի ծիրանեօքն և փառօք կայսրն մեծ Կոստանդիանոս, «և հրապարակախօս եղեւ. — ինչպէս կ՚աւանդի 'ի պատմութեան վարուց սրբոյն, — ասէր 'ի լուր առակի գահակալեալ գրոհիցն. Երեք սիւնք են 'ի մէջ ընդ երկինս և ընդ երկիր. Անտոն յԵգիպտոս, Սեղբեստրոս առ մեզ, և սուրբն Յակոբ 'ի Մծբին քաղաք յերկրին Ասորեստանեայց»։ Բայց որչափ ալ կայր ու կը տևէր այս տարաձայնութիւնն, մանաւանդ 'ի մէջ Հայոց և Ասորւոց, առաջինքն ամենայն ջանք ըրած են այդ փառքը չօտարացընել՝ հայաստան աշխարհի ընդարձակութեան մէջ շատ տեղ իրեն պատուոյն վանքեր ու եկեղեցիներ կառուցանելով, ու ներբողեանս, երգովք ու շարականօք յաճախելով զդրուատիս նորա. և իր հին պատմագրաց մէկն՝ նշանաւոր հնութեամբն և ոճոյ գեղեցկութեամբ, կը վկայէ թէ «Ոմանք հակառակին՝ ոչ ասելով զնա յազգէն Արշակունեաց, կամ հօրաքեռորդի սրբոյն Գրիգորի, զոր մեք սերտ գտեալ և հաւանեալ 'ի գրոց Ասորւոց»։

***

Այս խնդիրը մեր գրուածքին նպատակէն դուրս է։ Մեզի համար աւելի հետաքննականն և հետազօտելի այն է որ նոյն խնդիրք և տարակոյսք եղած են և կ՚ըլլան իր անունը կրող և հայերէն լեզուով մեզի ծանօթ և սիրելի երկասիրութեանն ալ նկատմամբ։

Այս գիրքն է, ինչպէս ըսինք, Զգօն կոչուած ճառից հաւաքում մը, զոր հինք՝ մանաւանդ մերքն, և երկար դարուց վկայութիւնն և աւանդութիւն՝ կ՚ընծայեն Մծբնացւոյն. իսկ այլք՝ և առաւելապէս մեր ժամանակից բարգաւաճ գիտութիւն, ուսումնական հետազօտութիւնք և հնախուզական գիւտք՝ Ափրաատայ կամ Փրաատայ Ասորւոյ կուտան։ Որչափ ալ բանասիրական նկատմամբ և արդի գիտութեան առջև անհակառակելի ու անվիճելի երևնայ այս կարծիք և ենթադրութիւն, սակայն մեզ հարկ է յիշեցընել որ թէպէտ հնագոյն պատմիչք յազգիս՝ Բիւզանդ և Խորենացի, Մծբնացւոյն առաքինի և աստուածահաճոյ վարուց վրայ կը խօսին, առանց անոր գրաւոր երկասիրութեան յիշատակութիւնն ընելու, բայց սրբոյն Յակովբայ վարուց գրիչք առ մեզ յայտնի ու բացարձակ խօսքով իրեն կը վերագրեն այս գրուածքը։ Անոնցմէ ստուգապատում և բաւական հնութիւն ունեցողներէն մին, – ինչպէս կ՚ենթադրուի գրութեան կերպէն և ոճէն, – կ՚ըսէ, թերևս քիչ մը մթին բացատրութեամբ. « Աստուածային պատմութեանցն հոգ տարեալ, և հնապատմութեանցն կարի յոյժ հմտացեալ, զոր յիւր գիրսն իմանի Զգօն կոչեցեալ. զոր յաջորդն ցուցանէ զնսամտագոյն տառն որ 'ի բայսն է »։ Նոյնն դարձեալ յընթացս պատմութեան վարուցն. « Գիտակ գրոց

կարի վաղեմ. պարզ է յետ ինքնախօս գիրքն իմանալ և ճանաչել՝ զոր Զգօն կոչեն. և կարի հնագոյն գրոց նորա եղեալ վասն լուսաւոր մարգարէացն որ 'ի նմա խորագոյն արտածանի. զոր ասա ,յաջորդն յետ բուրում կարգին 'ի ձեռս արտածանէ պարզաբար, եթէ Տէր կամեսցի » : Դարձեալ. « Ազգ եղև սքան-չելիքն առ սուրբն Արիստակէս հարազատ իւր. բա-զում պաղատանս արձակէր վասն աշխարհին Ուռհ-աւենեաց, լուծանել 'ի կապանաց, և զգիրսն տալ զենդրելին, զոր ինքնախօս արարեալ Զգօն կոչե-ցեալ » : Աստուածաշունչ գրոց Նախադրութեանց մէջ ալ, — որ ինչպէս ետքը պիտի տեսնենք, — ազգային գրչի երկասիրութիւնք են հաւանականաբար, և հը-նութիւնն անտարակուսելի, Եօթերայ գրոց Նախա-գրութեան մէջ կը կարդանք. « Իսկ զՀամամն Ամա-ղաթեանց Ադագեանց, որ էր փառաւոր 'ի դրան Արտաշիսի. և կամէր սպանանել զՄուրթքէ և ջնջել զՀրէայսն, ասէ սուրբն Յակոբ Մծբնայ 'ի գիրսն որ կոչի Զգօն, թէ էր Համան Ամաղեկացի յազգէ Ագա-գայ՝ զոր ապրեցոյցն Սաւուղ, և սպան Սամուէլ » : Եւ զայս կը գտնենք յիշատակուած 'ի Զգօն գիրս, 'ի ճառն երրորդ՝ Յաղագս պահոց՝ հետևեալ խօս-քերով. « Եւ ընգէր, սիրելի, խնդրեաց Համան պար-գեւս յարքայէ անտի՝ զի կորիցեն ամենայն Հրէայք. այլ զվրէժ որդւոց ազգին իւրոյ կամեցաւ խնդրել և ջնջել զանուն որդւոց Իսրայելի, որպէս և ջնջե-ցաւ յիշատակ Ամաղեկայ 'ի ներքոյ երկնից. և մնա-ցեալ էր Համան մնացորդ Ամաղեկացւոց անտի, որ-պէս և գրեալ է. Համան Համաթաթեանց մինչդեռ 'ի տան Թագաւորութեանց Արշաւրայ արքային էր, պատուական և փառաւոր էր » : Նարեկացին Գրի-գոր 'ի ներբողեանին առ սուրբն. « Սոփերս օգտա-կարս և աշխարհակեցոյցս մատենագրեաց. որով սահ-մանաւ կշռութեան բանի՝ զչարախօսաց բերանն

կարծեաց. և զհերձուածողականն խիստ զգուշաւու-թիւն, ամենայնիւ իսկ ըմբերանեաց »:

Ի Լատինաց կը յիշատակէ զՄծբնացին Գեննադիոս եպիսկոպոս Մասսիլիոյ, որ 'ի հինգերորդ դարու. « Յակոբ, կ'ըսէ, որ յորջորջեալն էր Իմաստուն (Sapiens – Զգօն) եպիսկոպոս Մծբնայ, գրեաց խօսս 'ի քսան և վեց դիրս ». և սուրբն Հերոնիմեայ եկեղեցական մատենագրաց Թուոյն մէջ անոր յիշատակութիւնը չընելուն պատճառ կու տայ՝ որ դեռ եւս անտեղեակ էր ասորի բարբառոյն Հերոնիմոս, երբ այդ երկասիրութիւնը շարադրեց, ուստի գոհ կ'ըլլայ միայն քանի մը ասորի հեղինակաց յիշատակութեամբ՝ որոց գրուածք ծանօթ էին իրեն լատինական թարգմանութեամբ. հետեւաբար գուցէ կը մնայ Մծբնացւոյն անունը՝ որուն գրուածք դեռ ուրիշ լեզուի փոխուած չէին [1]:

Յունաց վկայագիրք յայտնապէս կը յիշատակեն թէ « շարագրեաց գիրս շահեկանս և օգտակարս » և կ'աւանդեն թէ Թէոդորետոս եպիսկոպոսն Կիւրիոյ այդ գրուածոց յիշատակութիւնն ըրած ըլլայ իր Եկեղեցական պատմութեան մէջ:

Աւելորդ կը սեպենք թէ 'ի մեր մատենագրաց և թէ յօտարաց վկայութիւններ յաճախել, որոց բանք և կարծիք զուգաձայն և զուգընթացք են ինչուան հիմա մէջ բերուածներուն: Կը մնայ ուրիշ կարեւորագոյն կէտի մը քննութիւնն, նոր բանասիրութեան

[1] Jacobo, cognomento *Sapiens*, Nisibena nobilis Persarum modo civitatis episcopus, unus ex numero sub Maximiniano persecutore confessorum, et eorum, qui in Nicœna Synodo Arianum perversitatem Omousi oppositione damnarunt. Hunc enim B. Hieronymus in libro Κρονικῶν, velut magnorum virtutum hominem nominans, in catalogo scribarum cur non posuerit, facile excusabitur, si consideremus, quod ipsos tres, vel quatuor Syros, quos potuit, interpretatos in Græcum se legisse testetur. Unde constat, eum illo tempore ignorasse Syram linguam, vel literas.

հետազօտութեանց, հետեւանք և գիտ. — Մծբնա-ցւոյն՝ այս գրուածքը Աֆրաատայ ընծայուելուն խնդիրը և հաւանականութիւնը։

***

Հմուտն Յ.-Ս. Ասսեմանի՝ մինչ դեռ եւս տեղեկութիւն չունէր, թէ սորոյն Յակովբայ ճառից թարգմանութիւնք կը գտնուին 'ի հայ. լեզուի և 'ի մատենագրութեան, և Մծբնացւոյն թէ անձին և թէ գրուածոց յիշատակութեան չհանդիպելով առ Հերոնիմեայ, ինչպէս և ոչ առ Թէոդորեայ, Փոտայ և այլոց Յունաց և Ասորւոց՝ որ նախ քան զՀերոնիմոս և յետ նորա աւանդեցին եկեղեցական մատենագրաց անուանքն և անոնց ընծայուած երկասիրութիւնքը, ժխտեց Մծբնացւոյն ճառից գոյութիւնը, և իր Արեւելեան Մատենադարանին մէջ յայտնապէս հաստատեց թէ անուանց շփոթութենէ յառաջ եկած ենթադրութիւն մ'է, Յակոբայ Սրուճ կամ Սարուկեցւոյ գրուածքն ընծայելով Մծբնացւոյն։ Բայց երբ տեղեկացաւ 'ի Հայոց՝ որ Սարուկեցւոյն գրուածներէն ուրիշ են Մծբնացւոյ ընծայուածներն, որոց այլ և այլ գրչագիրք՝ բաց յայլ տեղեաց կը գտնուին և 'ի Վենետիկ առ Մխիթարեան հարս, կարծիքը փոխեց Ասսեմանի և սխալման մէջ գտնուիլը հրապարակաւ ալ յայտնեց նոյն Արեւելեան Մատենադարանին առաջին հատորոյն մէջ (յ'էջ 557). վկայելով թէ ստուգապէս Մծբնացւոյն են ճառքն. և իրեն այդ կարծիքն ընդունեցաւ Բոլլանդեանն Կառնէր [1]։

Նոյն Ասսեմանի վերը յիշուած բազմահմուտ և

[1] Assemanus, censet ea, quæ in prædicto Codice Armeno inveniuntur, genuini Sancti Jacobi Nisibeni scripta esse; ego in hac re opinioni illius non adversabor.

բազմահնչակ Մատենագարանի գրոց երրորդ հատորին մէջ (Մասն Ա) կը հրատարակէ Էպեդ-Եշուա Նեստորական եպիսկոպոսին յօրինած եկեղեցական գրոց կամ մատենագրաց ցուցակը, յորս կը յիշատակուի «ամենէրջանիկն Ափրատէս, իմաստունն պարսիկ, որ շարագրեաց կրկին հատորս, ճառս ըստ կարգի նշանագրաց»: Զայս ծանօթութիւն առած էր կանխաւ և Գրիգոր Բար-Եբրէոս, յԵկեղեցական պատմութեան իւրում (Բ. Գիրք) թէպէտ և փոքրիկ զանազանութեամբ յ'Էպէտ-Եշուայ, հետեւեալ խօսքերով. «Ի սոյն աւուրս (Պապայի) եկաց հռչակաւոր իմաստունն պարսիկ, որոյ անուն էր Փարհատ, որ գրեաց ճառս յորդորական, և թուղթըս (կամ խօսս) քսան և երկու՝ ըստ նշանագրաց կարգի»: Վրայդ՝ իմաստուն ասորագէտն անգղիացի, որ Ափրաատայ գրոց բնագրին առաջին տպագրութիւնն ըրաւ՝ Պապայայ համար կ'ըսէ թէ ութերորդ եպիսկոպոս էր Սելեւկիոյ՝ որ ըստ Ասսեմանեայ եպիսկոպոսական օծումն ընդունած է 'ի թուին Յունաց 577, այն է ամի Տեառն 266. և ընկեցաւ կամ մերժեցաւ յաթոռոյն 'ի 637 (326 ամ Տեառն):

Գրիգոր Բար-Եբրէոս նոյն Եկեղեցական պատմութեան մէջ կը յաւելու թէ յերրորդ դարու յարումկեցին և հռչակեցան Աթանաս Աղեքսանդրիոյ, Եւսեբիոս Եմեսացի, Եփրեմ Ասորի, Յուլիանոս Սաբայի և Աբրահամ Գիտունեա, «ծաղկեր և Բուզիթիս, իմաստունն պարսիկ, որ էր ուղղափառ. և շարագրեաց զգիրս Յուցմանց»: Ըստ Վրայդի՝ Բուզեթիս անունն վրիպակ է գրչագրաց, փոխանակ գրելոյ (Ա) Փրատթիս. «Գիրք Յուցմանց» կոչուածն ըստ ասորականին կը նշանակէ ժողովածոյ կամ հաւաքմունք մը քսան և երկու թղթոց կամ խօսից ասորի այբուբենից թուոյն ու կարգաւ, բաց 'ի վեր-

չին քսաներորդ երրորդէն, որ կան 'ի ձեռագրին, և որ ըստ ասորական բնագրին Թահուիթօ կը կոչուին, իսկ 'ի հայ Թարգմանութեան՝ ընդհանուր անուամբ Ճառ։

Անգղիացի բանասէրք ոմանք և հնախոյզք՝ պետական օժանդակութեամբ և ծախիւք քիչ տարի յառաջ՝ ասորական բարբառով բազմաթիւ հին ձեռագիրք գտան 'ի Նիտրիա, և փոխադրեցին 'ի մուսէոնն Բրիտանական Լոնտոնի։ Գերմանացի բանասէրն Տըլակարտ, ասորի լեզուին քաջահմուտ և հայկականին ոչ անտեղեակ, 'ի հեռաւոր արևելից բերուած այդ ձեռագրաց քննութեանն պարապելով, գտաւ և հրատարակեց նամակ մը Գէորգայ ուրումն եպիսկոպոսի արաբացւոյ՝ առ քահանայն միայնակեաց Իշուա կամ Յեշուա անուն՝ բնակեալ յԱնատ գեղջ. որ փափաքելով ուսանել և գիտել թէ ով էր կոչեցեալն Իմաստուն պարսիկ, գրեր էր առ Գէորգ եպիսկոպոս խնդրելով՝ որ այս անձին՝ վրայ գիտցածն հաղորդէ։ Արաբացի եպիսկոպոսն ալ այն նամակաւ հարցասէր խնդրողին փափաքը կը կատարէ։ Բայց ոչ ծննդեան տեղւոյն կամ ազգին վրայ, և ոչ ալ եկեղեցական ինչ աստիճանի վերաբերելուն նըկատմամբ չի կրնար որոշ բան մը զրուցել։ Կ'երեւայ տարակուսանօք անոր 'ի Մծբին քաղաք բնակած ըլլալուն. և յայտնապէս հաւաստեօք կը ցուցընէ թէ սրբոյն Եփրեմի աշակերտը չէ, ինչպէս ոմանք ժամանակագրական վրիպակաւ մը ունեցեր էին այդ կարծիքը։

Ի Նիտրիոյ բերուած գրչագրաց մէջ և «Ափրաատայ Իմաստնոյ պարսկի» անունն կրող Ճառերը՝ նոյն են արդէն մեզի ծանօթ Մծբնացւոյ ընծայուած Ճառերուն հետ, միայն թուոյն և դասակարգութեան մէջ տարբերելով. զի ուր Փրաատայ գիրքը, և զայն յիշատակողք, քսանուերկու Ճառս կամ խօսս իրեն-

ընծայեն, ըստ Թուոյ՝ ինչպէս կ՚ըսեն, նշանագրաց (Ասորւոց). Մծբնացւոյն անունը կրող գրոց մէջ ճառքն միայն եօթնեւտասն են Թուով: Վասզի որ, ինչպէս ըսինք, Ափրաատայ ճառից բնագրին տպագրութիւնն ըրաւ 'ի Լոնտոն (1869) [1], կը համարի որ յառաջ ասորի գրչագրէն ընծայուած ճառից կամ խօսից մէջ՝ զորս ինքն հեղինակն Ըմծայորբիւնք կամ Վարդապետութիւնք կը կոչէ, ինչպէս նաև 'ի գրչագրին և 'ի Թուղթն Գէորգայ եպիսկոպոսի, տասն միայն շարագրեալք են յամի 337. իսկ միւս երկոտասան ճառք՝ կրտսերագոյն են ժամանակաւ՝ առջիններէն տասը տարի ետքը. մինչդեռ վերջինն՝ մակագրեալն յասորի բնագրին Թեօկրա տիրօփիկրա յօրինուած է 'ի 345: Մծբնացին վախճանեալ էր արդէն յամի 338, նախկին ճառից շարագրութենէն տարի մը ետքը. և զոր իրաւամբ զօրաւոր ապացոյց կը համարին քննադատք, դէթ վերջիններն Ափրաատայ ընծայելու:

***

Ո՞վ էր Ափրաատ կամ Փրաատ, «իմաստունն պարսիկ»:

Քրիստոնէութեան նախկին դարուց մէջ՝ ոչ անծանօթ էր անունս առ Պարսիկս և առ Հայս (Հրահատ). և ասորի հին վկայաբանութեան մը մէջ որ կարծի շարագրեալ 'ի 412, կը յիշատակուի Ափ-

[1] The homilies of Aphraates, the Persian Sage. Edited from Syriac manuscripts of the fifth and sixth centuries, in the British Museum. Vol. I. Syriac text. Այս գրուածքէն ութ ճառ (Ա, Բ, Գ, Դ, Է, ԺԲ, ԺԸ, ԻԲ) համառօտ յառաջաբանով մը Ափրաատայ վարուց և գրուածոց վրայ՝ գերմաներէն թարգմանութեամբ 'ի լոյս ընծայեց (1874) հմուտ բանասէրն Պիքէլ (Bickell) 'ի Մատենադարանի Հարց Եկեղեցւոյ (Bibliothek der Kirchenväter);

րատա անունով « հին » պարսիկ վկայ մը, յառաջ քան զժամանակս Պապ-Սաբայի և Շահգոստայ, որ են իններորդ և տասներորդ եպիսկոպոսունք Սելևկիոյ և Կտեսիփոնի, և նահատակեցան ճիշդ այն ատենին յորում « իմաստունն պարսիկ » յօրինած էր իր վերջին ճառը: Չենք կրնար նոյն համարիլ « զիմաստունն պարսիկ » ընդ Ափրաատայ զոր կը յիշատակէ Թէոդորետոս յԵկեղեցական պատմութեանն, որ փախստեայ երթալով յաշխարհէն Պարսից, հաստատեց նոր զբնակութիւն իւր յԵդեսիա, և ապա փոխադրուելով յԱնտիոք՝ տեսաւորեցաւ հոն արիոսեան Վաղէս կայսեր հետ յամին 375-377: Իբրեւ սուրբ մեծարուած է յեկեղեցւոջ Յունաց, և իրենց Յայսմաւուրաց մէջ յիշատակուի անունն 'ի 29 յունուարի. իսկ 'ի հռովմէական վկայաբանութեան յ'1 ապրիլի: Ոմանք կը համարին թէ Ափրաատ նոյն ըլլայ ընդ միում 'ի վկայից որ Պարսից Շապուհ Բ թագաւորին ժամանակ նահատակեցան 'ի Պարսս, և որ կոչէր նաև Յակոբ: Ի Նիտրիոյ յԱնգղիա փոխադրուած գրչագրաց մէկուն մէջ յիշատակութիւն կ'ըլլայ զՃառից « Մար Յակոբայ իմաստնոյն պարսկի » . և ժամանակը կը դնէ յամի 512, որ ամենևին չյարմարիր Մծբնայւոյն: Վրայդ կը համարի թէ Ափրաատ՝ քրիստոնէական սուրբ կրօնքն ընդունելէն ետքը սկսած ըլլայ կրել և զանունն Յակոբ, և կրօնակիցքն ալ դադրած ըլլան զինքըն առաջին անուամբը կոչելէն, և սոր ապացոյց կը համարի՝ որ 'ի լուսանցս իրմէ հրատարակուած սորին հին գրչագրին՝ գրուած է և անուն « տեառն Յակոբայ » :

Հիմնական բանասիրութեան և քննադատութեանց կարծիք Ափրաատայ անձին և ժամանակին վերայ հետևեալքն են: Կը ծաղկէր նա յառաջին կամ յերկրորդ քառորդի չորրորդ դարուն, հաւանակա-

նաքար իր ծննունդը դնելով Քրիստոսի 280 թուականին. որով կրտսերագոյն կը համարուի ժամանակաւ քան զՅակոբ Մծբնայ, և երէց քան զսուրբն Եփրեմ: Գէորգայ արաբացւոյ եպիսկոպոսի վկայութեամբն, զոր քիչ յառաջ յիշատակեցինք, միայնակեաց և կրօնաւոր էր նա, ունելով նաև զաստիճան եկեղեցական. հաւանականաբար բարձրացած յեպիսկոպոսական աթոռ, որով կոչաւ 'ի Սելևկիա և 'ի Կտեսիփոն գումարուած ժողովոց հայրց հետ բազմիլ յամի 344. և իր սրբութեան և գիտութեան համբաւովը մեծարուած յամենեցուն. իրեն յանձնուեցաւ ժողովոյն կողմանէ շրջաբերական թղթոյն շարագրութիւնը, զոր կը գտնենք նաև 'ի հայ թարգմանութեան (տպ. Հռովմայ յ'էջ 403), որոյ սկզբնաւորութիւնն է. «Առցուք զխորհուրդ 'ի մէջ հասարակաց մտօք. երբ ժողովեալ իցեմք ամենեքին ամփոփ միաբանութեամբ, գրել զթուղթ զայս առ ամենայն եղբարս մեր մանկունս եկեղեցւոյ որք իցեն ընդ գաւառս. եպիսկոպոսունս, երիցունս և սարկաւագունս, ամենայն ուխտս եկեղեցւոյ Աստուծոյ՝ համդերձ ամենայն ծննդեամբք իւրովք սիրելիս և անձկալիս, մանաւանդ որ 'ի Սկեզ (Սելևկիա) և 'ի Տիզպոն 'ի տեղ աստուած կենարար մեր. որ 'ի ձեռն Քրիստոսի իւրոյ կեցոյց զմեզ և մերձեցոյց զհեռաւորութիւն մեր առ իւր, որոց ամենեցուն ողջոյն յոյժ»: Այս կերպով և լեզուով՝ եպիսկոպոս մը միայն կրնար խօսիլ և գրել, ինչպէս նաև երբ կ'ըսէ «Վասն ձեռնադրութեան զոր առնուն 'ի մեկնչ մարդիկ», որով հաւանականութիւն կ'առնու բանասիրաց ոմանց ենթադրութիւնն՝ որ եպիսկոպոս և առաջնորդ կը համարին զնա 'ի վանս սրբոյն (Մար) Մատթէի:

Այս կարծիքը կը հաստատարմայընեն անշուշտ տասներորդ Դարու վասն հովուաց և անոր պարունա-

կութիւնն. որ կը պակսի 'ի Գեննադեան ցուցակէն, և ամբողջ է 'ի մերն և յասորին: Իր թըղթոց կամ խօսից ժամանակը նշանակած կամ ճշդած չէ Աֆրաատ. և զոր կարելի է թերեւս ենթադրութեամբ գուշակել՝ հայելով 'ի ժամանակն յորում ապրեցաւ, և 'ի բանիցն յորս ակնարկութիւն կ'ըլլայ հալածանաց զոր կրեց եկեղեցի: Յաճախ իւր խօսքերն ուղղուած են ընդդէմ Հրէից, և որք անշուշտ էր գլխաւոր ընդդիմամարտքն էին, գուն ուրեք յիշատակութիւն կ'ըլլայ հերձուածոց որք տառապեցուցին զնախնական եկեղեցի, «'ի սաստ վարդապետութեանն և յանօթս չարին» ինչպէս կ'ըսէ. օրինակ, յերրորդ ճառին կը յիշատակէ զՄարկիոն, զՎաղենտինոս, զՄանիքեցիս, զորդիս խաւարին, զվարդապետութիւն չարին Մանեայ, որ բնակէ 'ի խաւարի նման օձից, և անհէ կախարդանս «կրօնս Բաբելոնի»: Արիոսի՝ որ իր դարուն գլխաւոր հերետիկոսապետն էր, և 'ի Նիկիոյ ժողովոյն՝ յորում էր և սուրբն Յակոբ Մծբնայ, դատապարտել մերժեցաւ՝ ամենևին յիշատակութիւն չընէր. որով մարթ է ենթադրել՝ թէ այն դառնաց մէջ որ Աֆրաատայ հոգևոր տեսչութեանն և խնամոց յանձնուած էին Արիոսի վարդապետութիւնն դեռ մուտ գտած կամ արմատացած չէր:

***

Ասորի բնագրին մէջ չենք տեսներ այն թուղթն՝ իբրու թէ գրուած 'ի Գրիգորէ Լուսաւորչէ առ սուրբն Յակոբ Մծբնայ, զոր ունի հայերէն օրինակն հետևեալ խորագրով. «Թուղթ սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին՝ առ սուրբն Յակոբ Մծբնայ եպիսկոպոս»: Ոչ մեք, և ոչ այլ ոք՝ հմտագոյնք և բանիբունք, պատճառ կամ պատշաճութիւն մը չենք տես-

ներ այս մեղմոյն։ Անմտադրելով աւ, ընդդէմ դրեթէ ընդհանուր և ընդունելի կարծեաց արդի բանասիրութեան, որ Մծբնացւոյն հարազատ երկասիրութիւնն ըլլան այս ճառք, Լուսաւորիչ Նիկիոյ ժողովքէն քիչ ետքը կատարեց իր աստուածահաճոյ կենաց և առաքելութեան ընթացքն, յերկնաւոր հայրենիսն փոխադրուելով. և որ զբովանդակ աշխարհն Հայաստանեայց լուսաւորեր էր աստուածահրաշ վարդապետութեամբն, չէր կրնար կարօտ ըլլալ այնպիսի ոճով աղերս կամ խնդրուածք մը յօրինել սորվելու՝ ամենիմաստն և աստուածուսոյց։ Այսպիսի անպատշաճութեան մը վրայ յիրաւի տարակոյս յայտնելով լաւին Թարգմանիչն՝ 'ի ծանօթութեան իւրում ապագրին կ'ենթադրէ, — անշուշտ պարզ ենթադրութիւն մը ըրած ըլլալու համար, — թէ սուրբն Գրիգորիս Աղուանից եպիսկոպոսն ըրած ըլլայ այս խնդիրն։ Չէ հաւանութեան և ոչ այս կարծիք. զի որպէս սրբոյ Լուսաւորչին, ասանկ և ոչ իր աստուածարեալ և սրբասուն Թոռան, որուն ընդարձակ աշխարհի մը հովուութիւնն հաւատացուած էր, կրնանք պատշաճեցընել հետևեալ խօսքերն. «Յաւաղ քան զամենայն ինչ, որ կարի պիտոյ է ինձ գրեսցես. և խելամուտ արասցես զիս վասն հաւատոյ մերոյ, թէ զիա՛րդ իցէ, և ո՛ր հիմն նորա, և ո՛րպէս շինուած շինի նա, և որպիսի իրք հաստատի, և որպիսի գործք պիտոյ են նմա։ Այլ ես այսպէս եմ հաւատացեալ, թէ միայն իցէ Աստուած որ արար զերկինս և զերկիր 'ի սկզբանէ, և զարդարեաց զաշխարհս կազմուածով իւրով... Ցայսմ ամենայնի, եղբայր, ես այսպէս հաւատացեալ, աղաչեմ զքեզ զի գրեսցես և խելամուտ արասցես զիս, թէ որպիսի գործ պիտոյ է այսմ հաւատոյ մերոյ, և հանգուսցես զիս» ։

Աւելորդ է անդրադարձընել, ինչ որ ողջամիտ ըն-

Թերցողին արդէն քաջայայտ է, թէ անհարազատ է այս Թուղթն, և անուան զարմանալի փոփոխութեամբ մը՝ սրբոյն Գրիգորի Մեծարոյ և Նուիրական-անուննմուտ գտեր է. և 'ի գրչաց իրարու աւանդուելով՝ այնպէս հասեր է մինչև առ մեզ։ Հաւանական կարծեօք Գրիգոր անունով մեկը եղած է խնդրող Ճառիցն, որ յետոյ շփոթուեր է ընդ անուան Լուսաւորչին։ Ասորի բնագրին մէջ ալ չգտնուիլը՝ յայտնի ապացոյց մ՚է եկամուտ ըլլալուն։ Նոյնպիսի վրիպմամբ յոմանց 'ի Սերոյն, ինչպէս վերը տեսանք, սուրբն Արիստակէս կարծուեր է խնդրող Ճառիցն[1]։

***

Առաջին Ճառը, ընծայականէն անմիջապէս ետքը, առ սուրբն Գրիգոր ուղղուած վերնագրով մը կը սկսի, և որ բնականաբար կը պակսի դարձեալ յասորի բնագրին. «Սրբոյն Յակոբայ Մծբնայ եպիսկոպոսի, պատասխանի Թղթոյ սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»։ Ասորականին սկզբնաւորութիւնն է. «Ընծայութիւն առաջին, վասն Հաւատոյ»։

Այս Ճառք՝ որ ըստ մեծի մասին իրարու հետ կապուած ու ներքին վերաբերութիւն ունին, նամակի ձևով շարագրուած են, և նպատակնին է քրիստոնէայ եկեղեցւոյ վարդապետութեան դրութիւնն ու պաշտպանութիւնը։ Գեննադիոս, ինչպէս յառաջա-

[1] Ֆէլիքս Նէվ, հայագէտն և ասորագէտ պելճիկացի, իր նոր մէկ հրատարակութեան մէջ (L'Arménie Chrétienne) կը գրէ. On avait imprimé en 1756 la version arménienne d'une vingtaine d'homélies attribuées à St. Jacques de Nisibe avant d'en retrouver et d'en publier l'original syriaque. Ces homélies, portées au nombre de vingt-trois, ont été restituées à leur véritable auteur, Aphraate, dit le Sage Persan, moine et peut-être évêque du IV siècle, originaire probablement d'un pays situé aux frontières de la Syrie et de la Perse.

գոյն յիշեցինք. Մծբնացւոյն ընծայուած երկասիրութեան խօսքն կ'ընէ. մէջ բերելով նաև գլխակարգութիւնս Ճառիցն, որ մասամբ կը տարբերին 'ի Հայկականէն. մինչ այս վերջնոյս մէջ կը գտնուին այնպիսիք՝ որ պակասին 'ի գեննադեան ցուցակին, ինչպէս նաև Ճառք որ միայն ասորականին մէջ կ'երևնան: Հետաքննական կը համարիմք այս երեքին գլխակարգութիւնքն իրարու դիմաց նշանակել աստէն:

ՀԱՅ	ԳԵՆՆԱԴԵԱՆ	ԱՍՈՐԻ (Վէօյտ)
Ա. Վասն հաւատոյ.	Վասն հաւատոյ.	Ընծայութիւնք հաւատոյ.
Բ. Վասն օրինակի սիրոյ.	Վասն սիրոյ, և առանձին՝ սիրոյ ընկերին.	Վասն սիրոյ.
Գ. Օրինակ պահոց.	Վասն պահոց.	Վասն պահոց.
Դ. Օրինակ աղօթից.	Յաղագս աղօթից.	Վասն աղօթից.
Ե. Օրինակ պատերազմի.	Վասն թագաւորին Պարսից և հալածանաց քրիստոնէից.	Վասն պատերազմաց.
Զ. Օրինակ ուխտաւորաց.	Յաղագս համբերութեան.	Վասն կրօնաւորաց.
Է. Օրինակ ապաշխարութեան.	Յաղագս ապաշխարութեան և հատուցման.	Վասն ապաշխարութեան.
Ը. Վասն յարութեան մեռելոց.	Յաղագս յարութեան և հանդերձեալ կենաց.	Վասն յարութեան մեռելոց.
Թ. Վասն խոնարհութեան.	Յաղագս խոնարհութեան.	Վասն խոնարհութեան.
Ժ. Վասն հովուաց.	(պակասէ).	Վասն հովուաց.
ԺԱ. Վասն թլփատութեան ընդդէմ հրէից.	Վասն թլփատութեան.	Վասն թլփատութեան.
ԺԲ. Վասն շաբաթու ընդդէմ հրէից.	(պակասէ).	Վասն պասեքին.

ՀԱՅ	ԳԵՆՆԱԴԵԱՆ	ԱՍՈՐԻ (Վրայ)
ԺԳ. Օրինակ ցուցանելի վասն ընտրութեան կերակրոց.	(պակաս).	Վասն շարաթու. Վասն պատճառաց հերձուածոց.
ԺԴ. Վասն զատկաց.	(պակաս).	
ԺԵ. Վասն հեթանոսաց մտանելոյ փոխանակ ժողովրդեան հրէից.	Վասն դարձի հեթանոսաց.	Վասն հեթանոսաց որ են փոխանակ ժողովրդեան հրէից.
ԺԶ. Ցուցանի թէ Քրիստոս է որդի Աստուծոյ.	ԶՔրիստոսէ, զի որդի է Աստուծոյ համագոյակից Հօր.	Վասն Քրիստոսի զի որդի է Աստուծոյ.
ԺԷ. Օրինակ ցուցանելի ընդդէմ հրէից՝ վասն կուսութեան և սրբութեան.	Ցաղագս կուսութեան և սրբութեան ընդդէմ հեթանոսաց.	Ընդդէմ հրէից՝ վասն կուսութեան և սրբութեան.
ԺԸ. Ցանդիմանութիւն ընդդէմ հրէից՝ զի ասեն թէ կայ մեզ ժողովել:	(պակաս).	Ընդդէմ հրէից՝ զի ասեն թէ կայ մեզ ժողովել:

***

Գլխակարգութեանցս ցուցակէն կ'երեւնայ որ առաջին տասն Ճառք կը պատկանին քրիստոնէական հաւատոց և առաքինութեանց, և այն բարի գործոց որ անհրաժեշտ կարեւորք են 'ի հաստատել 'ի նոյն հաւատս և 'ի պատրաստել: Միայն Ճառն հինգերորդ, որ Օրինակ պատերազմի կամ ըստ Գեննադիոսի վասն թագաւորին Պարսից և հալածանաց քրիստոնէից մակագիրն կը կրէ, ուրիշ նպատակով յօրինուած կ'երեւնայ: Ասեմանի այլաբանական նկարագիր մը կ'ուզէ տալ՝ իբրու հոգեւորական մարտի. (Մատենադ. արեւելեան, Ա. 557): Բայց Ափրաատ անշուշտ սոյն Ճառով՝ Պարսից Շապուհ Բ թագաւորին ընդդէմ Կոստանդիանոսի մեծին տուած պատերազմը կ'ակնարկէ, և իր բարեկամ կայսրը՝ եղած չարեաց վտանգներուն համար սփոփելու դիտմամբ կ'ուզէ ապացուցանել թէ 'ի Պարսից չյաղթուեցան Հռոմայեցիք: Եւ որպէս զի այս վերջիններուս ցուցուած յայտնի բարեկամութենէն՝ քրիստոնէական կրօնից նոր վնասակարութիւնք չերեւնան 'ի թշնամութենէ Պարսից, ոչ զՇապուհ և ոչ զՀռոմայեցիս իրենց բուն անուամբ մէջ կը բերէ. այլ դանիէլեան մարգարէութեանց խօսքերով՝ խոյի պատկերով զՇապուհ կ'ակնարկէ, և չորրորդ գազանն ըսելով զՀռոմ կ'իմանայ:

Հետեւորդ երկոտասան Ճառից (ԺԱ–ԻԳ) յօրինման մէջ՝ Ափրաատայ գլխաւոր դիտումը կ'երեւնայ քրիստոնէական կրօնքը ու անոր եկեղեցական արարողութիւնները պաշտպանել ընդդէմ Հրէից, որք 'ի ժամանակին յԵդեսիա, 'ի Մծբին, 'ի Նուհատրա և յայլ քաղաքս մերձաւորս բնակութեան Ափրաատայ՝ մեծ յաջողակութեամբ կը պարապէին յու-

տուածն սրբազան տառից, քրիստոնէից դէմ մաքառելու վախճանաւ: Ինքն Ափրատա ալ՝ հրէից բաքուննեաց հետ վիճաբանութիւններ ունեցաւ, ինչպէս կ՚ակնարկուի 'ի սկիզբն քսաներորդ երրորդ ճառին. և բովանդակ գրոցը մէջ՝ մեծ հմտութիւն կը ցուցընէ եբրայական աւանդութեանց: Իսկ ճառն չորեքտասաներորդ (կամ իննևտասներորդ ըստ հայկականին), յօրինուած չերևնար յընդդիմագրութիւն Հրէից, այլ 'ի հաստատութիւն խաղաղութեան յեկեղեցւոջ Քրիստոսի. — զոր անհարազատ կը սեպէ տպագիրն Հռովմայ. — և երկմտութեան գլխաւոր պատճառ զայն կը սեպէ, որ անոր յիշատակութիւնը չկայ 'ի գեննադեան ցուցակի ճառից Մծբընացւոյն. և երկրորդ որ ոճը բոլորովին տարբեր է ուրիշ ճառերէն. և այս պատճառաւ ընդօրինակողն իսկ տարակոյս ցուցընելով անոր հարազատութեանը վրայ, ամենէն վերջ կը յեռու զայն՝ նախընթաց մասնաւոր յաւելուածով մը ակնարկելով զաւարտուածն ճառից հայրապետին Մծբնայ: Ասոր վրայ կրնանք, կ՚ըսէ, յաւելուլ և զայն որ ժողովական թուղթ մըն է, և յանուն բազմաց գրուած, և ոչ լոկ սրբոյն Յակովբայ:

Եւ յիրաւի, այս ճառերէն ետքը կը յաւելուն հայերէն թարգմանութեան օրինակք. « Աւարտեցան պատասխանական թուղթք սրբոյն Յակովբայ Մծբնայ՝ առ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ »: Ապա կը դրուի վերը յիշուած ճառ, կամ շրջագայական ընդարձակ թուղթն 'ի դիմաց եպիսկոպոսացն գումարելոց 'ի Սելեւկիա և 'ի Տիզբոն, այսպիսի խորագրով. « Վասն հակառակութեան և հերձուածոց որք լինին ընդ գաւառս ուրեք ուրեք: Եւ վասն հպարտութեան և ամբարտաւանութեան, և վասն մարտի մաքառման բարձրաձգութեան գլխաւոր իշխանութեան »:

Իսկ ասորին հրատարակեալ 'ի Վրայդէ կը յաւելու յետ իննեւտասներորդին՝ Ճառ.

Ի. Վասն պահպանելոյ զկարօտեալս.
ԻԱ. Վասն հալածանաց.
ԻԲ. Վասն մահու, և վասն յետին ժամանակաց.
ԻԳ. Վասն հատոյ խաղողոյ:

* * *

Մեր մինչուան հիմա ըսածներն թէպէտ և փափաքելի լոյս մը չսփռեն խնդրոյն էական մասին վրայ, այսինքն՝ Մծբնայւոյն թէ Ափրատատայ վերագրելու է զայս աշխատասիրութիւն, – տեղեկութեամբ դեռ եւս վիճելի կամ երկբայութեանց, – բայց գրուածքին յասորականէն 'ի հայ թարգմանութիւնն անտարակուսելի պէտք է սեպուի խօսից և ոճերու կերպէն, և մանաւանդ 'ի թիւս յասորական հնչմանց յատուկ անուանց: Այս ասորի թիւս հնչմանց թէպէտ և կը հանդիպինք երբեմն նաև 'ի թարգմանութեան սըրբոյն Եփրեմի գրուածոց, բայց Զգօն գրոց մէջ յաճախագոյն յորդութեամբ. այսպէս Յահով Յամեղեան՝ փոխանակ մեզի աւելի ընտանի հնչմամբ ըսելու՝ Յէու որդի Ամեսեայ. – Շափատեանց. = որդի Սափատայ. – Ախաբ. = Աքաաբ. – Վաշթեայ տիկին. = Աստինէ տիկին. – Ծաար. = Սեգովր. – Խողդէ. = Ողդան. – Անայեղ կին Ուբարայ. = Յայել կին Քաբերայ, և այլն [1]:

Ոմանք թերևս ուզենան ենթադրել թէ սկզբնագիրն ասորի լեզուով շարագրուած ըլլալն ընդունելով ալ, կարելի է դարձեալ հեղինակ սեպել զՄծբընացին, որ անշուշտ տեղեակ էր ասորականին, և

[1] Բազմավէպ, 1875 յէջ 15:

կրնար յառաջագոյն Հրահատ (Աֆրատա)[1] կոչուիլ, ու յետոյ եկեղեցական պաշտամանց բարձրացած ատենն՝ փոխել զանունն 'ի Յակոբ. և այնպէս միացընել այս երկու անձինքը. մանաւանդ որ Բիւզանդայ ատենէն ալ պարսիկ համարուած ըլլալը կ'ուսանինք 'ի պատմութենէ նորա. «Զայնու ժամանակաւ, կ'ըսէ, խաղաց գնաց մեծ եպիսկոպոսն Մծբնացւոց, այր սքանչելի ծերունի, վաստակաւոր 'ի գործ ճշմարտութեան, որում անուն Յակոբ, փոխանակ ազգաւն պարսիկ կոչէր»: Վարդանայ պատմըչին հետեւեալ խօսքերն ալ՝ չեն զերծ 'ի կարեւորութենէ. «Ոմանք ասեն Զգօն ոմն կոչեցեալ Յակոբ. թէ նա է եղբայր Գրիգորի. բայց Յակոբ որդի է քեռն Անակայ՝ Խոսրովուհեայ, որ էր կին Տիրանայ արքայի՝ զոր սպան թագաւորն Լփնաց Սռիգէս. և Յակոբ առեալ զքո՛յր իւր զՍադեն՝ որդւովն իւրով Հրաչէիւ՝ զկնի մահուան ծնողացն գնաց յերկիրն Գթաց, ուր և թագաւորեաց Հրաչէն 'ի բարի պատահմանէ»:

Հայ թարգմանութեան ուրիշ հետաքննական կէտըն ալ՝ 'ի սուրբ գրոց գործածած ընթերցուածոց մեծ տարբերութիւնն է՝ մեզի ծանօթ ընթերցուածներէն: Ասոր հաւանական պատճառ կրնայ ենթադրուիլ որ թարգմանութիւնն երէց ըլլայ ժամանակաւ քան զԱստուածաշունչ գրոց՝ յօրինակէ Եօթանասնից, այլ հետեւողութեամբ նախնականին որ եղև 'ի սրբոյն Սահակայ: Քանի մը օրինակ մէջ բերենք 'ի համատարմութիւն մեր խօսքին՝ առջի ճառէն քաղելով.

[1] Մեր Մատենադարանին ձեռագրի մը մէջ, թուականաւ ոչ այնչափ հին, հանդիպեր ենք Փրատադէս վարդապետն Հայոց կոչման մը, թէպէտ և չենք գիտեր թէ զո՛ 'ի մերոցն ուզած ըլլայ ակնարկել, և որչափ ստուգութեամբ:

ԸՍՏ ՄԵՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

« Հանից զվէմ ժառանգութեան , զհաւատարու-թիւն շնորհաց շնորհեալ նմա ». (Զաք. Դ. 8)։

« Լուսաւոր արարէք ձեզ զլոյս գիտութեան. խընդրեցէք զՏէր. (Ովս. Ժ. 12)։

« Եղիցի յաւուր յայնմիկ. ոչ եղիցի լոյս. և ցուրտ և պարզ եղիցի օր մի. և օրն այն յայտնի տեառն. ոչ տիւ լիցէ և ոչ գիշեր. և ընդ երեկս եղիցի լոյս ». (Զաք. ԺԴ. 6-9)։

« Եւ լինէին ձեռքն Մովսիսի հաստատեալք՝ մինչև ցմտանել արեգականն ». (Ելք ԺԵ. 22)։

« Արդարութեան անսասցեալ և ոչ մեկնեցայց. զի ոչ գիտեմ զանձին գործեալ զանպատեհս ». (Յովբ. ԻԵ. 5)։

ԱՌ ՄԾԲՆԱՑԻՈՑՆ

« Տեսի ես զվէմ հաւատարութեան »։

« Լուցէք ձեզ ճրագ, և խնդրեցէք զՏէր »։

« Եղիցի յաւուր յայնմիկ, ասէ Տէր, չիջուցից զա-րեգակն 'ի միջօրեայ ժամանակի. և խաւարե-ցաւ երկիր յաւուր լուսոյ »։

« Հաւատով տարածեալ կային բազուկքն Մովսիսի մինչև ցմտանել արեգականն »։

« Զանմեղութիւն իմ ես յինէն ոչ մերժեցից. և 'ի ճշմարտութիւն հաւատոց իմոց հաստատեալ կայցեմ »։

Այս տարբերութեանց խնդրոյն վրայ՝ քիչ ետքը նորէն խօսելու առիթ պիտի ունենանք. 'ի պատմութեան Թարգմանութեան Աստուածաշունչ գրոց։

Սրբախօս գիտութեան համար Թերեւս ոչ անկարեւոր սեպուի 'նշանակել՝ որ վկայութիւն բերուած գիրք 'ի հին կտակէն՝ են հինգ գիրք Մովսէսի, Յեսու, Դատաւորք, չորս Թագաւորութիւնք, Եզր, յերկրորդ. գրոց միայն, և այն մէկ վկայութիւն եւեթ (Ա. 3), Յոբ, Սաղմոսք, Առակք, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ, Ովսէ, Յովէլ, Ամոս, Յովնան, Միքէ, Նաւում, Սոփոնիա, Անգէոս, Զաքարիա և Մաղաքիա։ Իսկ 'ի նորոյն՝ չորս Աւետարանք, և 'ի Պաւղոսի Թղթոցն՝ առ Հռովմայեցիս, առ Կորնթացիս առաջին և երկրորդ, առ Գաղատացիս, առ Եփեսացիս, յառաջին Թղթոյն առ Թեսաղոնիկեցիս, յառաջին Թղթոյն առ Տիմոթէոս, առ Հեբրայեցիս, և յառաջին Թղթոյն Յովհաննու։ Այսպէս մի ըստ միոջէ նշանակուած կը գտնենք 'ի տպագրին Հռովմայ ('ի հայ և 'ի լատին)։

***

Հայ Թարգմանիչը մեծ հմտութիւն կը ցուցընէ ասորականին, և ծայրագոյն ճշդութիւն և ճոխութիւն իր ընիկ լեզուին մէջ, այնպիսի ոճեր և դարձուածք գործածելով՝ որ այս վերջնոյս յատուկ են, և կը պակսին 'ի բնագրին։ Կը գտնուին նաև փոխագրութիւնք՝ Թէպէտև սակաւաւորք Թուով, սխալ ընթերցմամբ բնագրին. և Թէպէտ ամենայն փոյթ և խնամք կը տեսնուի 'ի հաւատարմութեան, բայց Թարգմանիչն կը գործածէ երբեմն նաև ազատութիւն՝ 'ի համառօտել կամ յընդլայնել զբանս և զիմաստս բնագրին։ Այսպէս ուր ասորին մէկ բառով մը միայն գոհ կ'ըլլայ, հայն կ'ըսէ. շինի և պակի, և

իբրև վերանայ անձնայն շինուածն և պսակի և կատարի. — մարդ որ փառաւոր է և պատուական. — վասն անօրինաց և անբարշտաց, և այլն։ Ասոնցմէ աւելի երկարագոյն յաւելուածք, խօսքին իմաստը պարզագոյն և դիւրըմբռնելի ընելու դիտմամբ՝ կը գտնուին 'ի հայ թարգմանութեան, և զորս աւելորդ կը համարինք մէջ բերել։ Նշանակենք միայն հռովմէական տպագրին և Վրայքի հրատարակութեան համեմատական էջերը (20=9-11)—(42=8-11)—(78=10-14), 'ի հաւաստարմութիւն մեր խօսքին։ Տեղ տեղ ալ համառօտուած կը գտնենք 'ի հայ թարգմանութեան ասորականին խօսքերը. վասն զի ուր բնագիրն կ'ըսէ (Վրայք. 196). «Յովսէփ ընտրեցաւ 'ի հօտէ ոչխարաց՝ իշխան լինել 'ի վերայ Եգիպտացւոց 'ի ժամանակի նեղութեան. Մովսէս 'ի հօտէ ոչխարաց, դատել զժողովուրդ իւր և հովուել, և Դաւիթ 'ի հովուութենէ վերառեալ յառաջնորդութիւն և 'ի թագաւորութիւն 'ի վերայ Իսրայելի ... և Մովսէս ոչ դարձ արար միւսանգամ առ ոչխարս իւր, և ոչ եթող զհօտն հաւատացելոց նմա. նոյնպէս և Դաւիթ ոչ եւս յաւելյր դառնալ առ ոչխարս հօրն». հայ թարգմանիչն հետևեալ խօսքերուն մէջ կ'ամփոփէ այս իմաստը (յ'էջ 286 ըստ տպագրին Հռովմայ). «Յովսէփ, Մովսէս, Դաւիթ՝ 'ի խաշանց անտի ընտրեցան առաջնորդել ժողովրդեան. և ոչ դարձան առ խաշինս անբանս»։

Ասորագէտք՝ բնագիրն ու հայ թարգմանութիւնը իրարու հետ բաղդատած ատեննին, յաճախ ընտրելագոյն և իմաստից աւելի պատկանաւոր կը գտնեն զմերն, և բազմաթիւ օրինակներով կը հաւաստարմացնեն զայս [1]։

[1] Ասորի դպրութեան հմուտք կրնան տեսնել զայս՝ հետևեալ երկասիրութեան մէջ. Prologomena in Aphraatis Sapientis Persæ Sermones Homileticos. — Dissertatio inauguralis quam ad

Իսկ եթէ հետևելով եւրոպական բանասիրութեան, Ափրահատայ երկասիրութիւն սեպենք այս ճառերը, — առանց կարող ըլլալու ճշդել հայ թարգմանութեան ժամանակը, — հաւանականաբար՝ նկատելով լեզուին ընտիր ոճը և հանգամանքը, Թարգմանչաց ժամանակին կրնանք վերագրել զայն, որոնք 'ի վարդապետաց իւրեանց առաքեցան յԵդեսիա և այլուր՝ 'ի կողմանս Ասորւոց. և ինչպէս սրբոյն Եփրեմի, ասանկ ալ Ափրահատայ ճառք այն առթով և 'ի նմին ժամանակի թարգմանեցան 'ի հայ, 'ի կէս կամ յառաջին քառորդի հինգերորդ դարու:

Այսչափ համառօտիւ նշանակելնէս ետքը, բանասիրական և ազգային-մատենագրական տեսութեամբ նշանաւոր խնդրոյս լուծումը՝ ժամանակին և իմաստուն քննադատութեան կը յանձնենք:

***

Մծբնացւոյն ընծայուած այս երկասիրութեան մեզի ծանօթ գրչագիրք են՝ հինգ 'ի Մատենադարանին Էջմիածնի (ըստ տպագիր ցուցակին). յորս հնագոյնք 'ի ՈՃԹ և ՈՃԻԴ թուականներու. իսկ միւս երեք՝ անթուականք և նորագիրք: Իսկ 'ի մերումս հինգ օրինակք. յորոց մին նօտարագիր գրչութիւն Վարդան եպիսկոպոսի Յունանեան, անհարազատ, և որոյ վրայէն եղած է տպագիրն Հռովմայ, առ 'ի չըգոյէ յայնժամ ընտրելագոյն օրինակի: Երկրորդ օրինակն է բոլորագիր, և միայն ինն ճառք. և վերջինն թերի. ընտիր գրչութիւն, բայց առանց յիշատակարանի: Միայն նշանակութեան արժանի է որ 'ի գլուխ

summos in philosophia honores ab amplissimo Ordine Philosophorum Lipsiensi rite impetrandos scripsit C. I. Franciscus Sasse Rheinensis (1878). Մենք այս հմտական գրուածքէն օգտուեցանք՝ Ափրահատայ ընծայուած համառօտ տեսութեանս մէջ:

գրոցն և առաջին ճառից՝ պահասին վերնագիրք՝ Լուսաւորչի ենթագրուած աղերսական թղթոյն առ Յակոբ Մծբնայ, և սորայս առ սուրբն Գրիգոր։ Օրինակն երրորդ գաղափարեալ է յընտիր և 'ի զգուշաւոր բոլորագիր օրինակէ, որ կը պահուի, — կ'ըսէ ընդօրինակողն, — յեկեղեցւոջ Աստուածամօր 'ի Ղարասու Տաւրիզոյ, և կը բովանդակէ զինն ճառս ևեթ. և 'ի սկիզբն ճառիցն այսպէս կը նշանակուի. « Խօսք սրբոյն Յակոբայ Մծբին քաղաքի եպիսկոպոսի... (ցեցակեր յօրինակին) սրբոյն Գրիգորի Պարթեւեան տոհմին, յաղագս օրինակաց հաւատոց, առ 'ի զգայուշութիւն պատուիրեան ծարաւելոց կատարեցաւ վասն հաւատոց օրինակի սիրոյ 'ի բանին տեառն, օրինակ Հաւատոց »։ Ձեռագրին մէջ տեղ տեղ կը յանձնուի յիշել « զՎարդան վարդապետ զԲաղիշեցի, և զաշակերտն իւր զԱբրահամ վարդապետ զՀամթեցի, և զՊօղոս դպիրս » առանց ակնարկութեան թըւականի։ Երրորդ օրինակն է նօտրագիր, ուր 'ի վախճան վերջին ճառին նշանակուած կը գտնենք. « Գրեալ է թուղթս այս 'ի քաղոց ամսեան, որ ամ ՌՃԵ էր թագաւորութեանն Աղեքսանդրի որդւոյ Փիլիպպեայ Մակեդոնացւոյ, և էր ամ երեսուն և հինգ Շապհոյ արքայի Պարսից »։ Իսկ միւս օրինակք են նորագիրք. կը գտնուին նոյն ճառք կամ ճառից հատուածք ցրուեալք ուրիշ գրոց մէջ։

Երկու տպագրութիւնք եղած են Մծբնացւոյ կամ Ափրաատայ ընծայուած ճառից թարգմանութեանն 'ի հայ, 'ի Հռովմ (1756) և 'ի Պոլիս (1824)[1]։ Որչափ ալ այս վերջինս ընտրելագոյն ըստ ընթերցուածոց, բայց տպագրաց ու ձեռագրաց բաղդատութեամբ նոր հրատարակութիւն մը ցանկալի ու փափաքելի է բանասիրաց. Quum igitur, կ'ըսէ

[1] ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ, 192։

Տես՝ քիչ յառաջ 'ի ծանօթութեան յիշուած երկասիրութեան մէջ, (յ'էջ 33), textus noster armeniacus erroribus ac mendis tali modo sit deformatus, magnopere optandum est, ut curis Mechitaristarum quorum de literis armeniacis merita immortalia sunt, nova eius editio ad archetypum Siriacum potissimum emendata in lucem prodeat.

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ — Փ. ԲԻՒԶԱՆԴ

Զենոբ Գլակ և իր պատմական գրուածը։ — Ասորի ազդեցութեան կամաց կամաց պակսիլն առ մեզ։ — Անոր պատճառները։ — Փաւստոս Բիւզանդ, և նորագոյն քննադատական կարծիք և ենթադրութիւնք իր արդէն ծանօթ երկասիրութեան վրայ։

Չորրորդ դարու հայկական մատենագրութեան կը պատկանի Զենոբայ Ասորւոյ համառօտ պատմական գրուածքը, և որուն վրայ արդէն խօսեր ենք երկասիրութեանս առաջին մասին մէջ[1]։ Ինք ասորի ազգաւ, ինչպէս նաև անոնք որ Հայաստանի լուսաւորութեան պատմութիւնն խնդրեցին իրմէ, տարակոյս չի մնար թէ նոյն ասորի լեզուաւ եղած է նաև մատենական շարադրութիւնը։ Գրուածքին ծանօթ՝ բայց միանգամայն նաև հետաքննական նիւթը՝ փափաքելի պիտի ընէր հայկական թարգմանութիւն մը, և որ անշուշտ գործադրուած է հեղինակին օրէրէն, կամ նոյն իսկ իր ձեռքովը, որովհետև հաւանական կ'ենթադրուի որ երկար ապրելովն 'ի Հա-

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ. եր. 214։

յաստան և 'ի մէջ Հայկազանց, քիչ շատ ծանօթացած ըլլայ նաև լեզուին, կամ ուրիշ ժամանակակցի մը երկասիրելովը: Ասիկայ երկրորդական խնդիր մը կրնայ սեպուիլ, ուր մեզի համար կարևորն և անստարակուսելին յասորականէ 'ի հայ թարգմանուած ըլլալն է: Հեղինակս 'ի գրչագիրս իւր պատմական գրութեանն միշտ Ասորւոց եպիսկոպոս կը կոչուի, կամ պարզապէս ասորի մակդիրով կը յիշատակուի. երկասիրութիւնն ալ անգամին 'ի ժամանակաց սըրբոյ Լուսաւորչին և իր բացայայտ կամօքն Ասորւոց գրոց պատմութիւն կոչուած է:

Որչափ գրուածքն ամփոփ, բայց զայն ալ աւելի համառօտողներն ալ գտնուած են՝ անշուշտ սուրբ եկեղեցեաց մէջ կարդացուելու համար՝ 'ի յիշատակ յուշարար մեծի և սքանչելահրաշ գործոյն: Այսպէս հանդիպած ենք հնագիր Ճառընտրաց մէջ գրուածքին միոյ մասին համառօտութեանն՝ 'ի տօնի սրբոցն Անտոնի և Կրօնիդեայ, հետևեալ խորագրով. «Պատմութիւն Զենովբայ եպիսկոպոսի զոր արարեալ է վասն Անտոնի և Կրաւնիդեայ և այլոց Ճգնաւորաց»:

Մեր թէ հինգերորդ և թէ հետևեալ դարուց պատմագրաց գրուածոց մէջ՝ բաց 'ի Յովհաննու Մամիկոնենէ, գրեթէ ամենևին չենք հանդիպիր Զենոբայ անուան կամ իր պատմական գրուածոց յիշատակութեան: Ասոր պատճառ կրնայ սեպուիլ երկասիրութեանն համառօտութիւնը, և կամ՝ որ թերևս հաւանականագոյն է, և արդարացեալ նաև 'ի պատմութեանց, որ Գրիգորի սրբոյ այնչափ փափաքանօք խնդրած և մինչ 'ի Հայաստան փոխադրած անձինք, կամ իրենց և կամ ազգին կողմանէ չկրցան երկար ատեն և շարունակ վայելել նախկին սէրն ու համարումը, որով ինչպէս լեզունին՝ ասանկ նաև իրենց անձինք սկսան խորշելի ըլլալ Հայոց, անսիրելի ընելով նաև իրենցմէ մնացած յիշատակքն և յիշա-

Սաաս՝ քիչ յառաջ 'ի ծանօթութեան յիշուած երկասիրութեան մէջ. (յ'էջ 33), textus noster armeniacus erroribus ac mendis tali modo sit deformatus, magnopere optandum est, ut curis Mechitaristarum quorum de literis armeniacis merita immortalia sunt, nova eius editio ad archetypum Siriacum potissimum emendata in lucem prodeat.

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ — Փ. ԲԻՒԶԱՆԴ

Զենոբ Գլակ և իր պատմական գրուածը: — Ասորի ազդեցութեան կամաց կամաց պակսիլն առ մեզ: — Անոր պատճառները: — Փաւստոս Բիւզանդ, և նորագոյն քննադատական կարծիք և ենթադրութիւնք իր արդէն ծանօթ երկասիրութեան վրայ:

Չորրորդ դարու հայկական մատենագրութեան կը պատկանի Զենոբայ Ասորւոյ համառօտ պատմական գրուածքը, և որուն վրայ արդէն խօսեր ենք երկասիրութեանս առաջին մասին մէջ[1]: Ինք ասորի ազգաւ, ինչպէս նաև անոնք որ Հայաստանի լուսաւորութեան պատմութիւնն խնդրեցին իրմէ, տարակոյս չի մնար թէ նոյն ասորի լեզուաւ եղած է նաև մատենական շարադրութիւնը: Գրուածքին ծանօթ՝ բայց միանգամայն նաև հետաքննական նիւթը՝ փափաքելի պիտի ընէր հայկական թարգմանութիւն մը, և որ անշուշտ գործածուած է հեղինակին օրերէն, կամ նոյն իսկ իր ձեռքովը, որովհետև հաւանական կ'ենթադրուի որ երկար ապրելովը 'ի Հա-

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ. եր. 214:

յաստան և 'ի մէջ Հայկազանց, քիչ շատ ծանօթացած ըլլայ նաև լեզուին, կամ ուրիշ ժամանակակցի մը երկասիրելովը։ Ասիկայ երկրորդական խնդիր մը կրնայ սեպուիլ, ուր մեզի համար կարևորն և անտարակուսելին յասորականէ 'ի հայ Թարգմանուած ըլլալն է։ Հեղինակս 'ի գրչագիրս իւր պատմական գրուածեանն միշտ Ասորւոց եպիսկոպոս կը կոչուի, կամ պարզապէս ասորի մակդիրով կը յիշատակուի. երկասիրութիւնն ալ անգամին 'ի ժամանակաց սըրբոյ Լուսաւորչին և իր բացայայտ կամօքն Ասորւոց գրոց պատմութիւն կոչուած է։

Որչափ գրուածքն ամփոփ, բայց զայն ալ աւելի համառօտողներն ալ գտնուած են՝ անշուշտ սուրբ եկեղեցեաց մէջ կարդացուելու համար՝ 'ի յիշատակ յուշարար մեծի և սքանչելահրաշ գործոյն։ Այսպէս հանդիպած ենք հնագիր Ճառընտրաց մէջ գրուածքին միոյ մասին համառօտութեանն՝ 'ի տօնի սրբոցն Անտոնի և Կրօնիդեայ, հետևեալ խորագրով. «Պատմութիւն Զենովբայ եպիսկոպոսի զոր արարեալ է վասն Անտոնի և Կրաւնիդեայ և այլոց ճգնաւորաց»։

Մեր թէ՛ հինգերորդ և թէ հետևեալ դարուց պատմագրաց գրուածոց մէջ՝ բաց 'ի Յովհաննու Մամիկոնենէ, գրեթէ ամենևին չենք հանդիպիր Զենոբայ անուան կամ իր պատմական գրուածոց յիշատակութեան։ Ասոր պատճառ կրնայ սեպուիլ երկասիրութեանն համառօտութիւնը, և կամ՝ որ թերևս հաւանականագոյն է, և արդարացեալ նաև 'ի պատմութեանց, որ Գրիգորի սրբոյ այնչափ փափաքանօք խնդրած և մինչ 'ի Հայաստան փոխագրած անձինք, կամ իրենց և կամ ազգին կողմանէ չկրցան երկար ատեն և շարունակ վայելել նախկին սէրն ու համարումը, որով ինչպէս լեզունին՝ ասանկ նաև իրենց անձինք սկսան խորշելի ըլլալ Հայոց, անսիրելի ընելով նաև իրենցմէ մնացած յիշատակքն և յիշա-

տակարանք։ Բրքիշոյ և Շմուէլ կաթողիկոսաց, անարժան յաջորդաց սրբոյն Սահակայ Պարթևի, անուանքն և արարք յայտնի են 'ի պատմագրաց այնր ժամանակի. «Խնդրեցին, կ'ըսէ Փարպեցի, այնուհետև իւրեանց նախարարքն Հայոց յարքունուստ կաթողիկոս. և Թագաւորն Վռամ ետ նոցա զԲրքիշոյ զոմն անուն, ասորի յազգէ այր, որ եկեալ յաշխարհն Հայոց իւրովք գաւառակցօք. որք էին լոյծ կրօնիւք, եկեալք ընդ նմա յԱսորեստանէ... և ոչ կէին ըստ սուրբ ամբիծ կրօնիցն, զոր եգեալ էր և կարգեալ յամենայն եկեղեցիս Հայոց՝ սրբոյ նահատակին Գրիգորի»։ Շմուէլի համար ալ կ'ըսէ. (Վռամ) «տայր նոցա կաթողիկոս այլ ասորի, որում անուն էր Շամուէլ. որ եկեալ յաշխարհս Հայոց կայր և նա նոյնպէս ըստ կրօնիցն Բրքիշոյի»։ Մեր այս ըսածին մէկ ապացոյցը կը գտնենք եօթներորդ դարու պատմագիր Մամիկոնեանի գրուածոց մէջ, որ ինչպէս յայտնի է՝ Զենոբայ պատմութեան շարայարութիւնն ըրած է մասամբ. և 'ի վերջ գրոցն գտնուած յիշատակարանին մէջ կ'ըսէ. «Ժամանակագրութիւնս այս սկսեալ առ սրբով Գրիգորիւ Զենոբայ ասորւոյ... իւրաքանչիւր հայր գրեալ զիւր ժամանակին՝ Թողոյր. և աճեալ՝ Պատմութիւն Ասորւոց կոչի. զի այն հարանց անուանք որ գրեալ կան մինչև 'ի Թոգիկ՝ ամենեքեան ասորիք էին. և տուեալն այն ասորի գրով և պաշտամամբ է վարեալ, մինչև 'ի Թոգիկ, և նա փոխեաց զամենայն կարգս, և զԱսորոց ցեղսն բնաւ հալածական արար 'ի վանացըն»։

Բայց այս ընդդիմութիւնն՝ ասորի ազգին, լեզուին և ուսման դէմ, ժամանակաւ և յարգեանց դիպուածոց ալ աւելի զօրացած պէտք է սեպել, և ոչ մէկէնիմէկ սկիզբն առած և շուտով ընդհանրացած։ Ասկէ է որ դեռ ես կը գտնուէին նոյն ուսմամբ

և դրականութեամբ զբաղողք. յեկեղեցիս և 'ի պաշտամունս անոր կիրառութիւնը կը շարունակուէր. ալփաբէտք՝ ազգին մէկ մասին մէջ դեռ գործածականք էին. և քանի որ յունական ուսումն և դպրութիւն փափաքելի բարգաւաճանքն ունեցած չէին, տակաւին դեռ կը սորվուէր և կը սորվեցուէր։

* * *

Փաւստոս Բիւզանդի անունն ու պատմական երկասիրութիւն՝ ծանօթ է մեր մատենագրութեան մէջ[1], և աւելի մեծարուած՝ քան ինչ որ մեզմէ քառորդ դարու յառաջագոյն։ Որչափ այդ հետաքննական գրուածին ներքին արժէքն բարձրացած, ըստ պատմութեան և մատենագրական ոճոյ և հմտութեան, բայց իր անձին և ինչ լեզուով գրած ըլլալուն՝ դեռ ինչուան հիմայ գոհացուցիչ կամ ապահով լուծումն մը տրուած չէ 'ի բանասիրութենէ։ Եւ որովհետև յասորականէ 'ի հայ Թարգմանութեանց վրայ կը խօսինք, հոս զայս միայն յիշատակենք՝ որ բաց 'ի զանազան կարծեաց այս խնդրոյն նկատմամբ, ունեցեր են ոմանք զկարծիս թէ ասորի լեզուաւ շարագրուած ըլլայ սկզբնագիրն։ Եթէ Փաւստոսի՝ իր անձին համար ենթադրենք պատմութեան գրոցը մէջ (Դպր. Զ. գլ. Ե. Զ) համանուն անձի մը և իր Աստատոմ եղբօր յիշատակութիւնը, և յաւելուածը թէ «էին սոքա լեալ ազգաւ հոռոմ» դժուարին կ'երևնայ համոզուիլ թէ փոխանակ իրեն յատուկ յունականին՝ ասորի լեզուն գործածած ըլլայ 'ի գրելն զիւր պատմութիւն, մինչ առաջինն ալ երկրորդիս հաւասար ծանօթ էր ազգին յայնմ դարու։ Եթէ ասոր վրայ աւելցընենք

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ. էջ. 222–236։

իր գրոցը մեր ձեռքն հասած հայկական լեզուէն բարձր, ընտիր և արքունական ոճը, շատ հեռի պիտի գտնուինք ասորւոյն գրոշմը անոր վրայ տեսնելէն. մինչդեռ յայտնապէս կ'երեւայ այն ուրիշ նոյն լեզուէ եղած թարգմանութեանց մէջ, թէպէտև ընդհանրապէս վայելուչ և գեղեցիկ ոճով և շարադրութեամբ։ Բայց ինչպէս ըսինք՝ խնդրոյն լուծումը ժամանակի և բանասիրական աւելի մանր հետազօտութեանց արգասիք պիտի ըլլայ անշուշտ։

Ռուսահայ բանասէր մը[1], մասնաւոր քննադատական յօդուած մը նուիրած է Փաւստոս Բիւզանդի անձին և իր երկասիրութեան, և հրատարակած ի 1885–86 յԱրձագանք շաբաթաթերթն Թիֆլիզի. Այդ յօդուածներն տեսած և կարդացած չենք, բայց զանոնք հրատարակող բանասէրն ինքնագիր մէկ նամակաւն (Մոսկուա, 26 յունուարի 1887) կը ծանուցանէ թէ այդ գրութեամբ «ապացուցանում եմ որ Բիւզանդը ազգաւ յոյն է. մատենագրել է յունարէն և գրել է և Հայոց հին պատմութիւնը՝ որ մեր ձեռքը հասած չէ։ Փաւստոսը հայում է. որովհետև վեցերորդ դպրութեան ցանկում նա ասում է. «սորա ամենայն պատմութեանց յաղագս իմ տեղեկութեան՝ որք միանգամ զմատեանս ընթեռնույք՝ տուինք տասն համարական թուօք»։ Այս գրոց լեզուով գրած հատուածը մինչեւ օրս ազգային գիտնականք սխալ են թարգմանել։ Այդ հատուածի իմաստը այս է իմ կարծիքով. Փաւստոսը ասում է. «Իմ մասին հաղորդած տեղեկութիւնից յետոյ ընթերցողը կը գտնէ թուով տասն գլուխ»։ Արդարև, եթէ բանանք Փաւստոսի պատմութեան վեցերորդ դպրութիւնը, և համարենք այն գլուխները՝ որոնք հետևում են հինգերորդ և վեցե-

[1] Եղիշէ Մատաթեան։

րորդ գլուխներին (Փաւստոս եպիսկոպոսին և Նորա եղբօր նուիրած)՝ մենք կը տեսնենք որ հետեւեալ գլուխների թիւը ուղիղ տասն է: — Անցնենք երկրորդ խնդրին: Բիւզանդը յունարէն է գրել, որովհետև «յունաց ժամանակագիր» է անուանվում (Աշխարհագրութեան վերջը): Յունարէն է գրել՝ որովհետև գրել է Մեսրոպեան գիւտից առաջ, կամ գոնէ Մեսրոպեան գրերի գործադրութիւնից (կիրառութիւնից) առաջ: Իսկ յունարէն և ասորերէն գրերով հայերէն չէին գրում չորրորդ դարում: (Ապացոյցները դժբաղդաբար երկար լինելով, չեմ կարող մէջ բերել): Վերջապէս գալով վերջին խնդրին՝ պէտք է նկատել՝ որ Փաւստոսը գրել է և մի հին հայկական պատմութիւն՝ ըստ որում իր պատմութեան Գ դպրութեան առաջին գլխի մէջ նա ասում է. «Է ինչ մեր պատմութիւն որ առաջին է. և է ինչ որ վերջին է: Իսկ որ միջին ինչ եղև՝ այն 'ի ձեռն այլոց գրել գրեցաւ»:

Ուրիշ բանասէր[1] մ'ալ, հմտական հետազօտութեամբք կը ջանայ ցուցընել թէ երկու տարբեր գրիչներ կան 'ի Պատմութեան Փաւստոսի, մին՝ Յունի և աշխարհականի (Փաւստոս), միւսն Ասորւոյ և եկեղեցականի (անանուն). և կը խոստանայ ուրիշ հատուածով մը համեմատել զգիրս Փաւստոսի ընդ հայերէն թարգմանութիւնս հինգերորդ դարու յասորի լեզուէ, և նշանակելով զամենայն տարրաբանութիւնս որ 'ի մատենիդ, հետեւցընել թէ թարգմանեալ է յասորւոյն:

Համառօտենք իր կարծիքը. «Բիւզանդայ գիրքն, կ'ըսէ, կոչուած է 'ի մատենագրէն, կամ թերեւս 'ի հաւաքողէն, Բուզանդարան պատմութիւնք ... Բուզանդարան բառն՝ որ խմբագիր կամ ժողովածոյ գը-

[1] ՔՆՆԱՍԷՐ, Ինքնագրութիւնք Նորայրի, Պրակ Ա. 1887:

րուածոց իմաստ կուտայ, — ինչպէս են արդարեւ այլ պատմագրեանք Ստորին կայսերութեան, որ նոյն անուամբ կը կոչուին La Byzantine, — և Պատմութիւնք յոգնակի ձեւն, կը ներեն ենթադրել թէ նախնաբար երկու կամ երեք զանազան Բիւզանդացի մատենագրաց պատմութիւններ ամփոփեալ էին 'ի միում ափի 'ի վեց գիրս, կամ որ նոյն է՝ 'ի դըպրութիւնս։ Ես այնպէս հաւանեալ եմ թէ օտար ոմն հանած է այս ափէն միայն զ'Գ, զ'Դ, զ'Ե և զ'Զ չորս դպրութիւնս Փաւստոսի որ զՀայոց կը ճառէին, պահելով 'ի վերայ զԲուզանդարան Պատմութիւնք մակագրութիւն խմբագրին, այլ ձեւելով զյունական բնագիրն զինչպէս և զինչկամք։ Հայ թարգմանչին ձեռքն ընկած օրինակն ոչ այլ ինչ էր ըստ իս եթէ ոչ այս փոփոխեալ օրինակն, որոյ ասորի ըլլալն շատ նշաններէ կը մատնուի։ Բիւզանդարանի Ա և Բ դպրութիւնք եթէ 'ի բաց թողեալ են 'ի վերոյ նշանակեալ օտարէդ, որով և 'ի Հայ թարգմանչէն, պատճառն այն է անշուշտ զի այդ կրկին գիրք, գործ այլ մատենագրի կամ մատենագրաց, չէին խօսեր զՀայոց։ ...

« Անհնարին է մտադրութեամբ կարդալ զԲիւզանդարանն և չնկատել 'ի նմին երկու այլակերպ և իրարու բոլորովին աննման գրիչներ։ Մին սիրող է չափազանցութեան, խեղկատակութեան. միւսն ոռնեալ և տոգորեալ սուրբ Գրովք՝ կ'ախորժի վարդապետել, խրատել, կշտամբել զթուլութիւն Հայոց 'ի քրիստոսական կրօնս։ ... Նա՝ ճշմարիտ աշխարհական մ'է, ... սա կատարեալ եկեղեցական մը ... Այս աշխարհականս է աւասիկ բուն հեղինակ գրոցս՝ Յոյնն Փաւստոս Բիւզանդ. և այս եկեղեցականս է անանուն ոմն, զորոյ Ասորի ըլլալն պիտի հետազօտենք։ Չզարմանանք ուրեմն երբ 'ի տեղիս տեղիս Բիւզանդարանի՝ հակասութեանց կը հանդիպինք։

« Ո՞վ է այս եկեղեցական. զանունն չգիտեմ, այլ զազգութիւն քաջ կը նշմարեմ, որ է Ասորի։ Այնպիսի դէպքեր, այնպիսի յիշատակութիւններ անձանց և իրաց ագուցած է այս եկեղեցականս Փաւստոսի գրոց մէջ և այնքան խոր տեղեկութեամբ՝ որ երբ անջնջելի կնքով դրոշմած է իւր Ասորի ազգութիւնն վեր 'ի վայր 'ի մատենին »։

Եւ 'ի սուտգրութիւն կարծեացն այլևայլ ապացոյցք մէջ բերելէն ետքը կը յաւելու. Փարպեցւոյն խօսքերէն ալ կը տեղեկանանք « որ նոյն իսկ հինգերորդ դարու ընթերցողք ոմանք Բիւզանդարանի՝ նշմարած են անոր մի մասին միւս մասին հետ ունեցած մեծ աննմանութիւնը և կասկած յղացած են անհարազատ յաւելուածոց 'ի Պատմութեանդ. և Փարպեցին հեղինակ անհաճոյ և անպատշաճ բանից Բիւզանդարանի կ'ուզէ ճանաչել զԱսորի ոմն։ Ես զատեցի զաշխարհական և սթափական մասունս մատենին 'ի հոգեւոր և յերկիւղազարդ մասանցն, և ցուցի թէ հակառակ կարծեաց Փարպեցւոյն՝ անպատշաճութիւնքն են բաժին Փաւստոսի, և թէ Ասորին ուրիշ բան ըրած չէ, բայց եթէ սրբութիւններ մտցընել Յոյն պատմաբանին գրոց մէջ... Այս Ասորին, – որ միայն եկեղեցական կամ աբեղայ ոմն կրնայ ըլլալ, և թերևս Գլակայ վանական, – պարտէր անշուշտ վերցընել զամենայն անդէպ հատուածս Փաւստոսի, եթէ քննադատական գիտութիւնն ծագած ըլլար յիւրում ժամանակի »...։

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ

Եւսեբեայ Եկեղեցական պատմութիւն։ — Թարգմանութիւնն յասորւոյն։ — Թարգմանութեան ժամանակն և հատուածք առ Խորենացւոյն։ — Մատենախօսականք։

Մինչ այլ յասորի լեզուէ մեզի ընծայուած ընտիր և հոյակապ պարգև է Եւսեբի Կեսարացւոյ Եկեղեցական պատմութիւնը, թարգմանեալ անմիջական յանձնարարութեամբ և յաշակերտաց սրբոյն Մեսրովպայ։ Կը կարդանք առ Խորենացւոյ. « Վկայ քեզ 'ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկղեսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ, զոր եւ թարգմանեալ երանելի վարդապետն Մաշտոց 'ի հայ լեզու »։ Եւսեբիոս արդէն աշխարհահռչակ պարծանք մ'է հայ մատենագրութեան, պահպանելով իր բազմահմուտ ժամանակական կանոնաց կամ Քրոնիկոնին' ամբողջ և ընտիր թարգմանութիւն մը' որ հին պատմութեան վրայ պայծառ լոյս մը սփռած է։ — Այս նշանաւոր գրուածքին, ինչպէս ետքը պիտի տեսնենք, 'ի յունականէ թարգմանուած ըլլալը անտարակուսելի է. ինչպէս Եկեղեցական պատմութեանն ալ յասորւոյն, թէպէտև և այլևայլ հելլենաբանութեամբք, ըստ վկայութեան տեղեկաց։

Ինչո՞ւ այսպիսի զանազանութիւն' մի և նոյն մատենագրի գրուածոց թարգմանութեան մէջ. յոյն բնագիրը' մեկուն համար անտես ընելով, ու յասորականէ փոխադրելով 'ի մեր լեզու։ Ասոր պատճառը հաւանականաբար կամ այն կ'երևնայ որ թարգ-

մանիչն՝ որուն յանձնուեցաւ այդ աշխատանքն՝ դեռ այնչափ վարժ չէր յոյն լեզուի և դպրութեան, և կամ նոյն գրոց յունական սկզբնագիրը չգտնուելով առ մերսն, բռնադատուեցան ասորականին կարօտ ըլլալ, և այնպէս հայկական եկեղեցական մատենագրութեան մէկ պակասը լեցընել: Եւ պէտք չէ զարմանալ. որովհետև ինչպէս գիտենք՝ քրիստոնէական հաւատոց գիտութեանն և ուսման վերաբերեալ ամէն յոյն գրեան՝ հրոյ ճարակ և բնաջինջ բարձուած էին 'ի ձեռն Մերուժանայ. որով հարկ եղաւ սրբոյն Սահակայ, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք, նաև Աստուածաշունչ գրոց Թարգմանութեան ձեռք զարկած ատեն՝ առ 'ի չգոյէ յունին՝ ասորի լեզուով գտնուած օրինակի մը վրայէն սկսիլ իր Թարգմանութիւնը: Կրնանք դարձեալ ենթադրել որ Թարգմանչաց ոմանց յԵդեսիա ղրկուած ատեն՝ ձեռք զարկած ըլլան այս աշխատութեան: Բայց հաւանական կ'երևնայ որ ինչպէս ուրիշ շատ գրոց՝ Եւսեբիոսի այս գրքին ալ յունական սկզբնագիրն բերուեցաւ յաշակերտացն սրբոյն Սահակայ և Մեսրովպայ, ու բաղդատուելով համեմատեցաւ ասորականին վրայ արդէն եղած հայ Թարգմանութեան հետ, յորմէ հելլենաբանութիւնքն զոր ակնարկեցինք, թէպէտ միշտ պահելով ասորական նախկին դրոշմը. մանաւանդ յատուկ անուանց փոխադարձութեանց մէջ, որք այդչափ կը զանազանին 'ի յունէն: Թէ Խորենացւոյն յիշատակածը նոյն է ընդ Թարգմանութեանն որ հասած է առ մեզ, յայտնի է բերած վկայութենէն: Աբգարու վրայ խօսած ատեն կը յիշէ անոր թղթակցութիւնքն առ Տիբերիոս և առ այլս. և 'ի դիմաց Փրկչին տրուած պատասխանը. զորոնք նոյն կը գտնենք ընդ յառաջբերելոցն յԵւսեբեայ (Ա. Դպր. ԺԲ.) 'ի յիշատակարանաց և 'ի դիւանաց Եդեսիոյ հանուած, ինչպէս պատմիչն ալ կ'ակնարկէ:

Խորենացւոյն պատմութեան մէջ յիշատակուած ուրիշ դիպուած և անցից յիշատակութիւնք ալ՝ յՈւսեբեայ առնուած, յայտնի հաւաստիք մ'են թէ արդէն իրեն ծանօթ էր մեր ձեռքն գտնուած թարգմանութիւնը, որ և կը ճշդէ նաև այս ամենընտիր երկասիրութեան հայ թարգմանութեան ժամանակը։ Հաւանականաբար յոյն սկզբնագրին հետ բաղդատուիլը՝ և այն կերպարանքն առնուլը, որով հասած է առ մեզ, յետոյ է քան զթարգմանութիւն Գրոց սրբոց և յառաջ քան զպատմագրել Խորենացւոյն։

Ինչպէս հնութենէ առ մեզ հասած շատ երկասիրութիւնք, ասոնք ալ Եւսեբեայ Եկեղեցւոյ պատմութեան հայկական այս թարգմանութիւնն զանազան կերպարանափոխութիւններ կրած պէտք է ըլլայ՝ ըստ տեսութեանց և քննադատութեան հմտագունից։

Հայկական թարգմանութեանս օրինակք թէ՛ առ մեզ և թէ յայլ ազգային մատենադարանս, — որչափ ծանօթ է մեզ, — ոչ հին են ժամանակաւ, և ոչ բազմաթիւ. և հաւանականաբար ամենքն ալ մի և նոյն օրինակէ գաղափարուած։ Ասոր բնական հետևանք է՝ յամենեսին միօրինակ այլևայլ պակասք կամ ընդհատութիւնք (lacune) 'ի կարգի պատմութեան։ Ասանկ՝ առաջին Դպրութեան մէջ երրորդ գլխէն քանի մը տող, չորրորդն ամբողջ. ու հինգերորդին սկզբնաւորութիւնն։ Հինգերորդ Դպրութեան մէջ ալ՝ մասն մի քսաներորդ գլխոյն, և գլուխք քսաներորդ առաջին, քսաներորդ երկրորդ և քսաներորդ երրորդ, որք և նշանակեալ են 'ի ցուցակին որ 'ի գլուխ գրոյ հինգերորդ Դպրութեանն՝ այսպէս. « ԻԱ. Թէ որպէս վկայեաց Ապողինիոս 'ի Հռոմ քաղաքի։ — ԻԲ. Թէ որ եպիսկոպոսք երևելիք էին ընդ այն ժամանակաւ։ — ԻԳ. Վասն խծբծին՝ որ եղեւ յոյնմ ժամանակի վասն զատկին »։

Ճառընտրաց մէջ կը գտնուին նաև վկայաբանութիւնք սրբոց՝ յանուն Եւսեբեայ, ընտիր թարգմանութեամբ նախնեաց, և հաւանականաբար 'ի յունէ, արտաքոյ Եկեղեցական պատմութեան, որ թերեւս քաղուած են հեղինակին ուրիշ երկասիրութիւններէ։ Այսպէս. «Ի յիշատակի սուրբ հայրապետին Պետրոսի և Աբիսողոմեայ, երանելւոյն Եւսեբեայ յԵկեղեցական պատմութենէ. Կեսարու եպիսկոպոսի, յառաջին Դպրութենէն». և սկզբնաւորութիւնն է. «Ընդ ժամանակին իսկ իբրև եկաց Փիլիպոս յեկեղեցւոջ անդ Հռոմայեցւոց, զհինգ ամ... զարգարեցաւ պսակաւ վկայութեանն». որ համառօտութիւն է Եւսեբեայ Եկեղեցական պատմութեան եօթներորդ դպրութեան՝ վերջին գլխոյն. և որուն հետ Ճառընտիրք կը կցեն ուրիշ ընդարձակ և մեր մատենագրութեան ոսկեղէն դարու արժանաւոր լեզուով գրուած վկայաբանութիւն մը «սրբոյն Պետրոսի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոց», այսպիսի սկզբնաւորութեամբ. «Ի թագաւորութեանն Դիոկղետիանոսի կայսեր Հռովմայեցւոց՝ էր հայրապետ եկեղեցւոյն Աղեքսանդրացւոց երանելի նահատակն Պետրոս մարտիրոս»[1]։

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ

Անցնինք հիմայ մեր ազգային եկեղեցական պատմութեան ու հայկական գրականութեան ամենանշանաւոր դէպքին. — Աստուածաշունչ գրոց 'ի մեր լեզու փոխադրութեան.

[1] Եւսեբեայ Եկեղեցական պատմութիւնը՝ հանդերձ նորոգ թարգմանութեամբ 'ի յունէն հրատարակուած է 'ի Վենետիկ։ Տես 'ի ՀԱՅԿԱԿ. ՄԱՏԵՆԱԳԻՐ., 184։

Այն ժամանակակից և կրտսերագոյն պատմիչք այս մեծ գործոյն և ծառայութեան բովանդակ արդիւնքը կուտան Թարգմանչաց, և մանաւանդ իրենց մեծ և բազմահռչակ վարդապետաց՝ Սահակայ և Մեսրոպայ։

Ասոնց անուանք, – որչափ հասեր է առ մեզ 'ի պատմութեանց և 'ի յիշատակարանաց, – իրենց սըրբասուն և աստուածահաճոյ վարք և հայկական մատենագրութեան մատուցած ծառայութիւնք և արդասիք արդէն ծանօթ են մեզ։ Ուստի առանց յերկարելու 'ի բանս անոնց անկարօտ գովութեան, փութանք իրենց ձեռքով մեզի ընծայուած Թարգմանութեանց վրայ դարձընել մեր ընթերցողաց մըտադրութիւնն։ Այդ հոգեռանդն սրտից և աստուածապարգև վարդապետաց մեզի աւանդած բազմաթիւ և բազմատեսակ, ու իրաւամբք իմաստնոյն Եւրոպայ զարմանքն ու նախանձը յաճախող վաստակոց մէջ՝ ինչպէս պարունակութեամբն՝ ասանկ ալ լեզուի արուեստովն, Թարգմանութեան հաւատարմութեամբ, գեղովն ու վայելչութեամբ նախամեծար պէտք է սեպուին Աստուածաշունչ գրոց հրաշալի Թարգմանութիւնք, զոր առանց չափազանցութեան կրնանք հայկական հին և նոր Թարգմանութեանց անզուգական և անհընարին երախայրիք սեպել, մեր դրականութեան ամենէն գերազանց երկասիրութիւնն, և անոր վրայ աշխատողներուն գլուխ գործոց և անմահական պարծանք։

Խօսինք համառօտիւ որչափ երկասիրութեանս չափն ու նպատակը կրնայ տանիլ։

Ա. Եօթանասնից կոչուած Թարգմանութեան վրայ, որուն համեմատ եղած է հայկականն։

Բ. Ասորական հին Թարգմանութիւնք։

Գ. Առաջին Թարգմանութիւն սուրբ Գրոց 'ի հայ լեզու յասորականէ։

Դ. Թարգմանչաց երթն 'ի Բիւզանդիոն։

Ե. Երկրորդ Թարգմանութիւն 'ի յունէ։

Զ. Հնագոյն օրինակք սուրբ Գրոց յարևելս և յարևմուտս։

Է. Հնագոյն գրչագիրք հայկական Աստուածաշունչ մատենից։

Ը. Կարգ և դասաւորութիւն սուրբ Գրոց' 'ի մեր գրչագիրս։

Թ. Հին կտակարանաց մէջ Անյայտ կամ Անհարազատ սեպուած գրքեր։

Ժ. Նոյնք 'ի Նոր կտակարանս։

ԺԱ. Հարազատութիւն և ընտրութիւն հայ Թարգմանութեան։

ԺԲ. Արդեօք ամբողջ Աստուածաշունչ գրոց Թարգմանութիւն հինգերորդ դարո՞ւ մէջ եղած է։

ԺԳ. Հայկական Թարգմանութեան վրայ վերջին աշխատութիւն 'ի հինգերորդ դարու։

ԺԴ. Ցարգ հայ Թարգմանութեան։

Ա. ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ ԵՕԹԱՆԱՍՆԻՑ

Պտղոմեայ Եղբայրասիրի խնդիրն առ քահանայապետն Հրէից։ — Եօթանասնից երթն յԱղեքսանդրիա Եգիպտոսի։ — Պատմութիւն թարգմանութեանն և աւանդք։ — Անոր յարգն և ազնուութիւն։

Քրիստոնեայ աշխարհ և սրբազան դպրութեանց հետամուտք արդէն գիտեն քաջ թէ աստուածախօս և հոգեշունչ գիրք, որ ընդհանուր անուամբ' աստուածային ներշնչութեամբ գրուած և իր խօսքն ու-

պատուիրանքը բովանդակելնուն՝ Աստուածաշունչ և Սուրբ Գիրք կը կոչուին, հրէական աստուածընտիր ժողովրդեան մէջէն առնուած մարգարէից ձեռքով. և Հրէից համար մասնաւորապէս հեբրայական, (ու երբեմն նաև քաղդէական) լեզուով շարադրուած են: Անոնց գրուելէն, և որոց համար գլխաւորապէս շարադրուած էին՝ ընդհանուր ըլլալէն շատ ետքը, ինչպէս կ՚աւանդուի. Եգիպտացւոց Պաղոմէոս Փիլադելփոս (Եղբայրասէր) թագաւորն ուզելով իր ջանքովը Աղեքսանդրիոյ մէջ հաստատած մատենադարանն ընտիր, օգտակար և հետաքննական գրուածներով ճոխացընել, իր մատենապետին՝ Դեմետրեայ Փալերացւոյ յանձնեց Հրէից օրինապատում գրոց մէկ օրինակն, ու անոր յունական թարգմանութիւնն ձեռք ձգել: Դեմետրիոս ալ թագաւորին կողմանէ գրեց առ Եղիազար քահանայապետ յԵրուսաղէմ, ու նուիրակութեամբ երեք անձինք ու մեծագին ընծաներ ղրկելով, խնդրեց իրմէ Մովսիսի գրոց մէկ օրինակը, և հմուտ թարգմանիչք յԵբրայեցւոց, որ կարենան փոխել զայն 'ի յոյն: Արիստէոս, այս դիպաց պատմիչը, երեք նուիրակաց մէկն էր:

Քահանայապետը սիրով ընդունեցաւ Պտղոմեայ թագաւորի առաջարկութիւնը. ու Մովսիսական օրինաց և բովանդակ Աստուածաշունչ գրոց մէկ ոսկեգիր գաղափարը յանձնեց եօթանասուներկու հմուտ և վարժ թարգմանչաց, զորոնք արքայն Եղբայրասէր արժանաւոր պատուով մեծարելով, Աղեքսանդրիոյ մօտ Փարոսացւոց կղզւոյն մէջ տեղ և բնակութիւն տուաւ անոնց և ամէն դիւրութիւն, ուր պարապելով անդադար իրենց յանձնուած աշխատանքին՝ ըստ աւանդելոյ ոմանց, եօթանասուներկու օրուան մէջ գլխաւորեցին զայն:

Այս պատմութիւնը՝ հետևեալ պարագաներով

կը պատմուի Մակաբայեցւոց չորրորդ գրոց մէջ՝ որ է 'ի կարգի անյայտ և անվաւեր գրոց հին կտակարանի, և որոյ Թարգմանութիւնն չկայ առ մեզ. « Պտղոմէոս Մակեդոնացի իբրև դադարեաց զտեղի կալաւ յԵգիպտոս, և հռչակեալ զօրացաւ համբաւ գիտութեան նորա և իմաստութեան. միաբանեցին Եգիպտացիք կարգել կացուցանել զնա Թագաւոր 'ի վերայ աշխարհին: Եւ յորժամ նստաւ նա յաթոռ Թագաւորութեանն, այնուհետև զամենայն փոյթ և զջան 'ի մէջ առնոյր՝ յագեցուցանել լնուլ զտենչանս գիտութեանն, և հրաման պատուիրանի 'ի վերայ դնէր՝ գումարել 'ի մի վայր ժողովել զամենայն գիրս իմաստնոց: Յանկացաւ ունել 'ի դիւանս մատենից իւրոց նաև զքսան և չորս գիրս սուրբս. և գրեաց Թուղթ առ քահանայապետն մեծ Երուսաղեմացւոց քաղաքին, հանդերձ ընծայիւք պատարագաց. աղաչէր խնդրէր՝ արս եւթանասունևերկու 'ի Հրէից յղել առ նա, 'ի զարգացելոցն հասակաւ և գիտութեամբ օրինաց: Զոր ընկալեալ քահանայապետին զԹուղթն արքունի, վաղվաղակի որոշէր ընտրէր եւթանասունս հմուտս և աջողակս, և առաքէր յԵգիպտոս՝ կարգեալ նոցա առաջնորդ զԵղիազարոս, ոչ ինչ ընդհատ 'ի նոցանէ անուանի առաքինի վարուքն, գիտութեամբ և իմաստութեամբ գրոց սրբոց: Թագաւորն Պտղոմէոս իբրև ետես զնոսա ժամանեալս հասեալս, պատուէր հրամանի տայր ածել 'ի սենեակն զորս յարդարեալ պատրաստեալ էր, եւթանասուն ըստ Թուոյ նոցա. և դպիրս ատենակալս միոյ միոյ 'ի նոցանէ յիւրոցն, հարկանել, 'ի գրի առնուլ հելլենացի տառիւք ըզԹարգմանութիւն նոցա: Եւ արգելեալ խափանէր զտեսութիւն նոցա ընդ միմեանս, գուցէ երբեք միաբանեսցին ածել մուծանել փոփոխութիւն 'ի գիրս իւրեանց: Եւ դպիրքն ատենակալք գրեցին՝ որպէս

թելադիր լինէին նոցա հեբրայեցիքն, զթարգմանութիւն քսան և չորս մատենիցն: Եւ իբրև յամփոփ գործոյն հասեալ ժամանեցին, ածէր կայուցանէր զնոսա Եղիազարոս առաջի թագաւորին. և 'ի համեմատութիւն արկեալ, գտանէին միաբան և միախորհուրդ զթարգմանութիւնն»:

***

Աւելի մանրամասն, թերեւս ոչ այնչափ ստուգապատումոճով, ուրիշ հին գրութեան մը մէջ ալ, որոյ թարգմանութիւնն 'ի Նախնեաց հասած է մինչեւ առ մեզ, մերթ անանուն՝ և մերթ Եպիփանու ընծայելով: Գնենք և զայն՝ համառօտելով, իբրու հետաքննելի և հաճոյական բանասիրաց:

«...Պտղոմէոս թագաւորեաց յԱղեքսանդրիա, որ կոչեցաւ Եղբայրասէր, և այր իմաստասէր. որ գրանոց կազմեաց ժողովել զամենայն գիրս որ 'ի վերայ երկրի. գրել թուղթս և յօժարեցուցանել զամենայն թագաւորս երկրի... Եւ իբրև իւրքն յաջողեցան, և գրեանն ամենայն աշխարհաց ժողովեցաւ, եհարց թագաւորն որում զգրեանն հաւատացեալ էր՝ 'ի միում աւուրց. քանի՞ գիրք ժողովեալ են 'ի գրանոցին. և նա ասէ՝ չորք բիւրք և ութ հազար մի աւելի կամ պակաս. բայց լսեմ թէ աւելի գիրք գոն յաշխարհի 'ի կողմանս Եթէովպացոց, Հնդկաց և Պարսից և Ելիմացոց և Ասորեստանեաց և Բաբելացոց և Քաղդէացոց. առ Հռոմայեցիս և Փիւնիկեցիս, յԵլլադայ, այլ և յԵրուսաղէմ և 'ի Հրէաստանի գոն աստուածային գիրք մարգարէիցն, որ պատմեն վասն Աստուծոյ և աշխարհագործութեանց, և այլ ամենայն հասարակաց օգտութեան վարդապետութիւն: Արդ եթէ հաճոյ թուի քում թագաւորութեանդ առաքել վասն այսոցիկ յԵրու-

տողէմ, և գրեն վարդապետքն և ուսուցիչքն առ քեզ, զի զայն գիտես 'ի քում բարեպաշտութեան գրանոցիդ ։

« Յայնժամ գրէ թուղթ օրինակ զայս. — Թագաւոր Պտղոմէոս որ յԵրուսաղէմ վարդապետք Հրէից յոյժ խնդալ. Գրանոց է իմ կազմեալ, և բազում գրեանս ժողովեալ յիւրաքանչիւր ազգաց և 'ի նմա 'ի ներքս եդի. բայց լուեալ թէ առ ձեզ գոն գրեան մարգարէից որ վասն Աստուծոյ և աշխարհագործութեան ցուցանեն. և զայդ հանդերձ այլովք առանց նախանձու ցանգացեալ գրեցի առ ձեզ, զի առաքիցէք ինձ վասն պատուոյ, և ոչ քինու և չարակամութեամբ, զի ոչ եմ այդպիսի իրաց 'ի խնդիր, այլ վասն հաւատոց և ձեր օգտի զգուշա խնդրեմ. և վաղնջուց 'ի մէնջ առ ձեզ լեալ բարեմտութիւն զմտաւ ածէք ...

« Եւ թուղթս առաքեցաւ. նմանապէս և ընծայքս։ Եւ նոքա ընդունեալ զթուղթս և ընթերցեալ, և զոյս առաքեալսն տեսեալ, յոյժ ուրախ եղեն. և առանց յապաղելոյ՝ զգրեանսն ոսկով երրայեցի լեզուաւ գրեալ առաքեցին քսանևերկու գիրք որ յայտնի օրինաւորք էին, և եւթանասուն և երկու որ 'ի ծածուկք էին։ Իսկ Թագաւորն ընկալեալ և յառեալ 'ի նոսա, և ոչ կարացեալ ընթեռնուլ, վասն զի գիրն երրայեցի էր և բանն երրայեցի՝ գրեալ երկրորդ թուղթ ... Արժանի արարէք թարգմանիչս մեզ առաքել որ յերիտասարդական հասակի իցեն. և ճշգրտութեամբ երրայեցի և հելլենացի լեզուաւ իմաստացեալ, և վարժ ուսմամբ։ Եւ յայնժամ զառացեալս զեւթանասուն և երկու այս թարգմանիչս ընդրեալս 'ի վարդապետացն Հրէից առաքեցին, ըստ օրինակին զոր արար Մովսէս յորժամ ել 'ի լեառն հրամանաւ տեառն ... ըստ սմին օրինակի և սոքա առաքեցան որք թարգմանեցին զհին կտակարանս 'ի

Փառան կղզւոյն յանդիման Աղեքսանդրի. ուր շինեաց երեսուն և վեց սենեակ, երկու երկու արգելեալս յայգուէ մինչև ցերեկոյ. և երեկոյին զնոսա 'ի նաւակն հանեալ և անցուցեալ յայնկոյս յապարանսն Պտղոմեայ թագաւորի, և ընդ նմա ընթրել... զի մի կարասցեն խորհել ընդ միմեանս, այլ առանց իրերաց գիտելոյ թարգմանեսցեն։ Եւ այնպէս թարգմանեցին երկու երկու արգելեալք 'ի սենեակ. և երկու երկու մանկունս ընդ նոսա արգելեալս 'ի սպասաւորութիւն նոցա և պատրաստել զպարման նոցա, վասն փութանակի գրելոյն. և սենեակ կրկնակի շինեաց, և պատուհանս 'ի կողմանէ ոչ եթող, 'ի վերուստ 'ի ձեղուանէն լուսանցս եբաց. և այնպէս արգելեալք ընդ փակով յայգուէ մինչև ցերեկոյ թարգմանեցին զամենայն կտակարանս երկու երկու զոյգ զմի գիրս, սկսեալ յԱրարածոյն, և 'ի կատարել առաջին զուգին զգիրսն, տային ցերկրորդն, և յերկրորդէն ցերրորդն. այնպէս շուրջ եկեալ մի մի գիրք երեսուն և վեց, և թարգմանեցաւ կտակարանքն՝ որպէս վերագոյն ասացաք։ Եւ յորժամ կատարեցաւ, նստաւ թագաւորն 'ի բարձր աթոռ, և երեսուն և վեց ընթերցողքն առաջի նորա. նախանձ ունելով երեսուն և վեց գրոյն միմեանց միաբան գտանել, և հաւասար Եբրայեցւոյն, առընթեր ունելով զեբրայեցի օրինակն, և միոյն ընթերցեալ՝ այլոցն ամենեցուն միտ դնելով յանդիման թագաւորին, և ոչ գտաւ ամենեւին երկբանութիւն»։

Այս հատուածը գրեթէ բառ առ բառ կ'ընդօրինակէ Վարդան վարդապետ 'ի Մեկնութեան սաղմոսաց, ընծայելով զայն Եպիփանու Կիպրացւոյն։

***

Հինք Արիստէոսի կ'ընծայէին զայս մանրամասն գրութիւն. զոր անհարազատ կը համարին՝ բազմագոյնք յարդի քննադատից: Բայց իրմէ զատ յառաջ և յետոյ, գրեթէ նոյնպիսի պարագաներով կ'աւանդեն և այլ հնոց և ամենայն հաւատարմութեան արժանաւոր անձինք, որք և ժամանակաւ մերձաւորք էին Պտղոմէոսի Փիլադելփեայ. ինչպէս Արիստոբուլոս աղեքսանդրացի, որ կը յիշատակուի Մակաբայեցւոց գրքին՝ մէջ. Փիլոն հեբրայեցի, և եկեղեցւոյ հին և ստուգահաւատ վարդապետներէն՝ Յուստինոս Վկայ, Իրենէոս, Կղեմէս աղեքսանդրացի, Կիւրեղ Երուսաղեմի, Եպիփան և այլք: Սակայն հաւանականագոյն կ'երևնայ թէ այդ պարագայից մեծագոյն մասը՝ որ օտարանալ թուին 'ի ճշմարտութենէ՝ Հրեայք աւելցուցած ըլլան, եօթանասուն ռաբունեաց այս թարգմանութեան յարգն բարձրացընելու համար, նոյն իսկ սրբոյն Յուստինոսի օրերէն (յերկրորդ դարու քրիստոնէութեան)՝ որով աւելի առասպելապատում կերպարանք մը տուած այդ նշանաւոր և իրական դէպքին: Սուրբն Յուստինոս առանց ամենևին տարակոյս մը ցուցընելու, – և կ'երևնայ թէ իր ատենին ալ կային յերկմիտք, – կ'աւանդէ թէ յԱղեքսանդրիա գտնուած ատեն Հրեայք պատմեցին իրեն թէ թագաւորը եօթանասուներկու թարգմանիչքը առանձին սենեակներու մէջ փակել տուած ըլլայ, և թէ անոնցմէ ամէն մէկը ամբողջ սուրբ Գրոց թարգմանութեան անդադար պարապելով, երբ իրենց աշխատանքը աւարտելով իրարու քով եկան, մանաւանդ սքանչելեօք ամենուն թարգմանութիւն բառ առ բառ, տառ առ տառ բոլորովին մէկմէկու համաձայն գտնուեցաւ: Յառաջ բերենք իր խօսքե-

րը. «Եւ իբրև հասու եղև (Թագաւորն) զի եւթանասունքն ոչ միայն նովին մտօք, այլ և նովիմբք վարեցան բառիւք, և ոչ իսկ ցմի բառ օտարացան յառմիմեանս միաձայնութենէ, այլ և զնոյնս և զնոցին իրաց գրեցին, յապշութիւն կրթեցաւ. և հաւատացեալ թէ աստուածային զօրութեամբ գրեցաւ թարգմանութիւնն, ամենայն պատուոյ արժանիս զնոսա վարկաւ, որպէս արս աստուածահաճոյս. և բազում պարգևօք հրաման ետ նոցա դառնալ 'ի հայրենիս իւրեանց. և ընդ գիրսն սքանչացեալ՝ որպէս արժանն էր, և աստուածային մեծարանօք պատուեալ, անդանօր զետեղեցոյց. Զայսոսիկ ոչ ձեզ առասպելս, արք հելլենացիք, և ոչ մտախաբ պատմութիւնս ճառեմք. այլ քանզի յԱղեքսանդրիա հանգիպեալ, և զհետս սենեկացն 'ի Փարոս տեսեալ տակաւին մնացեալս, 'և յորոց անդն կային, իբրև 'ի հայրենի իրացն աւանդապահաց լուեալ, զայսոսիկ պատմեմք. զորս և յայլոց 'ի դէպ է ձեզ ուսանել. և առաւելապէս յորոց վասն սոցին իրաց պատմագրացաց, յիմաստուն և յերևելի արանց. 'ի Փիլոնէ և 'ի Յովսեպոսէ և յայլոց յոլովից [1] »։

***

Առանց ուզելու այս պատմութեան յարակից հանգամանաց և աւանդից ստուգութեան վրայ վիճել, որ մեր նպատակէն դուրս է, բաւական կը սեպենք ըսել թէ եօթանասունուերկու թարգմանչաց երկասիրութիւնը մեծապէս հաճոյացաւ թագաւորին. և իր մատենադարանին մէջ պատուով ու զգուշաւոր խնամօք պահել տուաւ զայն։ Արքունական հաճութիւնը, ու թարգմանչաց հեբրայական և յոյն լե-

[1] Յորդոր առ Հելլէնս։

զուի կատարեալ հմտութիւնն մեծ յարգ և արժէք ունելցուց իւրեանց աշխատանաց. և որուն ազնուագոյն գովութիւնն է՝ որ նոյն ինքն Բանն մարդացեալ՝ որ իր հոգւոյն ազդեց և խօսեցաւ մարգարէից բերնով, ինչպէս նաև իր սուրբ առաքելովքն նոյն թարգմանութիւնն գործածեցին, որպէս քաջայայտ է յաւետարանաց և յառաքելական թղթոց։

Հետևաբար նոյն յարգն ու մեծարանք ցուցին նաև քրիստոնէութեան առաջին դարերէն հայրք ու վարդապետք եկեղեցւոյ. և երբ ժամանակ անցնելէն ետքը սուրբն Հերոնիմոս ուզեց նոր թարգմանութիւն մը ընծայել 'ի հեբրայականէ 'ի լատին, անոնց շատին, — մանաւանդ իր ժամանակակցաց, — գժկամակութեան ու թարգմանչին կրած հալածանաց պատճառ եղաւ։

Կը վկայէ Նաւերի (Ն. Քրոնիկոնին). « Յամենայն կողմանց իսկ յայտ է, թէ եւթանասնից թարգմանութիւն 'ի հին և յանախոյ օրինակաց Եբրայեցւոց թարգմանեցաւ ... մանաւանդ զի և եկեղեցի իսկ Քրիստոսի՝ որ ընդ ամենայն տիեզերս տարածեալ է, զնա միայն կրէ, զոր և կենարարին մերոյ առաքեալք և աշակերտք 'ի բնէ աւանդեցին 'ի կիր արկանել » ։ Իրմէ յառաջ՝ սուրբն Երանոս եպիսկոպոս Լուգդունի. « Առաքեալք միաձայնին ընդ նախասացեալ թարգմանութեան, և թարգմանութիւնն համաձայնի առաքելոցն աւանդութեան։ Քանզի և Պետրոս և Յովհաննէս և Մատթէոս և Պաւղոս, և այլք զկնի և նոցին հետևողք, զմարգարէութիւնս ամենայն այնպէս ճառեցին, զոր օրինակ ունի ծերոցն թարգմանութիւն։ Վասն զի մի և նոյն Հոգի Աստուծոյ, որ 'ի մարգարէս կանխաւ քարոզեաց, թէ ո՛ր և որպիսի՛ նիցի գալուստն տեառն Քրիստոսի, և 'ի ծերս բարւք թարգմանեաց զբարւոք մարգարէացեալն, նոյն ինքն և յառաքելսն աւետարանեաց » ։

Աւելորդ կը համարինք այլոց նշանաւոր և պատկառելի հարց եկեղեցւոյ և վարդապետաց վկայութիւնն՝ ի մէջ ածել: Յիշենք միայն 'ի մերոց զսուրբն Ներսէս Շնորհալի, որ կ'ըսէ (Մեկն. Մատթ.) «Քան զայլս ամենայն արժանի հաւատարմութեան եւթանասնիցն էին. որոց յոլովագոյն ամօք յառաջ քան զծնունդն Քրիստոսի 'ի միասին գումարեալ գրեցին. որք և ազատ խակ են յամենայն կարծեաց՝ նախ ժամանակաւն և ապա բազմութեամբն, և զի զմի բան ասացին ամենեքեան»:

Մեր ազգն թէպէտև ունեցաւ գաղթականութիւն մը 'ի Հրէից՝ ատենին ազնուութեամբ և պատմութեամբ բարգաւաճ Բագրատունեաց ցեղը, որք որչափ ալ ջանացին և ուզեցին առջի բերան պահել իրենց ազգութիւնն, բայց ապա բռնադատուած 'ի հարկէ և 'ի հանգամանաց ժամանակին, չուշացան հայ ազգին հետ ձուլուելու բոլորովին. որով մինչ 'ի Քրիստոս գրեթէ ամենևին կամ ամենաքիչ յարաբերութիւն ունեցան մերինք ընդ Հրէից, անծանօթ մնալով նաև անոնց գրաւոր օրինաց: Իսկ երբ Թադէոս ու Բարթուղիմէոս սուրբ առաքեալներն աստուածային քարոզութեան լոյսը բերին 'ի Հայաստան, ու իրենց առաքելական արդիւնաւոր վաստակօք ծաւալեցին, հարկ եղաւ նաև հին կտակարանն ալ ընդելացընել այն ժողովրդեան՝ որ ոչ եւս երկրաքարշ, իր յոյսը երկրաւոր և ունայնաւոր աստուածներէն վերցնելով՝ կը հաստատէր միակ ու ճշմարիտ Աստուծոյն վարդապետութեանց ու խոստմանց հաստատուն հիման վրայ: Բայց թէ ո՛ր լեզուով կը մատուցուէր իրեն այս պարգևը, պիտի տեսնենք համառօտիւ:

Բ. ԱՍՈՐԻ ՀԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՔ

Այլևայլ հին թարգմանութիւնք Ս. Գրոց յասորի լեզու։ — Փէշիտտա կոչուածը։ — Ժամանակ թարգմանութեանն։

Մեր ազգէն քիչ յառաջ յիշատակած խօսքը հարկ է միատանգամ երկրորդել՝ թէ ինչպէս ասորի լեզուն և գրութիւն մեա տանելով ծառայած և ընտանի եղած էր առ մերան նախնիքս՝ գլխաւորապէս այն պատճառաւ որ աշխարհագրական դիրքովը այն լեզուն գործածող ժողովրդոց մերձաւոր էր, ու երբեմն նաև մինչ այն երկրին և իշխանութեան ա-րուն վրայ Աբգարներ կը տիրէին։ Հայաստանի ա-ռաքելոյն որչափ ալ 'ի վերնատան իր առաքելակցաց հետ լեզուաց պարգևն ընդունելուն հաւատանք, և Լամբրոնացւոյն հետ չտարակուսինք թէ « Հայոց մեծաց բառաքութն վայելուչ զբանս իւր յօդէր », բայց պատմական հաւատալիք մը չունինք թէ աստուածա-շունչ խօսքերը ինչ լեզուով իրենց ընտանեցուցած ըլլայ. և թէպէտ ուրիշ առաքեալք աւետարաններն ալ հետերնին տարին, Քրիստոսի խօսքին ու վար-դապետութեան հետ, բայց Թադէի համար նոյնը չենք կրնար ըսել. անմիջապէս յետ համբարձման Փրկչին երևնալով 'ի Հայաստան, յորում ժամանա-կի դեռ աւետարանք գրի վրայ առնուած չէին։

Արդարու Թղթոյն մէջ՝ որուն հեղինակն է արդէն մեզի ծանօթ դիւանադպիրն Լաբուբնիա, հետևեալ խօսքերուն կը հանդիպինք 'ի վարդապետութեան Թադէի. « Զգիրս զոր ընթեռնուցուք յեկեղեցւոջ

ժողովրդեան առաջի՝ զԱրարածս և զՄարգարէս և զԱւետարան. և զԹուղթս Պաւղոսի զոր եւս բերել Սիմոնէ Պետրոս 'ի Հռովմ քաղաքէ, և զԳործս առաքելոցն՝ զոր եւ մեզ բերել Յովհաննէս որդին Զեբեդեայ յԵփեսոս քաղաքէ: Զայն ևս զայս գիրս ընթերցջիք յեկեղեցւոջ Քրիստոսի. և այլ աւելի քան զսոսա մի ընթեռնուցուք. քանզի չիք այլ ինչ յորում գրեալ զՃշմարտութիւն. բայց 'ի գիրս զոր ընկալարուք հաւատովք յոր կոչեցարուք»: Լաբուբնեայ գրոց այս հատուածը իրաւամբ եկամուտ կը սեպուի 'ի հմտից, ուստի և անհարազատ. և այս կարծեաց յայտնի պատճառը՝ ինչպէս ըսինք, այն ատեն Նոր կտակարանին և ոչ մէկ մասը դեռ գրի առնուած չըլլալն էր. և Թադէի յետ համբարձմանն Քրիստոսի 'ի Հայաստան անմիջապէս առաքելութիւնն՝ վկայեալ է յԵւսեբեայ և յայլոց, և 'ի ազգային պատմչաց:

Առ Ասորիս աւանդութիւն է թէ Աւգարու հրամանաւ՝ Թադէի կամ իր աշակերտաց ձեռքով եղած ըլլայ հին կտակարանին Թարգմանութիւնն յասորի բարբառ: Նոյն լեզուով չորս այլեւայլ և իրարմէ տարբեր Թարգմանութիւնք կան գրոց սրբոց. և են Ա. Փեշիտտա կոչուածը: Բ. Փիլոքսեան – հերակլեան: Գ. Գիւրըթոնի անունը կրող Թարգմանութիւնն, իր ձեռքով գտնուած և հրատարակուած ըլլալուն, և Դ. Երուսաղէմին:

***

Հնագոյնն ասոնց մէջ ըստ արեւելագիտաց հմտից՝ է Փեշիտտա Թարգմանութիւնն: Առոչ չգիտցուիր թէ ինչ կը նշանակէ այս անունն. բայց ընդհանրապէս կը Թարգմանուի պարզ կամ անպաճոյճ, և հաւանական կ'երեւնայ թէ ասորի այս Թարգմանութեան

պարզ կամ անպաճոյճ կոչուելուն պատճառը՝ ուրիշ թարգմանութիւններէ զանազանելու համար է․ որ յետոյ քան զայն յեօթանասնից թարգմանութենէ կամ Որոգինեայ Վեցիցեանի վրայէն եղած են․ որոնք աւելի յղկուած ու զարդարուն ոճով և լեզուով եղած էին համեմատութեամբ Փեշիտտայի, որուն ոճը աւելի անզարդ, բայց բնական և ընտրելագոյն էր, և ասորի լեզուի հնաւանդութեան օրինակ մը համարուած։

Փեշիտտայի թարգմանութեան ճիշդ ժամանակը յայտնի չէ։ Հին կտակարանին թարգմանութիւնը ոմանք ինչուան Սողոմոնի ժամանակէն եղած կը համարին։ Ասիկայ է Իէշու-հաա (Եհուտտա) Հատէա քաղաքի ասորի եպիսկոպոսին (յութերորդ կամ յիններորդ դարու ապրած) կարծիքը։ Սուրբ գրոց դժուարիմաց տեղուանքը մեկնարանելու գիտմամբ յօրինած երկասիրութեանն մէջ կ՚ըսէ թէ Հնգամատեանն, Յեսու, Դատաւորք, Հռութ, Սամուէլ, Դաւիթ, Առակք, Ժողովող, Երգերգոց և Յոբ՝ Սողոմոնի ժամանակ թարգմանուեցան Տիւրոսի Քիրամ թագաւորին խնդրանօք։ Իսկ հին կտակարանին առանցմէ դուրս մնացած գրքերը, – կը յաւելու նոյն եպիսկոպոս, – նոր կտակարանին հետ թարգմանուեցան Եդեսացւոց թագաւոր Աբգարու ատեն 'ի ձեռն Ադդէի և այլոց առաքելոց։ Ընդհանրապէս կը կարծուի թէ քրիստոնէական կրօնից առաջին դարուն կը պատկանի այս թարգմանութիւն, եբրայական բնագրին վրայէն եղած։ Դժուարին է ենթադրելը թէ այն հեբրայեցւոց գործածութեանն համար եղած ըլլայ, որ կամ իբրև գերեալք և կամ առևտրոյ պատճառաւ բազմաթիւ աստ անդ ցրուած էին յԱսորիս և 'ի Միջագետս։ Վասն զի եթէ Հրէից համար սահմանուած ըլլար՝ հաւանականաբար աւելի յարասական՝ Թարգումի ոճ պիտի ունենար՝ քան ճիշդ

և հաւատարիմ թարգմանութիւն մը՝ ինչպէս է ա-
սորին. ուստի և անշուշտ ոչ Հրէից՝ այլ այն կողմերը
գտնուող քրիստոնէից համար եղած է այն փոխա-
դրութիւնը, և այն ալ 'ի սկզբան քրիստոնէական
Թուաբերութեան։ Նոր կտակարանին թարգմանու-
թեան մասը կը կարծուի թէ առաջին դարու երկ-
րորդ կիսուն կամ յառաջին քառորդի երկրորդին
եղած ըլլայ յԵդեսիա կամ 'ի վերին Միջագետս։
Այս մեզ հասած ամէն վկայութիւնք կ'ընծայեն զայն
Ադդէի կամ իւր աշակերտաց. ոմանք եւս Աբգարու
թագաւորի, թէպէտև նախնական քրիստոնէութեան
ժամանակէն մնացած սակաւ գրութեանց չգտնուե-
լուն՝ դժուարին կ'ըլլայ որոշակի բան մը սահմա-
նելը։ Սակայն հայ և ասորի պատմըչաց ոմանց մէջ
գտնուած տեղեկութիւնք՝ կրնան գէթ մասամբ լու-
սաբանել այս խնդիրը, որուն համաձայնին 'ի մերոցն
մեծն Վարդան և յասորւոց Բար-Եբրէոս երեքտա-
սաներորդ դարու մատենագիրք, Մ. Բար-քեբաս
որ մեռած է 'ի սկիզբն տասներորդ դարու (913),
Իշու-տատ յիններորդին և Յակոբ Եդեսացի
յութերորդին (+ 710)։ Բար-Եբրէոս և Բար-
քեբաս՝ Եդեսացւոյն վկայութեամբ կը հաստատեն
իրենց կարծիքը. «Արժան է գիտել, կ'ըսէ Բար-
քեբաս իր վեցօրէից մեկնաբանութեան գրոցը մէջ,
որ երկու թարգմանութիւնք կան հին կտակարանի
'ի ձեր ասորական լեզուի. յորոց մին Փեշիտտա կը
կոչուի, զոր կը կարդանք յեկեղեցւոջ. և հեբրայա-
կանին վրայէն եղած փոխաբերութիւն մ'է. իսկ
միւսն եօթանասնից՝ որ յունարէնին վրայ թարգմա-
նուած է։ Փեշիտտա կամ յեբրայականէն եղածը
Աբգար թագաւորին ժամանակէն է. ինչպէս կ'ա-
ւանդէ մեզ Մար-Յակոբ Եդեսացի թէ առաքեալն
Ադդէոս և հաւատարիմ արքայն Աբգար մարդիկ
ղրկեցին յԵրուսաղէմ և 'ի Պաղեստին. որոնք հոն

հանելով թարգմանեցին հին կտակարանը 'ի հեբրայեցւոց լեզուէ յասորականն. իսկ եօթանասնից վրայէն եղածը՝ երկասիրութիւն է Պաւղոսի եպիսկոպոսի Թէլլա Մաւզալաթ քաղաքի»: Բար-քերասայ այս վկայութեամբ՝ երկու թարգմանութիւնքըն ալ՝ թէ հին և թէ նոր կտակարանի՝ ժամանակակիցք և իրարու մերձաւորք կը հանդիպին: Եւ յայտնի է 'ի պատմութեանց որ ինչպէս Հայք, տանկ նաև Ասորիք ունեցած են իրենց թարգմանչաց դարը. այս տարբերութեամբ միայն՝ որ վերջիններս երեք դարու կանխած են քան զմեզ:

Քրիստոնէութեան առաջին դարերէն 'ի վեր կայր Ասորի եկեղեցի, որ ունէր իր յատուկ եկեղեցական պաշտամունքը, և սահմանակցական քաղաքական յարաբերութեամբքն՝ մեծ ազդեցութիւն մը Հայաստանի վրայ. քանի որ այս վերջինս իր բուն ազգային մատենագրութիւնն չունէր՝ մինչև ցսկզբնաւորել հինգերորդ դարու: Ասորի եկեղեցին այսպէս կերպաւորուած՝ հարկաւ պէտք պիտի ունենար նաև սուրբ Գրոց թարգմանութեան, և ամենէն աւելի և յառաջ՝ սուրբ Աւետարանին: Բաց ասկէ, ընդհանրապէս ընդունուած աւանդութիւն մը, մեզի կը սորվեցընէ թէ սուրբն Մատթէոս իր աւետարանը շարագրած ըլլայ արամեական լեզուով, այսինքն այն լեզուով՝ որուն արդի ասորականն մէկ ձևն կամ անոր մէկ բարբառն է: Գիւրըթոն այս կարծիքն յայտնապէս վաւերացուցած է իր Քննութիւնք 'ի վերայ հին թարգմանութեան չորից աւետարանաց յասորի լեզու կոչուած գրքին մէջ. (Remains of y very ancient recension of the four Gospels in syriac; London, 1857).

Հինգերորդ դարուն սկիզբը կամ 'ի վերջ չորրորդին, Թէոդորոս Մոպսուեստացի, որ քաջածանօթ էր Փէշիտտա թարգմանութեան, վասն զի ասորի էր

ծագմամբ առհմին, դիւրել կու տայ որ երբեք որոշակի յայտնի եղած չէ թէ ով է անոր բուն թարգմանիչը։ Երբ չորրորդ դարուն վերջերը անծանօթ էր թարգմանիչը, ըսել է որ դարերով առաջ եղած պիտի ըլլայ այդ աշխատանքին ձեռք զարնողը, ապա թէ ոչ, իր անուան այդպէս անծանօթ մնալու բնական պատճառ մը չէր ըլլար։ Սուրբն Եփրեմ՝ որուն կենաց վախճանը ճիշդ այն ատեն կը հանդիպէր յորում և ծնանէր Մոպսուեստացի, բաց 'ի Փէշիտայէ ուրիշ ասորի թարգմանութիւն չճանչնար. այլ զայն կը գործածէ և կը մեկնաբանէ։ Կը յիշատակեն դարձեալ զայն սուրբն Մելիտոն եպիսկոպոս Սարդիկեայ (160-170), և իրմէ քիչ յառաջ կամ ժամանակակից սուրբն Հեգեսիպպոս առ Եւսեբեայ[1]. «Յաւետարանէ անտի հեբրայեցւոց և ասորոց. և առանձինն ինչ ինչ ետ նա 'ի լեզուէ հեբրայեցւոց»։

Ուրիշ պարագայ մ'ալ որ կը ցուցընէ թարգմանութեանս հնութիւնը՝ այն է որ երկար ժամանակ պակսէին յայնմ թարգմանութեան երկրորդականոն կոչուած կաթուղիկէ թուղթք առաքելականք. ինչպէս Պետրոսի երկրորդը, երկրորդն և երրորդ Յովհաննու, և թուղթն Յուդայի։ Ոչ եթէ արեւելեան եկեղեցեաց՝ ասորւոց, հայոց, մելքիդայց, յակոբիկեանց, նեստորականաց և մարոնեայց անընդունելի էին այս սրբագրոշմ գիրք, այլ վասն զի ասորական թարգմանութեան ատեն այս թղթերն դեռ եւս ամէն տեղ Աստուածաշունչ գրոց կանոնին մէջ անցած չէին. և յայլուստ յայտնի է որ եկեղեցւոյ կարծիք և որոշմունք անոնց վրայ յամր եղան, քան մնացած երեք կաթուղիկեայց. որով նոր կտակարանին գրչագրաց մէջ միշտ այս վերջիններն կ'անցնէին,

[1] Պատմ. Եկեղ. Դ. ԻԲ։

խոկ մեռներուն ժամանակ անցնելէն ետքը։ Ասիկայ մեծ ապացոյց մ'է, ինչպէս ըսինք, ասորական պարզ կամ անպաճոյճ կոչուած թարգմանութեան հնութեանը։

Ասորական Փէշիտտա թարգմանութեան մեծ յարգ մ'ալ իր ընթերցուածոց հարազատութիւնն է, որուն թերեւս սակաւք կարենան հաւասարիլ. և հաւանականաբար այս այլ պատճառ մ'է մեր նախնեաց զայն նախընտրելուն 'ի թարգմանութեան սուրբ գրոց։ Այս հարազատութիւն արդիւնք է ոչ միայն լեզուին կազմաւորութեան և գրութեան՝ որ աւելի մտագրութիւն կը պահանջէ, այլ նաև այն ընդհանուր մեծարանաց զոր կը վայելէր բովանդակ ասորի լեզուն գործածող ժողովրդոց մէջ։

Երկասիրութեանս առաջին մասին մէջ առաջ բերած ենք Վարդանայ վարդապետի գրութիւնն առ Հեթում թագաւոր Թադէի ընծայուած սուրբ գրոց թարգմանութեան վրայ. հոս երկրորդելը աւելորդ կը համարինք[1]։

* * *

Հաւանական է ուրեմն ենթադրելը թէ Աբգարու ընդունած, և ըստ աւանդութեան, իր հրամանաւ ասորական թարգմանութեան վերածուած սուրբ Գիրք՝ ծանօթ և գործածական եղած ըլլան նաև Հայոց, որոց վրայ կը թագաւորէր. և որ ունեցաւ իր շարունակութիւնն՝ մինչև որ յատուկ իրենց լեզուով ունեցան թարգմանութիւն մը։ Այս վերջին դէպքին՝ ու Թադէի 'ի Հայաստան գալուն և քարոզութեան մէջ եղած միջոցը՝ չորս երկար դարերու միջոց մ'է. յորում մեր հայրենի հողոյն վրայ ալ

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐ., Բ, եր. 152։

քրիստոնէական կրօնք ունեցան և կրեցին իրենց հալածանք. ինչպէս նաև երկնից ընծայուած վկայից ու մարտիրոսաց ոչ անշան թիւ մը. երբ այնչափ վառ եռանդեամբ և զարմանահրաշ սրտով քարոզուած և ընդունուած շնորհաձիր երկնակրօն վարդապետութեան կառուցած տաճարաց և եկեղեցեաց աւերակներուն վրայ՝ հեթանոսական մոլեգնակրօնութեամբ միւսանգամ բարձրացան գէց մեհեաններ և բագինք:

Ընդդիմամարտ կռիւ մ'էր՝ հեթանոս ու քրիստոնէայ կրօնից. խաւարի վերջին յուսահատ ճիգն լուսոյ դէմ: Չէր հարկ, չէր արժան տարակուսիլ թէ ով պիտի տանէր փափաքելի յաղթանակը:

Երեքհարիւր և երկու թուականն էր Քրիստոսի լուսաբեր ծննդեան:

Երկնապարգև և աստուածահրաշ թուական մը, Հայոց կրկին լուսաւորութեան, երբ մթին ու մահաշոտ վիրապէ մը դուրս կ'ելլէր՝ Հայաստանի հոգևոր կենաց լուսաւորիչը. մահուան արհաւիրքն իրմէ հեռացընելով կենդանի պահուած սուրբն Գրիգոր՝ կը քարոզէր ու կը տարածէր զլոյս հաւատոյ, զլոյս անմահութեան, իր երկնաւոր վարդապետին Յիսուսի հոգեհրատ լեզուովը, սրտովն ու խօսքով:

Սուրբ հաւատոց 'ի Հայաստան քարոզութենէն ետքը, անոր աստուածահրաման պատուէրներն, խոստացած մխիթարութեանց երկնաբուղխ ակնկալութիւնքն վառ պահելու, և զայն՝ յօժարակամ և յօժարափոյթ սրտով ընդունողաց սրտին ու մտաց մէջ տեւական ընելու. համար՝ անհրաժեշտ հարկ ու պէտք մ'ալ կայր. — Աստուածաշունչ գիրքը՝ ժողովրդեան ծանօթ ու ընտանի լեզուով ընծայել իրեն:

Սուրբն Գրիգոր Լուսաւորիչ, Հայաստանեայց աստուածագութ ծնողն, որպիսի՝ արեամբ ու հրաշաբանաքարոզ վարդապետութեամբ՝ այս սուրբ հա-

ւաոց ուսուցիչն ու վարդապետ, չունեցաւ առիթ ու պատեհութիւն՝ որբագիր ու աստուածաշունչ ատրից հայկական թարգմանութեամբ օժտել այն ազգն՝ որուն փրկագործ լուսաւորութեանն համար իր արիւնն ու կեանքը տուաւ: Հայաստան աշխարհի՝ իր ատենին ունեցած քաղաքական դիրքն և ուսումը, և թերևս նոյն ինքն սուրբ հայրապետին անձնական հանգամանք՝ պահելու տոհմին և արեամբ օտար ըլլալով այն ազգին՝ որուն մէջ անմահանուն պիտի մնար իր արդեամբքը՝ կրնան արգելք եղած ըլլալ իրեն զայն 'ի գլուխ տանելու: Վասն զի ինչպէս յայտնի է 'ի պատմութենէ, Անակայ պարթևազին ծնունդ, անդստին 'ի մանուկ տիոյն փախստական և հալածուած, սնեալ և վարժեալ առ Յոյնս, ու հաւատոց հետ նաև զշնորհս ձեռնադրութեան անոնցմէ ընդունած, բաւական սեպած պիտի ըլլայ անշուշտ՝ ազգին արդէն ծանօթ և ընդունելի թարգմանութեան վրայ՝ ընդելացընել նաև զգոյն՝ զայն գիտցողաց ու հասկցողաց համար. մանաւանդ որ ինչպէս գիտենք, որչափ ալ հայ ազգն ունէր յայնժամ իր բարդաւաճ ծաղկեալ լեզուն, այլ զայն գրաւոր պատմուճանաւ ու կերպարանօք ներկայացընելու էական ու գլխաւոր տարրը կը պակսէր. հայկական յատուկ և ազգային նշանագրաց կամ բոլորովին բացակայութեան և կամ անոնց անկատարութեան պատճառաւ:

Այս պակասութեան համար՝ բռնադատուած էր քրիստոնէութիւնն ընդունող ու սիրող հայ ազգն՝ փոխանակ իրեն սեպհական լեզուով սուրբ գրոց թարգմանութիւն մը ունենալու, ուրիշ երկու օտար՝ իրեն ծանօթ ու դրացի ազգաց թարգմանութեանց կիրառութեամբն գոհ ըլլալ առժամանակ մի:

***

Կանխեցինք ըսել թէ սուրբ ժողովուրդն ունէր անդամին յառաջին դարէ քրիստոնէութեան իր յատուկ եկեղեցական պաշտամունքը, որով նաև զպատարագամատոյց գիրը: Անկարելի ըլլալով ենթադրել քրիստոնէական հաւատոց բարգաւաճմանք և յառաջատև չարունակութիւն՝ առանց սուրբ պաշտամանց, անտարակուսելի է որ առաքեալն Թադէոս սուրբ լեզուով աւանդած ըլլայ զայն, և անշուշտ զայն առհմանող նուիրական գրոց մէջ ամենէն աւելի պատկառելի հնութիւնն ունեցողը՝ ու Յակոբայ առաքելոյ Տեառնեղբօր սուրբ և մեծարելւոյ անունը կրող Պատարագամատոյցը, որոյ վրայ յետոյ դարձեալ առիթ պիտի ունենանք խօսելու. վասն զի այդ պատարագամատուցին ալ հայկական թարգմանութիւնն պահուած է 'ի մեր մատենագրութեան, և հասած մինչև առ մեզ. բայց թէ որ դարուն կը վերաբերի այդ փոխագրութիւնն, երբ և որչափ ատեն տեւած է անոր գործածութիւնն, ինչպէս նաև խափանումը, չենք կրնար որոշակի բան մը ըսել: Յիշեցընենք միայն որ անոր հետ կը գտնենք նաև ուրիշ պատարագամատոյց մը հետևեալ խորագրով. «Պատարագ Աստուծով՝ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի». որ հաւանական ենթադրութեամբ սըրբոյ Լուսաւորչին ձեռքով՝ անշուշտ յետ ձեռնադրութեանն 'ի դարձին 'ի Կեսարիոյ բերուած է, և 'ի ժամանակին այն եկեղեցւոյ մէջ արդէն 'ի գործածութեան էր: Ասով կ'ըլլան երկու պատարագամատոյցք, մին յասորի եկեղեցւոյ և միւսն 'ի յունականէն փոխադրուած՝ առ մեզ և հրատարակուած, և ըստ տեղւոյ և ըստ ժամանակի 'ի կիրառութեան առ հինսն մեր: Եւ որովհետև հինգերորդ դարու պատ-

մէջք կ'աւանդէն թէ սուրբ գրոց ընթերցուածոց համար յեկեղեցիս՝ ասորի և յոյն լեզուներով վարուելու սովորութիւնն ունէին մերքն, անտարակուսելի կրնայ համարուիլ թէ պատարագի պաշտամանց մէջ գործածուած երկու լեզուաց համաձայն կ'ըլլային նաև ընթերցուածք 'ի սուրբ գրոց, մերթ յասորին և մերթ 'ի յոյնն։

***

Սակայն այդ երկու լեզուաց ընթերցմամբն ալ չէր օգտուեր ժողովուրդն, չհասկնալով մանաւանդ թէ հոգևոր և թէ ազգային շահուց տեսակէտով. և այս երկու չհասան ալ, — ինչպէս ուրիշ տեղ ակնարկեցինք, — ծանր ու դժընդակ էր հայրենեաց հոգևորական ու ազգային շահերով տոչորող աստուածամերձ ու հայրենասէր սրտից և ոգւոյ։ Երկու լեզուքն ալ ունէին իրենց գոռ և ընդդիմամարտ թշնամիք. Յոյնք՝ զասորականն կը ջանային վանել, մերժել ու ատելի ընել Հայոց, զի արդէն անոնց երկրին մէյ մասին տիրողք, միւս մնացածին վրայ ալ կ'ուզէին իրենց ազդեցութիւնը զօրացընել, և անով ալ աւելի ընդարձակել քաղաքական իշխանութեան սահմանը. օգնութեան նպաստից խոստմանց մէջ դիւրաշարժք և յօժարափոյթք, գործադրութեան միջոց՝ կարծես թէ քաղաքային նիւթական շահէն զատ ամէն բան կը մոռնային, բռնադատելու համար զազգն որ իրենց իշխանութեան լծոյն տակ խոնարհի՝ մոռացիւր զոհելով իր ու հայրենեաց ինքնօրինութիւնը։ Այսպիսի քաղաքականութեամբ վարուեցան Յոյնք մինչև Շնորհալւոյ ատեններն և անկէ ալ անդին։ Իսկ Պարսիկք, բռունք և մոլեռնախանձք, քաղաքական իշխանութիւննին ընդարձակելու մտածութենէն ու փափաքէն զատ՝ կրօնական գիտում մ'ալ ունէին.

փոխել վերցընել այն կապը որ զՀայս արեւելեան կայսերութեան ու անոր քաղաքակրթութեան հետ միացընելու կամ անոր հաւատարիմ պահելու զօրաւոր միջոց մ'էր. ընաջինջ ընել զքրիստոնէութիւն, եկեղեցեաց աւերակներուն վրայ տաճարներ ու կրակի տուներ բարձրացընելով։ Այս նպատակին հասնելու համար հարկ էր ընտելացընել իրենց պարսիկ լեզուն, և ծաւալել զայն ընդ բովանդակ Հայաստան. և ուր հարկ ըլլայ՝ ամէն բռնական և անիրաւ միջոց գործածել, յոյն և ասորի լեզուն և գրութիւն անկէ տարագիր ընելու։ Այս միջոցին յաջողութեանը մէջ կը յուսային տեսնել իրենց յաղթանակը։ Փառասիրական ձգտումներ և անձք, նոյն իսկ հայ հողոյն վրայ բնակող՝ բայց հայրենաւանդ արիութիւն, սէր և անձնանուիրութիւն չկրող ազգայնոյ, Մեհրուժաններու, Վասակներու և անոնց նմանեաց, ծածուկ կամ յայտնի գործակիցք, սատար և օգնական ըլլալ կը խոստանային անոնց ջանից։ Արտերնուն հետ՝ նաև ձեռքն ու սուրը անարգ գնով կը վաճառէին, հայրենեաց կրօնքն ու ազգային իշխանութիւնն տապալելու։

***

Հայաստան հայրենեաց կրօնական ու քաղաքային տագնապի ճգնաժամի մը մէջ՝ սրբոյն Գրիգորի աթոռոյն վրայ բազմած կը ցուցընէ պատմութիւն՝ զմեծն Սահակ Պարթեւ. ոչ լոկ երկնապարգեւ սիրտ ու հոգի մը, այլ մանաւանդ աստուածախնամ անձնութիւն, ամենափայլ արեգակն մեր ազգային եկեղեցական տարեգրութեանց մէջ։ Իրեն ու իր անմահանուն աշակերտին սրբոյն Մեսրովպայ, և զերենք քաջալերող ու խրախուսող մեծին Վռամշապհոյ արքային ջանից արդիւնք է՝ Հայաստանի պատմիչ մա-

հաթմերը բանադատ Նիրհմանէ մը արթըննալը, և այն՝ այնպիսի եռանդեամբ, փառօք և արգասեօք, որ ասե՛մ, խիստ սակաւուաւ եղաւ։

Տեսան ասոնք, կորովամիտ աչքեր և հեռատես միտք, թէ սորի ազգ, լեզու և դպրութիւն՝ արդէն իրենց ժամանակին անկընելու վրայ էին. ո՛չ ոչ անոնց դպրութենէն և ոչ ալ քաղաքական դիրքէն՝ իրենց հայրենեաց ապագային համար ակնկալութեան տեղ մը մնացած չէր. հարկ էր՝ իրենց երկրին ու աշխարհին վրայ կռուող երկու ազգերէն՝ նախ առաջին պարսիկ իշխանութեան որ ըստ օրէ աւելի սպառնական դիրք մը բռնող ոյժը խորտակել ջախջախել, ու անով սրբութեան կրօնից վտանգը հեռացընելէն ետքը, յոյն գիտութեամբ և դպրութեամբ՝ այլ եւս պաշարեալ և կարօտ չթողուլ ազգ մը՝ որ իրենց արիւնն, սիրտն ու սէրն էր. և առ այս՝ հարկ էր գիտել և մերձենալ առ յոյնն այնպիսի չափով և խոհականութեամբ՝ որչափ իրենց անհրաժեշտ պէտքը կը պահանջէր. ազգային երիտասարդութիւնն հելլէնացընել մտքով, հանճարով ու գիտութեամբ, և հայ պահել սրտիւն և հոգւով։

Թէ ո՛րչափ աշխատեցան այս բարեգործ դիտմանն հասնելու՝ մեր երկասիրութեան առաջին մասին մէջ արդէն յիշատակած ենք համառօտիւ. ջանալով մի առ մի, որչափ գիտցեր ու կրցեր ենք հաւաքել 'ի պատմութեանց և 'ի յիշատակարանաց, թուելով իրենց մեծ և սուրբ հոգին ու սիրտը կրող արժանաւոր աշակերտները, ուշիմ՝ երկարոգի, ու մեր հայրենեաց ու իրենց վարդապետաց անմահական պարծանք հինգերորդ դարու ուսումնասէր և ուսումնախնդիր երիտասարդութիւնն։

Գ. ԱՌԱՋԻՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

ՅԱՍՕՐԱԿԱՆԷ

Ազգին յուշրեան աղերսը առ Ս. Սահակ վասն թարգմանութեան Ս. Գրոց 'ի հայ լեզու։ — Սուրբն Սահակ ձեռք կը զարնէ այս աշխատանքին յասորականէ։ — Ո՞ր մասին թարգմանութեան նուիրեց նա իր նախկին աշխատանքը։ — Սրբոյն Մեսրովպայ և երիցագոյն աշակերտաց գործակցութիւնը։ — Հանգամանք այս նախկին թարգմանութեան։

Հայրենեաց վտանգը վերահաս էր։ Հարկ էր փութալ 'ի դարմանն։

Նոյն բարենշան ու նախանձելի դարու պատմըչաց մէկը, Փարպեցին Ղազար, սրտաշարժ ու անմոռանալի տեսարանի մը կը հրաւիրէ զմեզ։ Անոնցմէ գրեթէ տասնըչորս դարու հեռու մնացողքս, դեռ չենք կրնար անկարեկիր ու անարտօսր նկատել զայն։ Թողունք Փարպեցւոյն որ խօսի.

« Ժողովեալ ամենայն աւագ քահանայք աշխարհին Հայոց, հանդերձ երանելեաւն Մաշթոցիւ, և ամենայն նախարարք աշխարհիս Հայոց և մեծամեծ տանուտեարք՝ առ Թագաւորն Հայոց Վռամշապուհ, և հանդերձ Թագաւորաւն սկսան աղաչել զսուրբն Սահակ՝ արկանել զանձն յաշխատութիւն հոգևոր, և թարգմանել զաստուածաշունչ կտակարանն 'ի յոյն լեզուոյ 'ի հայ բարբառ։ Եւ դասք աւագ քահանայիցն ասէին ցսուրբ քահանայապետն, թէ Մեք որ կամքս առաջի քո, հանդերձ երանելեաւն Մաշ-

Թոյլս. զոր զարթոյց աստուածային շնորհն 'ի ցանկութիւնս յայս, կարգել զվաղնջուց գրեալ շարագիրս տառիցն, զորս ոչ ուրուք էր հոգացեալ արկանել 'ի կիր. այլ աստի մեծաջան և անօգուտ ուսմամբքն աշխատեալք յոխորտ, յորոց բազմութիւնք ժողովրդոց ունայնք և Թափուրք հրաժարեալք գըլնային յեկեղեցւոյն. և ուսուցիչքն հանելով յոգւոց և հառաչելով՝ զղջանային զոնոտի ջանս իւրեանց. յորում ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս 'ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն, որ է կերակուր և պարարումն իմաստանախնդիր անձանց. մինչ գտաւ գիր, և յաջողելով Քրիստոսի եկեալ յաճումն տակաւին զօրանայ: Համայն և զայս վաստակոյս կարգումն, և քոյինդ առաքինութեանդ գիտութեամբ եղիցի. և կատարեաւ: Արդ որպէս և սուրբ նահատակն Քրիստոսի Գրիգորիոս պահեալ 'ի խոշտանկանսն անճառս աջով Հզօրին 'ի լուսաւորութիւն գիտութեան աշխարհիս Հայոց տուաւ, պահեալ շնորհեցաւ և քեզ նորին շառաւիղ՝ վիճակ ժառանգութեան պայծառութեան պաշտաման այսորիկ. սկիզբն առնել գործոյ մշակութեան այսմիկ, և լինել նմանօղ սուրբ նախնայն քում, որ յանգիտութենէ 'ի ճշմարիտ աստուածգիտութիւն առաջնորդեաց աշխարհիս Հայոց: Արդ և դու յանօգուտ մուրողտբանութենէն 'ի սորոյդ հոգեշահ եկեղեցազարդ բանաւորութիւնս առաջնորդեա բազում ժողովրդոց աշխարհիս մեծի. լնուլ զպակասութիւնս զայս մնացեալ 'ի սուրբ նախնեացն քոց, զոր պահեաց քեզ Աստուած. զոր ոչ ումեք այլում 'ի Հայաստան աշխարհիս մարդկան գոյ հնար ձեռն արկանել յայդպիսի գործ մեծ: Վասն զի և ոչ կարացաք հմուտ լինել և տեղեկանալ այդչափ արուեստաւոր ումանցդ, որպէս և քեզ տուաւ զօրութիւն ճարտարութեան 'ի վերին օգնա-

կանութենէն, յաղագս քո առաքինասէր և պարկեշտ վարուցդ որ նմանեալ ճշգրտապէս օրինակեցեր 'ի քեզ զվարս երանելւոյ հօր քոյ Ներսէսի »:

Աշխարհատապաղատ թախանձանք մ'էր, բովանդակ ազգի ընդհանրութեան կարօտութիւնն լսելի ընող ձայն՝ եկեղեցական ու աշխարհական աւագութեան և բազմութեան ժողովրդոց, միաբերանք և միախորհուրդք, խառնելով իրենց աղերսանաց հետ նաև զարտասուս. յորում մի է ամենուն նպատակը, զոր Կորիւն, Փարպեցի և Խորենացի միաբան կ'աւանդեն: Հայկական այբուբենին՝ արդէն մտածուած և յօրինուած կազմակերպութիւնն՝ գեղեցիկ պատեհ և առիթ մ'էր իրենց խնդրուածոց կատարումը փութացընելու, և սուրբ հայրապետին աշխատանքը դիւրին գործելու: Այսչափ ու այսպիսի իրաւացի թախանձանաց չէր կրնար անլսող երեւնալ աստուածասէր ու հայրենեաց բարւոյն փափաքով վառուած սիրտը: Մաշդիւր յանձն առաւ իրեն եղած առաջարկութիւնը. ու անով ամէն իրեն դիմող սրտերը սփոփեց ու քաջալերեց. և վտանգն՝ զոր ինչպէս ըսինք, վերահաս և սպառնալից կը նկատէին՝ ոչ եւս այնպէս խիթալի և անհրաժեշտ կ'երեւնար:

Բայց այդ անթիւ բազմութեան մէջ ամենէն աւելի սփոփուածն էր Մեսրոպայ սիրտը. իր մեծ գիւտին, և անոր համար կրած ամէն տագնապներուն, ճգանց ու վաստակոց լիուլի հատուցումն ու վարձքը արդէն ընդունած կը սեպէր:

Սակայն սուրբ Գրոց աստուածահաւատ և ամենայն վստահութեան արժանի յոյն օրինակ մը գտնելն 'ի Հայաստան՝ դիւրին չէր. արդէն ըսինք թէ Մերուժանայ ազգադաւ կրից ու սուրբ կրօնից դէմ ուռնեցած ատելութեան զոհ եղած էին. անոնց 'ի խնդիր ելլել, մինչև 'ի սահմանս Յունաց և 'ի կայսերանիստն Բիւզանդիոն խնդրակք յղել՝ ժամանակի կարօտ էր,

տուր ազգին պէտքն՝ անհամբեր ըղձած էին զամենե-սեան. օր մը, ժամ մը յառաջ իրենց իրաւացի ցան-կութիւնը կատարուած տեսնելու փափաքանօք վա-ռուած էին ամենքեան։ Այդ պատճառաւ սուրբն Սահակ հարկ սեպեց որ ասորի թարգմանութեան մը վրայէն սկսի իր աշխատութիւնը. որովհետեւ ինչ-պէս քիչ յառաջ առիթ ունեցանք յիշելու՝ հաւա-տարմութեամբը մեծարոյ ու ազգին արդէն ընդու-նելի թարգմանութիւն մ'էր այն։ Կը վկայէ Խորե-նացի. « Դառնայ (Մեսրովպ) և գտանէ զսուրբն Սա-հակ 'ի թարգմանութեան պարապեալ յասորւոյն՝ յոյժ լինելոյ յունին։ Քանզի նախ 'ի Մերուժանայ այրեալ լինէին ընդհանուր աշխարհիս յոյն գիրք. դարձեալ 'ի բաժանել զաշխարհս Հայոց՝ չտային պարսիկ վերակացուքն յոյն ուսանել դպրութիւն ումեք յիւրեանց մասին, այլ միայն ասորի »։

***

Սուրբ կամ աստուածաշունչ Գրոց որ մասին թարգմանութեան նուիրեց արդեօք մեծն Սահակ իր նախկին աշխատանքը։ — Հաւանականաբար անոր՝ որուն աւելի կարօտ էր ազգը. և այդ մեծ կարօտու-թիւնն խիստ լաւ բացատրեց հօտասէր հովուա-պետին թէ ինչպէս եկեղեցւոյ պաշտամանց ընթեր-ցուածոց հոգեկան մխիթարութենէն զուրկ կը մնար ազգը. զի թէպէտև յոյն լեզուին դպրութիւնն և ուսումն՝ 'ի Պարսից կրած հալածանքովը հանդերձ դեռ եւս ազգին մէկ մասին ծանօթ էր, բայց ոչ մե-ծամասնութեան. որով շատերը, — եկեղեցեաց մէջ գումարուած խուռն բազմութիւն, — լսող միայն կ'ըլլային աստուածային բանին՝ առանց անկէ օգուտ մը քաղելու։ Բնական էր որ սրբոյն Սահակայ առա-ջին փոյթն ու ջանքը պիտի ըլլար, — զի զայն կը պա-

հանջէր իր հովուական պաշտօնը, — այդ հոգեւոր մնայուն դարման մը մատուցանել։ Անշուշտ զայս կ՚ուզեն ակնարկել սրբոյ Կորեան հետեւեալ խօսքերը. «Երանելւոյն Սահակայ, կ՚ըսէ, զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ յունական բարբառոյն ՚ի հայերէն դարձուցեալ»։ Որ եթէ ուզենանք ենթադրել գրչի վրիպակ մը, և ինչպէս հաւանականագոյն և ճշգրտագոյն կրնայ համարուիլ, յունական բառը ասորականի փոխենք. կրնանք հետեւցընել թէ որովհետեւ եպիսկոպոսաց և եկեղեցւոյ պաշտօնէից տագնապն ու գանգատը գլխաւորապէս անոր համար էր որ եկեղեցական պաշտամանց մէջ կարդացուած գրքեր՝ ասորի և յունական լեզուով ըլլալնուն, ժողովրդեան մէջէն շատին անիմանալի որով և անօգուտ կ՚ըլլային, սուրբն Սահակ զեկեղեցական գրոց գումարութիւնն, այս ինքն եկեղեցական պաշտամանց ատեն կարդացուած գրքերը փութաց թարգմանել ՚ի հայ բան և ՚ի գիր։ Բայց եթէ մէկն չառնու յանձն Կորեան խօսքին այդ փոփոխութիւնը՝ և թողու այնպէս, մեր ենթադրութեան բուն իմաստին հակառակած չըլլար. միայն փոխանակ յասորականէ՝ ՚ի յունէ եղած կը համարի թարգմանութիւնը։

Սակայն այդպիսի մեծ ձեռնարկ մը՝ սուրբ Գրոց ամբողջ թարգմանութեան, լոկ անձի մը համար ծանր էր և դժուարին աշխատանք, մանաւանդ գլխաւորելը որչափ կարելի էր ՚ի սուղ ժամանակի, ինչպէս կը պահանջէր ազգին և հայաստան եկեղեցւոյ կարօտութիւնն։ Հարկ էր նաև այլոց գործակցութիւնն. և այս վախճանաւ գումարեցան աշակերտք որք արդէն հռչականուն են իրաւամբ մեր ազգային մատենագրութեան պատմութեան մէջ, Թարգմանիչք անունով. և որոց կը պարտիմք մեր դպրութեան մեծագոյն և ազնուագոյն մաս մը։ Ծանօթ է մեզ դար-

ձեալ՝ թէ երկու դասու կը վերաբերին ատոնք. ոմանք անմիջական գործակիցք և աշակերտք՝ սրբոցն Սահակայ և Մեսրովպայ, և երիցագոյնք և յառաջադէմք սեպուած իրենց աշակերտակցաց մէջ. և այլք կրտսերք կոչուած, որոնք մասամբ այս վերջիններուն ձեռքին տակ և առաջնորդութեամբ կրթուած էին: Սուրբ Գրոց Թարգմանութեան մէջ աշխատակցութեան գլխաւոր արդիւնքն՝ երիցագունիցն էր. ինչպէս միաբան կը վկայեն Կորիւն, Փարպեցի և Խորենացի: Միայն այդ պատմիչաց խօսքերուն մէջ՝ երկբայութեան մասն որ մեզի ընդ առաջ կ'ելլէ յայնմ է թէ սրբոցն Սահակայ և Մեսրովպայ՝ և իրենց աշակերտացն 'ի Թարգմանչաց այսր որո՞ց կը վերաբերի սուրբ գրոց թարգմանութեան այս կամ այն մասը. զի կամ հասարակաբար՝ կամ մերթ եւս իրարու հակառակ երևոյթ ունեցող խօսքերով կը թուին աւանդել՝ մեզի համար մեծապէս հետաքննելի այս կէտը:

***

Կարելի եղածին չափ լաւագոյն խելամուտ ըլլալու համար՝ այդ յիշուած երեք ժամանակակից անձանց արդէն ծանօթ և շատ անգամ մէջ բերուած խօսքերը միւսանգամ ներկայացընենք ընթերցողաց:

ԿՈՐԻՒՆ. «Հրաժարեալ (սուրբն Մեսրովպ) յեպիսկոպոսացն սրբոց հանդերձ օգնականօքն իւրովք իջանէր 'ի քաղաքն Սամոսատացւոց, յորում մեծապատիւ իսկ յեպիսկոպոսէն և յեկեղեցւոյն մեծարեալ լինէր. և անդէն 'ի նմին քաղաքի գրիչ ումն հելլենական դպրութեամբ Հռոփանոս անուն գտեալ... 'ի թարգմանութիւն դառնային հանդերձ արամբք երկուք աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին՝ յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին

Յովսէփ անուն 'ի Պաղնական տանէն։ Եւ եղեալ սկիզբն նախ յառակացն Սողոմոնի, որ և 'ի սկզբանն իսկ ծանօթս իմաստութեանն ընծայեցուցանէ լինել ասելով եթէ Ճանաչել զիմաստութիւն և զխրատ. իմանալ զբանս հանճարոյ։ Որ և գրեցաւ ձեռամբն այսորիկ գրչի, հանդերձ ուսուցանելով մանկունս գրիչս նորին դպրութեան » ... : —

« Ի ձեռն առեալ այնուհետև աստուածագործ մշակութեամբ զաւետարանական արուեստն՝ 'ի թարգմանել, 'ի գրել և յուսուցանել, մանաւանդ հայեցեալ 'ի աստուածաբարբառ հրամանացն բարձրութիւնն, որ առ երանելին Մովսէս եկեալ, վասն ամենայն իրացն եղելոց. յաստուածեղէն պատգամացն բարձրութիւն աւանդելոցն՝ մատենագրելոյ 'ի պահեստ յաւիտեանցն որ գալոց էին : ...

« Յայս ժամանակի երանելի և ցանկալի աշխարհս Հայոց անպայման սքանչելի լինէր. յորում անկարծ ուրեմն օրէնսուսոյց Մովսէս՝ մարգարէական դասուն, և յառաջադէմն Պաւղոս բովանդակ առաքելական գնդաւն, հանդերձ աշխարհակեցոյց աւետարանաւն Քրիստոսի, միանգամայն եկեալ հասեալ 'ի ձեռն երկուց հաւասարելոցն՝ հայաբարբառք հայերէնախօսք գտան ... Որ և սկսան իսկ սիւնք եկեղեցւոյ՝ միջամուխ ձեռամբ զգործ աւետարանիչացն Քրիստոսի գործել. գումարել 'ի կողմանս, 'ի գաւառս, 'ի տեղիս տեղիս հայաստան ազգին, գաս գաս զաշակերտեալսն ճշմարտութեանն, զհաստուցելոցն 'ի կատարումն գիտութեան, բաւականս և առ 'ի զայլսն զեկուցանելոյ » ... —

« Եւ յորժամ այսպէս ընդ ամենայն տեղիս լի առնէր զսուրբ աւետարանն ուսման, և ամենեցուն զգուշացուցեալ զկենաց ճանապարհն վարելոյ, խորհուրդ առնոյր այնուհետև վասն կէս ազգին Հայոց, որ էր ընդ իշխանութեամբ Թագաւորին Հոռոմոց։

Եւ փութացեալ վճայր հանգերձ աշակերտօք բազ-մօք, անցանել 'ի կողմանս Յունաց. և վասն առաւե-լագոյն բարեգործ համբաւոյն՝ յառաջագոյն ընծանէ անդ 'ի յիւրիստական կողմանց հռչակելոց, առաւել ծանօթութեամբ ընտանեբար յեպիսկոպոսաց աշխար-հին, և իշխանաց և 'ի գաւառականացն պատուեալ. մանաւանդ 'ի սաղայապատէն աշխարհին, որ անուա-նեալ կոչէր Անատոլիս 'ի մուտ ճանապարհին. և զիւրս առաջի եղեալ գրով ցուցանէր կայսերն, ո-րում անուն Թէոդոս կոչէին, որդի Արկադիու կայ-սեր. ուստի և հրամանն ելանէր, վայելուչ մեծարա-նօք զնուէրքն Ակակիոս անուն կոչելոյ » ...—

« Իսկ նորա զբաղմունթիւն աշակերտացն տարեալ 'ի քաղաքն Մելիտինացւոցն, յանձն առնէր սրբոյ եպիսկոպոսի քաղաքին, որ Ակակիոսն կոչէին. և գլխաւոր աշակերտացն Թոդոյր զայն որում Ղեւոն-դեան կոչէին, այր հաւատարիմ և ճշմարտասէր: Եւ առեալ երանելոյն զպատուական եպիսկոպոսն Գեր-ջանայ, որոյ անուն կոչէր Գինթ, և սակաւս յաշա-կերտաց անտի, և ելեալ յանարւոյն դիմոստական և բազում պատիւ գտեալ՝ հասանէին 'ի Թագաւորա-կաց քաղաքն Կոստանդինուպօլսական, զորմէ իսկոյն պատ-մէին յարքունիսն. և մտեալ առաջի պատուական աթոռոյն՝ յանդիման լինէր աստուածասէր Թա-գաւորացն, և հայրապետին սրբոյ կաթուղիկոսին աշխարհամուտ դրանն, որում Ատտիկոս կոչէին. յորոց և գտեալ շնորհս, հրամայեալ լինէր ժամա-նակս ինչ անդրէն 'ի տիեզերական քաղաքին մեծա-րել զարմանօք կարգելովք յեկեղեցւոյն և յարքու-նեաց և 'ի պատուական իշխանաց քաղաքին:

« Եւ ապա յետ Պասեքին կատարելոյ՝ ցուցեալ կայսերն զպիտոյից հանգամանս ... և ընկալեալ ող-ջոյն յեկեղեցւոյն և յերևելի իշխանացն քաղաքին և ամենայն իւրայնովքն յաջողեալք՝ ելանէին 'ի դես-

պակս 'ի կառս արքունատուրս։ Եւ մեծաւ շքով և բազում վայելչութեամբ՝ ունէին զճանապարհս արքունականս, և ամենայն քաղաքացն պատուակալով. 'ի քաղաքին պայծառագոյն երևէին. և մեծամեծ պարգևուս գտեալ, գային հասանէին 'ի ժամադիր կողմանս. և անդէն վաղվաղակի պատահեալ սպարապետին Հայոց՝ հանդերձ սակերօք կայսեր յանդիման լինէին։ Եւ նորա առեալ սակերս կայսերական նշանօք, փութայր վաղվաղակի զհրամանն կատարել. և հրեշտակս արձակեալ այնուհետև 'ի գաւառս կէս ազգին Հայոց՝ յիշխանութեանն կայսեր, բազմութիւն մանկտւոյ ժողովել, և նոցին ուշիմս կարգել 'ի պատեհագոյն տեղիս, յոր և երանելին զվարդապետութիւն իւր 'ի գործ արկեալ, և ժողովելոցն քաղցրացուցանէր ...։

« Յետ այսորիկ ուշ եդեալ երկոցունց երանելեացն զիւրեանց ազգին զդպրութիւն առաւել յարգել և զիւրացուցանել, ձեռն 'ի գործ արկանէր 'ի թարգմանել և 'ի գրել մեծն Իսահակ ըստ յառաջագոյն սովորութեանն։ Որոց դարձեալ դէպ լինէր եղբարս երկուս յաշակերտացն՝ յուղարկել 'ի կողմանս Ասորոց 'ի քաղաքն Եդեսացւոց. զՅովսէփ ... և երկրորդն Եզնիկ անուն յայրարատեան գաւառէն 'ի Կողբ գեղջէ, զի յասորական բարբառոյ զնոցին հարցն սրբոց զաւանդութիւնս, հայերէն գրեալս դարձուսցեն։

« Իսկ Թարգմանչացն հասեալ ուր առաքեցանն՝ և կատարեալ զհրամանն, և առ պատուական հարան առաքեալ՝ անցեալ գնային 'ի կողմանս Յունաց. ուր և ուսեալք և տեղեկացեալք՝ Թարգմանիչս կարգէին ըստ հելլենական լեզուին։

« Ապա յետ ժամանակ ինչ ընդ մէջ անցելոյ՝ դէպ լինէր ոմանց եղբարց 'ի Հայաստան աշխարհէ դիմել իջանել 'ի կողմանս Յունաց, որ և Ղեւոնդէս առաջ-

նոյն անուն էր, և երկրորդին Կորիւն. և մատու-ցեալ յարէին յԵզնիկն, իբրև առ ընտանեգոյն մերձ-ականից 'ի Կոստանդինական քաղաքին. և անդ միա-բանութեամբ հոգևոր պիտոյիցն' զխնդիրն վճա-րէին: Որոց յետ այնորիկ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոյն, և բազում շնորհագիր հարց յետ այնր աւանդութեամբք, և Նիկիական և Եփե-սոսական կանոնօք գային երևելով յաշխարհին Հայոց. և առաջի դնէին հարցն զբերեալ կտակարանսն եկե-ղեցւոյ:

« Իսկ երանելւոյն Սահակայ զեկեղեցական գրոց գումարութիւնն կանխաւ յունական բարբառոյ 'ի հայերէն դարձուցեալ, և բազում ևս զհայրապե-տաց սրբոց զճշմարիտ զիմաստութիւնն: Դարձեալ յետ այնորիկ առեալ հանդերձ Եզնակաւ' զյառա-ջագոյն զյանկարծագիւտ զփութանակի թարգմա-նութիւնս հաստատէր ճշմարիտ օրինակօք բերելովք. և շատ ևս մեկնութիւն գրոց թարգմանէին »:

ՓԱՐՊԵՑԻ. (Ս. Սահակ) « կամաւոր յօժարու-թեամբ ետ զանձն 'ի գործ' պանծացեալ յԱստուծոյ գործակցութիւնն, որ ետ նմա զայսպիսի շնորհ ա-ռաւելապէս գիտութեան, և անվեհեր ջանալով զցայգ և զցերեկ' թարգմանեաց զկտակարանս ամենայն ըղ-խօսեցեալս ճշմարիտ մարգարէիւք 'ի սուրբ հոգ-ւոյն. և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանացն զլուսաւոր և զկենսատու քա-րոզութիւնս նովին հոգւով: Եւ տարեալ 'ի գլուխ սուրբ հայրապետին Հայոց Սահակայ' զգործ մեծ հոգևոր վաստակոցն, կարգեցան վաղվաղակի յայնմ հետէ դպրոցք հօտին ուսմանց. բազմացան դասք դրչաց ելևելս առնելով զմիմեամբք. զարդարեցան պաշտամունք սուրբ եկեղեցւոյ »...

« Պայծառացան եկեղեցիք, շուք առին վկայա-րանք սրբոց, միշտ ծաղկելով 'ի նոսա ուխտ կտակա-

բանից ընծայիւք ... Եւ զի միանգամայն իսկ ասացից քան բանի սուրբ մարգարէին Եսայեայ, թէ լսաւ երկիրս ամենայն Հայոց՝ գիտութեամբ տեառն 'ի հոգեւոր վտակաց սուրբ վարդապետին Սահակայ, իբրեւ զջուրս բազումս որք ծածկեն զծովս » ...

ԽՈՐԵՆԱՑԻ. (Մեսրովայ) «*խոկոյն 'ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց. զբովանդակ քսան և երկու յայտնիսս և զնոր կտակս յեղուլ 'ի հայ բան. նաև աշակերտք նորա Յովհան Եկեղեցացին և Յովսէփ Պաղնացի, միանգամայն և զարուեստ դպրութեան ուսուցանել տալով իւրոց մանկագոյն աշակերտացն ... Եւ վերակացու թողեալ զաշակերտս իւր զՅովնաթան, միանգամայն և քահանայս կացուցեալ գրանն արքունի, ինքն գնայ 'ի Հայս. և գտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յասորւոյն յոյժ լինելոյ յունին:*

«*Այս եկեալ և առեալ Մեսրովպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտս, զՅովսէփ և զմեզս ընկեր նմին 'ի Կողբ գեղջէ՝ որում անուն Եզնիկ կոչիւր, առաքեն 'ի Միջագետս 'ի քաղաքն Եդեսիայ. զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին սրբոց հարցն առաջնոց, թարգմանեալ 'ի մեր լեզու բերցեն փութով. զի յետ այնր 'ի Բիւզանդիոն առաքեսցեն 'ի նոյն գործ: Որոց ընկալեալ զհրապուրական թուղթըս սուտակասպասաց ոմանց, իբր թէ պատրաստեն մեծն Սահակ և Մեսրոպ զայլս առաքել 'ի Բիւզանդիոն, վասն որոյ առանց հրամանի վարդապետացն իւրեանց՝ նոյն ընդ նոյն չուեալ գնացին 'ի Բիւզանդիոն, նախանձաւոր բարեաց եղեալ ումանց. և քաջ վարժեալ հելլէն դպրութեամբ՝ ձեռնարկեցին 'ի թարգմանել և 'ի գրել: Եւ ընդ նոսա նախանձեալ ընկերաց իւրեանց աշակերտակցաց, որոց անուանքն Ղեւոնդ և Կորիւն կարդային, յիւրեանց*

կամաց ելին առ նոսա 'ի Բիւզանդիոն։ Այս եղանեն անդ Յովհան և Արձան, զորս կանխագոյն առաքեալ էր մեծին Սահակայ և Մեսրովպայ. որոց յուղարկաւ-ուղեւորեալ և ծուլարար գեղեցկեալք պատուեցան 'ի Կեսարիայ. որոց ընդունելութիւն ամենեցուն արար Մաքսիմիանոս եպիսկոպոսն Բիւզանդացւոց» ։ ... —

« Այս եկեալ Թարգմանիչքն մեր՝ զորոց անուանքն յիշատակեցաք յառաջագոյն, գտին զմեծն Սահակ և զՄեսրոպ յԱշտիշատ Տարօնոյ, և մատուցին զԹուղթս և զկանոնս ժողովոյն Եփեսոսի վեց սահմանեալ կանոնաւ գլխով, և զստոյգ օրինակս գրոց։ Զոր առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ՝ դարձեալ Թարգմանեցին զմիանգամ Թարգմանեալն փութանակի, հանդերձ նոքօք վերստին յօրինել նորոգմամբ։ Բայց քանզի անդէտք էին մերում արուեստի, 'ի բազում մասանց Թերացեալ գործն գտանէր։ Վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրոպայ զմեզ առաքեցին յԱղեքսանդրիա 'ի լեզու պանծալի, 'ի ստոյգ յօդանալ Ճեմարանի վերաբանութեան »։

Եզնակ երէց (որ կարծի յեօթներորդ դարու կացեալ). « Առ որով Ասպուրակէս կաթողիկոս. և դարձեալ առ որով ընտրեցաւ Սահակ անուն լինել կաթողիկոս. որ է որդի Ներսեսի առաքինւոյ, Թոռն Աթանագինէ, Թոռն սրբոյն Գրիգորի։ Առ սովաւ և գրութիւնք Հայոց յաջորդեալ, և կտակարանք եկեղեցւոյ 'ի սմանէ յառաջ Թարգմանեցան, և կարգք գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելաւ Տարաւնացւոյ, որում անուն Մեսրովպ Ճանաչէր. որ էառ զձեռնադրութիւն երիցութեան 'ի նմին Սահակայ կաթողիկոսէ։ Սա եգիտ նշանագիր դրպրութեան հայերէն լեզուին վարելոյ ալփափետացն հանդամանս. յորում ժամանակի լցան նոքօք կարգ-

քըն յառաջադիմութեան։ Եւ նոցա աշակերտ Ղեւոնդ այր սուրբ և ընտրեալ և ճշմարիտ 'ի գործ մըշակութեան Աստուծոյ, և Արձան և Կորիւն և Եզնիկ և արբանեակք նոցուն հանդիսից, և ձեռնադրեալք 'ի նոյն սրբոյ կաթողիկոսէն »։

***

Երեք ժամանակակից պատմըչաց խօսքերէն, — որչափ ալ տեղ տեղ մութ, պակասաւոր, զիրար չըբռնող և լուսոյ կարօտ, — յայտնապէս կ'երեւնայ թէ երկու Թարգմանութիւնք եղած են աստուածաշունչ գրոց 'ի մեր լեզու։ Առաջինն ըստ մեծի մասին յասորւոյն՝ 'ի ձեռն սրբոյն Սահակայ, և մասամբ ալ 'ի յունէ՝ 'ի սրբոյն Մեսրովպայ։ Սրբոյն Սահակայ ասորական օրինակի մը կարօտ ըլլալուն պատճառներն՝ արդէն յիշատակեցինք, որուն՝ ինչպէս տեսանք, բացայայտ կը վկայեն գլխաւոր պատմիչք դարուն և իրենց աշակերտեալք՝ ամենայն հաւատարիմ վստահութեան արժանաւոր անձինք։ Իսկ սուրբն Մեսրովպ իր Թարգմանութիւնն, զոր մեկին և որոշ կը յիշէ Խորենացի· ըրաւ յունականին վրայէն, երբ կը գտնուէր Հայաստանի այն մասին մէջ՝ որ Յունաց իշխանութեան վերաբերելով քաղաքականաբար՝ բընականաբար չէր կրնար ունենալ այն դժուարութիւնը որ բռնադատեց զպարթեւ հայրապետն ասորականին դիմելու, զի դիւրին էր հոն գտնել զբնագիրս սուրբ Գրոց 'ի յոյն լեզու։

Բայց ինչպէս կ'երեւնայ 'ի նոյն պատմըչաց՝ նոյն իսկ աշխատասիրողք իրենց մեծ գործը մասամբ կամ ամբողջ աւարտելէն ետքն ալ՝ գոհ չեղան անոր փափաքելի և իրաւամբ սպասուած կատարելութենէն։ Հաւանականաբար այդ տժգոհութեան գլխաւոր պատճառը՝ ոչ այնչափ Թարգմանութեան ա-

բաւական պակասութեան մէջ էր. զոր և կ'ակնարկեն պատմիչք, կամ անոնց հմտութեանն 'ի գիտութեան յոյն և ասորի լեզուաց, զի անոր հակառակ վկայութիւնք կու տան, ինչպէս տեսանք, մանաւանդ նկատմամբ սրբոյն Սահակայ, այլ սուրբ գրոց հաստատուն և առոյգ օրինակներ չունենալնուն, որք յետոյ բերուեցան 'ի Թարգմանչաց. և իրենց երկիւղած զգուշաւորութիւնն չէր ներեր՝ առանց այդ ամէն վստահութեան արժանի օրինակներ ունենալու՝ կատարեալ և անթերի սեպել իրենց մեծ և հոյակապ վաստակը:

Աստուածաշունչ գիրք, թէպէտ գործ գերմարդկային, բայց այլևայլ Թարգմանութեանց ու բազմապատիկ ընդօրինակութեանց պատճառաւ՝ կրած էին զանազան այլայլութիւնք և փոփոխութիւնք իրենց ընթերցուածոց մէջ. զի և ամենայն Թարգմանիչք, և մանաւանդ ամենայն գրչագրողք, հաւասար գիտութիւն և երկիւղած զգուշաւորութիւն պահած չեն: Ի հնոց առ մեզ հասած բազմաթիւ գրչագիրք, և անոնց իրարու հետ մանր ու երկայնամիտ բաղդատութիւն՝ զայս յայտնի կը ցուցընեն: Ասկէ զատ, եկեղեցւոյ առաջին դարուց մէջ երևցող հերձուածողք և աղանդապետք՝ իրենց կարծիքն ու վարդապետութիւնը աւելի հեշտաւ ընդունելի ընելու, կամ անոնց մեծագոյն կարևորութիւն մը տալու դիտմամբ՝ դիմած են այս միջոցին՝ սուրբ գրոց ընթերցուածքը խանգարելու: Անշուշտ յայսպիսի կասկածելի ձեռնձգութեանց զերծ չէին այն օրինակք՝ որ սրբոյն Սահակայ և Մեսրովպայ աշխատանաց առաջնորդք եղան. կամ գէթ չէին տեսներ անոնց մէջ՝ իրենց փափաքելի և մեծապէս հարկաւոր վստահութիւնը. և թերևս այնչափ աւելի հաստատուեցան այս կարծեաց վրայ՝ որչափ յառաջեցին 'ի վաստակս Թարգմանութեանն:

Այս պատճառաւ հարկ եղաւ իրենց դիմել առ պատրիարքն և առ կայսրն Կոստանդնուպոլսի։ Նախ ինքն Մեսրոպ անձամբ՝ քանի մը գործակցացը հետ, և յետոյ իրենց աշակերտք փութացին երթալ ՚ի քաղաքն Թագաւորական։

***

Կ՚աւանդէ պատմութիւն թէ Կոստանդնուպոլսոյ մեծն՝ եկեղեցւոյ պայծառութեան ու բարեկարգութեան համար ըրած ուրիշ զանազան գովելի ջանքերէ զատ՝ աստուածաշունչ գրոց օրինակներուն հաւատարիմ և անխախտ պահպանութեանն համար՝ Եւսեբեայ Պամփիլեցւոյ յանձնեց որ իր անմիջական վերակացութեամբ և ջանիւք՝ ճարտար և իմաստուն գրչաց ձեռքով սուրբ գրոց ստուգագիր օրինակներ փաղափարել տալով բազմացընէ, և զանոնք կայսերական գանձուն մէջ ամենայն զգուշութեամբ պահելով. ուր որ պէտք էր՝ անոնց ընթերցուածոց պարունակածին համեմատ օրինակներ ցրուէ կայսերութեան ընդարձակ գաւառաց մէջ։ Այսանկով սուրբ գրոց մէջ օտար և անհամաձայն ընթերցուածոց մուտք կը խափանէին, արեւելեան եկեղեցեաց մէջ գործածուած օրինակը՝ իրարու զուգաձայն և միաբան կ՚ըլլային, և շատ կրօնական վէճից և տարաձայնութեանց առջեւը կ՚առնուէր։ Որոգինէս՝ եկեղեցւոյ մեծ վարդապետ, և սուրբ գրոց վրայ ըրած աշխատութեամբք նշանաւոր և մեծարոյ, եօթանասնից և ուրիշ թարգմանութեանց և հեբրայական բնագրին իրարմէ ունեցած տարբերութիւնները քններ, զատեր, ու իրարմէ տարբեր նշանակներով որոշեր էր իր սրբագիր սեանց վրայ ըրած համեմատական և բազմավաստակ աշխատասիրութեանց մէջ. բայց իրմէ ետքը եկող անընտրող կամ ոչ քաջ մատագիր կամ

խմաստուն ընդօրինակողք՝ չփոթութեան և խառնակութեան պատճառ եղեր էին զանոնք գաղափարելու ձեռք զարկած ատեններին։ Այսպիսի ընթացքի մը հետևանք անպատշաճութիւններն զարմանելու համար՝ սուրբն Պամփիլոս վկայ Բիւրիտոնացի՝ ու իրեն մտերիմն ու աշակերտ Եւսեբիոս Կեսարացի՝ ետեւէ եղան եօթանասնից ընտիր և ստուգահաւատ օրինակի մը գտութեան։ Այլևայլ օրինակներ գաղափարել տուին, խնամով սրբագրել ու բաղդատել տալով Որոգինեայ հիմա յիշուած Վեցիչեան ու Քառիչեան կոչուած երկասիրութեանց սկզբնագրին վրայ, որ կը պահուէին 'ի դարանս մատենից քաղաքին Կեսարացւոց. և այդպիսի խնամքով յղկուած ու սրբագրուած օրինակք՝ Պաղեստինեանկանք կը կոչուէին. ուր այս ուղղագրութիւնք ընդունուած էին 'ի հոգևորական իշխանութենէ գաւառին, և անոնց համեմատ կ'ըլլային հրապարակական ընթերցմունք յեկեղեցիս։ Սրբոյն Պամփիլեայ վկայական մահուընէն ետքը՝ այդ նուիրական ու ցանկալի ժառանգութիւնը՝ իր բարեկամին ու գործակցին Եւսեբեայ մնաց. որուն ձեռքովն ու ջանիւք փոխագրուեցաւ 'ի Կոստանդնուպոլիս։ Բարեպաշտ կայսեր փափաքը կատարելու համար՝ Եւսեբիոս այս ընտիր, վկայեալ ու արդէն գործածուած օրինակը պէտք էր որ նախատիպար սեպէր, ինչպէս որ ըրաւ ալ։

Այսպիսի գանձի մը գոյութիւնն 'ի Բիւզանդիոն՝ անշուշտ անծանօթ չէր մեր դպրութեան նորոգչացը. և զայն ձեռք ձգելը՝ իրենց աշխատութեան վաւերականութիւն ու յարգ տալու համար՝ ամէն բանէ աւելի փափաքելի։ Այս նպատակաւ էր Թարգմանչաց երթն 'ի Բիւզանդիոն։— Բայց մեք առ այժմ թողլով զիրենք 'ի Ճանապարհորդութեան, դառնանք 'ի Հայաստան՝ առ մեծարեալ վարդապետս նոցա Սահակ և Մեսրոպ։

***

Պատմեցինք թէ սուրբն Սահակ՝ յորդորեալ և խրախուսեալ 'ի բազմապաղատ թախանձանաց թագաւորին, ուխտի եկեղեցւոյն և աշխարհի բազմութեան՝ մէկէնիմէկ թարգմանութեան ձեռք զարկաւ՝ առանց սպասելու ստուգագոյն և ընտիր օրինակաց սուրբ Գրոց՝ որ յայնմ միջոցի դեռ ձեռքն հասած չէին։ Ենթադրեցինք՝ Փարպեցւոյն ու Խորենացւոյ խօսքերէն, թէ ինչ որ 'ի վեր քան զամենայն անհրաժեշտ կարևոր էր՝ հայրենի աշխարհին հոգևոր օգտին համար, զայն փութացաւ թարգմանել. եկեղեցական պաշտամանց մէջ կարդացուած և 'ի գործածութեան եղած ընթերցուածներն. որով մեծ կարօտութիւն մը լեցուեցաւ, ու այնուհետև ոչ ևս «Բազմութիւնք ժողովրդոց ունայնք և թափուրք հրաժարեալք գնային յեկեղեցւոյն ... և ոչ զոք յուսումնասէր ժողովելոցն տեսանէին օգտեալս 'ի վարդապետութենէ հոգևոր խրատուցն»։

Ոմանք 'ի բանասէր հմտից՝ ընդհանրապէս յունական կամ ասորի լեզուով եկեղեցական պաշտամանց գործածութիւնն առ մեզ անկարելի կ'ենթադրեն. Հնար է, կ'ըսեն, որ գտնուած ըլլան 'ի Հայաստան կողմանք ուր պաշտամունք եկեղեցւոյ, այսինքն պատարագի սպասարկութիւնն և ժամակարգութեանց աղօթք՝ բոլորովին յոյն կամ ասորի լեզուաւ կատարուէին. բայց աներկբայելի է որ ընդհանուր չէր և չէր իսկ մարթ լինել. քանզի ինչպէս հնար է լինել որ ամբողջ ժողովուրդ մը և ազգ և աշխարհ մի քրիստոնեայ, ճոխացեալ իւր եկեղեցեաւն և իւրեան հայրապետօք բարեզարդեալ, բնաւ ընտանի լեզուաւ աղօթից ձև մի չունենայ։ Եւ ինչ հարկ կար, կ'ըսեն, մերոյ սրբոց հարց աստուա

ծարելոց՝ որպէս սուրբն Վրթանէս և սուրբն Յուսիկ, և համբաւեալն 'ի նոսա իբրև բարեկարգիչ եկեղեցեաց մեծն Ներսէս Պարթև, զայդպիսի աններելի անհոգութիւն անհոգանային. մանաւանդ զի առ Բիւզանդայ և Մեսրովպայ երիցու կ'ընթեռնումք թէ սուրբն Ներսէս առաւօտեան ժամակարգութիւնն կատարելու վրայ էր, երբ Գնելայ անպարտական մահուան գոյժն հասաւ իրեն։ Միթէ զսուրբ գիրս բովանդակ 'ի հայ լեզու վերածելու չափ՝ դժուարի՞ն ինչ էր նաև զանփոփոխելի օր ըստ օրէական աղօթից ձև մը՝ 'ի հայ լեզու դնել, և 'ի գիր առնուլ յոյն և ասորի տառիւք՝ որք արդէն 'ի գործածութեան էին[1]։

Համամիտք այս կարծեաց և այդպիսի անտեղութեան մը, սակայն դժուարին թուի մեզ ժամանակակից պատմըչաց բացայայտ վկայութիւնքը տարակուսի տակ ձգել. և այնչափ աւելի՝ որ երեքսասան դարուց անջրպետ մը կայ ընդ մեզ և ընդ նոսա, և իրենց ժամանակին հանգամանք՝ դեռ փափաքելի լուսով և ծանօթութեամբք հասած չեն մինչև առ մեզ։ Արդեօք Վրթանայ, Յուսկան, Ներսիսի մեծին և իրենց նմանեաց ժամանակի հանգամանք չկրեցի՞ն փոփոխութիւն մը. երբ յունական ազդեցութիւնն և իշխանութիւնը սկսան ա՛յլ եւս չափ ու սահման չճանչնալ, և սասանեան պետութիւնը ամէն միջոց օրինաւոր կը գտնէր իր կամքն առաջ տանելու համար։ Եւ նոքա՝ որ ուզածնուն պէս կը փոփոխէին մեր թագաւորներն, աղիկամի 'ի դահ բարձրացընելով ու անկէ վար առնելով, — որք սրբոյն Սահակայ հայրապետի պէս անմահ անձինք 'ի դատ կը կոչէին մինչև իրենց արքունական դուռն, չնայելով ոչ անոնց հասակին և ոչ պատուոյն, և կը դատէին կը

[1] ՊԱՐՈՆԵԱՆ (Ս. Վ.). Ներկրագումար հանդիսի Ասիական ընկերութեան...

դաստապարտէին, և իրենց հաճոյից ու կամաց համեմատ՝ իր նախնական աստիճանին պաշտամանց չափըն ու սահմանը իրենք կ'ըլլային որոշող, զվարդապետութիւն միայն թողլով Սահակայ, և իրեն անարժան հակառակաթոռն Շմուէլի ու Բրքիշոյի տալով զիշխանութիւն ձեռնադրելոյ, չէին կրնար նոյնպէս սաստ և բռնութիւն բանեցընել նաև եկեղեցական պաշտամանց լեզուի և կարգաւորութեան նկատմամբ՝ որոնք կրնային արդէն ընկալեալ և 'ի կիրառութեան եղած սովորութեանց աննման ըլլալ և հակառակ։ Այդպիսի վարմունք մը անկարելի չթուիր մեզ։ Պատմութեանց մէջ յաճախ կը յիշուին նման դէպք, երբ ազգք և ժողովուրդք ունենալով իրենց լեզուն և հասարակաց աղօթից ձեւը, բռնադատուին վրանին տիրող ազգին լեզուով աղօթել յեկեղեցւոջ, երբ ազգաց իրարու հետ ձուլման քաղաքագիտական օրէնք զայն թուին պահանջել։

Բայց ինչպէս ըսինք յառաջագոյն, լոկ ենթադրութիւն մ'է այս կամ կարծիք, զոր կանուխ քան ըզմեզ ունեցած է բազմահմուտ և բանիբուն վարդապետն մեր Ինճիճեան. զի Խորենացւոյն և Կորեան արդէն յիշուած խօսքերն մէջ բերելով՝ կը յաւելու իր ձեռագիր մէկ քաղուածոյին մէջ. «Սուրբն Սահակ կանխաւ 'ի յունականէն 'ի հայ բարբառ թարգմանեալ էր զկտակարանն որ յեկեղեցիս ընթերցեալ լինէր. այսինքն զայն ընթերցուածս գրոց որ 'ի ժամասացութեան և 'ի պատարագի ընթերցեալ լինէր, այս է զոր կոչէ եկեղեցական գրոց զուգարութիւն։ Այլ յորժամ Եզնիկ, Ղեւոնդ և նոյն ինքն Կորիւն դառնային 'ի Պոլսոյ հանդերձ հաստատուն օրինակօք աստուածատուր գրոցն, այսինքն ընտիր օրինակօք աստուածաշունչ գրոց՝ զոր ետուն նոցա յարքունական գրատանէ, յայնժամ հանդերձ Եզնակաւ զյառաջագոյն թարգմանեալն՝ որ եղև թարգ-

մանութիւն փութանակի, հաստատէր ճշմարիտ օրինակօքն բերելովք, այսինքն բազում ուրեք ուղղագրէր ըստ ստուգաբան ընտիր օրինակին զոր բերին 'ի Պոլսոյ »։

Այս' ըստ կարծեաց հնախօս և բազմահռչակ հեղինակին։

Սակայն մեզի կ'երևնայ որ այս վերջին աշխատութիւնն չըրած' սրբոյն Սահակայ աստուածաշունչ գրոց մասնական թարգմանութենէ մը զատ է' սորին թարգմանութեան վրայէն ըրած մեծ և ծանր վաստակը։

Դ. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ԵՐԹՆ Ի ԲԻՒԶԱՆԴԻՈՆ

Ո՞յք են թարգմանիչք սուրբ Գրոց։ — Հանգամանք առաջին թարգմանութեան յասորականէ։ — Աշակերտք սրբոցն Սահակայ և Մեսրովպայ։ — Անոնց դասակարգութիւնը։ — Երիցագոյնքն գործակիցք իրենց վարդապետաց' 'ի գործ թարգմանութեանն։ — Առաքումն աշակերտացն յԵդեսիա և 'ի Բիւզանդիոն։ — Պատճառք առաքման նոցա և դեգերմանց։ — Դարձ 'ի Հայաստան հաստատուն և ստոյգ օրինակօք աստուածաշունչ գրոց։

Որո՞նց կը վերաբերի աստուածաշունչ գրոց թարգմանութիւնն 'ի հայ, զոր Փարպեցի' ինչպէս տեսանք, ընդհանրապէս Պարթև հայրապետին կ'ընծայէ. և վարդապետասէր աշակերտն Կորիւն' Մեսրովպայ, և Խորենացի' երկուքին միանգամայն և իրենց աշակերտաց։ Այս վերջինն է ամենէն հաւանականն և

ընդունելին. զի — յառաջ ալ յիշատակեցինք, — զըժուարին վաստակ կ'երևնայ, մէկ անձի մը եւեթ զայն գլխաւորելը. մանաւանդ սրբոյն Սահակայ նման բազմազբաղ և ամբողջ ազգին հոգևորական բեռը կրող արգիւնական և առաքելագործ հայրապետի մը: Փարպեցին, յասորւոյն եղած Թարգմանութեան վրայ խօսելով՝ բովանդակ սուրբ Գրոց Թարգմանութիւնն Պարթեւ հայրապետին կուտայ հետևեալ բացայայտ խօսքերով. « Անվեհեր ջանալով, կ'ըսէ, զցայգ և զցերեկ, Թարգմանեաց զկտակարանս ամենայն, զխօսեցեալսն ճշմարիտ մարգարէիւք, և հաստատեալ կնքեաց երջանիկ առաքելովքն զնորոց կտակարանաց զլուսաւոր քարոզութիւնն նովին հոգւով»: Ուրիշ տեղ մ'ալ նոյն Փարպեցին. « Եւ տարեալ 'ի գլուխ սուրբ հայրապետին Սահակայ զգործ մեծ հոգեւոր վաստակոցն, կարգեցան վաղվաղակի յայնմ հետէ դպրոցք հօտին ուսմանց »:

Այս յայտնի և որոշ խօսքերուն հետ պէտք է յիշեցընենք, ինչ որ արդէն ծանօթ է հմտից և տեղեկաց, որ մատեանք աստուածաշունչք յերկուս ուրոյն դասակարգութիւնս կը բաժնուին. յորոց ոմանք Նախականն և այլք Երկրորդականն գրքեր կը կոչուին: Բնական է որ Թարգմանական աշխատութեան ձեռք զարնուած ատեն՝ նախամեծար սեպուէին առաջնակարգ դասաւորութեան պատշաճեալքն, և ջանացուէր նախ անոնց Թարգմանութիւնն ընծայել ազգին: Եւ եթէ, ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք, երկրորդ և ազնուագոյն աշխատութեանն ատեն՝ Թարգմանիչք ջանացին այս կարգը պահել, եւս առաւել սուրբն Սահակ, որ չունէր անոնց դիւրութիւնը՝ աշխատակցաց բազմութեան, որով և վաստակոց բաժանման. և ինքզինքը այսպիսի մեծ հոգեւոր երկասիրութեան նուիրած ատենն ալ՝ գիտէր որ առժամանակեայ էր՝ և որուն յետոյ ըն-

տարելագոյն կերպարանք մը տալու փափաքին ու գաղափարին առաջին հեղինակն ինքն էր։ Ուստի և հաւանականաբար միայն նախականոն գրոց Թարգմանութեան զբաղեցաւ, և զայն 'ի գլուխ տարաւ ըստ վկայութեան Փարպեցւոյն։ Այս աշխատութիւնն է՝ զոր պատմիչք մեր յառաջագոյն եղեալ, յանկարծագիւտ Թարգմանութիւն կը կոչեն. և այս բառերուն նշանակութեան մէջ է՝ իրենց ոչ այնչափ գոհութիւնն ընդ այն, և կարևորութիւնն՝ մեծագոյն և աւելի ծանր, բայց կատարելագոյն աշխատութեան մը ձեռք զարնելու։

Երբ սուրբն Սահակ այս մեծ վաստակոց հետ էր, իրեն ու Վռամշապուհ Թագաւորին յանձնարարութեամբն ու ստիպելովը, միւս այլ ծանր ու մտատանջ հոգովք կը պարապէր Մեսրովպ.- հայկական տառից գիւտէն ետքը անոնց օրինաւոր կազմակերպութեան և կարգաւորութեան գործով։ Ու երկար ու յարատև ջանքէ, անխոնջ խուզարկութիւններէ, քաղքէ քաղաք վտարանդի՝ բայց սիրելի պանդըխտութիւններէ ետքը՝ երբ վերջապէս հասաւ իր փափաքելի նպատակին, ու իբրև նոր Մովսէս մը 'ի սինէական լեռնէ՝ լուսաճրաշ փառօք ու փայլմամբ ներկայացաւ սրբոյն Սահակայ և արքունեաց, ա՛լ այնուհետև կատարեալ ու անպատում էր ամենուն հոգեկան սփոփանքն, զմայլումն և ուրախութիւն։

Հայաստան աշխարհի ընտիր և ուսումնատենչ և մտաւոր սնընդեան սովատանջ և պապքեալ երիտասարդութիւնը՝ արդէն փութացեր հասեր էր առ նոսա՝ աշակերտելու առ ոտս վեհագոյն վարժապետացն. յորոց առջի բերան կ'ընտրէին վաթսուն «զառաւել ուշիմս, - ինչպէս կ'ըսեն պատմիչք, - զերկարոգիս և զփափկաձայնս». և էին սահմանեալքըն յառաքելութիւն «յազգս և 'ի լեզուս օտար գաւառաց, ուսանել իմաստութիւն և արուեստա-

խօսութիւն. և անուն Թարգմանութիւն»: Անանկուն պատմիչ մը երեք խումբի կը վերածէ զանոնք, յամէն մէկ դասուն գլխաւորացն ու տալով ծանօթագունից անուանքն յիշատակելով. «Սուրբ պատրիարքն Սահակ, կ'ըսէ, երկնաւոր պարգևօքն ընտրէ մանկունս աշակերտազարդս, և տայր բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից. զՅովսէփ, զՂևոնդ, զՅովհաննէս, զԱրտաշամ, զԱրձան և ըզՄուշէ, զԵզնիկ, զԿորիւն և զայլս: Ապա զկնի սակաւուց զՄովսէս, զԴաւիթ, զԵղիշէ, զՄամբրէ զեղբայրն Մովսիսի: Զկնի նոցա զԱրձան Արծրունի, և զԽոսրով և զՂազար պատմագիր, և սոքօք Թարգմանեցին զամենայն մատեանս 'ի սոյն օրինակացն գրոցն Ղևոնդի»:

Իսկ Ասողիկ ժամանակն ալ կը ջանայ ճշդել հետևեալ խօսքերով. «Եւ զառաջ հանդիպեալ յերկրորդ ամին Արտաշրի արքայի Պարսից՝ ըՀինգերորդումն Վռամշապհոյ արքայի Հայոց: Յորում Մաշթոցն երանելին որ էր 'ի գաւառէն Տարօնոյ, 'ի գեղջէ Հացեկաց, 'ի ձեռն Վռամշապհոյ և Մեծի Հայրապետին Սահակայ՝ դանիելեան նշանագրօք զդպրութիւն ըստ հայոցս յօրինէր՝ ընկերօք ոմամբք տուելովք նմա 'ի Սահակայ: Յետ որոյ դարձեալ եւս 'ի վեցերորդումն նորին Վռամշապհոյ, որ է առաջին Վռամայ Կրման արքայի, վերստին աստուածային շնորհատուեալ նշանագրօք՝ զնոյնս յեղանակեալ յօրինէր: Որով և դպրութիւնք և գիրք աստուածաշունչք ուղղեալ Թարգմանէին, որպէս պատմէ Կորիւն և Ղազար: Եւ սկիզբն դպրութեանս Հայոց եղև սկիզբն Մեծի գիտութեան, և անպայման խընդութեան բազում աշխարհաց»:

*
* *

Բնական է ենթադրելը թէ այդ բազմաթիւ աշակերտաց մէջ՝ երիցագոյնքն հասակաւ և առաւելեալքն 'ի գիտութեան՝ ունեցած են և զառաջնութիւն 'ի գործակցութեան իրենց վարդապետաց մեծ աշխատութեանն։ Եւ զայս կը հաւատարմացընեն դարձեալ իրենց ժամանակին պատմագիրք։

Սակայն յառաջ քան զնոսա, որոց առաջին կամ երիցագոյն թարգմանիչք անունը տուած ենք, և զոր արդեամբք ալ արդարացուցին, թարգմանութեան գործոյն ձեռնտու և օժանդակ կ'երեւնան, օգնականք և գործակիցք սրբոցն Սահակայ և Մեսրովպայ՝ Յովհան Եկեղեցացին, Յովսէփ 'ի Պաղանական տանէ, Տէր 'ի Խորձենոյ և Մուշէ Տարոնեցի, զորս սուրբն Կորիւն օգնական կուսայ Մեսրովպայ, և զորս պատմիչն (Փարպեցի) կը կոչէ « արս բանիբունս և մտացիս 'ի քահանայից Հայոց »։ Աստուածաշունչ գրոց թարգմանութեան սկիզբը՝ Յովսեփայ և Յովհաննու անուանք կը յիշատակուին առ Կորեան և Խորենացւոյ. « Ի թարգմանութիւն դառնային, կ'ըսէ առաջինն, հանդերձ արամբք երկու աշակերտօքն իւրովք, որոց առաջնոյն Յովհան անուն կոչէին յԵկեղեաց գաւառէն, և երկրորդին Յովսէփ անուն 'ի Պաղանական տանէն. և եդեալ սկիզբն նախ յԱռակացն Սողոմոնի »։ Զնոյն կը կրկնէ և Խորենացի անմիջապէս յետ գիւտի կամ կազմակերպութեան հայկական նշանագրաց. « Իսկոյն 'ի թարգմանութիւն ձեռն արկեալ, խորհրդաբար սկսանելով յԱռակաց, բովանդակ զքսանևերկու յայտնիսն և զնոր կտակս հեղուլ 'ի հայ բան, նաև աշակերտք նորա Յովհան Եկեղեցային և Յովսէփ Պաղնացի. միանգամայն և զարուեստ գրչութեան ուսուցանելով իւրոց մանկագոյն աշակերտացն »։

Այս գործոյն յորատև ջանիւք զբաղեցան՝ մանաւանդ սուրբն Սահակ։

Սակայն, ինչպէս յառաջագոյն ալ ակնարկեցինք, իրենց միտքը այն թարգմանութեամբ գոհ ըլլալ և ազգը գոհացընել չէր. լաւագունին փափաքը՝ և որչափ հնարաւոր էր անյապաղ գործադրութիւնը, այդ մեծ և անմահական յիշատակի բարերարաց՝ սըրտին և հոգւոյն նուիրական խոստմունքն էր. և ըսինք արդէն՝ թէ իրենց այս մտքին և կարծեաց վրայ ալ աւելի հաստատուեցան՝ երբ թարգմանութեան գործը 'ի գլուխ հանելէն ետքը՝ իմացան անոր թերութիւնները, որ աւելի դիմացնին գրուած բնագրին կամ ասորի թարգմանութեան անընտիր ըլլալուն հետևանքն էր։

Հարկ և պարտք էր դարմանել այդ պակասը։

Այս նպատակաւ էին Մեսրովպայ դեգերանքն մինչև 'ի Բիւզանդական արքունիս՝ յանձնարարական թղթովք 'ի թագաւորէն Հայոց և 'ի կաթողիկոսէն. ուր անոնց գովեստից խօսքերէն աւելի գոհաւորագոյն և ազդու էր՝ իր իմաստութեանն և սրբութեան փայլն ու համբաւ. որով արքունական և պատրիարքական իշխանութիւնք հաւասար փութով զմիմեամբք կը գլէին դնել նմա մեծարանս՝ շուք և պատիւ, թագաւորական դեսպակներով զնա քաղաքաց 'ի քաղաքս փոխադրելով, և որ մեծն էր և կարևորագոյն՝ յօժարափոյթ և յօժարակամ դիւրացընելով նմա զկատարումն ամենայն հայցուածոցն և խնդրուածոց։ Հոգևոր և քաղաքական պետք արևելեան կայսերութեան մեծապէս գոհ էին որ Հայաստան իր այս քայլովը՝ ասորի գերութեան կապանք ու շղթաները խորտակեց խզեց. և վստահք՝ երկրին աւանդական ու օրինակելի բարեպաշտ աստուածսիրութեան վրայ, չէին տարակուսեր որ Սասանեանք ալ անշուշտ պիտի լքանին ու յետս ընկրկին՝

երբ տեսնեն Հայոց և Յունաց իրարու հետ սերտ փաւորութիւնը։ Սրբոյն Սահակայ աշակերտաց ապագայ յաջողութիւնն 'ի Բիւզանդիոն և այլուր՝ Մեսրովպայ նախընթացաբար այն կողմերն երևնալն ու ամենուն սիրտը գրաւելն էր. որ և անտարակոյս խօսեցաւ կարգադրեց անոնց առաքման գործը, համակերցուց նպատակին, ու պէտք եղած վստահութիւնն տալով և ընդունելով, երբ դարձաւ միւսանգամ առ հայրապետն Սահակ, երկոքին միանգամայն փութացին 'ի գործ դնել իրենց մտաց խորհուրդը։

Զոմանս յաշակերտացն յուղարկեցին նախ յԵդեսիա, որ արդէն նշանաւոր էր՝ իբրու քրիստոնէայասորի ուսմանց և գրաւորական շարժման կեդրոն մը, և որ վերջին անգամ մ'ալ պայծառագոյն կը փայլէր յայսմ 'ի հինգերորդ և մասամբ նաև 'ի վեցերորդ դարու։ Բայց մերքն ուրիշ կարևորագոյն պատճառ մ'ալ կուտան՝ առաջին Թարգմանչաց հոն ղրկուելուն. «Դէպ լինէր, կ'ըսէ Կորիւն, եղբարս երկուս յաշակերտացն առաքել 'ի կողմանս Ասորոց 'ի քաղաքն Եդեսացւոց ... զի յասորական բարբառոյն՝ զնոցին հնոցն սրբոց զաւանդութիւնս՝ հայերէն գրեալս դարձուսցեն»։ Եւ կը յաւելու թէ «Թարգմանչացն (որ էին Յովսէփ և Եզնիկ) հասեալ ուր առաքեցանն, և կատարեալ զհրամանսն, և առ պատուական հարսն առաքեալ. անցեալ գնացին 'ի կողմանս Յունաց»։ Զնոյն կ'աւանդէ և Խորենացի. «Եկեալ և առեալ Մեսրովպայ և մեծին Սահակայ զնոյն աշակերտ, զՅովսէփ և զմիւս ընկեր նմին 'ի Կողբ գեղջէ, որում անուն Եզնիկ կոչիւր, առաքեն 'ի Միջագետս 'ի քաղաքն Եդեսիոյ. զի որ միանգամ գտցի անդ գիրք ասացեալ նոցին սրբոց առաջնոց, Թարգմանեալ 'ի մեր լեզու բերցեն փութով. զի յետ այնր 'ի Բիւզանդիոն առաքեսցին 'ի նոյն գործ»։

Այդ էր ընդհանրապէս Թարգմանչաց խմբին փա-

փայքը, փութալ 'ի կայսերական քաղաքն, որուն հուչակն մեծ՝ գրգիռ մ'էր իրենց երիտասարդ աշխուժին և եռանդեան. և թէ որպիսի յօժարութեամբ այդ ուղեգնացութիւնն կ'ընէին, հնութեանը ու մատենագրական ոճով ոչ աննշան գրուածք մը՝ քերթողական բացատրութեամբ կը նկարագրէ. «Մերքս ամենեքեան գումարէին հանդերձէին կազմէին, պատրաստէին, յուղի անկանէին, երկայնաձիգ ճանապարհորդէին, 'ի ծովս ընթանային, 'ի թեւս թեթեւս թռչէին, յերկվարս փոյտակերաս եղանէին, զերասանակս լայնալանջս ըմբռնէին, զխարազանս օդաթարածս յածէին, 'ի սասանոտ դաշտս անհաստատս արշաւէին, զմահ քան զկեանս մեծար ընտրէին, աներեւոյթ նպատակի ուշ ունէին. զորոց զկնի բաղումք յիւրաքանչիւր դարս և 'ի ժամանակս հանդիսանային, նախանձաւոր գործեաց բարեաց լինելով, և 'ի վաստակս և 'ի ջանս պատրաստելով զանձինս ժրանային՝ տքնէին, աշխատէին, հարցասէր լինէին ուսանելով, կրթելով վարժելով վաստակելով, պատրաստելով զանձինս 'ի յերկս օգտակարս, և 'ի գործս շահաւէտս. ոմանք զտառից գծագրութիւնս շահաւորեալ, ոմանք զիմաստս հաւաքեալ, զուսումնականն, զբնաբանականն, զերկրաչափականն, զհամարողականն, զերաժշտականն, զաստեղաբաշխականն, զքերականն և զքերթողականն, զգործնականն և զտեսական զիմաստասիրութիւն և զմասունս նոցա որք են թուով երկոտասան: Ոմանց հաւասարէին գիտութեամբ, քան զոմանս վեհագոյնք երևէին, ոմանց զարմանալիք թուէին, ոմանց բաղձալիք լինէին, ժրութեամբ, ուշիմութեամբ, իմաստութեամբ, խոհեմութեամբ, ուսումնասիրութեամբ, գիտութեամբ, բանագիտակութեամբ: Ընդ ոմանս դասէին քննութեամբ, զոմանս պատասխանւոյ արժանի ոչ համարէին, առ ընկերակիցս գովելիք, առ վարդա-

պետաս հաճելիք, հարցասէրք, բանասէրք, ընթերցասէրք, ուսումնասէրք, տքնասէրք, ժրասէրք, երկասէրք. և այսպէս ջանային, արիանային, խիզախէին, զօրանային, հանդիսանային. պատրաստելով, կուտելով, ժողովելով, յօդելով, բարդելով բեռինս մեծամեծս և գժուարակիրս, զգրեանց բազմութիւնս և զուսումն իմաստութեան. բազմաց փափաքելիս՝ բաղձալիս, ցանկալիս, հեշտալիս, սիրելիս »։

***

Հասան յերիցագոյն Թարգմանչաց ոմանք 'ի Բիւզանդիոն, զորս Սահակ և Մեսրովպ սահմաներ էին առ գործն գիտեալ. մանաւանդ թէ անոնց ժամանելէն յառաջ՝ այլք յընկերակցացն նոցա՝ որ 'ի վարդապետացն զըկուեր էին յԵդեսիա, աւելի իրենց երիտասարդական եռանդեան՝ քան պարտուց ձայնին անսալով, և կասկածանօք և 'ի համբաւուց ուստեք ոեղեկանալով թէ զայլս յաշակերտակցաց որոշեր են երթալ 'ի կայսերական քաղաքն, առանց իրենց վարդապետաց նախընթաց հաւանութիւնն առնլոյ՝ փութացին հանել 'ի գլուխ զգործն հաւատացեալ նոցա, և լաելեայն անցան գնացին 'ի Բիւզանդիոն։ Ասոնք էին Յովսէփ և Եզնիկ։ Նախանձեցան Ղեւոնդ և Կորիւն. և նոքա ալ իրենց կողմանէ գնացին 'ի Բիւզանդիոն. այսպէս փութաջան և կանխաժաման երեւնալով 'ի քաղաքին՝ յառաջ քան զՅովհան և զԱրձան՝ զսահմանեալսն 'ի սրբոյն Սահակայ, « որոց յուլաբար ուղեւորեալ և ծուլաբար գեգերեալ 'ի Կեսարիայ » ուր ուրեմն հասին 'ի Կոստանդնուպոլիս։

Տիրանածին թագաւորն Թէոդոս և պատրիարքն Մաքսիմինոս՝ արքայաշուք պատուով ընդունեցան այդ ամենայն սիրոյ և մեծարանաց արժանաւոր հիւ-

քերը. իրենց ու բովանդակ հայրենեաց փափաքելի գանձը աւանդելով. — զստոյգ և զհաստատուն օրինակս աստուածաշունչ գրոց. և երանելի Թարգմանիչք՝ հասած իրենց նպատակին ու վախճանին, հոգեզուարճ ու անպատում ուրախութեամբ կը դառնային 'ի ցանկալի հայրենիսն, առ բազմերախտ դաստիարակս, յորոց մարմնով միայն անջատուած զատուած առ ժամանակ մի, անոնց անձկաւն ու սիրով կը տոչորէին։

Քանի՜ հոգեզմայլ ու գորովալիր այն խանդաղատական աղապատանք, ու որպիսի՜ երկնապարգև օրհնութիւն մեր հայրենեաց՝ այն փոխադարձ գրկախառնութեանց և երկուստեք թափուած բարեբար և արգասաւոր արտասուաց մէջ. երբ դաստիարակք կը հանդիպէին իրենց սիրելի աշակերտաց բազմակարօտ կրկին տեսութեան. որոնք գիտցեր էին մեծապէս օգտակար ըլլալ այն երկար գեգերանքն, զարդարելով իրենց միտքն ու հոգին ամենապատիկ ուսմամբք և նորանոր գիտութեամբք, և առաւելլով 'ի ներվարժմունս յունական լեզուի և դպրութեան։

Ե. ԵՐԿՐՈՐԴ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ Ս. ԳՐՈՑ

Ի ՅՈՒՆԱԿԱՆԷ

Թարգմանչաց դարձն 'ի Բիւզանդիոնէ։ — Իրենց հետ բերուած ստոյգ և հաստատուն օրինակք աստուածաշունչ տառից։ — Երկրորդ թարգմանութիւն և անոր հաւատարմութիւնը։

Այնուհետև թէ՛ վարժողաց և թէ՛ վարժեցելոց միակ նպատակն պիտի ըլլար այնչափ ու այնպիսի

շանքով և փութով մեծերեալ ուսմանց և հմտութեանց հաղորդ ընել զլրութիւն իրենց սիրելի ազգին։ Եւ ինչպէս պատշաճը կը պահանջէր, Սահակ և Մեսրովպ գրին անոնց առջև սուրբ Գիրքը. հետերնին միաբան աշխատելով՝ ընծայել հայկական ընտիր ու աննման Թարգմանութիւնը, որ երեքտասան էրկար դարերէ 'ի վեր իրաւամբք գլխաւորագոյն պարծանքը սեպուած է հայ մատենագրութեան։

Այսպէս ահաւասիկ 'ի գլուխ ելաւ երկրորդ և կատարեալ Թարգմանութիւն Գրոց սրբոց 'ի հայ լեզու, 'ի Կոստանդնուպոլսոյ բերուած ընտիր օրինակաց վրայ։

Հոս մտադիւր կուտանք խօսքը՝ իրենց այս անզուգական երկասիրութեան առաջին հաւատարիմ հրատարակող տպագրին «ըստ ճիշտ և անվթար օրինակի գրչագրաց նախնեաց» Զոհրապեան Յովհ. վարդապետի.

«Ի խնամոց Բարձրելոյն առ հինգերորդ դարու բարգաւաճեալ ուսման իմաստից 'ի մերումս հայաստան աշխարհի, սատարութեամբ ճառագայթաւէտ լուսաւորաց ազգիս՝ սրբոցն Սահակայ և Մեսրոպայ, առաջին փոյթ եղև նոցա բազմաշխատ հայթհայթանօք յօրինուած գրոյ հայկականս բարբառոյ, առ 'ի զԹարգմանութիւն աստուածային մատենից անսայթաք կատարելոյ, որպէս ցուցանէ պատմութիւնն։ Յայն սակս 'ի ձեռնարկել նոցին երկրորդ անգամ կատարելագոյն Թարգմանութեան 'ի հելլենականն բարբառոյ, 'ի բաց թողեալ զառաջինն զոր սկսեալն էին առնել յասորի օրինակաց. իբրև դէպ եղև նմին իրի 'ի Թագաւորեալ քաղաքն Կոստանդնուպոլիս առաքել զաշակերտս իւրեանց 'ի խնդիր ընտրելագոյն հելլենական գաղափարի, 'ի Մաքսիմիանոսէ պատրիարքէ ժամանակին աւանդեցաւ 'ի ձեռս մերոց դեսպանաց, ըստ գրելոյ Խորենացւոյն, (Գ. ԿԳ)

ստոյգ օրինակ գրոց։ Զոր և պատմելով Կորիւն ասէ. Հաստատուն օրինակօք ստուգաճառուր գրոցն ... գային երևելով յաշխարհին Հայոց։ Ապաքէն 'ի պատմութենէ Թարգմանութեան սուրբ գրոց առ մեզ ... գրեթէ աներկբայ ունիմք իմաստասիրել՝ լինելոյ այնմ 'ի հաւատարմագունէն 'ի հելլենական գաղափարս, որ 'ի հինգերորդ դարու անդ նախամեծար յածէր 'ի Թագաւորեալ քաղաքին, յոյր սակս Խորենացին և Կորիւն կոչեն զնա ստոյգ և հաստատուն օրինակ։ Այլ եթէ սոյն այս էր ածանցեալն 'ի վեցկղզեան օրինակէ անտի Որոգինեայ ... իբր ակներև հաւաստեն մեզ հետք որոգինեան աստեղանշանացն և բրգաձևաց՝ որ 'ի գրչագիրս մեր երևին այսօր. ըստ որում իմանամք զգուշութեամբ նշանակեալ 'ի Թարգմանչաց անտի մերոց 'ի հայկականն՝ որպէս զիարդ և զատին 'ի հելլենական գաղափարի իւրեանց ... Թէպէտ և 'ի վերայ այսր ամենայնի անտեղի էր մեզ կարծել, եթէ այնչափ և այնոքիկ միայն՝ զորս ըստ տեղեաց տեղեաց նշմարեմք 'ի գրչագիրս մեր, իցեն որոգինեան նշանագրութիւնք ճշգրտիւ դրոշմեալք։ Քանզի ոչ միայն 'ի հայկական մատեանս մեր, այլ և 'ի նոյն 'ի հելլենականն՝ օրինակաց յօրինակս փոխադրեալ 'ի միջոցս բազում դարուց՝ 'ի պակասութենէ աշալուրջ խնամոց գրչաց, յոլովս այլայլեցան այն նշանք ... որով ընդ երկբայութեամբ անկանին նաև նշանագրութիւնքն այնոքիկ՝ որ 'ի հելլենական գըրչագիրս երևին այսօր։ ...

« Երանելի Թարգմանիչք մեր քաջ հմտացեալք և 'ի հելլենականն, որպէս է տեսանել յարդեանց վաստակոց նոցա, զայսպիսի ընտրելագոյն գաղափար յանդիման ունելով, այնուհետև փոյթ յանձին կալան յեղուլ զայն 'ի հայկականս բարբառ՝ զգլխովին խնամով և զգուշութեամբ ըստ ճիշդ կանոնաց հաւատարմութեան, զոր օրինակ պահանջէր կարևոր

գործոյն հանդամանք, մինչև գոգցես՝ բառ առ բառ և ոճ առ ոճ պատշաճեցուցեալ, ըստ որում առ այն ոչ առկաւ օժանդակէր, նաև մերձաւորութիւն հայկականս սովորութեան ասից ընդ հելլենականին, որպէս ՚ի բարդութիւնս անուանց և ՚ի շարամանութիւնս ձայնից, և այլն ևս: Այլ և ՚ի վերայ այսորիկ՝ չքնաղ և վայելչաբան յօրինուածով ընտիր հայկաբանութեամբ՝ այնպէս անվթար յերիւրեցին ՚ի մեր հայրենի բարբառ, մինչև համարձակիմ ասել, զի եթէ ՚ի նմա զբառ ինչ կամ զգրախեց մի կամիցի ոք փոփոխել, կամ յաւելուլ և կամ նուազեցուցանել, արդարև չմարթի առանց խանգարելոյ զսքանչելի ներդաշնակութիւն շարագրութեանն յայն ձեռնամերձ լինել: Ասացելոցս ճշմարտութեան ՚ի վերայ հասեալ վկայեցին նաև այնոքիկ ՚ի հնախնգիր հմտացելոց անտի այլալեզու Եւրոպացւոց, որոց միանգամ դէպ եղև ըստ կարի տեղեկանալ հայկականս դպրութեան. և դոյզն մի առեալ զճաշակ մերում թարգմանութեան, Հաւատարիմ աւանդ թաքուցեալ ՚ի հայկական բարբառ համարեցան զնա. և սքանչացեալ Դշխոյ համօրէն թարգմանութեանց սուրբ գրոց իշխեցին կարգալ զնոյն, ՚ի սակս պէսպէս մասանց կատարելութեանցն »:

Զ. ՀՆԱԳՈՅՆ ՕՐԻՆԱԿՔ Ս. ԳՐՈՑ

Ի ՅՈՅՆ ԼԵԶՈՒ

Ա. *Սինայական կոչուածը։ — Բ. Աղեքսանդրեան օրինակ։ — Գ. Վատիկանեանը։ — Դ. Եփրեմեան գրչագիր։ — Ե. Բասիլեան գրչագիր։ — Ուրիշ գըրչագիրք 'ի յոյն բարբառ։*

Ուրիշ տեղ առիթ ունեցած ենք յիշատակելու թէ ինչո՛ւ աստուածաշունչ գրոց գրչագիրք առ մեզ՝ ոչ այնչափ բազմաթիւք են համեմատութեամբ, բաց 'ի նորոց կտակարանաց և մանաւանդ յաւետարանաց, և ոչ այնչափ հինք։ Մեր քաղաքական պատմութեան բազմապատիկ և բազմադիմի արկածք բռնադատեր են զնախնիս ոչ միայն իրենց հետ մինչև հեռաւոր երկիրներ գաղթեցընել զանոնք, այլ շատ անգամ ծածկել և ընդ հողով ամփոփել՝ իրենց սրտին և հաւատոյն ամենէն աւելի մերձաւոր և սիրելագոյն այդ գրքերն, որպէս զի չըլլայ թէ անոնց յարգն ու արժանաւորութիւնն չճանչցողաց ձեռքն իյնալով՝ արհամարհուին կամ նախատուին, զոր իրաւամբ նախատինք կը սեպէին կրօնից սրբութեան։ Դեռ ինչուան մեր օրերը կը լսենք ու կը կարդանք, որ աւերակ մնացած եկեղեցեաց հիմանց տակ ու որմոց մէջ թաղուն մնացած կը յայտնուին այդ սուրբ գիրք։

Որչափ ալ այս պակասը ուրիշ հին ազգաց քով ալ հանդիպինք, բայց անոնց մէջ կը գտնուին նաև մերիններէն հնագոյն թուական կրող աստուածաշունչ մատեանք։ Յոյն լեզուով և գրչութեամբ գտնուած

ներուն մէջ մասնաւոր մատգրութեան արժանաւորք էն գլխաւորաբար Սինայականն (Sinaïtique), Աղեքսանդրեանն (Codex d'Aléxandrie), Վատիկանեանն (Codex du Vatican), Եփրեմեանն, Բազիլեանն. և այլն։

Ա. Սինայականն, (գրչութիւն չորրորդ դարու) կը գտնուի 'ի կայսերական Մատենադարանին որ 'ի Փեթրպուրկ Ռուսիոյ, և կ'ամփոփէ յինքեան զմեծ մասն Հնոյ կտակին, զնորն ամբողջ, Բառնաբայ առաքելոյ ընծայուած Թուղթը, և զառաջին մասն Հովիւ գրոց Հերմեայ։ Այս վաղեմի և պատուական գրչագիրն գտնուեցաւ յամի 1844, Տիշէնտորֆ անուանի գերմանացի հնախուզին ձեռքով 'ի վանս սրբուհւոյն Կատարինեայ որ 'ի Սինա լերին. և որուն յարգին ու ազնուութեան անտեղեակ կրօնաւորք՝ կը գործածէին ուրիշ թղթոց ու մագաղաթներու հետ, ինչպէս կ'աւանդէ ականատես գտնողն, իրենց վառարանին կրակ տալու։ Տիշէնտորֆ առանց մեծ դըժուարութեան կրցաւ ստանալ՝ հրոյ ճարակ պատրաստուած այդ թերթերը՝ և ապրեցընել սրբազան գիտութեան և ուսմանց ցաւալի կորստենէ մը, որուն արդէն զոհ եղած էին ուրիշ թերթերն։ Յաջողեցաւ գաղափարել ուրիշ հատուածներ ալ, և զորս հրատարակեց 'ի 1855 Սրբազան անտիպ յիշատակարանք (Monumenta Sacra inedita) կոչուած երկասիրութեան մէջ։ Իսկ Աստուածաշունչ գիրքն ամփոփող քառասուն և հինգ թերթերն, — վասն զի այնչափը միայն կրցաւ ապրեցընել, — տպագրութեամբ հրատարակուեցան 'ի 1846։ Երկրորդ ճանապարհորդութեանն առթիւ՝ զոր նոյն գիտնական գերմանացին ըրաւ 'ի 1859, Ռուսաց կայսեր հովանաւորութեամբն յաջողեցաւ այս պատուական յիշատակարանին դեռ անկորուստ մնացած ուրիշ մասունք ալ ձեռք բերել. Ծննդոց ու Թուոց գրքերէն այլևայլ հատուածներ, որ 'ի 1845 Պորփիւր Ուզ-

պէնկսի արքիմանդրիտէն ձեռքով ու ջանքով փոխադրուած՝ էին 'ի Ռուսաստան։ Արդէն իր խարդախած ձեռագիրներովը ուսումնական աշխարհի շատ իսկ ծանօթ յոյն բողդախնդիրն Սիմոնիդէս՝ ուզեց Դիշէնտորֆի գիւտին փառքն աղօտացընել, իրեն վերագրելով այդ աստուածաշունչ գրոց հին ու ամբողջ գաղափարի մը գիւտը՝ իբր երեսուն տարի յառաջ քան զիմաստուն գերմանացին։ Սակայն իր այս խաբէութեանը մէջ ալ չյաջողեցաւ։

Այլեւայլ ականաւոր անձինք, մեծարոյք և պատկառելիք իրենց սրբաղան և հնախօս գիտութեամբ, զբաղեցան Դիշէնտորֆի այս կարեւոր գիւտով, և բազմաթիւ հետաքննական երկասիրութիւնք լոյս տեսան, քննելով, բաղդատելով ու պարտուպատշաճ յարգանքն ընծայելով գերմանացի խուզարկուին ջանքով եղած գիւտին և անոր հրատարակութեան։ Ասոնց մէջ ամենէն աւելի նշանաւորք և հետաքննականք կը սեպուին Notitia editionis Codicis Sinaitici. - Bibliorum Codex 'Sinaiticus Petropolitanus, 1862. - Novum Testamentum Sinaiticum, 1863, 65 և 69. Մտադրութեան արժանաւոր երկասիրութիւն մ'ալ սոյն նկատմամբ է հետեւեալն․ F. H. Scrivener. A full Collation of the Codex Sinaiticus, Cambridge, 1864.

Եօթնհարիւր յիսուն թերթերէն կամ 'ի հազար չորս հարիւր վաթսունուիրեք էջից, զորս ունէր Սինայական գրչագիրն իր ամբողջութեան մէջ, երեքհարիւր ութսուն և ութ թերթք՝ հասած են առ մեզ անկորուստ, անոնց մէջ սեպելով նաև Փրեդրիկ Ակուսթանոսի գտած քառասունուիրեք թերթերն․ երկու հարիւր քառասունուերկու թերթք 'ի հին կտակարանաց և հարիւր քառասունևեօթն թերթք 'ի Նորոյն․ ամէն մէկ էջին վրայ չորսական սիւնակք, բաց 'ի հին կտակարանի քանի մը գրքերէն որոնք

ամբողջ տողերով գրուած են՝ առանց բաժանման 'ի սիւնակս։ Պաւղոսի Թուղթն առ Հեբրայեցիս զետեղուած է յետ առ երկրորդ Թեսաղոնիկեցիս Թղթոյն. իսկ բովանդակ Թուղթք առաքելոյս՝ յառաջագաս են քան զԳործս առաքելոց. 'ի լուսանցսն կը տեսնուին Ամմոնեան կոչուած բաժանմունք և Եւսեբեան կանոնաց Թուանշանք, ձեռագրին ժամանակակից անձէ մը, կամ նոյն իսկ գրչին ձեռօք։ Բաց յընդօրինակողէն, Դիշէնտորֆ տասուերկուերարմէ տարբեր ուղղագրողաց սրբագրութիւններ ալ նկատած է, յորոց չորք՝ չորրորդ, վեցերորդ և եօթներորդ դարուց։

***

Բ. Աղեքսանդրեան օրինակ. Հինգերորդ դարու գրչագիր մը՝ զոր 'ի 1628 պատրիարքն յոյն Կիւրեղ Լուկար՝ Կարոլոս Անգղիոյ Թագաւորին ընծայած է. իսկ հիմա կը գտնուի 'ի Բրիտանական մուսէոնին։ Աղեքսանդրեան օրինակին հռչականութն եղած է նաև այնտե՝ վասն զի ամենէն յառաջ 'ի նմա գտնուած է սրբոյն Կղեմայ Հռովմայեցւոյ Թուղթն առ Կորընթացիս։ Եօթնհարիւր եօթանասունուիրեք Թերթերէ կը բաղկանայ գրչագիրն, յորոց վեցհարիւր երեսուն Թերթ հին կտակարանին, և միայն հարիւր երեսուն և չորս նորոյն։ Կը պակասին 'ի նմա Մատթէի աւետարանէն ԻԴ գլխոյն 6դ համարը. 'ի վեցերորդ գլխոյ Յովհաննու համարն 50դ և յութերորդէն 52դ։ Հաւանական կ'երևնայ Թէ չկայր 'ի նմա շնացեալ կնոջ պատմութիւնն։ Առ Կորնթացիս Թղթթէն 15դ համար չորրորդ գլխոյն, և 6դ երկոտասաներորդին։ Կան 'ի նմա Ամմոնի Աղեքսանդրացւոյ բաժանմունք, բայց ոչ Եւթաղեանքն, և կանոնք Եւսեբեայ։ Ամենէն աւելի հին գրչագիրն է՝ յորում կը

տեառնական գլխակարգութիւնք (κεφάλαια)։ Գրչութիւնն չէ յառաջքան զվախճանել սրբոյն Աթանասի, բայց և ոչ յետ մահուան Եւթաղի. որոյ ձեռքով 458-490 թուականներուն եղած բաժանմունք յաստուածաշունչ գիրս՝ անմիջապէս ընդունելի ըլլալով սկսան գործածուիլ։ Ջ՚ին կտակարանն ըստ Աղեքսանդրեան օրինակի տպագրութեամբ հրատարակեց նախ Կրապ (1707-1720), յետոյ Պապեր (1816-1828). իսկ զնորն Վոյիդ (Woide) 'ի 1786 հմտական տեղեկութիւններով. և Գուբըր (1860) նորէն բաղդատեց ընդ գրչագրին և հրատարակեց։

Հին գրչագրաց մէջ իր ընթերցուածներով ամենէն աւելի համաձայն է Աղեքսանդրեանն ընդ ընկալեալ օրինակի աստուածաշունչ գրոց, թէպէտ և ունենալով իսկ ոչ սակաւ տարբերութիւններ։

***

Գ. Վատիկանեան օրինակ, գրեալ 'ի չորրորդ դարու, և որ կը գտնուի համանուն քահանայապետական Մատենադարանին մէջ 'ի Հռովմ, և ստացուած է հնգետասաներորդ դարու վերջերն։ Նորագոյն և ընտրելագոյն հրատարակութիւն գրչագրիս եղած է 'ի Հռովմ 'ի ձեռն Վերչելլոնէ, Գօցցա և Ֆապիանի հմուտ եկեղեցականաց. իսկ անոր վրայ աշխատողք բազմաթիւք են, սկսեալ յԵրասմոսէ, 'ի Պիրկսէ, 'ի Պէնթլէյէ մինչև 'ի Դրէկէլ և 'ի Դիշէնտորֆ։ Եօթնհարիւր յիսունևինն թերթք են, յորոց հարիւր քառասունևերկու նոր կտակարանն ամփոփողք, բաց 'ի Յայտնութեան գրքէն և Պաւղոսի առ Հեբրայեցիս թղթոյն վերջին մասէն, սկսեալ իններորդ գլխոյն 14դ համարէն, և 'ի չորից վերջին թղթոց կաթուղիկեայց։ Ամէն էջք երեք սիւնակաց բաժնուած, բաց 'ի նորոց կտակարանաց որ միաշար տողք են։

Չկան 'ի նմա ոչ Ամմոնեան բաժանմունք, ոչ Եւսե-
բեան կանոնք և ոչ Եւթաղի ստիքերոնք. ոչ գլուխք,
ոչ վերնագիրք կամ տիտղոսք. իսկ 'ի Նոր կտակա-
րանս Նոր բաժանմունք մը ունի, որ ուրիշ հին գըր-
չագրաց մէջ չեն տեսնուիր, բաց 'ի Զակինթեան
կոչուած օրինակէն։ — Վատիկանեան օրինակը շատ
տեղ կը տարբերի յընկալեալ և 'ի վաւերացեալ օրի-
նակէն, մեծ խնամքով գրուած՝ ըստ գեղագրական
տեսութեան, բայց ընդհանրապէս աւելի սխալա-
գիր, զեղչմամբք, կրկնութեամբք՝ որոց թիւը՝ ան-
նաման խուզարկութեամբ և խղճագատութեամբ
գրեթէ երեքհարիւրի կը հանեն քննադատք։

***

Դ. Եփրեմեան օրինակ (Codex Ephræmitanus),
գրչագիր հինգերորդ դարու, յազգային Մատենադա-
րանին Փարիզու. և այս անունը կրելուն պատճառն
է որ կրկնագիր ձեռագիր մ'է, աստուածաշունչ
գրոց հին և Նոր կտակարանին վրայ երկրորդ գրչու-
թիւն ունենալով զմատենագրութիւնս սրբոյն Եփ-
րեմի։ Փոխադրեալ է յարևելից 'ի ձեռն Անդրէի
Յովհաննու Լասքարիս, և նախ գրուած 'ի Մատե-
նադարանն Մէտիչի 'ի Փլորենտիա Իտալիոյ, ուստի
բերուած 'ի Փարիզ նոյն ազնիւ տոհմէն հռչականուն
Կատարինէ Թագուհւոյն հետ († 1589)։ Բաղդա-
տուած ու համեմատուած ընդ այլոց գրչագրաց յայլ
և այլ հմտից, վերջին անգամ հրատարակեցաւ 'ի
Տիշէնտորֆէ. Նոր կտակարանին մասն 'ի 1843, իսկ
հինն երկու տարի ետքը։ Առանց բաժանման 'ի սիւ-
նակս, տողերն միայար գրուած են, ընդհանրապէս
քառասունևմէկ, բայց մերթ ալ քառասունըվեցէն
մինչև վաթսուն տող ամէն մէկ իջին վրայ։ Ունի ըզ-
գլուխս, զտիտղոսս կամ զվերագիրս 'ի գլուխ իւրա-

քանչիւր աւետարանաց. Նոյնպէս նաև զԱմմոնեան բաժանմունս, բայց ոչ և զԹուագրութիւն Եւսեբեան կանոնաց, որ կրնան նաև առ հնութեան ժամանակաց անհետացած ըլլալ. որովհետև սովորութիւն էր կարմրագեղով նշանակել զայնոսիկ, և որք հեշտեաւ կրնան ջնջուիլ: Ամենեին բաժանմունք մը չիգտնուելով 'ի Գործս և յառաքելական Թուղթս, հաւանական կը թուի որ գրութիւնն եղած ըլլայ յառաջ քան զԵւթաղ, կամ գէթ իրեն ժամանակակից: Կրկնագիր ձեռագիր ըլլալուն, հազիւ նոր կտակարանին գրեթէ երեք մասին մէկը կը բովանդակէ յինքեան. որով կը պակասին 'ի նմա երկրորդ կաթուղիկեայն սրբոյն Յովհաննու, Պաւղոսի երկրորդն առ Թեսաղոնիկեցիս, երկրորդն առ Տիմոթէոս, և Թուղթն առ Տիտոս: Կը պակասին գարձեալ երեսուննևօթն գլուխք յաւետարանաց, տասն յառաքելական Գործոց, երեսուննևութ 'ի Թուղթըս և ութ գլուխք 'ի Յայտնութենէն Յովհաննու. որով յերկու հարիւր յիսուն գլխոց նորոյ կտակին կը պակասին հարիւր չորս գլուխք:

*
* *

Ե. Բասիլեան գրչագիր ութերորդ դարու. Հռովմայ մօտ 'ի Կրոթթա Ֆերրաթա Բասիլեան յունածէս կրօնաւորաց մատենադարանին մէջ գտնուած ըլլալուն համար այսպէս կոչուած. իսկ հիմա կը պահուի 'ի Վատիկանեան գրատան:

Ասոնք են գլխաւորք և հնագոյն գրչագիրք սուրբ Գրոց, 'ի յոյն լեզու, առանց յիշելու և զայլս որ առջիններուն ժամանակի հնութիւնն չունենալնուն, չունին հարկաւ հաւասար կարևորութիւն, ուստի և աւելորդ յիշատակել և զնոսա աստէն: Մատագրութեան գլխաւոր կէտ մը այն է, որ իրենց պատկա-

գեղի հնութեամբն ալ, ոմանք 'ի նոցանէ վերաբերելով խել հինգերորդ և չորրորդ դարերու, իրարմէ կը զանազանուին և յընկալեալ օրինակաց աստուածաշունչ գրոց ոչ գոյզն տարբերութիւններ կը ներկայացընեն։ Իսկ որ աւելի հետաքննականն է մեզի համար՝ հայերէն օրինակք ալ մերթ ատոնցմէ մեկուն և մերթ միւսին համաձայն կը զուգընթանան, և թէպէտ չունին անոնց հնութիւնը 'ի գրչութեան, բայց յաճախ աւելի հաւատարմագոյն ընթերցուածներ կ'ամփոփեն, որով մեծապէս կ'առաւելու մեր թարգմանութեան և անոր վրայ երկասիրողաց յարգը՝ նաև եւրոպական իմաստուն և լուսամիտ բանասիրութեան քով։ Բայց այս խնդրոյն ձեռք չզարկած, մեզ բերենք նախ հայերէն աստուածաշունչ գրոց ինչուան առ մեզ հասած գլխաւոր օրինակներու հընութիւնն, նախ իրենց ամբողջութեան մէջ, և յետոյ նոր կտակարանի գրչագրաց առանձինն։

ԻԷ. ՀՆԱԳՈՅՆ ԳՐՉԱԳԻՐՔ Ս. ԳՐՈՑ

Ի ՀԱՅ ԼԵԶՈՒ

Գրչագիրք 'ի Մատենադարանին որ յէջմիածին։ — Ի Մատենադարանի Մխիթարեանց 'ի Ս. Ղազար վենետիկոյ։ — Ուրիշ տեղուանք գտնուած կամ յիշատակուած հին օրինակք աստուածաշունչ գրոց։

Փափաքելի էր մեզ և անշուշտ մեծապէս հաճոյական ամէն բանասիրաց յայսմ մասին աւելի մանր և լիակատար տեղեկութիւններ ունենալ և հաղորդել։ Համոզուած թէ լաւագոյնը՝ յաճախ լաւին արգելք

է, կը բռնադատուինք հիմկու հիմայ մեր ունեցած ծանօթութեամբք գոհ ըլլալ, նշանակելով նախ զհնագոյնս յօրինակաց որ կը գտնուին 'ի Մատենադարանին Էջմիածնի, որ ամենէն ճոխագոյնն է մեր ճանչցած հայկական գրչագրաց հաւաքմանց մէջ։ Կը քաղենք 'ի տպագիր ցուցակէն Կարինեան բանասիրի [1]; ուր տեղ տեղ հրատարակչին կողմանէ տրուած տեղեկութիւնք պակասաւոր և սխալագիր կը թուին, և չենք տարակուսիր որ անոր տպագրութենէն 'ի վեր շատ յաւելուածներ եղած ըլլան նաև օրինակաց աստուածաշունչ գրոց։ Ընթերցողը պիտի տեսնէ որ հոս ակնարկուածներուն մէջ ամենէն հնագոյնք՝ չեն յառաջ քան զերեքտասաներորդ դար, ուր ութ և աւելի դարու կը կանխէ ժամանակ թարգմանութեանն։

Թիւ գրչ. 147. (Ա). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ գրեալ 'ի վերայ մագաղաթի 'ի ժամանակս թագաւորութեան Հեթմոյ որդւոյ Լեւոնի նախ (?) 'ի գաւառն Կիլիկիոյ 'ի Մովսիսէ և 'ի Ներսիսէ 'ի թուին Հայոց Ո (1151)։ Ունի զխորհրդածութիւնս երանելոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ յաղագս երգոց Սաղմոսարանի. պակասին մարգարէութիւն Աբդիու, Բարուքայ, Յայտնութիւն և Հանգիստ Յովհաննու, Սիրաքայ, Մանասէի, և աղերս Եւթաղի »։

Թ. 148. (Բ). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ գրեալ 'ի վրայ թղթոյ 'ի ժամանակս

[1] Մայր ցուցակ ձեռագիր մատենից Գրադարանի սրբոյ աթոռոյն Էջմիածնի, տպագրեալ հրամանաւ տեառն Մատթէոսի ընդհանրական հայրապետին ամենայն Հայոց. ծախուք 'ի Կարնոյ գաղթական Յակոբայ վարժապետի Կարինեանց յօգուտ դպրոցի ժառանգաւորաց սրբոյ Էջմիածնի, 'ի 1863 ամի, 'ի Թիֆլիզ, 'ի տպարանի Ներսիսեան ազգային հոգեւոր դպրոցի Հայոց։

թագաւորութեան Հեթմոյ առաջին 'ի Միքայէլ քահանայէ և 'ի Դրիմեցի Յովհաննիսէ 'ի Թուին Հայոց ՇԲ (?) ՊՇԷ (1253, 1255)։ Պակասին 'ի սմա Ա և Բ Մնացորդաց, Բ Եզրասայ, Ա Մակաբայեցւոց, Սաղմոսաց, Առակաց, Ժողովողի, Երգերգոց, Իմաստութիւն, Արգիոս, Բարուքայ, Երեմիայ, ողբ Երեմիայ »։

Թ. 149. (Գ). « Աստուածաշունչ միջակ բոլորագիր մեծագիր գրեալ 'ի վերայ Թղթոյ վասն Յովհաննու արքեպիսկոպոսի եղբօր Հեթմոյ արքային Հայոց։ Յանկ մատենիս հրամանաւ իշխանաց իշխան կոստանդնի գրեալ է 'ի Բարսեղ Ռուբինեանցէ, 'ի Թուին Հայոց ՉԺԹ (1270). պակասին 'ի սմա Արգիու, Բարուքայ, Մանասէի, Թուղթ Կորնթացւոց առ Պաւղոս, Հանգիստ Յովհաննու, երրորդ Թուղթ Յովհաննու »։ – Յիշատակարանք են.

Ի վերջ Մնեգոց գրոցն. « Զաստացող տառիս զտէր Յովհաննէս րաբունի զեղբայր Թագաւորին՝ յիշեսջիք 'ի Տէր. և զծնաւղսն նորին ամենայն զարմաւքն իւրովք. ընդ նմին և զանպիտան գծողս ԲՂ (Բարսեղ) և զծնաւղսն իմ և զամենայն հաւատացեալս 'ի Քրիստոս » ... ։

Ի սկիզբն Ղեւտականնին. « Ովլսուրբ եղբարք, որք կարդայք և աւրինակէք զաստուածաշունչս՝ յիշեսջիք յաղաւթս ձեր զստացող գրոցս, զիմ քաղցր և բարի պարոնն և զիշխանաց իշխանն, զպարոն Կոստանդինն, զհեզն և զխոնարհն, և զաստուածասէրն և զեկեղեցասէրն, և զքահանայասէրն. զի Քրիստոս Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ, առողջ հոգւով և մարմնով ... ընդ նմին և զմեղաւոր իրեցս զգծաւղ ցանքերոյս զԹորոս Ռաւբինեանս » ...

Յաւարտ Առակաց գրոց.

« Աստուածածնին սուրբ կոյս բարի
Ամէն աշխարհս քենով բարձի.

Իմ աղբայր ի քեզ անձնի
Որ էր որդի տեառն Հեթմոյ
Հայոց մեծաց Զամբլայի,
Պարոն Ճուֆրէ անուն կոչի
Եւ էր գիմաւ նա գըգուելի.
Աչքատեաց ազներ բարի
Եւ աւտարացն էր սիրելի,
Կեցաւ կենքն ի յաշխարհ ԼԴ տարի
Փոխեցաւ ի յաշխարհէս ԻԱ ի մայիսի.
Ի թուին Հայոց ՉԺԷ ամի.
Եւ Կոստանդինոս զայս գրեցի
Որ եմ աղբայր հետ իր զկնի,
Որ եփ իմ աղբայրն ի միտքս ինկնի
Արցունք ին գլայք կու վաթի.
Քրիստոս Աստուած խնձ ողորմի »:

Ի վերջ Միսաքայ. « Զեզկելիս ոգի, զՄիսաքայս գրող և զտառիս ստացող զմեղապարտ ծառայս Աստուծոյ և ամենայն ծառայից նորա զՅովհաննէս եպիսկոպոս զեղբայր բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ, և զորդիս մեծին Կոստանդեայ, աղաչեմ զվայելողսդ սորա և զժառանգողսդ, և որք լուսաւորիք սոքաւք. յիշել սրտի մտաւք զմեզ ծնաւղաւքն մերովք և համայն ընտանեաւք և երախտաւորաւք. թողութիւն և ողորմութիւն և հանգիստ գտանել 'ի Քրիստոսէ Աստուծոյ, այժմ և յապագային. զի կարաւտ եմք ձերդ բարի յիշման որպէս և Տեառն ողորմութեան » . . . :

Ի վերջ Ցայտնութեան գրոց. « Զմեղաւոր երէցս զԹորոս Ռուբինեանցս յիշեա՛ իմ բարի Պարոն: Ո՜վ սուրբ եղբարք, որք հանդիպիք սմա՝ տեսութեամբ կամ աւրինակելով, յիշեսջիք յաղօթս եւ զստացող աստուածաշնչիս, զիմ քաղցր և բարի Պարոնն և զիշխանաց իշխանն զպարոն Կոստանդին. զի Քրիստոս Աստուած ընդ երկայն աւուրս պահեսցէ զնա. և յետ աստեայս՝ երկնից արքայութեան արժանի արասցէ. ամէն: Եւ զ'ի Քրիստոս հանգուցեալ եղ-

բայրն իւր զպարոն Ծուփրի զքաղցրն, զհեզն, զողորմածն, զաղքատասէրն և զեկեղեցասէրն յիշեսջիք. զի Քրիստոս Աստուած զպարոն Ծուփրի ընդ իւր սուրբ իշխանացն դասեսցէ. ամէն։ Եւ զմեղաւոր երէցս զԹորոս զգծողս այլ յիշեսջիք Աստուած ողորմեայիւ. Ով մեզ լի սրտիւ Աստուած ողորմի ասէ, Աստուած մեկին հազար իր պատրաստէ»։

Թ. 150. (Դ). «Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ ընտիր գրեալ 'ի վերայ մագաղաթի 'ի Ստեփանոս քահանայէ Գոյներ 'ի Թուին Հայոց ՉԽԱ (1292). ունի զբան Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ, և Եպիփանու յաղագս երգոց Սաղմոսարանի։ Ի մատենիս խրատք ժամակարգութեան, տօնացոյց, աղօթք և քարոզք ժամերգութեանց, պատարագամատոյց, աղօթք Յովհաննու Ոսկեբերանի 'ի սուրբ Երրորդութիւն, աղօթք 'ի Վարդավառն, տումար. պակասին 'ի սմա Աբդիու, Սիրաքայ և Մանասէի»։

Թ. 151. (Ե). «Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ ընտիր, գրեալ 'ի վերայ մագաղաթի 'ի վայելս Հեթմոյ արքային Հայոց. 'ի վախճան մատենին գտանի չափաբերական ծանօթարար բան Հեթում արքային մերոյ յաղագս ստացման մատենիս. 'ի վերջ ոտանաւորի գուցէ գոլով տեղի կնքոյ արքային մերոյ քառանկիւնի ձեւով կտրեալ հանեալ են 'ի բաց. 'ի Թուին Հայոց ՉԽԴ (1292). պակասի նախադրութիւն Մննգոց»։

Թ. 152. (Զ). «Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ գրեալ 'ի վերայ Թղթոյ ըստ խնդրոյ Ներսիսի ումեմն եպիսկոպոսի 'ի Յովհաննէս քահանայէ 'ի Թուին Հայոց ՉԽԶ (1277). 'ի վերջոյ մատենին գտանի զշջական ոտանաւոր Վարդան վարդապետի. գրեալքն են Թերի և դասաւորութիւնք խառն 'ի խառն»։

Թ. 153. (Է). «Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ գրեալ 'ի վերայ բամբակեայ թղթոյ 'ի վանքն կոչեցեալ Գռներ (տպագիրն վրիպակաւ կը դնէ զանէր) որ մերձ 'ի Բարձրբերդ Կիլիկիոյ 'ի Մարտիրոս վարդապետէ յաշակերտէ Գէորգ վարդապետի Սկեւռացւոյ 'ի թուին Հայոց ՉԾԲ (1303), անթերի»:

Ի վերջ Գ. Թագաւ. «Ես Մարտիրոս սպասաւոր աշակերտս գրոց, ըստ ըղձի և փափագման սրտի գրեցի զսա 'ի վանքս հռչակելի որ Գռներ կոչի մերձ 'ի Բարձրն կոչեցեալ բերդ. 'ի մեծ թուականիս Հայոց ՉԾԲ, և յամսեանն մայիսի ըստ հռովմայեցւոց անուանց ամսոյս, որ աւր ԺԵ էր սորին ամսոյ. յորում լուաք 'ի նոյն աւուր չար համբաւ. զի տէր երկրիս մերում չոգաւ 'ի Շամն կոչեցեալ աշխարհ, հանդերձ Մուղուլն կոչեցեալ զաւրուք: Եւ ըստ մեղաց մերոց յաղթեալ յանաւրինաց' փախըստեայ եղեւ յաշխարհս Բաբելացւոց առ խանն Խաղան կոչեցեալ: Եւ աշխարհս մեր յոյժ 'ի տարատրոս անկաւ»:

Ի վերջ Ա. Մնացորդաց. «ԶՄարտիրոս վարդապետ աշակերտ Գէորգայ Սկեւռացւոյ զգրաւղ գրոցս յիշեցէք 'ի Տէր: Ընդ նմին և զվարդապետն իմ և զուսուցիչ զԳէորգ րաբունապետ»:

Ի վերջ Ա. Եզրի. «ԶՄարտիրոս վարդ" և զգրիչ սորա յիշեցէք յաղաւթս ով եղբարք որք հանդիպիք: Գրեցաւ սա 'ի Գռներս, 'ի թուականիս Հայոց յեւթըն հարիւր յիսուն և երկուքն. յուլիս ԻԹ»:

Ի վերջ թղթոյն Յուդայի. «Զմեղապարտ վարդ" Մարտ" աղաչեմ յիշել 'ի տէր Քրիստոս: Գրեցաւ սա 'ի թուականիս ՉԾԳ յամսեանն յուլիս յերկիրս Կիլիկիոյ մերձ 'ի բերդս Բարձր յԱնապատս Խաչաւորոյ 'ի վերայ գետոյս Ճղըրկայ 'ի քարանձաւ և 'ի նեղ տեղիս, 'ի դառն ժամանակիս, յորում ամսեան

եկին մահմետական զաւրքն 'ի Շամբէն. և առին սիրով զբերդն Թիլ. և ուխտադրժանց եղեալ դաշանցն կոտորեցին զորս գտին անդ. և բազումք փախստական եղեալ 'ի նոցանէ ջրասոյզ եղեալ 'ի մեծ գետն Ջահան » ....:

Թ. 154. (Ը). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ, գրեալ 'ի վերայ թղթոյ բամբակեայ 'ի թուին Հայոց ՉԾԷ (1308). 'ի սկզբան մատենին են գրեալ նախադրութիւնք և գլխակարգութիւնք մատենից 'ի Ծննդոց սկսեալ ցվերջն Մակաբայեցւոց, առանց յիշեալ գրեանց, իսկ 'ի Սաղմոսացն սկսանին գրեանքն հանդերձ նախադրութեամբ և գլխակարգութեամբ իւրովքն »:

Թ. 155. (Թ). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ սկսեալ 'ի Ծննդոց ցԱւետարանսն. գրեալ է յաւետարանայն ցթուղթ Պաւղոսի առ Հռովմայեցիս 'ի վայելս Յովհաննէս րաբունապետի 'ի յանապատ Նորշինայ, որ Մանուկ սուրբ Նշան կոչեն. գրեալ է 'ի թղթոյն Պաւղոսի առ Հռովմայեցիս ցՀանգիստն Յովհաննու 'ի գաւառին և քաղաքին Հիզան կոչեցեալ, 'ի հայրապետութեան Կիլիկեցւոց Տ. Կարապետի, և 'ի հայրապետութեան Ռշտունեաց որ յԱղթամար (այլ. աղթմար) կոչի Դաւթի եղբօրն տեառն Զաքարիայի. 'ի Յովհաննիսէ, Պետրոս արեղայէ, և Յովհաննիսէ, 'ի թուին Հայոց ՊԼԹ-ՊԽԹ, (1390-1400): Զկնի Ծննդոց են և կանոնք որդւոց Յակոբայ, և պատմութիւն Յովսեփայ և կնոջ նորա Ասանեթայ, նախադրութիւն Դանիէլի արարեալ Վարդան վարդապետի 'ի լուսաւոր մեկնչաց: Ի վախճան մատենին գտանի և յիշատակարան՝ յորմէ առեալ մատեանս գրեալ 'ի ժամանակս Թամուր Լանգի »:

Թ. 156. (Ժ). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր ութածալ գրեալ 'ի թուղթ բամբակեայ ըստ

խնդրոյ Ֆրանչիսկոսի վարդապետի 'ի Յովհաննիսէ 'ի կարգէ Դոմինիկեանց 'ի Թուին Հայոց ՊԾ (1401) սկիզբն Ծննդոց մինչ Ելից՝ յերկրորդ Թագաւորութեանց չորրորդ. 'ի տեղիս տեղիս պակասեալ և կաղմատեալ» ։

Թ. 157. (ԺԱ). Աստուածաշունչ միջակ բոլորագիր ուԹածալ, գրեալ 'ի Թուղթ բամբակեայ ըստ խնդրոյ ստացողի գրոցս Յովհաննիսի երանաշնորհ րաբունապետի և աստղերալոյս վարդապետի 'ի Թուին Հայոց ՋԺԴ (1465). բաց 'ի գրոց Ծննդոց, Ելից, Ղեւտացւոց, Երկրորդ Օրինաց, Յեսուայ, Դատաւորաց, Հռութայ, Եսթերայ, Յուդիթայ և Տոբիթայ՝ միայնեալքն պակասին » ։

Թ. 158. (ԺԲ). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր ուԹածալ գրեալ 'ի Թուղթ բամբակի 'ի վայելումն Խարբերդցի Մկրտիչ վարդապետի 'ի Միքայելէ Թոխաթցւոյ, 'ի Թուին Հայոց ՌԿ (1611). ունի զնախադրութիւն Սիրաքայ և զգիրք Սիրաքայ » ։

Թ. 159. (ԺԳ). « Աստուածաշունչ փոքր բոլորագիր քառածալ, գրեալ 'ի Թուղթ բամբակեայ 'ի վայելս տէր Յովասափ քահանայի Արծրունեցւոյ 'ի ժամանակս հայրապետութեան սրբոյ Էջմիածնի տեառն Փիլիպպոսի կաթողիկոսի՝ 'ի Թագաւորութեան տաճկաց սուլթան Իբրահիմի. գրեալ է 'ի քաղաքն Տիգրանակերտ 'ի Թուին Հայոց ՌՁԹ (1640)։ Ի վախճան իւրաքանչիւր գրոց հնոյ կտակարանի ցգիրք Յովսեփայ գրեալ կան տասնաւոր բարոյական խրատուք ըստ մտաց այնց գրոց, որք որպէս նկատին՝ են վասատակք Շնորհալի քերԹողին Հայոց » ։

Այսոցիկ զատ կը նշանակուին 'ի ցուցակին նաև այլք բազմադոյնք, յետին դարուց գրչութիւնք, զորս աւելորդ կը սեպենք մէջ բերել. ինչպէս նաև սուրբ Գրոց մասնական գրչագիրք երեքտասան կամ չորեքտասան դարերու ։

***

Ասոնք Թուականաւ հին և ընտրելագոյն գրչագիրք յԷջմիածին. իսկ 'ի մեր Մատենադարանի

Ա. Թուանշանը կրող աստուածաշունչ գրոց օրինակն է բոլորգիր ընտիր մագաղաթեայ քառասուն և հինգ թերթ, և իւրաքանչիւր թերթն՝ տասուերկու թուղթ կամ քսանըչորս էջ. ամէն մէկ էջ 'ի կրկին սիւնակս բաժնուած, և ամէն մէկ սիւնակին վրայ յիսունուերեք տողք. երեսունևհինգ թերթն հին կտակարանէն և տասն 'ի նորոյն, միօրինակ գրեալ ճարտար գրչաւ, և 'ի լուսանցսն տեղ տեղ աւելցընելով Սիւմմաքոսի, Ակիւղասայ և Թէոդիտոնի ընթերցուածոց տարբերութիւններն, մանաւանդ 'ի գիրս Թագաւորութեանց: Եւ այսպիսի է դասաւորութիւն մատենից 'ի նմա:

Ընդամատեանն Մովսիսի. Ա. Ծնունդք. յորոյ 'ի կատարածին հետևեալ չափաբերական տողք.

« Աստուած աներղ անմահ և տէր յաւիտենից,
Որ կամեցար և հաստեցեր զգոյս յոչգոյից.
Ըզմարդն ի գրախտն եդեր զգալեաց տիրել ընաւից՝
Եւ վայելել բաց ի միոյն յամէն փայտից՝
Ըզյանցաւորն եղեալ կենաց քոցն բանից,
Ուղիղ դատմամբ հաներ յաշխարհս այս անբանից.
Այլ հաճեցար որք ի ծննդոց նորին զարմից,
Քեզ մատուցին կըրկին ընծայ հոտ անուշից:
Փոխել զոմանս ի մահացու այս կայանից,
Զայլս պահել ի ջրով հեղձնուլն համայնից:
Ի կռապաշտել հանուր մարդկան հեռ ոչընչից
Երեւեցար Աբրահամու մէջ քաւդէից:
Եդիր ըզնա 'հայր հաւատով քրիստոնէից,
Թէ և մարմնով իցեն յազգաց անթըլփատից:
Ով տէր ընկալ զայս քեզ ընծայ հիւսուած տառից
Ի մեղաւոր ձեռացս ցոյցք հոգւոյս ըղձից:
Յուսով սկըսեալս ի կատարինչ բոլորից,

Ժամանեցօ ի լրումն քոց սուրբ մատենից։
Ժառանգեցօ Լուսաւորչին պայազատից,
Դայեկաբար ջամբեցողաց զկաթն իմաստից.
Որոց նըստին ատեմ յաշխարհն արեւելից
Ուր ապրեցաւ սուրբն անվնաս ի մէջ աւձից։

Բ. Ելք. եւ 'ի վերջն ոտանաւոր քերթուած.

« Տէր որ ի տիպ մեծ փրկութեանն որ ի վերջոյ
Հուար յԵգիպտոս լլկեցելոցն գոչելոյ.
Առաքեցեր զՄովսէս փրկիչ տան Յակովբու,
Ազատեցեր զՀինն Իսրայէլ ի խիստ կաւոյ։
Զնեղիչ նոցին ընկղմեցեր ի խորս ջրոյ,
Եւ զնեղեալսն ափոփեցեր ի սիւն ամպոյ.
Ըզմանանայն հեղեր ի տիպ քո սուրբ մարմնոյ,
Ըզվիմաբուղխ ջուրն արբուցման հոգւոյդ սրբոյ։
Առեր առ քեզ զմեծն Մովսէս ի մէջ հրոյ,
Ետուր նովաւ ազգի մարդկան զաւրէնս քո։
Մաղթեմ, տէր, լոյծ՝ զհոգիս ի խիստ մեղաց կապոյ,
Քեզ հետեւել յելս վերին կառաւք ամպոյ »։

Եւ կը յաւելու. « Զմեղաւոր հողս Յոհաննէս ըզգրաւղս սուրբ տառիս, եւ զծնաւղսն իմ, եւ զեղբարս իմ զԱմբատն եւ զՎասիլ, եւ զամենայն ազգատոհմս իմ յիշեցէք ով սուրբ ընթերցաւղք եւ տեսաւղք. եւ Տէր զձեզ յիշէ. եւ անուն մի քերէք, զի չար սովորութիւն է. եւ թէ արժանի էք, գրեցէք եւ զձեր անունդ յայլում տեղւոջ »։

Գ. Ղեւոնդեան. եւ 'ի վերջ գրոցն համառօտ բան չափական.

« Քրիստոս Փրկիչ աստուածըրդ բան
Աւծեալ մարմնով յեւղ ցընծութեան,
Որ ի պաշտաւն երիցութեան
Առեր ըղտունն Ահարոնեան,
Պաշտել զըստուերն աւրինական
Զփոփոխելին եւ զառաւրեայն.
Ի հաստատնեն այնր վախճան

Զի գայցէ մեծն և մնացական.
Եղէր մարմնով կցորդ մարդկան
Մեծ քահանայ Աստուծոյ տան.
Գեր քան զչափն Մովսիսեան
Ըստ կանխագոյն բանին երդման.
Դու քահանայ ես յաւիտեան
Մելքիսեդեկ ճշմարտութեան,
Ոչ ընդ անձին՝ այլ ընդ մարդկան
Մին պատարագն էր բաւական.
Նըստիս ընդ հաւր միշտ յաւիտեան
Բարեխաւսես վասն մարդկան.
Զմերս ընծայեա հաւատոյ բան
Զի փրկեսցուք ի հրոյն կիզման »:

Դ. Թիւրք, և 'ի վերջն հետևեալ տողերը.

« Զբոյց Թուոցըս մատենի
Լըրումն խոստմանն որ է յայտնի
Թէ զաւակ քո յոյժ բազմասցի
Իբրեւ զաւազ որ ոչ չափի:
Կարծեմ խորհուրդ իմն այլ ունի
Զորմէ խուզել չէ անտեղի:
Ի Թուել ցեղին Իսրայելի
Քան ըզվաթսուն բեւրն աւելի,
Զմըտին ի Թիւըն հանդիսի.
Որք չեւ էին քսանամենի:
Ահա Թուելով բոլորն ազգի,
Մնացին անԹիւ անգիտելի.
Զի՞նչ իմասցուք արդ հաւաստի
Զորոց չեղեն հարեալ զգրի:
Թուի Թէ այնու այս յայտ լինի,
Թէ շատ ինչ մեզ չէ գիտելի.
Իցեն մարդկան որք հաճելի
Առ Աստուծոյ ոչ գովելի:
Զի իւր միայն իւրքն յայտնի
Որք մարդկան չեն ճանաչելի:
Այժմ ծածուկ յայսմ աշխարհի
Յետոյ փառաւք հըռչակելի.
Վա՜յ զիս որ աստ կարծիմ բարի
Յետոյ անարգ և եղկելի:
Այլ տէր գըԹած յամենայնի
Թող զոր յանցեայ քեզ ի մարմնի.

Վասն որդւոյ Աստուածածնի
Դիր զեղկելիս երանելի:
Մուծ ընդ Թուով գաւազանի
Զյուսիս ընդ լաւինն՚ի քում հաշուի.
Որ զԽահարեան Թուես ի գրի,
Քեզ ամենայն ծունր կրկնի »:

Ե. Երկրորդ Աշրէնք. և ՚ի կատարածն.

« Զարհուրիմ ի քոց փառաց տէր իմ Մովսէս
Անկանիմ առ ոտս քո ծառայապէս:
Յաւարտել հինգ գիրս ըղձք ըղձուրբ ուրէնս
Գոհանամ քեւ զԱստուծոյ բարեմտապէս,
Ներբողեան քեզ ընծայեմ աղքատապէս
Նահապետ մարգարէից՝ աստուածատես.
Զահաւոր փառան տեսեր՝ արժանապէս,
Միջնորդաւք ոչ խաւսելով՝ այլ բացերես.
Զերեսաց քոց ճառագայթ փայլակնապէս
Նշմարել ոչ ժուժէին Հրէիցն հանդէս.
Ըղբոլմր տիպ Յիսուսի պատկերապէս
Բովանդակ ի քեզ ցուցեր խորհրդապէս.
Եւ զերկրորդ աւրէնս գրեալ գատողապէս
Ըզգուշանալ պատուիրանին սիրողապէս.
Զի զաւրհնից կամ զանիծից՝ մըշակապէս
Ըզլթուշակ վարձուց առցես արդարապէս.
Յետ որոյ իսկոյն փոխեալ քո յաշխարհէս
Յերկնայնոցըն յաւելար՝ ահեղ հանդէս.
Զի այսու իբրեւ ի քնոյ զմեզ զարթուցես
Իմանալ զհանդերձեալըն ստուգապէս.
Թէ յերկրորդ գալըն Յիսուսի աստուածապէս
Փոխելոց է զմեզ ի կեանս անմահապէս.
Ընդ մարմնով՝ վարուց տալ բան՝ անխաբապէս
Եւ գործոց առնուլ վճար արժանապէս.
Անօրինաց միշտ ի խաւար գոլ բոցակէզ,
Արդարոց հանգչել ի լոյս խրախճանապէս:
Այլ ցածո՛ կանուխ զԱստուած միջնորդապէս
Որպէս յայնժամ ընդ Հրէից կարեկցապէս.
Մի՛ ջնջել զմեզ ի կենաց դպրութենէն
Զդեգերեալքս ի սուրբ դպրոցս աշխատապէս.
Եւ գրչիս զխաւարել զտառիցս հանդէս
Զընթերցողան յիմաստ ու ի գործ զաւրացուցես »:

Գիրք Յեսուայ որդւոյ Նաւեայ. և 'ի վերջին ստանաւոր բան.

« Որ ես փրկիչ զարմանագործ տէր մեր Քրիստոս,
Դրոշեցեր քեզ գըծագիր զՆաւեայն Յիսուս.
Որ եկաց յետ Մովսէսի Հրէից յոյս
Ճահաւոր քեզ աւրինակ մաքուր և կոյս.
Աքանչելեաւք դարձոյց զգետն մշտահոս,
Զարեգակն ստնակապեաց աւուրս երկուս.
Քաջութեամբ մաշեաց ի սուր զհեթանոսս,
Բաժանեաց իսրայելի վիճակս արդոյս:
Այլ դու տէր և պարգեւիչ բարեաց նորոյս
Սուրբ խաչի քո զաւրութեամբ՝ յոր բազմեալ գոս.
Հալածեա հերքեա զդժնեայն՝ մեր չարախաւս,
Զի հասցուք մեք վիճակի սրբոցն ի լոյս »:

Գիրք Դատաւորաց, յորոյ յաւարտն դարձեալ դոյզն բան ստանաւոր.

« Փրկիչ անուն և դատաւոր,
Որ Քրիստոսի են բնակաւոր,
Յեսուայ եղան լոկ տըպաւոր
Որոց կարգաւ են դատաւոր.
Զի անուանքս այս խորհըրդաւոր
Յայտնեն խորհուրդ մեզ ահաւոր.
Թէ որ փրկիչն երախտաւոր
Յետոյ գալոց է դատաւոր »:

Գիրք Հռութայ. և 'ի վերջ մատենին կը յաւելու ընդօրինակողն.

« Կինս այս Հռութ ի դստերացըն Մովաբու
Ուրացեալ ի կռոց անտի ազգի իւրոյ.
Հաւատով դիմեալ յԱստուածն Աբրահամու,
Գրեցաւ մեծ նախամամ տեառն ըստ մարմնոյ »:

Յետոյ կը յարէ. « Զներկեալս մեղաւք զՅոհաննէս, սուրբ մատենիս ստացողն, յիշեցէք աղաւթիւք 'ի տէր ով սուրբ ընթերցաւղք և լսաւղք. և տէր զձեզ յիշէ 'ի բարի »:

Գիրք Չորից Թագաւորութեանց, ուր յառաջ քան զսովորական և զծանօթ նախադրութիւն առաջին Թագաւորութեան գրոց, կայ ուրիշ նախաբանութիւն մ'ալ յաղագս բաժանելոյ զաստուածաշունչ գիրս 'ի քսան և երկուս, հետևեալ վերնագրով. «Յառաջաբան նախակարգեալ Թագաւորութեանց։ Վասն 'ի յերկուս (զոր պարտ է ընթեռնուլ 'ի Ի քսան և յերկու) գիրս առ 'ի հեբրայեցւոց զպատմութիւնսն բաժանելոյ, զի քսան և երկու նշանագրաւք վարին եբրայեցիք» … և ապա կը թուէ մի առ մի զգիրս սուրբս ըստ հեբրայական տառից յորջորջման, այսպէս.

Ա. զառաջինն անուանեն Բրեսիթ զոր մեքն Արարածք կոչեմք.

Բ. զերկրորդն Ելլեսմովթ, զոր մեք Ելս ասեմք.

Գ. զերրորդն Ուդիեկրա, զոր մեք Ղեւտական անուանեմք.

Դ. զչորրորդն Նուարեդաբբեր, զոր մեք Թիւս ասեմք.

Ե. զհինգերորդն Դաբարիս, զոր Երկրորդումն աւրինաց կոչեմք.

Զ. Յեսուեբեն, Յեսուայ որդւոյ Նաւեայ.

Է. Զոսփիմն որ է Դատաւորացն, 'ի նոյն յարեն և զՀռութ.

Ը. Սամուէլ, զոր մեք առաջին և երկրորդ Թագաւորութիւն համարիմք.

Թ. Մաղաքիմ, որ է Թագաւորութեանց. որ յերրորդումն և 'ի չորրորդումն Թագաւորութեանց կատարի.

Ժ. Եսայեայն.

ԺԱ. Երեմիային.

ԺԲ. Եզեկիելին.

ԺԳ. Երկոտասանն մարգարէից, զոր Թարէասար կոչեն.

ԺԴ. Յովբ.

ԺԵ. Դաւիթ.

ԺԶ. Առակաց, զոր նոքա Մաղաաովթ կոչեն.

ԺԷ. Եկլեսիաստէս, զոր նոքա Սեհեղեթ անուանեն.

ԺԸ. Աւրհնութիւն աւրհնութեանց, զոր նոքա Սիրասիրիմ կոչեն.

ԺԹ. Դանիէլին.

Ի. Դաբրէիովմինն, որ նշանակէ զբանս աւուր. բայց յայտնագոյնս ասիցէ ոք պատմութիւն ժամանակական, որ գիրք Մնացորդացն անուանի.

ԻԱ. Եզրին, և այն առ 'ի Յունաց և 'ի Հռովմայեցւոց յերկուս գիրս բաժանեալ է.

ԻԲ. Եսթերայն»[1]։

Այս ցուցակէն ետքը կը շարայարէ նոյն յօրինող Յառաջաբանին. «Այսպէս գումարին. միանգամայն հնոյ աւրէնսդրութեան գիրք քսաներկու ընդ ամենայն. Մովսիսի՝ հինգ. մարգարէիցն՝ ութ. սրբագրացն՝ ինն։ Բայց ոմանք և զՀռութ և զԿինովթ ընդ մարգարէսն կարգեն... Բայց արդ պարտ է գիտել յասացելոցս, զի որ արտաքոյ քան զայս գումարութիւն գիրք գտանիցին, ընդ անուանեալ յայտնութիւնսն հարկ է համարել։ Եւ Իմաստութիւն Սողոմոնի՝ զոր բազումք նորա անուանեն, և Յեսու Սիրաքայ և Յուդիթ և Տուբիա և Հովիւն չեղեն արժանի կանոնի։ Բայց զՄակաբայեցւոցն զառաջին գիրսն գտաք գրեալ եբրայեցերէն, և զերկրորդն յունարէն, որպէս անդստին 'ի խաւսիցն է նշանակել»։

Ա. Բ. Գ. Դ. Թագաւորութեանց. և յետոյ ոտանաւոր տողքս.

[1] Տես ԵՒՍԵԲԻ, Պատմութիւն Եկեղեցւոյ, Զ. ԻԵ։

« Թագաւորք տառապածանք,
Սուրբ և զգալի խաղով անձեալք…
Իբր աւրինակ տպաւորեալք
Զերկնաւորին անուանն ածեալք,
Լուսն աստուածապաշտք
Գոն ճահաւորք պատկերացեալք.
Զօրքն և խոնարհեալք՝
Մեծ հարուածովք եղեն տուժեալք,
Պահանջի ի նոցանէ
Կարծեմ բարի գոլ յանուանէ.
Ոչ խոստորեալ իսկ ի տեսանէ
Եւ ոչ պատժել իսկ ի նմանէ.
Բայց թէ չար գոլ պատահէ՝
Ըստ արժանեացն և չար կրէ,
Ցուր յոյն ժամանէ
Մարդկան փրկիչն և ազատէ »։

Եւ ապա յիշատակարան. « Զմեծ յանցանաւք սողորկեալս զՑոհաննէս որ փափաքանաւքս տոչորեալ ստացայ զսա։ Աղաչեմ յամենայն սրտէ իմմէ զամբիծ ընթերցաւղքդ և զհոգւացեալ լսաւղքդ՝ միոյ տէր ողորմայիւ յիշել զեղկելի գրիչս և զծնաւղսն իմ և զեղբարս »։

Երկու գիրք Մնացորդաց.

Երկու գիրք Եզրի.

Գիրք Նեեմեայ, զոր 'ի ստորեւս իլեցն կը կոչէ Երրորդ Եզր.

Եսթերայ գիրք.

Յուդիթ.

Տովբիթ.

Ա. Բ. Գ. Մակաբայեցւոց գիրք.

Երանելւոյն Եպիփանու եպիսկոպոսի Կիպրացւոյ յաղագս երգոց Սաղմոսարանի. « Զամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա 'ի հոգեկիր ծերոյն »։

Եպիփանու Կիպրացւոյ յաղագս Սաղմոսաց Դաւթի.

« Արդ առեալ առէ Սամուէլ զսրուակ եւղոյն, և օծ զԴաւիթ Թագաւոր »։

Սաղմոսք Դաւթի.

Առակք Սողոմոնի.

Ժողովողն.

Երգ երգոց. որ է Աւրհնութիւն աւրհնութեանց, ասացեալ Սողոմոնի արքայի Իսրայելի.

Իմաստութիւն Սողոմոնի.

Գիրք Յովբայ.

Մարգարէութիւն Եսայեայ.

Մահ Եսայեայ մարգարէի.

Երկոտասան մարգարէք։ Ի Յովէլ գնի. « Պատգամ տեառն որ եղեւ առ Յովէլ Բաթուղի Յաւելի, յաւուրս Եզեկիայ »։

Մարգարէութիւն Երեմիայ.

Թուղթ Բարուքայ.

Ողբք Երեմիայ.

Մահ Երեմիայ մարգարէի.

Մարգարէութիւն Դանիէլի.

Մարգարէութիւն Եզեկիէլի.

Մահ Եզեկիէլի մարգարէի. և 'ի վերջն յիշատակարան. « ... Ես մեղաւորս Յոհաննէս ըստ կարի զփափաքս իմ լցի յանկ ելանելովս. և այս եղեւ ներելովն Աստուծոյ. զի յանարժանէս Թերեւս արժանաւոր այս գործ եղեւ յանկեալ. և զայս ոչ առեմ վասն գեղապաճոյճ շարագրութեանցս, այլ վասն ազնիւ աւրինակիս զոր սուրբ և երանեալ վարդապետին Գէորգեա ձեռացն շարահիւսեալք էին. աղաչեմ զժառանդաւղսդ և զհանդիպաւղսդ ներեցէք սղալմանս 'ի սմա, և սիրով ուղղեցէք. և միոյ տէր ողորմի արժանի արարէք զողորմելի գրիչս Յոհ՛՛ և զծն՛՛ իմ և զեղբ՛՛ »։ Այս 'ի ստորեւս իջիցն կարմրադեղով նշանակուած. « Աւարտի սա, (որ է հին կտակարանն ամբողջ) 'ի մայիսի Ժ և 'ի Ե »։

Եւսեբի Թուղթ առ Կարպիանոս, վասն համաբարբառոյն աւետարանաց. « Եւսեբի՝ Կարպիանոսի սիրելի եղբաւր 'ի տէր ողջոյն ». սկզբնաւորութիւնն. « Ամոնի աղեքսանդրացւոյ բազում աշխատութեամբ և ճշդրտիւ փոյթ 'ի մէջ առեալ՝ զառ 'ի չորիցն եթող մեզ զաւետարանն մատթեան աւետարանին ... » : Կը յարէ ապա զսովորական ցուցակ համաձայնութեանց:

Չորք Աւետարանք. և 'ի վերջն Մարկոսի երբ անջատ և որիշ 'ի բնագրէ աւետարանին կը դնէ զհատուածն. « Յարուցեալ Յիսուս առաւաւտուն առաջին միաշաբաթուն երևեցաւ Մարիամու ». իսկ աւետարանն կ'աւարտի բանիւքս. « Եւ ոչ ումեք ինչ ասացին՝ զի երկնչէին » : Այսպէս և իրք կնոջն շնացելոյ հատուածն՝ զետեղուած է յետկոյս ամենայն աւետարանաց. և 'ի ստորեւ նոյն էջին նշանակուած է 'ի գրչէն. « Այս բանս յ'ՁԶ համարն է ». անշուշտ ըստ ցուցակի համաբարբառին:

Գիրք Գործոց Առաքելոց. յորոյ 'ի կատարածին եդեալ է դարձեալ թուական գրչութեանն ՉԿԸ. և 'ի լուսանցսն կը յաւելու մեկնիչն զնշանակութիւն բառից ինչ. ինչպէս՝ ուր կը դնէ բնագիրն « մինչեւ յորդոստայն Ապփիայ » կը մեկնաբանէ, « տանձավաճառաց ». Թերեւս 'ի յոյն բառէն ἄπιος, որ է տանձի: Ի Պրակացս առաքելոց սկսեալ կը նշանակէ թէ քանի տողս եղան (տողք στοῖχοι) և տունք և ընթերցուածք:

Թուղթ կաթուղիկեայց եկեղեցւոց.

Աղերս Եւթաղի, և յետոյ համառօտ յիշատակարան մը գրչին, ինչպէս 'ի վեր անդր:

Յայտնութիւն Յովհաննու առաքելոյն. յարելով և զյիշատակարան Թարգմանութեան Ներսիսի Լամբրոնացւոյն:

Թուղթք Պաւղոսի առաքելոյ. Յառաջաբան, յորոյ

զկնի ցանկք բովանդակութեան ընթերցուածոց, և Յառաջագիր և վկայութիւնք, և ապա չորեքտասան Թուղթք։ Յետ առ Փիլիմոն Թղթոյն հետևեալ տողերն. «Գրեցի և կարգեցի ըստիքերոյն, զգիրս Պաւղոսի առաքելոյ, յաւրինեալ և դիւրահաս ընթերցուածովք եղբարցդ մերոց. յորոց յամենեցունց չմեղադրութիւն յանդգնութեան իմոյ հայցեմ, զի աղաւթիւք որ վասն մեր լինիցին, զզիջանելն ձեր ընդ իս ընդունիցիմ»։ — «Ընդաւրինակեցաւ գիրքս այս ըստ Կեսարացւոց աւրինակաց որ կան յարկեղս գրոց սրբոյն Պամփիլեայ իւրովք ձեռաւք գրեալ»։ Թեղադրութիւն (կարմրագիր է). «Գըլխաւոր եմ և աստուածեղէն կրաւնիցն վարդապետ. եթէ ունիք զիս յանաւթ տայցես, ազնիւ աւրինակ փոխանակ ընդ իմ աղնուցուս. զի հատուցանաւղքն չարք են»։ Պատասխանի (կարմրագիր). «Գանձ ունիմ զքեզ հոգևոր բարութեանց, և ամենայն մարդկան ցանկալի յաւրինուածովք և պէսպէս զարդուք զարդարեալ. այս սակս Ճշմարտութեամբ, ոչ տաց զքեզ վայրապար ումեք յանաւթ. և ոչ դարձեալ նախանձեցայց ընդ աւգուտ ուրուք. այլ յորժամ տաց զքեզ յանաւթ սիրելեաց իմոց, ազնիւ աւրինակ քո փոխանակ առից»։

Նաւարկութիւն Պաւղոսի առաքելոյ 'ի Հռովմ. «Հարիւրապետին որ տանէր զՊաւղոս 'ի Հռովմ՝ Յուլիոս անուն էր»։

Թուղթ Կորնթացւոց առ սուրբ առաքեալն Պաւղոս, որուն կը չարայարէ և զպատասխանին Պաւղոսի «առ եղբարս Կորնթացիս»։

Այլևայլ մանր յիշատակարանք, ցրիւ 'ի զանազան տեղիս. «Զկարաւտս ողորմելոյ կատամահ 'ի մեղաց լեալս՝ զՅոհաննէս յարդար գործոց նուաղեալս՝ զսուրբ մարգարէիցս մեղսաշաղախ ստացաղըս, յիշեցէք ... ԶԿԸ»։

— « Զամենամեղս Յոհաննէս զառաջացեալս աս-տուածաշունչ տառիս աշխատանաւք և գրչութեամբ իմոյ ձեռինս, և այս՝ զի պակաս եմ յարուեստ գըր-չութեանս, այլ սիրոյն որ 'ի սա՝ զի ես ինձէն մոռա-ցայ. ոչ վասն մարմնական ինչ շահից, այլ միայն զի 'ի հանգիպաւղացդ վայելից յաղաւթս, աղաչեմ վասն սիրոյն Աստուծոյ յիշեցէք 'ի տէր Թողուլ զանեզր յանցանս իմ .:. »։

— « Զվաղնջուց 'ի մահուչափ գրաւեալ 'ի մեղս, և որ դեռ եւս 'ի նոյն շարաւահոտ բազմախղխայթ վէրս պայեկեալ նստիմ. զՅոհաննէս որ խարեալս եմ մտացս խղճիւ, որ 'ի չար ժամու անխմաստ ան-ձամբ պակաս 'ի գրչութեանն արուեստէ, վասն ստոյգ աւրինակացս ստացայ զսա առ 'ի յիշատակէ ինձ և ծնողացն իմոց և հարազատացն Սմբատայ և Վասլի, և որ զկնի մեր արժանի լինիցին ժառանգել զաստուածաշունչ տառս, յիշեցէք 'ի Տէր »։

— « Զաստուածային սիրոյ հրոյն՝ բոցակիզեալ անձինսդ, զծերացելոցդ իմաստիւք և հասակաւ, և զմանկագունիցդ զաւրեղաց յիրս և 'ի բանս՝ որ Աս-տուծոյ է հաճելի, զսուրբ գարշապարացդ՝ յամե-նայն զաւրութենէ մեղաւորս Յոհ՞ և ոչ արժանիս յիշատակի, սուրբ սիրով և հաստատ յուսով բուռն հարեալ կախիմ զդուքօք, և աղերսիւ Թաւալիմ ա-ռաջի, ներեցէք աղաչեմ. և վասն իմ նուէր տուք Աստուծոյ զաղաւթս ձեր. և մեղաց իմոց Թողու-Թիւն խնդրեցէ՛ք » . . .

— « Զկարաւտս ողորմութեան զՅոհաննէս ստա-ցաւղ աստուածաշունչ տառիս իմոյ ձեռինս աշխա-տութեամբ, յիշման 'ի բարի արժանի արարէք... Ով եղբարք, Թէ 'ի մեղաւոր գրողիս աշխատանքն՝ որ խեղաթիւր է և անարուեստ, մարդկաբար նայիք, ապա վա՛յ է զիս 'ի լեզուէդ ձեր։ Այլ ներեցէք և Տէր ձեզ »։

— «Պատուեալք յԱստուծոյ և 'ի Քրիստոս եղբարք սուրբք, որք յԻնչև իցէ պատճառս հանդիպիք սուրբ այս գրոցս, զմեղաւորս Յոհաննէս որ շատ աշխատութեամբ ստացայ զսա, յիշեցէք առ ողորմածն Աստուած»...։

Բ և Գ. Թուանիշը կրող գրչագիրք՝ չունին ոչ նըշանաւոր հնութիւն և ոչ ալ կարևոր յիշատակարանք բանասիրական կամ պատմական նկատմամբ. ուստի և հարկ մը չենք տեսներ խօսքերնիս յերկարել անոնց վրայ։

***

Դ. օրինակ, պատկերազարդ և ծաղկէնկար, մագաղաթեայ բոլորգիր ընտիր. ամբողջ հին և նոր կտակարանն. յորում և «Պատմութիւն Յովսէփայ Գեղեցկանն և Ասանեթին», այսպիսի սկզբնաւորութեամբ. «Եւ եղեւ յամին յառաջնումն, որ աւրեւթն էր ամսոյն»։

Ի սկիզբն Աստուածաշնչին. «Համառօտ գումարումն քառից յաստուածաշնչոց գրոց յումեմն յԵրեմիայէ». Յիշատակարանն. «Շնորհիւ տեառն սկըսայ և ողորմութեամբ նորին կատարեցի զայս հոգիաբուղխ և աստուածաշունչ սուրբ կտակարանս՝ յորում խանդակաթ սիրով ցանկայի և բաղձայի և տենչայի 'ի մանկութենէս 'ի վեր. և այժմ հասի փափաքանաց իմոց զոր սիրեաց անձն իմ... մանաւանդ որ ցանկով և համարագրով և ոսկեգիր այբուբենգիմդայով զարդարեցաք զսա վասն դիւրագիւտ լինելոյ բանիցս աստուածային։ Զի թէպէտ գոյր մեզ յառաջագոյն կարճառօտ ցանկեր 'ի նախնեաց մեր և 'ի տէր Դաւիթ իմաստուն քահանայէն, բայց ցիր և ցան գոլով յայլևայլ տեղիս. բայց մեք աշխատութեամբ ժողովեցաք 'ի մի տուփ իբրև զփունջ մի վար-

դից, և ըստ այբուբենից 'ի վերայ շարադրեցաք վասն այլ առաւել դիւրագիւտ լինելոյ ուսումնասիրացդ. և միւս ցանկն որ զկնի նորին արարի, առի զօրինակն 'ի լատինացւոց, նաև զգլխահամարքն և զփոքրահամարքն, և զայբուբենագիմդայքն, և զաստղանշանն, նաեւ զվկայութիւնսն համաձայնութեամբ, որ միմեանց կու համեմատին. իբրև զչարս մարգարտաց ընդ ականց պատուականաց, և գծագրեցի իմ հողանիւթ մատամբս 'ի լուսանց աստուածաշունչ մատենիս: Բայց զփոքր համարն կարմրագրով արարի, զի մի շփոթեսցին համարագիրքն մեր ըստ դրութեան նախնեացն մեր. զի մեր համարքն յառաջ կ'ընթանայն ըստ մերում ոճին, և նոցայն կ'ընթանայ ըստ իւրեանց կարգին. և թէ գլխաւոր համար' սեաւ եմք գրեալ. բայց Փ 'ի վերայ նոցա դնելով ցուցանէ թէ ֆռանգաց է գլուխն. զի նոցա աստուածաշունչն բոլոր այսպիսի համարագրովս կ'ընթանայ, որպէս որ տեղեակ և գիտակ եմք ... և զբազմաշխատ Նըւաստ Ղազարս յաղօթս ձեր մի մոռանայք. զի և մեք վասն այն աշխատ եղաք 'ի վերայ սորին զտիւ և զգիշեր ... Զի յերկիրս այս յորում մեք բնակեալ եմք, են այլևայլ ազգք և ազինք, և անհաւատ երրայեցիք բազում. զի են քաջ ուսումնասէրք, բանիբուն փիլիսոփայք, և եօթն արհեստին կատարեալ գիտողք. այլ և զբոլոր աստուածաշունչ մատեանն 'ի բերան առեալ ունին, եթէ այր նոցա և եթէ կանայք նոցա, եթէ երիտասարդք նոցա և եթէ կուսանք նոցա. զի են յոյժ ուսումնասէրք և հարցասէրք, և խորին աստուածային պատուիրանացն քննօղ. զի չունին մեծամեծ հարկապահանջութիւնս, որպէս յերկրիս մերում Հայաստանեայց է. և ոչ են ամենեքեան մարմնաւոր արհեստից պարապեալ՝ որպէս ազգս մեր. զի դոցա արուեստն է կարդալն և ուսանիլն, և միայն սմին են պարապեալք, և եթէ մեծամեծք դո-

ցա և եթէ տղայք գոյա որպէս զհնագոյն աթենա-
ցեաց հարցասէրք գոլով: Զի օրէն է յայսմ երկրի,
յորժամ լինի 'ի մէջ իւրեանց հարցափորձութիւն,
նա կու ժողովին 'ի ստադիոն տեղիսն, կամ 'ի
տաճարն յԱստուծոյ, և առարկանեն 'ի մէջ իւ-
րեանց խրթին բան մի, և հարցաքննութիւն կու առ-
նեն երկուց կողմանց օրով շաբթով և ամսով. մինչև
ամն քաջագոյն յաղթող երեւեսցի և զընդդիմակողմ-
ըն յաղթահարեսցէ աստուածային գրոց վկայու-
թեամբ ...»:

Յ'էջ 14 գրչագրին. «Գրիգորի եռամեծի, որ այ-
պէս շարահիւսեալ զհին և զնոր կտակարանս »:
«Որքան են և որք գիրք սուրբք հին և նոր կտակա-
րանք » ... յորում կ'ըսէ. « Եւ որպէս ասէ Կղէմ և
Անանիա Դամասկացի, թէ վեց գիրք այլ ընկալայք
յեկեղեցի, որ է Ընթերցուածն Յակոբայ, Կանոնք
առաքելոցն, բանք Յուստոսի, Գիրք Դիոնիսեայ Ա-
րիսպագացւոյ, Քարոզութիւն Պետրոսի առաքե-
լոյն » ...

Յ'էջն 309 յիշատակարան. « Ով հարք և եղբայրք
ընթերցողք սուրբ տառիս, և զմեղսամած և զտա-
ռանեալ Մարկոս սարկաւագն զգրողս սորին, մաղք
խաւար քարեաց ունայն մեղօք զարդար երևական »:
Կը գնէ ցանկ մը « Ի վերայ այբուբենից աստուածա-
շունչ սուրբ մատենիս, ըստ հայկական թուոց ». և
ապա միւս այլ ցանկ. « ըստ լատինացւոյ թուոց »:

Յ'էջն 631 ոտանաւոր յիշատակարան.

« Աւարտ եղեւ աստուածաշունչս այս սիրական
Հին և Նոր կտակարանքն լիական.
Թուականիս Հայոց մեծաց և աքեթեան
ՌԿԸ յաւելի յարաբարդեան,
Ի յամիսն ի յապրիլի ըստ հռոմական.
Որ վեշտասան եղեւ զատիկ մեր հայկական:
Ի յերկիրս յԸռուզաց և Էնհաստան,

Ի քաղաքս աստուածախնամ Լոռէ կոչական·
Հայրապետութեան մերոյ ազգիս արքեթական,
Տէր Մելքիսեթ կաթողիկոսն արեւելեան,
Ի յարեւմուտս տանն Սսոյ ազնուական
Տէր Յովհաննէս կաթողիկոսն աստուածաբան.
Որպէս լուսին եւ արեգակն ի յերկինս կան
Այնպէս սոքա են ի յերկիրս ի Հայաստան.
Սրբազան քահանայից որ այժմս կան,
Որ անդադար տիւ եւ գիշեր առ տէր կարդան.
Ըստեփաննոս եպիսկոպոսն Մերալեան
Եւ տէր Գասպար աւագերէցն պատուական.
Տէր Խաչատուր, տէր Զաքարիան ազնուական,
Տէր Թորոս, տէր Յովհաննէս վարպետք մանկան.
Տէր Գրիգոր կրօնաւորն վանական,
Եւ տէր Մարգարն ի հետ նըմին ընկերական.
Աստուածասէր տանուտէրացըն լոռական
Բան Գաբրիէլ եւ բան Թորոսըն երեսփոխան.
Եւ հասարակ են դատաւորք երկոտասան.
Որ արարիչն հաստատ պահէ եւ անսասան:
Ի ժամանակս սոցունց եղեւ յայս յանգական՝
Հոգիաբուխ աստուածատունկ այս բուրաստան.
Եւ իմ ձեռամբ եղէ սորա աշխատական
Եւ գնիւթն յառաջ պատրաստեցի աննիազական.
Ետու ի ձեռս Թորոս դպրի երազագրեան,
Տալով զվարձս ձեռաց նորա աւատական.
Բազում եղբարս յորդորեցի եւ ետու բան
Զի եւ նոցա ջանիւքն աւնել աւարտական,
Մինչեւ ի չորս տարին եղաք աշխատական,
Հազիւ հանաք աստուածաշունչս աւարտական.
Ետու ի ձեռս Անդրեայ դըպրին եղբայրական
Որ կազմեաց զսա ի մի ի տուփ հաւաքական.
Որոց տացէ տէր մեր Յիսուս վարձս յաւիտեան,
Զոր ինչ աշխատ եղեն նոքա երագական.
Վասն որոյ ես կրսեր ձեր ծառայական
Արտասուալից հայցեմ ի ձէնջ պաղատական,
Յաղօթս ձեր յիշել զմեզ միշտ ողբատական,
Ոչ մոռանալ յարեւանցի տեսողական.
Զիս զՂազար Բաբերթացիս Նըժտեհական,
Նախ սիրուն զծնողան իմ հանգուցական...։

*
* *

Զ. օրինակ. Աստուածաշունչ ընտիր մանր բոլորագիր մագաղաթեայ, ամբողջ. հանդերձ թղթով Կորնթացւոց առ Պաւղոս և սորա պատասխանին առ Կորնթացիս. և 'ի վերջն Հանգիստ Յովհաննու, ունելով և զգլխակարգութիւնս, ինչպէս կ'ըսէ, « Ֆռանկ աստուածաշնչի » :

Ը. օրինակ. Աստուածաշունչ ամբողջ՝ գրեալ 'ի զանազան գրչաց. « Զստացող աստուածագումար տառիս զամենըրջանիկ և զճոխացեալն ամենայն իմաստութեամբ վերանաշնորհ զքահանայն Գրիգոր... նաև զնկարակերտող սորա զաւագէպ ... ընդ նոսին և զփցուն գրիչս զԿար". (Կարապետ):

Ց'էջն 448 յիշատակարան երկայն. « ...Աճապարեալ ստանալ զսա վեհիմաստ քահանայն Աստուծոյ Գրիգոր ... և բազում աշխատութեամբ ստացաւ զսա 'ի հալալ արդեանց իւրոց յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և 'ի ժառանգութիւն զաւակի իւրոյ պատուական քահանային Եփրեմի, և 'ի Թուականութեանս Հայոց ՋՂ, 'ի յաշխարհակալութեան փոքր Շեխհասանի և հիւպատոսութեան և սպարապետութեան Հայոց Բիւրթէլին 'ի քաղաքն Սուլտանիայ. 'ի քորեպիսկոպոսութեան Սրտուի տէր Սարգսի և եպիսկոպոսութեան տէր Գրիգորի: Արդ յամի ծննդեան Փրկչին մերոյ 1354ի և 'ի Թուականութեանս Հայոց ՊԳ. և յամսեանն սեպտեմբերի ԻԵ և 'ի մարերի Է. 'ի մայրաքաղաքս Բաղտաս. 'ի յաշխարհակալ բռնաւորութեան մեծ Շեխհասանի, և 'ի հայրապետութեան ամենայն Հայոց տէր Մխիթարի և 'ի քորեպիսկոպոսութեան այսմ Նահանգի տէր Սարգսի, Եփրեմ քահանայ որդի հարազատ Գրիգոր քահանայի ստացողի գրոցս, պարգեւեաց

զգիրքս աստուածաշունչ ինքնայօժար կամօք սուրբ Նշանին Վարագայ և նորին եկեղեցւոյն՝ սուրբ մշ-տընջենաւոր և յաւիտենական ... Արդ ես նուաստ Եփրեմ քահանայ, որ ունէի զգիրքս աստուածա-շունչ 'ի հօրէ իմմէ 'ի Գրիգորէ քահանայէ, նուիրեցի և ետու զսա ուխտին Վարագայ սուրբ Նշանին, և ետու այնու դաշամբ, զի միաբանք սուրբ ուխտին և քահանայք նորա, յորժամ հանգէ գիրքս առ նոսա, զկարգ քահանայութեանն կատարեսցեն առհանգուցեալ. և արասցեն զգիշերային պաշտօնն, և ածցեն յիշ-ատակ յանուն հօր իմոյ Գրիգոր քահանայի։ Եւ զեօթն աւուր ընթերցմունքն և զպօղոսն կատարես-ցեն կարգաւ ... Այսուհետև հաստատեմ՝ զի ոչ ոք եպիսկոպոս կամ հայրապետ վանաց կամ եկեղեց-պան կամ քահանայ կամ սարկաւագ և կամ այլ որ կարասցէ հանել զգիրքս 'ի սուրբ եկեղեցւոյն Վա-րագայ սուրբ Նշանին, ոչ ծախելով և ոչ ընդ գրա-ւականս դնելով և ոչ օտարելով և ոչ գողանալով... Եւ դարձեալ պարտ է զյիշատակարանս զայս 'ի յամենայն աւագհինգշաբթի օր 'ի յատեանս եկեղե-ցւոյն 'ի լսելիս ամենեցուն ընթեռնուլ»։

Թ. օրինակ. Հին կտակարանն միայն յորում կը նշանակին և համարք ֆռանկաց։ Գրիչն յ'էջ 105. « Զմեղապարտ գրիչ Եղեկիէլ սկ. բարի մտօք յիշել 'ի տէր յերեսս անկեալ աղաչեմ զընթերցողդ »։ Իսկ յ'էջ 191.

« Մեծ դիտապետն օրբազան
Եւ քաւչապետն արհիական,
Որ զօրինակս ետ մեզ ի բան
Քրիստոս պահէ զինքն անսասան.
Հանդերձ իւրովք միաբան
Այժմ և յաւէտ և յապագայն.
Նա եւ զգրիչս արէք արժան
Բարի կամօք ի տէր յիշման »։

Օրինակ ԺԲ. Ցիշատակարանն. « Փառաւքն հաւր ամենակարողի ... աւարտումն եղեւ այսմ աստուածաշունչ հին և նոր կտակարանիս. յորժամ էր թիւն ըստ շրջագայութեան ժամանակի 'ի մարդեղութենէն Քրիստոսի ՌԳՃԼ. և 'ի թուականութեան հայկազեանս տոհմի ՁՁԱ. և 'ի հայր"ութեան տեառն Հանոսի, մեծի Հոռոմոց պապին, և 'ի պատրիարգութեան տեառն Յակոբա Հայոց Նահանգի. և յեպ"սութեան տէր Զաքարիայի սուրբ առաքելոյն Թադէոսի վերակացողի, և 'ի վարդապետութեան Իսա (Եսայեայ) րաբունապետի, որ այժմ կա 'ի Կայեձորի, և յաշխարհակալութեան Ղանպ'ամիսի, և 'ի թագաւորութեան Հայոց Լեւոնի որդոյ Աւշնի, զսա սկսեալ 'ի դեկտընբերի, աւարտեցաւ 'ի հոկտընբերի և 'ի ձեռն երկու քաջ քարտուղարի: Ես Ներսէս անուամբ վարդապետ՝ բայց գործով վերջացեալ հող և մոխիր վարդապետաց, որդի Վահրամա, յաշխարհէն Տարաւնոյ, 'ի գաւառէն Սանանոյ, 'ի վանացն Ղազարու, 'ի գեղջէն որ կոչի Կոռ. եղէ ցանկացող ուսման և ընթացայ յարևելս, 'ի գաւառն Վաուձոր, 'ի վանքն Գայլիձոր, և եօթն ամ աշխատեցայ 'ի վարժումն հին և նոր տառից սրբոյ բանին. յայնմ ժամանակի եմուտ 'ի հոգիս իմ ցանկութիւն մեծ վասն աստուածաշունչ գրոց. և ես էի աղքատ, և ոչ ունի? և ոչ փող մի, բայց միայն զՔրիստոս: Ապա ուխտ եդեալ 'ի մտի իմում ասացի թէ տա ինձ Աստուած իբր՝ նախ ես յԱստուածածնի անուն սամ գրել: Յորժամ զայս խորհուրդս 'ի միտս իմ արարի յայն դէմ եդեալ գնացի յերկիրն Ուռնոյ 'ի գեղն որ կոչի Խանակահ, առ եղբարքն իմ և ամենայն արեան մերձաւորքն խնդրել աւգնութիւն 'ի նոցանէ: Իսկ նոքա շարժեալ սիրով և լի սրտիւ ողորմութեամբ սուրբ Աստուածածնին, ետուն 'ի ծախս աստուածաշնչիս իւրաքանչիւր ըստ կարողութեան իւ-

բում մասն յիշատակի. Մլքհն ..: Իմ առեալ գնացի յաշխարհն Պարսից 'ի քաղաքն Թավրէժ յաղագս քարտիսի. և բազում ահ և աշխատանք կրեցի 'ի ճանապարհն, և յոլով նախանձ և նեղութիւն յագահ և 'ի սնապարծ քահանայից և 'ի հակառակող աշխարհականաց: Եւ անտի ողորմութեամբն Աստուծոյ յարուցեալ գնացի միւսանգամ 'ի Գայլիձորն, և կալայ միջնորդ զՅոհաննէս Մշեցին զեղբայրն իմ հոգեւոր որ առնէր միջնորդութիւն ընդ իս և ընդ երկու գրագիր, ընդ Եփրեմն և ընդ Դաւիթն որ էին կուսան քահանայք. և ապա 'ի բազում աւուրս հազիւ կարացաք կարել գրել առանց խարճի ՌՇԾ դր. բայց յետո զրկեց զիս Դաւիթն, քանզի խիստ ագահ էր և արծաթասէր. և ԳԾ դր. այլ եւ յինէն. վասն որոյ Թողցէ Աստուած զանցանցն նորա: Եւ ես յայնժամ յարեայ անտի և գնացի 'ի սուրբ առաքելն Թադէոս, առ տէր Զաքարէ արքեպիսկոպոս. և նա ետ ինձ Ն դր. և յետ բազում աւուրց դարձայ վերստին 'ի Գայլիձոր բազում նեղութեամբ, քանզի ձմեռն էր աւուրքն, և վճարեցի զմնացեալ պարտքն յաստուածաշունչ գրոցն և դարձա 'ի սուրբ Առաքեալքն և դադարեցի անդ սակաւ աւուրս. և կայր աստուածաշունչս անկազմիլ. և ես Թշուառականս կաի հիւանդ հոգով և մարմնով. ապա խնդրեցի 'ի սուրբ Աստուածածնէն, և նա զաւրացոյց զիս և յարուցեալ պնդեցի զմէջս իմ. և ուղղեալ գնացի 'ի Քռնայ առ սուրբ եպիսկոպոսն տէր Բարդողիմոս, և առ վարդապետքն Հայոց առ նմա կաին յայնժամ. և Մարուգէ վարդապետն չէր անդ որ կազմող էր գրոց, այլ գնացեալ էր 'ի Ճահուկ. և 'ի ներգործութենէ չարին ես հիւանդացա մերձ 'ի մահ զաւուրս քառասուն և հինգ. և Քրիստոս յարոյց զիս և գնացի 'ի Ճահուկ առ Մարուգէ վարդապետն. և նա յանձն առեալ կազմեաց

զաւուրս քառասուն և ետ ցիս․ և իմ ուրախացեալ դէմ եդի գնալ յերկիրն Տարաւնոյ, և ամենևին ոչ ունի խարձ ճանապարհին․ յայնժամ ծախեցի զփիլոն և զհողաթափն վասն խարձի։ Ապա զայս գիտասջիք, եղբարք, որ գնալս և գալս զոր տեսացի 'ի քաղում տեղի էր 'ի մէջ բարբարոս ազգաց … որ բըռնացեալ ունին զաշխարհս Հայոց վասն մեղաց մերոց․ և յամենայն տեղիս օգնեց ինձ սուրբ Աստուածածին, և անվնաս մնացի․ և զամենայն Թերի զոր ունէի՝ ելից և կատարեաց, բայց խարձն որ եղև այս աստուածաշունչ գրոցս ընդ ամենայն միահամուռ երկու հազար երկու հարիւր դրամ է»։

Յ'էջն 499. «Զստացող սուրբ գրոցս զՆերսէս պատուական վարդապետ և զանպիտան ծրօղս զԴաւիթ յիշել 'ի տէր Յիսուս աղաչեմ։ ԹՐՍ»։

Յ'էջն 717. «Ի Թուին Հայոց տոմարի ՊԻ կոչի 'ի յազգմանէ չարին վասն ծովացեալ մեղաց մերոց և 'ի հարկապահանջութենէ այլասեռից աւերեցաւ երկիրս Տարօնոյ, նաև սուրբ ուխտս Ղազարու, զոր և կրօնաւորք սուրբ Առաքելոցս տարաշխարհիկ լինէին անցանելով յայլ գաւառս․ և կացեալ սուրբ տունս աստուածաշունչ 'ի պահեստի 'ի բազում աւուրս եղծեաւ այլ ևս բազում սուրբ գրեանք և սպասուք․ և եղև յոյժ արտմութիւն վանացս։ Զոր յետ աւուրս ինչ յորում էր Թվ՝ ՊԻԷ, ոմն յազնուական տոհմէ, բարեմիտ և սրբասէր կրօնաւոր Պօղոս անուն, եղբօրորդի գոլով երջանիկ րաբունւոյն Յոհաննիսի փոխեցելոյն առ Քրիստոս, որ ստացեալ ունէր զայս աստուածաշունչ։ Վասն որոյ Պօղոս ևս առաւել հօգ յանձին կալեալ վերստին ետ նորոգել զգիրքս զայս բազում աշխատութեամբ անձին և ընչիւք իւրովք վասն վայելման ինքեան և յիշատակ Յոհ″ վարդապետին և Պօղոս աբեղայի որ եղև նպաստ կրկին նորոգմանս և եղբօր

իւրոյ Յօհաննէս սարկաւագի հանգուցելոյն առ Քրիստոս ... Նաեւ զանարժան հօղիկս զՅով՛էս անպիտան գրիչ որ զսակաւ գիրս ցանցառ գրով ձաբռնեալ գրեցի և կազմեցի. ոչ յարուեստ ինչ վստահանալով, այլ ըստ հարկեաց և յօժարութեան կամացն Պօղոսի. վասն որոյ չմեղադրել խնդրեմ և յիշել 'ի տէր միով տէր ողորմայիւ» : «Վարդապետ Ներսէս, յիշեա յաղօթս զԹորոս ծաղկող եղբայրն իմ Սիար և զհայրն իմ Սարգիս քահ". և զմայրն իմ Մարիամ 'ի քաղաքէն Մշոյ» :

Պատմական կարևորութիւն ունի նաև հետևեալն. «... Յիշեսջիք 'ի մաքրափայլ աղօթս ձեր զառաջնորդ սուրբ ուխտիս զտէր Պօղոս եպիսկոպոս. զի 'ի ժամանակիս յայսմիկ՝ որ էր Թուիս Հայոց ՊՁԸ, էր սա առաջնորդ սուրբ ուխտիս Առաքելոց. և 'ի սորին աւուրս չքահանայ ոմն անուն Վարդան եղև գործօղն նման Յուդայի. և մատնեաց զամենայն սրբութիւնք անօրինաց, զխաչ և զսկի. և բազում խաւարեած ազգիս Հայոց ... Զի յայսմ ամի տիեզերալոյս և քաջ բարբունապետն Թովմա փախստական եղեալ էր յազգէն Նեստողաց 'ի գաւառէն Արճիշոյ. և եկեալ հանգիպեցաւ 'ի սուրբ ուխտն Առաքելալք՝ երկու վարդապետօք, և բազում գրոց աշակերտօք. և ետես զպատուհաս ցասման. զի ... ամիրայն Մարաց որ 'ի Մուշ նստէր, յաւուր միում բազում զօրօք եկն 'ի վանքն, և սուտ քահանայն Վարդան ընդ նոսա, և ըմբռնեցին զքահանայքն. զոմն տանջեցին և զոմն ահարեկ առնէին. մտին յեկեղեցին, և հանին բազում խաչ և սկի և սրբոց նշխարք և տարան 'ի քաղաքն: Եւ սուրբ վարդապետքն և աշակերտքն ... զգիշերն ամենայն արթուն կացեալ խնդրեցին յԱստուծոյ զազատութիւն սրբութեանցն: Եւ 'ի վաղիւն եկեալ երէց ոմն Մելքիսեդ անուն և եբեր մասն ինչ 'ի խաչերոյն, և բազում խաչ և սկի կորեաւ» :

***

Նօտրագոյն տառացուած գրչագիր մ՚ալ կայ առ մեզ որքագիր տառից, ընտիր գրչութեամբ և պատուական հնութեամբ, յորում մեզի ծանօթ ուրիշ յաստուածաշունչ գրոց տարբեր նորութեան մը կը հանդիպինք. զի ուր այլք ընդհանրապէս 'ի գլուխ իւրաքանչիւր գրոց սովոր են կարգել զնախադրութիւնս, աստ մէջ ամէն նախադրութիւնք 'ի սկզբան դրուած են միահետ և միայար. աւելցընելով նաև զմահ չորս գլխաւոր մարգարէից՝ Եսայեայ, Եզեկիէլի, Դանիէլի և Երեմիայ, բաց 'ի փոքր կամ 'ի կրտսեր կոչեցեալ մարգարէից, որոնց մահուան համառօտ աւանդութիւնք ամփոփուած են 'ի ստորևս իջից իւրեանց մարգարէութեան։

Թերի Յակոբի 'ի վերջոյ, բուն ընդարձակ յիշատակարանն պակասի, որով անծանօթ կը մնայ նաև ստոյգ ժամանակ գրչութեանն. բայց բազմաթիւ են համառօտքն, գրեթէ 'ի վերջ ամենայն գրոց, և երբեմն նաև մեծապէս հետաքննականք, երբ Լամբրոնացւոյն Ներսեսի թէպէտ և քանի մը տող՝ այլ մեզի համար մեծապէս սիրելի նոր երկոց կը հանդիպինք։

Քաղենք այդ յիշատակարաններէն։ Ի վերջ Ծննդոց կամ Արարածոց. « Թորոսի պատուական քահանայի ստացողի գրոյս, յիշատակ լիցի յնթերցողաց. ընդ նմին և տառապեալ ոգւոյ Ստեփ" և ծնողաց մերոց »։ Ասոր նման ուրիշ մանր յիշատակք դոյզն տարբերութեամբք բառից՝ ուրիշ տեղուանք։ Իսկ 'ի վախճան գրոցն Երկրորդմանն օրինաց. « Փառք քեզ Քրիստոս աստուած մեր վասն ամենայնի, որ զաւրացուցեր զտառապեալ քո Թորոս 'ի մէջ ծանրութեան մեղաց հոգոց զայս ձեռահիւս տառս տալ

քեզ պատարագ յինքնավաստակ երկոց ։ Ո՛վ Տէր տուող աւրհնաց և լուսացանող զհաճեալս ընդ աւրէնս քո և զգերեալս յաւրէնս մեղաց՝ ապրեցոյ 'ի մարմնոյ աստի շնորհաւք, և հաստոյ յիմանալեացդ քաղաքակցութիւն ողորմութեամբ » ։ — Գրոց Յիսուսայ Նաւեայ. « Ո՛վ սուրբ Յեսու և Եղէազար և Փենեէս, բարեխաւսեցէք առ Քրիստոս Աստուած, վասն Թորոսի բազմամեղիս, և ծնաւղաց իմոց և եղբարց և քեռ, և այնոցիկ որ յիշեն զմեզ և մեղաց թողութիւն խնդրեն յԱստուծոյ » ... Դատաւորաց. « Թորոսի Նուաստ ռամացաւղի զաստուածային մատեանս հոգի՝ ընթերցաւղացդ աղաւթից յանձն եղիցի, զի արժանասցուք զընդհանելի աւրհնակացս ճշմարտութիւն վաելել պաշտաւնեայքս ընդ պաշտեցեալն 'ի մէնջ Քրիստոս Յիսուս տէրն և թագաւորն ... » ։ — Չորրորդ թագաւորութեանց. « ... Յիշատակագրութիւն նախնեաց դատաւորաց և թագաւորաց Իսրայելի, որք նստան 'ի գլուխ ժողովըրդեանն 'ի ժառանգելն նոցա զՊաղեստին ։ Արդ գրեցաւ 'ի ձեռն բազմամեղի Թորոսի և Բարսղի. 'ի յիշատակ ինձ և ծնաւղաց իմոց՝ և եղբարց իմոց և քեռ իմոյ ։ Արդ որք ընթերցմամբ մխիթարիք 'ի սուրբ պատուիրանէս լուսաւորեսցէ Աստուած զհոգիս ձեր. և 'ի շնորհ աղաւթից ձեր հանգուսցէ զվերոյգրեալքս 'ի սմա ընդ վերին մշակացն ըստ մեծի ողորմութեան իւրոյ յերկնից խոստացեալ արքայութիւնն, և նմա փառք » ։ — Առաջին Մնացորդաց. « Զտարժանեալս և պատնիշապատեալս յարտաքին թշնամեաց և 'ի ներքին դրժողաց զԹորոս և զծնաւղսըն իմ և զեղբարսն և զքեռ յիշեցէք 'ի բարի վայելողք 'ի ըզքաւսանս նեղութեանս 'ի խոշորագիծ ձեռահիւս մատեանս սուրբ » ։

Ի գիրս Նեեմեայ, 'ի ստորեւս իջիցն. « Տէր Ներսիսի երեցս է կրկնեալ այս ազգահամար յառաջին

գլուխն, յերկրորդն և յերրորդս. վասն որոյ և ձանձրացեալ՝ զԹիւքդ կարճեցի. զնոյն և ես գծաւղըս. մի մեղ դներ ընթերցաւղ աղաչեմք »: — Եզրի երկրորդ և Նեեմեայ. « Ով տէր աստուած հասարակաց յոյս ամենեցուն որ յուսան 'ի քեզ, ողորմեա քո մեղաւոր ծառայիցս Թորոսի և ծնաւղաց իմոց և եղբարց և քեռ. և մանրեղբաւր Վասլի և Ստեփաննոսի քահանայի և ծնաւղաց իւրոց վասն զի զգիծ ուսուցանէ, և որ զմեզ յիշեն »: — Եսթերի. « Տէր Ներսիսի Լամբրոնեցւոյն.

« Հայեաց ի հրաշս որ պատմեցան,
Ով ընթերցող ի յԵսթերայն.
Զի ի յուսոյն ունայն չդարձան,
Որք աղերսիւ յԱստուած յեցան.
Իսկ մեր միջնորդ խաղաղութեան,
Յիսուս Քրիստոս Հաւր ծոցոյն բան,
Լիցուք ի նոյն յոյսն ապաստան,
Եւս ընդունել շնորհ աւգնութեան:
Որոյ նուէր զկեանս մարմնական,
Տուեալ ի վարս ճգնութեան,
Առնումք Թագ արքայական,
Ի հանգերձեալ կեանս անվախճան »:

— Տովբիթայ. (Թուի Լամբրոնեցւոյն). « Որ երեկ և այսաւր և յամենայն ժամ նոյն ես տէր մեր Յիսուս Քրիստոս, և ոչ ամաչեցուցանես զյուսացեալսն 'ի քեզ. զբուծեալքս արեամբ քո քաղցու և խրատեալք 'ի նժդեհութիւն կենցաղոյս փորձանաւքս. ժողովեալ 'ի նաւահանգիստ երկնային խորանացդ արասցես մասնակից լուսոյ վիճակի ժառանգութեան սրբոց քոց. ով անարգամեծար տէր և փառաւորեալ 'ի շնորհս քո, զի և մեք լի բերան գոհասցուք զքեն 'ի յանվախճան յաւիտեանսդ »: — Մակաբայեցւոց երրորդ գրոց. « Ով տէր հասարակաց յոյս՝ որ զամենայնիս որ յիշեցին զքեզ յիւրաքան-

չիւր նեղութիւնս ոչ դարձուցեր ամաչեցեալս, այլ արարեր առ նոսին զողորմութեան քո զառատութիւն, 'ի պատկառանս թշնամեաց իւրեանց և 'ի լի բերան գոհութիւն փրկելոյն, այց արա և մեզ որ կամք 'ի ներքոյ պատուհասի մեղաց մերոց. Թորոսի և ծնաւղաց մերոց և եղբարց և քեռ և ուսուցչի մերոյ Թորոսի ...»: — Սաղմոսաց Դաւթի. «Ո՛վ սուրբ Դաւիթ, բարեխաւսեա առ տէր Յիսուս Քրիստոս աստուած վասն բազմամեղիս Թորոսի և ծնողաց իմոց և եղբարց ... և Մարիամ տիկնի և Վասալի»...: — Եզեկիելի. «Աւրհնութիւն քեզ գովութեամբ և փառք երկրպագութեամբ տէր իմ Յիսուս Քրիստոս, որ խաւսեցար 'ի ձեռս գրոց սըրբոց քոց մարգարէիցս զխորհուրդս քո հրաշալիս: Զոր և եկեալ 'ի լրումն ժամանակաց արարեր զկամս Հաւր քո, և լցուցեր զգրեալս յաւրէնսս Մովսէսի և 'ի մարգարէսս և 'ի սաղմոսս վասն քո. չարչարեալ վասն մերոյ փրկութեան և յարուցեալ մեռեր 'ի փառս քո, և շնորհիւ աւետեաց սուրբ Հոգւոյդ կոչեցեր առ քեզ զեկեղեցի քո սուրբ ատաշխարութեամբ և յանուն քո մեղաց քաւութեամբ յամենայն ազգաց, 'ի ձեռն առաքելոց քոց, յորոյ արգանդէ ծնեալ, և կրկնաբուղխ ստեամբքն սնեալ, յանարգութենէ յառաջ կոչեցեալ, և քո աւծութեամբ շնորհի արժանի եղեալ տառապեալս Թորոս վերջինս 'ի բարեաց, և վերջինս և անբարի աւուրցս ծնունդ, վասն առաւել գտանութեանց աւուրցս ընտրեցի զլռութեամբ նստել 'ի տան և սպասել անապառ քո ողորմութեանդ որ բաժին իմ ես յամենայն էից, և նուիրեցի քեզ որ անկարաւտդ ես զայս ձեռահիւս լռութեամբ կրող զնախաձառութիւն սրբոց քոց մարգարէիցն. ընկա՛լ, ընկա՛լ. ո՛վ որ քաղցր է քեզ մարդկան տուրեւառութիւն. և տուր զաւրութիւն չարամանել և յեռուլ 'ի սա զլրումն ելից աւետեաց

ասցա 'ի Նոր քո աւետարանս, որ նորոգութիւնդ ես մեզ, տէր մեր և աստուած » ... : — Ի վերջ Կաթուղիկեայ թղթոց և Աղերսին Եզրայի. « Ո՛վ սուրբ առաքեալք Պետրոս և Պաւղոս և ամենայն խումբք սուրբ առաքելոցդ բարեխաւսեցէք առ տէր Յիսուս Քրիստոս աստուած մեր, վասն Գէորգեա վարդապետի որ զԳործքս գրեաց. և վասն բազմամեղիս Թորոսի և ծնաւղաց իմոց և զարմից. և այնոցիկ որ յիշեն զմեզ 'ի մեղաց թողութիւն » :

Մեր այս ցուցակին մէջ, — ինչպէս կը տեսնէ ընթերցողն, — միայն այն գրչագիրքն յիշատակեցինք՝ որոնք թուականաւ աւելի հին, ընտրելագոյն և հաւատարիմք են յընթերցուածս, և կարևորք իրենց յիշատակարաններով. զորս ջանացինք համառօտել 'ի գիտութիւն բանասիրաց :

***

Երուսաղեմի Մատենադարանին մէջ գտնուածներէն՝ մէջ բերենք հետևեալքն, որ մեզի ծանօթ են.

1.° Բոլորագիր և ըստ մասին պատկերազարդ. գրեալ 'ի խնդրոյ առաջնորդին Վարագայ Մարտիրոսի վարդապետի ... 'ի թուականիս Հայոց ՌԿԴ, 'ի քաղաքին Մոկաց, 'ի թաղն որ Դաշտ կոչի ընդ հովանեաւ սրբոյն Յակոբայ Մծբնայ հայրապետի :

2.° Բոլորագիր և պաճուճազարդ, գրեալ 'ի ՌՀԳ թուականիս Հայոց 'ի խնդրոյ Մոկացի Կարապետ վարդապետի 'ի Հիզան քաղաքի 'ի դուռն եօթն տաճարաց, ձեռամբ Կիրակոս քահանայի :

3.° Բոլորագիր, ընտիր պատկերօք և նկարուք, ոսկեգիր գլխատառիւք, և 'ի լուսանցս խիտ և հոծ մանրանկար պատկերօք և համակ ոսկեգրօշմ. գրեալ 'ի Պոլիս 'ի ՌՃԺ թուականի Հայոց, 'ի խնդրոյ Մարտիրոս վարդապետի Ղրիմեցւոյ :

4.° Բոլորգիր՝ ազնիւ պատկերօք զարդարեալ, գրեալ 'ի ՌՀԱ և աւարտեալ 'ի ՌՁԱ յընթացս իբր տասն ամաց, 'ի խնդրոյ Բարսեղ վարդապետի Արծրունւոյ 'ի Մարմանտ գեղջէ:

5.° Փոքրագիր, մանր բոլորագիր՝ 'ի յԱմիթ քաղաքի 'ի Թուականին Հայոց ՌՁԴ:

Ուրիշ տեղուանք յիշատակուածներն: Բոլորգիր, 'ի Կասուց անապատի « գրեալ 'ի Թուին Հայոց ՉԼԴ (= 1285) 'ի Թագաւորութեան Հայոց Լեւոնի որդւոյ Հեթմոյ որդւոյ Ռուբինեանց 'ի յաստուածապահ դղեակս Անարզաբա »:

Ի Ս. Գէորգ Եւդոկիոյ. « Գրեալ ձեռամբ Ստեփաննոս Գոյներ երիցանց 'ի ՉԽԶ (= 1297) 'ի Թագաւորութեան Հայոց Սմպատայ և 'ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի »:

Ի Պրուսա Բիւթանացւոց « ... Ի ժամանակս աստուածապաշտ արքային Լեւոնի որդւոյ Հեթմոյ, և 'ի նորուն աստուածասէր անդրանկի Հեթմոյ տէրութեան աստուածապահ բերդիս Լամբրունի, և 'ի կաթողիկոսութեան աստուածահաճոյ կրկին ծերութեամբ պատուեալ տեառն Յակոբայ ՉԼԴ Թուականիս Հայոց գրեցաւ տառս յաստուածապահ որբարանս մեծի ուխտիս Սկեւռայի, ընդ շքով Թեւոց աստուածապահ սուրբ Նշանիս և սրբոց Փրկչիս յառաջնորդութեան տեառն Մինասայ ...

— « Ըստ բանի սրբոյ ուրուեմն, որում բաղձայ ոք՝ նմին և հասանել ջանայ. վասն զի բուռն է քան ըզմահ սէր, զոր ջուրք բազումք ոչ կարեն շիջուցանել, մանաւանդ յորժամ յԱստուած իցէ տարփումն: Այսպիսեաւ երանելի ըղձիւք առ ստացումն աստուածաշունչ տառիցս վառեալ սրբասնունդ պատանին Խաչատուր, թելադրութեամբ Գէորգեայ վարդապետի առ որում կայր 'ի վարժս կրթութեան բանի և գրոց՝ ուսումնասէր դպիրն Խաչատուր, ինք-

նագիր երկաւք ստացաւ զգիրս Ծննդոցն, զԴատաւորացն և զԹագաւորութեանց։ Եւ վասն ոչ բերելոյ տկար մարմնոյն զերկս գրութեանն, աւժանդակեաց սնուցիչ Նորին և քեռի աստուածապաշտ քահանայն Աստուածատուր. և սակս աղքատութեան կարծեաց՝ նախ զնոր կտակարանս ետ գրել իբրև զյոյժ հարկաւորս. և դարձեալ յԱստուած խրախուսեալք իմով ձեռամբ Ստեփաննոս Գոյներ երիցանց փցուն գրչի՝ ստացան զաստուածային գիրս սրբոց մարգարէիցն և զսրբագրաց ոմանց, յ'ՉԼԷ Թուականիս»...։

***

Իսկ Նոր կտակարանաց գրչագիրքը, մանաւանդ սուրբ աւետարաններուն, ինչպէս յառաջ ալ ակնարկեցինք, շատ աւելի բազմաթիւք են և հնագոյնք։ Ասոր յայտնի պատճառը՝ իրենց մեծագոյն կարեւորութեան և յաճախակի գործածութեան մէջ է։ Միայն Էջմիածնի Մատենադարանին մէջ հարիւր քառասունուերկու է անոնց թիւը ըստ տպագիր ցուցակին. առ մեզ գրեթէ հարիւրիւ չափ, նոյնպէս և յԵրուսաղէմ, և յայլ վանորայս և յեկեղեցիս։

Երկասիրութեանս առաջին մասին մէջ [1] համառօտիւ յիշատակած ենք ամենէն աւելի պատկառելի հնութիւն ունեցողներէն մէկ քանին։ Անոնցմէ զատ մէջ բերենք քանի մը գրչութիւնք տասներորդ, մետասաներորդ, երկոտասաներորդ և երեքտասան դարուց։

Տասներորդ դարու գրչագիրներ. 1.° Երկաթագիր, 'ի սուրբ Ցօվհան վանաց Սպերոյ փոխադրեալ 'ի Կարին. «Ի ՆԼԵ (= 986) յունուարի Ա Հայոց՝ ես Եղիա քահանայս ստացայ զսուրբ աւետարանս»։

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ. Բ. էջ. 61։

2.° Մագաղաթեայ երկաթագիր՝ հաւանականաբար տասներորդ դարու մէջ գրուած. կը պահուի 'ի Բրիտանական մուզէոնի 'ի Լոնտոն։ Ի վերջ Մատթէի. «Զտէր Եղիսէ զհրամանողս սուրբ աւետարանիս, որք ընթեռնոյք՝ յաղաւթս յիշեսջիք»։

3.° Երկաթագիր, 'ի Մատենադարանի Անտոնեան հարց. «Սարգիս անարժան քահանայ գրեցի զսուրբ աւետարանս ՆԺԵ (= 960) թուականիս թագաւորելոյ 'ի վերայ մեր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»։

4.° Երկաթագիր մագաղաթեայ 'ի Սեւան. «...Արդ ես ծառայ Քրիստոսի և աղախին անպիտան Շամայս դուստր Մամիկոնին, որ ոչ դուստր ունէի և ոչ որդի. յիշեցի զիմ մահին աւրն և զահեղ դատաստանն Քրիստոսի, և արարի ինձ յիշատակարան և գնեցի 'ի հալալ արդեանց իմոց զսուրբ և զհոգեւորս և զաստուածային տառս զսուրբ զաւետարանս, և տուի Բարձրաքաղիս սուրբ ուխտին և սքանչելագործ սուրբ Գրիգորին, 'ի ձեռն սուրբ և աստուածանման հայրապետին տէր Վահանայ, և սուրբ և ընտրեալ միաբանիցն. յառաջնորդութեան սուրբ ուխտին տէր Վահանայ»։ (Վահան Նստաւ յաթոռ կաթողիկոսութեան յամի 966)։

Մետասաներորդ դարու. 1.° Երկաթագիր մագաղաթեայ. «...Կիրակոս ... անարժան գրիչ համարձակեցա և գրեցի զսուրբ աւետարանս զայս 'ի թուականութեանս Հայոց ՆԾԶ (= 1011) 'ի գաւառին Մակեդոնիոյ 'ի քաղաքին որ կոչի Անտանապաւլիս, 'ի թագաւորութեան Վասլին որ ունի զաթոռն Կոստանդնուպոլսի ... Եւ ես Յովհաննէս Պռոտոսպաթար թագաւորի և պռոքսիմոս դուկիս Թոթորակնիս Ճորոս, որ գրել ետու զսուրբ զաւետարանս իմ հոգեւոյս յիշատակ» ...։

2.° Երկաթագիր մագաղաթեայ. «...Թուական սուրբ աւետարանիս ՆԾԴ» (= 1005)։

3.° Երկաթագիր մագաղաթեայ. « Ի թուականութեանս Հայոց ՆՁԷ (= 1038) գրեցաւ աւետարանս ձեռամբ Թորոսի նուաստ և տրուփ կրաւնաւորիս »։

4.° Երկաթագիր. « ...Գրեցաւ չորեքվտակեան տառս այս ձեռամբ Յուսկան մեղաւոր և անարժան քահանայի և յետին գրչի 'ի կաթողիկոսութեան տեառն Պետրոսի Հայոց վերադիտողի, 'ի թուականութեան Հայոց ՆՂԳ » (= 1048)։

5.° Երկաթագիր. « Զարգափայլեալ ճառագայթ կգերապայծառ և անհաս իմաստութիւն անեղ և հրաշատեսիկ եղականայս տարրերութեամբ իմացեալ տեսանեմք 'ի ձեռն սուրբ առաքելոցս .. Ի ՇԺԳ (= 1064) թուականութեանս Հայոց գրեցաւ ցանկալի և սուրբ աւետարանս, 'ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի, և յինքնակալութեան Յունաց թագաւորին Տուկծի, 'ի վանքս կոչեցեալ Նուխրատնտառեա ընդ հովանեաւ սուրբ Սիոնի. յառաջնորդութեան հաւր Թովմասու ... »։

6.° ...Գրեցաւ աստուածային և կենարար աւետարանս 'ի թուիս Հայոց 'ի ՈԼ (= 1081) 'ի տիեզերահռչակ վանս Հոռոմոսի ընդ հովանեաւ սուրբ Յովհաննիսի, 'ի հայրապետութեան տեառն Բարսղի և յառաջնորդութեան ուխտիս Խաչատրոյ »։

7.° Մագաղաթեայ երկաթագիր. « ...Ի թուականութեան Հայոց ՇԽԸ (= 1099) գրեցաւ սուրբ աւետարանս ձեռամբ Ահարոնի ...'ի հայրապետութեան տեառն Գրիգորի և յինքնակալութեան Հռոմայեցոյն աղէքսիս արքական՝ որ են փառանգս. յորժամ շարժեցան և եղեն անթիւ բազմութեանց 'ի վերին խնամոց աղդմամբ ամենակալին Աստուծոյ ... »։

8.° Մագաղաթեայ երկաթագիր անթուական. « Ի թուականութեանս Հայոց 'ի ՁՃԻ (= 1070) ... գր-

նեցի զաւետարանս 'ի քաղաքէն Մանազկերտոյ՝ 'ի քահանայէն Ստեփաննոս 'ի գեւղս որ անուն կոչի Խաղխուղք. և անուն եկեղեցւոյն սուրբ Սիոն և սուրբ Գէորգ » :

9.° (յԵրուսաղէմ 'ի սուրբ Յակոբ). « Զստացաւղ սուրբ աւետարանիս զԳագիկ Շահանշահ որդի Աբասայ և զԳորանդուխտ Թագուհի և զՄարեմ յիշեսջիք 'ի Քրիստոս Յիսուս » :

Երկոտասաներորդ դարու. 1.° Երկաթագիր ('ի Նոր Նախիջեւան). « ... Յամի վեցհարիւրերորդի քառասներորդի երկրորդի (= 1193) հայկազեան տումարի 'ի հայրապետութեան տեառն Գրիգորի կաթողիկոսի Հայոց, և յիշխանութեան բարեպաշտ իշխանին Լեւոնի ... գրեցաւ սա յանապատիս որ կոչի Պաւղոսական, մերձ առ ամուր դղեկիս Կատինոյ » :

2.° (Ի Բրիտանական մուզէոնի). « Ի Թուիս Հայոց ՈԼԲ (= 1183) 'ի հայրապետութեան Գրիգորի Հայոց վերադիտողի » ... :

3.° Երկաթագիր արծաթապատ 'ի Լէմպէրկ. « ... Ի Թուականիս Հայոց ՈԽԷ (= 1198-9) յընծայեալ Թագաւորութեան Հայոց Լեւոնի քրիստոսասիրի որ յՌուբինեանց, և 'ի հայրապետութեան տեառն Գրիգորի կաթողիկոսի գրեցաւ յերկու հըռչակաւոր ուխտս՝ որ առընթեր ամուր դղեկաց, 'ի սորոտ լերինս Տաւրոսի, և 'ի գլուխ մայրաքաղաքին Տարսոնի. սկզբնաւորեալ 'ի մեծանուն անապատս Մըլլիճի. ընդ հովանեաւ սրբոյ Աստուածածնին, որ է դամբարան իշխողաց ամուր դղեկի Պապառաւնի, և կատարեալ առընթեր անառիկ ամրոցի Լամբրաւնի, յաւթեվան հռչակաւոր ուխտ Սկեւռա, առաջի սրբոյ սքանչելագործ նշանի և փրկչին տաճարի » : ...

4.° (յԵւդոկիա). « ... Եւ ապա 'ի հանդարտ ընծայաբերից յառաջ բերէր (Գր. Տղայ) զաստուա-

ծեան մատեանս. ընթեռնոյր առ ըստ առբէ. և յաւելոյր 'ի Թիւ կարգաւորաց եկեղեցւոյ վարդապետաց, երաժշտաց և քահանայից. կազմէր և անաւթս պատուականս 'ի սպաս պիտոյից սրբոյ աթոռոյս. յորոց և անաւթս այս պատուական աստուածավայելուչ մատեան, որ իմով ձեռամբ գծեալ Գրիգորի մեղապարտի և անկատար միացեալ. զորոյ զպակասութիւնն լցեալ իմ հրամանաւ կաթողիկոսի Հայոց Գրիգորի Տղայի, 'ի Թուականիս ՈԻԳ (= 1174):

«Ձերկրորդ ստացիչ սուրբ աւետարանիս զՊարոն Կոստանդին զԹագաւորահայրն Հայոցս զարմից Նորընծայ Թագաւորին Հեթմոյ. որ այն ինչ ամաց մետասանից ընկալեալ զԹագաւորութիւն 'ի Բարձրելոյն, և 'ի Թուականութեանս մերոյս աղին ՈՁԵ ստացաւ զսա Պարոն Կոստանդին Թագաւորահայրն և իշխեցաւողն ամենայն Հայոցս զարմից. և ընձեռեաց Եկեղեցւոյս իւրոյ սուրբ Փրկչին՝ զոր ինքն շինեաց բաղում ծախիւք 'ի յիշատակ իւր և աստուածապարգև շառաւիղացն իւրոց»...:

Ե.° Աւետարան գրեալ 'ի ՈՀԹ (1130). «Ի հայրապետութեան տէր Գրիգորի գրեցաւ սուրբ աւետարանս երկիրս Գեղամայ 'ի սուրբ ուխտս որ կոչի Հայրոյ Ոհան 'ի դառն և նեղ ժամանակի»:

Երեքտասաներորդ դարու. 1.° Աւետարան երկաթագիր մագաղաթեայ, որ կը պահուի 'ի սուրբ Լուսաւորիչ Նոր Նախիջևանի. «Շնորհիւ ամենախնամ ողորմութեան Աստուծոյ յանկ ելեալ աւարտեցաւ սուրբ մատեանս աստուածային հրամանաւ և ծախիւք սուրբ և երջանիկ կաթողիկոսին Հայոց տեառն Կոստանդեայ: Քանզի տեսեալ զլաւ և զընտիր նիւթ մագաղաթիս՝ հրամայեալ իմում նուաստութեան լնուլ զփափագ նորա. և որպէս զբովանդակ ինչս իւր և զկեանս նուիրեալ էր տեառն, նոյնպէս և զայս

նիւթ՝ թէպէտ և փոքրագոյն ինչ էր, 'ի գիրս աւետարանի. յաղագս կատարեալ սիրոյն զոր ունէր առ փրկիչն մեր Քրիստոս և առ սուրբ հրամանս նորա, ետ զսա գրել և վայելչացուցեալ յոսկւոյ սրբոյ և պատուելի երանգոց, սիրելի առնել զնա ներքոյ և արտաքոյ։ Եւ ես ըստ կարի իմում լցի զփափագ նորա. և աւարտեալ զսա 'ի սուրբ և յաշխարհամուտ աթոռս 'ի Հռոմկլայ... 'ի թուականութեանս Հայոց ՈՂԸ (=1249) 'ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ բարեպաշտի, և որդւոց նորա բարի շառաւիղաց Լեւոնի և Թորոսի, և սրբահոգի թագուհւոյ իւրոյ Զապելի»... ։

2.° Մագաղաթեայ (Ի Նոր Նախիջեւան). «... Ի թվ. Հայոց ՋԻԳ (=1274) և 'ի հայրապետութեան տեառն Յակովբայ, և 'ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, գրեցաւ իմով ձեռամբ Կոստանդեայ քահանայի, սուրբ աւետարանս 'ի յղորդ և յընտիր աւրինակէ»։

3.° Մագաղաթեայ (յէջմիածին). «Երջանիկ արանցդ բանասիրաց և աստուածասիրաց պաղատիմ հողս դատապարտ ծառայակիցս Յոհ" եպ" արքայեղբայր ստացողս սուրբ աւետարանիս և կիսոյ սորին գրող»։

4.° Մագաղաթեայ (յէջմիածին). «...Գրեցաւ սա 'ի թուականիս Հայոց ՋԻԱ (=1272), 'ի հայրապետութեան տեառն Յակովբայ և 'ի թագաւորութեան Հայոց Լեւոնի բարեպաշտ արքայի»։

5.° «... Ի թուիս ՋԻԳ (=1274) գրեցաւ ձեռամբ Թորոսի սարկաւագի՝ 'ի սուրբ ուխտս Մեծքար. 'ի հայրապետութեան տեառն Յակոբայ և 'ի թագ" Լեւոնի բարեպաշտի. յորում ամի բազում երկպառակութիւն եղեւ 'ի սատանայէ 'ի զաւրս Հայոց. ուստի ոմանք ապստամբեցան 'ի թագ" չար խորհրդովք, որք և չարաւ սատակեցան. և մեք մաղ-

Թեմք հաստատուն մեալ Թագաւորութեան 'ի փառս Աստուծոյ » :

6.° Աւետարան Ճոխաթու վանաց. « Ի Թուիս ՈՂԹ (=1254) 'ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեայ և 'ի Թագաւորութեան Հեթմոյ որդւոյ Կոստանդեայ, և 'ի կաթողիկոսութեան տեառն (անունը ջնջուած) հայրապետին Ասորւոց յոյժ ծերի և աստուածասիրի և բարի համբաւի, գրեցաւ սուրբ աւետարանս Մատթէոսի և այլ Մարկոսի, Ղուկասու և Յովհաննու՝ սակաւ սակաւ, 'ի խնդրոյ սրբանեալ և պատուական հայրապետին վանացն որ կոչի Ճոխաթ, յոյժ հռչակաւոր և բազում զարդարանօք պայծառացեալ... » :

7.° « Ի Թուականութեանս Հայոց ՈՀԱ (=1222) 'ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ և 'ի Թագաւորութեան Փիլիպպոսի Նորընծայ արքայի, որ յայսմ ամի պսակեցաւ և ընկալաւ զաթոռ Թագաւորութեան տանս Հայոց, գրեցաւ սուրբ և կենսակիր աւետարանս ձեռամբ Յովհաննիսի բազմամեղի 'ի քաղաքն Սիս, ընդ հովանեաւ սուրբ տաճարիս որ յանուն սրբուհւոյն Մարինէի » :

8.° Մագաղաթեայ ('ի Բրիտանական մուզէոնի). « Գրեցաւ սա և աւարտեցաւ ձեռամբ մեղապարտ Խաչենեցի Վարդան աբեղայի 'ի ՈՋԸ Թուաբերութեան հայկազեան տումարիս, 'ի տիեզերական մայրաքաղաքն Հռոմ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցն Պետրոսի ւ Պաւղոսի, և քրիստոսեան սուրբ պատկերին զոր Դաստառակ ասի. 'ի հանգստարանիս Հայոց, 'ի դրան սրբոյ մաւրս լուսոյ Սանթա Մարէ 'ի միջ ·միեղէն եղբայրութեանս, որք վասն սիրոյն Քրիստոսի և սրբոց Առաքելոց, և վասն յուսոյն արքայութեան՝ յանձին ունին զկամաւոր աղքատութիւն: Որոյ է առաջնորդ տանս և եղբարցս՝ Սարգիս Մարմաշինեցին »... :

9.° « ... Ցամի վեցհարիւրերորդի ութսներորդի երկրորդի (= 1233) Հայոց տոհմիս տումարի գրեցաւ անուշահամ և աստուածախաւս կենաց կտակս, որ է աւետարանութիւն տեառն մերոյ և փրկչին Յէսուսի Քրիստոսի, ձեռամբ Յակոբայ սուտանուն կրաւնաւորի և անարհեստի գրչի ... յաշխարհիս Կիլիկեցւոց, 'ի նահանգիս Տարսոնի, առ ստորոտով լերինն Տաւրոսի, յանմատոյց գղեակս Լամբրուն, 'ի փոքրիկ ագարակիս որ Ցովանի կոչի. վայրաքնակ լենելով լինձ գրչիս ըստ նախնեացն ձայնի թէ ուտարք և պանդուխտք եմք յերկրի: Ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, և 'ի թագաւորութեան քրիստոսապսակ և բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ »:

10.° « ... Գրեցաւ սուրբ աւետարանս Քրիստոսի 'ի թուիս Հայոց ՉԳ (= 1254). 'ի մեծ և յանուանի և յակնադիտակ և 'ի հռչակաւոր քաղաքն Հռոմ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի, 'ի խորանին սուրբ Պետրոսի: Ով սուրբ եղբարք որք հանդիպիք այսմ աստուածային քնարի, որ յերեսս անկեալ աղաչեմ յիշեսջիք զիս և զծնողսըն իմ և զեղբարս. զՄաթէոս որ աւգնական եղեւ 'ի նիւթ սորին. նաեւ զՅակովբ և զՄակառն և զՍտեփաննոս և զՂազար յիշեսջիք սրտի մտաւք » ... :

11.° « ... Գրեցաւ սուրբ աւետարանս 'ի թուիս Հայոց 'ի ՈԾԲ (= 1203) 'ի գաւառիս Կամխայ, մերձ 'ի գեաւղս Սիմա, 'ի յանապատս որ կոչի Եղիվանք, ընդ հովանեաւ սուրբ Կարապետիս և սրբոյ Աստուածածնին, 'ի վայելումն Մովսիսի և Յովհաննիսի որ ստացան զսա »:

12.° « ... Աւարտեալ սա 'ի թուիս Հայոց ՉԻԵ (= 1276) ... 'ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդի Զապէլ թագուհւոյ, դստեր Լեւոն թագաւորի, և 'ի թագաւորութեան տեառն Ստեփաննո-

սի։ Եւ մեր ընդ հովանեաւ լեալ Ընծայեաց սուրբ Աստուածածնիս՝ ի գաւառիս Վասպուրականիս» ...։

13.° « ... *Գրեցաւ սուրբ աւետարանս ՝ի Թուիս* ՈԾԲ (= 1203) *՝ի գաւառիս Հայոց Նիկոյպաւլիս, որ և Ախշար յորջորջի և մականուն Մելիսոյ պետ. ՝ի քաղաքիս որ կոչի Խաւմ ընդ հովանեաւ սրբոյն Ստեփաննոսի»* ... ։

14.° *Աւետարան.* « ... *Յանկ եղեալ աւարտեցաւ լուսայեղծ և փրկագործ սուրբ աւետարանս ՝ի Թուին* ՉԵ (= 1256) *՝ի դաւառին Կիլիկեցւոց, ՝ի Թագաւորութեանս Հայոց Հեթմոյ աստուածասիրի և բարեպաշտի. և ՝ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ, ձեռամբ Յոհաննեսի յոգնամեղի. ՝ի խնդրոյ աստուածասէր և բարի պատանւոյն Սիր Լեւոնի, որ է որդի պարոն Լիկոսի եղբաւր Թագաւորին Հայոց Հեթմոյ»* ... ։

15.° « ... *Գրեցաւ սա ՝ի նշանաւոր ժամանակի ... ՝ի Թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ, և յիշխանութեան որդւոյ իւրոյ Լեւոնի, այն ինչ նորընծայ ՝ի պարոնութիւն. և ՝ի հայրապետութեան Յակոբայ, յորում էր Թիւ տոմարին* ՉԺԸ (= 1269)։ *Այլ ՝ի սոյն ամի եղեւ սկսեալ աստուածախաւս այս մատեան, ՝ի մեծանուն եղբայրանոցն Մաշկաւոր կոչեցեալ առ դուռն սուրբ Կարապետի. և աւարտեցաւ ՝ի գերահռչակ ուխտս Անդրիասանց մերձ յանառիկ դղեակն Բարձր անուն կոչեալ, յառաջնորդութեան տեառն Սիմէոնի, և այլ միաբան եղբայրութեանս. ՝ի դուռն մաւրս Սիոնի և կենսակիր և աստուածընկալ սուրբ նշանիս»* ... ։

16.° « ... *Եղեւ կատարումն կտակիս, մանաւանդ Թէ քրիստոսաձիր մատենիս, ՝ի ժամանակս վերջին յորում քննեալ գտաք ՝ի հանդիպման ամիս լինել յելիցն Ադամայ ՝ի դրախտէն մինչեւ առ մեզ՝ հազարոց վեցից և չորից հարիւրից երեսուն յաւելեալ*

ամաւք· իսկ 'ի ծագմանէ Բանին Աստուծոյ, հազարի միոյ և երկուց հարիւրից· երեսուն և երկուս յաւելեալ ամաւք (= 1230-2)· 'ի հոյակապ և 'ի հռչակաւոր քաղաքս Թէոդպոլիս, ընդ հովանեաւ սրբոյ Յարութեանս »... ։

17.° « Ի Թուաբերութեանս Հայոց ՉԽԶ (= 1297) 'ի Թագաւորութեան Կիլիկեցւոց նահանգիս Սմպատայ, և 'ի դիտապետութեան Հայոց տեառն Գրիգորի, 'ի մեծ ժողովարանս Սկեւռայ, ընդ հովանեաւ սուրբ Փրկչի և մաւր իւրոյ Աստուածածնի և կենսունակ սուրբ Նշանի մերձ յանմատոյց դղեակս Լամբրունի » ։

18.° (Ի Սեբաստիա). « ... Այս երանելի Սմպատս որ ատեաց զաշխարհ և սիրեաց զՔրիստոս և սիրեցաւ 'ի նմանէ, որ ատեաց զքաղաք, զգեաւղ, և զագարակ, և սիրեաց զեկեղեցի և զաղաւթս և զանապատս, և եթող զմարմնաւոր Թագաւորն և զիշխանսըն, և սիրեաց զերկնաւոր Թագաւորն և զաւրութիւնս երկնից· և եթող զգեղեցկազարդ և զվայելչազուարթ եղբարս իւր զԱսպետ և զԿոստանդին, և փափաքեաց յաւիտենական կենացն... մեծ յոյս ունէր զաւետարանս, և ետ 'ի մեզ 'ի նուաստ ծառայս Աստուծոյ 'ի Յակոբ, որ զորգէլ և զպակասանքն լնուլ, և զպատկերս աւետարանչացն նկարէլ և կազմէլ· և նա ոչ ժամանեաց, այլ փոխեցաւ առ փափաքելին իւր Քրիստոս 'ի Թուին ՈԿԵ ... (= 1216) » ։

19.° (Ի Բրիտանական մուս· Թիւ գրչ· 18549)· « Գրեցաւ 'ի Թուիս Հայոց ՉԻԹ (= 1280) 'ի խաւթըն հարիւր քսան և ինն 'ի մայրաքաղաքս Սիս ընդ հովանեաւ սուրբ Հոգւոյն, որ յայսմ ամի վերստին նորոգեցաւ պատուական քարամբք բերեալ 'ի Ճարտարաց, ձեռամբ Ստեփանոս Վահկայեցւոյ և ծախիւք և հրամանաւ Սոսթենէս րաբունոյ, որ էր

վարժ և կիրթ յամենայն գիրս աստուածային՝ հնոցն և նորոցս և արտաքին փիլիսոփայիցն գեր 'ի վերոյ. որ և 'ի ժամանակիս մեր և 'ի Թագ. Լեւոնի և 'ի հայրապետութեան Յակոբայ » ... ։

20.° « Յանկացող եղեալ այսմ լուսաւոր ական և մեծագին մարգարտի և գանձի աստուածայնոյ, երկու հարազատ եղբարքս Թադէոս և Հայրապետոս, տուաք զսա մեծաւ յուսով 'ի մեր արդար վաստակոց և 'ի յիշատակ բարերարաց մեզ և կտակ անջնջելի առ Աստուծոյ. տուաք գրել և նկարել Իգնատիոս գրչի ոսկեով և երանգերանգ խառնուածով զարդարեալ. 'ի վանքս որ կոչի Հաւուց Թառ, ընդ հովանեաւ սուրբ կաթուղիկէիս և մեծահռչակ սուրբ Նշանիս Ամենափրկիչ անուն կոչեցեալ, յառաջնորդութեան սուրբ ուխտիս հեզի և ամենաբարւոյ Պաւղոս վարդապետի, և այլ սուրբ և Ճգնազգեաց համակամ եղբարց, որոց ողորմեսցի Քրիստոս Աստուած. ամէն։ Ի տէրութեան տեղւոյս Իւանէի և 'ի կաթողիկոսութեան Հայոց տեառն Յովհաննէսի։ ... Եւ գրեցաւ 'ի Թուիս Հայոց ՈԿԳ, (= 1214) ձեռամբ Իգնատիոս մեղաւորի » ... ։

21.° (Յովհաննու Արքայեղբօր 'ի Մոնաքոյ Պաւարիոյ). « Քրիստոս Աստուած ...: ողորմեաց Սիր Աւշնին հոգւոյն Պայլոնց որ ստացաւ զսուրբ աւետարանս Քրիստոսի 'ի մասն հոգւոյ իւրոյ. և 'ի յիշատակ իւր և ծնաւղաց իւրոց և որդեկաց իւրոց ... մեղաց թողութիւն հայցեցէք Աստուծոյ Սիր Աւշնին. վասն զի հանգուցեալ կոչումն սորա 'ի վերուստ 'ի յԵգիպտոս 'ի գալն մեծ խանին Խազանին. և իւր ուղիղ յետմնացքն գնեցին զսուրբ աւետարանս Քրիստոսի 'ի յիր հոգւոյ մասնէն 'ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և բնաւ զարմից իւրոց ... Արդ եղեւ տուրեւառութիւն սուրբ աւետարանիս 'ի մեծ թվիս ՉԽԱ (= 1278) և 'ի թագաւորութեան

Լեւոնի որդւոյ Թորոսի և 'ի կրաւնաւորութեան Յոհաննիսի, և 'ի հայրապետութեան Գրիգորի դիտապետի »... :

22.° « ... Յանգ ելեալ աւարտեցաւ աստուածախաւս մատեան կենարարին մերոյ տեառն և Աստուծոյ, 'ի լաւ և ընտիր աւրինակէ, յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա ընդ հովանեաւ սրբոյն Գրիգորի և սրբոյ Նշանի Վանկոյ, և այլ բազմահաւաք սրբոցս որ պաշտին աստ. 'ի Թուականութեանս Հայոց ՈՂԳ (= 1244) 'ի յառաջնորդութեան երջանիկ հովվապետին տեառն Կոստանդեայ, և 'ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսապսակ թագաւորի »... :

23.° « ... Ի Թվականութեանս Հայոց ՉԼԲ (= 1283) գրեցաւ տիեզերաքարոզ և գերահռչակ սուրբ աւետարանս ձեռամբ անարհեստ և անարժանի Յոհաննէս երիցու, որ ապաւինեալ 'ի ներողութիւնն Աստուծոյ և 'ի բարերարութիւն նորին՝ իշխեցի մերձենալ 'ի հրակէզս և 'ի բոցաձաճանչ փայլուածս, որ պատմէ զանքնինս, զխորս խորոցն Աստուծոյ »...:

24.° « ... Հասոյց զանարժանս և զմեղաւորս 'ի վերջս գրոյս սուրբ աւետարանիս, 'ի Թվիս Հայոց ՉԿԲ, յամսեանն 'ի սեպտեմբերի ութ, 'ի թագաւորութեան Հայոց Աւշինի, և 'ի կաթողիկոսութեան տեառն Կոստընդի »... :

25.° « ... ՈՁԷ (= 1238) գրեցաւ, ձեռամբ անիմաստ գրչի Գրիգորիսի յանապատիս Անդուլ կոչեցեալ 'ի ժամանակիս յորում բարեպաշտ թագաւորն Հեթում և աստուածասէր թագուհին Զապէլ անուանեցին զսա իւրեանց Հովանոց ... » :

26.° « ... Շնորհիւ տեառն սկսեալ և ողորմութեամբ նորին յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աստուածային երկրպագելի և համբուրելի սուրբ աւետարանս յամի ՉԺ և Է երորդի (= 1267) Թուա-

քերութեանս Հայկազեան ամարի, յաստուածա-պահ դղեակս Հռոմկլայ ընդ հովանեաւ սուրբ տա-ճարապետիս սուրբ Փրկչին մերոյ և սուրբ Աստուա-ծածնին և սուրբ Լուսաւորչին, հրամանաւ և ծա-խիւք երջանիկ հայրապետին Հայոց տեառն Կոստան-դեայ որ զաստուածահաճոյ վարուց իւրոց և բարի անուան համեմատ ունէր զպատմութիւն» ... ։

27.° « ... Յանգ ելեալ աւարտեցաւ մատեանս աս-տուածախաւս աստուածատունկ երկրպագելի և պաշտելի սուրբ աւետարանս յեւթն հարիւր և տա-սներորդի (= 1262) ամի թուաբերութեանս Հայոց յաշխարհամուտ աթոռս Հռոմկլա ընդ հովանեաւ աստուածաբնակ տաճարացս որ յանուն սուրբ Փրկչին և սրբոյ Աստուածածնին և սուրբ Լուսաւոր-չին մերոյ և այլոց բազմահաւաք սրբոց։ Ի ժամա-նակս աստուածասէր և բարեպաշտ արքային Հեթ-մոյ և 'ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ կաթողիկոսի որ սրբազան վարուք իւրովք առ հա-սարակ զարմացուցանէր զբազումս ... Ուստի և եղ-բաւրորդին իւր Թորոս քահանայ 'ի նմանէ ուսեալ՝ լինէր գրասէր և աստուածասէր. զմտաւ ածեալ թէ ամենայն որ ինչ յերկրէ ընծայեալ նիւթքն ընդ նոյն կործանել ունին, և որ միայն յաւիտեան՝ բան տեառն է։ Վասն այնորիկ եռափափագ սիրով ստանայր մա-տեանս աստուածաշունչս 'ի հին և 'ի նոր կտակա-րան, և զամենայն գոյս իւր և զարարս գոդջիր եթէ ջանայր դնել 'ի վերայ նոցա և այլ եւս զորդուց սրբոյ եկեղեցւոյ. վասն զի յոյժ տաւնասէր էր այրն և պայծառացուցիչ եկեղեցական կարգաց. նմին իրի ստանայր կրկին անգամ զմատեան սրբոյ աւետարա-նիս յիմմէ անարժանութենէ Թորոսէ Ռաւսլին կո-չեցելոյ ... Վասն որոյ աղաչեմ զձեզ, ով աստուածա-սէրք, որք հանդիպիք սմա և որք ժառանգէք զսա, յիշել աղաւթիւք 'ի Տէր զարժանաւորսն ամենայն

բարեաց յիշատակի զբարեպաշտ արքայն Հեթում և զորբահոգի Թագուհին իւր Զապել դուստր Լեւոնի արքայի, և Աստուծով զորդիս նոցա զպարոն Լեւոն և զպարոն Թորոս և զամենայն նախնիս իւրեանց որք և անուանին Ռուբինեանք։ Յիշել աղաչեմ և զԹագաւորահայրն պարոն Կոստ՛նդին ուստերաւք և դստերաւք և ամենայն զարմիւք։ Յիշեսջիք և զերջանիկ հայրապետն Հայոց տէր Կոստանդին և զհայր իւր Վահրամ և զմայր իւր Շուշիկ և զեղբարսն իւր զԳորգ և զԳրիգոր, և զպարկեշտուհի քորն իւր Շուշանիկ և Վահենի...»։

***

Մեր թերեւս քիչ մը յերկարեալ՝ բայց բանասիրական տեսակէտով հետաքննական ցուցակին՝ նպատակն էր ցուցընել սրբագիր բանասիրութեան հետամուտ եղողին՝ որ ոչ յԷջմիածին, ոչ յԵրուսաղէմ, ոչ առ մեզ և ոչ մեզի ծանօթ ազգային գրչագրաց ուրիշ հաւաքմանց մէջ՝ չկան երևելի հնութիւն ունեցող աստուածաշունչ գրոց օրինակք, հաւասար՝ կամ դէթ ժամանակաւ մերձաւոր յոյն, ասորի ու նաև լատին գրչագրաց։ Որչափ ցաւալի, բայց զարմանալի չէ այս՝ տեղեկաց քաղաքական անցից մեր տարաբաղդիկ և բազմապատիկ յարձակմանց և արշաւանաց նպատակ և նշաւակ հայրենեաց։ Մեզմէ գրեթէ երեքհարիւր տարի յառաջ՝ Ազարիա կաթուղիկոս Սսոյ, տեսնելով զնուազութիւն օրինակաց աստուածաշունչ գրոց 'ի հայաստան աշխարհի, Թերեւս քիչ մը չափազանցութեամբ, կը գրէր առ Գրիգոր ԺԳ քահանայապետ Հռովմայ. «... Կուղրկենք այս գրովս զՅովհաննէս վարդապետն և եպիսկոպոս ... Աստուածաշունչ գրքով մի Հայոց. վասն զի քո Սրբութիւնդ հրամայեցէ որ պատմուի

'ի պէտս ամենայն ազգիս Հայոց. վասն զի յամենայն ազգս Հայոց՝ որ է շատ և բազում՝ ճորով թէ գտնուի քան աստուածաշունչ ընդ ամէնն. և կու նըստի գինն 200 կամ 300 Ֆ՛՛ըի մէկն, և չգտնուիր. և յոյժ պիտանի է վարդապետաց և հայրապետաց և քահանայից»։ Այնչափ աւելի իրաւամբք կը փութայր 'ի դարմանն, որ բաց 'ի յիշեալ պատճառաց՝ նաև գրութեան դժուարութիւնք և ծախք օր ըստ օրէ մեծագոյն եւս կ'ըլլային ազգին վրայ ծանրացող աղետից ու անոնց բնական հետևանք աղքատութեան համար։

Ը. ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ Ս. ԳՐՈՑ

ԿԱՐԳ ԵՒ ԴԱՍԱՒՈՐՈՒԹԻՒՆ

Այս նկատմամբ քիչ և համառօտ է մեր ըսելիքը։ Աստուածաշունչ գրոց մատենական դասակարգութիւնը՝ ընդհանրապէս ժամանակագրական-պատմական է՝ թէ յեբրայական և 'ի քաղդէացի բնագրին և թէ 'ի յոյն Թարգմանութեան Եօթանասնից։ Մեր Թարգմանութիւնն ալ այս վերջնոյս վրայ եղած ըլլալով, այդ բնական կարգը պահուած է 'ի նմա, առանց գնելու խտիր ընդ նախականոն և ընդ երկրորդական կոչեցեալսն, և այնպէս գրչագրաց 'ի գրչագիրս փոխանցուելով հասած են առ մեզ։ Անշուշտ և առ նախնիս մեր, որպէս առ այլ ազգս քրիստոնէական հնութեան, յուզուած են խնդիրք և տարակոյսք՝ նախականոն և ոչ նոյնպիսի գրոց ընտրութեան և ընդունելութեան յեկեղեցւոջ. և ազգային-եկեղեցական պատմութենէ գիտենք թէ ինչուան

ազգային ժողովոյ մը մէջ 'ի Պարտաւ՝ սահմանուած և վճռուած է անոնց թիւը։ Այսպիսի խնդիրք՝ մեր գրուածքիս նպատակէն դուրս են, որ զբանասիրականն եւեթ ունի տեսակէտ։

Հետաքննելին այն է որ աստուածաշունչ տառից բովանդակութեան մէջ, 'ի ցուցակս գրոց՝ յորոց օրինակ մը մէջ բերինք, կան այնպիսի մասունք որ նոյն սուրբ մատենին հետ երկրորդական վերաբերութիւն ունին։ Այս գրութեանց ներքին և մատենագրական արժէք կը բռնադատեն զմեզ համառօտիւ, — երկասիրութեանս տանելուն չափ, — խօսիլ վրանին, 'ի հմտութիւն ազգային և օտար բանասիրաց։

Նախ այն Նախադրութեանց վրայ որ 'ի գլուխ ամէն մատենից աստուածաշունչ տառից հնոյ կտակարանին կը գտնուին ընտիր և իմաստուն յօրինուածով և շարագրութեան գեղեցիկ ոճով. հետազօտելով նախ թէ արդեօք սկզբնագի՞րք են առ մեզ, եթէ թարգմանութիւնք յօտար լեզուաց։ Երկրորդ, ունի՞ն արդեօք զայն հնութիւն, ինչ որ սուրբ Գրոց թարգմանութեան կու տան ստուգահաւատ աւանդութիւնք և պատմութիւն։

Այս Նախադրութեանց ու անոնցմէ ետքը անմիջապէս գրուած ցանկերուն յունական սկզբնագիրը դեռ գտնուած չէ։ Ոմանք Եւսեբեայ Կեսարացւոյ կ'ընծայեն զայնոսիկ. բայց անհաւանական կը թուի այս ենթադրութիւն, որովհետև անոնցմէ միքանիին մէջ կը յիշատակուի նա ինքն Եւսեբի, և 'ի Քրոնիկոն գրոց նորա կամ 'ի ժամանակականացն վըկայութիւնք մէջ կը բերուին։ Այսպէս, օրինակ իմն, 'ի Նախադրութեան գրոցն Եսթերայ, « Ժամանակ իրացն Եսթերայ ... ոմանց առ Երկայնաձեռն Արտաշիսիւ թուեցաւ լինել. այլ ես ոչ առնում յանձն՝ ասէ Եւսեբի » ։ Դարձեալ 'ի Նախադրութեան գրոցն Յուդթայ. « Ասէ Եւսեբի 'ի Քրոնիկոնին՝

երբեւ 'ի տըւչութենէ ղայս ինչ » ։ Ի Նախագրութեան առաջին Մակաբայեցւոց. « Ի միջոցս յայս 'ի Ցովսեպայ և յԱփրիկանեայ առեալ Եւսեբի զանուանս քահանայապետացն՝ որ տիրէին ժողովըրդեանն, նշանակէ 'ի կանոնս ժամանակաց » ։ Արըբոյն Աթանասի գրուածոց մէջ կը յիշատակուին աստուածաշունչ գրոց Նախագրութիւնք կամ յառաջաբան տեղեկութիւնք յօրինեալք 'ի նմանէ, սակայն չեն 'ի կարգի հարազատ երկասիրութեանց սուրբ հայրապետին, և չունին նմանութիւն առ մեզ գըտնուածներուն հետ ։ Ուստի հաւանականաբար կըրնանք կարծել թէ 'ի մերոց յօրինուած ըլլան, և կամ նմանողութեամբ յոյն լեզուով շարադրուած նման գրուածի մը՝ որ կամ իսպառ անհետացած է, և կամ դեռ յայտնուած չէ ։ Յօրինման և շարադրութեան ոճն թուին հաւատարմացընել թէ բուն ազգային ըլլան [1] ։

***

Բայց ոչ նոյնպէս և նոր կտակարանի գրոց Նախագրութիւնք. վասն զի 'ի գլուխ չորից աւետարանագրաց դրուած Նախագրութիւնք՝ թարգմանուած են 'ի յունականէ. և յոմանց կ'ընծայուին արդէն մեր ընթերցողաց ծանօթ Պամփիւլեայ վկայի, իսկ յայլոց Կեսարացւոյն Եւսեբեայ. համաբարբառքն ալ՝ կամ համեմատութիւնք չորից աւետարանաց ընդմիմեանս՝ Ամմոնի Աղեքսանդրացւոյ, զորս յետոյ յընտրելագոյն կարգ վերածեց նա ինքն Եւսեբի ։

[1] Մեզմէ շատ յառաջ ըսած է Գեր. Սոմալեան. Ristretto degli argomenti di ciascun libro e di ciascuno capitolo della Bibbia. Opera maestrevolmente composta e tradotta nell'idioma armeno; quantunque non si conosca fino ad ora l'autore. *(Quadro delle Opere anticamente tradotte in armeno)*.

Առաքելական Պրակաց կամ Գործոց և իրենց անունըկրող Թղթոց նախադրութիւնքն ալ Եւթաղի ընծայուած են, որուն ժամանակը ոչ յոյժ հեռի է 'ի Թարգմանութենէ սուրբ Գրոց 'ի հայ լեզու։

Խօսինք նախ Եւթաղի վրայ։

Իր անձին վրայ 'ի գրչագիրս մեր հետևեալ տեղեկութեանց կը հանդիպինք. « Արկադիոս և Ոնորիոս, որդիք Թէոդոսի մեծի, ամս քսան և չորս (թագաւորեցին)։ Ի սորա երկրորդ ամին եղև Եւթաղ երանելի Աղեքսանդրացի, որ հրաշազան յօրինուածովք զսուրբ զառաքելոցն և զկաթուղիկեայց զեւթանացունց թղթոցն զառաջաբանն և զմանաւորսն և զընթերցուածսն կարգեաց, սակս հերձուածոցն որ էին յայնմ ժամանակի. Կաղարբոսի և Կարպոկրատեայ, Կաթարոսի և Եկղարոսի, որք սոսկ մարդ ասէին զՔրիստոս. և զհին կտակարանսն ոչ ընդունէին, և զվկայութիւնսն որ վասն Քրիստոսի խօսէին »։ Այսպէս յիշատակուած կը գտնենք 'ի Կայսերաց կոչեցեալ գիրս։

Ուրիշ տեղ մ'ալ. « Եւթաղ գրէ առ Ճգնաւոր ոմն Աթանաս անուն, որ խնդրէր 'ի նմանէ զցանկ առաքելոցն, ընդդէմ եղծանողաց զսուրբ գիրս։ Ոչ այն է՝ որ զցանկ Գործոցն խնդրեաց. այլ այլ ոմն թագաւորազն »։ Միւս այլ յիշատակագիր. « Յաւուրս Արկադեայ և Ոնորեայ սուրբն Եւթաղի Աղեքսանդրացի արար զցանկ առաքելոյս 'ի խնդրոյ մեծի հաւրն Թէոփիլոսի. նաև զԳործոցս և զկաթուղիկեից, 'ի խնդրոյ թագաւորազն կրաւնաւորին Աթանասի համահասակի. յաղագս հերձուածոյն Կղեօբոսի և Կարպոկրատեայ, որք զվկայութիւն մարգարէիցն որ վասն Քրիստոսի հանել եղծանէին 'ի Նոր կտակարանացս »։ Ուրիշ գրչագիր մ'ալ կ'ազդէ. « Ա՛յլ է այս՝ և այլ այն որ զԳործքն է խնդրել »։ Յայտնի է 'ի վախճան սուրբ Գրոց իր անունը կրող

Աղերսը, որ ծանօթ է նաև արևմտեայց. և հրատարակուած առ Մինեի (Dictionnaire Diplomatique) և 'ի գիրսն Zaccagni, Vetera monumenta Collectio).

Քրիստոնէութեան առաջին դարերու մէջ՝ սուրբ Գրոց վրայ եղած մեկնաբանական երկասիրութեանց գլխաւոր նպատակ եղած են Աւետարանք. Վասն զի հրէութեան, հեթանոսական կրօնից ու նոյն իսկ անդրանիկ քրիստոնէութեան մէջ երևցած հերձուածոց դէմ՝ հարկ էր զանոնք պաշտպանել, ծանօթացընել և պահպանել։ Տատիանոս, Ամմոնիոս ու Եւսեբի՝ եղած են մեզի ծանօթ իմաստուն մեկնիչք որ իրենց ջանից և ուսման գլխաւոր առարկայ ըրին զաւետարանն ու անոր պաշտպանութիւնն։ Յետ Եւսեբեայ՝ համեմատաբար քիչ աշխատանք մնացած էր կատարուելիք այդ սուրբ և նուիրական գրոց վրայ. առ առաւելն՝ մարթ էր կատարելագործել, աւելի պարզութիւն տալ իր կանոնական գրութեանն և ոչ ինչ այլ աւելի։ Եւ այնպէս ալ եղաւ։

Աւետարաններէն ետքը՝ կարգը առաքելական Պրակաց և Թղթոց կու գար։ Նոր կտակարանաց այս մասին վրայ էական և գլխաւոր աշխատանքը՝ հինգերորդ դարու մէջ, Եւթաղի կը պատկանի։ Իր վարուց վրայ այսչափ միայն գիտենք որ սարկաւագ էր, ու յԵգիպտոս՝ հաւանականաբար յԱղեքսանդրիա ապրեցաւ. Թէ եպիսկոպոսական աստիճանի ալ բարձրացած ըլլայ, ինչպէս ոմանք կարծեցին, պատմական ստուգութիւն չունի։ Եւթաղի երկասիրութիւնը երկուքի կը բաժնուի. յորոց մին է այն գըլխակարգութիւնք կամ բաժանմունք՝ որ իր անուամբ Եւթաղեան կը կոչուին. և երկրորդն՝ տողից չափը կամ տողաչափութիւնն (stichometrie), ստիքիրոն կամ տունք չափով արարեալ ինչպէս կը Թարգմանեն զայն. նախնիք մեր։ Առաջինն ուրիշ բան չէր, բայց

եթէ ըստ աւետարանականացն՝ նմանօրինակ բաժանմանց վերածել նաև առաքելական Գրակքն ու Թուղթերը, քիչ տարբերութեամբ անոնցմէ. և են նախ՝ տիտղոսաց կամ ինչպէս ինքն Եւթաղ կը կոչէ՝ գլխոց դասաւորութիւնն կամ յօրինուածութիւնը, աւելի երկարօրէն յառաքելական Գործս և 'ի Թուղթըս՝ քան զորս ենն յաւետարանս, և Սկիզբն գլխոց աւետարանին Մարկոսի... կ'արձանագրուին ըստ ձեռագրաց: Եւթաղի գլխակարգութիւնք ոչ միայն անոնց նման համառօտք չեն՝ այլ մերթ մէկէն աւելի ստորաբաժանումն ալ ունին:

Ոմանց թուեցաւ թէ Եւթաղ օգուտ քաղած ըլլայ իրմէ յառաջընթաց եղող ուրիշի մը նման աշխատասիրութենէն. բայց իր խօսքերը, որուն զուգընթաց կ'երևնան նաև իրաց հաւաստիք, ասոր հակառակ վկայութիւնը կու տան. «Զի ոչ ոք յայնցանէ, կ'ըսէ, որ աստուածեղէն բանին եղեն պատգամաւորք մինչև ցայսօր գիտէի թէ վասն գրոցս այսոցիկ փոյթ յանձին կալեալ եցոյց զկերպարանս աշխատութեան. քանզի ոչ ինչ այնպէս յանդուգն և ժպիրհ էի, եթէ զայլոյ ջան վաստակոց յիս առեալ անխնայ թշնամանէի տկարութեամբ՝ սակաւ գիտութեանս մերոյ զընթերցուածոցն ընտրութիւն»:

Եւթաղի երկասիրութեանն երկրորդ մասն՝ աւելի կարևորն է և հետաքննական. — ստիքերոնը: Ընդհանրապէս քերթուածոց տող առ տող գրուելուն կը վերաբերի այս բառին նշանակութիւնը: Նախնիք մեր զայն արմատն στίχος թարգմանած են կարգ, տող, ոտանաւոր, ստիք, պարիսպ, տուն աղօրից, և այլն. իսկ στιχήρης-ρος, ոտանաւոր, ստիքերոն, տուն չափով: Եւթաղ մեծ նորութիւն մը եմուծ 'ի սուրբ Գիրս. բայց այս նորութիւնը հարկ չէ փնտռել գլխակարգութեանց և տիտղոսներու մէջ, այլ ստիքերոնի դրութեան մէջ արժան է նկատել իր աշխա-

տանքը, զոր և ինքն իսկ կ՚ակնարկէ ՚ի յառաջաբանի առաքելական Գրակաց, զոր յօրինած է ըստ ոմանց ՚ի 490 և այլոց ՚ի 462 [1]. « Ահաւասիկ իմ իսկ, կ՚ըսէ, զառաքելական գիրս տուն առ տուն ընթերցեալ և գրեալ, կանխագոյն առաքեցի առ ոմն ըստ ՚ի Քրիստոսէ հարցն մերոց, սակայն ինչ իմովսանն ակնարկութեամբ ջանացեալ. իբրև զաւանակ մի [2] անվարժ նորաւոսումն ընդ անապատ ընդ անկոխ ճանապարհ անցանել մտանել ՚ի հրահանգս հրամայեալս »: Քիչ ետքն ալ ուղղելով խօսքն առ Աթանասիոս՝ իր Թղթակիցն, կը յաւելու. « Արդ որպիսի օրինակաւ պարտ իցէ ընթերցուածասէր լինիլ և աննախանձ զնորին պարտն մեծարել, մանաւանդ մեզ իսկ զօրհանապազ, և ՚ի մասոյ ինձ իսկ գլխովին, որ զԳործոց առաքելոց գիրս, միանգամայն և զԹղթոցն կաթողիկէայց մասաբերեցի ընթեռնուլ ըստ գլխոցն և ըստ տանցն, և եթէ որչափ պարտ իցէ ընարել զգլուխս և զտունս, և զատանել զմիտսն ՚ի միմեանց մանր մասամբք, որպէս հրամայեցեր մեզ, եղբայր սիրելի Աթանասիէ * »:

[1] Ուղղագոյն կ՚երևնայ մեր ձեռագրաց մէջ յիշատակուած թուականն, « Նժ (410) Եւթաղի աղեքսանդրացի յօրինեաց զցանկ Առաքելոցն և զԳործոց ». և որ աւելի կը յարմարի ժամանակի հայկական թարգմանութեան սուրբ Գրոց:
[2] Յոյն բնագիրն ունի. իբրև ըշտամբոյ մի:

* Τοῖος τοιγαροῦν φιλόλογος ἄγαν ὑπάρχων τὸν τρόπον, ἀλικτως τε ταῦτην, ως φίλος, γεραίρων, οὐχ ἥκιστα δέ ἀν ευφημῶν ἑκαστοτε, ἔναγχος ἐμοι γε τήν τε τῶν Πράξεων βίβλον ἅμα, καὶ καθολικῶν Ἐπιστολῶν ἀναγνῶναίτε κατὰ προσῳδίαν, καὶ πως ἀναπεφαλαιωσασθαι, καὶ διελεῖν τουτων ἑκαστης τυν νουν λεπτομερῶς, προσεταξας, ἀδελφὲ Αθανάσιε προσφιλέστατέ ... κ. τ. λ.

***

Ինչպէս ուրիշ ազգաց նոր կտակարանաց Թարգմանութեանց մէջ, նոյնպէս 'ի մերումս կան Նախադրութիւնք չորից աւետարանաց, զոր արդէն յիշեցինք, և կանոնք կամ գլխակարգութիւնք՝ համեմատութեամբ չորիցն ընդ միմեանս, և որ աւելի սովորական անուամբ Համաձայնութիւնք կամ Համաբարբառք (Διάτεσσάρον) կը կոչուին: Հին քրիստոնէութեան պատմութենէ և յաւանդութենէ գիտեմք թէ չորս աւետարանքն 'ի մի զուգելով և դէպքերն իրարու համաձայնեցընելով, համաբարբառ վկայութեամբ աւետարանագրաց՝ Քրիստոսի վարքը յօրինած էր Տատիանոս յերկրորդ դարու: Հատուածք այս նշանաւոր երկասիրութեան գտնուեցան յասորական-քրիստոնեայ մատենագրութեան. և հմուտք՝ անոնց բաղդատութեամբն կարծեցին, և ընդհանրապէս ընդունելի ըրին հնագիտաց և հետամուտ պատմութեան եկեղեցւոյ թէ Եփրեմի Խուրի ասորւոյ Համաբարբառի մեկնութիւնը՝ որուն ասորի սկզբնագիրը կորսուած, և միայն հայկական Թարգմանութեամբն ծանօթացած է բանասիրաց, Տատիանոսի երկասիրութեան վրայ և անոր համեմատ եղած գըրաւոր արտադրութիւն մ'է:

Այս կարծեաց գլխաւոր պաշտպաններէն մէկն է հմուտ ասորագէտն՝ և հայկական լեզուիս ոչ անտեղեակ աւստրիացի վարդապետն Մէսինկէր (✝ 1881): Եւսեբեայ՝ որ ինչպէս յայտնի է, ժամանակաւ կըրտսեր է քան զՏատիանոս, երկասիրութիւնն այս չէ. այլ ցուցակ մը համեմատութեան՝ ամէն մէկ իջի վըրայ, չորս աւետարանագրաց բովանդակութեանը, չորս սիւնակի մէջ ամփոփելով. զոր մասնաւոր նամակաւ մը կ'ուղղէ առ Կարպիանոս ոմն՝ անշուշտ խըն-

դրող բանին։ Ընծայական ԹղԹոյն սկզբնաւորուԹիւնը հետևեալն է.

« Եւսեբի՝ Կարպիանոսի սիրելի եղբօր 'ի տէր ողջոյն։ Ամոնի Աղեքսանդրացւոյ բազում աշխատուԹեամբ և ճշգրտիւ փոյԹ 'ի մէջ առեալ, զառ 'ի չորից եԹող մեզ զաւետարան ՄատԹեան աւետարանին՝ զհամաբարբառս այլոց աւետարանչացն զգլուխս եդեալ առընԹեր միմեանց։ Որպէս զի 'ի հարկէ դիպել կարգի շարի կարգի երից'ն եւս այլս կանոնելոց որչափ ըստ միայար ընԹերցուածոյն։ Արդ զի ողջանգամ և զայլոցն եւս զընԹաց մարմնոցն և զշարի ունիցիս գիտել զյանցնիւրսն ըստ իւրաքանչիւր աւետարանի 'ի տեղիս յորս նոքին ածան, ասել ճըշմարտասիրուԹեամբ 'ի յաշխատասիրուԹենէ յառաջագոյն ասացելոյ առնն առեալ պատճառս ըստ այլում գումարուԹեան կանոնս տասն Թուով, դրոշմեցի քեզ ներքնակարգեալս »։ Հայերէն ԹարգմանուԹեան մուԹ տեղուանքն աւելի դիւրիմաց ընելու նպատակաւ՝ կը դնենք 'ի ծանօԹուԹեան զյոյն բնագիրն *։

Այս է ահաւասիկ Ամոնի Աղեքսանդրացւոյ համաբարբառ երկասիրուԹեան նկարագիրը, զոր կուտայ 'ի յիշեալ ԹղԹին առ Կարպիանոս։ Չըսեր Թէ իրմէ առած է գլխակարգուԹեանց (κεφάλαια) դրուԹիւնն. այլ միայն Թէ անոր երկասիրուԹեան Թերի

* Ἀμμώνιος μὲν ὁ Ἀλεξανδρεῦς, πολλῆν, ὡς εἰκος, φιλοπονίαν καὶ στουδὴν εἰσαγηοχὼς, τὸ διὰ τεσσάρων ἧμῖν καταλέλοιπεν εὐαγγέλιον, τῷ κατὰ Ματθαῖον τᾶς ὁμοφώνους τῶν λοιπῶν ευαγγελιστῶν περικοπὰς παραθεις, ὡς εξ ὂναγκης συμβῆναι τὸν τῆς ἀκολουθίας εὗρμὸν τῶν τριῶν διαφθαρῆναι, ὅσον ἐπὶ τῷ ὗφει της ἀναγνώσεως. Ἵνα δε σωζομένου καὶ τοῦ τῶν λοιπῶν δί ὅλου σώματός τε καὶ ειρμοῦ, εἰδέναι ἔχοις τοῦς οἰκείους ἑκοτον εὐανγελιστοῦ τόπους, ἐν οἷς κατὰ των αὐτῶν ἠνέχθησαν φολαλήθως εἰπεῖν, ἐκ τοῦ πονήματος τοῦ προειρημένου ἀνδρὸς εἰληφὼς ἀφορμας, καθ᾽ ἑτέραν μέθοδον κανόνας δέκα τον ἀριθμὸν διεχάραξα σοι τοῦς ὑποτεταγμένους.

մասունքն յորդորածիւ ըրին զնոյն՝ իր ըրածին տարբեր և լաւագոյն աշխատասիրութեան մը ձեռք զարնել, որ առաւել շայեկան ըլլայ ընթերցողաց, խուսափելով անոր պակասներէն։ Ուստի վրիպեցաւ բազմահմուտ վարդապետն արևմտեան եկեղեցւոյ Հերոնիմոս 'ի կարծելն թէ Եւսեբեայ գրածը հետևողութիւն է Ամոնի և ոչ այլ ինչ[1]։

Թ. ԱՆՅԱՅՏ ԿԱՄ ԱՆՎԱՒԵՐ ԳԻՐՔ

Ի ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Աստուածաշունչ գրոց մէջ՝ բայց առանց անոնց մասն սեպուելու՝ կը գտնուին նաև բոլորովին անհարազատ գրութիւնք, որք երբեմն իբրու անոնց մասունք՝ շատ գրչագրաց մէջ ալ անցած են։ Այսպիսի թէ հին և թէ նոր կտակարանի պատկանող երկասիրութիւնք բազմաթիւ են առ այլս 'ի քրիստոնեայ հին ազգաց, բայց նաև առ մեզ ոչ աննշան թուով ու իրաւամբք հետաքննականք։ Ընդհանուր և առհասարակ ընդունելի կարծիք մ'է՝ թէ ասոնցմէ շատին յօրինողք և յերիւրողք՝ քրիստոնէական կրօնքն ընդունող հրէայք եղած ըլլան՝ հին կտակարանին մասն ենթադրուածներն, հասարակաց թուականութեան առաջին դարերէն. նոյն ալ՝ Գնոստիկեան աղանդաւորք՝ ունենալով իրենց մասնաւոր դիտումն ու նպատակը թէ առաջիններն և թէ վերջինք։

[1] Canones quos Eusebius Cæsarensis episcopus, Alexandrinum secutam Ammonium, in decem numeros ordinavit, sicut in græco habentur, expressimus. Ուրիշ տեղ մ'ալ. Ammonius evangeliis Canones excogitavit, quos postea secutus est Eusebius Cæsarensis.

Բայց մեր վախճանէն դուրս ըլլալով աւանդմամբ զբաղելն ու զբաղեցընելը, բաւական սեպենք համառօտիւ յիշատակել՝ ինչ որ այս նկատմամբ աւանդած ու հաստատած է առ մեզ հայ գրականութիւնն։

Անոնց մէջ առաջին է կարգաւ և ժամանակաւ, –որովհետև յաճախ փրշագիրք անմիջապէս Ծննդոց գրքէն վերջը կը կարգեն զայն – Կտակք երկոտասան նահապետաց կոչուածը։ Հաւանական կ'երևնայ թէ քրիստոնէութեան առաջին դարուն՝ կամ 'ի սկիզբն երկրորդին շարադրուած ըլլան՝ նոյն սուրբ կրօնքն ընդունող հրէի մը ձեռքով որ Յակոբայ որդւոց բերանը կը դնէ Մեսիայի վերաբերեալ մարգարէութիւններն։ Կտակք կոչուելուն պատճառն է՝ որ իւրաքանչիւր ոք յորդւոց աստուածատեան Իսրայելի՝ մահուանն անկողնոյն շուրջը բոլորուած որդւոցը իմաստուն խրատներ, և ընտիր պատուէրներ կ'աւանդէ՝ յայտնելով իրենց զ'ժաքռան գիտութիւն ապագայից։

Քրիստոսի աստուածութեան վրայ ամենընտիր վկայութիւնք ամփոփուած են 'ի նոսա, կարևորք իրենց հնութեամբ. լեզուն ալ քերթողական բացատրութեամբք ճոխ. և հեղինակն՝ հմուտ 'ի գիտութեան գրոց սրբոց, անոնց հոգին լաւ ըմբռնած է և կը բացատրէ. երէց է ժամանակաւ քան զՍրագինէս, որ 'ի գիրս իւր այլևայլ տեղուանք անոնց յիշատակութիւնը կ'ընէ, թէպէտ և ոչ դասելով 'ի շարս կանոնական գրոց. և որովհետև Երուսաղեմի կործանման յիշատակութիւնն կ'ըլլայ անոնց մէջ և հրէական ժողովրդեան պատուհասին, անտարակուսելի կ'ըլլայ որ Քրիստոսի 30 թուականէն ետքը գրուած են։ Գերմանացին Մէօհլէր իր Գիտութիւն Հարց (Patrologie) գրքին մէջ կ'ըսէ թէ ամենայն ինչ 'ի նմա յայտնապէս կը ցուցընէ թէ քրիստոնէի մը հեղինակութիւն է, և անընդունելի կը համարի

Կրապի ենթադրութիւնը թէ յառաջ քան զՔրիստոս հրէի մը ձեռքով շարադրուած ըլլան, և այս 'ի քրիստոնէից այլևայլ փոփոխութիւններ կրած. վասն զի ոճոյն միակերպութենէն յայտնի կը գուշակուի, կ'ըսէ, մէկ անձի մը երկասիրութիւն ըլլալը։ Հաւանական կը սեպէ դարձեալ որ հրեայ մը ըլլայ յօրինողն և ոչ հեթանոս. և զոր կը հաւատարմացընէ գործածած յոյն լեզուի ոճովն և 'ի հրէական այլևայլ աւանդութեանց՝ զոր կը քաղէ Ենովքայ անունը կրող մարգարէական գրքէն։ Մեր գրականութիւնն հասուցած է առ մեզ ասոնց հաւատարիմ և ընտիր ոճով պատրաստուած թարգմանութիւն մը։ Կը դնենք հետաքննին բանասիրաց համար ասոնց գլխակարգութիւնքը։ Ամենուն ալ սկըզբնաւորութիւնը գրեթէ նոյն է։

Գիրք Մնացորդաց. խօսք Ռուբէնի, կտակ առաջնոյն. « Հրաման կտակի Ռուբենի զոր պատուիրեաց որդւոց իւրոց, զկնի երկրորդ ամի վախճանելոյն Յովսեփայ »[1]։

Կտակ Շմաւոնի, վասն նախանձու երկրորդ։

Կտակ Ղեւեայ, վասն քահանայութեան և ամբարտաւանութեան։

Կտակ Յուդայի, վասն արութեան և արծաթսիրութեան։

Կտակ Իսաքարայ։

Կտակ Զաբուղոնի։

[1] Գրչագիր մը կը յաւելու.

... « Մի ոք թուեսցի շաղփաղփ այս բանք
Կամ հէքիաթ զըրոյց անցանք.
Աստուածաշունչ է այս դարմանք,
Հոգոյ մըտաց կենդանականք։
Զի ճանապարհ է այս վերին
Հիմն և առաջ նորդ օրինին
Վըկայք պատմիչք անեղ Բանին
Մարգարէութեանըն կուսածին »...։

Կտակ Դանայ, վասն ամբարտաւանութեան։

Կտակ Նեփթաղիմայ, վասն բնական բարութեան։

Կտակ Գադայ, վասն ատելութեանն։

Կտակ Ասերայ, վասն երկդիմութեան և առաքինութեան։

Կտակ Յովսեփայ, վասն նախանձու։

Կտակ Բենիամենի, երկոտասաներորդ։

***

Ասոնցմէ ետքը կու գայ Պատմութիւն Յովսեփայ և Ասանեթայ։ Ասանէթ՝ որպէս յայտնի է 'ի սուրբ Գրոց, դուստր էր Պետափրեայ Եգիպտացւոյ, զոր տուաւ Փարաւոն 'ի հարսնութիւն Յովսեփայ։ Այս գրուածին լատին համառօտութիւնն հրատարակեալ է 'ի Պատմական հայելի կոչեցեալ գիրս Վինկենտի Բելլովակեցւոյ և առ Ֆաբրիկիոսի, յիւրում Մատենադարանի։ Նոյն Ֆաբրիկիոս հրատարակած է 'ի Codex pseudepigraphus Ասանեթայ պատմութեան սկզբնաւորութիւնն 'ի յոյն լեզու, որ առ մեզ հայկական լեզուաւ պահուած ամբողջ գրութեան գրեթէ քառորդ մասն է. բայց շատ աւելի ընդարձակ ոճով քան զլատինականն հրատարակեալ 'ի Բելլովակեցւոյն։ Յունական սկզբնագրին շարունակութիւնն կամ ամբողջութիւնը ինչուան հիմա գտնուած չէ, և անանկով Ասանեթայ պատմութիւնն անկատար մնացած, թէպէտև հնագոյն և աւելի հարազատագոյն կերպարանքով մը։ Հայ թարգմանութիւնն, որ հաւանականաբար յունականին վրայ եղած է, ամբողջ գրուածքն հասուցած է մինչև առ մեզ, բայց 'ի մէկ կտորէն՝ որ կամ գիտմամբ զեղչուած է, և կամ ձեռագրին կրած մէկ արկածից հետևանք է։ Թարգմանութիւնն է հարազատ և ճիշդ ընդ բնագրին և ընտիր լեզուաւ. և շատ տեղ կրնայ ուղղագրել

միացած յոյն հատուածն։ Կը գտնուին 'ի նմա քանի մը զանցառութիւնք, բայց ոչ այնչափ էական և կարեւորք. և անշուշտ արգասիք գրչաց կամ ընդօրինակողաց անմտադրութեանն։ Լեզուին նայելով՝ հին թարգմանութիւն կ'երեւնայ, սակայն հաւանականաբար առանց պատկանելու մեր մատենագրութեան ամենէն աւելի ծաղկած և բարգաւաճ ոսկեդարուն։

Հին կտակարանի անհարազատ գրոց քննադատութեամբն ու հետազօտութեամբ զբաղող անուանին Տիլման՝ 1883էն 'ի վեր յայտնած էր որ այս պատմութեան ասորական մէկ օրինակը կը գտնուի 'ի Բրիտանական մուսէոնին. մտադրութիւն չընելով անշուշտ թէ արդէն այդ թուականէն շատ յառաջ՝ 1870ին, հրատարակած էր զայն տպագրութեամբ Լանտ, գտնելով ուրիշ հետաքննական գրուածոց հետ «Զաքարիայի Մելիտինեցւոյ պատմութիւն եկեղեցւոյ» կոչուած գրքի մը մէջ։ Ցերկու ձեռագիրս գտնուած հատուածներն իրարու քով դնելով և միացընելով, կրցաւ Լանտ գրեթէ ամբողջութիւն տալ գրուածին. բաց 'ի մէկ պարապ միացած կտորէ՝ երկու կամ չորս էջ։ Ասորի թարգմանութիւնն եղած է 'ի վեցերորդ դարու. սակայն շատ աւելի համառօտ քան զհայկականն. կամ այն պատճառաւ որ հայ թարգմանչին ունեցած օրինակը ամբողջ էր, և կամ ասորին համառօտած է զայն, որպիսի սովորութիւն և ազատութիւն յաճախ կը տեսնուի այդ ազգին թարգմանչաց քով։ Սակայն անով հանդերձ շատ տեղ կ'ուղղէ զհայկականն, որն որ իր կողմանէ ասորի թարգմանութեան բազմապատիկ սխալ ընթերցուածներն կը լուսաբանէ։

Հայկական թարգմանութիւնն ամբողջ հրատարակուած է 'ի մեր տպարանի[1]. նորագոյն հրատարակու-

[1] Բազմավէպ, 1885, 86։

Թիւն մ'ալ միոյ եւեթ մասին, չորրորդ և վերջին գլխոյն, հանդերձ գաղղիական թարգմանութեամբ եղած է 'ի ձեռն Գարրիեր բանասիրի, ուսուցչի հայ լեզուի 'ի Փարիզ, հանդերձ հմուտ յառաջաբանով և տեղեկութեամբք՝ յորմէ վերը գրուած քանի մը տեղեկութիւններն քաղեցինք [1]:

***

Ուրիշ են այս գրուածէն Աղօթք Յովսեփայ և Աղօթք Ասանեթայ կոչուածներն, և որք կը գտնուին յասորի, 'ի յոյն և յայլ լեզուս. իսկ մեր հայ մատենագրութեան մէջ դեռ յայտնուած չեն: Միայն անոնց յիշատակութիւնը կայ առ Մխիթարայ Այրիվանեցւոյ պատմչի, որ Գիրք Հրէից ծածուկքն կոչուած անվաւեր գրուածոց մէջ կը յիշէ բաց յայլոց նաև Աղօթք Յովսեփայ անունը կրող գրուած մը: — Նոյն պատմիչն՝ Սարկաւագ վարդապետին ձեռքով եղած սուրբ Գրոց ցուցակին կարգաւորութիւնն յիշատակած ատեն՝ ուրիշ անհարազատ գրութեանց հետ կը յիշէ նաև Ասենիթի աղօթքն:

Մանասէի աղօթք. որ ոչ լոկ սուրբ Գրոց յաւելուածոց մէջ, այլ և 'ի հասարակաց աղօթս և 'ի ժամագիրս մեր մուտ գտած է. և է հանրածանօթ Ցկր ամենակալդ սրտառուչ մաղթանքն: Սուրբ Գրոց կանոնէն դուրս ձգուելուն պատճառն ուրիշ բան չէ, բայց տարակուսական ըլլալն թէ արդեօք ստոյգ Մանասէ արքայի շարագրածն է թէ յայլոց գրուած և իրեն ընծայուած: Այլ թէ ոչ, համաձայն աստուածաշունչ գրոց պատմութեան, որ այս յանցաւոր թագաւորին մեղքն պատմելէն ետքը, կը յիշէ ու կը

[1] Une version arménienne de l'Histoire d'Asseneth, par A. Carrière, professeur à l'école des langues orientales vivantes. Paris.

գովէ աղօթիւք առ Աստուած զառնալն ու ապաշխարութիւնը, եթէ ոչ զայս՝ ասոր նման ուրիշ ընտիր և աստուածահաճոյ զղջման և հառաչանաց ձայն մը բարձրացուցած պիտի ըլլար, 'ի քաւել զմեղսն։ Հաւանականաբար յեբրայեցի լեզուէ թարգմանուած է 'ի յոյն և 'ի լատին. իսկ 'ի մերս 'ի յունէ։ Ոմանք՝ հեբրայեցի լեզուով գտնուած կամ յիշատակուած չըլլալուն՝ զյոյնն սկզբնագիր կը համարին, իսկ այլք զլատինն. և գրութեան ժամանակը քրիստոնէութեան երրորդ դարուն կը պատշաճեցընեն, նոյն ատեններն յարմարցուած Առաքելական Սահմանադրութիւնք կոչուած գրուածին մէջ հանդիպելով անոր յիշատակութեան։

Մահ երկոտասան մարգարէից, որ կը տեսնուին ոչ միայն յաստուածաշունչ գիրս մեր, այլ նաև 'ի ճաշոցս՝ իրենց տօնին սեպհական օրը իբրու պատարագի ընթերցուած նշանակուած և ընդունուած։ Բաց յերկոտասան փոքր մարգարէից, կը հանդիպինք նաև մահուան Եսայեայ, Երեմիայ, Եզեկիելի և Դանիելի մարգարէից։ Ոչ առաջիններուն և ոչ ասոնց յիշատակութիւնը կայ ուրիշ ազգաց քով գըտնուած ու անհարազատ սեպուած գրութեանց մէջ. որով և հաւանական կ'երևնայ ենթադրելը թէ 'ի մերոց յօրինուած ըլլան։ Ճառընտրի մը մէջ նշանակուած կը գտնենք յանուն սրբոյն Եպիփանու. « Անուանք երկոտասան մարգարէիցն թէ ուստի էին, և որպէս վախճանեցան և կամ ուր թաղեցան, Եպիփանու եպիսկոպոսի ասացեալ »։

***

Առ Մխիթարայ Այրիվանեցւոյ, ինչպէս յառաջ ալ յիշատակեցինք, հետևեալ անվաւեր կամ ոչ հարազատ գրոց ցուցակը կը գտնենք, իբրու թէ կար-

գաւորութեամբ Սարկաւագայ 'ի շարս աստուածաշունչ գրոց հայ թարգմանութեան անցած.

Ադամայ.	Եղդադ. Մովդադ.
Ենովքայ.	Սողոմոնի սաղմոսքն.
Երկոտասան նահապետք.	Եղիայի ժամուշկքն.
Աղօթք Յովսեփայ.	Դանիելի եօթն տեսիլքն։
վերացումն Մովսիսի.	

Այս ցուցակ իր դասաւորութեամբ և նիւթերով մեծ նմանութիւն ունի Նիկեփորոսի անունը կրող Stichometria գրոց մէջ գտնուած և Անյայտից կոչուած ցուցակին հետ. միայն յետինս առաւելութեամբ ունի կտակ Մովսիսի, Աբրահամու, Սոփոնիայ մարգարէի ... Զաքարիայ հօրն Յովհաննու Մկրտչի ընծայուած գիրք մը, և մասն մի Բարուքայ, Ամբակումայ և Դանիելի անուանքը կրող. որոնք կը պակսին 'ի հայ ցուցակին. մինչ հայն ալ ունի Գիրք Ադամայ, Սիբիլլայն, Սողոմոնի սաղմոսքն, և որոնք բաց 'ի Սիբիլլայի գրքէն, կը գտնուին ուրիշ աւելի ուղղագոյն Անվաւեր գրոց ցուցակի մը մէջ՝ զոր հրատարակած է բազմահմուտն Փիգրա՝ ծիրանաւոր գաղղիացի[1]։

Այրիվանեցին այս ցուցակէն ետքը անմիջապէս կը յաւելու. «Զայս ես և Անանէ գրեցաք 'ի վիմի քաղաքին, ուր եկեղեցի օրհնեցաք». որով հնասէրք կ'ախորժին ենթադրել թէ այս յիշատակուած անվաւեր գրոց թարգմանութիւնք կային 'ի մեր մատենագրութեան, մինչև յերեքտասաներորդ դար, յորում ապրած և գրած է Մխիթար. բայց այս կարծիք այնչափ հաւանական չերևնար, մեր գրչագրաց մէջ անոնց շատին հետքն անգամ չգտնելով։

[1] J.-B. Pitra; Juris ecclesiastici Græcorum historia et monumenta. Romæ, 1864, I. 100։

Այրիվանեցւոյն ցուցակին մէջ յիշատակուած այս ամէն գրքերն, բաց 'ի Մահ Երկոտասան մարգարէից կոչուածէն, կը գտնուին առ յոյնս, ասորիս, առ լատինս, և ոմանք նաև առ հրեայս և արաբացիս։

Ադամայ ընծայուած այլևայլ երկասիրութիւնք կան, զորս կը յիշատակէ Փաբրիկիոս. ինչպէս Ծնունդք կամ Արարածք, Յաղագս մշակութեան կոչուած գիրք մը, Ապաշխարութիւն Ադամայ, Մահուան Ադամայ և Եւայի, յետ անկման իւրեանց. Յայտնութեան գիրք, Մարգարէական գուշակութիւնք 'ի վերայ տևողութեան աշխարհի, Յաղագս պատուհասութեան, Պատերազմ Ադամայ և Եւայի, Կտակ Ադամայ, և այլն։ Այսչափ գրոց խուռն բազմութեան մէջ՝ որոշակի չենք կրնար ըսել թէ որն է Այրիվանեցւոյն գրոց մէջ յիշուածը, որուն թարգմանութիւնն եղեր է 'ի հայ լեզու։ Յիշենք միայն ինչ որ հանդիպեր ենք 'ի հայ մատենագրութեան հետևեալ խորագիրը կրող գրուածը. «Պատմութիւն վարուցն Ադամայ և Եւայի նախաստեղծիցն որ յայտնեցաւ հրամանաւն Աստուծոյ 'ի ձեռն Միքայելի հրեշտակապետին՝ մեծ մարգարէին Մովսեսի, որ զաստուածագիծ տախտակն ընկալաւ։ Զոր նոր թարգմանեաց հոգևոր տէրն Սիմէոն յԵրուսաղէմ». և սկզբնաւորութիւնն է. «Զկնի ելանելոյ նոցա 'ի դրախտէն փափկութեան»[1]։

Ենովքայ գիրք. Այս սուրբ նահապետին անուամբն ալ այլևայլ անհարազատ երկասիրութիւնք կան. ինչպէս Գիրք զոր եբեր հրեշտակն առ Ենովք, Աղօթք, Մարգարէութիւնք, Յայտնութիւնք, Տախտակք, և այլն։ Բայց վերջինքս դեռ 'ի մերում լեզուի և մատենագրութեան յայտնուած չեն։ Թերևս ասոնց մէկուն վերաբերի առ Խորենացւոյն յիշատակուա-

[1] Տես Monumenta Sacra et Profana, հրատարակեալ 'ի Միլան 'ի 1868 յԱմբրոսեան վարդապետաց։

ծը, Թէպէտ յանուն Ենովքայ. « Սորա երկուքն յարձանագրութեանցն՝ ընդդէմ երկուց հանդերձելոցն, որպէս ասէ Յովսեպոս. Թէպէտև ուրն անյայտ » ։ Միայն առաջին գիրքն կը գտնուի 'ի Մատենադարանին Էջմիածնի (Թիւ 924) հետեւեալ խորագրով. « Տեսիլ Ենովքայ արդարոյ հանդերձ մեկնութեամբն 'ի հրեշտակէն » ։ Ուրիշ գրչագրի մը մէջ ալ 'ի գրատան Երուսաղէմի անմիջապէս յետ գրոցն Եզրի. « Ենովքայ արդարոյ տեսիլ. Երեւեցաւ ինձ այր մի յանդիման Լիբանան լերին » ։

Գիրք երկոտասան նահապետաց կոչուածն՝ իրենց անուամբ գտնուած կտակքն են, զոր յիշեցինք, ինչպէս նաև Աղօթքն Յովսեփայ։

Վերացումն Մովսէսի զոր կը յիշատակէ Փաբրիկիոս (Հատ. Ա. 839). Որոգինէս ալ այս գրքէն վկայութիւն կը բերէ. Նիկիոյ առաջին ժողովոյն գործոց մէջ ալ սոր յիշատակութիւնն կ'ըլլայ, և կ'երևնայ թէ Կղեմայ Աղեքսանդրացւոյն ալ ծանօթ էր, ուստի քաղուածներ ալ ըրած ըլլալը կը կարծուի. Ըստ Նիկեփորայ՝ 1400 տողէ կը բաղկանար։

Եղդադ և Մովդադ. Առ Փաբրիկիոսի (Հատ. Ա. 801)։ Կը յիշուի այս գրուածք նաև 'ի Հովիւ գիրս Հերմասայ։

Սողոմոնի սաղմոսք. Սողոմոնի անուամբ ութեւտասն սաղմոսք ։ Առ Փաբրիկիոսի (Բնագիրք հին կտակ. 917)։

Եղիայի ժամուցքն կամ ինչպէս առ այլս կը կոչուի Յայտնութիւն։ Պրիսկիլլեան աղանդաւորաց մէջ տարածուած գրութիւն մը, զոր կը յիշէն Որոգինէս և սուրբն Հերոնիմոս։ (Առ Փաբր. 1072)։

Դանիելի տեսիլքն. Դանիէլ մարգարէին անուամբըն ալ այլևայլ անհարազատ շարադրութիւնք երեւցած են։ Ասոնցմէ են Ասրիվանեցւոյն յիշատակած տեսիլքն, և անկէ դուրս Գուշակութիւնք Դա-

Անեցի, Պատուէրք հրեշտակին առ Դանիէլ, Պատմու-թիւն կամ անվաւեր մարգարէութիւնք, Մեկնութիւն երազոց, և այլն։

***

Նոյն Այրիվանեցին Մխիթար, — ինչպէս ըսինք, — իր պատմութեանը մէջն յիշելով հռչականուն Սարկաւագ վարդապետին ձեռքով եղած տոմարի նորոգութիւնն 'ի 1085 թուականին, աստուածաշունչ գրոց ցուցակ մ'ալ կը դնէ՝ ըստ կարգաւորութեան նոյն Սարկաւագայ. յորմէ կ'ենթադրուի թէ հայերէն սուրբ Գրոց Ճիշդ կանոնն կամ որոշակի սահմանուած չէր, կամ դեռ ևս հակառակութիւն կը կրէր նաև ԺԱ դարուն վերջերը։ Հոն սուրբ Գիրք երեք դասակարգութեան վերածուած են. այսինքն 1.° Նոր կտակարան; 2.° Հին կտակարան, և 3.° Նուրբքըրն կոչուածներն, ակնարկելով այն գրքերն՝ որոց ընթերցումը թոյլ տրուած էր կամ յանձնարարուած։ Հին կտակարանին պատմական գրքերն այնպիսի կարգաւ դասաւորուած են այս ցուցակին մէջ, որ Իսրայելի ժողովրդեան անընդհատ ու շարունակեալ պատմութիւնը կը կազմեն, Ծննդոց գրքէն մինչ 'ի Մակաբայեցիս. և անոնցմէ ետքը կը յիշատակուին հետևեալներն.

Յովսեպոս՝ որ է Կայիափայ քահանայապետ[1]. —

[1] Առ արևելեայս ընդհանրապէս վիպական կարծիք մը տարածուած էր թէ Յովսեպոս պատմիչն նոյն ըլլայ ընդ Կայիափայ որուն 'ի հանդիպոյ երեցաւ Տէրն մեր 'ի դատաստան։ Կ'աւանդեն թէ Քրիստոսի սուրբ յարութենէն ետքը ընդունած ըլլայ անոր սուրբ հաւատոյ ճշմարտութիւնը։ (Առ. Ասսեմանեայ, յԱրեւելեան Մատենադարանի, Հատ. Գ. 522)։ Աստուածաշունչ գրոց գրչագիր մը՝ յետ Երրորդ Մակաբայեցւոյ կը յաւելու. «Չորրորդ Մակաբայեցիան ոչ գտի, և ոչ զՅովսեպոսն որ գրել էր 'ի գիրս»։

Ենովքայ տեսիլքն. — Կտակ նախահարց. — Ասենեթի աղօթքն։ Յետոյ Տովբիթ, Յուդիթ, Եսթեր. և ապա Եզր Սաղաթիէլ։ Յետ Եզրի՝ Յոբ, Երկոտասան մարգարէք, Սաղմոսք, Առակք, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ։ — Մնացորդք. — Վասն Երեմիայի 'ի Բաբելոն. — Մահ մարգարէիցն. — Յեսուս Սիրաք։

Ինչպէս կը տեսնէ ընթերցողն, հոս այլազգ է սուրբ Գրոց դասակարգութիւնն քան սովորաբար ընդունուածէն նաև 'ի մեր գրչագիրս. սակայն այս ցուցակին համեմատ ալ գրչագիրք կը գտնուին, որ կարգադրուած էր երկու հարիւր տարի յառաջ քան զԱյրիվանեցի, և որուն պատմութեանն մէջ այսպիսի խորագրով մը կը գրոշմուի. « Կարգադրութիւն գրոց սրբոց, որք ստուգաբանեցան 'ի Սարկաւագ վարդապետէն և գրեցան յինէն 'ի տէր Մխիթար վարդապետէս 'ի մին տուփ յաւուրս ԾՀ »։

Այս երկու յիշատակարաններէն կը հետևցընէ Գարրիէր թէ Հայք չորեքտասաներորդ դարուն մէջ ունեցած ըլլան այս ամէն անհարազատ գրուածներն, և յոյս կը տածէ որ օր մը կարենան երևան ելլել. և յորոց մին եւեթ ցարդ հրատարակուած է կ'ըսէ, Եզրի չորրորդ գիրքը։ Կը վրիպի հմուտ ուսուցիչն՝ երբ էջմիածնի Մատենադարանին մէջ յիշատակուած Ադամ գիրքն այն անունով յիշուած անհարազատ գրութեանց հետ կը նոյնացընէ, մինչ արդէն ծանօթ է մեզ անոր հեղինակն, և վերջին դարուց երկասիրութիւն մը ըլլալը։ Դանիէլի Եօթն տեսիլքն կը գտնուի կ'ըսէ 'ի Լոնտոն՝ Լամպէթի արքեպիսկոպոսական մատենադարանին մէջ, այսպիսի վերնագրով. « *Եօթներորդ տեսութիւն Դանիէլի, և զՆեռէն* »։ Այս գրուածք մեզի անծանօթ է, և կը կասկածինք որ Հիպպողիտոսի կամ Անթիպատրոսի Բոստրացւոյ ընծայուած անհարազատ երկասիրութեանց մէկ

մատն ըլլայ։ «Մենք մեծապէս հաւանական կը համարինք, կ'ըսէ յիշեալ բանասէրն, որ այս անվաւեր գրութիւնք տակաւին կը գտնուին՝ գէթ ոչ ըստ արժանւոյն հետազօտուած հայկական աստուածաշունչ ձեռագրաց մէջ. և հայագիտաց մասնաւոր ուշադրութիւնն կը հրաւիրենք այս կէտին վրայ, որոց ձեռք կը գտնուին հայերէն սուրբ գրոց ձեռագիրներ։ Այսպիսի գիւտ մը կարևորութիւն քաջայայտ է ամենեցուն»։

Ժ. ԱՆՎԱՒԵՐ ԳԻՐՔ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ

Ի ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

Անցնինք 'ի տեսութիւն Նոր կտակարանաց պատկանող անհարազատ և ոչ վաւերական գրութեանց, որոց կը հանդիպինք 'ի հայկական թարգմանութեան աստուածաշունչ մատենի։

Ասոնց մէջ առաջին պէտք է սեպուին՝ կանոնական և յեկեղեցւոյ արդէն ընդունուած և վաւերացած չորս աւետարաններէ դուրս՝ այլևայլ կեղակարծ և կասկածելի գրութիւնք, նոյն սուրբ աւետարանաց յորջորջումը կրելով։ Բայց այս ընդհանրապէս անհարազատ՝ կամ ոչ իբրև աւետարան ընդունուած գրութեանց մէջ արժան է զանազանութիւն դնել, անոնց որ խաբեբայ անձանց արտադրութիւնք են, և անոնց որ 'ի վերջ առաջին դարու քրիստոնէութեան կամ 'ի սկիզբն երկրորդին եւեթ եղան աւելի բարեպաշտութեամբ քան առողջ քննադատութեամբ 'ի մի հաւաքել այն աւանդութիւններն որ կը վերաբերէին քրիստոնէական կրօնից սկզբնաւորութեան,

ջանալով խնամով պահել և աւանդել Յիսուսի փրկչին ընծայուած խօսքերն և գործեր:

Ադրիանոսի և Անտոնինեանց խաղաղասէր կայսերութեան ժամանակներէն, մոգութեան տարօրինակ ուսմունք, կաբաղական գիտութիւնք, և կարծեցեալ հոգեւորից անօրէնք՝ սկսան մուտ գտնել և խառնուիլ քրիստոնէական և կրօնական կարծեաց և վարդապետութեանց հետ, որոնք կը յաճախէին թէեւ աղանդաւորաց, և որոց բնական և անհրաժեշտ հետեւանք էին հակառակութիւնք և հերձուածք: Այն առթիւ սկսան երեւնալ և տարածուիլ անհարազատ գրութիւնք: Անոնցմէ ոմանց վրայ առաքելոց մէկուն կամ միւսին անուանք կը դրուէին. ոմանց ալ Յիսուսի անմիջական աշակերտաց աւանդին յաջորդներուն: Կեղծանուն պատմագիրք, որ կ՚աւանդէին ամէն մէկը իրենց ուզած կերպով, իրենց վարդապետաց ենթադրեալ քարոզութիւնները, ճանապարհորդութիւններն և կրած արկածք. և որոց հետ կը խառնուէին անհաւատալի ու երբեմն նաև 'ի ճշմարտանմանութենէ օտար դէպք և դրուածք:

Այսպիսի գրութեանց մէջ ամենէն աւելի մտադրութեան արժանաւորք պէտք է սեպուին իրաւամբ այն աւետարանք որ այլեւայլ առաքելոց անուանքը կը կրեն անհարազատաբար. յորս նախ առաջին՝ Քրիստոսի Մանկութեան կոչուածը: Մէօհլէր կ՚ըսէ թէ հեղինակն խոհական և առողջ քննադատականի մեծ հաւատարիք չէր տար այս գրուածքին մէջ. անանկ որ եթէ իր բարեմտութիւնը կարելի ըլլար տարակուսի տակ ձգել, պէտք ըսէինք թէ Քրիստոսի սքանչելեաց համբաւն ու մեծութիւնը նուազեցընելն եղած ըլլայ իր նպատակն, տարօրինակ չափազանցութեամբն զոր կը ցուցընէ պատմութեանը մէջ: Բայց ինչպէս ըսինք՝ հեղինակին այսպիսի մտադրութիւն մը չենք կրնար տալ. յայտնի տեսնելով

էր յարմարեցեր կանոնքը Տիշէնտորֆ ալ գիտակցեր էր, այդ որ Մանկութեան աւետարանին հեղինակը հետեւած է Յակոբեան եւ Թովմայի անուամբ պատուած անվա-ւերական ու աւետարանական անունը կրող գրութեանց. Ինչպէս մինչ 'ի գլուխն իններորդ եւ միւսոյն երեսնե-րորդ վեցերորդ գլխէն անդին. իսկ մնացած մասն հաւաքուած է այն աւանդութիւններէն որ տարա-ծուած էին Ասորւոց, Պարսից եւ Եգիպտացւոց մէջ: Անտարակուսաբար գիտցող ու գիտակցող չորք մէջ, մեծամասնէ ընդունելի եւ հաւնոյ ըրած են զայն յի-շեալ արեւելեան ժողովրդոց: Հաւանականաբար ա-սորի ժողովրդոց մէջ եղած է անոր առաջին երեւու-մը. որովհետեւ Յունաց Թուականն՝ որ կը յիշուի երկրորդ գլխոյն մէջ, Քրիստոսի ծննդեանն Թուա-կանը որոշելու վախճանաւ, Ասորւոց մէջ սովորա-կան գործածութիւն էր, եւ արաբական օրինակն ալ այնպիսի դէպքեր կը բովանդակէր որ յասորւոյն թարգմանուած կը համարուին: Դժուարին է այս գրուածին յօրինման ժամանակն ճշդել. Տիշէնտորֆ կը կարծէ որ յառաջ ըլլայ քան զերեւումն օրէնս-դրին Արաբացւոց [1]:

***

Առ արեւմտեայս ցարդ հրատարակուած Մանկու-թեան աւետարաններն երկու են, գէթ որչափ մեզի

[1] Կղեմէս Աղեքսանդրացի (Կոչ. Ընծ. Դ). «Իսկ 'ի նոցա կտակարանաց անտի՝ չորք աւետարանք միայն. այլ այլք՝ սուտ անուանեալ գրեալ. եւ միաս ընթերցեալ ընթեռնլեացն: Եւ այլ գրեցին եւ Մանիքեցիք Թովմայի գլուխ աւետարան, որում ա-նուշահոտ աւետարանացն անուանեալ կարգան՝ ծեփկեալ շա-ղախ սա. ապականել զոգիս միամտաց»: Կամ բացայայտ եւս ըստ յունին. «Իսկ նորայ կտակի չորք աւետարանք միայն. իսկ այլքն սուտ եւ մեծ վերնագրեալ եւ միատակար գտանին: Գրե-ցին եւ Մանիքեցիք զնա Թովմայի աւետարան. որ անուշահոտ-

ծածկած է, յորոց մին կը կոչուի Աշխարհական Միաբանու-թեան, և միւսն Նախատօնարան. սորայն Յակոբայ Երուսաղէմայ Առաքելոյն սկզբնաւորութիւնն է. «Յա-նուն միայն Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. Ճաշոց և օգնականութեամբ ամենակալողին Աստուծոյ բանին. հայցանք գրեմ զհրաշապատուած գիրս սքանչելեաց Փրկչին մերոյ. զկարգապետ և զանարատ Յիսուսի Քրիստոսի. զկոչեցեալն աւետա-րան Մանկութեան»։ Ամբողջ գիրքը յիսուն և հինգ հատուածոց գլուխներու մէջ բովանդակուած է, և կ'աւարտի այսպէս. «Վախճան աւետարանին Ման-կութեան. օգնականութեամբ մեծին Աստուծոյ, որ-չափ ինչ յաջողեաց մեզ գրել և խելամուտ լինել»։

Իսկ միւսն՝ ինչպէս ըսինք, սորայն Յակոբայ կըրտ-սերոյ անունն կը կրէ. և Նախատօնարան կոչուե-լուն պատճառն այն է որ կ'աւանդէ աւետարանի կամ Յիսուսի քարոզութեան անմիջապէս նախըն-թաց դէպքերը։ Այս Նախատօնարանին յիշատա-կութիւնն կը գտնենք նաև առ հնագոյն հարս եկեղե-ցւոյ, ինչպէս առ Որոգինեայ, Եպիփանու, Գրիգորի Նիւսացւոյ. և անդստին յերկրորդ դարէ սուրբն Յուստինոս վկայ և Կղեմէս Աղեքսանդրացի ակնար-կութիւն ըրած են անոր մէջ գտնուած առասպելա-խառն անցից վրայ։ Յունական սկզբնագրին վրայէն անուանի արեւելագէտն Փոսթել լատինական թարգ-

ութեամբ աւետարանական անուանադրութեան զանազանե-ալ՝ ապականէ զգլխս միամտաց»։

Ի մերոցն Սարգիս Շնորհալի. (Մեկն. կաթուղ.). «Իսկ որ անմտաբար խոտելիք են, զի 'ի հօրդւոյն մոլորութենէ արտագրե-ցան, «Գիրք տղայութեան» զոր ասեն Մարիամու անուանեն. և աւետարանն՝ զոր Թովմայի ասեն, և գիրք տղայութեանն Քրիս-տոսի, և այլք այսպիսիք. որք 'ի տիրապ ճշմարտութեան կամե-ցան 'ի ներքս մտանել, զոր ոչ ընկալաւ եկեղեցի Աստուծոյ զօ-րաց շարութեան և զգայքն փառաւոր. վասն զի ոչ եմ 'ի նոցա տեղի ինչ առաւելութեան, այլ ամենևին լի ստութեամբ»։

մանութիւն մը ըրաւ և հրատարակեց 'ի 1870. իսկ զնոյնն՝ ուրիշ օրինակի մը հետ բաղդատելով տպագրութեամբ 'ի լոյս ընծայած էր Նէանդէր 'ի 1864։ Սրբոյն Յակովբայ կրտսերոյ ընծայութիւնն ու Նախաւետարան կոչումը Փոսթէլի հնարք կ'ենթադրեն քննադատները, որովհետև իրենց գրչագրաց մէջ երբեք այդ անունով կոչուած չէ։ Բայց 'ի Մերում մատենագրութեան նոյն անուամբ կը յիշատակուի, և խորագիրն է. « Պատմութիւն յաղագս մարդեղութեան Քրիստոսի մարմնացելոյն 'ի սրբոյ Կուսէն Մարիամայ. զոր և Յակոբոս եղբայր Տեառն ասացեալ է որ 'ի սկզբանէ ականատես էր Բանին Աստուծոյ »։ Այսպէս կը խորագրէ չորեքտասաներորդ դարուն սկիզբը գրուած գրչագիր մը (ՉԾԹ). և յիշատակարանն կը ծանուցանէ « գրեալ յիշատակ Գէորգ կրաւնաւոր քահանայի ... ձեռամբ Յոհաննէս գծագրող քահանայի, 'ի հայրապետութեան Զաքարիէ Հայոց կաթողիկոսի, և յառաջնորդութեան գերահռչակ սուրբ ուխտիս Վարագայ՝ համանչունց եղբարց տէր Սարգսի և տէր Պետրոսի որք հեզութեամբ և հանդարտութեամբ հովուեն զբանաւոր հօտս ... Գրեցաւ 'ի գաւառին Վանայ 'ի գեղջն Աւանց ընդ հովանեաւ սուրբ Յովհաննու կարապետին և սրբոյն Գրիգորի Հայոց լուսաւորչին »։ Ի Մատենադարանին Էջմիածնի գտուածներն ալ հետևեալ խորագրով կը յիշատակուին 'ի տպագիր ցուցակին. « Պատմութիւն մարդեղութեան Փրկչին 'ի Յակոբայ Տեառնեղբօրէ ». (Թիւ գրչ. 1726)։ « Պատմութիւն սուրբ Կուսին՝ 'ի Յակոբայ Տեառնեղբօրէ ». (Թիւ գրչ. 1727)։

Երկու օրինակք Մանկութեան աւետարանին կը գտնուին 'ի Մերում Մատենադարանի. յորոց մին՝ ընտրելագոյն գրչութեամբ, բայց պակասաւոր 'ի սկըզբանն և 'ի վերջն, և զոր կը լրացընէ միւս օրինակն։

Հնագոյն աւանդութիւն մ'ալ կը յիշատակուի 'ի Կոստուց անտարակոյս « գրեալ 'ի Թուականութեան Հայոց ՉՂԶ 'ի Թագաւորութեան Կոստընդայ՝ որդւոյ պարոն Պաղտինի »։

Բանասիրաց հետաքննութեանն համար կը դնենք ասոր գլխակարգութիւնն.

Վասն սրբոյ կուսին Մարիամու, որ եղեւ 'ի տան Հօր իւրում, զոր ասացեալ է սրբոյն Յակոբայ Տեառնեղբօրն ։

Ա. (Ծնունդ). Իսկ այսր Յովակիմ յորժամ եկն 'ի տանէ իւրմէ՝ առեալ զՀօտս եւ զՀովիւս գնաց յանապատն ։

Բ. Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան, որ եղեւ 'ի տան Հօր իւրում ։

Գ. Վասն սրբոյ կուսին Մարիամու ծննդեան, որ եղեւ 'ի տաճարին սրբութեան զատն երկոտասանին։

Դ. Վասն սրբոյ կուսին Մարիամու տալ զնա Յովսեփայ 'ի կնութիւն ըստ օրինի առանդրութեան խորհրդոց պահել զկոյսն սուրբ զգուշութեամբ, եւ յանձնելոյ զնա 'ի Տէր Հաւատով։

Ե. Վասն աւետաւոր Հրեշտակին ձայնին որ քարոզեաց զյղութիւն սրբոյ Կուսին Մարիամու ։

Զ. Վասն արդարութեան Յովսեփայ, եւ զզգուշանալոյ զկոյսն սուրբ անմեղութեամբ եւ պատսպարանելոյ զնա ։

Է. Վասն Մարիամու յանդիմանելոյ զկուսութիւնն սուրբ, եւ պարկեշտութիւնն Յովսեփայ, եւ տալ նոցա երկոցունց զջուրն փորձութեան ։

Ը. Վասն ծննդեան անուան մերոյ Յիսուսի Քրիստոսի յայրին ։

Թ. Վասն նախամօրն Եւայի եւ Յովսեփայ փութով Հասանել նոցա եւ տեսանել զծնունդ անապականեալ սուրբ Կուսին Մարիամու ։

Ժ. Վասն Հովուացն որ տեսին զծնունդ Տեառն մերոյ ։

ԺԱ. Վասն գալստեան մոգուցն ընծայիւք յերկրպագութիւն նորածնին մանկանն Յիսուսի ։

ԺԲ. Վասն տանելոյ զնա 'ի տաճարն 'ի քաղաքն Երուսաղէմ եւ 'ի Թլփատել ։

ԺԳ. Վասն չարութեանն Հերովդէի եւ կոտորելոյ զմանկունսն 'ի Բեթղեհէմ ։

ԺԴ. Վասն դարձեալ չարութեանն Հերովդի. սպանանել զԶաքարիա վասն Յովհաննու որդւոյ նորա ։

ԺԵ. Վասն Հրեշտակին յայտնելով Յովսեփայ փախչիլ յԵգիպտոս ։

ԺԶ. Վասն կենաց Նոյեա փոխանակմանն Գրիգորի որ է Յեփթայ։

ԺԷ. Վասն խորանակերպ շինուածոյ եւ ցցեալ եւ զգալլոյ Իգ- գերացւոց։

ԺԸ. Վասն գառնելոյ Նոյեա Հրամանաւ. Հրեշտակին յե- կելոյն Իւրեանց։

ԺԹ. Գալ յերկիրն Արարատ. խորանակերպ շինուած եւ կենդանեացն զեռեալն։

Ի. Ելեալ յերկիրն Քանանու ազգեր զոհաբերելիս 'ի ծնածուց եւ կենդանեացն զեռեալն։

ԻԱ. Ելեալ Նոյեա յերկիրն Իսրայէլի, եւ առեալ ցցեալ յաւ- սուցն գրութեան։

ԻԲ. Ելեալ Նոյեա 'ի քաղաքն Աբիմելէքայ՝ ապա զոհաբե- րեն եւ կենդանեացն մեռեալս։

ԻԳ. Ելեալ Նոյեա 'ի քաղաքն Տաւրոսի եւ առեալ զնա յաւ- սուցն ներկարարութեան եւ զոհաբերելեացն որ եղեւ անդ։

ԻԴ. Վասն գալոյն Նոյեա յերկիրն Գալիլեացւոց եւ զոր ա- նէր ընդ մանկունսն Եբրայեցւոց եւ այլ զոհաբերել գործոյն։

ԻԵ. Եւ եկն 'ի գիւղն Եմաուսա եւ բժշկէր զհիւանդսն։

ԻԶ. Վասն բազում բժշկութեանս զոր կատարեաց Յիսուս 'ի քաղաքն եւ 'ի գիւղն եւ յայլ տեղիս զոր առնէր բժշկութիւն Յիսուս։

ԻԷ. Վասն մարգարէիցն աւանդութեան զչարեալն կատա- րելոյ եւ օրինացն զոր առնէր Յիսուս։

ԻԸ. Վասն գատաւորութեան զոր առնէր (Յիսուս) 'ի մէջ երկու զինուորաց։

***

Բաղդատելով հայկական մատենագրութեան այս հին աւանդը՝ ընդ հրատարակելոցն յեւրոպացի հմտաց, մեծ տարբերութիւն կը գտնենք անոնց եւ մեր հայերէն թարգմանութեան մէջ. եւ եթէ հայրենեաց սէրը զմեզ չխաբեր, կ'ախորժինք նախամեծար սե- պել զմերն. եւ չենք տարակուսիր թէ կարեւոր ծա- ռայութիւն մը հնութեան եւ մեծապէս հաճոյական դէպք ըլլայ իմաստնոյն Եւրոպիոյ՝ եթէ օրինակաց բաղդատութեամբ եւ քննադատութեամբ հրատարա- կուի հայկական բնագիրն՝ իրենց ծանօթ լեզուի մը թարգմանութեամբ։

Նոյն սորոյն Յակոբայ Երուսաղեմայ ընծայեցուած կը գտնենք՝ ՚ի կարգի անհարազատ գրութեանց, նաեւ հետեւեալ խորագրով ուրիշ գրուած մը. « Պատմութիւն չարչարանաց Քրիստոսի տեառն մերոյ ՚ի ժամանակս Պոնտացւոյ Պիղատոսի դատաւորին Հրէաստանի ; եւ քահանայապետացն Աննայի եւ Կայիափայ, շարագրեալ ՚ի ձեռն երանելւոյն Յակոբայ առաքելոյ եղբօր Տեառն եւ որդւոյն Յովսեփայ » : Այսպիսի գրուածի մը յիշատակութեան չհանդիպեցանք առ Մինիէի (Dictionnaire des Apocryphes) եւ այլուր. Երեւի մնաց չէ այն աւետարանին որ առ Նոտտ կ՚ընծայուի սորոյն Յակոբայ Մեծին։

***

Նիկոդիմեայ անուամբ աւետարան մ՚ալ կայ, նոյնպէս ՚ի կարգի Անյայտից։ Գործք Պիղատոսի (Acte) կոչուած գրութիւն մը՝ անգամին ՚ի նախկին ժամանակաց քրիստոնէութեան մեծ հռչակ ունեցած էր. սուրբն Յուստինոս, Տերտուղիանոս, Եւսեբիոս եւ այլք ՚ի Հարց յաճախ անոնցմէ վկայութիւն բերած են իրենց գրուածոց մէջ։ Իրենցմէ մէջ բերուած ու յիշատակուած դէպք եւ հատուածք, իբրու քաղուած ՚ի Գործոց Պիղատոսի, կը գտնուին Նիկոդիմեայ ընծայուած աւետարանին մէջ, որ յերկուց իրարմէ տարբեր մասանց կը բաղկանայ. առաջինն՝ մինչեւ ՚ի գլուխն մետասաներորդ, եւ կը պատմուին ՚ի նմա դատապարտութիւն, չարչարանք, թաղումն եւ յարութիւն Քրիստոսի. յարմարեալ եւ յօդեալ ըստ աւետարանագրաց, ՚ի Գործոց Պիղատոսի, ու երբեմն նաեւ յառասպելախառն աւանդից. իսկ երկրորդ մասն ՚ի մետասաներորդէն մինչեւ ՚ի վերջինն՝ ՚ի քսաներորդ եօթներորդ գլուխն, կը պարունակէ զհետաքննական պատմութիւն Կարինոսի եւ Լեւկիոսի

որդւոց Սիմէոնի ծեր Ծերունւոյն. որոնք 'ի մեռելութենէ դառնալով 'ի կեանս՝ կը պատմեն զիջանելն Քրիստոսի 'ի դժոխս, և որ ինչ անդ անցք անցին. յայնժամ 'ի մէջ իշխանացն խաւարի, նահապետաց մարգարէից և փրկողին Յիսուսի։

Հաւանականաբար 'ի Հրէից քրիստոնէութեան սուրբ կրօնքն ընդունող մէկու մէկն է այս երկասիրութիւնը՝ որ իրեն նպատակ դրած է նախնիքին հաւատակցաց խստասրտութիւնն ու անհաւանութիւնը պարսաւել՝ վկայութեամբ ժամանակակցաց Քրիստոսի. ոմանք կ'ենթադրեն թէ հինգերորդ դարուն մէջ ապրած ըլլայ հեղինակը. իսկ այլք՝ աւելի հնութիւն կու տան անոր. ինչպէս չեն համաձայնիր նաև գրութեան համար գործածած լեզուին վրայ։ Յունաց մէջ Նիկոդիմեայ աւետարանին յիշատակութիւնն ընող և ըստամանեայ հրատարակողաց մէջ առաջինն է Լեւոն Ալլատիոս (De Libris Ecclesiasticis Græcorum) և առ լատինս յառաջ քան զնա Գրիգոր Տուրոնի եպիսկոպոս (Tours) յիւրում Գաղղիական պատմութեան. Վինկենտ Բելլովակեցի ալ յարգէն յիշատակեալ 'ի մէնջ 'ի Պատմական հայելի մատենին։ Մեր մատենագրութեան մէջ ինչուան հիմա առաջին մասին մէկ քանի հատուածոց հանդիպեր ենք, որ և կը կրեն զանուն Նիկոդիմեայ։ Իսկ երկրորդն՝ ինչպէս ըսինք, նաև ըստ հմտագոյն քննադատից, առաջինէն բոլորովին տարբեր երկասիրութիւն մ'է, և սորուն հետքը դեռ չենք տեսած ոչ 'ի մեր և ոչ յայլ ազգային Մատենագրաց ցուցակս։

Եւրոպացւոց ծանօթ Նիկոդիմեայ գրութեան հետևեալ յառաջաբանն՝ որ առ մեզ կը պակսի, այս խօսքերն կ'ամփոփէն. « Ես Հեմեոս յազգէ Հրէայ, վարդապետս օրինաց 'ի մէջ հեբրայեցւոց, հմուտ աստուածային գրոց, հաւատովք աշակերտեալ գրութեանց տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, նուիրա-

կանգնած կենդանւոյ սուրբ միաբանութեանցն, և պայծառ-
ացեալ 'ի հետազօտութեան որոց գործեցանն 'ի Հռոմ
առ իշխանութեամբ Սեբաստոսի Կոստանդեայ․ և յառաջ
անցեալ զպաշտամունս մեհենին զոր 'ի Լեզոն հեթանո-
յեցի գրելոյ Նիկոդիմոսի, Թարգմանեցի զայնոսիկ 'ի
յոյն բարբառ, 'ի գիտութիւն և 'ի խնդրամտութիւն
եկեղեցականաց անուան մերոյ Յիսուսի Քրիս-
տոսի․ զոր և որպէս յամս իշխանութեան Թէոդոսի
Փոքու, յաւթուստաներորդ ամին, և Վաղենտինիա-
նոսի Աւգոստոսի։ Որ ընթեռնուցուն որք զայնոսիկ
հեղլեն գրքութեամբ և կամ 'ի հաւաքմայեցին, մի մո-
ռասցին յիշել զիս զԹարգմանողն մեղաւորս, զի
ողորմեսցի ինձ Աստուած և քաւեսցէ զմեղսն զոր
գործեցի։ Խաղ որ ընթեռնուն կամ ունկնդիր լինի-
ցին, խաղաղութիւն 'ի վերայ նոցա և ողջոյն»։ Հաս
կ'ուսարան յառաջաբանն, և յետոյ սկզբնաւորու-
թիւն պատմութեանն, որ զամենն նաև 'ի մեր ձեռա-
նագրութեան, այսու խորագրաւ․ «Յիշատակարան
չարչարանաց և յարութեան Տեառն մերոյ Յիսուսի
Քրիստոսի, որ եղեւ առաջի Պիղատոսի՝ զոր պատ-
մեաց Նիկոդիմոս»․ և սկզբնաւորութիւնն է, «Յամս
ութեւտասներորդի իշխանութեան Տիբերիոսի կայ-
սեր Յունաց, և Հերովդէսի որդւոյ Հերովդիսայ Գա-
լիլեացւոյ»[1]։

Նիկոդիմեայ աւետարանին հատուածք են նաև հե-
տևեալքս՝ որ կը գտնուին 'ի գրչագիրս մեր․ «Պատ-
մութիւն չարչարանացն Տեառն և վկայութիւնն զոր վկա-
յեաց առաջի Պոնտացւոյ Պիղատոսի, յաշխարհա-
կեն Նիկոդիմոսի գտեալ աշակերտի»։ — «Պատմութիւն
բարձման և յարութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ 'ի

[1] Ա․ Մէկէկ․ « Ceci arriva dans la dixhuitième année de l'empire de Tibère César, empereur des Romains, et d'Hérode fils d'Hérode roi de Galilée ».

բանին Նիկոդիմոսի»։ Նոյն 'ի Գործոց Պիղատոսի հատուածք կ'երեւին. «Թուղթ Պիղատոսի առ Տիբերիոս կայսրն Հռոմայ վասն փրկչին» — «Պոնտիոս Պիղատոս՝ թագաւորի մեծի խնդալ. Դժնդակ իրք»։ — «Պատմութիւն դատաստանին Պիղատոսի զՔրիստոսէ»։ Փաբրիկիոս կը յիշէ և մէջ կը բերէ յանուն և 'ի դիմաց դատաւորին գրուած երկու թղթերը[1]։

***

Թուղթ Պաւղոսի երրորդ առ Կորնթացիս, և Կորնթացւոց առ Պաւղոս. — Աստուածաշունչ գրոց Հայկական թարգմանութեան մէջ կը գտնենք զԹուղթ մի գրեալ 'ի Կորնթացւոց առ Պաւղոս առաքեալ, և նորա պատասխանին՝ որ կ'ըլլայ երրորդ Թուղթ առ Կորնթացիս։ Այս կրկին Թուղթք որ միայն 'ի գըրչագիրս մեր կը գտնուին՝ առաջին անգամ հրատարակուեցան լատին թարգմանութեամբ յարեմուտս անցեալ դարուն սկիզբները՝ հետևեալ խորագրով. Epistolæ S. Pauli ad Chorinthios, et Chorinthiorum ad S. Paulum armenice, ex museo viri clariss. Philippi Massonii, versionem latinam accurante Dr Wilkins, Amstelodami, 1715. Փաբրիկիոս ալ արտագրեց զանոնք իր Նոր կտակարանաց անհարազատ գրուածոց հաւաքին մէջ. (Հատ. Գ. 666), աւելցընելով Ուիթրէքթի համալսարանին ուսուցչի և հռչակաւոր հայագէտ Լաքրոզի դիտողութիւնները այս երկու Թղթոց վրայ։ Ուրիշ հրատարակութիւն մ'ալ ըրաւ նոյն Թղթոց Մասսոն՝ 'ի Քննական պատմութեան ընդհանուր դպրութեանց կոչուած գրոց մէջ.

[1] Առ Փաբրիկիոսի. « Rélation transmise a Tibère sur la passion de Jésus-Christ ».

որ և յետոյ թարգմանուելով 'ի գերմաներէն լեզուաւ՝ գա-
նուած աստուածաշնչական և կրօնական հանդիսից մէջ ալ հրատարակուեցաւ: Գուլիելմոս և Գէորգ եղբարք Ուիսթոն իրենց ծանօթով տպագրած Խորենացւոյ պատմութեան լատինական թարգմանութեան մէջը աւելցուցին նաև այս թղթերը (Լոնտոն, 1736). և զոր նոյնը գերմանացի ուրիշ բանասէր մը իր 'ի գիտնա-
դասական տեսութեանց նիւթ ըրաւ զանոնք[1]: 1805ին հրատարակուեցան 'ի կարգի Յաւելուածոց Աստուածաշունչ գրոց, 'ի Ս. Ղազար Վենետիկոյ, ուր յետոյ ուրիշ ապացուցութիւնք ալ եղան, նաև թարգմանութեամբ յանգղիականն բարբառ: Հայտնէ-
ղերկի համալսարանին ուսուցիչներէն մին՝ Ռինկ-թարգմանելով 'ի գերման լեզու, մանաւանդ գրուածքով ('ի 1823) պաշտպան ու ջատագով եղեցաւ անոնց վաւերականութեանն. բայց իր կարծեաց հակառակեցաւ ուրիշ գիտնական բանասէր մը, Ուլման, նոյնպէս գերմանացի[2]:

Լաքրոզ՝ զոր արդէն յիշեցինք, հետևեալ տեսութիւնն կ'ընէ այս թղթերուն վրայ. «Անոնց հայկական լեզուն, կ'ըսէ, չունին աստուածաշնչական գրոց հին թարգմանութեանն գեղեցկութիւնն ու վայելչչութիւնը, որ իր տեսակին մէջ գլուխ գործոց ու միակ սեպուած է: Այնպիսի բառեր կը գտնուին, կ'ըսէ, անոնց մէջ, որ 'ի հին լեզուի գործածական չէին, և կամ ուրիշ իմաստով 'ի կիր առնուած առ նախնիս: Ես այնպէս կը համարիմ թէ զանոնք յօրինողն 'ի վերջ տասներորդ դարու կամ 'ի սկիզբն մե-

[1] Epistolæ duæ apocriphæ, altera Chorinthiorum ad Paulum Apostolum, altera Pauli Apostoli ad Chorinthios, quæ dicitur perisse, ex cod. ms. armen. nunc primum editæ separatim, græceque et latinæ versæ, et additio Guil. atque Geor. Wisthoniorum notis. prefat. et animadversionibus auctæ. Lipsiæ, 1776.

[2] Haidelberg Jahrb. 1823, Թիւ 34:

առաքելաբանքին երեցած, և 'ի Հայս՝ երբ Պաւղի-կեանք, որ հին Մանիքեցւոց մին ձիւղն էին, ծառա-յեր են իւրեանց վարդապետութեանց այն երկիրնե-րուն մէջ։ Կորնթացւոց առ Պաւղոս ենթադրեալ նամակին մէջ յիշուած Սիմոնի ու Կղէոբոսի ըն-ծայուած մոլորութիւնք՝ նոյն են Պաւղիկեանց քա-րոզած վարդապետութեանց հետ։ Ուստի ինծի կ'ե-րեւնայ թէ հայ մ'է ասոնց հեղինակը, այս հերձուա-ծողաց դէմ մաքառելու համար»։

Այսչափ Լանգլուա։ Բայց այս ենթադրութիւնը իր ուժն ու հաւանականութիւնը կը կորսնցնէ նաև ա-նով որ սուրբն Եփրեմ Խուրի ասորի՝ սրբոյն Պաւղո-սի սուրբ թղթոյ հետ ասոր ալ մեկնաբանութիւնն յօրինած է, որուն թէպէտ բնագիրն կորսուած է, բայց հայկական հին և ընտիր թարգմանութեամբ հինգերորդ դարու հասած առ մեզ, և որ անծանօթ էր Լանգլուաի և իր ժամանակակցաց։ Երկրորդ՝ որ մեր ամենայն վստահութեան և հաւատարմութեան ար-ժանաւոր անձինք, սուրբն Գրիգոր Լուսաւորիչ և Թէոդորոս Քռթենաւոր անկէ վկայութիւն կը բե-րեն իրենց երկասիրութեանց մէջ։ — Լուսաւորչի խօսքերն են 'ի վարդապետութեան իւրում առ Ա-գաթանգեղեայ. «Որպէս և առաքեալն Աստուծոյ որ հմուտն և տեղեակն էր աստուածաբար խորհրդ-ոյն, քանզի և ասէ իսկ. Անօրէն իշխանն իբրև աս-տուածանալն կամեցաւ, ձեռն արկանէր, և զամե-նայն մարդիկ մեղօք կապէր»։ Եւ են բանքն նոյն ընդ-բանից Պաւղոսի առ Կորնթացիս երրորդ 'ի համարն 16. «Իսկ որ անօրէն իշխանն էր իբրև աստուածա-նալ կամեցաւ, ձեռն արկանէր 'ի նոսա. և զամենայն մարդիկ մեղօք կապէր»։ Քռթենաւորն ալ կ'ըսէ. «Որթոդոքսական, վերադիտող, քրիստոսադէտ նախահարքն գումարեալք 'ի Նիկիոպոլիս՝ կանոնա-գրեցին, երկակի հնգեակ և եզակի քառեակ թուով

միայն 'ի սրբում կոչարանին ընթեռնուլ թուղթս զաստուածաքարոզ առաքելոյն Պաւղոսի։ Եւ 'ի նախադասում գրութեանն զնոյն շարագրութիւն վերջ առեալ է։ Իսկ բարեգրուտեալին Գրիգոր զսա 'ի հարցն լուեալն, և ոչ մակագրեալ 'ի նոր թարգմանութիւնս՝ վկայաբանութեամբ ժառանգեաց, թէ Անօրէն իշխանն երբեմն աստուածանալն կամեցաւ, ասէ Առաքեալն, զամենեսին ընդ մեղօք գրեաց»։ Նոյն սուրբ վարդապետ՝ հետեւեալ խօսքերովը կը ծանուցանէ թէ ինչու կամ որոց ձեռքով դուրս ընկած է այս թուղթը 'ի բնագրէ սուրբ գրոց. «Այլ այս ուստի՝ վարդապետաց տանն Բարդեծանու է. և վասն այսորիկ ոչ թողին Բեծանացիքն զայս թուղթ յառաջեալ իւրեանց»։

Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ. Մէկ այլ համառօտ, բայց հնութեան ամէն հետքը վրան կրող պատուական աւանդ մը 'ի կարգէ Անյայտից. որուն մեկնաբանութիւնն ալ ըրած է սուրբն Ներսէս Լամբրոնացի։ Բանասիրաց մեծանուոր ուշադրութեանն կը յանձնենք բազմահմուտ, և իր այլևայլ գիտնական երկասիրութեամբք ազգին արդէն հանրածանօթ անձի մը, Գաթըրճեան վարդապետի, քննադատական կարևոր գրութիւնն, սոր հնութեան և հարազատութեան վրայ [1]։

Թուղթ Բառնաբայ. զոր ըստ ինքնագիր յիշատակարանին թարգմանեց 'ի յունէ Ներսէս Լամբրոնացի. թէպէտև ինչուան հիմայ յայտնուած չէ։ Լամբրոնացւոյն յիշատակարանն կը գտնուի 'ի հնագոյն ձեռագրի Թղթոյն Բառնաբայ, որ 'ի Վատիկանեան մատենադարանի 'ի Հռոմ, և է հետևեալն. « Ես Ներ-

[1] Հանգիստ երանելւոյն Յովհաննու, առաքելոյ եւ աւետարանչին, հանդերձ ծանօթութեամբք հայ և լատին, 'ի Հ. Յովսեփայ վարդապետէ Գաթըրճեան, 'ի Մխիթ. ուխտէն. Վիեննա, 'ի տպ. Մխիթ. 1877։

սեն Թարգմանչացն, զի թարգմանութեանս ի Հայ բարբառ, ՚ի Թէոդորիտոսեան գրքոյն ՚ի փառս Քրիստոսի Աստուածոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն ։

ԺԱ. ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՐԱԶԱՏՈՒԹԻՒՆ

Արդեօք աստուածաշունչ գրոց հայ թարգմանութիւնք չե՞ն կրած երբեք, դարերու երկար ընթացքին մէջ, այլեւայլ ընթերցուածոց փոփոխութիւնք կամ այլայլութիւնք, և Թարգմանչաց մեծարգի և բազմարդիւն աշխատասիրութիւնն հասե՞ր է մինչեւ առ մեզ անարատ, իր նախկին կերպարանքովը։

Որչափ ալ ուզենանք, նաև օտարազգի եւրոպացի հմտից և քննադատից վկայութեամբն հաւաստել և հաստատել թէ այս նկատմամբ մեծ երկբայութեան ապահով ըլլան գրիչք մեր և գրչագիրք, որով և իրաւամբ հայկական թարգմանութիւնն պատուականագոյն սեպուած ՚ի մէջ պատուականաց և հռչակուած, բայց և այն անտարակուսելի է թէ մարդկային որ և իցէ գործ և ձեռնարկ չիկրնար բոլորովին անխախտ ըլլալ ՚ի թերութեանց։ Զայս թէ Թարգմանչաց, և առաւելապէս անոնց վաստակը ընդօրինակութեամբ յետագայից աւանդողաց համար կըրնանք և հարկ է ըսենք, առանց ուզելու բնաւ կամ արատ մը դնել վրանին, կամ պակսել այն մեծարանօք լի երախտագիտութենէն զոր նոցա կը պարտիմք։

Յունական, ասորի և լատին ամենէն աւելի հնագոյն գրչագրաց մէջ կը գտնուին ընթերցուածոց իրարմէ տարբերութիւնք, որով և փոփոխութիւնք

ոճերուն օրինակին վրայ։ Ինչո՞ւ զարմանանք եթէ այսպիսի պարագաներու ընթերցուածոց գործածին նոյն առ․․ մէջ։ Որ եթէ յաճախ կրկին պատահել յանձնապաստութենէ կամ 'ի պատճառս ոչ այնչափ հմտութեան ընդօրինակողաց, այլ այն ինչպէս յառաջագոյն ալ առիթ ունեցանք յիշատակելու, զանազան հեռաւոր՝ բանից խակ թէ երբեմն նաև պարատաւոր դիտմամբ՝ որոնք Գրոց ընթերցուածոց մէջ մուտ գտած են փոփոխութիւններ։ Մերին ալ երբբեմն, — առանց պատասխանատու սեպելու զանոնք — այդ փոփոխութիւններուն մտուցեր են իրենց օրինակաց մէջ․ կամ դիտմամբ զանազան օրինակին հետեւողութեամբ վարուեր են։ Այս ընթերցուածոց կամաւոր կամ անմտադիր փոփոխութիւնք մերթ քերականական տեսակէտ մը ունին, մերթ ալ մեկնողականք (exégetique), մերթ պատմականք և մերթ ալ աշխարհագրականք։

Քանի մը օրինակով հաստատարմացընենք մեր խօսքը։ Առաջիններէն՝ Վատիկանեան, Աղեքսանդրեան օրինակք՝ Մարկոսի աւետարանագրին ԺԱ գլխէն համար մը պակաս ունին, քսանեւվեցերորդը. «Զի եթէ դուք ոչ թողուցուք, և ոչ հայրն ձեր որ յերկինս է՝ թողցէ ձեզ զյանցանս ձեր»։ Յիշեալ գրչագրաց կը հետեւին մեր ձեռագիր աւետարանաց օրինակք ալ, 'ի բաց ձգելով այդ համարը։ Սակայն անոնցմէ կը տարբերին՝ երբ Մատթէոսի աւետարանին մէջ (ԺԹ. 9) կ'ընդունին անոնց դուրս ձգած հետեւեալ խօսքերը․ «Եւ որ զարձակեալն առնէ՝ շնայ»․ և 'ի Մարկոս (Թ. 29). «Այս ազգ ոչ իւիք ելանէ եթէ ոչ պահօք և աղօթիւք»․ ուր առաջինքն կը զեղչեն պահօք բառը։ Ասոնք միայն քանի մը օրինակներ․ որոնցմով մերթ է հաստատարմացընել թէ ուրիշ զանազան հին օրինակաց ընթերցուածոց երբեմն նաև վրիպանաց հետեւորդք են նաև մեր օրինակք։

Աւելի բացայայտ, ու ինչպէս սովոր է ըսուիլ՝ գրեթէ պատմական օրինակներ մէջ բերելով ՚ի հաւաստիս մեր ենթադրութեան: Յայտնի է ամենեկեաց թէ Մարկոսի աւետարանին վերջին գլուխն այն մասը՝ յորում Յիսուս՝ Մագդաղենացւոյն և առաքելոց երեւնալը կը պատմուի, ՚ի բազմաց հակառակութեան կրած է՝ իբրև ոչ հարազատ, և յոմանց նաև ՚ի սպառ մերժուած: Այսպէս մեր գրչագրաց մէն մը՝ իբրև յաւելուած և ոչ մասն ընդունելով զայն աւետարանին, և եկամուտ, կամ ՚ի սպառ զանց կ՚ընեն, և կամ կը դնեն զայն յետ վերջացընելոյ զհարազատ բանս աւետարանին: Սակայն մեր աստուածաշունչ գրոց թարգմանութեան վրայ աշխատող, որոց Սահակայ և Մեսրովպայ գործակցին և վաստակակցին՝ Եզնիկայ ինքնագիր մէկ երկասիրութեան, որուն հարազատութիւնը տարակոյս չվերցըներ, Ընդդէմ աղանդոց գրքին մէջ, յայտնապէս կը տեսնենք որ Քրիստոսի 420-30 թուականին արդէն ծանօթ և ընդունելի էր այն մեր նախնեաց: Բագրեւանդայ եպիսկոպոսին հետեւեալ տողերը կը հաստատընեն զայն. «Այլ ճշմարտից հաւատացելոց՝ ոչ սատանայ փորձութեամբքն կարէ սանձանել, և ոչ կախարդք՝ դիւթք, որպէս և ինքն Տէրն ասաց ցիւր աշակերտսն եթէ Ահա ետու ձեզ իշխանութիւն կոխել զօձս և զկարիճս, և զամենայն զօրութիւն թշնամւոյն: Եւ դարձեալ թէ Նշանք հաւատացելոց այս են. զդեւս հանիցեն և օձս ՚ի ձեռս առցեն և զդեղ մահու ըմպիցեն և ոչ մեղանչիցէ»:

***

Ուրիշ խնդրոյ և մանրազննին խուզարկութեանց նիւթ եղած են՝ որոյն Ղուկայ աւետարանագրի ԻԲ. 43-44 համարները, յորս կը պատմուի Քրիստոսի

-տեական մերոյ 'ի Գեթսեմանի արիւն քրտնիլն : Հայկական հին եկեղեցւոյ աւանդութիւնք և մատենագրութիւն . հաւատամք կը ցուցընեն թէ մեր աստուածաշունչ մատեանք 'ի Տիեզերական դարու ունէին զայն համարմունքն . և թէ ժամանակ անցնելէն ետքը վերցուելով յոմանց 'ի գրչագրաց , այնպէս հասարինչ առ մեզ , ոմանց պահելով զայն 'ի բնագրին , այլոց 'ի լուսանցս կամ 'ի ստորեւս իջիցն , և յոմանց բոլորովին վերջնելով : Նոյն իսկ այգայիսի անհամաձայնութիւն , և եւսեբեան կանոնաց մէջ մուտ գտած փոփոխութիւնը զայդ կ'ակնարկեն : Այս ենթադրութիւնք կը հաստատագինւոյ նաև 'ի պատմութենէ : — Եփեսոսի ժողովէն անմիջապէս ետքը՝ Պարսից իշխանութեան տակ եղող Նեստորականք՝ սկսան ետնէ ընդ ծաւալել իրենց մոլորութիւններն 'ի Հայաստան . յորոց զմերան զգուշացընելու համար՝ սուրբն Պրոկղ պատրիարք Կոստանդնուպոլսոյ գիրեց՝ եկեղեցական մատենագրութեան մէջ արդէն հռչակեալ թուղթը : Այդ նամակ՝ իր գիտած վախճանին հասաւ : Երբեք խորամանկ չհաստատեցան Նեստորի վարդապետութիւնն և կարծիքը 'ի մէջ Հայոց . որով ազգին լսութիւնք ընդհանրապէս ազատ մնաց այդ հերձուածէն : Գտնուեցան ոմանք հետևողք այդ մոլորութեան . բայց ոչ բազմաթիւ և ոչ զօրաւոր կուսակցութիւն մը կազմելով : Սակայն նոյնը չհանդիպեցաւ նաև Քաղկեդոնի ժողովոյն գումարմանէն ետքը . և յայտնի են 'ի պատմութեանց թէր ու դէմ դրութիւնք , ժողովք՝ համաձայնութիւնք և գործք որք այն առթիւ յուզեցան և յուզեցին զՀայաստան : Թէ որչափ մեծ է ազդեցութիւն ունեցաւ այն խնդրոյն մէջ Մայրաքաղաքին Յոյնաց , յայտնի է դարձեալ 'ի պատմութեանց . և հաւանական կ'երևի , ինչպէս քիչ ետքը պիտի տեսնենք , որ թէ ինք և թէ համախոհքը՝ սուրբ Գրոց խօսքերով իրենց

գործքին՝ ու վարդապետութիւնը ընդունելի ընել տալու համար՝ զայն խարդախելու անարժան միջոցին ալ ձեռք զարկած ըլլան։ Մեր ենթադրութիւնը հետեւեալ դէպքերէն մեծագոյն հաւանականութիւն կ՚առնու, ինչպէս կարծենք չսխալիլ։

Մայրագոմեցին բազմաթիւ հակառակորդք և ընդդիմամարտք ունեցաւ իր կարծեացը՝ նոյն իսկ իր հայրենեաց հողոյն վրայ՝ և իր ժամանակակցացը մէջ։ Եթէ հնութիւնն իրենց ամէն երկասիրութիւնքը չէ հասուցած, բայց կը գտնուի նշանաւոր գրուածք մը յօրինեալ 660–710 թուականաց միջոցին. Թերեւս նոյն իսկ 'ի կենդանութեան Մայրագոմեցւոյն։ Ասիկայ է միայնաւորի մը, ինչպէս կը կոչեն զինք գրչագիրք, Թէոդորոսի Քռթենաւորի, որուն գրուածոց ոճէն յայտնապէս կ՚երեւնայ թէ իր ժամանակին երեւցած մոլորութեանց և մոլորեցուցչաց դէմ կը խօսի։ Իր ճառին յառաջաբանը կազմող քանի մը տողերէն ետքը անմիջապէս խօսքը կ՚ուղղէ առ Մայրագոմեցի և առ համախոհս նորա. «Արդ չարահաւեամբ, կ՚ըսէ, զխորհուրդս իւրեանց՝ սկզբնականին մատենագրել այսպէս։ Ոչ ասեն տկարութեամբ, այլ կարողութեամբ յաղթեաց մարմնի թշնամւոյն. քուրական վկայեն բանք. Ոչ ասարի տուն սկայի, եթէ ոչ նախկին հզօրն կայր։ Եւ եթէ այս ճշմարիտ է՝ յայտ է, ասեն, թէ անընդունակ է առաքինաբարգելա [illegible] [illegible], որ յաղթահարութեանն զանհաճոյութիւնն առաջին ամենակարողի Բանին Աստուծոյ, և զ՚ի հրեշտակէն քաղցրութիւն»։ Որով յայտնի և ստոյգ կ՚երեւնայ թէ Մայրագոմեցի և իր հետեւողք՝ որոյն Ղուկայ այդ համարը հանած էին, որ կայ յառաջին թարգմանութեան ըստ վկայելոյ Քռթենաւորին, և զոր անընդունելի ուղեցին սեպել։

Թէոդորոսի աշակերտն Յովհան Իմաստասէր, կամ Աւձնեցի որ 718ին բարձրացաւ 'ի հայրապետական

ութեան Հայաստանեայց, կը վկայէ թէ Մայրագօ-մեցին ինչ կերպով վարուեցան սուրբ Գրոց ընա-գրին հետ. «Եւ սակայն լիրբ և չար լինելով՝ զամ-բարշտութեանդ ոչ գիտացեր զյագուրդ... Յոր-ժամ տեսանես զմարդկային ինչ սուրբ Ճառեալ զՔրիստոսի կրկին, յանդգնիս անխղճաբար 'ի գրե-ցելոց անտի՝ որ զայնն քարոզէ, 'ի բաց ջնջել զբանն. և սոյս որոմնացան մշակացն է պայդ սերմանեալ: Որ ոչ միայն է անհաւանական զոր ասեսդ, այլ և անհաւատալի: Յորժամ չար մշակքն 'ի վերայ բարի սերմանն՝ որոմնացանութք լինել հանդիսանային, ա-մենեքին առհասարակ եկեղեցականացն 'ի բաց բար-ձեալ եղեն հոգաբարձուք. անտերունչ 'ի Քրիստո-սի առ մի հաւաքեալ գաւիթ չըջէին հօտիցն բազմու-թիւն. ո՞չ ոք տեսանէր և ո՛չ այն որ լսէր: Արդ եթէ էին ոմանք, այլ և այլովք եւս կենդանի մնացեալք, զի՞արդ էր եթէ զթեւրութեան առաջակալած անե-լով զաւանդիչս, զիւրեանցն 'ի ձեռս նոցա տային առ 'ի թիւրել զաւելադասութիւն»:

***

Բայց դառնանք առ Քաղթեննաւորն: Ոչ միայն կը վկայէ թէ Մայրագոմեցի Քրիստոսի արիւն քրտնե-լուն համարը կը ջնջէ, այլ նաև իր Ճառին գլխաւոր նպատակն ըրած է՝ անոր նկատմամբ եղած ընդդիմա-խօսութիւնն խափանել ջնջել: Խօսելով երկիւղի կամ վախի վրայ, որուն սկզբնաւորութիւնն կը հանէ մինչև 'ի ջրհեղեղն և 'ի դրախտն եդեմական, ցուցը-նելու համար թէ խոտելի կամ պարսաւոր կիրք մը չէ, որովհետև Աստուած հաստատեց զայն 'ի մարդն, և թէ երկիւղ՝ սկիզբն է զգօնութեան, կը յաւելու թէ Քրիստոս ամէն կիրքերն ընկալաւ, բայց 'ի մեղաց, առ փրկութիւն մարդկան. «Ընկալաւ, կ'ըսէ, զկիր-

տըն՝ անծիլցն քրտանն բարձմամբ. զերկիւղն՝ մա-
հուան երկիւղին ազատմամբ. զչարչարանսն՝ չարչա-
րանացն փրկութեամբ. զմահն բարձող 'ի կենացն փայտի՝
անմահութիւն. զպարտութիւն՝ սկզբանն կարատեալ
քննելութեան գործմամբ. զհամբարձմամբ՝ զկնի պատճ-
պատութեան պատուիրանին խոստման ծանօթու-
թեան »։

Յետոյ մէջ կը բերէ այլեւայլ աւանդութիւններ, որոնցմով հակառակորդք կը ջանային անվաւեր ցուցնել Ղուկայ աւետարանագրին այդ համարը։ Կ'ըսէին. « Ոչ որ ատամանեալ զերկս՝ ոգւոյն վերաբերեալ-նի. և եթէ մարդամ, ասեն, ոչ բաղկանայ, զգործ արդեւք զՅիսուսէ զարդւոյն Աստուծոյ իշխեսցէ ոք զայս բերանաբացել։ Այդ խաչացելոյ 'ի չարչարանութեանց, յումմէ՞ լուեալ զանձնականն գործոյդ լսագրութեան աւետարանին որպէս արեան առաջ տարացուցանութեամբ քիրտն, այլ ոչ թորմամբ անօթնահար արեան »։ Մայրաքաղաքի և իր հետեւողք՝ մեծ անձնաւորութեան մը վկայութեան ապաւինելով, կ'ըսէին թէ սուրբն Լուսաւորիչ իր վարդապետութեանը մէջ « զահոտքրտնելն և ոչ յատուկ ձայնիւ նշանակեաց. ուստի յայտ է, ասեն, թէ հնապատմութիւն աւետարանին ոչ է ընդունակ։ Եւ եթէ ոք քան զնախադասութիւն Գրիգոր Լուսաւորչի ընդել խնամացեալ, և այլ ինչ նորաձեւեսցէ ձայնել, գատապարտեալ է, ասեն »։ Իրենց այս ենթադրութիւնն ալ կը հերքէ Քաջբերունի, և որուն խօսքին մէջ մտան արդէն յառաջ բերինք Պաւղոսի առ Կորնթացիս երրորդ թղթոյն առթիւ։

Ոչ ինչ նուազ ծանր խնդրոյ մ'ալ նիւթ է իրը Կենդանաշնչացելոյ, որ ըստ մեր թարգմանութեան գլխաւորաց օրինաց Յովհաննու աւետարանին քննադրեալ հանդերձ և միայն 'ի վերջ նորին զետեղուած է։ Եւ այս թարգմանը պատճառը կը ծանուցանէ Կարապետ 'ի Միջնա-

թեան Յովհաննու թէ «Այս չնացեալ կնոջն իւրն , որ այլ քրիստոնէայքն ունին գրած ։ Պապիասայ է , որ հերձուածող խօսեցաւ և խոտեցաւ» . բայց Ներսէսեցին ('ի Մեկն. Երգոց) վկայութիւն կը բերէ , Քրիստոսի խօսքը մէջ բերելով . «Որպէս ասէր ցպոռնիկն՝ թէ Թողեալ լիցին քեզ մեղք քո . և ցմիւս պոռնիկն , թէ և ոչ ես դատապարտեմ զքեզ . երթ յայսմ հետէ մի մեղանչեր» ։ 1313 թուականին գրուած գրչագրի մը մէջ հետևեալը կը կարդամք որ հատուածիս վերաբերի . «Զայս չնորհ՝ տեսան օրինակելոց՝ Եւսեբեայ յեկեղեցական պատմութեանն է , թերի յեբրայեցի աւետարանէ , ընկալեալ եկեղեցեկ 'ի յԵբրայց գրութենէ , յ'Լթ գլխոյն , Պապիայ բանիւ »[1] . Մեր բանիբուն վարդապետաց մէջն ալ Ստեփաննոս Դաշտեցի , կ'ըսէ . «Հանեալ 'ի բազմաց աւետարանաց , և ոչ գիտեմ էր պատճառ ... այլոյ աւետարանաց միայն է որ պահպանեալ գոյ յեկեղեցւոջ Գրիգորի Լուսաւորչին , որ է եկեղեցի Դաշտեցւոց և Թափբեցոց 'ի յԱրապահան , որ է ոսկետառ և մագաղաթեայ աւետարանն» ։ Կը գտնուին ասոնց նման նաև ուրիշ մանր հատուածք՝ մանաւանդ 'ի Նոր կտակին , որոց վրայ յերկարելը հետազօտական , բայց մեր նըպատակին դուրս է , և զոր չտանիր գրուածքիս չափը ։ Սակայն մեր մէջ բերած օրինակներունս ալ բաւականէն աւելի կ'ապացուցանեն թէ աստուածաշունչ գրոց գրչագիրք և օրինակք՝ նաև ու մեզ կրած են մանր յեղափոխութիւնք ։ Թէ երբ եղած են ,

[1] Աստուածաշունչ գրոց գրչագրի մը մէջ 'ի սորբեւս իւրն այն հատուածը աւելի որոշ բացատրուած կը գտնենք . «Զայս չնորհ տեսան օրինակելոց Եւսեբի ժամանակագրէ , թէ 'ի հերքոյեցի աւետարանէ առնու ընկալեալ եկեղեցի , վասն այնորիկ և ոչ ընթերցու պատշաճ համարեցաք կարգել ընթացից Յովհաննու աւետարանիս , զոր միշտակէ յերրորդ գրութեան Լթ գլխոյն բանիւ Պապիայ »։

Քաթենաւորի և իր աշակերտին Իմաստասիրի խօսքերէն կը հասկընանք թէ բաւական հնութիւն ունին ։ Հին ձեռագրաց պակասութիւնք չեն թողուր մեզ աւելի համոզիչ բան մը ըսել այս նկատմամբ ։ Սարկաւագ վարդապետին աշխատութիւնն զոր յիշեցինք, Այրիվանեցւոյն խօսքերով, մեծ կարևորութիւն կրնան տալ մեր խօսքին և ենթադրութեանս ։ Աւելի հնագոյն երկաբնութեան մը մէջ ալ հետևեալ հատուածին կը հանդիպինք, որ թէպէտ քիչ մը մութ կերպով, այլ թուի թէ ակնարկել կ'ուզէ որ մինչև այն ատենէն կայր առ մերոն սուրբ գիրքը գրչագրելու արուեստէն զատ՝ նաև անոր ընթերցուածոց ուղղութեան հետազօտութիւն և փոյթ. «Դայր, կ'ըսէ, և իշխանն Բագրևանդայ և Արշարունեաց՝ Աշոտ որդի Սմբատայ 'ի վանքս. և տայ զՄնաւանկոյս հաստատուն գրով. և զոսկոյն 'ի Վանգոյս՝ 'ի պէտս վարդապետացն որ զգրչութեան արուեստն ունէին, և զաւրքն գիրսն յարինէին. որք էին երեսուն ու վեց վարդապետք»։ Օրինակողք և գրչագրողք ալ յաճախ մէջ կը բերեն 'ի յիշատակարանս իրենց կամ այլոց ջանքը՝ 'ի սրբագրութիւն, և կամ կրած աշխատանքը յընտրութիւն ընթերցուածոց ։ Այդ խօսքերն և աշխատանք աւելորդ պէտք էին սեպուիլ եթէ աստուածաշունչ սուրբ գրոց գրչագրաց անկեղծութեան և յաւիտենի հաւատարմութեան վրայ տարակոյս չունենայինք ։

ԺԲ. ԱՐԴԵՕՔ Ս. ԳԻՐՔ ԱՄԲՈՂՋ

Ի ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՐՈՒ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ ԵՆ Ի ՀԱՅՍ

Կը մնայ հիմա քննել ուրիշ խնդիր մը, թէ սուրբ Գրոց հայ թարգմանութեան մէջ չկա՞յ զանազանութիւն կամ հեռաւորութիւն ժամանակաց և գաւառաց, և ամենքն հաւասարապէս մի և նոյն հինգերորդ դարու և մէկ դպրոցի (թարգմանչաց) արդիւնք են և աշխատութիւն։

Ասոր վրայ կրնան տարբերիլ կարծիք և ենթադրութիւնք. ոմանց 'ի գրոց ընծայելով զանազանութիւն թարգմանութեան և ոճոց զատապատութիւն, նկատելով նաև անոնց անմիջական կամ անհրաժեշտ, ու այլոց երկրորդական կարևորութիւնը։

Առ նախնիս քրիստոնէայս առաւելաբար և ընդհանրապէս գործածական գիրք յեկեղեցական պաշտամունս էին սաղմոսերգութիւնք։ Հայաստան աշխարհի քրիստոնէական կրօնքն ընդունելուն և Սահակայ և Մեսրոպայ մէջ եղած ժամանակի միջոցը բաւական երկարատև էր. և ոչ յայժ անհաւանական ենթադրութիւն մը կրնայ համարուիլ որ գէթ այս գրոց հայկական թարգմանութիւնն ընծայած ըլլան առաջներնուս մեր նախնի և երախտաւոր հայրապետքն որ կացին յառաջ քան զսուրբն Սահակ. զի և դըժուարին աշխատութիւն մը չէր. և եթէ յատուկ պատուէրնիս ալ չըլլային, սակայն ասորի և յոյն տառերը՝ որոնք գրուեցան «անբաւ զրուցաց մնացեանք» կրնային օգտակար ըլլալ նաև սաղմոսաց թարգմանութեան մէջ։ Այս խնդրոյն վրայ՝ մէջ բե-

րենք հմուտ ու բանիբուն բանասիրի մը հետևեալ տեսութիւններն, ազգային հանդիսարանէ մը քաղելով[1].

« Սաղմոսաց գիրքն կայր առաջեաւ, — կը հարցընէ, — 'ի հայերէն թարգմանուած նախ քան զգիւտ այբուբենին և նախ քան զՍահակեան թարգմանութիւն սուրբ Գրոց։ Զինդիրս 'ի հանգիտութենէ (par analogie) նախ ուզելով քննել, կը տեսնենք որ բաղդատմամբ մանրամասնաց՝ հին յիշատակութիւնք կարճառուած լինելով հանդերձ, այս պատմական ճշմարտութիւն մնայական է ընդհանրապէս, որ Սաղմոսարանին թարգմանութիւնը կանխեալ է քան զայլս Գրոց լիակատար թարգմանութիւն. այսպիսի եղած են հռովմէականն 'ի Հերոնիմեայ սրբագրեալ. հին գաղղիականն, ալպեանն կամ հին ռոմանականն։ Այս համգիտութիւնք այսքան բաղդատականին ինձ ենթադրել տան որ և մերս Մեսրոպայ՝ ընտրողագոյն իմն՝ յետ այբուբենին յօրինելու, փոխանակ զՍահակեայ գիրսն թարգմանելու՝ զՍաղմոսաց գիրքն թարգմանէր. բայց որովհետև պատմութիւնն հակառակն աւանդէ՝ ինձ կասկած կու տայ որ ոչ այնչափ վասն խորհրդաւորութեանն էր, իբրու խնդրոյ ըստ մանկանց աշակերտելու իւր, — ինչպէս կ'ըսէ Կորիւն, և անոր բանից հետևելով՝ Խորենացի, — որ զՍահակայ գիրքն թարգմանելու նստաւ Մեսրոպ, այլ զի Սաղմոսաց գիրքըն կայր արդէն թարգմանեալ, և Սահակայն՝ անոր յաջորդողն էր ըստ կարգին»։

« Արդարև չեմ կարող այժմ համարձակօրէն հաստատելու թէ մինչ պարբերութիւնքն, որ կը տեսնուին ցայտ յընթերցուածս 'ի մէջ ժամանակագրական և սովորական ճաշական Սաղմոսարանաց, ընկան նշան նոյն իսկ կրկին հին և նոր (նախ-Սահակեան

[1] ՊԱՐՈՆԵՍԵԱՆ (Մ. Վ.). Ուսումնական բանասիրական հանդէս,

և Սահակեան) Թարգմանութեանց. սակայն այդ ան-տարակուսելի է որ այս Սաղմոսաց գրոց վրայ, — և այդ գրոց վերայ միայն կ'ըսեմ, — յիշատակութիւնք զոր բաղդատեցաք, եթէ 'ի մեր ձեռն և թէ յօտար ձեռնագիրքս՝ որ կրկին Թարգմանութիւնս ունեցած ըլլայ։ Ո՞չ յիշէ ակնարկէ Թովմաս Արծրունւոյ այ-նչափ խօսքն լերին ընտրեալ համար, թէ « Գիտեն ըզ-Սաղմոսն զերկուս Թարգմանութեանցն կարգաւորեալ Հա-յոց, զոր ճանապարհ 'ի բերան ունին »։ Նշանաւո-րագոյն եւս 'ի հնագոյն քան զԱրծրունին, 'ի Ղա-զար Փարպեցի կը գտնենք, որ տեղ մը Սաղմոսաց գրոց կրկին Թարգմանութեանց յիշատակութիւնը կ'ընէ, անանցանելի հետաքրքրական տարբերութիւն մը ընթերցուածոց 'ի մէջ բերելով. « Որ զՄեսրոպեան ժամաժամ չարաչար խորակին իւրոյ եռեալ զուար-կին իւրոյ, ըստ գրեցելումն 'ի վերջասատանեցուցումն տաղմանն Յակոբեան կերակրոց. որ միւս Թարգմա-նիչ՝ խոտեցեալ ասէ »։ Ես զայս երկրորդ ընթեր-ցուածը որոշելով յայտնապէս առաջին Թարգմա-նութիւնն, որ կրնար ծանօթ ըլլալ Փարպեցւոյն, չեմ գտած ուրեք. և Փարպեցւոյն այդ միւս Թարգ-մանութեան ինչ լեզուաւ ըլլալն չյիշատակելովն, շատ հաւանականութեան տեղիք կու տայ, որ յիշա-տակեալ Թարգմանութիւնն իրօք ըլլայ այն զոր ու-նէին Հայք 'ի Նախ-Սահակեան ժամանակէ։

« Թէ արդարեւ յառաջ քան զՍահակեան Թարգ-մանութիւն սուրբ Գրոց՝ կայր Սաղմոսաց Թարգմա-նութիւն մը առ Հայս, ոչ փոքր հաստատութիւն կ'ընծայէ 'ի վերոյ նախակարգեալ բանիցս՝ և այն ա-ղօտ և շփոթ տեղեկութիւնը զոր կու տայ Յովհաննու Ոսկեբերանի վարուց անանուն յոյն պատմիչը. Թէ Հայք սուրբ Գրոց Թարգմանութիւնը 'ի Սաղմոսաց սկսան յորդորմամբ սրբոյ Հայրապետին, երբ նա 'ի կողմանս նոցա աքսորուած էր 'ի փոքր Հայս։ Բայց

որ քան զայս աւելի նշանաւոր է, և 'ի վեր 'անդր կարգաբանեալ պատմութեանս հետ մութն 'ի լոյս համաձայնութիւն մը կ'երևցընէ, է այն հետաքրքրական հատուածիկը զոր Բելլարմինոս և Յակոբ Գրետցերոս յոյն գրչագրէ մը հանած Միւնիխի մէջ 'ի մէջ կը բերեն. « Առ ինքնակալութեամբ Թէոդոսի (?) և առ թագաւորութեամբ Պարսից (?) Վռամշապհոյ. որովհետև չիկայր մէկը 'ի Հայս որ զհոռոմ լեզուն գիտենայր, համարձակեցան 'ոմանք ընդդէմ պատուիրանաց մեծին Գրիգորի (Լուսաւորչի) իրենք իրենց 'ի հայ լեզու թարգմանել զՍաղմոսս. և եկեղեցական պաշտամանց մէջ 'ի կիր առնուլ. Թէոդոս կայսրն զայս լսելով՝ կարի զայրացաւ և պատժեց զՀայս, փոխանակ զի սրբոյն Գրիգորի հրամանէն անցան »[1] :

« Այս ներքին և արտաքին վկայութեանց վրայ և զայս վերջին խորհրդածութիւնս աւելցընեմ իբր աչ աննշան դիտելու պարագայ մը, որ այն ժամանակը մէջ, որոց թարգմանութիւնը հաւանական կ'երևի որ յառաջ եղած ըլլայ քան զթարգմանութիւն աստուածաշունչ մատենին, 'ի նոսա ընդհանրապէս Սաղմոսաց գրքէն բերուած վկայութիւնք համաձայն են մեր այժմու բնագրին, մինչդեռ 'ի միւս գրոց վկայութիւնք ոչ այնպէս. օրինակ. Եւսեբեայ Եկեղեցական պատմութիւնն, և այլն:

« Եթէ ուրեմն, — ինչպէս կարի հաւանական թուի մեզ, — նախապէս թարգմանուած է Սաղմոսաց գիր-

[1] Կը գտնենք յոյն բնագրին լատինական թարգմանութիւնը. Imperante Theodosio, et regnante apud Persas Bramsapo, cum nulli in Armenia reperirentur, qui Romanam (h. e. *Græcam*) linguam perspectam haberent, extiterunt nonnulli, qui contra formam a magno Gregorio præscriptam, sibimet ipsis Armenica lingua a Psalmos et literas et cantiones transtulerunt. Quod audiens Theodosius Imperator valde succensuit Armeniis, eo quod traditionem a S. Gregorio acceptam violassent.

քըն, յինչ պէտս եղած կրնայ լինել այդ, եթէ ոչ 'ի պէտս ժամանակարգական աղօթից» :

***

Աւելցընենք՝ 'ի ձեռագրաց հանուած քանի մը յիշատակարան վասն Սարկաւագ վարդապետին և իր գըրած և ծաւալած Սաղմոսաց գրքին վրայ. «Սա է գաղափարն գերունակ սուրբ վարդապետին և մեծ տափեստեսին սուրբ ուխտին Հաղբատայ՝ Սարկաւագին։ Այս Սարկաւագ՝ այր սուրբ և տեսող և զուարթերես՝ լի հոգւով... սա վշտացեալ էր 'ի բազում ժամանակս վասն այլայլմանս Սաղմոսիս. և ոչ գիտէր զելս իրացն թէ ո՛ւստ ուստեք ճշգրտեսցէ. և ապա մտեալ 'ի յարկեղս գրեանն որ 'ի Հաղբատ՝ զամենայնն որոնեաց. և ապա հուսկ քան զամենայն գըրեանս 'ի ներքոյ՝ եգիտ Թարգմանչացն սաղմոսարան ճիշդ և նուազ գրով. և առեալ զայն խնդութեամբ՝ համբուրեաց, և եդ 'ի վերայ աչաց իւրոց. և ապա արկեալ ձեռն 'ի գործ՝ բացայայտեաց անաւր զծածկեալ գանձն և զխցեալ աղբիւրն. և ցրուեաց ընդ ամենայն սահմանս Հայաստանեայց զայս օրինակ» ... :

Գառնեցին Յովհաննէս իր ուղղագրեալ Սաղմոսարանին յառաջաբանին մէջ կը գրէ. «Այս ճանապարհ արարեալ գնացի 'ի մայրաքաղաք մեծաստանն 'ի Հաղբատ. և գտի Թարգմանչաց գրած սաղմոս. զոր առեալ սուրբ վարդապետին Սարկաւագ կոչեցեալ, այն որ զառումարն երևեցոյց զհէին Հային, և նասահմանեաց զայս ուղիղ և ուղղորդ սաղմոս, որ ոմանց այլևայլ երևի սա» :

1650 Թուականին գրուած գրչագրի մը յիշատակարանին մէջ ալ կը կարդանք. «... Եկայ 'ի Համշէն, ընդ հանդիպեցայ ընտիր օրինակի Սաղմոսարանի

Յովաննէս Գառնեցւոյն, որոյ յիշատակարանն գրած էր այսպէս. Ես Յովհաննէս Գառնեցի գնացի 'ի սուրբ ուխտն Հաղբատ, և երկրպագեցի սուրբ խաչին և սուրբ գերեզմանին, մեծ և անուանի Հայոց սուրբ վարդապետին Յովաննիսի՝ մականուն Սարկաւագ. այն որ զատուցմունս թղթոյն ճգամբ 'ի Թարգմանչացն ուղղմնաւորանէ գաղափարեաց: Եւ ես նորին աշխատաբանին հանդիպեցայ 'ի ձեռն յիմոյ մարդոյ. առեալ համբուրեցի. և գրեցի զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ, զբանն, զգիրն, զծանուցակն, զհնչանգիտութիւն, զպարոյկն, զկէտն, զատօրն: Արդ ես 'ի սրտէ խոցեալս՝ Կարապետս վարդապետս՝ գրեցի զսա ըստ իմում կարի» .... :

***

Սիրաքայ գրոց այլևայլ Թարգմանութիւնք կ'երևին 'ի մեր դպրութեան: Առաջինն՝ ինչ որ սովորաբար կը գտնուի մեր գրչագրաց մէջ, և որ գրուած է 'ի Զոհրապեան տպագրին՝ 'ի կարգի Յաւելուածոց. երկրորդն Թարգմանութեամբ Ոսկան վարդապետի, զոր և հրատարակեց յԱմստերդամ. և երրորդն՝ ընտիր և հաւատարմագոյն՝ հին շարագրութեամբ և ոճով, որ առանձինն տպագրեալ է 'ի տպարանի Մերուսմ, և յԱստուածաշնչի (1860):

Եզր երրորդ գրոց Թարգմանութեան համար աշխատեալ ծանօթութիւնք կը գտնենք՝ 'ի գրչագրի Աստուածաշունչ գրոց վասն Յոհաննու եպիսկոպոսի Արքայեղբօր. և Զառաջին Եզրասն գրեցի և զերկրորդն յաւժարեցայ 'ի կարգ այլ աստուածաշունչ բանիցդ հաւաստարել, որ յանկարծիքս է. զի մի իւիք Թերի մնասցէ 'ի բանից այդ ունէին վկայութիւն 'ի վերայ իւրեանց յառաջնոց մեր սուրբ հարց. զի նոքա գրեցին զԵզրաս Ա և Բ ըստ առաջնոյն. և Երկրորդս հիւ-

սեցաւ հրամանաւ տեառն Յովհաննէս քաջուն, և ձեռամբ մեղաւորի Բարսղի » ։

Յայտնի է դարձեալ յինքնագիր յիշատակարանէ, թէ Լամբրոնացին Ներսէս եղած է թարգմանիչ Յայտնութեան գրոցն Յովհաննու. ինչպէս և մեկնութեան նորա յԱնդրէէ Կեսարացւոյ. « ... Պատուեալ, կ'ըսէ, եկեղեցի՝ ըստ նոցին հաւանութեանն (հարցն որոց) գտանեաց 'ի կարգ գրոց աստուածաշունչ աւետարանաց. որոց եղեալ և մեք ընթացանկից՝ 'ի սուրբ եկեղեցւոյ ծննդոցն աւանդեցաք զսոյն 'ի պատկարգութիւն առաքելական մատենից, որպէս արդարև զառաքելական յայտնութիւն ։ և սասուգաքան արարաւ վերստին երիւրեալ 'ի հելլենացւոցն՝ իմով նուաստ Ներսիսի թարգմանութեամբ. ընդ որ և զընթութեամբ մեկնութիւն սորին անի յեկեղեցւո Հայոց » ։ Նոյն Լամբրոնացի կը գրէ առ Ոսկան. « Զինչ առնեմք և զերանելի աստուածաբանին Յովհաննու ազանչելի Յայտնութիւնն 'ի վերայ Թագաւորական քաղաքիդ ... Զոր ես ինքն թարգմանեցի յօրինակէ Աթենասի քաղաքիդ (Անտիոքայ) հայրապետի » ։ Դարձեալ 'ի վերջ Լամբրոնացւոյն 'ի յառաջաբանի մեկնութեան Սաղմոսաց. « Յես այսր փութացաւ 'ի լեառն որ առընթեր մեծին Անտիոքու 'ի վանորեայսն որ 'ի լատինացւոցն և 'ի հելլենացւոցն պայծառանային անդ աստուածահաճոյ կարգօք և կրանիւք. և բնակեալ անդ աւուրս ինչ՝ թարգմանեցաք զմեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու » ։

Ոմանք 'ի նախնեաց, և Վարդան պատմիչ այլոց հետ կ'ակնարկէ թէ Յայտնութեան գրոցն թարգմանիչն եղած ըլլայ Մանդակունի. որով՝ հարկ կ'ըլլայ ըսել թէ Լամբրոնացւոյ ժամանակ արդէն թարգմանուած էր այն, և ինք պարզ սրբագրիչ մ'էր թերևս 'ի գրչաց և 'ի ժամանակէ աղաւաղեալ օրինակին ։ Այս

կարծիք կը հաւատարմանայ նաև անով՝ որ բաց 'ի մեզի արդէն ծանօթ ու սովորական թարգմանութենէն՝ ուրիշ թարգմանութեան մ'ալ հանդիպած ենք, որ իւիք կը տարբերի 'ի միւսմէն, և մեզի հաւանական կ'երևնայ կարծելը թէ ասիկայ ըլլայ հնագոյնն։ Զըննականն գրչագրեալ է 'ի ՌԽԸ, և կը գտնուի 'ի Մատենադարանի սրբոյ Երուսաղեմի։ Բանասիրաց հետաքննութեանն համար կը դնենք աստէն յառաջին գլխոյ քանի մը տող միայն 'ի բաղդատութիւն։ « Ի Յովհաննէ՝ եւթն եկեղեցեաց որ յԱսիայ են, շնորհք ընդ ձեզ և խաղաղութիւն յԷէն, և որ էն, և որ գալոցն է. և յեւթն հոգւոյն որ են առաջի աթոռոյն նորա, և 'ի Յիսուսէ Քրիստոսէ՝ որ վկայ է հաւատարիմ, նախծինն մեռելոց և իշխանն թագաւորաց երկրիս. սիրողին և լուծողին զմեզ 'ի մեղաց. արեամբըն իւրով. և արար զմեզ արքայութեանն արժանիս. քահանայս Աստուծոյ և հաւր իւրոյ. նմա փառք։ Ահաւասիկ գայ ամպօք, և տեսցեն զնա ամենայն ակն որ խոցեցին զնա, և կոծեսցին վասն նորա ամենայն ազգք երկրի։ Այո՛, ամէն. ես եմ ալֆն և օմէ. ասէ տէր Աստուած էն, և որ գալոցն է ամենակալն »։

⁂

Մէկդի առնլով աւրեմն 'ի հին կտակէն Սաղմոսաց գիրքը՝ որուն ապաշնութիւն ունինք, և զՍիրաք և զԵզր երրորդ, և 'ի Նորոյն Յայտնութեան գիրքը, որոյ թարգմանութեան կամ կրկին սրբագրութեան պատմական հաւաստիք մը պէտք է սեպուին նոյն իսկ մեծանուն թարգմանչին հիմա յիշատակուած բացայայտ խօսքերը, կը մնայ հետաքննելը թէ արդեօք աստուածաշունչ մատեանին միւս ամէն մասունք ալ հաւասարապէս հինգերորդ դարու թարգմանութիւնք են թէ կայ 'ի նոսա ժամանակաց և դարոցի

զանազանութիւն։ Մեզի, — և այս խնդրոյս մէջ հա-
մակիր և համաձայն կը գտնենք ընդհանրապէս՝ հայ-
կական լեզուի ուսման և մատենագրութեան հետա-
մուտ բանասիրութիւնը, — կ՚երևնայ թէ հաւանա-
կանաբար ամէնքն ալ մի և նոյն դարու՝ Սահակայ և
Մեսրովպայ և իրենց աշակերտաց աշխատասիրու-
թեան արդիւնք են. Գլխաւոր պատճառ այսպիսի
ենթադրութեան՝ նոյն իսկ աստուածաշունչ գրոց
կատարելութիւնն կը կարծենք. և անշուշտ տարօրի-
նակ պէտք է երևնայ թէ երանաշնորհ Թարգմանիչք
որ այնչափ գրոց թարգմանութեամբ ճոխացուցին
զազգային լեզու և զգրութիւն, և որոց մէջ կրնան
գտնուիլ նաև այնպիսիք որ երկրորդ կամ երրորդ
աստիճանի կարևորութիւն մը ունէին նկատմամբ
ազգին նոյն ժամանակուան անմիջական պիտոյից,
անհոգ և անտարբեր երևցած ըլլան սուրբ գրոց նը-
ման առաջնակարգ գրքի մը ամբողջ թարգմանու-
թեանն։ Ոճոյ և լեզուի տարբերութիւն տեսնողք՝ ո-
րով իրարմէ կրնան զանազանուիլ անոր այլևայլ մա-
սունք, իրաւացի պատճառ մը կրնար սեպուիլ նաև
ժամանակաց տարբերութիւն ենթադրելու. եթէ
հինգերորդ դարու ամէն մատենագրաց մէջ ոճոյ հա-
ւասար միակերպութիւն տեսնելը անհրաժեշտ սե-
պէինք. Եզնիկ, Եղիշէ, Խորենացի, Անյաղթ և Փար-
պեցի՝ այդ նկատմամբ իրարմէ շատ հեռու կը մնան.
Թէպէտև մի և նոյն դարու անձինք, և մէկ դպրոցի
մը աշակերտք. այսպէս նաև իրենց աշակերտակիցք։

Դեռ նոր հրատարակուած բանասիրական հմուտ
ամսագրի մը մէջ հետևեալ տողերը կը կարդանք.
«Չլեզուէն Թարգմանութեան Գրոյն այսչափ ինչ
լիցի ասել՝ թէ զոր օրինակ հմուտքն և ձեռնհասք
յեւրոպացի քննչաց իսկ կոչեցին զԹարգմանութիւն
մեր «Թագուհի Թարգմանութեանց» վասն ճշգու-
թեանն և հմտութեան, նոյնպէս պարզ և պատշաճ

է վասն յստակութեան և գեղեցկութեան լեզուին անուանել զնա գլուխ և պսակ դպրութեան հայ լեզուի։ Գիտել արժան է սակայն զի բուն կանոնական գիրք, որպիսի են, ըստ եկեղեցական աւանդութեան, Հնգամատեանն, Յեսու, Դատաւորք, Հռութ, Թագաւորք և Մնացորդք, տասներկուքն Յոբ, Սաղմոսք, Գիրք Առակաց, Ժողովողի և Երգոց երգոյն, Մարգարէք, Նեեմի, Եզրաս, Եսթեր. որպէս և Նոր կտակարանն բովանդակ. են թարգմանեալք խնամով բան առ բան, մինչ Իմաստութիւնն և Մակաբայեցիք են ազատ թարգմանութիւն, յորս թարգմանիչն, առ 'ի ցոյց իւրոյ հմտութեան 'ի հայ լեզուի, ջանայ հնարի հեղուլ զեղուլ զամենայն զարդս լեզուին, որպէս թէ զՀոմերոս և զՀերոդոտոս թարգմանիցէ»[1]։

Այս է ազգային բանասիրութեան կարծիքը՝ մեր մատենագրութեան այսպիսի էական խնդրոյ մը մէջ։ Մովսիսի Հնգամատեանն, Դատաւորք, Թագաւորութիւնք՝ ոսկեղէն դարու լեզուին ամէն ճշմարտելը և որոշիչ դրոշմը կը կրեն վրանին. Մարգարէութեանց ամենընտիր թարգմանութիւնք՝ հրաշալիք մ'են և բովք հայ լեզուի հարստութեան և ճոխութեան, և իրաւամբ կը ոգեւորեցընեն զմեզ. Սողոմոնի գրքերն, և 'ի մասնաւորի Առակք. արդէն Ժողովողացւոյ և Եր-րեան մեկնութիւնն ունին թէ Մեսրոպեան բարբառոր և շնորհաշնորհացոյց ձեռաց պարգեւք են. ինչպէս նաև Նոր կտակարանք. Մակաբայեցւոց գրքերուն համար ալ՝ Եղիշէ կը վկայէ թէ պատերազմի դաշտաց ու վտանգաց առթէն՝ անոնց ընթերցմունքը կը խրախուսէր և կը քաջալերէր իր զօրաց բազմութիւնը մեծն Վարդան Մամիկոնեան. և անոնց Աստուծոյ և հայրենեաց սիրով վառուած սրտերուն մէջ նորոգե-

[1] Ճաշակ ոսկեդին դպրութեան, 1887։

լով Եղիազարու. Յուդայի Մակաբեայ և իր արիական հարազատաց յիշատակը, երկնից ու հայաստան հողոյն նահատակներ կը պատրաստէր զանոնք [1]:

Որո՞նք են ապա այն գրքերն՝ որոց թարգմանութիւնն բանագատութիւնք յետագայ դարուց յառկացընել, կամ որ դարուն մէջ զետեղել, և որո՞ց ընծայել անոնց թարգմանութիւնը: Իսկ մինչ ըսենք Սիոնի կաթուղիկոսին օրով յազգային ժողովին որ 'ի Պարտաւ սահմանուած ու վաւերացած սուրբ Գրոց ցուցակին. «Եկեղեցի ձեզ ամենեցուն՝ եկեղեցականաց և աշխարհականաց պաշտելի գիրք սուրբ հին և նոր կտակարանացն. Մովսիսի գիրք Ծննդոցն, Ելից, Ղեւտականք, Թիւք, Երկրորդ Օրէնք, Յեսու Նաւեայ, Դատաւորք և Հռութ. Թագաւորացն չորս, Մնացորդաց աւուրքն երկու, Եզրի երկու բանք. գիրք Յովբայ, Սաղմոսաց գիրք առաջին, Սողոմոնի երեք, գիրք երկոտասան մարգարէիցն, Եսայի, Երեմիա, Եզեկիէլ, Դանիէլ: Եւ արտաքուստ պատգամաւորեսցէ առ 'ի յուսուցանելոյ զձեր մանկունս զուսումն յաճախման՝ Սիրաքայ իմաստութիւն»: Ընթերցողը կը տեսնէ որ հազիւ քանի մը գիրք դուրս կը մնան այս ցուցակէն. ինչպէս Մակաբայեցիք, Եզրի երրորդ, Եսթեր, Տովբիթ, Յուդիթ, Սողոմոնի Իմաստութիւն, ուր ընդհանրապէս երկրորդականոն սեպուած գրոց կը վերաբերին:

Կրնար ասոնց ընդունելութիւնը դժուարութիւն

[1] «Ինքն իսկ առաջեակ էր 'ի մանկութենէ իւրմէ սուրբ կրօնաւորաց: Զոր 'ի ձեռն առեալ դքաջ նկարագիրն Մակաբայեցւոց ընթեռնոյր 'ի լսելիս ամենեցուն... թէ որպէս մարտուցեալ կռուեցան 'ի վերայ աստուածատուր օրինացն ընդդէմ թագաւորին Անտիոքոսի... Նա և զայն եւս յուշ առնէր զօրականացն, թէ որպէս ազգատոհմն Մատաթիայ քաջեալ բաժանեցան 'ի միաբանութենէ նոցա. դարձան 'ի հրաման թագաւորին, շինեցին մեհեանս, մատուցին զոհս... իսկ Մատաթի և որ ընդ նմայն էին՝ ոչինչ թուլացեալ լքան»:

մը կրել կամ տարակուսական ըլլալ. բայց ասիկայ պատճառ մը չէ ենթադրելու որ Թարգմանութիւննին ալ ժամանակաւ կրտսեր ըլլայ, մինչդեռ անոնց լեզուի գեղեցկութիւնն և յստակութիւնը բաւական է այսպիսի տարակոյս մը փարատելու։

***

Բայց կրնայ առարկուիլ թէ ոմանք 'ի մերոց պատմչաց՝ Գրիգորի Վկայասէրի կուտան աստուածաշունչ գրոց պակասը լեցընելու աշխատանքը։ Կ'աւանդէ Ուռհայեցի. «Սա անհանգիստ Թարգմանութեան էր պարապեալ. և զամենայն պակասութիւն կտակարանացն Աստուծոյ առ մեզ՝ կարգաւ կատարեալ զարդարեաց 'ի Յունաց և յԱսորոց Թարգմանութեան հոգս տարեալ. անդադար խորհրդով և ամենայն պայծառութեամբ սուրբ գրոց ելից զեկեղեցի Հայաստանեայցս ... Էր սա նմանեալ առաջին իմաստնոցն Հայոց ... դիւրաւ առնոյր զծածկոյթ երեսաց հին և նոր կտակարանացն Աստուծոյ»։ Շնորհալին 'ի ձեռնագրութեան ճառին. «Մինչեւ 'ի Գրիգորիոս՝ որ և Վահրամ նախաձայնեալ և 'ի Բասիլիոս. որք ... նաև լցողք (եղեն) եկեղեցւոյ լուսաւորութեան յետ նոցին աստուածաշունչ գրոց կտակարանաց Թարգմանութեանց. և ամենայն բարեմասնութեամբք յաստուածայինս յառաջացեալ՝ 'ի նուազեալս վերջնում դարու ժամանակի»։

Թէ ինչ և որպիսի էին Գրիգորի Վկայասէրի աշխատութիւնքն, պիտի տեսնենք 'ի կարգին։ Հոս միայն այնչափ ըսենք որ մէջ բերուած խօսքերն չեն ակնարկեր ամենեւին թէ աստուածաշունչ գրոց վրայ մասնաւոր աշխատանք մը ունենայ. և այս կը բաւէ մեզ առժամս, մեր նիւթէն և առաջադրեալ նպատակէն չուզելով խոտորիլ։

Աւելորդ է յիշեցընել թէ աստուածաշունչ գըրքերէ զուրս և անոնց անմիջական մասն չսեպուած անվաւեր և անհարազատ գրոց, — որոց վրայ համառօտիւ խօսեցանք, — Թարգմանութեան ժամանակը չենք ուզեր հանել բարձրացընել մինչև 'ի հինգերորդ դար։ Նոյն իսկ անոնց ոճը՝ յայտնապէս կը հռչակէ թէ հինգերորդէն ետքը, — և ոմանց անկէ ոչ այնչափ հեռու, — դարուց և ժամանակաց երկասիրութիւնք են։ Փափաքելի էր կարող ըլլար ճշդել և սահմանել, զոր յօժարափոյթ՝ յոյն և մանաւանդ ասորի լեզուաց և դպրութեան հմտագունից և ձեռնհաս բանասիրաց փութոյն և ուսմանը կը յանձնենք։

ԺԳ. ՀԱՅ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՎՐԱՅ

ՎԵՐՋԻՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆ

Ուրիշ կարևոր և մտադրութեան արժանաւոր խնդիր մը ընդ առաջ կ'ելլէ մեզ։

Ինչ կը նշանակեն Խորենացւոյն խօսքերը, որ սուրբ Գրոց երկրորդ և 'ի Բիւզանդիոյ բերուած ստոյգ և հաստատուն օրինակաց վրայ կրկնակի աշխատութեամբ եղած թարգմանութեանն աւարտումը պատմելէն ետքը կը յաւելու. « Բայց քանզի անգէտք էին մերում արուեստի, 'ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր, վասն որոյ առեալ մեծին Սահակայ և Մեսրովպայ զմեզ՝ առաքեցին յԱղեքսանդրիա 'ի լեզու պանծալի, 'ի ստոյգ յօդանալ ճեմարանին վերաբանութեան »։

Մութ են հայ պատմահօր այս խօսքերը, և ցարդ ոչ ստուգութեամբ հասկըցուած անոնց իմաստը,

ուստի և հետևաբար ենթադրութիւնք կամ գուշակօրէն մեկնաբանութիւնք։

Ինչ էր արդեօք այն արուեստ՝ որուն Սահակ և Մեսրովպ անգէտք էին. և յորում Թերութիւն գործոյ Թարգմանութեանն որ այդ արուեստին պակասութեան հետևանք էր. որն էր այդ վերաքննութեան ձեռնարկը, ուր Թարգմանիչք մեր կրթուեցան՝ այդ իրենց վարդապետաց անծանօթ արուեստին գիտութեամբ, աստուածաշունչ գրոց 'ի հայ փոխադրութեան կարելի ու փափաքելի կատարելութիւնն տալու համար։

Կանխեցինք ըսել, — ժամանակակցաց վկայութեամբքն ալ հաստատարմացընելով մեր խօսքը. — Թէ յունական լեզուի և ուսմանց Թերութիւն կամ անբաւականութիւն անհարելի էր ենթադրել 'ի նոսա, մանաւանդ 'ի սուրբն Սահակ, որ — հարկ է միանգամ մէջ բերել զՓարպեցին, — « յոյժ առլըցեալ անցուցանէր վարժիւք զբազում գիտնովք Յունաց » ։ Ուստի այդպիսի մեծարոյ անձի մը նախաձեռնութեամբ և գլխաւոր աշխատակցութեամբ կատարուած գործ մը կարօտութիւն չէր կրնար ունենալ սրբագրութեան 'ի ձեռն երկրորդ դասու Թարգմանչաց, որոնց լեզուին՝ իրենց անունը կրող երկասիրութեանց և աստուածաշունչ գրոց մէջ տարբերութիւնն՝ մեծ է և զգալի։

Բնական կ'երևնայ ուրեմն ենթադրելը Թէ Աղեքսանդրիա՝ հռչականունն առ նախնիս իր ուսմամբքն և բազմահարուստ մատենադարաններով, արևելից և արևմտից մէջ եզական դիրքովը միակ քաղաք մը նուիրուած էր՝ ուսումնասէր հետազօտութեանց, և նշանաւոր իմաստասիրական դպրոցներովը։ Որչափ ալ Թարգմանչաց ժամանակի Աղեքսանդրիա՝ ոչ եւս էր այն ինչ որ առ ժամանակօք յաջորդաց մեծին Աղեքսանդրի՝ Պտղոմեայ առաջնոյն, Սոտերի, Եղբայ-

րասիրքն. սակայն դեռ ես հեթանոսական կրօնից և իմաստասիրութեան վրայ յաղթանակ տանող քրիստոնեայ գիտութեան՝ հաւատացելոց և հեթանոսաց սիրտն ու աչքը հաւասարապէս գրաւող քաղաք մ՚էր. ուր դեռ ես կը լսուէին ու պատկառանօք կը մեծարուէին՝ Որոգինեայ, Կղեմայ Աղեքսանդրացւոյ և իրենց նմանեացն անունն, հռչակն և համբաւ։ Սուրբքն Սահակ և Մեսրովպ իրաւամբ կը փութային զրկել հոն զամենս 'ի կրտսերագոյն Թարգմանչաց, աշակերտիլ այն դպրոցին զոր փառաւորեր էին՝ բաց 'ի վերը յիշուածներէն, Աթանաս մեծն, Գրիգոր Աստուածաբան, Յուլիոս Աֆրիկանոս, Հիսիքիոս, սուրբն Կիւրեղ, Սինեսիոս, ամենքին մեծարոյ և պատուական իրենց առաքինակրօն քաղաքավարութեամբ և իմաստութեամբ։ Խորենացի՝ որ այդ Ճանապարհորդութիւնն ընողներէն մէկն էր՝ ընդ Եգեսիա և ընդ Աթէնս մանելով Լիբէաստանի պատմական հողը և յԱղեքսանդրիա, սխրացեալ անոր փառացը վրայ, յիշելով անոր հեթանոս անցեալը, և քրիստոնական կրօնից հոն գործած սքանչելահրաշ փոփոխութիւնք, «Այժմ ոչ անցեալ նստի, կ՚ըսէ, Պղեստոնիոս հնդակատար գագաթամբն՝ զանսպառ աշխարհ պատելով, այլ Մարկոս աւետարանական քարոզութեամբն. և ոչ միջապաղին գիւցազնականաց գերեզմանք, այլ օրքոյն վայելչանան վկայարանք... յաղթող նահատակին գովել, և օտարաց տանել ընդունելութիւն և յաղքատս տուրս։ Եւ ոչ զոհել չար գիւքին Սարապեայ, այլ զՔրիստոսի արիւնն մատուցանել պատարագ. և ոչ խնդրել հրաման պատասխանւոյ 'ի տանդարամետապետէն Պրոտէոսայ, այլ ուսանել զօրութիւնս պէսպէս իմաստից 'ի Նոր Պղատոնէն, յիմն ասեմ վարդապետէ, որում ոչ արժան բազայ աշակերտ, և ոչ անկատար վարժմամբ՝ յանդգնել իմաստից ինքնացոյ»։

***

Թարգմանչաց յայլեայլ քաղաքս, և մանաւոր կերպով յԱղեքսանդրիա ճանապարհորդելուն և հոն երկար գեղերանաց պատճառը հաւանական կ'երեւի, ուրիշ ինչպէս առթով ալ բացատրեր ենք, որ աստուածաշունչ գրոց իրենց ձեռքով կատարուած Թարգմանութեան ընտրականութիւն (eclectisme) մը տալու վախճանաւ էր։ Երկու իրարմէ տարբեր օրինակաց, ասորւոյն և յունականին վրայ Թարգմանութիւն մը, և 'ի Բիւզանդիոյ բերուած ընտրելագոյն օրինակի մը վրայ սրբագրութիւն, հարկաւ կը պահանջէր այսպիսի աշխատութիւն մը մանաւանդ սուրբ գրոց համար՝ որուն մեծագոյն արժէքն՝ ընթերցուածոց հաւատարմութեան և ստուգութեան մէջ էր. և այս վերջին աչքը տալու համար՝ արժան էր ընտրել այնպիսի քաղաք մը որ Աղեքսանդրիոյ պէս կամ անոր հաւասար հռչակ ունենար իր բազմաթիւ և դեռ եւս կանգուն մատենադարաններով, և սուրբ Գրոց գիտութեամբ հռչականուն հայրապետօք և վարդապետօք։ Անշուշտ Աղեքսանդրեան կոչուած դրչագիրն, և Որոգինեայ՝ Քառիջեան, Վեցիջեան և Ութիջեան աստուածաշնչից համեմատական և բաղդատական երկասիրութիւնքն առանձին քննութեան և ուսումնասիրութեան նիւթ ըլլալու մտածութիւնն՝ իրենց վարդապետաց փափաքէն ու նպատակէն դուրս չէր։ Մեր այս կարծիքն առաւելագոյն հաւանականութիւն կ'առնու անով որ ինչուան 'ի Հռոմ ալ դեգերելով՝ չուզեցին Թարգմանիչք մեր յամել անդէն. վասն զի իրենց դիտմանն ու ձեռնարկին օգտակարութիւն մը չգտան հոն. ուր լեզուն իրենց ոչ այնչափ ծանօթ, և սուրբ գրոց կիրառութիւնն էր Հերոնիմեան Թարգմանութեամբ և լատինական լեզուով։

Մէկ ալ ենթադրութիւն մը՝ թէ Թարգմանչաց գործը ենթարկուած ըլլայ յԱղեքսանդրիա՝ այս համեմատական կամ բաղդատական աշխատասիրութեան՝ Խորենացւոյն գործածած [illegible] ճեմարանի մը յիշատակութիւնն կրնայ սեպուիլ, որ բառական թարգմանութիւն մ'է յունական αναλογια բառին. որուն իմաստը բոլորովին մութ պիտի մնար մեզ, եթէ նոյն բառը 'ի Թարգմանչաց ուրիշ տեղուանք [illegible], [illegible], [illegible] թարգմանուած չըլլար. և որոնք աւելի պարզ և հասկանալի իմաստ մը կու տան, քան Խորենացւոյն գործածածը. և հաւաստիք մը սեպուիլ մեր կարծեաց ստուգութեան: Որոգինեան (ատենդանիչ, բրգաձեւ) նշանագրաց՝ որ օրինակաց կամ թարգմանութեանց իրարմէ ունեցած տարբերութիւնն ցուցընելու համար՝ մեր ձեռագրաց մէջ ընդունուած և յաճախ գործածուած է՝ յայտնի նշանակ մը կրնայ համարուիլ թէ այս բաղդատութիւնն ու համեմատութիւնն եղած է մեր թարգմանութեան վրայ: Եւ Որոգինեայ այդ պանծալի աշխատութեան հմտանալու և անով օգտուելու համար՝ ղրկուած կը համարինք զԹարգմանիչս յօգանալ սուրբ գրոց ընտրութեան համար եղած ճեմարանի մը կամ դպրոցի հաստատելոյ և բարգաւաճելոյ 'ի քաղաքին:

Պատմութիւնն կու գայ 'ի հաստատութիւն այդ մեր կարծեաց:

Չորրորդ դարուն մէջ՝ աստուածաշունչ գրոց ուսման և գիտութեան վեհավայր աթոռ մ'էր Եգիպտոս և 'ի մասնաւորի Աղեքսանդրիա: Հոն, ինչպէս ըսինք, ծնաւ Որոգինէս, հոն սորվեցուց, և ձեռք զարկաւ իր անմահական երկասիրութեանց շարագրութեան. հոն ձգեց առ ինքն զբազմութիւն աշակերտաց, և հոն աւանդ թողլով իր գրուածներն՝

յարոյց ոչ միայն իր վրայ զարմացող սերունդ մը, այլ և բազմութիւն հետևողաց, նախանձորդաց և հակառակորդաց: Հոն մահուընէն ետքն ալ զեռ կ'ապրէր իր երկօքն, և զգալի էր այգ կեանքը: Այն պատճառաւ ոչ ուրեք որպէս յԵգիպտոս՝ կը կարդացուէին սուրբ Գիրք, անոնց վրայ ուսումնասիրելով, քննելով և խորհրդածելով: Վայրկեան մը վերանանք մտքով այն անապատաստան միայնաւորաց բազմութեան՝ որոնց համբաւովը գէթ դարու մը միջոց լեցուած էր ամենայն քրիստոնեայ աշխարհ, և որոց սրբակրօն վարքն և առաքինութիւն՝ անմահական և լուսահրաշ պարծանք մ'էր Եգիպտոսի: Ի՞նչ էր իրենց բովանդակ գիտութիւնը, իրենց ուսումն և խոկմանց նիւթը: — Միայն Աստուածաշունչ գիրք: — Ամենայն հին պատմիչք Եկեղեցւոյ՝ Յովհաննէս Մոսկոս, Թէոդորետոս, Սուլպիկիոս Սեւերոս, Պալլատիոս, Հռուփինոս և այլք միաձայն կը վկայեն թէ որպիսի փոյթ և հետամտութիւն ունէին հարքն անապատաւորք յուսումն և 'ի հմտութիւն գրոց սըրբոց, և թէ անոնցմէ շատերն ամբողջ 'ի բերան սերտած էին զայն: Սրբոյն Պախոմէոսի կանոնք՝ որ չորրորդ դարու առաջին կիսուն կը վերաբերին, խստիւ պարտք կը դնեն յարատեւ սուրբ գրոց ուսմանն զբաղիլ. և ոչ ոք կ'ընդունուէր 'ի դաս սկզբնականաց՝ եթէ գէթ նոր կտակարանն ու սաղմոսարանն արդէն բերնուց սերտած չըլլար. և եթէ ոք անհոգութիւն կամ անսիրելութիւն երևցընէր այնպիսի պարապմանց, կանոնք կը բանադատէին զայնպիսին յընթերցումն և 'ի գրութիւն. Et etiam nolens leggere compelletur. և իրենց վարուց պատմութիւն քաջայայտ կը հռչակեն թէ պարզ խօսք մը չէր այն, այլ իրականութիւն. զի Պափնուտի համար կը վկայեն « այր ծայրացեալ գիտութեամբ աստուածաշունչ տառից ». Սերապիոնի « հռչակեալ յամե-

նայն աղգս ուսմանց և դպրութեանց, որ զգիրս սուրբս 'ի բերան առեալ գիտէր »։ Եւագրի Պոնտացւոյ՝ թէ « լիուլի հմտութեամբ գրոց սրբոց բաւական էր նա յըմբերանել զամենայն դասս հերձուածոց »։ և Դիդիմեայ կուրի թէ « չէր ոք չէր ուրեք գերազանցեալ քան զնա 'ի գիտութեան աստուածաշունչ տառից »։ որուն վրայ կը զարմանար սուրբն Աթանաս, և Անտոնիոս կը թողուր զանապատ՝ գալ զինք մտիկ ընելու համար։

Ասոր համար էր որ Եգիպտոս նպատակ մը եղած էր համաշխարհական ու անդադար պանդխտութեանց։ Չորրորդ դարուն կիսուն և հինգերորդին առաջին քառորդին՝ աւելի ծաղկած և բարգաւաճ էր այս եռանդն։ Հոն կը դիմեին յաշխարհէն Կելտաց. և վկայ Պոստումիանոս, սրբոցն Պաւլինոսի և Հերոնիմեայ և Սուլպիկեայ Սեւերոսի սերտ ու մտերիմ բարեկամը. հոն յԻտալիոյ, 'ի Սպանիոյ, 'ի Բիւզանդիոնէ, յաշխարհէն Սկիւթացւոց, 'ի Պոնտոսէ, 'ի Գաղատիոյ և 'ի Սիւրիոյ, որով եգիպտական ընկերութիւնը աշխարհաքաղաքացի կրնար սեպուիլ. յամենայն աշխարհաց և 'ի դասակարգէ ունենալով ներկայացուցիչք. և ասոնց ամենուն պանդխտութիւնը,— կը վկայէ պատմութիւն,— չունէր և չէր կրնար ունենալ ուրիշ գլխաւոր նպատակ, բայց սուրբ և աստուածաշունչ գրոց ուսումն և հետաքննութիւն։

Այս էր վախճան երթի կրտսերագոյն Թարգմանչաց մերոց։ Թէ ո՛րչափ ատեն յամեցին հոն, որո՛ւնց քով գեգերեցան յուսումն, ո՛վ էր նորն այն Պղատոն՝ որուն արժանաւոր աշակերտ չըլլալուն կը ցաւի Խորենացին, և զոր ոմանք կը համարին զնա ինքն Կիւրեղ Աղեքսանդրացի, և ինչ բանով պարապեցան, — ասոնց ամենուն վրայ ոչ խօսք մը չունին ազգային պատմութիւն և յիշատակք. — միայն անտարակուսելի է որ սուրբ գրոց ուսումնասիրութիւնն, և անոր

հայկական Թարգմանութեան կատարելագործութիւնն եղած ըլլայ իրենց նպատակ. վասն զի այն էր՝ զիրենք այնչափ հեռաւոր ուղեգնացութեանց պարտաւորող՝ սուրբ վարդապետաց կամքը և հրաման։ Մեր Թարգմանութեան՝ Աղեքսանդրեան կոչուած սուրբ գրոց օրինակին հետ ունեցած բազմապատիկ և բազմաթիւ համաձայնութիւնք և նմանութիւնք զայս կը հաւաստեն։

Իրենց այս սիրելի և ցանկալի ուսմանց և պարապմանց մէջ՝ տխուր և սրտատոչոր գոյժք կը հասնէին 'ի մայր հայրենեաց։ Արքունական գահոյք տապալած ինկած 'ի սասանեան բռնութենէ, հայրապետականն բռնաբարուած և անարժան սրտերու և ձեռաց մատնուած, հայաստան աշխարհ՝ իր ամենէն աւելի մեծագին գանձը՝ զսրբութեան կրօնս, կորսընցընելու վտանգի մէջ, — այս ամենայն կը փութացընէին զիրենք 'ի դարձ։

Թէ որպիսի ընդունելութիւն եղաւ իրենց, և ինչ վիճակի մէջ գտան զՀայաստան, արդէն ծանօթ է մեր ընթերցողաց։

ԺԴ· ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆ ՅԱՐԳ

Սուրբ Գրոց հայկական հրաշատառ Թարգմանութիւն՝ գրեթէ անծանօթ մնացած էր օտարաց, թէ առ հին քրիստոնեայ ազգս, որք ընդհանրապէս չունէին սովորութիւն իրենցմէ դուրս և օտար բանասիրութեամբ զբաղիլ, և թէ միջին կոչուած և անոնց հետևորդ դարուց մէջ՝ երբ յԵւրոպա արդէն սկսած էին աստուածաշունչ մատեանք՝ բանասիրաց և ուսումնականաց մասնաւոր հետազօտութեանց և հետաքննութեանց սիրելի և գովելի պարապմունք մը

դառնալ։ Այսօր ծանօթութիւն մը կար մեր թարգմանութեան գոյութեան. բայց այնչափ անհարազատ և վրիպական, որ ինչուան ոմանք սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի երկասիրութիւն համարած են զայն, ժամանակն ու տեղն ալ ճշգելով՝ թէ երբ սուրբ հայրապետն աքսորուած էր արքունական հրամանաւ 'ի Կոկիսոն փոքուն Հայոց, 'ի խնդրոյ հայազգեաց տեղւոյն թարգմանած ըլլայ 'ի հայ սուրբ Գրոց ամբողջութիւնն և կամ անոր մէկ մասը։

Խաչակրաց ժամանակ՝ թէպէտ յաճախագոյն էին վերաբերութիւնք մերոյն ընդ արևմտեայց, և փոխադարձ ծանօթութիւնք, բայց թէ ուրիշ վարդապետական կամ նոյնպիսի համարուած խնդրոց հետ, որ իրարմէ բաժանման կամ խորութեան առիթք սեպուած էին, յուզուած է արդեօք յարևմտեայց՝ հայկական աստուածաշունչ գրոց վաղեմի թարգմանութեան՝ վաւերական ընդունելութեան խնդիր կամ տարակոյս մը, տեղ մը չենք հանդիպած յիշատակութեան. և չենք ալ կարծեր որ երբեք եղած ըլլայ։ Բայց ոմանք յեւրոպացի գիտնոց կարծիք ունեցեր են թէ առ Կիլիկեցւովք՝ Հայք 'ի ստիպելոյ արևմտեայց յանձնառու եղած ըլլան և թոյլ տուած որ հայկական թարգմանութիւնն՝ լատին եկեղեցւոյ վաւերացեալ օրինակին համեմատ փոփոխութիւններ կրած ըլլայ։ Հեթմոյ թագաւորութեան ժամանակ (1224-1270) կը համարին մտածուած և յաջողուած այսպիսի ձեռնարկ մը։ Բայց այսպիսի կարծեաց պատմական հաւաստեաց հետք մը չկայ, ուստի և ոչ վաւերական ստուգութիւն մը։

Հաւանականութիւն ալ չենք տեսներ. և անտեղութեանը կը վկայեն գրեթէ բոլոր ծանօթ գրչագիրք աստուածաշունչ տառից, որ ինչպէս արդէն ըսեր ենք, չեն յառաջեր քան զերեքտասաներորդ դար. և որոց մէջ չկայ և ոչ իսկ հեռաւոր նշանակ մը

այդպիսի ենթադրութեան, բայց թէ գլխակարգու-թեանց համեմատութիւնք, և այն խիստ ցանցառ և 'ի լուսանցս։ Եթէ եղած ալ ըլլար այդպիսի ջանք մը, և յոմանց հաւանութիւն ալ գտած, անշուշտ իրենց բողոքոյ ձայնը պիտի բարձրացընէին այն նո-րութեան և եկամուտ սովորութեան դէմ Հաղբա-տացիք և Տուտէորդի, Մխիթար Սկեւռացի (+ 1340), Յովհան Որոտնեցի (+ 1280), Վարդան Սև-լեռընցի, Տաթեւացին Գրիգոր (1340-1410) որ իրենց գիրքովը և գրուածներով ունէին բազմաթիւ կու-սակիցք, և պարապ մը սեպած էին յամենայնի ան-խոնջ նահատակիլ և ոգորիլ 'ի պաշտպանութիւն ազգային իրաւանց և առանձնաշնորհութեանց։

***

Յիշեցինք յառաջ թէ երբ Ազարիա կաթողիկոս Սսոյ ղրկեց զՅովհաննէս զոմն եպիսկոպոս 'ի Հռովմ աստուածաշունչ գրոց տպագրութիւնն ընել տալու առաջարկութեամբ և թախանձանօք առ Գրիգոր ԺԳ քահանայապետ, տուաւ ձեռքն նոյն սուրբ մատե-նից գրչագիր ընտիր օրինակ մը, փափաքելով որ ա-նոր համեմատ ըլլայ տպագրութիւնն. և հաւանա-կան է ենթադրելը թէ նոյն օրինակն ըլլայ որ ցարդ կը պահուի 'ի Վատիկանեան Մատենադարանի։ — Կը գտնենք յինքնագիր յիշատակարանի Յովհաննու Անկիւրացւոյ՝ որուն անունը ծանօթ է հայկական տպագրութեան պատմութեան մէջ ունեցած ար-դեամբք, հետևեալ տեղեկութիւնը. « Ես Յովհան-նէս Անկիւրացի, որ ֆրանկն Ճիվաննի Մաւլինօ կո-չէ, եկի 'ի մեծն Հռովմ Թվին Հայոց ՌԶԶ և կեցայ մինչև ՌԴ վասն պաշտմայ առնելոյ զսուրբ աստուա-ծաշունչն. բայց ոչ կարացի աւարտ առնել. վասն բազում պատճառաց. բայց ունիմ 'ի Վանատիկ

կամ 'ի Կոստանդինուպօլիս կատարել. զի ունիմ զա-մենայն գործիք որ պիտոյ են վասն այս բանիդ » : — Անկիւրացիէն ետքը և նոյն վախճանաւ եկած է 'ի Հռովմ նաև Ոսկան վարդապետ Երևանեցի, մէկս այլ բազմաշխատ և բազմարդիւն գործիչ և փափաքող յառաջադէմ զարգացման արուեստիս յազգի Հա-յոց. « Բազմաւ վշտիւ, կ'ըսէ, և տառապակրու-թեամբ եկեալ հասի 'ի սահմանս Իտալիոյ, յերկիրն Թօսգանու, 'ի քաղաքն Լիվոռնայ. ներնախնում նուագում զոչ ոք գտի ինձ զօժանդակ. սակս որոյ թողեալ գնացի 'ի Հռոմայ. գոնեա անդ գտցի յա-ջողութիւն գործառնութեանն. և անդ ես ոչ եգե ինչ մխիթարութիւն օգնականութեան գործոյս, վասն յոգունց պատճառաց ներհակականաց, թէ՛ 'ի մերայնոց ազանց, և թէ իւրեանց կանոնաց և սահ-մանաց » :

Ոսկանայ այս վերջին խօսքերը՝ զոր նշանակեցինք, յայտնապէս կը ցուցընեն թէ ինչ պատճառաւ իր ձեռքով և ջանիւք եղած յԱմստերտամ Հոլանտիոյ նախընծայ տպագրութիւն հայկական աստուա-ծաշունչ մատենին՝ ոչ յամենայնի հաւատարմու-թեամբ, և 'ի գրչագրաց մերոց տարբեր կերպա-րանօք ընծայեցաւ 'ի լոյս : Արդէն գիտենք թէ Ոսկան վարդապետ բաւական նեղութիւն և դժուա-րութիւն կրած է 'ի Մարսիլիա Գաղղիոյ ազգային տպագրատուն մը հաստատելու, և հոն եկեղեցա-կան մեր գրքերը հրատարակելու վախճանաւ. բայց չենք կրնար որոշակի բան մը ըսել՝ թէ ինչու աւելի ազատ և անկախ սեպուած երկրի մը մէջ բռնա-դատուած ըլլայ այսպիսի փոփոխութիւններ. մու-ծանել յաստուածաշունչ գիրս, և այնպէս հրատա-րակել զայն 'ի 1666, ուր իր ձեռքով նոյն քաղաքին մէջ տպագրուած ուրիշ գրքերու նկատմամբ՝ ոչ ինք և ոչ իր յաջորդք յարուեստին չեն ունեցած այդ-

պխսիբռնադատութիւն մը ոչ 'ի հոգևոր և ոչ 'ի քաղաքական իշխանութենէ տեղւոյն։ Իր խօսքերէն հաւանական կ'երևնայ գուշակել թէ աւելի յաղգանոց ստիպուեր է, ենթադրելով անշուշտ թէ աւելի ընդունելութեան կը հանդիպի այդ բազմածախ և բազմավաստակ հրատարակութիւնն։ Այդ վախճանաւ բոլոր տպագրուած օրինակք շուտով փոխադրուած են յարևելս, վաճառմամբ ծախքն հանելու և 'ի պահանջանաց պարտատեարց ազատելու համար։ Թէ իր և թէ ժամանակակցացը յիշատակագիրք կը հաւատարմացընեն զայս։

*
* *

Թէպէտև Եւրոպիոյ մէջ եղաւ աստուածաշունչ գրոց հայ թարգմանութեան առաջին հրատարակութիւնը, բայց դեռ ևս անծանօթ էր այն կամ մասամբ և կամ ըստ բոլորին՝ ժամանակին եւրոպական բանասիրութեան։ Առոր հաւաստիքը կը գտնենք 'ի 1680 հրատարակուած, ոսկանեան տպագրութենէն տասնըչորս տարի ետքը, Աբդիաս հայերէն կոչուած և 'ի Լիփսիա Գերմանիոյ տպագրուած գրքի մը մէջ։ Հեղինակն՝ որ գերման առաջին հայագէտներէն կը սեպուի, Անդրէաս Ակոլութոս (Acolutho), 'ի սկիզբն այդ համառօտ տետրակին դրած յառաջաբանին մէջ կը պատմէ թէ չորս տարի յառաջ քան զհրատարակութիւն իւր երկասիրութեան, հանդիպեր է 'ի թանգարանին Լիփսիոյ Յակոբ Գրիգորենց կոչուած հայազգի քահանայի մը, որ յետ երկար դեգերանաց և ճանապարհորդութեանց յարևմուտս, կը սպասէր յայնմ քաղաքի իւր մեծաւորաց հրամանին՝ առ 'ի դարձ առնել 'ի հայրենիսն։ Ուրիշ այլևայլ տեղեկութիւններէն զատ՝ զոր Ակոլութոս ընդուներ է 'ի Գրիգորենց քահանայէ իր հայրենեաց վրայ, փա-

*փափաքեր է իմանալ թէ արդեօք Հայք ունի՞ն զաստուա-
ծաշունչ գիրս տպագրեալ յիւրեանց լեզու։ Գիտէի,
կ'ըսէ, Քիրխեր Աթանասի գրուածներէն թէ սուրբ
գրոց վաղեմի թարգմանութիւն մը կայ 'ի հայ լեզու,
և թէ անոր մէկ գրչագիր օրինակն կը պահուի 'ի Վա-
տիկան. բայց ձեռքէս անցած գրուածոց մէջ մասնա-
ւոր տեղեկութեան մը հանդիպած չէի. ու բազմա-
հմուտն Վալթոնի արևելեան լեզուաց վրայ ըրած և
հրատարակուած բանախօսութեանը մէջ կարդացեր
էի թէ յԱնգղիա այլևայլ գրատանց մէջ սուրբ գրոց
հայկական թարգմանութեան օրինակք կը գտնուին,
ինչպէս նաև գրչագիր մ'ալ իր քովը, զոր միտք ու-
նէր իր բազմալեզուեան աստուածաշունչ գրոց տը-
պագրութեան մէջ յեռուլ, թէպէտև այս փափաքը
չիկրցաւ 'ի գործ դնել։ Ձէի, կ'ըսէ, անտեղեակ որ
'ի Հռովմ ութածալ գրիւք տպագրուած հայ սաղ-
մոսարանի օրինակք կը գտնուէին յՈսկանեան մա-
տենագրարանի, ինչպէս նաև աւետարանաց տպա-
գիրք։ Եւ թէպէտ քիչ տարի յառաջ իրենց եկեղե-
ցւոյն ծախքով եղած աստուածաշունչ գրոց տպա-
գրութիւն մը ըլլալն կը հաստատէին, բայց անոնց
օրինակք 'ի Հայաստան փոխադրուելով, եւրոպացի
բանասէրք կամ քիչ կամ ամենևին օգտուած չէին
անկէ։ Գրիգորենց խոստացաւ Ակոլութոսի՝ այդ
տպագրելոյն մէկ օրինակը բերել տալ իրեն համար
'ի հայրենեացն, և կատարեց իր խոստումը. զոր
գերմանացի արևելագէտն իբրև անզուգական պար-
գև մը համարելով, փութաց անոր վրայէն՝ մեր 'ի
վեր անդր յիշատակած երկասիրութիւնն հրատա-
րակել։ Անոր ընդարձակ և հմտական յառաջաբանին
մէջ Հոթթինկերի՝* Արևելեան մատենադարան *կո-
չուած և իր դարուն և ժամանակին համար հռչակ-
անուն գրքի մը հեղինակին հետևեալ խօսքերը մէջ կը
բերէ. «Կը յիշեմ, կ'ըսէ, թէ ինչպէս հայ լեզուի*

ւաման հետապնդութիւնը և փոյթ ինձ կը յանձնարարէր՝ մանաւորապէս անոր համար, որ բաց 'ի Յունաց ուրիշ ազգ մը չունէր այդպիսի հին և ընտիր Թարգմանութիւն մը սուրբ գրոց»։ Նոյն Հոթթինկէր՝ իր Եկեղեցական տարեգրութիւնք գրուածքին մէջ կը վկայէ թէ քրիստոնեայ ժողովրդոց մէջ առաջիններէն են Հայք. և պատճառ կը բերէ թէ առաջինք եղած են իրենց բնիկ լեզուով սուրբ Գրոց ընտիր Թարգմանութիւն մը ունեցողք յետ Եօթանասնից անուամբը ծանօթ փոխադրութեան։

Ակոլութոս առանց կարող ըլլալու ստուգութեամբ ճշդել թէ այդ հայկական Թարգմանութիւն որու ձեռքով և աշխատանօք եղած է, նախընթաց և իր ժամանակի բանասիրութեան կարծիքն հետազօտելով մէջ կը բերէ։ Նախ Անգեղոս Ռոքքա իտալացւոյն ենթագրութիւնը, որ Վատիկանեան մատենադարան կոչուած երկասիրութեան մէջ, այս Թարգմանութիւնը կ'ընծայէ ուրիշ հնոց հետ, ինչպէս վերը յիշեցինք համառօտիւ, Ոսկեբերան Հայրապետի, եթէ ոչ ամբողջ՝ գէթ սաղմոսաց գրքին և նոր կտակարանի։ Նոյն սրբոյն կուտայ նաև Քսեստոս Սենացի 'ի Սրբազան մատենադարանի իւրում։ Ասոնց կարծեաց հետևողք են նաև վերոյիշեալն Հոթթինկէր, Փֆայֆէր, (Pfeiffer), Կէրհարդ (Gerhard), Հարդինկ (Harding), ծիրանաւորն Բելլարմին, Կրէթսէր (Gretser), և այլք։

Ուրիշներն ալ, որոց պարագլուխ է Դանիէլ Հուետիոս, մասամբ Ոսկեբերանի, և միւսոյ մասին ալ Թարգմանիչ կը համարին զնախկին հայրապետն հայաստան եկեղեցւոյ զԳէորգ, (փոխանակ կոչելու զնա Գրիգոր), որ 'ի խնդրոյ և 'ի քաջալերիչ խրախուսանաց Տրդատայ արքայի, յետ ընդունելոյ զհաւատս քրիստոնէութեան, ձեռք զարկած ըլլայ այս աշխատասիրութեան։ Իրենց այս կարծեաց հաստա-

տութիւն կը համարին սրբոյն Նիկոնի՝ որ յեօթնե-րորդ դարու, մէկ խօսքը 'ի Թուղթս իւր, յորում Ղեւոնդեայ Կեսարիոյ Գամրաց հայրապետին համար կ'աւանդէ թէ « զհայրապետն Հայոց զԳրիգորիոս՝ զմեծամեծար գիտութեամբ սրբազան տառից, և առաքինակրօն վարուքն հռչականուն յեկեղեցւոջ, ձեռնադրեաց յեպիսկոպոսութիւն » ։

Այսչափ խառնակ էր և շփոթ՝ եւրոպական բանասիրութեան գաղափարը մեր աստուածաշունչ գրոց թարգմանութեան և 'թարգմանչաց վրայ. և երկար ատեն մնաց նոյն վիճակին մէջ։ Բայց մէկէնիմէկ մեծ յեղափոխութիւն կրեցին իրենց կարծիք՝ երբ հայ լեզուին ուսումն և դպրութիւն սկսան աւելի հետազօտելի ըլլալ, և սուրբ գրոց գրչագիր օրինակք և տպագրութիւնք ծանօթացան։ Այդ դէպքը, — որուն առաջին փորձն և փոյթ 'ի Գաղղիոյ սկսելով, անտի յԱնգղիա, 'ի Գերմանիա և յԻտալիա և այլուր տարածուեցաւ, — մեծ լոյս մը ծագեց իրենց համար անծանօթ մեր գրականութեան վրայ, և մեծագոյն համարում մը այն բազմաթիւ թարգմանութեանց՝ զոր կ'ամփոփէ յինքեան. մանաւոր իմն օրինակաւ՝ սուրբ գրոց ամենընտիր փոխադրութեանն անգատին 'ի հինգերորդ դարէ։ Իրաւամբք մեծագին գանձ մը երևցաւ այն սրբագիր բանասիրութեան. զոր բաղդատելով ուրիշ հին լեզուներով առ մեզ հասած նախնական թարգմանութեանց հետ, չվարանեցան խոստովանիլ թէ հայկական օրինակը կրնայ ծառայել՝ ոչ միայն առ այլս գտնուած ընթերցուածոց մթութիւնը պարզելու, տարակոյսները ստուգելու և ջնջելու, այլ նաև տեղ տեղ զանոնք սրբագրելով ուղղելու [1]։ Հարկ չէ մեր

[1] M.r Piques, docteur de Sorbonne, croyait la version arménienne très-propre à réformer le texte grec, sur lequel a été faite. (MIGNE *Diction. de la Bible*).

ընթերցողաց անդրադարձընել թէ որպիսի՞ պատիւ է այս մեր դպրութեան, և քանի՞ պարծանք իրենց բազմաքիրան երկամբք և նուիրական գրչով զայն մեզ աւանդող Թարգմանչաց։

Հայկական թարգմանութեան այս յարգը այնչափ աւելի կը յաճախէ և կ'առաւելու, որչափ արժանաւոր քննութեան առնուին ամենայն նախընթաց և հետևորդ պարագայք և հանգամանք՝ որոց մէջ մտածուեցաւ և 'ի գործ դրուեցաւ այն։ Արդէն համառօտիւ յիշատակեցինք՝ թէ անոր պակասութիւնը իրաւամբ մեծ աղէտ մ'էր հայաստան եկեղեցւոյ. և զայն դարմանելու համար՝ սուրբքն Սահակ և Մեսրովպ ամէն դժուարութեան առջև չկասեցան՝ ետ չկեցան. և օրինակելի անձնանուիրութեամբ և եռանդեամբ կազմեցին աշակերտաց ընտիր խումբ մը, որ հաւատար սրտով և հոգւով՝ իրենց գործակիցք և սատարք երևցան։ Այսպիսի ցանկալի նպատակի մը հասնելու համար կրկին և կրկին երկար և տաժանելի ուղևորութիւնք քաղցրացան իրենց. արքունի և պատրիարքական իշխանութեանց 'ի Բիւզանդիոն՝ աղերսք, խնդրուածք և պաղատանք ուղղուեցան թղթով և անձամբ՝ աստուածաշունչ գրոց ընտիր օրինակներ ձեռք ձգելու. և հասան այդ փափաքին։ Կրնային այդ կայսերական գանձէն հանուած օրինակաց հաւատարմութեան վրայ վստահանալ, և չեղան. այլ լաւագոյնին փափաքով և սիրով նորանոր աշխատութեանց, քննութեանց և բաղդատութեանց ձեռք զարկին։ Այդպիսի հետապնդութեան և փութոյ բնական հետևանք էր՝ իրենց գործոյն կատարելութիւնը։

Երկրորդ առաւելութիւն մ'ալ այս պանծալի աշխատութեան՝ Թարգմանչաց գիտութիւնն էր ոչ լոկ իրենց յատուկ ազգային լեզուին, այլ և ասորւոյն. յունականին ու նաև հեբրայականին, յորում լաւա-

գոյն ներվարժման համար հարկ է որ սեպենք՝ սմանց
'ի նոցանէ ինչուան 'ի Պաղեստինացւոց աշխարհն ը-
րած ճանապարհորդութիւնը։ Ասով կրկնակի և ե-
րեքպատիկ կ'ըլլայ իրենց երկասիրութեան կարևո-
րութիւնն ու յարգ՝ 'ի մասնաւորի ազգային, և ընդ-
հանրապէս եկեղեցական բանասիրութեան համար։
Գործոյն կատարելութիւնը այս երեք իրարմէ տար-
բեր լեզուաց վրայ եղած այլևայլ թարգմանութեանց
և համեմատական աշխատութեան մէջ էր. որով իրենց
աշխատութիւնը խառն՝ ինչպէս սովոր է ըսուիլ, կեր-
պարանք կ'առնուր. նախ ասորականին վրայ, յե-
տոյ յունին. և երրորդ՝ յԱղեքսանդրիա և այլուր
գեգերանօք՝ ընթերցուածոց համեմատութեան կա-
րևոր գործով պարապելով՝ յընտրութիւն և 'ի հա-
ւաստարմութիւն իրենց թարգմանութեան։ Սուրբ
գրոց քննադատական ուսմամբ զբաղողին յայտնի
կ'երևնայ այս, երբ մեր թարգմանութիւնը պարզա-
պէս օրինակի մը հետևողութեամբ եղած չիգտներ.
այլ յունականէն զատ՝ որ գլխաւոր առաջնորդն է,
տեղ տեղ կը տեսնէ նաև ասորի և երբեմն նաև հե-
բրայական օրինակաց ազդեցութիւն, աղեքսան-
դրեան գրչագրին հետ նմանութիւնք, որոգինեան
ընթերցուածք. և ասոնց ամենուն մէջ ամենաճար-
տար և իմաստուն ընտրութիւնք։ Յունական ընկա-
լեալ կամ վաւերացած արդի օրինակին և միւս հնագոյն
գրչագրաց մէջ՝ միայն 'ի չորս աւետարանս, երկու
հարիւր յիսուն և աւելի տարբերութիւնք ընթեր-
ցուածոց կը գտնուին։ Ասոնցմէ քառասունուերկու՝
'ընդունուած են 'ի մեր գրչագիրս, ու հարիւր ին-
նըսունևչորս մերժուած՝ համաձայնելով վաւերա-
կան օրինակին. տասը տեղ անորոշ, և կամ ընթեր-
ցուածք կը պակսին։ Ասով մարթ է հաստատել թէ
Թարգմանչաց ձեռքն եղած օրինակք՝ զոր 'ի Բիւզան-
դիոյ ձեռք բերին, Եւսեբեայ ու սրբոյն Պամփիլ-

լեալ օրինակք, համաձայն էին ընդ այժմեան վաւերացեալ օրինակի սուրբ Գրոց: «Հայկական գրականութեան ամենէն աւելի նշանաւոր արտադրութիւնն՝ սուրբ գրոց Թարգմանութիւնն է, — կ'ըսէ եւրոպացի արդի հայագէտ բանասիրէն մէկը. — փառք իր փարուն, որ հայ ազգին համար ամենէն արդիւնաւորն եղած է, և որ պատմութեան մէջ անմահացաւ՝ Թարգմանչաց դար կոչուելով: Եթէ կայ թարգմանութիւն մը սուրբ գրոց որ եկեղեցական հաստատութիւն (sanction) ընդունած է, առանց տարակուսի՝ հայկականն է: Ոչ միայն ընդհանուր գործածութեամբն ամէն տեղ մուտ գտած, հայ եկեղեցւոյ բարձրաստիճան անձանց ձեռքով սկսուած և 'ի գլուխ տարուած, այլ նաև՝ ինչպէս ոմանք կը համարին, յԱշտիշատ գումարուած ազգային ժողովոյն մէջ ('ի 434) վաւերացած »:

***

Հետաքննական և մեծապէս ընդունելի պիտի ըլլայ արևմտեան բանասիրաց՝ հայկական թարգմանութեանս՝ իրենց ծանօթ լեզուով մը փոխադրութեամբ հրատարակութիւնը: Մեր վաստակաւոր և բազմահմուտ ծերունեաց մէկուն (Հ. Եղիա Վ. Թոմաճան) այսպիսի երկասիրութիւն մը 'ի լատին՝ դեռ տպագրութեամբ լոյս տեսած չէ: Եւրոպացի գիտնոց այս նկատմամբ աշխատասիրութիւնք՝ մասնականք են և ոչ այնչափ գոհացուցիչք: Յիշենք զԿրիէսպախ, որ 'ի 1715 ըրած նոր կտակարանի տպագրութեան մէջ՝ աւելցուց հայերէն ընթերցուածոց տարբերութիւններն. նոյնը ըրաւ իրմէ ետքը Փրիտոյ Թրէժէլ՝ Սորպոնի վարդապետը, եօթանասնից թարգմանութեան մեծ հրատարակութեան մէջ: Բրիտանական մուսէոնի ուսուցիչներէն Կ. Ռիէօ՝ Ասկանեան և Ջոհրա-

պեան տպագրութիւններն բաղդատեց՝ յունականին և ուրիշ նախնի թարգմանութեանց հետ։ (Հմմտ. Th. Hartwel Horne, An introduction to the Critical Study and Knowledge of the Holy .Scriptures, 1877, tome IV).

Ծանօթ են մեր ընթերցողաց այլևայլ տեղուանք եղած տպագրութիւնք հայկական աստուածաշունչ գրոց [1]։

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ ԳԻՐՔ

Սուրբ Գրոց թարգմանութենէն ետքը՝ եկեղեցական բարեկարգութիւն և հաստատակաց հոգևոր պաշտամանց անհրաժեշտ հարկ և կարգաւորութիւնն, պէտք էր որ գրուէր սրբոց Թարգմանչաց աստուածասէր և աստուածախօս միտքն ու սիրտ, և նպատակ ըլլար իրենց նախապատիւ փութաջան վաստակոց առ այն։ Ինչուան առ մեզ հասած հետաքննական ցուցակ մը կը հաւաստարմացընէ թէ և յայնմ, — իրենց պաշտաման և կոչման էական գործոյն մէջ, — ամէն եռանդ, սիրտ ու աշխատանք երևցուցին։ Անկէ զուրս, ակնարկ մը միայն մեր եկեղեցական պաշտամանց անզուգական գրոց, բաւական է յերախտապարտ մեծարանս այն վեհագոյն անձանց որ այդպիսի հրաշալի երկամբք ճոխացուցին զեկեղեցի հայաստան աշխարհի, և որոց հաւասարն դժուարին է գտնել, — նաև վկայութեամբ աննախանձ օտար քննադատից, — յարևելս և յարևմուտս։ Տարակոյս չկայ որ նաև այս մեծ ձեռնարկին մէջ օժանդակեցան մեծապէս 'ի յունական արտագրութեանց պանծա-

[1] ՄԱՏԵՆԱԳԻՐ. ՀԱՅԿԱԿԱՆ, 53-59։

լի և անմահանուն վարդապետաց այդ մեծ եկեղեցւոյն. բայց իւրեն աննման հանճարոյն, սրտին ու աստուածեռանդն հոգւոյն բազմապատիկ արգասեօքն ճոխացընելով և զարդարելով զայնոսիկ։

Մէջ բերենք նախ այն ցուցակը որ Օրհնութիւնաքեր կը կոչուի, և որ ինչուան առ մեզ հասնելով՝ այլևայլ կերպարանափոխութիւնք, ու երբեմն՝ նաև ոչ այնչափ հարազատ յաւելուածներ ընդունած է. և յանուանէ կը յիշատակէ՝ ինչ որ եկեղեցական բարեկարգութեան ու պաշտամանց բարեզարդութեան համար պատշաճ և կարևոր Թարգմանութիւնք 'ի յունէ, ու երբեմն նաև յասորւոյն՝ Թարգմանիչք մեր հետերնին բերեր էին 'ի Հայաստան։

« Երանելին Մովսէս Խորենացի, Թարգմանիչ, որ էր գրիչ սրբոյն Սահակայ՝ որդւոյն սրբոյն Ներսէսի։ Յետ հարիւր մետասան ամին սրբոյն Գրիգորի՝ եղև սկիզբն Թարգմանութեան 'ի հայերէն լեզու։ Իսկ 'ի յերկրորդում ամի Թարգմանութեան՝ առաքեաց սուրբն Սահակ 'ի յԱնձիանձու քաղաքն, և ետ բերել զՍերմնօրհնէքն զկալի և զհնձանի, զոր արարեալ էր 'ի հինգերորդ ամի հայրապետութեան՝ սրբոյն Գրիգորի Աստուածաբանի։ Իսկ զկանոնն Ջուր օրհնելոյն՝ սրբոյն Բարսղի է արարեալ յեօթներորդ ամի հայրապետութեան իւրոյ 'ի Կեսարիա Կապադովկացւոց. և յԵրուսաղէմ քաղաքի 'ի հօսանս Յորդանանու հանդիպեցաւ Խոսրով Թարգմանիչ՝ հրամանաւ սրբոյն Սահակայ. և անդ գրեաց և եբեր 'ի Հայս։ Իսկ Ապաշխարող կարգել և արձակել 'ի մեծի հինգշաբաթին՝ երանելւոյն Կիւրղի Երուսաղեմացւոյ գրեալ 'ի գուռն սրբոյն Սիոնի՝ 'ի քսան և մի ամի հայրապետութեան իւրոյ. յաւուրն յորում ընծայեցուցանէր զԵգովմայեցիսն (այլ օր. զԵգիպտացիսն) յԱստուած. և Արշեւան և Կորիւն Թարգմանիչք բերին 'ի Հայս։ Իսկ զԱգապեան սուրբ

տանել, որ է Հոգեհանգիստն, և զՔահանայաթաղն՝ որ ունի ութևտասն աւետարան՝ արարեալ է սրբոյն Եփրեմի խորէն Ասորւոյ 'ի Նիկոմիդացւոց քաղաքին՝ յերկրորդ ամի հայրապետութեան իւրոյ. և Ղազար (այլ օր. Ղազարիկ) Թարգմանիչ եբեր 'ի Հայս, յերեքտասան ամի Թարգմանութեան սրբոյն Սահակայ Պարթևւի առն Աստուծոյ, որ էր նախանձախնդիր կարգաց եկեղեցւոյ: Իսկ վասն Տէառնականի և Աղօրհնէիցն, սրբոյն Յուստոսի է արարեալ, որ էր չորրորդ եպիսկոպոս Երուսաղէմի 'ի սրբոյն Յակոբայ: Իսկ Սքեմարկէքն երեք կարգ է. մին՝ Թէոդորոս եպիսկոպոս Միգարէ Պամփիւլացւոց քաղաքին արարեալ, հրամանաւ սրբոյն Անտոնի. երկրորդ՝ Թեբայեցւոց Ամոնի սուրբ հօրն. երրորդ՝ Սկիւթացւոց լերին: Իսկ վասն Գրակարդացաց և Կիսասարկաւագաց և Նկարեալ եկեղեցւոյ, և յետոյ դուռն եկեղեցւոյ դնել, և զնշխարս սրբոցն 'ի հանգիստ փոխել. այս ամենայն յիշատակ է մեզ 'ի սրբոյն Գրիգորէ մերոյ Լուսաւորչէ: Իսկ վասն Քահանայօրհնէիցն՝ սրբոյն Սահակայ է արարեալ յառաջին ամի հայրապետութեան իւրոյ. (այլ օր. սրբոյն Սահակայ գծեալ յետ քսան և մի ամի եպիսկոպոսութեան իւրոյ) 'ի Նաւասարդի ամսեանն. որ օրն մի էր և յիշատակ սուրբ Կարապետին. արար և զՔահանայթաղէքն, որ ունի եօթն աւետարան. այլ և զԱշխարհաթաղն 'ի Քաղաքուգաշտի (այլ օր. յԱյրարատ գաւառի 'ի Վաղարշապատ քաղաքի) 'ի վկայարանս սրբոց Հռիփսիմեանց, յետ հարիւր մետասան ամի սրբոյն Գրիգորի. զի մինչև ցայն վայր հնումն վարէին: Արար և զգիշերոյն քարոզսն և ընթացսն չորս աղօթսն: Իսկ զՀիմնարկէքն և զԵկեղեցւոյ օրհնէքն և զսրբել Տաճարի և ժամահարք, և սկի և մաղզմայի և հանդերձի սպասու և աւազան, և միրոնութիւն առնել և խաչ օրհնել, և պսակ դնել և զքառասներորդաց քարոզսն՝ զայդ Յո-

հաննու է արարեալ Մանդակունւոյ, որ չորեքտասան թիւ էր 'ի սրբոյն Գրիգորէ։

« Այս ամենայն 'ի հրամանէ սրբոյն Իսահակայ Պարթեւի՝ ձեռամբ Մովսիսի գրչի նորոգեցաւ 'ի Հայս »։

***

Ամենէն առաջ արժան է որ նուիրենք մեր համառօտ տեսութիւնը՝ Պատարագի սուրբ խորհրդոյն մատուցման յատուկ Պատարագամատոյց կոչուած գրոց։

Որչափ անտարակուսելի է որ այդ սուրբ խորհրդոյն մատուցումն ու կատարումն կար առ մերոն անդստին յառաջին աւուրց հաստատութեան քրիստոնէական սուրբ կրօնից, բայց ինչպէս լեզուն՝ ասանկ ալ հին ձեւը անծանօթ է մեզի։ Առիթ ունեցանք վերագոյն յիշատակելու թէ երկու, իրարմէ տարբեր լեզուով, Պատարագամատոյց գրոց կիրառութիւն հաւանական կ'երեւան մեր ազգին նախնական քրիստոնէութեան պատմութեան մէջ. մին յասորի լեզու, անշուշտ յաւուրց անտի Թադէի և Բարթուղիմեայ, և երկրորդն 'ի յոյն՝ զոր հաւանականաբար սուրբ Լուսաւորիչ հետը բերած է 'ի Կեսարիոյ. և թէ այս երկուքին ալ գործածութիւնը հաւանելի կ'երեւայ, ասորականն Հայաստանի այն մասին մէջ շարունակուելով՝ որ Պարսից իշխանութեան սահմանակից էր, և ուր իր քաղաքական օրինաց հետ՝ ազդեցութիւն ունէր նաև քահանական կամքը. և միւսն՝ ուր աւելի յունական տարր և զօրութիւն կար, և կը բարգաւաճէր։

Բայց յերկու Պատարագամատոյց գրոց՝ զոր կ'ենթադրենք, նախնեաց թարգմանութեամբ հասած են մինչև առ մեզ զանազան համանման գրութիւնք։

Ասոնց մէջ՝ հեղինակաց որոց կ'ընծայուի՝ ժամանակագրական կարգաւ, երկրորդն է սրբոյն Յակովբայ Տեառնեղբօր անունը կրողը։ Այդ անուամբ ուրիշ Պատարագամատոյց գիրք կը գտնուին նաև առ այլ հին քրիստոնեայս։ Մին կը տրուի սրբոյն Յակովբայ Կրտսերոյ, զոր բաց յայլոց՝ ինչպէս կը նշանակենք 'ի ծանօթութեան [1], հրատարակած է նաև Փաբրիկիոս 'ի գիրսն Codex apocryphus Novi Testamenti. և անոր վրայ խօսող հին մատենագրաց մէջ կը յիշատակէ նաև զՍահակ պատրիարք Հայաստանեայց 'ի մետասաներորդ դարու։

Ուրիշ Պատարագամատոյց մ'ալ կայ ընծայեալ Յակովբայ եղբօր Տեառն, զոր Ռընոդոյ թարգմաներ է յասորւոյն և հրատարակեր։ Երրորդ մ'ալ այն վերնագրով. Հաբեշական Պատարագամատոյց սրբոյն Յակովբայ եղբօր Տեառն, զոր կարգաւորեաց Գրիգորիոս պատրիարք արևելից, 'ի լերինն Հայոց մեծաց, յամի Յունաց 1903, 'ի 1591 (?) թուականութեան փրկչին։

Մեր մատենագրութեան մէջ հայ Թարգմանութեանց առ մեզ հասածը՝ այս երրորդն է. միայն սա տարբերութեամբ որ նախակարգեալ քանի մը աղօթք ալ կը գտնենք 'ի հայումն, որ կը պակսին առ այլս։ Վերնագիրն է. Պատարագ սրբոյն Յակովբայ եղբօրն Տեառն առաքելոյ, և կը շարունակուի մինչև 'ի լուացումն ձեռացն՝ փոխ առ փոխ քարոզիւք և աղօթքներով 'ի սարկաւագէն և 'ի քահանայէ, որոնք՝ ինչպէս ըսինք, միայն մեր Թարգմանութեան մէջ կը տեսնուին. և կը ժամանեն մինչև յողջունատուութիւնն։

Աստի կը սկսի այլոց քրիստոնեայ ազգաց ծանօթ

[1] Liturgiæ Sanctorum Patrum, տպագրութիւն Փարիզու (1560). Liturgiarium Orientalium Collectio, և 'ի Bibliotheca Patrum maxima, տպագիր Լիոնի։

սրբոյն Յակոբայ Տեառնեղբօր անունը կրող համառօտ Պատարագամատոյցը, և սկզբնաւորութիւնն է ըստ հայ թարգմանութեան. « Աստուած որ ես ամենայնի տէր, զմեզ որ ոչ եմք արժանի, արժանի արարեր բարերար մարդասիրութեամբ քո, որպէս զի համբուրելով զմիմեանս 'ի համբոյրս աստուածային սրբութեան, որբեսցուք յամենայն աղտեղութենէ հոգւոյ և մարմնոյ » ... և այսպէս յառաջ կը վարէ, թէպէտև ոչ միշտ հաւատարիմ ճշգութեամբ ընդ բնագրին. և որոյ ճաշակ մը սեպուի հետեւեալ հատուածը, և 'ի ծանօթութեան գրուած զաղղիական փոխագրութիւնն յասորւոյն. « Ճշմարտապէս սուրբ ես, թագաւոր թագաւորաց և պարգևիչ ամենայն սրբութեանց. սուրբ ես դու և միածին Որդին քո, տէր մեր Յիսուս Քրիստոս. և Հոգին քո սուրբ որ անքննին ես յամենայնի, և անհաս է խորութիւն քո, Աստուած Հայր ամենակալ և յամենայնի կարող, որ ստեղծեր զմարդն 'ի հողոյ, և պարգևեցեր զդրախտն 'ի բնակութիւն. և ստունգանելով նմա 'ի պատուիրանաց քոց, անկաւ 'ի փառացն զոր ունէր. սակայն դու բարերար գոլով՝ ոչ անտես արարեր. այլ խրատեցեր հայրաբար. կոչեցեր օրէնօք և մարգարէիւք [1] »։

Նշանակութեան արժանի սեպուի թերեւս որ յիշատակութեան երկար մաղթանաց մէջ. յորում հայերէնն մեծ տարբերութիւն կը կրէ յասորական բնագրէն, յետ ասելոյ քահանայէն. « Եղիցի ողորմութիւնն Աստուծոյ Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ ընդ ձեզ ամենեսեան, » կը յաւելու հայն՝ ծանօ-

[1] Tu est vraiment saint et sanctificateur, o Roi des siècles, saint aussi est ton Esprit qui scrute les mystères. Tu as fait l'homme avec de la terre, et tu l'as placé dans le paradis; lorsqu'il eut enfreint ton commandement, tu ne l'abandonnas point, mais tu l'as dirigé par la voix des prophètes.

թաքանելով. « Եւ քահանայն բեկանէ զհացն և խա- չանիշ ստորանագրէ զբաժակն՝ զոր առնեն Ասորիք. որ ոչ է ուղիղ այս ». և ստուգապէս կայ այս արա- րողութիւնն յանուանեալ Պատարագամատուցի սըր- բոյն Յակովբայ[1]: Այս ակնարկութիւնն աւելի հա- ւանականութիւն մը կ'ընծայէ հայկական թարգ- մանութեանս ասորւոյն վրայ եղած ըլլալուն: .

***

Սրբոյն Յակովբայ տրուած Պատարագամատու- ցէն զատ՝ ուրիշ համանուն գիրք մ'ալ կը գտնենք թարգմանուած 'ի հայ այս խորագրով. « Պատարագ մատուցեալ սուրբ հօրն մերոյ Իգնատիոսի Աստուա- ծազգեաց հայրապետին Անտիոքայ՝ փոխեալ յասոր- ւոյն 'ի մերս 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ մերոյ »: Կ'աւանդի 'ի տարեգիրս և 'ի յիշատակս պատմու- թեանց եկեղեցւոյ թէ սուրբ հայրապետս՝ Քրիստո- սի համբարձմանէն քսանեւեօթն տարի ետքը 'ի յոյն լեզու շարագրած ըլլայ զայս Պատարագամատոյց. և զոր յետոյ Եգեսիոյ եպիսկոպոս մը, Յակոբ ա- նուն, թարգմաներ է 'ի բարբառ քաղդէացի: Ռընո- տոյ գաղղիացի՝ որ ուրիշ հին Պատարագամատոյց գրոց հետ հրատարակած է և զայս, հարազատու- թեանը վրայ կը տարակուսի, և արժանաւոր չհա- մարիր Եկեղեցւոյ առաջին դարուց: Մեր թարգմա- նութիւնն, ինչպէս տեսանք 'ի խորագրին, յասորա- կանէն եղած է. և առանց կարող ըլլալու ճշդել թարգմանութեան ժամանակը, որչափ ալ չհամար- ձակինք բոլորովին համաձայնիլ գաղղիացի քննադա- տին կարծեաց, բայց մէջը օտար ձեռք խառնուած ըլլալը անհերքելի է: Այսպէս երբ կը յիշէ « զնա-

[1] Le prêtre brise le pain et fait le signe de la croix.

խարարան մեր և զլուսաւորիչս եկեղեցւոյ զսուրբն Դիոնեսիոս, զՅուլիանոս, զԱթանասիոս, զԿիւրղոս, զԳրիգորիոս և զհետևողս նոցին զհովուապետսն մեր որք ուղղափառ խոստովանութեամբ առ քեզ փոխեցան » ։

Ասոնցմէ ետքը ժամանակի երիցութեան կարգաւ կը հանդիպինք սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին ընծայուած Պատարագամատոյց գրոց այս խորագրով. « Պատարագ Աստուծով, սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի. ասի սրբոյն Աթանասի » ։ Այս վերջին յաւելուածին պատճառն այն է որ Լուսաւորչի անունը կրող համառօտ աղօթքով մը, և անմիջապէս սարկաւագին ողջունի հրամանաւը կը սկսի սուրբ պատարագը. ինչպէս ուրիշ հին Պատարագամատոյց գրոց մէջ. և հաւանականաբար նախընթաց աղօթքներն կը լեցուէին 'ի կիր արկանողաց՝ սրբոյն Աթանասի ընծայուածէն ։

Համառօտ գաղափար մը տալու համար այս Պատարագամատուցին՝ որ սրբոյ Լուսաւորչին նուիրական անունն կրելովը կրկնակի սիրելի է մեզ՝ մէջ բերենք մասն մը կանոնական կոչուած մաղթանաց, անմիջապէս յառաջ քան զսրբագործութիւն. « Սուրբ սուրբ սուրբ ես արդարև տէր աստուած մեր, և չիք չափ մեծվայելչութեան սրբութեանդ քո. զի արդարութեամբք և իրաւամբք և ճշմարտութեամբ ածեր զայս ամենայն 'ի վերայ մեր, որ ստեղծեր ըզմարդն հող յերկրէ, և 'ի պատկեր Աստուծոյ պատուեցեր զնա. և եդեր զնա 'ի դրախտին փափկութեան 'ի կեանս անմահականս և 'ի հանդիստ բարութեան. այլ զի անցին զպատուիրանաւ քով՝ ճըշմարիտդ Աստուած, և անկան 'ի պատրանս խաբէութեան օձին, մատնեցան 'ի մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն. արդար դատաստանաւդ քո մերժեցեր զնոսա 'ի դրախտէն փափկութեան յայս

աշխարհս, և դարձան անդրէն 'ի հող ուստի առեալ-
ծան. սակայն ոչ թողեր 'ի ձեռանէ բարերար տէր.
այլ տեսչութեամբ և շնորհօք միածնիդ քո՝ վերստին
ծննդեամբ նորոգեցեր զստեղծուած քո. և բազում
կերպարանօք այցելու եղեր արարածոց քոց... իսկ
իբրև եկն կատարած ժամանակիս, խօսեցար ընդ մեզ
միածին Որդւովդ քո. որով զաշխարհս արարեր. որ
է լոյս փառաց և նկարագիր էութեան քո. և կրէ
զամենայն բանիւ զօրութեան իւրոյ. որ ոչինչ յա-
փշտակութիւն համարեցաւ զլինելն հաւասար Աս-
տուծոյ. այլ Աստուածն յաւիտենական՝ յերկրի
երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ. 'ի սրբոյ Կու-
սէն մարմնացաւ. զկերպարանս ծառայի զգեցաւ. և
եղև 'ի նմանութիւն մարմնոյ տկարութեան մերոյ.
զի զմեզ արասցէ նմանակից մարմնոյ փառաց իւրոց.
զի 'ի մարդոյ մտին մեղք յաշխարհ, և 'ի մեղաց ան-
տի մահ, հաճութեամբ քո և կամօք՝ միածինդ Աս-
տուած՝ որ է 'ի ծոց Հօրդ եղեալ և 'ի կնոջէ. և դա-
տապարտեաց զմեղս 'ի մարմնի... 'ի գիշերին յո-
րում մատնէր զանձն իւր 'ի մահ, վասն կենաց և
փրկութեան ամենայն արարածոց, կոչեաց առ ինքն
զաշակերտս իւր, առեալ հաց 'ի սուրբ յանարատ
յանապական յամենազօր ձեռս իւր, ցուցեալ քեզ
Հօր և Աստուծոյ, օրհնեաց, գոհացաւ, եբեկ... »

Բոլոր Պատարագամատոյցն այս ոճով, այսպիսի հո-
գեհրատ սրտիւ և իմաստից վսեմական բարձրու-
թեամբ յօրինուած է. և որովհետև ամենամեծ նմա-
նութիւն ունի ինչուան հիմա գործածուածին հետ
թէ՛ կարգի դասաւորութեամբն և թէ աղօթիւք.
հաւանական կ'երևնայ թէ Թարգմանիչք 'ի կարգա-
դրութեան եկեղեցական գրոց ազգիս՝ այս սուրբ և
նախանձելի ժառանգութիւնն ընդունելով 'ի հօրէն
աստուածաշնորհ լուսաւորութեան, միայն քանի մի
աղօթք աւելցընելով և լեզուի ու բացատրութեանց

նութական և ոչ այնչափ բազմաթիւ փոփոխութիւններով պատուիրեցին գործածելի ընել զայն յեկեղեցւոջ։ Միայն փութանք ըսել որ մեր ձեռքն գտնուած օրինակաց մտադիր քննութիւն մը՝ առիթ կրնայ տալ այլեւայլ երկբայութեանց, և կասկած թէ այդպիսի նուիրական ու մեծարեալ անձի մը անունը կրող գրութեան մը մէջ՝ ժամանակք և դարք զանազան փոփոխութիւններ ու յաւելուածք մտուցած ըլլան։ Այսպէս՝ օրինակ իմն. պատարագին վերջին մասը՝ որ սրբոյն Մեսրովպայ ընծայուած աղօթքներով ձեւացած է։

***

Սրբոյն Սահակայ Պարթեւի անուամբ ալ Պատարագամատոյց գիրք մը հասած է առ մեզ՝ այս վերնագրով. «Աստուածային պատարագ՝ զոր արարեալ է սրբոյն Սահակայ Հայոց հայրապետին». յորում 'ի սկզբանն կը պատուիրէ. Սկիզբն սրբոյն Աթանասի կատարի. մինչև 'ի բերել խորհրդոյն 'ի սեղանն սուրբ։ Քահանայն աղօթէ 'ի ժամուն. «Տէր Աստուած ամենակալ, Աստուած զօրութեանց, որ արժանի արարեր զմեզ օրհնել զքո ահաւոր և զքաղցր անունդ»։

Ասոնցմէ դուրս ունինք 'ի նախնեաց զԹարգմանութիւնս Պատարագամատուցից ընծայելոց սրբոցն Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Ոսկեբերան Հայրապետի, Բարսղի, Կիւրղի Աղեքսանդրացւոյ։

***

Սրբոյն Աթանասի անուամբ գտնուած Պատարագամատոյցը՝ բազմահռչակ է յարևելեան եկեղեցւոջ, հաւասար պատուով մեծարեալ իբրու զԲարսղի և

զՈսկեբերանի ։ Հայկական Թարգմանութիւնն որ հասած է մինչև առ մեզ՝ ուրիշ ամէն յունական Պատարագամատոյց գրքերէն աւելի նմանութիւն ունի առ մեզ 'ի գործածութեան եղողին հետ՝ թէ յարարողականս և թէ 'ի դասաւորութեան աղօթից ։ Սկզբնաւորութիւն կամ խորագիրն է. Պատարագամատոյց Աստուծով, զոր արարեալ է սրբոյ հօրն մերոյ Աթանասիոս պատրիարքին Աղեքսանդրու ։ Զետասընիս գտնուած ընտիր երկաթագիր գրչագրի մը մէջ՝ յիշատակութեանց աղօթից առեն հետևեալ տողերը կը գտնեմք. « ... Եւս առաւել վասն հանգուցելոց Թագաւորացն մերոց Հեթմոյ և Լևոնեանցն, և Թագուհեացն նոցին Զապելի և Կերանի, և արեամբ նահատակացն Թորոսեանց և Պարոնին Կոստանդեայ և որդւոց իւրոց, և նախնեաց նոցին Ռոբինեանց. ազատութիւն եղբարց մերոց գերելոց, և շնորհ առաջիկայ ժողովրդեանս » ... ։

Գրիգորի Աստուածաբանի Պատարագամատուցի յիշատակութեան չհանդիպեցանք իր գրուածոց մէջ, նոյն իսկ անոնց որ անհարազատաբար իրեն ընծայուած են, բաց 'ի Նախասրբեցելոց կոչուածէն, զոր յետոյ պիտի յիշատակենք ։ Եթէ ստուգապէս իրենն է, և ոչ ուրիշ համանուն հայրապետի մը արևելեան — յոյն եկեղեցւոյ, ոչ դոյզն պարծանք են մեր հայկական գրականութեան, որ պահեր և հասուցեր է առ մեզ մեծանուն հայրապետին կորուսեալ երկասիրութեանց մէկը ։ Վերնագիրն է. « Աստուածային պատարագ ասացեալ սուրբ հօրն մերոյ Գրիգորի Աստուածաբանի » . և կը պատուիրէ. Սկիզբն արա սրբոյն Յովհաննու. կատարի և Աթանասիու. և սկսանելով աղօթիւք մը որ յառաջ քան զողջունատուութիւն, — ինչպէս յառաջագոյն յիշատակելոց մէջ, — կը շարունակէ մինչև « 'ի սրբութիւն սրբոց », և յետոյ կը յաւելու. Նոյն խորհրդածութիւն

կատարի բեկանելոյ հացին և հաղորդութեան որպէս զաւուրբ Աբանատիոս. և արձակման աղօթք « Որ օրհնես զայնոսիկ » :

Արևելեան և արևմտեան եկեղեցեաց մէջ համբաւեալ է սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի ընծայուածը, և որուն, ինչպէս ըսինք, հայ թարգմանութիւնն ալ ունինք 'ի Նախնեաց, այսպիսի մակագրով. « Պատարագամատոյց Աստուծով, զոր արարեալ է սրբոյ Յովհաննու Ոսկեբերանին Կոստանդնուպոլսոյ պատրիարքին » : Եւ կը սկսի այսպէս . Նախ ասէ սաղմոս. « Դատ արա ինձ տէր » ... « Խնկարկեսցուք հաւատով. և երկրպագանս « Տէր ողորմեա » . Քահանայն ասէ զաղօթքն, « Որ զգեցեալ ես զլոյս որպէս հանդերձ սրբութեան, տէր մեր Յիսուս Քրիստոս » ... :

Բայց 'ի այս պատրաստութեան աղօթքէն՝ մեր հիմնական 'ի գործածութեան եղած Պատարագամատուցին մէջ յՈսկեբերանեան համանուն գրոց առնուած են մաղթանքն. « Աստուած, Աստուած մեր » : Յառաջ քան զխունկ ածել՝ 'ի քահանայէ զուրցուած աղօթք. « Խունկ մատուցանեմ » : Յետ « Օրհնեալ թագաւորութեան » 'ի սարկաւագէ մաղթանք, քիչ շատ նմանութեամբ : Այդ աղօթք քահանային՝ որ 'ի մերս յառաջ է քան զքարոզել սարկաւագին . « Տէր աստուած մեր, որոյ կարողութիւնդ անքնին է, փառքդ անհասանելի » : Այդ յետ նորոգ մաղթողական քարոզից սարկաւագին՝ որ ըլլան 'ի մերումս, քահանայական աղօթք. « Տէր աստուած մեր, կեցո զժողովուրդս քո, և օրհնեա զժառանգութիւնս քո. զլրումն եկեղեցւոյ քոյ պահեա ... — Որ հասարակաց զայս և միաձայն մեզ ածնեցուն ... — Տէր աստուած մեր, որ կարգեցեր յերկինս զդասս և զզինուորութիւնս » ... : Յետոյ կը պատուիրէ. Եւ ասէ շարական ըստ աւուրն խորհրդի.

բայց գիտելի է զի հոռոմին եկեղեցին այսպէս ասէ, զի սուրբ ես տէր Աստուած մեր և քեզ զերկրպագու-թեանն. և յայսմ վայրի սկսանին զերկրպագութեանն. իսկ յայսմ վայրի այս ասելի է եղբարք. այլ թէ կամիք. և դուք այսպէս ասացէք: — Սարկաւագն ձայնէ. «Սօ-ֆիա, իմաստութեամբ ուղիղ»: Եւ սկսանի եկե-ղեցին եղանակել. «Սուրբ աստուած, սուրբ և հզօր, սուրբ և անմահ Հայր, Որդի և սուրբ Հոգի, ողոր-մեա մեզ»: Քահանայն. «Աստուած սուրբ, որ 'ի սուրբս բնակեալ ես, և երեքսրբեան ձայնիւ սերով-բէք գովեն զքեզ»...: Այս առաքելականն ընթերց-մունք, աւետարան և համբանակ հաւատոյ: Յետ որոյ գրչագիրն կը ծանօթաբանէ. Սարկաւագն 'ի յաւարտել աւետարանին սկսանի քարոզել, որպէս և գրեալ է 'ի սուրբ Բարսղի պատարագն. և յորժամ յառաջադրի խորհրդոյն 'ի սուրբ սեղանն, և կատա-րին ամենայն խորհրդածութիւնք, և ապա ասի Հաւա-տամքն յիւրում տեղւոջ: Այն մասն որ երեխայից յեկեղեցւոյ դուրս ելլելուն կը պատշաճի, չգտնուիր 'ի մերն. բայց յետոյ միւսանգամ կը սկսի զուգըն-թանալ ընդ յունին. Դպիրքն եղանակեն. «Որք զքերովբէիցն խորհրդաբար կերպարանիմք»: Քահա-նայն ասէ զաղօթս. «Ոչ ոք է արժանի յըմբռնելոցս մարմնական ախտիւք և ցանկութեամբ»... Յառաջ քան զուգընթացութիւնն յոյնը կը տարբերի 'ի մե-րմէն, որով և կը շարունակուի մինչև 'ի կանոնն. ինչ-պէս նաև յետ սրբագործութեանն. որչափ ալ ա-ղօթք ընդհանրապէս նոյն իմաստներն, և արարողա-կանք ունենան նմանութիւն, բայց ոչ ըստ ամենայ-նի. որով մերն՝ յատուկ կերպարանք մը կ'առնու, և անտարակոյս մեր նախնի հարց ու հայրապետաց յօ-րինուածութիւն է, հետևողութեամբ սրբոյ Լուսա-ւորչին և սրբոյն Աթանասի պատարագամատուցի: Կը միաբանին դարձեալ յոյնն և հայ՝ յաղօթից քա-

հանայքն. « Եւ եղիցի ողորմութիւն ». գոյզն տարբերութեամբ 'ի միջոցին որ յառաջ քան զաւե-տարանական աղօթսն. և կ'աւարտի մինչև յաղօթ-քըն « Որ օրհնես »: Յետոյ կը յաւելու գրչագիրն. Եւ բերեալ նշխար օրհնէ և բաշխէ ժողովրդեանն ա-սելով. « Օրհնեցից զտէր յամենայն ժամ »: Փոխա-նայն դառնայ 'ի ժողովուրդն. « Կատարումն օրհնաց և մաղթանաց »... : « Օրհնեալ եղերուք 'ի շնորհաց սուրբ Հոգւոյն »... :

Ընթերցողը որ անշուշտ տեղեկութիւն ունի մեր սուրբ պատարագի արդի արարողութեան, յայտնա-պէս կը տեսնէ այս համառօտ ակնարկութիւններէն ալ՝ մեծ նմանութիւնն զոր ունի ընդ Ոսկեբերանեան պա-տարագամատուցի: Զեղչմունք կամ յաւելուածք կան ուրեք ուրեք, յորոց ոմանք՝ ինչպէս ըսինք, Թարգմանչաց ժամանակի յատուկ կ'երևնան, և ո-մանք՝ անոնցմէ ետքը. բայց թէ երբ կամ որոց ձեռ-քով, չենք կրնար որոշակի բան մը ըսել. ինչպէս և ոչ զայն սահմանել թէ Ոսկեբերանի անուամբ կրող Պատարագամատոյցն առ Յոյնս՝ զերծ չէ՞ եղած ժա-մանակաց փոփոխութիւններէն, մանաւանդ այն-պիսի գրքի մը մէջ՝ որուն էական և գլխաւոր մա-սանց ձեռնամխութիւնն դժուարին կամ անկարելի ալ սեպենք, բայց յետագայք, պատրիարքունք կամ եպիսկոպոսունք, իրենց պէտք երևցած քանի մը փո-փոխութիւններ մուծանելու իշխանութիւնն կրնային ունենալ, քանի որ բարձրագոյն իշխանութենէ մը արգիլուած չըլլային, ինչպէս տիեզերական ժողովք, ազգային մասնաւոր սիւնհոդոսք, և այլն:

Աւելցընենք հոս՝ որ Ոսկեբերան հայրապետի ըն-ծայուած Պատարագամատոյցը՝ ինչուան եօթներորդ դար՝ Առաքելոց կը կոչուէր, և կ'երևնայ թէ ութե-րորդին սկսած ըլլայ իր անունը կրել: Արևելեայց աւանդութիւնք, արևմտեայց կարծիք, և շատ մա-

ունապրաց վկայութիւնք կը հաստատագրացընեն թէ Ոսկեբերան համառօտած ըլլայ Պատարագամատոյցը, և թէ այն էր գործածականն 'ի Բիւզանդական եկեղեցւոջ:

***

Պատարագամատոյց մ'ալ կայ յանուն սրբոյն Բարսղի: Կեսարու Կապադովկացւոց հայրապետին նախկական և բազմահաշակ անունն՝ սիրելի և մեծարեալ էր առ Հայս: Իր ճարտարախօս և իմաստուն երկասիրութեանց ոչ միայն մեծագոյն մասն մը թարգմանուած են 'ի մեր լեզու, անգամ 'ի հինգերորդ դարէ, ինչպէս պիտի տեսնենք գրուածքիս ընթացքին մէջ, այլ ջերմեռանդն և արտագրաւ աղօթից շարք՝ անցած են 'ի կարգս եկեղեցական հասարակաց պաշտամանց: Նոյն իսկ սրբոյ Լուսաւորչին ընծայուած Պատարագամատուցին մէջ, խորագիրն 'ի վերջ մատուցման սրբոյ խորհրդոյն կը ծանուցանէ թէ Քահանայն իջանէ 'ի մէջ եկեղեցւոյն և ասէ զարձակման աղօթքն սրբոյն Բարսղի եպիսկոպոսի, որոյ սկզբնաւորութիւնն է «Աստուած ամենատեսող և սրտագէտ»: Զարմանք չէ ուրեմն որ նոյն իսկ այժմու 'ի գործածութեան եղող մեր Պատարագամատոյց գրոց մէջ գտնուին, – ինչպէս իրօք ալ կը գըտնուին, – սրբոյն Բարսղի անուամբ աղօթք, քաղուած իրեն ընծայուած Պատարագամատուցէն, որուն ամբողջ թարգմանութիւնն ալ հասած է առ մեզ 'ի Նախնեաց, և որոյ վրայ պիտի խօսինք համառօտիւ:

Վերնագիրն է, «Աստուածային պատարագ ասացեալ սրբոյ հօրն մերոյ Բարսղի եպիսկոպոսապետի Կեսարու»: Եւ կը յաւելու ծանօթութիւն. Ամենայն որ ինչ զգեստաւորելոյն է խորհրդածութիւն՝

գրեալ է յառաջիկեան քարականապէս ։ Նուէրը ընծայելու կամ գնելու ատեն՝ կը պատուիրէ, ինչպէս 'ի Մերումն՝ ասել. « Ի յիշատակ անուան Մերոյ Յիսուսի Քրիստոսի » ։ — « Յաղագս յիշատակի անօրէնութեան անուան Մերոյ Յիսուսի Քրիստոսի » ։ Կը պատուիրէ խաչակնքել 'ի վերայ ընծային և ծածկել ասելով. « Տէր Թագաւորեաց » , որ և այս նման է Մերումս ։ Հաւատոյ աղօթքէ մը ետքը կը յաւելու. « Սուրբն Դիոնեսիոս գրեալ է յիւր գիրսն՝ թէ քահանայապետն յորժամ զգետառաւորի՝ գայ առաջի սրբոյ սեղանոյն, և աղօթս կատարէ 'ի վերայ սեղանոյն. և ապա առեալ զբուրվառն՝ արկանէ խունկ սուրբ սեղանոյն և տաճարին կարգաւ. և գայ ելանէ 'ի բեմն, և սկսանին զսուրբ կարգն քաղցրութեամբ. և յորժամ ընթեռնուն զմարգարէական և զառաքելական և զաւետարանական գիրսն, հրամայէ սարկաւագն հանել երախայիցն և գիւահարացն և ապաշխարողաց 'ի սուրբ տաճարէն. և արժանաւորք մնան 'ի ներքս, և կատարեն զսուրբ խորհուրդն ։ Իսկ քահանայն լուանայ զձեռսն » . . . ։ Աւելորդ է ըսել՝ թէ Արիստակացւոյն այս խօսքերուն մէջ յայտնի ակնարկութիւն կայ արարողութեան թափօրի, որ կատարուի 'ի պատարագի ազգիս ։

Սրբոյն Բարսղի Պատարագամատուցէն առնուած և մուծած են 'ի մերն հետևեալ աղօթք. « Որ հաստատեաց զայս և միածնոյն ամենեցուն ուսուցեր աղօթել ։ — Տէր աստուած մեր, զբազկատարած զաղօթս ծառայից քոց » ։ Սարկաւագին պատուէրն. « Մի ոք յերախայից, մի ոք 'ի թերահաւատից » ։ Յետ նուիրագործութեանն. « Արդ յիշելով և մեք զփրկագործ չարչարանսն, զկենդանատու խաչելութիւնն ։ — Զքոյս 'ի քոյոց քեզ մատուցանեմք ։ — Յամենայնի օրհնեալ ես, Տէր » ։ Դարձեալ աղօթքն որ յառաջ քան զօրհնութիւնն սրբութեամբ սրբոց.

«Նայեա, տէր․ Յիսուս Քրիստոս աստուած մեր, 'ի սուրբ բնակութենէդ քումմէ և յաթոռոյ փառաց քոց։ — Քրիստոս պատարագեալ բաշխի 'ի միջի մերում», և հետևեալ աղօթք, մինչև 'ի վերջ սրբոյ պատարագին։

Կայ ուրիշ Պատարագամատոյց մ'ալ, նոյնպէս թարգմանուած 'ի հայ, յանուն սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ։ Ասոր և մեր սովորական Պատարագամատուցին մէջ տեսնուած նմանութիւնք՝ համեմատաբար քիչ են քան զԱթանասի և զՈսկեբերանի։ Իրմէ առնուած կը համարիմք՝ նուիրագործեալ ընծայից վրայ երրեակ օրհնութիւնք, և յիշատակութիւնք սրբոց․ վասն զի 'ի մեր ձեռագրի՝ կը կարդանք․ «Սարկաւագն զԱռաքելոցն ասա սասացէ․ զի սրբոյ հօրս արարեալ է․ որ է գրած 'ի սուրբ Աթանաս»։ Իրենն են յիշատակութեան մաղթանք, առաւել ճոխաբար և ընդլայնմամբ քան 'ի մերումս։

Ասոնցմէ զատ են Նախասրբեցելոց կոչուածը, և պատարագն արեւմտեան եկեղեցւոյ կամ Հռովմայեցւոց, որոց վրայ քիչ եսքը։

***

Որչափ ալ անտարակոյս ենթադրէնք, — ինչպէս յիշեցինք, — թէ սուրբ հարք մեր Սահակ և Մեսրոպ և իրենց աշակերտք՝ պատարագի սուրբ խորհրդոյն կարգաւորման համար աշխատած ատեններին՝ մեծապէս օգտուած են այս մեր յիշած՝ և մանաւանդ յունական եկեղեցւոյ աստուածիմաստ հարց երկասիրած հոգեռանգն գրքերէն, սակայն ամենուն թարգմանութեան արգիւնքը՝ ոչ իրենց կը համարձակինք տալ, և ոչ ալ որոշակի ճշդել այդ փոխաբերութեան ժամանակը։ Միայն առ Ասողիկայ կը գտնենք՝ Մանդակունի հայրապետին համար աւանդուած թէ

թարգմանած ըլլայ « զխոմփմբ զՊատարագամատոյցն զոր Աթանասի անուն լինել »։

Կը մնայ հետազննելին՝ թէ արդեօք առաջ ի՞նչ մատենագրական հարստութիւնք, — ինչպէս ուրիշ շատ գրքեր 'ի յոյն և յասորի լեզուաց, — մուտ գտած են 'ի գանձարան հայ դպրութեան, թէ կար արդեօք նաև անոնց գործածութիւնն ալ, ինչպէս առ Յոյնս նոյն և առ Սիրոնս, տարւոյն մէջ սահմանուած յատուկ օրեր. զոր և թուի անշուշտ ակնարկել ծանօթութիւնն 'ի մեր գրչագիրս՝ յաւարտ պատարագի ընծայելոյ սրբոյ Ոսկեբերանի. « Բայց գիտել պարտ է, կ'ըսէ, եթէ յորում ժամանակի կատարի սրբոյն Բասլի պատարագն կամ սրբոյն Յովհաննու Ոսկեբերանին. այս է. կիւրակէ օր աւագ Բարեկենդանին կատարեն զսուրբ Բասլի պատարագն, մինչև 'ի Ծառզարդարն յամեն կիւրակէ։ Իսկ Ծառզարդարին կիւրակէն սուրբ Յովհաննուն կատարի։ Իսկ աւագ հինգշաբթի օր և աւագ շաբաթ օր՝ Բասլին։ Իսկ Զատկին կիւրակէն սուրբ Յոհաննուն։ Եւ Աւետեաց սուրբ Աստուածածնի՝ յոր ինչ օր գայ տօնն, սուրբ Յոհաննուն կատարի, բայց թէ կիւրակէի գայ՝ սուրբ Բասլին։ Եւ Ծննդեան Քրիստոսի յոր ինչ օր գայ՝ սուրբ Բասլին կատարի։ Բայց թէ 'ի շաբաթ կամ 'ի կիւրակէ՝ սուրբ Յոհաննուն կատարի։ Իսկ մկրտութեան Ճրագալուցին՝ սուրբ Բասլին. և յետ տօնին՝ զեւրն »։ Ասիկայ յոյն եկեղեցւոյն կարգաւորութեանն համեմատ։ Բայց թէ կայր և առ մերս՝ այսպիսի սովորութիւն, չենք կարծեր հաւանական, չհանդիպելով այսպիսի նշանակութեան մը նաև 'ի հնագոյն տօնացոյց կարգաւորութիւնս ազգիս, և պատմական ապացոյց մը չունենալով՝ բաց 'ի առ Ուխտանէսի գըտնուած հետևեալ խօսքերէն. « Զոր եթէ խնդրես, կ'ըսէ, զանգքն ուսանել, ասացից նաև զբանին նշանն. տայց թէ · անորժես, և զյեղանակս ժամանակին

լոյս արարից։ Զի յորժամ անցեալ գնացեալ 'ի մասին, և նստաք յեզր գետոյն որ կոչի Ախուրեան, և ասէաք զՊատարագամատոյցն տեառն զօրութեանց, զոր առնէ Արշակունի. և էր յաւուրս ամենայնոյն յամսեանն Տրէ, որ օր մետասան էր ամսոյն, յաւուր կիւրակէի, յիններորդ ժամու »։

***

Նախասրբեցելոց կոչուած պատարագը՝ այսպէս յիշատակուած է 'ի միում 'ի մեր գրչագրաց. « Աստուածային պատարագ քահանայապետացն, պրոժիասմենօս. արարեալ սրբոյ հօր մերոյ Վասիլեա »։ Իսկ 'ի միւս ձեռագրին. « Աստուածային պատարագ նախասրբեցելոց որ կատարի աղուհացից չորեքշաբաթին »։ Յոյնն կ'ընծայէ զայն սրբոյն Գրիգորի Աստուածաբանի. (Ἡ θεία Λειτουργία τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Γρηγορίου τοῦ Διαλόγου ἤτοι τῶν Προηγιασμένων).

Նախասրբեցելոց պատարագի մատուցման սովորութիւնը, որ առ Յոյնս՝ ինչպէս կ'ակնարկէ խորագիրն հայ Թարգմանութեան, աղուհացից չորեքշաբաթի և ուրբաթ օրերուն մէջ էր. իսկ առ արևմտեայս՝ մեծ ուրբաթ օրուան համար, և չենք կարծեր որ մեր բուն ազգային եկեղեցւոյն մէջ մուտ գտած ըլլայ. որովհետև, ինչպէս ծանօթ է, ըստ մեր հնագոյն տօնացուցից և ուրիշ եկեղեցական գրոց կարգաւորութեան, այն օրերուն մէջ պատարագք չէին մատչիր։ Եւ թէ լոկ յունական է, յայտնի ապացոյց մը կրնայ համարուիլ՝ նոյն ընդունուած բառից յունախառնագոյն գործածութիւնք, ուր յայտ մի կամ երկու բառք են։ Այսպէս կը դնէ սաղմոս. « Տէր, կարդացի առ քեզ և լուր ինձ » . և կը յաւելու զայնն հայկական տառերով. « Կիրիէ կեկրակ-

պայ. աղօտե. խաղկուսան մու Կիրիէ ». (Κύριε κέκραξα πρὸς σε, εἰσακούσον μοῦ Κύριε): Կը գտնէ 'ի նոյ. « Ճնորհեա տէր ». և կը յաւելու զայլն. « Պարասխո Կիրիէ », (Παρασχῶ Κύριε). փոխանակ « Տէր ողորմեա ». և այս « Կիրիէ էլէիսօն », (Κύριε ἐλέησον): Նախասրբեցելոց պատարագին մէջ կը գտնենք նաև զՀոյս զուարթ, զոր Յոյնք Սոփրոնիոսի պատրիարքի Երուսաղեմի կ'ընծայեն, և 'ի հասարակաց աղօթս մեր կ'երգուի յերեկոյի կիրակամտից:

Եթէ ոչ պարզապէս ուսումնական և հետաքննելի. գէթ երկրորդական կարևորութիւն մը թուի ունենալ արևմտեան եկեղեցւոյ Պատարագամատուցի հայ թարգմանութիւնն՝ այսպիսի խորագրով. Պատարագամատոյց Աստուծոյ, որով կատարի խորհուրդըն յամենայն օր. զի այս միայն է, և ոչ գոյ Հռովմայեցւոյն (այլ) խորհուրդ պատարագի: Երկրորդական նշանակ մը ունենալ կ'ենթադրենք. զի առ մեզ լատին եկեղեցւոյ Պատարագամատուցի կիրառութիւնը պատճառ մը չունի: Հաւանականաբար խաչակրութեանց ժամանակ և այն աւթով երբ սկսան երևնալ 'ի Հայաստան արևմտից եպիսկոպոսունք, քահանայք և կրօնաւորք, հայ ժողովրդեան անանց եկեղեցական պաշտամանց քաղաքական մը տալու գիտմամբ՝ ձեռնարկած են 'ի թարգմանութիւնն մերոյն, պատշաճական և օրինաւոր սակայն՝ նաև հայ լեզուով խմանալի ընծայել զայն, որ նորամուտ կրնար սպրդիլ ազգին և նորբինակ: Թող որ նաև այս Պատարագամատուցին այլևայլ մասթանք մեզ գտած են 'ի մեզ, և դժուար խառնուած բան աղբիւրին պատարագի աղօթից հետ: Ինչպէս են զգեստաւորման և պատարագի սկզբնաւորութեան աղօթք, որ արևմտեան են, և առ այս չեն ակնառուիր:

Եթէ ուզուի Լամբրոնացւոյն կամ էր ժամանակին մերագրել այս թարգմանութիւնը՝ մենք ալ չենք հա

կատակէր. գիտնալով որ ուրիշ արեւմտեան եկեղե-ցական քանի մը գրոց՝ 'ի լատինէ 'ի հայ թարգմանիչ եղած է, ինչպէս պիտի տեսնենք 'ի կարգին.

* * *

Այս Պատարագամատոյց գրոց հաւաքման՝ մեր ձեռքն եղած երկու գրչագրաց մէջ հետեւեալ յիշատակարաններն կը գտնենք. «Աստանօր կամօք և խնամօք ամենազօրին Աստուծոյ՝ յանկ ելեալ սուրբ մատեանս Պատարագամատուցի, որ ունի յինքն բովանդակեալ զաղօթս սուրբ քահանայապետաց Աստուծոյ զոր յիւրաքանչիւր ժամանակս արարեալ են 'ի խորհուրդ պատարագի: Արդ եղև սա գրեալ ձեռամբ մեղապարտ և անարժան քահանայի Նիկողայոսի ... 'ի թուականիս Հայոց ՉԿԳ. 'ի գեղեակս Անդրզարա՝ ընդ հովանեաւ սուրբ մօրս լուսոյ արարուհւոյ և միշտ կուսին Մարիամու Աստուածածնին. 'ի թագաւորութեան Աւշնի և 'ի քահանայապետութեան տեառն Կոստանդեայ. և 'ի մերոյ եկեղեցւոյ յառաջնորդութեան տեառնս մերոյ Յոհաննիսի եպիսկոպոսի, որոյ տէր Աստուած պահեսցէ զսա հանապազ: Յիշեսջիք աղօթիւք զպապասուրս սրբոյ եկեղեցւոյս և զքահանայս սուրբս. զԿոստանդին և զմիւս Կոստանդին. և զԱնդրոնիկոս և զՅակոբոս և զմիւս Բասիլիոս և զՍտեփաննոս. և զսարկաւագունս՝ զՎասիլ և զԹէոդորոս, և զՎարդան Յեւղենոնցի և զՅակոբ ... Յիշեսջիք 'ի Քրիստոս և զԹորոս երէց՝ որ փոխեցաւ առ Քրիստոս ...»:

Իսկ միւս գրչագրին յիշատակարանն է. «Տէր իմ և Աստուած Յիսուս Քրիստոս՝ փառք Աստուծոյ որ զենար 'ի վերայ խաչին, և բարձեր զմեղս աշխարհի, ողորմեա՛ ստացողի սորա Խորասէր սարկաւագին Նիկողայոսի. որ է քուերորդի կաթողիկոսին Հա-

յոց ատեան Կոստանդեայ, ընդ նմին և եղբաւր իւրոյ պատուական քահանային Թադէոսու, և հաւր իւրոյ Յովսէփ քահանայի, և մաւր իւրոյ Կիրա Խաթունի՝ հանգուցելոյն առ քեզ... Աղաչեմ և ես մեղաւոր գրիչս Թորոս՝ յիշել 'ի սուրբ աղաւթս ձեր զիս և զծնողսն իմ և զեղբարս զհանգուցեալս 'ի Քրիստոս»:

Այս երկին յիշատակարանաց անուանք՝ եթէ ոչ իրաւացի, գէթ ճշմարտանման ենթադրութիւն մը կ'արթնցընեն 'ի մեզ, որ յունական ազդեցութեան՝ թէ քաղաքական և թէ կրօնական, տակ գտնուող Հայոց համար թարգմանուած ըլլան ասոնք: Թէ կար միշտ այսպիսի փափաք՝ 'ի կողմանէ Յունաց, անտարակոյս է 'ի պատմութենէ. և զարմանք չէ որ 'ի մերոց ալ գտնուէին սիրով և յօժարութեամբ, երբեմն նաև բռնադատ կամօք, հետևողք այդպիսի ազդեցութեան մը հարկին կամ ենթադրեալ պատշաճութեան:

Օրինակ մ'ալ յարքունի գրատան Պաւարացւոց 'ի Միւնիխ, բոլորգիր մագաղաթեայ 'ի ՊՁԱ թուականի, բազմաթիւ յիշատակարանօք, յորս կարեւորագոյն հետևեալքն. «... Գրեցաւ սա 'ի թուականիս Հայոց ՊՁԱ, 'ի հրեշտակաբնակ յանապատս և 'ի հրաշափառ ուխտս Մեծոփայ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս և սուրբ Յակոբ Հայրապետիս և սուրբ վարդապետաց զերեզմանացս առ սոա նախատեսացեալ րաբունապետիս (Թովմայի) որ փայլէ 'ի մերում ժամանակի իբրև զարեգակն 'ի կորընթարթս երկնից ... Այլ և յիշել աղաչեմ զերջանիկ և զերանաշնորհ զարքեպիսկոպոսն զտէր Մկրտիչ Ամթայ, որ երփին երփին գունով և զանազան երանգով զարդարեաց զսուրբ գիրքս աս 'ի յիշատակ բարեաց հոգւոյ իւրոյ: Եւ 'ի պատճառս աւրինակի ամենայն արևելեան, վասն որոյ զարդարէ զնա արա-

բերէն Աստուած երկնային լուսեղէն և անթառամ պսակաւն. ամէն »:

Ուրիշ ոտանաւոր յիշատակարան մ՚ալ՝ զոր կ՚ընդօրինակենք.

» Ի ժամանակս յետին եղեալ
Ի Լեւոնի արքայ աւծեալ,
Հայոց մեծաց զարմէն սերեալ
Ի յՌուբինեանց յառաջ եկեալ
Ի հայրապետութեանն լեալ
Որ Կոստանդին Սիսցի եղեալ,
Ի թուականիս մեր չուրջ անեալ
Հարիւր ութանց վերեւսուն այլ լեալ
Նա եւս եւթն այլ յաւելեալ
Միակս ի հետ կոյս թիւս եկեալ,
Գրեցաւ սուրբ տառքս այս շարադրեալ
Որ պատուական են միացեալ,
Ազգաց հընդկից որ թարգմանեալ
Ի հայ բարբառ և յայտ քերեալ·
Ի սուրբ բանէն բանքս այս ստեղծեալ
Հոգւով սրբով սա մեզ շընորհեալ,
Զեր պարգեւաց սա մեզ տուեալ
Ի նախահարց մեր յարդարեալ
Եւ ի յաւանդ մեզ հաստատեալ
Աստուածախաւս տառքս այս պատուեալ.
Որով ըղձեկ հաց մեր առեալ
Բանիւքս այսու զատն կընքեալ
Զխորհուրդ փըրկչին մեր սուրբ խըմբեալ
Եւ ի սեղան սուրբ կատարեցեալ
Ի հաշտութիւն Հաւրն ընծայեալ
Ու ի թողութիւն հոգւոց բաշխեալ.
Որով լըցին արժանացեալ
Հաղորդակից սրբոցն եղեալ
Եւ ի Հոգին սուրբ միացեալ
Հաւր և Որդւոյ կցորդակցեալ.
Ընդ որս մեծ բարերին Վարդան կոչեալ
Այն երջանիկ աստուածազարդեալ
Որ ի մարմնի հրեշտակացեալ
Եւ աշխարհի քարոզ եղեալ
Վրաբուն Սարգիս Շալվէ կոչեալ
Զսա յիշատակ հոգւոյ ստացեալ »... :

Ուրիշ տեղ մ'ալ. «...Գրեցաւ փրկական սուրբ խորհուրդ և մեղաքաւիչ պատարագիս ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Յակոբին՝ 'ի վանս որ կոչի Ուրծայ, առ ոտս վարժապետիս մեր Սարգսի և այլ միեղէն եղբարցս որ աստ են հաւաքեալ. 'ի Թուականութեանս Հայոց ՊՀՁ» ... :

***

Ժամագրոց կամ հասարակաց աղօթից յօրինուածութիւնն և կարգաւորութիւն առ մեզ՝ աւելի ազգային կ'երեւնայ քան թարգմանաբար ներմուծուած յայլոց: Անունն նոյն է թէ արեւելեան և թէ արեւմտեան եկեղեցեաց մէջ. Ὧρες; Horæ.

Ե՞րբ կամ որո՞ւն ձեռքով եղած է 'ի մեզ այս կարգաւորութիւն:

Եթէ մեր Ժամագրոց խորագիրն քննանք, հետեւեալ տեղեկութեան կը հանդիպինք. «Կարգաւորութիւնք հասարակաց աղօթից Հայաստանեայց եկեղեցւոյ, արարեալ սրբոյն Սահակայ հայրապետի և Մեսրովպայ վարդապետի, Գիւտայ և Յովհաննու Մանդակունւոյ»: Այս խորագրին առաջին բառն՝ իրաւամբ հաւանական երեւցընել կու տայ մեզ, որ եթէ վերջնական կարգաւորութիւնն իրենցն է, ինչպէս բովանդակ մեր ուրիշ եկեղեցական գրենոյն, բայց անշուշտ ոչ նախկին հաստատութիւնն, որ պէտք է պատշաճի աւելի հնագոյնից, սրբոյ Լուսաւորչին և իր անմիջական յաջորդաց: Զայս թուէին ակնարկել Եղնիկայ երիցու՝ յեօթներորդ դարու, հետեւեալ խօսքերն. «Առ սովաւ (նշանակելով զՍահակ Պարթեւ) պայծառութիւնք Հայոց յաջորդեալ, և կատարանք եկեղեցւոյ 'ի ամենէ յառաջ թարգմանեցան և կարգք գործոցն Գրիգորի նորոգեալ արամբ միով երանելեաւ Տարաւնացւոյ, որում անուն Մարովպ Ճանաչէր»:

Թէ որպիսի՞ք էին յիշատակեալքդ կարգք գործոց Գրիգորի, չենք կրնար որոշ բան մը զրուցել: Կը գտնենք միայն առ Զենոբայ ասորւոյ՝ թէ «Յօրժամ զօրհնութիւն երից մանկանցն կատարէաք», և որ ցարդ 'ի գործածութեան է 'ի Ժամագիրս 'ի պահու առաւօտեան պաշտամանց: Ու Լուսաւորիչ 'ի Յաճախապատում գիրքն ընդարձակաբար կը մեկնէ այն օրհնութեան խօսքերը: – Արքայն Սահակայ ընծայուած կը գտնենք յ'Օրհնութիւնաբեր ցուցակի, ինչպէս տեսանք, գիշերային մաղթանաց ութ ձայնից համեմատ յօրինուած չորս մաղթանք և համաթիւ քարոզք և աղօթք. իսկ այլք Մանդակունւոյ կու տան զանոնք: Բայց ինչպէս ամէն եկեղեցական պաշտամանց գրեանն առ մեզ, ասանկ ալ ժամերգութիւնք. դարուց ընթացքին մէջ կրած են այլևայլ փոփոխութիւնք և նորութիւնք:

Ժամագրոց նման, և թերևս անոնցմէ ալ աւելի՝ բուն ազգային և յատուկ կերպարանք ունենալ կը թուին, եկեղեցւոյ պաշտամանց մէջ գործածուած ուրիշ գրքեր, բաց 'ի այն աղօթքներէն որ յայլուստ թարգմանութիւն ըլլալնին կը վկայուի, և կամ կը կրեն իրենց հեղինակին անուանքը: Մեր յառաջ բերած ցուցակը՝ յայտնի ու անդիմադարձ հաւաստիք մ'է, յորում յայլոց 'ի փոխ առնուած արարողական՝ հեղինակին և Թարգմանչին անուամբ կը յիշատակուին, և ինչ որ մերն է՝ անդստին յաւուրց Լուսաւորչի, և Սահակայ Պարթևի և յայլոց: Առջիններն՝ թարգմանութեանց դասակարգութեան մէջ մանելէն աւելի՝ իրաւունք ունին բուն ազգային մատենագրութեան վերաբերելու: Այսպէս են Մաշտոց, Ջեռնադրութեան գիրք և այլն, որոնց ամենուն գլխաւոր կարգաւորիչք և յերիւրիչք եղած են Սահակ և Մեսրովպ, և իրենց արժանաւոր աշակերտք՝ երիցագոյն և կրտսեր դասու Թարգմանիչք, նաև

ըստ բացայայտ վկայութեան մերոց պատմչաց. և այլևայլ նորութիւններ և յաւելուած ընդունած մինչև յերկոտասաներորդ դար, յորում Շնորհալին իր հայրապետական իշխանութեամբ, հոգեառանգն սրտով և առ Աստուած սիրով՝ շնորհօք ու վայելչութեամբ լի գրչովն ու լեզուով՝ զարդարեց, ճոխացոյց և վաւերական վերջին հաստատութիւնն տուաւ, և որոց վրայ Լամբրոնացի քանի մը ուրիշ արարողականք և աղօթք աւելցուց 'ի յունական եկեղեցւոյ և յարեւմտից։

***

Աստուածաշունչ գրոց Թարգմանութիւն, ու այն ատենով Թարգմանչաց 'ի Բիւզանդիոն և այլուր գեգերանք և ծանօթութիւնք, յունական եկեղեցւոյ փայլուն վիճակ, անոնց աննման հայրապետաց՝ վարդապետական գրոց յաճախութիւն և հիանալի ոճ, այս ամենայն մեծ ու նախանձելի յեղափոխութիւն մը կը բերեն մեր լեզուի և մատենագրութեան մէջ, յոյն լեզուի ուսումը և դպրութեան սէր՝ ևս քան զևս բարգաւաճ վիճակի մէջ գտնելով։ Ասով բնականաբար ասորի լեզու և մատենագրութիւն՝ մեծ հարուած մը կը կրէին՝ անդստին 'ի հինգերորդ դարէ։ Դեռ ևս կը տեսնենք՝ նոյն լեզուէ փոխադրութիւնք 'ի հայ, ինչպէս սրբոյն Եփրեմի մատենագրութեանց մեծագոյն մասին. բայց գլխաւորապէս տիրողն ու ազդեցիկ դիրք մը բռնող՝ յունականն է. յորմէ բազմաթիւ նշանաւոր երկասիրութիւնք կը թարգմանուին 'ի մեր լեզու, և յորոց մեան մի եւեթ, — բայց ոչ աննշան և մեծապէս հետաքննական, — հասած է մինչև առ մեզ, և դեռ չէ դադրեր այլևայլ հաճոյական նորութիւններ ընծայել ուսումնասէր բանասիրութեան։

Հինգերորդ դարու մէջ տապալեցաւ կործան ան-կաւ մեր ազգունէ՝ Արշակունեաց մեծափառ իշխա-նութիւնը։ Այսպիսի ծանր դէպք մը, ինչպէս յայտ-նի է, ունեցաւ իր տխուր ազդեցութիւնը նաև մեր ուսումնական վիճակին վրայ։ Սակայն բարեբաղդա-բար Թարգմանչաց ձեռքով վառուած հուրը բոլո-րովին չմարեցաւ. դարք դարուց կը յանձնէին զայն խնամով, թէպէտ մերթ աղօտացեալ և շիջելափառ, և մերթ համեմատաբար աւելի փայլուն վիճակի մը մէջ. ասով թէ նախնական Թարգմանութիւնք ըստ կարի կը պահպանուէին, և թէ նորանոր ճոխու-թիւնք կը մթերուէին 'ի գանձարանս հայկական մա-տենագրութեան՝ 'ի յունէ, երբեմն նաև յասոր-ւոյն, 'յարաբացի և 'ի պարսիկ լեզուաց, և վերջերը՝ արևմտից հետ ունեցած ծանօթութեանց և յարա-բերութեանց պատճառաւ, նաև 'ի լատինականէ և 'ի գաղղիական բարբառոյ։ Այսպէս կը շարունա-կուէր մինչև յերկոտասաներորդ արծաթի դար գրա-կանութեան մերոյ և անկէ ալ անդին։

Այս ինն դարուց մեզի աւանդած՝ ոչ ժամանակա-գրական, այլ այբուբենական ցուցակն է զոր պիտի ներկայացընենք մեր ընթերցողաց։ Պատշաճ էր այդ իւրաքանչիւր դարուց ուսումնական կարևորու-թեան վրայ խօսիլ համառօտիւ։ Մենք հարկ չսեպե-ցինք, որովհետև արդէն եղած է այդպիսի աշխա-տութիւն մը և հրատարակուած, բանիբուն և ձեռն-հաս՝ մեր մէկ միաբանից ձեռքով, զոր տարաժամ մահ մը՝ հնձեց յափշտակեց հայկական ուսմանց և գիտութեան ասպարիզէն, ուր այնչափ փայլմամբ և յուսով երևցած էր[1]։

Ուր որ Թարգմանչին ժամանակ և անուն յայտնի է, 'ի ստորեւս իջիցն կը նշանակենք, մէջ բերելով

[1] ՍՈՒՔՐԻԵԱՆ (Հ. Ա.) Բազմավէպ, (1875) յէջ 7, 118, 218։

նաև այլոց բանասիրաց ենթադրութիւնն և կարծիքը։ Կը յաւելումք երբեմն նաև պատմական աւանդք և յիշատակարանք, ինչպէս գրչագրաց յիշատակարաններն, երբ կը համարինք թէ կրնան ծառայել 'ի տեղեկութիւն և յառաւել լուսաբանութիւն։

ԱԲԴԻՍՈՅ ԵՊԻՍԿՈՊՈՍ[1]

(EBEDI-YESUA, ÉVÊQUE SYRIEN)

Աբդիսոյի եպիսկոպոսի Ասորեաց առ տէր Ներսէս կաթողիկոս Հայոց, թուղթ ողջունի. « Հայր հոգևոր, կարգիչ իմաստուն, հովիւ արթուն, անձն լուսաւոր, գանձաւոր այր, արդար հաւատոց ... տէր Ներսէս, ողորմութեամբն Աստուծոյ կաթողիկոս Հայոց մեծաց, և այլ աթոռակցաց, եպիսկոպոսակցաց, երիցանց և սարկաւագաց, և այլ իշխանաց աշխարհիդ, և ամենայն ուխտի սրբոյ եկեղեցւոյ՝ յԱբդիսոյէ շնորհիւն Աստուծոյ եպիսկոպոսէ Ասորեաց. և որդի սրբութեան ձերոյ, 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր ողջոյն։ Նախ քան զամենայն աղաչեմ զձեզ՝ աղաւթել 'ի վերայ մեր, փրկել մեզ յայնցանէ որ ապստամբեն 'ի ճշմարիտ հաւատոյ »։

— Աբդիսոյ եպիսկոպոսի Ասորեաց ուղղափառաց առ տէր Ներսէս կաթողիկոս Հայոց և առ աթոռակիցս նորին, յաղագս անիծեալ Նեստորական հերձուածողաց։ « Ուղղափառաց և ճշմարիտ հաւատացելոց, ընկերաց առաքելոց, ... տեառն Ներսիսի կաթողիկոսի Հայոց մեծաց, և Մերշապհոյ Տարաւնոյ, և Մամիկոնենից եպիսկոպոսի, և այլ եպիսկո-

[1] Թարգմանութիւն յասորականէ, 'ի վեց կամ յեօթներորդ դարու։

պոսաց աշխարհիդ և վանից երիցանց ... Արդիսոյ ողորմութեամբն Աստուծոյ եպիսկոպոս Ասորւոց ուղղափառաց, որդի և մնունդ սրբութեան ձերոյ՝ Յիսուսի Քրիստոսի լուսոյ կենդանութեամբ, և անապական փրկութեամբ ողջոյն։ — Պարտ է մեզ յիշել այժմ զսրբոյ Պաւղոսի առաքելոյ զբանն »։

— Արդիսոյի եպիսկոպոսի յաղագս անիծեալ Նեստորականաց և ամենայն հերձուածողաց։ — « Քանզի այսպէս հաւատամ առաջնորդութեամբ Միածնին՝ որ վասն մեր մարդացաւ »։

— Արդիսոյի եպիսկոպոսի յաղագս նզովելոյ զամենայն հերձուածողս, որք էին հակառակ ուղղափառաց։ « Որ ոչ հաւատայ եթէ բնութեամբ էութեանն ճանաչի միութիւն՝ Երրորդութիւն »։

— Թուղթ Ասորւոց ուղղափառաց 'ի Հայս։ — « Լաւաց, Ճշմարտից և աստուածասիրաց հովուաց արդարոց և հարանց հոգեւորաց, ... տէր Ներսէս կաթուղիկոս Հայոց մեծաց. և Մերշապուհ եպիսկոպոս Տարաւնոյ և Մամիկոնենից, և այլ աթոռակցաց և իշխանաց աշխարհիդ. Սամուէլ քորեպիսկոպոս և Դանիէլ վանից երէց, և Սիւնական Սարեբայի, Գաբրիէլ վանից երէց, ... 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր ողջոյն։ Գիտեմք մեք, ով Ճշմարիտք, զի հարք արդարք և հաւատացեալք էք և բժիշկք իմաստունք հիւանդաց »։

— Պատասխանի Թղթոյն Ասորւոց 'ի Ներսիսէ Հայոց կաթուղիկոսէ և 'ի Մերշապհոյ Մամիկոնէից եպիսկոպոսէ։ — « Ի բազում ժամանակաց լուեալ զեղբայրութեանդ ձերոյ ուղղափառութիւն համբաւով »։

ԱԲՐԱՀԱՄ ԵՓԵՍՈՍԻ

(ABRAAM, ÉVÊQUE D'EPHÈSE)

** Աբրահամու արքեպիսկոպոսի Եփեսացւոց Ներբողեան յաւետիս սուրբ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամայ. (Sur l'Annonciation de la très-sainte Vierge Marie). « Բազում փոյթ եղեւ աստուածաշունչ հարցն, Աթանասի ասեմ և Բարսղի, և Գրիգորեանցն. Յովհաննու Ոսկեբերանի. Կիւրղի. Պրոկղի և նման նոցա խորհողաց »[1] ։

ԱԳՈՒԻՆԱՑԻ Ս. ԹՈՎՄԱՍ [2]

(ST. THOMAS D'AQUIN)

Արեւմտեան եկեղեցւոյ մեծանուն վարդապետիս երկասիրութիւններէն հետեւեալքն միայն հասած են առ մեզ. Յաղագս եօթն խորհրդոց եկեղեցւոյ ։ Յիշատակարան Թարգմանչին. « Զաստուածային և զերկնաւոր իմացուածդ ամենասուրբ Հոգւոյն. զոր ընդ աղօտ ցանկացան տեսանել հրեշտակք, զոր շնորհեաց Աստուած եկեղեցւոյն Հռովմայ. շինեալ 'ի վերայ վիմին Պետրոսի՝ զխորհուրդ սրբոյ Եկեղեցւոյ. զմկրտութեան ասեմ, զկնքոյն, զսրբոյ պատարագին և զպէ-

[1] Յիշէ զայս ճառ Գրիգոր Անաւարզեցի 'ի Թղթին առ Հեթում Բ Թագաւոր ։

[2] Թարգմանութիւն 'ի լատինէ՝ 'ի ձեռն Յովհաննու Երզնկացւոյն 'ի սկիզբն չորեքտասաներորդ դարու, ինչպէս կ'ակնարկուի 'ի յիշատակարանին ։

սակին գիտութիւնն. զոր յարմարեալ տրամաբանական արուեստիւ և ապացուցական մակացութեամբ իմաստուն ուսմամբ վարդապետի Փրա Թումա կոչեցելոյ, 'ի կարգէ Բրաջուրացն, առաքինութեամբ կատարեալ և 'ի ծայրս իմաստասիրութեան ելեալ, լատին բարբառով. որում աննչացայ հոգւով նուաստ ոգիս և յայժ կարօտս բանի Յովհաննէս Եզընկացի, որ այժմ կոչիմ Ծործորեցի: Եւ մեծաւ Թախանձանօք Թարգմանեցի զսա 'ի հայ բարբառ հրամանաւ վեհապետին Հռովմայ, ձեռնտուութեամբ արհիեպիսկոպոսի տեառն Զաքարիայ, սուրբ առաքելոյն Թադէոսի վերադիտողի. և միջնորդութեամբ տէր Բարդուղիմէոսի հեզահոգի լատին եպիսկոպոսի յայժ գիտնականի. և աւանդեցի զսա եկեղեցւոյ Հայաստանի ընծայ անգին և գանձ պատուական. աշխատեալ իմովս տկարութեամբ և յղկեալ ըստ կարի զբառս և զբանս ... Թարգմանեալ և գրեալ 'ի դուռն Ծործորու, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին. որոյ ողորմութեամբն և շնորհօք եղև աւարտումն և կատարումն սորին յամի կենարարին **ՌԳՃԻԵ**»:

— Գիրք բնութեանց Քրիստոսի Աստուծոյ մերոյ (Ս. Թովմայի): Յիշատակարան. «Կատարեցաւ գիրք երկու բնութեանց և մի անձնաւորութեան 'ի Քրիստոս, 'ի ձեռն Յովհաննու Քռնեցւոյ և սուրբ Բարթողի եպիսկոպոսի»:

ԱԳԱԹՐՈՆ [1]

(AGATHON?)

** «Ագաթրոնի անյաղթ փիլիսոփայի ասացեալ վասն բարի ժամանակին, և վասն սուրբ Թագաւորացն որ յայտնելոց են. և վասն ազգին Նետողաց կործանման. և դարձեալ վասն քսանեչորս Թագաւորացն որ արձակելոց են իբրու զչար և զարիւնարբու գազանս և ապականելոց զերկիր, որ են Բաձուձք և Փուշանք, և կոչին Լեկք. և վասն պիղծ և անմաքուր Նեռին որ յայտնելոց է և դարձեալ կործանելոց է զօրութեամբ սուրբ խաչին. և վասն ահեղ և սոսկալի գալստեան Որդւոյն Աստուծոյ և հատուցման արդարոց և մեղաւորաց»: Սկզբնաւորութիւնն է. «Յայնժամ Թագաւորեսցէ մեծն Կոստանդիանոս հզօրն՝ 'ի յազգէ սուրբ և անուանի Թագաւորացն, որք Որմանք կոչին»:

Ուրիշ օրինակ մը նոյն գրուածին՝ տարբեր խորագրով և սկզբնաւորութեամբ. «Ագադրոն հայրապետին ասացեալ վասն յարուցման առաջիկայ Թագաւորաց Փռանգաց: — Արդ 'ի լնուլ յետին դարին յութհարիւր ամին՝ յայնժամ Թագաւորեսցէ մեծն Կոստանդիանոս հզօրն»: Ոմանք 'ի գրչագրաց. «Տեսիլ սրբոյն Ագադրոնի», և այլք կ'ընծայեն մեծին Ներսեսի [2]: Այս գրուածքը՝ Թերևս ակնարկել ու-

[1] Թէ հեղինակին և Թէ Թարգմանութեան ժամանակն անծանօթ:

[2] Ինչպէս մեր Մատենադարանի ձառընտրի մը մէջ, յաւելլով 'ի վերջոյ. «Զայս և առաւել քան զայն խօսեցաւ սուրբ Հայրապետն Ներսէս, և զգուշացուցեալ զեկեղեցին զկնի իւր զփախուստն յարևելս տանել ասելով իմաստնոց արանց»:

ղենան Շնորհալւոյն հետեւեալ տողք յՈղբումն Եդե-սիոյ.

«Շարժէ կերկեռ զազգն Փռանկ՝
Անհուն հեծեալ և հետեւակ...
Զի եկն եհաս աւուրց մերոց
Զոր տեսոյին ամաց Նըսոյ
Եւ է տըպեալ նըշանս ի ներքոյ
Տեառք մերոյք թէ է գալոց»։

«Ոթոն Փրիզինկայ եպիսկոպոսն կը պատմէ որ գրե-թէ Հայոց առ Եւգինէոս Գ քահանայապետ ղրկած նուիրակութեան ժամանակ, յորում և Խաչակիր զօրք հանելու հրաւէրք եղան, մարգարէական գը-րուած մը հրատարակուեցաւ այն ատեն ամրող Փռանկաց Լուտվիկ Է Թագաւորին վրայօք՝ իբր թէ Կիւրոսի պէս պիտի առնէ Բաբելոնի և արևելից. իր վարդագոյն գրօշներն պիտի թռչէին ինչուան Հե-րակլեայ քաջարութեանց տեղուանք, պիտի բացու-էին իրեն դրունք քաղաքաց, և ուրիշ խրթին և ան-իմանալի խօսքեր. զոր մեծ յարգութեամբ կ'ըն-դունէին Փռանկք՝ նաև բարեպաշտ անձինք. և ոմանք կարծէին թէ սիբիլլական գրոց մէջ գտնուած է. ո-մանք ալ թէ Աստուած յայտներ է Հայու մը, quidem Armenio divinitus revelatum affirmaretur. Մեր մէջ Ագաթրոնի, Մեթոտիոսի և մեծին Ներ-սեսի անուամբ գուշակական գրուածք կան՝ աւելի աշխարհիս վերջի ժամանակին վրայօք. արդեօք ա-սոնցմէ մէկն է Ոթոնի յիշած յայտնութիւնն առ-հայն՝ թէ բոլորովին այլ ինչ»[1]։

Երեքտասաներորդ դարու ճանապարհորդ մը, Ռուպրիքեզ սպանիացի, իր Տեղագրութեան մէջ կ'ա-ւանդէ թէ 'ի Նախիջևան գտնուած ատենը՝ հայ եպիսկոպոս մը պատմեր է իրեն թէ Ակակրոն ոմն մարգարէ գուշակութիւն ըրած էր Նետողաց ազգին

[1] ԱԼԻՇԱՆ (Հ. Ղ. Վ.), Շնորհալի և պարագայ իւր, 182։

վրայ (Nation des Archers). *և անոր մարգարէական սեպուած խօսքերն մէջ բերելով, կը յաւելու թէ արդէն տեսեր էր զայն և ընթերցեր 'ի Պոլիս հայու մը քով։*

Նոյնպիսի գրուածք մը կ'երևնայ և հետևեալն՝ յանուն ուրումն Արանագինեայ, և ունի խորագիր. « Վասն գալստեան Նեռին՝ Աթանագինեայ ասացեալ »։ (Մատենադարան Էջմիածնի. թիւ 1986 ըստ Կարենեանի ցուցակի)։ Զենք կրնար ճշդիւ ըսել ինքնագիր երկասիրութիւն մ'է թէ թարգմանութիւն։

Ս. ԱԹԱՆԱՍ ՄԵԾՆ [1]

(ATHANASE-LE-GRAND)

Յաղագս մարմնաւորութեան Որդւոյ և սրբոյ Երրորդութեան. (Περὶ της ευσαρχου ἐπιφανειας τοῦ Θεοῦ Λογοῦ). *« Որք չարարուեստաբարն ախորժեն իմանալ զաստուածային զգիրս՝ զմարդկայինսն ձայնս աղքատութեան Որդւոյն Աստուծոյ յառաջ ածել կամին, առ 'ի հաւատացուցանել զիւրեանցն հայհոյութիւն »։*

— *Ճառ վասն հաւատոյ թէ մի է Քրիստոս, ընդդէմ Պաւղոսի Սամոստացւոյ.* (Οτι εἷς ὁ Χριστός). *« Պարտ էր որք միանգամ 'ի հեթանոսականէն 'ի բաց հեռացան 'ի մոլորութենէ, և ծանեան զմին և զմիայն ճշմարիտն ամենեցունցն Աստուած՝ ոչ ևս երկրպագել արարածոյ »։*

— *Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղեք-*

[1] *Բազմահռչակ պատրիարք Աղեքսանդրիոյ* (296-372), *որոյ այլևայլ գրուածք թարգմանուած են 'ի հայ՝ յոսկեղէն դարու, և այլք՝ յութերորդին, ինչպէս պիտի տեսնենք 'ի վերջ գլխոյս։*

անգրի յոր Թէ Այժմ անձն իմ խռովեալ է. « Ի նմանութենէ տեառն որ առ մեզ՝ մեծ է աւգուտն. զի և մեք նմանեսցուք առ նա. քանզի Թէ ոչ ինքն էր նմանեալ առ մարդիկ՝ ոչ կարէին մարդիկ նմանել առ նա » : (Της ὁμοιώσεως τοῦ Κυρίου της προς ἡμᾶς ἡ ὠφελεια μεγάλη).

Այս ճառը կը յիշատակէ Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց 'ի Թղթին առ Գերմանոս պատրիարք. և Գրիգոր կաթողիկոս Տղայ առ վարդապետս Հիւսիսոյ գրած Թղթոյն մէջ. « Ածցուք 'ի մէջ. – կ'ըսէ. – և զայնոսիկ որ նոցա են՝ և մեզ քաջ տեղեակք և յայտնիք, զսուրբ և զաստուածազգեաց Հարսն, և զսուրբ բանս նոցա. զսուրբն Աթանաս և զսուրբն Գրիգոր Նիւսեայ ... միթէ ո՞չ ընթեռնուն յարաժամ 'ի սորոյն Աթանասէ գրեալսն՝ զոր յաղագս անշփոթ խառնրդմանն յատուկ և կատարեալ բնութեանցն գրէ ասելով. 'ի նմանութենէ տեառնն որ առ մեզ՝ մեծ է աւգուտն. զի և մեք նմանեսցուք առ նա. քանզի Թէ ոչ ինքն էր նմանեալ առ մարդիկ, պարտ էր 'ի նմանութիւնս մեր իջանելոյն » ... :

— Առ Լիբերիոս եպիսկոպոս Հռովմայ, զոր պահանջեալ 'ի նմանէ գրեաց այսպէս. (Ἀντίγραμμα πρὸς Λιβέριον ἐπίσκοπον Ῥώμης). « Մի աստուած անմահ, աներևոյթ, անշաւշափելի. քանզի հոգի է Աստուած. նոյն ինքն անբաժանելի. ոչ ունելով անգի ուր ոչ է » :

— Յաղագս փրկական յայտնութեանն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. (Περι της σωτηριώδους ἐπιφανειας τοῦ Χριστοῦ). « Որք զաւէրն մեր Յիսուս Քրիստոս ոչ յԱստուծոյ և 'ի մարդոյ մի խոստովանին, որպէս գրեալ է յաւետարանին՝ յԱդամայ և յԱստուծոյ, ասասցեն՝ զինչ որ 'ի կերպարանս Աստուծոյն է և Աստուած. և առեալ զծառայի կերպարանս կարծեցին » :

— Յաղագս ուղղոյ Երրորդութեան. (Ἔκθεσις πίστεως). «Հաւատամք 'ի մի Աստուած հայր ամենակալ, բոլորեցուն արարիչ՝ երեւելեաց և աներեւութից. որ ունի զգոյն առ յինքեան. և 'ի միածին Բանն և իմաստութիւն»։

— Առ Փիղադելփոս եպիսկոպոս. (Ἐπιστολή πρὸς Ἀδέλφιον ἐπίσκοπον). «Հանդիպեցաք որոց առ 'ի քումմէ աստուածպաշտութենէդ գրեցաց առ իս։ Ուսաք և զքո զառ 'ի Քրիստոս զբարեպաշտութիւնդ ստուգապէս ընկալաք, և զԱստուած նախ և առաջին փառաւորեցաք՝ որ ետ քեզ զայսպիսի շնորհս»։

— Ընդդիմամարտութիւն սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոյ ուղղափառի. և Արիոսի (այլ որ.) արիանոսի հերձուածողի, յաղագս աստուածութեան Որդւոյ։ — Ուղղափառն ասէ. «Աստուծոյ խնամակալութեամբն եկեալ գնացի հանդերձ եղբարբք իմովք առ իմ փափաքելիս և Աստուծոյ ծառայս. հանդարտապէս ճանապարհորդելով սակս օգտութեան մարմնոյ. հանդերձ նախաձեռնեալ քրիստոնեանն ծառայիւք»։ (Διαλογος ἐν τῇ κατὰ Νίκαιαν συνόδῳ πρός Αρειον).

— Նոյնունց գործեալ խնդիր յաղագս սրբոյ Հոգւոյն. — «Արիանոսն ասէ. Իսկ արդ մանաւանդ վասն զի սահմանեցեր դու 'ի սկզբան համագոյական զոլ զնա Հաւր և Որդւոյ, ես ընդդէմ ասեմ, ունելով զայսն 'ի գրոց սրբոց, զի ստացական հանդիսի»։

— ** Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու, և Զաքէի առն հրէի հարցումն և պատասխանիք, և սուրբ աւազ միջնանց։ — «Զաքէ ասէ. Մոլորեալ էք քրիստոնեայքդ, նախ և առաջին զի կարծէք և այլ աստուած զոլ քան զմինն միայն Աստուած»[1]։

[1] Ցոյն և լաւին տպագրաց մէջ չիկայ այս ճառ. բայց 'ի յառաջաբանին կ'ազդէ (յէջ 23) թէ սուրբ Հայրապետին ընծայուած այս գրութիւն՝ կը գտնուի առ այլս։

— Առ Սերապիոն վասն սուրբ Հոգւոյն։ (Ἐπιστολή πρός Σεραπίωνα). (անիզբն թերթ). « Ճշմարտապէս յանկալի, տրտմեալ և դու ինքն, որպէս յեղելոց ա-մանց Արիանոսաց՝ սակս հայհոյութեանց որ հակա-ռակ Որդւոյն Աստուծոյ »։

* Այս ամէն ճառից ընտիր բոլորգիր օրինակ մը կայ 'ի մեր Մատենադարանի, անդ անդ թերի առ հնութեան, գրչագրեալ 'ի Ս. Լամբրոնեցւոյ։

— Դարձեալ յաղագս Հոգւոյն ընդդէմ Արիոսի. « Իսկ արդ մնանասանդ վասն զի »։ Այս և հետևեալն՝ համառօտք են 'ի Սուրբ Երրորդութիւնն կոչուած ընդարձակ ճառին յետին գիրս՝ 'ի կարգէ երկբայա-կանաց։

— Յամենասուրբ Երրորդութիւնն. « Հաւատք ե-կեղեցականք զարթուցանեն զմիտս երկիւղածաց 'ի գիտութիւն ճշմարիտ պատուիրանացն Աստուծոյ։ »։

— ** Ի խորհուրդ Մարդեղութեան. (Sur le Mystère de l'Incarnation). « Այդ եղեալ 'ի վեցերոր-դում աւուր Ադամ, 'ի վեցերորդ դարուն՝ կուսա-կան ծնունդն։ Խարդաւանաւ հրեշտակն մահաբեր թիւնաւքն զծանծաղամիտ կինն երեւոյթ առնէր. իսկ Գաբրիէլ հրեշտակապետ աւետաւորէր երջանկա-ցեալ կուսին. Տէր ընդ քեզ »[1]։

* Ըստ գրչագրին որ 'ի Մատենադարանին էջ-միածնի (թիւ 920). « Անդ 'ի վեցերորդումն դարու եղէ Ադամ. և աստ 'ի վեցհազարեան դարուս կու-սականն ծնունդ »։

— ** Ի սուրբ Խաչն. (Sur la sainte Croix).

[1] Երկու աստեղանիշ կրող ճառք՝ կորսուած ըլլալով 'ի յոյն բնագրին, միայն հայկական թարգմանութեանս մէջ կը պա-հուին։ Սրբոյն Աթանասի երկբայական գրուածոց մէջ կը գըտ-նուին ճառք Ի սուրբ Կոյսն և ի Համբարձումն Քրիստոսի, բայց տարբերելով մեր նշանակածներէն։ (Տես յոյն և լատին, Հատ. Բ. 334, 344, 398)։

« Զխաչն մեր կենարար ուղիղ երգով աւրհնեսցուք․ և զխաչեալն Քրիստոս Ճշմարիտ բարեպաշտութեամբ փառաւորանեսցուք՝ որ կանգնեալ բարձրացաւ 'ի սուրբ Գողգոթա »։

— ** Ի վերացումն Տեառն․ (Sur l'Ascension de N.-S.). « Որ էրն 'ի սկզբանէ յառաջ քան զյաւիտեանս Աստուած բան »։

— ** Ներբողեան 'ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ․ (Panégyrique sur la très-sainte Vierge Marie). « Աստուածաւր զմտաւ ածելով իմ զխորհուրդն մեծ․ զխորհուրդ մարդանալոյ Բանին Աստուծոյ, և զնախախնամութիւն բարեգթութեանն »։

— ** Ներբողեան 'ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ․ (Sur le même sujet). « Անճառ է խորհուրդ որ 'ի ձեռն ամենասուրբ Կուսին երեւեցաւ ազգի մարդկան․ անքննելի, անհաս, անհետազօտելի մարդկայնոյս, որ ոչ հրեշտակաց է ասել »։

— ** Ներբողեան 'ի սուրբն Ստեփաննոս յառաջասարկաւագ և նախավկայն Քրիստոսի․ (Panégyrique sur St. Etienne, le protodiacre et protomartyr). « Պայծառ և նորահրաշ է խորհուրդ տաւնիս, ով եղբարք իմ սիրելիք․ և ըստ արփիափայլ Ճառագայթից արեգական՝ սխրալի գործէ զիմանալի աչս տեսողացն »։

— ** Թուղթ Աթանասի եպիսկոպոսի առ Աւգոստինէ յԱփրիկոյ, յաղագս աղանդոյն չընդունողաց զթողութիւն մեղաց հանգուցելոցն զկնի վախճանին․ (Lettre de l'évêque Athanase à Augustin en Afrique). « Ես այսպէս կարծէի թէ աղանդն Ելկեսացւոց (այլ օր․ Իլկեսացւոց) 'ի վաղուց հետէ չիջեալ խափանեցաւ․ իսկ դու ահաւադիկ արմատ դառնութեան դարձեալ 'ի վեր երեւեալ »։

* Գրչագիր մը փոխանակ Աւգոստինէ անուան կը դնէ Յուստինէ։

— Առ Եպիկտետոս (տեսանեք 'ի գրչ. Եպիփանեան) եպիսկոպոս Կորնթացւոց որ ապականեալ էր 'ի հերետիկոսաց, յորմէ զգուշացոյց զԱնտիոքացիս սուրբն Կիւրեղ. (Πρός Εκίκτιτον ἐπισκοπον Κορινθοῦ)։ « Ես այսպէս ածէի զմտաւ՝ թէ ամենայն ընդունայ-նաբանութիւնք՝ սպառ և լռեն »։

* Գրչագիր սրբոյ Լամբրոնեցւոյն, 'ի վերջ այս ճառի կը յաւելու. « Ես որպէս վարդապետ Ներ-սէս ստացանաւր զողբս 'ի բերան առեալ լամ աղի-ողորմ թէ ընդէր զայսպիսի առհաւատչեայ հարցն ունելով. եկեղեցիք քրիստոնէից պատառեալք՝ դեռ-եւս անզեղջք են 'ի նոյն »։

— Առ Յովբիանոս թագաւոր վասն հաւատոյ. (Πρός τὸν εὐσεβέσατον βασιλέα Ιωβιανόν). « Տէրն մեր Յիսուս Քրիստոս 'ի վերայ մկրտութեանն աշխարհա-գրելով զառոյգ և զճշմարտակէտ հաւատոյ սահման արար ասելովն սրբոց առաքելոց. Գնացէք աշակեր-տեցէք զամենայն հեթանոսս »։ (Ազգային Մատե-նադարան 'ի Փարիզ, թիւ գրչ. 94. ըստ հին դասա-կարգ.)։

— Առ Արիոս զի ասէր թէ՝ կրսեր է Որդի քան զՀայր, արարած և անգէտ աւուրն կատարածի. « Ով աստուածամարտդ Արիոս, զի՞ յամառեալ ես 'ի վե-րայ սատանայական խորհրդոցդ, կրսեր կարծելով զՈրդի քան զՀայր և անգէտ աւուրն կատարածի »։ Հատուած 'ի չորս գրոց ընդդէմ Արիոսի։

— Հարցմունք վայելուչք և պիտանիք՝ Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի, յաղագս մահացու-թեան և հանճարոյ հարցմունք. « Հետեւումն համա-րիմ ընդ այս բանս. և ապա այնուհետեւ 'ի մէջ գալ-քանցի բազմաց խնդրելի եղև վասն այսմ իրի քննու-թեանց և երկուանալ երկպառակութեամբ »։

Ի Մատենադարանին Էջմիածնի (թիւ 888) այս խորագրով. « Երանելւոյն Աթանասի եպիսկոպոսին

յաղագս Աստուծոյ հարցմունք վայելուչք. և պա-տասխանիք Կիւրղի հայրապետին Երուսաղեմայ յա-ղագս հանճարոյ: — Հարցումն. Թէ, ուստի յայտ է 'ի ժամ մահուն ոչ մեռանել հոգին ընդ մարմնին »:

* Ի յայն և լաւին հաւաքման գործոց սրբոյն Ա-թանասի (Հատ. Բ. 220) գրուածքիս խորագիրն է. « Հարցմունք Աթանասի առ իշխանն Անտիոքայ »: Մեր Թարգմանութիւնն՝ կամ ձեռագրիս հասած օրինակք կը սկսին 'ի վեշտասաներորդ հարցմանէ: — Ուրիշ գրչագիր մ'ալ այսպէս ունի. « Երանելոյն Աթանասի ասացեալ հարցմունք վայելուչք և պա-տասխանիք հոգեշահք « Քանզի ոչ ոք յաշխարհիս յայսմիկ եկեալ ոք 'ի մեռելոց պատմեաց վասն ոգւոց մարդկան բան ինչ ուսուցանել. վասն այդորիկ հար-ցանեմք զսրբութիւնդ քո, ով երանելի հայր »:

— Պատարագամատոյց Աստուծոյ՝ զոր արարեալ է սրբոյ հաւրն մերոյ Աթանասիու՝ պատրիարքին Աղեքսանդրիու:

— Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ ասացեալ մեծին Աթանասի գերազանց վարդապետի Աղեք-սանդրու. « Ամենայն ոք որ կամի փրկել, նախ քան զամենայն պիտոյ է զի ունիցի ուղղափառ հաւատ, զոր եթէ ոչ իւրաքանչիւր ոք հաւատարմաբար և հաստատապէս հաւատասցէ՝ ոչ կարասցէ փրկել. իսկ ուղղափառ հաւատ այս է, զի մի Աստուած Եր-րորդութիւն և զԵրրորդութիւն 'ի միութեան պա-տուեսցուք. բայց զանձինս մի շփոթեսցուք, և զգո-յութիւն մի որոշեսցուք »:

— Աթանասի ասացեալ Արտագրութիւն առաքե-լական յաղագս աստուածայնոյն մարմնաւորու-թեան Աստուծոյ բանի. « Խոստովանիմք զՈրդին Աս-տուծոյ նախ քան զյաւիտեանս մշտնջենաւորապէս 'ի Հաւրէ ծնեալ. իսկ 'ի յետնում յաւիտենին վասն մերոյ փրկութեան 'ի Մարիամայ կուսէ ծնեալ ըստ մարմնոյ »:

— Կանոնք Աթանասի գլուխք ութսունևեօթն. «Եթէ մանուկն երախայ կատարեալ իցէ և գիտիցէ թէ յորժամ պատարագն մատուցանիցի»։

* Վահան Վ. Բաստամեանց ութսունևութ կը գնէ Աթանասի անունը կրող կանոնաց թիւը 'ի կանոնագիրս. (Ցառաջաբան Դատաստանագրոց Մխիթարայ Գոշի, տպ. յէջմիածին)։

— Պատմութիւն սքանչելեաց պատկերին Քրիստոսի խոցելոյ 'ի Հրէից 'ի Բիւրիտոն, այն որ ընթերցեալ եղեւ յերկրորդ ժողովն Նիկիոյ՝ 'ի գրուածոցն Աթանասի. Λόγος εἰς τὸ θαυμα τὸ γεγονός εν Βηρυτῷ). «Ի սահմանս Տիւրոսի և Սիդոնի 'ի քաղաքն Բիւրիտոն էին բազում Հրէայք բնակեալ խառն ընդ քրիստոնեայս։ Եւ էր մի տուն 'ի Հրէիցն որ խընդրէր տուն վարձու»։

* Ճառընտիրն Բ 'ի մերում Մատենադարանի մակագրէ. «Վասն սքանչելեաց պատկերին՝ 'ի պատմութենէ սրբոյն Աթանասի Աղեքսանդրացւոյ»։ Ուրեք գրչագիր մ'ալ կ'ընծայէ այս գրուածքը սըրբոյն Թէոփիլոսի Աղեքսանդրու հայրապետի։ — Հայկական մեծ տարբերութիւն ունի յոյն սկզբընագրէն։ (Յոյն և լատին. տպ. Պատուայի, 1777, Հատ. Բ.)։

— Տեսիլ սրբոյն Աթանասի Աղեքսանդրիոյ հայրապետի, զոր եսես 'ի սուրբ խորհրդն եկեղեցւոյն Աստուծոյ. «Ամենեցունցն Աստուած որ ըսքանչելի երեւեցոյց մարգարէից իւրոց սրբոց»։

— Սրբոց հարց Աթանասի, Կիւրղի, Գրիգորի Սքանչելագործի, Գրիգորի Նազիանզու, Յուլիանու եպիսկոպոսապետի Հռովմայ և այլոց վկայութիւնք վասն ուղղափառ հաւատոյ։ (Մատենադարան Էջմիածնի թիւ 1948). «Քառածալ երկաթագիր գրեալ 'ի մագաղաթի. չունի զյիշատակարան, ըսկիզբն և վերջն թերի» ըստ ծանուցանելոյ ցանկոյն։

— Վարք երանելւոյն Անտոնի միայնակեցի Եգիպտացւոյ և աստուածասիրի. զոր արարեալ է Աթանասի եպիսկոպոսի. (Βιος καὶ πολιτεια τοῦ ὁσιοῦ πατρος ἡμῶν Ἀντωνιου). « Բարիոք է նախանձ բերել »:

* ՊՄԲ Թուին գրչագրեալ օրինակի մը մէջ հետևեալ հետաքննական ծանօթութեան կը հանդիպինք. « Թարգմանեցաւ գիրս այս 'ի սուրբ քաղաքին յԵրուսաղէմ յամի Ներսէի Մեծի գաւառեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. յամին յորում հանգեաւ քաջընթաց երանելին Մաշտոց »: (Երեշակ ամսագիր, 1858. Բ վեցամսեայ, 43): Ընթերցուածք ընտրելագոյն են քան զապագրին Վենետիկոյ, ինչպէս յայտնի են յայլևայլ օրինակաց՝ զորս մէջ կը բերէ հրատարակողն. մենք մէկը միայն յիշենք: Մեր տպագիրն յ'էջն 46 (Հարանց վարք, հատ. Ա.) այսպէս ունի. « Գիտասջիք զի կայսրակրուտակ ջրոյն զայս յայտ արարին Անտոնեայ ». իսկ ձեռագիրս կ'ըսէ. « գիտացաք զի այն էին կայսերքն աստահակ ջրոյն. և զայս յառաջագոյն յայտ արարին Անտոնեայ »:

— ** Վկայութիւնք սուրբ և փառաւորեալ վըկայիցն և սքանչելագործ բժշկացն Կիւրակոսի և Յուլհաննիսի, զոր գրեալ է սրբոյն Աթանասի Աղեքսանդրու հայրապետի:

— ** Վարք Մինասայ, Երմոգինեայ և Գրաքոսի. « Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոց է արարեալ զպատմութիւնս »:

— Յաղագս Մելքիսեդեկի. Ιστορια εἰς τὸν Μελχισεδεκ. « Թագաւորին Սաղէմ ըստ անուան քաղաքին »:

— ** Յառաջաբան Դաւթի մեկնութեան արարեալ Աթանասի եպիսկոպոսապետի Աղեկսանդրացւոց. « Զամենայն երգոց սաղմոսարանացն Դաւթի զներքունական միտսն ես գտեալ, և այլոց յայտնի կացուցեալ »:

— ** Երանելւոյն Աթանասի եպիսկոպոսի յերգս Սաղմոսաց. « Արժան է մեզ գիտել զայս, եթէ ընդէր երգովք և քաղցր ձայնիւք ասին սաղմոսք։ Ոմանք ընդ վայր առացեն, եթէ գեղեցկաձայնութիւն, լսելեացն և մտացն գիւր թուի. որ չէ այս »։

— Աթանասի Աղեքսանդրու հայրապետի պատմութիւն վարուց 'ի Տիմոթեայ յաշակերտէ նորա և յաթոռակցէ։ (Տես Տիմոթէոս)։

* Գրչագիր մը՝ հետևեալ տեղեկութիւնը կուտայ վասն ժամանակի հայկական թարգմանութեան ճառից սրբոյն Աթանասի.

1.° Ի Հոգին սուրբ, ճառք կրկին, 2.° Ընդդէմ Արիանոսաց, 3.° Ի սուրբ Երրորդութիւն և 'ի մարմնաւորութիւն Բանին, 4.° Առ Եպիկտետոն եպիսկոպոս Կորնթացւոց, 5.° Առ Փիլագերոս եպիսկոպոս, 6.° Առ Լիբերոս եպիսկոպոս Հռովմայ, 7.° Յաղագս սրբոյ Երրորդութեան, 8.° Ընդդէմ ամենայն հերձուածոց, 9.° Յաղագս Հոգւոյն սրբոյ հայհոյողաց, 10.° Ընդդիմադրութիւն ընդ Արիոսի՝ յաղագս աստուածութեան բանին, 11.° Դարձեալ առ նոյն յաղագս սրբոյ Հոգւոյն, 11.° Ընդդէմ Զօքեոսի Հրէի յաղագս աստուածութեան Որդւոյ, 12.° Յաղագս խորհրդածութեան մկրտելոց, 13.° Յաղագս կուսութեան, 14.° Ի չարչարանսն և ի յարութիւն տեառն, 15.° Աղօթք. — և կը յաւելու. « Աւարտ եօթնեւտասն ճառից սրբոյն Աթանասի՝ թարգմանեալ 'ի յառաջին թարգմանչացն մերոց 'ի յունէ 'ի հայ բարբառ »։

1.° Յաղագս մարմնաւորութեան Աստուծոյ Բանին, 2.° Առ Յովբիանոս թագաւոր յաղագս հաւատոյ, 3.° Ընդդէմ Պաւղոսի Սամոսատացւոյ թէ մի է աստուած, 4.° Յաղագս թէ անձն իմ խռովեալ է, 5.° Յաղագս յայտնութեան տեառն։

« Աւարտ հնգեքին ճառիցն սրբոյն Աթանասի, զոր

թարգմանեալ է 'ի յետին ժամանակս Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի. Կատարեցաւ հրամայեալս 'ի քէն, ով վեհ և երից երանեալ րաբունապետ. անուանակից և շնորհընկալ մեծի ամլորդւոյն »։

ԱԿԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԼԻՏԻՆՈՅ

(ACACE ÉVÊQUE DE MÉLITINE)

** Ակակայ եպիսկոպոսի Մելիտինացւոց թուղթ առ սուրբն Սահակ Հայոց հայրապետ. (Lettre à St. Sahagh, le Parthe, patriarche des Arméniens). « Որ ամենայնիւ աստուածատուրդ ես և լի սրբութեամբ՝ տէր իմ և գործակից, ըստ նմանութեան միոյ մարմնոյ յաւգապատեալս »։ (Ի մատենէ Թղթոց գրչագրելոյ 'ի Հռոմկլայ 'ի թուին Հայոց ՉԽԸ)։

Սուրբն Սահակ գրեց առ Ակակ հայրապետ այս թղթոյն պատասխանը, « Պատասխանի Տեառն Սահակայ » այս սկզբնաւորութեամբ. « Առ Ճշմարիտ և աստուածասէր տէր մեր սուրբ եպիսկոպոս Ակակ 'ի Սահակայ 'ի տէր ողջոյն։ Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտենական լուսոյդ՝ որ առ մեր տկարութիւնս երևեցաւ 'ի ձեր լուսաւոր սրբութենէդ, յոյժ 'ի ծագելն իւրեանց զաւրացուցին զմեր տկարութիւն »։

Ակակ հայրապետ այս թուղթն ընդունելէն ետքը նամակ մ'ալ ուղղեց առ ազգն Հայոց. ** « Թուղթ յԱկակայ եպիսկոպոսէ 'ի Հայս. (Lettre d'Acace, aux Arméniens). « Պատուական և առաքինի նախարարք Հայոց՝ սիրելիք և ծառայք Քրիստոսի, մեծամեծք և փոքունք, յԱկակայ եպիսկոպոսէ Մելիտինէ 'ի կլրասեր ծառայէ՝ խոնարհութեամբ և սիրով ողջոյն։ Վասն դիմոդարձացն Ճշմարտութեան որ զկնի գը-

նոցին ամբարշտութեանն Նեստորի և Դէոդորի, և ոչ հեղգացան գործակիցք լինել ամպարշտութեան նոցա, և մինչ 'ի սահմանս ձեր փութացան տարածել զթունաւոր և զապականիչ վարդապետութիւնն »:

Այս թղթակցութեանց նպատակն ու վախճանն էր զգուշացուցանել զՀայս 'ի մոլորութենէ Նեստորի:

ԱԿԱԿ ԵՒ ՊԵՏՐՈՍ ՊԱՏՐԻԱՐՔՈՒՆՔ

(ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ)

(ACACE ET PIERRE PATRIARCHES)

Պետրոսի թուղթ առաջին առ Ակակ. (թերի 'ի սկզբան):

— Երկրորդ թուղթ Պետրոսի առ Ակակ. «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ: – Յութսուն աւուրց կատարելոց եղանելոյ աստի Յուլեանէ սարկաւագին իմոյ »:

— Թուղթ առաջին Ակակայ առ Պետրոս պատրիարքն. – « Իմաստասունք բժշկաց զանդամս ապականեալս 'ի ձեռն երկաթոյ սրոյ սովորեն հատանել »[1]:

— Երրորդ թուղթ Պետրոսի առ Ակակ հայրապետ. « Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ: Զգրեալսդ որ 'ի ձէնջ առ մեզ ետուր բերել,

[1] Աւ. Մինիէր. Il nous reste de lui (d'Acace) deux lettres, l'une en grec, adressée à Pierre le Foulon, et l'autre en latin, au pape Simplicius, sur l'état de l'Église d'Aléxandrie. Այս ծանօթութենէն կը հասկըցուի որ մեր յիշատակած թղթոց յունական օրինակները կորսուած են, և միայն հայկական թարգմանութիւնք մնացած: ՉԿՊ թուականին գաղափարուած օրինակէ մը քաղեցինք. Թարգմանութեան ժամանակն հաւանականաբար եօթներորդ դարուն կը պատկանի:

տրտմութիւն 'ի վերայ տրտմութեան յաւելլին յանձըն իմ» ։

— Թուղթ երկրորդ Ակակայ առ Պետրոս. — «ՅԱկակայ առ Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց։ Տես այժմ ինձ արդար»։

— Թուղթ չորրորդ Պետրոսի հայրապետի առ Ակակ. — «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց։ Լաւ, սիրելի, որչափ աշխատ առնես զանձն իմ»։

— Թուղթ երրորդ յԱկակայ առ Պետրոս. — «ՅԱկակայ առ Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց։ Մի ժամ ասացից և այլ ոչ յաւելից խօսել»։

— Թուղթ հինգերորդ Պետրոսի առ Ակակ. — «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ երանելի Ակակ հայրապետ որ 'ի Կոստանդինուպօլիս։ Նեղութիւն է ինձ յամենայն կողմանց և որոգայթք մահուսփռեցան 'ի վերայ իմ»։

— Ձեռնարկ զոր արար 'ի թղթին Ակակիոս հայրապետ որ 'ի Կոստանդնուպօլիս. — «Կարդացի և ընդունիմ զամենայն որ ինչ յառաջագոյն գրեալ էր, և յայսմ թղթի զոր գրեաց ձեռն քո, Պետրոս հայր և գլուխ եպիսկոպոսաց»։

— Թուղթ հինգերորդ Ակակայ առ Պետրոս. — «Ակակ հայրապետ որ է 'ի Կոստանդնուպօլիս եպիսկոպոս՝ ցՊետրոս հայր իմ և հայրապետ Աղեքսանդրացւոց»։

— Թուղթ եօթներորդ Պետրոսի առ Ակակ. — «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ գլուխ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպօլիս։ Զթուղթըն իմ զոր ետուր բերել ցիս, զոր իմով ձեռնարկութեամբ գրեալ էր»։

— Թուղթ վեցերորդ Ակակայ առ Պետրոս. — «Ակակ հայրապետ՝ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպօլիս, ցՊետրոս հայր իմ և հայրապետ Աղեքսանդրացւոց։ Յորժամ եկին յայս քաղաք Թագա-

ւորութեան երանելիք և սրբասէրք եպիսկոպոսք» ։

— Միաւորութեան գիր որ առաւ բերել 'ի ձեռն երանելոյն Պերգամիոսի Ագաղիու 'ի բարերար արքայէ Զենոնէ, և յԱկակայ գլուխ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպաւլիս առ երանելին Պետրոս գլուխ եպիսկոպոսաց և հայրապետ հաւատարիմ քաղաքին Աղեքսանդրացւոց։ — Ինքնակալ կայսր Զենոն բարեպաշտ և յաղթող և նշանաւոր մեծ և միշտ բարի, աւգոստոս աշխարհակալ որք յԵգիպտոս և յԱղեքսանդրիա և 'ի Լիբիու և 'ի Պենտապոլիս» ։

— Վեցերորդ թուղթ Ակակայ առ Պետրոս. — «Ակակ գլուխ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպաւլիս ցՊետրոս հայր իմ և հայրապետ Աղեքսանդրացւոց։ Սուրբ և հաւատարիմ, քանզի Պետրոս կոչեցից զքեզ զքարոզիչդ ուղղափառութեան» ։

— Թուղթ ութերորդ Պետրոսի առ Ակակ. — «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ սիրելի իմ և գլուխ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպաւլիս։ Ի տասն և ինն ամսոյն որ կոչի փիքոն, և ըստ հռոմայեցոց համարոյ 'ի տասն և չորք ամսոյն մայիս ... ասորերէն իյար, և ըստ հայերէն բարբառոյ կոչի մարգաց ամիս» ։

— Թուղթ իններորդ Պետրոսի առ Ակակ. — «Պետրոս հայրապետ Աղեքսանդրացւոց առ Ակակ պաշտաւնակից իմ և ընկերակից, և հայրապետ եպիսկոպոսաց որ են 'ի Կոստանդնուպաւլիս։ «Ահա արժանի եղեր, սուրբ հայր իմ, տեսանել զփառս տեառն մերոյ, և լսել զբանս յԱստուծոյ մարմնացելոյ» ։

ԱՂԱԲԻԴՈՍ

(AGAPET, DIACRE)

Արտագրութիւն յորդորական գլխոցն Աղաբիդոսի սարկաւագի սրբոյ և մեծի եկեղեցւոյն Աստուծոյ, առ աստուածային և բարեպաշտ թագաւորն մեր Յուստինիանոս (Adresse à l'empereur Justinien, en 72 chapitres, intitulée *Charta regia*)․ *Եօթանասուներկու համառօտ գլուխք կամ պարբերութիւնք, յորոց մին* (70դ). « *Անցից գնացից ծովաձեմ նաւուս քատտակի սուղավախճան կացութիւն առաջիկայ կենցաղոյս. որ զմեզ զնաւորդքս իւր խաբէ, և փոքր փոքր քարշէ ընթացս, և առ իւրական վախճան զիւրաքանչիւրն ածէ: Արդ եթէ այս այսպէս իցէ, զարտուղեսցուք 'ի շրջական իրացն աշխարհիս, և ձեպեալ ընթասցուք առ մնացականն յաւիտենանս յաւիտենից* »:

ԱՂԵՔՍԱՆԴՐ

(ALEXANDRE)

Գրչագրաց մէջ հանդիպեր ենք հետեւեալ աշխարհագրական հատուածոց յանուն Աղեքսանդրի ուրումն: Կը դնենք իբրու հետաքննելի 'ի բանասէրաց, առանց կարող ըլլալու ըսել թէ ով է հեղինակը, որ ազգէ, և ինչ լեզուով գրուած:

— *Երկրաչափութիւն Աղեքսանդրի և նշանք գաւառաց և տեղերաց.* « *Արդ ունին Հայք բարձր գա-*

ւառս ինն․ զԴարանաղի, լեառն երկու՝ զԱռիւծ, զՄնձուր․ զԵկեղեաց․ զՄանանաղի, զԴերջան, զՍպեր․ զՇաղգամ, զԿարին »։

— Մղոնաչափք աշխարհաց․ « Ի Դըլնա մինչև 'ի Կարնոյ քաղաք Մ մղոն է․ և Ճ մղոն մինչև ցփոսն՝ ուր սահման է Հայոց և Յունաց »։

— Յօդաչափութիւնք․ « Իսկ 'ի մերմէ բնակութենէս մինչև 'ի գունդն արեգական՝ ասպարէզ ՎՋ բիւր Ծ․ մինչև 'ի գունդն՝ ասպարէզք ՃՋԴ․ բիւր Գ․ ԾԷ »։

— Յաղագս չորից գետոցն որ 'ի դրախտէն ելանեն․ « Անուն միոյն Փիսոն․ նա է որ 'ի Հնդկացն և յԵթէովպացոցն Գանգէս գետ կոչի․ իսկ Յոյնք՝ Հընդկաց գետ կոչեն․ զի զամենայն երկիրն Եւիլատայ շրջապատէ »։

— Գետք և գնացք նոցա մեծք և անուանիք․ « Նափթայ և Փարփայ՝ 'ի Դամասկոսէ ելանեն և անցանեն ընդ Բուժան քաղաք, և անգանին 'ի ծովն Արաբացւոց »։

— Յաղագս ծառոց որ յաշխարհի են և անուանց նոցա․ « Ձիթենիք կանաչատերեւք, և կարմրաբեր խնձորիք, ծաղկեալ նռնենիք և պտղաբեր թզենիք »։

— Յաղագս անուանց լերանց աշխարհի․ « Լիբանան 'ի Փիւնիկացւոց ելանէ և ձգի մինչև 'ի Բուժան քաղաք․ և վերջք նորա հասանի 'ի Տիւրոս և 'ի Սիդոն »։

ԱՂԵՔՍԱՆԴՐԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ (Տես ԿԱԼԼԻՍԹԵՆԷՍ)

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՍ

(ALEXANDRE, MARTYROLOGISTE)

Գրեաց ընդարձակ վկայաբանութեան «սրբոյն Փիլիկտիմոնի, և Թագաւորին Գորգիանոսի և կնոջ նորա Անատոլեայ և Թէոգոսեայ և այլոց սրբոց»։ յարոյ 'ի կատարածին. «Գրեցի ես Աղեքսանդրոս, դիւանադպիր Գորգիանու Թագաւորի, ըստ բաղում փափագման լնուլ զկարօտութիւն իմ, անուամբ Հօր և Որդւոյ և սուրբ Հոգւոյն՝ յաւիտեանս. ամէն»[1]։

ԱՄԲՐՈՍԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԵԴԻՈԼԱՆՈՒ

(ST. AMBROISE, ÉVÊQUE DE MILAN)

— *Ամբրոսիոսի եպիսկոպոսի Մեդիոլանացւոց. — «Եթէ ինձ ոչ հաւատան, հաւատասցեն առաքելոյ որ ասէ, եթէ յորժամ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զՈրդին իւր» (Հատուած)*։

— *Նորին. «Լռեսցեն այսուհետև 'ի բանից նանրախնդիրք. զի արքայութիւնն Աստուծոյ՝ որպէս գրեալ է, ոչ հաւանութեամբ բանից մարդկայնոց է, այլ ցուցմամբ զօրութեան. պահեսցուք զընթացումն աստուածութեանն և մարդոյ» ... (Հատուած)*։

[1] Վարք և վկայաբանութիւնք սրբոց, Հատ. Բ. 438-475։

ԱՄՓԻԼՈՔՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(AMPHILOQUE, ÉVÊQUE)

— Ամփիլոքոսի եպիսկոպոսի Ցիկոնացւոյ. « Վասն զի նոյն ինքն Թագաւոր է և Աստուած. և զմահ ըստ անօրէնութեանն չարչարողաց ճաշակեալ, ընծայքն խորհրդոց են նշանակք » ... (Հաստուած)։

— Նորին 'ի նոյնս. « Եթէ ոչ էր նորա ծնեալ մարմնապէս, և ոչ դու ծնանէիր հոգեպէս. եթէ ոչ էր նորա յանձն առեալ զծառայի կերպարանս, և ոչ դու զփառս զորդեգրութեանն շահէիր » ... (Հաստուած)։

— Ամփիլոքոսի եպիսկոպոսի Իկոնիոյ ներբողեան յութերորդ օր ծննդեանն Քրիստոսի. « Բազում են պարգևք » (Հաստուած)։

ԱՆԱՍՏԱՍ ԹԱԳԱՒՈՐ

(ANASTASE L'EMPEREUR)

Անաստաս Թագաւորին կ'ընծայուի 'ի Ճառընտիրս համառօտ գրուած մը այս սկզբնաւորութեամբ. « Քրիստոս չարչարեցաւ որպէս զմարդն »։ ՋԿԴ թուականն կրող գրչագիր մ'ալ և Ճառընտիրք Անաստասայ կու տան թուղթ մը հետևեալ խորագրով. « Թուղթ զոր արար Անաստաս Թագաւոր ընդդէմ ամենայն հերձուածողաց »։ Սկզբնաւորութիւնն է. « Մի է սահման հաւատոց զոր ունիմք յ'ՅԺԸ սուրբ հարցն որք 'ի Նիկիա ժողովեցան »։

ԱՆԱՍՏԱՍ ԿՐՕՆԱՒՈՐ

(ANASTASE L'ERMITE)

— *Անաստասի կրօնաւորի 'ի Սինէական լերինն ասացեալ 'ի նախաննջեցեալ եղբարսն.* (Discours sur les trépassés). « *Զինչ այժմ այս, սիրելիք* » ։ *Ի մեր Մատենադարանի պահուած գրչագրի մը մէջ կը կարդանք հետևեալ ծանօթութիւնն.* « *Թարգմանեցաւ ձեռամբ կարճառօտ 'ի յունականէն 'ի մերս՝ 'ի ձեռն Սարգիս վարդապետին* » ։

* *Թարգմանչին անձն ու ժամանակ անծանօթ ։ Հայկական դպրութեանց պատմութիւն՝ այլևայլ անձինք կը յիշատակէ այդ անունը կրող. Թող բոլորովին անյայտք եղողներին ։*

— *Աղօթք Անաստասայ կրօնաւորի 'ի խորոց սըրտէ.* (Prières). « *Գիտեմ, տէր, զի աններելի պատուհաս* » ։

— *Բան պաղատանաց.* « *Դու, ամենակալ տէր, կենդանաստեղծեցեր* » ։

— *Ի Սաղմոսն ԼԱ. 'ի կատարած Մի՛ նախանձիր կանոնի.* « *Եւ քանզի հասեալ է ժամ, ահա ժամանեցաք* »[1] ։

— (« *Յայտարարութիւն տեառն Անաստասայ վարդապետի գրեալ 'ի խնդրոյ բարեպաշտ իշխանին Համազասպայ Կամսարականի Պահլաւունւոյ, որ կամէր գնալ յԵրուսաղէմ* » ?) ։

---

[1] *Ի ցուցակի Մէնեբշեան գրատան 'ի Հռովմ ուրիշ հայերէն գրչագրաց. հեա. յիշատակի.* Anastasi Sinaitæ monachi montis Synai duæ Adversos Acephalos tria, tantum priora capita continet.

ԱՆԴՐԷԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՐԵՏԱՑԻ

(ANDRÉ, ÉVÊQUE DE CRÈTE)

Դամասկացի էր Անդրէաս, ուր իր ուսմանց ընթացքն աւարտելէն ետքը՝ գնաց յԵրուսաղէմ, միանձնական կենաց պարապելով երկար ատեն. այս պատճառաւ երբեմն Երուսաղեմացի ալ կոչուած է։ Յերուսաղեմէ 'ի Կոստանդնուպոլիս անցնելով, Թագաւորական քաղաքին մէջ մեծ համբաւ ստացաւ առաքինակրօն վարուքն և ճարտարախօսութեամբ։ Կրետէի եպիսկոպոսական աթոռը 'ի պարապութեան ըլլալով, Անդրէաս կոչեցաւ և բարձրացաւ յարքեպիսկոպոսութիւն վիճակին։ Նոյն աթոռը կը հովուէր Յուստինիանոս Բ կայսեր ժամանակ։

Անդրէի ընծայուած է Յայտնութեան գրոց մեկնութիւն մը. և որ իր անունը կը կրէ քանի մը հին գրչագրաց մէջ. բայց բազմագոյնք այս երկասիրութեան հեղինակ կը համարին զԱնդրէաս ամն եպիսկոպոս Կեսարիոյ Կապադովկացւոց։ Կոմպեֆիս՝ հրատարակած է զայն յանուն Կրետացւոյն։

Կեսարիոյ եպիսկոպոսը Ը դարուն վերջերն և Թին սկիզբներն կ'ապրէր։ Յայտնութեան գրոց մեկնութիւնը ոչ միայն բազմագոյնք 'ի գրչաց՝ այլ նաև Արեթաս, իր յաջորդաց մէկը յեպիսկոպոսաց Կեսարիոյ, իրեն կ'ընծայէ. և յորմէ այս վերջինս մեծապէս օգտուած է իր համանուն գրուածքին մէջ։ Անդրէի երկասիրութիւնը հաւաքում կամ ծաղկաքաղ մ'էր իրմէ առաջ այն նիւթին վրայ գտնուած և շարադրուածներուն. զոր յայտնապէս կ'ակնարկէ հեղինակն ալ այլևայլ տեղուանք երկասիրութեանը

մէջ, և մանաւանդ 'ի յառաջաբանին[1]: Գրուածքը ընծայուած էր Մակարիոս անունով մէկու մը, և բաժնուած յեօթանասուն և երկու գլուխս և 'ի քսանեչորս ճառս:

Վերջնոյս անունը կը կրէ նաև հայկական թարգմանութիւնն, և ունի համառօտ բաժանումն ճառից և գլխոց: Թարգմանիչն' է սուրբն Ներսէս Լամբրոնացի: Խորագիրն. «Ի Յայտնութիւն Յովհաննու սրբոյ հօր մերոյ Անդրէի երանելւոյ եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոց համառօտ մեկնութիւն. ընդ նմին և Արեթասայ եպիսկոպոսի նմին քաղաքի»:

«Ի տիեզերական ժողովոյն կամս' որ եղեւ յաստուածապաշտ քաղաքն Կոստանդնուպօլիս, Յայտնութիւնս Յովհաննու ընկալեալ եղեւ: Այլ և սորին քննութիւն որ եղև յեպիսկոպոսացն Կեսարու ձեռնարկ արար ընդունելութեան, 'ի սկիզբն գրոցս աստուածասէր արքեպիսկոպոսն Կոստանդնուպօլսի Թէոփիլոս կամաւք հանուր ժողովոյն զայս բանս. Գիրքս այս Յայտնութեանս Յովհաննու պատուեցաւ 'ի մէնջ ընդ այլ գիրս առաքելականս զոր ունի եկեղեցի. քննութեամբ և կամաւք եղբարցս իմոց և եպիսկոպոսակցաց սրբոց. և է առանց պատճառի և ընդունելի. քանզի ունի զիմաստութիւնն Աստուծոյ, որ և աւգուտ մեծ է հայեցողացն 'ի սոյն մտաց աչաւք որպէս արդարև զարուչութիւն սուրբ Հոգւոյն,

[1] «Ոչ եթէ յանկոխ ճանապարհ եկաք զգարշապարս իմաստից ընթանալ, այլ զի բազումս նախ քան զմեզ աստուածազգեստից սուրբ հարցն ունիմք 'ի սոյն առաջնորդ. որք իւրաքանչիւր ժամանակս աշարին 'ի վերայ սորա քննութիւն, և գրով մեզ աւանդեցին. զորս կարևոր համարեցայ 'ի միասին ժողովել' և տկարութեամբս իմով զխերծին նոցա լուսաւորել զի ամենայն 'ի մէջ եկեղեցւոյ ըստ կարգի համարեալ մեկնութեան Յայտնութեանս Յովհաննու, և 'ի շահ աւգտի ընթերցողաց երկիւղիւ»:

զոր պարտ է ոչ պնանս առնել. այլ և ոչ սուտ է՝ որպէս 'ի չարաց ոմանց 'ի մարգկանէ համարեալ եղեւ. նա և ստոյգ Որոտման որդւոյ Յովհաննու է։ Զի թէ հաւաստամք բանից Աթանասի Աղեքսանդրու մեծի հայրապետին որ թարգմաննեաց զհին և զնոր կտակարանս. ապա նմա այն ընդունելի եղեւ, և 'ի բազում տեղիս զպատշաճ վկայութիւն առ 'ի բանս իւր։ Նաև մեծն Բասիլիոս 'ի բանն որ վասն Քրիստոսի՝ կարեւոր եղեւ 'ի սմանէ առնուլ վկայութիւն. և նորին եղբայրն Գրիգոր Նիւսացի 'ի բանս զոր խօսեցաւ յայսմ քաղաքի 'ի ժողով եպիսկոպոսացն. այլ և աստուածայինն Գրիգոր Աստուածաբանն, 'ի բանն որ յաղագս Որդւոյ և յիւր հրաժարելն. նաև երանելին եպիսկոպոսն Պատարու Մեթոդիոս՝ 'ի բանն որ յաղագս Յարութեանն. և Կիւրեղ Աղեքսանդրու մեծի հայրապետն 'ի գիրս Գանձուն, 'ի բազում տեղիս պիտանի համարեցաւ զոր 'ի սմանէ վկայութիւնսն. և Հիպողիտոս Հռոմայեցւոց հայրապետն 'ի մեկնութեան զոր արար Դանիէլի։ Բայց ոչ բազմացուցանեմ զբանս, թէպէտև ունիմ այլ վկայս հաւատարիս սոցա 'ի սրբոց հարցն՝ որք հաստատեցին գոլ զայս յայտնութիւն Յովհաննու աւետարանչի։ Զինչ պարտ է առնել և զերանելւոյն Երինիոս (Իրինոս)՝ որ ինքն վկայէ, և զայլս որ նախ քան զինքն 'ի մէջ անցեալ. այլ և երեքթշուառեանն Որոգինէս՝ ոչ միայն ընդալաւ զսա, այլ և մեկնութիւնս եդ 'ի վերայ սորա։

« Արդ եթէ առ Յայտնութիւնս կարծեաւք գնամք զաւուրբն որ մաքրեցին զանձինս 'ի չար հերձուածոց և սմին վկայեցին՝ արհամարհեմք. զի թէ սա անընդունելի թուեսցի մեզ, անընդունելի լիցին և ընդունողքն սորա. զոր մի՛ լիցի զմտաւ ածել. այլ հաւատամք զսա ճշմարտապէս Յովհաննու որդւոյն Զեբեդեայ՝ սրբոց հարցն մեր հետեւելով։ Քանզի այստուիւ նմա մարգարէութեան շնորհք յԱստուծոյ

վասն երկնային խորհրդոցն, և որ յերկինս եղև և լինիցի. որում անեղեկանան քննողքն աստուածային երկբայելեան այսմ բանից։ Ո՛չ և թէ որքան անհասու-թիւն (հաւաստատութիւն) սոսա հասանելի լինի աստուածասէր ընթերցողաց. զոր ոչ ամենայն իմաստութիւն աշխարհիս այսորիկ կարող է ցուցանել. ՚ի սմա է պարունակեալ մարմնով Քրիստոսի անսա-րէնութեանն խորհուրդ. և յերկինս ընդ նմա (մարդկան) հանգստեանն և կրկին գալստեանն գիտութիւն։

«Կարեւոր է և զայս ասել. քանզի զինչ է որ բանագատէ զմեզ յայս հաւանութիւն, թէ ոչ գիտակաք զսա Ճշմարտութեամբ աստուածային խորհրդոցն յայտնութիւն։ Նաև ինքն աստուածաբանս ձայնէ ՚ի սկզբան բանիս թէ ոչ ՚ի մարդկանէ. այլ ՚ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղև առ նմա յայտնութիւնս. որում և Պաւղոս վկայէ զսա թէ Յիսուսիւ Քրիստոսիւ հաստատեցաւ ամենայն, եթէ երկնաւորք և եթէ երկրաւորքս. որ է գլուխ եկեղեցւոյ՝ անդրանիկ ՚ի մեռելոց. զի եղիցի ինքն յամենայնի յառաջացեալ։ Արդ ինքն Յիսուս Քրիստոս հաստեչն ամենայնի հաւատամք եթէ յայտնեաց իւրոյ ծառային և սիրեցեալ աշակերտին զերկնային խորհուրդս, և զոր հանդերձեալ է լինել ՚ի յերկինս։ Վասն այսորիկ և ես նուաստ արքեպիսկոպոս (Կոստանդնուպաւլսի) Թեոփիլոս, և որ ընդ ինև սուրբ և աստուածային ժողովս ընդալաք զսա պատուով ՚ի կաթուղիկէ եկեղեցի իբրև զարգարև Յիսուսի Քրիստոսի յայտնութիւն։ Նաև տեսութիւն Մեկնութեանս զոր արարեալ է սմա Անդրէի արքեպիսկոպոսին Կեսարու՝ հաճոյ թուէր (= եցաւ) տիեզերական (առաքելական) ժողովոյս. քանզի ոչ եթէ անձամբ անձին՝ այլ ՚ի վերայ հարցն հիման է եդեալ զշինուածս բանից իւրոց. և զնոցա աստուածային հաւոյն ուրուշութիւն առեալ է իւր առաջնորդ և վկայ

'ի քննութիւնս իւր. ուստի և ընդունելի է այս ան-օրութիւնս զոր եդ 'ի վերայ Յայտնութեանս Յովհաննու եպիսկոպոսն Կեսարու 'ի կաթողիկէ եկեղեցի. մերոյ տիեզերական ժողովոյս հաճութեամբ և հաւանութեամբ (վկայութեամբ:) Նա է ամենայն բան գրոցս այսոցիկ 'ի քսաներորդ չորրորդ ճառս բաժանեալ, և յեւթանասուն և երկու գլուխս ... Գլուխք Յայտնութեանս զոր ետես 'ի Պատմոս կղզին աւետարանիչն Յովհաննէս. (Ա–ՀԳ)[1]:

Լամբրոնացւոյն Յիշատակարանը. — Յիշատակ տառիս գտողի տեառն Ներսիսի գերահռչակ վարդապետի, զոր գտեալ 'ի մեծն Անտիոք գրեաց՝ զ'ի լուսաւորութիւն հոգւոց. « Ես Ներսէս նուաստ 'ի Քրիստոս և տարաամս յուսումնասիրաց. վերջին և նուազեալ ժամանակի ծնունդ, յընթեռնուլն զՅայտնութիւնն Յովհաննու՝ տագնապէի յանձն իմ առ 'ի յօժգնեալ զլուծումն բանից սքանչելեաց. և այսր ընդխուզելով՝ զմեկնութիւն նորին 'ի մեր բարբառ ոչ գտի: Յետ որոյ եհաս ինձ ընթանալ 'ի մեծն Անտիոք. և շրջելով յոր անդ վանորայս Հռոմոց և Փռանգաց. այս անձնումն որոնէի 'ի միում իմ. ուստի և քըննեալ գտի 'ի գրեանս հաչակաւոր ուխտին սրբոյն Պաւղի 'ի քաղաքի անդ զմեկնութիւն Յայտնութեանս 'ի Լատինացւոց (այլ ձ. Լունայր) բարբառ և 'ի նոյն գիր որով վարին Փռանկք, երկու մեկնչաց արարեալ. և փափաքելով թարգմանել՝ ոչ գտի զոք. որ լայն բարբառոյ 'ի հայս կարէր յեղաշրջել: Այլ ելեալ արտաքոյ քաղաքին 'ի սուրբ լեառն որ 'ի հիւսիսոյ կողմ անդր 'ի մի վանորէից Հռոմոց որում անուն էր Բեթիաս, առ ամն արդեւլական միայնակեաց որում անուն է Բասիլ, կնքեալ գտի զցանկալին՝ 'ի հելլենացի բարբառ և 'ի գիր, ուղղաբան և վայելուչ՝

[1] Փակագծի մէջ առնուածները՝ են ըստ այլ գրչագրի:

որ լեալ էր Աթանասի պատրիարքի նորին քաղաքի. և խնդրեալ աղաչանաւք 'ի քարեճիտ առնէն, առեալ փութացայ գրովքն 'ի հայրապետական աթոռն, առ ոտսն իմ և կաթողիկոս սուրբ Գրիգորիս. զոր ծանուցեալ ուրախ եղև յոյժ. և հրամայեաց թարգմանել 'ի ձեռն մետրապօլտին Յերապաւլսի Կոստանդեայ, որ անդ 'ի ներքոյ սորին հայրապետին հովանոյ հանգչէր. և սկսեալ աւգնականութեամբն Աստուծոյ և սորա տեառն, նա 'ի թարգմանել և ես 'ի գրել. վերընծայեցաք եկեղեցւոյ Հայաստանեաց ուսումնասէր մանկանց զայս սքանչելի և աստուածային յայտնութեանս մեկնութիւն։

« Աղաչեմ զընթերցողսդ և զիմաստութեան զաւրողսդ յիմանալ զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբ, զհայրապետն Հայոց զտէրն իմ զԳրիգոր, զքարեճիտն և զքարէսէրն. և զաւխթն թարգմանութեանս և զհրամայող. մաղթեցէք 'ի Քրիստոսէ յաւտես խաղաղութեամբ պահել, և 'ի հանդերձեալն սրբոց իւրոց յերկնից արքայութեանն ժառանգակից ընդունել։ Այլ և զԿոստանդին մետրապաւլիտն որ թարգմանեաց, և զԲասիլ կրաւնաւոր որ զաւրինակըն եմ. Քրիստոս ողորմութեանն իւրոյ արժանացուսցէ աղաւթիւք ձեր։ Թարգմանեցաւ աստուածային յայտնութեանս մեկնութիւն 'ի թուին Հայոց ՈԻԸ (= 1179) 'ի սուրբ և 'ի հայրապետական աթոռ որ կոչի Հռոմկլա, շրջապատեալ յագենական աղբիւրէն Եփրատայ, որ մատակարարէ ընակչաց զամենայն մարմնական պիտոյսն խնամօքն Աստուծոյ, ընդ հովանեաւ աստուածընկալ նշանին Վանկոյ, և այլ սքանչելի սրբոցն որ հանգուցեալ են անդ 'ի փառս Աստուծոյ։ Իսկ սրբաքանեցաւ 'ի նշանագրութենէն քերթողական արուեստի 'ի յապահով անապատս 'ի սուրբ Գէորգ. 'ի մէջ լերինս Տաւրոսի, որ է 'ի գահ Կիլիկիոյ և 'ի սկիզբն Պամփիւլեայ։ Ձե-

ամբ Նուաստ եպիսկոպոսի Նորին մայրաքաղաքի Տարսոնի տառապելոյս Ներսիսի, շնորհիւ և ողորմութեամբ Քրիստոսի, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն * :

* Յ'անթուական գրչագրէ. բայց գաղափարողն կ'ըսէ. « Յընտիր օրինակէ. որոյ թէպէտ ոչ գտաւ թուական գրութեանն, սակայն մինչև 'ի ԿԶ գլուխ մեկնութեանն էր հնագիր. և 'ի հանգամանաց գրոյն գտանեմք գրեալ իբր յերկոտասաներորդ դարու. իսկ այլ գլուխք մինչև 'ի վախճանն՝ թէպէտև բոլորագիր էին՝ բայց ոչ հնագիր » :

Միւս այլ բոլորգիր հին և ընտիր գրչագրի մը մէջ կը կարդանք. « Վասն Թարգմանութեան պատճառի: Թարգմանեցաւ աստուածային յայտնութեանս մեկնութիւն 'ի ՈԻԸ թուականութեանս Հայոց : Եւ սրբաբանեցաւ 'ի նշանագրութենէն քերդողական արուեստի 'ի ձեռն իմոյ նուաստութեան Ներսիսի ուսումնասիրի և Հայոց կաթուղիկոսի, և 'ի ձեռն Կոստանդեայ մետրապաւլտի: Արդ աղաչեմ զձեզ քրիստոսասէր պաշտաւնեայք սրբոյ եկեղեցւոյ, յիշել զմեզ յաղաւթս ձեր մաքրափայլս: Գրեսջիք և յիւրաքանչիւր աւրինակս զբանս զայս. և զձեզ տէր գթեսցէ 'ի դպրութիւն կենաց, և ինքն եղիցի աւրհնեալ 'ի յաւիտեանս. ամէն: —

« Ի յոլովից եղեալ զանխուլ այս տառ մեկնութեանս Յովհաննու աստուածաբան աւետարանչիս: Սակս որոյ մերոյին սրբազան վարդապետին Դաւթայ խնդրեալ զսա յորժամ գնաց առ տէր Գրիգոր կաթուղիկոսն Հայոց: Եւ զառեալն աւրինակ 'ի նմանէ, տայ պարգեւ Տեառն Գրիգորիսի Հաղբատայ առաջնորդին: Իսկ ես Նուաստ ոմն աշակերտ Նորին, գրեցի խմաւս անարհեստ գծիւ զվատթարահիւթս աւրինակ. սակս ձեռայոյ առ տեառն իմում նիւթ բանին 'ի պէտս այլոց աւգտի կամ գաղափարի » :

ԱՆՏՈՆ ՀՌՈՄԱՅԵՑԻ *անապատական։ – Վկայաբանութիւն սրբոց Ոսկեանց և Սուքիասեանց. « Ես Անտոն անապատական 'ի Հռոմայ ցանկացայ վկայութեան և վարուց երանելեացս, գիտակ լինել յորոյ ձեռն մեծի Կոստանդիանոսի Թագաւորի յայտնեցան. և զիս արժանիս արար Աստուած գիտել և գրել 'ի մատեանս զվկայութիւն և զվարս նոցա, և որպէս ծածկեալ կան սուրբ վկայքն մինչև 'ի ժամանակս յորում Աստուած յայտնեսցէ »։*

ԱՆԹԻՊԱՏՐՈՍ ԲՈՍՏՐԱՑԻ

(ANTIPATRE DE BOSTRES)

Անթիպատրոս եպիսկոպոս Բոստրայ յԱրաբիա, Կոստանդեայ մահուընէն ետքը կառավարեց այդ աթոռը, և մին էր 'ի հարց ժողովոյն Քաղկեդոնի (451)։ Անդրէաս Կեսարացի (Կրետացի)՝ իր գրուածներէն հատուած մը յառաջ կը բերէ՝ Յայտնութեան մեկնութեան քսաներորդ երկրորդ ճառին մէջ։ Մեր մատենագրութիւնն հասուցած է առ մեզ՝ իր բազմաթիւ երկասիրութիւններէն որոնք ընդհանրապէս կորսուած են, կամ հատուածք եւեթ կը յիշատակուին առ Յովհաննու Դամասկացւոյ։ Հետևեալ քանի մի ճառերն՝ որ հասած են առ մեզ՝ չեն գտնուիր առ այլս[1]։

[1] Lambécius parle d'une homélie d'Antipatre sur St. Jean-Baptiste, sur le silence de Zacharie, et sur la Salutation de la Sainte Vierge ; il ne nous en reste aucun monument. On en cite une sur la Théophanie ou baptême de Jésus-Christ ; et une autre sur la femme affligée d'une perte de sang ; on en retrouve un passage dans les Actes du second Concile de Nicée. (MIGNE, *Patrologie*).

— ** Անթիպատրոսի եպիսկոպոսի Բոստրացւոյ 'ի ծնունդ Փրկչին մերոյ տեառն Յիսուսի Քրիստոսի ասացեալ. « Եկի բերել ձեզ, ով սիրելիք, զաւետիս խորհուրդ։ Մանուկ՝ բայց երիցագոյն քան զամենայն յաւիտեանս » ։

— ** Երանելւոյն Անթիպատրոսի Բոստրացւոյ խօսք 'ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. « Պարտապանութեանս իմոյ գիր, թագաւորական գիր, որ այսօր քարոզեցաւ ժողովրդեան, ով սիրելիք։ Եւ արդ այս է հետեւելին. նախ զգիրն ընթեռնուլ, և յայնժամ ապա արկանել զարծաթն »[1] ։

— ** Ի մկրտութիւն Տեառն. « Հրաշափառ է ամենախմբութիւնս և առաւելագոյն սքանչուելի տօնիս. (այլ ձեռ. և առաւել հնչուն տօնի). վասն որոյ ելի 'ի բեմբս աւետարագոյնս ինչ ասել ձեզ այսաւր։

— ** Ի ծնունդ Փրկչին. « Եւ եղև, ասէ, յաւուրսն յայնոսիկ... Յառաջ քան զտերունական ծնունդն՝ անաւրինութեամբ իմն եղև ազգին աշխարհագրութիւն. քանզի ոչ էր իրաւ՝ ընդ տիեզերաց աշխարհագրել՝ բարձողին զմեղս աշխարհի. ոչ էր պատշաճ ընդ ծառայս քաղաքագրել՝ ամենեցունց տեառն և գլխոյ » ։

— ** Ի նոյն. « Արդ հետևաբար զծնունդն տէրունական՝ ատենաբար աւետարանեաց աւետարանիչն, զոր կարևոր է վերապատմել։ Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ » ։ (Նոյն ընդ վերնոյն՝ բաց 'ի անկզբնաւորութեան դոյզն տարբերութենէն) ։

[1] Մեր Մատենադարանին ճառընտիր մը (ԻԹ) Հիպպողիտոսոյ Բոստրացւոյն կ'ընծայէ զայս ճառ ։

ԱՆՍԻԶՔ ԱՆՏԻՈՔԱՅ

(LES ASSISES D'ANTIOCHE)

Միջին դարուց մէջ յօրինուած և 'ի կիրառութեան օրինաց գիրք մը, որուն 'ի գաղղիական բնագրէն 'ի հայ թարգմանութիւնն ըրաւ Սմբատ Գունդըստապլ՝ 'ի չորեքտասաներորդ դարու։ Սկզբնագիրն կորսուած է։ Թարգմանիչն 'ի կանխաբան տեղեկութեանն կ'ըսէ. « Աստանաւր սկիզբն առնեմք ողորմութեամբ և օգնականութեամբ մեծին Աստուծոյ 'ի գիր արկանել զսովորութիւնքն և զԱնսիզն զպարոնութեան մայրաքաղաքին Անտիոքայ. զոր Լիժ Ճորտերուն և զպարոնացն սովորութիւն և զիրաւունքն՝ զոր ունին առ իրար. և են գլուխք ծէ 'ի ցանկ ածած։ Զորս խնդրեցի ես Սմբատ ծառայ Աստուծոյ և Գունդուստապլ Հայոց, և որդի Կոստանդեայ և եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ և տէր Պապառաւնին, 'ի մեծազարմ իշխանաց իշխանէն և յարեան մերձաւորէն մերոյ 'ի Սիր Սիմուն յԱնտաքոյ Գունդուստապլէն։ Եւ ինքն ունէր զոր 'ի Բրինձ Պըմընդին ժամանակն Սիր Փէր Տ'Րաւնդելին և Սիր Թումաս Մարաջախտն և այլ իմաստուն և գիտուն իշխանայքն Անտաքոյ էին գրով հաստատել։ Եւ հանդուցեալն 'ի Քրիստոս Սիր Մանսէլ Գունդուստապլն իւր հայրն էր առել 'ի նացմէ՝ և իր որդւոյն Սիր Սիմունին պարգևել. և ինք վասն իմ սիրոյս և հաւասիս ինձ պարգևեաց. և ես աշխատեցայ և փոխեցի 'ի հայ լեզուս։ Եւ արդ վասն զի սովորութեամբ այն Անսիզովն կու գնայր ազգս մեր և դարպասս Հայոց, և սղալումն ինչ կու գայր մեզ վասն տգիտութեան և վտանգութիւնք ոգոց, և պը-

զերգանք ինչ վասն հարցանելոյ անդ զմեծամեծ դատաստանն, և ես ուժգին տենչմամբ և բազում աշխատութեամբ գտի զայս և հալծեցայ 'ի փոխելն. և երբ փոխեցի ես՝ յուղարկեցի դարձեալ 'ի յԱնտաքոյ դարպասն, որ դէմընդդիմեցին և հաստատեցին իրենց ձեռնագրերովն և վկայութեամբն, ու սոյդ է և ըղորդ բան բանի։ Եւ արդ որ կամի ճշմարտութեամբ ուղղել զԱնսիզս և զիրաւունքս, նայ այս է ըղորդ Անսիզն Անտաքոյ։ Եւ արդ ովք ագուտիք և շահիք սովաւ, ինձ Սմբատայ մեղաց թողութիւն հայցեցէք. և որ վճենկիք՝ դուք չէք յիմնէ վճենկել, այլ 'ի յիրաւանցն. ես անդատապարտ եմ. և եթէ ոք վատ սաէ 'ի վճենկելոցն՝ նա Աստուծոյ իրաւանցն սաէ և ոչ ինձ»։

Երկու մասն բաժնուած է. առաջինն «Անսիզ Պարոնաց և Լիժ Ճորաերոյ» մակագիրն կրելով. եօթն և տասն գլուխք։ Իսկ երկրորդն կը կոչուի «Անսիզ Քաղաքականաց» այսպիսի յաւելուածով. «Այս է Անսիզն Անտիոքայ քաղաքականացն, որ այնեն ըստ սովորութեան իւրեանց. և որպէս յառաջ խոստացաք վասն խնամութերոյն և մարխաճնոյն Անտիոքայ քաղաքականացն՝ մեք այժմ գրեմք, որ է այս». և կը խօսի ու կ'օրինադրէ 'ի քառասնեմի գլուխս, յորոց առաջինն. «Յառաջ զմարխաճնին գրեմք և զխնամութեներն, զքաղաքականացն և զվաճըռկներոյն. վասն զի ամեն ցեղ աճմանց սկիզբն 'ի խնամութեանցն յարգարի և գայ յառաջ»։

Մեր ձեռքը գտնուած գրչագիրն՝ հետեւեալ յիշատակարանն ունի «...Գրեցաւ անսիզս Անտաքոյ և նամաւսըս և կանոնք ընթանրական եկեղեցականաց և աշխարայնոց և Փռանկացն և ամենայն ազգաց 'ի մի տեղ հաւաքեալ վասն իրաւանց և դատաստանաց, 'ի Թուաբերութեանս Հայոց ՉՂ, ձեռամբ Սարգսի նըւաստ և անարժան քահանայի և ոսկաւղի։ Որ և

հրամայեաց ամենաբարի Թագաւորն Հայոց Լեւոն որդի 'ի Քրիստոս հանգուցեալ Թագաւորին Հայոց Աւշնի, վասն գրոցս դատաստանաց որ գրեցան առ 'ի յիշատակ մեզ յաւիտեան: Արդ աղաչեմ զամենեսեան որք աւգտիք 'ի սմանէ կամ աւրինակէք, յիշեցէք 'ի բարին Քրիստոս զամենաբարի Թագաւորն Հայոց զԼեւոն և 'ի Քրիստոս հանգուցեալ զծնաւղօրն իւր զսուրբ արքայն Հայոց Աւշին և զՋապել Թագուհին իւր, և զամենայն արեան մերձաւորսն իւր, ընդ նմին և զգրաւղ և զոսկող այսմ գրոցս » ... :

Ուրիշ յետնագոյն յիշատակագիր մ'ալ կը յաւելու. « Ի մեծ Թուին Հայոց, 'ի դառն և 'ի նեղ ժամանակիս ՊԻԴ, յորում ամի առաւ քաղաքն Սիս. և ես նուաստ և սուտանուն եպիսկոպոս Զաքարէ պատահեցայ անդ. բայց զողբ և զողորմագին բանս զոր եսես ակն իմ, ո՞ կարէ պատմել գրով. զի տեսի զակունք պայծառ և զարեգակունք, զաստեղս և զլուսինս, զի կային անկեալ ափի » :

Մաս-Լաթրի՝ գրուածքիս տպագրութեամբ հայ լեզուով և գաղղիարէն նոր Թարգմանութեամբ և հմուտ ծանօթութեամբք և յառաջաբանով հրատարակուելէն ետքը՝ հետեւեալ տեղեկութիւնները կու տար այս հետաքննական գրուածին վրայ, զոր իւր գաղղիական լեզուովը մէջ կը բերենք:

... A Antioche, restée avec sa grande annexe de Tripoli près de deux cents ans au pouvoir des Francs, il est certain qu'il se forma simultanément, mais séparément, dans la comtée et dans la principauté, un ensemble d'usages particuliers qui, tout en restant fondés sur les usages généraux de Jérusalem, en differaient ou pouvaient en differer assez sensiblement sur quelques points, tant pour les choses féodales que pour les affaires

des bourgeois et dans les marchands. Ce n'est pas tout. Non-seulement on savait qu'il y avait un usage de Tripoli et un usage d'Antioche, mais on pouvait presque affirmer qu'à une certaine époque ces coutumes avaient été fixées et mis en écrit. Le continuateur de Guillaume de Tyr parle dès 1210 des *Us de la Comtée de Tripoli;* en divers documents, et notamment dans une charte de 1265, on voit les parties alleguer la coutume d'Antioche, pour s'y référer ou s'y soustraire, et la désigner sous le titre fort clair *d'Assises d'un Prince d'Antioche*.

« Ces notions sont aujourd'hui amplement confirmées et completées, en ce qui concerne Antioche, par la découverte et la publication du précieux monument que vient de donner au public, avec une traduction et savants commentaires, le P. Léon Alischan, de la Congrégation Mékhitariste de St. Lazare de Venise.

« On lit, en effet, dans le préambule originale du document que les présentes Assises furent rédigées au temps du prince Boémond, par sire Pierre de Ravendel, sire Thomas, le Maréchal (d'Antioche), et d'autres savants et érudits seigneurs d'Antioche .

« Voilà un témoignage infinement précieux. Reste à déterminer le temps auquel vivaient ces seigneurs et quel est le Boémond prince d'Antioche dont ils étaient vassaux. Tous nous semble confirmer, à cet égard, l'opinion du savant P. Léon Alischan.

C'est ce monument , éminemment curieux et précieux dans ses modestes dimensions, qui vient d'être révélé et rendu fort heureusement à la science et à l'histoire. Nous n'en avons pas, il est

vrai, le texte original qui était incontestablement en français d'Antioche; dans la dernière moitié du XIIIme siècle, le traduisa pour l'usage et l'utilité de son pays, un noble seigneur arménien, aussi valeureux guerrier qu'habile écrivain, l'illustre Sempad, le connetable du royaume d'Arménie, frère du roi Haïton ou Héthoum Ier, qui a laissé, indépendamment de la chronique à laquelle son nom est attaché, une compilation des anciennes coutumes arméniennes, quelques vers historiques et généalogiques transcrits de sa main en tête d'un livre des prières et une curieuse lettre adressée à son beau-frère Henri Ier, roi de Chypre, pendant son voyage à la Cour du Grand Khan de Tartarie ; lettre que Guillaume de Nangis a connue et inserée dans sa chronique [1] ».

ԱՊՈՂԻՆԱՐ

(APOLLINAIRE)

Համանուն հօր որդի և ծննդեամբն յԱղեքսանդրիոյ Եգիպտոսի։ Զարմանալի հանճարով օժտեալ, քիչ ատենուան մէջ նշանաւոր եղաւ 'ի ճարտարխօսութեան և յամենայն ուսմունս և յիմաստասիրութեան. ուսաւ նաև զհեբրայական լեզու։ Հայրը՝ ամուսնոյն մահուընէն ետքը անցեր էր 'ի վիճակ եկեղեցական, և քահանայ ձեռնադրուելով՝ հաստատեց իր բնակութիւնը 'ի Լաւոդիկէ, Թէոդո-

[1] Mas-Latrie, (*Bibliothèque de l'École des Chartes*, Année 1874, Sixième livraison). Հայկական տպագրութեան վրայ տես 'ի ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ յէջ 625։

տեւոյ եպիսկոպոսութեան առեն (335), և ուր կը պարապէր յուսուցանել զքերականական գիտութիւն, ինչպէս որդին ալ զճարտարխօսութիւն։ Հօն հայր և որդի բարեկամացան Եպիփանիոս անուն հեթանոս սոփեստեսի մը հետ։ Թէոդոտոս եպիսկոպոս վախնալով որ այդ բարեկամութիւնը վտանգաւոր ըլլայ անոնց հաւատոց, արգիլեց զայն խստիւ. և իմանալով թէ հեթանոսական արարողութեան մը ներկայ գտնուեր են՝ յորում Եպիփանիոս 'ի պատիւ դիցն Դիոնիսեայ քերթուած մը կարդացեր է, հրապարակաւ յանդիմանեց զիրենք՝ ենթարկելով յապաշխարութիւն, զոր սիրով ընդունեցան և յօժարափոյթ կատարեցին։

Սուրբն Աթանաս 'ի դարձին յԵգիպտոս անցնելով ընդ Լաւոդիկէ, ծանօթացաւ և մտերմացաւ ընդ Ապողինարի. վասն զի թէպէտև Թէոդոտոս և իր յաջորդն Գէորգ եպիսկոպոսունք համամիտք էին արիոսեան մոլորութեան, բայց Ապողինար անբաժան մնաց յուղղափառ վարդապետութենէ, և Եկեղեցի կը սպասէր տեսնել 'ի նմա իր քաջանուն ախոյեաններէն մէկն, որ արդէն նախամեծար սեպած էր առ սէր Ճշմարտութեան մտադիւր յանձն առնուլ զհալածանս և զաքսոր, քան միաբանիլ ընդ հերձեալս։ Դժբաղդաբար ինչուան վերջը չիկրցաւ հաստատուն մնալ, մոլորելով 'ի խնդիրս մարդեղութեան և փրկագործութեան։

Իր այլևայլ գրուածքներէն, յորոց շատք կորսուած են, հատուածք ևեթ են հետևեալներն զորս Հայկական մատենագրութիւնն հասուցած է առ մեզ, և կը քաղենք Ղեւտական գրոց խմբագիր մեկնութենէ մը, որոյ վրայ պիտի խօսինք 'ի կարգին, նշանակելով միայն զսկզբնաւորութիւն և զվերջ հատուածոցն։

— «Աստուած մատուցանել իւր հրամայէ որոց

կամքինն զառ 'ի յաւժարութենէ ընծայաբերութիւնն, պատուէր տալով ոչ զզոհելն 'ի հրամանէ մուծեալ ... ։ Քանզի որ մեռանին հոգւոյն 'ի մարմնոյ լուծմամբ՝ ոչ ինչ լինի ընտանեգոյն Աստուծոյ »։

— « Ողջակէզն զբոլորովիմբ վերագրելն յԱստուած յայտնէ. վասն որոյ քահանայիցն 'ի նաշւոյ պատարագն ... այլ և մարդկութեամբ և մարմնապէս և հոգեւորաբար »։

— « Փոխանակ իւր մատուցանէ որպէս ունելովն զիւրն գործս. քանզի այսորիկ է նշանակ դնել զձեռնն 'ի վերայ ... որոյ յորժամ զնմանութիւնն ունի մարդ՝ լինի և նա ընծայ Աստուծոյ »։

— « Դիտեալ լինի իւրաքանչիւր ուրուք յԱստուած վերագրեցելոյ անգամ 'ի բանէն, որ թափանցիկն լինի մինչև ցորոշումն շնչոյ և հոգւոյ և յաւդից և ուղղոց »։

— « Մաքրութիւն հետևելով մարդոյ բնաւորապէս աղտեղեաց ... որպէս տէրն լուաց զոտս աշակերտաց իւրոց ոչ կարաւտ եղեալ այսպիսւոյ՝ ըստ բարեպաշտութեան և ոչ ըստ այրեցելոցն մարմնոյ, քանզի ժահահոտք են այնք »։

— « Եղին երկրագործականն է իւր Աստուծոյ, որ և զբանականս երկրագործս եղինս կոչէ ... դիցէ 'ի վերայ սեղանոյն, զի ողջակէզ զոհի է 'ի հոտ անուշից տեառն »։

— « Եւ զեղինն և զոչխարին զգլուխս և զճարպն դնել 'ի վերայ սեղանոյն պատուիրէ ... և դիցէ զայն քահանայն 'ի սեղանն 'ի վերայ փայտի և հրոյ. ողջակէզ զոհի է հոտ անուշից տեառն »։

— « Եւ ոչ զբացընկելիան պարզաբար թողլ տայ ընկենուլ. այլ 'ի տեղի յայտնի և որոշեալ ... և նշանակք են այսոքիկ ոչ վասն ընքեանց՝ այլ վասն այլոց եղելոց »։

— « Ցպաւորեաց և նաշւով ըստ բազում աւրի-

նակի ... իսկ բաղարջ եփեալն և տապակեալ՝ վասն աննենգ լինելոյ » ։

— « Փրկութեանն զոհք, զորս այլք խաղաղականս մեկնեն, այսինքն գոհութեան 'ի վերայ բարութեանց և խաղաղութեանն առ 'ի յԱստուծոյ ... և ամենեքին անարատս որք մատչինն հոտ անուշից ելանել Աստուծոյ » ։

— « Տեսանել արժան է զի մեզս ասէ աստուածայինն գիր, և զակամայս և զանգիտութեամբն ... և արտաքոյ քաղաքին հանեալ լինէր մաքրեալ Աստուծոյ 'ի ձեռն ողջակիզին ըստ նմանութեան Քրիստոսի, և մարդիկ վասն ինքեանց » ։

— « Վասն իշխանին անգիտութեան նոխազ զենաւ ուրանաւր ողջակէզքն ... և զուարակ է վասն քահանայապետին և վասն ժողովրդեանն ողջակիզեալ, այսպէս և Քրիստոս եկեղեցի կոչի » ։

— « Եւ քաւութիւն և յաղագս գիտութեան մեղուցելոյն ... ըստ որում ոչ պիղծն՝ մերձեալ 'ի պիղծն պղծի » ։

— « Զգնութիւն չարութեանն և զգեշտութիւն հրաժարեցուցանէ 'ի ձեռն աւրինակացն 'ի կատարել վարուցն ... այսպէս Պաւղոս զխոհեմագոյնն բան աղիւ համեմել ասէ » ։

— « Իսկ եթէ զենմանցն ոչ իցէ բաւական որ մեղաւն, մատուսցէ նաշիհ ... և մնացեալք քահանայքն եղիցին իբրև զզոհ նաշուոյն » ։

— « Այլով պատմուճանաւ 'ի ներքս 'ի խորանին հրամայէ ապաստաւորել քահանայքն ... իսկ մեզ յանկութեամբ ընտանեգունիւ առ Աստուած մեծագոյնն արբեցութիւն, որպէս տեղւոյ հպեցելով յաւէտ » ։

— « Կենդանախաբուկիլ ախորժելով զորս յԱստուածն վերադրեալք և ոչ ցրտանալ » ։

— « Իսկ մեզ ոչ արու և ոչ էգ 'ի Քրիստոս. բայց միայն արու որ զաւրութեամբն առաքինութեանն

ընտրեացի ... որպէս տեսատեան միայն մերձեցաւ՝ որպէս փրկչին ասաց և բժշկեցաւ » ։

— « Այսօրէն 'ի քահանայից բաշխեցան, զի բարձցեն զժողովրդեանն զմեղս ... յորում աւուր պատարագիցի կերիցի՝ և մի թողցուն 'ի նմանէ յայգ » ։

— « Ի կամաւորաց և յորոց ըստ ուխտին ... զյերեքաւրէ զպարութիւնն յայտնելով, զկամաւորութեամբ չարչարեցելոյն » ։

— « Քանզի աստուածայնւոյ հրոյ երեւեցելոյ ոչ էր պարտ նիւթական հուր մատուցանել ... քանզի այսօրէն էր աւրինակ եղեալն » ։

— « Տրտմել 'ի վերայ բարեկամաց ոչ տայ թոյլ պատճառ լինել քահանայականին ձեւի փոխադրութեան ... ոչ է արժան այժմ ասէ որպէս զայլ ոք սգալ քահանայից » ։

— « Քանզի որ 'ի մեռելոտի և 'ի պիղծ գործս մտաց մարդկային բնութիւն ... կորեսցէ զնա, ասէ, ընդ մէջ և զբաժին նորա ընդ անհաւատս դիցէ » ։

— « Զմածնուլն ընդ երկիր պիղծ ցուցանէ. քանզի յայսոսիկ 'ի հրաժարելեացն ասէ ... և ըստ այսմիկ է պիղծ և յափշտակական և բռնադատանաւք » ։

— « Զայս ենթադրէ զորս 'ի հեշտութիւնն են փոխադրեալ ... զոր և Պաւղոս ասէ առնել զկամս մարմնոյ և մտաց » ։

— « Անխառն գոլ ախորժեն աւրէնքն զայլասերսն ... և մի դառնալ ասէ անդրէն 'ի նովակեանսն որպէս արդարացեալս նովաւ » ։

— « Տպացուցանէ զորս 'ի սկզբան պարզմտութեամբ, իսկ յետ այնուրիկ չարութեամբ մեղանչէնն » ։

— « Աւտար և 'ի վերայ թեզանի և առիշոյ և անգերձի. որպիսի էր Սիմոն մոգ 'ի դառնութիւն մաղձի և 'ի կնճիռն անիրաւութեան գոլով » ։

— « Իսկ զօրս յետ լուսանալոյն մաքուր երևեալս ... դարձեալ վերստին երկնեմ մինչև կերպասցի Քրիստոս 'ի ձեզ » ։

— « Այլ գիտէ մաքրեալ և զբորոտ ... յանցանաց լուծիչս և մեղաց քաւիչս յողջակէզ » ։

— « Եւ փայտ եղեւնեայ և կարմիր մանեալ ... յ'իսկզբան մաքրութենէն անկելոցն, և յանկատարութիւն եկելոցն » ։

— « Զենեալն հաւ և թացեալ յարեան նորա ... որպէս և եղ իսկ արիւն և ջուր 'ի մարմնոյ նորա » ։

— « Վասն էր և որ միանգամ լինի ծորումն յետ եւթն աւուր մաքրի ... յորժամ այսպիսի երևումն լինի հոգւոյն աւկտակար » ։

ԱՌԱՔԵԼՈՑ ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ (Doctrine des Apôtres). ՉԼԳ թուականին գրուած Տօնացուցի մը մէջ՝ կը պատուիրի ընթեռնուլ այս անունով գրուած մը 'ի տօնի Անանիայ առաքելոյն և երկոտասան վարդապետաց ։ Թէ մեր և թէ մեզի ծանօթ ուրիշ Մատենադարանաց ցուցակներու մէջ չենք հանդիպած այսպիսի գրութեան ։ Կ'ենթադրենք թէ նոյն ըլլայ համանուն երկասիրութեան հետ (Διδαχή τῶν δώδεκα Ἀποστολῶν) որ վերջերս գտնուելով 'ի Պրիէննիոս յոյն արքեպիսկոպոսէ, այնչափ հռչակ հանեց յուսումնական աշխարհի ։

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ (La Sainte Bible). Տես յ'էջ 57-245 մեր այս երկասիրութեան ։

ԱՍԿՂԵՊԻԱԴԷՍ

(ASCLÉPIADE)

Ասկլեպիադ 'ի Պրուսայ Բիւթանիոյ, Հիպպոկրատէն ետքը առ նախնիս ամենէն աւելի հռչականուն սեպուած բժշկաց մէջ, և անոնց իշխանն համարուած: Ծաղկեցաւ առ Եւերգետ Պտղոմեաւ, յաւուրս Պոմպէի Մեծի: Յառաջ ճարտարխօսութեան պարապեցաւ ու հռչակեցաւ, և յետոյ բժշկականութեան. ուստի և Բժիշկ ճարտարախօս կը կոչէ զնա Կիկերոն: Այլևայլ բժշկական երկասիրութիւններ յօրինած էր, որոնք մեծ յարգ ունէին առ հինս. և կ'աւանդէ Պլինիոս թէ Միհրդատ Պոնտացի, քեռայր մերոյն Տիգրանայ երկրորդի, իր գրուածները մասնաւոր խնամքով բերել տուած ըլլայ 'ի Հռովմայ:

Ասկլեպիադեայ անունով քանի մը մանր բժշկական արուեստի վերաբերեալ գրուածներ ունինք՝ թարգմանութեամբ հասեալ առ մեզ 'ի նախնեաց: Անոնք մէջ բերած ատեննիս՝ չենք գիտեր կարծել կամ կարծեցընել թէ բիւթանացի բժշկին հարազատ երկք ըլլան, ևս առաւել որ իրեն ընծայուած երկասիրութեանց մէջ անոնց հետքը չգտանք[1]. այլ պարզապէս իբրու նշխարք ազգային մատենագրութեան, բանասիրաց հետաքննութեան արժանաւորք:

— Ասկղեպիադեայ վասն չորից բնութեանցն մար-

[1] Asclepiadis Bithyni Fragmenta. Digessit et curavit Christianus Gottlich Gumpert Med. Ac. Chir. Doct. Vinariæ, 1794. — Leclerc Daniel, Hist. med.

գոյ և տարոյ և ամսոյն. « Բնութիւն մարդոյ բաժանեալ է 'ի չորս տուաջս. և զմի մի 'ի նոցանէ պարտ է գիտել » :

— Վասն բնութեան մարդկան. « Բնութիւն է 'ի չորից նիւթոց բաղկացեալ. մարմին՝ 'ի հրոյ, 'ի շնչոյ, 'ի հողոյ, 'ի ջրոյ. ընդ որով գտանին և այլ բնութիւնք » :

— Յաղագս բնակրութեան. « Բնակրութիւնք են այսոքիկ. քաղց, ծարաւ, քուն, զարհուրումն, սրամտութիւն, ցնծութիւն, ցասումն » :

— Յաղագս եկամտից. « Եկամուտք են այսոքիկ. որկորամոլականն, ախտականն, գիջականն, պճնասիրականն, ագահականն » :

— Յաղագս բնութեան հոգւոյ. « Հոգին հուր է. և նման օդոյ պատկեր և ձև » :

— Յաղագս բնակրութեան հոգւոյ. « Բնակրութիւնք հոգւոյ են ցանկականն, ցասմնականն որ է երեք. ցանկականն ձգէ 'ի բաղձանս փառաց, ցասմնականն զխորատ, խորհրդականն զճաշակս ընտրութեան առ բարի և առ չար » :

— Յաղագս եկամտիցն. « Եկամուտք հոգւոյ են անափառութիւնք, հպարտութիւնք, ամպարհաւաճութիւնք, ամբարտաւանութիւնք, նախանձ » :

ԱՏՏԻԿՈՍ. (Atticus, évêque de Constantinople). Ատտիկոս՝ 'ի Սեբաստիոյ փոքուն Հայոց, և հայրապետ Կոստանդնուպոլսի, չորրորդ դարուն մէջ ապրեցաւ, և եղաւ մի 'ի նշանաւոր հարց արևելեան եկեղեցւոյ: Գրած է թղթեր առ Կիւրեղ Աղեքսանդրիոյ, առ Պետրոս և Եգեսիոս սարկաւագունս, առ Կալլիոպէ քահանայ Նիկիոյ, առ եկեղեցին յԱփրիկէ: Գեննադիոս և Մարկելլինոս կ'աւանդեն թէ Յաղագս հաւատոց և կուսութեան, կոչուած գիրք մ'ալ շարագրած ըլլայ. Սոկրատ պատմագիրն ալ յԵկե-

զեցական պատմութեանն պահած է քանի մը հատուածք 'ի գրուցատրութենէն որ ընդ Ասկլեպիադեայ, որ եպիսկոպոս էր Նովատեանց 'ի Նիկիա։ Այս գրուածոյ մնացորդք կ'երևին հետևեալքն։ — Ծանօթ է Ատտիկոսի թուղթն առ Սահակ Պարթևհայրապետ մեր առ Խորենացւոյն. (Գ. ԾԷ)։

— Ատտիկոսի եպիսկոպոսի Կոստանդինուպոլսի. « Այսաւր Քրիստոս տէրն զմարդասիրութեանն ծնունդ ընկալաւ » : ...

— Նորին. « Եթէ զոք որոշեաց միածնին մարդանալն, և կուսին յղանալն և կրից կցորդութիւնն և խաչն և չարչարանքն և մահն, ուսեալ գիտասցէ զայսոսիկ առիթ տիեզերականին փրկութեան » : ...

ԱՐԱՏՈՍ. — Յաղագս միաւորութեան գնդին. (աստեղաբաշխական բանք առ Շիրակացւոյն)։

ԱՐԻՍՏԻԴԷՍ ԱԹԵՆԱՑԻ

(ARISTIDE, LE PHILOSOPHE)

Առաջին 'ի Ջատագովս (Apologistes) կամ զոյգ և ուսումնակից առաջնոյն (Կուադրատոսի) Արիստիդէս իմաստասէր և ճարտասան Աթենացի՝ երկրորդ դարուն սկիզբն ծանուցաւ, ընդունեցաւ և պաշտպանեց զքրիստոնէութիւն, և սրբութեան անունն և կնիք ընկալաւ և պահեց յեկեղեցւոջ։ Երբ հակառակորդք քրիստոնական կրօնից կը գրգռէին զԱդրիանոս կայսր յատելութիւն և 'ի հալածանս, այս երկու նշանաւոր անձինք՝ Քրիստոսի սուրբ կրօնից և հետեւողաց վրայ ջատագովութիւն գրելով՝ կայսեր ներկայացուցին. և կ'աւանդեն թէ Արիստիդէս նոյն

Իսկ կայսեր Ներկայութեանն խօսած ըլլայ իր Ճառը 123ին. որ և այնչափ ազդեցութիւն գործեց Ինքնակալին վրայ, որ հրամայեց քրիստոնէից դէմ յարուցուած հալածանքն դադրեցընել: Այդ գրուածքը կորսուած է գրեթէ չորրորդ դարէն 'ի վեր: Անոր միայն փոքրիկ մէկ հատուածը կ'երևնայ 'ի մեր մատենագրութեան պահուածը հետևեալ խորագրով.

«Ինքնակալի Ադրիանոսի կայսեր յԱրիստիդեայ փիլիսոփայէ Աթենացւոյ: — Ես, ով Թագաւոր, խնամակալութեամբն Աստուծոյ ստեղծեալ՝ մտի յաշխարհս. և տեսեալ զերկինս և զերկիր և զծով, զարեգակն և զլուսին, և զաստեղս, և զամենայն արարածս, սքանչացեալ զարմացայ ընդ կազմած յաւիտենից այսորիկ»:

Հինգ էջք թանից. և ընդհանրապէս վաւերականք սեպուած յեւրոպացի գիտնոց և հնախօսից[1]:

Բազմահմուտ ծիրանաւորն Փիդրա՝ գրուածքիս հրատարակութենէն անմիջապէս ետքը՝ հետևեալ տողերովս առ տպագրողս կը յայտնէր իր գոհութիւնն և զարմանք.

J'aurais aimé à être l'un des premiers à vous offrir mon hommage de reconnaissance, en vous exprimant mon agréable surprise et mon joyeux empressement à lire ce précieux et splendide opuscule de St. Aristide. C'est une découverte qui fait honneur à St. Lazare, et assurément la plus belle fleur qu'ait déposée sur la tombe récente de Monseigneur l'évêque d'Orleans.

Un bruit vague était venu jusqu'à moi de la découverte de l'Apologie d'Aristide. Je pensais au texte grec, et desirais vivement que le bruit se confirmât. Quelque court que soit ce qui nous

[1] ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, էջ 66:

vient de votre inépuisable Arménie, tout y est d'or, et tout sent l'âge d'or de l'apologétique.

Ոչ հաւաստար վաւերականութիւն թուի ունե-նալ և հետևեալն՝ որ Արիստեայ անուամբ հասած է առ մեզ.

« Արիստեայ փիլիսոփայի Աթենացւոյ 'ի Գոչումն աւազակին և 'ի խաչելոյն ապաքանութիւն. — Քանզի հրաշալացուցանէ զիս գոչումն աւազակին, ընդ նմին և ձայն խաչելոյն։ Արդ մի զանց առներ զբանիւ խոր-հրդոյս, ով ներամիտդ լսաւղ »։

Պատառիկ մ'ալ այս խորագրով. « Ի Թղթէն Ա-րիստիդեայ փիլիսոփայի որ առ Մենանդրոս փիլիսո-փայ. — Զամենայն կերպս կրեալ ճշմարտին՝ հանդերձ մարմնովն, զոր հաճութեամբ Հօր և Հոգւոյն սրբոյ առեալ՝ միացոյց իւր մարմին՝ 'ի Կուսէ Եբրայեցւոյ սրբոյ Մարիամայ, անճառաբար և անյատակական միութեամբ »։ (Analecta Sacra Patrum Antinicœnorum; ex codicibus orientalibus collegit J. P. Paulinus Martinus. Parisiis, MDCCCLXXXIII. Փարիզեան ազգային Մատենադարան, թիւ հայ գրչ. 85)։ Հրա-տարակողն վրիպակաւ փոխան Մենանդրոսի կը դնէ ամենայն. և հանդերձ բառին՝ հանդ էյ որ յայտնապէս սխալ ընթերցումն է։ Ուղղեցինք ըստ ձեռագրին։

Մեր մատենագրաց մէջ կը յիշատակէ զԱրիստի-դէս՝ Շիրակացին Անանիա 'ի Ճառին որ 'ի Զատիկն Տեառն (յ'էջն 19 տպագրին որ 'ի Փեթրպուրգ). « Յետ որոյ Արիստիդէս Մերրի (?) փիլիսոփայ Ա-թենացի, ընկեր Կոդրատեայ, առաքելոյն ունկնդիր՝ արար զիննևտասներեակն լուսնի Հռովմայեցւոց »։

ԱՐԻՍՏԷՈՍ (Aristée). Տես յ'էջ 63-65[1]։

[1] HODY H. Contra historiam Aristea de LXX Interpretibus dissertatio. Oxon. 1685. — VAN DALE A. Dissertatio super Aristea de LXX Interpretibus; cui ipsius prætensi Aristede textus greco-latinus subjungitur. Amsterd. 1705.

ԱՐԻՍՏՈՏԷԼ ՍՏԱԳԻՐԱՑԻ

(ARISTOTE, LE PHILOSOPHE)

Այս մեծանուն և բազմահռչակ Ստագիրացի իմաստասիրին երկասիրութիւններէն՝ որ Պղատոնի ամենընտիր աշակերտն էր և մեծին Աղեքսանդրի դաստիարակ, հինգերորդ դարու թարգմանութեամբ, Դաւթի Անյաղթի ձեռքով. ունինք հետևեալ գրութիւնները։

Ստորոգութիւնք Արիստոտելի. (Κατηγορία). *«Համանունք ասին՝ որոց անուանքն միայն հասարակ, իսկ ըստ անուան՝ բան գոյացութեան այլ»։ Ի վերջ գրոցն կը կարդանք հետևեալ ծանօթութիւնը. «Կատարեցաւ տասն ստորոգութիւնան ասացեալ յեռամեծէն Արիստոտելէ, որ ասի ըստ յունարէն ձայնի Կատիգորիաս»։*

Սկիզբն և նախադրութիւն գրոցն որ ասի ըստ յունաց Պերիարմէնիաս և հայերէն Յաղագս մեկնութեան արտադրեալ 'ի մեծ իմաստնոյն Արիստոտելէ (Περὶ Ερμηνιας). *«Նախ արժան է դնել՝ զինչ է անունն, և զինչ է բայ»։ Ս. Ղազարու 1833 թուականու տպագրին հրատարակողք 'ի ստորեւս իջեցն կը ծանուցանեն. «Առաջիկայս գործ այնչափ խրթնացեալ է 'ի նիւթական թարգմանութենէ, և 'ի խառնակ գրութենէ անգրագէտ գրչաց, մինչ զի չէր արժան տպագրութեամբ 'ի լոյս ընծայել. այլ զի մի կորիցէ յիշատակ հնութեան, յանձն առաք և զայս աշխատութիւն, բաղդատելով ըստ կարի և ընդ յոյն բնագրին. թէպէտև այնպէս անիմանալի մնան իմաստքն բազում ուրեք»։*

Արիստոտելի իմաստասիրի թուղթ առ Աղեքսանդրոս թագաւոր, Պատմութիւն յաղագս աշխարհի. (Περὶ Κοσμοῦ), « *Իսկ բազում անգամ ինձ աստուածային ինչ և բարեբախտեալ ճշմարտապէս իր, ով Աղեքսանդր, գոլ թուեցաւ իմաստասիրութիւն* » :

Արիստոտելի յաղագս Առաքինութեանց, առ Աղեքսանդրոս թագաւոր. (Περὶ Ἀρετῶν). « *Գովելի են գեղեցիկքն և պարսաւելի գարշելիքն* » :

Ի Մատենադարանին Էջմիածնի կը յիշատակուին յանուն Արիստոտելի Հոգեաց և Պարապմանց գիրք, որ մեզ անծանօթ երկասիրութիւնք են, և Ստագիրացւոյն յունական սկզբնագրին մէջ ալ չենք գտներ զանոնք : Հաւանականաբար անհարազատք են. կամ այլոց գրուածք իրեն ընծայուած :

Ի Պատճառաց գրոց Արիստոտելի՝ երեսուներկու իմաստասիրական առարկութեանց 'ի լատինէ 'ի հայ թարգմանութիւնն ըրած է Ստեփանոս Լեհացի 'ի չորեքտասաներորդ դարու : Բայց այս գրուածքն ալ Արիստոտելի ոչ հարազատութեամբ ընծայուածներու կարգէն է, և որոյ հեղինակ կը սեպուի յոմանց, նաև 'ի գրչագիրս մեր, Պրոկղ պատրիարք Կոստանդնուպոլսի :

Բաց յԱնյաղթէ՝ որ գլխաւոր և իմաստուն մեկնիչ է արիստոտելեան երկասիրութեանց, կը յիշուին 'ի մեր մատենագրութեան և այլք՝ նոյն ուսմամբ պարապողք՝ քիչ շատ հմտութեամբ և ոճով, յորս վերջին կը սեպուի « Մեկնութիւն Արիստոտելի, արարեալ 'ի խնդրոյ հօր Մխիթարայ », և որոյ անծանօթ հեղինակը երեքտասաներորդ դարու մէջ ապրած երևի :

Ուրիշ տեղ նշանակած ենք այն գրչագիրքը՝ յորոց եղած է Արիստոտելի գրուածոց տպագրութիւնը[1] *: Աւելցընենք հոս Սմբատայ Գունդստապլի*

[1] ՄԱՏԵՆԱԳԻՐՔ ՀԱՅԿԱԿԱՆ, յէջ 67-68 :

յիշատակարան մը 'ի վերջ Ստորոգութեան գրոց.

Ո՛վ հանճարեղք յիմաստ բանին
Եւ մնացուք լոյս արհեստին,
Մտադրութեամբ միտ դիք բանին
Անյաղթ փիլոսոփին վարդապետին.
Որ զընդհանուրն առեալ գոյից
Տքնեալ բաշխեաց մարդկան ազգիս.
Իւր ընդհանուր զկենդանին
Բաժանեաց ի ձիս և ի ջորիս.
Զոր համանունութեամբք ասէ տեղիս,
Իսկ բաշխելով զանուանս գոյից
Միաւորէ դարձեալ ի մի,
Եւ յարանունամբ գոլ նմանին,
Որպէս յԱրի ազգէն՝ արիս.
Արդ ո՞նց պատմեմ զա՞ն ըզբանին,
Եթէ կարի խիստ կարճ է տեղիս.
Բայց թէ հազար կարճեալ բանիս
Հարկըն կոչէ զիս յայս տեղիս.
Յիշել ըզմայրն ամէն գոյից՝
Եւ ըզպատճառ ծննդականին:
Զգոյութիւնն որով լինիմք
Եւ գոյանամք ի յաշխարհիս.
Եւ զիններին ընկերք սորին
Որոց գըլուխ է տասնեկին.
Յորս անուանեաց Արիստոտէլ
Նամակ և գիր զարմանալիս,
Առ Աղեքսանդր իւր աշակերտ
Տիեզերակալ երեք կուսից.
Եթէ հեռացեալ էր ի նմանէ
Անուանել ըզչորս կողմն աշխարհիս.
Զորս ընդհանրեաց ի քիչ տեղիս
Ըզգիտութիւնս անճառելիս,
Եւ ժողովեաց ի միասին
Զիմանալիս և ըզգալիս:
Ընթերցէք և զարմացէք
Որք ի խնդիր լինիք բանիս.
Ըզմակագիր բնութեանս ազգիս
Գրիգորի Նիւսայ վարդապետին,
Զոր ժողովել ի մի տեղիս՝
Յարմարեցի ի պատանիս (զատիկիս),
Եւ մեղաւորս և աղքատիս

Տքրուղ զինուորս և եղկելիս
Ամբառ անուն իմ Հայկազնեա,
Տէր և Պարոն Պաղտերոնեա.
Եղբայր Հեթմոյ թագաւորեա
Եւ ազգայնական Հայոց գընդեա.
Նոյն և չինող ի բնէն որմոյ
Ջանաս զըղեակն անմատչելեա,
Որ ըստ իմոյ անուամբ եղև
Ամբառականեայ քաղ ամրոցիս։
Զորս աղաչեմ զամենեսին
Որք ընթերցող լինիք գըրիս՝
Խընդրել պարգևս ի Քրիստոսէ
Ըզթողութիւն մեղաւորիս.
Եւ պարգևողն աստուածիս
Տրիտուր բարեաց այնէ բարիս։
Ի Հայ ազգիս Թուականիս
Ի վեցհարիւր խնսունեերորդիս
Գրեցի վասըթար ձեռագրըս ես
Անշար ըղձեր յիշատակիս »*։

ԲԱԲԵԼԱՍ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

(BABYLAS D'ALEXANDRIE)

Երկու ճառք կամ հատուածք ճառից Բաբելայ Աղեքսանդրու հայրապետի անուամբ կը գտնենք մեր մատենագրութեան մէջ, առանց կարենալու ստուգել հեղինակին ժամանակը։ Հայ, յոյն և լատին վըկայաբանութիւնք համանուն հայրապետի մը յիշա-

* Արիստոտելի երկասիրութեանց ու անոնց հայկական թարգմանութեան վրայ քննադատական գրուածք մը հրատարակած է գերմանացի հայագէտն Նայման 'ի 1829, Փարիզու Ասիական օրագրին մէջ. Mémoire sur la vie et les ouvrages de David, philosophe arménien du Vme siècle de notre ère, et principalement sur ses traductions de quelques écrits d'Aristote, par C. F. Neumann.

տօնին և տօնախմբութիւն կը հաշակէն որ Անտիոքայ կամ Նիկոմիդիոյ եպիսկոպոս էր և նահատակեցաւ յ'250 թուականի։ Մեր յիշած ճառերուն հեղինակն ինք չըլլալը՝ խնդիր չի վերցըներ։ Այս ճառից առաջ-նոյն յունական սկզբնագիր կայ առ Մոնֆոքոնի (Հատ. Ը. 39) ընդ անհարազատ երկասիրութիւնս Ոսկեբերանի։ Խորագիրն է. (Ε'ις τὴν ὄρχησιν τῆς 'Ηρωδιάδος καὶ εἰς πὸν 'αποτομὴν τῆς κεφαλῆς 'Ιωάννου τοῦ προδρόμου καὶ Βαπτιστοῦ).

— ** Սրբոյն Բարսեղասայ Աղեքսանդրու հայրա-պետի 'ի գլխատումն Կարապետին. «Որպէս այր ոք անապատասէր յանտառախիտ տեղւոջ ուրեք ընդ ծառով հովանացեալ հուռուցն գեղեցկաձայնու-թեան հնչմամբ և ջրոցն բարեշաչիւն հոսանաց հեշ-տացեալ առ 'ի հանդարտութիւն ձայնիցն »։

— ** Երանելւոյն Բարսեղայ եպիսկոպոսի Աղեք-սանդրու՝ պատմութիւն սուրբ և պատուական գըլ-խոյն Յովհաննու Մկրտչի թէ ուստի բերաւ յԱմա-սիա քաղաք։ (Մատենադարան Էջմիածնի, թիւ 917 ըստ տպագիր ցանկին)։ Իսկ 'ի մերումս ճառանց ա-նուան հեղինակի՝ այս խորագրով. «Պատմութիւն Յովհաննու Մկրտչի և կարապետի Քրիստոսի, և գիւտ գլխոյն 'ի Հերովդիայ քաղաքի 'ի ձեռն միայնա-կեցաց. և որպէս բերին յԱմասիա քաղաք ըստ տես-չութեանն Աստուծոյ »։

Ս. ԲԱՐՍԵՂ ԿԵՍԱՐԱՑԻ

(ST. BASILE DE CÉSARÉE)

Կեսարիոյ Գամրաց սուրբ հայրապետիս երկա-սիրութիւններէն, որ ապրեցաւ 'ի չորրորդ դարու (329-379), հետևեալքն հասած են առ մեզ թարգ-

մանութեամբ նախնեաց ըստ մեծի մասին յունկեղէն դարու մեր մատենագրութեան, և այլք կրտսերագոյնք ժամանակաւ, ինչպէս պիտի տեսանենք։

— Երանելւոյ սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարիայ Կապադովկացւոց յաղագս Պահոց. (Βασιλείου Ἀρχιεπισκόπου Καισαρείας Καππαδοκίας, περὶ Νηστείας). «Փողեցէք առէ 'ի նոր ամսեան փողով բարենշան յաւուր տաւնի մերոյ։ Այս հրաման մարգարէական մեզ՝ քան զամենայն փող մեծաձայնագոյն և քան զամենայն գործի երաժշտական բարենշանագոյն, որ ածելով զկացուրդն նշանակէ ընթերցելու. քանզի ծանեաք զպահոցն շնորհս յԵսայեայ, զհրէական պահոցն կարգ 'ի բաց մերժելով, և զճշմարիտ պահսն 'ի մեզ ցուցանելով. Մի 'ի դատաստանս և 'ի կռիւս պահէք, այլ լուծէք զամենայն հանգոյց անիրաւութեան»։

— Նորին սրբոյն Բարսղի զԱրբեցողաց. (Κατὰ Μεθυόντων). «Շարժէ զիս առ բանս երեկորենեայք տեսութիւնք, և արգելու զիմ դարձեալ զյորդորումն՝ և բչեցուցանէ զյաւժարութիւնս՝ նախատեալ աշխատութեանցն անպտղութիւն»։

— Ի բանն Հայեաց 'ի քեզ. (Ὁμιλία εἰς τὸ Πρόσεχε σεαυτῷ). «Բանիւ ետ մեզ զպէտսն ստացուածն մեր Աստուած. որպէս զի զխորհուրդս սրտից միմեանց յայտնիցեմք. և 'ի ձեռն հասարակաց բնութեանս, իւրաքանչիւր ոք մերձաւորին փոխանակիցեմք»։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի յերեսներորդ եւթներորդ սաղմոսն յաղագս Ապաշխարութեան. (Ὁμιλία περὶ Μετανοίας). «Որոց զապաշխարութիւն բառնալ իշխեն՝ զծպարտութիւնն ոչ բերելով, պատուական եղբայր, երկրորդ մեզ հրաման ետ զայն ամպարհաւաճութիւն տեսանելով զողջախոհ եղբարց, զանջդ կարկառեսցէ յապաշխարութիւն և պիտանացու բանս 'ի մարդիկ»։

— Ի սաղմոսն երեսուներեքերորդն, յաղագս Ապաշխարութեան. Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի. 'ի Քակեցից զիմ շտեմարանս. (Εἰς τὸ ῥητὸν τοῦ κατὰ Λουκᾶν εὐαγγελιοῦ 'Καθελῶ μοῦ τας ἀποθήκας, καὶ μείζονας οἰκοδομήσω καὶ περὶ Πλεονεξίας). «Կրկին առ-աւելք փորձութեանց. քանզի կամ նեղութիւն տան-ջեն զմիտս որպէս զոսկի 'ի բովս. և 'ի ձեռն համբե-րութեան զփորձ նոցա յանդիմանելով. և կամ բա-ղում անգամ նոյն իսկ լիութիւնք կենցաղոյս՝ փո-խանակ փորձարանի լինին յոլովից. վասն զի նոյն-պէս ապառում է դժուարին իրս»:

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի առ Ընչեղս. ('Ομιλία πρὸς τοὺς Πλουτοῦντας). «Ասացաւ և յա-ռաջագոյն մեզ յաղագս երիտասարդիս այսորիկ, և յիշէ ամենայն իրաւք աշխատասէր լաւեղ զքննու-թիւնն յայնժամ. զի ոչ նախատաշէին. զի ոչ նոյն որ 'ի Ղուկայն աւետարանին»:

— **Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի զՎաշխա-ռաց. «Երեկ 'ի չորեքտասաներորդ սաղմոսն խօսե-լով, եկեալք 'ի սպառուած բանին 'ի ժամէն ոչ յորդորեալք եղեաք. իսկ այժմ եկեալք բարեմտու-թեամբն պարտապանք զպարտս նուազեցելոցն 'ի ձէնջ պահանջեմք»:

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի զԲարկացո-ղաց. (Ομιλια I' κατὰ 'Οργιζομενῶν). «Զօրաւորինակ 'ի բժշկական պատուիրանին՝ յորժամ բարւոք կարծե-լով, և ըստ բանի արուեստին լինի, զկնի հմտու-թեանն՝ առաւել 'ի նոցանէ աւգտակարութիւնն ցուցանէ. սոյնպէս և 'ի հոգևոր խրատն»:

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի զՆախանձաց. ('Ομιλία περὶ Φθονοῦ). «Բարի Աստուած, և բա-րեացն արժանաւորաց տուող. չար բանսարկուն, և չարեաց ամենայնի արարիչ. և զորօրինակ յարմարի բարւոյն աննախանձութիւն, սոյնպէս զկնի երթայ բանսարկուին յաշաղանք»:

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի 'ի սաղմոսն առաջին. (Homilia in psalmum primum. յոյն սկզբնագիրն կը պակասի)[1]. « Ամենայն գիրք աստուածաշունչք և օգտակարք, յաղագս այնորիկ շարադրեալք 'ի Հոգւոյն, որպէս զի իբր 'ի հասարակաց հոգւոց բժշկարանի ամենայն մարդ զբժշկութիւն իւրոց ախտից իւրաքանչիւր ոք ընտրիցեմք »։

— Նորին սրբոյն Բարսղի եպիսկոպոսի 'ի սաղմոսն յիսուներորդն. (Homilia in psalmum LIXX, պակասի յոյն բնագիրն). « Ի յաւժարամտութիւն հայելով ձերոց լսելեաց, և իմոյ զաւրութեանս տկարութիւն, եկն յիս պատկերութիւն մանկան հզաւրագունի՝ այսուհետև ոչ ևս զատուցեալ 'ի կամաւնէ խանգելով զձայն սաքինս 'ի տկարութիւնս փախուցիցեմք »։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի 'ի վաթսուն և մի սաղմոսն՝ 'ի կատարած յաղագս Իդիթունայ սաղմոս Դաւթի. (Εἰς τὸν, Α' ψξαλμόν. Εἰς τὸ τέλος ὑπὲρ Ἰδιθοὺμ, ψαλμὸς τοῦ Δαβίδ). « Երկուս սաղմոսս ծանեաք յաղագս Իդիթունայ՝ որք ունին զվերնագիրն. զերեսուն և ութն, և զոր 'ի ձեռին է, և վարկանիմք Դաւթի գոլ զկարգ իւրաց »։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի 'ի սաղմոսն հարիւրերորդ տասնեչորրորդ. (Εἰς τὸν ΡΙΔ' ψαλμόν). « Վաղ ժամանեալք 'ի քահանայական յայս տեղի 'ի մէջ գիշերոյ զԱստուած վկայից օրհնութեամբք հաշտեցուցանելով, ժուժկալեցէք մինչև 'ի հասարակաւրեայս 'ի մեր գալս մնացեալք »։

— Նորին Բարսղի եպիսկոպոսի 'ի սաղմոսն հարիւրերորդ տասներորդ հինգերորդ. (Εἰς τον ΡΙΕ' ψαλμόν). « Հաւատացի յաղագս որոյ և խօսեցայ. և ես նուաստացայ յոյժ. Ես ասացի 'ի զարմանալ իմում

[1] Ասոնց 'ի յունէ 'ի լատին թարգմանութիւնն ըրած է Հաւնփրինոս Ակուիլէացի 'ի չորրորդ դարու.

ամենայն մարդ սուտ ։ Հաւատ առաջնորդեսցէ վասն Աստուածոյ բանիցն. հաւատ և ոչ ցոյց »։

— Նորին սորայն Բարսղի եպիսկոպոսի յաղագս Երրորդութեան. « Զաստուած յիշել հանապազ բարեպաշտութիւն և յագուրդ ոչ ունի աստուածասէր հոգի. բայց բանիւ անցանել յաղագս Աստուածոյ յանդգնութիւն է »։

— Սորայն Բարսղի յաղագս Պահոց. և 'ի բուն բարեկենդան. (Περὶ Νηστείας, λόγος β'). « Մխիթարեսցէք, ասէ, քահանայք զժողովուրդս. խօսեցարուք յականջս Երուսաղեմի։ Բաւական է բանի բընութիւն՝ զառաքինեացն յարձակմունս վերաձգել. և զպղերգիցն և զհեզգացելոցն յարուցանել զյառաջադիմութիւն »։

— * Նորին սորայն Բարսղի եպիսկոպոսի Ի սկզբանէ էր բանն.. (Εἰς τό, Ἐν ἀρχῇ ἦν ὁ λόγος). « Ամենայն աւետարանչացն ձայն մեծաբարբառագոյն այլոցն հոգւոյն վարդապետութեան. վասն զի յայլս մարգարէիւք, իսկ յաւետարանսն ինքնադիմաբար խօսեցաւ մեզ տէրն »։

— Նորին Բարսղի սորոյ եպիսկոպոսի 'ի ծնունդ Փրկչին. (Εἰς τὴν ἅγιαν τοῦ Χριστοῦ γέννησιν). « Քրիստոսի ծնունդ իւրականն և առաջինն և յատուկ իւրոյ աստուածութեանն՝ լռութեամբ պատուեսցի. և մանաւանդ մտածութեամբք մերովք ոչ խնդրել զայնպիսին, և ոչ բազմախոյզ լինել պատուիրեսցուք »։

* Ի վերջ ճառիս կայ այսպիսի ծանօթութիւն մը. « Դաւիթ Թարգմանն Տարօնացի զճառս զայս յետոյ դարձոյց 'ի յունէն 'ի հայ բարբառ 'ի Դամասկացւոց քաղաքին՝ հրամանաւ Համազասպայ կուրապաղատի Մամիկոնենից տեառն ։ Եւ եղիցի աւրհնութիւն տեառն 'ի վերայ նոցին »։

— ** Նորին սորոյ Բարսղի եպիսկոպոսի և Ապողինարի հերձուածողի ասութիւն 'ի մարմնաւորու-

թիւն փրկչին: « Բարսեղ ասէ. Մարմին մարդկային ունէ՞ր Քրիստոս թէ ոչ: Ապողինար ասէ. Ոչ: Բարսեղ ասէ. Իսկ զա՞ր այլ: Ապողինար ասէ. Աստուածային: Բարսեղ ասէ. Բնութեամբ եթէ միաւորութեամբ անօրէնութեանն: Ապողինար ասէ. Միաւորութեամբ անօրէնութեանն »:

* Այս Տրամախօսութիւն ընդ Ապողինարի՝ որ 'ի մեր հայ գրչագիրս սրբոյն Բարսղի կ'ընծայուի, յունական քանի մը հեղինակաց քով Աթանասի տրուած է և անոր անուանովը ալ հրատարակուած: Ոմանք 'ի քննագատից Մաքսիմոսի վկայի ընծայեցին՝ որ եօթներորդ դարուն մէջ էր. այլք Թէոդորեաոսի: Հայկական հին Թարգմանութիւնս՝ այս ամէն կարծիք և երկմտութիւն կը փարատէ: Վաւերականութեանն վկայէ և սուրբ հայրապետն Շնորհալի 'ի Թուղթս իւր. « Որպէս և մեծն Բասիլիոս, — կ'ըսէ, — ընդդէմ Ապողինարի, որ զմարդկային հոգիս արտաքս հանէր 'ի տէրանէ, և կիսկատար ասէր զնա 'ի մարդկութիւնն՝ այսպէս ասէ, երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն: Եւ զի զգոյութիւն անշփոթ պահեաց՝ յորժամ եհարց Ապողինար վասն Քրիստոսի թէ մարդկային միտս ունէր՝ կարէր և մեղանչել, պատասխանէ սուրբն՝ թէ ոչ էր միացեալ ընդ աստուածութեանն միտքն՝ այժ »: Սրբոյն Բարսղի խօսքերն են. « Ապողինարին ասէ. Եթէ միտս մարդոյ ունէր՝ կարէր և մեղանչել: Բասիլ ասէ. Եթէ ոչ էր միացեալ ընդ աստուածութեանն միտքն՝ այժ »:

— Նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի, տեսութիւն յաղագս Հաւատոյ՝ երանելեացն սրբոց եպիսկոպոսաց Բարսղի և Գրիգորի. « Բասիլ ասէ. Կարողութի՞ւն իցէ արդեւք պատմել ինչ յաղագս Որդւոյ նախ քան զլինել աշխարհի: Գրիգոր ասէ. Եթէ ոք զկնի Հաւր և յետ Որդւոյ էր, պատմեսցէ. քանզի պարտ և արժան է նախ պատմողին գոլ, զորոյ զծնե-

լռութիւնն պատմէ. զի Հայր լսեաց՝ առանց ճառելոյ»։

* Էջմիածնի ցուցակին զայս Ճառ կ'անուանէ. «Հարցմունք վասն հաւատոյ»։

— Ոպտիմեայ եպիսկոպոսի՝ Բասիլիոս եպիսկոպոս. (Lettre à l'évêque Optime. «Եւ այլագգաբար ախորժելով անսեալ զբարիս մանկունս, 'ի ձեռն առեալ քան զհասակս՝ իւրեանց բարուցն բարեկեցութիւնս, և առ քո երկիւղածութիւնս ընտանի»։

— Բասիլիոս եպիսկոպոս Եւսեբու եպիսկոպոսի. (Lettre à l'évêque Eusèbe). «Յորժամ առ իւրն հայիմք, և զզուարութիւնս անասնեմք՝ յորոց ամենայն բարւոյն ներգործութիւն իբրև 'ի կապանաց իմեքէ խափանեալ արգելանի. 'ի բաց հրաժարումն ինքեանց զամք ամենեկին»։

— Թուղթ առ սուրբն Գրիգոր Աստուածաբան եպիսկոպոս Նազիանզու, յաղագս վարուց. (Deux lettres à St. Grégoire de Nazianze). «Ծանեայ զքո թուղթն, զոր օրինակ որք զբարեկամաց մանկունս յերևմանէ նոցա նմանութեան առ ընդանիսն ճանաչեն»։

— Թուղթ առ սուրբ Գրիգոր Աստուածաբան եպիսկոպոս Նազիանզու, յաղագս կրաւնաւորական վարուց. «Եւ գրելով և լուեալ լինելով. հաստատեալ ունիմք 'ի սիրտս մեր պահել զյիշատակ քո բարեզարդութեանդ. և աղաւթս առ տէր՝ տալ քեզ կատարել զընթացս բարւոյ քաղաքավարութեանն որպէս ընտրեցեր»։

— Բասիլի եպիսկոպոսի Կեսարու մեծի՝ Դիոդորայ երիցու Անտիոքացւոյ. (Lettre à Diodore, prêtre d'Antioche). «Եհաս առ մեզ գիր որ ունէր զվերնագիրն Դիոդորայ. իսկ որ զկնի այնորիկ գոյր՝ այլ ումեմն վայելուչ էր քան Դիոդորայ. քանզի թուի ինձ ոմն 'ի գծնդակ արուեստականաց ընդ քոյոյ

գիտուք մնալ, զինքն կամեցեալ հաւատալոյ ար-ժանի առնել լաւագոյն »:

* Էջմիածնի մատենադարանին գրչագիրն (Թիւ 924) ունի. « Գեորգայ երիցու Անտիոքացւոյ »:

— Նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի՝ յաղագս Գոհութեան. (Περ' Εὐχαριστίας λόγος). « Լուա-րուք զբանսն առաքելոյ, 'ի ձեռն որոյ ընդ Թեսա-ղոնիկեցիսն խաւսէր՝ ամենեցուն միատ գնէ որ 'ի կենցաղումս. քանզի վարդապետութիւնն առ այնո-սիկ որ հանապազ նմայն հանդիպէին՝ էր »:

— Նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի 'ի վկային Յուղիտեայ. և յառաջասացեալ խաւսսն յաղագս Գոհութեան. (Εἰς τὴν μάρτυρα Ἰουλίτταν, καὶ εἰς τὰ λειπόμενα τῆς προλεχθείσης ὁμιλίας τῆς περὶ εὐχαριστίας). « Պատճառք եկեղեցւոյս են երանելւոյ վկա-յիս քարոզութիւն լեալ. քանզի խոստացայ ձեզ յաւուրս յայսմիկ իբրև յիշատակարանաւ ունելով զմեծ ճգնութեան՝ զոր կանացի մարմնով առնի ա-րիութիւն »:

— ** Ի սուրբ նախավկայն Քրիստոսի Ստեփա-նոս. (Panégyrique sur St. Etienne, le protomar-tyr). « Ամենեքեան որ սիրելեացն ճաշոյն յաւրի-նեսցեն պատրաստութիւն, զանազան խորտկաց պատրաստեն խումբս. ոչ միայն զանեսակն հեշտալիս (հրաշալիս) արտաքերեալով՝ փրփրականս և կամ ծաղկերանգս ասրակերտս, այլ առաւել զհամեղու-թիւն խոկալով սպասաւորին »:

— Նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի 'ի սուրբ քա-ռասուն վկայսն. (Εἰς τοὺς ἁγίους τεσσαράκοντα μάρ-τυρας). « Մարտիրոսաց յիշատակ զիարդ արդեւք յագուրդ եղիցի մարտիրոսասիրին. վասն զի առ 'ի բարի ծառայակցացն պատիւ տարացոյց ունի զառ 'ի հասարակաց տեառնն միամտութիւն »:

— Նորին սրբոյ Բասղի եպիսկոպոսի 'ի Գորդիոս

(Գորդիոս) վկայն. (Εἰς Γόρδιον τὸν μάρτυρα). «Արէնք են բնութեան մեղուաց, ոչ 'ի բաց ամբառնալ 'ի մեղուանոցացն՝ նախ քան թէ ոչ թագաւորն՝ նոցա թռչման առաջնորդեսցէ»։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի խաւսք յորդորակք 'ի Մկրտութիւնն. (Ὁμιλία προτρεπτικὴ εἰς τὸ ἅγιον βάπτισμα). «Իմաստունն Սողոմոնի ըստ կենցաղոյս իրաց զժամանակս բաժանելով, և իւրաքանչիւր ումեք եղելոյն պատշաճագոյն որոշելոց ասէ. Ամենեցուն ժամանակ է. ժամ ամենայն իրի. ժամանակ ծնանելոյ և ժամանակ մեռանելոյ»։

* Յունական սկզբնագրին մէջ, որ յամենայն 'ի հըմտից 'ի կարգէ անհարազատ երկասիրութեանց սըրբոյն սեպուած է, երկու երկար ճառք կամ գիրք են, յորոց հատուած մի հասած է առ մեզ հայկական թարգմանութեամբ։ Յոյն եկեղեցւոյ մէջ այլևայլ համանուն անձինք եղած են՝ նշանաւորք սրբութեամբ և իմաստութեամբ. ինչպէս Բարսեղ Անկիւրիոյ՝ ժամանակակից Եմեսացւոյն, և արքեպիսկոպոսունքն Սելևկիոյ, Կիլիկիոյ և այլք։ Կրնայ ըլլալ որ մէկուն գրուածքը՝ ուրիշի մը ընծայուեր է։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի՝ թէ չէ պատճառ չարեաց Աստուած. (Ὁμιλία ὅτι οὐκ ἔστιν αἴτιος τῶν κακῶν ὁ Θεός). «Բազումք են վարդապետութեան աւրինակք, որք 'ի ձեռն զքահանայականսն սաղմոսողին Դաւթայ 'ի զաւրացելոյն 'ի նմա հոգւոյն ցուցան մեզ»։

— Նորին սրբոյ Բարսղի եպիսկոպոսի՝ յաղագս Ողորմածութեան և Աղաւթից. (Թերի). «Գիտացի իսկ յառաջագոյն զառ յինէն եղեալ առ ձեզ մխիթարութեան խրատն վասն բարեգործութեան»։

Հոս կ'աւարտին մեր երկաթագիր օրինակին մէջ ամփոփուած ճառք։

— ** Ի մեծի աւուրս գալստեան տեառն մերոյ

Յիսուսի Քրիստոսի 'ի տաճարն քառասնօրեայ. սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոյ ասացեալ. (Discours sur la présentation de N.-S. au temple). «Զամենայն աստուածախնամութեանց պարտ է մեզ կատարել սաղմոսիւք, և աւրհնութեամբ և գրութեամբ ընթերցուածոց որ ինչ խորհրդոյն»:

— ** Բարսղի Կեսարու առ Տերենտիոս զօրապետ վասն միանձնուհեաց դստերացն. (Lettre à Térence, le Stratège). «Եւ արդ առ քեզ են բանք իմ ով քաջ և առաքինի հաւատակ։ Նաեւ ես յոյժ խիստ զարմացեալ եմ ընդ քեզ, զի երբեմն զթագաւորական Անախտացւոց հնազանդեցուցեր զազգն միջամտի պատերազմի»:

— ** Աւրհնութիւն 'ի վերայ ջրոյն զոր ասացեալ է սրբոյն Բարսղի Կեսարու Կապադովկացւոյ. (Prière pour la bénédiction des eaux, le jour de l'Épiphanie de N.-S.). «Աւրհնեալ ես տէր աստուած ամենակալ յամենայնի Հաւր և սքանչելագործ, որ արարեր զերկինս և զերկիր. զծով յաննիւթից և յանպատրաստ խաւարային անդնդոց»: (Մաշտոց երկաթագիր, Լթ).

— ** Աղաւթք զոր ասացեալ է սրբոյն Բարսղի Կեսարու հայրապետի 'ի վերայ ապաշխարողաց. (Prière de Jeudi-Saint, pour les pénitents). «Տէր աստուած հայր ամենակալ, արարիչ երկնի և երկրի»:

— ** Քարոզ Զատկաց, զոր ասացեալ է տեառն Բարսղի Կեսարու Կապադովկացւոյ. (Pour le jour des Pâques). «Ժողովեալքս 'ի տաճար փառաց սրբութեանդ քո, հայցեմք 'ի քոյին գթութեանդ՝ լեր պարգևւիչ հայցուածոց մերոց լսողէս 'ի քոյ առատ պարգևւացդ, աղաչեմք: (Մաշտոց երկաթագիր, Լթ):

— ** Աղաւթք զոր ասացեալ է սրբոյն Բարսղի 'ի

սուրբն Պենտեկոստէն. (Prière pour le saint jour des Pentecôtes). « Անարատ, անեղծ, անսկիզբն, անտեսանելի, անհասանելի, անհետազօտելի, անփոփոխելի, անպարագրելի, անսահման, անոխակալ Տէր » : (Մաշտոց երկաթագիր, ԼԹ) :

— ** Աղօթք զոր ասացեալ է սուրբ հայրն մերոյ Բարսղի Կեսարու հայրապետին. (այգալուցք աշխարհհաթագին). « Գոհանամք զքեն հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի » :

— ** Աղօթք զոր ասացեալ է սրբոյն Բարսղի. (քահանայաթաղ). « Արարչագործ Աստուած, որ 'ի ձեռն աստուածային խորհրդոյ քոյ՝ զառաջնաստեղծ մարդոյն զկերպարանս » :

— ** Աղօթք վասն կնքելոյ զգերեզմանն. զոր ասացեալ է տեառն Բարսղի հայրապետին Կեսարու Կապադովկացւոյ. « Գոհանամ զքէն հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ յայց ելեր մարդասիրութեամբ քոյով » :

— ** Ի մեծին Վարդավառին աւուր աղօթք՝ սրբոյն Բարսղի Կապադովկացւոյ. (Prière pour le jour de la Transfiguration de N.-S.). « Աւրհնեալ ես, տէր Աստուած ամենակալ, Որդի և Բանդ Աստուած, էակից և արարչակից Հաւր, գոյացուցիչ և համագոյակից Հաւր և Հոգւոյն սրբոյ անորիշ յէական բնութենէք » : (Մաշտոց երկաթագիր, 'ի մեր Մատենադ. ԼԹ) :

— Երանելւոյն Բարսղի Կեսարու հայրապետի ասացեալ վասն Պահոց. « Շաբաթ տաւն է Հրէից ազգին. և ասացաւ թէ Հանգիցէ գրաստ քո և եզն քո, ծառայ քո և վարձաւոր քո » :

* Ի ցուցակի գրչագրաց Մատենադարանին որ յԷրուսաղէմ. Թարգմանեալ « 'ի յունականէն 'ի հայ՝ 'ի Ստեփաննոսէ քահանայէ և յետին կրօնաւորէ » :

— ** Սրբոյն Բարսղի 'ի մեկնութենէն Զաքարիայ մարգարէի· (Fragment du Commentaire sur la prophétie de Zacharie). « Զարթիր սուր 'ի վերայ հովուի իմոյ, ասէ տէր ամենակալ: Սուր աստ յայտնեալ ասեմք իբրեւ աւրինակաւ սուսերի զխորհրդութիւնն, կամ զնոցին չարչարանս » (հատուած մի եւեթ):

— Նորին սրբոյն Բարսղի (քաղուած 'ի ճառէ անտի ծննդեան). (Fragment d'un discours sur la Nativité de N.-S.). « Նոր է մեզ տաւնս եւ պարս հրեշտակաց յարգարէ· որք ասէին· Փառք 'ի բարձունս Աստուծոյ եւ յերկիր խաղաղութիւն, 'ի մարդիկ հաճութիւն »:

— Խրատք սրբոյն Բարսղի Կեսարացւոյ հայրապետի ասացեալ· « Իսկ բարեշուք այրն Աստուծոյ տեսեալ ժողովս զմանկունսն՝ ուսուցանէր նոցա անձանց մաքրութիւն, և անախտութիւն մտաց մարմնոյ, գնացք հեզութեան, ձայն չափաւոր »:

— Սրբոյն Բարսղի եպիսկոպոսապետի Կեսարու Կապադովկեցւոյ՝ ճգնողականաց կրաւնաւորաց· (Λόγος ἀσκητικός). « Զգուշական կենցաղ՝ մի դիտաւորութիւն ունի զոգւոցն փրկութիւն. և ամենայն որ կարէ առ նա գործակցել զյաւժարութիւնն՝ իբրեւ զաստուածային պատուիրան՝ այսպէս հանդերձ երկիւղիւ պահել »:

— Նորին սահմանք կրաւնաւորականք· (Ὅροι κατὰ πλάτος). « Քանզի Աստուծոյ շնորհաւք յանուն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի մերձ եկաք յայսասիկ, որք և զմի և զնոյն տեսութիւն վարուց զբարեպաշտութեան հաստատեալք, և դուք բարւոք յայտնիւք (յն. յայտնիք էք) ուսանել ինչ որ առ 'ի փրկութիւնն փափաքեալք »:

— Սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկացւոյ խրատ յաղագս կրաւնաւորաց առ միա-

բանակեացս և որ առանձին ճգնին. « Ըստ Քրիստոսի իմաստասիրութեան յանձն առեալ, և աշխարհական ցանկութեանց և մտադիւրութեանց և հոգւոյ վերագոյն համբարձեալ զխորհուրդս, և 'ի մարմնաւոր ախտից ամենայն իրաւք զմիտս անջատել և որոշել փութացեալ » ։

— Եթէ պարտ է զաղաւթս նախագրել քան զամենայն ինչ. « Ամենայն գործ ով սկսելի, և ամենայն բան փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի կրաւն է բարեպաշտութեան և առաքինութեան » ։

— Հարցումն ճգնաւորաց ։ — Պատասխանի սրբոյն Բարսղի. ("Οροι κατὰ πλάτος, κατ' ερωτισῖν καὶ αποκρισῖν). « Հարցողաց. Քանզի եւ մեզ բանն իշխանութիւնն հարցանել, նախ քան զամենայն զայս աղաչեմք ուսանել, եթէ կա՞րգ իցէ և հետեւումն 'ի պատուիրանս Աստուծոյ ... Ասացողին. Հարցումդ ձեր առաջնոցն է. և նախ տուեալ յաւետարանսն, յորժամ մատուցեալ առ տէր աւրինականն՝ վարդապետ ասէ, ո՞ր առաջին պատուիրան յաւրէնսն է »* ։

* Երեքհարիւր վաթսուն և մի հարցմունք 'ի ճգնաւորաց, և պատասխանիք սրբոյն Բարսղի. այս պատճառաւ ամբողջ գիրքն՝ Հարցողաց կոչուած է 'ի գրչագիրս ։ (Յոյն բնագիրն հանդերձ լատին թարգմանութեամբ 'ի տպ. Փարիզու, Հատ. Բ. յէջ 323-326)։ Ի ցուցակի գրչագրին որ յԵրուսաղէմ՝ այս ծանօթութիւնը կը գտնենք. « Թարգմանեալ 'ի յունականէն 'ի հայս՝ 'ի ձեռն ճշմարտաբանից թարգմանչաց մերոց » ։

Յիշատակարան գրչագրին որ 'ի գիւանս Սանահնի վանաց. « ... Մեծապատիւ վկայ զՍիմէոն քաջ քարտուղարն Սանահնու, որ սրբուհւոյ Աստուածածնին հիմնարկութեանն և աւարտմանն ականատես էր եղեալ. որ 'ի ժամուն յայնմիկ գրեալ զգիրս Բարսղի Կեսարացւոյ վասն ճգնաւորաց, և նորուն յիշատա-

կարանի գրեալ այսպէս. « Ես անարժանս 'ի կրօնաւորաց փցուն գրիչս Սիմէոն՝ 'ի Թուականութեանս Հայոց ՆԻԱ. 'ի նորաշէն վանքս կոչեցեալ Սանահին, հրամանաւ հաւր իմոյ Յովհաննիսի, որ էր վանիցս շինութեան ամք վեց. զոր շինեաց բարեպաշտ Թագուհին Խոսրովանոյշ՝ ամուսին Հայոց Շահնշահի որդի Սմբատայ Բագրատունւոյ Հայոց Թագաւորի, և յառաջին ամի հայրապետութեանն հոգեւոր հաւրն հանուրց տեառն Խաչկայ, արժանաւոր վերադիտողի. և յեպիսկոպոսութեան մերումն նահանգի Տաշիր՝ Գրիգորի արժանաւոր հաւտապետի, որ և նորուն առաջնորդութեան են ամք երկու » : ...

— Կանոնականք և որչափ պատուհաս. ('Επιτιμία).

– Ա. Եթէ ոք ողջ իցէ մարմնով, և անփոյթ արասցէ զաղաւթից և կամ զուսուցմն սաղմոսաց, պատճառելով զպատճառս մեղաց, սայ որոշեսցի, և կամ պահեսցէ շաբաթ մի » :

* Ի մեր գրչագիրս մետասան կանոնք միայն. իսկ 'ի յոյն բնագրին երկու մասունք. 'ի միումն վաթսուն կանոնք, իսկ յերկրորդին ինննեւտասն:

Գրչագիր մը այս գրուածին կայ 'ի Հռովմ 'ի Մատենադարանին որ 'ի Մինէրվա (նախկին գրատուն Հարց Դոմինիկեանց) այս յիշատակարանաւ. « ՈՀԴ. Գրեցաւ կանոնական սահմանադրութիւն ուղղութեանցս, յուսումն խրատու կարգաւորութեան վանականաց, յարմարեալ և շարակարգեալ 'ի հոգեխապայծառ և 'ի տիեզերալոյս վարդապետէ և 'ի մեծէ եպիսկոպոսապետէն Կեսարու Կապադովկացւոյ սըրբոյն Բարսղի, որ կոչի Հարցողաց. զոր եւ գրել զսա Ստեփանոս վարդապետն՝ յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնողաց իւրոց, նաեւ Ներսէս վարդապետին և միաբանիցն. և է սա յիշատակ Լմայ անապատին 'ի դուռն սուրբ Գէորգայ զօրավարի ... կան այժմ վաթսուն

եղբայր միակեց, հաստատ կարգաւք 'ի փառս Աստուծոյ »:

— Գիր կանոնական մեծի և գիտականի եպիսկոպոսապետի Բարսեղի առ սուրբ Ամփիլոքոս, բան. « Արտաքսեալքն յեկեղեցւոյ ամենայն՝ հերձուածողք ասին, այլ եւս հերձուածս կոչեցին ոչ միայն զայս՝ այլ և զայլ անձինս ժողովարարս »: (Քառասուն և ինն կանոնք):

— Նորին Բարսեղի առ Թէոդորոս՝ յաղագս ոչ առնել ընդ խնամիս խնամութիւն՝ զի յազգականցութենէ է: — Կամ ըստ այլ ձեռագրի. Գիր կանոնական սրբոյն Բարսղի առ քահանայ մեծ Դիոդորոս յԱնտիոքիայ. վասն ամենեւին հեռանալոյ և զազգային չառնել. « Յայս ինձ առաւել հակէ միտք եթէ գտցէ յանաւրինաց ինչ, որ ըստ կամաց հեշտութեան լինի ընդ լծով ծառայութեան աւրինացն անկանի »:

— Բարսեղի գիր կանոնական վասն պէսպէս և բիւրապատիկ ախտից. (ՄՀԲ կանոնք):

Վերը յիշուած երկաթագիր հին և ամենընտիր օրինակին մէջ գտնուած յիշատակարանն. « Որ զթերութիւն եկեղեցւոյ միշտ լրացուցանէ Հոգին սուրբ իւրով ամենապատիկ շնորհաւքն, նմա փառք ընդ Հաւր և Որդւոյ միակամութեանն, այժմ և միշտ և յաւ" : Յոյժ ըղձիւ և յաւէտ տարփմամբ անձկոյ 'ի վաղուց ժամանակաց տոչորեալ այսմ աստուածահրաշ վարդապետութեան սիրով սրբոյն Բարսղի, սուրբ ուխտիս Հաղբատայ: Քանզի թէ յանփոյթ առնելոյ առաջնոցն, և թէ 'ի չպատահելոյ ժամու գիպաւորի, ոչ գրեալ և ոչ ստացեալ ունեք զայս գիրս, ամենափարթամ գանձարանս այսմ ուխտի, ոչ ունէր զսա. որոյ թերութիւն զիւրն խնդրէր լրումն. որ պահիւր համանունանս իւրոյ տեառն Բարսղի, արհիեպիսկոպոսի աստուածաբնակ այսմ սրբարանի. որ ըստ կանխանկատ գիտութեան վերնոյ դիտմանն՝ եկեալ

'ի գաւառէն Խաչենոյ, եղեւ ըստ աջողելոյ Հոգւոյն Սատուծոյ վերատեսուչ համայն քրիստոնէից Հայոց, որ ընդ գաւազանաւ Թագաւորութեանն Վրաց յաջորդեալ զաթոռ տեառն Գեորգա, ամենայնիւ առաւելեալ քան զառաջինսն 'ի փոյթ շինութեան սրբոյ ուխտիս. քանզի Թէպէտև էր 'ի հարց և 'ի հաւուց, ազատ յազատաց, և մեծազգի 'ի մեծազգեաց, և փառաւոր 'ի փառաւորաց, ևս առաւել գոյր արժանաւոր մեծի գովութեան վասն հոգւոյ անարատութեան և վարուց մաքրութեան. որով և կոչեցաւ իսկ յայս աթոռ արեւելեան ըստ վկայելոյ Թագաւորիս և համայն ազատաց. այլ և Ճգնաւորական դասու կրաւնաւորաց. և յամենեցունց եղեւ պատուեալ ըստ արժանւոյ. ևս առաւել 'ի մեծ ամիր սպասալարէն յԻւանէէ, և 'ի զուգակցէ նորին 'ի բարեսէր Թագուհւոյն Ռուսուդանայ՝ որ էր յազգէ Բագրատունեացն մերոց կորուսեալ ազգիս Թագաւորաց. որ ցուցանէր զգութ հարց իւրոց, և նորոգէր զիւրոյ նախնեացն սէր առ ամենեսեան, առ հեռաւոր և մերձաւոր ուխտս սուրբս. քանզի ամենայն տեղի որ 'ի նախնեացն սորա շինեալ էին և նուաղեալ յետոյ, 'ի սորա աւուրս պայծառանային և նորոգէին վերստին. եթէ 'ի մերում գաւառիս, և եթէ 'ի գաւառն Անւոյ սեփական քաղաքին իւրեանց, և 'ի նոյն իսկ յԱնի, և եթէ 'ի գաւառն Դըւնայ. վասն զի յամենայն տեղիս իշխանութիւնն և երկիւղն մեծի սպասալարին Իւանէի առ սորա հաստանէր. և սա ջանայր զի զիւր նախնեացն շինեալ եկեղեցիսն պայծառացուսցէ. որ և կամեցաւ զգերեզմանս առաջնոց Թագաւորացն որ 'ի սուրբ ուխտիս առաւել պատուել և պայծառացուցանել. վասն որոյ եգ զսուրբ ուխտս 'ի ձեռս տեառն Բարսղի. և սա ելից ընդ այդ Թերութեանցն բազմաց և զայսմ գրոց պակասութիւն, և հաստատեաց 'ի սուրբ տեղ-

ւոյն, զի մի՛ ոք իշխեսցէ հեռացուցանել 'ի սուրբ ուխտէս. Թշնամութեամբ կամ ագահութեամբ. ապա թէ ոք յանդգնեսցի ... Գրեցաւ գիրքս 'ի Թուականիս Հայոց Նորումս ՋԹ. իսկ Հոռոմոց ՑՂԳ. 'ի հայրապետութեան տեառն Ներսիսի Հայոց կաթուղիկոսի. և 'ի թագաւորութեան Վրաց և այղ բազում ազգաց Գէորգեայ որդւոյ Դեմետրէի. գրեցաւ ձեռամբ Սարգսի նուաստ գրչի և անմարի և յետին աշակերտի եկեղեցւոյ սրբոյ ուխտիս » ...*

* Յիշատակագրին նշանակած փոքր Թուականն կը համեմատի Հայոց ՈԻԱ (1172)։ Երկաթագիր օրինակիս մէջի ճառերէն կը պակասին առ Յոյնս հետեւալքն.

Ա. Բարսղի և Ապողինարի տեսութիւն 'ի մարմնաւորութիւն փրկչին։

Բ. Բարսղի և Գրիգորի տեսութիւն յաղագս հաւատոյ։

Գ. Բարսղի Թուղթ առ Եւսեբիոս եպիսկոպոս։

Դ. Թուղթ առ Գրիգոր յաղագս կրօնաւորական վարուց։

Ե. Առ Դիոդորոս երէց Անտիոքացի։

Զ. Ի սուրբն Ստեփանոս նախավկայ։

Է. Յաղագս ողորմածութեան և աղաւթից։(պակասաւոր)։ Առնցմէ զատ ուրիշ գրչագրաց մէջ գտնուած ճառք, որոց սկզբնագիրք պակասին, թէ յունական օրինակաց մէջ և թէ 'ի լատին թարգմանութեան Հառուփինոսի։

Ը. Ի քառասնաւորեայ գալըստն տեառն. ('ի մեկն. Ղուկ.)։

Թ. Առ Տերենտիոս Սարատեղատ վասն մահուան դստերացն։

Ժ. Վասն Պահոց։

ԺԱ. Խրատք. « Իսկ քարեշուք այրն Աստուծոյ »։

ԾԲ. Այլևայլ աղօթք 'ի ժամասացութեան 'ի տէրունական տօնս։

** Թուղթ Զղջման' առ կուսանն անկեալ 'ի կուսութենէ իւրմէ. (Epistola ad virginem lapsam). «Այժմ ժամանակ է ինձ զմարգարէականն զայն գոչել և ասել. Ո՞ տայցէ գլխոյ իմոյ ջուր և աչաց իմոց աղբերս արտասուաց և լայցից ... Զի Թէպէտ և զսոսա խորային շրջանակեալ ունի լռութիւն և են միանգամայն ցնորեալ»։ (Յոյն սկզբնագիրն կորուսեալ. լատինական Թարգմանութիւնն 'ի յոյնէ եղած է 'ի ձեռն Հառուփինոսի)։

— Սրբոյ Բարսղի եպիսկոպոսի Կեսարոյ Կապադովկացւոյ յաղագս վեցօրեայ առուրց արարչութեան.[1] (ինն ճառք)։ Βασιλειοῦ ἀρχιεπισκοποῦ Καισάρειας Καππαδοκίας Ὁμιλίαι Θ' εἶς τὴν ἑξαμερόν.

Ի Ս. Ղազար Վենետիկոյ 1830 տպագրին յառաջաբանն կը ծանուցանէ. «Վաղու եւս ձեռնարկեալ էր մեր 'ի տիպ սորա, եթէ հին և ստոյգ օրինակի չէր կալեալ ակն. բայց արդ 'ի գերև ելեալ, լաւ համարեցաք միովս որ 'ի ձեռին շատանալ. Թէպէտև ոչ հին և ոչ ընտիր գրչութիւն, այլ վրիպագիր բազում ուրեք և յանհմտութենէ աղաւաղեալ»։

Այս կարծիքը կ'արդարացընէ լիուլի' յոյն բնագրին հետ բաղդատութիւնը։ Քանի մը օրինակք. — յ'էջ 2 տպ. 'ի քնին լինիցին. յոյնն. ինքնին լինիցին. — Հայ. մխարանել ընդ բանին որ պատմեցաւ. յոյնն. որ պատմեցաւ. — Հայ. առ ժամանակ մի բարբառել ընդ մեղսն. յոյնն. մխիթարիլ 'ի մեղսն. — Հայն. վնաս առնելեաց և չարառնեաց է. յոյնն. վնասառնեաց և չարառնեաց է։ Ասոնք միայն մէկ էջի մը մէջ։ Ընտրելա-

[1] Օրինակի մը մէջ որ 'ի Մատենադարանին Էջմիածնի' գրիչն Մխիթար կը ծանուցանէ. «Վեցօրեայ գիրքս երկու Թարգմանչաց է յօրինած. փառք որոց ուրոյն ուրոյն են»։

գոյն է օրինակն որ պահի յ՚Օրթագիւղ Պոլսոյ առ Անտոնեան հարս[1] ։

Համառօտութիւն մը այս ընտիր և բազմիմաստ երկասիրութեան կը գտնուի 'ի մերում Մատենադարանի, բոլոր–գրչագիր երկոտասաներորդ դարու. յորոյ 'ի վերջ կը հանդիպինք այս յիշատակարանին. «Ներեցուք այսուհետև և մեք զհետ սիրոյն Քրիստոսի, լցեալք անուշահոտ կերակրովք և զմայլեալք մեծամեծ խորտկաւք. յիշատակաւք ձաւխս որ պատմեցան. և հոգևպատում աստուածաբանութեամբ թարգմանական բայցայայտութեամբ 'ի մըտաւութիւն գիւր ուսման ուսումնասիրող եկեղեցւոյ մանկանց, 'ի սրբոյն Բարսղէ՝ որ Կեսարուն վերագիտող է. և որ Գամիրացն է սիւն լուսոյ, և Կապադովկիայն հաստատուն հաւատոյ, և աշտանակաւոր ջահ աշխարհի ամենայնի։ Որոյ բաղձալի փափագմամբ ցանկացեալ փանագիս այս սիրող եղեալ բանին, որ վեցաւրէին 'ի նմանէն է մեկնութիւն, ծայրաքաղեցի զսայանին, և որ գիւրընկալն է իմոյ, և որ ըստ իս են պակասիմաց ուսումնասիրաց անձանց. յորս սուղ ինչ աշխատեցա բանաքաղութեամբ և տունտուութեամբ համբակի միում Քրիստափորի մրգուղ գրչի և անվարժ գրողի։ Որք ընթեռնուք և ուսմամբ աւկտիք, հարկաւորիք 'ի Տեառնէ հատուցանել զաղաւթիցն զպարտ ...»։

[1] «Այս ձեռագիրս, որոյ թուականն է Հայոց ՌՃԾ (1701) թէ գրողին հմտութեանը և թէ մանաւանդ պարունակութեանը մի քան զմի պատուականութեանը պատճառաւ Անտոնեան հարց Մատենադարանին գլխաւոր զարդերէն մին կըրնայ համարուիլ։ Բարսղի Վեցօրեայն, Գրիգորիսի Արշարունեաց եպիսկոպոսի Մեկնութիւնն Ընթերցուածոց, և քան զամենն աւելի՝ Գէորգեայ Պիսիդեսի Վեցօրէին ամբողջական թարգմանութիւնն, որոյ մի պատառիկն եւեթ ծանօթ էր մեզ, հրատարակեալ 'ի Բազմավիպի 1879 տարւոյն (123), ահաւասիկ ասոնք են ցանկալի ափսիս անգին գոհարներն»։ (Ն. Ն. ԲԻՒԶԱՆԴԱՑԻ, Բառաքննութիւն, 61)։

Միւս այլ յիշատակարան 'ի վերջ մատենին. «Գրեցաւ աստուածային տառս այս ձեռամբ նուաստ գրչի Գրիգորոյ 'ի մայրաքաղաքիս Հաղբատայ. 'ի յառաջնորդութեան տեառն Բարսղի. զոր օկնեցին արարաք զԱրարածոց Մեկնութիւնն՝ զոր ամե 'ի վարդապետաց եկեղեցւոյ համառաւտեալ էր։ Ընդ նմին և զՂեւտականն եգաք, յայլեւայլ աւրինակէ. զոր ոչ էր կատարեալ ... զի այլ ըստ ոչ գտաք աւրինակ, զի Թէպէտեւ շատ 'ի խնդիր ելաք։ Այլա և կարգեցաք զՅեսուն, և զայլ Դատաւորսն. ընդ նոսին և զԹագաւորացն Մեկնութիւնն։ Ի յաւարտումն ամենայնի՝ զի որք 'ի վարդապետաց եկեղեցւոյ ընթերցցի վասն իւրոյ աշակերտաց 'ի յուսումն, կարդաւ գտանիցէ զամենայն եդեալ։ Արդ որք կարդայք և աւկտիք, կամաւոր յաւժարութեամբ զմեղուցեալ գրիչ անմոռաց յիշեսջիք 'ի Քրիստոս»։

Ս. ԲԵՆԵԴԻԿՏՈՍ ԱԲԲԱՅ

(ST. BENOÎT)

Նախահայր գրեթէ տասնըհինգ դարերէ 'ի վեր իր անունը կրող հաչակաւոր և բազմերախտ կրօնաւորական կարգին՝ հիմնադիր միակեցական կատարելութեան յարեւմուտս (480-543)։

— Սորոյ հայրն Բենեդիկտոսի սահման աւանդին ընթացից կրաւնաւորաց. (Règles monastiques).
«Ունկն դիք, որդեակք, խրատու հաւր ձեր. խոնարհեցուցէք զլսելիս սրտից ձերոց՝ զհրամանս հաւր ձեր և առաջնորդի բարւոյ յաւժարութեամբ ընդունել և դառնալ 'ի հնազանդութիւնն յորմէ անկաւ անհնազանդն»։ Տես Վրրևչեր։ Թարգմանիչն ասուրբն

Ներսէս Լամբրոնացի, ինչպէս 'ի յիշատակարանին Տրամախօսութեանց սրբոյն Գրիգորի Մեծին (Ա) քահանայապետին Հռովմայ. « ... Թարգմանեցի զնուբուն Բենեդիկտոսի կարգ և զաւրէնս կրաւնաւորաց նոյն ժամայն 'ի լատին լեզուէն 'ի փռանգ 'ի վանս սուրբ Պաւղոսի որ 'ի քաղաքն Անտիոք 'ի ձեռն հաւատակից կրաւնաւոր միոյ 'ի նոցանէ Կիլամ անուն »։

ԳԵՆՆԱԴԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(GENNADE, ÉVÊQUE)

Գեննադիոսի ընծայուած հետագայ Ճառին Թարգմանութիւնը պահուած է 'ի մեր մատենագրութեան։ Չենք կրնար որոշակի ըսել թէ արդեօք համանուն Կոստանդնուպոլսոյ հայրապետին է որ յառաջին քառորդի հինգերորդ դարու՝ հակառակեցաւ վարդապետականաց Կիւրղի Աղեքսանդրացւոյ, թէ ուրիշի մը։ Իրեն տրուած գրութեանց մէջ չյիշատակուիր այս Ճառս, որ մեր իսկ ձեռագրաց մէջ՝ երբեմն ուրիշ անուն կը կրէ։ Անստոյգ է նաև հայերէն թարգմանութեան ժամանակը։

— ** Երանելւոյն Գեննադայ եպիսկոպոսի ասացեալ յաղագս Պահոց և 'ի Նինուէացիսն. « Այսպէս ասէ մարգարէն Դաւիթ. այս դուռն տեառն է, և արդարք մտանեն ընդ սա. բայց ես յանդգնելով»։

* Ի Մատենադարանին Էջմիածնի (թիւ 917) Դեմետրեայ եպիսկոպոսի կ'ընծայուի Ճառս՝ այս խորագրով. « Դեմետրեայ եպիսկոպոսի Կոստանդնուպաւլսոյ 'ի Նինուէացիսն և յաղագս Առաջաւորացն պահոց »։

Ի մեր Մատենադարանի երեք օրինակք կան Ճա-

ափս. միայն սկզբնագիրն է յազգայինն գրատան Փա֊ րիզու. իսկ այլք յարևելից՝ և ընտրելագոյն ըն֊ թերցուածովք քան զառաջինն ։

ԳԵՐՄԱՆՈՍ (Ս.) Տէս ԹՈՒՂԹ ՀՌՈՌՄՈՑ.

Ս. ԳՐԻԳՈՐ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ

(ST. GRÉGOIRE DE NAZIANZE)

Մեծս այլ արեգակն պայծառ և լուսասփիւռ, պարծանք արևելեան եկեղեցւոյ, իր վարդապետա֊ կան նուրբ և ամենիմաստ գիտութեամբ, բազմա֊ հմուտ տեղեկութեամբն և հանճարով, գրաւիչ և քերթողական լեզուով։ Գրիգորի Նազիանզացւոյն կամ Աստուածաբանի (328–389), որ մեր գրոց մէջ եր֊ բեմն վերիպական Ազազացի ալ կոչուած է, այլևայլ ընտիր գրուածոց թարգմանութիւնն ունինք 'ի նախ֊ նեաց, անդստին 'ի հինգերորդ դարէ. Թարգմանիչն հաւանականաբար մին 'ի կրտսերագոյն Թարգման֊ չաց, և ըստ կարծեաց հմտագունից՝ նա ինքն Մով֊ սէս Խորենացի, որ իր գրուածոց մէջ անոնցմէ յի֊ շատակութիւն, և մերթ նաև խմտռից և հատուա֊ ծոց փոխառութիւն ալ կ'ընէ, և 'ի մեծանուանն յՈղբսն։

— Ա. Գրիգորի Աստուածաբանի Ազազացւոյ առ Եւնոմեանցիսն. (Κατὰ Εὐνομίανων πρὸ διάλεξις, λόγος). « Ոչ որս բանիւ են պաճուճեալ բանս, և զի 'ի գրոց սկսայց. ահաւասիկ ես 'ի վերայ քո թշնամանող »։ Գրքին սկզբնաւորութենէն Այս որս կոչուած է. Πρὸς τοὺς ἐν λογῷ κομψοὺς ὁ λόγος.

— Բ. Նորին յաղագս Հաւատոյ. (Περὶ δόγματος καὶ κατὰ στάσεως ἐπίσκοπων λόγος). « Ցործամ տեսա֊

նեմ այժմ լեզուագարութիւն, և զատուցեալ ի-մաստունոց և զձեռնագրաց աստուածաբանոց, ու-րոց բաւական է կամել միայն առ 'ի լինել իմաս-տունս »:

— Գ. Նորին յաղագս Որդւոյ, բան առաջին. (Περὶ Υἱοῦ λόγος πρῶτος). « Զո՞րս ինչ ասիցէ որ արդեօք 'ի բաց հատանելով զբանիցն նոցա պատրաստու-թիւն և զխոշորութիւն և զարագութեան սխալանս յամենայն իրս, մանաւանդ որ յաղագս Աստուծոյ են բանք այսոքիկ են »:

— ** Դ. Առ այնոսիկ որ ասեն թէ Հայր մեծ է քան զՈրդի. « Զոր ինչ ախտանան առ բազմածալիկ բուրաստանացն՝ որք այնոցիկ են ցանկացողք տեսու-թեանց. որոց ոչ առ մի երևեցելոցն յաղագս համա-պատիւ գեղեցկութեանն աչք հաստատին, այլ առ ամենեսեան ցանկութեամբքն ցնդին »:

— Ե. Նորին յաղագս Որդւոյ, բան երկրորդ. (Περὶ Υἱοῦ λόγος δεύτερος). « Վասն զի քեզ ընդ խորհրդո-ցըն զարձուածս և մանուածս բաւականապէս անցի զաւրութեամբ Հոգւոյն, որք 'ի սուրբ գրոց մեծու-թիւնք և ընդդիմագրութիւնք, զոր գրոյն սեղանա-կապուտք, և որք զեղծս գրեցելոցն գողանան, յո-լովս տանձինն իւրեանց տանեն »:

— Զ. Նորին յաղագս սրբոյ Հոգւոյն. (Περὶ τοῦ ἁγίου Πνεύματος, λόγος). « Արդ որ յաղագս Որդւոյ բանն է՝ այսքան. և այնպէս զերծաւ 'ի քարկոծչացն, անցանելով ընդ մէջ նոցա. վասն զի բանն ոչ քարկո-ծի, այլ քարկոծէ յորժամ և կամի. և պարսէ զգա-զանս՝ զանբանսն, զչարաչար 'ի լեառն ելեալս: Զի՞նչ արդեօք ասիցես յաղագս սուրբ Հոգւոյն »:

— Է. Նորին յաղագս Աստուածաբանութեան. (Περὶ Θεολογίας, λόγος δεύτερος). « Եւ արդ վասն զի մաքրեցաք բանիւ զաստուածաբանութիւնն, որպի-սի ինչ զուլ պարտ էր՝ անցանելով. և որոց ոմանց ի-

մատատարիրելի, և յորժամ և որքան. զի որպէս որոց մաքրեալքն են, զի լուսով հաստանիցի լոյս, և յոյժ փութացելոյն »:

— Ը. Նորին յաղագս առ Արիանոսս է բանս. (Πρὸς Ἀρειανοὺς καὶ εἰς ἑαυτὸν λόγος). « Ո՞ւր արդեւք իցեն որ զաղքատութիւնն Թշնամանեն, և զմեծութիւնն հաշտակեցուցանեն. որք յոլովութեամբ զեկեղեցին սահմանեն, և զսակաւութիւնն արհամարհեն »:

— ** Յանդգնութիւն հերետիկոսաց, զոր խաւսեցան բանդագուշեալքն. « Վաղենտիանոս երկուս որդիս ասէ. զմին բնութեամբ և զմիւսն շնորհաւք: Եւ գործեալ զհին գիրսն՝ ոչ բարոյ արարչի. և զնորն բարի և յանգնդոց ասէ գոյացեալ զաշխարհս. և ոչ յոչնչէ՝ և ոչ յԱստուծոյ »:*

* Այս ճառէն ետքը՝ կը գտնենք հետևեալ յիշատակարանը 'ի գրչագիրս. « Ցեա յոքունց ստացողաց և զիս յիշեսջիք 'ի Քրիստոս զՆերսէս անարժան գոլով եպիսկոպոս, և եղբայր կաթողիկոսին Հայոց Տեառն Գրիգորի, որ ստացայ զսա գնիւք յաՆաւրէն Յունաց 'ի վանորէից Հայոց. յորժամ եւ Թագաւորն Հոռոմոց յաշխարհն Կիլիկեցոց և առ զնա յիշխանէն Լեւոնոյ որ էր հայ ըստ ազգի և ըստ հաւատոյ. և աւերեաց զբազում վանորայս և զեկեղեցիս. և զնշանս տէրունականս խորտակէին և անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քինաբար. և այս եղեւ 'ի Թուիս ՇՁԶ: Եւ երկրորդ նորին արքայի եկն ՇՂԲ. յորում և վախճանի առաջի Անաւզարբոյ. և Թագաւորէ կրտսեր որդին Մանուէլ անուն: Ընդ նմին յիշեսջիք և զԳրիգորիս եպիսկոպոս, զորդի եղեալ եղբաւր կաթողիկոսին Ներսեսի և յետոյ կաթողիկոս Հայոց. որում և զայս գիրս շնորհեաց ուսեալ 'ի նմանէ և վարժեալ »:

— Թ. Առ Կղեդոնիոս. (Κατὰ Ἀπολιναρίου πρὸς Κληδόνιον πρεσβύτερον, ἐπιστολὴ α΄). « Կամիմք ուսանել զինչ

է նորածնութիւն յեկեղեցւոջ. զի իշխանութիւն իցէ ամենայնի կամողի և խոստորնակս գնացողի ըստ գրեցելումն՝ ածանել զհաւատ գեղեցիկ » :

— ձ. Առ Կղեդոնիոս, երկրորդ. (Κατὰ Ἀπολιναρίου πρὸς Κληδόνιον πρεσβύτερον, ἐπιστολή β΄). « Վասն զի բազումք եկեալ քո երկիւղածութեանդ հաստատութիւն խնդրեն յաղագս հաւատոյ. և վասն այդորիկ պահանջեցեր զմեզ բարեկամաբար, համառօտ սահման իմն և կանոն մերոյ խորհրդոյս » :

— ձԱ. Նորին առ Կղեդոնիոս, երրորդ, 'ի բանն մարգարէական. Որովայն իմ, որովայն իմ ցաւէ. (Πρὸς τοὺς πολιτευομένους Ναζιανζοῦ ἀγωνιῶντας). « Որովայն իմ, որովայն իմ ցաւէ, և զգայարանք իմ ձմլին, ասէ ուրեմն յիւրում 'ի բանսն Երեմիաս. որ քան զմարգարէսն ախտակցագոյն էր լալով զիւրայսն. զանհաւանեալն և յԱստուծոյ մարգասիրութենէն զօտարացեալն » :

— ձԲ. Յաղագս բարեկարգութեան 'ի խաւսս. (Περὶ τῆς ἐν διαλέξεσιν εὐταξίας). « Վասն զի եկիք 'ի փառսն յաւժարութեամբ, և բազմամարդ է տաւնս. և վասն այդորիկ մանաւանդ գործոյ՝ բեր տացուք ինչ ձեզ շահ, թէպէտև ոչ հասարակաց յաւժարութեանց արժանաւոր, այլ սակայն քան զաւրութիւնս մեր ոչ ինչ կարաւտագոյն » :

— ձԳ. Խաղաղական առաջին. միաբանութիւն միայնացելոցն յետ լռութեանն. (Εἰρηνικός Α΄. Ἐπὶ τῇ ἑνώσει τῶν μοναζόντων μετὰ τὸν σιωπὴν παρουσία τοῦ πατρὸς αὐτοῦ). « Արձակէ ինձ զլեզուս յաւժարութիւնս. և արհամարհեմ զմարգկային աւրէնս յաղագս աւրինաց հոգւոյն և տայ մխիթարութեամբ

— ձԴ. Խաղաղական երկրորդ. Աւգնեաս տէր. (Εἰρηνικός Β΄. Εἰς τὴν σύμβασιν ἣν μετὰ τὴν σύστασιν ἐποιησάμεθα οἱ ὁμόδοξοι). « Ջերմ է նախանձ. հեզ՝ հոգի, մարգասէր, մանաւանդ ինքն մարգասիրութիւն. զբանս » :

երկայնամիտ՝ յոյս․ Նախանձ բորբոքէ․ հոգի հեզացուցանէ․ յոյս համբերէ․ սէր՝ ՚ի միասին կապէ »։

— ԺԵ․ Խաղաղական երրորդ․ (Εἰρηνικὸς Γ.' Λεχθεις εν Κονσταντίνουπολεοῦ ἐπὶ τῇ γένομένη τῷ λαῷ φτλονεικία, περὶ ἐπίσκοπου τινῶν διενεχθέντων πρὸς ἀλλήλους). « Խաղաղութիւն՝ սիրելի քաղցր և իրք և անուն․ զոր այժմ՝ ետու ժողովրդեանս․ և փոխարէն առի, ոչ գիտեմ եթէ ամենեցուն զհարազատ ձայն և զարժանաւոր հոգւոյն »։

— Գրիգորի Աստուածաբանի Անձիանզացւոյ եպիսկոպոսի պատասխանի յաղագս ՚ի ձեռնադրութենէն անհաւանութեան և հրաժարելոյ․ (Τῆς εἰς τὸν Πόντον φυγῆς ἕνεκεν, καὶ αὖθις ἐπανόδου ἐκεῖθεν μετὰ τὴν τοῦ πρεσβυτέρου χειροτονίαν). « Յաղթեցայ, և զպարտութիւն խոստովանիմ։ Հնազանդեցայ Տեառն և մաղթեցի զնա։ Զի ինձ երանելին Դաւիթ սկիզբն արասցէ բանիս, մանաւանդ որ Դաւթաւն խօսէր »։

— Նորին յինքն և ՚ի հայրն և ՚ի ժողովուրդն պատասխանի, յետ ձեռնադրութեան իւրոյ յերիցութիւն (Εἰς τὸν πατέρα εαὐτοῦ, ἡνίκ. ἐπετρεψεν αὐτὸν φροντίζευν τῆς Ναζιάνζου ἐκκλησίας). « Զբերան իմ բացի և ձգեցի զհոգին․ և տամ զիմ զամենայն և զիս ինքն հոգւոյն․ զգործ և զբան․ զանգործութիւն և զլռութիւն միայն կալցի զիս »։

— Նորին այլ պատասխանի յորժամ եպիսկոպոս ձեռնադրեցաւ․ (Ἀπολογητικός εἰς τὸν ἑαυτοῦ πατέρα Γρηγόριον, σύμπαροντος αὐτῷ Βασιλειοῦ). « Դարձեալ ՚ի վերայ իմ աւծումն և հոգի․ և դարձեալ ես սգացեալ և տխրեալ գնամ։ Սքանչանայք թերեւս․ և Եսայիաս նախ քան զտեսանել զփառսն Տեառն, և զաթոռն բարձր և ամբարձեալ և որ շուրջ զնովաւ սերովբէքն »։

— Նորին ՚ի հայրն իւր մերձ եղելոյ Բարողի․ (Εἰς τὸν ἑαυτοῦ πατέρα, ἐν ὧ Νόνναν μητέρα παραμυθητι-

κός, ἔιρηται δὲ ἐπὶ παρουσία Βασιλείου, εἰς ὄν καὶ προσίμιον ποιέται τοῦ λόγος). «Այրք Աստուծոյ և հաւատարիմ ծառայ, և հազարապետ Աստուծոյ խորհրդոցն, և այր ցանկութեանց հոգւոյն։ Վասն զի պապէս գերք կոչեն զանցեալսն»։

— Նորին 'ի Բասիլիոս Կեսարացի. (Εἰς Βασίλειον ἐπίσκοπον Καισαρείας Καππαδοκίας ἐπιτάφιος). «Հանգերձեալ էր ուրեմն բազում պատճառս մեզ բանից առաջի դնելով մեծն Բասիլիոս, քանզի պատուասիրէր իմովք բանիւք, որպէս ոչ երբէք այնոքիւք՝ որք իւրքն էին ամենեքումբք»։

— Նորին 'ի Կեսարիոս յեղբայր իւր. (Εἰς Καισάριον τὸν ἑαυτοῦ ἀδελφὸν ἐπιτάφιος). «Կարծէք զիս Թերեւս, սիրելիք և եղբարք և հարք, քաղցր և իրք և անուն, ողբս 'ի վերայ արկանել գնացելոյն և հառաչանս»։

— Նորին 'ի քոյրն իւր. (Εἰς τὴν ἀδελφὴν ἑαυτοῦ Γοργονίαν ἐπιτάφιος). «Զքոյրն գովելով ընդ ընդանիս սքանչանամ. բայց սակայն ոչ զի ընդանի՝ վասն այնորիկ սուտ. այլ զի ճշմարիտ, յաղագս այնորիկ գովելի է. և ճշմարիտ՝ ոչ զի իրաւացի միայն, այլ զի և ծանուցեալ և առ չնորհօն ոչ թուլացեալ լինի»։

— Նորին յԱթանասիոս եպիսկոպոս Աղեքսանդրացի. Εἰς τὸν μέγαν Ἀθανάσιον, ἀρχεπίσκοπον Ἀλεξάνδρειας). «ԶԱթանասիոս գովելով, զառաքինութիւն գովեցից։ Վասն զի նոյն և զնա ասել և զառաքինութիւն գովել. զի զամենայն յինքեան միահամուռ ունէր զառաքինութիւն»։

— Գրիգորի Աստուածաբանի ասացեալ 'ի Ծնունդըն Քրիստոսի. (Εἰς τὰ Θεοφάνια εἴτ' οὖν γενέθλια τοῦ Σοτῆρος, λόγος). «Քրիստոս ծնեալ լինի, փառաւորեցէք. Քրիստոս յերկնից՝ հանդիպեցարուք. Քրիստոս 'ի վերայ երկրի՝ բարձրացարուք. երգեցէք տեառն երգ նոր. երգեցէք տեառն ամենայն երկիր»։

* Ձեռագիրք կը յաւելուն, 'ի սկիզբն ճառիս. « Պատճառ Քրիստոս ծննեալ ճառին: Կայսրն Գրատիանոս ոչ ունելով որդի » . և կը շարունակեն պատմել զգալուստ Աստուածաբանին 'ի Կոստանդնուպօլիս յաւուրս Թէոդոս կայսեր, և Քրիստոսի ծննդեան օրը այս ճառը խօսելը:

— Նորին 'ի Յայտնութիւն տեառն. (Εἰς τὰ ἁγια-φῶτα τῶν Επιφανίων λόγος). « Դարձեալ իմ Յիսուս. և դարձեալ խորհուրդ, ոչ մոլորեցուցիչ և անզարդ, և ոչ 'ի հեթանոսական մոլորութենէն և յարբեցութենէն. քանզի այսպէս ես կոչեմ զնոցա պանծալիսն »:

* Ի վերջ ճառիս կը յաւելուն գրչագիրք. « Քանզի արտաքնոց փիլիսոփայից լուեալ զատենական բանս Գրիգորի գովէին զնա թէ այր խաւանական իցէ և իմաստասէր, այլ զի զԱստուած 'ի կնոջէ ծնեալ ասաց, Թերութիւն յաստուածաբանութեան նորա գնէին. վասն որոյ հրամանաւ Թէոդոսի կայսեր կոչեցան նոքա յեկեղեցին յերկրորդում աւուր յորում խօսեցաւ

— (Նորին) 'ի Մկրտութիւն Տեառն. (Εἰς τὸ ἅγιον Βάπτισμα, λόγος). « Երէկ զպայծառ լուսաւորութեան զաւր տօնեցաք, քանզի և վայել էր իսկ գոհութիւն գնել 'ի փրկութեան յաւուրն մերոյ, և յոյժ առաւել քան զհարսանեաց և զծննդեան և զանուանադրութեանն՝ որք մարմնոյն են սիրողք զպատանեկացն համարոյ »:

— Նորին խաւսք 'ի Պասքա և 'ի հեղգութիւն. (Λόγος εἰς τὴν βραδυτῆτα). « Յարութեան աւր և սկիզբն աջողակ, պայծառասցուք տօնիւս և միմեանց գիրկս արկցուք. ասասցուք եղբարք և որք ատեանն զմեզ »:

— Նորին 'ի Պասքա և 'ի սուրբ Պասքա. (Εἰς τὸ ἅγιον Πάσχα λόγος). « Ի պահու իմում, ասէ սքանչելին Ամբակում, և ես ընդ նմա այսաւր տուեցելոյ

յինձ 'ի հոգւոյն Աստուծոյ իշխանութեանս և տեսու-թեանս. և գիտեցից և ծանեայց » ։

— Նորին խաւսք 'ի Նոր կիրակէն. և 'ի յիշատակ սրբոյ վկային Մամասայ՝ քանզի 'ի Նոր կիրակէն կա-տարի. (Εἰς τὴν καινὴν κυριακήν, καὶ εἰς τὸ ἔαρ, καὶ εἰς τὸν μάρτυρα Μάμαντα λόγος). « Նաւակատիք պա-տուեսցին հին աւրէնք և գեղեցկապէս կալեալ. մա-նաւանդ եթէ նորքն պատուեսցին նաւակատիւքն, և այս ոչ մի անգամ՝ այլ եւ յոլովակի » ։

— Նորին 'ի Պենտեկոստէ և 'ի սուրբ Հոգին. (Εἰς τὴν ἅγιαν Πεντηκοστήν λόγος). « Յաղագս տաւնիս դուզնաքեայ ինչ իմաստասիրեսցուք, զի հոգեւորա-պէս տաւնեսցեմք. այլք՝ այլոց տաւն, բայց սպասա-ւորի բանիս բան » ։

— Նորին 'ի Ժողովողն. (Μετάφρασις εἰς τὸν Ἐκκλησιαστήν). « Այսպէս ասէ Սողոմոն՝ Դաւթայ թա-գաւորի և մարգարէի որդի, առ ամենայն Աստու-ծոյ եկեղեցւոյ, որ առ ամենայն արս՝ թագաւոր պա-տուականագոյն և մարգարէ իմաստնագոյն » ։

— Նորին առ հայրն իւր լռեալ և ազդեցեալ վասն հարուածոյ կարկտին. (Εἰς τὸν πατέρα σιωπῶντα διὰ τὴν πληγὴν τῆς χαλάζης). « Ընդէ՞ր լուծանէք զկարգ գովելի. հե՞մ բանադատէք զլեզու՝ աւրինաց ծառա-յել. վասն է՞ր յառաջ կոչէք զբան որ տեղի տայ հոգւոյն » ։

— Նորին յաղագս աղքատսիրութեան. (Περὶ φιλοπτωχίας). « Արք եղբարք և աղքատակիցք, քանզի աղքատք ամենեքեան և աստուածային շնորհին կա-րաւտեալք. թէպէտև այլք քան զայլս յառաջադէմ ունել թուի » ։*

* Էջմիածնի Մատենադարանին տպագիր ցուցակին մէջ (Թիւ 920) ուրիշ ճառ մ'ալ կը գտնենք նոյն խորագրով. « Գրիգորի Աստուածաբանի ասացեալ յաղագս աղքատսիրութեան. — Մի պարծեսցի, ասէ,

իմաստութիւնն յիմաստութիւն իւր, և մի՛ ճոխն 'ի փառաց թանձութիւն իւր, և մի՛ 'հզաւրն զաւրութեամբ իւրով»:

— Նորին 'ի Կիպրիանոս եպիսկոպոս և 'ի վկայ, յանդգաստանէ եկեալ յետ միոյ աւուր յիշատակին. (Εἰς τὸν ἄγιον' ιερομάρτυρα Κυπριανόν λόγος, ἐξ' ἀγροῦ μετά μι'αν τῆς μνείας ημέραν ἐπανήκοντος). «Փոքր ինչ և Կիպրիանոս զերծանէր 'ի մենջ, ո՛ տուգանիս. և դուք ներբէիք արգեւք՝ որք առաւել քան զամենեսեան ընդ այրն աքանչանայք, և սարկաւորականացք պատուէք զնա պատուովք և ժողովովք»:

— Նորին Գրիգորի 'ի Մակաբայեցիսն. (Εἰς τοὺς Μακκαβαίους λόγος). «Զինչ և Մակաբայեցիքս, վասն զի և ասցա է մերձաւոր տաւնս. ոչ 'ի բազմաց պատուեցելոց, զի ոչ զկնի Քրիստոսի նահատակեցան. բայց յամենեցունց պատիւ ընդունել արժանաւորացս, զի յաղագս հայրենեացն է ժուժկալութիւն»:

— ** Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի՝ առ Կեսարիոս վասն նորին խորհրդոյ. «Հաւանիմ իմաստնոցն բանից, եթէ հոգի ամենաբարի և աստուածասէր՝ յորժամ 'ի կապակցէն իւրմէ արձակի, այսինքն 'ի մարմնոյ աստի 'ի բաց վարիցի»:

— **Նորին ասացեալ 'ի մահն Մաքսիմիանոսի ուսումնակցին իւրոյ. (Discours sur Maxime,. son condisciple). «Ո՛վ բարեմիտ (բարեկամ) սիրելի և մերձաւոր հոգւոյ իմոյ. երկրորդ Յովնաթան կապեալ 'ի սէր Դաւթայ, քանզի դու զմեզ խանդակաթ արարեր 'ի քոյոյդ սիրոյ մերձաւորութենէ»:

— ** Սրբոյն Գրիգորի Աստուածաբանի ներբողեան 'ի սուրբ խաչն աստուածընկալ. (Panégyrique sur la Sainte Croix). «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ. ամենայն տառք մարգարէականք 'ի հոգւոյն սրբոյ ազդեցեալք՝ ըստ հոգւոյն արժանաւորեալք»:

— ** Գրիգորի Աստուածաբանի. (Fragment d'un

discours théologique). « Աստուած մարդ լինի. և որ նստի յերկինս երկրի ընդ առեւելս յիւրում փառսն » : (Ի Ճառընտիրս)։

— ** Սահմանք կանոնադրութեան երանելւոյն Գրիգորի Աստուածաբանի Աղեքսանդրու եպիսկոպոսի յաղագս ուղղափառութեան հաւատոյ և ապաշխարութեան յանցաւորաց, գլուխք երեսուն. (Trent canons). « Առաջնորդք որքութեան հաւատոյ, դաւանեալք սրբոյ ուխտիս քարոզիչք ճշմարտութեան, որք զբանին Աստուծոյ զինչուն ուղղաբանութեան գովեստաբանէք, նախ ուսջիք 'ի բաց խուսափել 'ի հերետիկոսաց » :

— Գրիգորի Աստուածաբանի առ Նաւարկութիւնն. (Εἰς τοὺς Αἰγυπτοῦ ἐπιδημήσαντας λόγος).

— Ա. « Որք յԵգիպտոսէ էն ողջունեմ, քանզի իրաւացի է. զի և յաւժարմտութեամբ իսկ եկին, նախանձու մախանացն յաղթեցին. յԵգիպտոսէ յայնմանէ' զոր փարթամացուցանէ գետն' յերկրէ անձրեւելով, և խորս առնելով զերկինս » :

— Բ. Նորին 'ի Մելիտոս եպիսկոպոս Անտիոքացի ասացեալ 'ի Կոստանդնուպոլիս. (Sur Mélitus, évêque d'Antioche, attribué à St. Grégoire de Nysse). « Աճեցոյց մեզ զթիւ առաքելոցն Նոր առաքեալս, որ թուեցաւ ընդ մետասան առաքելսն. ձգեցին սուրբքն առ ինքեանս զնմանաւորինական, զնահատակն' նահատակքն, զպսակեալն' պսակեալքն. զսուրբն հոգւով' մաքուրքն սրտիւք, զքարոզ բանին' սպասաւորք բանին » : *

* Գրիգորի Նիւսացւոյ ընծայեալ է Ճառս 'ի Յունաց։ (Հաս. Գ. յոյն, լատին. 'յ'էջ 587)։

— Գ. Նորին 'ի գալ եպիսկոպոսացն. (Συνταχτήριος εἰς τὴν τῶν ρν' ἐπισκόπων παρουσίαν λόγος). « Զբօրդ ձեզ մերքս, ով հովուակէրքդ և հովուակիցք, որոց գեղեցիկ են ոտք աւետարանչացդ զխաղաղութեան

և զբարիս հանդերձ որով եկիքդ։ Գեղեցիկք և առ մեզ, առ որս 'ի դէպ ժամանակի եկիք»։

— Դ. Նորին 'ի Գրիգորիոս եպիսկոպոս՝ Բարսղի մերձ կացելոյ, յետ ձեռնադրութեանն, և 'ի վկայսն. (Εἰς Γρηγόριον ἐπίσκοπον Νυσσῆς, τοῦ μεγάλου Βασιλείου ἀδελφόν, ἐπιστάντα μετὰ τὴν χειροτονίαν, λόγος). «Սիրելւոյ հաւատարմի ոչ ինչ է փոխանակ յէիցս և ոչ ինչ և ոչ կշիռք ինչ գեղեցկութեան նորա։ Բարեկամ հաւատարիմ ծածկոյթ զաւրաւոր և ամրացեալ թագաւորութեան, բարեկամ հաւատարիմ գանձ կենդանի»։

— Ե. Նորին առ կոչեցեալսն 'ի սկզբանն, և ոչ հանդիպեալս յետ երիցութեան. (Πρὸς τοὺς καλεσαντας ἐν τῇ ἀρχῇ, καὶ μὴ απαντήσαντας μετὰ τὸ γενέσθαι πρεσβήτερόν). «Զիա՞րդ հեղգէք 'ի մեր բանն, ով սիրելիք և եղբարք. և սակայն երագագոյնք առ 'ի բանադատել, և 'ի մերմէ 'ի ծայրաքաղաքէն 'ի բաց ձգեալ 'ի հանդարտութենէն, զոր ես քան զամենեսեան մանաւանդ ողջունեցի»*։

* Սկզբնաւորութիւն Ճառիս ըստ այլ ձեռագրաց. «Զիա՞րդ զոր առնուլ բաղձայիք՝ արհամարհէք առնուլ»։

— Զ. Նորին 'ի Մաքսիմոս յիմաստասէր յարտաքս սահմանելոյն եկեալ. (Ցունականին խորագիրն. Εἰς Ἥρωνα τὸν φιλόσοφον, ἀπὸ τῆς ἐξορίας ἐπανελθόντα). «Զիմաստասէրն գովեցից, թէպէտ և աշխատիմ մարմնովս, վասն զի իմաստասէր է. և գովեցից յիրաւի, քանզի նա իմաստասէր է. իսկ ես իմաստութեանն սպասաւոր»։

— Է. Նորին 'ի բանս և 'ի հաւասարեցուցիչն. (Εἰς τοὺς λόγους, καὶ εις τὸν ἐξισώτην Ἰουλιανόν). «Զինչ է բանաւորութիւնս զոր 'ի սիրոյս բանադատիմք. զինչ է իմաստութիւն և հանճար յաղագս որոյ ըստ իւրաքանչիւր ժողովոյ պատերազմիմք։ Ես և ոչ ինչ

գտանեմ ամենայն ուստեք զիս քննելով և հարցա-փորձելով» *։

* Եօթներորդ ճառիս սկզբնաւորութիւն ըստ այլ գրչագրաց. « Թէպէտ 'ի ժամանակի փառամոլութեան »։

— Ը. Նորին առ Յուլիանոս Թագաւոր. (Κατὰ Ἰουλιανοῦ βασιλέως στηλιτευτικός πρῶτος). « Լուարուք զայս ամենայն ազգք, ունկնդիր լերուք ամենեքեան որ բնակեալ էք յաշխարհի. քանզի կոչեմ զամենեսեան իբրև 'ի բարձր դիտանոցէ ումեքէ, և 'ի միջին շուրջ բարձրաւանդակէ մեծաւ և բարձր ձայնիւ քարոզութեամբ »*։

* Ութերորդ ճառիս սկզբնաւորութիւն ըստ այլ ձեռագրաց. « Զհելլենացւոյ լեզու և բան խօսել »։

— Թ. Նորին առ Յուլիանոս բան երկրորդ. (Κατὰ Ἰουλιανοῦ βασιλέως στηλιτευτικὸς δεύτερος). « Արդ այս մերոց բանից հանդէս կատարեցաւ և աւարտեցաւ. քանզի ցուցաք բաւականապէս զառնն զչարութիւնն որով գործեաց հակառակ մեզ. և որովք հանդերձեալ էր մեզ քան զմերձակայսն զմտաւ ածելով ծանրագոյնս »*։

* Սկիզբն ճառիս ըստ այլոց ձեռ. « Նախ առաջին մոլեալ կոխեաց զսրբութիւնսն »։

— Ժ. Նորին յինք յագարակէ անդրէն եկեալ. (Ἐξ ἀγροῦ ἐπανήκοντα). « Անձկայի առ ձեզ, ո՛վ մանկունք, և փոխարէն անձկացեալ լինէի հաւասար չափովք. քանզի համանիմ՝ պարտ է և հաւատ յաւելուլ 'ի բանս այս ձերով պարծանօք զոր ունիմք 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր »*։

* Տասներորդ ճառիս սկզբնաւորութիւն ըստ այլ ձեռ. « Զայս ճառս 'ի Կոստանդնուպօլիս ասացեալ է. որոց հասարակ է հոգին՝ հասարակ և կիրքն »։

— ԺԱ. Նորին յինքն և 'ի բանս երկրորդ. (Εἰς εαυτόν, καὶ πρὸς τοὺς λέγοντας ἐπιθυμεῖν αυτὸν τῆς κα-

ϑέδρας Κουσταντίνου πόλεως, λόγος). « Ես սքանչանամ զի՞ արդեօք իցէ զոր առ իմ բանս ախտացայք, և ուստի՞ այնքան յաղթեցայք 'ի մերձ ձայնես յարտաքս սահմանելոյս, և 'ի փոքունս թերեւս ոչ փափաքելի ինչ ունողէ » :

Ս. ԳՐԻԳՈՐ ՀՌՈՎՄԱՅ Ա.

(ST. GRÉGOIRE Ier, PAPE)

Այս մեծանուն հայրապետին (540-604) հետեւեալ գրուածոց թարգմանութիւնն ունինք 'ի նախնեաց : Թարգմանիչն պիտի տեսանենք 'ի յիշատակարանսն :

— « Գրիգորի սրբազան պապու եկեղեցուն Հռովմայ բանք պատմողականք առ Պետրոս նախասարկաւագն իւր վասն քաղաքավարութեան զանազան հարցն որք յԻտալիա փայլեցին, 'ի չորս գիրս » :

Ի սկիզբն գրոցն Յիշատակարան թարգմանչին՝ սրբոյ Լամբրոնեցւոյն Ներսիսի. « Գովելի է արդարև քան զամենայն ինչ ստանալ զառաքինութիւն. յորմէ ոչ ինքեանք միայն շահին, այլ և որք զկնի ուղիղ վարուցն հետեւին ... Արդ բազում փոյթ եղև 'ի հնումն և 'ի նորումս զվարուց սրբոցն զկատակ թողուլ գրով. որք պատմեցին զեղեալսն և մարգարէացան զառ յապա լինելոցն : Եւ ոչ միայն այս, այլ և վարք սրբոցն և առաքինութիւն արանցն որք յարևելս և յԵգիպտոս ճգնութեամբ երևեցան և շնորհաւք սուրբ հոգւոյն ամենայն գովութեան գերազանցեցին, գրով պատմի 'ի մէջ մեր : Այսպէս և որ մեծ է 'ի սուրբս հայրս մեր ամեներջանիկ Գրիգորիոս՝ մեծանուն քաղաքին Հռովմայ եղեալ պապ ; ընդ այլ գիրս բազումս զորս պաճուճաքանս և խոր մտածու-

Թեամբ խոստացաւ, երեւեցոյց եւ զվարս որք յՈստալեա փայլեցին սուրբք արք, եւ զժամանակս յորում էին եւ զտեղիս յոր եղեն։ Եւ արար 'ի հռովմայեցի լեզու. զոր վասն նոցին զգիրս։ Եւ անց ընդ մէջ ամս հարիւր վաթսուն եւ հինգ. եւ ոչ ոք փոյթ արար յեղաշրջել զգիրս զայս 'ի հռովմայեցի լեզուոյն յեղլադացի բարբառ։ — Իսկ Զաքարիա երջանիկն եւ հրեշտականման առաքելական աթոռոյն Հռովմայ պապ, որ 'ի վերուստ աստուածային օգնականութեամբն վերակոչեցաւ հովիւ եւ հովուապետ եւ առաջնորդ ուղղափառ հաւատոյն աստուածասէր եւ բարեսէր հոգին, յիս ամենայն առաքինութեան եւ ուղղութեան եդ զանձն իւր եւ յաշխատութիւնս յայս ...

« Իսկ արդ 'ի հուսկ յետին ժամանակս ընդ թուոյ Հայոց վեցհարիւր եւ քսան եւ ութ յամի՝ իմոյ Ներսեսի Տարսոնի եպիսկոպոսի 'ի մանկական հասակ աստուածասիրութեան եւ բարեկարգութեան տենչանօք շրջելով 'ի վանորայսն որք առընթեր մերձ քաղաքին Անտիոքայ՝ 'ի լերանն որ Ռասխանձիր կոչի յափն ծովուն, հիանայի 'ի տեսանելն զառաքինազարդ միայնութիւն եւ զճգնութիւն հռովմայեցի միաբանակեաց վանօրէիցն, որ այժմ կոչին փռանգք։ Եւ իբրեւ ընդ անընթել (sic) իրս ախորժեալ՝ հարցի ընդ ումն իմաստուն կրաւնաւոր որ 'ի Յունաց Բաժիլ անուն. Ուստի՞ սոցա այսքան ուղղութեան կարգաց շնորհ, որով գերազանց գտանին այսաւր ձեզ եւ մեզ։ Պատասխանեաց՝ 'ի Բենեդիկտոսէ. երանեալ հօրէն, զորոյ զվարսն պատմէ սուրբն Գրիգոր պապըն։ Եւ ունիք արդեւք զնոյն գիրս՝ ասացի։ Պատասխանեաց Այո։ Եւ եբեր առաջի իմ. եւ իմ փոքր մի վարժ գոլով հելլենացի գրոյն՝ ընթերցայ աստ անդ. եւ բորբոքեցաւ յիս ցանկութիւն աստուածային գրոցս թարգմանութեան։ Այլ զի ոչ կամէի անձամբ վճարել զգործն, խափանեցաւ յայնժամ. եւ

Թարգմանեցի զնորին Բենեդիկտոսի կարգ. և շարունակ կրաւնաւորաց նոյնժամայն 'ի լատին լեզուէն 'ի փռանգ. վանս սուրբ Պաւղոսի որ 'ի քաղաքն Անտիոք՝ 'ի ձեռն հասարակակից կրաւնաւոր միոյ 'ի նոցանէ Նիկոլ անուն։ Իսկ այս եկեալ 'ի վանսն որ Սիմանակլա կոչի հուպ Անարզաբոյ, յորում բազում գրեանք 'ի յունական գիրս աւանդեալ է, մանրամասնաբար խուզեալ գտի զայս գիրս, և ջրձաւեալ 'ի վերայ այնչափ խնդութեամբ, որպէս գտանեն փորձքն ուսումնասիրութեան, որ է նոյն և աստուածսիրութիւն. առեալ գնացի 'ի հայրապետական աթոռն՝ որ կոչի Հռոմկլայ յափն Եփրատայ, և կամաւք տեառն իմոյ կաթուղիկոսին Գրիգորոյ Թարգմանեցի զսա և զմեկնութիւն Յայտնութեանն Յովհաննու 'ի ձեռն առաքինի վարդապետին Յերուսաղէմի Կոստանդեայ։ Եւ խնդրանաւ ակնարկութեամբ յեղազեալ և ուղղեալ թողի զսոյն յեկեղեցի Հայոց առաջոյց բարեաց և հրճուականք մխիթարութեան զբաղձելոցն 'ի վարս առաքինութեան։ Արդ որպէս ընկալաւ զսա եկեղեցին հռովմայեցի 'ի յերջանիկ հաւրն Գրիգորի պատմութենէն, և եկեղեցին Յունաց 'ի թարգմանութենէ սրբոյ հայրապետին Զաքարիայ, նոյնպէս և դուք՝ որ հայաստանս եկեղեցւոյ էք մանկունք, ընկալարուք 'ի նուաստ պաշտաւնակցէ ձերմէ զսոյն, և հաւատով պատուեալ մխիթարեցէք զանձինս 'ի յոյսն որ 'ի Քրիստոս »։

— « Գրիգորի սրբազան պապուն Հռովմայ առ Պետրոս նախասարկաւագ նորին եկեղեցւոյ։ Գիրք առաջին »։ (Գլուխք քսանևերկու)։ Ի վերջ առաջին գըրոցն հետագայ յիշատակարանս 'ի թարգմանչէն.

« ԶՅոհաննէս եպիսկոպոս եղբայր թագաւորին Հեթմոյ »,
« Ներսէս տըրուպ և անարժան
Սուրբ պատմութեանս սիրով թարգման
Յորոց՝ սովաւ հոգւով ըղձման
Հայցեմ ներումըն թողութեան »։

— « Սրբազան հայրապետին Հռոմայ Գրիգորի առ Պետրոս Նախասարկաւագ պատասխանի վասն քաղաքավարութեան Հօրն Բենեդիկտոսի։ Գիրք երկրորդ » ։ (Գլուխք երեսուներկու)։

— « Նորին սրբազան հայրապետին Գրիգորի առ Պետրոս Նախասարկաւագ՝ Գիրք երրորդ »։ (Գլուխք երեսունեչորս)։ Այս յիշատակարան.

« Հաւատարիմ այս վկայիս դու հաւատա
Եւ ըղձանքըս զոր պատմէ սիրով գըրես.
Զի և այսուր մերձ ի յԱստուած զայս ըղձեսցես,
Հաստատեսցես ընդ նա կապեալ քան զազգս որ կայ,
Ցնծասցեմ ի սուրբ քաղաքն յոր ընթացայ;
Տեսի պըտուղ սիրոյ սոցին յոր ոչ հասայ.
Որովք ջեռեալ որք յարեւմուտս սուրբք նոցա՝
Թէ առն պըտուղ զայս աքանչելիս՝ ոչ զարմասցայ »։

« Արդ աղաչեմ զընթերցողսդ և զիմաստութեան սիրողսդ իմանալ զխորս իմաստիցն Աստուծոյ քննութեամբս, զսուրբ եպիսկոպոսն՝ զեղբայր Թագաւորին Հայոց զՅովհաննէս զբարեմիտն և զբարեսէրն և զառխմն Թարգմանութեան զստացող սորին՝ մաղթեցէք Քրիստոսի յաստիս խաղաղութեամբ պահել, և 'ի հանդերձեալն՝ ընդ սրբոց իւրոց յերկնից արքայութիւնն ընդունել » ։

— Սրբազան հայրապետին Հռովմայ Գրիգորի ասացեալ՝ վասն զի ճշմարիտ է հոգեւորն քան զմարմնաւորն։ Գիրք չորրորդ »։ (Գլուխք քառասուն)։

Ս. ԳՐԻԳՈՐ ՆԻՒՍԱՑԻ

(ST. GRÉGOIRE DE NYSSE)

Եղբայր մեծին Բարսղի, և իրեն հաւասար նշանաւոր 'ի տարեգիրս եկեղեցական պատմութեան. ծընած՝ ինչպէս հաւանական կը թուի, 'ի Սեբաստիա փոքուն Հայոց (331, + 394)։ Հայկական թարգմանութեամբ մեզի ծանօթ երկասիրութիւններէն, ոմանք ոսկեղէն դարու կը վերաբերին, և այլք ութերորդին։

— Գրիգորի եպիսկոպոսի Նիւսեայ խօսք յինն երանութիւնն. (Γρηγόριου ἐπισκοποῦ Νύσσης εἰς τοὺς μακαριοδούς).

— Բան առաջին. Երանի՛ աղքատաց հոգւով. «Ալգեւք այնպիսի ժողովելոյս իցէ, մինչ զի աշակերտ լինելով բանին՝ և ընդ նմա ելանիցէ յերկրէ հովտացս և 'ի նուաստագոյն իմաստից 'ի հոգեւոր լեառնն, 'ի բարձր տեսութիւնն»։

Մեր մատենագրութեան մէջ՝ ինչպէս Գրիգորի Աստուածաբանին, և այլոց ոմանց 'ի վարդապետաց եկեղեցւոյ՝ տանիկ նաև Նիւսացւոյս գրոց լուծմունք կամ պարզաբանութիւնք կը գտնուին, չըստ անգամ յանանուն կամ մեզի յանծանօթ մատենագրաց։ Յաճախ ընտիր, հմտալից և հետաքննական են այս երկասիրութիւնք։ Ինն երանութեանց համար այսպէս կ'աւանդի 'ի սկիզբն լուծմանցն. «Ոմանք ասեն թէ զհինգ գիրքն 'ի խնդրոյ Աստուածաբանին գրեաց. որ է մինն 'ի նոցանէ ինն երանութիւնն. և այլք ասեն թէ ինքն յինքենէ շարժեցաւ գրել. և սկիզբն զայս ասեն իւրոյ վարդապետութեանն. զի խաւսեցաւ

տաւղին ժողովրդեանն և ընդունելի եղև. ապա և այլոցն հոգք եղև գրել և տալ»։

— Նորին բան երկրորդ. Երանելիք հեզք զի նոքա ժառանգեսցեն զերկիր. «Որք սանդղովք ոմամբք 'ի բարձրագոյնս ելանեն, յարաժամ յառաջին աստիճանն ելանեն, և 'ի նմանէ 'ի գերագոյն ամբառնան. և դարձեալ երկրորդն մատուցանէ երրորդին»։

— Նորին բան երրորդ. Երանելի սգաւորաց զի նոքա մխիթարեսցին. «Եւ եւս 'ի գագաթն լերինն 'ի վեր ելեալ. այլ պակաւքն 'ի խոնարհ ընդ լերամբն եմք խմտոտեցն, Թէպէտև երկուս ոմանս արդէն ճանապարհորդեցաք գահաւանդակս»։

— Նորին բան չորրորդ. Երանելիք քաղցեալք և ծարաւիք արդարութեան, զի նոքա յագեսցին. «Ստամոքսացաւն և որք չարաչարն կերակրին՝ ասեն որք 'ի բժշկականին են հմուտք, չար ոմանց մաղձոց և աւելորդաց 'ի վերին որովայնն 'ի միասին հոսեցելոց. միշտ Թուին լցեալք և յագք գոլ»։

— Նորին բան հինգերորդ. Երանելիք ողորմածք, զի նոքա ողորմութիւն գտցեն. «Թուի ինձ այնպիսի իմն որով տեսութեամբ ոմամբ Յակոբ առակախրատեցաւ, սանդուղս տեսեալ յերկրէ յերկինս բարձրութեամբ ժամանեալ. և զԱստուած 'ի վերայ նորին հաստատեալ»։

— Նորին բան վեցերորդ. Երանելիք մաքուրք սրտիւ, զի նոքա զԱստուած տեսցեն. «Զոր ինչ կրել պատաշաճ լինի, որք 'ի բարձրագունէ իմիքէ 'ի ծայրէ լերանցն յանկարծ ուրեք յառիցեն 'ի խարս, զնոյն իմն կրեցին միտքս»։

— Նորին բան եւթներորդ. Երանելիք խաղաղարարք, զի նոքա որդիք Աստուծոյ կոչեսցին. «Աստուածայնոց վկայութեանն խորանահարութիւն՝ զոր 'ի վերինն Աստուծոյ ցուցեալ աւրինակն աւրինադիրն Իսրայէլացւոց կազմեաց, ամենայն ուրեք և քա-

համայականք իւրաքանչիւր որ էր որ միանգամ ընդմիջական 'ի ներքս բովանդակեցան»։

— Բան ութերորդ. Երանելիք հալածեալք յաղագս արդարութեան՝ զի նոցա է արքայութիւնն երկնից. «Զինչ ութերորդին 'ի մարգարէէն խորհուրդ՝ յերկուս աղմուկերգութիւնս նախակարգեալ. զինչ և մաքրութիւն և Թլփատութեանն օրէնադրութիւն յութերորդումն երկոքեան պահպանեալք»։

— Նորին բան իններորդ. Ի Հայր մեր որ յերկինս. (Εἰς τὴν προσευχήν). «Զաղաւթից մեզ զկարգապետութիւն աստուածայինս պատմէ բան. որովք արժանաւորաց իւրոց աշակերտացն փութով ծանաւթութիւն լինէր աղաւթիցն հայցուած»։

— Նորին բան տասներորդ. Ի Հայր մեր որ յերկինս. (Λόγος β.′ Πάτερ ἡμῶν ὅς ἐν τοῖς οὐρανοῖς). «Յորժամ մերձեցուցանէր մեզ Մովսէս 'ի լերինն խորհրդածութիւն զիսրայէլական ժողովուրդն, ոչ յառաջագոյն զնոսա Աստուծոյ երեւմանն արժանիս արար՝ նախ քան սրբութեամբ և շքեղանութեամբ աւրինագրեալ ժողովրդեանն զմաքրութիւն»։

— Նորին բան մետասաներորդ. «Որք զատուեր հանդերձելոց բարեացն ունէին աւրէնքն, և պատմութեամբք նմամբք տպաւորականաւք կանխաւ ձայնէին զճշմարտութիւնն, յորժամ յանմանելիսն մերձեցուցանէին աղաւթել Աստուծոյ զքահանայն»։

— Նորին բան երկոտասաներորդ. «Լուայ յամէնէ 'ի բժշկականէ արուեստաբար յաղագս առողջական մարմնոյ բնախաւսելով. եղեցի Թերեւս և մեզ առ 'ի հոգւոյս քաղցրութիւն ոչ հեռի 'ի գիտութեանէ ասացեալն»։

— Նորին բան երեքտասաներորդ. «Ելն յառաջանալով բանս 'ի նոյն ինքն յառաքինութեանն ծայր.

քանզի ներկարարագրէ աղաւթիցն բանիւք որպէս որ լի-
նել տխորժելի է զԱստուծոյ մաղթողն. ոչ եւս գրե-
թէ 'ի մարդկային բնութեանս տաղեմանս ցուցեալ-
այլ ընդ Աստուծոյ ինքեան առաքինութեամբն խառ-
նեցեալ » :

— Նորին բան չորեքտասաներորդ. « Եկն և 'ի
մեզ հոգևոր խրախճանութեանս տարատաւորութիւն՝
ճաշակել մանաւանդ յայլոց, քան թէ 'ի մէնջ տալ
այլոց պատաշաճագոյն եղելոց. և սակայն եւ սմե-
ներին իսկ մաղթէի ապահարկ լինել յայնպիսեացն
հարկաց » :

Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ խօսք նորին ժո-
ղովողին: Մեկնութիւն առաջիկայ բանիցս. Բանք
ժողովողին որդւոյ Դաւթի թագաւորի Իսրայելի
յԵրուսաղէմ. (Ῥήματα Ἐκκλησιαστοῦ ἰοῦ Δαβίδ
βασιλέως Ἰσραὴλ ἐν Ἱερουσαλήμ). « Ունայնութիւն
ունայնութեանց ասաց ժողովողն ... Առաջի կայ մեզ
ժողովողիս մեկնութիւն, համառօտ ունելով մեծու-
թեամբ օգտութեանն զվաստակ տեսութեանս » :

— Բան երկրորդ. « Ես, ասէ ժողովողն: Ուսաք
ա՛ է ժողովողն, որ զմոլորեալսն և զցրուեալսն ժողո-
վեաց 'ի միասին, և արար մի եկեղեցի, մի հաւտ, զի
մի ոք իցէ անլուր քաղցր հովուին ձայնի » :

— Բան երրորդ. « Զինչ յետ այսորիկ եկեղեցա-
կանս վարդապետէ ձայն, ժամ է այսուհետև քննել:
Ուսաք յառաջինսն զոր ինչ ուսաքն, թէ որ զամե-
նայն ժողովեաց զարարածս, զկորուսեալսն խնդ-
րեաց և զմոլորեալսն հաւաքեաց 'ի մի » :

— Բան չորրորդ. « Տակաւին եւս մեզ խոստովա-
նութեանս ունի բան. քանզի գրէ թէ ընդ ամենայն
կարգաւ անցանէ, որ զխուռն պատմէ իրս, 'ի ձեռն-
որոց՝ կենացս այսոցիկ ընդունայնութիւնք ճանա-
չին » :

— Բան հինգերորդ. « Այժմ մեզ 'ի մեծէ եկե-

շեցուցիս առաջնորդէ. 'ի բարձրագոյնս ուսմանց ընծէ վարդապետութիւն. վասն զի մաքրեալ կանխաւ զուգիս 'ի ձեռն յառաջագոյն առացելոցն բանից. և յամենայնէ 'ի բաց կացեալ՝ 'ի սնոտեացն երկելոց մարմնական ցանկութեանց »:

— Բան վեցերորդ. « Ամենեցուն ժամանակ և ժամ ամենայն իրի ընդ երկնաւ. այս առաջիկայիցս մեզ բանիցս տեսութիւնս սկիզբն. աշխատութիւն քննութեանս ոչ փոքր, և յաշխատութեանս շահ վաստակոց արժանաւոր »:

— Բան եօթներորդ. « Ժամանակ ընկենլոյ քարինս և ժամանակ ժողովելոյ քարինս: Աճեցոյց որդէն իսկ որովք ուսոյց, զլսողացն զայժ եկեղեցական զաւրութեանց գասապետս. մինչ զի ընկենուլ կարող լինելոյ զհակառակամարտն »:

— Բան ութերորդ. « Ժամանակ սիրելոյ և ժամանակ ատելոյ: Ո՞ արդեւք այնպէս իցէ լսելովք մաքրեալ, մինչ զի մաքրապէս ընդունել յաղագս սիրոյս բան. ոչինչ զազտեզի սիրելութեանն իրս յինքն 'ի ներքս բերցէ »:

— Յորդորումն մանկանց 'ի կուսութիւն: Նորին Գրիգորի Նիւսացւոյ յաղագս Կուսութեան, եթէ սեպհական է աստուածայնոյ և անմարմնոյ բնութեանն կուսութիւն. (Περὶ παρθενείας. Ἐπιστολή προτρεπτικὴ εἰς τὸν κανάρετὴν βίον). « Բաղձանք կանխաւեալք կուսութիւն. առ ցոյց բանի պատճառս բերըն ապտոլ պատուասիրացն զպատճառսն. 'ի տուընն հաշակել բանիւ, և եղելովք ուղղութեամբ շնորհացն զուարճանալ »: (Քսան և երկու գլուխք բանից 'ի մեր թարգմանութեան. իսկ 'ի յոյն սկզբնագրին քսան և չորս)* :

* Իլուծմ. « Բարսեղ և Աստուածաբանն պատշաճ համարեցան գովել զկուսութիւնն. բայց ինքեանք ոչ ձեռնամուխ եղեն յիրսն. զի մի թուեսցի թէ

վասն ինքեանց բարգաւաճութեան հաճոյ թուեցաւ մեծարել զկուսութիւն. առաջնեցին զԳրիգոր Նիւսացի զի խօսեսցի ձայնս կուսութեան, և մեծ ցուցանել զերան և սեփական Աստուծոյ։ Եւ այլք ասեն թէ ինքն յինքենէ չարժեալ գրեաց զայն. որ Աստուծոյ առանձին իմանի բնութեանն, հնար է և մարդկան անձամբ հաղորդս լինել»։

— Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ թուղթ յառաջս Երգոյ Երգոց. (Γρηγόριαυ Νυσσῆς ἐξήγοις ἀκριβὴς εἰς τὰ ᾄσματα τῶν ᾀσμάτων τοῦ Σολομῶντος, προοίμιον). «Ընկալայ որպէս վայել էր քում պարկեշտ վարուցդ և սուրբ անձինդ՝ զփոյթն յաղագս Երգոյ երգոցն. դէմ յանդիման և գրով մեզ հրամայեցեր, որպէս զի ըստ յարմարականութեանն երևելի լինելով որ ծածկեալ իցէ 'ի բանսն իմաստասիրութիւնն»։

— Ճառք Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ առաջին. Երգ երգոց. (Εἰς τὰ ᾄσματα τῶν ᾀσμάτων, λόγος α΄). «Որք միանգամ ըստ խրատուն Պաւղոսի զհին մարդն իբրև զգեստ ինչ աղտեղի մերկացաք հանդերձ գործովքն և ցանկութեամբք իւրովք, և զլուսաւոր պատմուճանն առեալ՝ զոր 'ի լերինն այլափոխելով զդէմս իւր եցոյց՝ 'ի ձեան մաքրութեան վարուցն զգեցայք»։

— Ճառք երկրորդ. (Λόγος β΄.). «Սեաւ եմ ես և գեղեցիկ դստերք Երուսաղեմի ... Աստուածային վեհութեան խորանին ոչ համապատիւ էր 'ի ներքսնում ծածկեցելոյ գեղեցկութեանն արտաքոյ յառաջ երևեալն»։

— Ճառք երրորդ. (Λόγος γ΄.). «Ձիոյն իմոյ 'ի կառսն Փարաւոնի ... Որ նախ քան զմերձակայ ընթերցուածս 'ի յառաջաբանս Երգոյ երգոցս մեզ ուսեալ եղեն՝ նմանութիւն ունի յետ գիշերոյն եղելոյ նորին առաւաւտին ծագմանն»։

— Խաւսք չորրորդ. (Λόγος δ'.). « Ահա ես գեղե-ցիկ մերձաւոր իմ... Ասեն որք զոսկի արուեստա-ւոր մաքրեն, եթէ ընդ ումեք աղտեղագոյն նիւթոյ ըստ դրժանաց խառնեսցի և խոտան լինիցի, զպայ-ծառութեան գեղեցկութիւնն բովաց հրով բժշկեն զանգունութիւնն »:

— Խաւսք հինգերորդ. (Λόγος ε'). « Ձայն եղ-բաւրորդւոյ իմոյ, ահա սա եկն... Որք այժմ ըն-թերցուածովս առաջի երթան մեզ յԵրգոյ երգոցս իմաստասիրութեննէս, 'ի փոփոխումն ածէ տեսու-թեանն գերակայիցն իւրեանց, և տրամութիւն ամ-բարէ հոգիս մեր »:

— Խաւսք վեցերորդ. (Λόγος ϛ'). « Յանկողնի ի-մում 'ի գիշերի խնդրեցի... Դարձեալ մեծամեծ և բարձրագոյն աւանդութիւնս յԵրգոյ երգոցս մեր-ձակայ ընթերցուածովք խրատիմք. քանզի իմաս-տասիրութիւն է հարսին պատմութիւն, որովք յաղագս իւր անցանէ բանիւ »:

— Խաւսք եւթներորդ. (Λόγος ζ'). « Դահաւորակ արար իւր արքայ Սողոմոն... բազում իրաւք թագա-ւորն Սողոմոն յաւրինակ ճշմարիտ թագաւորին ա-ռեալ լինի. յոլովիւք ասեմ լաւագունաւք յաղագս նորա 'ի սուրբ գրոց պատմեցելովք »:

— Խաւսք ութերորդ. (Λόγος η'.). « Եկ 'ի Լիբա-նանէ հարսն... Որ ընդ մեծամեծ տեսութիւնս էանց բանիւ առ Կորնթացիսն մեծն առաքեալ, յորժամ յերկուանայր յաղագս իւրոյ բնութեանն ասելով. եթէ մարմնին է, և եթէ միտք 'ի ժամանակի գրաւ-աին խորհրդոյ »:

— Խաւսք իններորդ. (Λόγος θ'.). « Զի՞ գեղեցկա-ցան ստինք քո քոյր իմ հարսն... Եթէ յարեայք ընդ Քրիստոսի, զվերինն խորհեցարուք, մի՛ զերկրա-յինսն. ասէ զայսոսիկ մեզ որ Քրիստոսիւն խաւսիւր. քանզի մեռայք, ասէ, և կեանքն ձեր ծածկեալ են ընդ Քրիստոսիւ յԱստուած »:

— Թուղթ տասներորդ. (Λόγος ι'). «Արի հիւսիս և եկ հարաւ... Այժմ առաջի եդեալ մեզ աստուածային բանիցս տեսութիւն յԵրգոյ երգոցս յարմարութենէ՝ դժուարահասանելի իմն և ծածկեալ իմաստութեամբ յանձնառելին»:

— Թուղթ մետասաներորդ. (Λόγος ια'). «Ձայն եղբաւրորդւոյ իմոյ բախէ զդուռն... Եւ այսոքիկ 'ի մեծամեծացն սեռան պատուիրանացն են, 'ի ձեռն որոց միայն աշակերտելոցն բանիւս՝ իբրև զհող ինչ զնիւթական բնութիւնս յինքեանց 'ի բաց թաւթափելով»:

— Թուղթ երկոտասաներորդ. (Λόγος ιβ'). «Յարեայ ես բանալ զդուռն եղբաւրորդւոյ իմոյ... Որք յանդնդային գնացսն յուսով ընչեղութեանն առաքին՝ յորժամ զնաւն 'ի նաւահանգստէն շարժեն և 'ի խորսն դարձուցանեն ղեկաւք զխելս նաւին, որ 'ի վերայ ղեկացն անցեալ նստի՝ աղաւթս առնէ նաւարկութեանն առաջնորդ զԱստուած լինել»:

— Թուղթ երեքտասաներորդ. (Λόγος ιγ'). «Երդմնեցուցի զձեզ, դստերք Երուսաղեմի... Զինչ է եղբաւրորդին քո յեղբաւրորդեաց՝ զի այդպէս երդմնեցուցանես զմեզ... Որ 'ի ձեռն Մովսիսի աւրինադրեաց զխորհուրդ աւրինացն, և ելից ինքեամբ զբովանդակ զաւրէնսն և զմարգարէս»:

— Բան չորեքտասան. (Λόγος ιδ'). «Ծնաւտք նորա իբրև տաշտք խնկոց իւղեփեցաց... Որ անձնենք կաթամբն կերակրէ զտղայս 'ի հոգեւոր հասակին, դաստիարակն՝ որպէս ասէ ինքն առաքեալ, այն ինչ ծնեցելոյն յեկեղեցւոջ լինելով»:*

* Ի լուծմ. «Զգիրքս ասեն գրեաց Գրիգոր 'ի խնդրոյ Թէոդոսս Թագաւորի. զի յորժամ առնէր խրախուսութիւն Թագաւորն, երգիչք և քնարահարք ընդ երգս ցանկականին խառնէին և զբանս Երգոյ երգոցս. վասն որոյ լուաւ Գրիգոր և առաքեաց առ

նա Թուղթ և ասաց մի՛ առ արհամարհել զհոգին սուրբ. և ապա առաքեաց և կոչեաց զնա, և խնդրեաց մեկնել զգիրքս. և երկրորդ անգամ 'ի ձեռն Թղթոյ փութացոյց: Եւ այլք ասեն թէ աշխատեան ումն միայնակեաց գլուխ՝ անուն Պաւղոս, խնդրեաց զգիրքս մեկնել դէմ ընդ դէմ, և այլ փութացոյց Թղթով. զի անապատաւորքն ոչ ընդունէին զբանս գրոցս աստուածաշունչ, այլ երգ մարմնական » :

* Հայ Թարգմանութեան մէջ կը պակսի վերջին Յաւդն հնգետասաներորդ՝ զոր ունի յոյն օրիգինագիրն: Հնագոյն գրչագիր մը՝ երկաթագիր ։ կը յիշատակուի առ. Ջալալեան արքեպիսկոպոսի (Ճանապարհորդ. Բ. Հատ.) հետեւեալ յիշատակարանաւ, « ԻՆԻԲ = (973) Թուականութեան Հայոց և ՁԻԵ հռոմի Թուականութեանն գրեցաւ մեկնութիւն Երգոց երգոյս 'ի գաւառին Տարաւնոյ, ձեռամբ Գէորգեայ անարժան գրչի, հրամանաւ հաւր Կիւրակոսի և համակամութեամբ եղբարցս, վասն յիշատակի հոգւոց իւրեանց, 'ի ժամանակի փոխման յաշխարհէ Մամիկոնենից եպիսկոպոսի. և յետ մահուան նորա բազում չփոթութեան և հակառակութիւն եղեւ վասն ձեռնադրելոյ եպիսկոպոս: Արդ աղաչեմ զամենեսեան զընթերցաւղսդ, յորժամ ընթեռնուք զլուսաւոր և զբազմաֆայլ գիրս սորայն Գրիգորի Նիւսացւոյ եղբաւրս Բարսղի և լուսաւորիք և աւգտիք 'ի նմանէ ընթերցմամբ և կամ գրչութեամբ, զստացաւղս սորա հանդերձ եղբարբքս յաղաւթս յիշեսջիք 'ի Տէր ... Աղաչեմ և ես որ գրեցի անարժանս երկնից և երկրի և յետին քան զամենեսեան և վերջացեալս յամենայն գործոց բարեաց և որ ընդ իս եղբարքս՝ յիշատակի արժանի արասջիք զմեզ 'ի Քրիստոս ...

« Զանպիտան կազմիչս գրոցս զՅովհան յաղաւթս յիշեսջիք: Թուականս ԻԸ էր յորում աս կազմեցի (Սարկաւագայ Թուական է = 411):

— Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ յաղագս
կազմութեան մարդոյ. «Զմարդն 'ի հոգւոյ իմանալւոյ
և 'ի մարմնոյ զգալեցիկ կազմեալ. և այնպէս բարւոք՝
որպէս ոչ հնար գոլ այլազգ լինել կամ հաստիլ թուե-
ցեալ բաղմանց և արանց բարեաց»: Ի վերջ գրոցն յի-
շատակարան թարգմանչին. «Ի վեցհազարերորդի
և երկերիւրերորդի քսաներորդի եւթներորդի ա-
րարածոց աշխարհիս. ըստ յունարէն թուոյ 'ի
չորեքտասաներորդի ընդիքտիոնին. իսկ ըստ հա-
յուման ՄԻԱ առաջին ամի թագաւորութեանն Լեւոնի.
Թարգմանեցան գիրք սրբոյն Գրիգորի Նիւսիա ե-
պիսկոպոսի 'ի սորա օրինակաց 'ի Կոստանդնուպօ-
լիս. 'ի ձեռն Դաւթի հիւպատոսի և թագաւորական
սեղանոյն յանկիւնառի. 'ի ձեռն Սաւեփ" քահա-
նայի և քերթողի. աշակերտի տեառն Մովսէսի Սիւ-
նեաց: Յիշեցէք զնոսա ընդ աւրինակողքս, և փոխե-
ցէք զբանս յիշատակի 'ի յոյս փրկութեան աշխա-
տողացդ. և յիշողացդ առ հասարակ ձեզ և մեզ
ողորմեսցի Քրիստոս»:

Առաջելեանն 'ի պատմութեանն վկայէ վասն Սիւ-
նեցւոյն. «Ծանօթացեալ ('ի Կ. Պոլիս) մեծ հիւպատո-
սի միում Դաւթի անուն, և թագաւորական սեղանոյն
կենառի, և ձեռնտուութեամբ նորին թարգմանէ
զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնեսիոսի. և դնէ ինքն
գծուարագոյն և խրթին բանիցն լուծումն բան առ
բան. թարգմանէ և զգիրսն քաղցրաբան Գրիգորի
Նիւսացւոյ զբնութեան և զկազմութեան»:

— Գրիգորի եպիսկոպոսի եղբաւր Բարսղի՝ Յե-
ռութիւն մարդոյն կազմութեան: Գլուխ յորում է
իմն մանաւորական յաղագս աշխարհիս բնախօ-
սութեան, և գեղեցիկ իմն և պայծառ պատմու-
թիւն. «Զի եթէ ընդ այնոսիկ որ 'ի ձեռն ստա-
ցուածոյն պարտ է պատուել զայնոսիկ որ 'ի ձեռն
առաքինութեանն զանազանեալ են»:

— Ի յիշատակ հանգուցելոց 'ի Քրիստոս ննջեցելոց. երանելւոյ Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի 'ի յարութիւն մեռելոց. « Այդ Թերեւս ոք առ լուծեալ և քակտեալ մարմինն հայեցեալ, և առ չափ իւրոյ զաւրութեանն՝ զաստուածութիւնն դատեսցի » * : * Մասն է 'ի Մարդակազմութեան գրոցն. Յոյնն Ա. 108, գլ. 28:

— ** Երանելւոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ ասացեալ 'ի Թաղումն Տեառն և 'ի Յովսէփ Արեմաթացի. « Գովելի է ինձ և այս եկեղեցական աւուրքն, որ պատրաստեաց մեզ այսաւր զերեքաւրեայ մահուան և յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի զյիշատակս » :

— Ներբողեան ասացեալ 'ի սուրբ վկայն Քրիստոսի Թէոդորոս, որոյ յիշատակն կատարի որ 'ի սուրբ քառասնորդացն յառաջին շաբաթ աւուրն. ('Εγκώμιον εἰς τὸν μέγαν μάρτυρα Θεόδωρον). « Ո՛վ դուք Քրիստոսի նոր ժողովուրդք, սուրբ հաւատ, թագաւորեալ քահանայութիւն. որք յամենայն կողմանց, քաղաքացիք իսկ և գաւառացիք, 'ի միասին հասեալ լինիք հանդիսիւ » :

— Երանելւոյն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ 'ի վարս և 'ի սքանչելիս սրբոյն Գրիգորի Սքանչելագործի Նէոկեսարեայ եպիսկոպոսի. (Εἰς τὸν βίον τοῦ ἁγίου Γρηγορίου τοῦ Θαυματουργοῦ λόγος).

Մեր Մատենադարանին Ճառընտրաց մէջ հնագոյն մը (Բ) այսպիսի ունի սկզբնաւորութիւն ներբողին. « Էին ամենայն ուստեք հաւաքեալ մանկունք, որք յիմաստութիւն և 'ի բժշկութիւն փութացեալք » : Իսկ ուրիշ մը, նոյնպէս ընտիր և հնագիր, համեմատ յոյն բնագրին (Հատ. Գ. 534) կանխաբանութեամբ մը կը սկսի հետեւեալ խօսքերով. « Այս դիտաւորութիւնն մերոյս բանի առաջի կայ յարմարումն բանիս պատմութեանս վասն Գրիգորի Սքանչելագործի » :

— ** *Խօսք 'ի մանկունսն Բեթղեհեմի որ կոտորեցան 'ի Հերովդէէ*. (Sur les Saints Innocents massacrés par Hérode). « *Դարձեալ ծերունիս ես առ 'ի բանիցս ածիմ յասպարէս. դարձեալ որպէս զմայր ոք որ 'ի բազում մանկանութեանց թշուառացեալ, զախտաժէտ և զաղքատ իմոց մտաց սակին ձմլել հարկաւորիմ* » * ։

* Ի *տպագիր ցուցակի* Մատենադարանին *որ յէջմիածին՝ այսպէս կը գտնենք նշանակուած զխորագիր ճառիս*. « *Գրիգորի Նիւսացւոյ ասացեալ 'ի մանկունսն Բեթղեհեմի՝ առաջին ճառ* » ։ (*Թիւ գրչ*. 917) ։

« *Գրիգորի Նիւսացւոյ խօսք երկրորդ 'ի մանկունսն Բեթղեհեմի* » ։

— Ի *յիշատակի սրբոյն Ստեփաննոսի առաջին սարկաւագի և նախավկայի՝ երանելւոյն Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի յինն երանութեանց*. « *Տէրն մեր և արարիչ զապականութիւն անտես առնելով զբնութեանս, նախաձայնէր տկարագունից* » ։

— Ի *սուրբն Ստեփաննոս*. (Ἐγκώμιον εἰς τὸν Στέφανον, τὸν προτομάρτυρα). « *Մեծ է առ մեր յիշատակի վկայիս, և զամենեսեան յարուցանէ կոչել 'ի սպասաւորութիւն բանիս. հատուցանել զպատիւ սիրոյ այնմ նահատակեցելոյ* » * ։

* *Հայկական թարգմանութիւնս մեծապէս կը տարբերի 'ի յոյն սկզբնագրէն* ։

— *Գրիգորի Նիւսացւոյ եպիսկոպոսի ներբողեան 'ի սուրբ հայրն Եփրեմ*. (Ἐγκοίμιον εἰς τὸν οσιον πατέρα ἡμῶν Ἐφραΐμ). « *Շարժեն զիս միտք իմ, ով եղբարք* » ։

— *Բան խոստովանութեան*. « *Խոստովանիմք զորդին Աստուծոյ* » ։

— « *Ամենայն չար անմիջելի* » ։ *Ազգային բանասիրաց ծանօթ գրուածք մը, և ընդհանրապէս Դաւթի*

Անյաղթելի ընծայուած. վասն զի իր անունն կրող Մանիքեանց գրոց մէջ գրուած է՝ իբրու վերջին գլուխ մը նոյն երկասիրութեան, այսպիսի մակագրով. «Ընդ-այսորիկ և առաջիկայ բան իմաստնոց (կամ իմաստա-ցոյս՝ ըստ այլ գրչի), թարգմանութիւն է Գրիգորի Նիւսացւոյ գրուածքի մը որ խորագիր ունի ըստ լատ. Sermo contra Manicheos, decem constans Syllogismis. և սկզբնաւորութիւնն է, Si quis sit malum, puniendum est. և վերջն; Non ergo res est increata. կամ ըստ յոյն սկզբնագրին. Εἰ τὶ ἂν κακόν, κολαστέον. որ ըստ հայոյն այսպէս էր ըլլալ՝ παν κακὸν κολαστίον. իսկ վերջն. οὐκ ἄρα ἀγέννητον. այն է ըստ հայուածս. «Ապա ուրեմն ոչ է անեղ»։

Ս. ԳՐԻԳՈՐ ՍՔԱՆՉԵԼԱԳՈՐԾ

(ST. GRÉGOIRE DE NEOCESARÉE).

Եպիսկոպոս Նէոկեսարիոյ Պոնտոսի. կ'ապրէր յերրորդ դարու, և վախճանած է ըստ ոմանց յ'264, և ըստ այլոց յ'270։ Իր ճառից հայկական թարգմանութիւնք հաւանականաբար 'ի հինգերորդ դարու եղած են։

— ** Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի խաւսք 'ի ծնունդն Քրիստոսի. (Discours sur la Nativité de N. S.). «Խորհուրդ մեծ և սքանչելի տեսանեմք յայսմ աւուր եղելոյ։ Հովիւք հնչեն յականջս՝ ամեն աւետիս օրհնութեան մարդկան. ոչ 'ի լերինս հաւատից բարբառին, և ոչ 'ի դաշտս խաշանց հնչեն. այլ 'ի Բեթղեհէմ քաղաքն Դաւթի երգեն զերգս հոգևորս»։

— ** Սորին Գրիգորի Սքանչելագործի 'ի ծնունդն Քրիստոսի. (Sur le même sujet). « Բանն Ա-

տուած մարմնացելով յերկրի երևեցաւ և ընդ մարդկան շրջեցաւ, կրեալ ճշմարտապէս զմերս մարդկապէս և գեր 'ի վերոյ քան զմերս իսկ ներգործէ հրաշաբար հանգոյն Հաւր »* :

* Մնացեալն այս ճառը' Ոսկեբերանի ընծայուած է 'ի Մոնֆոքոնէ: (Հատ. Զ. 392):

— ** Երանելւոյն Գրիգորի Նէոկեսարայ յԱւետիս Աստուածածնին. (Sermo in annuntiationem Deiparæ). « Այսաւր հրեշտակական դասուք աւրհներգութիւնք պայծառանան, և փայլումն գալըստեանն Քրիստոսի զհաւատացելովքս հրճուէ » :

— Երանելւոյն Գրիգորի Սքանչելագործի Նէոկեսարու եպիսկոպոսի գովեստ 'ի սուրբ կոյսն Մարիամ Աստուածածին. (Ἁγιοῦ Γρηγοριοῦ ἐπισκόπου τῆς Νεοκαισάρεαώ Πόντου, τοῦ Θαυματουργοῦ ἐγκμιον τὸν εὐαγγελισμὸν τῆς παναγίας Θεοτόκου, καὶ ἀειπαρθένου τῆς Μαρίας, λόγος β΄). « Զամենայն տաւնս զաւրհներգութիւնս պարտ է մեզ որպէս զողջակէզ մատուցանել Աստուծոյ: Եւ նախ քան զամենայն զաւետարանութիւն որոյ Աստուածածնին զուրախ լեր բերկրեալդ, որ առ 'ի հրեշտակապետէն աւետարանեցաւ նմա » :

* Հրատարակողն հայկական թարգմանութեան ճառիս (J. P. P. MARTIN, Analecta Sacra Patrum Antenicænorum, յէջ 150) կը յաւելու զայս ծանօթութիւն. « Այս ճառը որոյն Գրիգորի Սքանչելագործին տարակուսական ակնարկուած գրուածոց մէջ համարուած է, յերկրորդ կարգի. (MIGNE, Patrologia græca, Հատ. Ժ. 1155-1170): Մասնաւոր հետաքննութեան արժանի այն է' որ յունական սկըզբնագիրը ընդարձակագոյն կամ ճոխաբան է քան ըզհայկական թարգմանութիւնն, որով ընթերցողն կրնայ կասկածիլ որ այս վերջինս համառօտուած ըլլայ: Սակայն կ'երևնայ թէ սկզբնագրին մէջ եղած

յաւելուածներէն շատը՝ ոչ 'ի հեղինակէն, այլ ժամանակաւ իրմէ կրտսերագոյն մէկու մը ձեռքով եղած ըլլան։ Հայկականն աւելի հաստատ և արժանաւորագոյն է Սքանչելագործին։ Որչափ նշաններ ալ չեն պակսիր առ 'ի հաւատարմացընելու թէ 'Հայկական բնագիրն նախատիպն է քան զյոյնն' որ մեր ձեռքն հասած և հրատարակուած է։ Վասն զի յունին և հայուն մէջ այլևայլ ընթերցուածներ կան՝ որ շատ աւելի լաւ կերպով կը հասկցուին եթէ ենթադրեմք որ յոյնն թարգմանուած ըլլայ 'ի հայոյն, քան երբ համարիմք թէ այս վերջինս թարգմանութիւն ըլլայ 'ի յունականէ»։ Հրատարակիչն 'ի այս կարծեաց յապացոյց քանի մը օրինակներ ալ մէջ կը բերէ, և կը թուի արդարանալ։

— ** Ի բանէ որ յողջոյն Մարիամու առ Եղիսաբեթ, և յաւրհնութիւն սուրբ Կուսին հոգևոր մարգարէութեամբ. (Sermonis in salutationem Mariæ ad Elisabeth, et in canticum propheticum Sanctæ Virginis). « Արդ պայծառ տեսանեմ զամենայն բան առ Մարիամ, զաւրհնեալ ես դու 'ի կանայս զասացեալն։ Բայց եւս պայծառագոյն գաղձեալ սուրբ կուսին բարբառեցաւ բանս և երգս գոհացողութեան Աստուծոյ, և անուշահոտութեամբ և աստուածաբանութեամբ լցեալս »։

— ** Գովեստ 'ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ. (Laus Sanctœ Dei Genitricis et semper Virginis Mariæ). « Արդարութեան պտուղ ծաղկեաց արեգական, և զյառաջագոյն ծաղկեալըն ծաղկեաց (ըստ այլ ձ. ծածկեաց)։ Փրկեցայ 'ի խաւարէն և ոչ տանիմ ճառագայթիցն։ Մնաւ իմն դարձեալ լոյս և շանամ (այլ ձ. ընտաղաւատանամ) յերկիւղէն »։

— ** Ներբողեան 'ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ. (In sanctam Dei Genitricem

et semper Virginem Mariam). « Անքնին 'ի մարդկանէ, անճառելի բանն, անասելի բնութիւն. խորհուրդն որ ծածկեալն էր 'ի յաւիտենանց և յազգաց 'ի նմանէ որ միայն է անմահ և ունի զգիտութիւն կենաց » :

— ** Սրբոյն Գրիգորի Սքանչելագործի Նէոկեսարեայ եպիսկոպոսի Պոնտացւոյ, ներբողեան ասացեալ 'ի նախավկային Քրիստոսի և յառաջասարկաւագին Ստեփանոսի. (Panégyrique sur St. Etienne, le protodiacre et protomartyr). « Հրաշափառ և ծայրագոյն աստուածայնոցն փառաց արժանացեալ տեսութեանց և վայելչութեանց՝ վկայմնականն Ստեփանոս, այսպիսեաւ և փառաւորեալ պսակեցաւ անհամեմատելին »* :

* Հրատարակողն Մարթէն 'ի ծանօթութեան. «Սրբոյն Գրիգորի այս ճառին երկու օրինակք կան յազգայինն Մատենադարանին Փարիզու (Թիւ 88 և 46). առաջինն երկաթագիր, իսկ երկրորդն բոլորգիր: Այս երկու գրչագրաց մէջ ուղղագրական բաղմաթիւ տարբերութիւնք կան կ'ըսէ հրատարակիչն:

Այս ամէն ճառք Սքանչելագործին 'ի հայ և 'ի լատին՝ հրատարակուած են 'ի Փարիզ յամի 1883 'ի Մարթէն հայագէտ վարդապետէ գաղղիացւոյ քիչ առաջ յիշատակուած բազմահմուտ և հետաքննական ծաղկաքաղին մէջ: Ինչպէս 'ի մեր Մատենադարանի, ասանկ ալ յԷջմիածին, յԵրուսաղէմ և այլուր կը գտնուին ճառքս՝ ցրուած զանազան ճառընտրաց գաղափարգութեան մէջ: Աստնդմէ դուրս և մէջի ծանօթ և Սքանչելագործի ընծայուած են նաև հետագայք:

– Գրիգորի Սքանչելագործի երկոտասան գլուխ նզովից ընդդէմ ամենայն հերձուածողաց. « Ա. Եթէ կարծեօք ոք կամ կերպարանօք ասէ զՔրիստոս յաշխարհի, և ոչ խոստովանի զնա մարմնով եկեալ՝ որպէս և գրեալ է, նզովեալ եղիցի » :

— Սրբոյն Գրիգորի Սքանչելագործի. «Լուսաւորեա, Երուսաղէմ, զի հասեալ է լոյս քո 'ի մեծէն Եսայեայ բարձրագոյն և հաշտակաւոր աւետարանութիւնն քեզ եկեղեցի հեթանոսաց մատուցանեմ ընծայաբերութիւն».

— Ներսէս. «Էր Աստուած, և եղև մարդ. ոչ հեռացեալ 'ի բնութենէն. այլ որ էրն՝ նոյն մնաց անփոփոխելի և անայլայլելի. ինքն յինքեան, և ոչ աստուած 'ի մարմնի, այլ մարմին յաստուածութեան, և աստուած մարմնացեալ»։

— Խոստովանութիւն հաւատոյ աղօթարար. «Մի աստուած հայր բանին»։ Այս է հաշտակաւոր հանգանակն (symbole) սրբոյն։

ԴԱՆԻԷԼ ՌՈՒԹԱՑ (Daniel de Routhe). — Կեանք և քաղաքավարութիւն երանելոյ և սրբոյ հաւրն մերոյ Յովհաննու հաւր Սիւնեաց՝ որ կոչի Կզե-մոքս. զոր գրեաց Դանիէլ կրաւնաւոր միայնակեաց Ռուաթայ լերինն։ «Ոչ է կարող բանք իմ, ով սիրելիք եղբարք, պատմել թէ ո՞ էր քաղաքն յորում ծնաւ և սնեալ եղև ախոյեան զօրականս այս աստուածպաշտութեան, յառաջ քան զմտանելն իւր 'ի ճգնութեան ասպարէզն»։

— Լուծմունք դժուարիմաց և նուրբ բանից որ կան 'ի գիրս այս կոչեցեալ Կցիմունքս (սեռս). արարեալ Դանիէլի կրաւնաւորի Ռուաթեցւոյ. — Ա. վասն երկիցն յաշխարհէ. «Զինչ ուրացումն և անհլութիւն. այլ զայս ասասցանէ. Վասն զի զբնութիւն մեր նախ ստեղծ Աստուած անախտ և սուրբ. և ետ մեզ զաւրութիւն՝ զմիտս, զի իմացուք զբարւոք կեալն մեր»։

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

(ST. DENYS D'ALEXANDRIE)

Քրիստոնէութեան երրորդ դարու մէջ ապրած է ասիկա Հայրապետս. Իր անունով՚ի մեր դպրութեան պահուած Ճառից ինչուան՚ հիմա սկզբնագիրք ե-րեւցած չեն. Հայ Թարգմանութեան ժամանակին ալ չենք կրնար որոշել. ամենք 'ի հնուց՝ հինգերորդ դարու կը վերագրեն.

— ** Երանելւոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսի Ա-ղեքսանդրու 'ի հակաճառէն Պաւղոսի Սամոսատա-ցւոյ. (Écrits contre Paul de Samosate). « *Գրեալ է Թէ այնպէս սիրեաց Աստուած զաշխարհս զի զՈր-դին իւր միածին տայցեաց. Քանզի եղեւ մեզ Աս-տուած Յիսուս Քրիստոս, այն որ անմահայնոյ է աս-տուած և տէր* »*.

* L'an 264, les évêques assemblés à Antioche contre Paul de Samosate, avaient invité St. Denys à se réunir à eux, mais le saint patriarche ne l'ayant pu à cause de son grand âge, leur écrivit une lettre d'excuse, qui contenait en même temps le témoignage de sa foi sur les articles contestés par le nouvel hérésiarque. Nous n'avons plus cette lettre, et tout ce que nous en savons, c'est qu'elle était adressée à l'Église d'Antioche et non à Paul. On croit que c'est à cette lettre que fait allusion St. Jerôme, quand il dit que le saint évêque d'Alexandrie, peu de jours avant sa mort écrivit une lettre insigne contre Paul de Samosate. Théodore fait mention d'une autre lettre, du même saint, aux évêques assemblés à Antioche, pour les exci-

ter à défendre la vérité avec un zèle génereux. Il en cite encore une à Paul de Samosate, dans laquelle le saint lui faisait sur son erreur, les remontrances convenables. Mais ni l'une ne l'autre ne sont venues jusqu'à nous. MIGNE, *Patrologie*. *Այս կորուսեալ երկասիրութեանց մասն է՝ պահուածն 'ի մեր մատենագրութեան։*

— ** *Մեծի ուրբաթին սրբոյն Դիոնեսիոսի Աղեքսանդրու հայրապետի.* (Sur le mystère du Vendredi saint). *« Կալան զՔրիստոս Հրէայքն, զի ինքն կամեցաւ։ Զայս երանելին Երեմիաս յառաջագոյն ասաց թէ ունելով կալան զիս թշնամիք իմ որպէս ձնձղուկ »։*

— ** *Երանելւոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսի Աղեքսանդրու.* (Sur la Résurrection de N.S.). *«Յարեաւ այսաւր 'ի մեռելոց կենդանին յաւիտենից Քրիստոս. և տեսեալ կանանց պայծառութիւն նորա ընթացեալ պատմեցին առաքելոցն։ Զայս Եսայի մարգարէն յառաջագոյն ասաց »։*

— ** *Երանելւոյն Դիոնեսիոսի եպիսկոպոսի Աղեքսանդրու. « Եհան զաշակերտսն մինչև 'ի Բեթանիա և ամբարձեալ զձեռս իւր աւրհնեաց զնոսա, և ընդ աւրհնելն՝ վերացաւ յերկինս։ Զայս կանխաւ գուշակեաց երանելին Դաւիթ, թէ Համբարձաւ Աստուած աւրհնութեամբ և Տէր մեր ձայնիւ փողոյ»։*

— ** *Նորին (հատուած մի փոքր). « Չէ մարդ որ խաչեցաւ. այլ սուրբ, միածինն Բանն և որդին Հաւր։ Տես զի զԲանն ասաց կախեալ զխաչէն, և ոչ սոսկ մարդ »*։*

* *Այս հինգ հատուածք հայ հին թարգմանութեամբ և անտի 'ի լատին նոր փոխադրութեամբ հրատարակեցան 'ի Փարիզ.* Analecta Sacra Patrum Antenicœnorum, ex codicibus orientalibus;

collegit J. P. PAULINUS MARTINUS, 1883. Ասորի լեզուի և մատենագրութեան մէջ ալ կը գտնուին բաց յայլոց՝ որ չկան 'ի հայումս, քանի մը հատուածք յընդդիմագրութենէ առ Սամոսատցին։

— Ի գալուստն Փրկչին յԵրուսաղէմ. « Ի վերայ յաւանակի նստաւ Փրկիչն մեր Քրիստոս, և մտեալ յԵրուսաղէմ՝ դղորդեցաւ քաղաքն ամենայն »։

— Ի բանն. Հայր, եթէ հնար իցէ. « Արդ եկայք, եղբարք իմ սիրելիք, տեսցուք ճշմարտութեամբ թէ վասն էր տէր մեր Յիսուս Քրիստոս որ յաղագս ամենեցուն փրկութեան եկեալ ընդունել զչարչարանս և մեռանել »*։

* Ճառընտիր մը մեր մատենադարանին Ոսկեբերանի կ'ընծայէ զայս. նոյնպէս և Մոնֆոքոն 'ի գործըս սորայ հայրապետին. (Յոյն և լատ. հատ. Ժ, յէջ 806), թէպէտ և 'ի կարգի անհարազատ գրուածոց սորոյն։

Ս. ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ

(ST. DENYS, L'AREOPAGITE)

Մի յառաքելական հարց, մեծիմաստ և հռչակաւոր աշակերտ սրբոյն Պօղոսի։ Իրեն ընծայուած գրուածոց ոմանք՝ երկբայականք կամ անհարազատ սեպուին։ Հայկական թարգմանութիւնն եղած է յութերորդ դարու 'ի ձեռն Ստեփանոսի Սիւնեաց, ինչպէս կ'ազդեն յիշատակարանք։ Նորագոյն թարգմանութիւն մ'ալ յեօթնևտասաներորդին, 'ի Ստեփանոսէ Լեհացւոյ։

— ** Պատմութիւն սրբոյն Դիոնիսի եպիսկոպոսի, որ է որդի Սոկրատայ գլխաւորի Աթենացւոց որ կոչի իմաստասիրաց քաղաք (Autobiographie).

«Պատմեաց յաղագս անձին իւրոյ երանելին Դիոնեսիոս. Ես եղբարք, ասէ, իմաստասիրութեան սիրող»: *

* Ի վերջ գրոցն այսպէս յիշատակարան. «Այս պատմութիւն սրբոյն Դիոնեսիոսի՝ 'ի սուրբ քաղաքն Երուսաղէմ էր թարգմանեալ 'ի յունականէն 'ի վրացականն. իսկ 'ի մերս թարգմանեաց Յովաննէս բժիշկ. ՑԻԹ թուականիս Հայոց»: Ուրիշ ճառընտրի մը մէջ. «Այս պատմութիւն Դիոնեսիոսի սրբոյ՝ 'ի քաղաքս Երուսաղէմ թարգմանեալ երիցայունականն. իսկ 'ի մերս թարգմանեաց Յովհաննէս բժիշկ. ՑԺԸ թուաբերութեանս Հայոց»:

— Պատճառ Դիոնեսիոսի. «Դիոնեսիոս Աթենացի էր որդի Սոկրատայ. յորովայնէ մաւրն նուիրեալ իշխանին դիւաց: Եւ յորժամ եղեւ եւթնամեայ, ածին 'ի տաճար կռոցն 'ի զենումն ... Աւանդեաց զայս նմա Պաւղոս. զոր ինքն 'ի յափշտակելն յերրորդ երկնից ետես որպէս կատարելոյ. և յետոյ 'ի Տիմոթեայ խնդրեալ ձեռնարկէ 'ի գրել զսա: Եւ Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն թարգմանեաց 'ի Կոստանդնուպաւլիս, և եւեր մեզ. և լուծումն եդեալ դժուարագոյն բանից յինքենէ՝ յոյժ պիտանի»:

— Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոց, առ Տիմոթէոս աշակերտ Պաւղոսի առաքելոյ եպիսկոպոս Եփեսացւոց՝ յաղագս երկնայնոյն քահանայապետութեան. (Τοῦ ἐν ἁγίοις Διονυσίου Ἀρεοπαγίτου περὶ τῆς οὐράνιας ἱεραρχίας). «Քահանայակցի Տիմոթեայ 'ի Դիոնեսիոսէ քահանայէ. յաղագս երկնայնոյն քահանայապետութեան: Ամենայն տուրք բարիք և ամենայն պարգեւք կատարեալ 'ի վերուստ են իջեալ առ 'ի հաւրէն լուսոյ, և ամենայն նախախնամութիւն հայրաշարժ լուսաբերութեան յառաջ ճանապարհ 'ի մեզ բարերարապէս ընթացեալ»: * (Առաջին գիրքը ամփոփեալ 'ի հնգետասան գլուխս):

* Ի ձեռագրի Լամբրոն. « և ամենայն նախախնամութիւն հայրաշարժ սիրոյն 'ի փրկութիւն մարդկան պարգևս շնորհեալ » ։

Ի սկիզբն երկրորդ գլխոյն 'ի ստորև ինչից նոյն ձեռագրին. « Տէր աստուած Յիսուս Քրիստոս՝ ողորմեա Սմբատայ գունուսգապկի » ։

— Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ առ Տիմոթէոս աշակերտն Պաւղոսի եպիսկոպոս Եփեսոսի յաղագս եկեղեցականին քահանայապետութեան. (Περὶ τῆς ἐκκλησιαστικῆς ἱεραρχίας). « Առ քահանայակիցդ Տիմոթէոս, 'ի Դիոնեսիոսէ քահանայէ ։ Եւ արդ զի ըստ մեզ քահանայապետութիւնս, ով սրբազանդ մանկանց սրբազանից, Աստուածաւ է և աստուածայնոյ. (ութ գլուխք) ։ Ի վերջն. « Որպէս սկիզբն մերձակայիս բանի ցուցանէ՝ պակասեն 'ի շարակարգութենէս յայսմանէ աստուածաբանական ապաւորութիւնք ։ Եւ յետ այսորիկ ճառի նշանական աստուածաբանութիւն. այսինքն յիզգալեացս յաստուածայինսն անուանափոխութիւն. զորոց և յիշումն առնէ երանելի այրս այս 'ի ճառին որ յետ սորա է գրեալ. Յաղագս խորհրդականի աստուածաբանութեան ։ Քանզի որպէս զեկուցաւ մեզ՝ բազում ճառք հանդիսաւորք սորոյս այսորիկ էին. այլ հազիւ և այս գիրք զերծան յաստուածամարտ ձեռաց պղծանուն Յուլիանոսի ։

— Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյն առ Տիմոթէոս եպիսկոպոս յաղագս աստուածայնոցն անուանց. (Περὶ Θείων ὀνομάτων). « Քահանայակցի Տիմոթեայ 'ի Դիոնիսէ քահանայէ. Իսկ այժմ ով երանելիդ՝ յետ աստուածաբանականացն ապաւորութեանց յաստուածայնոցն անուանց բացումն՝ որպէս հասանելի է փոխեցայց » . (Գլուխք երեքտասան) ։ Գլուխն երկրորդ այսպիսի մակագրով. « Յաղագս միաւորեցելոյ և անջատեցելոյ աստուա-

ծաբանութեանն. եթէ զինչ է աստուածայինն միու-
թիւն և անշառութիւն : — Ի գլխոյս յայսմանէ մարտի-
ցես ընդ նոսա որք անմանման ասեն զՈրդի ընդ Հաւր,
կամ զՀոգին սուրբ. որպէս Եւնոմիոս և Արիոս և
Մակեդոնիոս : Զաստուածպետական գոյութիւնն
թէ զինչ երբեք իցէ, նոյն բարերարութիւնն որո-
շեալ և յայտնեալ առ 'ի յառաջելոցն աւրհնաբա-
նի » : — « Սրբոյն Յեռոթէոսի յաղագս աստուածա-
բանականացն տարրութեանց. Ամենեցունց պատ-
ճառ և լցողականն Յիսուսի աստուածութիւն որ
մասամբք զբոլորման պայման պահելով » :

— Թէ զինչ է աղաւթից զաւրութիւն. և յա-
ղագս երանելոյն Յեռոթէոսի. և յաղագս երկիւղա-
ծութեան և շարագրութեան աստուածաբանականի.
« Արդ նախ թէ թուեսցի զամենակատար և զբոլո-
րիցն Աստուծոյ յառաջ ճանապարհաց յայտնաբա-
նականն բարիանունութիւն տեսցուք » :

— Սրբոյն Յեռոթէոսի 'ի առփակմանացն աւրհնա-
բանութեանց մեկնութիւն. « Ի միտ առ թէ զիարդ
մեծս Յոռեսթիոս զորս յաղագս գովելոյ առփմանն
իմաստասիրէ. նախ աստուածային առելով զնա » :

— Թուղթ առ Յովհաննէս առաքեալ և աւետա-
րանիչ Քրիստոսի՝ պարասահմանեալ 'ի Պատմոս կղզ-
ւոջ. (Ἰοαυνῆ θεολόγῳ, ἀποστόλῳ καὶ εὐαγγελλιστῆ, περιορισθέντι, κατὰ Πάτμον τῆν νῆσον). « Ողջունեմ
զքեզ պատուականդ իմ և սիրեցեալ անձն, և եղեցի
ինձ այս առ քեզ բան առ բաղումս յոյժ փափա-
գելի » :

— ** Թուղթ Դիոնեսիոսի յաղագս մահուան
Պետրոսի և Պաւղոսի առ Տիմոթէոս աշակերտն Պաւ-
ղոսի. (Epistola beati Dionysii ad Timotheum, de morte Apostolorum Petri et Pauli). « Աշակերտն
աստուածայինն և որդի հոգևոր, սիրա և խորհուրդ
և կատարիչ կամաց նորա, և համբերող 'ի նեղու-

թիւնս այնորիկ որ գեր 'ի վերոյ էր ամենայն գովեստից, վարդապետին Ճշմարտի և հոգևոր հաւրն Պաւղոսի սիրելի որդի Տիմոթէոս »։*

* Հրատարակուած հայկական և ասորի թարգմանութիւնքն 'ի Փարիզ, (1883). Analecta Sacra Patrum Antenicœnorum; ex codicibus orientalibus collegit J. P. PAULINUS MARTINUS.

— Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ առ Տիմոթէոս եպիսկոպոս Եփեսացւոց յաղագս խորհրդականի աստուածաբանութեանն. (Περὶ μυστικῆς θεολογίας). « Քահանայակցի Տիմոթեայ 'ի Դիոնեսիոսէ քահանայէ. Երրորդութիւն գերագոյ, գերագոյնք աստուած, և գերագոյնդ բարութիւն, քրիստոնէից վերատեսուչ »։ (Հինգ գլուխք)։

— Դիոնեսիոսի Արիսպագացւոյ եպիսկոպոսի Աթենացւոյ թուղթք զանազանք։ ('Επιστολαί). – Առ Գայիոս՝ առաջին. ('Επιστολὴ ά. Γαΐῳ θεραπευτῇ). « Խաւար աներևոյթ լինի 'ի լուսոյ. և յաւէտ զի 'ի բազում լուսոյ զանգիտութիւն աներևոյթ առնէ գիտութիւն »։

— Առ նոյն երկրորդ. ('Επιστολὴ β'. Τῷ αὐτῷ Γαΐῳ). « Զիա՞րդ որ անդրն է քան զամենայն գերագոյն քան զաստուածպետութիւնն է, և գերագոյն քան զբարեպետութիւն »։

— Առ նոյն երրորդ. ('Επιστολὴ γ.' Τῷ αὐτῷ Γαΐῳ). « Յանկարծաւրէն է անյուսաբարն. և իբր զի մինչ գեռ աներևոյթ իցէ յերևոյթ եկեալ »։

— Առ նոյն չորրորդ. ('Επιστολὴ δ.' Τῷ αὐτῷ Γαΐῳ). « Զիա՞րդ ասես Յիսուս, որ անդր է քան զամենայն. ընդ ամենայն մարդկան էապէս շարակարգեալ »*։

* Այս այն Գայիոս է առ որ զերրորդ թուղթն գրեաց աստուածային աւետարանիչն Յոհաննէս. և

ասէ զնա կամարար. և է կամարարդ անուն որպէս յեկեղեցականին քահանայապետութեան եդոյց 'ի վերայ միայնակեցաց »:

* Ստեփանոս եպիսկոպոս Սիւնեաց 'ի Թղթին առ Գերմանոս պատրիարք. « Դիոնեսիոս արիսպագացի աշակերտն Պաւղոսի, զորոյ աչաւք տեսեալ զՓրկչին ասէ պատմութիւնն, առաջին եղեալ եպիսկոպոս Ա-թենացւոցն, գրէ առ Գայիոս սպասաւորն Պաւղո-սի, զառ 'ի Թագնութենէ գերագոյին 'ի մերս ե-րեւոյթ մարդկաւրէն լինելով գալն, Թաքուն է և յետ երևելոյն. կամ զի և աստուածայնագոյնս աս-ցից զերևելին. քանզի և այս Յիսուսի անյայտ է. և ոչ մերոյ բանի կամ մտաց է հպելի խորհուրդ նորա. այլ ճառելով անճառելի մնայ, և գիտելով անգիտե-լի: Եւ դարձեալ 'ի չորրորդ Թղթին որ առ նոյն Գայիոս գրէ. և զի միանգամայն ասացից ասէ, ոչ մարդ էր Քրիստոս, ոչ որպէս ոչ մարդ. այլ որպէս 'ի մարդկանէ, անդր քան զմարդիկ և գերագոյն մարդ, ճշմարտապէս եղեալ մարդ. և ապա ոչ ըստ Աստուծոյ զաստուածայինսն ներգործեալ, և ոչ զմարդկայինսն ըստ մարդոյ. այլ այրացելոյ Աստու-ծոյ, նոր իմն աստուածայրական ներգործութիւն ընդ մեզ կենցաղավարեաց »:

— Առ Դիմոփիլոս սպասաւոր, յաղագս անձնիշ-խան գործոյ և քաղցրութեան մեկնութիւն. (Δημο-φίλῳ θεραπευτῇ, περὶ ἰδιοπραγίας καὶ χρηστότητος). « Եբրայեցւոցն պատմութիւնք, ով քաջդ Դիմոփի-լոս, զսրբազանն զայն Մովսէս, վասն բազում հե-զութեանն ասեն զնա արժանաւորել աստուածայ-նւոյն սիրոյ »:

— Պատասխանի ընդդիմադրութիւն որպէս Դի-մոփիլեայ հարցմամբ. « Արդ զինչ ասիցես. ո՞չ է պարտ զքահանայս ամպարշտեալս, կամ այլ ինչ յան-տեղեաց յանդիմանեալս, յուղղութիւն գալ »*:

* « Դիմոփիլոս այս կիտասարկաւագ էր. վասն զի զասա կոչէ սպասաւորս։ Սա յարձակեալ 'ի վերայ քահանայի իւրոյ և Թշնամանեալ զնա եհան յեկեղեցւոյ. վասն զի ընկալաւ զոմն 'ի մեղուցելոցն յապաշխարութիւն. և նստեալ ինքնաձեռնադրեալ քահանայ. վասն այսորիկ և ո՛վ քաջդ Դիմոփիլոս ասէ. որպէս բռնութեամբ և ոչ երկիւղածութեամբ գործ »։

— Տիտոսի քահանայապետի Կրետացւոյ խնդրեալ 'ի նմանէ 'ի ձեռն Թղթոյ Թէ զի՛նչ է իմաստութեան տունն, զի՛նչ խառնարանն, և զի՛նչ կերակուրք նորա և ըմպելիք. (Τίτῳ Ἱεράρχῃ ἐρωτήσαντι διʼ ἐπιστολῆς, τίς ὁ τῆς σοφίας οἶκος. τίς ὁ κρατὴρ). « Սըրբազանն Տիմոթէոս, ով գեղեցիկդ Տիտոս, ոչ գիտեմ Թէ յիմեքէ 'ի ծանուցելոցն ինձ աստուածաբանականացն նշանակաց մնաց զոր ոչ լուաւ »։

— ** Թուղթ Դիոնեսիոսի Արիսպագացւոյ առաջին եպիսկոպոսի Աթենացւոց քաղաքին, զոր և գրեաց նա պատասխանի Թղթոյն Տիտոսի եպիսկոպոսին Կրետացւոց, յաղագս ննջման սրբոյ Աստուածածնին և միշտ Կուսին. « Ծանիցէ եղբայրութիւնդ քո, ո՛վ վսեմականդ Տիտէ. քանզի 'ի ժամանակի յորժամ հանդերձեալ էր ելանել յաշխարհէ և յաշխարհականացն, այս է յերկրաւոր Երուսաղեմէ, և մտանել 'ի խորանս վերինն Երուսաղեմի » * ։

* Ըստ այլ ձեռագրաց. « Ի յիշատակի սրբոյ Աստուածածնին և միշտ Կուսին Մարիամու, Թուղթ սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյն եպիսկոպոսի Աթենացւոցն և Նախաշար վարդապետի, զոր գրեաց պատասխանի Տիտոսի Կրետացւոց եպիսկոպոսի յաղագս ննջման սրբոյ Կուսին Մարիամու աստուածածնի » * ։

* Ուրիշ գրչագիր մը (Ց. Արքայեղբօր) կը յաւելու. « Սուրբս այս Տիտոս էր աշակերտ սրբոյ ա-

առաքելոյն Պաւղոսի, զոր և կարգեաց եպիսկոպոս 'ի Կրիտէ. առ որ և զԹուղԹն գրէ » :

— Առ Սոսիպատրոս քահանայ. (Σωσιπάτρῳ ἱερεῖ). « Մի զայս վարկանիր յաղԹուԹիւն որքաղանդ Սոսիպատրէ. զհրաւնս ինչ կամ զկարծիս ուրուք Թշնամանելով ոչ բարւոք երևեալ » :

— Առ Պաւղիկարպոս քահանայապետ. (Πολυκάρπῳ Ἱεράρχῃ) « Ես ոչ գիտեմ եԹէ առ Յոյնս և կամ առ այլս ոմանս ասելով բաւական համարեալ արանց բարեաց »* :

* Մեկնիչն կը ծանուցանէ. « Սուրբս այս Պաւղիկարպոս 'ի Զմիռնէ ասիացւոց էր եպիսկոպոս: Աշակերտ եղեալ սրբոյն Յովհաննու աւետարանչի, և վկայեալ կատարեցաւ հրով. է սորա և ԹուղԹ առ Փիլիպպեցիս » :

Առ ԴորոԹէոս պաշտաւնեայ. (Δοροθέῳ λειτουργῷ). « Աստուածային մէգ է անմատոյցն լոյս, յորում բնակիլն ասի Աստուած, և աներևոյԹ գոլ վասն գերունակին երևուԹիւն » :

Յիշատակարան գրոցս. « Ի վեցհազարերորդի երկերիւրորդի քսաներորդի ամի արարածոց աշխարհիս ըստ յունարէն Թուոյ, 'ի չորեքտասաներորդի գիկատիոնին, յերկրորդ ամի Թագաւորութեանն Փիլիպպոսի Թարգմանեցաւ գիրքս այս սրբոյն Դիոնեսիոսի Արիսպագացւոյ 'ի ստոյգ աւրինակաց 'ի Կոստանդնուպաւլսի 'ի ձեռն ԴաւԹի հիպատոսի և Թագաւորական սեղանոյն կինառի, և 'ի ձեռն Ստեփաննոսի քահանայի և քերԹողի, աշակերտի տեառն Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի: Արդ մաղԹեմ ըզքրիստոսասէր պաշտաւնեայսդ սրբոյ սեղանոյս, որք առնուք յաւրինակէս յայսմանէ, գրեսջիք և զբանս զայս առ 'ի յիշատակ բարեխաւսուԹեան առ Քրիստոս, զի գրեալք եղիջիք և դուք 'ի դպրուԹիւնն կենաց »* :

* Առ Ստեփանոսի Ուռպելեան. « Ծանօթացեալ (Սիւնեցին) մեծ հիւպատոսի մի Դաւիթ անուն և Թագաւորական սեղանոյն կենաւոր, և ձեռնտուութեամբ նորին Թարգմանէ զգեղեցիկ գիրսն սրբոյն Դիոնեսիոսի » :

Կը յաւելումք և զյիշատակարան գրչին. « Փառք... որ զաւրացոյց զտկարութիւնս իմ ժամանել 'ի լրումն զրաւորական՝ քաղցր և փափագելի և գերահռչակ տառիս: Յամի ութհարիւրերորդի տասներորդի առաջներորդի Թուաբերութեան ժամանակի Հայոց գրեցաւ տառս աստուածային երկնապատում սրբոյս Դիոնեսիոսի Արիսպագացւոյ հետևողի սրբոյն Պաւղոսի առաքելոյն, հրամանաւ և արգեամբք ողջախոհ և իմաստուն կրաւնաւորի, տէր Յովհաննէսի Սեբաստացւոյ, աթոռակալի տէր Ստեփանոսի... Եղև սկիզբն և կատարումն սորա 'ի մեծահռչակ բազմամարդ և յոլովաժողով զանձունակ բարելի քաղաքս Յուլխաթ՝ կոչեցեալ Ղրիմ. 'ի վերնաբնակ հայաժողով Թաղս հողայարկեայ, ընդ հովանեաւ սրբոց խորանացս սրբոյն Սարգսի և այլ սրբոց. 'ի Թագաւորութեանն Հայոց Կոստանդեայ. և 'ի կաթուղիկոսութեան տեառն Մեսրոպայ առաքինւոյ. և այսմ նահանգի առաջնորդի տէր Ստեփանոսի: Արդ քանզի ոչ գտանէր աւրինակս այս 'ի քաղաքս և ոչ 'ի վանորայսն, և փափագ տենչանաց նեղէր զիս՝ Թէ վասն էր ոչ գտանի այս գիր պատուական՝ մինչև եհաս ինձ գնալ յերկիրն Հայոց՝ 'ի Թագաւորական քաղաքն Սիս. ոչ Թէ վասն տառիս միայն, այլ և վասն կրաւնաւորութեան եղբաւր իմոյ Գրիգորի առնել եպիսկոպոս նահանգին Խաղտեաց. և գտեալ զաւրինակ սորա՝ գրեցի մեծաւ փափագմամբ, և բերեալ փոխարկեցի և տեառն իմոյ տէր Յովհաննիսի. որոյ յոյժ ուրախացաւ 'ի գալ աւրինակի սորա, և բազում սէր եցոյց մեզ » :

Ուրիշ գրչագրի մը մէջ ալ հետեւեալ յիշատակարանը կը գտնենք՝ յետ Թարգմանչին անունը եւ ժամանակը յայտնող յիշատակարանին՝ զոր վերը յառաջ բերինք. «Ես Յոհաննէս եպիսկ" եւ բարուն՝ ծառայ մեծին Աստուծոյ եւ ընդրելոցդ, որդի մեծ իշխանաց իշխանին Կոստանդեայ՝ արքահամեան ծերունւոյ եւ աշխարհաշէն առաքինւոյ. եւ եղբայր համահայր 'ի Քրիստոս փոխեցեալ բարեպաշտ արքային Հայոց Հեթմոյ՝ որոյ յիշատակն աւրհնութեամբ, եւ ցաւղ կենսակայլակ կողից կենարարին իջցէ 'ի գամբարան շիրմի նոցա, ամէն։ Ի Թվականիս Հայոց ՉԻ գրեալ եղաւ զհմաստալի եւ գերապատուած տառս սրբոյն Դիոնեսիոսի Աթենայ եպիսկոպոսի եւ աստեղերալյս վարդապետի 'ի Թագաւորութեան քրիստոսապսակ արքային Լեւոնի տեառն իմոյ եւ եղբաւրորդւո՛ զոր ամէն Աստուծոյ միշտ պահեսցէ 'ի չարէ աստուածաշնորհ զաւակաւքն իւր, Հեթմիւ եւ Թորոսիւ եւ Ռուբինեաւ, փառաց 'ի փառս բարձրացուցանելով, ամէն։ Եւ գրեցաւ սա յերկուց գըրչաց, 'ի Ստեփանոսէ եւ 'ի Յոհաննիսէ, որոց Տէր ողորմեսցի։ Ի կաթողիկոսութեանն տեառն Յակոբայ յորմէ եւ զաւրինակն ընկալա» ...։

Ուրիշ տեղ մ'ալ նոյն գրչագրին մէջ. «Ընդ նմին եւ զստացող գրոցս զտէր Յոհան" զեղբայր Թագաւ" եւ զՍամթենէս քահանայ որ աւժանդակ եղեւ եւ աշխատաւոր»։

Յօրինակին գրչագրելոյ 'ի սրբոյ Լամբրունեցւոյն ինքնագիր յիշատակարան կիսեղծ եւ անընթեռնլի. «Որք վայելէք 'ի հոգեկեցոյց եւ յանմահացուցիչ ... երբեմն երկաւք ձեռին ... խակ Ներսէս եւ ...

Յետոյ ուրիշ գրով. «Հրամանաւ տեառն Ներսէսի եւ աստեղերական վարդապետի կազմեցաւ գիրքս այս ձեռամբ ումեմն տառապեալ Գրիգորիսի արեւելցոյ։ Արդ տէր Յիսուս վայելել տացէ երկար ժամանակաւք 'ի կամս իւր. ամէն»։

Յիշատակարան Բաղի. « Ի ՌԻԴ Թուականիս շարադրեցաւ բանս աստուածային 'ի ձեռն Ներսէսի. զԲասիլս յիշեցէք 'ի Տէր զկնի աշխատողի սորին » ։

Նորագոյն գրչագրի յիշատակարան մ'ալ. « ...Սորա հեղինակն 'ի վաղուց ժամանակէ գրեալ կայր. որ մինչ երեքհարիւր ամի աւելի կայր Թուականն. և օրինագրեալ 'ի քաջահմուտ վարդապետաց։ Ըստ նոյն օրինակին և մեք ուշիմօրէն գաղափարեցաք և տառեցաք 'ի մեծն Պոլիս » ։ Գրչագրեալ է 'ի ՌՄԿԷ թուին Հայոց. իսկ գաղափարողն Յարութիւն ոմն քարտուղար Միքայելի արեւելցւոյ։

Միւս այլ յիշատակարան ինքնագիր Թովմայի Մեծոփեցւոյ. « ԶՄկրտիչ վարդապետն Մեծոփեցի յիշեսջիք առաջի Քրիստոսի անմահ գառինն անարատի. որ զսուրբ գիրս Կիւրղի գրեալ ձեռամբ սուրբ հօրն Ներսիսի * եբեր 'ի մեզ հայոց, 'ի պիտականուն վարդապետս Թովմայ, որ ես տեսի և ուրախացայ յոգի, և երկրպագութեամբ համբուրեցի։ Նաեւ զսիրելի եղբայրն մեր հարազատ զՄկրտիչ վարդապետն Աւրբելի որդի որ ստացաւ զսա ... Գրեցաւ ՊԿԱ » ։

* Դիոնեսիոսի գրոց հետ միասին կազմեալ է նաև Պարապմանց գիրքն Կիւրղի։

Նոր թարգմանութիւն 'ի լատինէ երկասիրութեամբ Ստեփաննոս վարդապետի Լեհացւոյ։ Խորագիրն. « Գիրք սորին Դիոնեսիոսի Արիսպագացւոյ յաղագս երկնային քահանայապետութեանց » ։ Ի յառաջաբանին կը ծանուցանէ Թարգմանիչն. « Նախ քան զձեռնարկել խրողութիւնս արժան վարկանիմ պատճառ արտադրել թէ վասն էր համարձակեցայ վերստին թարգմանութիւն առնել. մի գուցէ թուեսցի ումեք աւելորդ գոլ աշխատութիւնս մեր։ Արդ վասն զի թարգմանութիւն սորին Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսին էր դժուարիմաց, և բնա-

բանն 'ի բազում տեղիս փոփոխեալ. և մեկնութիւն առ 'ի սրբոյն Մաքսիմոսէ արարեալ կիսակատար թարգմանեալ. քանզի ոչ եթէ ինքն սուրբն Ստեփաննոս մեկնեաց որպէս ոմանք կարծեն, այլ 'ի յունաց բարբառոյ 'ի մերս թարգմանեաց: Վասն որոյ եւ նուաստս Ստեփաննոս Լեհացի, յետին 'ի բանաւորաց, 'ի խնդրոյ եղբարցն ուսումնասիրացն 'ի դուռն սրբոյ աթոռոյն Էջմիածնի համարձակեցայ միւսանգամ թարգմանել 'ի լատինացւոց բարբառոյ 'ի հայոց լեզու. թէ զբնաբանն և թէ զմեկնութիւն լիակատար. և զիւրաքանչիւր գլուխս բաժանեցի 'ի գլխաւոր մասունս, զորոց ցանկս ըստ իւրաքանչիւր մասանց 'ի սկիզբն գլխոց համառօտիւք եդի. զի այսպէս դիւրաւորութիւն բանիցն փութով իմասցի: Եւ ապա զկնի իւրաքանչիւր մասին բնաբան մեկնութիւն շարադրեցի. և արտաքոյ մեկնութեան զոր արարեալ էր սրբոյն Մաքսիմոսի յունաց վարդապետին, այլուստ եւս բազում բանս մեկնողականս առ 'ի բացայայտութիւն նկարագրին գրոշմեցի: Եւ գիտելի է ուսումնասիրացն, զի արտաքոյ շարադրութեանցս որք այսօր առ մեզ են, զայլ եւս իրողութիւնս յիշատակ իւր կորովամիտ իմաստութեան սուրբն Դիոնեսիոս թողեալ էր որք ոչ են 'ի միջի այսօր. և զորս ինքն յիշատակէ, և են այսոքիկ.

Ա. Յաղագս նշանական աստուածաբանութեանն:
Բ. Յաղագս անձին:
Գ. Յաղագս աստուածային օրհնաբանութեանց:
Դ. Յաղագս աստուածաբանական տպաւորութեանց:
Ե. Յաղագս արդարոյ, և աստուածային իրաւագործութեան:
Զ. Յաղագս իմացականացն և զգալեաց:

Իսկ մնացեալ շարադրութիւնքն որ այսօր առ մեզ գտանին են այսոքիկ.

Ա. Յաղագս երկնային քահանայապետութեանցն։

Բ. Յաղագս փրկականն քահանայութեան։

Գ. Յաղագս աստուածային անուանց։

Դ. Յաղագս խորհրդականն աստուածաբանութեան»։

Եւ թուղթք զանազան,

Ա. Առ Գայիոս թուղթք չորս։ — Բ. Առ Դորոթէոս։ — Գ. Առ Պողիկարպոս։ — Դ. Առ Սոսիպատրոս։ — Ե. Առ Տիմոթէոս։ — Զ. Առ Տիտոս. — Է. Առ Յովհաննէս աւետարանիչն։

Ի յիշատակարանին. «Շնորհիւ և գթութեամբն Աստուծոյ ես Ստեփաննոս Իւլվացի, յետինս 'ի բանասիրաց, տեսեալ զգիրս սրբոյն Դիոնեսիոսի այլափոխեալ՝ և 'ի բազում տեղիս ապականեալ, փոյթ յանձին կալայ վերստին թարգմանել 'ի լատինացւոց բարբառոյ 'ի մեր լեզու. և զայս աշխատութիւնս յանձն առի մանաւանդ վասն երից պատճառաց։ Նախ զի ընթերցումն գրոց դիւրաձեռն լիցի ուսումնասիրաց, և մի ինչ անյայտ իցէ 'ի խըրթնածածուկ բանիցն սրբոյն Դիոնեսիոսի. այլ ամենայն բան և իմացումն պարզ երևեսցի. վասն որոյ ընդարձակ և բովանդակապէս իւրաքանչիւր բանից մեկնութիւն առընթեր գրոշմեցի։ Երկրորդ՝ հարկեալ գոլով առ 'ի խնդրոյ բարեկամաց եղբարցն որք են 'ի սուրբ աթոռս Էջմիածին և 'ի հրահանգս իմաստասիրութեանն կրթեն զանձինս իւրեանց, ոչ կարացի անտես առնել. այլ զանց արարեալ զակարութեամբս իմով յօժարեցայ զայս իրողութիւնս 'ի յաւարտ հասուցանել. քանզի զայսու ժամանակաւ

բազումք էին երևելի վարդապետք, քաջաբանք, բանաստեղծք, աստուածային գրոց քաջք՝ գիտունք և հմուտք. յորոց մի էր և Առաքել վարդապետն մի-պասան. որ զժամանակագրութիւնս հայրապետաց և Թագաւորաց գեղեցկայարմար բանիւք դրոշմեալս և իւր յիշատակ անջնջելի եթող: Երրորդ պատճառ զի մի երևեցայց զքանքարն՝ զոր 'ի տեառնէ ընկալայ. 'ի վարշամակի ծրարեալ և ընդ վատթար ծառային զպատիժն ընդունել. վասն որոյ պատշաճ վարկայ 'ի սեղանաւորս հոգւոյ մանկանց եկեղեցւոյ բաժանել և 'ի պարտուցս ազատիլ. որպէս և յառաջ քան զայս այլ շարագրութիւնս թարգմանեցի. այսինքն Յովսեփոս պատմագիր, և միւս Գերմոսի պատճառաց, և Հարանց վարք որ կոչի Հայելի վարուց. 'ի լեհաց բարբառոյ 'ի հայ լեզու փոխարկեցի... Այդ թարգմանութիւն գրոցս եղեւ 'ի թուաբերութեան տումարիս Հայոց ՌՃԺԱ »:

Ճառընտիրք մեր Արիսպագացւոյ կ'ընծայեն նաև հետևեալքն.

— Ի Յարութիւն տեառն. «Որպէս ասէ Յիսուս»:

— Ի նոյն. «Ընդէ՞ր պանծացան ազգք»:

ԴԻՈՆԵՍԻՈՍ ԹՐԱԿԱՑԻ

(DENYS DE THRACE).

Դիոնեսիոսի Թրակացւոյն ո՛վ և ո՛ր ժամանակի գրիչ ըլլալն տակաւին անստոյգ է. սակայն մեր մատենագիրք շատ յարգ տուած են այս անձին՝ յիշելով գովութեամբ իր փոքրիկ. համառօտ՝ բայց ճիշդ և անսխալ քերականութիւնը: Նոյն ինքն Փաբրիկիոս (Fabricius, Bibliotheca græca, vii, 24-25) իր յունական Մատենագարանին մէջ միայն անձն կը նշանա-

կէ՛ անստոյգ ըլլալն ցուցընելով, և յետոյ իր քերա-
կանութեան յոյն բնագիրն կը դնէ, յորմէ մէկ
գլուխ՝ այսինքն վերջինն կը պակսի, որ կը խօսի զու-
աից տատանաւորաց. բայց կայ այն ալ 'ի յոյն ձեռա-
գիրս որ 'ի Մարկոսեան գրատան Վենետկոյ, և թե-
րեւս ուրիշ կողմեր ալ: Մեր մատենագրութեան մէջ
կը գտնուի անոր հայ թարգմանութիւնն, որ հաւա-
նօրէն կամ Մովսէսի Խորենացւոյ և կամ Դաւթի
Անյաղթի է: Զափաւոր հնութիւն ունեցող հայ
գրչագիր մը, առէպ գործոյն ընթացքին մէջ կը նշա-
նակէ հելլէն տառերով Στέφ, որ է անշուշտ Ստեփա-
նոս Սիւնեցին, բայց այս ինքնագիր քերականու-
թեանց մասին մէջ. իսկ Դիոնիսեայ քերականու-
թեան երբեմն 'ի մերոց նաև Դաւթի Անյաղթի ա-
նուանն տրուած է: Միով բանիւ, հարկ է ընդունինք
որ այս անձանցմէ մէկն ըլլայ թարգմանիչ, և աւելի
Դաւիթ Անյաղթ, որուն գրուածոց մէջ ալ կ'երևին
տեղ տեղ այս քերականութեան հետքերն: Դար-
ձեալ նոյն քերականութեան մէջ տեղ մը կը գտնենք
յունագիր Μώσης, որ է Մովսէսն անշուշտ Խորենա-
ցի. բայց առանց քերականութիւնն շատ տեղ իրա-
րու հետ խառն են, և երկու անձանցն մէկտեղ միա-
ցած, Մովսէսի և Ստեփանոսի: Գրիգոր Մագիս-
տրոս իր քերականութեան մէջ առաջին անգամ կը
սկսի խօսիլ Դիոնեսիոսի վրայ, և քերականութեան
ծագումը մինչև 'ի Հոմերոս կը հանէ: Երկար յառա-
ջաբանէ մը ետքը կ'ըսէ. « Այս Դիոնեսիոս ամե ե-
կեալ՝ ստգտանելով զերկոցունցն զսկզբունսն այս-
պէս, թէ զձայնի բնութիւն գտանել՝ իմաստասիրաց
է. և գիրն տեսցի 'ի կարգի իւրում, զի մի այլ ընդ-
այլոյ քննութեամբ ծաղր լիցի արուեստն: Եւ իւր
սկսեալ՝ բուռն եհար զնոյն ինքն զիրս, եթէ քերա-
կանութիւնն է հմտութիւն: Զկնի որոյ Հերոդիա-
նոս ամե որդի Ապաւղինարի խոհեմագոյն միանգա-

մայն և իշխան, որոյ՝ վասն յոյժ անբաւականութեան արուեստից, զբոլորից այրելով զգրեանն, միայն զհօրն իւրոյ եթող զգրեանն. ոմանք ասեն վասն յիշատակի, և ոմանք վասն տառուել մասնաւորութեան: Բայց փոքր ինչ այս արուեստ, կամ վասն չանկանելոյ 'ի քուռն, և կամ վասն մանգանց կրթութեան մացեալ՝ Դիոնիսիոսի ասացեալս ... Արդ այս Դիոնեսիոս Թրակացի դտեալ զգիրս զայս ... աակայն անաճ և անյարմար զնա կարգեալ, մինչև յարամանեալ շարադրեաց զառ հանգերձ իւրովքն գիտուք »: Նոյնըպիսի խօսքեր կը կրկնէ իրմէ վերջ նաև Երզնկայեցին իր քերականութեան մէջ [1]:

Դիոնեսեայ կոչուած քերականութիւնը շատ տեղ գծուարին ճամբաներ առաջնորդած է մեր Թարգմանիչներուն և մեկնիչներուն, որոնք Թերեւս հեռացեալ քիչ կամ շատ 'ի նախահօրէ լեզուէս 'ի սըբբոյն Սահակայ, և չկարելով կառավարել զերենք այն բազմակնճիռ յոյն լեզուին մէջ, ընկան բոլորովին անոր ծոցը իբրև 'ի գիրկս մօր, և հնարեցին շատ բաներ՝ զոր չենք տեսներ և 'ի զուր կը փնտռենք ոսկեղէն դարու մատենագրաց մէջ: Անոր համար իրենց ջանք և ուսմունք խոտեցան 'ի ժամանակակցաց և 'ի յետագայից. որուն և մեզագիր կ՚ըլլայ, հայրենակցաց այս անտարբերութեանը, յիշատակագիր մը. « Զի զամենայն ինչ, կ՚ըսէ, անտեսցէն որ ինչ յաշխարհիս. զբոլոր սորա ցանկութիւն և զամենայն հեշտութիւն. զազգ և զգաւառ, զինչս և զստացուած, զեղբարս և զհայր, և միանգամայն զամենայն իրս երևելիս և զբազում թողեալ 'ի թիկունս աշխարհի, 'ի մայրն ընթացան վարժից՝ 'ի տունն իմաստութեան 'ի ճեմարան կրթարանին. ուր բազում յուցեալ հանգէս երկոց տաժանմանց՝ մինչ

[1] Բովանդակ, հանգէս եռամեայ...

'ի սակաւն յոլով ինքեան ամբարեալ ժամանակ գիտութիւն փոյթ սոփերք և քաջ եղեն փիլիսոփայք անուանեալք, մինչ ոչ միայն տեսողացն և կամ լսողաց, այլ և հանուրց լինէր զարմացումն: Եւ զինչ յետ այսորիկ. յաշխարհն իւրեանց մեծաւ խնդութեամբ դառնային, ոչ պատուոյ աղագաւ՝ զոր և ոչ առին հաւատոյ. այլ յաղթիլս իւրեանց սերմանել զուսումն իմաստութեան: Արդ եկեալ սկիզբն առնել սկսան բարութեանց, և աննախանձ բաշխել խնդրողաց, զինքեամբ բազում առեալ երկամբք գիտութիւն. որ ոչ միայն ոչ ընդունեցան, այլ և հենգնեցին՝ ընդդէմ յառնելով. զինչ մեզ բաղբաղիք ասէին. սեթեւեթանքն ձեր՝ անպիտան բնաւին մեզ թուին. սուտ և ունայն ձերդ իմաստութիւն, անգործ ասեն են ձեր աշխատանք: Որոց տխրեալ թախծանօք՝ 'ի խոր խոցէին տրտմութեամբ »:*

* Թրակացւոյն Քերականութիւնն 'ի յոյն, հայ և գաղղիարէն հրատարակեցաւ 'ի Փարիզ յամի 1824 այս խորագրով. « Քերականութիւն Դիոնեսիոսի Թրակացւոյ՝ հանեալ 'ի Թագաւորական գրատանէ Փարիզոյ, և 'ի լոյս ընծայեալ 'ի յոյն, 'ի հայ և 'ի գաղղիացի լեզուս, հանդերձ ծանօթութեամբք և բացատրութեամբք 'ի Յակոբայ Շահան Ջրպետեան եգեսացւոյ 'ի դասատու վարժապետէ հայկական բարբառոյ յարքայական դպրոցի արեւելեան լեզուաց Թագաւորական Գրատան, և այլն: Grammaire de Denis de Thrace, extraite de deux manuscrits arméniens de la Bibliothèque du Roi, et publiée en grec, en arménien et en français; avec notes et éclaircissements; par M. J.-Ch. Cirbied, professeur d'arménien à l'école spéciale et royale des langues orientales vivantes, près la Bibliothèque du Roi, etc. A Paris, de l'imprimerie d'Évérat, 1824.

ԴՈՐՈԹԷՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(DOROTHÉE, ÉVÊQUE)

Ինչպէս գրուածքն՝ որոյ հայկական թարգմանութիւնը պիտի յիշատակենք, 'ի կարգէ անհարազատից սեպուածէ, ասանկ անծանօթ մնայ մեզ հեղինակը, և իր ճիշդ ժամանակն. Թէպէտև մեր գրչագիրք Յուլիանոսի հասակակից կը սեպեն զնա։ Նոյնը հարկ է ըսենք նաև 'ի հայ փոխադրութեան առենին համար, թէպէտ և ունենալով զհետս հնութեան։

— «Յաղագս եւթանասունևերկու աշակերտացն տեառն, այս է բաւանդակ պատմութիւն Դորոթէոսի եպիսկոպոսի Տիւրոսի հնագոյն առն հոգեզարդի և մարտիրոսի եղելոյ 'ի ժամանակս Յուլիանոսի թագաւորի։ Այրս այս յառաջասացեալ՝ բազմահամբաւս համագրութիւնս եթող հռոմայեցի և հելլենական. վասն զի այլոց (այլ. ձ. Հայոց.—այլ. երկոցուն եւս) լեզուաց 'ի սաղապման հանդիպեալ եղև, և բազումս 'ի ձեռն բարեպաշտութեան։ Յետ վախճանի Դիոկղետիանոսի և Լիկիանեայ եկաւ նա զինքեան ըննակարանն հովուելով զառ 'ի Տիւրոսն հօտ. մինչև ցՅուլիանոս բռնաւոր. վասն զի ոչ ինքն Յուլիանոս երևէր հալածիչ, այլ ծածկաբար 'ի ձեռն իշխանացն սպանանէր զքրիստոնեայսն։ Դարձեալ Դորոթէոս եհաս յՈդիւսացւոց (յՈւդիացւոց) քաղաքն, ուր և ըմբռնեալ առի 'ի Յուլիանոսի իշխանացն և բազում տանջանս կատարեալ՝ մեռաւ հարիւր և եւթն ամաց գոլով։ Այս ծերս մեծ համագրութիւնս մեզ եկեղեցականս եթող. յորս վասն եւթանասուն և երկու աշակերտաց Փրկչին պատմագրեաց՝ թէ ուր իւրաքանչիւր ոք 'ի մարգարէիցն և յառաքելոց

զկեանս իւրեանց կատարեցին. և նախկի զեւթանասունն և երկու աշակերտացն զոլ ասելով, որոց յոլովք եպիսկոպոսունք 'ի զանազան գաւառս եղեն. զորոց աստուածային առաքեալն Պաւղոս յողջոյնս յիշատակէ: Քանզի յետ Փրկչին մերոյ յարութեանն որ 'ի մեռելոց՝ զբոլորից նոցա զգառնալն նշանակէ և յառաքելայն լինել, զորոց զանուանակոչութիւնն ասա ուրեմն նշանակէ ասելով այսպէս. Ա. Յակովբոս եղբայրն տեառն եպիսկոպոս Երուսաղեմի 'ի նմին իսկ 'ի տեառնէ եղև: Բ. Կղէոփաս ազգակից տեառն՝ երկրորդ եպիսկոպոս Երուսաղեմի. որ և ետես նա զտէր յետ յարութեանն 'ի մեռելոց» ...

«Զայս ահա երիցս երանեալ և ամենափարթամն Դորոթէոս 'ի Հռոմմ՝ եղեալ, 'ի ձեռն հռոմէական գրոց յիշատակարանս եթող. յորոյ և մեր յեղափոխեալ առ 'ի յելլադացւոյն հայն փոխաթարգմանեալ՝ յայտնի բոլորից արարաք զՈւթանասնից աշակերտացն զկարգ և զհաւատս, և ճշմարտութեամբ զայս առընկալեալք. քանզի և առաքեալն գրելով յաղագս սոցա ասէ. Ուրք և յառաջ քան զիս եղեն 'ի տէր» *:

* Abrégé de la vie des Apôtres et des disciples, sous le nom de saint Dorothée, évêque de Tyr et martyr. Cette production est apocryphe; on croit que saint Dorothée avait en effet rédigé un travail semblable; mais son œuvre fut, au XIme siècle, interpolée et gâtée par un écrivain du nom de Procope. Telle que nous la possédons, elle est pleine d'erreurs; l'auteur n'a aucune critique et fait preuve d'une ignorance fâcheuse: tous les chrétiens que nomme saint Paul deviennent sous sa plume non-seulement des disciples, mais même des évêques. Bellarmin et tous les critiques ont

rejeté comme indigne de tout confiance une pareille production» : (MIGNE, *Diction. des Apocryphes*, t. II, p. 207).

Քննադատք, կը համարձակինք ըսել. բոլորովին տարբեր լեզու պիտի գործածէին Դորոթէոսի անուամբ յիշուած երկասիրութեանս համար, եթէ տեղեկութիւն ունենային իր անունը կրող հատուածոց՝ զոր հասուցած է առ մեզ մեր հին մատենագրութիւնն։

— Յաղագս երկոտասան և եւթանասուն և երկու առաքելոցն՝ այս է բաւանդակ պատմութիւն. «Վըսամականն Դորոթէոս յիշատակումն առնէ երկոտասան առաքելոցն, նշանակելով թէ ուր իւրաքանչիւր ոք 'ի նոցանէ քարոզեաց»։

Թերեւս Դորոթէոսի են և հետեւեալք, թէպէտ առանց կրելու իր անունն 'ի գրչագիրս։

— Յաղագս կատարման աշակերտացն. «Անանիա որ 'ի Դամասկոսն էր, 'ի Հրէիցն քարկոծեալ։ Մարկոս յԱղեքսանդրիա քարկոծեալ 'ի Բեքտաց վասն քարոզելոյ զկուսութիւն պարկեշտութեան»*։

* Կը գտնուին առ յոյնս և լատինս այսպիսի հատուածք հետևեալ մակագրով. Synopsis de vita et morte Apostolorum. Այսպէս նաև 'ի Բիւզանդական գիրս (Հատ. Բ.)։

— Կանայք հաւատացեալք ոյք վկայեցանն. «Մարիամ աստուածածին՝ չարչարանս բազումս ասէ վասն նորա, և ոչ ուրեք գտանի. քանզի փոխեաց զնա Քրիստոս։ Մարիամ Մագդաղենացի, որ յաւետարանն պատմի, 'ի Կայիափայ չարչարեալ վասն Քրիստոսի, կայ յագարակին որ կոչի Մագդալիա մօտ 'ի Նազարէթ»։

ԵԹԵՐԻՈՍ ՓԻԼԻՍՈՓԱՅ. — Հատուած մը այս անունով՝ երկոտասաներորդ դարու մէջ ընդօրինա-

կուած ընտիր գրչագրի մը մէջ. «Որ ամենեցուն պատճառ և վերալիատար (?) Յիսուսի աստուածութիւնն, որ զմասնաւորն բոլորովին համաձայն միացուցեալ. և ոչ մասն և ոչ բոլոր եղով. և մասն և բոլոր, որպէս ամենայն 'ի յիւրեան 'ի միասին առեալ»։

ԵՂԱԴԻՈՆ. — *Պատմութիւն և խօսք Եղադոնի, յաղագս վարուց, ճգնութեան և սքանչելագործութեան սուրբ և փառաւոր հայրապետին Բարսղի արքեպիսկոպոսին Կեսարու Կապադովկացւոց. «Սիրելիք և բարեկամք, ոչ է անհաւատալի ճառ բանիս միամիտ որդւոց, որք հայրենատուր վարուց հետեւին»* ։

* *Առ լատինս սրբոյն Ամփիլոքիոսի կ'ընծայուի այս վարք. և տարակուսելով՝ կը վիճին յերկար բուն հեղինակն գտնելու. մինչ 'ի ճառընտիրս մեր յիշատակի որոշ անուամբ աշակերտի սրբոյն Բարսղի. Թէպէտև մերթ Եղաւիդոս, և մերթ Եղիադոսս կը կոչեն զնա. բայց ուղղագոյն է Եղադիոս* (Ἐλλάδιος, Helladius).

ԵՊԻՓԱՆ ԿԻՊՐԱՑԻ

(ÉPIPHANE DE CHYPRE)

Ծնած է սուրբ հայրապետս յ'310 յ'Ելեւթերուպոլիս Պաղեստինի. և նշանաւոր իր բազմապատիկ և հմտական երկասիրութեամբք։ Մեր մատենագրութիւնն այլևայլ գրուածներ հասուցած է առ մեզ իր անուամբ, յորոց շատք չեն յիշուիր իր հարազատ համարուած երկոց թուոյն մէջ, և տպագրութեամբ ծանօթացած են ուսումնական և բանասէր գիտութեան։ Մենք կը նշանակենք ինչ որ գտեր ենք 'ի

գիրս մեր յանուն Եպիփանու, առանց երաշխաւորելոյ անոնց հարազատութեան, ինչպէս նաև ճիշդ ժամանակի թարգմանութեանն 'ի հայ: Խորենացւոյն վկայութիւնք' զոր քիչ ետքը պիտի յիշատակենք, պատկառելի հնութիւն մը տալ կը թուի' գէթ անոնցմէ ոմանց շարագրութեան:

Երանելւոյն Եպիփանու եպիսկոպոսապետին Կոստանդեայ Կիպրացւոյն ասացեալ. — «Ի սկզբնագիր Արարածոց և աւետարանական քարոզութեանց որ ըստ Ղուկայ»:

— ** ա. Պատմութիւն երանելւոյն Եպիփանու Կիպրացւոյ ասացեալ ըստ Ղուկիայ. «Սքանչելի այրս այս Եպիփան էր ազգաւ հրէայ. և հայր նորա մշակ երկրագործ էր, և արդար վաստակաւք կերակրէր զորդեակս իւր զԵպիփան և զքոյր նորա Կալիստրոփիայ»:

— ** բ. Ի սկզբնագիր Արարածոց և յաւետարանական քարոզութեանց որ ըստ Ղուկայ. և յաւետիս սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամու. «Աստանաւր սկիզբն արասցուք զանսկզբանն պատմել յաղագս անսկզբանն 'ի Մովսիսէն' առաջին օրինագրէն»:

— ** գ. «Այլ և եկաց նախահայրն Ադամ անտանելի չարչարանաւք, պահաւք և աղաւթիւք զամս հարիւր, ոչ կամելով զմիաւորութիւն կնոջն. այլ սիրէր կալ մնալ 'ի վիշտս և 'ի նեղութիւնս»:

— ** դ. Յաղագս սպանման Աբելի. «Իսկ ամբարիշտըն Կայէն ոչ ինչ գրեաց զխրատս Աստուծոյ. 'ի սրտի իւրում. այլ և 'ի չարութիւն մտեալ ընդ Աստուծոյ, որում ոչ ինչ կարէր առնել ամենայն զաւրն սատանայի»:

— ** ե. Յաղագս խաւսելոյ Տեառն Աստուծոյ ընդ Կայենի քաղցրութեամբ. «Եւ 'ի կատարել ամացն յիններեկի և միոյ, կոչեաց զնա տէր քաղցրութեամբ և ասէ. Կայէն, ո՞ւր է Հաբէլ եղբայր քո»:

— **Զ. Յաղագս Աբելուհեայ, որ էր քոյրն Աբելի. « Եւ տարաբերաց Սէթ և ժողովեաց զամենայն ծնունդս իւր, և զազգատոհմս, և զորդիս որդւոց իւրոց հանդերձ ամենայն ծննդաւք Ադամայ » ։

— **Է. Յաղագս նահապետացն և Նոյի. « Եւ Աբելուհի լցեալ զթիւ ամաց հարց իւրոց, կեցեալ սրբութեամբ և անարատութեամբ ամս ՉԼ, սպասաւորելով սուրբ մարմնոյն Աբելի. ընդ նմին հաւր և մաւր իւրեանց Ադամայ և Եւայի » ։

— **Ը. Յաղագս դադարելոյ տապանին. « Եւ յառաջնումն ամսոյն, որ աւր մի էր ըստ հեբրայեցւոց լուսնաթիւ տումարին, որ և նա կայր հաստատեալ 'ի վերայ լերինն Արարատայ » ։

— **Թ. Յաղագս Մելքիսեդեկի ազգոյն. « Եւ հրաման ետ Նոյ որդւոց իւրոց և թոռանց և զաւակաց և տոհմաց ընդ աւրհնութեամբն Աստուծոյ աճել և բազմանալ 'ի վերայ երկրի » ։*

* Ի վերջ իններորդ գլխոյս կ'ըսէ Եպիփան. « Այլ և Նեբրովթ սկայ որդի Քուշայ յազգէն Քամայ, նախանձեալ ընդ բազմանալ որդւոցն Սեմայ, և նենգութեամբ յափշտակեալ եհան 'ի ձեռաց նոցա ըզհայրենի ժառանգութիւնն զամենայն աշխարհն Պաղեստինոյ, և բնակեցոյց անդ տասն ազգ յորդւոցն Քամայ, և զորդիսն Սեմայ և զամենայն ազգատոհմն իւր, որ էին այնմ աշխարհի ժառանգաւորք՝ հալածանաւք հրդեհեալ եհան անտի » ։ Եպիփանու այս խօսքը յառաջ բերէ Խորենացի իւր Պատմութեան մէջ (Ա. Է) անոր ուրիշ մէկ գրքէն. « Որ 'ի Կիպրացւոց Կոստանդեայ եպիսկոպոս Եպիփանիոս՝ 'ի Հերձուածոցն յանդիմանութեան՝ յորժամ Ճշմարիտ և արդարադատ զԱստուած ձեռնարկէ ցուցանել. և վասն ջնջելոյ որդւոցն Իսրայելի զեւթն ազգսն՝ ասէ այսպէս, եթէ Արդարադատապէս Աստուած զազգսն զայնոսիկ ջնջեաց յերեսաց որդւոցն Իսրայելի.

զի 'ի բաժնի որդւոցն Սեմայ հասեալ էր երկիր կալուածոցս այսոցիկ. բռնութեամբ Քամ 'ի վերայ եկեալ յափշտակեաց. իսկ Աստուծոյ իրաւունս պահեալ զերդման ուխտին, վրէժ հատուցանէ ազգին Քանանու, 'ի բաց դարձուցանելով զժառանգութիւն Սեմայ »:

— ** Ժ. Յաղագս Աբրահամու և ամենայն նահապետաց և մարգարէից. « Այլ և աւր աւուր տեսանելով Աբրահամու զմեծաքանչ զօրութիւնն Աստուծոյ, երթայր և մեծանայր հաւատովք »:

— ** « Արդ 'ի թագաւորութեանն Հերովդէի որդւոյ Անթիպատրեայ ասկաղոնացւոյ, զոր թագաւորեցոյց Հրէաստանի Աւգոստոս կայսր Հռովմայ, քահանայապետ էր յԵրուսաղէմ Զաքարիա որդի Բարաքեայ »:

— ** Յաղագս սրբոյ Կուսին առ 'ի տաճարն քահանայապետին. « Արդ իբրև եղև նա չորեքտասանամեայ, եկեալ քահանայապետն Զաքարիա 'ի միտս »:

— ** Ըստ Ղուկասու երանեալ աւետարանչին բանիցն որ ասէ. « Եւ յամսեանն վեցերորդի առաքեցաւ Գաբրիէլ հրեշտակ Աստուծոյ 'ի քաղաք մի Գալիլեացւոց առ կոյս խօսեցեալ առն ... Աստանաւր իրաւացի և սորուգապէս անիմանալի խորագոյն և անհասանելի բարձրագոյն և չահաւորեալ լուսապայծառ »:

— ** Ի գալ սրբոյ Կուսին առ Եղիսաբեթ զկնի առուածընկալ աւետեացն՝ յաւետարանէն Ղուկայ. (Sur la Visitation de la sainte Vierge à Elisabeth, selon l'évangile de saint Luc). « Յաւուրսն յայնոսիկ յարուցեալ Մարիամ գնաց 'ի լեռնակողմն ... Աստանաւր իրաւապէս նախ պարտ է իմանալ էր վասն փութանակի ցուցանէ երանելին աւետարանիչն զգնալ սրբոյ Կուսին »:

— Յաղագս գնալոյն Մարիամու առ Եղիսաբեթ.

(Sur le même sujet). « Եւ այս վեցերորդ ամիս է ... Արդ որպէս զմեծ իմն աւետիս, որպէս և էրն իսկ, և զայն տայ նմա. քանզի յոյժ կարի քաջապէս սիրէր Եղիսաբեթ զկոյսն սուրբ » :

— Ի նոյն սուրբ յաւետարանէն Ղուկայ յաղագս Յովհաննու Կարապետին. (Du même évangile de saint Luc, sur saint Jean, le précurseur). « Եւ Եղիսաբեթի լցան աւուրք և ծնաւ որդի : Եւ արդ ահաւասիկ իմանալի է զի առ Աստուած բազում երկիւղիւ և սիրաջան վաստակոց և որբամնատոյց աղաւթից և խնդրելոյ զբանին զաւրութիւնն պէտք են արտադրելով առ հոգւոյն փրկութեան » :

— Ի սուրբ անտեսութիւնն և 'ի ծնունդն Քրիստոսի. (Sur la Nativité de N. S.). « Աստանաւր աստուածաբանական իմաստիւք և ընդ այնր խառնելով զերկիւղ տեառն և հայել եւս պատրաստաբար սառաջնորդականին իմացմամբ 'ի տնտեսական տերունեան իրս » :

— Ի ծնունդն Քրիստոսի Աստուածոյ մերոյ. (Sur la Nativité de N. S. Jesus-Christ). « Անսկիզբն բանն յանսկզբնականն 'ի հաւրէ աստանաւր կամեցաւ սկզբնաւորիլ 'ի սրբոյ Կուսէն վասն արարածոց իւրոց փրկութեան, որ և զգալի աւրինակաւք հաճեցուցանէ զհնգեկին զգայարանաւք իմաստնացեալքս » :

— Ի սուրբ ծնունդն Քրիստոսի 'ի նմին աւետարանէ. (Sur le même sujet). « Եւ եղև ընդ աւուրսըն ընդ այնոսիկ ել հրաման ... Աշխարհագիր առնելն' սրբոց ոմանց և իմաստնոց թուեցաւ այնպէս' ըստ գլխոց արանց և զհամար գանձուցն բերելով 'ի պէտս արքունի » :

— Ի սուրբ ծնունդն Քրիստոսի 'ի Ղուկասու աւետարանէն. (Sur le même sujet). « Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ ... Եւ արդ մտացն գիտե-

լով էր վասն հովուացն երեւէր հրեշտակն. և 'ի համաձայրոյն ծանուցեալ եղև յաղագս տխմար և տխմարք գոլով նոցա. եւ անխմաստ ըստ աշխարհի և ըստ մարգարէութեանցն »:

— ** Ի դառնալն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵգիպտոսէ, և բնակելոյն 'ի Նազարեթ իբրև անանելով անդ. (Sur le retour de N. S. de l'Egypte, et habiter à Nazareth). « Եւ 'ի վախճանիլն Հերովդի ... Արդ հարկաւորի առաջականն դասել ըստ իրացն եղելոցն. ութեւտասն էին դաւհճապետք »:

— ** Ի Թլփատութիւն տեառն յաւետարանէն Ղուկայ. (Sur la Circoncision de N. S.). « Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատել զնա ... Տեսանե՞ս զհոգիացեալ և զհոգւով որբով լցեալ զերջանիկ և զերիցս երանեալ սուրբ աւետարանիչն թէ ճրքան եւս իմաստաբար յառաջ բերէ զիւրոյ աստուածաբանական բանիցն որ վասն տեառն զկարգ և զզաւրութիւն ծանուցելոյ խորհրդոցն »:

— ** Ի գալուստ տեառն քառասնաւուրեայ 'ի տաճարն և ծերունւոյն Սիմէոնի 'ի նմին աւետարանէ Ղուկայ. (Pour le jour de la Purification de la très-sainte Vierge). « Եւ իբրև լցան աւուրք սրբութեան ... Ո՛վ մեծի և աստուածայայտ իմաստից գիտութեան աւետարանագրին. որ զանսկիզբն և զանժամանակ որդին Աստուծոյ ընդ ժամանակաւ առկեալ և ընդ աւուրինաւք, և զարարիչն արարածոց և ժամանակաց »:

— ** Ի ծնունդն Քրիստոսի և 'ի գալ մոգուցն յերկրպագութիւն յաւետարանէն սրբոյն Մատթէոսի. (Sur la Nativité de N. S. et l'adoration des Mages, selon l'évangile de saint Mathieu). « Եւ 'ի ծնանելն Յիսուսի 'ի Բեթղեհէմ Հրէաստանի ... Ո՛վ մեծի և սքանչելի և անհանգստութեան աւետարանչին, իբրև ուսեալ յանհասանելի հոգւոյն անհասութեանն »:

— ** Ի սուրբ մանկունսն Բեթղեհեմի, զոր կոտորեաց չարափառն և անօրէն Հերովդէս. (Sur les saints Innocents, massacrés par Hérode). « Եւ իրրև գնացին նոքա անտի ... Արդ և ըստ աւրինակի կարգացն է իմանալ և զպատշաճ ընթացիցն առ հրամանն վերին: Ուստի երանելին Յովսէփ այսպէս առնաւքինէ » :

— ** Ի գնալն 'ի տաւն զատկին. « Եւ երթային ծնողքն նորա ... Ո՛վ մեծի և աստուածաձիր պարգեւաբաշխ իմաստութեան և շնորհաց աւետարանչին Ղուկայ, որքան եւս կարգաւոր աւրինաւք յառաջ բերեալ բացատրէ » :

— ** Ի մկրտութիւն տեառն 'ի Մատթէոսեան սուրբ աւետարանէն. (Sur le Baptême de N.S., selon l'évangile de saint Mathieu). « Յաւուրսն յայնոսիկ գայ Յովհաննէս Մկրտիչ ... Տեսանե՞ս զաւաւելութիւն գիտութեան շնորհացն Աստուծոյ որ տուեալ եւս եղեն երբեմն մարգարէիցն, նմանապէս և առատանաւր աւետարանչացն » :

— ** Ի մկրտութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի սուրբ յաւետարանէն Մատթէոսի. (Sur le même sujet). « Յայնժամ գայ Յիսուս 'ի Գալիլեէ 'ի Յորդանան ... Ո՛վ մեծասքանչ հրաշիցս. քանզի և ինքն իսկ Յոհաննէս երբեմն ասէր. Ես ոչ գիտէի զնա » :

— ** Ի Յովհաննու աւետարանին մեկնութենէ. (Fragment du Commentaire de l'évangile de St. Jean). « Աստուածաւր որդին Որոտման հասեալ 'ի թեւս Հոգւոյն, ուստի և նովին սուրբ հոգւովն իմաստնացեալ լի հանճարով » :

— ** Յաղագս մեծահրաշ և յառաջնապատարգե նշանին 'ի Կանա-Գալիլեացւոց զջուրն 'ի գինի փոխարկելով. (Sur le premier miracle de N. S. à Cana de Galilée). « Բազում աշխատութեամբ և մեծահա-

ւոր տիրով, յորում և վաճառել կամ առ իւր Յի-սուս »։

— **Նորին Երանելւոյն Եպիփանու ասացեալ՝ ըստ կարգի բանից յաւետարանչէն սրբոյն որ ըստ Յով-հաննու. (Du Commentaire de l'évangile selon St. Jean). « Ի վաղիւ անդր կամեցաւ ելանել 'ի Գալի-լիա ... Արդ որպէս վերագոյն ասացաք՝ 'ի միաշա-բաթւոջ աւուրն 'ի Բեթթայիդայ էր անդրն յաւելե-ւանի »։

— **Ի Յովհաննու աւետարանին մեկնութենէ ըստ կարգի ասացելոցն. «ԶԱստուած ոչ ոք ետես ... Արդ այնպէս համարեցան ոմանք 'ի սրբոց վարդա-պետաց ոչ ըստ կարգի լինել մատեանք և գալ բանին »։

— **Ի քառասնաւուրեայ պահելն Յիսուսի և զփոր-ձամպետն յաղթելոյ. (Sur le jeûne de N. S. pen-dant quarante jours). « Անեղանելի և արարիչն բանն Հաւր աստանաւր եղեւ մարդ 'ի Կուսէն վասն փրկութեան մերոյ »։

— **Յաղագս վերջնումն ժամանակին, և վասն յայտ-նելոյ որդւոյն կորստեան Նեռինն. զոր մերձ ընդ մերձ սատակեսցէ Յիսուս հոգւով և Թագաւորու-թեանցն վերջին. (Sur la dernière apparition du Fils de Dieu, et sur la perte de l'Antéchrist). « Արդ զառանցելոց ժամանակաց և զեղելութիւն իրաց որ 'ի նոսա 'ի հնարուն մատեանս գտանելով »։

— ** Երանելւոյն Եպիփանու արքեպիսկոպոսին Կոստանդեայ Կիպրացւոյ ասացեալ յաղագս միւսան-գամ գալստեանն Քրիստոսի Աստուծոյ. յորժամ գայցէ փառաւք իւր և Հաւր և հրեշտակաց սրբոց. առնել դատաստան արդար իսկապէս արդարոց և մեղաւորաց հատուցանելով իւրաքանչիւր ըստ գոր-ծոց 'ի փրկութիւն ամենայն հաւատացելոցս Երրոր-դութեան. (Sur le même sujet). « Եւ յորժամ եկեսցէ ... Աստանաւր ամենայն բանք աստուածայ-նւոյն ունի բազում զանազանութիւնք »։

— **Նորին խօսք Եպիփանու ասացեալ. « Աստա-նաւր գեղեցկապէս ծանուցեալ լինի թէ ժամանա-կացն և որք իշխեանն 'ի նոսա առ հայեցուածս իմաստ-նոյն։ Արդ 'ի Թագաւորութեանն մեծին Հռոմայ և Եգիպտոսի և Հրէաստանի »։

— **Ի գալըստեան տեառն 'ի Բեթանիա, և յարու-թեանն Ղազարու զոր յարոյց տէրն մեր Յիսուս Քրիստոս չորեքաւրեայ. (Sur la venue de N. S. à Béthanie, et la résurrection de Lazare). « Աստա-նաւր մեծաշուք առ Աստուած, և բազում ջա-նիւ և աշխատութեամբ իբրև վաղուց հետէ կամէի եւս գիտել խոկապէս վասն աւուրն այնորիկ մեծի և փառաւորի յորում եկն 'ի Բեթանիա յարուցանե-լով զսիրելին իւր զՂազար »։

— **Ի գալըստ Տեառն յաւուրս արմաւենեաց 'ի սուրբ աւետարանէն Մատթէոսի. (Sur l'entrée de N. S. à Jérusalem le dimanche des Rameaux, se-lon l'évangile de St. Mathieu). « Եւ յեղանել նոցա յԵրուսաղէմ ... Ո՛վ մեծի և աստուածաբանական ի-մաստից երանելի աւետարանչին։ Արդարև բազում էր ժողովք ժողովրդոց, սակայն առ միտս հոգեւորս հայրին տեսութիւնքն »։

— **Ի մեծի աւուր երկուշաբաթին՝ ըստ կարգի աւետարանական քարոզութեանն տեառն մերոյ Յի-սուսի Քրիստոսի. (Pour le jour de Lundi-Saint). « Բազում են Ճառք աստուածայինք և տէրունական խորհրդով իրացն եղելոց վասն մեծի փրկութեան և գժուարապատում առ 'ի յայտնութիւն խոկու-թեանցն ... Ուստի և ոմանք 'ի վարդապետաց սըր-բոց և յիմաստուն հաւատոց՝ զմեծ շաբաթս զայս »։

— **Ի մեծի երեքշաբաթի աւուրն 'ի նմին խոկ յա-ւետարանէ ըստ կարգի վարդապետութեանն. (Pour Mardi-Saint). « Աստանաւր իմաստնաբար աստուա-ծային և հոգեւորական քննութեամբ 'ի մեծի երեք-

չարթեան աւուրս կարգեալ յօրհնեցուք զզաւրութիւն աստուածաբանական վարդապետութեան տեառն Յիսուսի փրկչին մերոյ »:

— ** Ի մեծի չորեքշաբաթի աւուրն յաւետարանէ. (Pour Mercredi-Saint). « Յայնժամ ժողովեցան քահանայապետքն ... Արդ իրաւացի են ասացեալքն երանելի աւետարանչին Մատթէոսի. քանզի և յերեքշաբաթւոջ աւուրն գնացեալ տէրն »:

— ** Ի մեծի հինգշաբաթւոջ աւուր 'ի սուրբ յաւետարանէն Ղուկասու. (Pour Jeudi-Saint). « Եկն աւր բաղարջակերացն ... Աստանաւր իբրև ճշմարտապէս արտագրէ մեզ երանելի աւետարանիչն զմեծ և զփառաւոր ազատութեան աւր: Յորում և եկեալ այսաւր նոյն ինքն տէրն որ ետ զաւրէնսն Մովսեսի յԵգիպտոս բանիւ »:

— ** Ի մեծի աւուր ուրբաթին 'ի խաչելութիւնն տեառն 'ի սրբոյ աւետարանէ. (Pour Vendredi-Saint, et sur la Crucifixion de N. S.). « Զմեծապատիւ և զհրաշափառ սոսկալի աւուրս այս զանուն և զխորհուրդ ոչ ունի ոք յիմաստունս բաւականապէս ընդ գրով արկանել որպէս արժանն է »:

— ** Ի մեծի շաբաթու աւուրն մեծի թաղմանն Տեառն յաւետարանէն որ ըստ Ղուկասու. (Pour le Samedi-Saint, et l'enterrement de N. S.). « Արդ 'ի մեծի և 'ի փառաւոր աւուրս և 'ի ժամու աստ լռութիւն կամեցայ և ես որ տասնից իշխանս եմ, դադարել 'ի բանից վարդապետութեան իբրև ոչ ունելով իմաստութիւն »:

— ** Յաղագս յարութեանն Քրիստոսի և մեռլոցն որք յարեան 'ի ժամ խաչելութեան թէ ուստի՞ և ո՞յք և քանի՞. (Pour la Résurrection de N. S.). « Աստուածային առաքելոյն Պաւղոսի առ Կորնթացիսն գրէ ասելով. Այլ արդ Քրիստոս յարուցեալ է առաջին պտուղն ննջեցելոց: Քանզի ընդ այն ժա-

մանաւկն յազգմանէ չարին հերձուած իմն երևեալ'ի Կորնթոս առ ամենս որք հակառակէին չլինել յարութիւն » ։

— ** Վասն յարութեան տեառն և խնկաբեր կանանցն 'ի չորեսին յաւետարանչացն 'ի Մատթէոսէ, 'ի Մարկոսէ, 'ի Ղուկասէ և 'ի Յովհաննիսէ. (Sur le même sujet, selon les quatre évangiles de Mathieu, Marc, Luc et Jean). « Ամենափրկութիւնագործ անաւրէնութիւնն Քրիստոսի յԵրուսաղէմ կատարեցաւ. վասն զի անդ խմանամբ զլինելութիւն Ադամայնախառնեղծին հղաւր ձեռաց Աստուծոյ բանին Հաւր » ։ ... — Մատթէոս 'ի տեառնէ կոչեցեալ առաքեալ ... գրեաց զաւետարանն հեբրայեցւոց բարբառովն՝ ակնատես և ականջալուր գոլով տեառն. Թէպէտ և բազում ինչ ծածկեցաւ 'ի նմանէ » ։ — Մարկոսի սուրբ աւետարանչին. « Եւ ընդ առաւաւտու միաշաբաթին գան ընդ արևագալն 'ի գերեզմանն. Զիջուցին հրեշտակին 'ի մէջ գիշերի խմանամբ, զոր Մատթէոս ասէ յառաջնումն նուագի » ։ — Սրբոյ աւետարանչին Ղուկասու. « Բայց 'ի միաշաբաթոջն վաղվաղ ընդ առաւաւտն եկին 'ի գերեզմանն. բերին զխունկսն և զեւղսն զոր պատրաստեալ ունէին 'ի Մարիամայ և 'ի գաւտերքն իւրմէ Սողոմեայ, զոր 'ի միասին կացուցեալ էին զոր յառաջագոյն առացաք » ։ — Յովհաննու սրբոյ աւետարանչին. « Եւ 'ի միաշաբաթոջն Մարիամ Մագդաղենացին իւքն միայնակ գայ 'ի գերեզմանն. և ոչ ինչ տեսեալ՝ բայց միայն զվէմն բարձեալ 'ի դրոց գերեզմանէն որպէս յերկրորդումն նուագին » ։

— ** Վերաբերին կոչմանն Թովմայի և հաստատելոյ զնա. (Sur saint Thomas, et sa confirmation dans la foi). « Եւ յետ ութ աւուր ... Աստուածաւր պարտ է մեզ իմաստութեամբ փոքր 'ի շատէ գիտել յաղագս ութերորդ աւուրն՝ անդ 'ի ներքս լինել առակերտացն և Թովմաս դրաւքն փակելովք » ։

— ** Յերրորդումն կիւրակէին և նորաքանչ ե-րևեալ նորա երից անգամ աշակերտացն. (Pour le troisième dimanche, et l'apparition de N. S. aux Apôtres). «Յետ այսորիկ դարձեալ յայտնեաց ... Խորհուրդ գիտութեանն յառաջ բերեն զճշմարտու-թիւնն։ Արդ առ տեսլեան ստուգապէս այսպէս է իմանալ»․

— ** Ի նմին աւուր յերրորդում կիւրակէին վասն Պետրոսի դարձեալ վերստին հաստատելոյ 'ի հա-ւատս սուրբ Երրորդութեանն առաջի առաքելոցն. (Encore pour le troisième dimanche, confirmant saint Pierre dans la foi de la Sainte Trinité devant les Apôtres). «Իբրև ճաշեցին, ասէ ցՍիմոն ... Աստուածուր ամենիմաստն խորհրդով ար-նաւորինէ զշնորհք ողորմութեան իւրոյ. որ և հօ-գւոց մերոց հրամայեաց լինել կերակուր և ըմպելի, և մարմնոց մերոց հանդերձ»։

— ** Յաղագս առ երկնային դասքն վերանալ Քրիս-տոսի և ընդ աջմէ Հաւր նստելոյ. (Sur l'Ascension de N. S.). «Բազմապատիկ և անճառելի խորհուրդք անաւրինաբար համբառնալոյն Քրիստոսի առ Հայրն յերկինս, զոր ուսեալ զաւրաց երկնաւորաց և կարի յոյժ բարձրագունից»։

— ** Յաղագս գալստեան Հոգւոյն սրբոյ և ար-նաւորինական աստուածային խորհրդոյն որ յաւուրս սուրբ Պենտեկոստէին եղեն. (Pour le saint jour des Pentecôtes, et la descente du Saint-Esprit sur les Apôtres). «Եւ 'ի կատարել աւուրցն պենտե-կոստէից ... Ո՛վ մեծի իմաստութեան աւետարան-չին Ղուկայ. զի թէ և սաստ միաբան լինել ասէ ամե-նեցուն, սակայն յ'իսկզբան գրոյս յայտնապէս ցու-ցանէ»։

Յիշատակարան գրչագրին որ 'ի Լիմ անապատի ... «Շնորհիւ տեառն սկսայ և ողորմութեամբ նորին

կատարեցի զՀամահաւաք տօնս առաքելոց և մարգարէից և ներբողեան սուրբ վարդապետութեանց սրբոյ հայրապետին Եպիփանու Կիպրացւոյ, զի բազմաջան աշխատութեամբ շարամանեալ բացատրէ 'ի շահ և յաւգուտ լսողաց... Գրեցաւ 'ի հայրապետութեան տեառն Զաքարէի Աղթամարայ և յառաջնորդութեան գերահռչակ և սուրբ ուխտիս Վարագայ Յոհան վարդապետի յոյժ իմաստասիրի, հեզի և խոնարհի. և յաշխարհակալութեան ազգին Նետողի, 'ի հայկազեան տումարի և թուաբերութեան Հայոց մեծաց ՋՃԳ... Գրեցաւ և կազմեցաւ ձեռամբ մեղապարտի Յոհաննէս քահանայի 'ի գաւառիս Վանայ 'ի գեւղս որ կոչի Աւանս ընդ հովանեաւ սուրբ եկեղեցեացս սուրբ Յոհաննու Կարապետի և սուրբ Գրիգորի Հայոց լուսաւորչի »:

— ** Ի փոխումն սուրբ Աստուածածնի և միշտ Կուսին Մարիամու. (Pour le jour de l'Assomption de la très-sainte Vierge). « Արդ հոգւոյն սրբոյ առաջնորդութեամբ և երկիւղիւ Տեառն 'ի հանդէս քննութեանն եկեալ »:

— ** Յաղագս սուրբ խաչին Քրիստոսի Աստուծոյ մերոյ. (Discours sur la sainte Croix). « Նախայաւիտեան բանն Հայր 'ի սկզբան լինելութեանն իւրև արարչագործեաց զամենայն արարածս »:

— ** Ի յարութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. (Sur la Résurrection de N. S.). « Յորժամ զտիրայրին ձմեռն՝ գարնանայինն եղանակն յեղափոխեսցէ » : (Մատենադ. Էջմիածնի, թիւ գրչ. 924):

— ** Յաղագս սուրբ և նկարագրեալ ներբողական պատկերին սրբոյ գաստառակին, կարի հարկաւոր վասն իշխանութեան Հայոց* : (Մատենադարան Էջմիածնի, թիւ գրչ. 915):

* Հրատարակեալ յ'Արարատ ամսագրի Էջմիածնի 1869, յ'էջ 130, 214, 240։

— ** Յաղագս տարադրելոյ եղծեալ երեք բանից աերունական պատկերքին 'ի գաստառանկի տեառն. (Մատենագ. Էջմիածնի. Թիւ գրչ. 919)։

— Սրբոյն Եպիփանու Կիպրացւոյ արքեպիսկոպոսի խօսք յաղագս Բարոյախօսին. (Ὁ φυσιολόγος ἄρχεται λέγειν περὶ τοῦ Λέοντος). « Բարիոք սկսաւ բարոյախօսն յաղագս առիւծուն որ Թագաւորն է ամենայն գազանաց » (Ἀρξώμεθα λαλῆσαι περὶ τοῦ λέοντος, τοῦ βασιλέως τῶν θηρίων).

— ** Մեկնութիւն գրոցն Թագաւորութեանց. (Commentaire sur le livre des Rois). (Մատենագ. Էջմիածնի, Թիւ գրչ. 1091. գրչագիր քառածալ բոլորագիր գրեալ 'ի Թղթի 'ի Թովմայ վարդապետէ 'ի Թուին Հայոց ՉԻԹ)։

** Սաղմոսաց մեկնութեան հատուածք. (Fragments d'un Commentaire sur les livres des Psaumes, apocryphes).

— ** Յառաջաբան սաղմոսաց. « Երանելւոյն Եպիփանեայ եպիսկոպոսի Կիպրացւոյ՝ յաղագս երգոց սաղմոսարանի. — Զամենայն ինչ զոր ասաց հայրն մեր Աթանաս, զոր լուեալ էր նորա 'ի հոգեկիր ծերոյն՝ բաւական համարեցաք պատմել փոքր 'ի շատէ, և գնել 'ի տեղի յառաջաբանի »։

— Երանելւոյն Եպիփանու Կիպրացւոյ 'ի Սաղմոսաց մեկնութենէ. « Ես կացի Թագաւոր 'ի նմանէ. քանզի ըստ մարդանալոյն ասէ կացի. այլ ինքն իբրև զաստուած ունի զբնական Թագաւորութիւնն »։

— Նորին 'ի նոյն գրոց. « Երկինք պատմեն զփառս Աստուծոյ ... Տառ է և բաւական առէ 'ի վարդապետութիւն և յուսումն մարդոյս զարմանազան գեղեցկութիւնք և ամբաւ մեծութիւնք արարածոց և լուսաւորաց »։

— Նորին 'ի նոյն գրոց. «Ո՛վ երգք հոգեխառնք և երանութիւնք զարմանազանք, զոր մարգարէն Դաւիթ երգեաց նուագէ։ Տիրական այսուհետև և ամենայն մեքենայք թշնամւոյն, և ես պատրաստեմ զաւգնականութիւն մարգարէութեանն»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Բայց սակայն Աստուած փշրեսցէ զգլուխս թշնամեաց մերոց ... Եբաց, ասէ, զդրունս դժոխոց, և արար զելս մահու. և ջարդեաց խորամանկեաց զգլուխ թշնամւոյն»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Տէր մեր Յիսուս Քրիստոս եղեալ 'ի գերեզմանի, խորտակեաց զդրունս դժոխոց, և յարոյց զբնութիւնս մեր, և եհան 'ի գերեզմանէն և 'ի ստուերաց մահու փրկեաց զմեզ»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Այս ազգ է որ խնդրէ զտէր. խնդրէ տեսանել զերեսս Աստուծոյ Յակովբայ։ Քանզի յետ մարդանալոյ բանին Աստուծոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ամենայն տիեզերք յաստուածածանաւթութիւն եկին, թողեալ զաստուածս հայրենիս»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Աստուած ընդ ելանել քեզ առաջի ժողովրդեանդ ... Այս ինչ է զոր ասէն, եթէ յայտնել և բնակել քեզ յանապատ և յանբնակ, և ոչ երբէք տեսեալ զլոյս՝ երկիր շարժեցաւ»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Աստուած 'ի տաճարի իւրում 'ի ժամանակի որպէս աւգնական լինէր նմա։ Միաբանի կաթուղիկէ եկեղեցի ընդ ամենայն տիեզերս ընդ ծով և ընդ ցամաք, վասն որոյ և յաղաւթսն մեր ասեմք՝ սուրբ և միայնոյ կաթուղիկէ առաքելական եկեղեցի 'ի ծագաց մինչև 'ի ծագս երկրի»։

— Նորին 'ի նոյն գրոց. «Արդ երանելին Դաւիթ թէպէտև ոչ վրէժս 'ի թշնամւոյն ըստ հրամանի աւրինացն որ ասէ Սիրեսցես զընկերն և ատեսցես զթըշ-

կոտասան ականց. ('Επιφανιοῦ ἐπισκοποῦ Κύπρου πρός Διόδορον ἐπίσκοπον Τύρου περὶ τῶν ΙΒ.' Λίθων, τῶν ὄντων ἐν τοῖς στολμοῖς τοῦ Ααρων βιβλῖος). « Առաջին ական՝ սարդիոն ». (Πρώτος λίθος σαδίον ὁ Βαβυλώνιος): — Այլ բանք յԱկանց գրոց. « Եւ սա ասէր մեր զչարչարելքն »:

— « Հաւաքմունք չար աղանդոց հերձուածողաց, որք 'ի սկզբանէ աշխարհի սերմանեցան ընդ ժամանակս ժամանակս, որ 'ի հեթանոսաց, և որ 'ի կարծիս քրիստոնէութեան աղջի աղջի խուարայքին չարաւեղք վերաբուսեալք հակառակ եկեղեցւոյ Քրիստոսի. զոր կարգեաց սքանչելին այս Եպիփան զպատմաս և զարմատս և զժամանակս իւրաքանչիւր, 'ի գիրսն իւր որ անուանեալ կոչի Սնտիւկորոս, այսինքն Հաւատոց գիրս. զոր Պարոնակոց Եպիփան կարգան »: (Ըստ այլ. ձձ. « Բացատրութիւն բանից ութսուն հերձուածողաց »): (Ανεμνώθη Επιφανίου τοῦ ἁγιωτάτου ἐπισκοποῦ τά Πανάρια ἐν τεῦχεσι μὲν τρισί, τόμοις δὲ ἑπτά, κατὰ αἱρέσεωνδὲ ὀγδοήκοντα. Բուն խորագիրն է. 'Επήφανιοῦ ἐπισκοποῦ Κωνσταντεῖας τῆς Κύπρου κατὰ αἱρέσεων ὀγδοήκοντα, τὸ ἐπικλήθεν Πανάριος, εἴτ'οὖν Κιβώτιος).*

* Յիշատակագիր մը կ'ըսէ. « ՅՀ (370). Սա Աստուածաբանն, Բարսեղ. Նիւսացին, Եպիփան՝ որ յայտնեաց աղանդ մինչև 'ի Քրիստոս, և 'ի Քրիստոսէ մինչև յինքն », ակնարկելով անշուշտ սոյն հայրապետին յօրինած ընդդէմ Հերձուածոց գիրքը:

ԵՐԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՒԳԴՈՆԻ

(ST. IRÉNÉE, ÉVÊQUE DE LYON).

Երանոսի առաքելական և առաքելագործ հայրապետի (+ 202) անուամբ՝ միայն 'ի մեր մատենագրութեան գտանուած այս հատուածոյք հրատարակուեցան նախ՝ 'ի հայ և 'ի լատին, 'ի Փիգրա բենեդիկտեան կրօնաւորէ (այժմ ծիրանաւորեալ եպիսկոպոս) 'ի Spicilegio Solesmensi (Հատոր Ա), զորս ապա Հէրվէյ (Harvey) անգղիացին կրկին տպագրեց յիւրում հաւաքման գրուածոց Երանոսի։ Վերջին տպագրութիւն մ'ալ ըրաւ Մարթէն հայագէտ վարդապետ՝ մեր արդէն յիշատակած Patrum Antenicænorum analecta գրքին մէջ (յ'էջ 30) հանդերձ նոյն սրբոյն անուամբ ասորի մատենագրութեան մէջ պահուած ուրիշ գրուածոց հատուածներով։

—** Սրբոյն Երանոսի հետեւողի առաքելոցն 'ի Յարութիւն տեառն. «Աւրէնք և մարգարէք և աւետարանք քարոզեցին զՔրիստոս ծնեալ 'ի Կուսէն և չարչարեալ 'ի խաչին»։ (Beati Irenei, qui subsecutus est Apostolos, et fuit episcopus. – Lex, propheta et evangelia predicarunt Christum de Virgine natum et in cruce passum).

—** Սրբոյն Երիանոսի հետեւողի առաքելոցն ասացեալ յաղագս որդւոցն Զեբեդեայ. «Յայնժամ մերձեցաւ 'ի նա մայր որդւոցն Զեբեդեայ, հանդերձ որդւովք իւրովք երկիր պագանելով հայցէր ինչ 'ի նմանէ։ — Ոչ դատարկ են միտքս և ոչ վայրապար բանքս առաջի արկելոյ ասացուածոցս, որ և զպատճառանի իմն ունի զկարգ, և զյարմարութիւն առաջին կարգեալն»։ Sermo de filiis Zebedæi. Tunc ac-

նորա ։ Յորժամ վախճանեցաւ երանելին Բարսեղիոս, իմաստուն և անախտական սուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս Նազիանզացւոյ հայեցեալ ընդ նորա ամենաշնորհ յաջողութիւնն ձեռնադրէ զնա գլխաւոր սարկաւագաց »* ...

* Յունական սկզբնագիրն ոչ կայ, ընդհանրապէս զուգընթաց ընդ հայկականիս, անդ անդ տարբերելով, ու մերթ աւելի ընդարձակելով։ Եւագր ծնեալ է յ'345. իր գրուածոց զանազան հատուածք կամ ամբողջութիւնք կը գտնուին նաև 'ի յոյն և 'ի լատին լեզու, ցրուած 'ի Մատենադարանն Հարց (Bibliotheca Patrum), և յորս կը պակասին շատք՝ որ պահուած են 'ի մեր մատենագրութեան, հին՝ բայց անստոյգ ժամանակաց թարգմանութեամբ, զոր կը նշանակենք կրկին աստեղանշօք ։

— Եւագրեայ Նշանակ յԵզեկիէլ. « Իմանամք զմարդն՝ զբանական, զառիւծն՝ զսրտմտականն, ըզզուարակն՝ զցանկական, և զարծուին՝ զգիտութիւնն 'ի վերայ կացեալ այլոցն, որ է հոգին՝ 'ի Պաւղոսէ ասացեալ զմարդոյն » ։

* Աստուածաբանին ընծայուած է յայլոց. (Σης-μαθια εἰς τὸν Ἰεζεχιήλ. Νομίζομεν τὸν ἄνθροπον εἶναι τὸ λογικόν, τὸν λέοντα τὸ θυμικόν).

— Գիտնաւոր և արգիւնաւոր. (Le Moine ou la vie pratique). « Գործնականք ճառից խելամուտ լեցին գիտնականաց, և զգործնականն հատուածս առացեն գիտնականք։ Գործնականք են որ զչարչարելի կողմն ոգւոյն առանց չարչարանաց յանձին ստացեալ բերէ » ։

— Եւագրեայ վասն հանդերձից աբբայից հարցն. « Քանզի յառաջագոյն յղեցեր դու առ իս, Անատոլէ սիրելի եղբայր, մինչդեռ իսկ 'ի Տրին լերին անդ նստէիր, և խնդրեցեր յայտնի առնել քեզ զնշանաւոր հանդերձսն որք յԵգիպտոս միայնակեացքն են »։

— «Քրիստոնէութիւնն է հրաման փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի յորդիւնականաց և 'ի բարոյականաց և յաստուածականն բանաւորաց հաստատեալ»։

— Վասն ութ խորհրդոց. (Evagrii Pontici ad Anatolium de octo vitiosis cogitationibus). «Զմիտս մոլորականս զետեղեցուցանեն ընթերցուածք և արթնութիւնք և աղաւթք։ Զցանկութիւն եռացեալ սանքացեալ թարշամեցուցանեն քաղց և վաստակ և մեկնութիւն»։

— «Վասն ախտիցն որոց միշտ յիշատակքն բծախառն 'ի մեզ կրին, սոցին և զհանգամանս յառաջագոյն յանձինս մեր չարըմբերութեամբ ընկալցուք»։

— Ճառ Քրատեայ. «Աստուծոյ արժանի այն է որ աստուածութեանն ինչ անարժան ոչ գործէ. որ մինչև 'ի փոքրիկն անգր ինչ ճշմարտութեամբ զվարս իւր վարէ. զի չէ փոքր յաշխարհի որ տաէ ոք թէ սակաւիկ միւս եւս ախտեցաւ»։

— Եւագրեայ, (ա՛յլ օր. Նորին յաղագս երջանկութեան). «Առաջին լուսաւոր պատերազմացն՝ աւտարութիւն։ Մանաւանդ յորժամ միայն առանձինն գտանիցես, զազգատոհմն և զաշխարհն և զինչս ամենայն մերկացեալ»*։

* Յոմանց Նեղոսի կ'ընծայուի այս ճառ։

— Վասն ընդունելութեան. «Եթէ յաւտարութիւն գնասցես, մի հիւրասիրութեան ընդունելութիւն յամենեցունց պատրաստեսցես գտանել. անարժան զանձն քո ընդունելութեան համարել, զի այսպէս կարող լինիցիս բամբասանացն զխորհուրդան հալածել»։ (Ի յոյնն՝ միահետ ընդ առաջնոյն)։

— Վասն պաշտաման. «Յորժամ կենաց կցորդ եղբայր քո ճանապարհ երթեալ իցէ, ըստ սովորութեան աղաւթից նորոգեսջիր զաւրս յիշատակս»։ (Անվերնագիր 'ի յոյն բնագրին)։

— Նորին Ճառ երրորդ. « Ժառանգորդք Աստուծոյ, լուարուք զպատգամս Աստուծոյ. Ժառանգակիցք Քրիստոսի, ընկալարուք զՃառս Աստուծոյ, զի տայջիք զայս 'ի սիրտս որդւոց ձերոց և զՃառս իմաստութեան ուսուսջիք նոցա » ։

— Եւագրեայ բան խրատու. « Զերախայրիս կալոյ իմոյ և հնձանի իմոյ մատուցանեմ Քրիստոսի. և կողով զողկուզից բարեխաւսին » ։

— Վասն այնոցիկ որ ընդ քուն ցնորքն անցանեն. « Յորժամ ընդ քուն ցնորիցն » ։

— Վասն Նշանակաց անցաւորութեան. « Ի ժամանակի իբրև միջքն առանց զբաղման » ։

— Եւագրեայ առ Մարտիրոսս. « Ընդհատական Քրիստոսի զծառայսն պատուեսցուք ամենեքեան, և զԵրրորդութիւնն փառաւորեսցուք » ։

— Վասն յարութեան. « Յարութեանն Քրիստոսի երկրպագեսցուք զի աւգնական եղև յուսացելոց իւրոց։ Ամենայն հեթանոսք, յարուցելոյն Քրիստոսի երկիր պագցուք, Ճշմարտին Աստուծոյ փառս մատուսցուք » ։

— Նորին Եւագրեայ. « Եթէ ունիցիս ընդ քեւ եղբարս, մի հպարտանայցես 'ի վերայ նոցա իբրև զվարդապետ. այլ փութասջիր ջանասջիր շահել զոգիս նոցա » ։

— Հաւատք որ 'ի Նիկիա. « Հաւատամք 'ի մի յաստուած, յամենակալ յարարիչն երկնի և երկրի՝ աներևոյթ և երևելի արարածոց » ։

— ** Եւագրեայ Հարիւրաւորքն վեցերորդք՝ յաղագս ընդդէմ բանաստեղծիցն արտաքնոց։ Առաջին հարիւրեակ. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. « Կատարեցաւ առաջին հարիւրեակն՝ պակաս տասամբ) » ։*

* Ձեռագիր մը կը յաւելու. « Վարդան վարդապետի Թարգմանեալ » ։ Սոկրատ, պատմագիրն եկե-

զեցուոյ. Եւագրի անուամբ կը յիշատակէ վեցհարիւր Թուով կանխագոյց խնդիրք (Problèmes prognostiques), բաժնուած 'ի հարիւրեակս. սուրբն Մաքսիմոս կը յիշէ զերկրորդն, ուստի երկու հատուածք ալ մէջ կը բերէ իր գրուածոց մէջ. կը յիշէ նաև զհինգերորդ հարիւրեակն: Գեննադիոս Թէպէտև ասոնց խօսքը չըներ, բայց կը յիշէ Եւագրի անուամբ զանազան համառօտ ու վճռական խօսքեր՝ յօրինեալք վասն կրօնաւորաց: Ասոնք են ահաւասիկ հետևեալքն՝ անկորուստ պահուած 'ի մեր մատենագրութեան:

— Նորին երկրորդ հարիւրեակն. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. «Կատարեցաւ երկրորդ հարիւրն՝ տասն պակաս») :

— Նորին երրորդ հարիւրեակ. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. «Կատարեցաւ երրորդ հարիւրն՝ տասն պակաս»):

— Նորին չորրորդ հարիւրեակն. (իննսուն հատուածք, և այս. «Կատարեցաւ հինգերորդ հարիւրն տասն պակաս»):

— Նորին վեցերորդ հարիւրեակ. (իննսուն հատուածք, և այս. «Կատարեցաւ վեցհարիւրեակս, տասն պակաս»):

— Նորին պակասք հարիւրեկացն. (վաթսուն հատուածք): «Կատարեցան պակասորդք վեցհարիւրեն: Եւ ասաց ոմն 'ի կատարելոց Թէ իննսնիւն զԵրրորդութիւնն փառաւորեաց, և վաթսնիւս զապականացու աշխարհս պարսպեաց վաթսուն վաթսուն տպաւորչինաւք որք պահեն զհանգիստ երկնից արքային, որ է հոգի արդարոց անձանց առաքինեաց»:

— Ընդդէմ պատասխանի 'ի գրոց սրբոց առ դեւսըն որ փորձէն զմեզ: «Որ 'ի ներքոյ երկնից բանաւորք են՝ է որ ջանան, է որ ջանալոյն կցորդ լինին, և է որ հակառակ ջանան: Ջանան մարդիկ. ջանալոյն

կցորդ լինին հրեշտակք․ որ ջանալոյն հակառակ կան՝ դեւք պիղծք »։

Ա․ — Առ խորհուրդն որկորամոլութեան․ « Առ խորհուրդն որ առանց վաստակոյ և պահոց կամի-ցին գործել զերկիրն զբանաւոր »։ (Եօթանասուն և մի համառօտ հատուածք կամ խրատք)։

Բ․ — Առ խորհուրդն պոռնկութեան․ « Խոր-հուրդքն պոռնկութեան 'ի ներքս 'ի մտի անդր կեր-պարանեն զայլոյ կին, և զախտն 'ի պատկերին երևե-ցուցանեն կթել »։ (Վաթսունևչորս հատուածք)։

Գ․ — Առ խորհուրդն արծաթսիրութեան․ « Առ դևն որ խոստանայ ինձ ընդ միոյ իմ ածել ինչ զմը-տաւ կամ երազովք յազգատոհմէ անտի կամ յայլոց մեծամեծաց տալ բերել ինձ ոսկի »։ (Վաթսունևե-վեց հատուածք)։

Դ․ — Առ խորհուրդն տրտմութեան․ « Առ անձն որ համարեցի եթէ 'ի տրտմութենէ անտի ոչ լսէ Տէր հեծութեան մերում »։ (Ութսունևմի հատուածք)։

Ե․ — Առ խորհուրդն սրտմտութեան․ « Առ անձն որ ոչ գիտէ թէ զեղբաւր ոխակալութիւն հնացեալ դիւրաւ կաշառք շիջուցանեն »։ (Վաթսունևհինգ հատուածք)։

Զ․ — Առ խորհուրդն երկբայ ձանձրութեան․ « Առ խորհուրդն ձանձրութեան որ գործել ձեռաւքն խորշիցի, և այլ ճարտարութիւն 'ի մէջ ածեալ կամիցի անջան և անվաստակ կերակրել »։ (Վաթսուն հա-տուածք)։

Է․ — Առ խորհուրդս նորափառութեան․ « Առ նո-րափառ ամբարհաւաճ խորհուրդն որ խրատ տան մեզ տարապարտուց ընդ աշխարհս խառնել, և քոյրս և եղբայրս 'ի միայնակեցութեան վարս արկանել »։ (Քառասունևհինգ հատուածք)։

— Առ խորհուրդն ամբարտաւանութեան․ « Առ դևն ամբարտաւանութեան որ ասէ թէ ես եմ սուր-

րըն Աստուծոյ » ։ (Վաթսունևեօթն հատուածք)։ ՀԱ․ ԿԴ․ ԿՋ․ ՁԱ․ ԿԹ․ Կ․ ԽԵ․ ԿԷ․ բովանդակն տունք ՇԻԳ ։

Յիշատակարան․ « ․․․ Գրեցաւ հոգելընկալ և աստուածազարդ մատեանս առ 'ի յԵւագրէ սրբոյ անապատաւորէ արարեալ սատար օգնականի հոգւոց մերոց, 'ի թուի ՋՄԴ յաստուածարեալ անապատիս Մեծոփայ վանք առձայնելոյ ։ Քանզի նախ-այսմ մատեանի 'ի սոյն տեղւոջ սկիզբն արարեալ գծագրութեամբ, յայլում տեղի փոխելով, և անդուստ դարձեալ յայլում վայրի զսոյ ընդ մեզ կրելով, իսկ դարձեալ ըստ նախախնամելոյն Աստուծոյն իմոյ Յիսուսի 'ի սոյն տեղի եկաւորութեամբ զսա յանդ հանեալ կատարեցաք ընդ հովանեաւ սուրբ մաւրս լուսոյ Աստուածածնիս, յառաջնորդութեան տեառն Սարգսի և վերակացուի հոգւոց մերոց ։ Գրեալ եղև ձեռամբ անպիտան և յետին ապաստաւորի բանի Միքայէլ անուն վարդապետի » ․․․ ։

Եւագրեայ բան խրատու․ « Ը․ Յիշման տեառն մերոյ մնալ յարակայ 'ի մեզ այս են աւիթք․ աւտարութիւն, առանձնաւորութիւն, պարապումն 'ի թանձունս հոգւոց․ բայց 'ի խորշըլթէ և 'ի հանդերձէ, և 'ի նշանաւոր վերարկուէ » ։

Թ․ — Նորին առ աշակ' ․․․ դիմակ բանից․ « Որդեակ իմ սերամբ, ընդէ՞ր թախծիս, զի յորժամ ննջես, լսես յիմաստութենէ » ։ Առէ աշակերտն․ « Վասն զի նմանիմ մեռելոց անգործից » ։

— Նորին յորդորումն․ « Ի յաղաւթելն քո, որդեակ, սանձեա զլեզուդ․ և զմարմինդ քո արգել կայանիւք ուր բանդ է երկնաւորին Աստուծոյ․ գիր 'ի մամուլս գրոց զուշ քո, և աղաղակեսցէ սիրտ քո առ Քրիստոս » ։

Ժ․ — Նորին Եւագրեայ բան խրատու միայնակեցաց․ « Լուր զբանն տեառն, որդեակ, որ ասէ առ

նմին. սակայն գործով իւրով ոչինչ հեռի էր յաւ-ւետարանական շնորհացն » :

— Նորին 'ի նոյն գրոց. « Հիմունք նորա 'ի լերանն սուրբ նորա : Հիմունք բարեպաշտութեան աստուա-ծապաշտութիւնն է. լերանն սուրբ՝ յոր հիմնացեալ հաստատեցաւ եկեղեցի, այսինքն է՝ զոր փրկիչն ընտրեաց և հիմնեցոյց զառաքելականն » :

— ** Ի սուրբ խաչն. (Sur la sainte Croix). « Խաչիւ Քրիստոսի տաւնեցուք » :

— ** Ի խաչվերացն. (Sur l'exaltation de la sainte Croix). « Ցարժեսցուք իբրև զնուագարան այ-սու, սիրելիք, զլեզուս մեր » :

— Ի Թաղումն. (Εἰς τὴν θεόσωμον ταφὴν τοῦ Κυρίου καὶ σωτῆρον ἡμῶν Ἰησόν Χριστόν, καὶ εἰς τὸν Ιωσὴφ τὸν ἀπὸ Ἀριμαθαίας, καὶ εἰς τὴν ἐν τῷ ᾅδῃ τοῦ Κυριοῦ κατάβασιν). « Զինչ է այս. այսաւր լռութիւն բազում յերկրի » :

— Ի յարութիւնն. (Εἰς τὴν ἁγίαν τοῦ Χριστοῦ ἀνάστασιν). « Այսօր Հրեայքն յԵրուսաղէմ » :

— Ներբողեան ասացեալ 'ի սուրբ կոյսն Աստուա-ծածին. (Ἐγκώμιον εἰς τὴν ἁγίαν τὴν Θεοτόκον). « Զփայլեալ ճառագայթս աստուածայինս, զանհա-գին և զանհասանելի զաւրութիւնն, զերկնից սքան-չումն և զերկրի տիեզերաց » :

— ** Ի սուրբ Աստուածածինն. (Sur le même sujet). « Անճառ է խորհուրդս » :

— Երանելւոյն Եպիփանու Կիպրացւոյ 'ի Հաւա-տոց գրոց (ա՛յլ օր. 'ի Պարունակաց գրոց) վասն յա-րութեան մեռելոց. (Fragment d'un discours sur la résurrection des morts). « Եւ որք զանշարժ խոստովանութիւնն որ յաւրինացն և 'ի մարգարէից և յառաքելոցն և յաւետարանչացն՝ մինչև 'ի ժա-մանակս 'ի տիեզերական եկեղեցւոյն անապականու-թեամբ պահեալ » :

— Ի Յովսէփ և 'ի տնտեսութիւն տեառն. (Sur Joseph et le mystère de l'Incarnation de N. S.). «Զի գիտելի լիցի ամենեցուն»։

— ** Հարցումն Թէոդորոսի քահանայի ընդ երանելին Եպիփան վասն քառասնորդաց պահոց պասեքին. (Les demandes du prêtre Théodore, et réponses d'Épiphane). «Կամիմ ուսանել... Եթէ Մովսէս քառասուն աւր պահեաց»*։

* Թուի շարադրութիւն անհարազատ՝ յերրորդ դէմս խօսելով զԵպիփանէ. և հաւանականաբար հայ վարդապետի մը երկասիրութիւն, յորում կը յիշուի նաև սուրբ Լուսաւորիչ։

— ** Հարցումն Մենանդրի առ Եպիփան. (Les demandes de Ménandre, et réponses d'Épiphane). «Նիւթ արարչութեան»։

— ** Հարցումն Եղիոսի առ Եպիփան, վասն ամենայն լուսաւորաց. «Զի՞նչ են ամանք»։

— Վասն Պտղոմեանց և թարգմանութեան եւթանասնից. ('Εβδομήκονταδύο γὰρ ὄντες τὸν ἀριθμὸν καί, ἐν τῇ Φαρίᾳ νήσῳ). «Ամենառատ պարգեւացն Աստուծոյ»։

— Ի մահն եօթանասուներկու առաքելոց. (Մատենադարան Մխիթ. 'ի Վիեննա, թիւ 21)։

— Բանք յաղագս քարոզութեան առաքելոց և աշակերտացն Քրիստոսի. «Յետ վախճանելոյ առաքելոց»։

— Մահ մարգարէից. (Περὶ τῶν προφητῶν πῶς ἐκοιμήθησαν καὶ ποῦ κεῖνται)*.

* Աստուածաշնչի գրչագրաց ու ճաշոց գրոց մէջ գտնուածներուն շատ տեղ համաձայն, և հաւանականաբար թարգմանութիւնք Եպիփանու այս երկասիրութեան։

— Սրբոյն Եպիփանու ասացեալ զանուանս վասն ականց պատուականաց։ — «Վասն զօրութեան եր-

կտակարանին ականց. ('Επιφανιοῦ ἐπισκοποῦ Κύπρου πρός Διόδορον ἐπίσκοπον Τύρου περὶ τῶν ΙΒ.' Λίθων, τῶν ὄντων ἐν τοῖς στολμοῖς τοῦ Ααρων βιβλῖος). « Առաջին ակն՝ սարդիոն ». (Πρώτος λίθος σαδίον ὁ Βαβυλώνιος)։ — Այլ բանք յԱկանց գրոց. « Եւ նա տէր մեր զչարչարելին »։

— « Հոգեվարութիւնք չար ազանդաց հերձուածողաց, որք 'ի սկզբանէ աշխարհի սերմանեցան ընդ ժամանակս ժամանակս, որ 'ի հեթանոսաց, և որ 'ի կարծիս քրիստոնէութեան ազգի ազգի խաւարային չարաւեացք վերաբերեալք հակառակ եկեղեցւոյ Քրիստոսի. զոր կարգեաց սքանչելին այս Եպիփան զպատճառս և զարմանս և զժամանակս իւրաքանչիւր, 'ի գիրսն իւր որ անուանեալ կոչի Ոսկիեկորոս, այսինքն Հաւատոյ գիրս. զոր Գորունակաց Եպիփան կարգան »։ (Բառ. սեպ. ճճ. « Ցուցարաւորութիւն բանից ութսուն հերձուածողաց »)։ (Ανεμνώθη Επιφανίου τοῦ ἁγιωτάτου ἐπισκοποῦ τά Πανάρια ἐν τεῦχεσι μὲν τρισί, τόμοις δὲ ἑπτά, κατὰ αἱρέσεωνδὲ ὀγδοήκοντα. Բուն խորագիրն է. 'Επήφανιοῦ ἐπισκοποῦ Κονσταντεῖας τῆς Κύπρου κατὰ αἱρέσεων ὀγδοήκοντα, τὸ ἐπικλήθεν Πανάριος, εἴτ'οὖν Κιβώτιος).*

* Յիշատակագիր մը կ'ըսէ. « ՅՀ (370). Սա Աստուածաբանն, Բարսեղ, Նիւսացին, Եպիփան՝ որ յայտնեաց ազանդ մինչև 'ի Քրիստոս, և 'ի Քրիստոսսէ մինչև յինքն », ակնարկելով անշուշտ սուրբ հայրապետին յօրինած ընդդէմ Հերձուածոց գիրքը։

ԵՐԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՒԳԴՈՆԻ

(ST. IRÉNÉE, ÉVÊQUE DE LYON).

Երանոսի առաքելական և առաքելագործ հայրապետի (✝ 202) անուամբ՝ միայն 'ի մեր մատենագրութեան գտանուած այս հատուածքս հրատարակուեցան նախ՝ 'ի հայ և 'ի լատին, 'ի Փիտրա բենեդիկտեան կրօնաւորէ (այժմ ծիրանաւորեալ եպիսկոպոս) 'ի Spicilegio Solesmensi (Հատոր Ա), զորս ապա Հերվէյ (Harvey) անգղիացին կրկին տպագրեց յիւրում հաւաքման գրուածոց Երանոսի։ Վերջին տպագրութիւնն մ'ալ ըրաւ Մարթէն հայագէտ վարդապետ՝ մեր արդէն յիշատակած Patrum Antenicænorum analecta գրքին մէջ (յ'էջ 30) հանդերձ նոյն սրբոյն անուամբ ասորի մատենագրութեան մէջ պահուած ուրիշ գրուածոց հատուածներով։

— ** Սրբոյն Երանոսի հետեւողի առաքելոցն 'ի Յարութիւն տեառն. «Աւրէնք և մարգարէք և աւետարանք քարոզեցին զՔրիստոս ծնեալ 'ի Կուսէն և չարչարեալ 'ի խաչին»։ (Beati Irenei, qui subsecutus est Apostolos, et fuit episcopus. – Lex, propheta et evangelia predicarunt Christum de Virgine natum et in cruce passum).

— ** Սրբոյն Երիանոսի հետեւողի առաքելոցն ասացեալ յաղագս որդւոցն Զեբեդեայ. «Յայնժամ մերձեցաւ 'ի նա մայր որդւոցն Զեբեդեայ, հանդերձ որդւովք իւրովք երկիր պագանելով հայցեր ինչ 'ի նմանէ։ — Ոչ դատարկ են միտքս և ոչ վայրապար բանքս առաջի արկելոյ ասացուածոցս, որ և զպատճառանի իմն ունի զկարգ, և զյարմարութիւն առաջին կարգեալն»։ Sermo de filiis Zebedæi. Tunc ac-

cessit ad eum mater filiorum Zebedæi ... Inutiles quidem non sunt hi sensus, nec frustranea verba, quæ dicendis, prœmii instar, præmissa, habent tamen cum prius expositer convenientiam. (*Մատենադարան Մխիթարեանց 'ի Վիեննա*)։

— ** *Երենիոսի է ասացեալ. « Յորժամ և արարածս ազատեալ և նորոգեալ, բազմութիւն 'ի վեր առեալ բուսուսցէ ամենազան կերակրոց 'ի ցաւղոյ երկնի և 'ի պարարտութենէ երկրի, որպէս ծերունիքն յիշեն, որք զՅովհաննէս զաշակերտն տեառն տեսին »։* (Irenæi dictum. - Quum creatura hæc liberata (fuerit) et renovata, multitudinem escarum cujuscumque specii germinabit).

— ** *Երենիոսի հետեւողի ասացեալ. « Որք հերձուան և պատառեն զմին, զՌովբովամու պատուհասն ընկալցին. քանզի անարգեն զՈրդին Աստուծոյ և զՄարիամայ փրկութիւն ուրանան »։* (Irenæi dictum. - Qui dividendo unicum frangunt, Reboami retribuitionem accipient).

— ** *Նորին ասացեալ. « Որ եկն և մի բնութիւն Աստուծոյ և մարդոյ ներգործեաց. իսկ մեք ոչ կարեմք կցորդ լինել անապականութեանն »։* (Ejusdem dictum. - Ipse venit, Dei et hominis naturam in unum conducens).

— ** *Նորին ասացեալ. « Ընդունայն և սնոտիք են որ զԱստուծոյ զփրկութիւնն ուրանան, զոր 'ի մարդանալն իւրում շնորհեաց մեզ »։* (Ejusdem dictum. - Vani et futiles sunt qui Dei salutem negant).

— ** *Երենոսի Լոկտոնայ եպիսկոպոսի վկայութիւն հաւատոյ. « Անջատեալ են բարք նոցա յԱստուծոյ. և ոչ գիտելով զսորա բանն միածին, որ միշտ ընդ մարդկութեանս միաւորեալ, և ընդ սմա զանկեալ ընդ իւրում ստեղծուածիս »։* (Irenæi, Lugdunensis episcopi, testimonium de fide. - A Deo separati sunt illi, qui non fatentur).

— ** Նորին ասացեալ 'ի հերձուածս. «Զհերձուածս գործեն որ զմեծ և զփառաւորեալ մարմինն Քրիստոսի բաժանեն և հատակոտորեն» ։ (Inter hereticos ablegandi sunt qui magnum et gloriosi Christi corpus dividunt et mutilant).

— ** Նորին ասացեալ. «Եսայի ասէ. Մերձեցայ առ կինն իմ մարգարէ, և ծնաւ որդի սքանչելի խորհրդակից, աստուած հզօր իշխան, քարոզելով ըղմիութիւն բանին առ ստեղծուածն իւր, յայտնէին, քանզի բանն մարմին եղև, և որդին Աստուծոյ՝ որդի մարդոյ» ։ (Ejusdem dictum. - Isaias ait. Et accessi ad prophetissam, et concepit filius).

— ** Երանոսի եպիսկոպոսի հետևողի առաքելոցն ('ի Մատթէոսի մեկնութենէն) 'ի խորհուրդ տօնի յարութեանն ։ (Du Commentaire de l'évangile de saint Mathieu, sur le mystère de la résurrection de N. S.).

— Երիանոսի յաղագս գնացից Առաքելոցն և բանից հերձուածողաց. (Զուգայ) ։

— Իրենէոսի յաղագս միաւորութեան ։

ԵՒԱԳՐ ՊՈՆՏԱՑԻ

(ÉVAGRE DE PONTE)

— Վարք Եւագրեայ երանելւոյ. «Ի բազումս մերս, ով սիրելիք, կարի յոյժ զարմանալի և հռչակաւոր երևեալ վարուք հաւատարիմ ծառայն Աստուծոյ Եւագրիոս, այր վարժ ամենայնիւ ըստ նմանութեան առաքելոց ... Սա էր յազգէ Պոնտացի, 'ի քաղաքէ Իբերիայ, որդի երիցու առն բարեպաշտի, գրակարդաց սրբոյն Բարսղի եպիսկոպոսի Նիոկեսարիացւոց. երևելի ամենեցուն յաղագս լուսաւոր իմաստից

նորա: Յորժամ վախճանեցաւ երանելին Բարսեղիոս, իմաստուն և անախտական սուրբ եպիսկոպոսն Գրիգորիոս Նազիանզացւոյ հայեցեալ ընդ նորա ամենաշնորհ յաջողութիւնն ձեռնադրէ զնա գլխաւոր սարկաւագաց »* ...

* Յունական սկզբնագիրն ոչ կայ, ընդհանրապէս զուգընթաց ընդ հայկականիս, այլ տեղ տեղ տարբերելով, ու մերթ աւելի ընդարձակելով: Եւագր ծնած է յ'345. իր գրուածոց զանազան հատուածք կամ ամբողջութիւնք կը գտնուին նաև 'ի յոյն և 'ի լատին լեզու, ցրուած 'ի Մատենադարանս Հարց (Bibliotheca Patrum), և յորս կը պակասին շատք՝ որ պահուած են 'ի մեր մատենագրութեան, հին՝ բայց անստոյգ ժամանակաց թարգմանութեամբ, զոր կը նշանակենք կրկին աստեղանշօք:

— Եւագրեայ Նշանակ յԵզեկիելէ. « Իմանամք զմարդն՝ զբանական, զառիւծն՝ զսրտմտականն, ըզզուարակն՝ զցանկական, և զարծուին՝ զգիտութիւնն 'ի վերայ կացեալ այլոցն, որ է հոգին՝ 'ի Պաւղոսէ ստացեալ զմարդոյն »:

* Աստուածաբանին ընծայուած է յայլոց. (Σης-μαθια εἰς τὸν Ἰεζεχιὴλ. Νομίζομεν τὸν ἄνθροπον εἶναι τὸ λογικόν, τὸν λέοντα τὸ θυμικόν).

— Գիտնաւոր և արդիւնաւոր. (Le Moine ou la vie pratique). « Գործնականք ճառից խելամուտ լիցին գիտնականաց, և զգործնականն հատուածս տեսցեն գիտնականք: Գործնականք են որ զչարչարելի կողմն ոգւոյն առանց չարչարանաց յանձին ստացեալ բերէ »:

— Եւագրեայ վասն հանդերձից սրբոց հարցն. « Քանզի յառաջագոյն յղեցեր դու առ իս, Անատոլէ սիրելի եղբայր, մինչդեռ իսկ 'ի Տրին լերին անդ նստէիր, և խնդրեցեր յայտնել քեզ զնշանաւոր հանդերձն որք յԵգիպտոս միայնակեացքն են »:

— «Քրիստոնէութիւնն է հրաման փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի յարգիւնականաց և 'ի բարբարականաց և յաստուածական բանաւորաց հաստատեալ»։

— Վասն ութ խորհրդոց. (Evagrii Pontici ad Anatolium de octo vitiosis cogitationibus). «Զմիտս մոլորականս զետեղեցուցանեն ընթերցուածք և տքնութիւնք և աղօթք։ Զղջանկութիւն եռացեալ սանքացեալ թարշամեցուցանեն քաղց և վաստակ և մենութիւն»։

— «Վասն ախտից որոց միշտ յիշատակքն բծախաւն 'ի մեզ կրին, սոցին և զհանգամանս յառաջագոյն յանձինս մեր շարժմբերութեամբ ընկալցուք»։

— Ճառ Քրոնեայ. «Աստուծոյ արժանի այն է որ աստուածութեանն ինչ անարժան ոչ գործէ. որ մինչև 'ի փոքրիկն անգր ինչ Ճշմարտութեամբ զվարս իւր վարէ. զի չէ փոքր յաշխարհի որ ասէ ոք թէ սակաւիկ միւս ևս պիտեցաւ»։

— Եւագրեայ, (այլ օր. Նորին յաղագս երջանկութեան). «Առաջին լուսաւոր պատերազմացն՝ առաքինութիւն։ Մանաւանդ յորժամ միայն առանձինն դիմեսցես, զազգատոհմն և զաշխարհն և զինչս ամենայն մերկացեալ»*։

* Յոմանց Նեղոսի կ'ընծայուի այս Ճառ։

— Վասն ընդունելութեան. «Եթէ յուսարութիւն գնասցես, մի հիւրասիրութեան ընդունելութիւն յամենեցունց պատրաստեցիս գտանել. անարժան զանձն քո ընդունելութեան համարել, զի այսպէս կարող լինիցիս բամբասանացն զխորհուրդն հալածել»։ (Ի յոյնն՝ միահեա ընդ առաջնոյն)։

— Վասն պաշտաման. «Յորժամ կենաց կցորդ եղբայր քո Ճանապարհ երթեալ իցէ, ըստ սովորութեան աղաւթից նորոգեսջիր զսորա յիշատակս»։ (Անվերնագիր 'ի յոյն բնագրին)։

— Նորին Ճառ երրորդ. « Ժառանգորդք Աստուծոյ, լուարուք զպատգամս Աստուծոյ. ժառանգակիցք Քրիստոսի, ընկալարուք զՃառս Աստուծոյ, զի տայջիք զայս 'ի սիրտս որդւոց ձերոց և զՃառս իմաստութեան ուսուսջիք նոցա »։

— Եւագրեայ բան խրատու. « Զերախայրիս կալոյ իմոյ և հնձանի իմոյ մատուցանեմ Քրիստոսի. և կոչեմ զօգնութիւն բարեխաւսին »։

— Վասն այնոցիկ որ ընդ քուն ցնորքն անցանեն. « Ցորժամ ընդ քուն ցնորիցն »։

— Վասն նշանակաց անցաւորութեան. « Ի ժամանակի իբրև միտքն տանց զբազմանն »։

— Եւագրեայ առ մարտիրոսս. « Զնահատակսն Քրիստոսի զծառայսն պատուեսցուք ամենեքեան, և զԵրրորդութիւնն փառաւորեսցուք »։

— Վասն յարութեան. « Յարութեանն Քրիստոսի երկրպագեսցուք զի ազնական եղև յուսացելոց իւրոց։ Ամենայն հեթանոսք, յարուցելոյն Քրիստոսի երկիր պագցուք, Ճշմարտին Աստուծոյ փառս մատուսցուք »։

— Նորին Եւագրեայ. « Եթէ ունիցիս ընդ քեւ եղբարս, մի հպարտանայցես 'ի վերայ նոցա իբրև զվարդապետ. այլ փութասջիր ջանասջիր շահել զոգիս նոցա »։

— Հաւատք որ 'ի Նիկիա. « Հաւատամք 'ի մի յաստուած, յամենակալ յարարիչն երկրի և երկնի՝ աներեւոյթ և երեւելի արարածոց »։

— ** Եւագրեայ Հարիւրաւորքն վեցերորդք՝ յաղագս ընդդէմ բանաստեղծիցն արտաքնոց։ Առաջին հարիւրեակ. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. « Կատարեցաւ առաջին հարիւրեակն՝ պակաս տասամբ) »։ *

* Ձեռագիր մը կը յաւելու. « Վարդան վարդապետի թարգմանեալ »։ Սոկրատ, պատմագիրն եկե-

զեցուոյ. Եւագրի անուամբ կը յիշատակէ վեցհարիւր Թուով Կանխացոյց խնդիրք (Problèmes prognostiques), բաժնուած 'ի հարիւրեակս. սուրբն Մաքսիմոս կը յիշէ զերկրորդն, ուստի երկու հատուածք ալ մէջ կը բերէ իր գրուածոց մէջ. կը յիշէ նաև զհինգերորդ հարիւրեակն: Գեննադիոս Թէպէտև ասոնց խօսքը չըներ, բայց կը յիշէ Եւագրի անուամբ զանազան համառօտ ու վճռական խօսքեր՝ յօրինեալք վասն կրօնաւորաց: Ասոնք են ահաւասիկ հետևեալքն՝ անկորուստ պահուած 'ի մեր մատենագրութեան:

— Նորին երկրորդ հարիւրեակն. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. «Կատարեցաւ երկրորդ հարիւրն՝ տասն պակաս»):

— Նորին երրորդ հարիւրեակ. (իննսուն հատուածք, և 'ի կատարածին. «Կատարեցաւ երրորդ հարիւրն՝ տասն պակաս»):

— Նորին չորրորդ հարիւրեակն. (իննսուն հատուածք, և այս. «Կատարեցաւ հինգերորդ հարիւրն տասն պակաս»):

— Նորին վեցերորդ հարիւրեակ. (իննսուն հատուածք, և այս. «Կատարեցաւ վեցհարիւրեակս, տասն պակաս»):

— Նորին պակասք հարիւրեկացն. (վաթսուն հատուածք): «Կատարեցան պակասորդք վեցհարիւրին: Եւ ասաց ոմն 'ի կատարելոց թէ իննանիւն զերրորդութիւնն փառաւորեաց, և վաթսնիւս զապականացու աշխարհս պարսպեաց վաթսուն վաթսուն սպառազինաւք որք պահեն զհանգիստ երկնից արքային, որ է հոգի արդարոց անձանց առաքինեաց»:

— Ընդդէմ պատասխանի 'ի գրոց սրբոց առ դեւսըն որ փորձեն զմեզ: «Որ 'ի ներքոյ երկնից բանաւորք են՝ է որ ջանան, է որ ջանալըն կցորդ լինին, և է որ հակառակ ջանան: Ջանան մարդիկ, ջանալըն

կցորդ լինին հրեշտակք. որ ջանալոյն հակառակ կան՝ դեւք ոխիղծք»:

ա. — *Առ խորհուրդն որկորստութեան. «Առ խորհուրդն որ տանից վաստակոյ եւ պահոց կամիցին գործել զերկիրն զբանաւոր»: (Եօթանասուն եւ մի համառօտ հատուածք կամ խրատք):*

բ. — *Առ խորհուրդն պոռնկութեան. «Խորհուրդքն պոռնկութեան 'ի ներքս 'ի մտի անդր կերպարանեն զայլոյ կին, եւ զախտն 'ի պատկերին երեւեցուցանեն կթել»: (Վաթսունեչորս հատուածք):*

գ. — *Առ խորհուրդն արծաթսիրութեան. «Առդեւն որ խոստանայ ինձ ընդ միտս իմ ածել ինչ զմըտաւ կամ երազովք յազգատոհմէ անտի կամ յայլոց մեծամեծաց տալ բերել ինձ ոսկի»: (Վաթսունեւվեց հատուածք):*

դ. — *Առ խորհուրդն տրտմութեան. «Առ անձն որ համարիցի եթէ 'ի տրտմութենէ անտի ոչ լուէ Տէր հեծութեան մերում»: (Ութսունեւմի հատուածք):*

ե. — *Առ խորհուրդն սրտմտութեան. «Առ անձն որ ոչ գիտէ թէ զեղբաւր ոխակալութիւն հնացեալ դիւրաւ կաշառք չիջուցանեն»: (Վաթսունեւինն հատուածք):*

զ. — *Առ խորհուրդն երկրայ ձանձրութեան. «Առ խորհուրդն ձանձրութեան որ գործել ձեռաւքն խորշիցի, եւ այլ ճարտարութիւն 'ի մէջ առեալ կամիցի անջան եւ անվաստակ կերակրել»: (Վաթսուն հատուածք):*

է. — *Առ խորհուրդս նորափառութեան. «Առ նորափառ ամբարհաւաճ խորհուրդն որ խրատ տան մեզ տարապարտուց ընդ աշխարհս խառնել, եւ քոյրս եւ եղբայրս 'ի միայնակեցութեան վարս արկանել»: (Քառասունեւհինգ հատուածք):*

— *Առ խորհուրդն ամբարտաւանութեան. «Առդեւն ամբարտաւանութեան որ ասէ թէ ես եմ սուր-*

բըն Աստուծոյ » ։ (Վաթսուներեօթն հատուածք) ։ ՀԱ․ ԿԴ․ ԿԶ․ ՁԱ․ ԿԹ․ Կ․ ԽԵ․ ԿԷ․ բովանդակն տունք ՇԻԳ ։

Յիշատակարան․ « ․․․Գրեցաւ հոգելընկալ և աստուածազարդ մատեանս առ 'ի յՆուագրէ սորոյ անապատաւորէ արարեալ սատար օգնականի հոգւոց մերոց, 'ի Թուի ՋՄԴ յաստուածաբնակ անապատիս Մեծոփայ վանք առաձայնելոյ ։ Քանզի նախ-այսմ մատենի 'ի սոյն տեղւոջ սկիզբն արարեալ գծագրութեամբ, յայլում տեղի փոխելով, և անդուստ դարձեալ յայլում վայրի զսայ ընդ մեզ կրելով, իսկ դարձեալ ըստ նախախնամելոյն Աստուծոյն իմոյ Յիսուսի 'ի սոյն տեղի եկաւորութեամբ զսա յանդ հանեալ կատարեցաք ընդ հովանեաւ սուրբ մասունս լուսոյ Աստուածածնիս, յառաջնորդութեան տեառն Սարգսի և վերակացուի հոգւոց մերոց ։ Գրեալ եղև ձեռամբ անպիտան և յետին սպասաւորի բանի Մխիթարի անուն վարդապետի » ․․․ ։

Նուագրեայ բան խրատու․ « Ը․ Յիշման տեառն մերոյ մեռեալ յարակայ 'ի մեզ այս են առիթք․ ստաբութիւն, առանձնաւորութիւն, պարապումն 'ի թանձունց հոգւոց, բայց 'ի խրճըթէ և 'ի հանդերձէ, և 'ի նշանաւոր վերարկուէ » ։

Թ․ — Նորին առ աշակ՛ ․․․ դիմակ բանից․ « Որդեակ իմ սերամք, ընդէ՞ր թախծիս, զի յորժամ ննջես, լսես յիմաստութենէ » ։ Ասէ աշակերտն․ « Վասն զի՛ նմանիմ մեռելոց անգործից » ։

— Նորին յորդորումն․ « Ի յաղաւթելն քո, որդեակ, սանձեա զլեզուդ․ և զմարմինդ քո արգել կայանիւք ուր բանդ է երկիւղին Աստուծոյ․ դիր 'ի մամուլս դրոց զուշ քո, և աղաղակեսցէ սիրտ քո առ Քրիստոս » ։

Ժ․ — Նորին Նուագրեայ բան խրատու միայնակեցաց․ « Լուր զբանն տեառն, որդեակ, որ ասէ առ

Երեմիաս. Մի առնուր դու քեզ կին յերկրիս յայսմիկ »։

— ** ԺԱ. Նորին Եւագրեայ Թուղթ առ Մելինէ տիկին. զի առաքեաց առ Եւագր Թէ ո՞ւր և զիարդ կայցէ. և գրեաց առ (նա) զփորձութիւնս իւր. (Lettres à Mélanie). « Յառաջի ուրեք ասացեալ է Թէ խածեալն յիժէ զցաւս իւր պատմէ հաղորդին կրից իւրոց, զի դիպեսցի ինչ մխիթարութեան »* ։

* Եւագրի առ Մելինէ և սորա առ Եւագր Թղթակցութիւնը կը յիշէ և սուրբն Հերոնիմոս 'ի Թուղթըն իւր (ՃԼԳ) առ Կտեսիփոն, և այլուր։

— ** ԺԲ. Նորին երկրորդ Թուղթ. « Գրես միշտ առ իս որպէս առ մշակ երկնային երկրին. և ոչ է տեսեալ զանդն իմ՝ լի փշաւք և տատասկով. և ոչ զայգին իմ դաւս և անպտուղ, զրկեալ 'ի հոգևոր ողկուզաց »։

— ** ԺԳ. Թուղթ երրորդ. « Ինչ զոր ոչ ոք կարէ իմանալ կամ առնուլ, գրեցեր առաքեցեր առ մեզ. և զայն զոր ցանկամք ուսանել և առնուլ, ոչ առաքէր »։

— ** ԺԴ. Թուղթ Մելինէ չորրորդ. « Զգիր սրբութեան քո տեսաք, և սէր քո բարի է առ մեզ ծնողական. և հրամայեցեր զի յաշխատութենէ մեր տացուք քեզ. զոր իմով կամաւք առաքել ոչ կամէի՝ վասն պատկառանաց սրբութեան քո »։

— ** Մելինէ հինգերորդ. « Բարի էր փոխել 'ի բարւոյ Թուղթդ, զոր առաքեցեր առ մեզ. և լի էր բարի պտղովք, և յաղթեցայ 'ի կթել զնոսա. և անուշ էր հոտ նոցա յիմանալի հոտոտելիս իմ »։

— ** Մելինէ վեցերորդ. « Անտես արարաք զձեզ, յորժամ եկաք նախ 'ի Պաղեստինէ. և ոչ կարացաք առնուլ 'ի քէն պաշար փրկութեան ճանապարհիս որ եդեալ է մեր առաջի »։

— ** Մելինէ եւթներորդ. « Ոչ եթէ իբրև զար-

գար գնեմ զոգիս իմ առաջի. զի լցեալ է անաւրէնութեամբ. և ոչ իբրև առ արարիչ համարձակիմ, և ոչ գիտեմ զբանս իմ թէ հոգևոր իցէ » ։

— ** Նուագրեայ ութերորդ. « Ոչ գովութեամբ կարեմ արգելուլ, և ոչ բամբասանաւք նմանիլ կամիմ. զի գովութիւն՝ անափառութեան գործ է. և բամբասանքն խոցոտէ » ։

— ** Մեղինէ իններորդ. « Գիտեմ զի հոգիս ես բաղում հաւատից. և կարող ես հաւատ արածել 'ի Բեթղեհէմ. զսակաւս ցպով, և զբաղումս սուղելով » ։

— ** Մեղինեայ տասներորդ. « Բարիոք խնդացայք ընդ տեսութիւն եղբարց քոց որք յանապատիդ. յերկիր որ ոչ գտանի սովորութիւն աշխարհի » ։

— ** Նուագրեայ մետասաներորդ. « Եթէ սիրելի է ունել ինչս անախտութեան ով երանելի, և կամիս ընդունել զգիտութիւն Քրիստոսի, զամենայն ինչ որ ախտոյ է 'ի գիւտ կենաց քոց, յամենայն զաւրութենէ գործեա » ։

— ** Մեղինեայ երկոտասաներորդ. « Ոչ առաքեցեր մեզ թուղթ մարդ Աստուծոյ. այլ խորիսխ 'ի քաղցրութիւն քմաց մերոց որպէս կարծես գրեցեր առ մեզ » ։

— ** Մեղինեայ երեքտասաներորդ. « Տիրապէս փղաչեցեր ով երանելի զաէր, և անցելովքն և հանդերձելովքն մխիթարեցեր զիս. և ոչ պակասէ հաւր խնամք 'ի քէն » ։

— ** Մեղինեայ չորեքտասաներորդ. « Ուրախ եղէ 'ի մարմնաւոր ազգականութիւնդ քո, և աւրհնեցի զաէր. և առաւել խնդամ թէ հոգևորիդ արժանացայց առաքինութեան և ուղիղ գիտութեան » ։

— ** Մեղինեայ հնգետասաներորդ. « Դժուար և հազիւ ցուցեր ինձ զանձն քո, որում ցանկայեն 'ի

վաղ ժամանակաց. և ինչ մի մեղադրեմ ինձ. յորժամ արհամարհէի զգործն » ։

— ** Եւագրեայ առ եղբարսն վեշտասաներորդ. « Գրեմ առ քեզ և առ եղբարսդ քո, և ոչ կամիմ թէ զանխլանայ 'ի ձէնջ խորամանգութիւն դիւաց. զի ահա գնացք ընդ ճանապարհ որ դարան գործեալ են ձեզ » ։

— ** Եւագրեայ ևթնևտասաներորդ. « Պարտ է ճանապարհորդաց ստանալ զնա որ առաջն. Ես եմ ճանապարհ. և պարտ է ուսանել 'ի նախընթացելոցն և հարցանել 'ի նոցանէ, և լսել զաւգտակարն, և չածել աւտար ինչ 'ի յընթացս մեր » ։

— ** Եւագրեայ ութևտասաներորդ. « Դիւական խորհրդոցն երեք են հակառակ. առաջինն՝ սուրբ հրեշտակքն ծածկապէս. երկրորդ՝ որ 'ի կամաց մերոց գամք առ պատշաճն, իմաստիւք և կամ երկիւղիւ. երրորդ՝ բնական բարին որով և աւրէնքն շարժին » ։

— ** Մելինեայ իննևտասաներորդ. « Յոյժ զաւարճացոյց զմեզ թուղթքս քո 'ի բազում նեղութեանս մեր. այլ տացէ քեզ Տէր ողորմութիւն յաւուրն յետնում, որովհետև յիշեցեր զխոնարհս և զմեղուցեալքս » ։

— ** Եւագրեայ քսաներորդ. « Ընդունելի են կամքդ քո առ իս ուսումնասէր, և խնդամ ընդ յառաջադիմութիւնդ քո. զի յարկանել զձեռն քո ընդ մաճով՝ ոչ դարձար յետս » ։

— ** Եւագրեայ քսաներորդ առաջիներորդ. « Երկոքին 'ի կարիս եմք մխիթարութեան, եղբայր Եւստաթիէ. որ թողաք զհայրենիսն մեր և եղաք կարեաւք լի » ։

— Նորին Եւագրեայ խրատ վասն կուսանաց. « Սիրեա զսէրն Քրիստոսի, և սիրեաց 'ի նմանէ. վաստակեա նմա և լուսաւորէ զքեզ ». (Պակասի երեք մասամբ) * ։

* Ցոյն սկզբնագիրն 'ի Մատենադարանի Հարց, Հատ. ե. 580)։

— Առաջնորդաց և աշակերտաց. քսաներորդ երրորդ. « Նաւապետ ապէտ զնաւն, և առաջնորդ անմիտ՝ զաշակերտն կորուսանեն։ Զհովիւ անարուեստ և բեկանողք գայլք կորուսանեն զնա » * ։

* Նեղոսի սուրբ հօրն ալ ընծայուած 'ի գիրս նորա, թէպէտ տարբեր շարագրութեամբ։

— ** Նորին Եւագրեայ քսաներորդ չորրորդ. « Մկրտութիւն՝ քաւութիւն հոգւոյն. յիշատակ է աշխարհին որ գալոց է։ Տեղի դնելոյ մարդոյ զգլուխ իւր, հաւատք է խոստմանն Յիսուսի, որ աւետարանէ աւր ըստ աւրէ զփրկութիւն »։

— ** Եւագրեայ վասն սերովբէից. քսաներորդ հինգերորդ. « Սերովբէք վեցթեւեանք անձինքեանք (?) են բանաւորք. և զգիտութիւն տիեզերաց ունին. պայծառութիւնք և ճառագայթք և ճաճանչք Աստուծոյ »։

— ** Այլ թուղթ Եւագրեայ քսաներորդ վեցերորդ. « Կայեք մնայեք ինձ շահեցուցանել զձեզ անանցական արծաթովք. և ես ինքն հեռաւոր հանդիպիմ, ծուլութեան ծովուս միջոցաւք »։

— Այլ թուղթ նորին քսաներորդ եւթներորդ. « Հար մտրակաւք զերիվարն և խթանաւ զէշն. զի առայժմ ես զրկեալ եմ յարշաւանաց »։

— ** Այլ թուղթ նորին վասն մխիթարութեան. քսաներորդ ութերորդ. « Հաներ զսուգ իմ յինէն, և ոչ ետուր ինձ երկիր արտասուաց. քանզի ոչ է պարտ սգալ զհոգի առ տէր գնացեալ »։

— ** Այլ թուղթ մխիթարութեան, քսաներորդ իններորդ. « Մի արտմեսցիս ընդ ննջել հաւրն մերոյ երանելւոյ. զի գնալոց եմք առ Նա. և այս է կամ զոր ուխտեցի Աստուծոյ, յորժամ մտի 'ի կարգս աբեղայութեան »։

— ** Նորին երեւներորդ. «Սանդուխք երկնից է յայտնութիւն խորհրդոցն, որ ըստ մնդեանն ոճոյ յայտնի հոգւոյն»:

Գրչագիրն կը յաւելու. «Լուծմունք սորա արարեալ է ուրումն կատարելոյ 'ի լեռնէն Նինուէի 'ի խնդրոյ եղբարց. առաջին հարիւրեակն 'ի վերայ Աստուծոյ և առ մեզ միաւորել. երկրորդ հարիւրեակն վասն հրեշտակաց. երրորդ հարիւրեակն վասն մարմնաւորացս, և յիշեա Քրիստոս զտէր Մխ." վարդապետն»:

— ** Մեկնութիւն համառօտ մարգարէութեանն Եզեկիելի յԵւագրեայ. (Commentaire sur le livre prophétique d'Ezéchiel). «...ութածալ թղթագիր 'ի Բարսեղ քահանայէ ... ունի 'ի վերջն յիշատակարան պատմագրաբար տառնաւոր, որոյ գլխատառք յօդեն – Մովսիսի աշակերտի պատմագրաբար վասն Եւագրեայ» – : (Մատենադարան Էջմիածնի, Թիւ գրչ. 1392):

ԵՒԿՂԻԴԷՍ (Euclide). որոյ Երկրաչափութեան գրոց հայ թարգմանութիւնն ըրաւ Գրիգոր Մագիստրոս 'ի մետասաներորդ դարու, և հատուածք միայն հասած են առ մեզ, հրատարակեալք 'ի Բազմավէպ հանդիսարանի (1884, յ'էջ 30):

ԵՒՍԵԲԻՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐԱՑԻ

(EUSÈBE D'ALEXANDRIE)

— ** Երանելւոյն Եւսեբի Աղեքսանդրու եպիսկոպոսի ասացեալ 'ի Համբարձումն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. (ըստ գրչագրին որ 'ի մեր Մատե-

նադարանի՝ 'ի վերացուցմն Տեառն)․ « Քանզի շնորհաւք Աստուծոյ »* ։

* Այս անունով յիշուած է Ճառս 'ի գրչագրին որ 'ի Մատենադարանին Էջմիածնի, (Թիւ 918) . և 'ի Փարիզեան ազգային Գրատան (Anciens fonds, Թիւ 324) յորմէ և հատուած մը մէջ կը բերէ Մարթէն հայերէնագէտ գաղղիացի քահանայն յիւր գիրսն․ Introduction à la critique textuelle du Nouveau Testament, (Հատ․ Բ, յ'էջ 279)։ Էջմիածնի ուրիշ գրչագիր մը (Թիւ 914) այսպէս կը մակագրէ․ « Մեծին Եւսեբեայ պատմագրի ասացեալ 'ի Համբարձումն Քրիստոսի Աստուծոյ մերոյ » ։ Ոմանք աղ Սեբերիանոսի եպիսկոպոսի Եմեսու կ'ընծայեն զայն, որ չէ անհաւանական ։

— ** Եւսեբիոսի եպիսկոպոսի վասն հարցման Աղեքսանդրի վասն կիւրակէի ։ — Տոմարականք ։

ԵՒՍԵԲԻՈՍ ԵՐՈՒՍԱՂԷՄԱՑԻ

(EUSÈBE DE JÉRUSALEM)

—— ** Եւսեբիոսի Երուսաղեմացւոյ երիցումեկնութիւն Յովբայ․ (Մատենադ․ Էջմիածնի, Թիւ գրչ․ 1405)։

— Հատուածք 'ի խմբագիր մեկնութենէ Ղեւտական գրոց (Տես)։ Եւսեբի եպիսկոպոսի Երուսաղեմացւոյ․ 1.° « Յորժամ 'ի հասեալ հասկիցն առեալ խրխրեսցէ ոք ձեռաւք ... և հանցեն զայն որդիքն Ահարոնի քահանայք 'ի սեղանն յողջակէզս 'ի վերայ փայտին և հրոյն, պտուղ անուշից տեառն » ։

— 2.° « Կրկին իմանի․ կամ թէ յորժամ գիտիցէ երդմնազանց լինել ոմանց ... և ոչ ասիցէ մեղաւ․ զնոյն նշանակեն երկոքեան » ։

— 3.° « *Եթէ ոք, ասէ, երդնուցու չար ինչ ուտեք առնել կամ բարի ... այլ զի և երդուաւն. է ուրեմն և մոռանալոյ այսպիսի պատարագս* »։

— 4.° « *Ա՛յլ է մեղաց պատարագն և այլ յանցանաց ... հրամայէ 'ի մեղացն պատարագէ ուտել քահանայիցն արուացն միայն. զոր և սրբութիւն սրբութեանցն կոչեաց* »։

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ

(EUSÈBE DE CESARÉE)

Արդէն համառօտիւ խօսեցանք՝ սրբազան մատենագրութեան մէջ մեծանուն այս անձին և իր Եկեղեցւոյ պատմութեան վրայ[1]*։ Նոյն հեղինակին միւս այլ նշանաւոր, և պատմական տեսակէտով մեծապէս հետաքննական երկասիրութեան մ'ալ թարգմանութիւնն հասած է առ մեզ 'ի Նախնեաց, ընտիր պարգև մը հինգերորդ դարու թարգմանչաց. և այնչափ աւելի պատուական, որչափ զի անոր յոյն սկզբնագիրն կորսուած է, և կամ անհարազատ քաղուած մի միայն մնացած, և եկամուտ յաւելուածովք կամ զեղչմամբ բոլորովին կերպարանափոխ եղած, որ 'ի հարկէ չէր կրնար ունենալ սկզբնագրին յարգն ու կարևորութիւնը։*

Այս գրուածքն է Քրոնիկոն կամ Կանոնք ժամանակաց կոչուածը, որ դեռ ինչուան անցեալ դարուն վերջերը՝ միայն անուամբ ծանօթ երկասիրութիւն մ'էր նաև մեր մատենագրութեան մէջ։ Ասոր գիւտն հետևեալ կերպով աւանդուած կը գտնենք 'ի յիշատակագիրս դիւանաց մերոց։

[1] Տես յէջ 54։

Իր հայրենագիտական և ուսումնական աշխատասիրութեամբք արդէն բազմահռչակն առաջին ազգային և օտար բանասիրութեան Ինճիճեան վարդապետ՝ 1786 թուականին դառնալով 'ի Վենետիկոյ 'ի հայրենիս իւր 'ի Պոլիս՝ կը ծանօթանայ հոն Պալատեցի Յովհաննիսեան Գէորգ ուսումնասէր և հետաքննին բանասիրին հետ, որ արդէն մեր վարդապետաց առաջարկութեամբ և ծախիւք այլևայլ ճանապարհորդութիւններ ըրած էր 'ի փոքրն Ասիա և 'ի Հայաստան՝ 'ի խնդիր և 'ի գիւտ նորանոր հին գրչագիր մատենից։ Յովհաննիսեան 1787ին աւետեց Ինճիճեան հօր թէ Եւսեբեայ Քրոնիկոնին հայ թարգմանութիւնն ալ գտնուած էր և յարևելից արդէն 'ի Պոլիս հասած, զոր ստանալն անկարելի՝ բայց անոր մէկ գաղափարն ունենալ մարթ էր։ Այդչափն ալ մեծապէս փափաքելի և օգտակար ծառայութիւն մ'էր պատմական ուսմանց, ուստի և գրուեցաւ իրեն որ երբ կամ ինչ միջոցով ալ որ ըլլայ, անոր գաղափարն առնու և հասցընէ առ մեզ։ Վրան քանի մը տարի անցնելէն ետքը (1790) նոյն ինքն Ինճիճեան վարդապետ անձամբ բերաւ զայն 'ի վանս, և զոր փութաց թարգմանել 'ի լատին Աւգերեան Հ. Մըկըրտիչ վարդապետ։ Սակայն այդ աշխատասիրութիւնն 'ի գլուխ հանելու համար՝ հարկեցաւ թարգմանիչն քննել աչքէ անցընել հին դարուց յոյն, լատին և հայ հեղինակներն. առ որս կը գտնուէին յիշատակութիւնք Եւսեբեայ Քրոնիկոնին, ինչպէս նաև զքննադատս յետին դարուց, մանաւանդ զՍկալիգեր և զՎալլարսիոս։ Այդ քննութեանց արդիւնք եղան երկմտութիւնք և տարակոյսք 'ի միտս թարգմանչին։ Տեսաւ որ Սկալիգերի աշխատասիրութիւնը՝ թէպէտև յանուն Եւսեբեայ, ինքնայօդ և ըստ կամս բաղադրութիւն մ'է յոյն քրոնիկոնին. ուր կ'ենթադրուի թէ երկմտանեայ է Եւսեբեայ ժամանա-

կագրականն, և սակայն օտարացեալ 'ի սկզբնագրէն՝ որ հասած է առ մեզ հայ թարգմանութեամբ. և աւելի երկրորդ մասը կը կրկնէ՝ շատ խառնակ կերպով. ուստի և Վալլարսիոս կը ժխտէ առաջին մասին հարազատութիւնը, և կը պնդէ 'ի ջատագովութիւն երկրորդին, որովհետև կը գտնէ անոր լատին թարգմանութիւնն 'ի Հերոնիմեայ։ Տեսնուեցաւ նոյնպէս թէ հայերէն թարգմանութեան մէջ, զոր գաղափարեր էր Յովհաննիսեան, որչափ առաջին մասն քրոնիկոնին կ'օտարանայ 'ի Սկալիգերէ, այնչափ աւելի ուղիղ է, և ուր կը միաբանի կամ համաձայնի ընդ նմա, թէպէտև քիչ տեղ, չփոթ և անյարմար է. իսկ երկրորդ մասը՝ ուր աւելի կը զուգընթանայ ընդ Սկալիգերի, հոն յաճախագոյն է խառնակութիւնն, նաև նկատմամբ հայերէն լեզուի ընտրութեան, բոլորովին օտարանալով յոճոյ և 'ի գեղեցկութենէ առաջնոյ մասին։ Այս ամէն անտեղութիւնք՝ համոզեցին զԱւգերեանն թէ եկամուտ և օտար ձեռք խառնուելով՝ աղաւաղած է զհարազատութիւն հին հայկական թարգմանութեան. և որովհետև Յովհաննիսեան քաջ տեղեակ էր յոյն լեզուի, կասկած ունեցաւ թէ Սկալիգերի երկասիրութիւնն անցած է ձեռքը, յորմէ յաւելուածներ կամ փոփոխութիւններ մտուցած է իր գաղափարին մէջ, ենթադրելով անով շահագրգիռ ծառայութիւն մը մատուցանել բանասիրութեան։

Այսպիսի երկմտութիւնք փարատելու համար՝ հարկ էր 'ի խնդիր ելլել ուրիշ գրչագրի մը. և անոր համեմատութեամբ՝ խելամուտ լինել ստուգութեան։ Այլեւայլ տեղուանք փնտռելէն ետքը՝ չհասնելով փափաքելի գիւտին, բռնադատեցաւ ուղղակի գրել առ Յովհաննիսեանն, յայտնելով ունեցած տարակոյսներն իր գաղափարին հարազատութեան վրայ, և խնդրելով որ ուրիշ օրինակ մ'ալ ղրկէ, առանց յա-

ւելուածոց և կերպարանափոխութեանց առաջնոյն, այլ զիսկական օրինակ բնագրին։ Յովհաննիսեան մատենաւոր նամակաւ մը առ հարցասէրն, խոստովանեցաւ իր ոչ հաւատարմութիւնը յընդօրինակութեանն, և խոստացաւ կատարել խնդրողին հայցուածքը, զոր և յղեց առ նա 'ի 1794։ Լատին թարգմանիչն երբ ձեռք ձգեց այդ երկրորդ օրինակն, կրկին և ծայրալիր պարապմամբ և ուսումնասիրելով քըննեց, բաղդատեց, և խելամուտ եղաւ իր ենթադրութեանց ստուգութեանն և տարակուսանաց լուծման, և այս երկրորդ օրինակին հաւատարմութեան. ուստի և անոր համեմատ ըրաւ իր թարգմանութիւնն և հմուտ ծանօթութիւններն, և պատրաստեց զայն 'ի հրատարակութիւն, ներկայացընելով՝ ինչպէս ժամանակին օրէնքը կը պահանջէր, պետական գրաքըննութեան հաւանութեանն 'ի 1798։ Վրայ հասան քաղաքական յուզմունք և փոփոխութիւնք, և պատերազմաց արհաւիրք և աւերք ընդ ամենայն Եւրոպէ. և խափանեցին յանստուգութեան յայնմ վիճակի, զբազմածախ հրատարակութիւնն։ Նոյն միջոցին թարգմանիչն առիթ ունեցաւ երթալ 'ի Պոլիս, ուր անձամբ տեսաւ և քննեց զսկզբնագիրն, և ապահով եղաւ իր ձեռքն ունեցած գաղափարին հաւատարմութեան վրայ։ Դառնալով ապա 'ի Վանս, երկար միջոց ժամանակի վրան անցնելէն ետքը, ըրաւ իր աշխատասիրութեան հրատարակութիւնն 'ի 1818։

Վենետիկոյ տպագրին հետ՝ և գրեթէ 'ի մի և նոյն միջոց ժամանակի հրատարակեցաւ ուրիշ տպագրութիւն մ'ալ Եւսեբեայ Քրոնիկոնին լատին թարգմանութեան 'ի հայէ, որ 'ի ճակատ գրոյն կը կրէր զանուանս Զօհրապ Յովհաննու վարդապետի և Մայ Անճէլոյ բազմահմուտ անձին, որ մատենապետ էր Ամբրոսեան գրատան 'ի Միլան քաղաքի։ Զօհրապեան տեսնելով որ 'ի Մխիթարեանց խոստացուած

և 'ի բանասիրաց Եւրոպիոյ անհամբեր ակնկալութեամբ սպասուած Թարգմանութեան հրատարակութիւնը կը յապաղէ, քաջալերուած 'ի Մայէ և յայլոց, և յուսալով որ այդպիսի մեծ ծառայութեամբ մը գրաւորական աշխարհի՝ հռչակուի իր անունն և արդիւնք ընդ ամենայն Եւրոպա, փութացեր էր 'ի Վենետկոյ առ Մայ, Յովհաննիսեան առաջին գաղափարը և անոր սրբագրուած մէկ օրինակը տանելով հետը. ուր իր օգնականութեամբ՝ հռչականուն մատենապետն փոխեր էր զայն յընտիր լեզու լատինական, և ապա փութով ձեռք զարկեր էին 'ի տպագրութիւնն: Շշուկն հասնելով 'ի Վենետիկ, Աւգերեանն ալ առանց ժամանակ կորսնցընելու՝ փութաց 'ի հրատարակութիւն իր արդէն պատրաստ երկասիրութեան, որով երկու Թարգմանութիւնք միանգամայն կ'երևնային:

Եթէ, որպէս արժանն կը պահանջէ, լատին լեզուի քաջընտրութիւնն հարկ է ընծայել Մայի Թարգմանութեան, Աւգերեան կը գերազանցէ իր հաւատարմութեամբն, բազմահմուտ ծանօթութեանց ճոխութեամբ, հայկականն ալ միացընելով ընդ լատին Թարգմանութեանն. ինչպէս նաև անկորուստ մնացած յունական հատուածներն: Այսպէս դատեց ժամանակին բանասիրութիւնը և եւրոպական գիտութիւն այս երկու Թարգմանութիւնքը, իւրաքանչիւրին տալով իր արժանաւոր յարգը. և եթէ գտնուեցան ոմանք կրիտիկք՝ աւելի կողմնասէրք քան անաչառք, Մխիթարեան Թարգմանիչը իր ընդարձակ և հմուտ յառաջաբանին մէջ, զոր բանադատեցաւ դնել 'ի գլուխ երկասիրութեանն, դժուարութիւն չքաշեց 'ի լռեցընել զանոնք: Ինքն իսկ Մայ՝ չուզեց ժխտել նմա զայս առաւելութիւն, որ արդիւնք էր իր հայերէն լեզուի անգիտութեանն, և գործակցին անբաւականութեանն 'ի լատինականին:

Ի հաւատարմութիւն մեր խօսքին, միայն քանի մը օրինակ մէջ բերելով գոհ ըլլանք։

Տ'էջն 18 (տպ. Միլանու) թարգմանիչք որոշ չեն հասկըցած հայերէն ճարտարապետ բառին նշանակութիւնը, որ է ղեկավար ճարտար, ըստ յունին τοῦ κυβερνητοῦ, և գրեր են նաւաշայարդար, navis architecto. և քիչ ետքը՝ ուր հայն ունի նաւապետ, գրեր են դարձեալ navis architecto. — Տ'էջ 27՝ Եւսեբեայ 'ի Մեգասթենեայ պատմէ տուած խօսքը, սխալ իմացմամբ յունականին նշանակութեան՝ անծականաբար կը թարգմանեն, և փոխանակ գրելու՝ ինչպէս կը գրէ և կը հասկընայ յոյն սկզբնագիրն, «Մեգասթենէս ասէ. Նաբուգոդոնոսոր»՝ և այլն, կը թարգմանեն. «Մեծազօրն, ասէ, Նաբուգոդոնոսոր»։ Նոյն վրիպանաց մէջ ինկած են յառաջագոյն և լատին թարգմանիչք պատմութեան Խորենացւոյն՝ Վիսթոն եղբարք։ — Տ'էջ 29. «Զինքնուրոյն որդին» փոխանակ հասկընալու իր բուն որդին կամ լատինական բառով suimetipsius (ἑαυτοῦ), կը թարգմանեն unicum suum filium, որ է զմիածին որդին իւր»։ — Տ'էջ 33. հայցականաբար 'ի կիր առնուածն յԵւսեբեայ զանուն ազգի Իբերացւոց (Iberorum կամ Hiberiæ, Ἰβερίαν ըստ յունին) կը դնեն Zybeorum: — Տ'էջն 67, 'ի բնէ որ պէտք է թարգմանուի ab initio (ἀρχῆθεν), կը հասկընան և կը թարգմանեն precipue. — 70. Թարգմանչին Նուիրական բառը կը շփոթեն ընդ Նուիրակ ձայնի. և այնպէս կը թարգմանեն։ Կը թողունք նշանակել ուրիշ ասոնց նման բազմաթիւ վրիպանքը։

Իմաստունն Եւրոպա՝ իրաւամբ երախտապարտ շնորհակալութեամբ կ'ընդունէր 'ի Հայաստան մատենագրութենէ՝ որ զգուշաւոր և խնամոտ աւանդապահ եղած էր այս մեծագին և ուսումնական աշխարհի ամենակարեւոր երկասիրութեան, հին հարա-

զատ և ամբողջ թարգմանութիւնը, և ժամանակին օրագիրք և բանասիրական թերթեր հռչակաւ կը պանծացուցանէին զայն, և որոյ անընդհատ արձագանգը կը լսուի ցարդ մեծարանօք. «Մատենագրական աշխարհի մէջ, – կ'ըսէր անոնցմէ մէկը, – երկար դարերէ 'ի վեր այսպիսի բազմահռչակ 'և նշանաւոր գիւտ մը եղած չէր. և որ հանդիպեցաւ 'ի Պոլիս՝ հին գրչագրի մը մէջ որ կ'ամփոփէ զհայկական թարգմանութիւն այս գրուածին, որ անդառնալի կերպով կորսուած կը համարուէր. և յորմէ անկերպարան և այլայլեալ հատուածք եւեթ մնացած էին, զորս ուսումնասէր բանասիրութիւնը բանադատուած էր զգուշաւոր վերապահութեամբ գործածել: Հին պատմութեանց համար մեծապէս կարեւոր էր Եւսեբեայ ժամանակագրական կանոնաց գիւտը՝ առաւելութեամբ խելամուտ ըլլալու համար թէ ինչ կերպով իրարու հետ կապակցութիւն ունէին այս հեղինակին գաղափարք, որ իրմէ առաջ եկող ամէն մատենագրաց աղբիւրն եղած էր: Բայց այս չէ շատ. իր գրուածքին մէջ կը գտնուին բազմաթիւ հատուածք Բերոսոսի, Կեփաղիոնի, Բազմավէպ Աղեքսանդրի, Մանեթոնի, Կաստորի, Դիոդորի սիկիլիացւոյ, Պորփիւրի և ուրիշ այլեւայլ պատմագրաց՝ որոց երկասիրութիւնք կորսուած են հիմա: Հայկական թարգմանութիւնն կրնայ յոյն սկզբնագրին տեղ ծառայել, որովհետև հինգերորդ դարու մէջ եղած է, և այնպիսի ժամանակի մը մէջ՝ յորում սկզբնագիր օրինակք հեղինակին չէին կրնար այլայլութիւն կրել»: – Ուրիշ մ'ալ կը գրէր. «Հայոց անծանօթ չէին Եւսեբիոյ ժամանակականք, որք երբեք անփոյթ չեղան գեղեցիկ դպրութեանց, թէպէտև առանց ունենալու գրականական առաջին կարգի բարգաւաճանք մը. ինքն իսկ Սիւնկելոս՝ Հայոց հմտական այսպիսի հակամիտութեան և քերման

վկայութիւն կու տայ։ Թէպէտև անծանօթ է ժամանակն յորում Եւսեբեայ այս երկասիրութիւնն թարգմանուած ըլլայ 'ի հայ, սակայն 'ի հինգերորդ դարու դպրութիւնք ծաղկած վիճակի մէջ էին 'ի Հայաստան, յորում ժամանակի ապրեցաւ և մատենագրեց հռչականունն Մովսէս Խորենացի, և թերևս յայնմ դարու անուանի պատմագիրն թարգմանեց զայն 'ի հայ, և որ յաճախ կը յիշատակուի 'ի հետագայ պատմագրաց իւր ազգին »։

Ինչպէս արևմտեան, ասանկ ալ ազգային բանասիրութեան ընդհանուր կարծիքն է՝ Խորենացւոյ ընծայել այս հետաքննական գրուածքին հայ թարգմանութիւնը։ Եթէ պատմական հաւաստիք մը չըլլալուն, կարենայ այս ենթադրութիւն՝ տարաձայնութիւն կրել 'ի մէջ հմտից, սակայն անտարակուսելի է թէ հայերէն այս փոխադրութիւն ծանօթ էր Խորենացւոյ։ Իր պատմութեան գիրքն կը հաստարմացընէ զայս՝ ոճոյ և բանից այլևայլ նմանութեամբք, յորոց միայն քանի մը օրինակ մէջ բերենք։

Եւսեբի կ'ըսէ. « Զայս ըստ Բազմավիպին՝ Բերոսոս յառաջնում մատենին պատմէ »։ Խորենացի. « Զայս ըստ Բազմավիպին՝ Բերոսոս յառաջնում մատենին պատմէ »։ Դարձեալ. « Զայս Բերոսոս յառաջնում մատենին պատմեաց, և յերկրորդումն զթագաւորսն մի ըստ միոջէ յօրինեալ գրեաց »։ — Եւսեբի. « Մեծազօրն ասէ, Նաբուգոդոնոսոր որ ուժգնագոյն էր քան զՀերակլէս, 'ի Լիբէացւոց և յԻվերացւոց աշխարհն զօրաժողով լեալ հասանէր, և վանեալ վկանդեալ ընդ ձեռամբ նուաճէր. և ըզմասն մի 'ի նոցանէն յառաջակողմ Պոնտոս ծովուն տարեալ բնակեցուցանէր »։ Խորենացի. « Որպէս Աբիւդենոս պատմէ այսպէս ասելով. Մեծազօրն Նաբուգոդոնոսոր ուժգնագոյն էր քան զՀերակլէս. 'ի Լիբէացւոց, 'ի Վերիացւոց աշխարհն զօրաժողով

լեալ հատանէր . և վաննեալ վտանկեալ ընդ ձեռամբ նուաճէր , և զմասն մի 'ի Նոցանէ՝ յաջակողմ Պոնտոս ծովու տարեալ բնակեցուցանէր » : – Եւսեբի . « Վըկայ 'ի մօտոյ երաշխաւորեսցէ Զաքարիա մարգարէ » : Խորենացի . « Վկայ քեզ 'ի մօտոյ երաշխաւորեսցէ Եկղեսիաստէ գիրք Եւսեբի Կեսարացւոյ » : Այսպէս ուրիշ տեղուանք :

Մանօթ էր և Փարպեցւոյն : Եւսեբի 'ի սկիզբն գրոցն . « Ընդ պէսպէս մատեանս առաջնոց պատմութեանց անցի » : Նոյնպիսի սկզբնաւորութիւն է և Փարպեցւոյն . « Ընդ բազում ճառս մատենից առաջնոց պատմագրացն Հայոց անցի » : Զնոյն կրկնէ և Արծրունին Թովմաս . « Ի խոյզ և 'ի խնդիր ելեալ՝ զհաւաստին գտանել շարագրական մատեանս , և 'ի բազում վէպս պատմութեանց անցեալ գրեցի » :

Երկու մասն բաժնուած է Եւսեբեայ այս երկասիրութիւնն : Առաջինն խորագիր ունի ըստ գրչագրաց . « Եւսեբի Պամփիւղեայ Կեսարացւոյ ժամանակականք » . իսկ երկրորդն . « Քրոնիկոն կանոնք , որ և ժամանակական կանոնք » . և 'ի ստորեւս իջին հետեւեալ ծանօթութիւնը . « Եւսեբեայ Պամփիւղացւոյ եպիսկոպոսի արարեալ զգիրս պատմագրաց հատորս տասն . յորում ինն հատորն պատմէ զՔրիստոսի մարդեղութենէն և զառաքելոցն սրբոց . նաև զամենայն եկեղեցական պատմութեանց : Իսկ այս առաջինս յԱդամայ և զլինելութենէն աշխարհի ճառէ . որ և կոչի Քրոնիկոն »* :

* Եւսեբեայ գրուածոց վրայ մատենախօսական համառօտ տեղեկութիւնք ամփոփուած են 'ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ յէջ 183–185, որոց վրայ կը յաւելցընենք նաև հետեւեալքն . Eusebi Chronicorum libri duo. Edidit A. Schöne. Armenicam versionem latine factam ad libros manuscriptos recensuit H. Petermann. Græca fragmen-

ta colligit et recognovit, appendices chronographicas sex adjecit A. Schöne. Berolini. – Historischer Gewinn aus der Armenischen Ubersetzung der Chronik des Eusebius- (In der Abh. der Hist. Cl. der kön. Akad. der Wiss. von der Jahren 1820-21). Berlin, 1822. – Uber die bisjetzt vorhandenen Texte und Ubersetzungen der Armenischen Chronik des Eusebius. H. Petermann. (In Monatsberichte der k. Berl. Akad. 1865. – Uber die armenische Ubersetzung der eusebischen Canons. H. Petermann. (In Monatsber. der k. Berl. Akad. 1866).

ԵՓՐԵՄ ԽՈՒՐԻ ԱՍՈՐԻ

(SAINT EPHREM, LE DIACRE SYRIEN)

Սուրբն Եփրեմ, սարկաւագ Եդեսիոյ և վարդապետ եկեղեցւոյ ; ծաղկեցաւ 'ի չորրորդ դարու (350-380)*։ Ինչպէս կը տեսնուի մեր ցուցակէն՝ բազմաթիւ են սորա գրութեան պարծանք սուրբ հայրապետիս գրուածոց թարգմանութիւնք 'ի հայ. և առաւելապէս ազնուագոյնք՝ որովհետև անոնցմէ շատերն սորա բնագիրն կամ հին յոյն թարգմանութիւնք կը պակսին։ Այլևայլ ժամանակաց և դարուց փոխագրութիւնք են սոյնք, բայց մեծագոյն մասամբ 'ի հինգերորդ դարու կատարուած՝ 'ի սրբոց Թարգմանչաց մերոց յուսումնական դեգերմանս իւրեանց յԵդեսիա, և անշուշտ յասորի բնագրէ։ Ասոնցմէ զատ կան նաև կրտսերագոյն դարուց թարգմանութիւնք, և յանուանէ 'ի ձեռն Գրիգորի Վկայասիրի և 'ի Գէորգ վարդապետէ Քեսունցոյ և յայլոց, նոյնպէս յասորականէ. ինչուան հինգերորդ*

թարգմանութիւն մ'ալ կը յիշատակուի, ինչպէս պիտի տեսնենք։ Մատենագրական նկատմամբ մատգրութեան արժանաւոր կէտ մ'ալ այս է, որ համեմատելով զԹարգմանութիւնս մեր ընդ բնագրին, – եթէ գտնուին, – և 'ի վաղ ժամանակաց առ մեզ հասած Թարգմանութեանց, մեծ տարբերութիւն կը տեսնենք իրարու հետ։ Զենք կրնար ենթադրել թէ մերքն այնպիսի ազատութիւն մը գործածած ըլլան 'ի Թարգմանութեանս, որուն իրենց ուրիշ երկասիրութեանց մէջ չենք հանդիպիր, այլ երկիւղած հաւատարմութեան' մանաւանդ 'ի հինգերորդ դարու Թարգմանիչս։ Ուստի հաւանականագոյն պիտի սեպէինք թէ ասորի գաղափարողք և գրիչք վարուած ըլլան այդպիսի ազատութեամբ, եթէ յայլուստ չգիտնայինք թէ բուն հեղինակին կը պատշաճին այդ տարբերութիւնք։ Վասն զի ստուգածաշունչ գրոց մեկնութեան, յԱրարածոց մինչև 'ի Մնացորդս, հայերէն հին և ընտիր Թարգմանութիւն մը ունինք' Եփրեմի ընծայուած. և որ մեծապէս կը տարբերի յընդարձակագոյն ասորի բնագրէն որ հասած է առ մեզ։ Պատճառն է' որ սուրբն Եփրեմ բաց 'ի այս ընդարձակէն' յօրինած էր նաև զհամառօտութիւնն, – ինչպէս ինքն իսկ կ'ակնարկէ 'ի յառաջաբանի ասորի ընդարձակ մեկնաբանութեան, – և ասոր հայ Թարգմանութիւնն է մեր ունեցածը, որոյ կը պակասի բնագիրն։ Համաբարբառ աւետարանաց մեկնութիւնն ալ միայն 'ի հայկական մատենագրութեան պահուած է, և որուն գիւտն և հրատարակութիւն իրաւամբք այնչափ հետաքննական եղաւ եկեղեցական բանասիրութեան և ուսմանց։ Այսպէս Պաւղոսի թղթոց մեկնութիւնք և ուրիշ շատ ճառեր։

Եփրեմի երկասիրութեանց ընտրելագոյն տպագրութիւնք առ արևմտեայս են հետևեալքն.

Ephræm Syrus (S.) Opera omnia quæ extant

græce, syriace, latine, in sex tomos distributa ad mss. codices Vaticanos aliosque castigata, multis aucta, nova interpretatione, præfationibus, notis, variantibus lectionibus illustrata, nunc primum e Bibliotheca Vaticana prodeunt. Romæ, ex typogr. Vaticana, 1732-44. *Ի վեց հատորս, որոց առաջին երեք կ'ամփոփեն յոյն և լատին լեզուով գտնուած, և սրբոյն* Եփրեմի *անունը կրող ճառերը. իսկ միւս երեքն՝ յասորի մատենագրութեան պահուածներն հանդերձ լատին նորագոյն թարգմանութեամբ: Առաջիններն հրատարակեց* Յ. Ս. Ասսեմանի. *և զայլսըն՝* Պէնէտէթթի *և* Ս. Եւոդիոս Ասսեմանի: — *Ուրիշ հին տպագրութիւն մ'ալ յԱնգղիա.* S. Ephraim Syrus, græce, e codd. mss. Bodleianis, cum notis; cura Ed. Thwaites. Oxonii, 1709. *յորում հրատարակուած են գեղեցիկ տպագրութեամբ հարիւր յիսունևվեց ճառք սրբոյն, բայց Հռովմայ բազմահմուտ և ճոխագոյն հաւաքմամբ՝ կորոյս իր կարևորութիւնն:*

Հայկական թարգմանութեան մէջ պահուածներն են ըստ կարգի տպագրին մերոյ որ 'ի 1836:

— **Տեառն Եփրեմի Խուրին** *ասորւոյ տեսութիւն յաղագս* **Մեկնութեան Արարածոց.** (S. Ephræm Syri explanatio in Genesim). « *Սկզբանէ հաստատեաց Աստուած զհաստատութիւնն երկնից և զհաստատութիւն երկրի: Քանզի վասն այսորիկ փոյթ եղև Մովսիսի 'ի ձեռն յայտնութեան Հոգւոյն աւրինակագրութիւն ճշմարտութեան ընդդէմ մոլորութեան կռապաշտութեանն առնել* »:

— **Տեառն Եփրեմի Խուրին** *ասորւոյ* **Ելք.** (In Exodum explanatio). « *Փոխանակ այնր զի առէ Ամենայն ոգիք որ ելին յերանաց Յակոբայ, իւթանասուն մարդ. և Յովսէփ անդէն էր յերկրին Եգիպտացւոց. բայց հեբրայեցի Յովսեփաւ հանդերձ, որ էր յերկրին Եգիպտացւոց* »:

— Տեառն Եփրեմի Խորին ասորւոյ դպրութիւն երրորդ Ղեւտացւոց. (In Leviticum explanatio). «Աստուած՝ զի առ յանձն զպատարագն Իսրայելի, թէ գուցէ լռելն իւր 'ի զոհից անտի աւգնական ապս-տամբութեան նոցա լինիցի, և եղիցին նոքա այնու-հետև զոհել դիւաց»։

— Տեառն Եփրեմի Խորին ասորւոյ դպրութիւն չորրորդ Արարածոց Թիւք. (In quartum Pentateuchi libro, qui Numeri dicitur, explanatio). «Խաւսել սկսաւ տէր ընդ Մովսիսի և ասէ. Խաւսեաց դու ընդ որդիսդ Իսրայելի և ասասցես. այր կամ կին ոք՝ որ ոք արասցէ ինչ մի յամենայն մեղաց մարդկան մարդ-կաւրէն յանցանս, դատապարտեսցի անձն այն»։

— Տեառն Եփրեմի Խորին ասորւոյ դպրութիւն Երկրորդ աւրինաց. (In Deuteronomium explanatio). «Որպէս կանոնս անձրեւ զի զարթուցանէ զսերմանս, և դայ հաստանէ անձրեւն անապատն կա-տարէ զմնունդս նորա, սոյնպէս իբրև լուան զաւրէնսն 'ի լեառն Սինայ իբրև զանձրեւ կանոնս ընկալան զնա»։ Ի վերջն. «Կատարեցաւ դպրութիւն վեր-ծանութեան Արարածոց մեկնութեանս»։

— Մեկնութիւն Յեսովայ որդւոյ Նաւեայ զոր արարեալ է տեառն աբբայ Եփրեմի. (In Josue explanatio). «Յանձն եղև ժողովուրդն Յեսովայ տա-նել ժառանգեցուցանել նոցա զերկիրն պարգևաց։ Եւ իսկ և իսկ առաքեաց լրտեսս յԵրիքով, զի հզաւրացուսցէ զփոքր թերահաւատութիւն ժողո-վրդեանն»։

Ի վերջ գրոցն. «Կատարեցաւ մեկնութիւն Յեշո-վայ որդւոյ Նաւեայ»։

— Մեկնութիւն Գրոց ազգաց. (In librum Judicum). «Գիրք ազգաց դպրութիւն է դատաւորաց. որ կացին 'ի ժողովրդեանն յետ մահուան Յեշովայ որդւոյ Նաւեայ»։ Ի վերջն. «Կատարեցաւ մեկնու-թիւն ազգացն»։

— *Մեկնութիւն Սամուէլի*. (In Samuelem, qui est primus liber Regnorum, explanatio). « *Գիրք Սամուէլի, որ պատմէն զԵղկանայէ և զերկուց կանանց նորա։ Վասն ծննդեան Սամուէլի և աղաւթիցն Աննայի մաւրն նորա* »։ — « *Կատարեցաւ մեկնութիւն Սամուէլի* »։

— *Մեկնութիւն Թագաւորութեան*. (In librum secundum Samuelis, qui est Regum secundus). « *Դպրութիւն Թագաւորաց գրէ զամս կենաց զՅուդայի և զԻսրայէլի. և վասն առաքինութեանցն զոր արարին արդարքն որ էին 'ի նոսա* »։ — *Կատարեցաւ մեկնութիւն Թագաւորութեանց* »։

— *Մեկնութեան դպրութեան Իբրամենու*. « *Մատենագիրն դպրութեան Իբրամենու, զի է մեկնութիւն նորա դպրութիւն՝ վարուճն աւուրց Թագաւորաց Յուդայ, յարարածոց և Յեչովայ որդւոյ Նաւեայ* »։ — « *Կատարեցաւ մեկնութիւն դպրութեան Իբրամենու, զի սա ինքն վարուճն աւուրց Թագաւորաց Հրէաստանի* »։

— ** *Մեկնութիւն Աւետարանի համաբարբառ զոր արարեալ է տեառն Եփրեմի Խորին ասորւոյ*. (Evangelii concordantis expositio, facta a S. Ephræmo doctore Syro). « *Ջի՞ զգեցաւ տէր մեր զմարմինն. զի ինքն մարմինն* »։ — « *Կատարեցաւ համաբարբառս հաւր Եփրեմի որ ըստ չորեցն աւետարանաց* »։

Յիշատակարան գրչագրին. « ... *Ի Թուականութեանս Հայոց ՈԽԴ ից՝ յանի եղեալ կատարեցաւ աստուածաբուխ իմաստութիւն սրբոյ հաւրն Եփրեմի մեկնութիւն աւետարանի, համաբարբառ. Եւս և Ճառք հոգեպատումք, զոր շարակարգեալ 'ի չա՞ աւգտութեան մանկանց եկեղեցւոյ։ Ընդ որս հայեցեալ 'ի բազմաբեր բարեացն 'ի սմա ամբարեալ պըտուղս, և որպէս աւանդ հայրենի յաղագս որդոց յառաջապահեստ արարեալ, գանձեալ և եդեալ սուրբ և արդիւնակատար վարդապետ ոմն Աննիա,*

ժառանգողաց տանս Հաղբատայ, և 'ի լուսաւորութիւն հանուրց աշխարհի։

« Արդ ես Խաչատուր այր ոմն անտոհմիկ թափառական և աղքատ՝ սուտ անուն աբեղայ, գիմեալ 'ի հրանգս վարժից առ ոտս իմաստուն և սրբասնեալ վարդապետաց։ Գտեալ ապա իմ զայս աստուածատուր գանձարանս, առ մեծարգի և իմաստուն վարդապետին իմոյ Դաւթի. և խնդրեալ շարագրեցի անարուեստ և անվարժ գրով. զի սէր փափագանացս ստիպեալ հարկեցոյց զիս և կարիքս առաւել յորդորեաց, մանաւանդ համբաւ իմաստից Եփրեմի, որ ոչ միայն ինձ՝ այլ և ամենեցուն է ցանկալի առաջնոցն և վերջնոց և որ այժմս են ... Գրեցաւ գիրքս այս 'ի գաւառիս Ձորոյ գետ, 'ի վանքս Հաղբատ. ընդ հովանեաւ սուրբ և կենարար և մաւրն լուսոյ կաթուղիկէի և ամենայն որ 'ի նմա սուրբք իցեն, յեպիսկոպոսութեան տեառն Յովհաննիսի, և 'ի մահուան տեառն Գրիգորի Հայոց կաթուղիկոսի, 'ի վարդապետութեան Պետրոսի, Դաւթի և Իգնատիոսի. և զկնի մահուան Վարդանա վարդապետի. յորում ամի գերեալ 'ի Վրաց գաւառն Կարնոյ և վանաւրայն, յաւերումն և 'ի գերութիւն մատնեցան։ Յայսմ ամի ես Խաչատուր տկարացեալ և խելայեղեալ գրեցի զգիրս զայս խոշոր և անյարմար յանպիտան նիւթի. և արդ յերեսս անկեալ աղաչեմ չլինել մեղադիր. այլ յիշել սրտի մտաւք և ցաւակցաբար զիս և զվարդապետն իմ Դաւիթ՝ որ զաւրինակս շնորհեաց. և զծնողսն իմ և զեղբարս » ...

* Օրինակ մը Համաբարբառ գրոցս 'ի մեր Մատենադարանի, ինքնագիր գրչութեամբ սրբոյն Ներսիսի Լամբրոնեցւոյն։ Յիշատակարանն. « Փառք և գոհութիւն նմա որ սկիզբն է և կատարած, 'ի նը-ւաստ վաստակաւորէ Ներսիսէ։ Տառապեալ Ներսէս, վրիպեալ յառանձին խոկմանէ, վերակացու-

Թեամբ Տեառնէ քաղաքին և որ 'ի նմա մեծի եկեղեցւոյ պաշտամամբ, զբաւստանս խմոյ զբաղմանցն սառացոյ զմտաւորակ գրչութեան 'ի մատեանս աստուածային, ընդունաւ բաղում անգամ զքաղաքականն ընդհօքս զբնականն և զկրթականն՝ խոկմամբ յաստուածայինս կերակրելով զոգի: Ո՛Հ ծՀ, Թերևս քան զմեծի Քրիստոսի գթութեանն պատահեցայց 'ի զերկնիցն արքայութիւն բանաբարողաց: Ի Թու" ՌԽԴ ու Զնմանահայն օրինակն կը գտնեն բանասէրք 'ի Միռոշան, Հանրայնապատում կիլիկիոյ, յ'եջ 88: Լատինական Թարգմանութիւնն սորոյն Եփրեմի այս երկասիրութեան հրատարակուած է 'ի մեր տպարանի (1876):

— ** Թարգմանութիւն աւետարանի զոր արարեալ է տեառն Եփրեմի խորին ասորւոյ. « Ամենայն գիրք որ միանգամ 'ի մնաց մարդկանէ գրեալ են, և ոչ յաւրինաց և 'ի մարգարէից առնուն 'ի խաւսել, մատեանք են՝ ծնունդք և ստեղծուածք մնաց հակառակողաց »:

— Ի մարգարիտն յայտնութիւն. (Sur la perle de l'évangile). « Միրեմ զքո զաւետարանդ, տէր. զի յորժամ քաղցենամ՝ կերակրէ զիս: Յանկամ բանի քում. զի 'ի ծարաւելն իմում աղբիւր լինի ինձ »*:

* Կայ և յունականն այս Ճառիս, որ սորայն Եփրեմի ընտրելագոյն գրուածոց մէկն համարուած է:

— ** Յաղագս յարութեան. (Sur la résurrection des morts). « Խնդացիր զերիս չափն, զիարդ հայս Թրեցաւ. խնդացիր զհայան և զհառն մանանխոյ: Հաոբն և հայան Քրիստոս է »:

— ** Վասն հատոյ մանանխոյ առակացուք. (Sur le grain de senève). « Հատն մանանխոյ փոքր, վասն ողորկութեանն աղդոյ, վասն սաստկութեանն կծու, վասն պարկեշտութեանն աւգտակար, վասն տռապինութեանն գաւն »:

— ** Ցեառն Եփրեմի յաղագս որ ունի զհարսն, փեսայ նա է. (Sur le mot de N. S. - Celui qui possède l'épouse, est l'époux). « Կամիք քեզ վասն եկեղեցւոյ բան պատմել. քանզի է ամենեցուն և քեզ աւգտակարագոյն: Կամիք զաւետարանն քննել, և յաղագս նորա զբանս ընարել » ։ — « Աւարտեցան Ճառք աւետարանականք խորհրդաւորք սրբոյ Եփրեմի » ։

— ** Մեկնութիւն Առաքելոյն զոր արարեալ է տեառն սրբոյ Եփրեմի խորին ասորւոյ և ասորւոց Ճրագի. (Commentaire sur les epîtres de St. Paul). « Գիտեմք, զի նոր կտակարանք կամ պատգամք 'ի ձեռն կարգին տուելոյ՝ Յունաց է տուեալ: Եւ քանզի բազմապատում բանիւք խաւսեցան զԱռաքելոյ. որք խաւսեցանն ըստ առատ ըստ իմաստուն գիտութեան լեզուին իւրեանց » ։

— ** Առ Հռովմայեցիս. (Sur la lettre aux Romains). « Պատմեաց Պաւղոս վասն առաջին գալըստեանն տեառն մերոյ. և երկրորդ՝ թէ վասն էր եղև ինքն գալուստն » ։

— ** Առ Կորընթացիս առաջին. (Sur la première epître aux Corinthieus). « Առ Կորընթացիսն, իբրև եկն եհաս առ նոսա աւետարանն 'ի ձեռն Պաւղոսի և ընկալան զհոգին, տիրեաց 'ի նոսա հպարտութիւն ամպարտաւանութեանն » ։

— ** Առ Կորընթացիս երկրորդ. (Sur la seconde epître aux Corinthiens). « Հալածումն մեծ անհնարին յարեաւ 'ի վերայ աւետարանին, և նեղեցան Կորնթացիքն ըստ կարի իւրեանց » ։

— ** Առ Կորընթացիս երրորդ. (Sur la troisième epître aux Corinthiens). « Կորընթացիք յետ մաքանելոյն իւրեանց 'ի ձեռն Թղթոցն Առաքելոյ, 'ի հերձուածոց անտի՝ որ անգէն և անգ յինքեանց 'ի վերայ իւրեանց ծնան՝ խռովեցուցիչք առաքեալք մտին 'ի նոսա և խռովեցուցին զնոսա » ։

— ** Առ Գաղատացիս. (Sur la lettre aux Galates). « Գաղատացիք աշակերտեցան 'ի Պաւղոսէ, ոչ 'ի պահել զպահպանութիւնս աւրինացն՝ որ խափանեցան 'ի ձեռն չարչարանաց խաչին » :

— ** Առ Եփեսացիս. (Sur la lettre aux Ephésiens). « Եփեսացիք աշակերտեալ էին՝ Յովհաննու աւետարանչի: Սա քանզի ետես զերիս ընկերսն իւր եթէ սկիզբն աւետարանացն իւրեանց առ 'ի մարմնոյ արարին » :

— ** Առ Փիլիպեցիս. (Sur l'epître aux Philippiens). « Հալածանք մեծ յարեան 'ի վերայ Պաւղոսի 'ի քաղաքի անդ Փիլիպեցւոց. և նեղեցան ընդ նմա և Փիլիպեցիքն » :

— ** Առ Կողոսացիս. (Sur l'epître aux Colossiens). « Կողոսացիք աշակերտեալ էին յԵպափրոդիտեայ, այն որ 'ի նոցանէն իսկ էր » :

— ** Առ Թեսաղոնիկեցիս առաջին. (Sur la première epître aux Thessaloniciens). « Պաւղոս իբրև հալածեցաւ 'ի քաղաքի անդ Փիլիպեցւոց, եկն նա 'ի քաղաքն Թեսաղոնիկեցւոց յետ աշակերտելոյն Թեսաղոնիկեցւոց. զի ընկալեալ էր նոցա զբան նորա » :

— ** Առ Թեսաղոնիկեցիս երկրորդ. (Sur la seconde epître aux Thessaloniciens). « Թեսաղոնիկեցիք զկնի այսր իբրև ընկալան զթուղթսն առաջին և ընթերցան 'ի մէջ ժողովրդեան, որպէս և հրամայեցաւ նոցա » :

— ** Թուղթ առ Հեբրայեցիս. (Sur l'epître aux Hébreux). « Իսկզբան իսկ թղթոյս այսորիկ ծուփ և խնդիր անկաւ մեզ՝ գիտել ճանաչել թէ վասն էր որպէս յամենայն 'ի թուղթս իւր՝ ոչ գրեաց զանուն իւր Պաւղոս 'ի թղթիս յայսմիկ » :

— ** Առ Տիմոթէոս առաջին. (Sur la première epître à Timothée). « Առաքեալ յղեաց զՏիմոթէոս առ Եփեսացիսն վասն ոմանց 'ի Հեբրայեցւոց, այն

որ խռովքինն զնոսա պահել զպահպանութիւնս աւ-րինացն » :

— ** Առ Տիմոթէոս երկրորդ. (Sur la seconde epître à Timothée). « Պաւղոս ծանեաւ հոգւովն որ էր 'ի նմա՝ եթէ մերձեալ է ժամանակ վախճանի իւրոյ ելանել նմա յաշխարհէ աստի յայսմանէ ».

— ** Առ Տիտոս. (Sur l'epître à Tite). « Պաւղոս եթող զՏիտոս 'ի Կրետէ երբև զվերակացու և երբև զեպիսկոպոս, զի շրջեսցի նա և կացուսցէ երիցունս 'ի քաղաքս քաղաքս, և այլ եւս որ պակաս իցեն 'ի տեղիս տեղիս՝ ուղղեսցէ » :

Յիշատակարանն. — « Փառք ամենասուրբ երրորդութեանն որ հասոյց ցյետին գիրս գրաւղիս, ամէն: Յանուն Աստուծոյ գրեցաւ գիրքս 'ի ՆԽԸ թուականիս Հայոց 'ի հայրապետութեանն տեառն Սարգսի Հայոց կաթողիկոսի և 'ի թագաւորութեանն Սենեքերիմայ որդւոյ Աբուսահլի. ձեռամբ Սիմէոնի վա-դապետի և կրաւնաւորի՝ զորս զկարգացողդ աղաչեմ յաստուածամատոյց աղաւթսդ անմոռաց յիշմամբ յիշատակել աղաչեմ. և զաւրանաւն զկաղմիչ և զյաւրինիչ գրոցս յաղաւթից անմոռաց ունել և Աստուած փոխարէն հատուսցէ յետին աւուրն. Թուէցիմք թէ աւելորդ ինչ բանս յաւացեալս յաւելցաւք. վասն զի այլայլի 'ի գալ արփւոյն և բազմածիրք աստեղացն և 'ի մանկութենէ փախստեա ընթանա ծերութիւն. տեղի տայ և ձմեռն գարնանայինն և եղանակաց միանգամայն և հիւանդութիւն քաղցրութեան և պայծառ և չքնաղ տեսակաց. զորս և աստուսա սակաւիկ ինչ բանքս զոր ասելս կամիմ արքելու զիս հոգիս և լալ անպիտան վարկանիմ. զոր և իբր իմ 'ի մէջ երկուց հրեղեն միմաց պաշարեալ գողամ, զտեառնէ Եփրեմի ասեմ և զտիեզերականն և զաստուածապատիւ տեառն Յոհաննու Կոստանդնուպաւլսի եպիսկոպոսապետի. զի զսա զբոլորն զո-

լերանս լուսաւորեաց զա(զ)գան Յունաց. և անդ Եփրեմ ասորեստանեայց ազգին անձնուաղ ծագեաց արեգակն. և զբազմագունան բանսն և զմթին Պաւղոսի երանելւոյ առաքելոյ բացերեւութարար և յայտնի մեզ ցուցին. որքա են լերինք մշտնջենաւորք սեպք և ուղղորդք անտեղիտալիք չար և նենգաւոր գազանաց. արդ եթէ ոք լինի նման իցէ մի մերձիցի, գուցէ քարկոծեսցի. զի մի խայտառակեալ իցէ անմաքուր վարուք. և մի ոք անսանձական կերպիւ գայլենի 'ի ներքուստ և արտաքուստ փառանենի երկդիմի բնութեամբ մի մերձիցի 'ի լերանս. և դարձեալ մի ոք արբաքացի և ընդդիմադրող և հակառակող. քարկոծեսցին 'ի միջին զոր առանց ձեռինն 'ի լերանէն հատաւ չափ աշխարհի. և մի ոք և այլ ինչ և աղանդաւոր, զոր և 'ի ժամանակիս տեսանեմ. վասն զի լուծանել հրամայէ զերկրաքարշ և զմեղսաթաւալ կաւշիկ, և զաւրէն մեծին Մովսէսի յիմանալի լերանն ելանել և ընդ ամպովն լինել և ընդ Աստուծոյ խաւսել: Այս լերինք մշտնջենաւորք են դիտանոց դրախտին Աստուծոյ որ գեղեցկապէս բուրեն 'ի մեզ զբուրումն բուրաստանաց Աստուծոյ՝ զերանելոյն ասեմ զսրբոյն Պաւղոսի և որ հաս անդր էր 'ի Քրիստոս 'ի մէջ երկուց բնութեանց բարւոյ և չարի. որքա հնչեցուցանեն 'ի մեզ ոչ փոքրոց բարբառ և բանք ատագնապողք. այլ զՔրիստոս 'ի Պաւղոսէ քարոզեալ և յայտնեալ և կենագործեալ զաշխարհս. որքա մեծեալ և անաւեկ բարձր դիտանոցք. որք ցուցանեն ոչ աւախտականք քարկոծողք այլ կեանք աւետարանականք և առաքելականք, միանգամայն և մարգարէականքն. որքա և եւթնապատիկ ծագեալ քան զարեգակն փախստական արարին զխաւար ագիտութեան յազգէ մարդկան, վասն որոյ և առաւել ևս յազգէս Հայոց. ուստի և ես Սիմէոնս նուաստ և անպիտան կրաւնաւոր որ ընթերցայք և ցանկացող եղեալ մանկութենէ իմմէ

յուղէի խնդրէի զգիրս տեառն Եփրեմի զհին կատա-կարանաց թարգմանութիւն. և գնոր. զոր և գնացի յաշխարհն ուստի և սուրբ առաքեալն Բարթողի-մէոսն կատարեցաւ 'ի տեղւոջն որ անթառակալու-թիւն Արծրունեաց տանն կոչի Եւենի անուն խնչ աւ-ղոյն. և գտի զմեկնութիւն երանելի առաքելոյն տեառն Եփրեմի խուրին ասորւոյ և գրեցի 'ի ստոյգ և 'ի հին աւրինակէ զոր և բերի. և այսու միայնոյ ոչ հաւանեալ. այլ և այլ տեղ գտի զերանելւոյն տեառն Յովաննու Ոսկեբերանի կարճառաւտ մեկնութիւն ԺԴ թղթոցն Պաւղոսի և 'ի մին գիրս գրեցի. նախ առաջին զտեառն Եփրեմի և ապա զտեառն Յովհան-նու. զոր և անբաւ և մեծ գիտութիւն յինքեան բովանդակեալ ունի. և գրեցաւ գիրքս տեառն Եփ-րեմի որպէս յառաջն ասացի յԱղբակ գաւառի 'ի տանն Արծրունեաց, և զերկրորդ գիրքս 'ի Կոգո-վիտ գաւառի 'ի տանն Բագրատունեաց եպիսկո-պոսարանի 'ի տեառն Թադէոսի. 'ի ժամանակի տեառն Մուշէի եղբաւրորդւոյ որ զառաքելոյն Թադէոսի ունէր զվարս և զսրբութիւն. զոր հա-մարձակիմ և ասեմ թէ զսուրբ և զմաքուր կուսու-թիւնն աւետարանչին Յոհաննու. այր խստակրաւն և պարկեշտ և վկայեալ յամենայն բերանոյ և յԱստուծոյ փառաւորեալ։ Ի սորա յաւուրս և Աստուած հաշտ էր ընդ աշխարհի. զի կենդանի մարդ էր և Աստուծոյ հանապազ մնաեալ. և ա-մենայն հոգևոր գանձու գիտութեան է շտեմարան. զոր չէ բաւական ժամանակս բարեբանել զերանելի հոգին որքան արժան է. այլ յայնմ ժամու և 'ի ձեռն նորա գրեցաւ գիրքս 'ի ՆԽ և ութ թուականու-թեանս Հայոց 'ի թագաւորութեան Գագկա որդւոյ Աշոտոյ. և 'ի հարմանն Պարսից 'ի ձեռաց Դաւթի կիւրապաղատի աւգնականութեամբն Աստուծոյ. յայնմ ժամանակի այս գիրք գրեցան աղքատ Նիս-

թով և խոշոր, զորս աղաչեմ անմեղադիր լինել ան-հեդեդ գրոյս և աղքատ քարտեսիս. այլ զաշխա-տութիւնս զոր ընկալայ 'ի սմա զայս առ և ընկալ և ուրախ լեր 'ի սէր որբոցս. վասն զի թէ տայցես յա-նաւթ այլում ումեք սորա փոխան ուժգին տացես. զի չէ բաւական գանձք որ արժեն զսոսա »:

— Ուրիշ գրչի յիշատակարան մ'ալ. « Ցամի յորում էր հայ թուականն ՆՂ վճարեցաւ 'ի մարդկանէ ար-քայն Հայոց մեծիմաստն Յովհաննէս: Գաղ եմ Սար-գիս վարդապետ զգիրքս զայս յարքունական տան գանձուն անկեալ 'ի յանկեան միում անայցելու-թափառեալ թաւալէր յամիսն յատակին և գրեթէ լուր լռելեայն: Իսկ իմ հայեցեալ խնամով 'ի գրա-նոցին, և ըստ ամփոփական մեր ախորժակացս զյո-քունս բացեալ 'ի բանսն բերկրէր. և սա զատուցեալ յընկերացն կայր կարաւտ ձեռին առ ինքն կարկա-ռեալս: Զոր արդ առեալ իմ ընդ իս տարայ՝ հանեալ 'ի բանդէն »:

— Երրորդ մ'ալ՝ աւելի կրասերագոյն ժամանա-կաւ և գրչութեամբ, Գրիգորի որդի Տուտայ (Տու-տէորդի). « Ես Գրիգոր նուաստ 'ի մէջս քանակրու-թեանց ուսումնական արտագրութեանց, յաղագս տանէ, ստացայ զմարգարիտս հաւատոյ, յաւերժ ցըն-ծութեամբ անձին, և յիշատակ հոգւոյ. 'ի ՌԳ թուոյ, կազմեցի ձեռամբ իմով. յաշխարհս այրարա-տեան 'ի վանս Յովհաննու, 'ի դուրս սրբոյ Կարապե-տիս ...»:

— ** Ճառք 'ի ծնունդն Քրիստոսի աստուծոյ մե-րոյ. (Discours sur la Nativité de N. S.). « Որ էրն 'ի սկզբանէ առ աստուած, աստուած բանն, կենդանի, զաւրաւոր, աթոռակից Հաւր, ահաւոր, բարձրեալ, հզաւր »:

— ** Ներբողեան ասացեալ 'ի ծնունդն Քրիստոսի. « Անքննելի է ծնունդն քո, Որդի Աստուծոյ, և դը-

ժուարին է բերանոյ իմոյ խաւսել զմեծ խորհուր-դըս նուաստ լեզուաւ »* :

* Ի ցուցակին Էջմիածնի (Թիւ 893) այս խորագրով. « Երանելւոյն Եփրեմի ներբողեան յաւետիս կուսին Մարիամու և 'ի ծնունդն Քրիստոսի Աստուծոյ » : Ծանօթ. 'ի այլ. Վենետիկոյ. « Ի Ճառից որբոյն Եփ-րեմի վերբերուս եւեթ զառ և զՍտեփանոսին՝ Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի առնէ ընծել Ասսեմանի յարեւ-լեան. մատենագրութիւնս (Հատ. Ա. 209) իւր. այլ որ առ մեզ կան գրչագիր օրինակք՝ չորս առաջիկայ Ճառից 'ի ԾԾ. Բ. Գ. և յԱսկեփորին ԺԸ. և այլ չոր-րորդ մի, և երկու այլ մնացոյն՝ Եփրեմի ունին զա-նուն » :

Ի մատենագրութիւնս Եփրեմի, որ հրատարա-կուած են յամի 1740, 'ի Հռոմ 'ի Վատիկանեան տպարանի, ասորի բնագրաւ և լատին թարգմանու-թեամբ կան Ճառք երեքտասան (Հատ. Բ. 396–435) 'ի ծնունդն Քրիստոսի, յորոց և ոչ մին ունի նմանու-թիւն ընդ մերումս.

— Եփրեմի 'ի ծնունդ տեառն. « Որք պայծառա-ցաք » : (Մատենադ. Էջմ. Թիւ գրչ. 890).

— ** Վասն գովաբանեան հրեշտակապետին Գաբրիելի առ կոյսն Մարիամ. (Sur l'Annonciation). « Ընկա-լեալ ծառային զհրովարտակ մեծ Թագաւորին » : — Նորին Եփրեմի խուրին ասորւոյ ասացեալ յաւետիս կուսին Մարիամու և յղանալ նորա բանին Աստու-ծոյ. « Եկեալ հրաման մեծի արքայի » : — Նորին ա-սացեալ վասն հաւատարմոյն Յովսեփայ 'ի ծնունդն Քրիստոսի երեւմամբ հրեշտակապետին. « Եւ մինչ-դեռ յայնպիսի խորհրդոյն տագնապէր Յովսէփ » : — Նորին ասացեալ 'ի ծնունդն Քրիստոսի և 'ի փառա-բանութիւն հովուացն և մոգուց Թագաւորաց. « Ըն-թացեալ հրեշտակացն աւետարանեցին հովուացն » : (Մատենադ. Էջմիածնի, Թիւ 888, 893, 923)* :

* Հատուածք են յիշուած ծննդեան Տեառն և Հեթանոսացն, զորս կը գտնենք նաև մեր Մատենադարանին Ճառընտրաց մէջ՝ նման խորագիրներ կրելով. — Վասն գալստեան Գաբրիէլի առ կոյսն Մարիամ « Ընկալեալ ծառային զհրովարտակ »: — Յաւետեաց կուսին Մարիամու և յղանալ բանին Աստուծոյ. « Երկեալ հրամանն մեծ »: — Ի ծննդեան Քրիստոսի և 'ի փառաւորութիւն հովուացն և մոգուց. « Ընծայեալ հրեշտակացն աւետարանեցին հովուաց »:

— * Ի գալուստ Փրկչին յԵրուսաղէմ և 'ի սուրբ տօնն բարեբանութեան. (Sur l'entrée de N. S. à Jérusalem, et le jour des Rameaux). « Ի տօնս տօնանից լի ընտրողութեամբ հրաւիրեալ էք. եղբարք իմ սիրելիք. մատուցէք զարդիւնս գովութեանց իմաստուն հրաւիրողին Տէրոյ »:

* Ի Մատենադարանին Էջմիածնի (թիւ 915) այսպիսի խորագրաւ. « Ի մեծի աւուր գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յԵրուսաղէմ. և բանեցելոյն արբայ Եփրեմի ասացեալ, որ է սուրբ տօնին բարեբանութեան՝ որ և Ողոգոմեան կոչի »:

— ** Ի յարութիւն Փրկչին մերոյ. (Sur la résurrection de N. S.). « Յաւուր յորում յարեաւ Քրիստոս, և ըմբռնաւ զօրութեամբ յաշակերտսն, ասէ Շմաւոն ցայլ առաքեալսն. երթամ որսայց ձկունս »:

— ** Յայլակերպութիւն տեառն. (Sur la transfiguration de N. S. à Thabor). « Յերկրէ հունձք և ողորմութիւնք. յայգեաց պտուղք անթիւք, 'ի զրոյց վարդապետութեան կենաց »* :

* Ի Մատենադ. Էջմիածնի (թիւ 918) այս մակագրով. « Երանելւոյն Եփրեմի խօսքին ասացելոյ ասացեալ 'ի մեծի աւուր վարդավառին 'ի Մատթէոսի աւետարանին մեկնութենէն »:

— ** Ներբողեան 'ի սուրբ խաչն աստուածընկալ. (Panégyrique sur la sainte Croix). « Աւրհնեա-

ցուք, եղբարք, զհրաշագործ անուրէնութիւն միածնին և անճառ բանին, որ 'ի սկզբանէ առ Աստուած՝ Աստուած բանն »* ։

* Փարիզու մատենադարանին գրչագիր մը (Թիւ 479) Կիւրղի աղեքսանդրացւոյ կ'ընծայէ զայս ճառ ։

— ** Յենովք և յ'Եղիա․ (Sur Hénoch et Hélie). « Արդարն Ենովք մեզ պսակաւոր երկնային կերպակուր տայ․ քանզի վասն որ 'ի նմա շնորհին զմտաւ ածեմք » ։

— ** Առ Յովսէփ․ (Sur Joseph, l'hébreux). « Պարկեշտն Յովսէփ վաճառեցաւ յիւրոց եղբարցն․ բայց ինքն վաճառէ զկենդանութիւն իւրն յաղթերէ տահեալ » ։

— Յաղագս ապաշխարութեանն Նինուէացւոց․ (Sur la pénitence des Ninivites). « Ահա հրաման հասեալ առ մարգարէն Յովնան քարոզել Նինուէի ։ Եմուտ 'ի քաղաքն, և անդէն ձայն նորա խառնեցոյց զամենեսեան »* ։

* Կը գտնուի 'ի մատենագրութեանս Եփրեմի Syr. Lat. (Հատ. Բ. 359) և Græc. Lat. (Հատ. Գ. 561) միայն 'ի լատին ։ Մեր թարգմանութիւնը մերթ միոյն կը համաձայնի և մերթ միւսոյն ։ Նոյն ճառէն հատուած թուի 'ի Ճառընտիրս․ « Յայնժամ յարուցեալ թագաւորն » ։

— ** Ի յիշատակի սրբոց Մակաբայեցւոցն ասացեալ վասն կերակրոց զոր ուտեն հաւատացեալք առողջ մտաւք․ (Sur les Machabéens). « Արար Աստուած զերկինս, զերկիր և զամենայն որ է 'ի նոսա․ և ահա բարի են յոյժ »* ։

* Փարիզեան մատենադարանի գրչագիր մը խորագրէ յանուն Եփրեմի Նիկոմիդացւոյ ։

Խորագիր 'ի Ճառընտիրի Սողոմոնի Մաքենոցաց առաջնորդի․ « Ի յիշատակի սրբոց Մակաբայեցւոց նորին երանելւոյն Եփրեմի ասացեալ 'ի Նիկոմիդա-

ցուոց դրոց՝ վասն կերակրոց զոր ունէին հաւատա- ցեալք առողջ մտաւք »։

— ** Ներբողեան ասացեալ պատմագրաբար 'ի սուր- բըն Յովհաննէս կարապետն և մկրտիչ Յիսուսի Քրիս- տոսի և 'ի կաքաւութիւն Հերովդիադայ. (Sur S. Jean-Baptiste, précurseur de N. S.). « Հրաւիրելով կո- չեցաւ լեզու իմ յուրախարար և 'ի կենսաբեր բա- րիս, և փափագելոց միտք իմ բաղձմել ունկանց 'ի հոգևոր սեղանս »* ։

* Ճառընտիրք 'ի մեր Մատենադարանի յաւելուն 'ի խորագրին. « Թարգմանեալ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի » որ է վկայասէրն։ — Հատուած 'ի ճառընտիրս. « Եւ մինչ էր սուրբն Յովհաննէս 'ի բանտին »։

— ** Ի սուրբն Ստեփաննոս նախավկայն Քրիստոսի. (Sur S. Etienne, le protomartyr). « Անդրանիկն մարտիրոսաց կոչեաց զիս 'ի հոգևոր հարսանիս իւր. շնորհեա ինձ, տէր. պարգևաւք մտանել առ նա, և ուրախանալ յառագաստ նորա »։

— ** Ի գալուստ տեառն 'ի տաճարն քառասնաւ- րեայ, և 'ի ծերունին Սիմէոն. (Sur la présentation de N. S. au Temple). « Որ անսկիզբն ես յէու- թեան, անպարագրելի բանդ Հաւր՝ յառաջ քան զյա- ւիտեանս հաճեցար լինել աղայ 'ի կուսէն, բաց ըղ- շրթաւնս իմ գովել զաստուածային ծնունդ քո »։

— Երանելւոյն Եփրեմի յաղագս կրաւնաւորու- թեան. (Τοῦ ἁγιοῦ Εφραιμ τοῦ Συροῦ λόγος ἀσκητικός. « Ցաւս հարկ անձն իմ ասել, և անարժանութիւնս իմ ստամբէ ինձ լռել. երկուցք խաւսել բանադատեն, և մեղք իմ զլռութիւն ունել ինձ հարկեցուցանեն »։

— ** Եփրեմի սուրբ վարդապետի 'ի հինգերորդ- թարգմանութեանն. « Յորժամ երիտասարդն կէր. պարտ էր քեզ զանհերեւոյթս խորհել »։ (Այլք Ոս- կեբերանի մակագրեն)։

— Եփրեմի խուրին ասորւոյ «Մեկնութիւն երկոտասան մարգարէից» : (Commentaire sur les livres des douzes prophètes). Կայ յիշատակուի Էջմիածնի Մատենադարանին գրչագրաց ասպագիր ցուցակին մէջ (Թիւ 1326). «Քաղուածոյ բոլորագիր գրեալ 'ի Թուղթ թանձրակեայ յԵրզնկա. 'ի Աւահանկայ եկեղեցւոյ 'ի Թուին Հայոց ՌԽԲ (1593)․ ունի զյիշատակարան» : Կայ և ասորի բնագիրն :

— Սորոյն Եփրեմի ասացեալ․ (Fragments). «Մի տաղտկէք յուսահատութեան ձեր առ դատաւորն որ զզղջացեալսն արդարացուցանէ և զմեզ չարչարէ» :

— Նորին ասացեալ. «Ոսկերք մեռելոց որ 'ի գերեզմանս են, ահա ըղձայեն զշաւիղն կենաց» ։

— Նորին. «Ժողովեցէք և ամբարեցէք յամառնային մթերս ձեր. զի 'ի ժամանակի ձմերանն արկանիցէք վտանգելոց մտաց 'ի մշտաց օգնականութիւն» :

— ** Ճառ սորայն Եփրեմի յաղագս դարձի ազգի Շնագլխոց 'ի ձեռն Անդրէի առաքելոյ. «Ամենակալն Յիսուս Աստուած մեր՝ յաղթեալ 'ի խաչին չարչարանաւք՝ կործանեցեալ իշխանին աշխարհիս» : (Մատենադ. Էջմ. Թիւ 898) :

— Նորին սորայն Եփրեմի ասացեալ 'ի դարձ մեղաւորաց. «Եւ արդ մի վերջանայք 'ի զղջմանէ» : (Անդ) :

— Ճառք Եփրեմի Ասորւոյն «Թարգմանեալք 'ի Գէորգէ ուխտէն 'ի Քեսուն քաղաքն. 'ի միասին եդեալ ընդ ասորի բնագրին» : (Մատենադ. Էջմիածնի, Թիւ 899) : Ցանկողն կ'ըսէ Թէ ունի յիշատակարան, յորում կան նաև Ճառք Մեկերիտոնոսի Եմեսու եպիսկոպոսի, գրչագրեալ 'ի Թուին Հայոց ՈԿԴ (1215) : Յիշատակարանէն քանի մի տողք՝ որ մեր ձեռքն հասած են. «Զգէորգ մեղապարտս յիշեսջիք մեղաց Թողութեամբ 'ի Քրիստոս, որ զայս հանդիսաւոր Ճառս Թարգմանեցի 'ի քաղաքս Քեսուն» :

— Եփրեմի բանք աստուածայինք և զղջականք և մխիթարանք ամենայն կրաւնաւորաց: (Մատենադ. Մխի- թարեանց 'ի Վիեննա, Թիւ գրչ. 58):

— Եփրեմի և Ոսկեբերանի Մեկնութիւն 'ի Թուղթ- ոյն Գաղատացի:

— Մեկնութիւն Եզեկիելի. ('ի Վան):

— Մեկնութիւն Եսայեայ. (Մատենադարան Էջ- միածնի): * Ի Մինէրվա գրատան Հռովմայ կը յիշա- տակուի՝ ուրիշ հայ գրչագրաց հետ՝ Ephrem (S.). Commentarii in Isaiam et Ieremiam, armenice.

— ** « Կանոն մեծի Հինգշաբաթուն Ոտնլուա- յին ըստ որում ասացն Յիսուս թէ օրինակ մի ետու ձեզ: Զոր արարեալ է տեառն Եփրեմի խորին Ասոր- ւոյ, զոր Թարգմանեաց սուրբ կաթողիկոսն Հայոց Գրիգորիս վկայասէրն »:

— Ի Հաւատոյ գրոց. « Զարթուցուք, եղբարք, զննջածութիւն մեր »:

— Ընդդէմ յիշոցաց, և լուծման չորեքշաբաթի և ուրբաթու. « Ով եղբարք իմ սիրելիք և քրիստոսա- սէր ժողովուրդք »*:

* Ի Մատենադ. Էջմ. (Թիւ 914). « Երանելւոյն Եփրեմի խորին Ասորւոյ ասացեալ վասն յիշոցմա- տուաց, կամ այնոցիկ որք ուտեն զպահս ուրբաթու և չորեքշաբաթու, և լինին մասնակից խաչահա- նուացն »:

— Կանոն տեառն Եփրեմի արգելանաւորաց կրաւ- նաւորի. զոր ուսուցանէր յանապատն 'ի Կուսու- թեան Ճգնէին. « Քահանայ կամ կրաւնաւոր կամ սարկաւագ որ կամակոր մնայք իւրեանն ընկենուն զպատիւն կամ զբեռն վասն ծանրութեան կամ ծու- լութեան »:

— ** Երանելւոյն Եփրեմի յարեւելեան գրոցն ասա- ցեալ. (Sur les Martyrs d'Orient). Վկայութիւն բազմացն սրբոց արեւելեայց որք կատարեցան վասն Քրիստոսի:

— Ի յարութիւն մեռելոց. (Sur la résurrection des morts). « Մի՞թէ ոք անհաւատասցէ վասն յաւիտենական կենացն. քանզի թէ ոչ հաւանէր այնոցիկ էր, ոչինչ յէիցս մնացեալ լինէր »*:

* Ի ստորին լուսանցս Ճառին գրէ ստացողն (Գր. կաթ. կամ եպիսկ.). « Ո՛հ, գեղեցիկ ճառիս և համեղագոյն մեկնութեանս, ընթերցող, եթէ գիտացես »:

— ** Վասն դատաստանին և միւսանգամ գալստեան. (Sur le jugement dernier). « Եկայք ամենեքեան, եղբարք, լուարուք ինձ և խորհրդակցութեան խմբոյ մեղաւորի և ողբոյ Եփրեմի. քանզի ժամանեաց մեզ աւուրն այն ահաւոր և մեծ »:

— ** Յաղագս ապաշխարութեան 'ի պահս քառասնորդաց. (Sur la pénitence et les jeûnes). « Ի շաւիղս փառաց քոց, տէր, ընթանամ բանիւ իմ, որդի Աստուծոյ, քանզի քեզ պարտին տալ փառք ամենայն բնութիւնք բանաւորաց »:

— Յորդորումն պահոց. « Պահք յայտնիք՝ ծածուկ պահաւք բովանդակին. և որ արգելլումն 'ի կերակրոց, արգելմամբ չարեաց կատարին. քանզի ոչ 'ի միոյ անդամոյ կայ մարմին, և ոչ միով քարիւ կատարի շինուած »:

— Յորդորումն ապաշխարութեան. « Հոգեւորապէս նորոգեցարուք, եղբարք. մի՛ մարմնով ըստ մարմնոյ, այլ մարմնով ըստ հոգւոյ »*:

* Հատուածք 'ի Ճառընտիրս. — Յաղագս ապաշխարութեան. « Արդ լուացարուք, արդ սրբեցարուք »: — Վասն ապաշխարութեան. « Ասէ երանելին մարգարէն Եզեկիէլ. Անաւրէնն եթէ դարձցի »:

— ** Յայն Ճառէն որ վասն երաշտի և վաշխառուաց. (Fragment d'un discours contre les usuriers). « Վասն քո եղև սով. ոչ եթէ յատելեաց իւիք յայգմանէ, որպէս ասէիր: Եթէ ո՞չ էր քեզ բա

ռական անգործութիւն, այլ և կռապաշտութիւն յանձն առնուս »:

— ** Վասն քնոյ և արթնութեան. (Sar le sommeil et la vigilance). « Մի՛ տայք իշխանութիւն քնոյ թագաւորել յանդամս ձեր: Լուարուք զաղջկան զոր գործեաց 'ի յերկրի. քաջնեցէք և փախերուք 'ի նմանէ »:

— Ի նոյն գրոց վասն հսկողաց. « Ճուժեցայք փոքր մի, առաքինիք, բանալ զծանրութիւն խաւարի. զի աւա փոքր մի, և կատարեաց զժամս իւր »:

— ** Յաղագս խոնարհութեան. (Sur l'humilité). « Արդ որպէս աստ տառապեալն, ամենայն խոնարհութեամբ զմխիթանս լաւ համարել քան զանձինս: Արդ ամենայն աստ՝ յայտ է թէ բաղում մասունք են խոնարհութեան »*:

* Գրչագիր մը Անանիայի Շիրակացւոյ կ'ընծայէ զՃառս:

— Նորին առացեալ վասն ողորմութեան. (Sur l'aumône). « Ոսկի որչափ 'ի տան իցէ՝ երկիւղ է յականահատաց և 'ի գողոց աւազակաց և 'ի յափշտակողաց »:

— ** Յաղագս խորհրդոց մաքրութեան. (Sur la pureté du cœur). « Արդ նախ և առաջին քան զամենայն առաքինութիւն, խորհրդոց մաքրութեան ջանա. վասն այնորիկ աստ մարգարէն. Աստուած փառաւորեալ է 'ի խորհուրդս սրբոց իւրոց »:

— Վասն պահոց (հատուած). « Եւ ոչինչ է որ արգելու զքեզ յայնպիսի երկնային բարձրութենէն և 'ի խոնարհ ձգէ, բայց միայն հեզգութիւն պահոց և ծանրութիւն որովայնի »:

— Վասն աղօթից (հատուած). « Արդ գիտելով զայս ամենայն օտարանայի, եթէ այս ամենայն մեծութեան պարգևս 'ի ձեռն աղաւթիցն շնորհի մարդկան յԱստուծոյ »:

— ** Ողբք սրբոյ հաւրն Եփրեմի ասացեալ վասն քաղաքին Նիկոմիդեայ. (Élégies du saint père Ephrem sur la ville de Nicomédie). Յիշատակարանն. « Զտէր Ներսէս սրբազան արքեպիսկոպոս Տարսոնի, և առաջնորդ սուրբ ուխտիս Սկեւռայ. որդի Աւշնի սեւաստոսի ստացաւղ սուրբ մատենիս, յիշեսջիք 'ի Քրիստոս հանդերձ գեղեցիկ և ծաղկեալ չորեսին հարազատաւքն, Հեթմիւ, Ասպիրատիւ, Շահանշահիւ և Գրիգորիւ. և զիս զմեղուցեալ գրիչ զՅոհաննէս աշակերտ նորին ...»: Ուրիշ յիշատակարան մ'ալ. « Ես Յոհաննէս գեւաւորս 'ի գրչաց, տեառն իմ հրամանաւ Ներսէսի իմոյ դաստիարակողի, և զիս յաստուածայինն ձգաւղի, սկըսայ զողբքս զայս և զոգեշահ բանքս սուրբ հաւրն մերոյ Եփրեմի զոր ասացեալ է վասն Նիկոմիդեայ քաղաքի, և կատարեցի: Արդ որ ընթեռնույք զսա՝ յիշեցէք 'ի Քրիստոս զտէր Ներսէս զսուրբ և զհայր և զտիեզերական վարդապետ, ընդ նմին և զաստուածասէր մայր իւր տիկնանց տիկին Շահանդուխտ կոչեցեալ, և զհարազատս իւր զՀեթում սեւաստոսս և զԱսպիրատ և զՇահնշահ և զԳրիգոր »: Բայց յայս երկու յիշատակարանաց՝ 'ի վերջ իւրաքանչիւր ճառի, որ վեշտասան են թուով, կը յիշատակուին 'ի գրչէն Լամբրոնացւոյն և իր մօր անուանք՝ հանդերձ մաղթանօք. ինչպէս տեղ մը « Տէր Յիսուս ողորմեա տեառն Ներսէսի առաջնորդի մերոյ եղբայրութեանս. ընդ նմին և մաւր նորա մեծանուն Սեւաստուհւոյ, և այնոցիկ որք յիշենն զնոսա »:

— Ասացուած առաջին վասն յանդիմանութեան. « Ցաւ՝ ասել ստիպէ զիս, և կարգ՝ լսել հրամայէ. քանզի ինչ որ շատ իցէ՝ թէպէտև անոյշ իցէ, չէ անոյշ. ինչ որ չափով է շահեկան է. ինչ որ չափով է՝ անոյշ է.

(Բ. և Գ.) պակասէ յօրինակին։

Դ. Ե. Զ. Է. Վասն Նիկոմիդեայ։

Ը. Վասն Նիկոմիդեայ քաղաքի և ընկերաց իւրոց։

Թ. Վասն Նիկոմիդեայ քաղաքի, և վասն յարութեան և ազատութեան։

Ժ. Վասն Նիկոմիդեայ և վասն վարդապետութեան արանց։

ԺԱ. ԺԲ. ԺԳ. ԺԴ. Վասն Նիկոմիդեայ։

ԺԵ. Վասն Նիկոմիդացւոց և Նիծիբինացւոց որ զգեցան խորգս։

ԺԶ. Վասն Նիկոմիդեաց։ (Մատենադ. Ս. Երուսաղեմի, Թիւ գրչ. 326)։

— ** Սրբոյն աբբայ Եփրեմի խորին ասորւոյ աղօթք. (Prières). Ա. «Տես, տէր, զտառապանս իմ և զցաւս հոգւոյ իմոյ բազմամեղիս. դարձ, ներեա և 'ի քեզ առաջնորդեա». (ՃԽԱ հատուածք)։

— Բ. «Տէր երկնի և երկրի, իշխան մահու և կենաց, դատաւոր կենդանեաց և մեռելոց, Քրիստոս աստուած, յոյս և ապաւէն հոգւոյս»։

— Գ. «Տէր իմ Յիսուս Քրիստոս, մի մատներ 'ի դատաստան ընդ ծառայիս քո, և մի՛ տար այլում զդատաստանս իմ»։

— Դ. «Տէր աստուած զաւրութեանց, աղաչեմք զքեզ՝ որ մեծդ ես և ահաւոր, ահեղ և սքանչելի, անեղ և անանցանելի»։

— Ե. «Փառք քեզ աստուած, փառք քեզ արարիչ յաւիտենից աստուած, փառք քեզ. որ շնորհեցեր հանգիստ տկարութեանս մերում»։

— Զ. «Փրկեա զիս, Յիսուս Քրիստոս, որդի աստուծոյ, 'ի բարկութենէն որ գալոցն է։ Որպէս փըրկեցեր զԱդամ 'ի դժոխոցն. որպէս փրկեցեր զՆոյ 'ի ջրհեղեղէն»։

— Է. «Աղաչեմք զքեզ, Քրիստոս, փրկիչ աշխարհի. նայեա յիս և ողորմեա ինձ. փրկեա զիս 'ի բազմութենէ անաւրէնութեանց իմոց»։

— Ը. « Տէր աստուած զաւրութեանց, աղաչեմ զքո բարերարութիւնդ. ժամեմ և հայցեմ 'ի քէն, տուր ինձ տապան ապրեցուցիչ որպէս Նոյին՝ ապրել ինձ 'ի հրեղէն ծովէն և յանդնդային հրահոսանացն » ։

— Կտակ Եփրեմի. (Testament). « Ես Եփրեմ մեռանիմ. գիտութիւն լիցի ձեզ որք Եդեսեայ՝ կտակ ձեզ թողում. ուրքնակ յիշատակի վարդապետութեան » ։

—** Կցուրդք՝ (Antiennes) յիսուն և մի թուով. որ 'ի մեր օրինակին սկսանին 'ի հնգետասաներորդէն. « Աւրհնեալ տէր որ 'ի հինգ նկանակէն յագեցոյց 'ի հազարս բազումս. որ քննես զծնունդ Որդւոյ՝ պատմեա զպարգևսն նորա » ։ Ի վախճան յիսուն և մի կցուրդաց՝ հետևեալ յիշատակարան գրչին. « Կատարեցաւ կցուրդք ասացուածք Եփրեմի երանելւոյ՝ ձեռամբ անարհեստ գրողի Գրիգորի ապաշաւորի Անկերոյ վանիցս, 'ի թվին ՉԿԲ ։ Ի սոյն ամի սկիզբն արարաք շինման բերդին որ 'ի Քարափզկնոյն »* ։

* Ի տպագիր ցուցակին գրչագրաց Էջմիածնի (Թիւ 902) յորմէ գաղափարուած է և մերն, այսպէս նշանակուած կը գտնենք. « Ճառընտիր քառածալ նօտրագիր, գրեալ 'ի թղթի 'ի վանս Անկերոյ 'ի Գրիգոր վարդապետէ վանահօրէ սորին. պարունակին 'ի սմա Եփրեմի կցորդք, յորս տասն և չորսն պակաս 'ի ծայրն » ։ Գրչագրեալ 'ի թուականին Հայոց ՉԿԲ (1313) 'ի Սկեւռացւոյն Գրիգորէ, որպէս համարի ցանկողն գրչագրաց Մատենադարանին [1] ։

[1] Մատենախօսական տեղեկութիւնք Եփրեմի գրուածոց տես 'ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ մէջ 187-190 ։

ԶԵՆՈԲ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(ZÉNOBE, ÉVÊQUE)

— ** Զենոբայ եպիսկոպոսի 'ի մատնութիւնն տեառն. (Discours sur la trahison de N. S.). « Մինչդեռ անդէն իսկ 'ի խորհրդին էին քահանայապետք, թէ զինչ պատճառս գտցեն որով սպանանել կարասցեն զՅիսուս » :

— ** Ի լուացումն ոտից աշակերտացն. (Sur le lavement de pieds des Apôtres). « Յետ խաւսելոյն Յուդայի ընդ քահանայապետսն » :

— ** Ի կաթուղիկէ եկեղեցին 'ի քառասներորդ չորրորդ սաղմոսէն. (Sur l'Église catholique). « Արդ եկ լուր դու և երգ մի 'ի հոգևոր երգոց հոգեբարբառ երգողի՝ զինչ ասէ հարսն որ է եկեղեցի: Եւ անդ պատմէ քեզ ազգի ազգի վայելչութիւնս փեսային » :

— ** Վկայութիւն վասն մարդեղութեան. « Եւ ոչ ասեմք եթէ մահ մարմնոյն միայն է, որպէս և ասեմք եթէ կեանք բանին միայն. եթէ կեանք բանին և մարմնոյն են, և եթէ յաւերժ կենդանութիւն մշտնջենական բանին և մարմնոյն » :

— Ներբողեան 'ի սուրբն Մելիտոս Անտիոքայ հայրապետ. (Panégyrique sur S. Mélitus, patriarche d'Antioche). « Աւրհնեալ է այն որ յառաջ քան ըզնկարելն յորովայնի գիտէ զարդարն » :

— Վասն յիշատակի մարտիրոսաց. (Commémoration des martyrs). « Աւր է յիշատակի մարտիրոսաց » :

ԹԱԴԷՈՍ ԱՌԱՔԵԱԼ

(ST. TADDÉE, L'APÔTRE)

— ** Սահմանք կանոնաց սուրբ առաքելոյն Թադէոսի 'ի քաղաքն Ուռհայ 'ի լուսաւորելն զնոսա. (Canons). « Յորժամ լուսաւորեցաւ քաղաքն մկրտութեամբ, ձեռնադրեցին եպիսկոպոսունս, քահանայս և սարկաւագունս և հաստատեցին վարդապետս աւրէնսուսոյցս. և եղեւ հաստատութիւն եկեղեցւոյ և սեղանոյ Աստուծոյ. սկսան հարցանել զնա զամենայն կարգաւորութիւն եկեղեցւոյ և զամենայն կրաւնս քրիստոնէից. և նա պատուիրեաց նոցա կարգաւ ըստ հրամանի փրկչին » ։

— « Հարցումն առաջին, թէ որպէս պարտ է կալ եպիսկոպոսին 'ի տեսչութեան։ Ասէ առաքեալն. Եպիսկոպոսն եղիցի անարատ պարկեշտ ուսուցող. մի արծաթասէր » ։

Կանոններէն վերջը գրչագիրք կը յաւելուն. « Իբրև կատարեաց առաքեալն Թադէոս զայս ամենայն, ասէ ցժողովուրդն. Հարք և եղբարք, որ տեառն ետուք զանձինս ձեր, այս ձեզ յինէն աւրէնք լիցի. և այլ որ յետ ձեզ լինելոց են. արդ հաստատուն կացէք յամենայնի զոր լուարուք յինէն. մի անցանէք ըստ սահմանս յայսմ՝ զի ձեզ բարի լինիցի և երկայնակեացք լինիցիք. եղիցի ձեզ յիշատակ բանս այս, և մի մոռանայք յաղաւթս ձեր. և զայլ կարգաւորութիւն ուսուսցէ ձեզ Ադդէ զամենայն զոր լուաւ յինէն, ըստ կարգին զոր եդին առաքեալքն տեառն· պահեսջիք խաղաղութեամբ 'ի փորձանաց չարին. խաղաղութիւն ընդ ձեզ։ Զայս աւրինագրութիւն ետ Զաքարիա աշակերտ առաքելոյն Թադէոսի. գրեցին որպէս լուան 'ի նմանէ » ։

— ** Թադէոսի առաքելոյ վասն յարութեան մեռելոց․ (Sur la résurrection des morts). « Արդ ամենայն ոգի ամենայն մարդոյ որ ելանէ 'ի մարմնոյ աստի՝ են նոցա աւթեւանք և բնակութիւն հանդըստեան » ։ (Ըստ այլ ձձ) ․ « Ոգիք ամենայն մարդկան որ ելանեն աստի՝ ոչ մեռանին․ այլ կան միան կենդանիք » ։

— ** Սուրբ առաքելոյն Թադէոսի յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին որ յաւուրս Յակոբու առաքելոյ 'ի ձեռն Թագուհւոյն Պատրոնիկէ որ էր կին Կղաւդեայ կայսեր Հռովմայեցւոց․ « Եւ արդ պատմեցից ձեզ վասն սուրբ խաչին որ 'ի ձեռն հաւատացելոց․ որ իբրև զձեզդ էին, երեւեցաւ սքանչելի զաւրութիւն սուրբ խաչին » ։

ԹԵՏԱԼԻՈՍ, Կոստանդնուպոլսի։ — Թուղթ յաղագս ընդունելոյ զգիրս Յայտնութեան յեկեղեցի Աստուծոյ։ (Տես ԱՆԴՐԷԱՍ ԿՐԵՏԱՑԻ)։

ԹԷՈԴՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ․ (THÉODOTE ÉVÊQUE). — Այս եպիսկոպոսին ընծայուած կը գտնենք 'ի Ճառընտիրս սրբոյն Կիւրակոսի և մօր նորա Յուղիտայ վկայաբանութիւնն հետևեալ խորագրով․ « Ի Թէոդոս եպիսկոպոսէ առ մեծ եպիսկոպոսն Ջոսիմոս խնդալ։ Սովորութիւն է չար Թշնամւոյն » ։

— Հատուած 'ի խմբագիր մեկնութենէ Ղեւտական գրոց․ (տես)․ Թիւոդոսի․ « Քանզի տեսեալ զքեզ, այս ինքն զժողովարանն, զկռապաշտութեան արբեամբ զանկեալսն, և զարիւնս զոհիցն 'ի գիրկս ընկալեալ․ Թոյլ ետու զոհել ոչ կռոց՝ այլ ինձ։ Եթէ ողջակէզ իցէ պատարագ նորա՝ յարջառոց արուանարատ մատուսցէ․ առ դուրս խորանին վկայութեան ածցէ զնա » ։

ԹԷՈԴՈՏՈՍ ԱՆԿԻՒՐԻՈՑ

(THÉODOTE D'ANCYRE)

Թէոդոտոս Անկիւրիոյ՝ որ 'ի գիրս մեր ընդհանրապէս Թէոդորոս կոչուած է, 'ի սկիզբն հինգերորդ դարու, ախոյեան եղաւ վարդապետութեան ուղղափառ հաւատոյ ընդդէմ Նեստորի։ Ակակայ Մելիտինոյ հայրապետին հետ շատ ջանաց ճանչցընել նմա զճշմարտութիւն. բայց երբ Նեստոր՝ իրենց պատճառաբանութեանց հայհոյութեամբ կը պատասխանէր, խզեց անոր հետ ամէն յարաբերութիւն, նախամեծար սեպելով զպարտս և զնախանձ անարատ պահպանութեան հաւատոց եկեղեցւոյ. ու այլևայլ ճառերովը 'ի ժողովին Եփեսոսի՝ հերքեց անոր մոլորութիւնները։ Ասոնցմէ երկու հասած են առ մեզ հայկական հին թարգմանութեամբ. իսկ յոյն սկզբնագիրք պահուած են առ Կալլանտի։

— *Սրբոյն Թէոդորոսի եպիսկոպոսի Անկիւրացւոյ 'ի ծնունդն Փրկչին՝ զոր ընթերցան առաջի ժողովոյն Եփեսոսի.* (Discours sur la Nativité de N. S., lu devant les Pères du Concile d'Éphèse). « *Պայծառ առաջիկայ տաւնիս ստորագրութիւն, զհասարակաց փրկութիւն մարդկան բերելով. պայծառ և առաջիկայ ժողովս՝ գոհացողաբար ընդունելով զշնորհըս, և տուեալ լինի առատապէս այնոցիկ որք գոհութեամբ ընդունին զնա* »։

— *Սրբոյն Թէոդորոսի եպիսկոպոսի Անկիւրացւոյ 'ի ծնունդն Քրիստոսի.* « *Պայծառ և հրաշափառագոյն է* »։ (*Ըստ այլ ձձ*). « *Սրբոյն Թէոդոտի եպիսկոպոսի Անկիւրեայ. խաւսք յաւր ծննդեան փրկչին մերոյ և աստուծոյ Յիսուսի Քրիստոսի, յոր 'ի կաւ-*

ահն ծնաւ։ Եւ եթէ ստացուած է ծնեալն՝ մարդ եղեալ սքանչելեաւք և ոչ փոխադրութեամբն. և եթէ մի և նոյն է և այն և այս ասացեալ և ոչ խորհրդով անջատեալ։ Աւգնեա՛ տէր Յիսուս։ — Պայծառ և հրաշափառ է մարմնակալ տաւնիս խորհուրդ, պայծառ է՝ զի հասարակաց փրկութիւն եած մարդկան. իսկ հրաշափառ՝ զի բնութեանն սահմանի յաղթեաց»։ Ոմանք 'ի գրչաց կը խորագրեն. «Նորին Թէոդոսի եպիսկոպոսի խաւսք երկրորդ 'ի յայտնութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 'ի քննութիւն գիմողաց. յորում թէ մի է ստացուած։ Տէր Յիսուս աւգնեա ինձ. — Պայծառ է մարմակայ տաւնիս պատճառ. և հասարակ փրկութիւն մարդկան բերեալ։ Պայծառ է և մարմնակայ ժողով գոհութեամբ ընկալեալ պչնորհն՝ որոց գոհութեամբ ընդունելին զնա»*։

* Theodoti episcopi Ancyrani, expositio in Symbolum Nicænum adversus Nestorium, nunc primum edita ex biblioteca Barberina, græce et latine, ex versione Lucæ Holstenii. Romæ, typis Barberinis, 1669.

Theodoti Ancyrani adversus Nestorium liber ... ex versione et cum notis Francisci de Combessi, græce et latine. Paris, 1675.

ԹԷՈՎՓԻԼՈՍ

(THÉOPHILE)

— ** Երանելւոյն Թէովփիլոսի ասացեալ ներբողեան պատմագրաբար սուրբ հաւրն մերոյ և լուսաւորչի, քահանայապետին Քրիստոսի և վկայի՝ մեծին Գրիգորի արքեպիսկոպոսի Հայոց մեծաց աշխարհի։

Ցիշատակարան Ճառից. «Թարգմանեցաւ լուսազարդ և վայելչաշար Ճառս այս 'ի յունականէն 'ի մերս. հրամանաւ երիցս երանեալ հայրապետին տեառն Գրիգորիսի Հայոց մեծաց կաթողիկոսի. 'ի ձեռն իմաստուն և հանճարեղ Թարգմանչին Թէոփիստէի. զոր և մինչև ցայժմ Ճրագս այս Թագուցեալ էր ընդ մահճաւք և ծածկեալ էր ընդ գրուանաւ։ Իսկ 'ի հրամանէն Աստուծոյ յայտնեցաւ 'ի սուրբ վանս Արքայկաղնիս, իսկ իմոյ անարժանիս յոգնամեղ և անպիտան կրաւնաւորիս Պաւղոսի ըղձալի փափագանաւք գրեալ եղի զսա 'ի հոյակապ մայրաքաղաքացեալ սուրբ անապատս Արքայկաղնիս. 'ի յիշատակ մեղաւոր հոգւոյ իմոյ և ծնաւղաց իմոց։ Իսկ համբաւ սորա իբրև զպսակազարդ Թագաւորի հասեալ 'ի յերկնանման սուրբ և աստուածաբնակ անապատն 'ի յԱկներն, առ լուսազգեստ սուրբ և երջանիկ հայրն Ստեփանոս. և նորա առաքեալ որակս հրամայեաց գրել և աւանդել զսա 'ի գրունս սուրբ տաճարի Աստուածամաւրն, 'ի պայծառութիւն տաճարի մեր Լուսաւորչին և յիշատակ հոգւոյ իւրոյ և ծնաւղաց իւրոց և իմոյ ամենամեղի. և ես ըստ իմում կարի գրեցի և առաքեցի. և աղերսալի պաղատանաւք աղաչեմ ով սրովբէանման դասք լուսերամից, յիշեսջիք ազաւթիւք զաստուածապատեալ հայրն զՍտեփանոս զառաջնորդ սուրբ ուխտիս Ականց անապատիս և զծնաւղսն. և զիմաստուն երաժիշտն զՄանուէլ որ ուսով իւրով բերաւղ եղև Ճառիս 'ի վանս » ... ։ (Մատենադարան Ս. Երուսաղեմի. Թիւ գրչ. 32. 89)։ Տես ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ։

ԹԷՈՓԻԼՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

(THÉOPHILE, PATRIARCHE D'ALEXANDRIE)

Եկեղեցւոյ հին մատենագրութեան մէջ՝ երեք հայրապետք կը յիշուին այս անունով, ընծայելով անոնց այլեւայլ երկասիրութիւններ։ Առանցմէ առաջինն է Երասայ յաջորդն 'ի հայրապետութեան Անտիոքայ, վեցերորդ յետ սրբոյ առաքելապետին, յառաջագոյն հեթանոս կրօնիւք, և ապա աշակերտեալ քրիստոսական ճշմարտութեան. և Երասայ մահուընէն ետքը անոր յաջորդն յեպիսկոպոսութեան՝ յութերորդ ամի իշխանութեան Մարկոս Աւրելիոս կայսեր (168)*։ Գրեց ընդդէմ հերձուածոց Մարկիոնի և Հերմոգենեայ՝ որ կորուսած երկասիրութիւնք են, ինչպէս ուրիշ մանր գրութիւնք՝ որոց միայն յիշատակութիւնը կայ առ Եւսեբեայ և Հերոնիմոսի։ Անկորուստ մնացած են երեք գիրք նորա առ Աւտոլիկոս։ — Երկրորդն է Թէոփիլոս եպիսկոպոս Կեսարիոյ, 'ի վերջ երկրորդի դարուն, որուն կ'ընծայուի ժողովական նամակ մը՝ զոր գրեց 'ի դիմաց հարց ժողովոյն Պաղեստինացւոց, որուն կը նախագահէր ընդ Նարկիսոսի Երուսաղեմի։ Այս թուղթն ալ կորուսած է։ — Իսկ երրորդն էր Թէոփիլոս Անտիոքայ* (385) *զոր մեր գրչագիրք աշակերտ կը կոչեն Ոսկեբերանի, ուր եկեղեցւոյ պատմութիւնն իրեն նախանձորդաց և հակառակորդաց թուոյն մէջ կը դասէ զնա։ Հաւանականաբար այս երրորդին են հայ թարգմանութեամբ առ մեզ հասած ճառք։ Մենք լաւագոյն սեպեցինք առանձին վերնագրի տակ զետեղել՝ ինչ որ 'ի գրչաց Ոսկեբերանի աշակերտին ընծայուած գտանք. միայն կանխենք ըսել թէ այս ամէն ճառից*

յունական սկզբնագրաց չիկրցանք հանդիպիլ: Հայ թարգմանութեան ժամանակն ալ՝ ըստ հաւանականագոյն կարծեաց՝ հինգերորդին կը վերաբերի։

— ** Սրբոյ Թէոփիլոսի շնորհալից վարդապետի ասացեալ յաղագս միջնոց քառասնորդաց պահոց. (Discours sur le jeûne quadragésimal). « Ընդմիջեցաք զծով պահոցս քառասնորդաց. յորում մտաք նաւաւք թեթև 'ի ծով այս, ծով որ կարող է ցամաքեցուցանել զծով մեղաց » ։

— ** Զորրորդ հինգշաբաթին միջնոց աղուհացից երանելոյ Թէոփիլոսի ասացեալ վասն քառասնորդացն պահոց. (Sur le même sujet). « Սովորութիւն է վաճառականաց՝ որ 'ի մի տեղւոջ կուտեալ հաւաքեն և ինչս մեծամեծս և զանազանս, զոր և 'ի պէտս իցէ մարդկան՝ անդ վաճառեն. և որք գիտեն զսովորութիւնն՝ պատրաստեն զգինի » ։

— ** Թէոփիլոսի ասացեալ ներբողեան սուրբ և պսակազգեաց քառասնիցն. (Panégyrique sur les quarante martyrs de Sébaste). « Բուրաստան ծաղկազարդ քառասնաթիւ ծառիւք զարդարեալ արմատացոյց մեզ լճին Սեբաստեայ քաղաքին. Ձմեռնատունն վայելչացեալ եդեմային սաղարթաձեմ ոստովք » ։

— ** Սրբոյն Թէոփիլոսի ասացեալ 'ի սուրբ քառասունսն, և 'ի խորհուրդ քառասնորդաց պահոցս. (Sur le même sujet). « Արդ եկայք հաւատացեալք ամենասուրբ Երրորդութեանն որք տարփայք 'ի տէր սրբոցն Աստուծոյ. և ունիք փափագ մասնակից լինել ճգնութեան սրբոց վկայիցն, մանկանցն քառասնից որք 'ի Սեբաստիա հանդիսացեալ կատարեցան » ։

— ** Մեծի չորեքշաբաթին երանելւոյն Թէոփիլոսի վարդապետի ասացեալ յաւետարանին պատմութենէ 'ի կինն պոռնիկ որ արդարացաւ. (Sur la femme adultère, justifiée par J. Chr.). « Բազում և ան-

բան է մարգարէութիւնն Աստուծոյ. անճառ և անպատում է աստուածային խոնարհութիւն նորա. անքննելի և անհետազօտելի է ողորմութիւն նորա »:

ԹԷՈՓԻԼՈՍ ԱՇԱԿ. ՈՍԿԵԲԵՐԱՆԻ

(THÉOPHILE, DISCIPLE DE ST. CHRYSOSTÔME)

— ** *Սրբոյն Թէոփիլեայ ասացեալ 'ի սուրբ և 'ի սոսկալի ծնունդն փրկչին և վասն մոգուցն և աստեղըն և փառք 'ի բարձանց.* (Sur la nativité et épiphanie de N. S.). « *Ի մէջ տօնախմբաց քրիստոսազգեցից զսոսկալի և զանպատում ծննդեանն ճառել յարմարիմ* »:

— ** *Թէոփիլոսի 'ի յարութիւնն Ղազարու.* (Sur la résurrection de Lazare). « *Սկիզբն հաւատարմութեան* »:

— ** *Երանելւոյն Թէոփիլեայ ասացեալ 'ի մեծի երկուշաբաթին՝ 'ի թզենին և յԱդամայ մերկութիւնն. յաղագս անիծիցն թզենւոյն և վասն ապաշխարութեան.* (Pour le jour de Lundi-Saint). « *Զծառս ծաղկազարդ* »:

— ** *Մեծի շաբաթուն երանելւոյն Թէոփիլոսի աշակերտին Յովհաննու Ոսկեբերանի ասացեալ 'ի գերեզմանն աստուածընկալ.* (Discours sur le sépulcre qui a reçu l'Homme-Dieu). « *Նոր երկինք այսաւր յերկրի հաստատեցաւ գերեզմանն փրկչին մերոյ. նոր երկինք և նոր սքանչելի զարմանք. քանզի անդէն այն լայնագոյն ցուցաւ քան զհաստատութիւն երկնից* »:

— ** *Երկրորդ աւուրն յարութեան, նորին Թէոփիլոսի աշակերտի Յովհաննու Ոսկեբերանի ասա-*

ցեալ վասն թաղման և յարութեան Յիսուսի Քրիստոսի աստուծոյ մերոյ. (Pour la sépulture et résurrection de J. Chr.). « *Ո՞վ ոք ոչ հիանայ ընդ արարչութեանս հրաշափառ. ո՞վ ոք ոչ սխրանայ ընդ նորոգմանս գերապայծառ։ Քանզի խաչ տաշէին և դժոխք սարսէին. բեւեռք հարկանէին, և նիզքն երկաթիւք խորտակէին. զնոր Ադամն կապէին, և զհինն Ադամ արձակէին* » ։

— ** *Երրորդ աւուր յարութեան, Թէոփիլոսի ասացեալ 'ի թաղումն և 'ի յարութիւնն Քրիստոսի.* (Sur le même sujet). « *Քրիստոս բանն Հաւր և համագոյակից Հոգւոյն սրբոյ խոնարհի (ա՛յլ Ձ. խոնարհեցաւ) 'ի հայրական ծոցոյ՝ և էառ մարմին 'ի Մարիամայ սրբոյ կուսէն. ծնաւ 'ի կուսէն և ոչ խախտեցաւ ծնունդն կուսական* » ։

— ** *Ի յղութիւն Յովհաննու Մկրտչին և Կարապետին.* (Panégyrique sur St. Jean-Baptiste). « *Փողոյ ուրախութիւն և բարգաւաճութեան սկիզբն. այսաւր Ադամայ և Եւայի ձայն պետականին Գաբրիէլի առ Զաքարիայ և Եղիսաբեթ* » ։

— ** *Նորին ասացեալ 'ի ծնունդս Կարապետին և Մկրտչին Յովհաննու.* « *Աւետեաց արմատ և սկիզբն ուրախութեան աշխարհիս այսաւր յորովայնէ Եղիսաբեթի երեւեցաւ. ծաղիկ պայծառագոյն եդեմային այսաւր 'ի վիմէ ապառաժէ ծաղկեցաւ* » ։

— ** *Երանելւոյն Թէոփիլէի աշակերտին Յոհաննու Ոսկեբերանի ասացեալ ներբողեան սուրբ առաքելոց երկոտասանից.* (Sur les douze Apôtres). « *Լոյս պայծառագոյն ծագեցաւ առ մեզ յիշատակ սրբոց առաքելոցն, և տիւ աներեկոյ. որ զարդարեաց արփիափայլ ժամուք երկոյտասանեաւք զհոգիս մեր լուսով պայծառագոյն* » ։

— *Գովեստ յաւետարանին Յովհաննու.* (ա՛յլ Ձ. « *յաւետարանիչն Յովհաննէս* »). « *Ընդ յաւժարութիւն սրտիս* » ։

— ** Ցաղագս պահոց և ապաշխարութեան. « Պարտ է այսուհետև, որդիք վերին Սիոնի, ժառանգք Աստուծոյ և ժառանգակիցք Քրիստոսի » ։

— Ի միւսանգամ գալըստեան Քրիստոսի և վասն ապաշխարութեան . « Լուսաւորեցան աստուածազարդ փառաւք » ։

— Վասն զղջման. « Արդ պարտ է ամենայն մարդոյ զայս ածել զմտաւ » ։

— Վասն արտասուաց և խոստովանութեան. « Յորժամ միտքդ զբաղեալ լինի ընդ մեղացդ. » (անհարազատ) ։

ԹՈՎՄԱՍ ԱՌԱՔԵԱԼ

(ST. THOMAS, L'APÔTRE)

— Աղօթք գոհութեան Թովմայի առաքելոյ ասացեալ. « Մարմին քո պատուական լիցի ինձ 'ի կեանս » ։ Ի պատարագամատուցին որ յանուն սրբոյն Աթանասի 'ի գրչագրին որ 'ի Լուգդոն (Լիոն) Գաղղիոյ' [1] այսպիսի ունելով խորագիր. « Պատարագ սուրբ առաքելոյն Թումայի որ մի էր յերկոտասանից » * ։

* Ի հնագիր վարս սրբոյն Թովմայի. « ... Եւ երբեւ աղաւթեաց զայս այսպէս, ետ նոցա ամենեցուն զտէրունական կնիքն ։ Եւ մատուցեալ հաց և բաժակ աւրհնեաց այսպէս. « Մարմինդ քո պատուական լիցի մեզ 'ի կեանս, և արիւնդ քո 'ի թողութիւն մեզ. և փոխանակ լեղոյն զոր արբեր ... » ։

* Ի Կայսերական կոչեցեալ աղօթագիրս' տպագրեալ 'ի Գրեկիոն (1660) յ'էջ 133. Oratio IV post Communionem D. Thomæ apostoli, teste Abdia, lib. 7. Historiæ Apostolorum. « Sit nobis hoc sa-

[1] Տես յ'էջ 254 ։

cramentum tuum, Domine Jesu, ad vitam, sit ad remissionem peccatorum, siquidem pro nobis passio tua celebrata est. Tu pro nobis fel illud bibisti, ut omnis adversarii amaritudo moreretur. Pro nobis tu quoque bibisti acetum, ut nostra lassitudo confortaretur. Pro nobis consputatus es, ut immortali nos luce perfunderes. Percussus es a calamo fragili, ut fragilitatem nostram vitæ perpetuæ, æternitatisque firmares. Coronatus es spini, ut virenti semper, in te credentes, charitatis tuæ laures coronaris. Involutus præterea fuisti sindone, ut nos quodam virtutis tuæ involucro vestires. In sepulchro poni voluisti novo, ut nobis novam gratiam, nova sæcula reformares. Fiat igitur nobis hæc Eucharistia ad vitam, et viscera misericordiæ, et gratiam salutis, suavitatemque animarum nostrarum; amen ».

ԹՈՒՂԹ ԵՐԿՆԱՌԱՔ. « *Խաւսք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որ առաքեցաւ թղթովս այս 'ի տաճար սրբոյն Պետրոսի 'ի Հռոմ քաղաքի* » ։ *Կամ ըստ այլ ձեռագրաց.* « *Թուղթ վասն կիրակէի. գրեալ է մատամբն աստուածային յառաջնմէ. — Եւ պապս Հռոմայեցւոց քաղաքիս, եկի 'ի տաճարս սուրբ առաքելոցս Պետրոսի և Պաւղոսի. և տեսի զսա 'ի մէջ խորանին 'ի վեր յաւգս. և տարածեցի զձեռս իմ* »*։

* *Այս Թուղթ կը գտնուի նաև առ Ասորիս. տես 'ի* Catalogue des Manuscrits syriaques et sabéens de la Bibliothèque nationale, par M. H. Zotenberg *յէջ* 191. Lettre venue du ciel, entre les mains d'Athanase, patriarche de Rome, en l'an 1057 d'Alexandre. Comparez Prætorius, Mazhafe Tomar; Leipzig, 1869.

ԻԲԱՍ (Ibas). Վասն երիտասարդաց բնութեան Իբասայ. «Զի նման է ջերմութիւն այնպիսոյն որպէս հրոյ. սաստմնքան ջերմին լինի, և զկերակուրն զոր ուտէ՝ արագ զաւրէ հալել»:

ԻԳՆԱՏԻՈՍ ԱՍՏՈՒԱԾԱԶԳԵԱՑ

(IGNACE, LE THÉOPHORE)

Աստուածազգեաց ու առաքելական հայրապետիս համար կը վկայէ Եւսեբի յԵկեղեցական պատմութեանն (Գ. ԼԶ) թէ երբ յԱնտիոք քաղաքէ՝ ուր երկրորդ եպիսկոպոս էր յետ սրբոյ առաքելապետին, կը փոխադրուէր 'ի Հռովմ Տրայիանոս կայսեր հրամանաւ, 'ի Ճանապարհի՝ «իբրև եմուտ 'ի Զմիւռնիայ՝ ուր էր Պաւղիկարպոս եպիսկոպոսն, գրեաց նա թուղթ մի առ եկեղեցին եփեսացւոց ... միւս այլ թուղթ 'ի Մագնեսիայ քաղաք, այն որ է առ կողմն Մենենդրոս գետոյ ... և այլ միւս եւս դարձեալ Տրեղլիոս քաղաքի ... և հանդերձ այնոքիւմբք և առ եկեղեցին հռոմայեցւոց գրեաց, և մատոյց նոցա նուէր հաճութիւնս հաւանութեան զի մի հրաժարեսցին նոքա 'ի վկայութենէ նորա, և զրկեսցեն զնա յուսոյ անտի զոր սիրեցէ ... Իսկ իբրև անցին ընդ Զմիւռնեայ 'ի Տրովհատանէ գրեաց նոցա դարձեալ միւսանգամ այնոցիկ՝ որ 'ի Փիղադելփիա և առ եկեղեցին Զմիւռնացւոց. բայց յատկանէ յանուանէ առ Պաւղիկարպոս եպիսկոպոս նոցա, զի գիտէր եթէ նախանձաւոր և նմանող է առաքելոցն»: Այսչափ Եւսեբիոս, որուն կը համաձայնին Երանոս Լուգդունի, Հերոնիմոս, Ոսկեբերան և այլք: Բայց աւանդութիւն և եկեղեցւոյ հայրապետութիւն այս յիշատակուածներէն զատ ուրիշ քանի մը թղթեր ալ

կ՚ընծայեն Իգնատիոսի, որոնք իր անուամբ հասած են առ մեզ, թէպէտ անոնց հարազատութեան վրայ կը տարակուսին կամ կը վիճեն քննադատք։ Մեր մատենագրութիւնն այս վերջիններուս ալ հին հայկական թարգմանութիւնն պահած է։ Հմուտք կը հաւանին թէ ՚ի հինգերորդ դարու եղած է այս աշխատութիւնը, և հաւանականաբար յասորականէ, երեքտասան թղթոցն միանգամայն։ Այս է և Փեթըրման գերմանացւոյն կարծիք, որ հմուտ հայ և ասորի լեզուաց, մեր թարգմանութիւնը խնամով բաղդատեց ասորականին հետ, և հետաքննական ծանօթութիւններով և հայկական թարգմանութեան վրայ ընդարձակ յառաջաբանով հրատարակեց ՚ի Լիփսիա յամի 1849, նախահօր Ուխտիս Մխիթարայ երջանիկ փոխման առաջին հարիւրեմեկին առթիւ. (S. Ignatii patris apostolici quæ feruntur epistolæ una cum ejusdem martyrio; collatis edd. græcis versionibusque syriaca, armeniaca, latinis, denuo recensuit notasque criticas adjecit Jul. Henr. Petermann, Dr. Univ. Berol. prof.). — Հայ թարգմանութեան վրայ ըրած տեսութեանց և քննադատութեանց մէջ տեղ տեղ կը վրիպի բազմագէտ հրատարակիչն. բայց ընդհանրապէս ուղիղ են իր կարծիք, – որոց մեք ալ կը համաձայնինք, – երբ կը համարի թէ հայերէն թարգմանութիւնը շատ տեղ կերպարանափոխութիւններ կրած է ՚ի գրչաց, յորոց չէ զերծ և տպագիրն Պոլսոյ (1783) զոր միայն ունի իրեն առաջնորդ, առ պակասութեան հին և հաւատարիմ գրչագրաց՝ որոնք մեծապէս փափաքելի են, և որոց չենք հանդիպած նաև Էջմիածնի և Երուսաղեմի մատենադարանաց մեր քով գտնուած ցուցակներուն մէջ։

— Թուղթք երանելւոյն Իգնատիոսի աստուածազգեաց եպիսկոպոսի Անտիոքայ, գրեալք ըստ իւրա-

քանզի էր քաղաքաց, յորժամ եղանէր վկայել 'ի Հռովմ 'ի Թագաւորութեանն Անտիոքայ. (Τοῦ ἁγίου ἱερομάρτυρος Ἰγνατίου ἀρχιεπισκόπου Θεουπόλεως Αντιοχείας, ἐπιστολαί).

Ա. Առ Եփեսացիսն. (Πρὸς Ἐφεσίους). «Իգնատիոս որ է աստուածազգեաց՝ եկեղեցւոյդ աւրհնելոյ մեծութեամբն Աստուծոյ հաւր կատարմամբ»։

Բ. Առ Մագնիսացիսն. (Μαγνησίευσιν). «Իգնատիոս որ է աստուածազգեաց, եկեղեցւոյդ աւրհնելոյ 'ի շնորհաց Աստուծոյ հաւր՝ Մագնիսիա՝ որ է մերձ 'ի Մէանդրոս գետոյն, բազում ողջոյն»։

Գ. Առ Տրալլիանոսացիս. (Τραλλιανοῖς). «Իգնատիոս որ է աստուածազգեաց, եկեղեցւոյդ սիրեցելոյ յԱստուծոյ հաւրէ ... որ է 'ի Տրալլիանոս քաղաքս ասիացւոց»։

Դ. Առ Հռովմ քաղաք. (Πρὸς Ῥωμαίους). «Իգնատիոս որ է աստուածազգեաց՝ եկեղեցւոյդ հանգուցելոյ մեծութեանց բարձրելոյն»։

Ե. Առ Փիլադելփիացիս. (Φιλαδελφεῦσιν). «Իգնատիոս որ է աստուածազգեաց, եկեղեցւոյդ Աստուծոյ հաւր և Յիսուսի Քրիստոսի տեառն մերոյ, որ է 'ի Փիլադելփիա քաղաքս ասիացւոց»։

Զ. Առ Զմիւռնացիսն. (Σμυρναιοῖς). «Իգնատիոս որ է աստուածազգեաց, եկեղեցւոյդ Աստուծոյ հաւր, և սիրելւոյ որդւոյ նորա Յիսուսի Քրիստոսի»։

Է. Առ Պաւղիկարպոս եպիսկոպոսն Զմիւռնիայ քաղաքին. (Πρὸς Πολύκαρπον). «Իգնատիոս որ է աստուածազգեաց՝ Պաւղիկարպոսի եկեղեցւոյ Զմիւռնեայ քաղաքին ... բազում ողջոյն»։

Ը. Թուղթ Մարիայ ակինոյ 'ի Կասսաբալն քաղաքէ, առ Իգնատիոս երանելի գրեալ. (Ἰγνατίῳ Μαρία ἐκ Κασσαβήλων). «Մարիա պանդուխտ Յիսուսի Քրիստոսի, առ աստուածազգեացդ Իգնատիոս, երանաշնորհ եպիսկոպոս առաքելական եկեղեցւոյն Անտիոքացւոց»։

Թ. Պատասխանի թղթոյն Մարիայ՝ երանելոյն Իգ-նատիոսի գրեալ. (Πρὸς Μαρίαν Κασσοβήλοτον Ἰγνάτιος). «Իգնատիոս որ է աստուածազգեաց՝ գթացե-լոյ 'ի շնորհաց Աստուծոյ հաւր բարձրելոյ»։

Ժ. Ի Տարսոն քաղաք. (Πρὸς τοὺς ἐν Ταρσῷ Ἰγνάτιος). «Իգնատիոս ... սեպհականն եկեղեցւոյ 'ի Քրիստոս, արժանի փառաց, արժանի յիշատակի. արժանի սիրոյ որ է 'ի Տարսոն»։

ԺԱ. Առ Անտիոք քաղաք. (Τοῦ αὐτοῦ πρὸς Ἀντιοχεῖς). «Իգնատիոս ... եկեղեցւոյ ընտրելոյ 'ի Յի-սուսէ Քրիստոսէ տեսանէ մերձ, և ընկալեալ զո-ղորմութիւն յԱստուծոյ հաւրէ որ նստի յԱսորիս»։

ԺԲ. Առ Ոյրիոն սարկաւագ. (Τοῦ αὐτοῦ πρὸς Ἥρωνα διάκονον Ἀντιοχείας). «Իգնատիոս ... գթացեալ մաքրափայլ քրիստոսազգեաց Ճշմարիտ որդւոյ մե-րոյ հաւատով և սիրով՝ Ուրիոն սարկաւագի Քրիս-տոսի և սպասաւորի Աստուծոյ»։

ԺԳ. Առ Փիլիպպոս քաղաք. (Τοῦ αὐτοῦ πρὸς Φιλιππησιοὺς, περὶ βαπτίσματος). «Իգնատիոս ... եկե-ղեցւոյ Աստուծոյ, որ գթացաւ հաւատով. և համ-բերութեամբ և սիրով առանց կեղծաւորութեան»։

— Թէ որպէս առ եկեղեցին Հռովմայեցւոց գրեաց սուրբն. «Իգնատիոս որ և աստուածային աստուա-ծազգեստ մեծութեամբ հաւր բարձրելոյ, հաւր Յի-սուսի Քրիստոսի. միածնի որդւոյն իւրոյ, եկեղե-ցւոյ լուսաւորելոյ և սրբեցելոյ»*։

* Տես ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ, յ'էջ 241. Հոն յիշատակութիւններուն վրայ կ'աւելցընենք նաև հետևեալները. *Vindiciæ Epistolarum* Sancti Ignatii. Isaaci Vossii Epistolæ duæ adversus Davidem Blondellium. Cantabr. 1672. – *The ancient Syriac version* of the Epistles of St. Ignatius to St. Polycarp, the Ephesians and the Romans. Ed. with English translation and notes. Also the greek text

of the threi Epistles, corrected according to the authority of the Syriac version. By Will. Cureton, London, 1845. - *Vindicia Ignatiana;* or the genuine writings of S. Ignatius, as exhibited in the ancient Syriac version, vindicated from the charge of heresy. By the Rev. Will. Cureton, London, 1846. - *Corpus Ignatianum.* A complet collection of the Ignatian Epistles, genuine, interpolated and spurious, toghether with numerous extracts from them as quoted by Ecclesiastical Writens down to the Tenth Century, in syrian, greek and latin. An English translation of the Syriac text with copious notes and introduction, by the Rev. W. Cureton. London, 1849. - *Vindiciæ Epistolarum S. Ignatii;* editio nova annotationibus et præfatione ad hodiernum statum accomodata. Oxonii, 1852. - Ueber der Verhaltniss der textes der drei Syrischen Briefe des Ignatio zu den ubrigen Recensionem der Ignatianischen Literatur. Von Richard Adalbert Lipsius. Leipzig, 1859.

ԻՇԱԻԽԱՆ. — *« Անուամբ Աստուծոյ գիրք 'ի վերայ բնութեան հանրական և մասնական, քահանայի ումեմն աշխատեալ Իշախան » : — « Խնդիր վասն բնութեան այսպիսի արասցուք. Յորժամ գոյացոյց Աստուած զէաս յոչէից զտեղի բնակութեան կազմեաց զաշխարհ՝ ձեղուամբ երկնից յաւրինեալ » : ... (Ձեռագիր Մատենադարանիս մերոյ Թիւ 1326, և Երուսաղեմի, 401): Կը յիշէ « Որք յարտաքնոցն Արիստոտելէս և Նաժիս. և եկեղեցւոյ վարդապետն Յակոբ Ուռհայեցի և Մովսէս որդին վիմի » : Կ'ըսէ դարձեալ 'ի նմին բանի. « Եւ սոսա սխալեցան մարդիկ, և փոխեցին զարարչին պատիւն՝ տալով սոցա. և զայս ոչ իմացան թէ անբանք են և անկենդանք,*

որպէս տաղաց սուրբն Եփրեմ ընդ Բարդիսանու, եթէ՝ Այր դու, գիտասցես զի ընդ հարկիւ են և անբանք. զի ոչ կարեն յաւելուլ և պակասել յընթացս իւրեանց. և սուրբն Յակոբ ասէ յէութեան ճառին, եթէ անուանք են 'ի զարդ աշխարհի, եղեալ յԱստուծոյ 'ի ժամ և 'ի ժամանակս, 'ի տիւ և 'ի գիշեր »։ Կ'երևնայ թէ է Yeshua ասորի. տես 'ի Catalogue of the syriac mss. in the British Museum, by Wright.

— Գիրք 'ի բնութեան հանրական և մասնական յուսմնէ Յեշու անուն։ (Յիշատակարան առ Գ. Վ. Սրուանձտեանց, Թորոս աղբար. Հատ. Բ., 448)*։

* C'est aussi pour la nation syrienne un vrai monument historique que le Catalogue d'Ebed Jesu ou Abd Jeschova, (serviteur de Jésus), dit aussi Bar Brikha (fils du Béni) écrivain nestorien, qui a fleuri au treizième siècle. Il est l'auteur d'un grand nombre d'écrits en prose et en vers. (Assemani, Bibl. orient. Հատ. Գ.), relatifs aux dogmes et aux Écritures, à la démonstration de la foi chrétienne. Chaldéen d'origine, et attaché à la secte des Nestoriens; il fut évêque métropolitain de Nysibe, dit aussi Soba, où il résidait, et où il mourut en 1318; son autorité s'étendait sur les Nestoriens d'Arménie. (F. Nève, l'*Arménie Chrétienne*, 387).

ԻՍԻԴՈՐ ՊԵՂՈՒՍԱՑԻ (ISIDORE DE PÉLUSE).

— Իսիդորոսի Պեղուսացւոյ (ընտ. այլ գրչ. Եղեսիացւոյ) աշակերտի սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի 'ի հազար թղթոցն. (պատառիկ մի). « Բայց դու, մի՛ փայտ սուրբ »*։

* Առ արևմտեայս. Isidori Pelusiotæ; de Interpretatione divinæ scripturae Epistolarum libri IV.

Edidit Ritterhusius. Neostadii, 1606. Venetiis, 1744.

Isidori Pelusiotæ Epistolæ hactenus ineditæ de locis Sacrae Scripturæ moribusque formandis. Parisiis, 1638.

ԻՍԻՔԻՈՍ ԵՐԷՑ

(HESYCHIUS, PRÊTRE)

— ** Մեկնութիւն Յոբայ. Իսիքիոսի երիցու Երուսաղեմացւոյ. « Բազում ինչ մեզ Աստուած մերձաւոր ? յաւգտակար տեսիլս կանգնեաց. բազում և մեծամեծ իմաստասիրութեան եւ տարացոյցս » ։ Թերի կամ 'ի հեղինակէն և կամ 'ի Թարգմանչէն ։ Վասն զի կը ժամանէ մեկնիչն մինչև 'ի բանն Յոբայ (Գլ. Ի. 28). « Յայտնեսցեն երկինք զանաւրէնութիւն նորա. յարիցէ 'ի վերայ նորա երկիր. քակեսցէ կորուստ զտուն նորա 'ի սպառ. հասցէ 'ի վերայ նորա աւր բարկութեան ։ Այս բաժին է մարդոյ ամպարշտի առ 'ի տեառնէ, և այս ստացուածք ընչից նորա յայցելուէն » ։ Զոր մեկնաբանելէն ետքը վերայ կը բերէ ընդօրինակողն. « Կատարեցան սա բանք Իսիքիոսի ։ Յամի ևւթնհարիւրերորդի քառասներորդի ութերորդի 'ի Թուաբերութեանս Հայոց, աւարտեցաւ մեկնութիւնս երջանիկ նահատակին Յոբայ յայլեւայլ ժամանակ և տեղի զանազան դըրչաւք. 'ի գաւառիս Կիղիկեցւոց հուպ յանառիկ դըղեակս Բարձր Կոչեցեալ, 'ի դառնագոյն ժամանակի, յորում յոյժ զղուիմք յանաւրինաց ։ Որք աւգտակք 'ի սմանէ՝ զերախտաւորս և զաշխատաւորս 'ի սմա յիշեսջիք 'ի տէր. և դուք 'ի նոյն լիջիք բարի աւրհնելեացն յաւիտենիցն ։

«Այլ վասն Թերութեան տառիս յայտ լիցի ըն-Թերցողաց. զի բանքս Իսիքիոսի մինչեւ ցայս վայր սպառեցան. եւ Թէ այս մինչեւ ցայսվայր միայն եղեւ գտնեալ 'ի նմանէ. եւ Թէ 'ի Թարգմանութենէ Թե-րին մնացեալ եղեւ՝ չէ յայտ։ Այլ բովանդակ զգրոցն Յովբայ մեկնութեան Թէ ով փափաքէ, խնդրեսցէ զժողովածոյ մեկնիչն զարարեալն 'ի վարդապետէն Վանականէ Տաւուշեցւոյ։ Այլ զՆարեկացւոյն Գրի-գորի բանսն որ յ'Ով է գայն է խաւսեալ, եւ սուղ ինչ յԻսիքոսի բանիցն՝ գրեալ յայլոյ ումեքէ՝ մա-տոյց մեզ 'ի ձիր շնորհի քահանայ ոմն Կարապետ անուն. եւ մեր զԹերին լցեալ՝ ընծայեցաք զնին եկե-ղեցւոյ» ...։

—** Իսիքիոսի հատուածք ('ի խմբագիր մեկնու-Թեան կաԹուղիկեայ Թղթոց. 'ի Փարիզեան ազգային մատենադ.). «Որպէս սուսերն պատրաստ է 'ի հաս-տանել յորժամ սրեալ լինի, եւ արագ 'ի սպանու-Թիւն»։

— Իսիքոսի քահանայի, (Անգ). «Երանեալ է այր որ առաջի Աստուծոյ խոնարհեալ է. ըստ որում աս-աէ Յակոբոս. Խոնարհեցարուք յանդիման տեառն եւ բարձրացուսցէ զձեզ. յորժամ այսպէս խոնար-հիմք, Թէ գեւք գաւ զնոսն մեզ, Թէ մարգիկ ատելիք՝ Աստուած փրկիչ է»։

— Իսիքոսի. (Անգ). «Նախ ասէ զամենայնն վասն մարդասիրութեան, զի ապաշխարեալք՝ սպառնա-լեացն արտաքոյ գտցին»։

— Հիւսիկոսի քահանայի Երուսաղէմի 'ի սուրբ Աստուածածինն. «Անմնոյն յիշատակ արդարոց»*։

* Արեւմտեայք կը յիշատակեն զԻսիքիոս երէց Ե-րուսաղէմի՝ հեղինակ ղեւտական գրոց մեկնութեան, առանց ուրիշ գրուածք մը ընծայելու իրեն։

Isychii presbyteri Hierosolymorum, libri VII in Leviticum, ex editione Joannis Sichardi, Parisiis, 1527.

Isychii presbyteri Hierosolymorum, Commentaria in Leviticum, emendata, et annotationibus aucta, ex editione Jacobi Le Gros. Parisiis, 1581.

ԻՍԻՔԻՈՍ ՄԻԼԵՍԱՑԻ

(HESYCHIUS DE MILESE)

— (Իսիքիոսի Միլեսացւոյ 'ի Հայրենականացն Կոստանդնուպոլսոյ հատուած) այսպիսի խորագրով. «Պատմութիւն 'ի սկզբանէ շինութեան հոյակապ քաղաքին և պանծալի Բիւզանդիոնի». — «Ասեն թէ Արգիացիքն առաջինք աստուածահրամանութեամբ վարեցան, վասն որոյ ասացաւ այսպէս»*։

* Հրատարակեալ 'ի Բազմավէպ հանդիսի (1878, յէջ 59)։ «Թէպէտ չէր 'ի մեր թարգմանութեան անուն հեղինակին, այլ գտաք 'ի մեծ Բիւզանդարանն՝ լինել Իսիքիոսի որում Միլեսացւոյ։ Իսիքիոս ոք Միլեսացի՝ գրիչ բազմաց մատենից, զորոյ կրկին գրեանն յիշէ ինքնին Փոտ յիւրում բիւրամատենին, զմին 'ի Բելայ յԱնաստասեայց արքայէ ցմահ Անաստասայ կայսեր, և զմիւսն՝ զկեանս և զարարս Յուստինիանու կայսեր, յիշել յիշի՝ այլ Թուականն անց աղոյգ. և ներէ մ ոք եղէ այրք՝ չգիտեմք ճշգրիտ։ Իսկ 'ի գիրս ինչ օրինաց յիշատակի Իսիքիոս ոք գաւիր ատենակալ, զորմէ ասի բազում ինչ գրեալ զմեծ է քաղաքէս»։ Historia Byzantina (Հատ. Ա. 159). 'Ησυχίου Μιλησίου ἰλλουτρίου πάτρια Κωνσταντινουπολεος. Այս գրքէն թուի թէ առած ըլլայ Փարպեցի՝ Բիւզանդիոնի շինութեան պատմութիւնը։

ԻՒՂՈՅՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ. — Յաղագս պատմութեան սուրբ և աստուածային Իւղոյն զոր գտեալ

որպէս հարցս յարեւելս յաղուանի գիրս և Թարգմանեցին 'ի հայ գիր »:

ԼԱԲՈՒԲՆԻԱ (Թուղթ Աբգարու): Տես Հայկական հին դպրութիւն, Բ. տպ. յ'էջ 161-170:

ԼԵՒՈՆԻ ՏՈՒՄԱՐ (հին թարգմանութիւն). (Lettre dogmatique du pape Léon I). « Տումար Լեւոնի պապի գրեալ առ Փլաբիանոս պատրիարք Կոստանդնուպոլսոյ: — Ընթերցաք զնամակն սիրոյդ ձերոյ, յոր և զարմացաք վասն անագան հասանելոյ նորա »: (Մատենադարան Երուսաղեմի):

ԿԱՅՍԵՐԱՑ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

(HISTOIRE DES CÉSARS)

Այս անունը կրող գիրք մը այլեւայլ հատուածք կը գտնուին 'ի Ճառընտիրս:

— Ի յիշատակի սուրբ և բարեպաշտ Թագաւորին Թէոդոսի Մեծի, 'ի կայսերական գրոց: « Թէոդոս Մեծ որդի Գրատիանոսի ամս եւթնեւտասն. և էր 'ի Քրիստոսի ծննդենէն հինգհարիւր և ինն ամ »:

— Ի կայսերական գրոց, յաղագս Թէոդոսի փոքու. « Թէոդոս փոքր որդի Արշակայ՝ ամս երեսուն և ինն »*:

* Մեր գրչագրաց մէջ կը հանդիպինք հետեւեալ մակագրով գրուածի մը. « Կայսերք Հոռոմոց Թէ որչափ ամք կացեալ կամ ամիսք, և զինչ գործ գործեցին ». որ անշուշտ թարգմանութիւն է 'ի յունէ յոմանց Անանիայի Շիրակացւոյ ընծայուած և յայլոց Ուխտանեսի: Նորագոյն տեղեկութիւնք կը ծանուցանեն մեզ թէ Օքսֆորդի գատական լեզուաց

ուսուցիչ և հայագէտ անգղիացի բանասէրն Կոնի-բէր՝ գտած ըլլայ 'ի մատենադարանին Էջմիածնի՝ բայց յայլոց հետազօտական գրուածոց նաև կայսե-րաց պատմութեան կոչուած գրքի մը հին Թարգմա-նութիւն։ Փափաքելով որ ստուգուի այս լուր՝ կը համարինք թէ մեր յիշած գրուածքն ըլլայ։

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ

(LES STATUTS ECCLÉSIASTIQUES)

Վասն առաքելական կանոնին. (Statuts apostoliques). Առաքելական կոչուած կանոնաց յիշատա-կութիւնք՝ չեն հին 'ի գիրս յառաջ քան զչորրորդ դար։ Եւսեբիոս 'ի պատմութեան Եկեղեցւոյ (Գ. ԻԵ) թուէ 'ի կարգս անվաւեր գրոց դասել զայնո-սիկ. «Երկմտութիւն է, կ'ըսէ, զնոցանէ ... որ կո-չին վարդապետութիւնք առաքելոց (νόθα ... τῶν ἀποστόλων αἱ λεγόμεναι Διδαχαί). Սուրբն Աթանաս 'ի թղթին առ Փեստոն կը խօսի իբրև ոչ կանոնական համարուած գրքի մը վրայ, և թէպէտ եպիսկոպո-սունք կը պատուէին, կ'ըսէ, անոր ընթերցուածը յեկեղեցւոջ. բայց ինքը հակառակութիւն կրող գը-րուածոց մէջ կը դասաւորէ (ἀντολεγόμενα). Սուրբն Եպիփան՝ առաքելական սահմանք կը կոչէ, որոնց թէպէտ վաւերականութիւնը տարակուսական, այլ պէտք չէ, կ'ըսէ, մերժել զայնոսիկ, վասն զի կը պարունակեն պատուական հրահանգք, և չկայ ինչ 'ի նոսա հակառակ հաւատոյ և եկեղեցական կար-գաց։

Զենք կրնար որոշել մեր հայ թարգմանութեան ժամանակը, և հաւանականաբար կը համարինք վե-ցերորդէն ութերորդ դարերու մէջ եղած՝ անշուշտ

յասորականէ և Թերևս մասամբ նաև 'ի յունէ։ Առ մեզ գտնուած գրչագիրք՝ ոչ այնչափ հին են և ոչ փափաքելի հաւատարմութեամբ յընդօրինակողաց։ Էջմիածնի Մատենադարանին տպագիր ցուցակին մէջ նշանակուած կը գտնենք օրինակ Թուով քսան և վեց՝ յորս հնագոյն է գրեալն 'ի Թուին ՊԺԷ (1368) 'ի Կաֆա Ղրիմու 'ի Մաղաքիայէ։ Երուսաղեմի Մատենադարանիններն ալ, Թէպէտ ոմանք ընտիր և հաւատարմագոյն գրչութեամբ, բայց չունին զհնութիւն։

— *Վարդապետութիւն առաքելոցն։ Զկնի վերանալոյն Քրիստոսի առ Հայր իւր յերկինս, որպէս շնորհեաց նոցա առնել նշանս և բժշկութիւնս, և որպէս ընկալան առաքեալքն զպարգևս Հոգւոյն սրբոյն։ – Գլուխք և Թիւք համաւրէն ասացուած առաքելական են (երեսուն և հինգ).*

Ա. Վասն յարևելս կոյս աղաւթել։ – Բ. Վասն կիւրակէի պատարագս մատուցանել։ – Գ. Վասն չորեքշաբթի պահելոյ։ – Դ. Վասն ուրբաթ պահելոյ։ – Ե. Վասն շաբաթու պատուելոյ։ – Զ. Վասն երիցունս, սարկաւագունս և կէս սարկաւագունս ձեռնադրելոյ։ – Է. Վասն յաւուր ծննդեան և յայտնութեան Քրիստոսի 'ի վեց յունուարի կատարել։ – Ը. Վասն զատկին յետ քառասուն աւուր պահելոյ կատարել։ – Թ. Վասն աւետարանին ընթեռնլոյ։ – Ժ. Թէ վասն զկնի պասեքին կատարեսցեն յիսուն աւր։ – ԺԱ. Վասն վերացման նորա։ – ԺԲ. Վասն չձեռնադրելոյ զեկամուտ ոք։ – ԺԳ. Վասն յաւուր ութերորդի մկրտել զմանուկ։ – ԺԴ. Վասն չպաշտելոյ ըզպաշտաւն տեառն՝ որք յերկմիտս իցեն 'ի հաւատս։ – ԺԵ. Վասն որ 'ի հարցուկս երթան։ – ԺԶ. Վասն որ ընդ Հրեայս հաղորդին։ – ԺԷ. Վասն ոչ ընդունելոյ զորս 'ի հրեից և 'ի հեթանոսաց։ – ԺԸ. Վասն որք հաւատան և անգրէն ուրանան։ – ԺԹ. Վասն զմաշ-

խոստանալ ոչ ձեռնադրել։ — Ի. Յաղագս վարդապետութեամբ կատարել զեկեղեցւոյ իրս առաջնորդին և պաշտօնէից։ — ԻԱ. Վասն ոչ խոստանալոյ զանարգ ոք ՚ի ձեռնադրել՝ թէ անարատ իցէ։ — ԻԲ. Վասն զանըրնչաւերքն ձեռնադրելոյ։ — ԻԳ. Վասն ոչ ձեռնադրելոյ զամբարտաւանն։ — ԻԴ. Վասն վարժան լինել քահանայից։ — ԻԵ. Վասն որք ոչ ունին աւծումն քահանայութեան։ — ԻԶ. Վասն պատուելոյ զքահանայսն։ — ԻԷ. Վասն գաստառորաց։ — ԻԸ. Վասն յիշատակս վկայից կատարել։ — ԻԹ. Վասն ՚ի բեմն հանելոյ ընթագաւորս։ — Լ. Վասն զսաղմոսն Դաւթի պաշտելոյ։ — ԼԱ. Վասն ոչ ընթեռնլոյ զարտաքին գիրս։ — ԼԲ. Վասն ՚ի սուրբ սեղանն ջերմ հաց հանել։ — ԼԳ. Վասն որք կամին կուսութեամբ կեալ։ — ԼԴ. Վասն որք ամուսնանայցեն։ — ԼԵ. Վասն առաքելոցն թէ զո՞ր աշխարհ վիճակեցին։

Այս կանոններէն ետքը կը յաւելու. «Այլ աշակերտացն տեսան յետ գնելոյ զկարգ աւրինացս այսոցիկ. ոչ դադարէին ՚ի քարոզելոյ զաւետարանն...»։

— Երկրորդ առաքելական և գլուխք կանոնք ութսուն և հինգ։ Սահմանք և կանոնք սուրբ առաքելոց ՚ի ձեռն Կղեմայ առաքեալ հեթանոսաց։

Ա. Վասն ձեռնադրութեան եպիսկոպոսաց։ — Բ. Վասն ժառանգաւորաց ձեռնադրութեան։ — Գ. Վասն աներանական պատարագին։ — Դ. Վասն գիւղից եկեղեցւոյ։ — Ե. Վասն կնաթող քահանայից։ — Զ. Վասն ժառանգաւորաց որ աշխարհական հոգս յանձն առնուն։ — Է. Վասն հաղորդելոյ յաւուր տաւնից։ — Ը. Վասն արբոյ զատկին։ — Թ. Վասն որ անկերպար թողուն զժամն։ — Ժ. Վասն ոչ հաղորդելոյ ընդ անհաղորդս։ — ԺԱ. Վասն լուծեալ քահանայից։ — ԺԲ. Վասն որք բանադրեալք իցեն։ — ԺԳ. Վասն եպիսկոպոսի որ զայլոյ իշխանութիւն բռնադատէ։ — ԺԴ. Վասն ժառանգաւորի որ յաւտար

երկիր պանդխտանայ։ — ԺԵ. Վասն ոչ ձեռնադրել զերկկանայս 'ի քահանայութիւն։ — ԺԶ. Վասն ոչ ձեռնադրել քահանայս որ այրի կին առեալ իցեն։ — ԺԷ. Վասն զաղջական ոչ ունելոյ։ — ԺԸ. Վասն ոչ առնլոյ երաշխաւոր ժառանգաւորի։ — ԺԹ. Վասն որ ոչ կամաւքն ներքինացեալ են։ — Ի. Վասն որ կամաւ զինքն կրճատեաց։ — ԻԱ. Վասն ժառանգաւորի որ զինքն կրճատեաց։ — ԻԲ. Վասն ժողովրդականի որ զինքն կրճատեսցէ։ — ԻԳ. Վասն եպիսկոպոսի որ 'ի մէջս զառածեալ է։ — ԻԴ. Վասն որք ամուսնանան 'ի ժառանգաւորաց։ — ԻԵ. Վասն չլինել հարկանող զեպիսկոպոս, (կամ) վասն հարկանողաց ժառանգաւորաց։ — ԻԶ. Վասն եպիսկոպոսի որ լուծեալ իցէ 'ի կարգէն։ — ԻԷ. Վասն եպիսկոպոսի որ (թէ) ընծայք ձեռնադրէ։ — ԻԸ. Վասն եպիսկոպոսի որ իշխանաւք վարի։ — ԻԹ. Վասն թէ՛, ոք անարգէ զերէց կամ զեպիսկոպոս։ — Լ. Վասն թէ ոք երէց որոշեալ է յեպիսկոպոսէն։ — ԼԱ. Վասն զի մի զոք յաւտար եպիսկոպոսաց ընդունել։ — ԼԲ. Վասն եպիսկոպոսին իւրաքանչիւր ազգի գիտել պարտ է։ — ԼԵ. Վասն 'ի տարւոյն երկու անգամ ժողով լինել։ — ԼԶ. Վասն զեկեղեցւոյ իրաց հոգ տանել։ — ԼԷ. Վասն երիցու և սարկաւագի չգործել ինչ առանց կամաց եպիսկոպոսին։ — ԼԸ. Վասն ընչից եպիսկոպոսին և եկեղեցւոյ։ — ԼԹ. Վասն իշխանութիւն ունել եպիսկոպոսն եկեղեցւոյ։ — Խ. Վասն եպիսկոպոսաց որ քուէից պարտաւորին։ — ԽԱ. Վասն սարկաւագաց զմիմեանս տրտմելոյ։ — ԽԲ. Վասն եպիսկոպոսի որ վաչխ առնու։ — ԽԳ. Վասն թէ եպիսկոպոս ոք թերահաւատից աղաւթակից լինի։ — ԽԴ. Վասն թէ եպիսկոպոս ոք զթերահաւատից մկրտութիւն ընդունի։ — ԽԵ. Վասն որոշելոյ զկնահանաւորն։ — ԽԶ. Վասն որք անգոսնեն զամուսնութիւն, զմսակերութիւն և զգինի։ — ԽԷ. Վասն թէ ոք եպիսկոպոս զդարձեալսն 'ի մեղաց ոչ ընդունի։ — ԽԸ. Վասն

զորս ոչ ճաշակեն յաւուրս տաւնի 'ի մսոյ և 'ի գինւոյ։ — ԽԹ. Վասն ժառանգաւորի որ ուտէ 'ի կապելոյն։ — Ծ. Վասն ժառանգաւորի որ թշնամանէ զեպիսկոպոս։ — ԾԱ. Վասն ժառանգաւորի որ թշնամանէ զերէց։ — ԾԲ. Վասն թէ որք 'ի ժառանգաւորաց պատահեսցէ զմիաւորելն մարմնով։ — ԾԳ. Վասն երիցուն որ անփոյթ առնէ զքահանայութիւն, և ոչ խրատէ զժողովուրդն։ — ԾԴ. Վասն եպիսկոպոսի որ ոչ տայ կարաւտելոց։ — ԾԵ. Վասն չմուծանել զամբարշտաց գիրս յեկեղեցիս։ — ԾԶ. Վասն բանդաստողաց։ — ԾԷ. Վասն մարդկային երկիւղի։ — ԾԸ. Վասն ոչ ուտելոյ միս արեամբ շնչոյ և գազանաբեկ։ — ԾԹ. Վասն ոչ պահելոյ զշաբաթ և զկիւրակէ։ — Կ. Վասն ոչ աղաւթելոյ 'ի ժողովարանս Հրէից։ — ԿԱ. Վասն որ 'ի կռուի զոք սպանանէ։ — ԿԲ. Վասն որ զանխաւս կանայս բռնաբարէ։ — ԿԳ. Վասն որ երկրորդ ձեռնադրութիւն ընկալաւ։ — ԿԴ. Վասն պահելոյ զուրբաթ և զչորեքշաբաթ և զքառասնորդան։ — ԿԵ. Վասն ոչ պահելոյ և տաւնելոյ ընդ Հրէայս։ — ԿԶ. Վասն որք տանին ձէթ 'ի մեհեանս հեթանոսաց։ — ԿԷ. Վասն որք գողանան ձէթ կամ մոմ յեկեղեցւոյ։ — ԿԸ. Վասն եպիսկոպոսաց որ ամբաստանեալ են։ — ԿԹ. Վասն չընդունելոյ զԹերահաւատս որք 'ի վկայութիւն եպիսկոպոսաց։ — Հ. Վասն ոչ շնորհելոյ եպիսկոպոսաց զպատիւ՝ աշխարհականաց։ — ՀԱ. Վասն որք խեղ ակամբ և մարմնով։ — ՀԲ. Վասն ոչ ձեռնադրել եպիսկոպոսաց զխուլ կամ զկոյր։ — ՀԳ. Վասն դիւահարի։ — ՀԴ. Վասն որք 'ի հեթանոսաց մկրտին։ — ՀԵ. Վասն չանկանել եպիսկոպոսի յերկրաւոր հոգս։ — ՀԶ. Վասն չմտանելոյ 'ի ժառանգաւորութիւն զծառայս։ — ՀԷ. Վասն եպիսկոպոսի որ զաւրականութեան պատահեսցէ։ — ՀԸ. Վասն որ զԹագաւորն թշնամանէ։ — ՀԹ. Վասն թէ որք Քրիստոնէութեամբ մկրտեալք, վերստին մկրտեսցին։ — Ձ. Վասն մկրտութեան աւծման։ —

ՁԱ. Վասն մկրտութեան: — ՁԲ. Վասն որ զհայր ասէ չարչարեալ: — ՁԳ. Վասն եպիսկոպոսի զի մի իշխեսցէ յայլմէ իշխանութիւն առնուլ: — ՁԴ. Վասն եպիսկոպոսի զի երեւեսցի գլուխ և առաջնորդ: — ՁԵ. Վասն պահելոյ զկանոնագրեալն:

— Կանոնք առաքելականք 'ի ձեռն Կղեմայ:

— Կանոնք Թադէի առաքելոյ.

Ա. Վասն եպիսկոպոսաց պարկեշտ և անարատ լինել: — Բ. Վասն եպիսկոպոսաց միապէս սիրել զհաւատացեալս: — Գ. Վասն թէ յոր հասակ պարտ է ձեռնադրել քահանայս: — Դ. Վասն եպիսկոպոսաց հրաժարել 'ի ձեռնադրութենէ ագահաց: — Ե. Վասն թէ եպիսկոպոսին պարտ է սեղան հաստատել: — Զ. Վասն հացի պատարագին, թէ յորում աւուր պատարագի՝ 'ի նոյն աւուրէն է ելնել: — Է. Վասն եպիսկոպոսաց ժողով առնել ժառանգաւորաց և ժողովրդոց 'ի սեղան հաստատել: — Ը. Թէ յորում աւուր սեղան հաստատէ եպիսկոպոսն՝ արժան է զենմունք լինել: — Թ. Թէ վասն 'ի ժամ աղաւթից չխաւսել այլ ինչ բան՝ բայց յաղաւթից: — Ժ. Վասն ձեռնադրելոց՝ թէ յայտնի ինչ աղտեղութիւն: — ԺԱ. Վասն թէ յետ ձեռնադրութեանն յայտնի ինչ աղտեղութիւն: — ԺԲ. Վասն եպիսկոպոսաց ոչ առնուլ կաշառս: — ԺԳ. Վասն ամուսնացեալ քահանայից թէ որպէս պատարագ մատուցանել: — ԺԴ. Թէ որք կուսութեամբ ընկալան քահանայութիւն՝ որպէս պատարագ մատուցանել: — ԺԵ. Վասն քահանայի որ երդնուցու: — ԺԶ. Վասն քահանայի աղքատասէր լինել և քաղցրաբան: — ԺԷ. Որ միանգամ 'ի Քրիստոս մկրտին՝ սրբութեամբ կեալ: — ԺԸ–ԻԲ. Վասն շնացողաց: — ԻԳ. Վասն կախարդաց և ուրացողաց: — ԻԴ. Վասն շնացողաց որ զմանկունս սպանանեն: — ԻԵ. Վասն քրիստոնէից որ զուրբաթ և զչորեքշաբթին պահեն: — ԻԶ. Վասն առ-բունական տաւնից շաբաթ մի պահելն, և տալ կա-

տարել։ — ԻԷ. Վասն զսուրբ քառասունսն պահել, և յաւուր չարչարանաց տեառն տաւնել։ — ԻԸ. Վասն որ զանասուն պղծեն։ — ԻԹ. Վասն ուրացողաց զՔրիստոս։ — Լ. Վասն կամաւ սպանողաց զմարդ։ — ԼԱ. Վասն որ մի մաւր կաթամբ սնեալ են, ոչ է պարտ ամուսնանալ։ — ԼԲ. Վասն ազգականաց որ ամուսնանան։ — ԼԳ. Վասն որ զսահմանս ընկերին յափշտակէ։

— Կանոնք Փիլիպպոսի առաքելոյ.

Ա. Նախ թէ պարտ է քառասունք կատարել ամուկանանց։ — Բ. Եթէ ոչ է պարտ զշուն ընդ ոչխարի փոխանակել, զոչխարն պատարագ մատուցանել։ — Գ. Էշ փոխանակեալ ընդ ոչխարի և վաճառեալ արծաթի պատարագեսցի։ — Դ. Վասն ոչ զենլոյ զանսուրբ կենդանիսն և առնուլ զմորթսն։

— Նորին Փիլիպպոսի առաքելոյ կանոնք ութ։

— Կանոնք հարցն հեռաւորաց յետ առաքելոցն.

Ա. Վասն հեղձուցանելոյ կամաւ զմանուկն։ — Բ. Վասն անասնապղծի։ — Գ. Վասն պոռնըկին որ ինքնակամ գործէ։ — Դ. Վասն գողոց աւազակաց։ — Ե. Վասն քահանայի որ բամբասին։ — Զ. Վասն արուագիտաց։ — Է. Վասն զկին որոշել յանձնէ։ — Ը. Վասն մկնանկն յանգէտս ուտել։ — Թ. Վասն զքահանայի մեղս թէ ոք գիտէ։ — Ժ. Վասն որք պղծին ընդ ազգին։ — ԺԱ. Վասն շնացելոց ընդ ուրկունս։ — ԺԲ. Վասն պանծացեալ երիցու որ սպանողի որ զղջայ՝ ապաշխարութիւն ոչ գնէ։ — ԺԳ. Վասն հերձուածողաց։ — ԺԴ. Վասն որք զհետ միմեանց մեռանին։

— Կանոնք Նիկիական, գլուխ քսան.

Ա. Վասն որք կամաւ կտրեցին զերկուորիս։ — Բ. Վասն որք յարտաքնոց հաւատացեալք՝ ոչ առժամայն ածել 'ի ժառանգաւորութիւն։ — Գ. Վասն ոչ ձեռնադրելոյ զստահակս և զանծանաւթս։ — Դ. Վասն եպիսկոպոս ձեռնադրելոյ։ — Ե. Վասն բանադրելոյ, և թէ երիցս 'ի տարւոջ ժողով լիցի։ — Զ.

Վասն որ առանց կաթուղիկոսի ձեռնադրեալ։ — Է. Վասն պատուելոյ զԵրուսաղեմի եպիսկոպոսն։ — Ը. Վասն աթարոսաց, այսինքն է սրբոց։ — Թ. Վասն այնոցիկ որ մինչդեռ 'ի հալածանս էին՝ անկան 'ի ճշմարտութենէ։ — Ժ. Վասն որ առանց քննելոյ մերձեցան յերիցութիւն։ — ԺԱ. Վասն որ 'ի ձեռն արծաթոյ ձեռնադրին։ — ԺԲ. Վասն ուրացողաց։ — ԺԳ. Վասն քահանայից որ մեղանչեն։ — ԺԴ. Վասն որ յանցաւոր մեռանին։ — ԺԵ. Վասն երախայից ուսանելոյ զաւրէնս և զկարգս։ — ԺԶ. Վասն յափշտակելոյ զայլոյ վիճակ։ — ԺԷ. Վասն ժառանգաւորաց որ 'ի զաւշաքաղութենէ։ — ԺԸ. Վասն սարկաւագաց որ միրտութիւն առնեն։ — ԺԹ. Վասն արուագիտաց։ — Ի. Վասն որք հերձուածեցան։ Վասն կիւրակէի որ ծունր կրկնեն։

— Կոստանդինոսի Թագաւորի առ եպիսկոպոսս և ժողովուրդս. «Զի չարեաց և ամբարշտաց լծակից եղև Արիոս՝ յիրաւի զնոյն պատուհաս նոցին անարգանաց կրեսցէ»։

— Կանոնք երկրորդ Նիկիականք՝ զոր եդին ՅԺԸ եպիսկոպոսունքն՝ կրկնաբանելով կարճ 'ի կարճոյ։

— Անկիւրիայ կանոնիս գլուխք քսան.

Ա. Վասն քահանայից որ 'ի բռնութենէ զոհեցին։ — Բ. Վասն սարկաւագաց նոյնպիսեաց։ — Գ. Վասն ուխտի մանկանց՝ որք բռնադատին ուտել զզոհեալ։ — Դ. Վասն որք կամաւք զոհեցին։ — Ե. Վասն որք արտասուաւք կերան զզոհեալն։ — Զ. Վասն ուրացողաց որք յապաղեն զապաշխարելն։ — Է. Վասն որք երթան 'ի տաւնս հեթանոսաց և ուտեն։ — Ը. Վասն որք յամիցեն 'ի նոյն յանցանս։ — Թ. Վասն որք ընդ ինքեանս և զայլս վրիպեցեն։ — Ժ. Վասն ոչ տալ 'ի պատարագաց կերակրոց՝ անհաւատից։ — ԺԱ. Վասն սարկաւագաց որք կին առնեն։ — ԺԲ. Վասն որք յափշտակեն զաղջկունս խաւսեալս։ — ԺԳ. Վասն որք

յետ զոհելոյ մկրտեցին: — ԺԴ. Վասն չձեռնադրելոյ քորեպիսկոպոսաց քահանայ: — ԺԵ. Վասն ուխտաւորաց որք կամիցին միս ճաշակել: — ԺԶ. Վասն ընչից որ անուանեալ է եկեղեցւոյ: — ԺԷ. Վասն անասնագիտաց: — ԺԸ. Վասն մարմնապղծաց: — ԺԹ. Վասն եպիսկոպոսի որ զայլոյ վիճակ յափշտակէ: — Ի. Վասն որք կուսութիւն խոստանան:

— Վասն որք ժողովեալ 'ի Կեսարիա եպիսկոպոսունք հինգ, վասն ինչ անաւրէնութեան կանանց սահմանեցին կանոն գլուխ տասն:

— Նէոկեսարեայ կանոնիս գլուխք քսան:

— Կանոնք սրբոյն Գրիգորի առաքելոյն Հայոց, երեսուն գլուխ. «Քահանայն որ 'ի մեղս զառածեալ է, տասն ամ ապաշխարեսցէ»:

— Կանոնք Աթանասի գլուխք ութսունեւեւթն. «Վասն որք վասն երախայութեան ոչ հաղորդեցին»:

— Երանելւոյն Մակարայ (ոմանք ի ձձ. Սահակայ) որբոյ քաղաքին Երուսաղեմի հայրապետին Կանոնական թուղթ 'ի Հայս, վասն նախադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման և ընդ հրաման անցանել, գլուխք ինն. «Ահա մանաւոր եղաք զայս փափաք սիրոյ բարեպաշտութեան ձերոյ. փութացայ զարթուցանել զբարեսէր և զպարզամիտ սիրտս ձեր 'ի խնդիր ուղիղ բարեպաշտութեան ճշմարիտ կանոնադրութեան կաթողիկէ եկեղեցւոյ»:

— Կոստանդինուպաւլսի ժողովոյն և կանոնի գլուխք երեք. — Յաղագս զնիկիական հաւատոյն պահելոյ: — Յաղագս ոչ երթալ եպիսկոպոսին յիւրմէ վիճակէ յայլ և շփոթել: — Յաղագս լուծանելոյ զՄաքսիմոս և որք 'ի նմանէ ձեռնադրեալք են. «Յետ ոչ բազում աւուրց թագաւորելոյ մեծին Թէոդոսի աստուածասէր թագաւորի երեւեցաւ այր մի Մակեդոնիա անուն ... և սահմանեցին

քանս գլուխ երեք. «Ոչ խոտել զհաւատս սուրբ հարցն երեքհարիւր ութուտասանիցն որ 'ի Նիկիա Բիւթանիոյ ժողովեցան, այլ և զմեզ նմա հաստատուն»:

— Սահմանք կանոնագրութեան երանելոյն Գրիգորի Աստուածաբանի Նազիանզու եպիսկոպոսի, յաղագս ուղղափառութեան հաւատոյ և ապաշխարութեան յանցաւորաց, գլուխք երեսուն. «Առաջնորդք սրբութեան հաւատոյ՝ դաւանաւղք սրբոյ ուխտիս, քարոզիչք ճշմարտութեան»:

— Գիր կանոնական մեծի և գիտնականի եպիսկոպոսապետին Բարսեղի առ սուրբն Ամփիլոքոս բան յիսուն և մի. «Արտաքսեալքն յեկեղեցւոյ ամենայն՝ հերձուածաւղք ասին»:

— Գիր կանոնական սրբոյն Բարսեղի առ քահանայս մեծ Դիոդորոս յԱնտիոքիայ, վասն ամենեւին հեռանալոյ և զազգային չառնել. «Ցայս իմն առաւել հակէ մարդ, եթէ գոցէ յաւրինաց ինչ»:

— Բարսեղի գիր կանոնական վասն պէսպէս և բիւրապատիկ ախտից. գլուխք ՄՀԲ:

— Կանոն տեառն Եփրեմի արդիւնակատար կրաւնաւորի, զոր ուսուցանէր յանապատն 'ի կուսութեան ճառէն. «Քահանայ կամ կրաւնաւոր կամ սարկաւագ որ կամակոր մնաւք»:

— Կեսարեայ կանոնի գլուխք տասն. Որք ժողովեալ 'ի Կեսարիա եպիսկոպոսունք քսան՝ վասն ինչ անաւրէնութեան կանանց սահմանեցին կանոն. «Վասն կանանց որ ընդ արամբ են, և եթէ թողցեն 'ի բաց զպղծութիւնն և յապաշխարութիւն եկեսցեն» ...:

— Նէոկեսարեայ կանոնիս գլուխք քսան. «Այս կանոնք յետոյ եղան որ յԱնկիւրեայ կամ 'ի Կեսարիայն»:

— Կանոնս Գանգրայ գլուխք քսան և երեք. «Որք զամուսնութիւն մեղադրեն կամ անգոսնեն»:

— Անտիոքայ կանոնիս գլուխք քսանևհինգ. «Ամենայն որք ով և համարձակեսցին և լուծցեն զսահման սուրբ և մեծ ժողովոյն որ 'ի Նիկիայ ժողովեցան՝ և զատաքելոցն. իբրև էր անդ աստուածապաշտ և աստուածասէր Թագաւորն Կոստանդիանոս »:

— Ղաւոդիկեայ կանոնիս գլուխ յիսունևհինգ. «Զի ոչ է պարտ ըստ եկեղեցւոյ կանոնաց ոչք աղատաւթեամբ և աւրինաւք բնակեցան 'ի միասին »:

— Սարդիկեայ կանոնիս գլուխք քսանևմի. «Ոսիոս եպիսկոպոս ասաց. Ոչ է այնքան յետին սովորութիւնն որքան մեծասակար արգեանցն զանազանութիւն 'ի յինքեանց 'ի հիմանց արմատաքի խլել »:

— Կանոն առաջն Եպիփանու. «Եպիսկոպոս կամ երէց կամ սարկաւագ որ տանուտիկին ունիցի 'ի տան ըստ հեթանոսական սովորութեանց՝ լուծցին յիւրաքանչիւր յաստիճանէ »:

— Կանոն Եփեսոսի սուրբ ժողովոյն գլուխս վեց. «Քանզի պիտոյ էր և ոչ եկին 'ի ժողովն և մնացին 'ի գաւառին ոչ անգիտանալ զկարգաւորեալս՝ ծանուցանեմք »:

— Կանոնք Կիւրղի Աղեքսանդրացւոյ. «Քահանայ որ կայս իցէ կամ այրի և աշխարհի քահանայութիւն առնէ՝ նա և ժողովուրդք նորա և ընդունողք նորա նզովեալ եղիցին »:

— Թուղթ Սեւաստեայ եպիսկոպոսի, գլուխ երեքտասան. «Սեւաստիոս եպիսկոպոս՝ որ էք յԱստուծոյ և 'ի Քրիստոսէ և 'ի Հոգւոյն սրբոյ քահանայից 'ի տեառնէ ողջոյն: Երկերիւր յիսունևերկու հայրապետ ժողովեցաք և քննեցաք որպէս գտաք 'ի գրոց սրբոց ցուցանեմք ձեզ »:

— Կանոնք երկրորդ Անտիոքայ, (գլուխ) երեսուն և հինգ. «Որպէս ասէ երկուց և երից վկայից հաստատեսցի ամենայն բան: Այլ ինքն տէրն ասաց և փրկիչն Յիսուս Քրիստոս »:

— Կանոնք Նիկիայ երկրորդ. (հարիւր չորեքտասան գլուխք բանից)։

Առոնցմէ զատ կ'աւելցընեն գրչագիրք զկանոնս Վաչագանայ Աղուանից արքայի. Յովհաննու Երուսաղեմի եպիսկոպոսի, սրբոյն Հիպպողիտոսայ. Նեքտարիոսի Հռովմայ, Մելտինի եպիսկոպոսի. Սեւերիանոսի. Սոկրատայ. Դիոնեսիոսի Արիսպագացւոյ. Մանուէլի, Կղեմայ Հռովմայ. Յովհաննու Ոսկեբերանի, և այլն։ Կը թողունք յիշել յազգային հայրապետաց և 'ի ժողովոց սահմանուածներն։

ԿԱՆՈՆԳԻՐՔ (նոր). Թարգմանեալ 'ի ձեռն կամ հրամանաւ Գրիգորի Անաւարզեցւոյ, ըստ գրելոյ նորա առ Հեթում Բ. «Կայր ետ (առ իս) այն կանոնքն զոր նոր եմք փոխել, յոր կային Կիպրիանոսի և Կարթագինեայ ժողովոյն բանքն»։

ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆ ԱԹՈՌՈՑ Սրբոց Մայրաքաղաքաց և Մետրապոլտաց և Արհիեպիսկոպոսաց, սահմանեալ ըստ առաքելական և պատրիարքական Աթոռոց. և եղաւ այս կարգ աստիճանաց քահանայապետից ըստ տիեզերական ժողովոց աւրինաց. «Առաջին աթոռ երեցն Հռոմ, գլխաւոր և նախապատիւ առաքելոյն Պետրոսի». (Թուի թարգ. Լամբրոնեցւոյն). 'ի Վատիկանեան Մատենադարանի։

ԿԱՐԳԱՑ (գիր) ԼԱՏԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՑ

(L'ORDINAIRE DE L'ÉGLISE LATINE)

Թարգմանութիւն Ն. Լամբրոնացւոյ հետեւեալ յիշատակարանաւ. «Ի թուին Հայոց ՈԼԴ եկն Գրի-

զոր եպիսկոպոս (Փիլիպպուպոլսոյ) 'ի Հայրապետէն Հռովմայ Լուսիոյ առ կաթողիկոս մեր Գրիգորիոս, որ էր 'ի սմանէ առաքեալ. և եբեր զպատասխանի նամակի տեառն մերոյ, և զգիրս Կարգաց եկեղեցւոյ Հռովմայեցի գրով, և եգիտ զտէր մեր 'ի քաղաքն Տարսոն, յամենայնն հոգաբերս։ Եւ ընկալեալ կաթողիկոսին որբոյ զպատուական պայծառութիւնն, և զխոյրն (գլխոյ պատուոյն) 'ի լրումն պատուոյ իւրոյ, գոհացաւ զԱստուծոյ։ Եւ ետ զնամակ հայրապետին և զգիրս կարգաց եկեղեցւոյ յիմ նուաստութիւնս թարգմանել. զոր յեղաշրջեցի 'ի հայ բարբառ, միայն երիւրեալ զբանն քերթողական արուեստիւ առանց յաւելուածոյ և թերութեան : ...

« Եւ զի խոստումն էր ինքնակալին ոսկի կնքեալ գրով՝ Հայոց թագաւոր գնել. պահանջեաց 'ի նմանէ կաթողիկոսն սուրբ զլրումն խոստմանն. և ինձ հրաման ետ զայն թարգմանել. զոր կատարեցի յաւրինակէ՝ միոյ յեպիսկոպոսաց նոցին որ առ իս իջևանէր Մուսատէր քաղաքի, որ ունէր իւր գաս ձիավարի զինի՝ հազար հինգ կալ։ Եւ յորժամ թարգմանեցի՝ խորհեցան, և ոչ կարացին յանձն առնուլ զգործըն, յորժամ ինքնակալն բարձաւ 'ի միջոյ. այլ իջին յԱնտիոք և անտի 'ի Պաղեստին։

« Իսկ եւ զսահմանեալ աւրհնութիւն թագաւորին՝ ոչ կամեցայ աղաւաղել. եդի ընդ նախ թարգմանեալ կարգաց, վերստին յարմարմամբ։ Եւ աղաչեմ զն- մարդասէրն ընթերցողսդ՝ ոչ աւելորդ համարել զմեր 'ի այն վաստակս, որ ծառայէ եկաք Հռովմայ եկեղեցւոյն կարգաց՝ ընդ այլ գիտութեանց, և սովաւ զովացայք. և թողայք զինի եկելոցդ » ....

ԿԵԼԵՍՏԻԱՆՈՍ Ա. (CÉLESTIN I, PAPE). — Երանելոյն Կելեստինոսի եպիսկոպոսապետի Հռովմայ թուղթ առաջին առ Նեստոր. (Lettre à Nestorius).

« Ոչ գիտեմ ուստի 'ի մերս հասանէ լսելիս, եթէ թէ հաւատ իմն հնչեալ 'ի քէն Նորաձեռ, որ է արտաքոյ բարեպաշտութեանն. այլ զնոր քոյոց հաւատոց անտես արարաք »* :

* Ի ցուցակի Մատենադարանին Էջմիածնի (Թիւ 1686) կը յիշուի թուղթ Կղեմենտեայ պապի :

— Յաղագս Մարդեղութեան (հատուած մի բանի). (Fragment d'un discours sur l'Incarnation).
« Ըստ մարդկութեանն մատուցանէ » :

ԿԻՊՐԻԱՆՈՍ. (ST. CYPRIEN, ÉVÊQUE). — Կիպրիանոսի եպիսկոպոսին Անկիւրիոյ ճառ ողորմութեան. (Մատենադարան Էջմ. Թիւ գրչ. 1754) :

— Կիպրիանոս եպիսկոպոսի. « Փառաւորք և մեծամեծք պատուահեցին, սիրելիք, աստուածային բարեգործութիւնք. Հայրն զՈրդին առաքեաց զի զմեզ նորոգեսցէ » : (Մատենագր. աշխարհին 'ի Փարիզ, թիւ հայ գրչ. 85).

— Կիպրիանոս եպիսկոպոսի ասէ յՈղորմութեան ճառէն. « Քանզի բաղարջ հացիւ և անապական գինով հաղորդեցաւ մեզ սուրբ խորհուրդն » : (Անէ, 'ի նմին գրչագրի)* .

* Ի մեր Մատենադարանի. Որբոյն Կիպրիանոսի եպիսկոպոսի Ափրիկեցւոց Կարթագենի քաղաքի գիտողի և վկայի, յորմէ որ յաղագս Ողորմածութեան ճառէն. « Բազում և մեծամեծք են, եղբարք սիրելիք, աստուածայինքն բարեգործութիւնք, յորոց զմերս փրկութիւն՝ Աստուծոյ հաւր և Քրիստոսի առատ և հարուստ մարդասիրութիւնն գործեաց և միշտ գործէ » :

J.-B. PITRA et P. P. MARTIN. Analecta Sacra Spicilegio Solesmensi. Parisiis, 1883.

ԿԻՒՐԵՂ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

(ST. CYRILLE D'ALEXANDRIE)

Կիւրեղ, մեծանուն հայրապետ Աղեքսանդրիոյ, եղբօրորդի Թէոփիլեայ՝ զոր քիչ յառաջ յիշատակեցինք, յանուխական հասակէն մարզեցաւ 'ի վարժս սրբազան ուսմանց, հրահանգեալ և սնեալ յուղղափառ հաւատս: Ընթերցաւ եռանդուն հետամտութեամբ զգիրս Կղեմայ, Դիոնեսիոսի Արեոպագացւոյն, Աթանասի և Բարսղի, միացընելով սուրբ հարց գիտութեան հետ նաև զուսումն արտաքին մատենագրաց: Կ'երևնայ թէ հօրեղբայրն 403 թուականէն յառաջ մատուցած ըլլայ զինքն 'ի վիճակ ժառանգաւորաց. որովհետև իրեն հետ ներկայ էր նոյն տարւոյն մէջ գումարուած Կաղնեաց ժողովականին, յորում դատապարտեցաւ սուրբն Ոսկեբերան: Թէոփիլեայ մահուընէն (412) իրեք օր ետքը յաջորդեց նմա Կիւրեղ 'ի վերայ պատրիարքական աթոռոյն: Եռանդեամբ անցնելով 'ի գլուխ գործոյ պաշտամանն, մէկէն փակեց Նովատեանց եկեղեցիները. աքսորեց զհրէայս, գրաւեց անոնց ինչքը և ժողովարանները. և ամբաստանուելով յՈրեստէս քաղաքապետէ, որգարացուց ինքզինքը և իր գործերը առաջի կայսեր: Նեստորի բարձրանալը 'ի պատրիարքական աթոռ Կոստանդնուպոլսոյ՝ և իր առաջին ջանքն 'ի տարածել զմոլորութիւն իւր՝ ընդարձակ և ազնուագոյն ասպարէզ մը եղաւ Կիւրղի նախանձայոյզ և աստուածատէր բարուց և փութոյն: Ամէն աշխատանք մտադիւր յանձն առաւ՝ կասեցընել զինքը մոլորութեան ճամբէն. և երբ տեսաւ անոր յամառութիւնը. կայսերական գաւառաց մէջ հռչակեց անոր մոլար

ուսումը և զգուշացուց իր հետեւողները։ Վախճա-նեցաւ յամի 444, յետին յունիսի, քառասուներ-կու տարի կառավարելով զեկեղեցին Աղեքսանդրիոյ անմահանուն արդեամբք և մեծապայծառ վաստա-կովք։

Կիւրղի բազմաթիւ երկասիրութեանց մեծագոյն մասն մը պահուած է նաև 'ի մեր մատենագրութեան, յորոց շատք թարգմանութիւն են ոսկեդարեան դա-րու, 'ի ձեռն Ստեփանոսի Սիւնեցւոյ, և ոմանք ա-ւելի հնագոյն ժամանակաց կը վերաբերին, ու հա-ւանականաբար հինգերորդին։ Յոյն բնագրին ու մեր թարգմանութեանց մէջ անդ անդ կարեւոր տարբե-րութիւնք կը տեսնուին, աւելի ընդարձակագոյն գտնելով զբնագիրն. մանաւանդ հնգամատենին, Յեսուայ, Դատաւորաց և Թագաւորութեանց մեկ-նաբանութեանց մէջ։ Թերեւս բուն հեղինակին ձեռ-քով և կամ յայլոց համառօտուած օրինակաց վրայ եղած է մեր թարգմանութիւնը։

— Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսան-դրու Արարածոց մեկնութիւն. (Τοῦ ἐν ἁγίοις πατρὸς ἡμῶν Κυρίλλου ἀρχιεπισκόπου Ἀλεξανδρίου γλαφυρῶν εἰς Γένεσιν. Λόγος α.'). « Եթէ ոք կամիցի զամենայն լեզուաց նորին բանիւք զզաւրութիւնն թարգմանել, չկարացուցանէ յանդիման զբանիցն առաջելոց զմիտս »։

— Յ'Ելս. (Γλαφυρῶν εἰς τὴν Ἔξοδον). « Եւ փար-չէին Եգիպտացիքն յորդւոցն Իսրայելի. այլ առաւ ոչ եթէ դարձելոյ ինչ բանք էին, այլ չարչարելոյ զոր-դիսն Իսրայելի. քանզի այնպիսի իմն աւէ յասորին, եթէ նեղիցին՝ այսինքն է թէ ինքեանք անձկեսցին յոր-դւոցն Իսրայելի »։

— Ի յ'Ղեւտացիս. (Γλαφυρῶν εἰς τὸ Λευιτικὸν βιβλίον). « Զոհս հրամայէ որպէս և յառաջագոյն ա-սացաք, զի մի զոհեսցեն դիւաց, և մի լաւութեամբն գործակից նոցա մոլորութեանն լինիցին. անուանց ըղ-ձոհն մատուցանելոյ »։

— Ի Թիւս. (Γλαφυρῶν εἰς τοὺς Ἀριθμοὺς βιβλίον). « Առաքէր Մովսէս առ Մովաբացիսն ոչ միանգամայն, այլ յորժամ յիւրաքանչիւր ոք յազգացն հասանէին, թէ տուք մեզ անց. զի թէ առցեն՝ ոչ սատակեսցեն »:

— Ի յԵրկրորդ աւրէնքն. (Εἰς τὸ Δευτερονόμιον βιβλίον). « Եւ մի մոռանայցես զամենայն բանս զոր տեսին աչք քո: Բանն զգործոցն ասէ զոր տեսին աչք նոցա: Եւ բաշխեաց ասէ զնոսա տէր աստուած հեթանոսաց. ոչ զայն ինչ ասէ եթէ ես հեթանոսաց պաշտել զլուսաւորսն »:

— Ի Յեսու որդւոյ Նաւեայ, Կիւրղի. (Sur le livre de Josué, fils de Nun). « Ընդէ՞ր քարեղէն սրովք հրամայէ թլփատել: Վասն չյամեղոյ յերկրի. Իսկ յորժամ քարին լինէր՝ թլփատութիւն ամենեքին զիւրաւ գտանէին: Դարձեալ ասեն թէ անցաւ լինէր քարին թլփատութիւն »:

— Նորին Կիւրղի 'ի Դատաւորս. (Sur le livre des Juges). « Տացես ինձ ասէ զջրաւսանս ջրոց. և դարձեալ թէ ետ Մաքաղէք ըստ որոյ նորա զջրաւսանս բարձանց, և զջրաւսանս հովտաց: Ջրաւսանս՝ զջուրսն ստորգման կոչէ, թէ 'ի բարձունս յուռթի են և 'ի դաշտս »:

— Նորին Կիւրղի 'ի Թագաւորութիւնսն. (Sur le livre des Rois). « Զգայրութիւն Արարածոց և զԹագաւորութիւն, ոչ նոյն գրեաց. քանզի զհնգերորդ մարթ էր այսչափ ամս կեալ: Այլ մինչ յերկրորդ աւրէնս՝ Մովսէս գրեաց »:

— Նորին. « Այս իբրև նշանակաւ առ այնոսիկ՝ որ այլազգունակս թարգմանեցին, և առ որ առանձինն իւրաքանչիւր լեզուաց, և մանաւանդ Եբրայեցւոյն, որ ասէ թէ 'ի կատարած վասն գաղանեացն որդւոյ »:

— Մեծին Կիւրղի Աղեքսանդրացւոյ մեկնութիւն

սուրբ աւետարանին որ ըստ Ղուկայ. (Commentaire sur l'évangile selon St. Luc). « Քանզի բազումք յաւժարեցին վերստին կարգել... Համառօտ բանիւ անցեալ հատանէ աւետարանիչս ընդ կարգ պատմութեան աւետարանիս։ Վասն զի նախ զայն եւեթ գնէ սկիզբն բանիս, բազումք՝ ասէ, յաւժարեցին կարգել զպատմութիւնս »։

— Ի 'Ղուկայ աւետարանին մեկնութենէ. (Du même livre). « Եւ հովիւքն էին 'ի տեղւոջն յայնմիկ... Դարձեալ սկիզբն է բանիս՝ որ առ ձեզ գըրեալ է 'ի գիրս սաղմոսացն. Եկայք ցնծասցուք 'ի տէր, աղաղակեսցուք առ Աստուած փրկիչ մեր։ Արդ զատագլուխ ունելով զնա, և զնորայն ունելով ուղղութիւնս, և զքաջարուեստ տնաւրէնութեան աւրինակ պատուեմք »։

— Յաւետարանին մեկնութենէ որ ըստ Ղուկայ. (Du même livre). « Եւ եղև ընդ աւուրսն ընդ այնոսիկ՝ ել հրաման ... Երանելի մարգարէն Եսայի հոգւոյն ծագմամբ պայծառացեալ, և մեծ խորհրդոյ միածնին ոչ եղեալ անգէտ. և զելս ըստ մարմնոյ տնտեսութեանն՝ ամենայն սքանչելեաց արժանի համարեալ »։

— Ի մեկնութենէ աւետարանին Ղուկասու. (Du même livre). « Եւ իբրև լցան աւուրք ութ թլփատելոյ զնա ... Յոյժ բազում է ժողովս, և յաւժարամիտ լսաւղաց. քանզի լսեալ տեսանեմք զեկեղեցիս, այլ ոչ մեծատուն խորհրդածուս »։

— Ի մեկնութենէ աւետարանին որ ըստ Ղուկայ. (Du même livre). « Եւ իբրև լցան աւուրք սրբութեան նոցա ... Ո՜վ մեծ և սքանչելի տնաւրէնութեանն. ո՜վ խորք իմաստութեանն և գիտութեան Աստուծոյ, որ 'ի ծոց Հաւր և աթոռակից, և մերձընջենաւորակից Որդի »։

— Նորին 'ի նոյն գրոց. (Du même livre). « Զար-

թիր, զարթիր սուր 'ի վերայ հովուաց իմոց, ասէ տէր ամենակալ։ Սուր աստ յայտնեալ ասէ իբրև օրինակաւ սուսեր՝ զխորհրդութիւնն »։

— Երանելւոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին մեկնութիւն Առակաց աւետարանին որ ըստ Ղուկայ. (Commentaire des paraboles de l'évangile selon St. Luc). « Երկու պարտապանք էին ուրումն փոխատուի ... Փոխատու զԱյն նշանակէ, որ 'ի պատկեր իւր գոյացոյց զմարդկային բնութիւնս. շնորհելով զինքն իշխանութիւնն և զանէրութիւն՝ զոր 'ի դահեկանն նշանակեաց զպատկերն »։

— Մեկնութիւն Առակաց աւետարանին որ ըստ Ղուկայ. (Du même livre). « Դատաւոր մի էր 'ի քաղաքի ուրեմն, յԱստուծոյ ոչ երկնչէր և 'ի մարդկանէ ոչ ամաչէր ... Դատաւոր զմարդկային զիշխանական զմիտն ասէ. որ 'ի մէջ մարմնոյն հոգւոյն, որպէս կամի ներգործէ. երբեմն 'ի բարին միաբանելով՝ որ են հոգեկան առաքինութիւնք »։

— Երանելւոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետին՝ 'ի մեկնութենէն Եսայեայ մարգարէի. (Fragment du livre des Commentaires sur le livre d'Isaïe)- « Ահա կոյսն յղասցի ... Եսուն որք զաստուածային գիրս թարգմանեցին ոմանք՝ եթէ ահա աղջիկ յղասցի։ Բայց թուի ինձ Հրէիցն աղջկան անուամբ պանծալի վարկանելով վասորանդի անել զՔրիստոսի մայրն, և ոչ մանաւանդ կոչել կոյս »։

« ... Գրեցաւ գիրքս այս և աստուածային տառս. և հոգւոյ և մարմնոյ փրկութեան, հաւատացելոց պարծանք, 'ի Թուականութեանս Հայոց ՊԳ. յաշխարհիս Հոնաց և 'ի յերկիր Խրիմ. 'ի հոյակապ և 'ի հռչակաւոր քաղաքիս որ կոչի Սուրխաթ. 'ի խնդրոյ աստուածընկալ և կուսակրօն քահանային Մնաի. ըստեան շնորհի իմաստութեանս, և առաւելեալ ամենայն գործովք առաքինութեանս։ Արդ ա-

աղաչեմ զամենեսեան ... յորժամ ընթեռնուք կամ աւրինակէք, զպատուական քահանայս զՄինասն, և զծնաւղսն իւր, և զեղբարս և զամենայն ազգայինն, յիշեսջիք 'ի մաքրափայլ յաղաւթս ձեր։ Ընդ նմին և զնուաստեալս յիմաստութեան, և զպակասեալս 'ի գործոց բարեաց, զատարակուսեալս Ստեփաննոս քերթաւղ գրոյս ... Իսկ շնորհատուն Աստուած տացէ հոգի և իմաստութիւն ստացողի սորա Մինաս կրաւնաւորի ... »։ Դարձեալ 'ի յիշատակարանէ ստացողի գրոցս Մինասայ կրաւնաւորի Դերջանեցւոյ 'ի գիւղաքաղաքէ Մանց կոչեցելոյ.

« ... Վճար առաւարտ եղև սըմին,
Առ ի կողմանս Հիւսիսային
Ցաշխարհս Հայոց և գաւառային,
Եւ ի Սուլխաթ քաղաք սորին.
Ցիշխանութեան Ճանիպէկին,
Որդւոյ մեծի Օզպէկ խանին.
Իսկ ի մերոյ մեծ աթոռին
Որ Կոստանդին անուն սորին.
Եւ ի հանուրց Հայաստանին
Տէր Մըխիթար հայրապետին.
Իսկ ի կողմանցս հաւսային
Տէր Ստեփանոս վերադիտին.
Եւ իմաստուն մեծ հռետորին
Տէր Յովհաննէս կուսակրաւնին.
Որ է գիտուն աստուածային
Եւ վկայեալն է ի բարին.
Զոր տէր Յիսուս ըստ արժանին
Զնա պահեսցէ կենաւք կըրկին »։

— Ի Մեկնութենէ մարգարէին Եսայեայ. « Եւ վըկայս կացուցեալ ինձ արս հաւատարիմս զՈւրիաս և զԶաքարիաս որդի Բարաքեայ »։

— Ի Մեկնութենէ մարգարէին Եսայեայ. « Անհրաժեշտ է միշտ սորոց մարգարէիցն բանք և լցեալ ծածկեալ իմաստիւք, զխորհրդոցն իմաստից աստուածայնոց կրկնէ զկանխասացութիւնն »։

— Յ'Եսայեայ մարգարէի մեկնութենէ. «Եւ ես ածից զխաղաղութիւն 'ի վերայ իշխանաց նոցա: Խաղաղութիւն և առաջնութիւն ինքն Քրիստոս է. խաղաղութեան աղբիւրն՝ ըստ որում ասէ առաքելոցն՝ զխաղաղութիւն զիմ տամ ձեզ»:

— Սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրու, 'ի մեկնութենէ մարգարէին Յովելեայ. (Fragment d'un Commentaire sur livre de prophète Joël). «Եւ եղիցի յետ այսորիկ հեղից յոգւոյ իմմէ ... Ահաւասիկ յայտնապէս շնորհեալ աւետարանէ սրբոյ հոգւոյն հեղումն, յայտ է թէ զատոս մարգարէութիւնն ոչ 'ի մի մարգարէէ ընտրեալ»:

— Ի մեկնութենէ մարգարէին Զաքարիայ յառաջին բանէն. (Fragment du Commentaire sur livre de prophète Zacharie). «Յաւուր յայնմիկ ասէ տէր ամենակալ՝ կոչեսցէ իւրաքանչիւր ոք զընկեր իւր ... զի ամենայն լինելոց էին 'ի չարիս՝ 'ի շաւշափել նոցա զմեզս»:

— Ի մեկնութենէ մարգարէին Զաքարիայ. «Յութերորդումամսեանն ամ Դարեհի եղև բան տեառն առ Զաքարիա որդի Բարաքեայ որդի Ովեդեայ մարգարէի: Մարգարէանայ երանելին Զաքարիաս յԵրուսաղէմ 'ի նոսին, թուի ինձ թէ 'ի յայն ժամանակս յորս և Սոփոնիաս»:

— Ի մեկնութենէ մարգարէին Զաքարիայ. «Խընդա յոյժ դուստր Սիոնի. քարոզեա դուստր Երուսաղեմի, ահա թագաւոր քո գայ քեզ ... Յայտնապէս այսուքիւք քարոզէ զփրկչին մերոյ երևումն. մինչ զի և տեսանէր բոլորովին զառ 'ի վերն, և խընդալ հրամայէ»:

— Ի Զաքարիայ մարգարէի մեկնութենէ. «Եւ ծանիցեն Քանանացիքն զոչխարս պահեալս ... Քանանացիս զհեթանոսս ասէ, իմացին նոքա զոչխարս պահեալս որք պահեցան 'ի Քրիստոսէ»:

— Սորայն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու յ'Եբրայեցւոց Թղթոյն մեկնութենէ. (Fragment du Commentaire de la lettre de St. Paul aux Hébreux). « Զի ոչ ամենայն զաւրութեանց երկնաւորացն՝ յայտնի էր 'ի սկզբանէ խորհուրդ մարդանալոյ փրկութեան մերոյ։ Ցուցցէ հմտան և անգղեակն զորոց երանելին Պաւղոս »։

— Սորայն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրու հայրապետին Գաղափարմունք. յաղագս մարդանալոյ միածնին։ (Τοῦ αγιοῦ Κυρίλλοῦ περὶ τῆς ἐνανθρωπήσεως τοῦ μονογενοῦς).

— Առաջին թէ զինչ նշանակէ Քրիստոս անուն. « Քրիստոս անուն ոչ սահմանի զաւրութեան ունի և ոչ զաւրութ էութեան »։

— Բ. Թէ զինչ յեղանակաւ պարտ է ասել զէմմանուէլն. « Էմմանուէլ անուանի. զգաւակէն Աստահամու բնական հարկանէ Աստուած. և միջնաւորութեամբ կցորդեալ մեզ մարմնոյ և արեան »։

— Գ. Թէ զինչ է Յիսուս. « Զաւրութեամբ մըտածութեամբ պարտ զոյգ ա 'ի մէնջ, մի ասել զորդին Աստուծոյ »։ (Գլուխք ԼԶ)։

— Հաւատարիմ քահանայապետին Քրիստոսի. մըշտերիմ ծառայի Աստուծոյ՝ որբայք Կիւրղի Աղեքսանդրացւոյ 'ի Տիբերեայ քահանայէ և յեղբարց. (Lettre de prêtre Tibère à Cyrille d'Alexandrie). « Բարիոք էր մեզ լսել թէ և էր ինչ յուզղութիւն թերեւս փութացելոցն (փութալոցն) ոչ ինչ փոքր յայնցանէ հեռանալոցն աւգտիլ մեզ »։

— Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոց քաղաքին լուծումն աւրինականացն (այլ ձ. աւրինականացն) խնդրոց 'ի ձեռն Տիբերեայ քահանայի. « Եթէ Աստուած որ 'ի վերայ ամենեցուն՝ ձեռս, ոտս, աչս, ականջս և թևս ունել յաստուածայնոց գրեալ անուանեալ »։

— Տեառն սրբոյն Կիւրղի Աղէքսանդրացւոյ, առ բարեպաշտ թագաւորն Թէոդոսիոս, յաղագս տաւնի սրբոյ Զատկին. (Lettre de St. Cyrille d'Alexandrie à l'empereur Théodose). «Ասէ ուրեմն սրբազանն գիր. Սկիզբն իմաստութեան երկեւղ տեառն: Իսկ իմաստութեան որ 'ի յԱստուծոյ զինչ արդեւք եղիցի հաւասարակշիռ»:

— Երանելոյն տեառն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղէքսանդրացւոյ առ բարեպաշտ թագուհին Եւդոքսիա կին Թէոդոսի բարեպաշտ թագաւորի. (Lettre de St. Cyrille à l'imperatrice Eudoxie). «Որոց զաստուածայինն և զերկնաւորն քահանայագործեն քարոզութիւն, ձայնիւ Եսայեայ հրամայէ ասելով բողոքեցս Աստուած»:

— Յաղագս հնազանդութեանն Քրիստոսի. (Sur l'obéissance du Christ). «Այս ուրեմն որպէս 'ի ձեռն միոյն յանցանաց յամենայն մարդիկ դատապարտութիւն, այսպէս 'ի ձեռն միոյն արդարութեան յամենայն մարդիկ արդարութիւն կենաց»:

— Յաղագս սրբեցելոյն Քրիստոսի և նորին քահանայութեան իմացելոյ. (Sur le saint sacerdoce de J. Chr.). «Քանզի վայել էր իսկ նմա, վասն որոյ ամենայն, որով և ամենայն, բազում որդիս 'ի փառս ածել ... վարկ[illegible]իցէն ուրեմն արդեաւք յանուանցն ոմանք. և անջատել սովորելոցն յերկուս Քրիստոս, և յերկուս որդիս զմի տէր Յիսուս Քրիստոս»:

— Յաղագս ասելոյն փառս առնուլ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. (Sur la glorification de J. Chr.). «Պաւղոս առաքեալ ոչ 'ի մարդկանէ և ոչ 'ի ձեռն մարդոյ. այլ 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի և Աստուծոյ Հաւր յարուցանողին զնա 'ի մեռելոց, և տուաւղին նմա փառս»:

— Յաղագս ասելոյն յառնել Քրիստոսի 'ի մեռելոց փառաւք Հաւր. (Sur la glorieuse résurrection

de Christ). «Աստուածայինն Պաւղոս գրէ յաղագս նախահաւրն Աբրահամու. բայց ոչ գրեցաւ վասն նորա միայն եթէ համարեցաւ նմա հաւատքն յարդարութիւն»:

— Յամաւթ հակառակորդացն ասացեալ. «Այժմ անձն իմ խռովեալ է ... Որք Ապողինարք կարծեաւքն պատրեալք, և զոր ինչ նմայն թուեցաւ խորհել՝ ընդդիմացեալ ասելով, անանձն և անմիտ գոլ զմիաւորեալն ընդ բանին զմարմինն»:

— Նորին առեալ Կիւրղի եպիսկոպոսապետի առ բարեպաշտ թագուհի կուսանսն Քրիստոսի, քոյր ուղղափառ թագաւորին Թէոդոսի՝ Արկադեայ և Մարինեայ. (Κυριλλοῦ ἐπισκόπου Ἀλεξάνδρειας, προσφωνιτικὸς ταῖς εὐσεβεστάταις βασιλιαταις). «Պարկեշտասիրութիւն անեղերական, և պարծանս որոց եկեղեցեաց ամենեցուն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի, ասասցէ ոք յոյժ վայելչաբար»* :

* Այս թղթին մէջ 'ի վկայութիւն բերուած սրբոց հարց խօսքերն.

1.° Ատտիկոսի եպիսկոպոսի. «Այսաւր Քրիստոս Տէրն մեր զմարդասիրութեանն ծնունդ ընկալաւ. քանզի ըստ աստուածութեանն պատուոյ յառաջագոյն էր»:

2.° Անտիոքոսի եպիսկոպոսի. «[illegible] երեկ անարատ ծննդեամբ փրկիչն մեզ կենդանածինն, գեղեցկածինն, միածինն, լուսակիրն, յուսակիրն, աստուածածինն»:

3.° Տեառն Փիլոքի եպիսկոպոսի յաղագս ծննդեան. «Ճշմարտութեամբն ծանուցաւ, շնորհն եկն և երևեցաւ. որ որդին Աստուծոյ էր, Աստուծոյ բանն»:

4.° Ամոնի եպիսկոպոսի Անդրիանուպոլսի յաղագս Աստուծոյ բանին. «Իսկ եթէ ինքն Աստուած բնութեամբ գոլով որպէս Աստուծոյ միածին որդի»:

5.° Յոհաննու եպիսկոպոսապետի Կոստանդնու-

պողոսի առաքելոյ յաղագս աստուածայնոյն ծննդեանն, զոր ասէ և յաղագս սրբոյ կուսին. «Փոխանակ արեգական զարեգակն արդարութեան անպարագրապէս տարաւ»:

6.° Սրբոյն Մեթոդիոսի եպիսկոպոսապետի. «Քանզի ծնեալն 'ի վերուստ հաւրէ բանն, անճառապէս անպատմաբար, անհասանելի»:

7.° Թիտոսլիոսի եպիսկոպոսի (այլ օր. Եզիմողոսի եպիսկոպոսի) յաղագս հաւատոյ ճառի. «Եւ եւս յաղագս մարմնոյն անաւրէնութեանն Փրկչին հաւատամք. անայլայլելի և անփոփոխելի միացեալ Աստուծոյ բանին»:

8.° Թէոփիլեայ եպիսկոպոսի յորմէ առ ոյս զՍրոգինին խորհին, և ասէ այսպէս յաղագս Քրիստոսի. «Ջի մի բանիւ միայն, այլ և զաւրութեամբ աստուած գոլ ճանաչեմ. երևեալն հաւատացի գործոցն մեծագործութեամբ»:

— Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրի եպիսկոպոսի առ բարեպաշտ Թագաւորն Թէոդկէոս, (Լմք. Թէոդոս), յաղագս ուղղափառ հաւատոյ որ 'ի տէր մեր Յիսուս Քրիստոս. (Κυριλλοῦ ε'πισκόπου 'Αλεζανδρείας προσφωνητικός πρός τόν εὐσεβιστατον βασιλέα Θεοδοσιον, περὶ τῆς ὀρθῆς πίστεος τῆς εἰς τόν κύριον ἡμῶν Ἰησοῦς Χριστοῦ). «Որ 'ի մարդիկ փառաւորութիւն, վերադունութեամբ և (Լմք. անհամեմատիւք առաւելութեամբ քան զայլ) անհամեմատ առաքինութեամբ քան զայլսն Թագաւորս ամենեսին յարուցեալ»:

Ի գրչագրի Լամբրունեցւոյն յիշատակարան. «Ջաստուածապարգեւ տէր Ներսէս, և զախեղերական վարդապետ, հանդերձ հարազատ եղբարբք իւրովք, որոց են անուանքն (այսպէս յօր.). Հեթում սեւաստոս, և Ապիրատ, Շահինշահ, և Գրիգոր, որդիք Աւշնի սեւաստոսի յիշեսջիք աղաւթիւք 'ի Տէր»:

— Նորին Կիւրղի Աղեքսանդրու առ բարեպաշտ թագաւորն Թէոդոսիոս, յետ դառնալոյն 'ի բնակութիւնս իւրեանց եկեղեցւոյն 'ի սուրբ ժողովոյն Եփեսոսի. « Աստուածայինն և անմահ և բոլորեցս իշխեցող բնութիւն, և 'ի լոյս անմատոյց բնակեալն, և աթոռ ունի զվերինն՝ իւր միայնոյ վայելուչ» : Յօրուած հաստուած մը 'ի գրոց սրբոյն Աթանասի այս խորագրով. « Սրբոյն Աթանասի եպիսկոպոսապետին յորմէ յաղագս հաւատոյ ճառէն, ընդդէմ անիրաւին և ամպարշտին Ապողինարի. — Զմեղացն դատապարտութիւն յերկրիս արար, իսկ զանիծիցն 'ի բաց բարձումն 'ի վերայ փայտին » :

— Երանելոյն Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրի թէ մի է Քրիստոս, զոր խնդրեաց Երեմիաս (ոմանք. Եուլիաս) ընդդէմ ամպարշտին Նեստորի. « Ուսմանց սրբազանից յագուրդ ամենեւին և ոչ մի ինչ եղեցի. որոց ուղղակի ողջախոհեցինն » :

— Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Սուկեսոս եպիսկոպոս Դիոմիգիրեայ քաղաքի Իսաւրացւոց գաւառին. (Κυριλλοῦ ... πρός τὸν μακαριώτατον Σούκευσον ἐπίσκοπον τῆς Διοκαισαρέων τῆς κατὰ τῆς Ἰσαύρον ἐπισχίον, περί Πίστεως α΄.). « Ընթերցայ զթուղթս զառ 'ի քոյոյդ սրբութենէ առաքեալ առ իս, և ուրախ եղէ յոյժ. զի կարող գոլով զմեզ և զայլս ուգտեցուցանել, 'ի բաղում ուսումնասիրութենէդ մեծարել զմեզ արժանաւորես » :

— Նորին Կիւրղի առ նոյն Սուկեսոս (ոմանք 'ի ձձ. առ Սեկունդոս) թուղթ երկրորդ. ('Επίστολη δευτέρα πρός Σούκευσον). « Յայտնի կացուցանէ զինքն ճշմարտութիւն որոց սիրեն զնայ. ծածկի և զանխլանայ 'ի բազմամանուած մտածութեանց »* :

* Յաւարտ թղթոյս 'ի գրչագրի Լամբրոնեցւոյն՝ յիշատակարանս համառօտ. « Զբազմամանուած բանքս ուշիմ մտաւք ընթերցիր, յիշելով զերբեմն

ըղձիւք աշխատողս»։ Յետոյ ինքնագիր սրբոյն՝ որ կաղմին պատճառաւ անկատար կը մնայ. «Աւաղ թշուառութեանս, զի զայսպիսի արտագրութիւն զսուրբ հարցն հաւաստի ունելով եկեղեցիք դեռ եւս յամ...»։

Յիշատակարան գրչին. «Զերկրորդ հազարապետն մեծի խորհրդոյն Քրիստոսի և զլուսացեալն զեղմամբ շնորհաց Հոգւոյն սրբոյ՝ զառաքելաշուք րաբունեաց պետն իմաստից զԳեորգէոս մեծ հռետորն Հայոց, աղաչեմ յիշեսջիք առաջի Քրիստոսի, և Աստուած զձեզ յիշէ. ամէն»։

— Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրի առ Ակակիոս եպիսկոպոս Մաղատինեայ, յորում զեկոյց նմա եթէ զինչ գրեաց առ արեւելեայս. (Lettre de Cyrille d'Alexandrie à Acace, évêque de Metelin)· «Մեծութիւնք եղբարց է բանք քաղցունք և հրաշալիք, և ամենայն 'բանի արժանաւորք, առ 'ի ճշմարտապէս ողջախոհացն պիտոյ գոլ ասեմ»։

— Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի. պատասխանի թղթոյն առ Յոհաննէս եպիսկոպոս Անտիոքայ մեծի. (Lettre de St. Cyrille à Jean, grand évêque d'Antioche). «Տեառն և սիրելի եղբաւր և պաշտաւնակցի իմոյ Յոհաննու, Կիւրղոս 'ի տէր խնդալ. Ուրախասցին երկինք և ցնծասցէ երկիր, քանզի լուծաւ միջնորմն ցանկոյն, դադարեաց տրտմութիւնն, և ամենայն երկպառակութեանն 'ի բաց բարձաւ պատճառ»*։

*Ի վերջ թղթոյն այսպիսի ծանօթութիւն մը. «Կամէր շահել զսա, զի զՆեստորին խորհէր Յոհան»։

— Վկայութիւնք յանդիմանութեան ամբարշտին Նեստորի.

1.° Պետրոսի Աղեքսանդրու եպիսկոպոսի. «Վասն զի ճշմարտապէս շնորհն և ճշմարտութիւնն 'ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն»։

— Նորին. «Ուստի և աւետարանիչն ճշմարտէ ասելով. բանն մարմին եղև և բնակեաց 'ի մեզ. յայտ է թէ յայնժամ յորմէ հետէ հրեշտակն ետ ողջոյն կուսին»:

— Նորին. «Իսկ աստուածն բան առանց ան՝ ըստ կամաց զամենայն արարչին Աստուծոյ գործէր»:

2.° Աթանասի եպիսկոպոսի ընդդէմ Արիանոսաց. «Բազումք եղեն սուրբք և մարգարէք յառաջնայն ժամաց. Երեմիաս յարգանդէ սրբեցաւ. Յովհաննէս յորովայնի մաւր իւրոյ խայտալով ցնծայ»:

3.° Յուլիոսի եպիսկոպոսապետի Հռովմայ. «Բարոզի ուրեմն հաւատոյս, և մարմնացեալ 'ի կուսէն Մարիամայ Որդին Աստուծոյ, և բնակեալ 'ի մարդիկ»:

4.° Սրբոյն Փիլիկեայ. «Իսկ վասն մարմնաւորութեան բանին և հաւատոյ՝ հաւատամք 'ի Տէր մեր Յիսուս Քրիստոս, 'ի սրբոյ կուսէն Մարիամայ ծնեալ»:

5.° Թէոփիլի եպիսկոպոսի Աղեքսանդրու. Քանզի է և այժմ, և յայնժամ սքանչելեացն նշխար. մի անհաւատ լիցին եթէ զաւրութիւն Աստուծոյ կարող է առնել, կուսի ծնանիլ»:

6.° Սրբոյն Կիւրղիանոսի Ափրիկանացւոյ. «Բազում և մեծամեծք են, եղբարք սիրելիք, աստուածային բարեգործութիւնք. յորոց զմեծս փրկութիւն, Աստուծոյ և Հաւր Քրիստոսի առատ և հարուստ մարդասիրութիւնն»:

7.° Ամբրոսիոսի եպիսկոպոսի Մեդիոլանացւոց. «Եթէ ինձ ոչ հաւատայք ասէ, հաւատասցեն առաքելոյ որ ասէն, թէ Յորժամ եկն լրումն ժամանակին, առաքեաց Աստուած զորդին իւր»:

Նորին. «Լսեցէն այսուհետև 'ի բանից նմին խնդիրք. զի արքայութիւնն Աստուծոյ՝ որպէս և գրեալ է, ոչ հաւանութեամբ բանից մարդկայնոց է, այլ ցուցմամբ զաւրութեան»:

8.° Բարսղի եպիսկոպոսի Կեսարու Կապադովկեցւոց. « Քանզի ոչ այնքան երկին և երկիր և մեծութիւն ծովու ; և որք 'ի ջուրս են բնակեալ և որք 'ի ցամաքի » :

9.° Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ. « Զայս խորհեսցի իւրաքանչիւր ոք որ է 'ի Քրիստոս Յիսուս. որ 'ի կերպարանն Աստուծոյ ոչ յափշտակութիւն համարեցաւ ... զինչ աղքատագոյն 'ի վերայ Աստուծոյ քան զծառային կերպարանս » :

10.° Ամփիլոքի եպիսկոպոսի Իկոնիացւոյ. « Վասն զի նոյն ինքն Թագաւոր է և Աստուած. և զմահ ըստ անաւրէնութեան չարչարանացն ճաշակեաց. ընծայքն՝ խորհրդոցն են նշանակք » :

Նորին. « Եթէ ոչ էր նորա ծնեալ մարմնապէս, և ոչ դու ծնանէիր հոգեպէս. եթէ ոչ էր նորա յանձն առեալ զծառայի կերպարանս, և ոչ դու զփառս որդեգրութեանն շահէիր » :

11.° Գրիգորի եպիսկոպոսի Նազիանզու. « Մի խաբեսցեն զմարդիկ ; և մի խաբեսցին մարդ անմիտ ընդունելով զանէրունականն և որ զկնի նորին » :

12.° Յոհաննու եպիսկոպոսի Կոստանդինուպօլսի. « Փոխանակ արեգական՝ զարեգակն արդարութեան պատմագրապէս առեալ. և մի խնդրեր թէ որպէս կամ զիարդ » :

13.° Ատտիկոսի եպիսկոպոսի Կոստանդնի". « Այսաւր Քրիստոս մերն զմարդասիրութեան ծնունդն ընդգալաւ. եթէ զոք որոշեաց 'ի միածնին մարդանալն և կուսին յղանալն » :

— Այսորքին գլուխք ընթերցան յԵփեսոսացւոց ժողովն 'ի լուծումն Նեստորի: —

14.° Յիտուղոյ եպիսկոպոսի. « Անմանանուշակ ան-անջատելի բաղդատութեամբ, մշտնջենական ունողի հանգիստութիւն որակութեան հայրունակ գծաւորութեան » :

15.° *Երանելոյն Երեմիոսի*. « Ընդունայն և սնոտի են ամենեքին որ զամենայն տնօրէնութիւնն անարգեն զԱստուծոյ, և զմարմնոյս փրկութիւն ուրանան » :

16.° *Սրբոյն Եփրեմի*. « Ապաստաւորեաց կոյսն 'ի ձեռն անապականութեանն Քրիստոսի. պահեաց միշտ զկուսութիւնն, վասն զի միշտ անապականութեան փափաքեաց » :

— *Նորին 'ի բանին որ յաղագս մարգարտին*. « Միայն կին ծնաւ, զի օտար էր ապականութեան. ծնեալ կոյս ծնաւ վասն այնր որ էր սրբութեան աղբիւր » :

17.° *Սրբոյն Աթանասի եպիսկոպոսի Աղեքսանդրու*. « Ոչինչ ապականէ զհոգի և զմարմին, բայց մեղք. իսկ ապա անհաստատու մարմնաւորութիւն Էմմանուէլի՝ որ 'ի Մարիամայ աստուածածնէ »* :

* Ի ձեռագրի Լամբր. յիշատակարան. « Զարուստ և անարժան շնորհաց իմոյ Ներսէս որ ըղձալի սիրով սկիզբն արարի սրբոյ մատենիս և ձեռամբ իմ աւարտեցի. յետ մեր վայելողք արժանի արարէք յիշատակի առաջի Աստուծոյ աղաւթիւք. 'ի թուին ՈԻԴ » :

— Սիրելեաց և փափագողաց Անաստասու և Մարտինեայ Յովհաննու և այլոց ուղղափառ հարց միաբանակեցաց և որոց ընդ ձեզ միաբանական ճգնիլն վասն հաւատոյ Աստուծոյ սերտացելոց Կիւրղի եպիսկոպոսի 'ի տէր խնդալ. (Τοῖς ἀγαπητοῖς, καὶ ποθεινοτάτοις, Ἀναστασίῳ, Ἀλεξάνδρῳ, Μαρτινιανῷ, Ἰωαννῇ ... Κύριλλος ἐν Κυρίῳ χαίρε). « Զուսումնասիրութիւն և ջանասիրութիւնդ ձերոյդ սիրոյ և այժմ ոչ փոքր գովեցից. և արժանի ասացից գոլ ամենայն բանի » :

— Մեկնութիւն հաւատոյն որ յընդհանրական եկեղեցիս միշտն ասի, զոր կարգեցին սուրբ հարքն 'ի Նիկիացւոց ժողովին. (Explication de Symbole du

premier Concile en Nicée). « Հաւատամք 'ի մի աստուած հայր ամենակալ, ամենայն երևելեաց և աներևութից արարիչ. և 'ի մի տէր Յիսուս Քրիստոս » ։

Գրչագիրք կը յաւելուն տակէն հետևեալ յիշատակարանն. « Ի վերջ հազարերորդի երկերիւրերորդի քսաներորդի չորրորդի ամի արարածոց աշխարհիս, ըստ յունարէն Թըւոյ՝ 'ի չորեքտասաներորդի ենդիկտիոնի՝ յերկրորդ ամի Թագաւորութեան Անաստասի, Թարգմանեցան գիրքս Պարապմանց և Թղթոց սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետին Աղեքսանդրի 'ի տառս աւրինակաց, 'ի Կոստանդինուպաւլսի, 'ի ձեռն Դաւթի հիւպատոսի և Թագաւորական սեղանոյ կենսաւի, և 'ի ձեռն Ստեփանոսի քերթողի՝ աշակերտի Մովսէսի Սիւնեաց եպիսկոպոսի ։ Արդ մաղթեմ զաստուածասէր պաշտաւնէսդ սրբոյ սեղանոյ, ոյք առնույք աւրինակ յայսմանէ, գրեսջիք և զբանս զայսոսիկ, առ 'ի յիշատակ բարեխաւսութեան առ Քրիստոս. զի գրեալ եղիջիք և դուք 'ի դպրութեան կենաց » ։ Աւելի կրասերագոյն ժամանակաց գրիչք կը յաւելուն. « Ընդ նմին և զառաքելաշնորհ բարունապետն զՅովհաննէս Որոտնեցի, մականուն՝ կախեալ 'ի սէրն Աստուծոյ, աղաչեմ յիշել յաղաւթս հանդերձ ծնաւղաւքն » ... ։

Կը կարդանք առ Ուռպելեան Ստեփանոս պատմիչէ. « Համբաւ իմաստից նորա (Սիւնեցւոյն) հասանէ յականջս կայսերն, և կոչեալ հարցանէր զնա վասն հաւատոյ. և նորա համարձակեալ ասէ. Ով բարերար արքայ, հրամայեա զի բացցեն արկեղք գրոցն՝ զի ես գտանիցեմ անդ գիրս՝ որ ցուցանէ զորպիսութիւն հաւատոյ ուղղափառ. և առժամայն հրամայեցաւ բանալ ։ Եւ նա գտեալ անդ մատեան ոսկեդրուագ սուրբ հարցն վասն ուղղափառ հաւատոյ՝ գըրեալ և մատոյց առաջի Թագաւորին. որում հաւանեալ յոյժ՝ խրախացաւ և ասէ. Դուք Հայք զայս

հաւատս ունիք։ Ասէ, Այո՛։ Ասէ կայսր. Երթ 'ի Հռոմ, և տես անդ յարկեղս մեծի եկեղեցւոյն. եթէ գտանես այլ եւս երիս գիրս որպէս զայդ. ապա զամենայն աշխարհ յայդ կրօնս դարձուցից։ Եւ նորա յոյժ խրախացեալ ընդ իրսն, աստուածային իմն տեսչութիւն համարելով՝ գնայ 'ի Հռոմ, և գտանէ անդ այլ եւս երիս մատեանս միաբանս և միախորհուրդ նմին առաջնոյն, որք էին Գարապամանց Կիւրեղ և Գանձուց, և միւս՝ Աթանասիոս Աղեքսանդրացի. և միւս՝ սրբոյն Եպիփանու տարցեալ։ Առեալ զգանձն աստուածային՝ ծանեաւ հոգւոյն զի ոչ լինէր խորհուրդ Թագաւորին, ոչ գտանայր անդրէն. այլ նաւեալ 'ի Հռոմայ՝ անցանէ ընդ անհուն ապարապեղս լայնածիր գոգցյ աշխարհածաւալ ծովուն ովկիանոսն, և հասանէ 'ի Դուին »։

— Երանելւոյն Կիւրղի եպիսկոպոսին Աղեքսանդրի խաւսք 'ի սուրբ Աստուածածինն ասացեալ 'ի ժողովն Եփեսոսի ընդդէմ չարափառին Նեստորի. (այլ ձձ. ընդդէմ մարդապաշտին Նեստորի). (Κυριλλοῦ ... ἐγκώμιον εἰς τὴν ἁγίαν Μαρίαν τὴν Θεοτόκον). « Պայծառ է մեզ բանս և շնորհաւք լցեալ. վասն զի պայծառ է և սուրբ հարանցս հաւաքումն. և վասն զի 'ի յոյժ տրտմութեան էի, վասն անաւրէն հայհոյութեանն Նեստորի »*։

* Հին և ընտիր թարգմանութիւն՝ անշուշտ հինգերորդ դարու մեր մատենագրութեան։

— Նորին 'ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ ընդդէմ Նեստորի. « Պայծառ տեսանեմ զխաւսակցութիւն »։

— Կիւրղի Աղեքսանդրացւոյ հայրապետի յԵփեսացւոց թղթոյն մեկնութենէ. « Զի ոչ ամենայն զաւրութեանց երկնաւորաց յայտնի էր 'ի սկզբանէ խորհուրդ մարդանալոյ՝ փրկութեանս մերոյ ցուցանէ հմուտն և տեղեակն դրոց երանելին Պաւղոս »։

— Երրորդ Կիւրղի եպիսկոպոսի առ Նեստոր զի տայր նմա տեղի ապաշխարութեան, յառաջ քան զմերժիլն նորա յեպիսկոպոսութենէն. զի չեւ եւս էր լեալ սուրբ ժողովն, որ կամաւքն Աստուածոյ ժողովեցան յԵփեսոս։ Թուղթ Կիւրղի առ Նեստոր. (Lettre de Cyrille à Nestorius, et les douze chapîtres des anathèmes). « Առ սուրբ և աստուածապաշտ և պաշտօնակից մեր Նեստոր, Կիւրղոս, և ամենայն որք ժողովեալք են ընդ մեզ յԱղեքսանդրիայ 'ի կողմանց և 'ի բնակութենէ Եգիպտացւոց, ողջոյն։ Փրկչին մերոյ ասացեալ է յայտնապէս. եթէ որ սիրէ զհայր իւր կամ զմայր առաւել քան զիս՝ ոչ է ինձ արժանի » ։ (Յորում և գլուխք երկոտասան նզովից)։

— Նորին Կիւրղի եպիսկոպոսի Աղեքսանդրացւոց առ Նեստոր հայհոյիչ. (Lettre du même au même). « Ամենայն ինչ յայտնի և ուղիղ է իմաստնոց, և որք գտանեն զգիտութիւն, որպէս և գրեալ է » ։

Այս յիշատակարան ինքնագիր 'ի սորոյ Լամբրունեցւոյն. « Փառք ամենասուրբ Երրորդութեանն, ամէն. Ի թուիս ՈԻԴ աւարտեցաւ հինն հաւատոյ գիրս Պարապմանց՝ զոր իմ Ներսիսի արուալ և անարժան բանաւորի 'ի վարժուածն իմաստից գոլով ընթերցաւ ընդ բաղում բանս որոց և զսորայն Կիւրղի քննութիւնս ուղղափառ հաւատոյ. և 'ի դիպող ժամանակի եկեալ 'ի հայրենի աշխարհս սկիզբն ետու առնել սմին 'ի ձեռն պաշտօնակցի եղբաւր մեր Յովսեփայ, և ձեռամբ իմով աւարտեցաւ 'ի գըլձուձ և մրջնաւեալ աւուրնակէ. ընդ որ յոյժ գոհանեմ և զաւգտակարն աւրէնս եկեղեցւոյ » ։

— Երանելոյն առեալ սրբոյն Կիւրղի եպիսկոպոսապետի Աղեքսանդրացւոյ գիրք որոյ անուն Գանձ է. (Κυριλλοῦ ... ἡ βίβλος τῶν Τησαύρων). « Ոչ 'ի փոքունս մեզ հանդէսս ձեռնարկել պարտ է, զոր քո բանդ-

հաւանեցուցանէ զմեզ ամ ջանասէր եղբայր մեր Նեմեսինէ»:

— Առաջին յաղագս անծնելութեան և ծնելութեան, անեղութեան և եղելութեան. «Թէ հարցանել զմեզ Հեռանարկէյեն Արիանոսքն թէ մի՞ է անեղութիւն թէ երկու» * :

* Ի գրչագրին որ կազմեալ է սրբոյ Կիւրղի Պարապմանց գրքին հետ գրչագրելոյ 'ի սրբոյ Լամբրոնեցւոյ՝ յիշատակարան 'ի վերջն. «Գրեցաւ սուրբ գիրքս որ կոչի Պարապմունք զոր արարեալ է սըրբոյն Կիւրղի հայրապետին Աղեքսանդրու վասն մարդեղութեան բանին Աստուծոյ. այլ և 'ի չար սորա գիրք Գանձուցն զոր արարեալ նմին երանելոյն սըրբոյն Կիւրղի: Ձեռամբ տէր Վարդան քահանային 'ի գեւղս որ կոչի Աւընգանց 'ի դուռն սրբոյն Պետրոսի և Պաւղոսի առաքելոցն 'ի հանգէտ Սպարանից սուրբ Նշանին. 'ի վայելումն անձին քաջ րաբունապետին Վարդան քաջ և արի հաւատորի ... 'ի թվականիս մերոյ ՈՃԻԳ ամին»:

— ** Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրու հայրապետի վասն յարութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. (Sur la résurrection de N. S.). «Արդ պահելով զաւուրս յորում մատնեցաւ, և մատնեցաւ 'ի չորեքտասաներորդի լուսնին, յառաջնում ամսեանն, և մեամբ յարութեան նորա. այսինքն կիւրակէին»:

— ** Սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ ասացեալ. «Քանզի յորժամ զպատարագն մատուցանեմք, յիշեմք 'ի Քրիստոս զննջեցեալսն. զհայրապետս, զեպիսկոպոսունս, միանգամայն և զամենայն հաւատացեալս 'ի Քրիստոս»:

— ** Կիւրղի և Վաղենդիանոսի հերեսիովտի. «Կիւրեղ ասէ. Դու զՋուրս արարած ասես թէ ոչ: Վաղենդինոս ասէ. Ես զարարիչն ոչ գիտեմ»:

— Աղաւթք՝ սրբոյն Կիւրղի Աղեքսանդրացւոյ ա-

ասացեալ է վասն զղջման և արտասուաց. (Prières). « *Ամենակալ տէր, արարիչ և ստեղծիչ ամենայն համայնից, երևելեաց և աներևութից. դու ես իշխան մահու և կենաց* »:

— *Ի սուրբ խաչն.* (Sur la sainte Croix). « *Աւրհնեսցուք, եղբարք, զհրաշագործ անաւրէնութիւն* »:

— *Կաղանդացոյց՝ այսինքն ատումարական գուշակութիւնք ըստ սկզբան կաղանդաց՝ մակագրեալ յանուն սորին Կիւրղի, առանց գնելոյ Աղեքսանդրացի** :

* *Սորին Կիւրղի Պարապմանց գրոց հայ թարգմանութեան միակ տպագրութիւնն եղած է 'ի Պոլիս* (1717, *առ Աստուածատրոյ*), *յորում ամփոփուած են*

— Ա. *Պարապմանց, քսանևվեց գլուխք բանից, յաղագս մարդեղութեան միածնին:*

— Բ. *Թուղթ Տիբերեայ առ Կիւրեղ, ութսուն և ութ գլուխք:*

— Գ. *Կիւրղի լուծմունք խնդրոցն Տիբերեայ:*

— Դ. *Թուղթ առ Թէոդոս թագաւոր վասն զատկին:*

— Ե. *Թուղթ առ Եւդոկիա թագուհի, վեց գլուխք:*

— Զ. *Թուղթ առ քորս Թէոդոսի:*

— Է. *Թուղթ նորա այլ՝ առ Թէոդոս թագաւոր:*

— Ը. *Դարձեալ առ նոյն Թէոդոս թագաւոր յետ դառնալոյն 'ի ժողովոյն Եփեսոսի:*

— Թ. *Թուղթ Կիւրղի առ Երեմիա՛ ընդդէմ Նեստորի:*

— Ժ. *Թուղթ առ Սուկեսոս առաջին:*

— ԺԱ. *Թուղթ առ Սուկեսոս երկրորդ:*

— ԺԲ. *Թուղթ առ Նեստոր հայհոյիչ:*

— ԺԳ. *Թուղթ առ Ակակիոս Մելիտինոյ:*

Էջմիածնի Մատենադարանի ցուցակին մէջ Պարապմանց գրոց վեց գրչագիր նշանակուած կը գտնենք (Թիւ գրչ. 1754-59), որ չունին նշանաւոր հնութիւն, ընդհանրապէս եօթնեւտասներորդ դարու գրչութիւնք։ Նոյնպէս նաև Գանձոց, չորս գրչագիրք՝ նոյն դարուն։

ԿԻՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ

(SAINT CYRILLE DE JÉRUSALEM)

Կիւրեղ հայրապետ, յաջորդն Մաքսիմոսի յեպիսկոպոսութեան Երուսաղեմի, յառաջին քառորդի չորրորդ դարուն, անուանի առաքելաջան վաստակաց, հեղինակ է Կոչումն ընծայութեան կամ Յաղագս երախայից կոչուած գրքին, որուն հայկական ընտիր թարգմանութիւնն, գործ ոսկեդէն դարու, հասած է առ մեզ։ Մեր թարգմանութեան մէջ կը պակասին՝ վերջին հինգ ճառք, զորս ունի յոյնն։

Սրբոյն Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան (Κατήχησις)։

— Ա. Որք եկեալ էին կնքել անուն յԵրուսաղէմ մատուցելոց. և ընթերցուած յԵսայեայ որ ասէ. Լուացարուք, սրբեցարուք... «Աշակերտք նորոյ կտակարանաց, և խորհրդակիցք տեառն, այժմիկ հրաւիրեալք կոչմամբ, դարձեալ փոքր միւս եւս ժամանակաւ և շնորհաւք»։

— Բ. Վասն ապաշխարութեան և թողութեան մեղաց, և վասն սատանայի. և ընթերցուած յԵզեկիէլէ որ ասէ. Արդարութիւն արդարոյն 'ի վերայ նորին եղիցի... «Զար չար են մեղք, և անհնարին չար է ախտ ոգւոց. անաւրէնութիւն կարէ զնեարդս, և խզէ զջիլս նորա. և հրոյն յաւիտենից նպաստամատոյց լինի»։

— Գ. Ասացեալ վասն մկրտութեան. և ընթեր-ցեալ 'ի Հռովմայեցւոց թղթոյն որ ասէ, Թէ, Ոչ գիտէք, թէ որ միանգամ մկրտեցաք 'ի Քրիստոս, 'ի մահ նորա մկրտեցաք ... «Ուրախ լիցին եր-կինք, և ցնծասցէ երկիր, վասն այնորիկ որ ցողա-յիւն թաթաւելոց իցեն»:

— Դ. Ամ յափոյ վաղվաղակի առանց խորհրդոյ ասացեալ վասն տասնհրամանեան հաւատոյ. և ըն-թերցեալ 'ի Կողոսացւոց թղթոյ անտի որ ասէ. Զգոյշ լինիջիք, գուցէ ոք զձեզ կապտեա կողոպտու-թողուցու ճարտարաբանութեամբ ... «Զանայ նա-խանձի չարութիւն ընդ քաջութիւնն. և որոմն յա-ռաջ մատուցեալ բռնադատէ ցորենոյ կարծիս մա-տուցեալ»:

— Ե. Վասն հաւատոյ. և ընթերցեալ առաքե-լոյ յԵբրայեցւոց թղթոյ անտի, որ ասէ. Հաւատքն են, ասէ, հաստատութիւն իրաց յուսացելոց ... «Զորպիսի՞ պատիւ տայ ձեզ Աստուած, յերախա-յութեան կարգաց այտի՝ 'ի կարգս հաստատութեան հաւատացելոցն փոփոխելով»:

— Զ. Վասն Աստուծոյ միահեծան իշխանութեան, յայն որ ասէ՝ հաւատալ 'ի մի Աստուած. և ընթեր-ցեալ յԵսայեայ. Նորոգեցարուք առ իս կղզիք ... «Աւրհնեալ է Աստուած, և հայր տեառն մերոյ Յի-սուսի Քրիստոսի: Զի առ 'ի զմտաւ ածել զԱստու-ծոյ, զմտաւ ածցուք և զՀաւրէ, զի առանց բաժան-ման՝ Հաւր և Որդւոյ փառաւորութիւնն կատարես-ցի»:

— Է. Ի Հայր. և ընթերցեալ յԵփեսացւոց թղթոյ անտի. Վասն այսորիկ գնեմ ծունր առ հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ... «Արդ վասն տեառն միահեծան իշխանութեան յերկրի աւուրն բովանդակ 'ի մէնջ առ ձեզ ասացաւ»:

— Ը. Յամենակալն, և ընթերցեալ յԵրեմիայէ.

Աստուած մեծ խորհրդովք և հզաւր գործովք, ամենակալ մեծանուն տէր ... « Ի հաւատալոյ անտի յԱստուած՝ զամենայն բազմաստուածոյն մոլորութիւնս կարծեմք. զզէնս զայս առեալ՚ի ձեռն ունիմք առ հեթանոսս և առ ամենայն թշնամիս հերեսիովտացն զաւրութիւնս »։

— Բ. Յարարիչն երկնի և երկրի՝ երևոյթ և աներևոյթ արարածոց. և ընթերցուած Յովբայ որ ասէ. Ո՞վ է գա որ թաքուցանէ յինէն զխորհուրդս ... « Մարմնաւոր աչաւք տեսանել ումեք զԱստուած անհնար է. զի զանմարմինն մարմնաւոր աչաւք տեսանել ոք ոչ կարէ »։

— Գ. Յայն որ ասէ. Եւ ՚ի մի տէր Յիսուս Քրիստոս. և ընթերցուած ՚ի Կորնթացւոց թղթոյ անտի որ ասէ. Թէպէտ և իցեն աստուածք բազումք յերկինս և յերկրի, այլ մեզ մի է աստուած. « Ոչ եք ըղհաւատալն ՚ի մի աստուած Հայրն ամենակալ ուսուցեալ լինին, և յՈրդին միածին հաւատալ պարտին »։

— ԳԱ. Ի կարգ հաւատոյ բանին որ ասէ. յ՚Որդին Աստուծոյ միածին որ ՚ի Հաւրէ ծնեալ ... « Այս թէ ո՞րպէս և զի՞արդ ՚ի Քրիստոս Յիսուս յուսալ արժան է, բաւական համարիմ՝ որչափ յերեկն և յեռանդն ՚ի մէնջ առ ձեզ ասացաւ »։

— ԳԲ. Ասացեալ յայն՝ որ մարմնացաւն և մարդացաւ ... « Ծնունդք սրբութեան և զգաստութեան աշակերտք, որ ՚ի կուսէ անտի ծնանելոց էր Աստուած՝ սրբութեամբ և լի բերանով աւրհնեսցուք »։

— ԳԳ. Ի խաչեալն, ՚ի թաղեալն և ՚ի յարուցեալն ... « Պարծանք սրբութեան կաթուղիկէ եկեղեցւոյս են ամենայն գործք Քրիստոսի. և առաւել պարծանք պարծանաց խաչն »։

— ԳԴ. Յայն՝ որ յարեաւն ՚ի մեռելոց յերիր աւուր, և յերկինս համբարձեալ նստաւ ընդ աջմէ Հաւր ... « Ուրախ լեր Երուսաղէմ, և զուարթա-

ցարուք ամենեքեան որ սիրէքն զՑիսուս՝ զի յա-
րեաւ » :

— ԺԵ. Վասն այն զի ասէ. Այն որ գալոցն է փա-
ռօք Հօր, դատել զկենդանիս և զմեռեալս ...
« Զգալուստն Քրիստոսի պատմեմք ոչ մի միայն, այլ
երկուս, և զերկրորդն կարի լաւագոյն քան զառա-
ջինն » :

— ԺԶ. Եւ 'ի Հոգին սուրբ, որ խօսեցաւ 'ի մար-
գարէսն ... Շնորհք հոգեւորք ճշմարտիւ պիտոյ են,
զի վասն Հոգւոյն սրբոյ ճառեսցուք պատգամ. իբր
ոչ եթէ արժանապէս ինչ կարեմք ասել, զի անհնա-
րին է » :

— ԺԷ. Վասն Հոգւոյն սրբոյ մնացորդք ... « Այն
որ յառաջ քան զայս ճառ վկայութեան Հոգւոյն
սրբոյ փոքր 'ի շատէ եգաք առաջի ձերոյ սիրոյդ լսե-
լեաց » :

— ԺԸ. Վասն մերոյ կաթուղիկէ եկեղեցւոյ, և
վասն մարմնաւոր յարութեան և վասն կենացն յա-
ւիտենից ... « Արմատ ամենայն բարեգործութեան՝
է յոյսն յարութեան. զի ակնկալութիւն վարձուցն
հատուցմանն՝ ընդարձակէ զոգիսն 'ի գործս բարու-
թեան » ,

— Կիւրղի Երուսաղեմացւոյ Թուղթ առ Կոստան-
դիանոս արքայ վասն երեւելոյ սուրբ նշանին յերկ-
նից. (Lettre de St. Cyrille à l'empereur Constan-
tin sur l'apparition de la sainte Croix). « Թագա-
ւորի աստուածասիրի և բարեպաշտի աւգոստոս
Կոստանդեայ, Կիւրղոս որ յԵրուսաղէմ եպիսկո-
պոս 'ի տէր խնդալ »* :

* Հին յիշատակագրի մը մէջ կը կարդանք. « Ամե-
նայայտ սուրբ նշանն փայլեաց 'ի յերկնից աստուա-
ծահրաշ ծագմամբ, լուսապայծառ քան զարեգակն
յաւուրս տաւնի սուրբ յայտնութեան տեառն 'ի
ժամանակս մեծին Կիւրղի, որ 'ի հեթանոսաց էր,

ինն և տասներորդ եպիսկոպոս ձեռնադրեցաւ յետ Նիկիայ ժողովոյն յառաջնորդութիւն. իսկ առաջին եպիսկոպոս յԵրուսաղէմ Յակոբոս եղբայր տեառն ձեռնադրեցաւ 'ի Քրիստոսէ. և յետ սորա ...երանելին Կիւրեղ գրեաց Թուղթ առ Կոստանդին յորդի որդոյն և Մեծին Կոստանդիանոսի վասն երևման խաչին. զի Թէպէտև Արիոսի աղանդոյն էր Թագաւորն, սակայն բարեպաշտ զնա գրեաց ...

« Արդ երանելին Կիւրեղ ընթերցուած վարդապետութեանն, այն վերնագիրն որ վասն երախայից կարգեաց ընթերցուածս. քանզի հանդերձեալ էր յաւուրս Մեծի Ճրագալուցին կնիք առնուլ աւազանաւն վերածնել զնոսա և լուսաւորել. 'ի սկիզբն քառասնորդացն երախայացուցանէ զնոսա և ընդ ձեռամբ առնէ աղաւթից քահանայիցն, և ինքն վարդապետութեան պարապէ[1] » ... :

— ** Ճառք կամ հատուածք (Discoours ou fragments) բանից յանուն Երուսաղեմացւոյն 'ի Ճառընտիրս.

Ի Տեառնընդառաջն. « Անարատ և առանց աղտեղութեան » :

Ի Համբարձումն տեառն. « Արդ զընթացսն համբերութեամբ կատարեաց » :

Ի Հոգին սուրբ. « Շնորհք հոգևորք Ճշմարտի-պիտոյ են » :

Ի Նաւակատիս եկեղեցւոյ. « Յաղագս սուրբ և կաթուղիկէ եկեղեցւոյ » :

Ի Խաչն սուրբ և աստուածընկալ. « Պարծանք սրբութեան կաթուղիկէ եկեղեցւոյ » :

Հատուած մը 'ի Մեկնութենէն Եսայեայ, և աղօթք' այսպիսի խորագրով. « Կիւրղի Երուսաղեմացւոյ

[1] Կիւրղի Երուսաղեմացւոյ այս երկասիրութեան հայ Թարգմանութիւնը երկու տպագրութիւն ունեցած է : Տես ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ, յէջ 305:

յաղագս զղջման և ապաշխարութեան. Երկնչիմ 'ի մահուանէ՝ զի գան է ինձ »։

Պատասխանիք Կիւրղի Երուսաղեմացւոյ առ հարցմունս Աթանասի. (տես)։

ԿԻՒՐԻՈՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՎՐԱՑ

(CYRION, PATRIARCHE DES GÉORGIENS)

— Թղթակցութիւնք, (Correspondances) որ կը գտնուին 'ի գիրս Թղթոց, և առ Ուխտանէս պատմչի. և հաւանականաբար Թարգմանութիւնք են եօթներորդ դարու, անշուշտ 'ի սկզբնագրէն և կամ յասորականէ։

— ** Ա. Թուղթ տեառն Սմբատայ Վրկան մարզպանի առ Կիւրիոն Վրաց կաթուղիկոս. (Lettre du gouverneur Sempad Verghan à Cyrion, patriarche des Géorgiens). « Սրբասիրի տեառն Կիւրիոնի Վրաց կաթուղիկոսի և այլ եպիսկոպոսաց աթոռակցաց ձերոց, և իշխանաց աշխարհիդ. Ատրներսեհի և ամենայն լաւաց, 'ի Սմբատայ Գուրկան մարզպանէ և տերանց զինուորէ և 'ի Գիգայ Դաշտակարանէ... Քանզի յառաջագոյն հարանցն մերոց և ձերոց և վարդապետաց աշխարհիս միաբանութեամբ »։

— ** Պատասխանի. (La réponse de Cyrion). « Փառաւորելոյ տեառն Սմբատայ Գուրկան մարզպանի և տերանց զինուորի և Գիգայ Դաշտակարանի, և վարդապետի Հայոց Տարսաղարի. և այլ ազատորերոյ Հայոց աշխարհիդ, 'ի սրբոյ խաչէ աղաւթք. և 'ի Կիւրիոնէ Վրաց կաթուղիկոսէ, և յամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց ... ողջոյն։ Գոհանամ զամենասուրբ Երրորդութենէն որ զքեզ տէր Սմբատ 'ի ժամանակի յայսմ փորձութեան պատրաս-

տեաց 'ի բարեխաւսութիւն բարերար տերանց որ գոհ են զքէն» ։

— ** Բ. Թուղթ առաջին տեառն Աբրահամու կաթողիկոսի Հայոց առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս. (La première lettre d'Abraham, patriarche des Arméniens, à Cyrion, patriarche des Géorgiens). « Սրբասիրի տեառն Կիւրոնի Վրաց կաթողիկոսի, և այլ եպիսկոպոսաց աթոռակցաց քոց յԱբրահամէ Հայոց կաթողիկոսէ և յայլ եպիսկոպոսաց աթոռակցաց իմոց սերամբ ողջոյն ։ Ցառաջագոյն երանելի հայրապետն մեր Մովսէս գրեաց առ ձեզ միագրութիւն » ։

— ** Պատասխանի. (La réponse de Cyrion). « Սրբասիրի և պատուական տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի և ամենայն եպիսկոպոսաց աթոռակցաց քոց 'ի Կիւրիոնէ Վրաց կաթողիկոսէ ... Թուղթս զոր արարեալ էր տեսի, և զինչ գրեալ էր իմացայ՝ վասն արժանի լինելոյ տեառնդ զսուրբ աթոռ երանելոյն Գրիգորի ժառանգելոյ » ։

— ** Գ. Թուղթ երկրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրիոն Վրաց կաթողիկոս. (La secondc lettre d'Abraham à Cyrion). « Սրբասիրի տեառն Կիւրոնի Վրաց կաթողիկոսի յԱբրահամայ Հայոց կաթողիկոսէ սերամբ ողջոյն ։ Զգիր ողջունաբեր ձերոյ սրբութեանն ընկալաք. և որ գրեալ էր թէ ընդ նորոգութիւն սրբոյ աթոռոյդ տեառն Գրիգորի յոյժ խնդացաք » ։

— ** Պատասխանի. (La réponse de Cyrion). « Սրբոյ և ճշմարտի տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի 'ի Կիւրոնէ Վրաց կաթողիկոսէ խոնարհ երկրպագութիւն և սիրով ողջոյն ։ Զթուղթս ձեր տեսի, և զինչ գրեալ էր իմացայ. բայց թէպէտ և դու ինքն իսկ քաջ գիտես, սակայն յիշեցուցանել և մեզ չէ զիան » ։

— ** Գ. Թուղթ երրորդ տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի առ Կիւրիոն Վրաց կաթուղիկոս։ (Troisième lettre d'Abraham à Cyrion). «Զինչ առնեմք ով պատուական եղբայր զպատուածոյին պատուիրանացն զձայն որ միշտ բողոքէ մեզ. թէ զգոյշ կացէք հաւատոյդ՝ յորում եդ զձեզ հոգին սուրբ տեսուչս՝ հովուել զժողովուրդ տեառն»։

— ** Պատասխանի. (La réponse de Cyrion). «Սրբասիրի և Ճշմարտի տեառն Աբրահամու Հայոց կաթողիկոսի ՚ի Կիւրիոնէ Վրաց կաթողիկոսէ խոնարհութեամբ և սիրով ողջոյն։ Ահաւասիկ այս և ՚ի մեզ երրորդ թուղթ գրեցաւ. եպիսկոպոս էր ՚ի Հռոմ Կեղեստինոս, յԱղեքսանդրիա Կիւրեղ. յԱնտիոքիա Յոհան. յԵրուսաղէմ Յոբնաղ. ՚ի Կոստանդնուպօլիս երեւեցաւ գարշեալ այր մի որ ունէր պատիւ հովուութեան. բայց ճշմարտութեամբ ուրացող էր և անաւրէն որդի կորստեան և ժառանգ սատանայի, որում անուն կոչէր Նեստորիոս»։

ԿԼԻՄԱՔՈՍ (ՅՈՎՀԱՆՆԷՍ)

(JEAN CLIMAX)

Վեցերորդ դարուն առաջին քառորդին ծնած է Յովհաննէս՝ իւր գրոց անուամբը Կլիմաքս (Κλίμαξ) կամ Սանդուղք կոչուած։ Ինչպէս մեր ուրիշ թարգմանութեանց՝ ասանկ ալ այս երկասիրութեան ճիշդ ժամանակն չենք կրնար սահմանել. հաւանականաբար ութերորդ դարու կը վերաբերի։

«Սանդուխք աստուածային ելից. ՚ի գիրս կենաց գրին որք զանձինս յայս ճանապարհս դնեն, արութեան ընթացք աստուածային մատեանս այս առաջնորդ է։ Ի սմա յաջողեալ գտանին ձեռնարկողքն

անմոլար, և ամենեքին 'ի քարէ գայթակղութեանն անկարծան պահեսցին։ Սանդուղքս մեզ 'ի յերկրաւորէս 'ի սրբութիւնն երկնից. բարձրացեալ կանգնեալ կայ 'ի գլուխն՝ որպէս ինձ թուի՝ սանդղոցն՝ զոր խաբող ախտիցն Յակոբ 'ի հանգչելն բարեմտութեամբ ետես, ընդ որ ելցուք յաւժարութեամբ և հաւատովք, և յիմանալի այս և յերկնայինն ընթացիցս կեան ժամանեսցուք. իսկ այժմ յառաջին աստիճանս վարդապետէ զբարուցն և զատոյցն »։

— Յովհաննու առ Յովհաննէս ուրախ լինել. « Ընկալաք զվայելչուչն ազնուական և անախտ վարուցդ և մաքրութեամբ խոնարհեալ սրտիդ »։

— Սկիզբն հոգևոր տախտակիս գրոյ հաւատարական գեղեցկութեամբ հանդերձեալ, վկայութիւն ճշմարիտ վարուց բան կրաւնաւորական ազգայ Յովհաննու հաւր Սինեայ լերինն միանձանց. զոր հրամանաւ հաւր Յովհաննու Ռայիթու լերինն գրեաց և առ նա առաքեաց. « Բարւոյ և գերագունի բարւոյ՝ ամենաբարւոյ Աստուծոյ մերոյ և Թագաւորի ծառայի՝ առ ծառայակիցս »։

— Աստիճանն առաջին՝ յոր հեծեալն ոչ դարձցի յետս։ Վասն ցաւաւք և տրտմութեամբ հրաժարման յաշխարհէ։ « Որք ճշմարտութեամբ զՏէր սիրեսցեն, և ճշմարտութեամբ հանդերձեալ արքայութեանն հանդիպել փութասցին »։

— Երկրորդ աստիճան. ընդ որ ընթացողն՝ Ղովտայ, և ոչ կնոջն նմանեսցի։ Վասն աւտարութեան. և երազոց. « Աւտարութիւն է՝ թողուլն անդարձ զոր 'ի հայրենիսն, որք բարւոք տեսողականութեանն մեզ հակառակ առնեն »։

— Վասն երազոց որ զկնի աւտարութեան. « Որ մերս է գիտութեան միտք, անկատար է, և բազմօվքն ամենայն անգիտութեամբ լցեալ, և ծածկել դիւրին է »։

— Վկայութիւն վասն երանութեանց յիշատակեալ արթնութեան եւ ունկնդրութեան. «Ես որս բան մեր յաղօթս, նեղ եւ ըստ Քրիստոսի ձգնութեան հանդիպողութ, այսուհետեւ արձակի շատաւիղ»։

— Հինգերորդ աստիճան զորս աշխարհն ըստ հինգ զգայարանացն, մաքրէ պայծառացուցեալ, որք զանկանելոյն ինքնայաւժարութեամբ. կրեն զշարշարանս. վասն խոկման մահու. «Ամենայն բանի եւ մըտածութեան՝ նախապատիւ է խոկումն մահու եւ յանցանաց. եւ առաջին է լալոյ եւ գթոյ. Թէպէտեւ զկնի նորին բանս կարգեցաւ»։

— Վեց աստիճանաւ ելանէ, այնուհետեւ ոչ մեղանչէ. եւ դու ինքն յիշեայ զվերջինս քո, եւ բնաւ ոչ մեղիցես։ Վասն ուրախարար սգոյ. «Սուգ որ առ Աստուած իցէ՝ զտրտմութիւն ոգւոյ եւ զերկուսն արար փոխարէ. միշտ զզղջացումն ծարաւեալ խնդրեսցէ»։

— Աստիճան եւթն, յոր արժանացեալն՝ ինձ աւգնեսցէ, եւ ինքն աւգնեալ եղիցի։ Որ յեւթն աստիճան յաւիտենից այսմիկ ՚ի կործանմանէ պահեցաւ։ Նորին յաղագս անբարկութեան եւ հեզութեան. «Զոր աւրինակ զջուր՝ յառ սակաւ սակաւ հեղուլն ՚ի բոց՝ կատարելապէս զնոյն շիջուցանէ, այսպէս եւ ճշմարիտ սգոյ արտասուք զամենայն բոց սրտմտութեան եւ զառնամաղձութեան սպանանել գիտէ»։

— Ութ աստիճանս անբարկութեան կայ պսակ, որք ՚ի յիւրում նիւթիցն ամենայնի յաղթեաց որ ՚ի բնութիւնս սերմանի. վասն յիշաչարութեան. «Քանզի սուրբ առաքինութիւնն՝ սանդխոյն որ երեւեցաւ Յակոբու նմանեցաւ, եւ այն սուրբ չորից շղթայիցն որ անկաւ ՚ի Պետրոսէ գլխաւորէ»։

— Աստիճան ինն՝ որոյ առաջողքն համարձակ զլուծումն յանցանաց ՚ի փրկչէն մերմէ Աստուծոյ խնդրեսցեն։ Նորին՝ վասն մատնութեան. «Ոչ ոք յի-

մասանց այսմ հակառակ ասել ինձ թուի, եթէ ատելութիւն և յիշաչարութիւն զնմանութիւնն ծընանի »։

— Առաջին տասն, որոց յաղթողն զշատախօսութիւն 'ի գործ ածոյ և կամ սիրոյ։ — Նորին վասն շատախօսութեան. « Առաջս 'ի մէջ գուղեքքեայ սխալանք այնոցիկ որք դատեն և լեզուաւք տանիջեն »։

— Առաջին մետասան, որ յաղթէ բաղում շատեաց 'ի միասին զարգացելոց։ Վասն ստութեան. « Ծնունդ երկաթի և քարի հուր. ծնունդ շատախօսութեան և խեղկատակութեան ստութիւն »։

— Առաջին երկոտասան, յոր հեծեալն' արմատ զգեղեցիկ ստացաւ։ Նորին վասն ձանձրութեան. « Զի և այս պատառի 'ի բաղում իրս շատախօսութեան սաղարթ, և նախածնաւղ ամեն ձանձրութեան զստութիւնն »։

— Յաղթութիւն զոր որք ստացան ճշմարտութեամբ յամենայնի անփորձ մնացին։ Նորին վասն չարահամբաւ տիկնոջ որովայնի. « Հանդերձեալ իմ վասն որովայնի ասել, որ նախ սկիզբն եդ 'ի զամենայնն առանձին իմաստասիրել »։

— Արուութեամբ յաղթութիւնն' որ յայտ առնէ զանախտութիւնն, և 'ի լրումն իմաստութեան հասուցանէ։ Օրինակ մարմնաւորաց, անմարմնոցն վարք։ Նորին վասն ապականութեան վատտակոց 'ի յապականութեան քրտունք սրբութեան և իմաստութեան։ « Սրբութիւն իցէ անմարմնոցն բնութեան միաւորութիւն. սրբութիւն իցէ' տուն Քրիստոսի անփորձ, և երկնային սերտ երկրաւոր »։

— Պարգևք զորս որք 'ի մարմնի մեռան' ասին և յարեան, և զհանդերձեալ ապականութեան ամբենակն։ Նորին վասն արծաթսիրութեան. « Բաղումք որք զիմաստասիրականն վարդապետեցին, զնի նախագրեցելոցդ' զերկրորդս բիւրագլխի եդին »։

— Դարձեալ յաղթահարէ որ սէր սանձոյ, և 'ի հոգ. ներքին զարգանայ: Նորին վասն անստացուածութեան. «Անստացուածութիւնն է հոգոց 'ի բաց ընկեցումն. անհոգութիւն վարուց, ճանապարհորդութիւն անարգել, հաւատ ըստ պատուիրանաց, տըրտմութեան աւտարութիւն »:

— Թոշակն՝ որով ընթացք յերկնային մշանջենաւոր կեանսն յաջողի: Նորին վասն անզգայութեան և մեռելութեան հոգւոյ և մտաց՝ նախ քան զմեռանիլ մարմնոյն: «Անզգայութիւն է 'ի մարմնին և 'ի հոգի: Մեռանի զգայութիւնն՝ 'ի յաւել ցաւոցն պըղերգութեամբն, և յանզգայութիւն փոխի մարդ »:

— Վասն քնոյ և արթնութեան, և 'ի ժողովս սաղմոսերգութեան. «Քուն է էութիւն բնութեանս հանգստութիւն, պատկեր մահու, զգայութեանցս պարապումն »:

— Վասն մարմնական արթնութեան, և թէ որպէս 'ի նմա մտանել: (Վասն աղաւթից 'ի ժողովս). «Երկրաւոր թագաւորաց նուիրեալքն սպասաւորքն զանազան աւտակաւք կան առաջի, ոմանք խարազան կրելով և ոմանք զգահս »:

— Եղաւզն յաստիճանս առնու զպայծառութիւն լուսոյ 'ի սիրտ իւր: Վասն ծուլութեան և անարգութեան. «Ծուլութիւն է աղաւթական սովորութիւն 'ի սնափառութեան ծերացեալ անձն »:

— Վասն տղայական և անարի հեղգութեանց: Վասն բազմակերպ սնափառութեան: «Ոմանք 'ի կարգէ անգ զսնափառութիւն և զամբարտաւանութիւն ինքնահաճութիւն կամին սահմանել»:

— Նորին վասն ամբարտաւանութեան. «Ամբարտաւանութիւն է դիւաց գիւտ, բամբասանք մարդկան, դատապարտութեան մայր, օգնականութեանն Աստուծոյ փախուցիչ »:

— Աստիճան՝ յոր հեծեալն զաւրացաւ, և 'ի վե-

րայ եղեալ բարձրացաւ։ Ի վերայ անճառ խորհրդոցըն հայհոյութեան. « Դժնդակ արմատոյ՝ դժնդակ սաղարթ։ Լուաք զզազիր ամբարշտաւանութիւնն, անճառելի հայհոյութեանն է ծնաւղ»։

— Վասն հեզութեան և պարզութեան և անչարութեան. « Նախընթաց արեգական՝ առաւաւտ. և ամենայն խոնարհութեան՝ հեզութեանն ընթացք»։

— Նորին վասն ախտից կորստեան, և բարձր խոնարհութեամբ աներեւոյթ զգայութեամբ. « Յերոյն Աստուծոյ ուղղապէս, և խոնարհութեանն վայելչութեան, և երանելի ամբծութեանն պայծառութեան»։

— Աղբիւր և մայր խոր քննութիւն սուրբ բըղխման խոնարհութեան։ Ցաղագս քննութեան խորհրդոց և ախտից և առաքինութեան. « Քննութեան պարապել և ՚ի նոյն գեդերել՝ ընտրի գիտութիւն ճշմարիտ, որ է մէջ տիրապէս բարութեանն»։

— Նորին վասն քահանայականին այն հանդարտութեան հոգւոյ և մարմնոյ։ Միայնակեաց ասէ յոյժ հանդարտեալն է. « Մեք որ միշտ վաճառեալ և ծառայ եղեալ անսուրբ ախտից, և հնազանդեալք նմա. յայնմանէ զնենգութիւն և զաղգս և զկարգ, և զամենայն գործ և զքանխոնութիւն ծանեաք»։

— Վասն իւրաքանչիւր հանդարտելոցն զանազանութեան և գատողութեան և բացորոշողութեան. « Եւ այս եւս յայտնի ամենեցուն է՝ եթէ առ ամենայն արուեստս և գործս զանազանութիւն գոյ կամաց և խորհրդոց»։

— Նորին վասն քահանայական, և մաւր ամենայն առաքինութեանց երանելի աղաւթիցն, որ ՚ի նմա մտաւք և զգայարանաւք յառաջ կալոյ. «Աղաւթք է քնութեամբ իւրով միաւորութիւն մարդկան ընդ Աստուծոյ»։

— Նորին վասն ՚ի վերայ երկրի երկինք ստացու-

ծանման անախտութեան և կատարելութեան, և յարութեան հոգւոյ յառաջ քան զհասարակաց յարութիւն. «Ահաւասիկ մեք ստուգապէս եղեալք 'ի գուբս անգիտութեան խորին և մութն աղտից, և 'ի ստուերս մահու մարմնոյ մերոյ»։

— Յարուցանէ յերկրէ յերկինս զաղքատ միտս, և յաղբեւաց ախտից կանգնէ զպանդուխտս յերանելի անախտութիւն։ Իսկ ամենազօրելի աջրն տանէ զնա նստել ընդ իշխանապետս հրեշտակապետաց տեառն։ Նորին կապակցութեան առաքինութեանց՝ այսինքն Երրորդութեան առաքինութեանց. որ են Հաւատ, Յոյս և Սէր։ Իսկ արդ ստուգապէս լինի յառաջատացելոյն ամենեցուն՝ կան երկրորդքս այսաքիկ, որ զկապ ամենեցուն ապրեցուցանէն և զաւրացուցանէ»։

— Յառաջաբանութիւն Յովհաննու առ Յովհաննէս. «Յերկրաւոր և 'ի ներքին յայս գիր՝ ես զքեզ, ժմ զքանչելի, քան զամենեսեան յետոյ կարդեցի, իսկ 'ի վերին յերկնաւոր՝ հաւատամ զքեզ քան զամենեսեան զմեզ՝ 'ի գրեըն Աստուծոյ՝ յառաջագոյն գոլ»*։

* Գրչագիրք կը յաւելուն. «Կեանք և քաղաքավարութիւն երանելի սուրբ հաւրն մերոյ Յովհաննու հաւրն Սինէ՝ որ կոչի Կլեմաքս». յօրինեալ 'ի Դանիելէ Ռութայ՝ զոր յիշեցինք. և յետոյ իր միւս այլ երկասիրութիւնը. «Լուծմունք գժուարիմաց և նուրբ բանից որ կան 'ի գիրս յայս կոչեցեալ Կլիմաքս»։ Էջմիածնի Մատենադարանին մէջ վեց օրինակ կը գտնենք Մանրուսմունք գրոց (Թիւ 1890-95), յորոց հնագոյնն գրեալ 'ի Թուին Հայոց ՊԾ (1401)։ Երուսաղէմի Մատենադարանի մեր ձեռքն գտնուած անկատար ցուցակի մը մէջ Յովհաննու աստուածաբանի ընծայուած խրատական ընտիր և բազմիմաստ աղքատարարութեանց յիշատակութեան կը հանդի-

պքինք՝ ուղղեալ առ միանձնականս և անապատաւորս՝ հայերէն մաքուր ոճով և լեզուով, և Թարգմանութեամբ 'ի յունէ։ Հաւանօրէն Կղիմաքոսի է նաև այս երկասիրութիւն, սկզբնաւորութիւնն է. «Այս են բանք Ճշմարտութեան սուրբ հաւրն Յովհաննու առաւածաբանի, զոր ասացեալ է վասն միանձանց և անապատականաց, զոր ազդեաց 'ի նմա Հոգին սուրբ»։ Օրինակն գրչութեան է չորեքտասաներորդ դարու 'ի ՊԼ Թուականի Հայոց (1383). «Ի մայրաքաղաքիս, – որպէս կ'ազդէ յիշատակագիրն, – ընդ ափին նաւահանգստի ծովի զատին ազգաց իշխանութեան, ընդ հովանեաւ առ սուս սուրբ Յակոբայ 'ի Յանափպեկի տեղն»։ Բովանդակն են մատեան գլուխք բանից կամ ճառք, յորոց ոմանք Թուին ունենալ կրկին և իրարմէ բաւական տարբեր Թարգմանութիւնք։

Բանասիրաց հետաքննութեան համար դնենք անոնցմէ միկուն սկզբնաւորութիւնը, ամփոփելով 'ի ստորեւ իջիցն 'ի ծանօթութեան՝ նաև միւս Թարգմանութիւնն։

« Յայամ հետէ սիրս խնդրողացն ծառայել ուսանել զանէր · որոց յերևեցուցանել զերեսս իւր առէ, Եկայք առ իս աշխատեալք և ծանրաբեռինք. և ես հանգուցից զձեզ։ Արդ սգաւորք յայս ատաքձան ժամանեալք՝ ուրախ լերուք, զի Թեթևացաւ աշխատութիւն, բարձաւ երկիւղ չարութեանն. հանգաւեաց ոգի ձեր 'ի տրտմութեանց և կերակրի հոգևորական խոկմամբն, և 'ի նոյնն յայտնէ Հոգին սուրբ զծածկեալն, որով եկեսցէ հոգին 'ի տեսութիւն լուսոյ սրբոյ Երրորդութեանն [1] »։

[1] « Այսուհետև ուրախացի սիրս խնդրողաց տեսան իւրեանց, զի ծառայել է տեսանել զնա. և երևեցոյց զերեսս իւր ասելով ընդ նոսա. Եկայք առ իս աշխատեալք և ծանրաբեռինք, և ես հանգուցից զձեզ։ Ամենայն սգաւորք ուրախացիք

ԿՂԵՄԱՑ (Գ.) *քահանայապետի թուղթ առ Գրիգոր Տղայ կաթողիկոս.* (Lettre du pape Clément (III) à Grégoire Degha, patriarche des Arméniens). *սրբոյ Լամբրոնեցւոյն թարգմանութեամբ։*

**** ԿՈՍՏԱՆԴԻԱՆՈՍԻ** *թուղթ առ Շապուհ արքայ Պարսից.* (Lettre de l'empereur Constantin à Chabouh roi des Perses).

ՀԱՐԱՆՑ ՎԱՐՔ

(VIES DES SAINTS PÈRES)

Հարանց վարուց՝ կամ անոր զանազան մասանց՝ յորոց ձեւացած է, կրկին թարգմանութիւնք եղած են և կան մեր մատենագրութեան մէջ. յորոց մին հնագոյն և ազնուագոյն ոճովն և բովանդակութեամբ. և միւսն աւելի նոր դարուց մէջ եղած և մեր գրաբութեան արծաթի դարուն վերաբերելով, և անկէ ալ ասդին. որովհետև Լամբրոնացւոյն ժամանակ և իր ձեռքովը եղած կ'աւանդուի վերջին կարգաւորութիւնն և դասաւորութիւն գրոցս։ Նախնական թարգմանութեան քանի մը կարևորագոյն հատուածք՝ ինչուան հինգերորդ դարու հնութեան կ'ելլեն. լեզուն և ոճն ալ զայն կը հաւաստեն. այսպէս սրբոյն Անտոնի անապատականի վարուց պատմութիւնը, ինչ-

զի հատեալ է արտասուք ձեր 'ի տխրութեանց։ Երկիր է այս տունք հանգստեան ձերոյ. և բարձաւ 'ի ձէնջ երկիւղ չարութեան. և հանդարտեցան սիրտք ձեր 'ի տխրութեանց։ Երկիր է այս տունք, և բնակիչք նորա զկերակուր հոգևոր ուտեն և զըմպեն. և 'ի սոսա յայտնէ Հոգին տունք զծածկեալս։ Տեղի է բարձրեալ 'ի նմանութեանց. և սովոր եկեսցէ Հոգին առանել զայս նմանութեան ս։

պէս արդէն յիշատակած ենք [1]։ Իսկ Նոր մասին մէջ առնելի յետագայն դարուց հետք և նշմարք կ'երեւան, որոնց մէջ ընտրութիւն ընելը՝ առաջ քննադատութեան և լեզուի հմտութեան կը պատկանի։ Մեր մէջ բերած քանի մը յիշատակարանք՝ բաւական կ'օժանդակեն առ այս։

Այլևայլ տպագրութիւնք եղած են այս գրքին. ընտրելագոյն է 'ի մեր մամլոյ ընծայուածն, երկհատոր (1884). որոյ 'ի գլուխ գրուած հմուտ յառաջաբանին կը զրկենք զհետամուտ և զհետաքննին բանասիրութիւնն։

— Պատմութիւն և վարք սրբոց անապատաւոր Ճգնաւորաց։ – Վարք սրբոյն Պաւղոսի անապատականի. « Առ քաղուածս քաղուած անգամ խնդիր լինէր եթէ յում ումեքէ զառաջինն սկսաւ բնակել յանապատի » (Վրկին Թարգմանութիւնք. հին և նոր, տպագիր Վենետիկոյ, 1884, Հատ. Ա. 1)։

— Վարք երանելոյն Անտոնի եգիպտացւոյ միայնակեցի. Թուղթ Աթանասի. « Բարւոք է նախանձ առաքինութեան գնել ընդ միայնաւորս եգիպտացւոց, հաւասարել կամ առաւելուլ զորքոք կամեցեալ ըստ առաքինութեան ձերոյդ վարուց » ։ (Հին Թարգմ. Ա. 17)։

— Թուղթ Սերապիոնի սուրբ հօրն առ աշակերտս երանելւոյն Անտոնի առ Մակար և առ Ամոնաս. « Մեծ բարեխօս կորոյս աշխարհս, և մեծ մարդ ընկալան երկինք. եգիտ վերինն զոր խնդրէր. և կորոյս ներքինս զոր ունէր » ։ (Հին Թարգմ. Ա. 81)։

— Ճառ Պաւղոյ միայնակեցի. « Պաւղ էր այր հողագործ. և առաւել ամբիծ և անարատ և սուրբ վարուք. և մատաւոր կարգաց բարեաց, և ամուսնացեալ 'ի կարգս աշխարհիս » ։ (Հին և Նոր Թարգմ. Ա. 82)։

[1] Տես յէջ 286։

— Պատմութիւն սուրբ հօրն Մակարայ Եգիպտացւոյ. « Սկիզբն արդարոյաւք պատմել զվարս երանելոյն Մակարայ: Ես Կեղոն եղէ ընդ երանելոյն Մակարայ ամս քսան և երկու »: (Հին Թարգմ. Ա. 89):

— Վարք և կատարումն Յոհաննու Թեղբացւոյ և մարգարէի. « Տեսաք մեք յերկրին Թեբայեցւոց 'ի սահմանս Լիկիայ զմեծ զերանելին Յոհաննէս, այր սուրբ Ճշմարիտ լի առաքինութեամբ »: (Հին Թարգ. Ա. 97):

— Վարք երանելւոյն Յոհաննու Գրացւոյն. « Կին մի քրիստոսասէր, որում անուն էր Յուլիա, մեծատուն յոյժ. և էին նորա մանկունք երկու՝ Յոհաննէս և քոյր նորա Թեմեստիա »: (Հին և նոր Թարգմ. Ա. 113):

— Վարք երանելւոյն Յոհաննու որդւոյ Եւտրոպիոսի կամաւոր աղքատացելոյն վասն Քրիստոսի. « Յամս ժամանակաց Թագաւորութեանն Արկադեոսի որդւոյ մեծին Թէոդոսի և 'ի հայրապետութեան սրբոյն Յոհաննու Ոսկեբերանի »: (Հին Թարգմ. Ա. 126):

— Պատմութիւն յաղագս որդւոյ Թագաւորին Հռոմայեցւոց որոյ անուն կոչի Այր Աստուծոյ. « Այր մի Թագաւոր 'ի Հռոմ քաղաք, և անուն նորա Ոփոմիանոս և անուն կնոջ նորա Ախլայիս »: (Հին և նոր Թարգմ. Ա. 138):

— Վարք սրբոյն Սերեպիոնի ծերոյ. « Սերեպիոն այր երկիւղած և ազնուական՝ եղև միայնակեաց. և յաջողեալ էր նմա Աստուած յամենայն 'ի գործս »: (Հին Թարգմ. Ա. 162):

— Վարք և պատմութիւն սուրբ հօրն մերոյ Ոնոփրիոսի անապատականի զոր պատմեաց սուրբ հայրն Պափնուտիոս. « Ի միում աւուր փութացայ ընթանալ և լինել 'ի ներքսագոյն անապատն առ 'ի տեսա-

նել թէ ի՞նչ այլ ոմն եղբայր 'ի ծերքստագոյնն քան զիս ծառայել Աստուծոյ »* :

* Ի վերջն. « Զնորոգող և զթարգմանիչ սորա պատմութեանս զտէր Գրիգոր Հայոց կաթողիկոս յիշեսջիք 'ի Քրիստոս: Եւ թարգմանեցաւ 'ի թուականութեանս Հայոց ՇՄԹ ամին յաշխարհին Եգիպտացւոց 'ի փառս ամենասուրբ Երրորդութեանն »: Հաւանականաբար քեռորդի Վկայասիրին, և 'ի նմանէ գրուած յաթոռ եպիսկոպոսութեան յԵգիպտոս. որովհետև ինք յիշուած թուականին արդէն աւարտած էր իր աստուածահաճոյ կենացընթացքը:

— Վարք երանելւոյն աբբայ Մարկոսի և կատարումն նորին և խօսք առ Սերապիոն. « Պատմեաց մեզ երանելին Սերապիոն մինչ էրն 'ի մէջ Սկիւթեայ որ է յԵգիպտոս, առ 'ի վախճանել ծերոյն այնորիկ ասէ »: (Հին և Նոր Թարգմ. Ա. 188):

— Որ յերկրին Եգիպտացւոց հարանցն պատմութիւն. « Աւրհնեալ տէր աստուած, որ զամենայն մարդիկ կամի զի կեցցեն. և 'ի գիտութիւն ճշմարտութեան եկեսցեն »: (Հին Թարգմ. ըստ մեծի մասին Ա. 207, 270):

— Պատմութիւն անողորմ Պետրոսի մաքսաւորի. « Յափրիկեցւոց աշխարհէն էր ոմն մեծատուն յոյժ ստամբակ և անողորմ, անուն Պետրոս. և էր մաքսաւոր »: (Հին Թարգմ. 271):

— Վարք աղախնոյն Քրիստոսի Եփրոսինեայ. « Եւ էր այր ոմն մեծատուն յԱղեքսանդրիա քաղաքի. որում անուն էր Պափնուտիոս. յոյժ երկիւղած յԱստուծոյ և խնամատար պատուիրանաց նորա »: (Հին Թարգմ. Ա. 278):

— Վարք երանելւոյն Մարիամայ Եգիպտացւոյն. « Կինս այս պոռնիկ էր 'ի քաղաքէն Աղեքսանդրիայ եգիպտացւոց. ոչ 'ի մեծատան կամ յազնուական ազգէ, և էր յաւուրս քրիստոնէութեան »: (Հին Թարգմ. Ա. 207):

— Վարք և քաղաքավարութիւն Մարիամու Եգիպտացւոյ՝ որ 'ի պոռնկաց եղև սուրբ ճգնութեամբ յանապատի. « Զխորհուրդ թագաւորի 'ի ծածկել բարիոք է, և զգործս Աստուծոյ քարոզել փառաւորագոյն » ։ (Հին Թարգմ. Ա. 291)։

— Մնացորդք յերկրորդ թարգմանութենէ. Վարք Եւագրեայ երանելւոյ. « Ի բազում իրս, ով սիրելիք. կարի յոյժ զարմանալի և հաճախաւոր երևեալ վարուք հաւատարիմ ծառայն Աստուծոյ Եւագրիոս » ։ (Ա. 318)։

— Պատմութիւն վասն Պաւղոսի Լուսաւորացւոյ. « Պաւղոս ոմն 'ի Լուսաւորիոյ, որ էր պատուով 'ի Լուսաւորինոս, և էր այր սուրբ և մեծատուն յոյժ » ։ (Ա. 323)։

— Վարք երանելւոյն Սիմէոնի սիւնակեցի. « Երանելին Սիմէոն էր 'ի քաղաքէն Անտիոքայ Ասորւոց 'ի ժամանակս բարեպաշտ արքային Լևոնի » ։ (Ա. 324)։

— Վարք երանելւոյն Իլարիոնի կրօնաւորի. « Երջանիկ հայրն մեր Իլարիոն էր յաւուրս սրբոյն Կոստանդիանոսի » ։ (Ա. 327)։

— Վարք երանելւոյն Մարտիանոսի կրօնաւորի. « Ծառայն Աստուծոյ Մարտիանոս էր 'ի Կեսարիայ Պաղեստինեայ » ։ (Ա. 330)։

— Վասն բարձրամիտ անապատականին. « Պատմեաց մեծն և սուրբ հայրն Անտոնիոս եթէ եկն առ իս մի ոմն յանապատական միայնակեցացն ։ (Ա. 339)։

— Երանելւոյն Մակարիոսի որ քսան մղոնաւ մերձ դրախտին բնակէր, գրեաց զպատմութիւնս Թէոփիլոս կրօնաւորն. « Ի վանսն տեառն Ասկիդիոսի, որ է 'ի Միջագետս Ասորւոց, բնակէի ես Թէոփիլոս մեղաւոր կրօնաւոր » ։ (Ա. 340)։

— Վասն որք զդրախտին լեառն գտին և զստորոտին հասեալ տեսին. « Ի ժամանակս տեառն Ներսե-

ոփ Կլայեցւոյ Հայոց լուսաւոր վարդապետի. և կա-թողիկոսի » : (Ա. 348) :

— Վարք երանելւոյն Մարկոսի Սաւլոնի որ է յի-մար. « Սովորութիւն էր Սկիւթայ լերինն զի աւագ-հայրն 'ի տարւոջն միանգամ 'ի տէրունական տօնի իջանէր 'ի լեռնէն » : (Ա. 350) :

— Վարք երանելւոյն Սիմէոնի որ վասն Քրիստոսի աղուաշանայր և Յոհաննու անապատականի. « Սի-մէոն և Յոհաննէս էին յԱսորւոց յԵդեսիա քաղա-քէն, և Սիմէոն մայր միայն ունէր » : (Ա. 352) :

— Պատմութիւն որդւոյ Թագաւորին Հռոմայ ո-րոյ անուն էր Ներսէս, որ Թողեալ զամենայն կրօ-նաւորեցաւ 'ի վանս սուրբ հօրն Անտոնի. « Պատմել մեզ զվարս բարեպաշտիցն երկիւղ է. զուցէ յա-ռաքինութեան վարուցն նուազագոյն գոլ ասա-ցեալքն » : (Ա. 360) :

— Պատմութիւն և վարք երանելի կամաւոր աղ-քատացելոյն վասն Քրիստոսի որդւոյ Թագաւորին Հռոմոց. « Արք եղբարք և հարք, լուարուք զպատ-մութիւն առն Աստուծոյ որդւոյ Թագաւորին Հռո-մոց » : (Ա. 369) :

— Զեղջ և գործ Մովկիոսի խափշիկ աւազակին. « Յաւուրս բարեպաշտ արքային Մաւրկայ էր խափ-շիկ աւազակն 'ի սահմանս Տաւեփայ » : (Ա. 390) :

— Վարք աղախնոյն Աստուծոյ Թէոդորայ. « Յա-ւուրս Զենոնի արքային 'ի քաղաքին Աղեքսանդրիա էր Թէոդորա » : (Ա. 392) :

— Վարք երանուհի կուսին Մարիամու որ Մարի-նոս անուանեցաւ. « Էր այր մի 'ի Բիւթանիա, ո-րում անուն էր Եւգենոս, և ունէր կին » : (Ա. 402) :

— Զեղջ և ապաշխարութիւն Տայիսայ պոռնը-կին. « Եղբարք իմ մտերիմք, պատմեմ ձեզ զպան-չելի և զպայծառ ապաշխարութիւն Տայիսայ » : (Ա. 406) :

* Սորայն Իւլարիանի Ճգնաւորի վարուց հին և ընտիր Թարգմանութիւն մ՚այլ հասած է առ մեզ, և հրատարակեալ ՚ի շարս Հայկական Սոփերաց. (Հատ. ԻԲ.)։

— Բանք և պատմութիւնք սուրբ հարանցն և յառաջադիմութեամբ կատարութեան նոցա.

— Ա. Վասն կատարեալ առաքինութեանն. « Եղբայր ոմն եհարց ցաբբայ Անտոնիոս և ասէ. Զինչ պահեցից զի արժանի եղէց Աստուծոյ »։ (Հին և Նոր Թարգմ. Ա. 413)*։

* Այս հատընտիր քաղուածոց համար՝ ՊԽԲ թուականին գրուած օրինակ մը կը ծանուցանէ. « Ի վարուց սուրբ հարանց. զոր հաւաքեալ ՚ի բազմաց ՚ի մի սուրբ վարդապետին Վարդանայ, յաւգուտ անձնեկցուն որք կամիցին արտի մտօք ընթեռնուլ »։

— Բ. Վասն համբերութեան. « Եղբայր ոմն նստէր ՚ի խցի իւրում, և աերմաննեաց ՚ի նա սատանայ զի ելցէ ՚ի խցէն իւրմէ »։ (Հին և Նոր Թարգմ. Ա. 493)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. « Նստէր երբեմն հայրն Անտոնիոս յանապատի և տխրեալ ՚ի ձանձրութիւն մեծ »։ (Ա. 507).

— Գ. Վասն մտացութեան կամ զղջութեան և արտասուաց. « Ասաց աբբայ Անտոնիոս. առաջի աչաց ձերոց կալարուք զերկիւղն Աստուծոյ, յամենայնի յիշատակեալ զմահ »։ (Հին և Նոր Թարգմ. Ա. 518)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. « Ասէ հայրն Ամոնա. յորժամ նստցիս ՚ի սենեկի քո, ժողովեա զմիտս քո »։ (Ա. 552)։

— Դ. Վասն ժուժկալութեան ոչ միայն ՚ի կերակրոյ, այլ և յամենայնէ որ շարժէ զանձն. « Ծերք ոմանք երթային առ հայրն Անտոն և անդադար խօ-

մտքին 'ի գաղթից հարանցն որդւոց և յայլոց ինչ գիտելեաց » . (Հին և Նոր Թարգմ. Ա. 564):

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. « Աւեր հայրն Դանիել վասն հօրն Աբրահամու՝ եթէ այսքան ժամանակս եկաց ընդ մեզ, և մեք մի քաղցր ալեւր առնէաք նմա յամին » : (Ա. 588).

— Ե. Խրատք ուսուցչաց վասն զգուշութեան պահպանութեան՝ յորժամ կանգնի 'ի վերայ մեր մարտքն. « Ասէ աբբայ Անտոնիոս՝ եթէ մնամ եմ զի ունի մարմինս շարժումն բնական » : (Հին և Նոր Թարգմ. Ա. 597):

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. « Եղբայր ոմն եհարց զհայրն Ագաթոն վասն պոռնկութեան » : (Ա. 680):

— Զ. Վասն անփութութեան. « Եղբայր ոմն եթող զաշխարհս և ետ զինչս իւր աղքատաց » : (Հին և Նոր Թարգմ. Ա. 705):

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. « Ասէին վասն հօրն Ագաթոնի՝ եթէ զբաղեալ ասացս չինէր սննդեան ընդ աշակերտս իւր » : (Հին և Նոր Թարգմ. Ա. 717):

— Է. Վասն արիութեան և համբերութեան. « Եղբայր ոմն 'ի խուցն խռովէր, յորժամ նստէր առանձինն. և երթեալ առ այց հայրն Թէոդորոս Փերմեցի » : (Հին և Նոր Թարգմ. Հատ. Բ. 5):

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. « Գնացին երբեմն եղբարք առ հայրն Անտոնիոս, և ասեն ցնա. Ասասցես մեզ, հայր, բան ինչ որով կեցցուք » : (Բ. 28):

— Ը. Վասն ոչ առնել ինչ 'ի ցոյց մարդկան. « Լուաւ երբեմն աբբայն Անտոնիոս վասն ումեմն մանկան կրօնաւորի զի նշանս արար 'ի Ճանապարհին » : (Հին և Նոր Թարգմ. Բ. 55):

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն.

«Զեղբայր ոմն գովեցին առաջի հօրն Անտոնիոսի. իսկ նա փորձեաց զնա եթէ համբերել կարիցէ ար-համարհանաց»։ (Բ. 69)։

— Թ. Վասն դատելոյ. «Եղբօր ուրումն եղն փորձութիւն 'ի միաբանութեան հօրն Պիւթաւ. և որոշեալ անտի գնաց 'ի լեառնն առ աբբայն Ան-տոնիոս»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 75)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. «Մարգարէացաւ հայրն Անտոնիոս վասն հօրն Ա-մոնայ և ասէ՝ թէ յառաջէս գաս յերկիւղն Աստուա-ծոյ յոյժ»։ (Բ. 87)։

— Ժ. Վասն աստուածայնոյ և ուղիղ դատաստա-նի. «Ասաց հայրն Անտոն եթէ են մարդիկ որ չար-չարեն զանձինս իւրեանց կրօնաւորութեամբ»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 96)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. «Ա-սէ ոմն եղբայր ցհայրն Անտոն. աղօթեա վասն իմ հայր»։ (Բ. 155)։

— ԺԱ. Վասն արթուն և զգաստ լինելոյ. «Ասէր աբբայ Անտոնիոս. Տեսի միայնակեացս բազումս. բայց ընտրութեամբ սակաւս»։ (Հին և Նոր Թարգ-ման. Բ. 187)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէն. «Եղբայր ոմն աղաչէր զհայրն Արսենիոս լսել բան 'ի նմանէ»։ (Բ. 198)։

— ԺԲ. Վասն աղօթից. «Եկին երկու եղբարք առ հայրն Անտոն և հարցին զնա յաղեւտական գրոց»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 211)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ի բնակելոյն Եպիփանու կիպրացւոյ եպիսկոպոսի պա-տուէրեաց հայր վանից իւրոց»։ (Բ. 215)։

— ԺԳ. Վասն օտարասէր և ողորմած լինելոյ. «Նստէր ոմն ծեր ընդ եղբօր 'ի խցի կենակցու-թեամբ 'ի միասին, և էր ծերն յոյժ ողորմած»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 218)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ասաց հայրն Աղոնան վասն ընդունելութեան զեղբարս»։ (Բ. 242)։

— ծԹ. Վասն հնազանդութեան. «Երթեալ երբեմն չորք Սկիւթացիք առ երանելի հայրն Պամբով»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 251)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ասէ հայրն Անտոնիոս թէ հնազանդութիւն և պահք հնազանդեն զգազանս»։

— ծԵ. Վասն խոնարհութեան, «Աբբայ Անտոնիոս նայեցաւ 'ի խորս դատաստանին Աստուծոյ, խնդրեաց և ասէ»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 276)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Գնացին ոմանք 'ի հարցն առ հայրն Անտոնիոս. էր և հայրն Յովսէփ ընդ նոսա»։ (Բ. 312)։

— ծԶ. Վասն անյիշաչարութեան. «Պատմեաց ոմն թէ երբեմն փիլիսոփայք ոմանք կամէին փորձել զմիայնակեացսն»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 342)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ասաց հայրն Անտոնիոս. յորժամ ոք ծածկեսցէ զյանցանս ընկերին և զմեղս, և Աստուած ծածկեսցէ ըզմեղս նորա»։ (Բ. 340)։

— ծէ Վասն սիրելոյ զԱստուած և զընկերն. «Ասաց սուրբ հայրն մեր Պամփնուտի. մեծ քան զամենայն սէրն է. ոչ կայ իբրև զանձն դնել 'ի վերայ սիրելւոյ իւրոյ»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 353)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ասաց հայրն Անտոնիոս. Ես ոչ երկնչիմ յԱստուծոյ. այլ սիրեմ զնա. զի սէր արտաքս վարէ զերկիւղ»։ (Բ. 364)։

— ծԸ. Վասն հոգեւորս և նշանագրեաց հարց. «Եղբարց ոմանց դիպեցաւ նեղութիւն 'ի տեղւոջ իւրեանց»։ (Հին և Նոր Թարգմ. Բ. 374)։

— Մնացորդք յերկրորդ Թարգմանութենէ. «Ան-

տանիքսի հօրն յայտնեցաւ. երբեմն մինչ եր յանապատին՝ եթէ իցէ 'ի քաղաքին հաւասար քեզ բժիշկ ոմն » : (Բ. 437):

— Ժթ. Վասն քաղաքավարութեան հարցն. « Երբեմն հայրն Անտոն աղօթէր 'ի խրճիթին իւրում. և եկն առ նա ձայն որ ասէր » : (Հին և նոր Թարգմ. Բ. 483):

— Մնացորդք յերկրորդ թարգմանութենէ. « Ասաց հայրն Պիմէն. Երիս գործս ձգանց տաւեալ ունէր հայրն Պամբոյ » : (Բ. 488):

— Խրատք սուրբ հարանցն: Յաղագս համեստութեան սկսանակաց, և յաղագս կամեցողացն բնակել 'ի հաւասար կենցաղումն ուխտաւորաց և յաղագս մենաւորաց՝ Աւրելիոնի եպիսկոպոսի Թմուայեայ. « Ոչ կամիմ զձեզ անգիտանալ, եղբարք, զի 'ի սկզբանն յորժամ արար Աստուած զմարդն՝ եթող զնա 'ի դրախտին » : (Բ. 507):

— Յաղագս առաքինութեան. « Որ ոք պահէ զնոսա, կարէ ապրել 'ի գեհենէն. և հանգչի ուր և կամի բնակել » : (Բ. 522):

— Խրատք վասն երկիւղին Աստուծոյ. « Նայեա 'ի քեզ իբրև զճշմարիտ եթէ մեծ մահ կայ առաջի և կորուստ անձինդ » : (Բ. 527):

— Ի Թղթոյն Մովսէսի միայնակեցի ընդ առ Ամոնան խրատու. « Երկիւղն Աստուծոյ մերժէ զամենայն չարախօսութիւն. իսկ հեղգութիւն մերժէ զերկիւղն Աստուծոյ » : (Բ. 532):

— Ճառ աբբայ Մովսէսի վասն ոխակալութեան. « Եթէ ոք ածցէ յուշ զայն որ ոք խռովեցոյց զնա կամ բամբասեաց » : (Բ. 534):

— Բանք սրբոյն աբբայ Եփրեմի. « Վայ այնմ որ անհնար է. վայ անամօթիցն. վայ որկրամոլիցն » : (Բ. 537):

— Բանք սրբոյն Փելիքսիանոսի. (տես):

— Թուղթ՝ երանելի հօրն Մակարայ (կրկին Թարգման. Բ. 562)։

— Երանելւոյն Մակարայ գիտնաւորի բան. «Որոց լսեն զբանն Աստուծոյ և առնեն, բարի պտուղ ծնանի այսոքիկ են»։ (Բ. 570)։

— Առ հայրն Մակար հարցուածք վասն ողջախոհութեան խորհրդոց. «Արար Աստուած զմարդն և եդ զնա 'ի դրախտին փափկութեան»։ (Բ. 571)։ * Յովհանց Մանդակունի հայրապետին ընծայուած։

— Խօսք Եւագրիքեայ միայնակեցի. «Ասաց ծերն. որպէս առիւծ ահարկու է 'ի վերայ իշավայրեաց, նոյնպէս և միայնակեաց փորձ՝ խորհրդոց ցանկութեանց»։ (Բ. 591)։

— Պամբոնոսի միայնակեցի լուծումն հարցուածոյ և կամ 'ի վերայ անկուածոյ, և կամ վրիպեցելոյ 'ի պատաշաճ կենաց. «Քրիստոսի ուրեմն և Յակոբու մերձ բնակեցելոյ և գրացի համդիպեցաք»։ (Բ. 592)։

— Թուղթ սուրբ հօրն Ամոնի. «Հոգին սուրբ ուր և կամի հանգչի»։ (Բ. 597)։

— Նորին սուրբ հօրն Ամոնի այլ թուղթ. «Սիրելիք, տեսանեմ այժմ զի պտուղ ձեր ամենեքին կենդանի է»։ (Բ. 599)։

— Նորին սուրբ հօր այլ թուղթ. «Սիրելիք իմ 'ի տէր, գիտէք և դուք թէ յորժամ հեռանէ եղև յանցումն»։ (Բ. 602)։

— Վասն կարգի սրբութեան պաշտօնէից և մենկանց ուխտի. «Ջի եթէ ոք 'ի հաւատս կայցէ կամ միանակեաց լինել»։ (Բ. 604)։

— Թէ որպէս պարտ է սրբել զանձինս. «Եւ արդ բազումերկիւղիւ անձանց զգուշասցուք»։ (Բ. 606)։

— Յաղագս յիշելոյ զգործեցեալ զմեղս, թէ զինչ օրինակաւ առնելի է. «Եթէ ներեցէ յիշատակին՝ տրամութիւն բերելով, ընկալ և ազացիր»։ (Բ. 606)։

— Զարմանալիքը սուրբ հարցն. և փառաւորութեամբ. մեծափառացք. մի ինչ յայտնեալ: (Բ. 607):

— Խրատք ծերոյ մեծի. «Մեր անձն նստէր 'ի գե. ձի երանելւոյն Արսենի »: (Բ. 611):

— Մնացորդք չերկրորդ Թարգմանութեանն. Եւ բանից հօրն Յովհաննու Ոսկեբերանի վասն երկրպագութեանց եղբարց. «Այս էն վարք սրբոց սերկելեացն Աստուծոյ, զի մի լիցի հայհոյել անուն տեառն կամ անձն »: (Բ. 631):

— Խրատք սուրբ հարցն. «Որ ոք կամիցի Քրիստոսի Աստուծոյ հաճոյ լինել սպասաւորութեամբ »: (Բ. 633):

— Խրատք պէսպէս և քաղաքավարութեան սուրբ հարցն, որք Թարգմանեցան 'ի Սրբոցն մերայնակեցէ 'ի յոյն լեզուէ 'ի հայ բարբառ:

Յիշատակարան. «Յամի Թուականի Հայոց ՈԽԱ և 'ի հայրապետութեան Գրիգորի մականուանեցելոյ Տղղայի. և 'ի Թագաւորութեան Յովհաննու Իսահակայ 'ի Կոստանդնուպօլիս գրեցաւ վարք սրբոց հարցն և խրատք աւագանակացն և բանք վարդապետութեան լուսակէս որ գտաւ այժմ 'ի զանազան աւրինակս, 'ի մի հաւաքեալ, 'ի վանքս Սկեւռայ, ընդ հովանեաւ տեառն Աստուծոյ և փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի տանջանքի և մաւր Աստուածածնի և կենդանի պատուական սուրբ փայտիս. հրամանաւ Ճգնազգեաց եղբաւր մերոյ Խաչատրոյ. քանզի այս աստուածային այրս սաքրեաց զիմ տկարութիւնս, զհրամանկրաւն եղբաւրս իւր Գէորգեայ լինել գրիչ փոք անձնչանաց իւրոյ այսոս մատենիս. և ես ըստ յաւժարութեան նորա և ձեռնտուութեան ազատութեց, յանձն առի առնել քան զկար իմ. և շնորհիւն Աստուծոյ կատարեցի, ընդ ձեռամբ հոգևոր վերակացութեան տեառն իմոյ Ներսէսի արքեպիսկոպոսի սրբոյ, որ այժմ կայ 'ի գլուխ սուրբ և հռչակաւոր

այս ուխտին մատենութեան փափագելոյ, և հաւանէ զբ-մայրաքաղաքն Տարսոն հանգերձ գաւառաւք Կիլի-կիոյ։ Եւ քանզի այս սատանայական այր՝ ընթերցող գրոց Աստուծոյ և մեկնող, այլ և փափագանաւք 'ի միաբանն հաւատոյ, որոյ մեզ բայց այս Լատինացւոց կրօնաւորաց սովորութեան և մաքուր անձինն սրբու-թեանն պաշտաւնեայ, աշակերտական բանից, և նմանու-թեանն ընթացից, և բաղձանաց 'ի նոյն նկարագիր. որոյ և սա ըստ շնորհի իւրոյ ուսուցանէ մատենա-գրոց, հաւասար սեպհական իւրոյ և վարժապետի. և զայն 'ի նորին յօրինուածս և խրատու յաւուր աղօ-թեանն եւս գրել. քանզի միշտ լսէր 'ի վարդապետէ-ասխատաւ բանից նորին»։

Սրբոյ Լամբրոնեցւոյն համար կը վկայէ Գ. Սկեւ-ռացի. «Թարգմանութիւնս հանդերձեալ ասէ՝ զոր յայլազգ լեզուաց Թարգմանեալ՝ եկեղեցւոյ շնոր-հէր մանկանց. զվարս հարցն սրբոց, զհրատապանիս ձգնաւորաց»։

Լամբրոնացւոյն ձեռքով կամ վերատեսչութեամբ, 'ի յունէ կամ 'ի լատինէ Թարգմանուածը՝ 'ի շրջանէն Հայրանց վարուց նախնական հայ Թարգմանութեան, աշխատասիրութիւն է անանուն յունի մը, որուն չուն կը կը քաղէ Փոտ յիւրում Մատենադարանի, և նոյն ոճն ու դասաւորութիւնն ունի՝ ինչ որ հայերէն Լամբրոնեանն, այսպէս,

Ա. Յաղագս ուսման յառաջադիմութեան։ — Բ. Զի հանդար-տութենէ կամ 'ի լռութենէ ցուցանէ շահ։ — Գ. Յա-ղագս ժուժկալութեան, և թէ որպէս պարտ է զժուժկալու-թիւնն ոչ կերակրոյ միայն՝ այլ և այլոց շարժմանց հոգւոյն միանգամայն առնել։ — Դ. Թէ որպէս պարտ է մեզ զգուշանալ 'ի պատերազմաց յարուցելոց 'ի վերայ մեր։ — Ե. Վասն անըն-չութեան, և թէ որպէս պարտ է պահել զանձինս յանհոգութենէ։ — Զ. Վասն համբերութեան և արիութեան։ — Է. Թէ չէ պարտ առնել ինչ 'ի ցոյցս մարդկան։ — Ը. Վասն չպա-տել զոք, և այլն։

Յիշատակարան գրչագրին, որ կը Մխիթարայ [illegible]-րացնոյ ... «Գրեցաւ աստուածաշունչս, սուրբ հարցն մեր սուրբ կրօն(աւո)րացն խոշորատառ է, անյարմար գծիւ ձեռամբ ամենատկար և անտաշական գրագէ. Գրիգորի 'ի յաշխարհին Փռանկաց 'ի Սալըեան ընդ հովանեաւ սուրբ Մաթէոսի առաքելոյս Մաթէոսի 'ի Տօնին Հայոց, առ դրանս սորա Եղիշէի յամի յորում էր թուականն Հայոց ՉՂԲ. Արդ աղաչեմ չընթեռնուլ մեղադիր խոշորութեան և անյարմարութեան գրիս, զի արուեստաւոր ոչ եմ. բայց կարի խիստ ջանիւ գրեցի յընտիր և 'ի լաւ աւրինակէ։ Արդ գրեցաւ սա 'ի խոնարհ հոգի, որ են վասն անուան Քրիստոսի յանձն առեալ զաւտարութիւն և զպանդխտութիւն. որ և ընդ այլ բազում բարեգործութիւնան ստացաւ և զայս գեղեցիկ կտակս 'ի յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն ընտանեաց իւրոց, կենդանեաց և մեռելոց»։

Ուրիշ գրչագրի մը մէջ ալ որ 'ի մերում Մատենադարանի. «...Տնօրհնիւ տեառն կատարեցաւ... մատեանս աստուածային՝ վարք և խրատք հարց սըրբոց 'ի լաւ և ընտիր աւրինակէ, 'ի սուրբ քաղաքս Երուսաղէմ... ընդ յարկաւ սրբոյն Յակոբայ... 'ի Թվ" ՉՁԵ ... 'ի Թագաւորութեան Հայոց Լեւոնի, և 'ի հայրապետութեանն Յակովբայ, ձեռամբ մեղապարտ և անարժան յիշման՝ և ոչ գրչի, այլ Տապաթեփեցի» (Յովհաննու)։

Էջմիածնի Մատենադարանին տպագիր ցուցակին մէջ երեսուն թուով գրչագիրք կը նշանակին Հարանց վարուց (Թիւ 781–810)։ Ասոնցմէ միայն Թուական կը տրուի ՃԽԴ, որ վրիպակ կ'երեւնայ տպագրին. ասկէ ետքը հնագոյնն է ՊՁ Թուականն կրողը գրեալ «'Ի վանս Երերան»[1]։

[1] ՄԱՏԵՆԱԳԻՐ. ՀԱՅԿԱԿԱՆ, յէջ 337–339։

ՀԵՂԱՐԻՈՆ կամ ՀԻԼԱՐԻՈՆ (HILARION). — Սորայ երկասիրութիւն է պատմութիւն Աթանասե- նեայ եպիսկոպոսի Թարգմանեալ 'ի մեր նախնեացն. «Այս Հեղարիոն՝ լաւ և աստուածասէր, որ յայն- ժամ խորհրդականութեան գլխաւոր էր, որդի Հե- պատոսյ քահանայի (այլ որ. Հիպատարքեայ) մեծատո- հմի և պատուաւորի, որոնեալ ('ի մեր ազգ. որ պնեալ) ուսումն գլխոյ և ջերմեռանդութեամբ մեծայոյութեան սորայն Աթանասինէի. և ժողովեալ խնամակալու- թեամբ՝ Չքնաղափայլ գրոշմեաց զամենայն պատմու- թիւնս զայս. և այսպէս Թողթով ուղղափառաց ըն- ձեռնեցեալ։ Նոյն Հեղարիոնս այս խնդրեալ էր յեր- րանելոյն Աթանասինէ 'ի կենդանութեան իւրում՝ զի 'ի հնգից որհնութեանցն գլուխ՝ զոր արարեալ էր սորայն (երանելւոյն). և մինչև ցայսօր պաշտեն որդիքն և տունն Հեղարիոյ ամենայն 'ի մեծանոց վասն յիշատակի արդարութեան երանելւոյ Վեր- ջին »։

ՀԻՊՊՈՂԻՏՈՍ ԲՈՍՏՐԱՑԻ

(HYPPOLITE DE BOSTRES).

Հիպպողիտեայ և իւրն ընծայեալ գրուածոց և անոնց հարազատութեան վրայ շատերը գրած և վի- ճած են, յատուկ Նաւերիոսի և Հերգենրէթերայ. մինչև մեր ժամանակաց հմուտ քննադատք՝ Փիդրա, Հեր- կէնրէթեր, Տրլահար, Մէսմէր, Մարթէն և այլք։ Հայկական Թարգմանութեան մէջի պատանդածք՝ քա- նի մը հատուածք եղեն են, ընտիր ոճով և լեզուով. հինգերորդէն ութերորդ դարու մէջ եղած թարգմա- նութիւնք. զորս նախ հրատարակեց Փիդրա (Ana- lecta sacra Spicilegio Solesm. Հատ. Ա և Ե) 'ի

Փարիզ և 'ի Հռոմ. ընտանեկան թարգմանութեամբն և անանցեալ գաւառաբնակաց ծանօթութեամբք ալ՝ Մարթէնի. 'ի Փա-րիզ, 1883: Անագրական այլեայլ հաւաքածոյք ալ՝ Մէ-սինկէրի. Տիւպինկարանի և այլոց ձեռօք:

— * Յ'Երգս երգոց մեկնութենէն. (Fragment du commentaire des Cantiques de Salomon). « Ի գիշերի խնդրեցի զոր սիրեաց անձն իմ. խնդրեցի զնա և ոչ գտի. գտին զիս պահապանքն որ պահէին զքաղաքն ... Ո՜վ երջանիկ ձայն զարմանալի կանանցն 'ի վաղընջուց անտի յառաջնահայրական ցուցանելոյ »* :

* Bibliotheca Patrum, iv ; p. ii, 949).

— ** Երանելւոյն Հիպպողիտեայ Բոստրացւոյ 'ի մեկնութենէն՝ աւետարանին որ ըստ Յովհաննու, 'ի յարութիւնն Ղազարու. (Du commentaire de l'évangile selon St. Jean, sur la résurrection de Lazare). « Զոր աւրինակ մայր որդեկեր այս զատին-այն ցմանուկն » :

— ** Երանելւոյն Հիպպողիտեայ Բոստրացւոյ ե-պիսկոպոսի 'ի յարութիւնն Ղազարու. (Sur le même sujet). « Էր ոմն հիւանդացեալ Ղազարոս անուն 'ի Բեթանիա, 'ի գեղջէ Մարեմայ և Մարթայի քե-ռցն. բայց էր Մարիամն այս որ աւծ զտէր իւղով և մազերաց հերով իւրով զոտս նորա » :

— ** Երանելւոյն Հիպպողիտոսի Բոստրացւոյ հատուած 'ի ճառէն որ 'ի յարութիւնն Ղազարու. (Fragments sur le même sujet). Ա. « Զի ամենեքին իսկ ցուցցէ ճշմարտապէս մարդ գոլով անձս արդա-րութեան, և աստուածութեան պատիւ մարմնով անտեսութեանն երևեալ որպէս մարդ, և կերպա-կերպեալ իւրև զԱստուած » :

— ** Բ. « Հրամայեաց նոցին իսկ Հրէիցն ձե-ռաւք 'ի բաց թաւալեցուցանել զվէմն. զի ենդեանք վկայք եղիցին յինքն եղելոյ նշանացն » :

— ** Հիպպողիտեայ ասացեալ. « Վասն զի եթէ

անմահ և մահկանացու. որպէս Աստուած զմարդն մաք-
թացն առնել. ոմանք 'ի հարցն անմահ ասացին, հայե-
ցեալ յայն որ ասէն. Ես ասէի թէ աստուածք իցէք,
կամ որդիք բարձրելոյ » ։

— ** Հիւպպողիտայ եպիսկոպոսին (հատուածք).
* Իսկ որ երկու բնութիւն ասեն՝ գտանին ըստ նոցին
մասացն չորս ասարս ասել » ։

— ** Նորին. « Զմարդն ուսանց Աստուածոյ բանին
խոստովանել՝ և զնա չանդգնին. որ և խնդեանք ա-
գնապէին ասելով. Զի կայ մեր և քո որդի Աստու-
ծոյ, և աղաչէին իբրև զԱստուած » ։

— ** Նորին ասացեալ. « Ծնունդ արարած է և ոչ
չարչարի և ոչ խոցի. որչափ ես պատուել բանն Ա-
ստուած. և որչափ չարչարեցին զմարմինն Աստուծոյ՝
արարին զանարգանս » ։

— ** Հիւպպողիտոսի եպիսկոպոսի. « Իննամենայ
տէրն ծնաւ. (անհարազատ)։

— ** Յարհնութիւնան Յակովբայ որ զերկրոտա-
սան նահապետան աւրհնեաց. « Վասն աւրհնու-
թեանցն Յակովբայ աննելով բանս, ես զանեան աւր-
հնութիւնան խնդրեմ։ Քանզի ո՞ղջ 'ի մարդկանէ բա-
ւական է պատմել զհոգեկան ասացեալ զերս, եթէ
ոչ նմա երկնական իմաստութիւնն գործակից լիցի » ։

— Մեկնութիւն աւրհնութեանցն Մովսեսի յեր-
կոտասան ազգս. « Զերանելոյն Իսահակայ զեղեալ
աւրհնութիւնան առ որդիսն իւր յառաջին գիրս
պատմեալ, և զպատճառս անդ գործոցն եղելոց ա-
ւանեալ. և զՅակոբայն ես որ առ երկոտասան որդիսն
յիշեալ » * ։

* Կը յիշէ Վարդան վարդապետ, որ 'ի Հիւպպո-
ղիտեայ և յԵփրեմէ հաւաքեց զիւր մեկնութիւնն 'ի
վերայ Ննդամառենին։

— Մեկնութիւն Դանիէլի, յորմէ հատուածք ե-
ւեթ 'ի Ճառընտիրս։

— Վասն գալստեան Նեռին. «Եւ ահա գազանն չորրորդ»։

— Ի նոյն. «Բանքի երանելի մարգարէքն»*։

* Bibliotheca Patrum, xii; 587.

— Ի նոյն. «Բանքի տեառն Յիսուսի գալստեան»*։

* Bibliotheca Patrum, iv; p. ii, 949.

— Ի նոյն. «Եւ արդ լուարուք. եղբարք»*։

* Hippolyti episc. et martyris de consummatione mundi, ac de Antichristo et secundum adventum domini nostri J. Ch. Joanne Pico præside Sen. Par. interprete. Coloniæ, 1563. – Hippolyti martyris de Antichristo liber græce edente Marquardo Gudio. Parisiis, 1661.

— Բանք վասն տեառն ծննդեան և մկրտութեան. (անհարազատ)։

ՀՌՈՌՈՄՈՑ «Թուղթ առ Հայս յաղագս միաբանութեան հաւատոյ և համախոհ լինել Ժողովոյն Քաղկեդոնի և դաւանութեանն. բերեալ կայսերեայ կնքով տեառն Ստեփանոսի Սիւնեաց եպիսկոպոսի, որ վասն թարգմանութեանն գնացեալ էր 'ի Կոստանդնուպոլիս, զոր ոչ ընկալան Հայք»։ Ըստ այլ ձձ. «Թուղթ Հռոմայ 'ի Հայս, ձայնակից և համախոհ ժողովոյն Քաղկեդոնի և Տումարի հայհոյութեանն Լեւոնի. զոր տէր Ստեփանոս եբեր Սիւնեաց եպիսկոպոս յառաջ քան զեպիսկոպոսութիւնն իւր. որ վասն թարգմանութեան սրբագրենաց էր երթեալ 'ի քաղաքն Կոստանդնուպոլիս։ Իսկ նորա վասն միաբանութեան հաւատոյ 'ի ձեռն նորա գրեալ հայրապետին 'ի Հայս, և կապարով կնքեալ առաքեցին։ Զոր ոչ ընկալան Հայք. այլ յարքունական պողոտային արձանացեալ 'ի հայրապետի մերոյ սրբոյն Գրիգորի»։ (Յօրագիր Թղթոյ Ս. Գերմանոսի ըստ օր. մատենադարանի Մխիթարեանց 'ի Վիեննա. որ

և յաւելու. «Զաչիմ ամս ... Թագաւոր Հաւանի է գրած »):

ԶԻԱԴԱՐՄԱՆՈՒԹԻՒՆ. — « Այս խրատներս այլ՝ 'ի հնոյ պարզապատ չինելուն և մեծի տաղանդ էր գրած 'ի նոյն ժամանակաց Պարսից, զոր Թարգմանեաց Հեթում Թագաւորն Հայոց. յորժամ գնաց ծովն հեծելով 'ի վերայ Թշնամեացն տաճկաստանին, և կոտորեաց և աւերեաց զամենեսեան. և գնաց մեծապատուով 'ի Պաղտատ առ Ղանն խալիֆայն. և մեծ պարգևօք դարձաւ: Եւ ժամանակէր այն տարեկանաց Սանփանոս անուն գաւառ առ կայսրն, որ այսչափ աղջի աղջի գիր և լեզու ուսեալ, նման առաջին փիլիսոփայիցն, և ոչ կայր գիր որ առ նմա ոչ գտանէր. և նա սիրեցեալ եղև 'ի Հայոց Թագաւորէն վասն հըզօր գիտութեանն. և խնդրեաց յարքայէն, և նա Թարգմանել երեք գիրս. վասն Ձիոյ պայթարմանն և վասն Թրի շինելոյ և վասն արեգական և լուսնի արուեստին. և՝ բերեալ 'ի Հայոց աշխարհն »:

ՂԵՒՏԱԿԱՆԻ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ

(COMMENTAIRE SUR LE LEVITIQUE)

Հաւաքողն 'ի յառաջաբանին. «Վստահացեալ յանպատմելի զաւրութիւն բարերարին և մարդասիրին Աստուծոյ, որ և զմեր ակարութիւն զաւրացուցանէ. վասն զի 'ի գործ ածաք զոր առաջինս եգաք փոյթ. և զերկրորդ գիրսն աստուածայնոյն 'ի Մովսիսէ շարադրեալ զԵլն անուանեալն, 'ի ձեռն առաընթեր եղելոց մեկնութեան հաւատալ սկիզբն արարացուք, 'ի նորա զաւրութիւն յուսացեալք: Եւ երրորդ գրոցս՝ զՂևտականքս ասեմ. և պիտոյ է՝

որպէս և յառաջնոցն 'ի գիրսն ասացաք. ընթեր-ցողն զգիրս զայս գիտել եթէ 'ի բազում աշխատու-թեանց որդոցն և ուղղափառացն հարց: Եւ ոչ այս-չափ միայն, այլ և յանփորձիցն պատմողաց՝ և 'ի հեր-ձուածողացն մասին հանդիպեցելոյ, կան մեկնու-թիւնք որ պատշաճք են ուղիղ աւանդութեանց ե-կեղեցւոյ, 'ի հերձուածողաց ասացեալքն: Եւ զայս՝ մեք ոչ յանձնէ աւելորդաբանել, այլ հետեւել սրբոյ հաւրն մերոյ Կիւրղի Աղեքսանդրացւոյ. մեծի քա-ղաքին եպիսկոպոսապետի, ասացեալ 'ի թղթին որ առ Եւլոգիոս. թէ ոչ յամենայնէ զոր ասեն հեր-ձուածողքն՝ փախչել և հրաժարել պարտ է. քան-զի բազում ինչ խոստովանին՝ յորոց և մեք խոստո-վանիմք » : Ի վերջ գրոցն յիշատակարան համառօտ. « Կատարեցաւ Ղեւտական մեկնութիւնս 'ի ձեռն Նեստոր դպրի Գրիգորոյ. որք կարդայք և ուսանիք՝ անմոռաց յաղօթս յիշեսջիք, աղաչեմք » :

Իսկ յիշատակուած հարքն՝ որոց բանիւք խմբա-գրուած է այս մեկնութիւն, են Որոգինէս, Գրիգոր աստուածաբան, Յովհան Ոսկեբերան, Սեւերոս՝ Ան-տիոքու եպիսկոպոս, Սեւերիոս՝ 'ի թղթոյն առ Մի-սայէլ ներքինի, Եւսեբիոս Երուսաղեմացի եպիսկո-պոս, Կիւրեղ Աղեքսանդրու, Պողոքրոն (Πολυχρό-νιος), Թէոդորոս, և միւս ոմն աստանեբորդ:

ՂԻՆՈՍ ԿՐՕՆԱՒՈՐ

(LINUS, LE MOINE)

— « Գիր որ եղեւ առ 'ի Ղինոս կրօնաւորէ վասն հինգ պատրիարքաց աթոռոյ. թէ ո՞րք կամ ո՞րպէս հաստատեցաւ իւրաքանչիւրն պատրիարքաց աթոռ, և վասն կարգաց նոցին » : Իսկ բառ այլ ձձ. « Գիր

որ եղեւ առ 'ի Նիղոսէ կրօնաւորէ մակակոչեցեալ Դոքսապատրիա՝ 'ի խնդրոյ և հրամանաւ բարեպաշտ մեծի թագաւորին Ֆռանկաց. որ 'ի Սիկիլիա կղզին Ռուճերի. վասն հինգ պատրիարքացն աթոռոց »: (Մատենադ. Էջմիածնի թիւ 1654, ըստ հին դասակարգութեան, և 1656 ըստ նորոյն). Ոմանք եւս, « Նիղոսի կրօնաւորի վասն հնգից պատրիարքաց Աթոռոց, թարգմանութիւն 'ի Ներսիսէ եպիսկոպոսէ և 'ի Կոստանդիանոսէ մեծարգոյնէ »*:

* Կը յիշուի առ Յոյնս Nilus Doxapatrias որ գրուած մը ունի հինգ պատրիարքական աթոռոց վրայ, և հրատարակուած է տպագրութեամբ Տըմուանի (De Moine) ձեռքով 'ի 1685. նորագոյն տպագրութիւն մ'ալ 'ի Պէրլին (1866), Կիւսթավ Փէրթէյի աշխատասիրութեամբ, այսպիսի մակագրով. 'Hieroclis, Synecdemus et notitiæ grecæ episcopatum; accedunt Nili Doxapatrii notitia patriarchatum, et locorum, etc.

ՂՈՒԿԻՈՍԻ (LUCIUS III, PAPE), քահանայապետի Հռովմայ թուղթ առ Գրիգոր Տղայ կաթողիկոս Հայոց. Թարգմանութեամբ Ներսիսի Լամբրոնացւոյ:

ՄԱԿԱՐ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ. — (MACAIRE DE JÉRUSALEM). — Մակարայ Երուսաղեմի հայրապետի թուղթ առ Հայս, վասն կանոնագրութեան եկեղեցւոյ կարգաց, զոր չէ արժան ընդ սահման և ընդ կարգ անցանել. « Ահա վասն ահի և երկիւղի ». (գլուխք ինն):

ՄԱՐՈՒԹԱ. — (MARUTHA). — Մարութայի բանք. հարցմունք, և այլն. (Գոյ հատուած ինչ 'ի վկայութիւնս վասն բնութեան Քրիստոսի):

— Ի խորհուրդ Եկեղեցւոյ. « Եւ արար Բեսեղիէլ. — Արդ տապանակն յանփուտ փայտից 'ի խորհուրդ » և այլն:

— Ի խորհուրդ երեքշաբաթի. «Պիտոյ են հաւատք»:

— Վկայաբանութիւն սրբոյն Շմաւոնի եպիսկոպոսի Պարսից, և այլոց վկայից»*:

* Հրատարակեալ 'ի Ս. Ղազար 'ի շարս Հայկական Սոփերաց. Հատ. Ի:

— Մարութայի արքեպիսկոպոսի 'ի սուրբ յարութիւնն Քրիստոսի. «Յոյժ անպատուելի»: (Մատենագ. Ս. Երուսաղեմի, թիւ 442, 'ի մեծ Ճառընտրի գրչագրելոյ 'ի Յովհաննէ Երզնկացւոյ, 1417–1419):

ՄԱՔՍԻՄՈՍ ՓԻԼԻՍՈՓԱՅ.–(MAXIME, LE PHILOSOPHE).– Մաքսիմոս փիլիսոփայ և վկայ ապրեցաւ յեօթներորդ դարու: Եկեղեցւոյ վրայ յօրինած ճառին հին թարգմանութիւն մը կը գտնուի առ մեզ 'ի յունականէ՝ մթին և անսովոր ոճով, ու այսպիսի խորագրով. «Մաքսիմոսի փիլիսոփայի և մարտիրոսի, եթէ ո՛յց նշանակմունք (?) սրբոյ եկեղեցւոյ, ըստ աստուածայնոյն ժողովմամբ կատարեալքն զետեղին»: (Bibl. Patr. յոյն և լատ. Հատ. Բ. 489):

Sancti Maximi Scholia in Gregorium Theologum. Oxonii, 1681.

ՄԵԹՈՏԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(MÉTHODIUS, ÉVÊQUE)

ԶՄեթոտիոս եպիսկոպոս՝ Միխայէլ Ասորի 'ի ժամանակագրականսն կոչէ Մագիդիմոս, որ աղաւաղութիւն է անուանն. Լանկլուա գաղղիացի հայագէտ՝ 'ի ծանօթութիւնս թարգմանութեան Ասորւոյն հետեւեալ տեղեկութիւնները կու տայ անոր անձին վրայ, զոր իր խօսքերովը մէջ կը բերենք: Auteur de

beaucoup d'ouvrages, Méthodius n'a cependant pas composé tous les écrits qu'on lui attribue dans les anciennes Bibliothèques des Pères, et qui sont considerés comme apocryphes par les critiques. On n'est pas encore parvenu à déterminer au juste l'époque de la rédaction des prophéties qu'on lui attribue, et qui sont l'œuvre d'un anonyme qu'on a coutume de désigner sous le nom de Pseudo-Méthodius. (Monumenta Patrum ortodoxographa. Bâle, 1555. T. I, 95-115).

Իսկ Պրոսէ՝ միւս այլ հայագէտ գաղղիացի, 'ի գաղղիական Թարգմանութեան Սուրբ. Ուապելեան. Les œuvres de St. Méthode, dont la principale est le Banquet dialogué des Vierges, ont été publiées en grec et en latin par le P. Combefis, avec celles de S. Amphiloque. (Paris, 1644, 2 vol. in fol.). Le savant éditeur a refusé d'insérer dans ce recueil un opuscule généralement attribué au même saint, sous le titre de: Revelationes de rebus quæ ab initio mundi contingerunt et deinceps contingere debent, etc. ... ou Libellus S. Methodi martyris, episcopi Partinensis, (lisez Patarensis) ecclesiæ, provinciæ Græcorum, continens in se revelationes divinas, a sanctis angelis factas de principio mundi, et eradicatione variorum regnorum atque ultimis regis Romanorum gestis, et futuro triumpho in Turcas, atque de liberatione Christianorum ex oppressione Saracenorum ... Six éditions de ces prophéties ont été faites entre 1496 et 1516 ... Une autre, plus ancienne, est sans date; enfin il s'en trouve une dans la Max. Bibl. vet. Patr. conforme à celle de 1504. On n'en connaît pas de texte grec, mais ce texte a dû exister, car c'est très-probablement d'après une telle exemplaire que Steph. Siounetsi a fait sa traduction.

Quant à l'autenticité des révélations et prophéties, le doute exprimé par Bellarmin, *De Script Ecclesiasticis*, p. 67, par Henschenius *Acta Sanct.*, par la *Biographie Universelle* et le silence de S. Jerôme, sont de fortes raisons de la nier. Le P. Combefis, sans se prononcer directement, (*Bibl. Patr.* Venet., t. III, p. 669) paraît ne pas être partisan de cette œuvre, puisqu'il l'a exclue de son édition. D'autres pensent, sans preuve directe toutefois, que l'auteur des Révélations pourrait être St. Méthode, patriarche de Constantinople en 842, ou un autre, son homonyme, siégeant dans la même ville en 1240.

Փրիթեմիոս (Frithemius) յելս ԺԵ դարու 'ի շարակարգի եկեղեցական պատմչաց կը յիշէ և զՄեթոդ եպիսկոպոսի Պատարայ գիրս զվերջին ժամանակաց (*De Novissimis Temporibus*). Փաբրիկիոս ալ իրմէ յօրինուած Քրոնիկոնն որ գտանէր յունարէն, թէ և այժմ անծանօթ, և անվաւեր համարեալ: (*Annales de Philosoph. Chr.*, 1863 մարտ): Ի մեր մատենագրութեան՝ Մեթոդիոսի անուամբ գրուածոց հատուածք հետեւեալքն են՝ և որոց միոյն թարգմանիչ կը նշանակուի Ստեփաննոս Սիւնեաց՝ յութերորդ դարու:

— Մեթոդի եպիսկոպոսի տեսիլ յաղագս անցելոց ներկայից և ապառնեաց ասացուածք զոր թարգմանեալ է տեառն Ստեփաննոսի Սիւնեաց եպիսկոպոսի, յաստուածաշունչ գրոց. « Ի վերջնում դարի ուր արմատաքի խլեսցի թագաւորութիւն Պարսից » *:

* Bibl. Patr. յոյն և լատ. Հատ. Գ. 730:

— Սրբոյ հօրն մերոյ Մեթոդիոսի Պատարիունու եպիսկոպոսի՝ 'ի մեկնութենէ Դանիելի մարգարէին, զոր արար 'ի հետ բանից իւրոց. 'ի մեկնութենէ

անմոլեանն չորից հողմոյն և չորից գազանացն. առայգ պատմութիւն չորից ինքնակալ թագաւորացն, և վասն տիրելոյ հեթանոսացն, և յետին ժամանակին և նեղութեանցն որ լինելոց է. և վասն թագաւորացըն որ փոխադրեցան, և վասն գալստեան Քրիստոսի Աստուծոյ մերոյ: «Յորժամ Ադամ և Եւա ելեալ 'ի դրախտէն՝ կային գոլով. յետ երեսուն ամի ծնան զԿայէն և զքոյր նորա Քաղքանան. և յետ այլ եւս երեսուն ամի՝ ծնան զՀաբէլ և զԱղեւտովբա քոյր նորա »* :

* Bibl. Patr. Հատ. Գ. 731 :

ՄԵԼԻՏՈՍ ԱՆՏԻՈՔԱՑ. – (ST. MÉLITUS D'ANTIOCHE). – Երանելւոյն Մեղիտոսի Անտիոքայ եպիսկոպոսի 'ի լուացումն ոտից աշակերտացն. (Sur le lavement des pieds des Apôtres). «Այդ վասն զի ոչ կամեցաւ Երուսաղէմ ուրախ լինել ընդ գալուստ արարչին, ելաց զնա սիրով. և եհեղ արկ 'ի վերայ նորա զսուրբ զարտասուս իւր ջերմեռանդն գըթովք» :

ՄԵՂԻՏԷ. – (MÉLITUS). – Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբայ Մծբնայ հայրապետին, զոր գրեաց Մեղետէ աշակերտն Մարուգէի միայնակեցի. «Մովսէս աստուածային օրէնսգիրն » : *

* Հրատարակեալ 'ի շարս Հայկական Սրբերաց, 'ի Ս. Ղազար. Հատ. ԻԲ:

ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ

(MICHEL, LE SYRIEN)

Իրեն ընծայուած, ու հայկական տպագրութեամբ ու գաղղիարէն թարգմանութեամբ ուսումնական

աշխարհի արդէն քաղձանօթ պատմական երկասիրութեանս խորագիրն է. « Տեառն Միխայէլի պատրիարգի Ասորւոց համառօտ ժամանակաց գրոյցք քաղուածոյ արարեալ յոլովից պատմագրաց 'ի վարժըս բանասիրաց յԱդամայ հետէ մինչև ցյետին աւուրսն » : Ուրիշ ձեռագիր մը « ... բանասիրաց՝ պղամանակ տեղեկութեան յԱդամայ հետէ՝ մինչև յետին աւուրս թևացեալ » : Սկիզբն. « Եւ արդ լուսաւորուք ուսումնասէրք և աստուածասէրք կարաւտեալք գիտել ժամանակաց » : Երբեմն ալ այսպէս խորագրուած. « Պատմութիւն արարեալ պատրիարգին Ասորւոց Միխայէլի, զոր Վարդան վարդապետ Արևելցին փոխեալ էր յ'ասորի գրոց » :

Ցիշատակարան գրչագրին որ 'ի Ս. Յակոբ Երուսաղեմի : Ցանկոյն կը ծանօթարանէ. « Ի վերջ կոյս պատմութեանն յարէ զցանկ կաթողիկոսացն Հայոց 'ի սկզբանէ մինչև ցաւուրս իւր' 'ի տէր Ներսէս Կլայեցի : Եւ յետոյ Վարդան վարդապետ ոմն աննշան՝ շարունակէ մինչև 'ի Կոստանդին Ա. Բարձրբերդցի՝ հանդերձ հետադայ պատմական տեղեկութեամբք իւրոյ ժամանակին. — Տէր Կոստանդին՝ յերրորդ մտանէ Հայոց 'ի դղեկէ Բարձրբերդոյ որ նայի հարաւով 'ի դաշտն Կիւլիկիոյ, և 'ի ծովն Ադրիանու կոչեցեալ. որդի առն արդարոյ և խաղաղականի Վահրամ կոչեցելոյ, յորովայնէ ընտրեալ յաստիճան առաքելական 'ի հոգւոյն, և աւրինաւք նորին սնեալ և ըստ կարգի յամենայն գործս եկեղեցւոյ վարժեալ 'ի շնորհս քահանայութեան և յառաջնորդութիւն վանից և յեպիսկոպոսութեան տեսչութիւն. և յամենայնի ընտիր գտեալ և հանդիսացող : Վասն որոյ 'ի կատարման հոգևորական և մարմնաւորական հասակի, վկայութեամբ Աստուծոյ և մարդկան, մեծի դահոյի և աթոռոյ քահանայութեանս Հայաստանեայց՝ արժանաժառանգ լեալ 'ի շնորհէն.

և 'ի բնաւ լրմանէն եկեղեցւոյ բանադատեալ, ըստ որում և փորձն ցուցանէ և արդիւնքն յայտնի արարին և միաբանեցաւ ընդ նմա շնորհն. և է այժմ քսան և հինգ ամ հայրապետութեան նորա. 'ի գըղեակն աստուածապահ Հռոմ կլայ կոչեցեալ, խաղաղասէր բարուք և անարատ վարուք. առ ամենեսեան խաղաղութիւն կալեալ՝ վկայութիւն բարի և գրուատիս յարտաքնոցն կալեալ. այցելու որբոց և այրեաց խնամածու՝ և գերելոցն անխնայ ծախիւք դարձուցիչ և զարդարիչ. հայրենի գթովք զամենեքումբք փարելով. և առաւել առ ամենայն կարօտեալս ողորմութեամբ և եկեղեցեաց բազմաց աւերելոց լցուցիչ. և յաւել և 'ի յայլ բարիսն և զայս մատեանս 'ի գանձս եկեղեցւոյս. և ետ բաղձանաւք թարգմանել զսա յասորւոց 'ի հայս, պիտանի լեալ և շահաւէտ բուրաստան. լայն և երկայն իմաստիւք լցեալ և կարճառօտ բանիւք բովանդակեալ, որ 'ի սուղ ժամանակս կարող է զպատահեալն 'ի վերայ կացուցանել հին և նոր գիտունոց: Այլ և հիմն հաւտոյս և աշտարակ անշարժ իսկ է հայադաւան հաւատոյ և ուղղափառ խոստովանութեանս վկայս բազումս ցուցանելով յազգաց ճշմարիտ ուղեգնացութեամբ. հիմամբ աստուածական և առաքելագիր կայիւք ամրացեալ. այլ և յոլովք տարակոյսք և հանգոյցք լուծանէին 'ի սմա. և չէ ինչ զարմանալ ընդ նորալուր բանսն որ գտանին 'ի սմա: Քանզի Ասորիք բնակութեամբ գաւառաց և բազմիւ լեզուաց մաւտաւորք են միշտ Հրէից լեալ քան զամենայն ազգերս. և 'ի դէպ է նոցա մանաւանդ ծանաւթս գոլ հնոյ կտակին քան այլոց: Նա և որ զայս մատեանս շարադրեալ է 'ի Յունաց և յԵգիպտացւոց և 'ի Քաղդէացւոց գիտնոց և 'ի դպրոցաց է հաւաքեալ: Վասն որոյ և առաւել սիրելի և պիտանի և հաւատալի է. և վարձս բազումս կալցի առաջի Աստուծոյ.

և յերախաիս յեկեղեցիս ուղղափառաց վաստակաւոր այլն բարեփառ տէր Միխայէլ. զի յոլով գութ և սէր երեւէ'նա սնանել առ ազգս մեր 'ի գրոց աստի:

«Արդ 'ի յամի ութերորդի քառասներորդի երկերիւրերորդի հազարերորդի (1248) Թուահամարութեան անժամանակ որդւոյն Աստուծոյ գալստեան և 'ի ՈՂԷ թուականութեան Հայոց Թարգմանեցաւ գիրքս այս յասորոց 'ի հայս 'ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ, և 'ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսապսակի և զգուշակենցաղ Թագուհւոյն իւրոյ Զապելի՝ դստեր Լևոնի արքայի. ըստ Աստուծոյ քաղաքավարելոց հնգից եղելոց նոցա զաւակաց ծիրանածնաց՝ երկուց ուստերաց և երից դստերաց՝ որոց անուանք Լևոն և Թորոս, անուանք հաւուն իւրեանց և հաւանոյն հարազատի. որոց հովանի լեցի ամենակալ բազուկն հայրենի. աճելով 'ի գահ հայրենի արքայութեանն եղբարսք Հայաստանեայց: Յայսմ ամի կենդանի էր կորովամիտ և աղօթեալն 'ի բարիս արքահայրն Հայոց պարոն Կոստանդին. և բերկրեալ այլովք ուստերաւք չորիւք՝ տէր Բարսեղ տէրն Դրազարկին, և պարոն Սմբատ սպարապետն Հայոց, և պարոն Օշինն տէրն Կոռիկոսոյ և պարոն Լևոն. որոց զաւրանալ լեցի ըստ Աստուծոյ, և աճել արիութեամբ ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. և էր պատրիարք ասորւոց ուղղափառաց Մար Իգնատիոս (այլ. ձ. Մարկին)՝ Անտաքու, որ զաւրինակս շնորհեաց. և փոխեցաւ 'ի ձեռն Իշոխայ (= Յեշուայ–Յեսուայ) արրամնեալ քահանայի վարժ եղելոյ 'ի հանճար բժշկական արուեստի» ....:

« Այլ և մեք եւս (այլ գրչագիր մի կը յաւելու. սատապեալ ոգի Վարդան վարդապետ), որ ըստ մերում կարի աստարեցաք 'ի գիրքս յայս. ունիմք հաւատ և յոյս 'ի գթութիւն Աստուծոյ, և յեանորս յաղաւթըս և 'ի բարեխաւսութիւն ծառայից նորա՝ առ մեզ

դարձուցանել զերեսս ողորմութեան Քրիստոսի 'ի վերայ անկշռելի պարտուց մեր անթուապատիկ բիւրուց տաղանդաց. քանզի այսու ակնկալութեամբս ընդոստուցաք զմեզ՝ մոռանալով զանձնականաց և զընդանացեալս մեր տկարութիւն մարմնոյ, և զբազմաղան տրտմութիւն և զյնորս հոգւոց խորհրդոց վասն անշահաւոր տարաշրջութեանս: Այլ և յաղագս Թշուառացուցիչ ժամանակիս՝ զոր ածին չարիք մեր յաճախեալ. քանզի առաւել քան զչափ մերոցն մեղաց՝ որոյց մեզ ածէր արտասուս. և նուազ քան զյորդաբուխ ակնակցն մերոց ջրհեղեղ՝ խաղացին առ մեզ վտակք արեան: Քանզի շնչեաց բարկութիւն սաստան ճանճուն, արեւելեան հիւսիսայնոյ՝ ասատր և մերընդել ազգին ... և հողմով անաւրէնութեանց մերոց ած զնոսա մինչև առ մեզ ըստ նախատեսս մարգարէութեան Նախնի սուրբ հաւրն մերոյ Ներսեսի արտասուապատում ողբոցն, զոր լալով նախաձայնեալ զկորուստ հոգւոր երկանց իւրոց ծննդոցս, զոր ինչ կրեցաքն յազգէն Նետողաց ... Քանզի հարին անյագապէս և տարան աներկիւղաբար զորդիսն Սիոնի 'ի ստրկութիւն գերութեան ... Սակայն զայս լուեալ տեսաք աչաւք մերովք 'ի նախաձայնեալ ողբոյց սուրբ Նահատակին Ներսիսի. և մեր իսկ տեսեալ զյոլովութիւն չարեաց նոցա. և կացեալ 'ի գերութեան զաւուրս ինչ, զեկեղեցիսն մեր նուաճեցեալ և զսեղանսն սուրբ կործանեալ և զմատեանս աստուածային այրեցեալ և առ ոտն կոխեալ զպատուան սրբութեան, և զքրիստոսական նշանսն անարժանից ձեռաց շաւշափեալ և նախատեալ, յանարգ ակնաս վարեալ. զաշխարհս մեր անապատացեալ, զքաղաքս բնակութիւն լեալ գազանաց: Քանզի լցան լերինք և անապատք մեր անզերծ փախստէիւք և դաշտք դիակոյս ոսկերաւք կոտորելոցն, և անդաստանք մեր և հովիտք ոռոգեցան արեամբ. և կերաք մնացորդքս

զհատակ ծննդեան այնպիսի արարեր։ Աղօթքն մեր 'ի ծառայութիւն իշխն, և փափաքանքն մեր յանըմ քերթելի չարչարանս. բարձունքն մեր խոնարհեցան, և փառաւորքն մեր յանարգութիւն ընկեցան. որ-նունգքն մեր հովասուն լերանց՝ խորշակահարք ե-ղեն յարևու։ Կուսանքն մեր աւտարաց եղեն, և երի-տասարդքն մեր հովիւք և կուապանք (այլ Տ. ջոկա-րանք) այլասեռեցին։ Կարաւտացաք ողբոցն Երեմիայ, և կրեցաք զպատուհաս հնոյն Իսրայելի։ Տղայք աշ-խարհաց մերոց որբք եղեն, և մարք նոցա այրիք. որ-դեքն վերնոյն Սիոնի զուգակշիռք ոսկոյ, զքարի հա-րան իբրև զանաւթ անպիտան. ցրուեցաւ համաւ ատեան. Ճաղաղեցան գաւթիք արքունի նորա. վա-ճառակուր եղեն յազգս հեռաւորս. գնեցեալքն ա-րեամբն Քրիստոսի. բաժանեցան ծնունդք 'ի ծնո-ղաց, մեկնեցան հարազատքն 'ի միմեանց, հեռացան բարեկամք 'ի սիրելեաց ... Զայժմու նուաճեալս ար-ժանաւոր կոչմամբ հոգւոյն սրբոյ զՏէր Կոստանդին Հայոց մեծաց և համաւրից վերադիտող, և զնոյնա-զարմ ազգիս պատկականն Հեթում պարագայց ամաւք առողջակեր մարմնով և անուանի փառաւք խնամեսցէ 'ի գովեստ ամենասուրբ տէրութեան իւրոյ, և զաւա-կաւք և զաւրմաւք որք ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ » ...

Ուրիշ յիշատակարանի մը մէջ ալ կը կարդանք։

« ... Ընդ անծանաւթ բանիցն որ առ մի զարմա-ցուք, և ուսա կարծեսցուք. զի Ասորոց մատաւոր և ընդանի է միշտ լեալ Հրէից ազգ և աշխարհաւ և լե-զուաւ քան զամենայն ազգ. և յարուեստից իմաս-տից և վարժից 'ի յունաւմն. զի և ինքեանք Քաղդէա-ցիք են ... նա և որ զայս հաւատուածս աշխատեալ է, տէր Միքայէլ, 'ի յունաց և յեգիպտացւոց և յե-բրայեցւոց և 'ի հռոմայեցւոց՝ և յայսորց պատմա-գրաց է ժողովեալ. վասն որոյ պատուել սիրելի և հա-ւատարիմ է ... Արդ յամս անժամանակին Աստու-

ծայ ընդ ժամանակաւ լինելոյն ՌՄԽԸ թուահամարութեան և 'ի ՌՂԷ թվականութեանս Հայոց փոխեցաւ գիրքս այս (Միսայէլի) Ասորւոց 'ի հայս հրամանաւ տեառն Կոստանդեայ 'ի ԺԵ ամի հայրապետութեան, և 'ի ԻԵ ամի Թագաւորութեան Հայոց Հեթմոյ ...» ։

Դարձեալ յայլում յիշատակագրի. «Զպարեացապարան ամենայն բարեաց և զԹարգմանիչն հին և նոր պատմութեան գրոց՝ մանաւանդ այսմ լուսաւորդ մատենիս, զմեծապատիւ րաբունին և զզարդն տիեզերահռչակ և զամենագով սուրբ վարդապետն զԴԹ. յիշեցէք 'ի Քրիստոս, ո պատուական ընթերցողք. առաջի տեառն զենելոյն Յիսուսի» ։*

* Երուսաղէմի տպագրին (1871) յառաջաբանէն կ'իմանանք թէ սոյն օրինակք գրոցս կը գտնուին 'ի Մատենադարանի վանիցն, յորս նախամեծար գըրչագրեալն 'ի ՋԻԹ (1480)։ Ասոնցմէ զատ հնագոյն օրինակ մը որ «տարբերի յոյժ. — ինչպէս կը ծանուցուի, — 'ի միւս օրինակաց. եթէ թարգմանութեամբն և եթէ կարգաւ և ընթացիւք պատմութեանն» ։ Այս գրչագրին համեմատ առաջինէն որէշ տպագրութիւն մը եղած է 'ի նոյն տպարանի։ — Տասներկու օրինակք ալ կը նշանակուին 'ի Մատենադարանին Էջմիածնի (թիւ 1628–1639). Թուական կրողաց մէջ հինն 'ի ՇՂԵ։ Տպագրութեանց և Թարգմանութեանց համար տես Հայկական մատենագիտութիւն, յ'էջ 431 ։

— Ի յիշատակի սուրբ Թագաւորացն Թէոդոսից մեծի և փոքու, 'ի Միքայէլի պատմութեննէն. «Բարեպաշտ և մեծ Թագաւորն Թէոդոս յետ մահուանըն Վաղէսի ամբարշտի ետ զԹագ նորա հրամանաւ Գրատիանոսի Հռովմայ Թագաւորին» ։ (Մատենադ. Էջմիածնի Թիւ գրչ. 920) ։

— Միխայէլի իշխանի Վուլղարացւոց՝ վասն եօթն

միեղերական սուրբ սինհոդոսաց. « Այլ շնորհք իմն » : (Կանոնք ժողովոց).

ՄՆԱՑՈՐԴԱՑ ՄՆԱՑՈՐԴՔ. (Հատուածք երկու վասն Սողոմոնի). « Վասն զի գրեաց Մովսէս, Մետանուցուս » :

— « Ցորժամ յարոյց Աստուած սատանայ Սողոմոնի զԱդրաադար » : Ցուցարա բանիս ասի. « Եւ զայս եւս 'ի նոյն երանելի վարդապետին գրոցն գրեցի. զոր և յԵրիանոսի գիրսն գեղեցիկ յիշատակէ վասն Սողոմոնի » :

ՄՈԴԵՍՏՈՍ ԵՐԷՑ. — (MODESTUS, LE PRÊTRE). — Մոդեստոսի երիցու թուղթ առ տէր Կոմիտաս կաթողիկոս Հայոց. « Տեառն իմոյ ամենայն բարութեան և երանութեան և հոգևորի, Կոմիտասայ արքեպիսկոպոսի Մեծապատուելոյ աշխարհին Հայոց, Մոդեստոս նուաստ երէց և տեղապահ Երուսաղեմի. — Աւրհնեալ է Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի » : (Ան Սեբէոսի. Գ. իե).

ՄՈՎՍԷՍ ՑՈՒՐՏԱՒԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(MOÏSE, ÉVÊQUE DE TZOURDAV)

— Թուղթ առ Վրթանէս քերթող:

— Թուղթ շըջագայական. « Ի ժամագրութիւն երկնից վիճակեալք » :

— Պատճառք չորրորդ ժողովոյն Երկաբնակացն. « Արդ յետ փոխելոյ » :

— Պատասխանի Թղթոյն Վրթանեսի. « Տեսաք զԹուղթ ուղղափառ » :

— Այլ Թուղթք երկու առ նոյն Վրթանէս.

— Թուղթ առ սրբասէր տէր Աբրահամ (կաթուղ). « Լուայ, հայր պատուական » ։

— Թուղթ առ Սմբատ Վրկան մարզպան ։

ՅԱԿՈՎԲ ՄԾԲՆԱՑ. (Տես յ'էջ 20)։

ՅԱԿՈՎԲ ՍՐՃԵՑԻ

(JACQUES, DE SARUGE)

Յակովբայ հայրապետի Սրճեցւոյ՝ որ 'ի Ճառընտիրս մեր կոչուած է նաև Յակովբ Արծուպոյ եպիսկոպոս, հետևեալ ճառից յասորւոյն 'ի հայ թարգմանութիւնն ունինք ։

— Որբոյն Յակովբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ 'ի յարութիւնն Ղազարու. « Բաց զշրթունս իմ խօսել վասն քոյ, որդի Աստուծոյ զի, քև բարբառին ամենայն բանաւորք. փակեալ է 'ի մեզաց բերան մարդկան 'ի փառաբանութեանց քոց » * ։

* Կը յիշատակուի առ Ասեմանեայ յԱրևելեան Մատենադարանի (Bibl. Orient. Հատ. Ա. 322)։

— Յաւուր մեծի խաչելութեանն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և յաւազակին որ հրաւիրեցաւ 'ի դրախտն, և 'ի սերովբէն որ պահէր զճանապարհ ծառոյն կենաց. « Անծանօթ ծնունդ ծոցոյ քոյ Հօր միածին, զարթո՛ զքնարս իմ, և փարթամացո՛ 'ի պարգևաց քոց զբանս իմ պատմել զմեծութիւն փրկութեան քոյ » * ։

* Ի Մատենագ. Էջմիածնի (թիւ 914). « Երանելւոյն Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ բան զարմանալի յաւազակին աջակողմեան » ։ Ի միւս այլ ձեռագրի (անդ, 922). « ... Ի չարչարանս տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի յիններորդ ժամու. յա-

ւաղակն որ հրաւիրեցաւ 'ի դրախտն, և 'ի քերովբէն որ պահէր զճանապարհն » ։

* Ի գրչագրին Սեւանայ վանից՝ յիշատակարան այսպիսի. « Թարգմանեցաւ ճառս յասորւոց 'ի մերս՝ հրամանաւ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի, 'ի ձեռն քահանայի ումեմն Իսահակ անուն կոչեցելոյ, ասորի յազգէ, անարուեստ գոլով մերոյ դպրութեանս. շաղփաղփ և կոկորդախօս լեզուաւ. և ստուգեցաւ 'ի սուրբ և յանբիծ և 'ի մեծ արհիեպիսկոպոսէ 'ի տեառն Ներսիսէ հռետոր իմաստասիրէ » ։

— Ի սուրբ զատկին և յարութիւն փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի. « Այսօր ուրախութիւն մեծ լի ընտրութեամբ զարհուրեցուցանէ զիս պատմել զբան մարգարէին որ ասէ. Այսօր է զոր արար տէր »* ։

* Առ Ասսեմանեայ, Հատ. Ա. 326 ։

— Ի յարութիւն տեառն և 'ի զինուորսն. Յարութիւն քո զարթուցանէ զիս ճառել զինքենէ ։ Դու տէր պարգևեա ինձ ձայն որ գոչէր զզարթուցումն քո. և յաղագս մեծ դասու զինուորացն՝ որ պահեցին զգերեզման քո »* ։

* Առ Ասսեմանեայ, Հատ. Ա. 326 ։ Ի Մատենագ. Էջմ. (914). « ... Ի թաղումն և 'ի յարութիւն տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և 'ի պահպանութիւն դասուց զինուորաց » ։

— ** Ի յարութիւն Քրիստոսի. « Լուան Աննա և Կայիափա » ։

— ** Ի համբարձումն տեառն. « Զարթիր քնար իմ » ։

— Ի Նոր կիրակէն և 'ի սուրբ առաքեալն Թովմաս. « Յորժամ յարեաւ հովիւն 'ի մեռելոց մեծաւ զօրութեամբ, սքանչելի նշանօք՝ այց արար առաքելոցն հաստատել զնոսա »* ։

* Առ Ալիշանեայ, Հատ. Ա, 328։ Ի Մաշ. Էջմ. (914). «...Ի նոր կիւրակէն և ՚ի Թերահաւատութիւնն Թովմայի առաքելոյն բան չքնաղ և զարմանալի»։

— ** Ներբողեան ասացեալ ՚ի ննջումն սրբոյ Աստուածածնին և միշտ կուսին Մարիամայ. «Որդէ Աստուծոյ, որ սիրով քոյ խոնարհեցար և իջեր յերկիր. և զգեցար մարմին և մարդացար ՚ի զաւակէն Դաւթի»։

— ** Բան գրուատեաց ՚ի Յովհաննէս մկրտիչն և կարապետ Քրիստոսի. «Յիսուս լոյս փառաց՝ որ զամենայն տեղերս պայծառացոյց ծագումն յայտնութեան քո. յայտնեա առ իս ՚ի նշուլից շնորհաց քոց»*։

* Հրատարակեալ յ՚Արարատ ամսագրի Էջմիածնի, 1888, Թիւ 5։

— ** Վասն առաջին խորհրդոյն և ՚ի վերայ նահապետաց և մարգարէից. «Ի ծով խորհրդոց քոց ահա իջանեմ ՚ի վաճառ, որդի Աստուծոյ՝ լեր ինձ նաւահանգիստ և խաղաղութիւն մեծ։ Ալիք ճառից քոց մի առ մի ձգեն զիս. և ՚ի յընթեռնուլն զնոսա ելանեմք ՚ի բարձրութիւն հօր քոյ»։

— Յաղագս Անտիոքայ քաղաքին՝ Թէ որպէս մտին առաքեալքն Պետրոս և Պաւղոս և Յովհաննէս և աշակերտեցին զնոսա ՚ի հաւատս Քրիստոսի. «Լուսով բանիւ քոյ գամ առ քեզ որդի Աստուծոյ, առ ՚ի տեսանել զճշմարիտ և զհրաշալի պայծառութիւնդ քոյ։ Մտուցեա՛ յիս բան վարդապետութեան, զի զարթուցեալ խոստովան լինիմ անուանդ քում սըրբոյ՝ անմահդ աստուած»*։

* Կը յիշուի առ Ալիշանեայ (Հատ. Ա, 332) և ընդ անհարազատս սեպուած է ՚ի նմանէ։ Ուրիշ գրչագիրք հետեւեալ խորագրով կը նշանակեն զճառս՝ «Յակոբայ Սրճոյ եպիսկոպոսի ասացեալ բան զարմանալի վասն դարձի Անտիոքայ քաղաքի»։

— Դարձեալ ձայն վասն Անտիոքայ տացեալ. «Ասէ Պետրոս, աշակերտ Նորա իցեմ։ Ասէ Պաւղոս. Ամենայն աշակերտ զարգանեան 'ի վարդապետէն ուսանի. եթէ աշակերտ ես Նազաւրացւոյն՝ բաց կայր մի՞ և հաւատամք յաստուածն քո»* ։

* Ժամանակագիր մը 'ի Թուին Շ (500) կը դնէ. «Սուրբն Յակոբ Սրուճեցին արար Ր (5000) ձայն»։

— Բանք վասն ամման տապանակին 'ի Փղշտացւոց (Թերի)* ։

* Ար. Ասսեմանեայ. (Հատ. Ա, 335)։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՄԱՍԿԱՑԻ

(JEAN DAMASCÈNE)

Յովհաննէս՝ որ Ասորեստանի Դամասկոս քաղաքը ծնած ըլլալուն համար Դամասկացի կոչուած է, նոյն դարուն վրայ եղող արաբացի խալիֆային արքունեաց մէջ քաղաքական կարեւոր պաշտամամբ կը պարապէր, երբ 730ին Բիւզանդիոնի կայսրն Լեւոն Իսաւրացի՝ Յիսուսի Քրիստոսի և իր սրբոց պատկերաց պաշտաման և մեծարանաց դէմ ամբարիշտ հալածանք մը հրատարակեց։ Յովհաննէս որ այն ատեն պարզ աշխարհիկ անձ մ'էր՝ առանց վախնալու կայսեր և իրեն համախոհից բռնութենէն, այլեայլ գրուածներ հրատարակեց նամակի ձեւով՝ 'ի պաշտպանութիւն եկեղեցւոյ վարդապետութեան և աւանդութեան։ Հրաժարելով յաշխարհէ, թողուց իշխանական փառքը, ու առանձնանալով յանապատն սրբոյն Սաբայ մերձ յԵրուսաղէմ, քահանայ ձեռնադրեցաւ. ու զանազան գրուածներէ և ճամբորդութիւններէ ետքը 'ի Պաղեստին և 'ի Կոստանդ-

նուպոլիս, գտանելով յառանձնավայրն իւր՝ վախճանեցաւ ըստ ոմանց 'ի 784 և այլոց 780։

Հայ թարգմանութեան ամենայն գլուխք կը գըտնուին 'ի յոյն և 'ի լատին տպագիրս, զոր կը նշանակենք 'ի ստորև։ Միայն ճառն որ ընդդէմ Նեստորի չիք 'ի յոյնն և 'ի լատին. որպէս և ոչ ընդարձակ պատասխանին առ Հրեայս, թէպէտ և յիշատակուի այն 'ի յառաջաբանի լատին տպագրին. (Հատ. Ա. յ'էջ 411)։ Սկզբնաւորութիւնն ճառիս. «Զաստուածային զամենայն՝ յԱստուած վստահանալ պարտ է»։

— Սրբոյ և աստուածահաճոյ հօրն մերում Յոհաննու Դամասկացւոյն համառօտեալ բան իմաստութեանց հաւատորիցն զնոցայն հաճեալն ասելով, և 'ի բաց թողեալ զհակառաբանութիւնս այլոց և զընդունայնաբան առասպելսն. և զայն յիշելով զոր ընդունի եկեղեցի։ — Յաղագս էութեան և գոյութեան և պատահման, պրակս առաջին»*։

* Դամասկացւոյն ընծայուած իմաստասիրութեանս յոյն օրինակաց գլխակարգութիւնք չեն միօրինակ յամենեսին. որով անոնցմէ մէկուն կամ մէկալին համեմատ եղած տպագրութիւնք՝ միշտ չեն համաձայնիր հայկական թարգմանութեանս գլխակարգութեանց, այլ յաճախ կը հանդիպին յետ և յառաջութիւնք։ Իսկ աստուածաբանական գիրս նորա որ յաղագս ուղղափառ հաւատոյ, լատինք կը բաժանեն 'ի չորս գիրս, և ամէն մէկ գիրք 'ի զանազան գլուխս. իսկ յոյնն և հայ միով գլխակարգութեամբ իջանեն 'ի սկզբանէ ցկատարած։

Ա. «Յաղագս էութեան և գոյութեան և պատահման, Պրակ առաջին». (Dialectique) իսկ վերջինն՝ ԽԹ. «Վասն անձնական միաւորութեան հոգւոյ»։

— Յաղագս ուղղափառ հաւատոյ. (De la foi or-

thodoxe). Յաղագս առաջաբանութեան աստուածաբանութեան. (յոյնն Ա. լատին. 1)։

Բ. Վասն ճառելեաց և անճառելեաց, իմանալեաց և անիմանալեաց. (յոյնն Բ. լատ. 2)։

Գ. Վասն ցուցման թէ գոյ Աստուած. (յոյնն Գ. լատ. 3)։

Դ. Վասն թէ զինչ է Աստուած և զի անհաս է. (յոյնն Դ. լատ. 4)։

Ե. Վասն յայտնման թէ մի է Աստուած և ոչ բազում. (յոյնն Ե. լատ. 5)։

Զ. Վասն բանին Աստուծոյ. (յոյնն Զ. լատ. 6)։

Է. Վասն սուրբ Հոգւոյն. (յոյնն Է. լատ. 7)։

Ը. Վասն սուրբ Երրորդութեան. (յոյնն Ը. լատ. 8)։

Թ. Վասն 'ի վեր ասացելոյն. (յոյնն Թ. լատ. 9)։

Ժ. Վասն աստուածային միաւորութեան և բաժանման. (յոյնն Ժ. լատ. 10)։

ԺԱ. Վասն մարմնապէս 'ի վերայ ասացելոյն. (յոյնն ԺԱ. լատ. 11)։

ԺԲ. Վասն նոցա գործեալ. (յոյնն ԺԲ. լատ. 12)։

ԺԳ. Վասն տեղեացն Աստուծոյ՝ թէ միայն Աստուած է անպարագրելի. (յոյնն ԺԳ. լատ. 13)։

ԺԴ. Վասն յատկութեանց աստուածային բնութեան. (յոյնն ԺԴ. լատ. 14)։

ԺԵ. Վասն յաւիտեանցն. (յոյնն ԺԵ. լատ. II, 1)։

ԺԶ. Վասն հրեշտակաց. (յոյնն ԺԶ. «վասն արարչութեան», և ԺԷ. «վասն հրեշտակաց». լատ. 3)։

ԺԷ. Վասն սատանի և դիւացն. (յոյնն ԺԸ. լատ. 4)։

ԺԸ. Վասն երևելի և զգալի արարածոցս. (յոյնն ԺԹ. լատ. 5)։

ԺԹ. Վասն երկնից. (յոյնն Ի. լատ. 6)։

Ի. Վասն հրոյ, լուսոյ և լուսաւորացն ամենեցուն. (յոյնն ԻԱ. լատ. 7)։

ԻԱ. Վասն օդոյ և հողմոյ. (յոյնն ԻԲ. լատ. 8)։

իբ. Վասն ջուրց. (յոյնն իգ. լատ. 9)։

իգ. Վասն երկրի և որ 'ի նմա է. (յոյնն իդ. 10)։

իդ. Վասն դրախտին. (յոյնն իե. լատ. 11)։

իե. Վասն մարդոյն. (յոյնն իզ. լատ. 12)։

իզ. Վասն ճաշակացն որք են. (յոյնն իէ. լատին 13)։

իէ. Վասն տրտմութեան. (յոյնն իը. լատ. 14)։

իը. Վասն երկիւղի. (յոյնն իթ. լատ. 15)։

իթ. Վասն տրտմութեան. (յոյնն լ. սրտմտութեան. լատ. 16)։

լ. Վասն անրջոց և ցնորից. (յոյնն լա. լատ. 17)։

լա. Վասն զգայութեանց. (յոյնն լբ. լատ. 18)։

լբ. Վասն իմացականին. (յոյնն լգ. լատ. 19)։

լգ. Վասն յիշողականին. (յոյնն լդ. լատ. 20)։

լդ. Վասն որ 'ի ներքոյ ներբարբառագրական բան, արտաքոյ տարբերական. (յոյնն լե. լատ. 21)։

լե. Վասն ախտից և ներգործութեանց. (յոյնն լզ. լատ. 22)։

լը. Վասն ներգործութեանց. (յոյնն լէ. լատ. 23)։

լթ. Վասն կամայի և ակամայի. (յոյնն լը. լատ. 24)։

խ. Վասն որոյ ընդ մեզ ենթակային այս անձնիշխանութիւն. (յոյնն լթ. լատ. 25)։

խա. Վասն գործեցելոցն. (յոյնն խ. լատ. 26)։

Հարիւր գլուխք բանից. միայն ՁԱ գլուխն՝ «Առ հարցանողսն եթէ 'ի խառնակելոցն թէ 'ի սահմանելոցն՝ վերաբերին քանօնութիւն բնութիւնք Քրիստոսի» չկայ 'ի յոյնն և 'ի լատինն։

Մեր գրչագրաց խորագիրք՝ 'ի վախճան մատենին. «Կատարումն վասատակոց Յոհաննու Դամասկացւոյ կոչեցեալ Մանսուր՝ համառօտ ասացեալ նորոյ շնորհաց աւանդութիւնք. և թարգմանեալ Սիմէոնի 'ի վերայ լեզուէ 'ի հայ բարբառ»։ Չենք կրնար

որոշել միայնանուամբը, Թարգմանչին անձը յայտնի, ինչպէս և ոչ ժամանակը. ասանկ ալ թէ ամբողջ գրոցը թարգմանիչն է, թէ անոր մէկ մասին միայն։

— Նորին հօրն մերոյ Յոհաննու Դամասկացւոյն Խրիստունեկարի կոչեցելոյ բանք վասն սուրբ հաւատոյ և ընդդիմագրութիւն Նեստորիոսի. «Պարտ է մեզ փրկելոցս Աստուծոյ 'ի ձեռն միածնի Որդւոյ իւրոյ. զոր ետ 'ի փրկանս մեզ ըստ աստուածային բանի հաւատալ»։

Առաջինն 'ի ճառից ընդդէմ Նեստորի, ոչ միայն հարթ ոճով է՝ որպէս թէ հայերէն շարագրած ըլլայ, այլ և գանուին անդ՝ օրինակի վասն այս անուանք. Լեօն և Գրիգոր և Ներսէս. յորոց վերայ պէսպէս մակաբերութիւնք մարթին ըլլալ։

— ** Յովհաննու Դամասկացւոյ բանք վասն դըրախտին։ (Discours sur le paradis terrestre).

— Յովհաննու Դամասկացւոյ ներբող 'ի ննջումն սրբոյ Կուսին. «Զի՞նչ տացուք քեզ, ո՜վ տիրուհի»։ (Մատենագ. Ուրբաթնեան դպրոցին 'ի Հռոմ)։

— Սրբոյն Յովհաննու Դամասկացւոյ՝ «յաղագս գոյի էութեան և պատահման. Թարգմանեալ 'ի հայ լեզու 'ի յունարէն գրոյ Բագարատ Մամիկոնեան. ներածութիւն իմաստասիրութեան որ է Խաղոժիկի. զկնի այսր և ամենայն իմաստութեան գործարան, որ է Ղանոնն ըստ հելլենացւոց բարբառի։ Բաժանեալ է գիրս 'ի քառասուն և հինգ մասունս։ Հետեւ այսմ և ճառ ինչ յաղագս բնութեան մարդոյ, բովանդակեալ 'ի քառեակ և կէս թերթս. գուցէ նոյն Յովհ. Դամասկացւոյ»։ (Մատենագ. Ս. Երուսաղեմի, թիւ գրչ. 898)։

Յիշատակարան. «Փառք ամենասուրբ Երրորդութեան ... աւարտեցաւ 'ի թուականութեան հայկազուն տումարի ՁՂԸերրորդի և հին օրինակն. իսկ և սա նորս՝ ՌՃՄԵ ամին 'ի փառս սրբոյ Երրորդութեան»։

Բարլաամու և Յովսափայ պատմութիւնն կոչուած գրուածք մ'ալ կայ պահուած 'ի մեր մատենագրութեան, ոչ աննշան՝ բայց ոչ այնքան հին թարգմանութեամբ: Այս փիլիսոփայութիւնն, — զի այդ անունը հարկ է տալ գրուածքիս, — կը գանուի նաև առ մեզ, և ընդհանրապէս Դամասկացւոյն ընծայուած է, որ անընդունելի կ'երևնայ հմտից: Յունական սկզբնագրին նախկին հրատարակութիւնն եղած է Պուասոնատ գաղղիացւոյն ձեռքով 'ի չորրորդ հատորի Anecdota græca գրուածքին. ուրիշ զանազան եւրոպական լեզուներով եղած թարգմանութիւնք բազմաթիւք են: Հին տպագրութիւն մը կայ 'ի լատին Liber Barlaam et Josaphat Indiæ regis; առելի հնագոյն մ'ալ 'ի Սթրասպուրկ. Դամասկացւոյն անունը կրելով: Վերջին հրատարակութիւն մ'ալ ըրած է Մինիեի, իր բազմահատոր հաւաքման մէջ. զոր բաղդատելով հայկական թարգմանութեանս հետ, շատ անգամ տարբեր կը գտնենք իրարմէ*:

* Joannes Damascenus Opera omnia quæ extant, et ejus nomine circumferentur; et variis editionibus et codd. mss. (gr.) collecta, recensita, latine versa, atque annotationibus illustrata... opera et studio S. Mich. Le Quien, 1712, (Paris). MIGNE, Dictionnaire des Légendes, pag. 59.

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ. — (JACQUES DE JÉRUSALEM). — Երանելւոյն Յովհաննու Երուսաղէմայ եպիսկոպոսի ներբողեան ասացեալ 'ի սուրբ եկեղեցին տերունեան. «Սոսկումն և սարսափումն ըմբռնեաց զիս. ով քրիստոսասէր եղբարք»: (Մատենադ. Էջմիածնի, Թիւ գրչ. 920).

ՅՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ

(SAINT JEAN CHRYSOSTÔME)

Աստուածաշունչ գրքէն ետքը. և գրեթէ անոր հաւասար, մեր մատենագրութեան ոսկեղէն դարու ամենընտիր և թանկագին ընծայք են սրբոյն Յովհաննու Ոսկեբերան հայրապետի (ծն. 384, + 407) հոգելից և արտասուաց ճառից և մեկնութեանց թարգմանութիւնք է: Դեռ քիչ ատեն անցեր էր, յորմէ հետէ լռած էր 'ի Կոկիսոն աքսորանօքն և երջանիկ փոխմամբ այն աստուածահրաշ լեզուն և աստուածախօս բերան, որ երիտասարդ հասակէն զարմացուցեր էր զԱնտիոքիոս իր ուսուցիչն և ճարտարախօսութեան վեհագոյն վարժապետը, ու քահանայական ու հայրապետութեան նուիրական ուսագութեանց բարձրանալէն ետքն' հիացուցեր էր զԱնտիոք և զԲիւզանդիոն. պերճաբան խօսքովն և կորովի լեզուով՝ ոխերիմ և անհաշտ թշնամի մը երեւնալով ախտից և մոլութեանց, ջաղխելով՝ փշրելով զանոնք, թէպէտև արքունեաց ծիրանեօք ներկայանային իրեն, թէպէտև եկեղեցական պատմուճանի տակ, 'ի սրբավայրի և անկէ դուրս, հարուստին կամ աղքատին յարկի տակ, 'ի թատերս և կամ 'ի տեսարանս, ամէն տեղ և ամէն առթի մէջ չխնայելով, և երբէք ուժոյ կամ բռնութեանց առջև չտկարանալով. այլ միայն իր աստիճանին և պարտուց ձայնին անսալով: Մեռաւ նա 'ի տարագրութեան. և ինչպէս 'ի կեանս' այսպէս մահուընէն ետքն ալ' ճշմարտութեան անլռելի քարոզ թողլով 'ի գանձարանս եկեղեցւոյ իր բազմաթիւ երկասիրութիւնքը:

Թարգմանիչք մեր երբ 'ի Բիւզանդիոն հասան, անոր հռչակաւն և իմաստուն գրուածոց համբաւովը լցուած գտան զքաղաքն. ուստի մէկէն ձեռք զարկին անոնց Թարգմանութեան: Հաւանօրէն Եզնըկայ և իր ընկերակցաց և գաստակցաց կը պատկանի այս ընտիր աշխատասիրութիւնն. որոնց մէջ գլխաւոր սեպուած են իրաւամբ Մեկնութիւնքն յԱւետարանագիրն Մատթէոս, 'ի թուղթսն Պաւղոսի, Մեկնութիւնն Եսայեայ, մասն մի Մեկնութեան Յովհաննու, և Ճառք բազումք: Բայց այս վերջիններուս մէջ կան նաև շատք յետագայ դարուց մէջ եղած, թէպէտև ընդհանրապէս յառաջ քան զերկոտասաներորդն' արծաթի դար մեր գրականութեան: Դնենք հոս ինչուան առ մեզ հասածներուն ցուցակը, հետևելով մեր տպագրաց կարգին, և անոնցմէ դուրս մեզի ծանօթ գտնուածներն յայլևայլ մատենադարանս:

— Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի յԱւետարանագիրն Մատթէոս: Գիրք կրկին: (Τοῦ ἐν ἁγίοις πατρός ἡμῶν Ἰωάννου ἀρχιεπισκόπου Κωνσταντινουπόλεως τοῦ Χρυσόστομου ὑπόμνημα εἰς τόν ἅγιον Ματθαῖον τόν εὐαγγελιστήν).

— Մեկնութիւն թղթոցն Պաւղոսի: Պատճառք առաջին թղթոյն Տիմոթեայ: Ճառք ութևտասն (անթերի):

— Մեկնութիւն երկրորդ թղթոյն Տիմոթեայ: Ճառք տասն (անթերի):

— Մեկնութիւն թղթոյն որ առ Տիտոս: Ճառք վեց (անթերի):

— Մեկնութիւն թղթոյն Փիլիպեցւոց: Պատճառք: Ճառք հնգետասան (անթերի):

— Մեկնութիւն թղթոյն Կողոսացւոց: Պատճառք: Ճառք երկոտասան (անթերի):

— Մեկնութիւն թղթոյն Եփեսացւոց: Պատճառք: Ճառք քսան և չորս (անթերի):

— Մեկնութիւն Թղթոյն Հռովմայեցւոց * ։ ('Ερμινεία εἰς τὸν πρὸς Ῥωμαίους ἐπιστολήν).

* Մեր ձեռքն եղած օրինակաց մէջ Թերի են 'ի սկզբան չորս ճառք, և հինգերորդին սկզբնաւորութիւնն։ Կը պակսին դարձեալ իննևտասներորդ ճառին սկզբէն՝ երկու Թուղթ. որպէս կ'ազդէ տպագրին ծանօթութիւնն. նոյնպէս երեսներորդին վերջաւորութիւնն, երեսներորդ առաջիններորդն ամբողջ. երեսներորդ երկրորդին սկիզբն, և որուն վերջաւորութեամբն կը լրանայ նաև ամբողջ առ Հռովմայեցիս Թղթոյն մեկնութիւնն։

— Հատուածք այլոց Թղթոցն Պաւղոսի. (Fragments). — Ա. Կորնթացւոց՝ յեւթներորդ ճառէն։ — Յիններորդ ճառէն։ — Ի հնգետասաներորդ ճառէն։ — Ի վեշտասաներորդ ճառէն։ — Ի քսանևհինգերորդ ճառէն։ — Ի քառասներորդ առաջիներորդ ճառէն։

— Հատուածք յ'Բ. Կորնթացւոց ։ Յիններորդ ճառէն։ — Ի քսաներորդ վեցերորդ ճառէն։

— Հատուածք 'ի Գաղատացւոց։ Յերրորդ ճառէն։ — Ի հինգերորդ ճառէն։ — Ի վեցերորդ ճառէն։

— Հատուածք Ա. Թեսաղոնիկեցւոց։ Յառաջին ճառէն։ — Յերրորդ ճառէն։ — Յեւթներորդ ճառէն։ — Յութերորդ ճառէն։ — Յիններորդ ճառէն։

— Հատուածք յ'Բ. Թեսաղոնիկեցւոց։ — Ի չորրորդ ճառէն։

— Հատուածք յ'Եբրայեցւոց։ Յառաջին ճառէն։ — Յերկրորդ ճառէն։ — Յերրորդ ճառէն։ — Ի չորրորդ ճառէն։ — Ի հինգերորդ ճառէն։ — Ի վեցերորդ ճառէն։ — Յեւթներորդ ճառէն։ — Յիններորդ ճառէն։ — Ի մետասաներորդ ճառէն։ — Յերեքտասաներորդ ճառէն։ — Ի չորեքտասաներորդ ճառէն։ — Ի հնգետասաներորդ ճառէն։ — Ի քսաներորդ ճառէն։ — Ի քսաներորդ առաջներորդ ճառէն։ — Ի քսաներորդ երկրորդ ճառէն։ — Ի քսաներորդ երրորդ

ճառէն ։ — Ճառ քաններորդ չորրորդ (ամբողջ, յոր-դորական)։ — Ի քաններորդ հինգերորդ ճառէն ։ — Ի քաններորդ վեցերորդ ճառէն ։ — Ի քաններորդ եւթներորդ ճառէն ։ — Ի քաններորդ ութերորդ ճառէն ։ — Յերեսներորդ առաջներորդ ճառէն ։ — Յերեսներորդ չորրորդ ճառէն ։

— Հատուածք 'ի Գործոց մեկնութենէ ։ Ի հնգետասաններորդ ճառէն ։ — Ի վեշտասաններորդ ճառէն ։

Երկբայականք · — Վասն Հերովդիադայ · (Sur Hérodiade). « Դարձեալ Հերովդիադաս մոլեգնեալ յանդգնի · դարձեալ կաքաւէ » ։

— Ի ձկնորսութիւնն Պետրոսի · (Sur la pêche de Pierre). « Յորժամ վարդապետն բարեփառ, յայնժամ աշակերտն դիւրահաւան » ։

— Ի սուրբ Աստուածածինն և 'ի միշտ կոյսն Մարիամ · (Panégyrique sur la très-sainte Vierge Marie).

— Յաւետիս Աստուածածնի · (Sur l'Annonciation de la sainte Vierge). « Դարձեալ խնդութեան աւետիք · դարձեալ ազատութեան զգացումն · դարձեալ վերստին կոչումն, դարձեալ 'ի վեր ճանապարհ » ։

— Ի Յովսէփ · (Sur Joseph, l'hébreux). « Որք 'ի մեծ խորս նաւարկեն նաւուղիղքն, որոց ոչ երկիր, ոչ լեառն, ոչ բլուրք և ոչ դիտանոցք ինչ զցամաքն նշանակիցեն » ։

— Ի Շուշան · (Sur Susanne), « Եկայք ձեզ բարեմիտք պարտապանք բանին, ոչ որքան պարտիմք հանձել, այլ որքան ունիմք հատուցանել » * ։

* Յօրինակն Էջմիածնի (Թիւ 887)։ Ի Յովսէփ և 'ի Շուշան · « Որք 'ի մեծ և 'ի խորս նաւարկեն նաւավարքն՝ որոց ոչ երկիր, և ոչ երկինք և ոչ բլուրք և ոչ դիտանոցք ինչ զցամաքն նշանակիցեն, յատուկ, ոմանս հայելով և նոքաւք զնաւն յարմարեն » ։

— Ի սաղմոսն յիսներորդ. (Sur le Psaume xL). « Կենդանագիրք նման են արուեստի 'ի բնութեան. խառնելով զերանգսն՝ սահմանեն զպատկերս երևելեաց մարմնոց. և առնեն մարդիկ և անասունս և ծառս » ։

— Ի բան մարգարէին որ ասէ. Սակայն 'ի նանիր խռովի ամենայն մարդ կենդանի. գանձէ և ոչ գիտէ ում ժողովէ. (Εἰς τὸ προφητικὸν ῥητὸν τὸ λέγων, πλὴν μάτην ταράσσεται πᾶς ἄνθρωπος ζῶν). « Բեր այժմ, սիրելի, 'ի Դաւթեան երգոցն զսաղմոսականն հարցուք նուագս » ։

— Առ հրէայս, հեթանոսս և հերձուածողս. և 'ի բանն. Կոչեցաւ Յիսուս 'ի հարսանիսն. (Πρὸς Ἰουδαίους καὶ Ἕλληνας καὶ αἱρετικοὺς καὶ εἰς τὸ ἐκλήθη Ἰησοῦς εἰς γάμον). « Ձագք ծիծառանց նստելով 'ի բունի՝ անսան ծնողացն գալոյ և բերելոյ զկերակուրն » ։

— Յ'անառակ որդին. (Εἰς τὴν παραβολὴν περὶ τοῦ ἀσώτου). « Հանապազ զԱստուծոյ մարդասիրութիւնն պարտիմք քարոզել եղբարք » ։

— Ի Քանանացին և 'ի Փարաւոն. և եթէ Ոչ որ կամին և ոչ որ ընթանայն, այլ որ ողորմին. (Εἰς τὴν Χαναναίαν, καὶ εἰς τὸν Φαραὼ καὶ ὅτι οὐ τοῦ θέλοντος, οὐδὲ τοῦ τρέχοντος, ἀλλὰ τοῦ ἐλεοῦντος Θεοῦ). « Թէպէտ և պղտորեաց զմեզ երեկորի խռովութիւնն, այլ զուարճացոյց ամենեցուն փոյթն » ։

— Ի հարիւրապետն. (Εἰς τὸν Εκατόνταρχον). « Հարիւրապետի սուրբ ծառայ չարաչար ախտացեալ՝ հանդերձեալ էր մեռանել » ։

— Յ'Արարածոց մեկնութենէ մինչ յաքսորսն էր. « Եւ արդ մի ոք Աստուծոյ ստեղծուածոցն մեղադիր լինիցի » ։ (Հատուած. (Καὶ μηδεὶς τοῦ Θεοῦ τὴν δημιουργίαν μέμφοιτο).

— Ի Զաքէոս մաքսաւոր. (Εἰς τὸν Ξακχαῖον τὸν τελώνην). « Որք բարեացն են ցանկացողք, ոչ են հե-

ռագոյն 'ի բարեացն ծարաւելոց. քանզի որքան գը-տանեն զհայցեալն, այնքան փափաքելով առ ծա-րաւն վառին » :

— Ի կինն Մեղաւոր, և 'ի գալուստն Քրիստոսի յԵրուսաղէմ. « Զերկրպագեալ եկեղեցի փրկչին Մերոյ, օրհնելիք » :

— Ի տասն կուսանսն. (Εἰς τὴν παραβολὴν τῶν δέκα παρθένων). « Յորժամ զմտաւ ածեմ զդիւրածա-խութիւն կենցաղոյս » :

— Ի Թերահաւատութիւն Թովմայի. (Εἰς τὸν ἅγιον ἀπόστολον Θώμαν). « Ահա դարձեալ տաւն, ահա դարձեալ փրկութիւն ոգւոյ վայելչապէս հատուցա-նել ձեզ զայս բան » :

— Ի Վերացումն տեառն. (Εἰς τὴν αναληψῖν τοῦ Κύριου ἡμῶν Ἰησοῦ Χριστοῦ). « Պայծառ է ինձ այսաւր եկեղեցւոյ տեսարան. ոչ ծիծաղմունս մարդկայինս գործեցեալ ընդունայնս » :

— Ի սուրբ խաչն Քրիստոսի. (Εἰς τὸν τίμιον καὶ ζωοποῖον σταυρόν). « Զինչ ասացից, կամ զինչ խաւսե-ցայց. զո՞ զձեզ կոչեցից. ոչխա՞րս եթէ հովիւս » :

— Յաղագս չողբալոյ զվախճանեալսն, մանաւանդ որ տղայք անարատք թողին զայս կենցաղս. (Περὶ ὑπομονῆς, καὶ τοῦ μὴ μικρῶς κλαίειν τοῦς τελεύτωντας). « Բեր պայտուհեալ մանաւանդ քան յառաջագունի-ցըն՝ փութաբար վարդապետութեամբ մնացուք 'ի ներքս » :

— Յաղագս հաւատոյ. (Περὶ πίστεος). « Բժշկի նման է եկեղեցւոյ վարդապետ. բազմաց և զանազան ախտից բժշկական դեղս տանելով » :

Անբնագիրք. Ներբողեան 'ի սուրբն Գրիգոր Լու-սաւորիչ, ասացեալ 'ի Կոկիսոն մինչ յաքսորն էր, Ճառ առաջին. « Հրաշալի է մեզ տաւնս այսաւր » :

— Ի սուրբն Լուսաւորիչ Ճառ երկրորդ. « Աս-տուածազարդից արանց գովասանութիւն բազում և զանազան է » :

— Առ լուսաւորեալսն ասացելով լուսացմամբ Մա- րիամայ. «Աւրհնեալ է Աստուած, ահա և յերկրէ աստեղք երեւին»:

— Յանդամալոյծն. «Յետ այսորիկ տաւն էր Հրէ- ից. և ել Յիսուս յԵրուսաղէմ. և անդ էր աւազան մի հնգասրահեան»:

— Ի կինն մեղաւոր որ աւծ զտէրն իւղով. «Սովո- րութիւն է աշխարհական երաժշտութեանց՝ փողով և քնարաւ և նոյն նմանեաւք զուարճացուցանել զեր- գասիրաց մարդկան զմիտս»:

— Յաղագս ապաշխարութեան. «Յորժամ երի- տասարդն էիր, պարտ էր քեզ զանձրեւոյթն խոր- հել զկատարածին քոյ»:

— Յաղագս ողջախոհութեան. «Գիտէք հաւա- տարապէս և առանց մերոյս բանից՝ զի յոլովից և մե- ծամեծաց բարեաց ողջախոհութիւն մարդկան պատ- ճառ լինի»:

— Ո՞չ գիտէք եթէ մարմինք ձեր անդամք են Քրիստոսի. «Աւրէնք են զինուորաց յայն կողմն խո- նարհեցուցանել զպատերազմն, յոր կողմն զաւրա- վարն առաջնորդեսցէ»:

— Վասն ողորմութեան և անոխակալութեան և ամենայն առաքինութեան. «Ի զանազան երանգս գունոց ծաղկանց նմանեցաւ զարդ առաքինու- թեանց»:

— Ի սուրբն Ստեփաննոս յառաջնարկաւագ և նախավկայ Քրիստոսի. «Եկն Քրիստոս եհաս՝ ճա- նապարհ հորդելով 'ի կեանս և 'ի փրկութիւն աշ- խարհի»:

— Յ'Ադամ և 'ի անասնութիւն. «Բարւոք են համբերութեան պտուղք, քանզի բարւոք վաստա- կոց պտուղք բարեփառ»:

— Յ'աւր պահոցն յորում փրկիչն զոտս աշակեր- տացն լուանայր յարուցեալ յընթրեացն. «Զողոր-

մութիւն Աստուծոյ և զմարդասիրութիւն քարոզէ արարածս ամենայն. քարոզէ և ստացուածս զանարէնութիւնս » ։

— Ի յարութիւն Քրիստոսի. « Յորժամ զտխրական ձմեռն գարնանային ժամանակն փոխանորդեսցէ. և զանազան հաւուցն յաւդս թռուցեալ նուագաձայնութեամբ երգեն »* ։

* Տպագիրն 'ի ծանօթութեան. « Համառօտութիւն է այսր Ճառի՝ վերջաբան Յովհաննու Մեկնութեան Նանայի ասորւոյ » ։

— Ի փորձանս ուրբնականին և 'ի պատասխանիսն Քրիստոսի առ 'ի « սիրեսցես զտէր աստուած քո յամենայն սրտէ և յամենայն անձնէ քումմէ » . որ ասացաւ զկնի յառաջ ասացուածին. « Վաստակք և ջանք առաջին վարդապետին եղեն. զի յիմում բուրաստանին տունկս արկի » ։

— Յաղագս Նեռին. « Աղաւթեսցուք հանապազ զտիւ և զգիշեր. և սպասեսցուք փրկչին՝ որ գայ նա 'ի դատել զերկիր » ։

— Վասն միւսանգամ գալստեանն Քրիստոսի. « Այգ փոխին երկինք, և եղիցին երկինք նոր. և փառքն այն իբրև ստուեր անցանէ » ։

— Յովհաննու Ոսկիբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի (հարազատ) Ճառք։ — Վասն արդարապէս աղաւթելոյ. « Ճշմարիտ արդեւքիցէ հանդիպելոյ մեզ, և եղե՞ւ հաւատատեալ լեալ »* ։

* Ի յոյն բնագրին վերնագրեալ է Ճառս. « Յորժամ ձեռնադրեցաւ քահանայ, յանձն իւր և յեպիսկոպոսն և 'ի բազմութիւն ժողովելոցն » ։ Մեր ձեռագրաց մէջ ալ տեղ տեղ. « Պատմութիւն ժողովոյն և յառաջին յամէլն և յեպիսկոպոսն » ։

— Առ Թէոդորոս որ անկանել հանդերձեալ էր 'ի վանականութենէն և 'ի սուրբ վարուցն. (Λόγος παραινετικός, εἰς Θεόδωρον ἐκπεσόντα). « Եթէ զար-

տաստուս և զհառաչանս դոյր հնար 'ի ձեռն գրոյս յայտնել » ։

Մատենագրան Էջմիածնի, Թիւ գրչ. 887. « Ճառընտիր մեծագիր բոլորագիր, գրեալ 'ի Թվին 'ի կաթուղիկոսութեան տեառն Գրիգորիսի՝ յարքեեպիսկոպոսութեան մայրաքաղաքին Տարսոնի տեառն Ներսեսի որդւոյ Աւշնի, 'ի Թագաւորութեան Լեւոնի յաղթողի, 'ի վայելումն Ներսեսի. ունի յիշատակարան Թերի 'ի վերջն, զոր քիչ ետքը մէջ պիտի բերենք, և յորում պարունակին Յովհաննու Ոսկեբերանի երեսուն և չորս ճառք ։ Առջի երկուքին վըրայ, զոր յիշեցինք.

1.° Պատմութիւն Ժողովոյն

2.° Առ Թէոդորոս, և այլն

Էջմիածնի Մատենագարանին օրինակը կը յաւելու.

3.° Խրատ որ կրաւնաւորիլ կամին զփրկական կրաւնաւորութիւնն. «Զերկիւղ ընկալ զԱստուծոյ և մաքուր վկայութեամբ գիտակցութեամբ քով վարեսցիս. զնոյն ինքն 'ի վերայ կացեալ համարեսցիս զԱստուած՝ զոյս գործեան հանապազ » ։

4.° Խրատ որ 'ի բաց մերժեն յապականացուացըն և մերձեցուցանեն յանապական կեանս զմարդն. « Ճանապարհք առաքինութեան յաշխարհէ փախուստք բարձր և համառաւտք », եւ հինգերորդ,

— Հանդէրձեալ մտանել 'ի սուրբ քառասներեակն յաղագս պահոցն և 'ի Յովնան. « Պայծառ մեզ այսաւր տաւնս և պայծառագոյն սովորական (ըստ այլոց ձձ. քրիստոսական) ժողովս »* ։

* Միւս այլ Թարգմանութիւն ճառիս այսպիսի խորագրով. « Յաղագս ապաշխարութեան յառաջ քան զմուտս պահոցն և վասն Յովհաննու և Նինուէացւոցն ». Երևելի և վայելուչ է տաւնս, և վերագոյն և բարձր ըստ սովորութեան աւուրց ժողովս այս » ։

Տպագրողք կը ծանօթացանեն. «Արդարեւ եղեւալ մարթ էր երկրորդ թարգմանութիւն կոչել, եթէ անխոտոր և ճշգրիտ զշարս իմաստիցն պահէր ընդ վերնոյն, համաձայն եղելոյ ընդ յոյն բնագրին. այլ յայտնապէս երեւի զի պարզաբանութիւն է նորա հանդերձ յաւելուածով ուրեք ուրեք. Թէպէտև ոչ յետին գարուց յօրինուած, յորմէ կայ երկաթագիր օրինակ մի հնագոյն, և այլ չորք բոլորագիրք»։

— Յաղագս ապաշխարութեան. (Περὶ μετανίας, καὶ εἰς τὴν σκυθρωπότητα βασηλέως Ἀχαάβ, καὶ εἰς Ἰωνᾶν). «Տեսէ՞ք յառաջնումն կիւրակէին զպատերազմն և զյաղթութիւնն. զպատերազմն սատանայի, և զյաղթութիւնն Քրիստոսի»։

— Ի սկզբան քառասնորդաց ասացեալ յաղուհացամուտն ('ի ցուցակին Էջմիածնի՝ յաղագս պահոց), և թէ վասն էր յերկնէ և յերկրէ սկիզբն արար զպատմութիւնն Մովսէս. (Λόγος α.' Λεχθεῖς εν ἀρχῇ τῆς τεσσαρακοστης). «Հեշտալի նաւավարաց է գարունն. ախորժելի և երկրագործաց»։

— Ընդէ՞ր յաղագս արեգական և լուսնի, երկնի և երկրի և այլոցն ասաց՝ եղիցին. իսկ վասն մարդոյն՝ արասցուք. և զինչ ըստ պատկերին. (Λόγος β'. Τι δήπετε ἐπὶ μετὰ ἡλίου καὶ σελήνης καὶ ουρανοῦ καὶ τῶν ἄλλων ἐιπε, γενηθήτω). «Յիշիցէ՞ք զխնդիրն որ յառաջագոյն եդաւ մեզ առաջի»։

— Զինչ է՝ ըստ նմանութեանն. և ընդէ՞ր ասացեալ Աստուծոյ մեզ՝ իշխեսցեն գազանաց, և ոչ իշխեմք. և զի բազում խնամակալութիւն է այս. (Λόγος γ'. Τί ἐστὶ τὸ, καθ' ὁμοίωσιν, καὶ τίνος ἕνεκεν, τοῦ Θεοῦ εἰπόντος τῶν θηρίων ἡμας ἀρχεῖν). «Զոր աւրինակ սերմանողացն՝ այն աւգուտ ոչ ինչ է յորժամ 'ի ճանապարհս զսերմն ընկենուցուն»։

— Եթէ ծառայութեան երիս աւրինակս 'ի ներքս

մաւծին մեղք, և առ պղերգացեալսն որք լսեն և ոչ պատուեն զծնողս. (Ὅτι δουλείας τρόπους τρεῦς εἰσηγάγεν ἡ ἁμαρτία). Լուայք երեկ զիարդ արար Թագաւոր և իշխան գազանաց զմարդն Աստուած. և որպէս 'ի թագաւորութենէն զնա արտաքս ընկէց»։

— Եթէ ոչ յաղագս Ադամայ պատժիմք. և եթէ մեծագոյն քան վասն նորա 'ի ներքս եմուտ արտմութիւն՝ քաղցրութիւն, և եթէ յանձինս հայիցիմք. և ընդդէմ այնոցիկ որ զանց առնեն զաղքատովք. (Ὅτι οὐ διὰ τὸν Ἀδὰμ κολαζόμεθα, καὶ ὅτι μείζονα τὴν δι' ἐκείνου εἰσενεχθέντων λυπηρῶν τὰ χρήστα). «Դուք թերեւս կարծիցէք արդեւք թէ որ յաղագս ակերութեան ձեզ բանն ամենայն աւարտեցաւ»։

— Եթէ նախ քան զուտելն գիտէր Ադամ զինչ բարի և զինչ չար. և թէ պարտ է 'ի տան կրթել զասացեալսն յեկեղեցւոջ. (Περὶ τοῦ ξύλου, εἰ διὰ ἐκείνου γέγονεν ἡ γνόσις τοῦ καλοῦ). «Սիրեմք զպահս, զի մայր է ողջախոհութեան և այրիւր ամենայն իմաստութեան»։

— Ընդէ՞ր փայտ ճանաչելոյ բարւոյ և չարի կոչի փայտն. և զինչ արդեւք «Ակսաւր ընդ իս իցես 'ի դրախտին». (Διὰ τὶ ξύλον γνωστὸν καλοῦ καὶ πονηροῦ). «Յաւէտ աղաչեցի երեկ զձեր սէրդ յիշել զասացեալն, և կրկին սեղան յերեկորին մերձ դնել զկերակրոյն և զբանից»։

— Յաւրն ձմեռնային և 'ի ժողովս եպիսկոպոսաց և 'ի տուրս աւրինացն Ադամայ. և թէ յոլով խնամակալութեան էր (այլ ձ. խնամարկութիւն էր) զաւրէնս առնուլ. (Εἰς τὴν ἡμέραν χειμέριον οὖσαν, καὶ εἰς τὴν σύνοδον τῶν ἐπισκόπων). «Ամպոց խուռն ընթացք զաւրս մեզ ախրագոյնս արարին. բայց մերձաւորութիւն վարդապետին պայծառագոյն զսա գործեաց»։

— Ի սաղմոսն երկշաբաթին երկրորդ կիրակէին

աստացուած. « Կատարեցէք զպահոց նաւարկութիւն. և 'ի նաւահանգիստս՝ Աստուծոյ շնորհաւքն այսուհետև ժամանեցաք »* ։

* Բնագիրն յոյն. (Εἰς τὴν μεγάλην εβδομάδα, ἐν ᾗ διδασκαλία, τίνος χαρὶν καλεῖται μεγαλη ἑβδομάς). « Ի մեծ շաբաթն, թէ ընդէ՞ր մեծ կոչեցաւ. և 'ի բանն Աւրհնեա անձն իմ զտէր. և 'ի բանտապահն որ 'ի Գործս առաքելոց » ։

— Ընդդէմ արբեցութեան յառաջնում աւուր Պենտակոստէին. (Κατὰ μεθυοντῶν). « Ի բաց եղաք զպահոցն բեռն. այլ մի՛ 'ի բաց մերժեսցուք զպահոցն շահս » ։

— Առ հանդերձեալսն լուսաւորիլ. և ընդէ՞ր աւազանն՝ վերստին ծննդեան և ոչ թողութեան ասի. և եթէ վտանգաւոր է ոչ սուտն միայն երդնուլ, այլ և երդնուլն, թէպէտ և արդար երդնուցումք. (Κατήχησις πρῶτη πρὸς τοὺς μέλλοντας φοτίζευται). « Իբրե՛ւ զի ցանկալի և փափաքելի է մեզ նորոց եղբարցս սէր » ։

— ** Յառաջնում աւուր վարդապետութեանն խաւսելով յաղագս երդմանցն զայս ասաց. 'ի նոյն պատճառ դարձեալ ուսուցանելով թէ ոչ երդնուլն միայն, այլ և բարուոք երդնլումն պատիժս ունիմք. և թէ այցելապէս Քրիստոս յերրորդում աւուրն յարեաւ. « Հալածիցէ՞ք արդեւք 'ի բաց 'ի բերանոց ձերոց զչար երդմանցն սովորութիւն »* ։

* Տպագրողք 'ի ծանօթութեան. « Թէպէտև յոյն բնագիր այսր ճառի կորուսեալ իցէ, այլ հարազատութիւն նորա և անուն իսկ յայտ է՝ զի զոր խոստացաւն 'ի նախընթացին ասել յաղագս պատճառի որոշման ժամանակի մկրտութեան և այլոց կարևոր գիտելեաց՝ կատարէ 'ի սմա » ։

— Խրատ առ որս հանդերձեալ էին մկրտել. և վասն կանանց որ աւելորդ զարդուք զարդարեն զին-

քեանս. և վասն նշանի պատկերաց այլազգեաց որ կապեն 'ի ձեռս իւրեանց, յոտս և 'ի գլուխս. և զի աւտար է այս 'ի հաւատացելոյ Քրիստոսի. (Κατηχήσις πρὸς τοὺς μέλλοντας φοτίζεαις). « Զյառաջագոյն ճառսացեալսն սիրոյ ձերում, այժմ նախ մերձ եղէ զպտուղն խնդրել 'ի ձէնջ »:

— Առ այնոսիկ որ խնդրեննն ընդէր ոչ 'ի միջոյ 'ի բաց եղև սատանայ. և եթէ ոչ ինչ զմեզ վտանգէ և վասնէ նորա չարութիւն, եթէ զգուշանայցեմք. և յաղագս ապաշաւանաց. (Πρὸς τοὺς ἐγκαλουντας τίνον ἕνεχεν οὐχ ἐχ μέσου γέγονεν ὁ διάβολος). « Իսահակ ցանկացաւ երբեմն Ճաշ 'ի ձեռաց որդւոյն ուտել, և զորդին յորս առաքեաց 'ի տանէն »:

— Եթէ 'ի ծուլութենէ է չարութիւն և 'ի փութոյ առաքինութիւն. և ոչ ինչ՝ ոչ չար մարդիկ և ոչ ինքն սատանայ յաղթութնն վնասել կարէ. եցոյց այլ ուստ ամենայն ուսուեք և յԱդամայ և Յովբայ. (Ὅτι ἐκ ῥαθυμίας ἡ κακία, καὶ ἀπὸ σπουδῆς ἡ ἀρετή): « Մեք նախ զերիկեան աւրն որ յաղագս սատանայի բանք էին »:

— Յաղագս քնարանին և 'ի խաչն. (Εἰς τὸ ὄνομα τοῦ κοιμηπηρίου, καὶ εἰς τὸν σταυρὸν τοῦ Κυρίου). « Բազում անգամ խնդրեցի յիս ինքեան՝ ընդէր արդեւք հարքն մեր զաղաւթարանացն տամբք որ 'ի քաղաքիս են զանց առնելով, արտաքոյ քան զքաղաքս մեր այսաւր և աստ ժողովել աւրինադրեցին »:

— Ի խաչելութիւն Տեառն. (Εἰς τὸν σταυρὸν καὶ εἰς τὸν λῃστόν). « Այսաւր տէրն մեր 'ի խաչին, և մեք տաւնս առնեմք. զի ուսցիս եթէ խաչն տաւն է և ժողով հոգևորական »:

— Յաղագս յարութեան. (Περὶ τῆς τῶν νεκρῶν αναστάσεως ὁμιλία). « Յաղագս գործոց ընդ ձեզ յառաջագոյն խաւսեցայ, և միածնին փառաց. կարկելով որք զնա պատին »:

— Ի սուրբն Մելետիոս Անտիոքայ եպիսկոպոս և 'ի բազմութիւն ժողովոյն, որք եկին միաբան տօնել զաւուր կատարման նորա, որ է յամսեանն փետրուարի ԺԳ. (Εἰς τὸν ἐν ἁγίοις πατέρα ἡμῶν Μελέτιον ἀρχιεπίσκοπον Ἀντιοχείας). « Ընդ ամենայն տեսակս ժողովրդեանն շրջեցուցանեմ զաչս իմ, և զամենայն քաղաքս աստ եկեալ տեսանեմ » :

— Ներբողեան ասացեալ 'ի սուրբն Իգնատիոս եպիսկոպոսն Անտիոքայ. որ վկայեաց 'ի Հռովմ քաղաքի. և զկնի վկայութեան սորայն' նշխարք նորին շնորհեցան Անտիոքացւոց քաղաքին. (Εἰς τὸν ἅγιον ἱερομάρτυρα Ἰγνάτιον τὸν θεοφόρον). « Պատուասէր կոչնատեարքն սոքա բազմախորտիկս և զանազանս պատրաստեն սեղանս » :

— Ի Պետրոս և 'ի Հեղիաս. (Λόγος εἰς Πέτρον τὸν ἀπόστολον καὶ Ἠλιοῦ τὸν προφήτην). « Սակաւք են այսաւր առ մեզ եկեալքս. և զինչ արդեւք իցէ պատճառ » :

— Առ որս թողին զժողովն, և յաղագս (ոչ) զանց առնելոյ զվերագիր առաքելական գրոց, և 'ի գիր մեհենին, և 'ի նոր լուսաւորեալսն. (Πρὸς τοὺς ἐγκαλείψωντας τὴν σύναξιν τῆς ἐκκλησίας). « Զինչ այս. որքան յառաջէ մեզ առունս, այնքան և ժողովն նուազ լինի » :

— Ի վերնագիր գործոց առաքելոցն. և թէ պատուականագոյնք են առաքինի վարք քան զնշանս և զսքանչելիս առնել և ունել. և թէ զանազանին առաքինութիւնք 'ի նշանաց. (Συμάξεως διὰ χρόνου... εἰς τὴν ἐπιγραφὴν τῶν πράξεων τῶν ἀποστόλων). « Յետ բազում ժամանակի առ մայրս մեր դարձեալ վերստին եկաք »* :

* Ի տպագիր ցուցակին Էջմիածնի (թիւ 1330-31) բաց 'ի ծանօթ խմբագրէն, կը նշանակուի յանուն Ոսկերբերանի նաև ընդարձակ Մեկնութիւն Գործոց,

գաղղիարէնս մին 'ի ՇԻԵ (1076) թուին, և միւսն 'ի ՉԼԷ (1288)։

— Ի սակաւութիւն ժողովելոցն և յամրութիւն Պաւղոսի կոչմանն. և զի աւետարանագրացն է զինչ յարութեանն. (Ἀ·αγνωσθεις περὶ κοπῆς Σαῦλ·ς δέ ἔπι ἐμπνέων ἀπειλης καὶ φονοῦ). « Արդեւք այսոքիկ նե-րելի՞. արդեւք այսոքիկ համբերելի՞. հանապազաւր մեր ժողովս 'ի նուաղութիւն ամփոփի »։

— Յաղագս խոնարհութեան, և 'ի բանս առաքելոյն. Եթէ պատճառանաւք և եթէ ճշմարտութեամբ Քրիստոս քարոզի. (Πρὸς τοὺς οὐκ εἰς δεονχρωμετύους τῶν ἀποστολικῶν ῥητῶν ...). « Զփարիսեցին և զմաքսա-ւորն յիշեցաք յառաջագոյն. և երկուս կառս բանիւ լծեալ՝ յառաքինութենէ և 'ի չարութենէ »։

— Յաղագս ոչ հրապարակագոյժ առնելոյ զմե-ղանս եղբարց. և ոչ հակառակ աղաւթել թշնամեաց. (Περὶ τοῦ μὴ δημοσιεύειν τὰ ἁμαρτήματα τῶν ἀδελφῶν)՝ « Երանեմ զձեր փոյթս, սիրելիք, որով 'ի հայրենի տունս 'ի միասին ընթանայք »։

— Ճառ յԵւտրոպիոս իշխան, որ յահէ թա-գաւորին ապաւինեալ եղև յեկեղեցին. (Ὁμιλία εἰς Εὐτρόπιον εὐνοῦχον πατρίκιον καὶ ὕπατον). « Միշտ, առաւել եւս այժմ, 'ի դէպ է ժամանակ ասել. Ու-նայնութիւն ունայնութեանց ամենայնն սնոտի է »։

— Ճառ յորժամ հանդերձեալ էր անկանել. («Ὅ-τε ἀπήει ἐν τῇ ἐξόρια). « Մարդասէր մեզ ժողովս, և պայծառ մեզ տաւնս է այսաւր »*։

* Տպագրողք 'ի ստորեւս իջեցն. « Ընդ երկբայա-կանն թերեւս դասելի էր առաջակայ ճառդ յաղա-գս անյայտ և անկցորդ հատուածոց նորա և իմաս-տիցն, եթէ չկայր 'ի միջի յոյն բնագիր նորա 'ի կար-գի հարազատացն. սակայն և այնպէս թերակատար մանաւանդ յունականին 'ի կիսոյ և անդր, և մնացորդ մասանցն ոչ ճշգրիտ համաձայնութեամբն ընդ մե-

րայս՝ կարծիս, տայ անզերծ լինել 'ի համարձակութենէ օտար ձեռաց, կամ հատուածոց նորա՝ ոմանց վրիպակաւ. թէ յանդգնաբար չփոթեալ ընդ այլում ճառի։ Մինչ այսու օրինակաւ շատացեալ գա ժամըս, ստուգեսցի ժամանակաւ 'ի բազմութենէ օրինակաց որ հարազատն իցէ »։

— Յաղագս վերստին կոչման իւրոյ. (Τοῦ αὐτοῦ ἐπανελθόντος ἀπὸ τῆς προτέρας εὐξορίας ὁμιλία). « Յորժամ զՍառա յԱբրահամէ յափշտակեաց Փարաւոն, զգեղեցիկ և զբարի կինն »։

— Վասն Քանանացի կնոջն. (Εἴς τὴν ἐπίλευσιν τῆς Χαναναίας). « Յոյժ են խռովութիւնք. այլ զձեր յաւժարութիւն փութոյն չկարաց արգելուլ »։

— Ի մարգարէական բանն. Եւ եղև 'ի տարւոջն յորում մեռաւ Ոզիա արքայ. և թէ ոչ ժամանակաւ և զգրով միով զանց առնել պարտ է զգրոց. (Εἰς τὸ ῥητὸν τοῦ προφιτοῦ Ησαΐου τὸ λέγον καὶ ἐγέντο τοῦ ἐνιαυτοῦ, οὗ ἀπέθανεν Ὀζίας ὁ βασιλεύς). « Զուարճանամք, 'ի միասին ընթացեալս զձեզ տեսանելով 'ի գրոց լսելութիւն »։

— Ի բան Մնացորդացն որ ասէ. Բարձրացաւ սիրտն Ոզիայ. և յաղագս խոնարհութեան. և եթէ պարտ է ոչ վստահանալ յառաքինութիւն, և որքան չար է ամբարտաւանութիւն. « Աւրհնեալ է Աստուած. և յազգիս մերում ընծայեցան վկայք. արժանաւորք եղեաք և մեք տեսանել զմարգիկ յաղագս Քրիստոսի սպանեալս »*։ Յոյն բնագիրն առ Մոնֆոքոնի, Հատ. Զ. 120։

* Ի մնացեալն յաղագս Ոզիայ. « Բե՛ր այսաւր որ յաղագս Ոզիայ պատմութեանն է՝ հատուցուք ձեզ զպարտսն »։ Յոյնն, Հատ. Զ. 231։

— Ի բանն. Եւ եղև 'ի տարւոջն յորում մեռաւ Ոզիաս, և վասն ապաշխարութեան. (Εἰς τὰ σεράφειμ). « Հազիւ ուրեմն վասն Ոզիայ հատաք անցաք զանդնդականց ծովուն զլայնութիւն »։

— Խօսք յանյայտութիւն հին կտակին և յԱստուծոյ մարդասիրութիւն. և յաղագս ոչ չարախօսելոյ. (Ἐτὶ εἰς τὴν ἀσαφέιαν τῆς παλαιᾶς διαθήκης, καὶ εἰς τὴν τοῦ Θεοῦ φιλανθροπίαν). «Զուարճանայ անդէորդ յորժամ քաջաբուտ և պնդակազմ տեսանիցէ զիւր զարշաւոցն հօյլս»։

— Զկնի կաղանդացն յաղագս արբեցութեան և ողորմութեան. և 'ի Ղազարոս և որ առ նովաւ ընչեղն, որ է տուն հեթանոսաց. (Εἰς τὸν πτωχὸν Λάζαρον καὶ τὸν πλούσιον). «Զերբեկեան աւրն' տուն սատանայական' արարաք տուն հոգևոր»*։

* Տպագրողք 'ի ծանօթութիւնս. «Ընդարձակ ճառս 'ի յոյն բնագրին' զեղչեալ է յօրինակին մերում աւելի քան զերկու հարիւր տողս յայլ և այլ տեղիս, յորս զանց առնեմք նշանակել»։

— Ի Ղազարոս ճառ երկրորդ. (Εἰς τὸ Λάζαρὸν λόγος δεύτερος). «Սքանչացայ ընդ սէրն ձեր' յորժամ յաղագս Ղազարու յառաջագոյն շարժեցի զբանն»։

— Ի Ղազարոս ճառ երրորդ. (Εἰς τὸν Λάζαρον λόγος τρίτος). «Ոչ դուզնաքեայ ինչ աւգտեաց Ղազարու առակն զձոխս և զաղքատս»։

— Ի Ղազարոս ճառ չորրորդ. (Εἰς τὸν πλούσιον καὶ τὸν Λάζαρον λόγος τέταρτος). «ԶՂազարու զառակիս զկատարած հարկաւոր է այսաւր ընձեռել»։

— Յասացուածս Պաւղոսի յաղագս ննջեցելոցն. «Ոչ կամիմ զձեզ անգիտանալ, եղբարք, որպէս և այլքն». (Εἰς τὸν ῥήτον τοῦ ἀποστόλου, περὶ δὲ τῶν κεκοιμημένων οὐ θέλω ὑμᾶς ἀγγοιεῖν, ἀδελφοί ...). «Աւուրս չորս ծախեցաք որ ըստ Ղազարու առակն էր ձեզ պատմելով. և զգանձն պեղեցաք' զոր գտաք 'ի վիրաւորեալ մարմին ամբարեալ»։

— Խօսք որ 'ի շարժմանն եղեն. (Εἰς τὸν σεῖσμον καὶ εἰς τὸν πλούσιον καὶ εἰς τὸν Λάξαρον). «Տեսէ՞ք

զԱստուծոյ զաւրութիւնն, անտեսէք զԱստուծոյ ըղ-մարդասիրութիւնն » ։

— Առ Անոմեանսն, յաղագս անհասանելւոյն. 'ի բաց եղելոյ եպիսկոպոսին որ յԱնտիոք. (Τοῦ αὐτοῦ περὶ Ἀκαταλήπτου, ἀπόντος τοῦ ἐπισκόπου πρὸς Ἀνομοίους). Ճառ Ա. « Զինչ այս. հովիւն ոչ է մերձ, և հաւան հանդերձ յուրով բարեկարգութեամբ կայ »* ։

* Տպագրողք 'ի ծանօթութեան. « ...Յերկոտասան ճառից յունականին (յԱնհասից գրոց) ևթն միայն կան առ մեզ » ։

— Ճառ Բ. Յառաջ քան զբազում աւուրս առ Անոմեանսն ասացեալ, այլ առ Հրէայս. և ապա դարձեալ յաղագս եպիսկոպոսաց և վկայից եղելոց բազմաց, այժմ դարձեալ առ Անոմեանսն յաղագս անհասանելւոյն. (Λόγος λ.' Յոյն բնագիրն առ Մոնֆոքոնի, Հատ. Ա, 452). « Եթէ այսուհետև առ անհաւատան Անոմեանոսս մերկացուք. թէպէտև զայրանայցեն անհաւատք ասացեալք, փախիցեն յիրացն. և ես փախչիմ յանուանէս » ։

— Ճառ Գ. Յաղագս անհասանելւոյ. և եթէ ոչ նուաստանալն Աստուծոյ' բերելի է 'ի սերովբէիցն. (Λόγος γ.' Յոյնն Հատ. Ա, 462). « Աշխատասէր մըշակք յորժամ տեսցեն ծառ անպտուղ և ընդդանի աշխատութեանցն նոցա ժանտացուցիչ » ։

— Ճառ Դ. Առ Անոմեանսն' յաղագս անհասանելւոյ. (Λόγος δ.' Յոյնն Հատ. Ա, 471). « Բաւական էր ցուցանելն յառաջագոյն մարդկան անհասանելի գոլ զԱստուած և հրեշտակաց և քերովբէից և սերովբէից 'ի բաց վճարեալք յիրացն » ։

— Ճառ Ե. Յաղագս անհասանելւոյն. (Λόγος ε.' Յոյնն Հատ. Ա, 480). « Յորժամ հանդերձեալ ալ իցէ զերկայնագոյն պատճառէն բուսան հարկանել »* ։

* Ի վախճան Ճառիս գրչագիրն որ 'ի Մատենադարանին Էջմիածնի կը յաւելու. « Ջահք Պետրոս Հայոց կաթողիկոս զատուցաւ սուրբ գրոցս լուսաւոր վարդապետութեանս Յովհաննու յիշեսջիք 'ի Քրիստոս, որ մեծաւ փափաքանօք ետ գրել. որպէս զի և կատարեալ վարձուց ընդ նմին արժանացի 'ի Քրիստոսէ » ։

— Ճառ Ջ. Ի նորումն եկեղեցւոջն ասացեալ առ Անձնմանեան յաղագս անհաստատնելւոյն. (Λόγος ια.' Յոյնն Հատ. Ա, 841). « Մի առ ընդ ձեզ խաւսեցայ, և յաւուրքն յայնմանէ այնպէս զձեզ սիրեցի, որպէս եթէ 'ի սկզբանն և 'ի վաղուց հետէ ձեր իցեմ սննդակից » ։

— Ճառ Է. Ի յարութիւնն Ղազարու. (Εἰς τὸν τετροήμερον Λάζαρον). « Այսաւր 'ի մեռելոց յարուցեալ Ղազարու, 'ի թաղումն և 'ի պանդղան վտանգից և 'ի վշտաց շնորհեաց մեզ մխիթարութիւն մեկնութեան » ։

Անդրիական ճառք ։ — Ցանկք ։ Վասն պատճառի գրոցս Անդրիանտաց. « Արդ յետ հրկէզն լինելոյ Վաղեսի կայսեր » ։

— Ճառ Ա. (Ὁμιλία α.' Յոյն ընագիրն առ Մոնֆոքոնի. Հատ. Բ.)։ Խաւսք ասացեալ յԱնտիոք երբեմն նոր քահանայ 'ի հին եկեղեցիս. 'ի բան Առաքելոյ առ Տիմոթէոս՝ եթէ սակաւ գինի խառնեսջիր վասն ստամոքսիդ և ստէպ հիւանդութեանց. և որք գայթակղեն վասն արդարոյն վտանգից, և մեղաւորացն 'ի բարիս վայելելոյ. (Εἰς τοὺς Ἀνδριαντας ὁμιλίαι καὶ ἐν Ἀντιοχείᾳ πρεσβυτέρου, αὐτοῦ ὑπάρχοντος, ἐν τῇ παλαιᾷ ἐκκλησίᾳ). « Լուայք զառաքելական զձայնն, զփողն երկնային, զերգն հոգեորական » ։

— Ճառ Բ. (Ὁμιλία β.' Յոյնն. Հատ. Բ, 20)։ Խաւսք ասացեալ յԱնտիոք երբեմն նոր քահանայ 'ի հին եկեղեցիս յաղագս եկեղեցւոյն գայթակղութեանց

յանիմաստութենէ. և վասն անդրէն դարձուցանելոյ զպատկեր մեծի Թագաւորին Թէոդոսի. և 'ի բան Առաքելոյ. Մեծատանց պատուիրել յայսմ ժամանակի զգոյշ լինել. և վասն ապահութեան. «Զինչ ասացից կամ զինչ խօսեցայց. արտասուել զհասեալ ժամանակս՝ ոչ բանիւք, ոչ երգութեամբ՝ ոչ խաւսիւք. աղաւթից յայս համարձակելոյ մեծութիւն:

— Ճառ Գ. (Ὁμιλία γ.' Յոյնն. Հատ. Բ, 35): Յաղագս գնալոյ Փլաբիանոսի արքեպիսկոպոսի առ Թագաւորն բարեխաւսել վասն քաղաքին զի դարձուսցէն զանդրիանդսն. և զի բարձրագոյն և մեծ է ըստ Աստուծոյ քահանայութիւն քան զԹագաւորութիւն. և վասն պահոց պնդութեան աւրինակաւ Նինուէացւոցն առ անասունսն. և Թէ բամբասելն և չարախաւսելն վատԹար է քան զմարմին եղբաւրն ուտելն. և զի բազում պարտաւորք ազատեցան և անպարտք պատուհասեցան. «Յորժամ ընԹանամ յաԹոռ քահանայապետին, տեսանեմ զնա միայն անապատ և ունայն 'ի վարդապետէն. խնդամ և արտասուեմ»:

— Ճառ Դ. (Ὁμιλία δ' Յոյնն. Հատ. Բ, 48): Մխիթարութիւն առ ժողովուրդն, և վասն ներողութեան և համբերութեան աւրինակաւ Յոբայ և երից մանկանցն. և վասն 'ի բաց կալ հանապազ 'ի բանից երդմանէ. «Աւրհնեալ է Աստուած որ մխիթարեաց զվտանգեալ անձինս ձեր, և հաստատեաց զդողացեալ սիրտս ձեր»:

— Ճառ Ե. Դարձեալ առ ժողովուրդն՝ զի քաջութեամբ տանիցին եկելոց սպառնալեացն աւրինակաւ 'ի դրոց չափաւոր պատմութիւն Յովբայ և Նինուէացւոյն. և զի քան 'ի մահուանէ՝ 'ի մեղաց պարտ է երկնչել. և Թէ ամենայն ջանիւ պարտ է փախչել յերդմանէ. (Ὁμιλία δ.' Յոյնն Բ, 59). «Զերից մանկանցն և զհնոցին Բաբելացւոց պատմութեամբ չափաւորութեան զխորգ պարտ իցէ մխիթարել և աղաչել զսէր ձեր՝ երեկ աւասցաւ»*:

* Ցպագրողս 'ի ծանօթութեան. « Թուղթ ան-
կեալ յօրինակէն, թերի մնոյ վերջին հատուած այսր
Ճառի և սկիզբն վեցերորդին » :

— Ճառ Զ. Թէ բարւոք է երկիւղ իշխանաց. և
վասն գիպուածոյ Ճանապարհէին որոց հանդերձեալ
էին պատմել Թագաւորին. և թէ որք անպարտ գո-
լով չարչարեցին և գոհանան զԱստուծոյ, հաւասար
են որք վասն Աստուծոյ չարչարեցին աւրինակաւ 'ի
գրոց վասն երգման:

— Ճառ Է. Խօսք եթէ մահք և տրտմութիւնք
մեղքն բերին յաշխարհս, և նովին դարձեալ բարձցին
մեղքն. և եթէ. « Ի սկզբանէ արար Աստուած զեր-
կին և զերկիր ». և թէ ոչ միայն պատուէ զմեզ Աս-
տուած, այլ և տանջէ ըստ նմանութեան բարու-
թեանց. ('Ομιλία ζ.' Յոյնն Բ, 84). « Բազում առա-
քինութեամբ երեկ իսկ յայտնեցաք սիրոյդ ձերում.
և յայնմ բազմութենէ եթէ ոչ զամենայն ունել 'ի
միտս ձեր »:

— Ճառ Ը. Յաղագս գնալոյ տեառն Աստուծոյ 'ի
դրախտի անդ ընդ երեկս. և վասն փախչելոյ յերդ-
մանէ. ('Ομιλία η.' Յոյնն Բ, 91). « Իմացայք յա-
ռաջագոյն եթէ զիարդ ամենայն մեղք մխիթարիչք
են և ամենեցուն զմխիթարութիւն բերեն »:

— Ճառ Թ. Գովութիւն գովասանական յաղագս
ուղղելոյ ժողովրդեան չերդնուլ, և թէ զկնի կերա-
կրոյ պարտ է մտանել յեկեղեցին և ունկն դնել բա-
նից Աստուծոյ. և ընդէր յետ բազում ժամանակաց
տուաւ գիր. և յութևտասներորդ սաղմոսէն Դաւ-
թի. և թէ չէ պարտ երդնուլ. ('Ομιλία θ.' Յոյնն Բ,
96): « Ես նախ ընդ ձեզ էի, և այժմ առ ձեզ եմ.
պարտ է և հանապազ իսկ կալ ընդ ձեզ, ոչ թէ ըստ
մարմնոյ գոլով, այլ զաւրութեամբ սիրոյ »:

— Ճառ Ժ. Խօսք եթէ պարտ է յետ կերակրոյ
ոչ հեռանալ յեկեղեցւոյ. և բնախաւսութիւն զաշ-

խորհէ և զարարչութիւնսն Աստուծոյ. և ընդ 'ի բաց կալ յերդմանէ. ('Ομιλία ι.' Յոյնն Բ, 105)։ «Ուրախ եմ, և ուրախակից լինիմ ձեզ ամենեցուն, և զխրատն մեր վասն նոցա որք ոչ պահեցին զմնա-ցեալսն նախ 'ի ձէնջ այսաւր 'ի գործ մատուցա-նել»։

— Ճառ ԺԱ. Գոհութիւն Աստուծոյ վասն փո-խարկելոյ ակնկալի չարեացն և յիշելոյ զնոյն, և ար-համարհանաց մարմնոյ մերոյ և նորին սանդղամանն. և ուղղելոյ զշաւիղս երդմանն. ('Ομηλία ια.' Յոյնն Բ, 114)։ «Յորժամ զմտաւ ածեմ զանցեալ ձմեռն և զհասեալ հանդարտութիւնս, ոչ դադարեմ ասել` աւրհնեալ է Աստուած»։

— Ճառ ԺԲ. Գոհութիւն առ Աստուած, և վասն թողութեան զոր առ թագաւորն մեղան, և վասն ա-րարածոց, և բնական աւրինաց մարդոյն, և վասն երդմանն. ('Ομιλία ιβ.' Յոյնն Բ, 123)։ «Ես երեկ ասացի` աւրհնեալ է Աստուած, և դարձեալ զնոյն ասեմ»։

— Ճառ ԺԳ. Դարձեալ գոհութիւն Աստուծոյ վասն ազատելոյ 'ի խռովութեանցն, և յիշումն զոր քարշէին և տանջէին. և դարձեալ վասն մարմնոյն հրաշագործութեան, և բնական աւրինաւք գիտու-թիւն գործոց, և սերտիւ ուղղել զերդումն. ('Ομιλία ιγ.' Յոյնն Բ, 133)։ «Ի նախնի բանս եկեալ և 'ի սոցին առաջաբանութիւնս զոր յերեկն և յեռանդն սկը-սաք, և այսաւր զնոյն սկսանիմք և ասեմք, աւրհնեալ է Աստուած»։

— Ճառ ԺԴ. Խաւսք վասն նոյն քաղաքին իրաց. և զի ոմանք յանձնախեցին զհամբաւ ահին և յանդգ-նեցան. և խրատ վասն երդման և զանցանելոյ աւ-րինական պատմութեան Յովնաթանու, յԵփթայէ և 'ի Սաւուղայ. ('Ομιλία ιδ.' Յոյնն Բ, 140)։ «Ոչ որ-պէս կամէաք խռովեցոյց զքաղաքս մեր սատանայ.

բայց Աստուած ոչ կամեցաւ. այլ յամօթ արար զպատանեայ»:

— Ճառ ԺԵ. Դարձեալ խաւսք վասն քաղաքին իրաց. և թէ բարի է երկիւղն և ողբումն քան ըղձանքն. և 'ի բանն որ ասէ. Ծանիր եթէ 'ի մէջ որոգայթի շրջիս. և թէ քան զսպանանել՝ չար է յերդումն ածել զոք. ('Ομιλία ιε.' Յոյնն Բ. 151): «Պարտ է այսաւր՝ որպէս յառաջնումն շաբաթուն վասն պահոց սկսանել զբանս. և մի ոք առանց ժամանակի կարծեսցէ զասացեալս»:

— Ճառ ԺԶ. Վասն համբաւոյ զաւրականին իշխանին Բրեգայ, յորում ամենեքեան զզուարթուսն խորհէին. և 'ի պաղ կոմսին յեկեղեցին մխիթարել. և 'ի կապանաց Պաւղոսի զոր ասէ. «Պաւղոս կապեալ Յիսուսի Քրիստոսի» և վասն երդման. ('Ομιλία ιϛ.' Յոյնն Բ. 160): «Զիշխանն իսկ զուգեցի. վասն զթութեանն իւրոյ որ խռովեալ ևեթ զամենայն քաղաքս մեր, և զամենեսեան 'ի խորհուրդ փախստեան»:

— Ճառ ԺԷ. Վասն մենակեցաց իշխանացն 'ի Թագաւորէն Թէոդոսէ՝ Եղեւքիոս զաւրավարս և Կեսարիոս մագիստրոսին քննել զյանցանս քաղաքին վասն պատկերին զարձուցանելոյ. ('Ομιλία ιζ.' Յոյնն Բ. 171): «Ի ժամանակի պաշտեցաք ամենեքեան առհասարակ, աւրհնեալ ես դու Աստուած Իսրայելի՝ որ առնես սքանչելիս միայն»:

— Ճառ ԺԸ. Վասն յառաջանալոյ վտանգիցն, և վասն պահոց. և 'ի բանն Առաքելոյ. Ուրախ լերուք 'ի տէր յամենայն ժամ. ('Ομιλία ιη.' Յոյնն Բ. 180): «Զբազումս տեսի ուրախացեալս և ընդ միմեանս ասելով. Յաղթեցաք անցաք զհատորդ պահոցս»:

— Ճառ ԺԹ. Խաւսք վասն կեցուցիչ կիւրակէին աւնի, և յեկեղեցին բազմութեան. և թէ ամենեքին չէ պարտ երդնուլ. ('Ομιλία ιθ.' Յոյնն Բ. 188): «Իրն-

գամուեցիք 'ի սուրբ վկայիցն յառաջագոյն յասուրս յայս. լցայք հոգեւորական տաւնիւս. խայտացէք վբարի խայտալն պարելով» :

— Ճառ. ԻԱ. Վասն հաշտելոյ Թագաւորին ընդ քաղաքին. և որք մեղան 'ի կործանել զպատկերս անդրիանտացն. և 'ի գալուստ եպիսկոպոսին Փլաբիանոսի. (Ὁμιλία κα.' Յոյնն Բ. 213). «Ի բանից գրոց միշտ 'ի ժամանակի վտանգիցն ստացայք սերոց ձեռում, յայնմանէ և այսաւր. սկսանիմ և առեմ ձեզ» * :

* Տպագրողք 'ի ծանօթութեան. «Վերջին ճառս անդրիանտաց ըստ կարգի նախընթացիցն քանե-րորդ նշանակեալ յաւրինակին մերում, քաներորդ առաջներորդ է 'ի յունականն, որոյ քաներորդն պակասի 'ի մերն» :

Յիշատակարան «... Ես Տէր Գէորգ, շնորհիւն Աստուծոյ Հայոց կաթուղիկոս, ցանկացող եղեալ այսմ աստուածաճառ ճառից, որքոյն Յովհաննու Ոսկեբերանի, մեծ փափագանաւք և յորդորամիտ կամաւք, ստացա զստացուած, 'ի նշանաւոր և 'ի ճշգրիտ գաղափարէ յիմաստնոյ Իախաւէ, առն ճարտարի գրչի, ստացուած ոչ զառժամանակեայ, որ աւտար է բնութեանս մերոյ. այլ զստացուածն որ կայ մշտնջենաւոր զանխռացրանալին, և առ Աստուած ճանապարհին առաջնորդ. զայս երկու վետակս հոսեալ յանծայրս ծովէ, ժողովեալ 'ի մի պարունակող բովանդակեցի գետ, որ ուրախ առնէ զքաղաք Աստուծոյ՝ այսինքն զբանաւոր կենդանատունգս. անգեալք 'ի տան Տեառն. զի անհասիցն պատմութիւնքն՝ 'ի փափաքումն ածէ գերականսութեան էիցն բարեաց, և տրամութիւն ամբարեաց յոգիս մեր, աւրինակ իմն հրաժարումն առնելով անհասութեան իմաստիցն. քանզի որպէս արգեւք առռանց տրամութեան լինիցի. գիտելով զայնքան վե-

րին ճանապարհին բարձրութիւնն. այլ սակայն հա-
մարձակելի է յԱստուած վերագրելով զայսն, որ-
ոտ քան աւետարանչացն զաւրութեան. իսկ միւս
պատմութիւնն՝ փոքրագոյն կենդանին ծիծառն՝ զաւ-
րինակ իմն 'ի մեզ նկարագրէ զգարնայնոյն շնորհն-
մտեղծիչ գարնանայնոյն. առ որս ասէ Դաւիթ.
Զգարուն և զամառն դու ստեղծեր. այս թռչուն
լուծանէ զախորութիւն ձմերանւոյ, և ախորժելի առ-
նէ զժամանակն ամենայն բանս հաւուցն երգովք.
որք 'ի բոյնս և յանտառս հնչեն. հեշտալի ծիծառան-
ցըն և տատրակացն 'ի լսելիս ազդեցեալ ձայն, որ-
պէս և ծաղկաւն զուարճացեալ տեսութեամբ. և
հոտոյն ուրախացեալ. զայսոսիկ պատրս վարկանիմ
ոչ զերեւելի գարունս զայս նկատել, այլ հոգւոյ ա-
կամբ տեսանել զգարունն հոգւոյ, յորժամ սառ-
նամանւոյց բնութիւնս այս սկսանի ընձիւղել 'ի ծագ-
մանէ արեգականն արդարութեան. զորս միանգա-
մայն ծագմամբ ճառագայթիւքն ջեռուցանելով ընդ-
նմին զի նեղքոյս կացեալ, որպէս զի ջեռեալ ոգւով,
և զուարճացեալ ճառագայթիւք բանին, դարձեալ
լինիցիմք ջուր խաղացեալ 'ի կեանսն յաւիտենից. և
արժանաւորապէս 'ի ժամու զպտուղն տուեալ. սա-
ղարթալից բնակեացուք 'ի սան տեառն, և 'ի խո-
րանս սրբութեան նորա յաւիտեանս: Զայսոսիկ ըն-
ծայեմ Աստուծոյ գոհութիւն պատարագ ընտանե-
գոյն, ընծա քան զոսկի մաքուր, և քան զքարինս
պատուով պայծառագոյն. քան զզոհս աւրինացն
երբագոյն, քան զանդրանկացն պտուղս ընդունելի.
հաճոյ Աստուծոյ քան զորթ մատաղ եղջերաւք և
կճղակաւք, քան զխուռս, քան զողջակէզս, քան
զբիւրաւոր գառանց պարարտից: Զայս երկու սա-
րուածաբուզի վտակս ընծայեմ Աստուծոյ, զայս
նուիրեմ, զոր միայն ինձ ընքեան. Թողի որով միայն
ճոխանամ: Քանզի զայլովք զամենեքումբ զանց ա-

բանի, պատուիրանօքն և հոգւով. և զբազմապատկե-զմարգարէսն փոխանակ ամենեցուն, որոց ունէին երկրեմն՝ փոխանակեցի, և եդէ մեծաշահ վաճառա-կան, և զաւարձանօք պարզեալ տաւալել, քան որոց բազմաւք ընդերէն. և տանել զաս ամենայն կենաց իմոց հաղորդ, և խորհրդակից բարի և խաւսակից. և առաջնորդ վերին ճանապարհին. զի զամենայն զմա-եղջականս անպատուել 'ի տաղերնս կալ մեալ: Յայս ինձ ամենայն թափեցաւ սիրելութիւն զենի Աստու-ծոյ: Արձան անմահ կանգնեցի յիշատակ հոգւոյ իմոյ ... Գրեցաւ աստուածագիծ պատգամս այս 'ի թուականիս Հայոց յորում ՆՂԷ էր. 'ի գեղաքաղաքին Հռոմկլայ, յերեքտասաներորդ ամին. 'ի թագաւո-րութեան Մանուէլխոս կայսեր, իսկ մեր լուսաւո-րութեանս եւթն հարիւր և քառասուն և չորս. և 'ի կուսածին ծագմանէն հազար քառասուն և հինգ: Իսկ եթէ համիս զճշմարիտն խուզել, զլինելութիւն արարածոցս, յԱդամայ մինչև 'ի ծնունդն Քրիստո-սի լինին ամք ՐՆԻ յարագրելս թուականն հոռոմին՝ այսինքն ՉՃՁ լինի ՐՈ որք են տասնեակք և ամք (Մ) ՏՁ. այգ անվրէպ ժամանակագրութիւն ըստ հինգ-հարիւրեակ բոլորակին հոլովմամբ յետադարձու-թեան, վասն զի ամենայն ժամանակագրութիւնքն անմիաբան հանդիպին միմեանց մինչև ցհինգհարիւ-րեակ բոլորակս (?) զոր յԱղեքսանդրիա կարգեցին երեսունևվեց փիլիսոփայքն »:

Ի գրչագրին որ յ'Էջմիածին. « ... Ի չրջաբերու-թեան թուածին անուանս հայկազեան ամ հասեալս 'ի ՈԻ և եւթանց, 'ի տասներորդում ամի պետութեան քա-ղաքին սորա ... և 'ի թագաւորութեան Հայոց բա-րեպաշտ և քրիստոսապսակ արքային Լեւոնի ... 'ի 'ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի Հայոց հեզինակի, և յարհիեպիսկոպոսութեան մայրաքա-ղաքիս Տարսոնի տեառն Ներսեսի որդւոյ Աւշինին տե-

բռնաւորի. և յիշխանութեան անօրէնին Եւդոքսեայ Լամբ-րունի աստուածաւէր և բարեպաշտ իշխանաց իշխա-նի Հեթմոյ սեբաստացւոյ, ունելով իշխանակից իւր եղբարս հարազատս զԱպլիրատ ու զՇահնշահ յառ-աջին գաւառս տէրողք. որ ունի և ծաղկեալ պա-հակս զԱւշին անդրանիկն իւր, և զԿոստանդին ... Գրեցաւ յեղբայրանոցս որ 'ի գաւառիս Լամբրու-նի, որ գեղջուկ բարբառով 'ի հին սովորութենէն Գետմաձգեր յորջորջի, ընդ հովանեաւ սուրբ Աս-տուածածնիս. և յառաջնորդութեան որբասէր և հարազատ եղբարց Սեւանայ և Յովհաննիսի: Արդ որ վայելէք՝ յիշեցէք աղաւթիւք զբաստացաւղ գրչաս այսմիկ զանէր Ներսէս, աստուածային շնորհացն զարդարեալ և գիտութեամբ լցեալ, որ 'ի սոյն ամի հանգեաւ 'ի Քրիստոս »: ...

Ի Մատենադարանին Երուսաղէմի. (Թիւ գրչ. 972). « Անդրիանդեայ ճառք և ներբողեանք սրբոյն Յովհաննու ասացեալք թարգմանեալ[1] յաւուրս հայ-րապետութեան տեառն Գրիգորիսի կաթուղիկոսի, և քրիստոսապսակ արքային Հայոց Լեւոնի. ընդ խնդրոյ երանելւոյն Ներսէսի Լամբրոնացւոյ. յամի տեառն 1191 և Հայոց ՋՃԽԷ ... (միւս գրչագիր 'ի նոյն Մատենադարանի, Թիւ 972, կը դնէ « յամի տեառն 1198, ՈԽԷ »): Գրչագիրն է աւրինակեալ 'ի Կոստանդնուպոլիս յամի տեառն 1714. գաղափա-րեալ 'ի ձեռագրէ գծելոյ ՋՃՄ թուին Հայոց 'ի Սիս, ընդաւրինակեալ յետ (քսան և) երից ամաց թարգ-մանութեանն:

— Յովհաննու Ոսկեբերանի 'ի բանէն որ վասն բարերոյք վարուց և անխառն 'ի սնափառութենէ ը-նելոյ այնոցիկ որք ոչ կրթին մարդկային իմաստու-թեամբ. « Սրբեսցուք զաղտս յունիկանէ հոգւոյն.

1 Փոխանակ ըսելու ընդօրինակելով, ինչպէս յայտնի է նաև 'ի նախընթաց յիշատակարանաց:

վասն զի որպէս աղտ և տիղմն զաւնկն մարմնոյ խըղնուն»։ (Հատուած Ճառի 'ի խմբագիր մեկնութենէ կաթուղիկէ թղթոց. 'ի Փարիզեան ազգային մատենադարանի, Suppl. 48).

Ի Մատենադարանին Երուսաղեմի (թիւ 972) հետևեալ ցուցակը կը գտնենք Ճառից Ոսկեբերանի, զոր արժան համարիմք դնել 'ի գիտութիւն բանասիրաց։

Ա. Յաղագս յեկեղեցին մտրան ընթանալ և աղօթել։ — Բ. Յաղագս աղօթելոյ։ — Գ. Յաղագս համբերութեան, աւրինակելով զՅոբ։ — Դ. Յաղագս չար նախանձու։ — Ե. Յաղագս բարեկեցութեան և որկորամոլութեան։ — Զ. Յաղագս ողորմածութեան։ — Է. Դարձեալ յաղագս ողորմածութեան։ — Ը. Յաղագս ոչ համարելոյ փոքր զյանցանս, այլ և 'ի փոքունցն զգուշանալ։ — Թ. Յաղագս ոչ բարկանալոյ։ — Ժ. Դարձեալ յաղագս ոչ բարկանալոյ։ — ԺԱ. Յաղագս Ճանաչելոյ զմեր բնութիւն, և ոչ ցանկալ գեղեցիկ գեղ կնոջ։ — ԺԲ. Յաղագս թէ ոչ 'ի հարկէ ինչ մեղք լինիցին, այլ 'ի չար կամաց։ — ԺԳ. Յաղագս արժանաւորութեամբ մերձենալ 'ի սուրբ խորհուրդն և ոչ ժամանակաւ։ — ԺԴ. Յաղագս թէ մի ինչ յառաքինութեանցն լուծանել, բաւական է հանել յարքայութենէն, և վասն տանջանացն. այլ և այլ մեղաց որ շատ և որ սակաւ։ — ԺԵ. Յաղագս առաջնոցն պընդութեան յառաքինութիւնսն, և մեր ծուլութիւն։ — ԺԶ. Յաղագս գառնալոյ 'ի չարեաց աւրինակաւ Նինուէացւոցն։ — ԺԷ. Յաղագս սիրոյն Քրիստոսի։ — ԺԸ. Յաղագս գուսանական խեղկատակութեան։ — ԺԹ. Յաղագս կռապաշտութեան, որ է ագահութիւն։ — Ի. Յաղագս առն և կնոջն սիրել զմիմեանս։ — ԻԱ. Յաղագս ծնողաց զորդիս խրատու տեառն սնուցանել։ — ԻԲ. Յաղագս միշտ յիշել զԱստուած։ — ԻԳ. Յաղագս ագահից և անարգ ծնողաց։ — ԻԴ. Յաղագս

արդարութեամբ կեալ և չարաչար գեհենին տանջա-
նաց։ — ԻԵ. Յաղագս 'ի չափու ունել զանձն։ — ԻԶ.
Յաղագս սիրոյ և զընկերն շահելոյ։ — ԻԷ. Յաղագս ոչ
ողբալոյ զմեռեալս։ — ԻԸ. Յաղագս ոչ մատնելոյ ան-
ձամբ զանձինս 'ի փորձութիւն, այլ միշտ 'ի բարիսն
կիրթ կալ։ — ԻԹ. Յաղագս հանդերձեալ բարու-
թեանցն։ — Լ. Յաղագս ծերոց և մանկտւոյ զգաստա-
նալոյ։ — ԼԱ. Յաղագս ստոյգ ապաշխարութեան։ —
ԼԲ. Յաղագս ողորմածութեան և ոչ քննելոյ զար-
ժանն։ — ԼԳ. Յաղագս ընտրութեան արքայութեանն
և յորդորելով 'ի բարիսն։ — ԼԴ. Յաղագս ոչ սիրել
զաշխարհս և որ ինչ յաշխարհի է, ուրինակաւ սըր-
բոցն։ — ԼԵ. Յաղագս 'ի չափու ունել զանձն, և առ
զարդասէր կանայս։ — ԼԶ. Յաղագս ապաշխարութեան։
— ԼԷ. Յաղագս հանդերձեալ տանջանացն ստուգու-
թեան, և ոչ խաւսել չար զումեքէ՝ այլ զանձնէ։ —
ԼԸ. Ողբք յաղագս մեղուցելոցն և ոչ ապաշխարել։ —
— ԼԹ. Յաղագս աւելորդ ցանկութեանցն։ — Խ. Յա-
ղագս սատանայի և ահեղ խորհրդոց, և ոչ անարժա-
նութեամբ հաղորդել։ — ԽԱ. Յաղագս կանանց աւե-
լորդ պաճուճանաց և պչրանաց աշխարհականաց և
կուսանաց հաւատաւորաց։ — ԽԲ. Յաղագս զորդիս և
զդստերս խրատելոյ հարց և մարց՝ ըստ կամացն
տեառն։ — ԽԳ. Յաղագս անձամբ տալ աղքա-
տին ; և վասն միայնակեցաց սրբոց։ — ԽԴ. Յաղագս
հնազանդ լինել առաջնորդաց, և ոչ բամբասել։ — ԽԵ.
Յաղագս սակաւ գողութեան և յափշտակութեան
ընդ բազմի համարեալ 'ի չար կամացն։ — ԽԶ. Յաղա-
գըս ոչ հաւատալ հմայից և հատընկեցաց, և որ ինչ
սոցին նման են, զի ընդ կռապաշտութեան համա-
րեալ է։ — ԽԷ. Յաղագս որ զանարժան ոք յեպիսկո-
պոսութիւն կոչէ, և որք բամբասեն զառաջնորդն։ —
ԽԸ. Յաղագս չարհամարհելոյ զառաջնորդն։ — ԽԹ.
Յաղագս ոչ տանելոյ զմանուկ խաւթացեալ 'ի բը-

ժըլկութիւն բժշկաց սատանայի։ — Ծ. Յաղագս Պաւղոսի արտասուացն, և ոչ մտանել 'ի հարսանիս կաքաւչաց և սատանայական երգոց։ — ԾԱ. Յաղագս անձամբ աղաւթել, և ոչ 'ի սրբոցն միայն յաղաւթան ապաստան լինել։ — ԾԲ. Յաղագս որ յընչիցն կորուսեան ոչ երթան 'ի հարցուկս և 'ի դէտս՝ ընդ մարտիրոսացն առնուն վարձս։ — ԾԳ. Յաղագս ամենայն արդարութեան որ ընդդէմ մեղաց։ — ԾԴ. Յաղագս գեհենին տանջանաց՝ հաստատել ուրինակաւ Ջրհեղեղին և Սոդոմայ հրոյն, եղծանելով որք ասեն թէ սպառնալիք միայն իցեն։ — ԾԵ. Յաղագս զգուշութեամբ գնալ ընդ նեղ ճանապարհն և մի ծուլանալ։ — ԾԶ. Յաղագս չար մարդոյ, նմանեալ փաղանի և ոչ մարդոյ։ — ԾԷ. Յաղագս մոգուցն նմանել. և պահել զանձն 'ի գիջութենէ։ — ԾԸ. Յաղագս դարձի 'ի խոստովանութիւն և ապաշխարութիւն։ — ԾԹ. Յաղագըս ամենայն առաքինութեանց կրթութեանց։ — Կ. Յաղագս նշանի սուրբ խաչին, և մարդասիրութեանն Աստուծոյ։ — ԿԱ. Յաղագս վաշխից։ — ԿԲ. Յաղագս պահոց և աղաւթից, և բարեկեցութեան և առքեցութեան։ — ԿԳ. Յաղագս հպարտիցն։ — ԿԴ. Յաղագըս խնամ տանելոյ ընկերաց փրկութեան և որդւոց։ — ԿԵ. Յաղագս յաճախ երախտեացն Աստուծոյ անչափ, և մեր յաճախ մեղքն։ — ԿԶ. Յաղագս կուսութեան, ուրինակաւ ներքինեաց։ — ԿԷ. Յաղագս առաւել քան տասանորդովք տալ աղքատաց։ — ԿԸ. Յաղագս ոչ լինելոյ անյոյս 'ի փրկութենէ, եթէ պոռնիկ իցէ և եթէ այլ մեղաւոր։ — ԿԹ. Յաղագս սրբոցն միայնակեցաց։ — Հ. Յաղագս մեռելոցն առնել աղաւթս և տուրս տալ, և վասն այնոցիկ որ անկընունք գնացին։ — ՀԱ. Յաղագս ոչ բարձրամտել իւիք, այլ խոնարհ լինել։ — ՀԲ. Յաղագս ոչ բամբասել զքահանայս։ — ՀԳ. Յաղագս աւելորդ ծախուց ոսկւոյ և հանդերձից, և ամենայն զգայութեամբք ծառայել

տեսան։ — ՀԴ. Յաղագս Աստուծոյ մարդասիրութեանն և յորդորելով յառաքինութիւնս։ — ՀԵ. Յաղագս թէ չէք ինչ որ զառաքինութիւնն վնասիցէ, աւրինակաւ սրբոցն։ — ՀԶ. Յաղագս ահաւոր գալըստեանն Քրիստոսի։ — ՀԷ. Յաղագս տուրս տալոյ առաջնորդաց և սրբոց։ — ՀԸ. Յաղագս թէ բազում հոգովք և փորձութեամբ պաշարեալ են թագաւորք և իշխանք, այլ երկնից արքայութիւնն է կեանք և խնդութիւն։ — ՀԹ. Յաղագս ամենեցին ոչ երդնուլ։ — Յաղագս ողորմածութեան և ոչ գանձելոյ միայն որդւոց, և շինել և անկել. այլ զկատարածն զմտաւածել և զմահն։ — Ձ. Յաղագս 'ի բանն մարգարէին որ ասէ. Ի նանիր խռովի ամենայն մարդ, գանձէ և ոչ գիտէ ում ժողովէ։

— Սրբոյ հօրն մերոյ Յովհաննու Ոսկեբերան հայրապետի Մեկնութիւն յաւետարանն Յովհաննու.

Ψπόμνημα εἰς Τὸν ἄγιον Ιωάννου απόστολον Και ἐυαγγελιστηυ.

Թարգմանչին յիշատակարանը. « Զաստուածայետականն բոլոր գոյութիւն... այլ և զանգիւտ հայկազանցս զլուսաւոր մարգարտիս զպատճառն զերանելի Լուսաւորչին մերոյ զփոխանորդ զԳրիգորիս զհոգևոր հայրն մեր և զխնամածու յիշեցէք ի տէր։ Վասն զի նա եղև սկիզբն զսուրբ աւետարանիս մեկնութիւնս գրելոյ ի գիրս յայս ի ձեռն բազում աղաչանաց իմոց զինքն երանելին։ Որ և լուեալ ինձ ըստ աստուածասէր և պատուիրանասէր հոգւոյ իւրոյ, սկիզբն եդ առնել թարգմանութեանս յասորւոցն լեզուէ։ Եւ քանզի շողփաղփ այլատարազ գոյ լեզու ասորի 'ի մերս հայկազանցս ազգ և լեզու, ըստ որում վերստին իմ աղաչանօք 'ի ձեռն առեալ վկայաւեր ոգւոյն, 'ի յունականէն առնել զթարգմանութիւն գերահրաշ ճառիցս աստուածաբան աւետարանչի, Յովհաննու մեկնութեան, ի ձեռն հոմանուն

երանելի պատրիարքին Կոստանդնուպոլսի տիեզերակեցոյց, աշխարհալոյս վարդապետի Ոսկեբերան կոչեցելոյ մոկանուանութեամբ... վասն զի յարմար գոյ յունականն բարբառ 'ի մերս ըստ թարգմանութեան։ Արդ ունկնդիր եղեալ ինձ՝ թողեալ զԱնդրէաս երէց տարի զթարգմանիչ՝ յղէ 'ի Միսապատամն գաւառ յունական հռետոր Թէաւպիստէ կոչեցեալ. որ էր քարտուղար և պռոտոյնոտար իշխանին Առաւն կոչեցելոյ. և բազում ծախիւք առատատուր պարգեւաւք նմա ետ թարգմանել զսուրբ գիրս։ Եւ արդ նա 'ի Քրիստոս փոխեալ յերանելի կեանսն՝ բազում ճառք մնացին անթարգմանք։ Յոր ես ձեռնարկեալ՝ նոյնպէս առատաբար հրիւք զմնացեալսն ետու աւարտել նմին առն։ Եւ է ճառիցս թիւ զոր նորոգ 'ի յայտ ածաք՝ յիսուն և հինգ ճառ. քանզի զերեսուն և զերիսս բազում յուզիւք յառաջին մեր թարգմանչացն գտաք թարգմանեալ։ Ի սկզբան տասն և երեք ճառ յասորի լեզուէ. բանքն իսկ ցուցանեն. իսկ զքսանն 'ի յունականէն, որք լինին երեսուն և երեք ճառք։ Բովանդակն էր գիրքն լեալ թարգմանած 'ի հայս. և 'ի ծուլութենէ և յանփոյթ առնելոյ այլքն կորուսեալ և եղծեալ էին յաւրինակըս հինս՝ ուր և կայր։ Եւ զայս զոր գտաք՝ 'ի յախմար և 'ի տգէտ խաւարած գրագրաց այլ և աւելի և պակաս, անաւգուտ 'ի կարդալոյ և յիմանալոյ։ Զոր իմ Կիւրակոսի արպի և անարժանի 'ի ձեռն առեալ ուղիղ յաւրինեցի ըստ կարի. այլ ըստ մտաց բանիցն և այլ 'ի կրկին աւրինակաց. և ըստ այսմ զնորոգ թարգմանեալս բազում ջանիւ և աշխատութեամբ յերիւրեցաք յուղիղն բառ և 'ի բանս ըստ մերումս զհատակոտոր վերթին բանսն. և ըստ վերադրոյն գրելոցն՝ ոչ աւելի և ոչ պակաս։ Արդ այսպէս գրեցաք և տուաք վերջին աւուրց վերջին դարուս» ...

Ուրիշ յիշատակարան մ'ալ. «Աւրհնութիւն և

փառք ... որ ետ կարողութիւն ապիկարս անձին հասանել յաւարտ սուրբ գանձիս ... որ է աւետարան սրբոյն Յովհաննու, մեկնեալ Յովհաննու Ոսկեբերան վարդապետէ, շնորհաւք սուրբ Հոգւոյն. յոյժ հանեղ բանիւք և յորդորակաւք: Եւ յաւուրս Թագաւորացն մերոց աստուածասիրաց (արտաքոյ տողին «Լեւոնի») . Թարգմանեալ 'ի լեզուէ յունաց և ասորւոց 'ի մեր բարբառ. 'ի կենարար գալըստենէ տեառն մերոյ և փրկչին ՌՃԺԲ ամին, 'ի ձեռն Կիրակոսի ումեմն իմաստասիրի և առաքինւոյ » ...

Հին բոլորագիր գրչագիր մը, (յԵրուսաղէմ), որոյ Թուականը կը պակսի, 'ի վերջ առաջին հատորոյն կը գնէ զյիշատակարանս. «Կատարեցաւ առաջին գիրք Յովհաննու սրբոյ Կոստանդնուպոլսի հայրապետի: Արդ որք ընթեռնոյք կամ գաղափար դնելով փարթամանայք 'ի ձոխ և յանկապուտ մեծութեանց, յաստուածային գերունակ իմաստից, յիշեսջիք 'ի Քրիստոս զաշխատողս սուրբ կտակիս. նախ զսրբազանն Կիրակոս վարդապետ, որ բազում աշխատութեամբ և ըղձափափագ տենչմամբ յասորւոց գրէ և լեզուէ, և 'ի յունականէն քերթողական արուեստիւ Թարգմանեալ 'ի հայ բարբառ և գիր: Ընդ նմին և զաստուածարեալ և գեղեցկանուն հայրն իմ ըստ հոգւոյ, զտէր Կոստանդին կաթողիկոս և զԳրիգորէս վարդապետս իմ և զՍտեփանոս. և զաղբիւրն իմաստից Դաւիթ և զայլ աշխատողսն յիս և կրթողս. և զուսումնակից եղբարսն և զըստ մարմնոյ սպասաւորսն և երախտաւորսն » ... Ընդօրինակողն կը յաւելու ապա հետեւեալ տաղաւորն որոյ սկզբնատառք կը յօդեն զանունն իւր.

Յահեղ_ուուրն աներեկի
Ուր ազգք մարդկան անդ գումարի,
Հարսունք մաքուր լապտերաւք լի,
Աննիրհ արթունք մտից փեսայի.

Նիրհեալ թըմբրեալս յայն գիշերի՝
Նուաղեալ խեղդս իմ լալոտերի,
Երբեմըն ձեր պաշտօնէի,
Սաստիւ մատնիմ անդ չար գանձի.
Վասըն որոյ ձեզ տեարք իմ յոգի
Աղաղակեմ այժմ ի մարմնի.
Յիշել սովաւ զմեզ ի բարի
Քաւիչ լինել մեզ համայնի,
Երկնից բարեացն լինել ձեզ մի,
ԶԱստուած աւրհնել անլըռելի ։

Յիշատակարան գրչի. «Քրիստոսի կարողութեամբն և առաջնորդութեամբ Հոգւոյն սրբոյ աւարտեցաւ առաջին գիրքս մեկնութեան սրբոյ աւետարանիս Յովհաննու, զոր բարձր քարոզն տեղեկրաց Յովհան՝ Բերանն ոսկի, արտայայտեաց 'ի զմայլումն մանկանց Նոր Սիոնի, և 'ի կարկուռն հերձուածողաց։ Որք ընթեռնուք զսուրբ գիրս և ստացօղք 'ի սմանէ կարդալով և կամ աւրինակելով և կամ լսելով, արտի մտաւք թողութիւն մեղաց խնդրեցէք՝ ինձ բազմավէր գծողի սորին, Մովսէս երիցու. որ գրեցի զսուրբ գիրս՝ ինձ պաշար յաւիտենական ճանապարհին. 'ի նեղ և 'ի դառն ժամանակիս, որ վասն ծովացեալ մեղաց մերոց մատնեալ կամք 'ի ձեռս ժանտաբարոյ ազգին Պարսից ... Եւ եղև զի 'ի նոյն ժամանակի չարագործ զաւրագլուխ ոմն յղեալ 'ի Թագաւորէն, երբև թէ կամէր զՎրաց տուն երթալ, և ժողովեաց անթիւ զաւրս 'ի վերայ իւր զմեծամեծս և փոքունս, որ երբև զաւազ ծովու և զաստեղս յերկնից. և եկեալ մինչև եւթն ամ՝ խաբէութեամբ շրջեցաւ յերկիրս Աղուանից, Գանձայու, Գեղարքունու, Սիւնեաց և Բարգուշատու. և մասն ինչ 'ի Գողթնեաց, ոչ կայ առնելով 'ի տեղի ուրէք, և ոչ ամենեին կասկած ունելով 'ի Թագաւորէն և կամ այլոց մեծամեծաց. և բազում սուտ քրիստոնեայք, զսուրբ և զճշմարիտ հաւատս Քրիստոսի փոխանակեցին ... և միաբանեցան ընդ Պարսից ...

« Եւ 'ի սոյն դառն և դժնդակ և 'ի լեղալից ժամանակի, բազում վշտակրութեամբ գրեցի առաջին հատոր սուրբ աւետարանիս Յովհաննու, և թողի կիսատակ … Աւարտեցաւ առաջին հատորս 'ի թուաբերութեան Հայոց ՌՃԽ և մի ամին, ամսեանն փետրվարի ԺԴ, առ գալստեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի քառասնաւորեայ 'ի տաճարն։ Ի կաթուղիկոսութեան տեառն Նահապետի Ուռհայեցւոյ, և 'ի մերոյս առաջնորդութեան տեառն Մատթէոսի արհեպիսկոպոսի Ապրակունեցւոյ։ Եւ 'ի յերկիրս Երինճակոյ, 'ի գեւղն Նորաշէն, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Կարապետի. և սուրբ Նախավկայի տաճարիս, որ 'ի թուին ՌՃԼԶ ամին հիմն արկին բազում աշխատութեամբ և վշտակրութեամբ և յոլով ծախիւք»: …

— ** Երանելւոյն տեառն Յովհաննու Ոսկեբերանի 'ի մարգարէն Եսայիաս մեկնութիւն, — որոյ յունական սկզբնագրին առաջին մասն եւեթ մնացած է յարևմտեան քանասիրութեան, և հրատարակեալ 'ի Մոնֆոքոնէ 'ի վեցերորդ հատորի մատենագրութեանց սրբոյն, մինչև 'ի 102 էջ հայ տպագրին մերոյ (1880), ուր թարգմանիչն կամ գաղափարող հետագայ տեղեկութիւնը կու տայ. « Մինչեւ ցայսվայր գտաք իւրովք ձեռովք գրեալ երանելւոյն Յովհաննու յունարէն »: Հայկական ընտիր թարգմանութիւնն, գործ հինգերորդ դարու, ամբողջ պահուած և հասած է մինչեւ առ մեզ. քանի մը տեղ ընդհատութեամբ, 'ի սկզբան գրոյն և ուրեք ուրեք։ Հայերենին վրայէն եղաւ լատին թարգմանութիւնն և հրատարակութիւն 'ի մեր տպարանի. և աւելորդ է ըսել թէ արևմտեան հետաքննին ուսումնասիրութիւնն շնորհընկալ գովութեամբ ընդունեցաւ նաև զայս նոր պարգև հայկական հին մատենագրութեան։

— Կանոնք Յովհաննու Ոսկեբերանի վասն կար-

գաւորաց որ զան 'ի խոստովանութիւն. (Թուով հարիւր են)։ (Մատենադ. Ս. Երուսաղեմի, Թիւ 1304 [1])։

ՅՈՎՀԱՆՆՈՒ ՈՍԿԵԲԵՐԱՆԻ ՎԱՐՔ. (Թարգմանութեամբ Գր. Վկայասիրի)։ (Vie de St. Jean Chrysosthome, traduite par le patriarche Grégoire le Martyrophile).

Յիշատակարան. « Յամի հազարերորդի հարիւրորդի Աստուծոյ մերոյ, և տեառն Յիսուսի Քրիստոսի գալստեան։ Եւ 'ի հինգհարիւրերորդի քսաներորդի 'ի մերում թուականութեանս և յեւթն և 'ի տասներորդի ամի թագաւորութեանն Կոմնոսն Աղեքսի բռնակալի. ես Գրիգորիս, որդի Գրիգորի Մագիստրոսի Հայկազնոյ. ըստ աշխարհի պարթեւ. ըստ ժառանգութեանն Աստուծոյ պահլաւիկ... Կոչեցայ 'ի գիտապետութիւն ազգանսպանս, 'ի բնիկ աթոռ հայրապետութեանն նախնեաց իմոց. և բազում նեղութիւն կրեալ մեր յայլասեռ ազգաց հեթանոսաց և բնակաց։ Եւ ապա յառաջ ասացեալ յամոդ՝ հաստաք 'ի սուրբ լեառն, զոր Սեաւ կոչեն, 'ի մեր սեպհական եկեղեցիքն յուխտն սուրբ, զոր ըստ ասորի բարբառոյ Պառլաջոյ կոչեն, որ թարգմանի դրախտ Աստուծոյ։ Եւ երեսուն և վեց ամի թագաւորութեանս, թարգմանեցի զվարս ճգնութեան մեծ և սքանչելի առնըն Աստուծոյ Յովհաննու Ոսկեբերանի՝ Կոստանդինուպօլսի եպիսկոպոսապետի 'ի ձեռն առն մի որում անուն էր Թէոփիստեայ, ազգաւ յոյն. և ապա ետու վերստին արծարծել զսա 'ի պարաքան և յաւտարա-

2 Մատենախօսական տեղեկութիւնք Ոսկեբերանի գրուածոց՝ տես 'ի ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԿԱՆ, յ'էջ 530-539, աւելցընելով և զթարգմանութիւն 'ի լատին Մխիթարեանն Եսայեայ։

ձայն բայից և բառից առաջին Թարգմանութեանն ըստ քերթողացն իմաստից մրաշար տողելով. ի ձեռն Մատթէոսի եպիսկոպոսի որ անեալ և վարժեալ էր ընդ մերով ձեռամբ... Աղաչեմ զաւրինագիծ գծողսդ այլ հրաման պատուիրանի աւանդեմ, մի ոք իշխեսցէ հատանել զյիշատակարանս աշխատողացս...»

Յիշատակարան հնագիր ձեռագրին որ 'ի մեր Մատենադարանի. «Ընդ աստուածահաճոյ Վկայասիրի և ընդ սրբոյ գիտապետի աթոռակալի սուրբ Լուսաւորչին, արժանի եղիցի յիշատակի մեծապատիւ Սեւաստաւորն և քրիստոսասէր Պարոնս Աւշին, հանդերձ սրբասէր և ճգնազգեաց զուգակցաւն իւրով և աստուածապահ պատանեկաւքն և բարեզարմ հարազատաւքն 'ի Քրիստոս Յիսուս 'ի տէր մեր»...

Դարձեալ նոյն գրչագրին մէջ. «Քրիստոս Աստուած. 'ի քո մեծի և յահաւոր գալստեանդ դասաւորեա զսուրբ Եպիսկոպոսապետն (զՊր. Վկայասէր) զԹարգմանաւղ ճառիցս ընդ երանեալ հայրապետին Յովհաննու։ Ընդ նմին և զմեծանուն արքայապատիւ սեւաստաւն Աւշին՝ հանդերձ կենակցաւն իւրով սրբասիրի և բարեզարդ զաւակաւքն և քրիստոսասէր հարազատաւքն. ամէն։»

ՅՈՒԼԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — (JULIEN, ÉVÊQUE). — Յուլիանեայ եպիսկոպոսի Աղիկառնացւոց նախադրութիւն 'ի վերայ անձին Յոբայ. (յԱստուածաշունչ գիրս)։

— Ի վերայ դրոց Յոբայ. «Նշանակ է գիրքս երանելւոյս». (Ոսկեփոր ժԱ)։

ՅՈՒԼԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (Հռոմայ). — JULES, PAPE). — Յուլիոսի եպիսկոպոսի Թուղթ առ Դիոնեսիոս. «Զարմանամ լսելով յաղագս ոմանց»։

ՅՈՒՍՏՈՍ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ. — (JUSTUS, DE JÉRUSALEM). — *Յուստոսի Երուսաղեմի եպիսկոպոսի յառաջագոյն նորընծայ պատարագին որ 'ի վարդավառին աւուր. և յաղագս Աղաւրհնեաց. « Այսպէս ասէ ուսուցին մեզ առաքեալքն »* ։

— *Վասն աւրհնութեան Եկեղեցւոյ, Խաչի, Մատաղի։ (Յօրհնութիւնաբեր Թղթին յիշատակուած)*։

ՅՈՒԵԹԷՈՍ. — *Սրբոյն Յուլիթէոսի առ 'ի յաստուածաբանականաց ստիքիրոնաց, (իբր թերթ մի)*։ (*Մատենադ. Ս. Երուսաղեմի, թիւ* 757)։ *Տես* ԴԻՈՆԵՍԻՈՍ ԱՐԻՍՊԱԳԱՑԻ։

ՅՈՎՀԱՆՆԷՍ ՓԱՐԱՈՆԵՑԻ (?)

(JACQUES DE PHARAN)

— *Յովհաննու Փարաւնեցւոյ և այլոց վարդապետաց ասացեալ 'ի խորհուրդ առաջին աւուր ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յընթերցուածոց մեկնութեանէն. « Յառաջնում աւուր ասաց Աստուած. Եղիցի լոյս »* ։ (*Մատենադ. Էջմիածնի, թիւ* 920)։

— *Ի յերկրորդում աւուր ծննդեան և յայտնութեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ սրբոց վարդապետացն ասացեալ յընթերցուածոց մեկնութենէն. « Ի յերկրորդում աւուր արար Աստուած զհաստատութիւնն »* ։ (*Անդ*)։

— *Յերրորդում աւուր ծննդեան տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի՝ յընթերցուածոց մեկնութենէն. « Նախ զառաւելութիւն երից աւուրցն ասասցուք. երից աւուրցն լոյս. որ յարարչութեան զԵրրորդու-*

թեան լուսն նշանակէր միով բնութեամբ և երիս անձնաւորութեամբ որոշեալ. որպէս լոյս երից աւուրցըն՝ լոյս և լոյս և լոյս »։ (Անգ)։

— Չորրորդ աւուրն յընթերցուածոց մեկնութենէ. « Ի չորրորդում աւուր արար Աստուած զարեգակն և զլուսին և զաստեղս. և զարդարեաց զերեսս երկնի յետ զարդարելոյ զերեսս երկրիս »։ (Անգ)։

— Հինգերորդ աւուր յընթերցուածոց մեկնութենէն. « Եւ անդ 'ի հինգերորդ աւուրն հրաման տուին ջուրք բղխել զգետս ամենայն, և ամենայն թըռչունս որ յաւդս »։ (Անգ)։

— Վեցերորդ աւուր յընթերցուածոց մեկնութենէն. « Անդ 'ի վեցերորդ աւուրն հրամայեաց Աստուած. Եղիցին ցամաքային կենդանիք ամենայն. յետոյ զմարդն ստեղծեաց 'ի նոյն աւր. և եդ զնա 'ի դրախտին »։ (Անգ)։

— Եւթներորդ աւուրն յընթերցուածոց մեկնութենէն. « Զեւթներորդ աւրէն գրեալ է. Աւրհնեաց Աստուած զաւրն եւթներորդ »։

— Ութերորդ աւուրն յընթերցուածոց մեկնութենէն. « Ցուցցուք ըստ կարողութեան և զխորհուրդ ութերեկի աւուրն, որ յԵրուսաղեմէ սկըսեալ՝ և տարածեալ յինքն աւարտեալ »։ (Անգ)։

Ն Ա Ն Ա Ա Ս Ո Ր Ի.

(NANA, ARCHIDIACRE SYRIEN)

Երկար յառաջաբան տեղեկութիւնք թարգմանչին, — զոր յառաջ կը բերենք, — լիովին ծանօթութիւն կուտան հեղինակին վրայ, ու անոր երկասիրութեան 'ի հայ թարգմանութեան ժամանակին։ Մենք աւել

ցընենք թէ ասորի բնագիրն ու յոյն թարգմանութիւն անհետացած են։ Գրչագիրքը որ բազմաթիւ են յայլեւայլ մատենադարանս, ընդհանրապէս հետեւեալ խորագրով կը նշանակեն զայն.

— Մեկնութիւն Յովհաննու աւետարանին 'ի Նանայ սարկաւագապետէ ասորւոյ յաւրինեալ 'ի խնդրոյ Բագարատայ Բագրատունւոյ, այն որ 'ի հաւատոյն վտանգեցաւ. և յասորի լեզուէ թարգմանեալ 'ի հայ հրամանաւ Սմբատայ արքայի Բագրատունւոյ։

Թարգմանիչն 'ի յառաջաբան տեղեկութեան. «... Այր ոմն սարկաւագապետ գոլով Նանայ անուանեալ. յոյժ հմուտ և վարժ ասորի դպրութեան՝ ստացաւ բոլորից առաքինութեան. պարկեշտ վարուք, մաքուր առ ամենայն մարմնական հեշտութիւնս. աղբիւրաբար ընկալեալ զշնորհս վարդապետութեան 'ի Հոգւոյն սրբոյ, ուղղափառ հաւատոցն որ 'ի Քրիստոս. որ և յանդիմանեալ զոմն եռետիկոս, զայր պերճաբան և իմաստասէր, վանեալ հալածական առնէր յաշխարհէ Հայաստանեայց. որ երբեմն խոստովանակս ուսուցանէր[1] ... Զառ թախանձեալ մեծին Բագրատայ, որ 'ի տանէն Բագրատունեաց. այր յոյժ բարձրագոյնս ստացաւ զանուն. որ և պետ իշխանաց երբեմն 'ի բարբարոս ազգէն Հագարացւոց անուանեալ. որպէս թէ զնա այնու տուեալ պատուի արժանաւոր վարկուցեալ, զորոյ և զանցս անցիցն յիւրում տեղւոջն փոքր ինչ յիշատակեսցուք։ Եւ զինչ իցէ որդեւք աւրինակ խնդրոյն. ստանալ նմա զմեկնութիւն սրբոյ աւետարանին Յոհաննու. որոյ փոյթ 'ի մտի եդեալ վաղվաղակի 'ի ձեռն ուժ-

1 Ազգային ժամանակագրի մը մէջ 'ի ՄԾ (250) թուին նըշանակուած կը գտնենք. «Եպիկուռայ ջանայր զԱշոտ իշխան քաղկեդոնիկ առնել. իսկ Բուրեա վարդապետն առաքեաց զՆանան սարկաւագն, որ յաղթեաց Եպիկուռայ, և մեկնեաց զաւետարանն Յովհաննու»։

գին պահոց և տղաւթից. ջան ոչ փոքր յանձին բե-
րէ շրջագայութեամբ երից ամաց յածեալ ընդ անա-
պատս յերկրին Միջագետաց. որ և յուսայր իսկ
զգիւտ գրոյ ուղղափառ վարդապետաց. և հանդի-
պեալ խնդրոյն առաջնորդութեամբ վերին խնամոցն,
շարադրէ համառաւտաբար 'ի բազմաց հաւաքելով
մի ըստ միոջէ ոճով զմեկնութիւն յոհաննեան սրբոյ
աւետարանին, փոխաբերելով յասորի լեզուոյն 'ի
հագարական լեզու: Իսկ յորժամ ըմբռնեալ լինէր
'ի հագարական ազգէն՝ մեծն և երևելին այն իշխանն
Հայոց վասամամիրան. որ և զբաւընդակն յանձին բե-
րէր ունել զգիտութիւն որ 'ի Քրիստոս հաւատոցն.
որ և նախանձ ոչ փոքրագոյն վասն Քրիստոսի միշտ
յանձին կրէր կշտամբել և յանդիմանել զհերձուա-
ծողացն դասս. ոչ ինչ արութիւն քաջութեան այ-
նուհետև ըստ արժանի իւրոյ մեծութեանն երևե-
ցոյց. այլ երագապէս 'ի վայր հոլովեալ յաստուա-
ծային հաւատոյն զոր ունէր, գլորեցաւ վաղվաղակի
'ի վիհ անկանգնելի կորստեան: Եւ 'ի բաց ընկենլով
զդրոշմ ուխտի ճշմարիտ հաւատոյն, սուգ անհնա-
րին բոլոր աշխարհին Հայաստանեաց հասուցանէր.
թէպէտև հրաշակացաւ (= հռչակեցաւ?) 'ի լսելիս
մեր 'ի խորութեան սրտին հաստատուն պահելով
զճշմարիտ հաւատոցս դաւանութիւնն: Յայնմ ժա-
մանակի 'ի ձեռն պատահման իմն գանձ գրոցս հա-
սեալ լինի առ տէր Սմբատ Բագրատունի: Զոր ըն-
դալեալ խնդութեամբ մեծաւ՝ հրամայէ փութով 'ի
հագարացւոցն 'ի հայկական վերաբերել լեզու, ոչ
ինչ ներելով իմոյ տկարութեանս: Այլ զոր մեծն այն
հռետորն, կատարեալ յարուեստ և 'ի մակացու-
թիւնս՝ այնքան ջան յանձին բերելով տարժանեցաւ,
ո՞վ ոք ոչ զիմս աղարտեսցէ յանդգնութիւն. մատա-
բերել անգամ յայսքան բարձրագոյն խորհուրդ:
Զորոյ և ոչ զառաքինութիւն առնն պարտ է որ յետ

այնորիկ գործեցաւ անյիշատակ թողուլ. այլ եթէ 'ի նկարագրի փոքր ինչ ցուցանել զնորայն ճգնութիւն. ոչ իբրև ներբողելով գրուատել. զի և ոչ բազմութիւն յոյժ իմաստասիրաց 'ի մի վայր գումարելոց՝ կարող են բան ըստ նորա արժանաւորութեան հատուցանել հանդիսի. այլ միայն դոյզն ինչ բանիւք պատմութեանս թելադրել աստ 'ի գիտութիւն լսողացդ: Սա ըմբռնեալ եղև 'ի մերում իսկ ժամանակի 'ի հագարական ազգացն, վասն նախանձու որ 'ի նմանէ բազմափայլ վարդապետութեանն. և ներհակս միշտ առագրելոյն, գնանի 'ի բանս հանդերձ որդւովք իւրովք: որովք բազում անգամ բանս հրապուրականս առաջի արկեալ՝ հանդերձ յոգնազան պարգեւաւք, ոչ ինչ խոնարհեցոյց զանխոնարհելի խորհուրդս մտացն որ 'ի Քրիստոս: Դարձեալ յայլ անսակ հնարից բերեալք լինէին. բանդից և կապանաց և պէսպէս տանջանաց. այլ ոչ զանգիտեալ երբէք զիջանէր 'ի բարձրագոյն հաւատոցն որ 'ի Քրիստոս. և թողեալ 'ի բանդի անդ զբազում ժամանակս, ոչ միայն զինքն ամբողջ պահելով յամբիծ հաւատսն, այլ և բազմաց լինէր առիթ փրկութեան. աներկեղաբար միշտ պահելով զարգելանաւորսն 'ի բանտին...

Եւ յետ այսորիկ այսպէս եղելոյ՝ հասեալ լինի գանձ գրոյս այսորիկ առ Մարիամ Բագրատունի Սիւնեաց տիկին 'ի ձեռն Աշոտոյ հաւր իւրոյ, մեծ և երեւելի տեառն Բագրատունեաց իշխանաց իշխանի:

« Իսկ երանուհւոյս Սիւնեաց տիկնոջ փոյթ 'ի մըտի եղեալ՝ վաղվաղակի հրամայեաց երկիցս անգամ փոխաբերել 'ի հայկական լեզու առաջնորդութեամբ վերին խնամոցն. յարգարէ համառաւտաբար զաստուածային բարձրագոյն հաւատս վերագոյն ունելով ըստ իւրում քաղցր և յոյժ գովելի բարոյիցն. որ հապարակաբար ունէր առ ամենայն մարդիկ զխընամս իւրոյ սիրելի սուրբ մտացն, մանաւանդ թէ

միամիտ հաւատոցն որ 'ի Քրիստոս. պահպանեալ լինի 'ի վերին խնամոցն անճառ' առ 'ի յաղթականութիւն չորից ուստերաց. զոր ոչ պատկառեմ սիրող Քրիստոսի անուանել և կենդանի վկայ. որ այնքան ժամանակս եբեր յանձին ժուժկալութիւն հաւատոցն: Եւ սորա այսպիսի եղելոյ' մի ոք յոյժ վայրի զմեզ բամբասեսցէ' իբրև ասեղագործ ինչ խառնելով զմերս ընդ նորայն ջանս. կամեցեալ իբրու աւատարացուցանել կամ աղաւաղել ինչ: Այլ զի մի անկատար և պակաս վարդապետի փառք յաշակերտէն լինել' փոքր ինչ ներեսցեն մեզ լսողքդ. և ըստ իմաստասէր բժշկացն' որք ի ձեռն երակացն գիտացեալ զախտ պատճառսն, հնարին այնուհետև առ բուժումն: Այսպէս պարտ է ձեզ մտաց աչաւք նայել 'ի ճառս յոր մտաք. (Ճ. մտաւք.) և եթէ իցէ ինչ արատ' բժշկել իբրև զհոգեկան անդամս. և միակամութեամբ սիրոյ յաւժանդակեալ հոգեկան սիրոյն շաղկապութեամբ' և անընդմիջաբար սիրելութեամբ 'ի բաց տանել զմախանս թշնաւորս և երկրաւորս. և միացեալք սիրովն որ 'ի Քրիստոս կալցուք առ միմեանս և տաւաղս և լսաւղքդ' որպէս լոյս առ աչս' և բարբառ առ լսելիս' և հոտ առ հոտոտելիս. և եթէ իցէ ինչ արատ պակասութիւն բանից' հաւատորական բանիւ սերտել և պայծառացուցանել:...

« Զանց արարեալ զմնասակարաւքն յառաջիկայսն ձեպեսցուք, վասն որոյ և 'ի գործ զբանս արկաք. և դուզնաքեայ ինչ վասն աւետարանչացն չորագրեսցուք զորպիսութիւն ճառիցն' որքան հասու կարեն լինել միաքս մեր. և այնպէս ճանապարհորդեալ անմոլար եկեսցուք 'ի մեկնութիւն սրբոյ աւետարանին Յովհաննու: Վասն Մատթէոսի և Մարկոսի և Ղուկայ բազումք կանխեալ առաջին յիւրաքանչիւր տեղիս. իսկ վասն Յովհաննու' զոր և 'ի գործ արկաք զբանս' ասասցուք որ ինչ միանգամ կարևորն է: Սա

զամենայն ժամանակս իւրոյ առաքելութեանն առանց գրոյ քարոզէր զաւետարանն։ Իսկ իբրև կարգեցան երեք աւետարանքն և գրեցան և հասին առ նա, որպէս ասի բան՝ ընդունելի եղեն նմա. և վկայեաց եթէ ճշմարիտ գրեցան. այլ պակասէ նոցա. որ ինչ միանգամ գործեցանն ի սկզբան վարդապետութեանն Քրիստոսի... ուստի և աղաչեցին զՅովհաննէս առաքեալն՝ թէ այն ժամանակ որ թողաւ յայլոց աւետարանչաց որ գործեցան 'ի Տեառնէ՝ տացէ նոցա գրով. որ նախ քան զմատնելն Յովհաննու 'ի բանդ՝ եղեն 'ի Քրիստոսէ հրաշագործութիւնքն, զոր և գրեացն իսկ Յովհաննէս. «Զայս արար, ասէ, սկիզբն նշանաց Յիսուս 'ի Կանա Գալիլեացւոց, և յայտնեաց զփառս իւր. ցուցանելով զայն գոլ առաջին հրաշագործութիւն»...։

Յիշատակարան գրչի. «Զոր ես իմ մեղապարտս և յոյժ անպիտանի Կիրակոսի ըղձացեալ և եռափափաքմամբ սիրով խանդակաթ եղեալ աստուածախաւս մատենիս, և ոչ ուրեք գտանէր աւրինակ. յետոյ լըւեալ իմ թէ գտանի յԱմիթ, և բազում փոյթ ի մէջ առեալ զանձին տկարութիւն առ ոչ ինչ համարելով, զբազում վայրս հատեալ. և ըստ խնամակալութեանն Աստուծոյ սկսեալս կատարեցաւ նորին շնորհիւն. այլ ըստ ժամանակին հանդիպմանն յորս տառս կատարեցաւ՝ ձմեռն խիստ և աւդն դժնեայ, տեղիքն աւտարութեան. 'ի ցրտոյն բազում տառապանս կրեցի. զի իբրև զերկաթ պաղեալ մնայր ձեռքս անզգայացեալ. և զաւուրս քառասունս իբրև 'ի մէջ ձեանց այնպէս ընդարմացեալ մնայր բոլոր մարմինս. և խնամածոյ կամ ծանաւթ ոչ գոյր. և իմ վասն բազում ըղձիցն ոչ ինչ համարելով զտառապանս, կամ զանձին տկարութիւն առ սիրոյն միանգամայն՝ զանարհեստ և զանվարժ գրութիւն... ապաստան եղեալ յանմեղադրութիւն ընթերցողացդ, զի առ սիրոյ

գործեցի. զխոշորութիւն գրոյս և զպակասութիւն ողջունեմ անմեղադիր լինել վասն ժամանակին խռովութեան. և չէր զի այլ ուրեք գտանէր աւրինակն. և ոչ աւրինակին ամարդի և չինականամբ՝ այնպէս համարէք թէ զիւրն յափշտակէի. ՚ի բազում վարանս մտեալ միայն զաւարտ գրոյն խնդրելով ՚ի բազում ձեռս փոխեցաւ գիրս ՚ի Թուականութեանս Հայոց և ՚ի շրջագայութեան հայազեան տումարիս ՚ի ՈԴ. ՚ի հայրապետութեանն տեառն Գրիգորիս Հայոց կաթողիկոսի, և յանիշխանութեանս Հայոց մինչ փայլէր բարեպաշտ և մեծ իշխանն քրիստոնէից Թորոս՝ մինչ եկն ՚ի վերայ Հալպա, և բազում աւերս և ամբոցս առեալ քանդեաց և յաղթութեամբ բազմադարձեալ ՚ի բնակութիւնն իւր։

« Գրեցաւ մատեանս այս պատուածաստաց և հոգեւորոգ՝ ձեռամբ իմով Կիրակոսի անպիտան և անարժան կրաւնաւորի և առ ակր բազում յանցաւորի. ՚ի յիշատակ մեղապարտ անձին իմոյ և ծնողաց իմոց »...։

Ս. ՆԵՂՈՍ

(SAINT NIL)

Սրբոյն Նեղոսի ծննդեան որոշ Թուականը յայտնի չէ. բայց իր անունը կրող նամակներէն կրնայ հաւանականաբար ենթադրուիլ թէ երբ Արկադէոս կայսր 395ին հրատարակած հրամանագրով մը կը խափանէր հեթանոսական զոհագործութիւնքը՝ որոց հետք դեռ ևս մնացեր էին, և ոմանք ուժգնէ՝ կը համարձակէին քրթմնջել այն հրամանին դէմ, Ճշմարտութեան պաշտպան և ջատագով հանդիսացաւ Նեղոս, գրելով առ Նինիաս իմաստասէր, և յանդիմանելով զնա՝ սեղանոյ վրայ մատուցած սրբապիղծ զոհից համար։ Գաղատացի կ՚երևնայ ծննդեամբ, և ող֊

՚ի Կոստանդնուպոլսոյ, ինչպէս ոմանց թուեցաւ. թէպէտ և այս վերջին քաղաքին մէջ արքունի և իշխանական պաշտամունք վարած։

Ամուսնական կենաց մէջ մտնելէն ու երկու որդիք ունենալէն ետքը՝ մտադիր թողուց զաշխարհ, ընտուն, զհայրենիս և զբարեկամս, և առանձնացաւ յանապատ, հետն առնլով զԹէոդուլի՝ զմին յորդւոցն, և զմիւսն թողլով առ ամուսնոյն՝ յորմէ կը զատուէր զգաստասուէր համաձայնութեամբ։ Առանձնութեան տեղի ընտրեց զՍինա լեռան՝ որ արդէն նուիրական սրբավայր մ՚էր բազմաթիւ անապատասուն հրաժարելոց յաշխարհէ։ Հաւանելի կը թուի թէ 390 թուականին ՚ի գործ դրած ըլլայ իր այս մեծ և աստուածահաճոյ մտածութիւնը։

Անապատի լռութեան և հանդարտութեան մէջ սիրելի և հռչակաւուն իր սրբակրօն վարքովը, երկնապարգև գիտութեամբ և հոգևոր իմաստութեամբ, մերձակայք և հեռաւորք առ նա կը դիմէին՝ լուսաւորիլ, ուսանել և քաջալերուիլ ՚ի նմանէ. և վկայ հաւաստարիմ իր գրուածներն, բազմաթիւք առ յոյնս՝ որոց փոքրիկ մասն եւեթ հասած է առ մեզ հայկական թարգմանութեամբ, և գլխակարգութիւնքն կը գըտնէ ընթերցողն ՚ի ստորև։ Ինչպէս Հարանց վարուց, սոյնպէս ալ Նեղոսի խրատուց կրկին թարգմանութիւնք կան ՚ի մեր մատենագրութեան. հնագոյնն անշուշտ ոսկեղէն՝ կամ անկէ ոչ այնչափ հեռու դարու պատկանելով, զի ոմանք Եզնիկայ Կողբացւոյ կը համարին ընծայել զայն. իսկ երկրորդն աւելի կըրտսերագոյն ժամանակաց գործ։

Աշակերտած է Նեղոս սրբոյ Ոսկեբերանի. և երբ այդ աստուածընտիր հայրապետին դէմ գլուխ վերուցին ստորաքարշ նախանձ և ատելութիւն, և յաջողեցան իր աթոռէն աքսորել զինք, և մինչ աստուածասաստ պատուհասք կայսերական քաղաքին

և արջառներաց վրայ կը հաւանէին. Արկադէոս Թագա-ւոր ահարեկ կը դիմէր առ Նեղոս՝ պատգամաւորներ փութացընելով, որպէս զի աղօթիւք՝ սպառնացուած վտանգներէն զինքը փրկէ. «Ի՞նչպէս կը յուսաք, ըսաւ, որ տառապիչ հրեշտակին հարուածներէն ա-զատ ըլլայ Թագաւորեալ քաղաքը՝ քանի որ յաք-սորս է Յովհաննէս, եկեղեցւոյ սիւնը, Ճշմարտու-թեան ջահը. Յիսուսի Քրիստոսի փողը»:

Հայկական Թարգմանութեամբ առ մեզ հասած գրուածքը՝ Յաղագս ութ այսոցն չարութեան կը կո-չուի 'ի բնագրին: Անկէ զատ են իր այլևայլ Թուղթք առ զանազանս, և գրուածք ներանձնական հոգևոր կենաց՝ որոց Թարգմանութիւնք չկան առ մեզ:

— Սրբոյ և պատուական հօրն Նեղոսի խրատք: — Ա. Ի կարճել զմոլեկան որովայն և շահել զանձինս. «Սկիզբն պաղաբերութեան ծաղիկ, և սկիզբն առա-քինութեան գործոց՝ ժուժկալութիւն պահոց»: (Թարգմ. հին և նոր):

— Բ. Յաղագս պոռնկութեան. «Զգաստութիւն ծնանի զժուժկալութիւն, իսկ որովայնամոլութիւն է մայր զեղխութեան ախտից»: (Հին և ըստ մասնէ նաև Նոր Թարգմ.):

— Գ. Վասն հոգւոյ արծաթսիրութեան. «Ար-մատ ամենայն չարեաց արծաթսիրութիւնն, և սնու-ցանէ իբրև զոստս չարեաց զամենայն ախտս»: (Հին և Նոր Թարգմ.):

— Դ. Վասն հոգւոյ բարկութեան. «Բարկու-թիւն է ախտ մոլեկան, և որ ունի զնա՝ ընդ. իւրեաւ յիմարի»: (Հին և Նոր Թարգմ.):

— Ե. Վասն հոգւոյ տրտմութեան. «Տրտմու-թիւն՝ խաւարութիւն է անձին, և ժողովին 'ի խորհըր-դոց բարկութենէ»: (Հին և Նոր Թարգմ.):

— Զ. Յաղագս ձանձրութեան. «Ձանձրութիւն է լքումն անձին. և լքանի անձն որ ոչ ունի պնտու-

թիւն քան բնութեան, և ոչ կայ ընդդէմ փորձու-թեանց արիաբար »։ (Հին Թարգմ.)։

— Է. Յաղագս սնափառութեան. « Սնափառու-թիւն է ախտ անբնական, և ամենայն գործոց առա-քինութեան դիւրաւ շաղապատակ »։ (Հին Թարգմ. և ըստ մասնէ նաև Նոր)։

— Ը. Յաղագս ամբարտաւանութեան. « Ամբար-տաւանութիւն է ախտ զայրացեալ, ուռուցեալ է փքով. ուր հասանէ, պայթէ և առնէ մեծ ժահահո-տութեամբ »։ (Հին և Նոր Թարգմ.)։

— Թ. Խրատք ոգեշահք միանձանց՝ մինչ նստէր առանձինն 'ի լերինն Սինեայ. « Սկիզբն հրաժարե-լոյ յաշխարհէս՝ երկիւղ տեառն. և աներկիւղն որ-տաքոյ դրանն օթեսցի * »։ (Հին Թարգմ.)։

* Տպագրողք 'ի ծանօթ. « Վեցեքին օրինակք մեր Նեղոսի ընծայեալ զճառս, 'ի Մատենադարանի Հարց (Հատ. ԻԷ.466) Իպերիքեայ ընծայի. որում համա-ձայն վկայի և հատընտիր հատուածն Խօսք Իպերի-քեայ. (Հարանց վարք. Բ. 591)։

— Ժ. Խրատք առ ճգնաւորսն. «Սկիզբն բարեաց երկիւղ տեառն։ Լաւ է քարինս ընդ վայր ձգել քան զբան »։ (Հին Թարգմ.)։

— ԺԱ. Խրատք վերակացուաց. « Նաւավար ան-գէտ պատրաստ է 'ի կորուստ, և վարդապետ ան-խրատ՝ կորուստ է աշակերտացն »։ (Հին և Նոր Թարգմ.)։

— ԺԲ. Պատուէր առ մանկունս. « Պարտ է ման-կանց ճգնել և կրթել զմարմինս 'ի հնազանդութիւն պատուիրանաց »։ (Հին Թարգմ.)։

— ԺԳ. Յաղագս խրատից նեղութեան, և զգոյշ լինել, և վասն հանդերձի կենացն և յուսոյ յարու-թեան. « Որ շինել սկսանի՝ պարտ է կատարել, զի՛ մի ծաղր լիցի անցաւորացն * »։ (Հին Թարգմ.)։

* Տպագրողք 'ի ծանօթ. « Թէպէտև վեցեքին օրի-

Նաեւ մեր Ներսէսի մակագրեն եւ զսա, այլ քաղուած է ծայր 'ի ծայր 'ի վեցերորդ ընդարձակ ճառէն՝ Զգօն գրոց սորայն Յակոբայ երեւելի փոփոխութեամբ. այլ թէ յումմէ իցէ արարեալ՝ ժամանակն յայտնեսցէ »։

— ԺԴ. Խրատք որ 'ի բաց մերժեն յապականութեան եւ մերձեցուցանեն յանապական կեանսն զմարդիկ. « Ճանապարհք յառաքինութիւնս՝ հրաժարումն յաշխարհէս, է բարիոք եւ կարճահատ »։ (Հին եւ Նոր Թարգմ.)։

— ԺԵ. Խրատք որք կրօնաւորիլ կամին զփրկական կրօնաւորութիւնն. « Զերկիւղ ընկալ զԱստուծոյ, եւ մաքուր վկայութեամբ գիտակցութեամբ քով վարեսցիս »։ (Հին եւ Նոր Թարգմ.)։

— ԺԶ. Յաղագս աղօթից. « Որ ոք կամեսցի անուշահոտ խունկս կազմել, զերեւելի կնդրուկն եւ զկասիա եւ զեղունգն եւ զստաշխն առհասարակ հանդերձեսցէ ըստ օրինացն »։ (Հին Թարգմ.)։

— ԺԷ. Խրատ պիտանի. « Լաւ է յաւէտ խորհրդով ննջել, քան պիղծ խորհրդով աղօթս մատուցանել եւ վարձս ոչ առնուլ » *։ (Հին Թարգմ.)։

* Տպագրողք 'ի ծանօթ. « Քաղուած է կիսամասնեայ 'ի ճառէ սորին որ յանուն Եղիշէի երեւի յօրինակս ինչ »[1]։

ՆԵՄԵՍԻՈՍ

(NEMÉSIUS)

Նեմեսիոսի անուամբ՝ 'ի Մատենադարանի Հարց տպագրելոյ 'ի Լուգդոն Բադավիոյ՝ գրուածք մը կայ Յաղագս բնութեան մարդոյ կոչուած, և որ արդէն նախընթաց հրատարակութիւն մը ունեցած էր յԱնվերսա (1565) 'ի ձեռն Ելլեբոդիոս Նիկասիոսի և ընտրե-

1 Մատենախօսական տեղեկութիւնք 'ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԴԻՏՈՒԹԵԱՆ յէջ 337, 494։

լատին մ'ալ 'ի Հալլ Գերմանիոյ 'ի Քրիստիան Փր. Մաթթէէ (1802)։ Կը բովանդակուի ամբողջ երկասիրութիւնն 'ի քառասուն և հինգ գլուխս, յորոց երկրորդն և երրորդ՝ սրբոյն Գրիգորի Նիւսացւոյ ընծայուած է յոմանց, ինչպէս նաև բովանդակ մատեանն յայլոց. Թէպէտև չկայ հաւաստիք կամ հաւանականութիւն որ երանելի հայրապետս ըլլայ անոնց հեղինակ։ Հոգւոյ նախագոյակ ըլլալը (préexistence) բացայայտ կը վարդապետուի 'ի գլուխն երկրորդ, ուր Նիւսացի հակառակամարտ կը հանդիսանայ այն գրութեան 'ի գիրսն Ցաղագս կազմութեան մարդոյ։ Այսպէս 'ի գլուխն երրորդ՝ արհամարհանօք կը խօսի Որոգինեայ վրայ, ուր Գրիգոր սիրող և մեծարող կ'երևնայ այդ նշանաւոր հանճարոյն։ Երեսներորդ հինգերորդ և հետևեալ գլխոց մէջ՝ ճակատագրի վրայ խօսելով՝ կը ցուցընէ անոր անպատեհութիւնը։ Պատճառ մը չկար որ Նիւսացին կրկին գանար այնպիսի կարծեաց վրայ, զոր արդէն լինուլի և այնչափ բացայայտ և խորիմաստ ոճով և լեզուով հերքեր էր նոյն նիւթին վրայ յօրինած մատենաւոր երկասիրութեամբ։ Տարակուսական կ'երևնայ Նիւսացւոյն կամ եպիսկոպոսական աստիճան ունեցող ուրիշ որ և իցէ անձի մը վերագրել՝ անդամազննական մանրամասնութիւնքն որ 'ի գլուխն քսաներորդ հինգերորդ։ Բովանդակ գրուածին մէջ հեղինակը ոչ աննշան, մանաւանդ թէ երբեմն բազմահմուտ իմաստասէր կ'երևնայ. բայց քրիստոնէական կրօնից ճշմարտութեանց նկատմամբ՝ թերևս չափաւոր գիտութեամբ։ Ուստի եթէ բանագատութիւնք Նեմեսիոս անունով մէկու մ'ալ ընծայել զայն, հաւանական կ'երևնայ հմուտ՝ Կապադովկիոյ համանուն քաղաքապետ մը հեղինակ սեպել, որուն Աստուածաբան ուղղած է իր մէկ քերթուած, քան եպիսկոպոսական աւագութիւն ունեցող անձի մը։ Ապողինարի և Եւնոմեայ

անուանց և հեղձուածոց յիշատակութենէն յայտնի կ'երևնայ թէ 375 թուականէն առջն եղած է գրքին շարագրութիւնը։

Հայկական թարգմանութեան խորագիրն է, — թէ՛ մեր ձեռքն և թէ ուրիշ մատենադարանաց մէջ գըտնուած ամէն ձեռագրաց մէջ, — յանուն Գրիգորի եպիսկոպոսի Նիւսացւոյ. անանուն գրչագիր մ'ալ կայ յ'Էջմիածին (Թիւ գրչ. 453)։ « Գալով թարգմանութեանն 'ի մեր լեզու, նոյն թարգմանիչն կ'երևի ինչ որ և 'ի գործս Նիւսացւոյն, որ է Ստեփանոս Սիւնեցի. մանաւանդ թէ բուն յիշատակարանն Սիւնեցւոյն՝ այս մասին կը վերաբերի և ոչ Նիւսացւոյն ճառին [1]։ Ոճն յունաբան է, և շատ տեղ անիմանալի ». բայց մեծապէս հետաքննելի բանասիրաց թէ՛ նիւթովն և թէ մանաւանդ հայկական թարգմանութեան յատուկ լեզուովը։ Մեր մէջ՝ մանաւանդ առ հին նախնիս՝ սակաւաթիւ են բուն ուսումնական երկք կամ անոնց փոխագրութիւնք. որով և զգալի՝ ոչ այնչափ ճոխութիւն լեզուիս 'ի ճշգրիտ բացատրութիւն այսպիսի նիւթոց։ Նեմեսիոսի անուամբ առ մեզ հասած այս երկասիրութիւն՝ մեծապէս կրնայ օժանդակել 'ի լնուլ զայս պակաս։ « Միայն այսչափս եւս կ'ուզեմք իմացընել որ թարգմանն շատ տեղ հաւատարիմ չէ իր բնագրին. և տեղ տեղ՝ ուր աւելի ցանկալի էր որ հայերէն բառից լոյս մը տար մեզ, հոն լռութեամբ կ'անցնի »։

Մեր նախնիք Լուծմունք մ'ալ յօրինած են այս երկասիրութեան, որ յոմանց Գրիգորի Սկեւռացւոյ ընծայուած է։ Նեմեսիոսի այս գրութեան հայ թարգմանութիւնն հրատարակուած է 'ի Բազմավէպ հանդիսարանի, բաղդատութեամբ ընդ յոյն սկզբնագրին

1 Սիւնեցւոյն յիշատակարանը տես յ'էջ 371 մեր այս գրուածիս։

և ծանօթութեամբք (1887, յ'էջ 318...). Հմտական տեսութիւն մ'ալ 'ի հատորն ԼԸ այն հանդիսին (1880 յ'էջ 326-340), յորմէ առնուած են չափերով նշանակուած քանի մը տողք՝ զոր մէջ բերինք։

ՆԵՔՏԱՌԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ

(NECTAIRE, EVÊQUE)

Նեքտարիոս՝ յաջորդ սրբոյն Գրիգորի Նազիանզացւոյ յաթոռ պատրիարքութեանն Կոստանդնուպոլսոյ, ծնեալ է 'ի Տարսոն Կիւլիկիոյ, յազնուատոհմէ, և հռչակաւոր առ ժամանակակիցսն առաքինի վարուքն և բարեմասնութեամբք։ Դեռ երախայ էր յընտրութեանն, ուստի և շատ դժուարութիւն կրեց 'ի կողմանէ հարցն սիւնհոդոսականաց գումարելոց 'ի քաղաքին յամին 381. բայց Թէոդոս կայսեր կամքն ու հրամանն էր որ կը բռնադատէր բարձրացնել զնա յայն պատիւ հոգևոր առաջնութեան, ուստի և անկարելի դէմ դնել։ Մեռաւ յ' 392 թուականին, և յաջորդեց նմա Ոսկեբերան։ Իրեն կ'ընծայուի Ողորմութեան և պահոց վրայ գրուածք մը, որոյ յունականն հրատարակեցաւ 'ի Փարիզ 'ի 1554։ Մեր մատենագրութեան մէջ չենք գտներ զթարգմանութիւն ճառիս. այլ միայն հետևեալ գրուածներն՝ որոց յունական սկզբնագիրք դեռ երևցած չեն։

— ** Սրբոյն Նեքտարեայ եպիսկոպոսին Կոստանդնուպոլսոյ յաղագս տօնի սուրբ Ճգնազգեաց վկային Թէոդորոսի, զոր յառաջնում շաբաթի քառանորդացն տօնեն ամենայն հաւատացեալք. (Panégyrique sur le saint martyr Théodore). « Յառաջնում ամի Յուլիանոսի կայսեր՝ մինչդեռ նորընծայ էր 'ի թագաւորութեան »։ — Ճառընտրի մը մէջ որ 'ի Ս. Սարգիս Բաղիշու՝ հետևեալ խա-

բնագիրն ունի սոյն երկասիրութիւն. « Սրբոյն Նեքտարեայ Կոստանդնուպօլսի եպիսկոպոսի՝ յաղագս Թէոդորոսի սքանչելեաց զոր եցոյց ի տեսլեան սուրբ զաւրավարին »։

— ** Ի նախավկայն սուրբ Ստեփաննոս. (Panégyrique sur S.t Etienne, le protomartyr). « Տէր մեր Յիսուս Քրիստոս 'ի ձեռն փրկագործութեան »։

— **Մատենաւոր ինչ 'ի գիւտ նշխարացն Ստեփաննոսի և որք ընդ նմա. Գամաղիէլ աւրէնսգիրն որ 'ի Գործս առաքելոցն բարիոք խրատեաց զՀրեայսն. և Նիկոդիմոս՝ որ 'ի Քրիստոսէ 'ի Ջրոյ և 'ի հոգւոյ առաց զարքայութիւնն ընդունել, Նեքտառի ասացեալ. « Որպէս 'ի Գործս առաքելոցն պատմի և ասի բան՝ առաջի անդեալ խնդրեցին յառաքելոցն զմարմին երանելոյն. և առեալ հրաման եկին 'ի գիշերին. և տարեալ թաղեցին յագարակին իւրեանց »։ (Ազգային մատենադարան Փարիզու, Թիւ 45)։

ՆԷԱՐՔՈՍ

(NÉARQUE)

Ի հնագիր և 'ի սուղագահաւոր վկայաբանութեան սրբոյն Պոլիկտոսի, որ հասած է առ մեզ հայ թարգմանութեամբ, կը յիշատակուի թէ վկայակից սրբոյն Նէարքոս գրեց անոր յաղթական մահուան պատմութիւնը. « Յետ չարչարանաց, — կ'ըսէ, — սրբոյն Պաւղիւքտոսի, ես տառապեալս Նէարքոս՝ ետու զյիշատակարանն Տիմոթէոսի կանանացւոյ և աւկտար Նեղոսի, և երդմնեցուցի զնոսա 'ի դատաստանն Քրիստոսի և 'ի յաղթութիւն սրբոյն Պաւղիւքտոսի 'ի Քրիստոս, որպէս զի տարւոյ տարւոյ կատարեսցեն զաւր նորա և զյիշատակարանն ընթերցցին խնամով։

իսկ Տիմոթէոս ընկալեալ զայն սուրբ յիշատակարան, եդ 'ի սուրբ եկեղեցւոջ... » *: Հրատարակեալ 'ի Վարս և Վկայաբանութիւնս սրբոց. Հատ. Բ. էջ 239. 'ի Ս. Ղազար (1874).

* B. Aubé. *Polyeucte dans l'histoire.* Etude sur le martyre de Polyeucte, d'après les documents inedits. Paris, 1882. յորում կը յիշուին նոյն հին յիշատակագիրք. Après la passion de bienheureux Polyeucte, moi, Néarque, humble serviteur de Dieu, j'ai donné les (ces) mémoires à Thimotée de Cananéos, et à Saturninus, leur faisant jurer par la foi en Jésus Christ et la victoire en Christ de son martyre Polyeucte, de célébrer chaque année son anniversaire, et de les lire scrupuleusement. Timothée les reçut et les remit aux eglises, dans les quelles on les lit deux fois par an, les 4 des ides de janvier, jour où saint Polyeucte souffrit, et le 8 des Kalendes de janvier, jour où son sang fut placé dans la ville de Cananéos. Puisse le Dieu le grand bienfaiteur et qui préside à ces combats nous confirmer dans la foi et fortifier ses eglises dans le Christ Dieu incorruptible, avec l'Esprit-Saint, à qui appartiennent la gloire et la puissance dans les siècles des siècles.

ՆԻԿՈԴԻՄՈՍԻ (աւետարան). Տես յ' էջ 199 մեր այս երկասիրութեան:

ՆՈՆՆՈՍ

(NONNUS)

Նոննոսի անունը, ինչպէս նաև իրեն ընծայուած գրութիւն, զոր պիտի յիշատակենք, այնչափ ծանօթ չէր արևմտեայ բանասիրութեան: Աստուածաբա-

նէն Յուլիանոս կայսեր դէմ յօրինած երկու ճառից մէջ յիշած հեթանոսական անուանց առասպելեալ պատմութիւնը՝ զոր շարագրեց Նոննոս, Հաւաքարար Մոնտաւկոնեան հրատարակեց՝ Աստուածաբանին երկասիրութեանց հետ։ Անոնցմէ դուրս մնացած ուրիշ առասպելաց՝ որ նոյնպէս Նոննոսի կ'ընծայուին, միայն մէկ մասին յունական սկզբնագիրքն ալ Վատիկանեան գրատան մէջ մեզմէ յիսուն տարի յառաջ յաջողեցաւ գտնել՝ բազմահմուտ ծիրանաւորն Մայ, և հրատարակեց յիւր Spicilegium Romanum 'ի հատորն Բ, յ' էջ 307 – 318, և դարձեալ 374 – 387։ Մեր մատենագրութեան մէջ պահուածը, ինչպէս պիտի տեսնենք, ամբողջագոյն է քան 'ի յունական բնագրին գտնուածը։

Խորագիր երկասիրութեանն Նոննոսի՝ ըստ կրկին ընտիր և հնագոյն գրչագրաց մեր Մատենադարանին, այսպէս կը նշանակուի։ Ի միումն՝ որ աւելի կատարեալ է և ամբողջ թէպէտև չունելով զհնութիւն միւսոյն, « Ժողովարանք պատմութեանց առասպելացն այնոցիկ զորս յիշատակեաց Աստուածաբանն 'ի ճառին մկրտութեանն տեառն մերոյ՝ որ է սկիզբն ․Դարձեալ իմ Յիսուս և դարձեալ խորհուրդ »։ Իսկ երկրորդն գրչագրեալ է 'ի ՈԾԶ (= 1207) թուականի, որոյ առաջին թերթքն կիսեղծք և դժուարընթեռնլիք առ հնութեան։ Յիշատակարանն է․ « Գրեցաւ առասպելս այս և ողձաստանք հեթանոսականք զորս յիշէ Գրիգոր Աստուածաբան առ 'ի խաղ առնել զնոսա․ քսանեչորս գլուխ 'ի Դարձեալ իմ Յիսուս ճառին, և ութեւտասն 'ի Բարսղի արձանականն, և այլն 'ի Յուլիանոսի և 'ի Կիպրիանոսի ճառսն․ ընդ ամենայն հարիւր վաթսուն և եւթն գլուխ՝ ձեռամբ Յովանիսի յոգնամեղ կրաւնաւորի, 'ի թվ. Հայոց ՈԾԶ, 'ի հաշակեալս Սանահնի։ Արդ որք կարդայք կամ ընդաւրինակէք՝ զբազմամեղս գծող յաղաւթս յիշեցէք․ ընդ նմին

և զԽաչատուր վարդապետս »: Ընտրելագոյն օրինակին յիշատակարանն անկատար, թուղթ ինկած ըլլալով ՚ի գրչագրէն. որով և թուականն անորոշ. « Փառք... ես զաւրութիւն իմոյ տկարութեանս նուէր ընդ այսպիսի յորդեռանց և գերահոս անբաւ խորոցս լուծմանց, ղեկաւ եղեգնեաւ և թոյլ և տարտամ գաղտակաւ, բայց զաւրացուցիչ և խնամիչ հոգին Ճըշմարտութեան և զաւրութեան՝ որ աղգէ ՚ի կենդանիս և յանկենդանս, որ և... »: Ի սկիզբն գրոցն կը դնէ Ա տառը, նշանակելով զգլուխն առաջին՝ որով հաւանականաբար նաև զամբողջութիւն, և կը շարունակէ առանց միանաւոր գլխակարգութեան. « Ոչ Արամազդայ այսոքիկ ծնունդքն և գողութիւնք կրեացոց քանաւորին: Զ Արամազդ՝ աստուածաբանքն հելլենացոց ՚ի Կռոնոսէ ասեն ծնեալ. և ծնանելով կեցեալ այսպէս »: — Բ. « Ոչ Փռիւգացոցն ՚ի բաց հատուածն: Եւ է այս ՚ի յարձանականն գրեալ այսպէս. ՚ի Փռիւգիա պաշտեցեալ եղեւ Ռէ մայր աստուածոցն »: — Գ. Եւ աղջիկ ոք մեզ յափշտակեալ լինի: Եւ այս պատմութիւնս գրեալ կայ յարձանականն »: — Դ. « Ոչ Դիոնիսի այսոքիկ... անկատար ծնունդ: Սեմելի դուստր էր Կադմոսի՝ Թեբայեցոց թագաւորին »: — Ե. « Ոչ Ափրոդիտեայ խորհուրդք պոռնկականք գործելիք: Ասի թէ... երկնի Ափրոդիտէս ընկալաւ զլինելութիւն »: — Զ. « Եւ ոչ Փալլասք ոմանք և ոչ Ուղափաղոսք: Ի տաւնին Դիոնիսի ձեւացուցանէին »: — Է. « Ցաղագս Տաւրացոցն աւտարապաշտութեան: Տաւրոսք ազգ է սկիւթական, յորում էր տաճար Արտեմիդեայ »: Այսպէս կը շարունակուի մինչև ի գլուխն քսաներորդ, և որոց յոյն սկզբնագրին չկրցանք հանդիպիլ: Միայն այս վերջինս և հետևորդ քսաներորդ առաջներորդ, երկրորդ և երրորդ գլխոց յունականքն հրատարակուած են առ Մայի:

Ասոնցմէ ետքը նոր գլխակարգութիւն մը հետեւեալ խորագրով. Հաւաքումն մեկնութեանց պատմութեանց զորս յիշատակեաց Գրիգոր Աստուածաբանն 'ի գերեզմանական բանին սրբոյն Բարսղի. և սկզբնաւորութիւնն. « Հռետորքն և սոփեստոսք արտաքնոցն, զառ 'ի նոցունց ներբողեալսն կամելով ազնուականս ցուցանել »: (Յոյնն առ Մայի Spicilegium Romanum. Բ. 374): — Ա. « Արդ ասասցուք յառաջագոյն թէ ով ոք էր Պեղոպս »: (Յոյնն 375): — Բ. « Իսկ յաղագս Կիկլոպսի ասել կայ աւասիկ: Կիկլոպս թագաւոր էր աթենացւոց »: (Յոյնն Περὶ τοῦ Κέκροπος, 375): — Գ. « Այլ և Ակմեոն՝ աթենացի էր ազգաւ »: (Յոյնն 376): — Դ. « Արդ Էակոս չորրորդ մեզ ենթակայեալ լինի »: (Յոյնն 377): — Ե. « Արդ լիցի մեզ այսուհետեւ ենթակայեալ Հերակլէս. և սա որդի գոլ Արամազդայ »: (Յոյնն 377): — Զ. « Յաղագս եղջերուահարացն. Ովրիոնի և Ակտէոնի: ԶԱրտեմիս ասեն որսոյ և աղեղնաւորութեան վերակացու գոլ »: (Յոյնն. Περὶ τῆς Ἐλαφηβόλου, καὶ Ὠρίωνος, καὶ Ἀκταίωνος, 377): — Է. Յաղագս փոխատրութեան եղինն ընդ կուսին՝ որ է եդեալ յեւթներորդում պատմութեան արձանականին ընդդէմ Յուլիանոսի: Յորժամ յԵլլադացոց նաւարկութիւնն եղև 'ի վերայ Տրովադայ ». (Յոյնն 294): — Ը. « Յաղագս թեսաղականն այրին: Եւ է այսպէս. ծնեալ Աքիլլեւս աւանդեցաւ առ Քերոն »: — Թ. « Յաղագս շրջման ափէնդոնին (այլ օր. սէփէնտոնին) Գիւգեսի. զայս պատմութիւն յիշէ յարձանականսն 'ի յիններորդ պատմագրութեան: Արդ Պղատոն յիւր շարագրութիւնսն 'ի քաղաքականութեան ասէ թէ Գիւգէսս այս հովիւ էր »: (Յոյնն. 314): — Ժ. « Յաղագս Մինդասայ: Մինդաս այս թագաւոր է փռիւգացոցն »: (Յոյնն Μίδας. 302): — Ժ « Յաղագս Նետին Աբարիս զոր յիշէ Հերոդոտոս: Աբարիս այս

գերհեւտխային ոմն էր. և են գերհեւտխայինքն ելլենախոհք »: (Յոյնն 181): — ԺԱ. «Յաղագս Պեգասոսի որ հաւատի յաղագս Բելլերոփոնտեայ: Քանզի պատերային քիմերին վերատին բուսանելով »: (Յոյնն 378. Περὶ τοῦ Πηγάσου··Τις παρικῆς χιμαίρας ἀναφυσί-σις): — ԺԲ. «Յաղագս Ալփիոսի: Ալփիոս գետ է արկադացոց »: (Յոյնն 198, 378): — ԺԳ. «Յաղագս լիւգացի կառացն որ է առակ վասն մոքսաւել կամողաց և հասանելով կարողաց: Ասի յառակն այսպէս. 'ի լիւգացի կառացն սկսանելով. քանզի արագագոյնք են »... (Յոյնն 308): — ԺԴ. «Յաղագս Ովրեսսեայ և Պիլադեսի: Ովրեսսէսս այս որդի էր Ագամեմնոնի »: (Յոյնն 308): — ԺԵ. «Յաղագս մոզոնէտեանց: Մոզոն էր կին ոմն բնակեալ »: (Յոյնն 224): — ԺԶ. «Յաղագս լամբիւրինթին: Ի կղզւոջն Կրետէ լեառն ոմն է յորում է այր ինչ գժուարին և քարանձաւ »: (Յոյնն 378): — ԺԷ. Յաղագս Մինովսի և Հռադամանթեայն: Մինովս և Հռադամանթէ ասին գոլ որդի Արամազդայ »: (Յոյնն 214, 215): — ԺԸ. «Յաղագս Գադիրայ: Տեղի ինչ է 'ի կողմանս մտիցն արևու »: (Յոյնն 379): — ԺԹ. «Յաղագս երիվարին որ զկապն խզէ: Հոմերոս քերթող կամեցեալ զՊոմմիգա (յն. 'Αλέξανδρον) զօրութիւնն »: (Յոյնն 379): — Ի. «Յաղագս սերմանելոյն և բուսանելոյն միաւորեայ հսկայիցըն: Ի Թեբաս բնակչացոց ասի թէ Կադմոս և կամ այլ ոմն »: (Յոյնն 379): — ԻԱ. «Յաղագս եւթնադուռն Թեբայ և եգիպտացոյն: Աստուածայինս Գրիգորիոս յաղագս հրաշից ասանաւր կամեցեալ ինչ ասել »: (Յոյնն 379, 380):

Մեկնութիւն այնոցիկ առասպելաց, որ և յառաջնումն Յուլիանոսի յարձանականին նոյն յիշատակեալ առ 'ի պատմութեանցն: «Արձանական բանն պարասէ Յուլիանոսի գործոցն, այլ զանազանի 'ի պարասէ արձանականն »: — Ա. «Առաջին պատմութիւն է

այս. զպայտօնիկ խաղ արտացեն առ. Նոքաւք Եմբեգո-
կլեանք ոմանք և Արիստեանք »: — Բ. « Յաղագս
Պոմպեոսայ: Պոմպէոս այս Թրակացի էր ազգաւ, և
ունէր որդիս երկու »: (Յոյնն 118): — Գ. « Յաղա-
գըս Հերակլեայ խորուկին: Ուժգին ձայն հրատարա-
կեալ լինի զՀերակլեայ »: (Յոյնն 96,97): — Դ. « Յա-
ղագս Պելոպայ խահագործութեան՝ զոր յառաջին
առացեալն գրեցաւ՝ նոյն է և այս. գաանեսյիններորդ
կարգին համարոյ »: — Ե. « Յաղագս աւշտամանցն
փախուգացոց: Առ փախուգացիսն պաշտեալ լինէր մայր
աստուածոցն Ռէա »: — Զ. « Յաղագս Միթրասի:
Միթրաս այս կարծի Պարսից արեգակն գոլ »: (Յոյնն
386): — Է. « Յաղագս տաւրացոցն աւտարասպանու-
թեան: Տաւրոսք ազգ են սկիւթացոց, առ որս փոխա-
դրեցաւ 'ի ձեռն Արտեմիդայ Իւփիւգինեա դուստր
Ագամեմնոնի »: (Յոյնն 181,388): — Ը. « Յաղագս
արօրացի զենմանն Թագաւորական աղջկանն Պաւլիք-
սինիսի: Պաւլիքսինէոսս այս էր դուստր Պրիամու »:
— Թ. « Յաղագս Մենուկեայ: Մենուկեւս որդի էր
Կաւնգոսի Թագաւորին Թեբաեցոցն: — Ժ. « Յաղա-
գըս Սկեգաւոսի դստերացն: Լակեդոմնացիքն՝ 'ի
պելոպոննեան պատերազմին՝ յետ ամենեին յաղթե-
լոյն աթենացոց խորհեցան և ընդ մարտակիցսն իւ-
րեանց մարտնչել »: — ԺԱ. « Յաղագս լակոնական
համբակացն: Լակեդոմնացոցն տխորժելով ժուժ-
կալս և արիս գոլ զիւրեանց քաղաքացիս »: — ԺԲ.
« Յաղագս արինաուշտ լինելոյն առ. թագնաւքն Արտե-
միդայ: Կոյս գոլով և ողջախոհ աստուածուհին՝ ու-
րախանայր արեամբ սպանութեանն »: — ԺԳ. « Յա-
ղագս Կոնիոնին Սոկրատայ: Սոկրատէս այս էր ազ-
գաւ աթենացի »: — ԺԴ. « Յաղագս սրուացն Եպիք-
գիտոսի: Եպիքգիտոս այս իմաստասէր էր »: (Յոյնն
206): — ԺԵ. « Յաղագս Անաքսարքեայ: Անաքսար-
քոս իմաստասէր էր »: (Յոյնն 206): — ԺԶ. « Յաղա-

գրոց վճռեցն Կղէոմբրոտոսի։ Կղէոմբրոտոս ամբ-
րիակեցի էր ազգաւ, որ է քաղաք հին ցամաքին »։
(Յոյնն 257)։ — ԺԷ. « Յաղագս պիթագորական
ոլոռանցն։ Պիթագորականքն իմաստասէրք յառաջ
եկեալք 'ի Պիթագորէ սամեացւոյ »։ (Յոյնն 309)։ —
ԺԸ. « Յաղագս Թէանոյ պիւթագորական կնոջ։ Կինս
այս Թէանով 'ի բռնաւորէ ումեմնէ ըմբռնեալ »։ —
ԺԹ. « Յաղագս Եպամինոնդայ և Սկեպիոնի։ Եպամի-
նոնդաս Թեբայեցի էր ազգաւ՝ զաւրավար մեծա-
գոյն »։ (Յոյնն 310)։ — Ի. « Յաղագս անոտնալուայիցն
և գետնախշտեացն։ Ի Հոմերոսէ քերթողէ գրեալ են
թէ սեղք ազգք են գոգոնացիք »։ (Յոյնն 171)։ —
ԻԱ. « Յաղագս Սողոնի անյագութեանն։ Սողոն աւրէ-
նագիր էր աթենացոցն. սա խնդրելով գնել զաւրէնսն՝
պահանջեաց 'ի քաղաքացեացն երդումն »։ — ԻԲ.
« Յաղագս Սոկրատայ գեղեցկասիրութեանն։ Սոկ-
րատէս իմաստասէր գոլով շրջէր 'ի մէջ ամբոխին, և
զհամբակսն յորդորէր յիմաստասիրութիւն »։ —
ԻԳ. « Յաղագս Պղատոնի ագահութեանն։ Պղատո-
նի իմաստասիրել լուեալ թէ մեծաբանութիւն (այլ օր.
մեծաբնութիւն) է Դիոնեսիոսի »։ — ԻԴ. « Յաղագս
Քսենոկրատեայ Թոշակակերութեանն։ Քսենոկրա-
տէս և Արիստոտէլ Պղատոնի էին աշակերտք »։ —
ԻԵ. « Յաղագս Դիոգնեայ խառնախառնութեանն։
Դիոգնէս շնական էր իմաստասէր »։ — ԻԶ. « Յա-
ղագս բնակելոյն 'ի կարաս, զոր և բազմագիծի հնար
է մեկնել, զի և այս յաղագս Դիոգնեայ է։ Արդ ասի
թէ սա յաւուրս ձմերայնոյ »։ — ԻԷ. « Յաղագս
Եպիկուրեայ։ Եպիկուրոս իմաստասէր էր, և այնպէս
կարծէր թէ սատանաւր իրողութեանցն՝ Աստուած
նախախնամութիւն ոչ առնէ »։ (Յոյնն 259)։ — ԻԸ.
« Յաղագս Կրատեսի։ Կրատէս Թեբայեցի էր բնով-
տացի ազգաւ »։ — ԻԹ. « Յաղագս ողաբողոնին։
Ծնական իմաստասէր ոմն »։ — Լ. « Յաղագս Անդիս-

թենի։ Անդիսթենէս չնական իմաստասէր, հարեալ և դան տուեալ 'ի դէմոն »։ (Յոյնն 310)։ — ԼԱ. « Յաղագս իմաստասիրին կոչեցելոյ յարեւուն զօրն ամենայն։ Մարտուցեալ լինելով Հռոմայ 'ի բարբարոսաց »։ — ԼԲ. « Յաղագս Պովտիդեայ։ Պովտիդէ քաղաք է շինեալ 'ի Թիրակ։ (Յոյնն 310)։ — ԼԳ. « Յաղագս արկադական խնդրոյն։ Հոմերոս քերթողն Յոդաւ 'ի գաւառն արկադացոց, որ է Պելոպոնեսոս »։ — ԼԴ. « Յաղագս Արիստոտելի և Եւրոպի։ Արիստոտելէս իմաստասէր աշակերտ լեալ Պղատոնի »։ — ԼԵ. « Յաղագս Ջրհորին Կլանթեայ։ Կղլանթէս մի էր 'ի չնական իմաստասիրացն »։ — ԼԶ. « Յաղագս Հերակլիտեայ թշուառութեանն։ Հերակլիտոս և Դիմոկրատէս, ոչ 'ի միում ժամանակի լեալք. այլ բնաքանական գոլով »։ — ԼԷ. « Յաղագս սեւայատակացն և անյատակացն։ Եւ են ոսքա զանազան 'ի միմեանց »։ — ԼԸ. « Յաղագս անպարկեշտին Պանեայ։ Պենելոպէ կին էր Ոդեւսիայ »։ — ԼԹ. « Յաղագս Բիւթենայ և Հերակլեայ որ կոչեցաւ այսպէս։ Բիւթենեայ՝ որ Թարգմանի եղնաձաշակ »։ — Խ. « Յաղագս եռերեկեին։ Ասի Հերակլէս յերիս երկուսն »։ — ԽԱ. « Յաղագս Իգովլիանոս և Կովխատարոս կոչելոյն զՅուլիանոս։ Քանզի Յուլիանոս զանուն քրիստոնէից 'ի գալիլեացիս փոխագրեաց, արգ. տատուածայինս Գրիգորիոս՝ կամեցեալ խաղ առնել և ասել »։ — ԽԲ. « Յաղագս Կերդաղեայ։ Կերդաղ (κερδαλή) կոչի աղուէս. աստուսա նման սուր լեալ առ Յուլիանոսի բարքն »։ (Յն. 183)։ — ԽԳ. « Յաղագս սեւոտանն և Պրովտիայ։ Պրովտէոսս այս էր Թրակացի. զորոյ զորդիսն սպան Հերակլէս »։ (Յն. 118,119)։ — ԽԴ. « Յաղագս յետնացի հրոյն։ Սիկիլիա կղզի է յետնագոյն տրամակայեալ յիտալիա »։ — ԽԵ. « Յաղագս Էքտոսի և Փաւլաւիդոսի ամարդութեանն։ Էքտոսս այս բանաւոր էր ցամաքին. սա խատագոյն

41

գոլով՝ խոհակայր բազմատեսակ մտածութիւնս և տանջանաց նորանս »: — ԽԶ. « Յաղագս Հիւդրասայ: Աստուածեալ լեալ եղև գազան ինչ 'ի լեռնէ »: — ԽԷ. « Յաղագս պատրիկեցի քիմերային: Է լեռն յորում երևեցաւ գազան ինչ, որոյ առաջին կողմն առիւծու և վերջինն վիշապի »: — ԽԸ. « Յաղագս Կերբերոսի: Աստուածեալ լինի թէ է ինչ շուն, որ ունի գլուխս երիս, որ և կոչի եռանգ »: — ԽԹ. « Յաղագս կոչեցելոյն կորիւն: Աստուածեալ լինի և այս. 'ի տիւռենական ծովուն գազան ինչ գոլ: (Յն. σκύλλα, կորիւն. յէջ 160): — Ծ. « Յաղագս Քարիբդին: Առ սիկելական և տիւրենական ծովուն է խոր ինչ »: (Յն. 161): — ԾԱ. « Յաղագս գծուխային ծածկութին: Հոմերոս քերթող 'ի ներքս մուծանէ զԱրամազդ »: — ԾԲ. « Յաղագս լիւդացւոց անիծելոյն զՑիւթինաս: Լին-դոս հին քաղաք է 'ի յՌոդոս »: — ԾԳ. « Յաղա-գս առ տաւրացիսն աստուածապաշտութեան: Այժմիկ ասացաք եթէ 'ի Սկիւթիա այգ՞ ինչ է »: — ԾԴ. « Յաղագս ընկենլոյն 'ի Կինոմարգէս: Կինոմարգէս անգի ինչ է յԱթէնս »: — ԾԵ. « Յաղագս Պաղա-միդեայ: Ասի թէ Պաղամիդէս եւրիացի էր ազ-գաւ »: — ԾԶ. « Յաղագս Ճայրին և թեւոցն Հաւաք-մանն: Ընդրութիւն էր. ասէ. յաղագս գեղեցկու-թեան Հաւուց »: — ԾԷ. « Յաղագս պառաւուն որոյ ուղքն սասանեցան: Կին ոմն կոչեցեալ որպէս ասմնք անուն Սեբելա »: — ԾԸ. « Յաղագս կիկլոպեանցն: Ի Սիկիլիա կղզւոջ առ լեռնակողմամբքն բնակեալ առ-սին Կիկլոպեանքն »: — ԾԹ. « Յաղագս ծիրանոյն: Ի Տիւրոս առ ծովեզերբն Հովուական քած շրջեալ »: — Կ. « Յաղագս երկրագործութեան և նաւավա-րութեան: Դեմետր ունէր դուստր զՊերսեփոնէ »: (Յոյն 172,173): — ԿԱ. « Յաղագս Կեղեւսոսի և Իկարոսի: Արդ յաղագս Կեղեւսոսի նախ ասասցուք »: — ԿԲ. Յաղագս կրաւնս և խորհուրդս կատարելոյն.

Որփեւս Թրակացի էր ազգաւ »: (Յոյնն 312): — ԿԳ. « Յաղագս զոհելոյն և աստեղաբաշխութեանն և երկրաչափութեանն: Ոչ է անհաւատալի եթէ ըզզոհելն գտին քաղդէացիք »: — ԿԴ. « Յաղագս և-րաղագիւթութեան: Տելմեսոս՝ քաղաք է լիւկիացւոց »: (Յոյնն 313): — ԿԵ. « Յաղագս հմայականին: Արգ ասի փռիւգացոյն գտանել զհմայականն »: (Յոյնն 313): — ԿԶ. « Յաղագս 'ի վերայ յառնելոյն իւրեանց ատրանցն: Ճարակող սկիւթացոցն մասն ինչ ելեալք յածեալք »: (Յոյնն 314): — ԿԷ. « Յաղագս Թեսաղական երիվարին և ղակեդմոնացի կնոջն: Ամ նայն քաղաք ըստ առաւելութեան ունի ինչ »: (Յոյնն 315): — ԿԸ. « Յաղագս Պղատոնի բանիւ քաղաքացն: Պղատոն իմաստասէր շարագրեաց գիրս, զոր և քաղաքավարութիւնս անուանեաց »: (Յոյնն 316): — ԿԹ. « Յաղագս Իսիոդի աստուածածնութեանն: Իսիովդոս մի էր 'ի պերճացեալ քերթողացն, որոյ յարգեալ լինին երեք քերթուածք »: — Հ. « Յաղագս Որփեայ հանդերձ քնարաւն: Որփեւս երաժիշտ ամե եղև »: — ՀԱ. « Յաղագս Փանեսի և Երիկապէոսի. (Περὶ τοῦ ο Ψάνης καὶ ʻο ῞Ηρι καὶ ʻο Παῖος). « Յորփիական քերթուածսն 'ի ներքս մուծանին »: (Յն. 315): — ՀԲ. « Յաղագս Հոմերոսի և Նորին բազմահուշակ պատմութեան: Քանզի 'ի քերթուածսն իւրում 'ի վեր և 'ի վայր զԿռոնոս և զԱրամազդ առասպելաբանէ »: (Յոյնն 316): — ՀԳ. Յաղագս Ովկիանոսի և Թետեայ: « Եւ զայս զառասպել 'ի ներքս մուծանեն քերթողքըն »: (Յոյնն 316): — ՀԴ. « Յաղագս ամբայարուցին Ջեւսայ առ Հերաս: Է առասպել ինչ ստեղծեալ վասն այսր: » — ՀԵ. « Յաղագս Թէ որպէս Հերա զէթերէ և զամպոց կախեալ, և երկաթի շանթիւք 'ի վայր ձգեալ: Հերա՝ որպէ բազում անգամ գիտացաք, նախանձայոյզ էր Հերակլեայ »: — ՀԶ. « Յաղագս Թէ զիա՛րդ երկիւղ էր աստուածոցն գուցէ փողելով երկ-

րի պատառեսցին և հրապարակեսցին գժոխք։ Եւ այս 'ի Հոմերոսի հագներգութիւնս գրեալ է»։ — ՀԷ. «Յաղագս Ածութեան յունիցն, և կարճութեան հերացն։ Հոմերոս 'ի ներքս մուծանէ թէ Արամազդ»։ — ՀԸ. «Յաղագս թէ զիարդ խոցեալ լինի Արէս, կամ որպիսի պղնձախեցի զընդանեալ։ Արգ զմէրս Նորա առնուլ առէ քերթողն»։ — ՀԹ. «Յաղագս Հեփեստոսի և Ափրոդիտեայ։ Ափրոդիտէս կին էր Հեփեստոսի»։ — Ձ. «Յաղագս մարտիցն։ Իսկ Աթենայ և Հերայ»։ — ՁԱ. «Յաղագս Կռոնայ և համամանն երկնի։ Երկին հայր լինէր Կռոնոսի»։ — ՁԲ. «Յաղագս Արամազդայ ընդ Կռոնի հակառակութեան։ Զեւս իմացեալ թէ այնպէս»։ — ՁԳ. «Յաղագս Կերդովս աստուածոյն։ ԶԿերդովս աստուած կոչեն Եղլենացիքն՝ որ է Հերմես»։ — ՁԴ. «Յաղագս ամենայն ինչ լինելոյն վասն կանանց։ Յաղագս Արամազդայ ասի թէ արծուի լեալ»։ — ՁԵ. «Յաղագս մակոհատանելոյ 'ի ցասմանէ զԱրէս. և յայտնի է այսպէս։ Քանզի ասի վերատեսուչ մարտից Արէս»։ — ՁԶ։ «Յաղագս արբեցութեան Դիոնիսեայ։ Ասի թէ որթոյ վերատեսուչ էր Դիոնեսիոս»։ — ՁԷ. «Յաղագս հիւրատեցութեանն Արտեմիգեայ։ Ասացաք յաղագս Իփիւգենայի»։ — ՁԸ. «Յաղագս հրամանատրութեանն Կրիւսոսի։ Ապողոն գիւթելով ոչ հաւաստատապէս»։ — ՁԹ. «Յաղագս Հեփեստի ծաղուն անչափութեան։ Յաղագս Հեփեստոսի յորժամ յորոգայթս»։ — Ղ. «Յաղագս առ պարարտագոյն կերակուրսն ընթանալ Զեւսի։ Պատմէ Հոմերոս եթէ Զեւս չոքաւ յԵթովպիա»։

Նմանապէս պատմութիւն և այնոցիկ որ յերկրորդում արձանականին առասպելացն զորս յիշէ սուրբն Աստուածաբան։ — Ա. «Յաղագս Արիագնեայ պսակին և Բերենիկեայ հիւսակին. և կարապին և ցլուն և առիւծուն և օձակալին, որք են այսպէս։ Արիագնեա

դուստր էր Մինովայ »: — Բ. « Յաղագս Սաղմոնեոսի և արշաւականչեացն որոտմանց: Սաղմոնէս որդի էր Էոլոսի »: — Գ. « Յաղագս բաբելացւոյն Զոպիւրոսի: Քանզի բազում ժամանակս մարտնչելով »: (Յոյնն յէջ 316): — Դ. « Յաղագս Կիւրոսի և Պարիսատեայ մօր իւրոյ: Փոքրն Դարեհ որդին Քսերքսեայ »: — Ե. « Յաղագս սամեացւոցն գոռոզութեան: Իսկ Յիստէոս սամէացի էր ազգաւ »: — Զ. « Յաղագս հարիւրաձեռանցն: Ասացաւ այս յառաջնում ճառին »: — Է. « Յաղագս ամբովտին: Ամբովտն որպէս ասացաւ »: — Ը. « Յաղագս ասելոյն թէ ով ընկեր՝ դու ուժգին ես 'ի նախըմբելն և 'ի կոկորդելն: Պղատոն և ամենայն իմաստասէրքն »: (Յոյնն յէջ 317): — Թ. « Յաղագս որկորաժէտութեան գիւաց: Էն և այս իսկ հաւաստի ». — Ժ. Յաղագս ոչ բարբառելոյ կաղնոյն և ոչ կաթսային գիւթանալոյ: Դոդոնէ քաղաք է շինեալ 'ի ցամաքի »: — ԺԱ. « Յաղագս Պիւթեայ: Փովկիդէ գաւառ է յԵլլադա »: — ԺԲ. « Յաղագս Կաստաղեայ: Էր աղբիւր յԱնտիոք »: — ԺԳ. « Յաղագս անդրոյն որ 'ի նոյն տեղւոջ, և թէ զիարդ բարբառէր: Պարտ է կարծել զանդրիանդս զայն »: — ԺԴ. « Յաղագս դափնոյն որ թարգմանի մարտ: Եւ է առասպելս այս »: — ԺԵ. « Յաղագս Դիոնիսեայ այլակին գոլոյն: Զդիոնիսեայ ասեն թէ զարանց իւր գործէր »: — ԺԶ. « Յաղագս բարձաբեկութեան Հեփեստեայ: Կաղ էր Հեփեստոս »: — ԺԷ. « Յաղագս թէ որպէս Աթենաս կոյս գոլով ծնաւ վիշապ: Զեւս կամեցեալ յուզղոյն իւրմէ »: — ԺԸ. « Յաղագս Հերակլի մոլութեանն: Մեգարէ կոչեցեալ դուստր Կրոնտոսի »: — ԺԹ. « Յաղագս շիրմին Արամազդայ որ 'ի Կրետէ: Ասի Զեւս 'ի Կրետէս մնանիլ »: — Ի. « Յաղագս պատուելոյ եգիպտացւոցն զՆիղոս: Զայսոսիկ Հերովդոտոս ոչ ասէ »: — ԻԱ. « Յաղագս Իսիս պա-

տուեալ լինէր »: — ԻԲ. « Յաղագս Պանեայ և Պրիապոսի: Յաղագս Պանեայ ասացեալ է. իսկ յաղագս Պրիապոսի աստ »: — ԻԳ. Յաղագս կատարեալ և օշոտեալ աստուածոցն, որ ինձ թուի յաղագս Ատտանայն և Դիոնիսեայ. և է ըստ այսմ յեղանակի: Պերսեփոնեայ ծնաւ զԱգրիոս և զԴիոնեսիոս »: — ԻԴ. « Յաղագս Կովկիտոսի և հրաբոց կիզանողի: Պլատոն 'ի ճառին որ Փիգոն անուանի »: — ԻԵ. « Յաղագս Տանտաղոսի և Տիտիւոսի և Իքսիոնոսի: Իսկ Տանտաղոս »: — ԻԶ. « Յաղագս հարթման լերգին, և յաղագս Պռոմիւթեայ: Արդ Պռոմիւթոսս այս »: — ԻԷ. « Յաղագս Կիկլոպեայ պատուոյն: Կիւկլոպսս այս աստ գիւցազն գոլ »: — ԻԸ. « Յաղագս Հերակլեան արձանացն: Հերակլէս 'ի կողմանս Գադերոնի »: — ԻԹ. « Յաղագս Ադոնիսեայ և Ափրոդիտեայ: Միւռիա կին Իւռոսի լեալ »: — Լ. « Յաղագս Պանտիոնի: Պանտիոն եղեւ թագաւոր աթենացոց »: — ԼԱ. « Յաղագս Պրոմպոսի: Այս պատկեր ինչ է »:

Յաղագս որ 'ի սրբոյն Կիպրիանոսի ճառին գրեալ է հիւանդապահանացն իբրև բան. « Ոչ ասա ձիթենւոյ օղոմպիական, — Ոչ իսթմիական շոճի, — Ոչ խնծորք դելփիականք խաղալիկք, — Ոչ նեմէական լախուր »: — « Արդ աստ վերջն Գրիգորիոս ցուրբն Կիպրիանոս, ով աստուածային և քահանայական գլուխ. ոչ ինչ յայնպիսի անուն պարգևաց մատուցանեմ քեզ. այլ բան՝ որ քան զամենայն ինչ ընդանեգոյն է բանից սպասաւորաց. և յիրաւի եւս արդեւք. քանզի չէք ինչ յարաբանս ընդանեգոյն վարդապետին իբրև զբանս իւր. և մանաւանդ սուրբ լուսաւորչին Գրիգորի աստուածաբանի և իմաստուն վարդապետի »:

ՇԱՐԱԴՐՈՒԹԻՒՆ ԻՆՔՆԱԿԱԼԱՑՆ ՀՌՈՎՄԱՑ

(SÉRIE DES EMPEREURS ROMAINS)

Ի չորս հայ գրչագրաց Վատիկանեան մատենադարանին 'ի Հռովմ՝ կը գտնուի այս խորագիրը ունեցող համառօտ գրուած մը կամ ցուցակ կայսերաց, 'ի լատին լեզուէ թարգմանուած 'ի մերս 'ի ՈԾԹ (= 1210)։ Կը սկսի յՕգոստոս կայսերէ, ու կը շարունակէ կարգաւ. Նիկիոյ երկրորդ ժողովէն ետքն ալ կը յարէ զինքնակալս Գերմանացւոց, մինչև 'ի Թուական թարգմանութեանն։ Այս վերջին մասը ինքնագիր կ'երևնայ. և ապա կը յաւելու.

« Ֆիլիպն եղբայր սորա և Աւգ ընտանի և հակառակ սորա։ Ի սոյն ամի սպանաւ Ֆիլիպն յիշխանէ ումեմնէ, և մնաց ինքնակալութիւն Աւգին. առ որ ճանապարհորդեմ ես նուաստս Հեղի հրեշտակութեամբ, 'ի թագաւորէն մերմէ Լևոնէ. առ վերոյգրեալ կայսրս Աւգ. և 'ի վերայ ծովու 'ի նաւարկութեանս մերոյ թարգմանեցի զսա 'ի հռովմէականէն 'ի մերս. 'ի թու. Հայոց ՈԾԹ։ Իսկ արարեալ մեր առ սմա նորա ամ մի և ամիս երեք, դարձոյց զմեզ հարկաւ առ թագաւոր մեր, արձակելով ընդ մեզ և թագ արքայական բազմածախ և բազմագին յականց պատուականաց և 'ի մեծագին մարգարտից ընդելուզեալ։ Զոր բերեալ մեր մեծաւ ուրախութեամբ՝ ընկալաւ թագաւորն մեր և պսակեաց ընդիր պսակաւն գեղեցիկ զՌոպին, որդի դստերն եղբօր իւրոյ և որդի բրինձին Անտիոքայ Ռէմնդին. 'ի թու. Հայ. ՈԿ 'ի տօն սուրբ Աստուածածին յաւգոստոսի ձե։ Եւ թագաւորէ ընդ իւր Հայոց 'ի կամս Աստուծոյ »։

— *Յաջորդութիւն հայրապետացն Հռովմայ.* (Série des Pontifes de l'Église de Rome). *որ սկսեալ 'ի սրբոյն Պետրոսէ՝ կը ժամանէ մինչև յԻննովկենտիոս Գ... « Իննուենցոնց Գ. որ այժմ հովուէ. առ որ յառաջեալ երթամք հրեշտակութեամբ 'ի թագաւորէն Հայոց 'ի Լեւոնէ, ես նուաստս Հեղի. որ և թարգմանեցի զսա 'ի հռովմայականէն 'ի մերս. յորժամ էաք նաւարկեալ մերձ յաշխարհն Բոյլաց, որ կոչին Լունկուպարտք, յաւուր պենտակոստէիս 'ի յունիսի 'ի հինգն. և 'ի թուականիս Հայոց ՈՄԹ. 'ի փառս Քրիստոսի Աստուծոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս. ամէն »:*

ՈՂՈՄՊԻԱՆՈՍ

(OLOMPIEN)

Ողոմպիանոս՝ յոյն մատենագրի մը անուամբ քանի մը ընտիր և իմաստուն առակք գտնուած են 'ի հայ գրչագիրս, և արդէն ծանօթք բանասիրաց՝ հրատարակութեամբ 'ի մեր մամլոց, Մխիթարայ Գօշի առակաց հետ (1842):

« Ասոնց թարգմանութեան ժամանակն յայտնի չէ. բայց կրնանք կարծել որ իններորդ դարէն առաջ է. վասն զի Թովմա Արծրունի իր պատմագրութեան մէջ (*Գիրք Ա.* 137) *կը յիշէ երեքտասաներորդ առակը. վայելչութիւն դարձուածոց, ընտրութիւն բառից, համառօտ և կորովի ոճ մը, մասնաւոր համեղութիւն մը կ'ընծայեն այս հնգետասան առակաց: Հնգետասան կ'ըսեմ, վասն զի սկսեալ վեշտասաներորդէն՝ հայերէն լեզուն բոլորովին կը փոխուի, կ'անզարդանայ, կ'անշքի, պարզ ըսեմ՝ կը ռամկա-*

նայ։ Այդ ԺՉ — ԻԳ առակք՝ մասն են Աղուեսագրոց, կամ Վարդանայ առակաց »[1]։

Մեր տպագրին մէջ յանուն Ողոմպիանու հրատարակուած են հետեւեալքն՝ ըստ թուոյ առակաց. 16, 17, 18, 19 21, 22, 23. իսկ 'ի տպագրին Սէն - Մարթէնի Վարդանայ կ'ընծայուին 8, 19, 22, 23. 28, 37. նոյնպէս և յԱղուէսագիրս (տպ, 1668) 34–40 թուանշանները կրողք։

ՈՐՈԳԻՆԷՍ

(ORIGÈNE)

Համբաւաւոր մատենագիր եկեղեցւոյ (185 – 253)։ Հատուածք միայն իր բազմաթիւ և իմաստուն երկասիրութեանց հասած են առ մեզ հայ թարգմանութեամբ։ Ասոր պատճառը կը համարիմք ենթադրել իր անուան և հռչակին փառաց հետ՝ գրուածոց կրած հակառակութիւնն՝ անդստին 'ի ժամանակակցաց և 'ի նախանձորդաց հեղինակին, և իրեն ընծայուած մոլորամիտ վարդապետութիւնք, յորոց նախնիք մեր ուղղափառք՝ լաւ համարեր են զգոյշ կենալ և զգուշացընել զազգն։

Նշանակենք համառօտիւ առ մեզ գտնուած և իրեն անուանը վերագրուած հետաքննական հատուածքն՝ դնելով անոնց սկզբնաւորութիւնն և վերջը։

— Ի խմբագիր մեկնութեան կաթուղիկէ թղթոց. (Փարիզեան ազգային Մատենադարան, Suppl. 48)։ (Fragments d'un Commentaire sur les epîtres catholiques). — « Քանզի զչարութիւն սահմանի սէր

1 ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՌԱՔՆՆՈՒԹԻՒՆ, 51։

աշխարհի. իսկ զառաքինութիւն Աստուծոյ. և առաքինութիւն և չարութիւն 'ի միասին բնակել ոչ կարեն. ուրեմն ապա թշնամիք են »....:

— Այլ հատուած 'ի նոյն գրոց. (Autre fragment du même livre). « Որ յաղագս մեղաց սիրէ զաշխարհ, թշնամի գտանի Աստուծոյ. այնպէս և որ զսէր Աստուած սէրն բարեպաշտութեամբ հաստատէ, վաղվաղակի թշնամի գտանի աշխարհի »:....

— Միւս այլ հատուած 'ի նոյն գրոց. (Autre fragment). Թէպէտ և պատշաճապէս զօրութիւն բանից, եգան քննութիւնքդ, սակայն հարկաւոր համարեցայ և զայս յաւելուլ վասն մեկնութեան և աւկանի խնդրողաց ». (բաւական երկար հատուած մը):

— Հատուածք 'ի խմբագիր մեկնութեանն Ղևտական գրոց. (Fragments du Commentaire de livre Lévitique). (Տես Ղևտականի մեկնութիւն). « Ղևտական գիրքս մի են 'ի հինգից գրոց զոր գրեաց Մովսէս եբրայեցւոց աւրէնսդիր. քանզի ոչ ոք նախ աւրէնս գրով առ յԱստուծոյ եառ. վասն զի զքահանայութեանն և զպատարագաց... Եւ ոչ ինչ է սքանչելի. քանզի մակագրութիւն է իւրաքանչիւր գրոց յայտնի ինչ 'ի նմայն ծայրագունից ». (ապա կարմրագեղով). « Ոչ միայն ուղղափառացն եգեալ է զմեկնութիւն, այլ և հերձուածողացն բազում ինչ համաձայն »:

— « Բազում յաղագս պատարագաց զանազանից բանի գրեցելոյ 'ի Ղևտականիս, զոր որք ոչ տեսանեն' արհամարհեն, կամ որպէս զանարգ աւրինագրութիւն... բայց փառաւորելով և աւրհնելով զիմացուածս նորա ասէ եւս. Պատուիրանն սուրբ և արդար և բարերար »:

— Աստուած զՄովսէս ամենայն աւրէնքն նախ կոչէ, որպէս և 'ի մորենւոյն. քանզի գիւային բազմութեան նուէրք կատարին' ըստ որում անգանէն Պորփիւրոս »:

— « Վասն այնորիկ տայ զպատարագսն Աստուած գրեթէ սակաւ. Տուք յորոց ոչ են ինձ պէտք. զի պահանջեսջիք զբարեպաշտութիւնն. զոր խրատեցայք 'ի ձեռն ձայնի 'ի մէջոյ մորենոյն քարոզեցելոյ »:

— « Սեղանն նուիրաց արձան սխւր. յորոյ վերայ զոհքն և ողջակէզքն, սեղանն, խնկոց սեղանն »:

— « Զընդունելին զոհ՝ այս ինքն զհոգևորականն. որպէս ասէ Պաւղոս. Հոտ անոյշ եմք... և 'ի վերայ բերէ թէ ողջակէզ պատարագաց նորա թէ յարջառոց իցէ նոյնպիսի »:

— « Նախ խնդրելի է յաղագս ասացելոցս թէ զինչ է Եւ արասցեն յամենայն պատուիրանաց տեառն որ ոչ առնիցի... և քաւեսցէ վասն նորա քահանայն 'ի մեղաց անտի իւրոց և թողցէ նմա »:

— « Մեռելոտի ասէ զԱստուծոյ մեռեալն մարդ... ըստ ասացելոյն Զմարդիկ և զանասուն կեցուցանես դու տէր »:

— « Ունիմք ասել թէ և վասն կերակրոյ պատճառի քահանայիցն յաւէտ էին զոհքն... զի զոր ինչ զոհէ ոք՝ ոչ երկրպագէ նմա և ոչ համարի աստուած գոլ զոր զոհէն Աստուծոյ »:

— « Արիւնն՝ կեանք կենդանեայն մահկանացուի, իսկ ճարպ՝ բարւոք ունակութիւն... և բոլորովին 'ի դաւաճանելոյ զմարդիկ »:

— « Ի ձեռն նշանակաց 'ի բաց հրաժարեցուցանէ զամենայն պատճառ թմբրեցուցիչ հոգւոյն... ոչ միայն 'ի գինւոյ՝ այլ և որ 'ի գործոյ և 'ի խորհրդոց և 'ի պարապմանց մարդկայնոց »:

— « Ոչ որպէս յանտեղւոյ հրաժարեցուցանէ, այլ զժուժկալութիւնն պահէր զիսրայէղացւոցն... զգաստք եղիցեն հոգւոյ ստուգութեամբ, և նուրբ յիշմամբ Աստուծոյ »:

— « Զի զանեսութիւն սրբոյն տացեն որոշել և զատել, քան զոր յաղագս տարերց աշխարհիս և

երևելեացս տեսութիւն... որ առաւելագոյն ինչ գործ գործէ »:

— « Ձեռն այսոցիկ ցուցանէ թէ ոչ քահանայիցն կերեալ անկատար էր զոհն... որ ոչ վասն իւրեանց մեղացն բաւական եղեն աղաչել զԱստուած »:

— « Խաւսեցաւ տէր ընդ Մովսէսի և ընդ Ահարոնի, զի մի միայն Մովսէս և մի միայն Ահարոն ուսուսցեն մեզ... ընկեցին զազնիւն յամանս, իսկ զանպիտանն արտաքս ընկեցին »:

— « Ցանամանոց որ յերկրիս են՝ են որ մաքուր են և ուտելիք. և են որ ոչ այսպէս... յորոց բազում ինչ մեզ պարգևին պիտանիք »:

— « Հիմ զոր յաղագս մաքրի և անմաքրի բազում անգամ առնէ բան... որչափ ևս հակառակաբար ունիցի առաւել որ առ յԱստուծոյ կամսն և գործէ զհրաժարելիսն »:

— « Ի վերայ հասցուք եթէ ոչ թուեցաւ բաւական որ ըստ գրոյն աւրինաց այսպէս գրել... թէ յորժամ եկն լրումն ժամանակին՝ առաքեաց Աստուած զորդին իւր որ եղև ՚ի կնոջէ և եմուտ ընդ աւրինօք, և որ զկնին »:

— « Գտանեմք աւրէնս յաղագս բորոտութեան մարդկան կամ մարմնոյ. քանզի խարելի է յորոյ մարդոյ վերայ ասիցի... տեսանել զհոգի տիրացեալ կամ վիրաւորեալ յիմեքէ յայսպիսեացս և բժշկեալ »:

— « Ի ձեռն այսոցիկ գուշալ՝ ոչ պարտ գոլ թագուցանել զմեղս... լի ոսկերաւք մարդկան և ամենայն պղծութեամբ՝ որոյ հոգին է բորոտեալ »:

— « Իսկ զայս նշանակ գոլ որոյ հոգին իցէ բորոտեալ... արտաքոյ կալ հասարակաց ժողովոյ »:

— « Պարտ է նմա և փայտիւ մաքրել եղեւնեաւ... իսկ մանեալն կարմիր՝ տես թէ թուեսցի տիպ գոլ պատուական արեանն »:

— « Վարկանիմ և զզոպային նշանակ՝ լուացաւ-ղականն առեալ լինել, յոլովակի այն 'ի վերայ բորոտի յորում աւուր մաքրիցի »:

— « Զենանի հաւն յաման խեցեղէն… խոցեալ տիգաւ 'ի զաւրականէն ըստ աւետարանչին Յովհաննու »:

— « Որպէս ոչ է բաւական եղելոյ առաջնոյ գերծման… զհպարտութիւնն 'ի բաց եգեալ »:

— « Արդ առաջին գառն որ յաղագս յանցանացն… քահանայն որ մաքրէն զմարգն զմաքրեալն և զայն առաջի տեառն »:

— Մեկնութիւն Երգոց երգոյն « Խօսք Որոգինեսի փիլիսոփայի յ'Երգ երգոցին մեկնութիւն »: Թարգմանութիւն աւելի նորագոյն քան զնախակարգեալ հատուածոցն:

Կը յիշատակուի 'ի տպագիր ցուցակին Էջմիածնի, (Թիւ 1608) իր անունով « Պատճառք չորեքտասան Թղթոցն Պաւղոսի յՈսկեբերանէ, յԵփրեմէ, 'ի Կիւրղէ և յՈրոգինեսէ »:

— « Յառաջաբան նախակարգեալ գրոցն Թագաւորութեանց, զորմէ ասի լինել Որոգինեայ » 'ի գրչագիր աստուածաշունչ մատեանս:

ՊԱՊԻԱՍ-ՀԻՊՊՈՂԻՏՈՍ. (PAPIAS-HYPPOLITE). Հատուած մի այս անունով, հայ և լատին թարգմանութեամբ ալ հրատարակեալ. (J.-B. PITRA. Spicilegium, հատոր Դ.) « Արդ է ոստայնն տեառն մերոյ իբրու չարչարանքն »:

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՅՑՔ (LES LITURGIES) տես յ'էջ 248 երկասիրութեանս:

ՊԵՏՐՈՍ ԿՐԵՏԱՑԻ (PIERRE DE CRÈTE). — Պետրոսի եպիսկոպոսի Կրետացւոյ յաղագս դրամին և 'ի կրտսեր որդին. (Discours sur le denier de l'évangile, et l'enfant prodigue).

ՊԵՏՐՈՍ ՄՈՆԿՈՍ (PIERRE MONGUS). — Պետրոսի Մոնկոսի պատրիարքի Աղեքսանդրու՝ Թղթակցութիւնք ընդ Ակակայ պատրիարքի Կոստանդնուպոլսոյ։ (Տես ԱԿԱԿ)։

ՊԻՍԻԴԷՍ

(PISIDES)

Գէորգ Պիսիդէս՝ բիւզանդացի յոյն քերթող յեօթներորդ դարու, հեղինակ է ընտիր բանաստեղծութեամբ յօրինուած երկասիրութեան մը Յաղագս վեցօրեայ արարչութեանն կոչուած և որոյ հայկական թարգմանութեան մէկ պատառիկը կամ մասը միայն ծանօթ էր մեզ շատ տարիներէ 'ի վեր, և իմաստից և ոճոյ ազնուութեամբ՝ մեծապէս փափաքելի ըրած ամբողջութեան գիւտը։

Այդ ցանկալի և հայկական բանասիրութեան հետաքննական պարգևը կը հասնի մեզ Անտոնեան ուխտին Մեծարգոյ հարց մատենադարանէն, զոր շնորհակալու սրտիւ ընդունելով՝ կը փութանք քիչ ատենէն ընծայել 'ի լոյս՝ յօգուտ և 'ի պարծանս հայ դպրութեան, բաղդատելով ընդ յունական սկզբնագրին, որ չափական ոտիւք յօրինուած է, ուր մեր թարգմանութիւնն՝ բանաստեղծական ոճով և ոգւով, այլ արձակ գրութեամբ է։

Թարգմանութեանս խորագիրն է. Պիսիդեայ իմաստասիրի վեցօրեայ։ Որպէս զի մեծ են գործք քո, Տէր։ Սկզբնաւորութիւնն գնենք՝ 'ի ճաշակ բանասիրաց։

« Եկի բերելով քեզ յանապատէ սրտէ՝ պտուղս մշակեալս 'ի քոյոցդ ցօղոյ. — Քանզի ոչ էր 'ի գեղ փշօք զանգելոյ անձին՝ մշակել խորհրդականի բանի հասկ. — Եթէ ոչ հատեալ քո զփշոցն աղտեղութիւնս՝ հանէր կամ խլեցեր. — Եւ կամ սրագունիւ քոյոցդ աղօթից խոպանացուցեր սրով։

«Այլ ով երկրագործդ վիմաց և մորենեաց. — Զի սերմանես դու և 'ի վերայ վիմաց յոլովակի, — Եւ զաւակ բանագատես ծնանել զփուշս, — Բուսուցանել պտուղս արժանաւորես՝ և զապառաժս. — Եւ 'ի Թռչնոց անյայտից Թռուցելոց — Ոչ ինչ 'ի քոյոցդ աստուածայնոց սերմանց քաղեսցէ:

«Արդ ոռոգեա՛ զմեզ հոսմամբ արտասուաց. — Թերեւս ընկի զաւակ 'ի յամըոյ. — Դարձեալ և պտուղ իմաստուն՝ յանպտուղ սրտէ: — Եւ քանզի փախչիս 'ի գովեստից իբրև 'ի պարսաւանաց, — Ըստ դիտմանս զակնարկութիւնս ձկտեալ՝ ասացից 'ի քոյսդ յուսացեալ աղօԹից ոգիս:

«Արդ աղբիւր բնաւորեցաւ բանի մի, — Բայց երակք բազումք անյայտից ականց. — Որովք Դաւիթ ոռոգանէ զամենայն միտս — Զայսոսիկ գրոյ բղխելոյ հոսմանս:

«Որպէս զի մեծ է Աստուծոյ ստացուածոյս արարչագործ և իմաստուն ամենագործութիւն: — Արդ ով իմաստասէ՛րդ ստարասերմն բանիցդ. — Լո՛ւր, Պրոկղ, և մի՛ ճոխաբաներ. — Զի 'ի քո պատճառս դիտմանդ տալոյ — Լռեսցեն Պրոկեղք և խօսեսցին վայրաբնակք »: Ու կը յաւելու իբրու ծանօթութիւն թարգմանիչն. «Գիտելի է թէ առ Պրոկղ ոմն յարտաքին իմաստասիրացն ձկտի »:

Յայլեւայլ գլուխ բաժնուած է քերթուածը, և նախ Յաղագս օդոց, և հետզհետէ Յաղագս արեգական, Յաղագս լուսնի, և այպ ընդհանրապէս եօթն օրեայ արարչագործութեան հրաշալեաց վրայ, առանց մասնաւոր գլխակարգութեան:

Թարգմանութեան ժամանակը յառաջ կ'երեւի քան զՆար՝կացւոյ և Մագիստրոսի դարը, աւելի Իմաստասիրին և իր ժամանակակցաց ախորժելով ընծայել. Թէպէտ ոմանք ինչուան եօթներորդ դարու հնութիւն ալ ուզած են տալ: Բայց եթէ կարծուի աւելի մերձաւոր ժամանակաց՝ Սարկաւագ Յովհաննու

ալ վերագրել, Սարեկի քերթուածոյն աջող և ըն-տիր շարագրութիւն՝ կրնայ այդ կարծիքն ալ արդա-րացընել։

Վարդան վարդապետ մեծն՝ 'ի յիշատակարանի կամ 'ի վերջաբանի մեկնութեան Հնգամատենին՝ վկայութիւն կը բերէ նաև 'ի Պիսիդեայ, թէպէտ տարբերելով տեղ տեղ 'ի թարգմանութեանն կամ 'ի շարագրութեան, մեր հիմայ յիշատակած ընտրե-լագոյն գրչագրէն. « Եւ ասեմք զասացեալն յի-մաստնոյն Պիսիդեայ. « Ո՛ մշակդ մորենեաց և վի-մաց — Եւ կամ աղտաղտ և խոխոմ գետնոյ. — Եւ ցամաքեալ երկրի ցաւօք և ժամանակօք. — Որ ծըլ-նադատեալ արարիք խիւս և խորշակահար հաս-կաց։ — Սակայն զի արեգակնակոխ էր և յուսով կենդանի »[1]։

ՊՂԱՏՈՆ

(PLATON)

Մեծանուն և բազմահռչակ մատենագրիս անուն և գրուածք որչափ ծանօթ և գովեալ առ նախնիս մեր՝ անդստին 'ի հինգերորդ դարէ, բայց երկասիրու-թեանց հին թարգմանութեանց յիշատակութեանը հանդիպած չենք. Մագիստրոս ալ յայտնապէս կ'ըսէ 'ի թղթին առ վարդապետն Սարգիս թէ անոնց թարգ-մանութեանն չհանդիպելով 'ի մեր լեզու, իր քա-ղաքական և ուսումնական բազմազբաղ պարապմանց մէջ՝ ետևէ եղած է անոնցմէ մի քանիին հայացընել՝ ի-

1 Տես աւելի ընդարձակ տեսութիւնք և տեղեկութիւն զՊի-սիդեան քերթուածոյս 'ի Բազմավէպ հանդիսարանի (1875 յ'էջ 124)։

րեն յատուկ ոճովն և լեզուով [1]: Այսոնք են հետե-ւեալքն.

— Պղատոնի ՝ի Մինովս, և յաղագս Օրինի. (Μ'-νος, ἢ περὶ Νόμου). Տրամաբանութեանս դէմք Սոկրա-տէս է, և այլ ոմն անանուն: « Հարցումն. Օրէն մեզ զինչ է: Պատասխանի. Զորպիսի՞ և հարցցես զօ-րինացն »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն առա-ջին. Պատճառս տրամագրութեանն առ աթենացի ոմն օտար և առ Կղինիաս և Մեգիլլոս: — Պղատոն. « Աստուած, եթէ այլ ոք ՝ի մարդկանէ ձեզ, ով օտ-րեկք, ընկալաւ զպատճառս զտրամագրութեան օրինացն »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն եր-կրորդ: — Պղատոն ասէ. « Իսկ զոր յետ այսորիկ է՝ որպէս թուի ինձ այսպէս խորհիլ. պարտ է յաղագս սորա թէ զիարդ՝ միայն զայս ունի բարի զտեսա-նելս »:

— Պղատոնի Օրէնսդրութիւն երրորդ: Տրամա-բանութեանս դէմքն աթենացի ոմն և Կղինիաս և Մե-գիլլոս: — Պղատոն ասէ. « Այսոքիկ արդեւք այսպէս. բայց քաղաքավարութեան սկիզբն՝ զո՞ ոք երբէք լինել

1 « Ոչ եմք դադարեալ ՝ի թարգմանութենէ. եւս բազում մատեանս՝ զորս ոչ եմք գտեալ ՝ի մեր լեզուս, զերկուս մա-տեանսն Պղատոնի. զՏիմէոսի տրամաբանութիւնն և զՓեդով-նի. յորս բոլոր ճառսն նախագիտականն այն պարփակեալ կայ ». (Մխիթարայ ՝ի թղթոյն):

« ... Մագիստրոս ձեռն արկ թարգմանել զՊղատոնի գործս իւրով ընտել մտախլապատ և հելլենաբան խրթնութեամբն. վասն որոյ և մեք զամենայն ջան եդաք՝ բաղդատել ընդ յոյն բնագրի՝ անխիղճ ուղղագրել զվրիպակս գրչին, և զթարգմանչին՝ եթէ գոյր ուրեք. որպէս զի մի և վրիպանք խմաստից և սը-խալ գրութիւնք յաւելցեն ՝ի մթութիւն հելլենաբանութեանն. որով որ ընթեռնուն, ոչ հասկացեալ ինչ, անօգուտ համարիցին զկատարեալ թարգմանչին և զմեզ »: (Ի յառաջաբանի մերոյ առ. 1877):

տատասցուք, ո՞չ ապաքէն անդուստ ոք զնա տեսցէ դիւրապէս և գեղեցկագոյն »:

— Պղատոնի Օրէնսդրութիւն չորրորդ: Տրամաբանութեանս պատճառ աթենացի ոմն օտար և Կղէնիաս և Մեգիլլոս: — Պղատոն. « Բեր արդ թէ որպիսի՞ պարտ է զմտաւ ածել մեզ՝ լինել քաղաքին. և ասեմ իսկ ոչ զանունն սորա հարցանելով թէ որպէսն ինչ իցէ այժմ և յապառնի ժամանակն »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն հինգերորդ. « Լուիցէ արդ ամենայն ոք այն իսկ՝ որ այժմ յաղագս աստուածայնոյ և սիրելի նախահարցն զատուցեալսն լուաւ »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն վեցերորդ. « Այլ յետ այսոցիկ ամենայն ասացելոցս՝ գրեթէ իշխանաց կարգաւորութիւնք պարտ է 'ի քաղաքիս լինել »:

— Պղատոնի Օրէնսդրութիւն եւթներորդ: Յաղագս անգիր սովորութեանն: « Եւ լինելով մանկանցըն արուաց և իգաց զսնունդն իսկ՝ և զխրատն որ յետ այսոցիկ է ասել ուղղագոյն եղիցի մեզ »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն ութերորդ. « Այսոցիկ մեզ հուպ է կարգելն, իսկ օրէնսդրելն տօնք յետ այնոցիկ՝ որ 'ի Դելփիսէն գիւթութիւնք »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն իններորդ. « Դատաստանք արդ՝ յետ այսորիկ լինելով հետևողք, յառաջագոյն ամենայն գործոցն գոլով ըստ իւրեն լինիցին գեղեցկայարմարութեանն օրինացն »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւն տասներորդ. « Յետ հարուածոցն յաղագս ամենայնի՝ ասասցի այսպիսի ինչ օրինական 'ի սակս հարստահարութեանցն յօտարացն ոչ ուրուք ոչ ինչ բերելով ածել »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւնք մետասաներորդ. « Եւ զոր ինչ յետ այսոցիկ իցէ վաճառեալ, և այլոց ումանց առ միմեանս ենթադրութեանց՝ որ կարօտանան պատշաճաւոր դատաւորութեանց, և պարզ իսկ է այս ինչ »:

— Պղատոնի Օրէնք կամ Օրէնսդրութիւնք երկոտասաներորդ. « Եթէ բարեխօս ոք կամ քարոզ սըտելով զքաղաքէն զօտարոտիս ինչ մաղթէ առ քաղաքի ուրեմն »:

— Պղատոնի յ'Եւթիփրոն կամ յաղագս Սրբոյ. (Τὰ τοῦ Εὐφύθρο ἢ περὴ ὁσίου)· « Զի՞նչ նորագոյն, ով Սոկրատէս, եղև, զի դու թողեալ զշրջելն 'ի Լիւկիոն՝ աստանօր այժմիկ գեգերիս առ սրահս թագաւորին »:

— Պղատոնի՝ Սոկրատայ պատասխանի. (Ἀπολογία Σωκράτους)· « Զոր ինչ դուք իսկ, ո՛վ արք Աթենացիք, ախտացայք 'ի ձեռն իմոյ ջատագովին՝ ոչ գիտեմ »:

— Պղատոնի առ Տիմէոս՝ սակս բնութեան. (Τὰ τοῦ δεαλόγου Τιμαίου)· (Անձինք տրամախօսութեանս են Սոկրատէս, Կրիտիաս, Տիմէոս և Երմոկրատէս): Սոկրատէս. « Զորրորդ եղով ձեր արդեւք, որոց ընդտրամաբանութիւնդ, իբրու հիւրք եղելոյ երէկ, իսկ այսօր կոչնատէրք, ով սիրելի Տիմէոս, մին պակասեաւ՝ ո՞ւր արդեւք իցէ »[1]:

Ոմանք 'ի բանասիրաց կ'ենթադրեն թէ Պղատոնի գրուածոց հայկական թարգմանութիւնք հնագոյնք ըլլան քան զՄագիստրոս և իր ժամանակը, և այլք մինչև 'ի հինգերորդ դար կը հանեն՝ ընծայելով Դաւթի Անյաղթի, որ՝ ինչպէս գիտենք, թարգմանիչ է Պղատոնի հռչականուն աշակերտին՝ Ստագիրացւոյն

1 Վերջին երեք տրամախօսութեանց հին թարգմանութիւնք հրատարակեալ են 'ի մեր տպարանի, հմուտ յառաջաբանով և բաղդատութեամբ ընդ յոյն բնագրին 'ի Հ. Արսէնէ Սուքրի (1877):

Արիստոտելի քանի մը իմաստասիրական գրուածոց, և ասոր և լեզուի նմանութեամբ կը համարին արդարանալ։ Մեր ձեռքն հասածններուն մէջ՝ ասոր և թարգմանութեան միակերպութիւն չտեսնուելով, հաւանական կ՚երևնայ որ մի և նոյն գրչի արդիւնք չըլլան. բայց մինչև ժամանակն որոշել, եւս առաւել թարգմանողը, դժուարին կ՚երևնայ։ Միայն բաղդատելով զթարգմանութիւն մեր ընդ յոյն բնագրին, փափաքելի կ՚երևնայ ՚ի հայն՝ առաւելագոյն ճշդութիւն, ընթերնք նաև՝ գիտութիւն յոյն լեզուին, յորում չի տեսնուիր այնչափ քաջուսումն, ուր Անյաղթի համար այս նկատմամբ հակառակ վկայութիւնն ունինք թէ ՚ի մերոցն և թէ յօտարաց, և որ կ՚արդարանայ իր անուամբ առ մեզ հասած թարգմանութեամբք։ Քանի մը օրինակք յ՚Օրինաց գրոց.

Թարգմանիչն մեր կ՚ըսէ. « արդ զեղբայր նորա զՈւստամանթիւս լսեմք անուն արդարոյն ընկալեալ ». յոյն բնագիրն. « Զեղբայր նորա զՈւստամանթիս, քանզի լսէք զանունն, գոլ արդարագոյն »։ — Հայերէնն. « Եւ քանզի այսպիսի բարեաց օրինակաց անուցեալ էք ». յոյնն. « քանզի օրինական բարեաց անեալ էք »։ — Հայն. « Լսեմ և հանդիսաւք ըստ ճանապարհին առաջ եկոյ ». յոյնն. « իբրև լսեմ՝ են հանդիստ և բաւական »։ — Հայն. « Առ հետևեակաց ընթացան կրթութիւն յոյժ չափաւոր ». յոյնն. « եւ ՚ի հետևեալ ընթացիցն կրթութիւն յոյժ ճահաւոր »։ — Հայն. « Անխոհեմութիւն արդեաւք թուի ինձ՝ ապաստան լինել զբաղմանց, իբրու ոչ ուսողաց ». յոյնն. « Թուի ինձ առա՝ զանմտութիւն ամանց կշտամբել, իբրու ոչ ուսողաց »։ — Հայն. « Եւ զի՞ է որ զքաղաքն շարայարմարելով առ ՚ի պատերազմել. եթէ զարտաքինն տեսանելով զինճացաղն՝ զարդարիցէ մանաւանդ, եթէ առ պատերազմ այնմիկ որ ինքեան յամենայն ժամ ելանելով որ կայի

արգեւք հակառակութեան »· ուր բնագիրն կ'ըսէ· « Եւ զի՛ է որ զքաղաքն յարգարիցէ· արգեւք յարտաքին պատերազմն նայելով եւեթ՝ զկենցաղն զարգարիցէ, եթէ 'ի պատերազմն որ յինքեան գործէ հանապազօր, որ և կոչի ապստամբութիւն »: Այսոնք միայն քանի մը էջերէ առնուած անճշդութիւնք կամ մթութիւնք հայ թարգմանչին, որ թերեւս ընդօրինակողին անհմտութեանն ալ արգիւնք ըլլան. վասն զի միակ օրինակ մը կայ Պղատոնի գրուածոց թարգմանութեան 'ի Մեր մատենադարանի, և ուրիշ տեղուանք գտնուած օրինակաց տեղեկութիւն չունինք, չհանդիպելով անոնց մեզի ծանօթ ցուցակաց մէջ:

ՊՈԼՈԲԻՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ (POLOBIUS, ÉVÊQUE). — Պոլոբիոսի եպիսկոպոսի՝ 'ի սքանչելիս Եպիփանու Կիպրացւոյ. « Փառք շնորհացին մեզ »: « Պոլոբիոս աշակերտ է Յովհաննու քահանայի եկեղեցւոյն Կիպրոսի, որոյ հրամանաւ գրէ զսքանչելիսն զոր գործեաց Եպիփան: Ընդ նմա էր և Պոլոբիոս յորժամ եկ Եպիփան յԵրուսաղէմ, ուր յանդիմանեաց զագահութիւն Յովհաննու հայրապետի »: (Մատենադ. Ս. Երուսաղէմի, Թիւ գրչ. 443, գրչագիր Երզնկացւոյն):

ՊՈԼՈՔՐՈՆ (?) — (Հատուած 'ի Ղեւտական գրոց մեկնութեան). Տես յ' էջ 558:

Պոլոքրոնի. « Վասն զի գիտէի ասէ զնոսա որպէս ազգս հեշտացեալս 'ի սուտս և նախահարցն սովորութեամբք ըմբռնեալս զոհիցն նուիրելոց... այլ յետ դարձուցի զեղկեալսն և հրամայեցի զոհել և ընդունել խոստացայ »:

ՊՏՂՈՄԵԱՆՔ (SUR LES PTHOLOMÉES, successeurs d'Aléxandre le Grand). « Վասն Պտղոմեանցն պատ-

մութիւն, թէ որչափ ժամանակս թագաւորեցին յետ Աղեքսանդրի Մակեդոնացւոյ. « Պաղոմէոս Ղագոսեայ՝ ամս քառասուն։ Պաղոմէոս Փիլադելփոս ամս երեսուն և ութ »։ (Փարիզեան մատենադարան ազգային)։

ՊՐՈԿՂՈՍ

(PROCLUS)

Պրոկղի անուամբ՝ որ աշակերտ և յաջորդ էր սրբոյ Ոսկեբերանի (390), *ջաղխիչ Նեստորի և իւրեն մոլորութեանց գրով և բանիւ թէ 'ի Կոստանդնուպոլիս և թէ յԵփեսոս, հետևեալ ճառերն կամ հատուածք ճառից ունիմք թարգմանութեամբ նախնեաց, յորոց ոմանք Թարգմանչաց դարուն կամ գրչին կրնան վերաբերիլ. ոմանք ալ արծաթի դարու մեր դպրութեան։*

— *Երանելւոյն Պրոկղի եպիսկոպոսին Կոստանդնուպոլսի՝ աշակերտի և աթոռակալի Յովհաննու Ոսկեբերանի ներբողեան 'ի ծննդեան Քրիստոսի և 'ի նախավկայն սուրբ Ստեփանոս որ այսաւր տաւնի.* (Discours sur la nativité de Jesus-Christ, et sur saint Etienne, le protomartyr). « *Երեւելի արեգականս ընդ երկնիւք ծագելով* »։

— ** *Պրոկղի Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսապետի ներբողեան 'ի սուրբ աւետարանիչն Ղուկաս.* (Discours panégiryque sur saint Luc, l'evangéliste). « *Մերձակայ տաւնիս խորհուրդ արդեամբք գերազանցեալ քան զբան, ընդդէմ միմեանց՝ զգործ և զբան տեսանեմք* »։

— *Խաւսք ասացեալ 'ի Կոստանդնուպաւլիս՝ 'ի նաւելն Նեստորի 'ի մեծ եկեղեցւոջն 'ի Կոստանդնուպաւլիս՝ թէ աստուածածին է սուրբ կոյսն Մա-*

ըխամ, և ծնեալն 'ի նմանէ՝ ոչ աստուած մերկ և ոչ աստուած սոսկ, այլ Էմմանուէլ. այս է՝ Աստուած և մարդ յերկուց բնութեանց միացեալ՝ առանց խառնակութեանց, և առանց փոփոխմանց. և մի աստուած՝ Տէր մեր Յիսուս Քրիստոս. (Discours sur la très-sainte Vierge Marie). « Կուսական տաւնս այս այսաւր, եղբարք, զլեզուս մեր 'ի բարեբանութիւն կոչէ. և մերձաւոր տաւնիս 'ի միասին աւգտութեամբ լինի ասպնջական. և յաւէտ յիրաւի. վասն զի զորբութիւն ունի զպատճառս, և կանանց ազգի պարծանս »: Ի գլուխ Գործոց (Actes) Եփեսոսի սուրբ ժողովոյն գրուած է այս ճառ:

** Երանելւոյն Պրոկղի Կոստանդնուպոլսոյ եպիսկոպոսի ասացեալ 'ի խորհուրդ տէրունական խաչին. (Sur la sainte Croix) « Վասն այսորիկ կոչեմք զնա թագաւոր, քանզի զնա տեսանեմք 'ի խաչ ելեալ. և թագաւորի է փառք յորժամ 'ի վերայ զօրաց իւրոց մեռանիցի »: (Մատենագ. Էջմ. 920):

— ** Երանելւոյն Պրոկղի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսի 'ի յաւետիս սուրբ Աստուածածնին. (Sur l'annonciation de la très-sainte Vierge). « Այսաւր արեգական արդարութեան՝ և զյառաւջագոյն ծագեալն ծածկեաց. փրկեցայ 'ի խաւարէն, և ոչ տանիմ ճառագայթիցն: Ծնաւ ինձ դարձեալ լոյսն, և ընդաղաւտացայ երկիւղիւ: Ընդ ծնունդն ցնծամ, և ընդ եղանակն վրդովիմ »: Նոյն ճառ՝ այլով թարգմանութեամբ. « Ծագեաց այսաւր արեգակն. և որ յառաջագոյն ծագեալն է՝ ծածկեաց. փրկեցայ 'ի խաւարէն և ոչ տանիմ ճառագայթիցն: Ծնաւ ինձ դարձեալ լոյս, և շլանամ յերկիւղէն. ընդ ծնունդն ցնծամ, և ընդ եղանակն վրդովիմ »:

— ** Երանելւոյն Պրոկղի եպիսկոպոսի 'ի մեկնութենէն Զաքարիայ 'ի բերան ճրագաց աշտանակի 'ի խորհուրդ Կուսին. (Fragment d'un Commentaire

sur le livre de Zacharie, le prophète)․ « Եւ զար-թոյց զիս հրեշտակն տեսան »։

— ** Յաստուածայայտնութիւն․ (Sur la Théophanie). « Քրիստոս աշխարհի յայտնեցաւ, և զան-զարդ աշխարհս »։

— ** Ի Մկրտութիւնն Քրիստոսի․ (Homélie sur le Baptême de J. Ch.) « Արդ յորժամ եկն տէրն մեր »։

— ** Պրոկղի 'ի ծնունդ Յովհաննու Մկրտչի․ (Discours sur la naissance de St. Jean Baptiste « Այս-աւր ծագեցաւ ուր ախտութիւն նախաստեղծին »։

— Պրոկղի Կոստանդնուպոլսոյ պատրիարքի ներ-բողեան 'ի սուրբն Յովհան Ոսկեբերան․ (Panégyrique sur saint Jean, le Chrysostôme). « Զոր աւրի-նակ արքք ոսկեսէրք » *։

* Հայերէն 'Թարգմանութիւն ճառիս եղած է 'ի մատենաներորդ դարու՝ Գրիգորի վկայասէրի ձեռ-քով։

— ** Պրոկղի եպիսկոպոսի յաղագս կաղանդաց․ (Sur les calendes)․ (Մատենագարան Էջմիածնի, թիւ գրչ․ 1730)։

— ** Թուղթ Պրոկղեայ եպիսկոպոսի առ Սահակ հայրապետ Հայոց և առ սուրբն Մաշտոց․ (Lettre de l'evêque Proclus à Sahagh, patriarche des Arméniens, et à saint Machtuoz). Եկեղեցւոյ տարեգրաց և արևելեան ու արևմտից ուղղադաւան մատենագրու-թեան մէջ նշանաւոր է Թուղթն որոյն Պրոկղի առ եպիսկոպոսունս Հայոց մեծաց․ (Lettre aux evêques de la grande Arménie).

Նամակիս գրութեան պատճառն հետեւեալն է, ինչպէս կ'աւանդէ յստարաց։ Նեստորի համախոհք չհամարձակելով բուն իրենց մոլորութեան աղանդորդին գրուածներով ծաւալել և ընդհանուր ընել իր կար-ծիքը, ասանկ եղան աւելի հնութիւն և մեծարանք վայելող անձանց վարդապետական երկասիրութիւն-

ներն, որոնց նպատակն էր Եւնոմիոսի և Ապողինարի մոլորութիւններն հերքել, թարգմանել 'ի Հայ, յասորի և 'ի պարսիկ, և այն լեզուներն խօսող քրիստոնեայ ժողովրդոց մէջ սփռել։ Այսպիսիք էին Դիոդորի Տարսոնացւոյ, Թէոդորի Մոպսուեստացւոյ և այլոց նմանեաց՝ կամ իրենց յառաջ, և կամ ենթադրեալ գրքերը։ Հայաստանի եպիսկոպոսունք չփութելով անոնց մէջ յայտնուած զանազան կարծեաց վրայ, որոց ուղղափառ եկեղեցւոյ վարդապետութեանց համաձայն ըլլալուն երաշխաւոր կը տարակուսէին, գրեցին առ սուրբն Պրոկղ, փափաքելով լսել իր կարծիքն։ Պրոկղ մտադիւր փութով քննեց իրեն առաջարկուած գրքերը, ու Հայաստանի եպիսկոպոսաց պատասխան չտուած 'ի ժողով գումարեց զեպիսկոպոսակիցս որ գտնուեցան 'ի ժամանակին 'ի թագաւորական քաղաքին, և անոնց համաձայնութեամբ գրեց առ Հայս, զգուշացընելով 'ի գրոցն և 'ի վարդապետութեանց նոցա։ — Այս է ահաւասիկ առաջին թուղթն Պրոկղի առ եպիսկոպոսունս մեր, որոյ հայկական թարգմանութեանն դեռ հանդիպած չենք։

Միայն հասած է՝ երկրորդ նամակ մը նոյն Պրոկղի, մեր վերը յիշած խորագրով, ուղղեալ առ երկոսին սրբասուն և աստուածարեալ հարս հայերէն դպրութեանց, այսպիսի սկզբնաւորութեամբ. « Երանի՜ որ հանապազորդ լինիցին 'ի քաղցրահայեաց տեսիլ երեսացդ. և զի՜ առնեմ հանապազ. այլ գոնեա յաւուրս կամ յամիսս կամ 'ի տարեկանս » *։

* Պրոկղի այս երկու թղթոց վրայ՝ հետաքննական են Իտալացի արդի բանասիրի մը տուած հետևեալ տեղեկութիւնք. Credo non spiacerà agli eruditi un' altra buona novella, assai importante per la storia e letteratura sacra, e che consiste in un brano della seconda lettera di S. Proclo agli Armeni,

che trovasi qui pure inscritta, con questo preciso titolo: *Ejusdem S. Procli ex epistola secunda ad Armeniis destinata.* Quantunque non rimanga alcuna traccia oggidì di tale documento, è certa però la sua esistenza sì dalle testimonianze di Giovanni Antiocheno presso Facondo, e da Dionisio stesso nella sua lettera a Feliciano, premessa alla mia versione dell'Epistola a S. Proclo, ove dice chiaramente: Venerationis vestrae jussionis comunitus B. Procli Ep. Urbis Cp. literas ad Armenios destinatas latino eloquio vestris auribus exhibendum curavi, non parum praesentibus aestimans pro futuras. — Della lettera poi di S. Innocenzo ci sono fornito le spiegazioni più circonstanziate di questa seconda Epistola di S. Proclo agli Armeni. — Questo documento è interessantissimo per la storia ecclesiastica degli Armeni. (AMELLI GUERRINO, *S. Leone Papa e l' Oriente*, 1882, յ' էջ 27).

ՊՐՈԿՂ. ԻՄԱՍՏԱՍԷՐ

(PROCLUS, LE PHILOSOPHE)

Պրոկղ՝ իմաստասէր պղատոնական, ծնեալ ինչպէս հաւանական կը Թուի 'ի սկիզբն հինգերորդ դարու 'ի Կոստանդնուպոլիս, յառաջին պատանեկութեան յղեցաւ յԱղեքսանդրիա յուսումն իմաստասիրականին առ համբաւեալ վարդապետս ժամանակին՝ Որիոն քերական և Լէոնաս հռետոր. պարապեցաւ ապա 'ի ներքվարժմունս ընտրական փիլիսոփայութեան: Քսանամեայ հասակին գնաց յԱթէնս՝ առ Պլուտարքոս Նեստորի, որ մեկնեց նմա զՓեդոնն Պղատոնի և Արիստոտելի քանի մը գրքերը: Սիրիանոսէ

մահուընէն ետքը՝ ինքն եղաւ գլուխ պղատոնական դպրոցի յԱթէնս, ուր այլևայլ գրքեր շարադրեց, պղատոնական և արիստոտելեան վարդապետութեան հետ զուգելով նաև զկարծիս Որփէոսի, Պիւթագորայ, Պղոտինի, Պորփիւրի և Յամբլիքոսի։ Մեռաւ յԱթէնս 'ի 487։ Իր անուամբ ինչուան առ մեզ անկորուստ մնացած երկասիրութիւնք՝ բաց 'ի մասնական ապագրութեանց, ամբողջ հրատարակուեցան 'ի Փարիզ՝ Վիկտոր Կուզէնի ձեռքով՝ 'ի հինգ հատորս (Procli philosophi platonici opera, e cod. mss. bibliothecae regiae Parisiensis, 1819-23).

Իրենը ընծայուած է նաև Սահմանք կամ Հրահանգք աստուածաբանականք (Institutiones theologicae) կոչուածը, իմաստասիրական գրութիւն մը, որուն հայկական թարգմանութիւնն ըրած է Սիմէոն ամե-կրօնաւոր Գառնեցի։ Հրատարակեց զայս Տիրոյ գաղղիացի յիւրում Հաւաքման յոյն մատենագրաց։ Գրուածքին խորագիրն է ըստ գրչագրաց. «Պրոկղի Դիադոխոսի պղատոնական իմաստասիրի շաղկապք աստուածաբանականք, հատորս ՄԺԱ»։ Կից են առոր հետ «Ամիլախոսի իմաստասիրի և հռետորի աթենացւոց եպիսկոպոսի՝ լուծմունք Պրոկղի դիադոխոսի պղատոնական իմաստասիրի»։

Թարգմանչին յիշատակարանն. «Թարգմանեցաւ գիրքս որ է շաղկապ և գլուխ աստուածաբանութեան Պրոկղի դիադոխոսի պղատոնական իմաստասիրի, ձեռամբ Սիմէոնի անպիտան քահանայի կրօնաւորի 'ի վրաց լեզուէ 'ի հայ լեզուս, յերկիրս Հայոց 'ի վանս վրաց որ կոչի Պղնձահանք, յաւիտենից թուականին ՑՉՁԶ (6786)։ Աղաչեմ զձեզ, ով եղբարք, զի յոյժ աշխատութեամբ թարգմանեցի. նախ զի ոչ էի արժանի այսպիսի պատուորութեան, տակս շաղախեալ գոլ մեղօք. երկրորդ զի յոյժ ծերացեալ էի և տկարացեալ յաչաց և 'ի մտաց և 'ի զօրութենէ. զի զվաթսունամենիւք էի. այլ զի ոչ էր

սա Թարգմանեալ 'ի մեր լեզու. և սա է մայր աստուածաբանութեան առաջին: Մովսէս զայս ուսեալ զդպրութիւն, և 'ի սորա բանից կարգեաց զիւրն աստուածաբանութիւն. և Դիոնեսիոս արիոպագացին և Երոթէոս զիւրեանց գրեանքն բովանդակ 'ի սմանէ գրեցին. նոյնպէս և Գրիգոր աստուածաբան զիւր աստուածաբանութիւն 'ի սմանէ խօսեալ է. և բոլորովիմբ ներքս (?) զամենայն աստուածաբանութիւնս իւրեանց 'ի սմին ոլորմանց բանիցս բխեցին. և սա է հիմն և արմատ և մայր ամենայնի. 'ի սմանէ առին նոքա բովանդակ. իսկ այնք փոքր հատորք եղով. և ես յայն սակս Թարգմանեցի, զի մի պակաս եղիցի սա յազգէս մերմէ »:

Էջմիածնի մատենադարանին տպագիր ցուցակին մէջ քսանուերկու գրչագիրք կը գտնենք Պրոկղի ընծայուած իմաստասիրական երկասիրութեանս, որոնք չունին զկարևոր հնութիւն Թուականի. խորագիրք ալ ընդհանրապէս նման մեր գրածին, կամ անկէ քիչ տարբերելով, յորս ամենեւին Թարգմանիչ կը կոչուի Սիմէոն Գառնեցի, և միւս ալ համանուն Երեւանեցի վարդապետ մը՝ որ Թարգմանիչէն շատ ետքը յօրիներ է զլուծմունս գրոցն Պրոկղի: Գրչագիր մը 'ի նմին մատենադարանի, երկոտասաներորդն ըստ ցուցակին, այս խորագիրն ունի. « Պրոկղի աստուածաբանութիւն շաղկապաց մեկնութեան Համեղախօսի... նորագիր... 'ի նահանգին Կարբւոյ 'ի վանս Ցաւշոյ սուրբ Սարգսի 'ի վանահայրութեան տեառն Ոսկանայ վարդապետի Երեւանեցւոյ Թարգմանչի ըստ դաղմատերէնի 'ի Կարապետանէ, 'ի Թուին Հայոց ՌՃԷ (= 1658) »:

Բաղմահմուտ բանասէրն և հայագէտ՝ անգղիացին Փ. Գոնիբիր, ուսուցիչ յօքսֆորտեան համալսարանի. անցեալ տարի 'ի Հայս եկած ուսումնական ճանապարհորդութեան վերադարձին՝ հետեւեալ տողերը կը

գրել տայ մեզ, զոր բուն իր խօսքերովը մէջ բերենք, յայտարարք իր հմտութեանն 'ի մեր լեզու-նախնեաց. «Աստուածաբանութեան Պրոկղոսի Դիադոքոսի զերկու գոյ թարգմանութեանն զգրութիւնս. զոմն որ հին թարգմանչաց գործք է, և զոմն որ 'ի վրաց լեզուէ 'ի միջին դարու յարգարեալ է. ամենայնք, — բայց եթէ մի, — օրինակք յէջմիածին պահեալքն' 'ի վրաց լեզուէ յօրինակեալ են. և հընագոյն թարգմանութիւնն առաւել հաւատարմութեամբ արարեալ է քան զայլս. առանց երկմտութեան վրացն թարգմանութիւն 'ի հայոց լեզուէ ինքն յարգարեալ է, և վերստին հայերէն թարգմանեալ»։ Մենք այս նախնական թարգմանութեան տեղեկութիւն չունինք. և յարգելով իսկ մեր բարեկամին ենթադրութիւնը՝ հաւանական չենք համարիր. զի Գառնեցին Սիմէոն՝ իր թարգմանութեան բուն պատճառը՝ յայլոց ինչուան իր ատեն 'ի հայ լեզու փոխուած չըլլալը կը դնէ։

ՊՐՈԽՈՐՈՆ

(PROCHORUS)

Պրոխորոն, մի յառաքելընտիր թուոյ եօթանցս սարկաւագաց, աշակերտ կոչուած է սորին Յովհաննու աւետարանչի և գրիչ իրեն վարուց, համարելոյ 'ի չորս անվաւեր կամ անհարազատ գրոց։ Այսպիսի կարեւոր հնութիւն ունեցող գրուածք մը, նաև իր հետաքննական նիւթովը՝ բնականաբար բանասիրաց քննադատութեանց ընդարձակ ասպարեզ մը պիտի ընծայէր։ Եւ կը գտնենք շատերը յեւրոպական գիտնոց, մանաւանդ մեզի մերձաւոր դարերու մէջ, անոր հրատարակութեամբ և քննութեամբ զբաղողք։ Անոնց մէջ մասնաւոր մենագրութեան արժանաւորք

կրնան սեպուիլ՝ իրենց իմաստուն և հնախոյզ պարունակութեամբ՝ Սեբաստիան Կաստալիոնի (Castalion) հրատարակութիւն յոյն բնագրին 'ի Բասիլէա 'ի 1563, հետևեալ խորագրով. Προχόρου τοῦ ἐπὶ ταῖς χρειας τὸν ἑπτὰ κατασταθέντων, ἀνεψιοῦ Στεφάνου τοῦ πρωτομάρτυρος περὶ τοῦ Ἰοάννου τοῦ θεολόγου καὶ εὐαγγελιστοῦ ἱστορία. Չորս տարի ետքը ուրիշ տպագրութիւն մըըրաւ հելլենագէտն Միքայէլ Նէանտէր՝ նոյնպէս 'ի Բասիլէա, յոյն բնագրին վրայ աւելցընելով նաև լատինական թարգմանութիւն. Prochoris, qui unus ex septem ministris fuit, Stephani protomartyris consobrinus, de Joanne theologo et evangelista historiam, nunquam hactenus in lucem editam; græco-latina, descripta, exposita et edita studio et opera Michaelis Neandri Sorauiensis, 1567. Մեզի ծանօթ նորագոյն և ամենահմուտ հրատարակութիւնն է Թէոդոր Ծահն աստուածաբանութեան վարդապետի ջանքով եղածն յԷրլանկէն Պաւարիոյ, ընդարձակ յառաջաբանով 'ի գերման լեզու. Acta Joannis unter Benutzung von C. v. Tischendorf's Nachlass bearbeitet von Theodor Zahn, D. u. o. Professor der Theologie in Erlangen, 1880.

Թէ որչափ և որպիսի է գրուածքիս հարազատութիւն, կամ ժամանակը ինչ ապացուցութիւնք ըրած են անոր հիմակուան ամբողջութեանն վրայ, քննելը մեր նպատակէն դուրս է։ Յիշեցընենք միայն թէ Պրոխորոնի ընծայուած երկասիրութեանս հայկական թարգմանութիւնն ալ կայ 'ի մեր մատենագրութեան, և բաւական հնութիւն և յարգ ունեցող թարգմանութիւն մը, զոր հմուտք ինչուան յեօթներորդ և յութերորդ դար կը հանեն. ինչպէս կը յիշատակէ Ծահըն յ'էջ XXIII իր յառաջաբանին, ազգային արդի ամենէն աւելի նշանաւոր բանասիրաց միոյն վկայութեամբ. La traduction arménienne en tout cas est

antérieure au VIII siècle et probablement au VII même.

Հայերէն օրինակաց խորագիրք են. « Պատմութիւն սքանչելի գործոց, և վարդապետութիւն սրբոյ առաքելոյն և աւետարանչին Յովհաննու, զոր արար յԵփեսոս և 'ի Պատմոս կղզւոջն. և բազում նեղութիւնք և չարչարանք զոր կրեաց 'ի Դոմետիանոսէ կայսերէ ամս երեքտասան, յորժամ աքսորեաց զնա 'ի Պատմոս կղզին. և յետ յիսուն և երկու ամի չարչարանաց Փրկչին' դարձաւ 'ի քաղաքն Եփեսոս յառաստահմանելոյն' յաւուրս Ներուայ և կամ Տրայիանոսի. զկնի յիսուն և երեք ամի համբարձման Փրկչին գրեաց զաւետարանն 'ի յԵփեսոս 'ի յոյն լեզու, և եկաց ամս հնգետասան, և բովանդակ եօթանասուն և երկու. և յետոյ քան զամենայն առաքեալսն փոխեցաւ 'ի Քրիստոս. արարեալ աշակերտի իւրոյ Պրոխորոնի, և բաժանեալ 'ի գլուխս մետասան »: — Ի Ճառընտիրս մեր կոչի և Պռոխոր, յորում գրուած է համառօտութիւն վարուց սրբոյ աւետարանչին. Ի Պրոխորեայ պատմութենէն, յաղագս աւետարանչին Յովհաննու և յաղագս Յայտնութեան նորին, և յաղագս փոխման նորին յաշխարհէս. « Ցետ ննջման ամենաւրհնեալ կուսին Մարիամու մաւր տեառն' երանելի առաքելոյն և աւետարանիչն Յովհաննէս »:

Թէոդորի Մահն յոյն սկզբնագրին հրատարակութեան մէջ' միահետ և միայար կը գտնենք զպատմութիւնն, ուր այլք' ինչպէս նաև մերն' ունին զբաժանմունս գլխոց. այս տարբերութեամբ' որ հայկականն 'ի մետասան գլուխս բաժնուած է, իսկ յոյնն և լատին առաւել թուով գլուխներու, ունելով նաև առաւել ընդարձակութիւն նիւթոյ. Մեր ձեռագրացը' հետևեալքն են.

— Ա. Պատմութիւն սուրբ աւետարանչին Յովհաննու, և յաղագս աքսորանաց նորա:

— Բ. Յաղագս Մեռենոսի, և ամենայն եղելոց 'ի ձեռն Յովհաննու յամենայն տան նորա. (Առ Մինեի. *Dictionnaire des Apocryphes*, Chap. XX. Il y avait à Patmos un homme fort riche nommé Myron).

— Գ. Յաղագս Վասլի և կնոջ նորա եթէ որպէս հաւատաւորեցան 'ի Յովհաննէ։ (Chap. XXII. Il y avait dans la même ville un homme riche, qui se nommait Basile).

— Դ. Յաղագս Խռուսոսի և կնոջ նորա՝ թէ որ-պէս հաւատաւորեցան 'ի Յովհաննէ. ընդ նոսին և որ-դին. (Chap. XXIV. Il y avait dans la même ville un homme nommé Crésus, qui etait juge, et sa femme se nommait Séline).

— Ե. Յաղագս Կենոպասայ և չարաչարութեան կա-խարդութեանն զոր արար առաջի Յովհաննու 'ի ձեռն չարածնունդ մարդկան. (Chap XXIV. Tandisque l'Apôtre faisaint ces choses à Patmos, il y avait dans cette île un magicien nommé Cynops, et il residait dans un désert).

— Զ. Յաղագս գիւղին որ 'ի կերպարանս գայլոյ ե-րեւէր քաղաքացեացն այնմիկ, և էին չար բնակիչք քաղաքին. (Chap. XXXVI. Nous demeurâmes trois ans dans une maison sur la place de la ville, et nous en sortîmes ensuite pour aller dans une autre ville éloignée de cinquante stade).

— Է. Յաղագս Նոտխանոսի և ամենայն տան նորա. զոր արար Յովհաննէս առ նոսա։ Վերջին թուղթն անգ գրի. (Chap. XL.) Il y avait dans cette ville un homme nommé Nadien dont la femme s'appelait Flore).

— Ը. Յաղագս Սոսիպատրոսի և մօր նորա Պրոկ-ղիանէի և ամենայն եղելոցն առ նա. (Chap. XLII. Il y avait dans cette ville, une femme riche, nom-mée Prodiane, fort belle et veuve, qui avait un fils

unique, nommé Sosipater, âgé de vingt-quatre ans):

— թ· Յաղագս Յովհաննու աւետարանչին թէ որ֊պէս պատմեցաւ 'ի Յովհաննէ, կամ յորժամ անզղուշ ընկալան հաւատացեալք զպարգեւս 'ի տեառնէ 'ի ձեռն Յովհաննու. (Chap. XLV. Par la grace de Nôtre Seigneur Jesus-Christ attribuée à Jean, presque tous les habitants de Pathmos, écoutant les prédications de l' Apôtre, crurent en Dieu).

— ծ· Յաղագս տեսլեան Յովհաննու. (Chap. XLVI. Au temps où j' écrivais l' Évangile, Jean prêchait l' Évangile au peuple dans l' île entière).

— ծԱ· Յայտնութիւն տեսլեանն Յովհաննու:

Պրոխորոնի երկասիրութեանս հայ թարգմանու֊թեան գրչագիր մը կայ 'ի Բրիտանական թանգարանին Լոնտոնի (թիւ. գրչ. 19728), գրեալ 'ի սկիզբն չորեք֊տասաներորդ դարու, յորում հետագայ յիշատակա֊գիրք:

« ... Գրեցաւ գիրքս այս որ կոչի Պրոխառա. որ ունի առ ինք հաւաքեալ զամենայն բանս և զգործս Յովհաննու աւետարանչի եղբաւր տեառն' 'ի սուրբ ուխտս Մլիճի, ընդ հովանեաւ Տիրամաւր սուրբ Աստուածածնի և այլ սրբոցս, մաւտ յանառիկ դղեա֊կըս Պապառաւն: Արդ ստացաւ Կոստընդին քահա֊նայ յիշատակ իւր և ծնողաց իւրոց, և ամենայն զար֊մից իւրոց: Արդ աղաչեմ զամենեսին և առ ոտս ձեր անկանիմ. գրեցաւ 'ի թվ. Ջերորդի յիններորդի վե֊ցերորդի »:

— « Լոյս Ճշմարիտ և Ճառագայթ անշիջանելի Քրիստոս Աստուած, որ զլոյս աստուածութեան քո փայլեցեր այսաւր 'ի Թաւաւր լերին, յաւրինակ արդարոց 'ի վերջնում աւուրն. արժանաւորեա յայն֊ժամ զծառայն քո զԹորոս և զծնողսն իւր, զնոյն լոյս զգենուլ և ընդ առաջ քեզ ելանել 'ի հանդի֊պումն տեսլեան աստուածային փառաց քոց ընդ

սրբոց քոց առաքելոցն, յորժամ յարեւելից լուսածագեսցես։ Ընդ նմին և զիս զանարժան ծառայս քո զԱւետիք, և զննջեցեալսն իմ, և զայնոսիկ որ զմեզ հաւատով յիշեն»....։

« Քրիստոս որ յոյս ես աշխարհի,
Եւ արարիչ ամենայնի,
Ախտացելոց բժիշկ բարի
Կենաց տուող ամենայնի.
Քաւիչ մեղաց լեր Թորոսի
Եւ հալածիչ ախտից ժանտի.
Ոչ այնու միայն որ երեւի,
Այլ և ներքնոյն որ իմանի.
Հանգոյն շնորհին այնըմ մեծի
Զոր արարեր անբաւ բարի.
Պարգեւս անճառս անպատմելի
Դու՝ Աբգարու Թագաւորի.
Ընդ նմին և ինձ անարժանի,
Եւ որո՛ւպ քո ծառայի,
Աւետեա՛ց մեղաւորի .
Եւ սուտանուն քահանայի »։

Աւելի հնագոյն է միւս գրչագիրն, յորմէ զգլխակարգութիւնս նշանակեցինք, և կը պահուի 'ի մատենադարանին Էջմիածնի. (Թիւ գրչ. 322) և է ըստ Կարենեան ցուցակին « Ճառընտիր երկաթագիր քառածալ՝ 'ի մագաղաթանման Թուղթ բամբակի, գրեալ 'ի Սիմէոն քահանայէ ումեմնէ՝ ըստ խնդրոյ քահանայի որումն Մարկոս անուն 'ի Թուին Հայոց ԶԻԷ ». 1277 . և Պրոխորոնի գրուածոյն առաջին գլխոյն համար կ'ակնարկուի Թէ պակաս ըլլայ սկզբնաւորութիւնը։ Կը գտնուին օրինակք նաև յԵրուսաղէմ և առ մեզ։

ՊՈՐՓԻՒՐ

(PORPHYRE)

Քրիստոսի երկրորդ դարուն ապրած է Պորփիւր, որ նախ աշակերտեցաւ Որոգինի 'ի Տիւրոս կամ 'ի Կեսարիա պաղեստինացւոց, և յետոյ անցնելով յԱթէնս՝ յաճախեց 'ի լսարանս Ապողոնիոսի և Լոնգինոսի։ Քսանամեայ գնաց 'ի Հռովմ, ապա յԱսիա և յԵգիպտոս, ուստի միւսանգամ դառնալով 'ի Հռովմ աշակերտեցաւ Պլոտինեայ, և սիրող ու զարմացող անոր հանճարոյն և փիլիսոփայական գրութեան, ետևէ եղաւ հաւաքել անոր գրուածները, և ծաւալել վարդապետութիւնը։ Յուզեալ և անհանգիստ կեանք մը վարելով, մեռաւ 'ի 303 թուականին, կամ ըստ այլոց քանի մը տարի ետքը, 'ի հասակի եօթանասուն կամ եօթանասունուերկու ամաց։ Ոմանք հրեայ կարծեցին զնա հաւատքով, բայց սուրբն Աւգոստինոս և եկեղեցւոյ պատմագիրն Սոկրատ կ'ըսեն թէ քրիստոնեայ էր, թէպէտև չկրնալով յարատեւել, և յաճախ հակառակամարտ երևնալով իր վարքովը և գրուածներով անոր սրբութեան բարոյականին և վարդապետութեանց։

Դաւթի Անյաղթի թարգմանութեամբ՝ անդստին 'ի հինգերորդ դարէ, Պորփիւրի Ներածութեան գիրքը հասած է առ մեզ, որոյ վրայ աւելցուցած է Անյաղթ նաև Վերլուծութիւնք։ Ասանկ նաև Արիստոտելի Ստորոգութիւնք կոչուած երկասիրութեան։ Մեր տպագիրն (1833) տեղ տեղ թերի կը մնայ. ամբողջն յետոյ ձեռուընիս հասած է յարևելից և յարևմտից՝ գրեթէ քսան և աւելի պրակք բանից և մեկնու-

թեանց յաւելուածով։ Յունարէն սկզբնագրին խորագիրն է. Πορφυρίου εἰς τοὺς Ἀριστοτέλους κατηγορίας κατὰ πεῦσιν καὶ ἀπόκρισιν. սկզբնաւորութիւնն ալ. Ἐρώτησις. Διὰ τί κατηγορία ἐν τῇ συνηθείᾳ, καλουγένης τῆς ἐν εγκλήματι πρὸς τὰς δικαιολογίας...

Ինչպէս հայկական շատ հնագոյն թարգմանութեանց՝ ասոնց ալ Պորփիւրի գրուածոց յարգը՝ հեղինակին և թարգմանչին իրարու մերձաւոր ժամանակաց մէջ ապրելու հանգամանքն է. մինչդեռ այլոց քով գտնուածներուն քով կը պակսի այն, մեզի աւելի մերձաւոր դարուց փոխագրութեամբը։ Անյաղթի աշխատութիւնը օգտակարագոյն կ'ըլլար եթէ աւելի անխառն ըլլար իրեն ոճաբանական հելլենաբանութենէն։

Մեր նոր մատենագրութեան առաջին դարերու մէջ շատերն եղած են Անյաղթի հետեւողք և Պորփիւրի իմաստասիրական գրոց վերլուծութեամբն զբաղողք, և որոց երկասիրութիւնք հասած են առ մեզ. ասոնք Գրիգորի Տաթեւացւոյ, Առաքելի Սիւնեաց, Սիմէոն կաթողիկոսի, Համանուն Գառնեցւոյն և այլոց։

ՋՈՒԱՆՇԻՐ

(THCTOUANCHIR)

Ջուանշիրի անուամբ՝ Վրաց համառօտ պատմութիւն մը հասած է առ մեզ. հետաքննական իր նիւթովը և մէջը խառնուած հայկական պատմութեանց նշխարներովն ու յիշատակօք։ Հեղինակն կամ հաւաքող՝ հաւանականաբար նոյն ազգէն է՝ որուն պատմութիւնը կ'ընէ. և որ այս թարգմանեցաւ 'ի մեր լեզու։

Բանասիրաց ուշադրութեան կը յանձնենք կրասերոյն Պրոսէի գաղղիացւոյ զանազան և հմուտ աշխատասիրութիւնները այս գրուածին վրայ։ Ռուսաց տէրութեան և Փեթրպուրկի կայսերական ճեմարանին ծախքովը և օժանդակութեամբ եղած այս հրատարակութիւնք, և մանաւանդ իր մասնագիտութեամբն և սիրովն առ լեզու, դպրութիւն և պատմութիւն Վրաց, հեղինակութիւն մը կրնայ համարուիլ այս նիւթին նկատմամբ։

Համառօտենք՝ մեր նոր տպագրին յառաջաբանէն քաղելով՝ հետագայ տեղեկութիւնները։ « Պատմութեանս Վրաց... ոչ է յայտ թէ ո՛վ եկաց մատենագիր. թէ և 'ի բազմաց հաւատի՝ թարգմանութիւն լինել երկասիրութեանն Ջուանշէրի (Ջուանշերի) վրաց պատմչի, որ եկաց առ ժամանակօք՝ որպէս թուի Արչիլ Բ' (688-718). զի և յիշատակի անուն նորին 'ի պատմութեանս. քանզի յետ յառաջ ածելոյ զվկայական կատարած Արչիլ Բ' յաւելու. « Եւ գտաւ պատմութիւնս համառօտ 'ի ժամանակաշփոթմանն, և եդաւ 'ի գիրքս՝ որ կոչի Քարթլիս Ցխօրեպա, որ է Պատմութիւն Քարթլաց. և եգիտ զսա Ջուանշեր, գրեաց մինչև ցՎախթանկ Թագաւոր. և մինչև ցայսվայր ինքն յաւել Ջուանշեր, և զգալոցն՝ յանձնեաց անցողացն և պատահելոց 'ի ժամանակին »։ Արդ ըստ այսմ վկայութեան՝ հնութիւն գրոցս ելանէ մինչև ցդարս Է-Ը. իսկ թարգմանութիւն անրեն 'ի հայումս՝ ոչ կրսեր քան զդարն ԺԳ. քանզի յիշատակի սա 'ի պատմութեան Ստեփանոսի Ուռպելեան, որ եկաց յաւուրս Գրիգորի Անաւարզեցւոյ, 'ի վերջ կոյս ԺԳ դարու, որպէս և յոճոյ շարագրութեանն երևի չլինել երիցագոյն քան զԺ-ԺԱ դարս։ Յիշատակեալ գտանեմք և միւս այլ Պատմութիւն վրաց՝ անյայտ առ մեզ, 'ի բառարանին Ստեփաննոսի Կամենիցացւոյ, որ և երևի զսա յիշատակէ լինել։

« Երկուս և եթ գիտեմ օրինակս այսր հայերէն թարգմանութեան յիշատակեալ առ բանասէրս, զմինն 'ի ձԹ Ճառընտրի վանացս, որ է ընդօրինակեալ 'ի 1830 ամի, 'ի հին բոլորագիր անթուական օրինակէ, գտեալ յայնժամ առ Կարապետ վարդապետի առաջնորդին կարնեցւոց. և զերկրորդ՝ զգտեալն 'ի Պրուսէ 'ի վանս Էջմիածնի, գրեալ՝ ըստ վկայութեան նորին, 'ի մէջոց ժամանակի ամացն 1279—1311։ Եւ զի յերկոսին ևս օրինակսն՝ պատմագրութեանն հասեալ մինչև ցամն 1125, վճարի նովին թերատաբանիւս Աստուց . . . մարթ է կարծել թէ գուցէ և թարգմանչին չիցէ աւարտեալ զթարգմանութիւնն. և կամ զի մի և նոյն լեալ իցէ բնագիր երկուցօրինակողացս՝ յընդօրինակողէ իսկագրին թերի թողեալ. բայց այս որպէս և իցէ, յայտ է զի յամէն 1125, յորում թերի մնայ պատմութիւնն, մինչև ց1279-1311, յորում ժամանակի եղև օրինակութիւն ձեռագրին, չէր մարթ մասին պակասելոյ այլ ևս ընդարձակ ժամանակաւ յառաջ խաղալ 'ի պատմագրութեանց »։

« Բազմահմուտն վրացի պատմութեանց՝ Պրոսէ, 'ի թարգմանութեան անդ իւրում Քաղուածոյ պատմութեանն վրաց 'ի Վախթանգէ, եդեղ և զմերս զայս 'ի գաղղիերէն, զետեղեալ ծանօթութեամբք 'ի Յաւելուածսն՝ յերրորդում հատորի, խորագրաւս Chronique arménienne. (Հրատարակողք տպագրին որ 'ի Վենետիկ յամի 1884, 'ի յառաջաբանի) »։

ՌՈՄԱՆՈՍ ԿԱՅՍՐ (ROMANUS, EMPEREUR). — Ռոմանոսի (կայսեր) թուղթ առ Գագիկ թագաւոր Հայոց. (Lettre de l'empereur Romanus, à Gagigh roi d'Arménie, առ Մատթէի Ուռհայեցւոյ)։

ՍԱՀԱԿ (?) — Սրբոյն Սահակայ յասորոց մեկնու-

Թենէն վասն տանեղն երեւելոյ՝ 'ի Մատթէոսի աւետարանէն. « Ահա այս գիտելի է ձեզ սակս ազգածնութեանցն առաջնոց, որ Թուեալ գայ հասանէ մինչեւ 'ի մարմնաւորեալ ծնունդ բանին Աստուծոյ »: (Մատենադարան Էջմիածնի. Թիւ 320, Է. Ճառընտիր):

Կայ նաեւ Ցայսմաւուրաց օրինակի մը մէջ ալ՝ որ գտնուի այժմ յԱնգղիա, եւ սկսանի « 'ի քառասներորդ երկրորդ ամի Թագաւորութեան Աւգոստեայ »:

ՍԵՒԵՐԻԱՆՈՍ ԳԱԲԱՂՈՒ

(SÉVÉRIEN DE GABALE)

Արեւելեան յունական եկեղեցւոյ առաջին դարուց մէջ երեւցած եւ փայլած են Եւսեբիոս Եմեսու, Սեբերիանոս Գաբաղու եւ Սեւերոս Անտիոքայ. երեքն ալ նշանաւորք իրենց վարդապետական ուսմամբ եւ գիտութեամբ: Ունեցած են նաեւ այլ եւ այլ երկասիրութիւնք, որոց փոքրիկ մասն մի եւեթ հասուցած են առ մեզ ժամանակն բազմածախ եւ հնութիւն. եւ զորս իրարու հետ յաճախ շփոթած են գրիչք, մէկունը միւսին ընծայելով՝ անուանց իրարու հետ պատահական նմանութեան պատճառաւ: Սակայն քննադատ եւ առողջ բանասիրութիւնք՝ զանոնք իրարմէ զանազանած ատեննին՝ այս սխալն ալ ուզած են դարմանել, ամէն մէկուն յատուկ գրուածքը իրեն ընծայել ջանալով:

Առանցմէ առաջինն՝ Եմեսու եպիսկոպոսն Եւսեբիոս, որ մերթ արիոսեանց կուսակից եւ մերթ ալ անոնց պարագլուխ հանդիսացաւ, անուանի հոգեւորական եւ սուրբ գրոց գիտութեամբ, ծաղկեցաւ 'ի չորրորդ դարու, ինչպէս կը վկայեն Հերոնիմոս եւ

Սոկրատ. և Եւսեբիոս եգիպտացի կամ եմեսացի, — կ'աւանդեն Հնաւանդ տարեգիրք եկեղեցւոյ. — 'ի չորրորդ դարու զարդարեաց զքրիստոնէական եկեղեցի. 'ի քաղաքէն և 'ի գաւառացէն Եդեսիոյ ծագեալ. և 'ի պաղեստինացւոց քաղաքին աշակերտեալ Եւսեբեայ կեսարացւոյ և Պատրոփիլոսի սկիւթոպոլսեցւոյ. այնչափ և այնպիսի ստացաւ համբաւ՝ վեհագոյն Թարգմանչի գրոց սրբոց և ճարտասանասիրաց հաւարի, մինչև արժանաւոր երևել յառաջնորդութիւն կոչելոյ ոչ միայն եկեղեցւոյն անտիոքացւոց, այլ և աղեքսանդրացւոց քաղաքին. յորժամ Աթանասիոս մերժեալ հալածեցաւ անտի 'ի հակառակորդաց իւրոց և 'ի թշնամեաց Ճշմարտութեան։ Բայց Եւսեբիոս՝ իմաստուն խորհրդով, յերկոցուն միանգամայն հրաժարեաց խոյս ետ. այլ սակայն ոչ կարացեալ մինչև 'ի սպառ ընդդէմ դառնալ ամբոխին թափառածանաց և բռնադատ կամաց բարեկամացն, և մանաւանդ Գէորգայ լաւոդիկեցւոյ. տեղի տայր խոնարհէր՝ ընդունել զեպիսկոպոսութիւն եմեսացւոց 'ի Փիւնիկեցւոց աշխարհին։ Իր գրուածներէն հայերէն մատենագրութեան մէջ չենք հանդիպած. և չենք կարծեր որ մեր նախնիք՝ անոնց թարգմանութեանը զբաղված ըլլան, հակառակորդք իրեն վարդապետական կարծեաց։ Յոյն ձեռագրաց մէջ՝ ձևս մը կը գտնենք իր ճառն անուանեալք, և որոյ խորագիրն է. Մեծի սորքարոզ՝ երանելւոյն Եւսեբիոսի 'ի Քանանացին և 'ի դժոխս. և յաղագս մատնելոյ Յուդայի զտէրն։ Նոյնը տարբեր գրչագիր մը մէջ. Սրբոյ հօրն մերոյ Եւսեբիոսի եպիսկոպոսի՝ առ հրեայսն ընդդիմադրութիւն։ Սկզբնաւորութիւնն. «Պարտ և պատշաճ է մեզ այսօր, սիրելիք, զերկնաւորն զգենեցելոյ ասացեալ զընթացս բանի առնուլ 'ի քննութիւն, գիտել ուսանելք զբանաստեղծութիւն չարախորհուրդ նենգութեան ընդդէմ անեան։ Քանզի յորժամ լուաւ և ծանեաւ զի սատ

ակերն՝ եթէ տրտում է անձն իմ մինչև 'ի մահ՝ համարեցաւ 'ի միոջ բերդ » և այլն։

Սեբերիանոսի համար՝ որում Ճառտասան և աստուածախօս գրուածոց Թարգմանութիւնն ունիմք՝ ոսկեղէն դարու հայերէն լեզուաւ, կը վկայէ Գեննադիոս 'ի գիրսն որ Յաղագս եկեղեցական մատենագրախօսաց. « Սեւերիանոս՝ Գաբաղացւոց եկեղեցւոյն եպիսկոպոս՝ կրթեալ 'ի հրահանգս և յուսումն աստուածային գրոց, և 'ի մարդկայնումն՝ ատենախօս պանծալի. վասն որոյ և յաճախ 'ի Յովհաննէ (Ոսկեբերանէ) եպիսկոպոսէ և յԱրկադեայ կայսերէ հրաւիրեալ կոչեցեալ՝ խօսել Ճառս և ուսուցանել 'ի Թագաւորական քաղաքին։ Ընթերցեալ է իմ զմեկնութիւն առ Գաղատացիս Թղթոյն զյօրինեալն 'ի նմանէ. պարծեալ և զՃառս որ յաղագս մկրտութեան և տէրունական յայտնութեան՝ ընտիրս և զախորժականս։ Մեռաւ նա յաւուրս փոքուն Թէոդոսի »։

Տոլանոս՝ 'ի Սրբազան մատենագրաց. « Սեւերիանոս եպիսկոպոս Գաբաղացւոց, որում Ոսկեբերան յանձն առնէր զհոգ եկեղեցւոյն Բիւզանդիոնի յառաջքին աքսորանսն, գրեալ Ճառս պէսպէս, յորոց ոմանք կան 'ի գործս Ոսկեբերանի և Ոսկիաբանի, և հատուածք բաղումք 'ի գիրս նախնեաց »։

Եւ ը մատենագրութեան մէջ պահուածներն, և ոչ քաց շատին յոյն բնագիրք կը պակսին, հետեւեալքն են. — « Ի Մեծի աւուր Ջրագալուցին, երանելւոյն Սեբերիանու Եմեսու եպիսկոպոսին խօսեցեալ յԵրուսաղէմ, վասն հաւատոց, և 'ի հօրէ ծննդեան Որդւոյն հօր (բաւ այլ ձձ. ասացեալ յաղագս ծննդեան Որդւոյն Աստուծոյ ». In magna die Luminum, beati Severiani Emesensis Episcopi, Jerosolymis prolata, de Fide, deque generatione (Filii) ex Patre. « Ի մէջ քրիստոնէութեանց զՔրիստոսէ խօսեսցուք Ճառելով. և ես քան զիմ չափու քրիստոնեայ եմ »։

— Բ. *Երանելւոյն Սեբերիանոսի Եմեսու եպիսկոպոսի ասացեալ ('ի Տնօրէնութիւն փրկչին)*. (Beati Severiani Emesensis Episcopi (De Incarnatione). « *Զօրգիս լուսոյ լուսաւորեն ճառագայթք, և լուսոյն պատագամքն պայծառացուցանեն* »:

— Գ. *Վասն կրօնից և մկրտութեան. և զՄովսէս և զԱհարոն, և զերկոտասան ականցն առ լանջանն բերեալ. սրբոյն Սեբերիանոսի Եմեսու եպիսկոպոսի*. (De Religione Baptismoque, una cum memoria Moysis et Aaronis, adductis etiam in exemplum duodecim gemmis circa pectus pendentibus, cæteris quoque lapidibus pretiosis. S. Severiani Emesensis Episcopi). « *Երբեմն զմեզ կենարարին վերանալ՝ վայելուչ և տօնական պատահօք պատակեաց* »:

— Դ. *Նորին Սեբերիանոսի եպիսկոպոսի ասացեալ վասն Առաքելոցն 'ի կրօնս*. (Ejusdem Severiani Episcopi de Apostolis pro dogmate dicta). « *Երեկի ճառն վասն ականն մարմնոյ՝ զարմացոյց զմեզ. զդեղ բնութեանն մեկնէր, և ընդ իմաստութիւն ճարտարապետին զարմանայր* »:

— Ե. *Երանելւոյն Սեբերիանի խօսք վասն Զատկի կաթարոսաց, որ կոչին անարատք, և վասն խոհակերաց. ('ի գրչագրին Էջմիածնի. « և վասն խ"հ"կերաց որ կոչին անարատք)*. (Beati Severiani sermo de Paschà, deque Càtharis, qui mundi vocitantur; atque Magaeris, sive coqui). « *Երբեմն յորժամ նախնամեծարքն արարին շնորհքն Աստուծոյ՝ զաստուածապաշտօնութեան հնչէին, ընդ ձեզ էաք և մեք ամենեքին* »:

— Զ. *Նորին երանելւոյն Սեբերիանոսի Եմեսու եպիսկոպոսի ասացեալ 'ի բանն Թէ Դպրութիւնք բացան*. (Ejusdem beati Severiani Emesi Episcopi in verbum, Libri aperti sunt). « *Աչխարհք իմ, աստ կենարարն. ձայնի իմում լսեն, և զհետ իմ գան...*

Զինչ այլում կենաց, քան կենացն սպասել կայ-ցէ »։*

* Ի գործս Ոսկեբերանի՝ առ Մոնֆոքոնի, (Հատ. ԺԲ, 403). Severiani sermo de sigillo Librorum. և սկզբնաւորութիւնն. « Մեծ պաշար ճանապարհի 'ի փրկութիւն՝ սուրբ ուսմունք. քանզի երկաթ՝ զեր-կաթ սրէ, և բանն աստուածեղէն՝ զհոգին նրբէ. հա-ցիւ մարմին սնանի, և աստուածեղէն բանիւ հոգին հաստատի... որչափ ստուերն 'ի մարմնոյ, և երազն 'ի ճշմարտութենէ, այնչափ հեռի է 'ի ճշմարիտ ի-մաստութենէ աշխարհականն իմաստութիւն »։

— Է. Նորին Սեբերիանոսի ասացեալ 'ի նոյն կը-րօնս. (Ejusdem S. Severiani in eadem dogmata). « Զարմացայ ընդ ձեզ, ով քրիստոսասէրք, զի նոր շնորհք աւետարանիս՝ հին կտակարանօք քարոզե-ցան » *։

* Կը գտնուի ճառս 'ի շարս գործոց Ոսկեբերանի առ Մոնֆոքոնի (Հատ. Զ. 569), այս խորագրով. Εἰς τὸ ρτηὸν τοῦ Αβραάμ, τὸ λέγον. Θεὶς τὴν χεῖρα του ὑπὸ τὸν μηρον μοῦ, καὶ εἰς διαφόρους μάρτυρας. Հայ լա-տին տպագրին Սեբերիանոսի ճառից հրատարակողն (Աւգերեան Հ. Մկրտիչ Վ.) կը ծանօթարանէ. « Մոնֆոքոն՝ անվաւեր կամ անհարազատ ճառից թուոյն մէջ դասելով, իրաւամբ կը տարակուսի Ոս-կեբերանի ընծայել զայն, թէպէտև Սաւիլլոսի հա-մաձայն վկայելով թէ ճարտարախօս գրութիւն է, և հնութեան հետքը կը կրէ վրան. բայց չհաւանիր Տիւփէնի՝ որ Սեբերիանոսի Գաբաղացւոյ կ'ընծայէ։ Մեր հայկական թարգմանութիւնը, որ 'ի նմին դա-րու հեղինակին եղած է, այս տարակոյսը կը լուծէ »։

— Ը. Նորին ասացեալ 'ի սուրբ վկայն յԱկակ մարտիրոս. ուր և ած զՅուսէփ յօրինակ Քրիստոսի. (Ejusdem in sanctum martyrem Acacium; ubi et Josephum adducit in exemplum Christi). « Զուար-

ճանայ երկինք, յորժամ աստեղք 'ի մէջ աստեղաց ծագեն, և նաւահանգիստք՝ յորժամ մանր նաւքն 'ի մէջ մեծամեծ նաւացն շողայցեն»։

— Թ. Ի բանն աւետարանին որ ասէ. Հայր, եթէ հնար ինչ իցէ՝ անցցէ բաժակս այս. բայց ոչ որպէս ես կամիմ, այլ որպէս դու. (In verbum evangelii, quod dicit: Pater, si fieri potest, transeat a me calix iste: verum tamen non sicut ego, sed sicut tu)· «Յորժամ մեզ եղբարք վասն ողորմութեան քարոզէին օրէնք, յորժամ վասն աղքատսիրութեան և հիւրընկալութեան 'ի հանդիսի անցանէր բանն»։

— Ժ. Նորին սրբոյն Սեբերիանոսի 'ի հրաւիրեալս 'ի մկրտութիւն. (Ejusdem S. Severiani ad invitatos in Baptismum). «Ո զի իմաստուն էր Սողոմոն, ըստ իւրս աշխարհիս կենաց ժամանակս յայտնի արար»*։

* Տասներորդ ճառիս թուի թէ կրկին թարգմանութիւնք կան նախնեաց. մին յանուն Սեբերիանոսի, միւսն յանուն սրբոյ Բարսղի կեսարացւոյ. առաջինն ընտիր հայկաբանութեամբ հինգերորդ դարու, երկրորդն խառն հելլենաբանութեամբ, Պիտոյից գրոց ու Փիլոնի ոճով. արդէն մեր տպագրին 'ի սկիզբն տասներորդ ճառին դրուած ծանօթութիւն մը կը վկայէ թէ «այս ճառ կայ և 'ի կարգս ճառենից սրբոյն Բարսղի (Հատ. Բ. 113, տպ. Փարիզու 1722)»։ Ահաւասիկ պատառիկ մը 'ի նոյն ճառէ. գտնենք նախ յանուն Սեբերիանոսի գտանուածը (194 էջ տպ.). և յետոյ Բարսղի։ — «Գիշերք առանց քնոյ են այնոցիկ որ հսկեն յաղօթս. այլ դժուարագոյն ևս է այնոցիկ որ հսկեն 'ի մեղս»։ — «Գիշերք անքունք որք կանխեսցեն յաղօթս 'ի գիշերի. այլ յոյժ դժնդակագոյնք և աքնեցելոցն յանդգնանալն»*։

* Յիշատակարան գրչին՝ 'ի վերջ տասնեակ ճառիցս յորում և Յաճախապատում գիրք սրբոյ Լուսաւոր-

չէին. « Եղբարք իմ, զայս Յաճախապատումս օրինակն Սայս գրքատանէն առաք. 'ի մեր Թուականն ԳՃՀԸ Թիւն էր, այժմոյս մեք գրաք մեր օրինակած ժամանակին. Թիւն էր մեր ՌՃԻԲ »։

— ՃԱ. Արբոյն Սեւերիանոսի Եմեսու եպիսկոպոսի 'ի գալուստ տեառն յաւանակաւ յԵրուսաղէմ. (De adventu Domini super pullo in Jerusalem). « Ցածս ածէր զփրկիչ և զաստուած կենարար՝ Թշնամին ճշմարտութեան, քարոզեալ, և խառնեցաւ »։

— ՃԲ. Երրորդ կիւրակէի, երանելոյն Սեւերիանոսի եպիսկոպոսի ասացեալ յաւետարանին մեկնութենէ. (Tertia dominica, Quadragesimae, beati Severiani Episcopi homilia dicta ex evangelii commentario). « Այր մի իջանէր յԵրուսաղեմէ յԵրիքով, և անկաւ 'ի ձեռս աւազակաց. որք մերկացուցին զնա, և վէրս մեծամեծս եդին 'ի վերայ նորա »։

— ՃԳ. Երանելոյն Սեւերիանոսի եպիսկոպոսի 'ի Թզենին որ ցամաքեցաւ։ (In ficulneam arefaçtam). « Ակն տեսանելով ծառ ծաղկազգեաց, և կամ աղբիւր ջրաբուղխ. նովին տեսութեամբն ընձեռէ և զսիրան, և զմիտս զարձուցանէ անդր »* ։

« Ոսկեբերանի ընծայեալ յոմանց (Հատ. Ը. 106), և զոր այլք՝ աւելի հաւանականաբար Սեւերիանոսի կուտան. « Այս վերջնոյս ընծայել չեմ համարձակիր, կ'ըսէ հրատարակողն Մոնֆոքոն, սակայն զրուցուածքի ոճովը շատ մերձաւոր կը գտնեմ Սեւերիանոսի »։

— ՃԴ. Երանելոյն Եմեսու եպիսկոպոսի 'ի չարչարանս Քրիստոսի. (Beati Emesensis Episcopi in passionem Christi). « Իսկ զչարչարանացն Քրիստոսի լսել ոչ պարտիմք. քանզի անոու յանձն և տեղիս, Թէ վասն մեր մեռաւ, մեք զչարչարանսն ոչ պատմիցեմք »* ։

* Յոմանց Ոսկեբերանի և յայլոց Սեւերիանոսի

ընծայուած այս ճառին յունական սկզբնագիրն առկայ առ Մոնֆոքոնի (Հատ. Ե. 1229) այս խորագրով. Սեբերիանոսի Գաբաղացւոց եպիսկոպոսի (յոմանց 'ի գրչաց Ոսկեբերանն համարեալ) 'ի պատուական և 'ի կենարար խաչն. և յայն թէ Դու՞ ես որ գալոցն ես, եթէ այլում ակն կալցուք. և 'ի կոյրն և 'ի համրն. և 'ի բանն Ամբակումայ. Տէր զլուր քո լուայ և երկեայ »։ Սկզբնաւորութիւնն. « Գեղեցկապէս մեզ և իմաստութեամբ՝ յառաջագունացն լեզու, զխաչին ճառագայթս ցուցանէ. քարոզեաց ըզխաչն, որ ըստ անուանն գուշակեաց ինչ, և ըստ զօրութեանն և ազդեցութեան մեծ »։

— ԺԵ. Երանելւոյն Եւսեբիոսի եպիսկոպոսի 'ի նոյն խորհուրդ մատնութեան. (Beati Eusebii, lege, *Seberiani*) Episcopi in idem mysterium (de Juda traditore). « Փութասցուք 'ի խաչն Քրիստոսի, ոչ զի 'ի խաչ ելանիցեմք, այլ զի երկիր պագանիցեմք »*։

* Յոմանց՝ Եւսեբեայ կեսարացւոյ կընծայուի։

Բանասիրաց անհաճոյ չենք համարիր հետագայ տեղեկութիւնը՝ զոր մեր աշխարհին հրատարակութենէն քանի մը տարի ետքը՝ կու տար Ասպահանի Հայոց ուղղափառաց առաջնորդ՝ բանասէր և բանիբուն վարդապետն Յովհաննէս Տէր-Տէրեան Արմաղանեանց։ Իր ձեռքն ընկած է գրչագիր մը՝ Եւսեբի եպիսկոպոսի Եմեսու խօսք խորագրով. « քաղեալ — ինչպէս կ'ենթադրէ, — 'ի բանից նորին, երևի լինել 'ի վախճան չորրորդ դարու, ընտիր թարգմանութեամբ նախնեաց, գուցէ յ'Ընձակայ, որ վասն թարգմանութեան գնաց 'ի Պաղեստին։ Սկզբնագիրն անթուական՝ գրեալ գլխագրով, 'ի թուղթ բամբակեայ, առանց ինչ բանաւոր յիշատակարանի։ Հեղինակն ազգաւ և հզօր փաստիւք յաղթահարէ զհերետիկոսս իւրոյ ժամանակի։ Սկզբնաւորութիւնն. « Որսորդաւք իւրովք յամպարշտաւթեննէն ձգեալ

եհան զմեզ Քրիստոս։ Որսորդաւք՝ յանառակութեան ցանկութեանցն ցածուցեալ կորզեաց զմեզ. զի Նոքաւք և անուշացոյց. քանզի եցոյց զնոսա մեզ աղ։ Նշխարք և լուսաւորեաց. քանզի կոչեաց զնոսա լոյս աշխարհի։ Փոքունք և նուաղք էին քարոզքըն. այլ արդարութիւնն մեծազաւր։ Առանց դըպրութեան ագէտք՝ այլ Նոքաւք յայտնեցաւ Աստուծոյ իմաստութիւնն։ Առանց կարծեաց միասցէ քարոզութիւնն՝ մի մարդկեղէն պարկեշտութեամբք զարդարեալ» . . . ։

« Յետ Նուսերի՝ 'ի բնագրին նովաւ գրչաւ գտանէին գրեալ ճառք Սեբերիանոսի եպիսկոպոսապետի, բովանդակեալ 'ի հինգ գլուխս՝ այսպէս.

Ա. Վասն հաւատոյ.

Բ. Յարժանաւոր երկրպագութիւն. «Երրորդութիւն հանգիտապատիւ է. և զի ամենակալ է Որդի»։

Գ. Ի Փարաւոն և յԱռաքելոյ բանն թէ Որում կամի ողորմի և ում կամի խստանայ։

Դ. Եւ թէ չիք առանձին երեսք զայս իրք և խրատուց քաղցութիւնք։

Ե. Յաւանակն և 'ի Դաւիթ»։

Այսոնցմէ զատ՝ ճառընտրաց մէջ կը հանդիպինք նաև հետևեալներուն Սեբերիանոսի անուամբ։

— Ի բանն՝ Զոր կապեցէք յերկրի. «Մի է ձայնս և բազում որոշմունս»։

— Յայլակերպութեն տեառն. «Ոչ փոխեցաւ տէրն 'ի մարմինն, և ոչ յառնուլն զմարմինն՝ եղև խափան նմա մարմինն. այլ ինքն լուսաւորեաց զմարմինն»։

— Ի համբարձումն. «Քանզի շնորհօքն Աստուծոյ»։

— Սեբերիանոսի հատուած ճառի 'ի մեկն. կաթ. թղթոց. «Այս է զոր ասէ, թէ փափաքէ և ցանկայ հոգիս որ առ մեզ է՝ Աստուծոյ մտերիմ լինել»։

(Փարիզեան ազգային մատենադարան, Suppl. 48)։

— Սեւերիանոսի յաւետարանին մեկնութենէ որ ըստ Ղուկայ. «Երկու պարտապանք էին. փոխատու զինքն նշանակէ. որ 'ի պատկեր իւր գոյացոյց զմարդկային բնութիւնս»։

— Սեւերիանոսի յաւետարանին մեկնութենէ. «Այր մի իշխանէր յԵրուսաղեմ... Արդ յորժամ արար Աստուած զերկինս», ...

— Սեբէոսի եպիսկոպոսի վասն գալստեան Յովհաննու 'ի գժոխս։* (Ի ցուցակս մատենից Էջմիածնի)։

* Սեբերիանոսի տասն ճառից գրչագիր օրինակ մը յ'Էջմիածին՝ այս յիշատակարանով. «Յամի վեցհարիւրերրորդի վաթսներորդի չորրորդի թուականութեանս Հայոց գրեցաւ ... 'ի գերահռչակ անապատս որ կոչի Ակներ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնին և սուրբ առաքելոցս, հրամանաւ երիցս երանեալ հաւրն Թորոսոյ ...։ Ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի յաղթողի և բարեպաշտի, և 'ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի ... յիշեսջիք և զանպիտան անձն Պետրոսի գրչի. և զհարազատ եղբայրն իմ զՍիմէոն ... մեղապարտ անձն կազմողի սորա Ըռոբինա»։ Պատմական յիշատակ մ'ալ. «Ի թուին ՈԿԸ մեռաւ թագաւորն Հայոց Լեւոն, ... և յայսմ ամի տապալեցին ... Տաճիկք զԵրուսաղէմ 'ի հիմանց, զբովանդակ եկեղեցիսն և զպարիսպն շուրջանակի, և զամենայն շինութիւն քաղաքին ...»։

ՍԵԿՈՒՆԴՈՍ

(SECUNDUS)

Ադրիանոս կայսեր ժամանակակից հելլէն իմաստասէր. որուն անուամբ համառօտ հաւաքում մը իմաստասիրական բանից աւանդած է մեզ հայ մատենագրութիւն՝ հաւանական կարծեօք Թարգմանութիւն ոսկեղէն դարու։ Յոյն բնագիրն ալ կը գտնուի, ինչպէս նաև լատին հին փոխագրութիւնք, ընդհանրապէս նման հայկականին։ Միայն չենք հանդիպած նախաքան տեղեկութեանն՝ զոր ունի հայերէնն, և յորում կ'աւանդի թէ երբ և ինչ առթով արտասանած է զայնոսիկ իմաստասէրն։

Մէջ բերենք զայն, նաև հայ լեզուին ընտրութեան ճաշակ մը տալու նպատակաւ։

« Ընդ ժամանակս ընդ այնոսիկ, յորում Ադրիանոս 'ի Պարսս երթայր, և իբրև եկն յԱթէնս, լուաւ զՍեկոնդէ թէ կորովի իմաստասէր, և անխօսութեամբ զինքն հանճարեալ է. որով և կոչեալ առ ինքն՝ բազում աշխատանօք մաքառեալ 'ի հարցմունս առակաց. և նա ոչինչ ետ պատասխանի։ Եւ թագաւորն զայրացեալ ընդ անմեծարանսն առաջի սինկղետոսին, կոչեաց ղատուրհանդակն զի սպանցէ զնա. և պատուէր տուեալ նմա. Երթ նախ բանագնացեա. եթէ խօսի՝ սպան. եթէ ոչ՝ կենդանւոյն այսր ածջիր։ Եւ դահճապետին վաղվաղակի զհրամանն կատարեալ, տարեալ 'ի նպատակն սպանանել. և ասէր. Հասեալ է օր մահու և կենաց. և զմահապարտ վաղակաւորն 'ի վերայ խաղացուցեալ փայլակնաձև՝ յեղյեղէր ասելով. Բան հատ 'ի բերանոյդ, և ոչ բարձցի գլուխդ 'ի պա-

րանոցէք. խօսքդ յօգս տարածեսցի, և ոչ հեղցի արիւնդ յերկիր։ Նա ոչ զերկիւղ մահու զմտաւ ածելոյ և ոչ զշողիւն սուսերին, լռութեամբ արիանայր. և զինուորին վաղվաղակի ածեալ առաջի թագաւորին կացուցանէր։ Ապա նորա այնուհետև սկիզբն արարեալ պատասխանւոյ »։

Թագաւորին այլ և այլ հարցմանց պատասխանները կուտայ Սեկունդոս։ Հայ թարգմանութեան խորագիրն է. Խրատք Սեկոնդոսի իմաստասիրի առ Անդրիանոս կայսեր. յունական սկզբնագրին ալ, Σεκούνδου τοῦ Ἀδριανου σόφου γνόμαι. Առաջին հարցումն է, Զինչ է աշխարհ. Τὶ ἐστι κόσμου։ Ի յոյնն՝ ինն և տասն են հարցմունք Ադրիանոսի, և իմաստասիրին պատասխանները. մեր թարգմանութեան մէջ քանի մի գըլուխք աւելի։*

* Յոյն սկզբնագիրն՝ հանդերձ լատին թարգմանութեամբ, հրատարակած է Փաբրիկիոս յիւրում Մատենադարանի (Bibliotheca Graeca). իրմէ ետքն ալ Օրելլի ի գիրսն Opuscula Graecorom veterum sententium et moralia, 'ի Լայպցիկ (1819–21)։ Ընտրելագոյն է Տիտոյի հրատարակութիւնն 'ի Փարիզ 'ի 1860, 'ի Fragmenta philosophorum Graecorum; collegit, recensuit, vertit Fr. Gul. Aug. Mullachius. Հայերէնն ալ 'ի շարս Սոփերաց (Ա. հատոր) ի սուրբ Ղազար Վենետկոյ։

Հելլէն ուրիշ նախնի իմաստասիրաց այլևայլ զգօնութեան խրատուց և թելադրութեանց՝ հայերէն ընտիր թարգմանութիւնք ալ կան ցրուած՝ մանաւանդ յՍակեփորիկ գիրս։ Ասոնց մէկ ճաշակը հրատարակուած է 'ի շարս նոյն Սոփերաց՝ 'ի հատորն առաջին. բայց գրչագրաց մէջ գտնուածներն աւելի բազմաթիւք են և ճոխք իրենց պարունակութեամբ, թէպէտ ոչ միշտ նոյն ընտրութեամբ լեզուի և հաւատարմութեամբ։

ՍԵՂԲԵՍՏՐՈՍ ՀՌՈՎՄԱՅ. (S. SYLVESTRE, PAPE). «Խաւսք Սեղբեստրոսի Հռովմայ հայրապետին՝ տացեալ վասն կիւրակէի»։ Անհարազատ։

ՍԵՂԲԻԱՆՈՍ. (SYLVIEN ?). «Սեղբիանոս եպիսկոպոսի Մծրին քաղաքի՝ յաղագս ծրագալուցին»։ — Համանուն ուրիշ անձի՝ կ՚ընծայուի նաև «Սեղուիանոսի հռովմայեցւոյ գիրք որ Կանոնական լըրմունք կոչի»։ Գիրքը տեսած չենք, բայց հաւանականաբար մեր մատենագրութեան յետին դարուց արգիւնք կը թուի։

ՍԵՒԵՐԻՈՍ ԱՆՏԻՈՔԱՑ

(SEVÉRE, D'ANTIOCHE)

Սեբերիանոսի վրայ խօսած ատեննիս՝ յիշեցինք և զՍեւերոս Անտիոքայ։ Իր անունով հասած են առ մեզ հետևեալ հատուածք բանից ՚ի խմբագիր մեկնութենէ Ղևտական գրոց (յէջ558), որոց սկզբնաւորութիւնն և վերջը մէջ բերենք՝ ՚ի գիտութիւն բանասիրաց։

— Սեւերոսի եպիսկոպոսապետի Անտիոքու ՚ի թղթոյ նորա առ Միսայէլ ներքինի. «Քանզի բոլորեցս Աստուած՝ զորս յԻսրայէլէն յեգիպտացւոցն կռապաշտութիւն չեղեալք, և սովորեալս բազմաց զոհել և պաշտամունս աստուածոց.... և զմարմնական թլփատութիւն անարգեն. զհոգին թլփատել ՚ի չարութենէ փոխանակեալս»։

— «Վասն զի անկատարք էին որդիքն Իսրայէլի. և առ կռապաշտութիւն էին չեղեալք, վասն յԵգիպ-

տօն բազմաժամանակեայ յամելոյն... իսկ յետոյ 'ի ձեռն մարգարէին գոչէր. Ի բաց արա յինէն զհնչումն երգոյ քոց, և զձայն քնարաց քոց ես ոչ լուայց»։

— «Զոր 'ի ձեռն սաղմոսողին մարգարէի երևելի յառաջագոյն ասացեալ ինքն փրկիչն, և զմարմնով իւր գալուստն նախայայտնեալ, և զարտաքս ընկեցումն հնոյն... 'ի վերին ազատութիւնն մեզ առնել՝ և որդի փոխանակ ծառայից արարեալ»։

— «Զձայնս որպէս պարարիչ մարմնոյ և վաւաշոտութեան յարձակեցուցիչ, իսկ զարիւնն որպէս զազանային և վայրենի»։

— «Վասն զի որ 'ի ձեռն Մովսիսի տուեալն աւրէնքն զհինն մատուցանելով... կամ թէ եւս կամ թէ իրագէտ իցէ եթէ ոչ հանիցէ 'ի վեր և մեզս ընկալցի»։

— «Հաւաստեաւ ցուցանի 'ի ձեռն այսոցիկ. զի որ ոք աստուածայնովս սիրով ոչ է հրացեալ.... զի ամենայն զոհ քահանային ողջակէզ եղիցի և ոչ կերիցի»։

— «Մովսէսափոյթ աւրինաւքն զորս 'ի թանձրագոյնան կային բարբարոսականաւք բարոյիւք.... առաւել լուայ զիս յանաւրէնութենէ, և 'ի մեղաց իմոց մաքրեայ զիս. սիրտ սուրբ ստացեալ յիս աստուած»։

— Սեւերի արքեպիսկոպոսի Անտիոքու. «Այսպէս էր փարփռեցուցոյն ազատութիւն և խնդրուածքն որ յըՂուկաս աւետարանին ամբաստանի»։ (Հատուած ճառի 'ի խմբագիր մեկնութեան կաթուղիկեայ թղթոց։ Փարիզեան ազգային մատենադարան. Suppl 48)։

— Սեւերի 'ի Ղուկասու աւետարանին մեկնութենէ. «Տղայոցն մանկաւէր մարքն». (Մատենադարան Երուսաղեմի. 'ի Ճառընտիր գրչագրելոյ 'ի Յ. Երզնկացւոյն. Թիւ 442)։

— Սեւերոսի երիցու 'ի ծնունդն Քրիստոսի. «Յոր

ժամ'ի ձմեռնային ստուգմանեաց »: (Ի գործս Սոկ. Հատ. Ժ. Մոնֆոքոն 813) ։

ՍՈԿՐԱՏ ՍԿՈԼԱՍՏԻԿՈՍ

(SOCRATE, LE SCHOLASTIQUE)

Սոկրատ, յետ Եւսեբեայ կեսարացւոյ համբաւեալ պատմիչ եկեղեցւոյ, ծնաւ 'ի Բիւզանդիոն յառաջին ամս Թագաւորութեան մեծին Թէոդոսի (380)։ Իր դաստիարակութիւնն ընդունեցաւ 'ի հայրենի քաղաքին՝ ուսուցիչ ունենալով զԱմմոնիոս և զՀելլադիոս, որ էին 'ի նշանաւոր քրմաց Աղեքսանդրիոյ, և իրենց չաստուածոց տաճարաց ու բագնաց քարուքանդ ըլլալէն ետքը ապաւինեցեր էին 'ի Կոստանդնուպոլիս։ Քերականական ուսմանց ընթացքը կատարելով՝ պարապեցաւ ճարտարախօսականին հրահանգացը, յարում և փայլեցաւ հռչակաւ և գովութեամբ։ Թէոդոս կայսեր հրամանաւն և բանադատելով յօրինած է զիւր Պատմութիւնն։

Ընդհանրապէս Կոստանդնուպոլսոյ եկեղեցւոյն պատմութեամբ կը պարապի հեղինակն իր այս երկասիրութեան մէջ թէ աւելի իրեն ծանօթագոյն ըլլալուն, և թէ այն դիպուածոց կարևորութեան պատճառաւ։ Առջի երկու գրոց մէջ աւելի Հռուփինոսի հետևող կ'երևի. բայց յետոյ սրբոյն Աթանասի գրուածոց ընթերցմամբ՝ հասու ըլլալով Հռուփինոսի անճշդութեանց թէ' 'ի պատմականս և թէ մանաւանդ 'ի ժամանակագրականին, հարկ սեպեց կրկին դառնալ անոնց վրայէն։ Այն առթով ուրիշ կատարելութիւն մ'ալ ունեցաւ իր երկասիրութեան՝ աւելցընելով կայսերաց և հայրապետաց նամակներն որ

այնչափ մեծ նշանակութիւն ունէին արեւելեան – յոյն եկեղեցւոյ պատմութեան համար, և զորս յառաջ մեկդի թողեր էր՝ խորշելով, ինչպէս ինք կ'ենթադրէր, յերկարաբանութենէ։

Այս գրուածին հայերէն հին թարգմանութիւնն ալ ունինք՝ յեօթներորդ դարէ մեր դպրութեան, 'ի ձեռն Փիլոնի Տիրակացւոյ։ Առաքել կ'ըսէ․ «Ի սորա աւուրս (Անաստաս կաթուղիկոսի) էր Փիլոն Տիրակացի, որ զՍոկրատայ պատմութիւնն թարգմանեաց 'ի հայ լեզու»։ [1]

Մեր գրչագրաց խորագիրն է․ «Պատմութիւն Սոկրատայ՝ ըստ Հռովմայեցւոց նահանգին եպիսկոպոսաց և թագաւորաց, և որ 'ի նոյն յարմարին յաղագս որբոց և անարբոց՝ զոր բացայայտէ պատմութիւնս։ Սկիզբն Սեղբեստրոսի պատմութեան արարացուք, որ կոչեցաւ յաթոռ հայրապետութեան Պետրոսի և Պաւղոսի՝ մեծի քաղաքին Հռովմայ՝ որ յոլովս ունի պատմութիւնս 'ի Հռովմ։ Այս սկզբնաւորութիւն է գրոցս ըստ հայ թարգմանութեան և ոմանց 'ի գրչագրաց, և զոր չենք գտներ 'ի յոյն բնագրին։ Վասն զի յունականն՝ որուն կը հետեւին նաև ոմանք յընտրելագոյն գրչագրաց մերոց՝ այսպէս կը սկսի․ «Եւսեբի Պամփիլեայ 'ի տասն (կամ տասներորդ) գիրսն եդեալ է զեկեղեցւոյ պատմութիւնն։ Լռեաց 'ի ժամանակս Կոստանդիանոսի Մեծի. և որ 'ի Դիոկղետիանոսէ եղև հալածանք քրիստոնէից՝ գրեաց նա․ նա և զվարս Կոստանդիանոսի 'ի նէր՝ բարձրասացութեամբ՝ զոր փոքր ինչ աստանաւոր յիշեցուք»։

Սոկրատայ գիրքը յեօթն գիրս կամ դպրութիւնս բաժանուած է 'ի բնագրին, և կ'ամփոփէ հարիւր երեսուն և չորս տարուան պատմութիւն, 'ի դադարելոյ հալածանացն Դիոկղետիանոսի և թագաւորելոյ

1 ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՆ ԴՊՐՈՒԹԻՒՆ, Բ. տպագր. յէջ 456.

Կոստանդիանոսի մինչև յեօթնևտասներորդ ամ ին-քնիշխութեան փոքուն Թէոդոսի: Այս բաժանմունք չեն տեսանուիր 'ի մեր գրչագիրս :

Հեղինակին վերջաբանն է. «Արդ զհրամանս քո, քա-հանայդ Աստուծոյ, կատարեցի զոր 'ի Կոստանդնու-ժամանակաց սկիզբն ունելով նշանապատմութեանս կատարեցի. բայց մի՛ ոք մեզ մեղադիր լիցի և պարտա-ցէ՝ թէ զպատմութիւն սրբոցն հարևանցի պատմեցի, և ոչ գեղեցկաբանութեամբ հիւսեալ 'ի գովութիւնս: Երկուս պատճառս ունիմ ասել. զի զսրբոցն պատմու-թիւնս լիապէս ունի եկեղեցի Աստուծոյ. զեպիսկո-պոսաց և զթագաւորաց և զամենայն առաքինեաց ան-ձանց. և դարձեալ՝ թերևս 'ի բաց անկանիմք 'ի գիտ-մանէն. և դարձեալ՝ որպէս զի ոչ կարասցուք ըստ հը-նոց պատմագրաց պատմել և ճառել. որով զքաջսն գովութեամբ վերաբերեալ և զվատթարսն բացայայ-տել, որ զբաղումս յորդորելով առ բարեպաշտու-թեանն ջանս :

«Արդ զի մի յերկոցունցս անշահ իրողութիւն լիցի բարեխրատեցն. զի ոչ արժանական ըստ հին պատ-մութեանցն համեմատել կարասցուք. իսկ ադի-տացն զի ոչ կարեն կալ 'ի վերայ իրացն ճառասացու-թեան յայտնագոյն՝ ընդ միջինն ունելով այսօրինակ ա-ղագաւ արարաք զպատմութիւնս. զի ոչ ընդ գովու-թեամբ զանուանս սրբոցն որ սիրեն 'ի կիր արկանք. և կամ զգործս նոցա մեծացուցաք. զի որպէս ասա-ցի՝ իւրաքանչիւր պատմութեանցն թողաք. զի ոչ զե-պիսկոպոսաց, և ոչ զթագաւորաց, որքան ինչ էր, և որքան էր նոցա պատիւ. այլ սուղ ինչ անցի՝ զոր ես տեսի, և զոր 'ի տեսողացն կարացի ուսանել. ընտրե-լով զճշմարիտն շարագրեցի. զոր ոչ փոխեալ ըստ պատմութեանցն՝ զպատմողսն զայնոսիկ խորհրդա-բար ինչ և ճշմարիտ ծանուցեալ լինէր բազմաց և յա-լովից պատմելոց, և որոյ աւընթեր գոլ ասելոյ գոր-

ծովք։ Իսկ ոմանց՝ յամենայնէ արժանացելոցն գե-տեղ։ Բայց մեր սատանաւք ուրեք զպատմութիւնս գագարեցուցաք »։

Այս վերջաբանին վրայ՝ հայ Թարգմանիչն անմիջա-պէս կը յարէ զիւրն ուղղեալ առ Ներսէս Կամսարա-կան խնդրող երկասիրութեանն. «Ո՛վ տէր Ներսէս Կամսարական, ամենքեւպատ պատուելի, որ եկեղեցեաց ես շինող մեծա, զխաղաղութիւն կալցես 'ի Քրիստոսէ, որ տուողն է խաղաղութեան. համապատ զնախանձ ա-ցեր զբարեպաշտ Թագաւորացն, հաստատեալ 'ի քում անձինդ զբարեպաշտութեան ջանս. մի և մի իւիք առ պատճառս, և կորնչեցիս 'ի ճանապարհացն արդարու-թեան, և մի ընդգիմանիցացն որ 'ի վայր բերիցէ՝ քար-շեալ և խառնեալ. այլ զվերինն խորհելով փախիցես 'ի զբաղմանցն. և երթիցես զհետ արդարութեան, ըզ-հաւատոյ և զսիրոյ. ձուլան հարկանելով զկենացն յա-ւիտենականացն՝ որպէս բարեպաշտագոյն Թագաւորն Թէոդոս. և զամենայն զոր ինչ արասցես՝ յաջողեսցէ քեզ. և պատերազմ վանի ազատութիւք, զոր լուար 'ի պատմութեննէս. զի և խաղաղութիւն Քրիստոսի բնա-կեսցէ 'ի քեզ առատապէս, և յեկեղեցիսքո և յաշ-խարհի, զորոց ցանկացար պատմութեանս Թարգ-մանել, ընդ նոյն ճանապարհ Թագաւորացն և երթի-ցես...»։

Ի վերջ գրոցն՝ հետեւեալ տողը կը կարդանք, 'ի գըր-չէն օտար՝ բայց հնագիր տառիւք. «Սոկրատայ ։ին պատմութիւնս՝ սաուգութեան ունի ցուցակու-թիւն »։

Աւելի հետաքննականն մեր մատենագրութեան համար այն է՝ որ ազկրատեան գրոցս կրաբեն տար-բեր երկու ։այ Թարգմանութեան հանդիպած ենք. երկուքն ալ բաւական ընտիր լեզուով և գեղով. այլ մին համառօտագոյն քան զմիւսն։ Այս երկրորդ՝ կամ. ինչուան հիմա ծանօթ եղածներէն որիշ Թարգմանա-

Թիւնն կը պահուի, ինչպէս լսեր ենք՝ յերուսաղէմեան ազգային մատենադարանի:

Գտնենք հատուած մը՝ երկուց Թարգմանութեանց խորապէս տարբերութեանն յայտարար:

Ըստ մեր գրչագրաց. «Իսկ Մակեդոն՝ հոգեմարտ և աստուածամարտ, կոչեցեալ 'ի սարկաւագութենէ յեպիսկոպոսութիւն Կոստանդնուպօլսի՝ հակառակ Պաւղոսի: Սա բազում չարիս եցոյց 'ի Կոստանդնուպօլիս և 'ի մերձաւոր յաշխարհն և 'ի քաղաքսն: Բռնադմութիւն 'ի նշանաւոր արանց ըմբռնեալ տանջէին, որ ոչ կամէին ընդ նմա հաղորդիլ. և յետ չարչարանաց բռնութեամբ փայտիւ բացեալ զբերանն հաղորդութիւն նոցա տային. որք չար քան զտանջանս զայն վարկանէին. և զկանայս 'ի պղծութիւն զինուորաց հրամայէր. և որք ընդդիմանային՝ հարուածք նոցա լինէին. և զկիսոց՝ զստինս նոցա հատանէին, և կիսոց այլ ինչ գաւն տանջանս տանէին. և այս էր նորա փոյթ զի զամենեսեան աստուածամարտութեանն արասցէ հաղորդս. և եւս չարագոյն քան զհեթանոսացն տանէր տանջանս. և զգործիս տանջանացն կազմէր սրով և հրով և փայտիւ. և ոչ դադարէր 'ի չար բռնաբարութենէն և յաստուածամարտութենէն Մակեդոն: Սակայն ոչ եթող զնա Աստուած առանց վրէժխնդրութեան»:

Նոյն հատուածը՝ ըստ միւս Թարգմանութեան զոր յիշեցինք. «Բայց թէ որպէս Մակեդոն զշուրջ Կոստանդինուպոլսի զաշխարհսն և զքաղաքս քանդէր, այժմ ճառեցից: Քանզի նա՝ որպէս ասացի, ըմբռնեալ յեպիսկոպոսութեան, բեւր չարիս անէր չհաղորդողացն զնորայն. և ոչ միայն զեկեղեցւոյն իւր զխղճաւորս վարէր, այլ և զՆաւատիանոսս: Տեսեալ զնոսա զհամագայութիւնն խորհելով, ընդ նոսին ապա վարդէին և նշքա, և ընդ նոսին կրէին զանուղղայսն. փախչէր ապա և եպիսկոպոսն նոցա Ագելիոս անուն:

«Իսկ բազումք և 'ի նշանաւոր երկիւղած արանց ըմբռնեալք տանջէին. զի ոչ կամէին վայելել 'ի հաղորդութենէ նոցա: Իսկ յետ չարչարանացն՝ բռնութեամբ հաղորդել 'ի խորհրդոցն հարկաւորէին. քանզի փայտիւ բացեալք զբերան արանցն, արկանէին զխորհուրդն: Իսկ զայս կրաւղքն՝ մեծագոյն ևս քան զայլ պատժոցն տանջանս զայս համարէին. կանայս և մանկունս ըմբռնեալք՝ պղծել հարկաւորէին: Իսկ եթէ ոք հրաժարէր. կամ այլ ազգ ինչ ընդդիմաբանէր. նոյն ժամայն հեռանէին վէրք. և յետ վիրացն կապանք և կապարանք, և այլքն դժնդակք. յորոց մի կամ երկուս յիշեալ. յայտնագոյն զչարագործութիւնսն և ըղսխալանսն Մակեդոնի և զորոց յայնժամ անձանցն յայն լաւաղացն կարգեցեց. վասն զի կանանցն ոչ առեալ յանձն հաղորդիլ նոցայոյն. զստինս նոցա եդեալ 'ի տապանակի սղոցէին. և աւատրագոյն քան զհեթանոսացն պատուհաս այս 'ի քրիստոնէիցն կոչեցելոց լինէր: Իսկ ես զայս 'ի բազմամէ Աւքսանոնէ լուայ, զոր յառաջնումն յիշեցի 'ի գիրսս. որ էր քահանայ Նաւատեանոսացն աղանդոյ»:

Այս գրչագրին թուականն մեզի անծանօթ ըլլալով, չենք կրնար որոշ գաղափար մը տալ հնութեանը կամ ժամանակին. միայն հարկ կը սեպեմք յիշեցընել որ ընդարձակագոյն ոճովը աւելի համաձայն կ'ընթանայ ընդ յոյն բնագրին:

ՎԱՍՏԱԿՈՑ ԳԻՐՔ

(GÉOPONIQUE)

Հաւանականաբար յոյն հեղինակի երկասիրութիւն մ'է գրուածքս. զի և զայն թուին ակնարկել 'ի գլուխ գրոցն գրուած հետագայ տողք. «Այս գիրք

Գանիտոսի Անադոլիոսի՝ որ 'ի քաղաքէն Պէրուաթայ,
զոր չինեաց յաղագս անկոց և վաստակոց մարդ-
կան, և անուանեաց զնա Վաստակոց գիրք։ Եւ
համառօտեաց 'ի Ֆլորնդիոսէ և 'ի Լաղնդիոսէ և
'ի Դարընդիոսէ և յայլոց բազմաց, յոյժ պիտանի,
և 'ի յընտրելոյն Նիկոլիոսէ։ Եւ բաժանեաց զնա 'ի
չորեքտասան գլուխս ։։ Այս չափ ինչ միայն հնար է
ապահովութեամբ հեռուցընել այս խօսքէն՝ թէ ու-
նինք առաջի մեր թարգմանութիւն մի, որոյ սկըզբ-
նագիրն յունարէն է։ Իսկ թէ թարգմանութիւնն ե-
ղած չէ ուղղակի նոյն սկզբնագրէն՝ այլ արաբական
հին թարգմանութեան վրայէն, այն ևս տոյգ կ'ե-
րեւայ հայ գրութեան լեզուէն և յայլոց պարա-
գայից։ Այսով համոզուելու համար՝ բաւական է մտա-
գնել որ գրոցս իւրաքանչիւր Հատուածին վրայ՝ փո-
խանակ սովորական Գլուխ բառին՝ գրուած է Դուռն,
որ զուտ արաբական է, կամ արաբերէն Պապ բառին
նիւթական թարգմանութիւն. ինչպէս կը գտնենք
յարաբերէնէ թարգմանեալ գրոց մէջ։

Գրոցս սկզբնական կազմութեան, հեղինակին
հայրենեաց և ժամանակին, արաբական թարգմա-
նութեան և նմանեաց վրայ, հնախոյզ բանասիրաց հե-
տազօտութիւնքը հաճելու բաւական են մեր տպագ-
րին (1877) ընդարձակ յառաջաբանը՝ զոր կը համա-
ռօտենք, և յորում կը նշանակուի ենթադրութեամբ
նաև ժամանակ թարգմանութեանն 'ի հայ։ *

« Հաւաքածոյ խմբագիր է մատեանս 'ի յոլովից
գիտնոց բանից, որք զերկրագործութենէ կամ զմշա-
կութենէ գրեցին, և որ յառաջ քան զգալուստ փըրկ-
չին մերոյ, (որպէս անուանեալն Զրադաշտ, և մեծ-
գիտնականն Վարրոն), և է որ սուղ յետոյ. յառաջին
չորեսին դարս Նորին թուականին։ Ի համառօտ նա-

* ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ (1889, Թիւ 1)

խոգրութեան հայերէն թարգմանութեանն (որ յօ-րինակին կարգեալ էր յաւարտ գրոցն), բացայայտ ծանուցանի ս՛ և յորմէ գրքոյն համառօտեաց. «Պօ-ղոս Աղեքսանդրիոս որ ՚ի քաղաքէն Պերութայ». զոր առկաւ ինչ այլայլութեամբ վաղ ուրեմն յ'Թ դարու բազմահմուտն Փոտ նշանակէր յիւրում Բիւրամա-տեանի, ընթերցեալ զՎինդանիոսի Անատոլեայ Պերի-թացւոյ Մշակական խրատս, հանդերձ երիւք կամ չորիւք յիշեցելովքն ՚ի հայումս, յայլոց եւս վեցից հեղինականաց, որոց ոմանց յիշին անուանք և ՚ի կարգի գրոց հայ թարգմանութեանն. իսկ ՚ի յոյն բնագրին որ այժմս գտանի՝ ՚ի յառաջաբանին և ՚ի խորագրի գլխոցն կամ գրանց՝ յիշին այլ եւս հեղինակք, ընդ-բնաւ իբրև քսան. բայց անուն հաւաքողին ոչ նշանա-կի : Վասն այսորիկ հմուտք եւրոպեացիք որք զկիսով ԺԶ դարու նախ հրատարակեցին զգիրսն, և որք ըղ-հետ նոցին Ճառեցին զայնմանէ, և որ հուսկ և ընտրե-լագոյն բնաւից ապագրեաց հանդերձ լատին թարգ-մանութեամբ՝ Նիկողաս Նիկլաս (ի Լիպսիա, յամի 1781). յայլ և այլ կարծիս եղեն. ոմանք՝ Կոստան-դեայ կայսեր վերագրեցին երկասիրութիւն, այնու՝ զի շողոմարար հաւաքող գրոցս ՚ի շնորհուկս կայսեր՝ ասէ, ՚ի վերայ բազմապատիկ ձեռագործութեանց և յաղթութեանցն յաւելեալ և զհաւաքումն մատենիս. այլ արդ ոչ ոք ՚ի քաջախօսից այսմ հաւանի. իսկ կայս-րըն Կոստանդին զոր և ոմանք հնագոյն ոմն կարծե-ցին, աներկբայ ստուգի ծիրանածինն գոլ, ըստ յու-նականին Պերփիւրուժեն, ՚ի մերս, ՚ի Ժ դարու կա-ցեալ. որ արդարև ուսումնասէր յոյժ գոլով է ինչ զի ինքնին գրեաց և է ինչ բազում զոր այլոց եւս գրել ընդ որս գտանի և այս մատեան. սակայն և հաւաքողն էր ոմն նմին ժամանակակից, զոր Նիկլաս հրատարակողն ծանօթարար և յոլովագոյնք ՚ի գիտնոց՝ Ճանաչեն Կաս-սիանոս Բասսոս Մեկենարան (Սկոլաստիկոս) մակ-

ձայնեալ։ Բայց այլոց ևս ոմանց, ընդ որս և մեզ, ոչ թուի և այս. քանզի ոչ միայն կանխաւ այլում ընծայեալ է գործն յակմանէ յանուանէ, զոյգ հայումն 'ի Փոտայ, այլ զի ընթերցասէրս այս խորագէս՝ գարու միով երիցագոյն էր քան զծիրանածինն Կոստանդին, որպէս գիրքն հաւաքածոյ երիցագոյն էր քան ըղկայացն և զընծայող Սկողաստիկոսն. կամ ո՞չ և իցէ յետոյն յերիւրող և ժողովողն գործոյն. և զի սորա ոչ մեծ ինչ փոփոխութիւն տարաբերալ քան զոր Փոտն ընթեռնոյր՝ յայտ առնի էր, զի գրեթէ համաձայն բան առ բան ըստ իւրումն գրեցելոյ և տպագրելոյն գաւառին յիշատակք և հատուածք գրոցն առ Պալլադիոսի լատին հեղինակի անդատին 'ի Ե դարէ։ Հարկ ուրեմն է և գրոցս հաւաքման լինել յառաջ քան զայս թուական, այս ինքն քան զ'Ե դար. նա զի և Կասսիանոս անուն բժիշկք և բուսաբանք յիշատակին յառաջին անդ դարս քան զհինգերորդն. այլ և 'ի սմին իսկ մատենի յիշատակի Կասսիանոս, որ ասէ զինքն լինել 'ի Մարտասոնիմայ գեղջէ (Բիւթանիոյ). որպէս ոչ է նա ժողովող գրոցս՝ այլ մի ոք. որ գուցէ զնախնոյ ժողովողին արօհեալն յ'ԺԲ հատորս, որպէս Փոտ ասէ, և ԺԳ ըստ մերոյս, 'ի քսան գիրս բաժանեաց, յաւելլով ինչ ինչ և յարմարելով կլիմայի կայսերանիստ քաղաքին և նորին սահմանաց։

«Ստոյգ ուրեմն և առաջին հաւաքող գրոցս Վաստակոց է Անատոլն Բերիթացի, յորոյ անուն և հայրենեաց միաբանին Փոտ և Հայ Թարգմանս. իսկ յաւելլի անուանն՝ ոչ. և ոչ զիտեմ ո՛ ստոյգ կամ մերձ 'ի ստուգութիւն. զի Պռեփոս կոչումն հայոյն ոչ ուրեք լսի իսկ Վինդանիոս՝ կից Անատոլեանուն ըստ Փոտայ՝ ոչ կարի հաւանական... Իսկ ուստի՞ արդեօք սպրդեաց Պռեփոսդ անուն 'ի հայումս, ոչ ունիմ ասել. բայց միայն զի յապաւապութենէ իմիքէ յոյն բնագրին չեղելոյ յարաբացի լեզու, յորմէ մերն փոխաբերեալ

է. Իսկ ինքն Անատոլ որ 'ի Պերիթեայ քաղաքէ Փիւնիկիոյ, (որով և ասորի ըստ ծագման,) հռչակի զկնովին չորրորդ դարու, իբրև հմուտ իրաւագէտ, քաղաքագէտ և բանաստեղծ, որ և մեծարեալ 'ի կայսերաց 'ի Հռովմ և նախարար Լիւրիկիոյ կարգեալ, առաքեցաւ երբեմն յԱթէնս' (իբր յամի 345) պատուասիրել 'ի կայսերական դահուց զգերահռչակն 'ի սոփեստէս ժամանակին և պարագլուխ ճարտարասանից, զմերս հայազն Պրոյերես, զօրապետութեան պատուով: Արդ այսմ Անատոլի' եթէ ինքնին իցէ հաւաքող և գրող և եթէ այլոյ ձեռամբ, իրաւունքք են ընծայել զհեղինակութիւն մատենիս' քան այլում ումեք: Բայց բուն բանիցն և խրատուցն հեղինակք' օտարք են և բազումք, որպէս վերագոյնդ ակնեցաք, ոչ միայն յոյնք և լատինք, այլ եթէ արժան իցէ հաւատալ ամենայն գրելոցն, և բակարիացի և պարսիկ ոք Զրադաշտ և Յուբաս Նումիդացւոց արքայ յԱփրիկոյ. զորս զանց առնեմք մեք թուել աստանօր. քանզի սակաւք 'ի բազմացն յիշին 'ի մերում թարգմանութեան... Ի բնագրին' ընդ իւրաքանչիւր խորագրաւ գլխոց նշանակեալ են անուանք հեղինակացն:... Արժան է յիշեցուցանել աստ 'ի կարգի անուանցն' զյիշատակեալն 'ի մերոյս 'ի վերջէ ամենեցուն' զ'ընտրեալն Նիկոլիոս, որ ոչ բնաւ յիշի 'ի բնագրին, և ոչ այլ անուն' նմին նմանաձայն. հմատունից այսմ գիտութեան և գրագրութեան' թողումք հաւաստել զայս. իսկ մեք փաստ մի և ստոյգ առնումք զսկզբնագիր օրինակ մերոյս թարգմանութեան' որէշ և երիցագոյն համարել քան զընծայեալն յարգեաց Կասսիանոսի Բասսոսի և զհրատարակեալ 'ի Նիկլասայ:

« Ես սա արդ, որպէս վերագոյն ասացաք, 'ի քսան գիրս բաժանեալ է. և իւրաքանչիւր գիրք 'ի գլուխս աւելի կամ պակաս թուով. որք ոճով իմն ճառեն և

կարգաւ մի ըստ միոջէ զվաստակոց երկրի և զմշակելեացն այգեաց և անկոց, և զանասնոց. իսկ մերս՝ Թէպէտև գրեաթէ զնոյն ունի, բայց ոչ է տրոհեալ 'ի գիրս. որով մարթ էր որոշակի ընտրել և նիւթոց Ճառելեացն. այլ 'ի գլուխս աւելի քան զ'300, կամ 'ի դրուագս՝ որպէս գրեալ էր յընտրելագոյն օրինակին՝ որում հետևեցաք: Պակասեն 'ի մերումս երկուց վերջին գրոց բնագրին խրատք, որ զերէց և զձկանց և զեռնոց, որպէս և զհաւուց՝ որ 'ի ԺԴ գիրս բնագրին, այլ և զծաղկանց և զպարտիզի ծառոց՝ որ 'ի ԺԱ գիրս, զորոց ըղձալի էր մեզ ունել Թարգմանութիւն. ոչ այնքան վասն բանիցն Ճառելեաց, որքան վասն բառից և լեզուին: Զանց արարեալ է մերս և ըզգրեաթէ զողջոյն Ա գրովք, որ զօգոյ Ճառէ և զօգերևութից, և զլուսաւորաց և զյեղանակաց տարւոյ, որք արդարև չեն այնքան կարևորք և ոչ ամենայն կլիմայից պատշաճք. և զայս յայտ առնէ մերս 'ի ըսկըզբան բանիցն. «Աստանօր այժմ համարեցաք զառաջակայիցն զերկարաբանութեանց զանց առնել»... Այլ և 'ի բանս և 'ի խրատս գլխոյն՝ դուն ուրեք համակարգ և բառական է Թարգմանութիւնն. այլ յաճախ յետ և յառաջ, աւելի կամ պակաս. և որպէս զբազումիւք զանց արարեալ է, ունել ունի և հայերէնն առաւելութիւնս որ ոչ գտանին 'ի յոյն բնագրին... Բովանդակ մատեան հայ Թարգմանութեանս՝ իբրև չորիւ լոկով մասամբ չափ նուազ է քան զյունականն. Թերևս ոչ շատ ինչ աւելի ունէր և օրինակն՝ յորմէ փոխեցաւն 'ի մեր լեզու:

«Օրինակն այն՝ առանց երկբայութեան էր արաբերէն Թարգմանութիւն յունականին, որպէս քաջայայտ երևի յարաբիկ անուանց համաստեղութեանց, զոր մերթ Թարգմանելով և մերթ ոչ՝ կրկնէ մերս, և 'ի բուսոց և կենդանեաց ոմանց՝ զորոց չէ գտեալ ըզբնիկ հայեցի կոչմունս. ըստ որոց հարկ էր նմա զյու-

նախանս կարգել անուանս՝ եթէ 'ի յունէ անտի թարգմանէր. իսկ եթէ յիշէ ուրեք այսպէս կամ այնպէս կոչիլ յունարէն՝ անդ արաբացի թարգմանին է բանն զոր կրկնէ հայն։ Ոչ է մեզ ծանօթ փոփոխագրելն այն արաբացի թարգմանութիւն, յորմէ մարթ էր անկասկած ստուգել զամենայն բառս հայկականիս. այլ զի գիտեմք զառաջին եռանդն ուսմանց և մակացութեանց ,նուազել յարաբացիս յաւուրս Կոստանդնի, 'ի դէպ թուի յառաջ քան զնորա ժամանակս (քան զկէս Ժ դարու) համարել զնոցայն թարգմանութիւն. որում երաշխաւոր համարիմ և զառորէ հին թարգմանութիւն գրոցս, որոյ գտաւ օրինակ գրեալ յ'Թ դարու. և այս եւս յաւելու փաստս զընագիր գրոցս յառաջեցուցանել քան զայժմու յոյն բնագիրն. և հաստատել հարազատագոյն գործ Անատոլեայ։ Ի թարգմանել հայոյն առընթերակայ թուի և արաբացի լեզուագէտ. կամ երկոցուն միաբան թարգմանեալ...

« Առաւել եւս ըղձալի է մեզ գիտել զստոյգ տեղի և ժամանակ և զանձն հայերէն թարգմանչին, զոր զըլանան մեզ երեքին եւս օրինակք գործոյս՝ որք 'ի ձեռին մերում նորագիրք և անյիշատակք։ Համարիմք յաւուրս տիրապետութեան Ռուբինեանց երկասիրեալ, և 'ի Կիլիկիա... Իսկ ժամանակ թարգմանութեան կարծեմ զԺԳ դար՝ վաղագոյն քան թէ անագան »...

ՎԱՐՔ ԱՂԵՔՍԱՆԴՐԻ

(ԿԱԼԼԻՍԹԵՆԷՍ · PSEUDO-CALLISTHÊNE)

Աղեքսանդր մեծն մակեդոնացի, անուանի իր քաջագործութեամբք և աշխարհահռչակ համբաւով.

զբաղումն 'ի հին մատենագրաց՝ 'ի յունաց և 'ի հռոմայեցւոց, ոչ լոկ զարմացող՝ այլ և դրիչ ունեցած է իր բազմարկածեան կենաց և քաղաքայաղթ արութեանցը: Աւանդութիւն մը կ'ուզէ հաւատարմացընել թէ առաջին շարագրիչ իր վարուց եղած ըլլայ նոյն ինքն Արիստոտելէս՝ մանկութեանը իմաստուն և իմաստասէր դաստիարակը:

Չենք կրնար զրուցել թէ որչափ է այս կարծեաց և աւանդութեան ստուգութիւնը: Միայն նոյն իսկ բանիբուն և ուղղախոհ անձանց վկայութեամբ, թէ առ հինսն և թէ մանաւանդ առ նոր քննադատս, ստիպուած ենք խոստովանիլ թէ իր անուանը և գործոց հռչակը օրինաւոր սահմանի մէջ չմնալով, շողոքորթք ոմանք ժամանակակիցք՝ և դիւրահաւան հետագայք, առասպելական կերպարանք մը տուած են իր վարուց պատմութեան, անգամին իր ծննդեանը պարագաներուն և ընդհանրապէս ամեն գործոց մէջ ուզելով աստուածոց նաև նիւթական գործակցութիւն և միջամտութիւն երևցընել: Հնութեան մեզի աւանդած այսպիսի երկասիրութիւնք՝ հաւատարիմ հաւաստիք են այս կարծեաց, որ ինչպէս ըսինք՝ ընդհանրապէս շատ բանասիրաց հաւանութեան և կարծեաց դրոշմը կը կրէ:

Այսպիսի ոճով գրուած աղեքսանդրեան պատմութիւն մը կը գտնուի նաև 'ի մեր հայկական մատենագրութեան, հին և ընտիր թարգմանութեամբ 'ի հելլեն սկզբնագրէ:

Որո՞ւն արդեօք կը վերաբերի այս հեղինակութիւն, կամ ով է անոր հայ թարգմանիչը:

Մթին և անորոշ է հայկական բանասիրութեան այս կարևոր խնդրոյն նկատմամբ ունեցած տեղեկութիւնը, որով հարցասիրաց և քննադատից տալու-ցյալը և պատասխանը:

Փրէյնսհէմիոս, հելլէնագէտն և բազմահմուտ հնա-

խոյզ, Աղեքսանդրի Մեծին վարուց պատմըչաց Թուարկութիւնն ըրած ատեն, որ սիրեցին տաղաչափելեք պաճուճել զկենսագրութիւն քաջի աշխարհակալին. կը յիշէ զԵսովպոս ոմն յոյն, և յետ նորա զԿալլիսթենէս՝ 'ի նոյն ազգէ։ Անոնց հետևող կը համարի և 'ի լատինաց զՎալերիոս, որն այնպիսի ոճով և հանգամանօք շարագրած է մակեդոնացի աշխարհակալին վարքը լատին լեզուով։

Ենթադրեցին հետագայ դարուց բանասէրք թէ Վալերեայ այս երկասիրութիւնը Թարգմանաբար հետևողութիւն կամ նմանութիւն մը ըլլայ մեր հիմայ յիշած երկու յոյն մատենագրաց. այս զանազանութեամբ՝ միայն որ ոմանք Եսովպոսի Թարգմանիչ կարծեցին զնա, իսկ այլք Կալլիսթենեայ։ Առաջիններուն կարծիքը աւելի հաւանական կ'երևնար։ Մեր դարուն հռչակաւոր ծիրանաւորն Մայ՝ որուն ջանից և բազմահմուտ հետազօտութեանց այնչափ պարտական է ուսումնական բանասիրութիւն, այս կարծեաց հետևող եղած է. մանաւանդ զի Միլանոյ Ամբրոսեան կոչուած մատենադարանին մէջ՝ իններորդ դարու գրչագիր մը յաջողեցաւ գտնել, որ 'ի գլուխ մատենին յայտնի և որոշ կերպով կը կրէր Վալերիոսի անունը։

Բաղդատելով զմեր Թարգմանութիւն Վալերիոսի անունը կրող այս երկասիրութեան հետ, որուն սկզբնաւորութիւնը կը պակսի առ հնութեան գըրչագրին, իրարու մեծ նմանութիւն կը գտնենք, բաց 'ի քանի մի տարբերութեանց, և պատմական դիպաց դասակարգութեանց փոփոխութիւններէ։ Մայ՝ անանուն հեղինակ մ'ալ յաջողած էր գտնել՝ որ կը լրացնէր վալերեան գրչագրին Թերութիւններն և պակասը, որուն իտալական Թարգմանութիւնն և հին տպագրութիւն մ'ալ 'ի Վենետիկ (1477) գըտնուեցաւ նոյն քաղաքին մարկոսեան կոչուած մա-

տենագարանին մէջ. որ գրեթէ բոլորովին համաձայն կ'երթայ մեր Թարգմանութեան և վաւերեան երկասիրութեան հետ, թէպէտ այս վերջինս միշտ նախընտիր մնալով իր առաւելագոյն ճշգրտութեամբը: Ասով գրեթէ անտարակուսելի կրնար սեպուիլ որ մեր հայկական Թարգմանութեան սկզբնագիրն ըլլայ Եսոմպոսի աշխատասիրութիւնն. և այս կարծիքն ընդունուած է նաև 'ի հրատարակողաց մեր տպագրին (1842):

***

Քիչ առաջ յիշեցուցինք թէ ի՛նչպէս ենթադրութիւն մ'ալ եղած է առ նախնիս թէ Աղեքսանդրի վարուց և պատմութեան առաջին գրիչն եղած ըլլայ ստագիրացի իմաստասէրն: Մեր Թարգմանութեան մէջ՝ զառաջին մասն եւեթ երկասիրութեանն՝ իրեն ընծայուած կը գտնենք, 'ի վերջ հարիւրերորդ երեսներորդ չորրորդ գլխոյն կարդալով հետևեալ տողերը. «Կատարեցան ծնունդք և գործք Աղեքսանդրի մակեդոնացւոյ, գրեալ յիմաստնոյն յԱրիստոտելէ: Արդ սկսանիմք և զգալն 'ի Պղատեայ քաղաք Աթենացւոց»: Տարակոյս չկայ որ այս տեղեկութիւնը թէպէտև միայն մեր Թարգմանութեան մէջ կը գըտնուի, պակասելով թէ՛ 'ի յոյն և թէ 'ի լատին օրինակս, բայց Թարգմանչին կողմանէ եղած յաւելուած մը չէ, և չի կրնար ըլլալ. հարկ էր որ դիմացը գըտնուած սկզբնագրին մէջ գտնուէր, և յորմէ առեր է հայ Թարգմանիչը:

Բայց արդեօք ստուգապէս Արիստոտելի՞ է պատմութեանս այն մասը՝ որ իրեն կ'ընծայուի: Ողջամիտ բանասիրութիւն դիւրաւ և վստահութեամբ չկրնար ընդունիլ զայդ Թուխս, գէթ իրեն ամբողջութեամբը: Վասն զի աղեքսանդրեան այս կենսագրութեան մէջ

թէպէտ այլեւայլ տեղ զառասպելս խառնուած կը գտնենք ընդ ստուգութեան, բայց յաճախագոյն եւս՝ Արիստոտելի տրուած սոյն առաջին մասին մէջ. և չենք կարծեր որ մեծանուն իմաստասէրը այդպիսի անարժան միջոցի մը դիմած ըլլայ՝ իր նախկին աշակերտին փառքը և մեծութիւնը յաճախելու, որուն կարօտ ալ չէր Աղեքսանդր. և որ ինչպէս կ'աւանդուի առ հինս, աւելի կը փափաքեր Հոմերեան քերթուածոյն մէջ Թերսիտէս մը ըլլալ, քան հետեւակ և շողոքորթ մատենագրաց քով՝ որպէս կ'առաջարկէին իրեն, Աքիլլեւս: Այս զգօնական միտք և խորհուրդը՝ իր սրտին մէջ նախկին ազդողն եղած է անշուշտ ինքն Արիստոտէլ, և յորմէ ինքն չէր կրնար պակսիլ: Իր անըստագիւտ վարքն և թողած երկասիրութիւնք ալ՝ երաշխաւորութիւն են մեր այս կարծեաց:

Սակայն այսպիսի անպատեհութեամբն ալ՝ գըրուածքիս առաջին մասը՝ բովանդակ երկասիրութեան ամբողջութեան ազնուագոյններէն մէկն է՝ նաև իբր մատենագրութիւն, զոր մատենագիրը ընթերցողը յայտնապէս կը տեսնէ, և որուն պսակ կրնայ սեպուիլ՝ Իսմենէս քերթողին յօրինած և 'ի լաւր յաղթող աշխարհակալին կարգացած « դորովալի տաղը և աղէտական երգը »:

Պատմութեանս երկրորդ մասը կը պարունակէ Աղեքսանդրի մուտքն 'ի Պղատէա և յԱթէնս. ամէն տեղ իր համբաւոյն և քաջագործութեանց արժանաւոր մեծարանօք, ուր և պատգամք աստուածոց 'ի տաճարս և 'ի մեհեանս՝ կը դրուատեն և անոր պահուած մեծագոյն ապագայն կը գուշակեն: Կը պատրաստուի ապա արշաւել 'ի վերայ Դարեհի, խորտակել վանել պարսկական աննկուն կարծուած բանակներն և զօրքը. և այնպէս ընդարձակել իր Թագաւորութեան սահմաններն: Կ'ահաբեկի Դարեհ, կը գամարէ կը ժողովէ իր զօրագլուխներն. խորհուրդ՝

խրատ խնդրել անոնցմէ թէ ինչ պէտք է ընել. «Որպէս տեսանեմ, կ'ըսէ. ըստ յառնելոյ պատերազմել յառաջ անցանէ Աղեքսանդրոս գալ 'ի վերայ մեր. բայց ես զնմանէ աւազակաբար իբրս կարծէի ընդ միտ ածել. սա աւանիկ թագաւորական գործս առաջի արկեալ գործէ: Եւ որքան մեք մեծ գոլ թուիմք պարսիկքս, մեծ ևս Աղեքսանդրոս համարձակութիւն յանձն առեալ երբէք... կատարելապէս խրատեալ. 'ի վերայ իմ հասեալ վարդապետիս իւրոյ՝ գայ բոլորից յաղթել: Բայց եկայք խորհեսցուք զօգուտն հասարակաց. երկուցեալ եմ մի գուցէ մեծն քան զնուազն նկուն գտցի 'ի ժամանակի, և վերին նախախնամութիւնն զփոփոխումն թագիս նմա փոխանորդեալ առնէ »: Արքայից արքային ահաբեկ երկիւղն ու տագնապ՝ իրականութիւն մը պիտի ըլլար. կենացը հետ՝ իր փառաւոր թագն ալ պիտի տեսնէր խորտակուած փշրած՝ թշնամւոյն յաղթական զինուց առջև: Կ'իմանայ Աղեքսանդր թէ դաւաճանք և մատնիչք՝ 'ի նախարարաց Դարեհի, 'ի մահ վիրաւորեր են իրենց տէրն ու թագաւորը, և անտեղեակք իր սրտին և հոգւոյն մեծութեան՝ վստահութեամբ կարծեր են Աղեքսանդրի հաճոյական ու վարձուց և պարգևաց արժանի գործ մը ըրած, կը վազէ. կը փութայ յապարանս արքունի. կը գտնէ զնա կիսամահ, ու այն աղէտալի տեսարանէն գործված, կը մոռնայ զատելութիւն. արտասուս յականաղբերէն գետաբար հոսելով, — կ'ըսէ պատմիչն — տխրեալ ծմրէր. և քղամիդաւն ծածկեալ զմարմինն Դարեհի, իբրու զի թագաւոր էր, 'ի վերայ թագաւորի թշուառութեանցն տխատէր տրտմեալ. զձեռն եդեալ 'ի վերայ Դարեհի լանջացն ողորմութեամբ լի, այսպիսի բանս առ նա խօսեցաւ. Արի կաց 'ի քումմէ երկրէդ ով արքայ Պարսից մեծդ Դարեհ. և քոյոյդ տէր լեր դարձեալ. կալ զքո թագաւորաստան բազմութիւնսդ. առ 'ի քեզ զքոյ մե-

ծութիւն փառացն՝ զթագ արքայութեան։ Երդնում քեզ, Դարեհ, 'ի վերնական նախախնամութիւնն և յաստուածան ամենայն, զի ճշմարտութեամբ և ոչ կեղծեալ խաբէութեամբ ասեմ զայս քեզ. քանզի քեզ միայն ըղձիւք խնդրեմ զթագդ և զկայսերական գաւազանդ լինել՝ զոր ունէիր... Արդ արի յոտն կաց և կալ զքո աշխարհ. կանգնեա զքեզ 'ի քաջալերութիւն յանձն առնլով, զի օգուտ ոչ է պարտ եւս թագաւորի թշուառացելոյ տրտմել »։

Իսկ Դարեհ մահուան ու պարտութեան տագնապէն առիւծաբար հեծեծագին մռընչելով, ինչուան այն վայրկենին թշնամի ձեռուընները կը կարկառէ առ Աղեքսանդր, « և պատատեալ զնովաւ ասաց. Աղեքսանդրէ, մի երբէք գուցէ բարձրացիս հպարտութեամբ ընդվզեալ 'ի թագաւորական փառսդ. քանզի յորժամ զգործ հանգիստասացուած գործեսցես, և յերկինս ձեռօք թուեսցիս հասանել, ընդ միտ ած և գիտա զհանդերձեալսն. քանզի դիպուած բախտ ոչ գիտէ զթագաւոր և ոչ զիշխան... տես թէ որպիսի՝ ինչ էի աշխարհակալ, և այժմ զինչ եղէ թշուառականս. տեարս երկրի, որ և ոչ անձինս տէր եղեալ մեռանիմ»։ Ու կը յաւելու պատմիչն. «Զայսքան ասացեալ Դարեհի բանս անդարձականս՝ եհան զոգին 'ի գիրկս աշխարհակալին Աղեքսանդրի։

Այս սրտաշարժ դրուագին վրայ յերկարեցինք կամաւ, գրքին ու անոր հայկական թարգմանութեանն գոյզն ճաշակ մը տալու դիտմամբ։ Աւելցընենք ըսել՝ թէ այսպիսի է բովանդակ երկասիրութեանս մատենագրական ոճոյն ընթացքը, յորում և իր արժանաւոր յարգը, և մեր հայկական մատենագրութեան մէջ գրաւած տեղը։

***

Մեր հայկական տպագրէն քիչ ետքը՝ Կարոլոս
Միւլլէր գերմանացի՝ հնութեան առ մեզ աւանդած
մեծին Աղեքսանդրի վարուց և քաջութեանց պատմը-
չաց գիտնական հաւաքմունք մը հրատարակեց առ
Տիտոյի 'ի Փարիզ(1846)։ Այս հետաքննական և բազ-
մահմուտ խմբագրութեան խորագիրն է. Reliqua
Arriani, et Scriptorum de rebus Alexandri Magni
fragmenta collegit, Pseudu — Callisthenis histo-
riam fabulosam ex tribus codicibus nunc primum
edidit . . . Carolus Muller. Երկրորդ մասին ալ՝ որ
աւելի վերաբերութիւն ունի մեր նիւթին հետ. Scri-
ptores rerum Alexandri Magni fragmenta collegit,
disposuit, vertit, annonatione instruxit, de vitis
scriptisque auctorum disseruit, indicem plenissi-
mum adjecit Carolus Mullerus. Այս հատորին մէջ
ամփոփուած կը գտնենք երեսուներեք յոյն հեղի-
նակաց պատմութիւնք և հատուածք՝ Աղեքսանդրի
մեծին վարուց վրայ. և որոց 'ի գլուխ գրուած է
Կալլիսթենի անունը և երկասիրութիւն։

Կալլիսթենէս՝ Աղեքսանդրի և Արիստոտելեայ ժա-
մանակակից իմաստասէր մ'էր յՈղինթոսէ, Դեմո-
տինեայ՝ կամ ըստ այլոց՝ իւրեն համանուն հօր որդի։
Ոմանք կ'աւանդեն թէ աշակերտակից և ուսմնակից
ալ եղած ալ ըլլայ Աղեքսանդրի առ Ստագիրացւոյն.
և յետոյ աշխարհակալ մակեդոնացւոյն մտերիմ բա-
րեկամութեանն ալ պատուեալ, անբաժան 'ի նմանէ
նաև 'ի դաշտս և 'ի վտանգս մարտից և պատերազմաց։
Տեսող և վկայ իր մեծամեծ և քաջարի նահատակու-
թեանց՝ անոնց պատմութիւնը հաւաքեր և գրի վրայ
առեր է Կալլիսթենէս՝ ըստ ոմանց նոյն իսկ Աղեքսան-
դրի կամքովը և առաջարկութեամբ։ Այս պատմու-

թիւնն է՝ զոր վերը յիշուած ուրիշ հեղինակաց գրուածոց հետ՝ գրչագրաց բաղդատութեամբ հրատարակեց Կ. Միւլլեր։ Pseudo-Callisthenes primum edidit Carolus Muller, 'ի ստորեւ իջեց յոյն բնագրին աւելցընելով նաեւ զլատին թարգմանութիւն։ Համառ և ընդարձակ ներածութեամբ կը ջանայ հաւաստարիմ առնել թէ աղեքսանդրեան ամէն առասպելախառն պատմութեանց գլխաւոր աղբիւր՝ Կալլիսթենեայ ընծայուած այս երկասիրութիւնն է։ Եռովպոսի կարծուելուն պատճառ զայն կը բերէ, նաեւ ուրիշ հմտից խօսքովը, որ ընդհանրապէս համանուն առակախօսին գրուածոց հետ միայար կը գաղափարուէր 'ի գրչագրաց այս առասպելախառն պատմութիւն. և որպիսի օրինակք գտնուեն պահուած են՝ կ'ըսէ, յազգային մատենադարանին Փարիզու, 'ի գըրատան համալսարանին որ 'ի Լէյտա և այլուր։ Իսկ զՅուլիոս Վալերիոս՝ կեղծ անուն մը կը սեպէ։

Տասուիրեք յունական իրարմէ նուազ կամ առաւելագոյն հնութիւն ունեցող գրչագրաց բաղդատութեամբ ըրած է Միւլլեր իր տպագրութիւնը։ Անոնց մէջ օրինակ մը կայ որ միւսներէն աւելի նմանութիւն ունի հայկական թարգմանութեան հետ. և որուն ընթերցուածները զետեղեր է 'ի ստորեւ իջեց 'ի ծանօթութեանն, բնագրին մէջ վարուելով աւելի հնագոյն կամ վաւերական սեպուած օրինակաց հետեւողութեամբ։ Իրեն ընդունելի յունական գրչագրաց սկզբնաւորութիւնը՝ մինչև ցկէս առաջնոյ գլխոյն կը տարբերի 'ի մերոյն. մինչ Փարիզու ազգային մատենադարանին չորրորդ (E.) գրչագիրն, — և է այն՝ որ ինչպէս ըսինք, աւելի համեմատ է մերոյն, գրեթէ ճիշդ հայկական թարգմանութեան սկզբնաւորութեամբ է։ Οἱ γὰ σοφώτατοι τῶν Αἰγυπτίων, θεῶν ὄντες ἀπόγονοι, οὐρανίους ἀστέρας ἀριθμήσαντες, γῆς καὶ θαλάσσης μέτρα καταλαβότες, ἔδοξε τούτοις μὴ λανθάνειν

οὐδέν. Λέγουσι γάρ ὅτι ὁ Νεκτεναβώ τῆς βασιλικης τιμῆς ἐξέπεσε, καὶ μαγικῇ δυνάμει χρώμενος καὶ αστρονομιας ἀκριβῶς ὢν πεπαιδευμένος . . . Ասանկ՝ գրեթէ բովանդակ գրուածքին հետ համեմատ կ'ընթանայ, որուն քննութիւնն կը թողունք աւելի ձեռնհաս բանասիրաց։ Հարկ է միայն յիշեցընել՝ որ ինչպէս սկզբնագրին, ասանկ ալ և աւելի՝ անոր վրայէն եղած հին թարգմանութեանց մէջ յաճախ կը գտնուին գրչաց քմահաճ փոփոխութիւնք և յաւելուածք։ Մեր օրինակաց մէջ ալ քիչ չեն այսպիսիք, չպահելով միշտ թարգմանչին սկզբնական հարազատութիւնը։

***

Որո՞ւն արդեօք կրնանք պատշաճեցընել մեր հայկական թարգմանութիւնը։

Հինգերորդ դարու, կրտսերագոյն դասու թարգմանչաց աշխատասիրութիւնն ըլլալը տարակոյս չի վերցըներ։ Բայց անոնցմէ որո՞ւն ըլլալուն՝ ստուգութեամբ բան մը չենք կարող ըսել։ Ոմանք ենթադրեցին թէ Խորենացւոյն երկասիրածն ըլլայ, մինչ այլք չեն համարիր զայն հաւանական։ Այս միայն քաջայայտ է որ Խորենացւոյ ծանօթ էր, և կը հաստատարմացընեն այլևայլ հատուածք որ 'ի նոյն գրոց առնուած և զօդուած են 'ի պատմութեան նորա։ Այսպէս յ'էջ 28 մեր տպագրին Աղէքսանդրի պատմութեան. «Եւ էր դէմ յանդիման տեսանել զԼապիթեայցն և զյուշկապարկացն կռիւս, և 'ի վերայ Պերիթեայ հարսանեաց եղեալըն. քանզի ոմանք 'ի նոցանէ ընդ գահոյանովն մտանէին, և ոմանք սեղանօքն իբրու զինուք պարէին, և այլք 'ի խաւարին տեղիս դիմեալ անկանէին։ Եւ անդ էր տեսանել նոր ոմն Ոդիսեւս և ըզՊենելոպպայ սեղեխան զի սատակելով ելանէր»։ Այս հատուածը գրեթէ բառական ճշդութեամբ կը գըտ-

նենք առ Խորենացւոյն (Բ. կգ)։ Ց'էջ 41. «Քանզի զքաղաքն դեռ եւս անդր լինելով Աղեքսանդրու չէ-ներ'ի տուրբ քան և հինգէն. և զնոյն ինքն զՄեհեան օծին՝ ուստի զօձս զայսոսիկ պաշտեն-բարապանք»։ (Տես Խորենացի, Գ. կբ)։ Դարձեալ 'ի նոյն էջ 41, և 'ի նոյն գլուխ պատմութեան Խորենացւոյ. «Եւ գը-տեալ 'ի վեր հինգ բարձրագունիցն բարձրաւանդա-կաց զերկիրն, որ է արեգական և Եղիոճեայ սիւնք, և զցիւցազինն տաճար, խնդրէր և զսերապեան տա-ճարն յետ հրամանի պատասխանւոյն որ տուաւ նմա յԱմոնայ, և զայն որ քան զամենայն հզօրագոյն սա-տուածն է։ Քանզի ասաց այսպէս հրաման պատաս-խանւոյն աստուածոց. եթէ ով թագաւոր, քեզ Փիւ-գոս (յոյնն Փէբոս) խոյեղջիւր (յոյնն μιλοχέρος) ասեմ. զի թէ կամիս յաւիտեան անծերանալի կալ մնալ, շինեա քաղաք նշանաւոր Պրոգիտգայ կղզւոյ, որոյ առաջոյ անցեալ նստի Պղուտոնիոս հինգակա-տար գագաթամբք զանսպառ աշխարհ»։ Աւելորդ կը սեպենք նոյն Խորենացւոյ ընծայուած Պիտոյից գրոց մէջ գտնուած նմանութիւններն յառաջ բերել։

Ի մեր մատենագարանի պահուած գրչագրաց նկա-րագիրը տրուած է արդէն յընդարձակ և 'ի համառ յառաջաբանի տպագրին։ Ուրիշ մատենագարանաց ցուցակներու մէջ անոնցմէ աւելի հնագոյն օրինա-կաց յիշատակութեան չենք հանդիպած։

ՎԿԱՅԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ

(MARTYROLOGES)

Մեր երանաշնորհ նախնեաց նուիրական ձեռաց մեծագին ընծայք պետք է համարուին բազմաթիւ վարք և վկայաբանութիւնք սրբոց՝ հին դարուց երկիւղած աւանդութեամբ հասած առ մեզ։

Ասոնցէ բազմագոյնք՝ արևելեան և արևմտեան սրբագիր պատմութեանց կարևոր մէկ պակաս մը լեցնելով իրաւամբք նախանձելի և հետաքննական են՝ թէ՛ ամբողջութեամբ և թէ մանաւանդ փափաքելի հաւատարմութեամբ։ Վասն զի այս նիւթով զբաղող նոյն իսկ արևմտեան բանասիրաց վկայութեամբ՝ յոյն և լատին եկեղեցեաց մէջ գտնուածներն՝ գրեթէ պատառիկք են հին քրիստոնէութեան մէջ ամբարուած ճոխ գանձարանին. հազիւ անաղարտ հասած ըլլալով մինչև առ մեզ՝ սակաւաթիւ յիշատակք որ յաջողեր են խալըսիլ յաւերածոց ժամանակաց, 'ի մոլեգնական ստահակութենէ հալածանաց, ու երբեմն նաև յանհոգութենէ և կամ 'ի դիւրահաւանութենէ քրիստոնէից։

Եւսեբեայ կեսարացւոյ համար կ'աւանդեն թէ առաջին եղած ըլլայ 'ի հաւաքել զվկայաբանութիւնս մարտիրոսաց. իրմէ առաջ ալ Դիոնեսիոս եպիսկոպոս Աղեքսանդրիոյ յերրորդ դարու, որ գրի վրայ առնելով՝ աւանդեց 'ի դիւանս իր եկեղեցւոյն՝ Դեկոսի հալածանաց ժամանակ յԵգիպտոս վկայողաց պատմութիւնը. բայց ասիկայ պարզապէս տեղական ու մասնաւոր հաւաքմունք մ'էր. ուր Եւսեբիոսի երկասիրածը կրկին էր. մին՝ ընդհանուր եկեղեցւոյ պատկա-

նոր սրբոց և վկայից, իսկ միւսն մասնական: Առաջինն էր վկայաբանութիւն այն ամենայն մարտիրոսաց՝ որ պսակեցան 'ի ժամանակս այլ և այլ կայսերաց և իշխանաց և 'ի զանազան տեղիս և 'ի գաւառս՝ մանաւանդ 'ի սահմանս հռովմէական ընդարձակածաւալ կայսերութեան, և զոր կոչեց Հաւաքումն պատմութեան մարտիրոսաց հնոց: Այսպիսի աշխատասիրութիւն մը դժուարին չէր Եւսեբեայ համար, որուն բացուած էին զանազան քաղաքաց մէջ գտնուած մատենադարանք. և որ կրցեր էր ուսումնասիրաբար հետազօտել գրեթէ ամենայն գլխաւոր եկեղեցեաց դիւանները, և յորս սովորաբար խնամով կը պահպանուէին սրբոց վարք և վկայաբանութիւնք: Եւսեբեայ երկրորդ աշխատասիրութիւնն էր Հատընտիր մը վարուց սրբոց որ վկայեցին 'ի պաղեստինացւոց աշխարհին:

Առաջինն արդէն կորսուած էր 'ի վեցերորդ դարու. վասն զի յայնմ ժամանակի կը գրէր պատրիարքն Կոստանդնուպոլսի Եւլոգիոս առ մեծն Գրիգոր քահանայապետ եկեղեցւոյն Հռովմայ թէ այդ գրուածքին օրինակը ինչպէս ոչ 'ի Հռովմ՝ ասանկ ալ չէր գտնուէր 'ի մատենադարանս Կոստանդնուպոլսի: Վրայ հասան բարբարոսաց արշաւանք, որ ողողեցին՝ տակնուվրայ ըրին զսահմանս կայսերութեան, ու քանդելով տապալելով հրոյ ճարակ տուին զմատենադարանս Հռովմայ և զամենայն արևելից. որով անհետացան բարձան ամենայն հաւաքմունք վկայաբանութեանց սրբոց: Այս մեծ կորուստը դարմանելու համար՝ հարկ եղաւ որ միջին դարուց մէջ իմաստունք և սրբասէրք ետևէ ըլլան նոր ջանքով և հետազօտութեամբք՝ անկորուստ մնացածներն հաւաքել, և պակասը 'ի նորոյ լեցնել: Այսպիսի երկրորդ աշխատասիրութիւն մը՝ 'ի հարկէ չէր կրնար ունենալ առաջնոյն ամբողջութիւնն և վաւերական հարազա-

տութիւնը. ժամանակի հեռաւորութիւնն՝ հարկ էր որ անոնց մէջ ալ երևցընէր իր ազդեցութիւնը։

Բարեբաղդաբար մեր ազգին մատենագրութեան համար՝ այն երեք դարուց միջոցին որ ընդ երրորդն և ընդ վեցերորդ. կը փայլէր պայծառութեամբ հինգերորդն՝ ոսկեղէն դար մեր լեզուին։ Թարգմանիչք՝ յերկար յունաբանական դեգերմանն՝ մտադիւր փութով եռանդ եղեր էին 'ի հետազօտութիւն և 'ի քննութիւն գիտնոց և մատենագարանաց. հմուտք և տեղեակք յոյն և ասորի լեզուաց՝ ամէն տեղ մեծարուած էին և սիրելիք. Եդեսիա, Աղեքսանդրիա, Բիւզանդիոն և ուրիշ գլխաւոր քաղաքք արևելից՝ դիւրացուցեր էին անոնց ամէն միջոց, կարծես թէ գուշակելով թէ Հայաստան մեծապէս երախտապարտ պիտի ըլլար իրենց՝ պահելով այնչափ և այնպիսի մատենագրական ճոխութիւնք՝ որ անգիւտ կորսուեան պիտի դատապարտուէին իրենց բուն հայրենեաց մէջ։

Այսպիսի գրուածոց կարգէն են և վկայաբանութիւնք, յորոց բազմագոյնք 'ի յունէ փոխադրուած են 'ի հայ, և ոմանք նաև յասորականէ։ Արդէն քրիստոնէութեան կրօնից 'ի Հայաստան սկզբնաւորելէն՝ աստուածաշունչ գրոց ընթերցման հաւասար՝ սիրելի եղած էին, և ինչուան յեկեղեցիս մասն ունեցած սրբոց վարուց կարդացմունք. առաջնոյն խօսքերով և վարդապետութեամբ՝ իրենց հաւատքը և անոր վրանին գրած պարտքերը կը սորվէին, երկրորդին մէջ ալ՝ հրաշալի ու քաջալերիչ օրինակներ կը տեսնէին, որ կերպով մը կը մոռցընէր իրենց զերկիր, կը խեղդէր սրտերնուն մէջ՝ անոր հաճոյից ու հրապուրանաց պատրանքը, ու կը խրախուսէր զաչս հոգւոյն դարձնել յերկինս՝ 'ի բուն և 'ի ճշմարիտ հայրենիս։ Տեսանք թէ որպիսի սրտով ու գրչով արձանագրուած են Հայաստանի առաքելոյն ու անոր վկայակցին՝ սըրբուհւոյն Սանդխտոյ մահ և նահատակութիւն՝ գը-

րեթէ անգատին 'ի ժամանակակցացն. երբ Սանատրըկոյ սուրն և անելութիւն կը հալածէր զնորածին քրիստոնէութիւն, անոր աստուածահրաշ խանձարուրքը արեան լճերու և մահուան սուսերաց մէջ ուզելով թաղել: Թէ այդ բարի սովորութիւն՝ ընթեռնըլու 'ի լոյս և 'ի քաջալերս հաւատացելոց զվարս սըրբոց, կը շարունակէր ուր որ սրբութեան կրօնք կըրցեր էին ապաւինի տեղ մը գտնել, մինչև 'ի ժամանակս Լուսաւորչին և իրմէ ետքը. կը հաւատարմացընեն մեր պատմագիրք: Թարգմանչաց արդիւնաւոր վաստակն եղաւ այլ և այլ փոխադրութեամբք յօտարաց ալ աւելի ընդարձակութիւն տալ այդ գովելի սովորութեան. բայց ինչպէս իրենց ուրիշ երկասիրութիւնք՝ սոնք ալ մասամբ եւեթ կրցան մեր ձեռքն հասնիլ, և ոչ միշտ ազատ յօտար ձեռնձգութեանց:

***

Հոգեսէր ընթերցողը անոնցմէ ամենէն աւելի հընագունից մէջ՝ նորահրաշ քաղցրութեան վայելք մը, սրտի սփոփանք և սնունդ մը կը գտնէ. առերևոյթ պարզութեան մէջ՝ ոճոյ այնպիսի վայելչութիւն մը որ կը յափշտակէ և կը զմայլեցընէ, և յորում կարծես թէ հեղինակին գրիչը ոչ այնչափ մելանաւ, այլ նոյն իսկ սրբոց՝ որոց վարքն ու նահատակութիւնը կը պատմէ, անմահարար արեամբ խառնուած է, արքայութեան բուրմամբ: Աւելի նորագունից մէջ՝ այս յատկութիւնք կը նուազին, կամ նոյն առատութեամբ չեն երևար, և զարմանալին՝ երբեմն իր օրինաւոր սահմանէն անդին կ'անցնի: Գաղափարողաց ալ կըրնանք ընծայել զայս, որ բազմաթիւք էին, և ոչ միշտ հաւասարք 'ի գիտութեան և յերկիւղած զգուշաւորութեան:

Ինչպէս մեր նախնեաց բազմաթիւ երկասիրու-

թեանց, վկայաբանութեանցս մէջ ալ յաճախ թարգմանչին անունը անծանօթ կը մնայ մեզ։ Բայց 'ի մետասաներրորդ դարու մեր գրութեան կը փայլի Գըրիգոր վկայասէր հայրապետ, որուն վերագիր անունըն իսկ կը յայտնէ թէ սրբագիր այս մատենագրութեան մէջ ո՛րչափ ջանք և արդիւնք ունեցած է 'ի լըրացուցանել ինչ որ պակաս մնացած էր 'ի նախնեաց. Ժամանակին պատմիչք ալ զայն կը հաւատարմացընեն, ինչպէս քիչ եաքը պիտի լսենք բուն իրենց խօսքերովը։ Սակայն իրմէ յառաջ ալ յանուանէ յիշատակուած կը գտնենք զԳրիգոր ոմն կրօնաւոր՝ որ զվարս Ստեփաննոսի ուլնեցւոյ թարգմաներ է 'ի յունականէ 'ի հայ 'ի Կոստանդնուպոլիս՝ օգնութեամբ Կալոժենայ երիցու. — զհայր Գագիկ և Գրիգոր սարկաւագ՝ որ յասորւոյն թարգմանեցին 'ի մերս զվարս սըրբոյն Մարութայի, ինչպէս կ'ակնարկեն 'ի յիշատակարանին թէ «Թարգմանեցաք յասորւոյն 'ի հայ զվկայութիւն (Մարութայի) ես Գագիկ և Գրիգոր սարկաւագ իմ ընդ իս»։ — Ի վերջկոյս վկայական նահատակութեան Աբդլմսեհի՝ հետագայ յիշատակարանին կը հանդիպինք. «Թարգմանեալ է յասորի գրոց 'ի հայ՝ հրամանաւ տեառն Գուրգենայ արծրունւոյ 'ի թուականութեանս Հայոց ՅԻԲ (—873) 'ի բարեխօսութիւն անձին իւրոյ, Աշոտայ որդւոյ իւրոյ։ Եւ աւանդեաց նոյն ինքն Գուրգէն տանախմբել զօր յիշատակի նորա 'ի մեհեկի ամսոյ երկու»։

***

Վկայասիրին համար կը վկայէ հին գրիչ վարուց Շնորհալւոյն Ներսէսի. «Ունէր (Գրիգորիս) շնորհ թարգմանութեան և միշտ քններ զգիրս ամենայն ազգաց, և զպիտանիսն՝ զոր ըստ մերս թերի գտանէր, թարգմանէր աշխատասիրաբար ինքեամբ և այլովք

ամամբք ճարտարաց, և աւանդէր եկեղեցւոյ սրբոյ, կարգէր տօնս վկայից և արանց սրբոց և պատուէր զնոսա պայծառագոյն տօնախմբութեամբ, և նորագոյն թարգմանեալ ճառիւք։ Եւ ինքն վառեալ 'ի հուր սիրոյ նոցին՝ խառնէր զիւրն մշտաթոր արտասուս ընդ սուրբ և պատուական արիւնս նոցա. որ և ըստ ջերմեռանդն սիրոյն, զոր ունէր առ սուրբ վկայսն՝ զվկայասէր անուանն ընկալաւ. զոր միշտ վերագոչէ եկեղեցի յամենեցուն լսելիս զպարծանաց յորջորջումն»։

Ուրիշ տեղ մ'ալ. «(Գրիգորիս) դադարեալ անդ ('ի Կոստանդնուպոլիս) բազում ժամանակս՝ և առեալ թարգմանէր զվարս սրբոց հարց և զպատմութիւնս վկայից, և զմատեանս ուղղափառ վարդապետաց, և զճառս ներբողենից որ 'ի տօնս տէրունիս և յիշատակս սրբոց. և տայր ցայնոսիկ որ ընդ նմայն էին՝ արք ճարտարք և իմաստունք, յարագագիր գրչութիւն և 'ի գիտութիւն բանի. զոր առեալ վաղվաղակի փոխարկէին, սրբաքանեալ ըստ մերումս բանի, աղորկս ամենևին և քերեալս ըստ քերթողացն արհեստի»։

«Գրիգորիս՝ որդի Գրիգորի Մագիստրոսի պահլաւունի ազգաւ, որ թողեալ զհայրենի պատիւն՝ կրօնաւորութեան հետևեցաւ.... բազում ճառս սրբոց վկայից 'ի յունականէն թարգմանեաց 'ի մերս»։

Ուրիշ մ'ալ, «Սա էր տիեզերական վարդապետ (Գրիգորիս). և բազում պատմութիւն վկայից 'ի հռոմայեցոց և 'ի յունաց և յասորոց թարգմանեաց 'ի մերս»։

Շնորհալի 'ի վիպասանականին.

«Երկրորդ Մեսրովպ մեզ երևեալ,
Զգիրս բազումըս թարգմանեալ
Առ 'ի յունաց և յասորոց
Ճառըս սըրբոց վերաբերեալ»։

Վարդան Մեծն. «Այս ոգանչելի հայրապետս՝ Թարգմանեաց բազում ճառս վկայից Աստուծոյ. և ճառս քերթողական 'ի յունաց և յասորւոց»: – Գրուածքիս մէջ (324) յիշեր ենք նաև այլոց պատմչաց վկայութիւնները:

Մեր ձեռքը գտնուած վկայաբանութեանց մէջ՝ մասնաւոր յիշատակարանաւ՝ Վկայասիրի կ'ընծայուին

Սրբոյն Գէորգայ զօրավարին. «Իրագործեցաւ գործ սքանչելեացս 'ի ժամանակս Փոկասու Տիրանոսի կայսերն Յունաց. և Թարգմանեաց 'ի հոռոմոց 'ի հայս սուրբ քահանայապետն Հայոց մեծաց Գրիգորիոս վկայասէր»: — Վարք և քաղաքավարութիւն սրբոյ հօրն մերոյ Գրիգորի աստուածաբանին Աղիանզու եպիսկոպոսի, զոր գրեաց քահանայ Գրիգոր Կեսարու կապադովկացւոց եկեղեցւոյն, զոր Թարգմանեաց սուրբ գիտապետն Հայոց Գրիգոր վկայասէր 'ի մերս. և սկզբնաւորութիւնն է. «Այսօր հրաւիրեաց զմեզ, ով եղբարք, մեծն Գրիգորիոս, աստուածաբանութեամբ ճոխացեալն»: Ուրիշ ձեռագրի մը խորագրին մէջ կը նշանակուի թէ 'ի յունականէ եղած է թարգմանութիւնն, և սկիզբն է. «Արգ պատմեցից զգօրութիւն և զսքանչելիս»: — Վկայաբանութիւն սրբոյն Ստեփանոսի Հռովմայ հայրապետի և որոց ընդ նմա, և 'ի վերջին յիշատակարան. «Յամին հինգհարիւրերորդի քառասներորդի իններորդի թուականութեանս Հայոց. Թարգմանեցաւ պատմութիւնս հանդերձ այլ բազում ներբողական և վկայական ճառիւք 'ի յունականէն 'ի մերս՝ 'ի ձեռն սուրբ քահանայապետին Աստուծոյ տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի»: — Վկայաբանութիւն սրբոցն Ղամպէոսի և Ղամպէոսեանց ձգնազգեաց վկայիցն Քրիստոսի. «Յամին հինգհարիւրերորդի յիսներորդի երկրորդի 'ի թուականիս Հայոց՝ Թարգմանեցաւ վկայութիւն սրբոցս այսոցիկ 'ի յունականէն 'ի մերս՝ 'ի ձեռն Գրիգորիսի վկայասիրի

սրբազան կաթուղիկոսի Հայոց մեծաց, զոր տէր աստուած պսակակից արասցէ սրբոցն »...։ — Ոնոփրիոսի սրբոյ Եօրն վարք. որոյն յիշատակարանը տես յ՚էջ 542։ — Վարք սրբոյն Գեննադիոսի եպիսկոպոսին Բենեբենդոյ քաղաքի, որոյ թարգմանութիւնը Վկայասիրին կ՚ընծայուի յերուսաղեմեան ձեռագրեր՝ գրչագրելոյ յԵրզնկացւոյն։ Այսպէս նաև վարք և վկայաբանութիւն Պարասկեւեայ կուսի, Լաւրենտի և Ագրիպպայ, Եւդոքսիայ և Ռոմելայ, Վառվառեայ և Յուլիանեայ՝ նման յիշատակագրութեամբք, զորս աւելորդ սեպեցինք կրկնել։

***

Գտնենք հօս նաև զինքնագիր յիշատակարան Վկայասիրին. «Գրիգոր, ամենաթշուառ գրիչ, զամենայն ժողովեալքս աղաչեմ... Այս ինչ կայ 'ի գիրս։ Եւ այս է յիշատակարան տաւնից տէրունականաց, և սրբոց Աստուծոյ. ցուցմամբ աւուրց հռոմի ամսոց ըստ իւրաքանչիւր սրբոց հանգիպմամբ չարչարանաց կատարման, և կամ ըստ խաղաղական ելից հանգըստեան մարտիրոսաց և հայրապետաց սրբոց որք հաճոյացան Աստուծոյ՝ նեղ և անձուկ ճանապարհաւն Յիսուսի։ Զոր ես Գրիգորիս ծառայ Աստուծոյ և գիտապետ հայաստան ազգիս, համարձակեալ վասն սիրոյ վկայից Քրիստոսի՝ յաւելի 'ի նախակարգեալ տաւնան հռոմի ամսոց՝ ընտրեալ 'ի տաւնամակաց, յոքունց՝ զանկաւս, որ 'ի բազմաց անփոյթ էր լեալ, և մեք աշխատեալ՝ զայսպիսի համառաւտահաւաք տաւնամակս գրեցաք, 'ի պայծառութիւն եկեղեցւոյ... զոր մի ոք աւելորդ վարկցի՝ զորոց զվարս քաղաքավարական պատմութեանց զոր ոչ գոյր առ մեզ հայ գրով՝ մեք աշխատութեամբ թարգմանեցաք 'ի յունականէն 'ի մերս գիր և բառ։ Վասն որոյ աղա-

չեմ սրբովք վկայիւքս՝ զամենեսեան առ հասարակ՝
մի անփոյթ առնել զմեր աղէտանս երկս աշխատու-
թեան. այլ ընդաւրինակել գաղափարաւ, և գրելով
պահել յամենայն սուրբ եկեղեցիս. և անխափան
առանց յերկուանալոյ կատարել զկանոն ընթեր-
ցուածիս, 'ի տաւնս յիշատակի սրբոցն: Եւ որ ոք
գրէ զգիրս զայս, աղաչեմ գրել 'ի գլուխս գրոցն ըղ-
գոյզն բան յիշատակի մերոյ՝ և աղաւթիւք յիշել 'ի
'ի Քրիստոս զարարող գրոցս, և զԳրիգորիս համա-
նուն իմ և համազգի, որ և գրիչ և յաւրինիչ
գրոցս»:

Այս յիշատակագրիս վրայ կը յաւելու և Կիրակոս
վարդապետ՝ աշակերտ և գործակից Վկայասիրին՝
զհետևեալս. «Ես Կիրակոս տրուպ գիտնական և ան-
արժան ծառայ Աստուծոյ՝ ծանուցանեմ ձեզ վասն
սուրբ կտակիս՝ տաւնամակի եկեղեցւոյ սրբոյ և
աստուածայնւոյ յիշատակի. որպէս գիտէք 'ի սկըզ-
բանէ հաւատոց մերոց, մեր ուղղադաւան ազգիս ա-
րամեան՝ որգիացեալք աշակերտութեամբ սրբոյն
Գրիգորի, աստուածանման լուսաւորչին մերոյ, հա-
մաւրէն ամենայն սրբովք՝ որ եղեն յազգս մեր հա-
ճոյ Աստուծոյ, զայս գրոյ եկեղեցւոյ անփոյթ արարին
վասն ժամանակին. և մեծ և աստուածային տաւնքն
խաչի կամ աստուածածնի, վկայիցն և սուրբ հայ-
րապետացն, հարցն և ճգնաւորացն և կուսանաց վը-
կայիցն՝ անփառաւոր և անկատար և անյարմար լինէր
առանց այս գրոց: Ապա հոգին սուրբ ազդեաց սուրբ
հայրապետին Գրիգորիսի՝ աստուածասիրի և վկայա-
սիրի. և նոր սկսեալ՝ յաւրինեաց զսա ըստ ամենայն
տաւնից՝ արժանապէս, 'ի դէպ սաղմոսիւք և ընթեր-
ցուածովք աստուածախաւսիւք: Բայց ոչ 'ի գլուխ
աւարտեաց զամենայն, զոր պարտ և արժանէր տաւ-
նելոյ: Ապա ինձ որ միշտ ընդ նմա էի, և յամենայն
իրս աստուածայինս կցորդ և յորդորիչ, և փոյթ

յաշխատութիւն հոգեւորաց և Աստուծոյ սիրելեաց, հոգ եգ 'ի վախճանելն իւրում՝ մի անփոյթ առնել զմանէ. այլ յանկել ընթերցուածովք ըստ արժանին, զօր և արարի »:...

***

Ներսեսի Շնորհալւոյ ալ ընծայուած են քանի մը թարգմանութիւնք կամ սրբագրութիւնք վարուց սրբոց: — Սրբոյն Սարգսի և իր որդւոյն Մարտիրոսի վկայաբանութեան վերջը կը կարդանք. «Թարգմանեցաւ ճառս յասորւոյն 'ի մերս 'ի ձեռն Միխայէլի ուրումն կրօնաւորի քահանայի ասորւոյ, և յարմարեցաւ ըստ կարի՝ մերում լեզուի շարագրութեամբ 'ի Ներսիսէ եպիսկոպոսէ՝ յեղբօրէ կաթողիկոսի Հայոց Գրիգորիսի, 'ի թուաբերութեանս Հայոց ՈԷ »: Ինքն Շնորհալին՝ 'ի թղթին առ Գէորգ արևելեան եպիսկոպոս՝ առաջնորդ Հաղբատայ կը գրէ. «...Առաքեցաք առ եղբարս գերահռչակ ուխտին ասորւոց՝ որ յանուն սրբոյ միայնական ճգնաւորին Մար Պարսամայի՝ առ սահմանաւն Մելիտինւոյ Հայոց, որպէս զի 'ի յարկեղս մատենից իւրեանց հետազօտեալ քննեսցեն, և եթէ գտցի նշանակեալն՝ (վարք սրբոյն Սարգսի) թարգմանեալ տացեն մեզ զխնդրելին... Եւ նոցա ընկալեալ զառ 'ի մէնջ ցուցեալ անուն, և թարգմանեալ՝ որքան էր կարողութիւն՝ ջերմեռանդն սիրով, 'ի ձեռն ուրումն իմաստնոյ Միխայէլ անուն կոչեցելոյ, աղատաբար՝ զմերս գիտողի գիտութիւն, առաքեցին առ մեզ. որ թէպէտ և 'ի յարմարութիւն բանից և 'ի շաղկապս բանից՝ ոչ զուգիւր ընդ մերում լեզուի, սակայն զբնութիւն բանին և զկարգ պատմութեանն ամբողջ ունէր յինքեան: Զոր և մեր ընկալեալ, և ըստ չափու զօրութեան յղկեալ զգիրս բանիցն և զպատմողա-

կանն, առաքեցաք քեզ և հանուրց եկեղեցեաց Հայաստանեաց՝ զանձ երկնային և հոգևոր, որ ծածկեալ էր յագարակի այլալեզու արանց»: — Իրեն ընծայուած են դարձեալ Տարագոսի և Պրոբոսի վարք «Թարգմանեալ 'ի մեր Թուին ՈՁ 'ի Ներսիսէ Շընորհալւոյ՝ յարմարութեամբ բանի և գրութեամբ բառի. իսկ 'ի յունականէն յեղեալ է ձեռամբ Կոստանդեայ քահանայի»: — Վարք և քաղաքավարութիւն երիցս երանեալ Ազնազգեաց վկային Քրիստոսի սրբոյն Պարսամայ Միայնակեցի. «Թարգմանեալ 'ի Գրիգոր քահանայէ և յետոյ հայկաբանեալ 'ի Ներսիսէ Շնորհալւոյ»: Ի վերջ վկայութեան սրբուհւոյն Թեկղի յիշատակարան մը կայ յանանուն թարգմանչէ. «Կատարեցաւ գիրք Թեկղի երանելւոյ: Փառք Աստուծոյ ամենակալի և աւծելոյ իւրոյ և հոգւոյն սրբոյ, որ ետ զաւրութիւն թարգմանչի և գրչի»:

Այսոնք մեզի ծանօթքն, յորոց ոմանք անշուշտ վրիպած մեր տեսութենէն կամ 'ի քննութեանց:

***

Ընդհանրապէս Ճառընտիր կոչուած գրոց մէջ զետեղուած են այս վկայաբանութիւնք. և ինչպէս յայլս 'ի գրչագրաց՝ ասոնց մէջ ալ ընտրելագոյնք անոնք են որ աւելի հնութիւն ունին ժամանակի: Քիչ չեն այսպիսի Ճառընտիրք թէ 'ի մեր մատենադարանի և թէ յայլս. բայց մասնաւոր մտադրութեան արժանի է յազգային գրատան Փարիզու պահուածն՝ երկաթագիր, որոյ յիշատակարանն է. «...Բազում բաղձանաւք... հրաբէր սրտիւ եկի բերել մաւր իմոյ հաւատոյ, այս ինքն քեզ՝ կաթողիկէ սուրբ եկեղեցի, զնազելին և զլոյժ ախորժելի զգերապայծառ զայս հոգևոր վերադիտողացն՝ աստուածարեալ հարցն՝ արանցն աստուածասիրաց աստուածեղէն իմաստու-

թեամբ, Հոգւոյն սրբոյ Ձրիւք, իբրև զգործաւէր մեղու ամբարեալ հաւաքեցին 'ի հոգևոր սենեակս ըղծաղկազարդ վարդապետութիւն աստուածաբանութեամբ, անշարժութեամբ հաւատոց, անարատ խոստովանութեամբ համագոյ Երրորդութեանն և բովանդակ անաւրէնութեան մարգացելոյ Բանին, բազմութեամբ ճառից որ 'ի սմա կան արձանագրեալք հաստատութեամբ հաւատոց ընթերցուածոց գրութեան տաւնական տաւնից տէրունականաց, և 'ի խաչակիր վկայից և սրբոց առաքելոց և մարգարէից բովանդակեալ 'ի ծննդենէն Քրիստոսի մինչև յաւարտումն բովանդակ տարւոյն, որ է կատարումն ընթերցուածոյ՝ տաւն սրբոց առաքելոցն որդւոց Որոտման. լի և լոյ հոյծ և պատարուն լուսայեղց և բազմաժողով, որով բարգաւաճեալ լուսաւորին ընդհանուր ծնունդք որովայնի քոյ. այս ինքն ազգն քրիստոնէութեան բոլոր սեռի ոգեշահ մխիթարութեամբ, անկապուտ ճոխութեամբ զմայլեալ 'ի մեծութենէ սորա՝ նորոգին փառաց 'ի փառս... Արդ եղև գրաւ գրութեան սորա 'ի թուաբերութեան Հայոց 'ի ՈԽԳ, 'ի հայրապետութեան տեառն Գրիգորիսի Հայոց կաթողիկոսի 'ի մանկական տիոց Տըղայ կոչեցեալ, յեպիսկոպոսութեան տեառն Թէոդոսի, առ սահմանաւք անմատոյց բերդիս որ կոչի Տիւրիւկի, 'ի գեաւղս որ կոչի Նեղկուկ. և կատարեցաւ ձեռամբ իմով տառապեալ և յոգնամեղ և ախմար գրչի Ստեփաննոսի, որ յաւժարութեամբ սրտի և անվեհեր փութով գրէի. որ մեծաւ աշխատութեամբ գործ 'ի ձեռս առեալ ջանացայ և յաւարտումն ածի. և ես անարժան այսմ սպասաւորութեան՝ ջան զանձամբ առեալ կատարեցի ոչ իմով զաւրութեամբս, այլ զաւրացուցչին իմոյ Քրիստոսի և առաջնորդութեամբ Հոգւոյն սրբոյ»:

Ի մատենադարանին Էջմիածնի՝ ըստ տպագիր ցու-

ցակին, տասնուերկու օրինակք կը նշանակուին ձառընտրաց, յորս հնագոյնքն 'ի ՉԻԷ, ՊՁԱ և ՊՂԱ. իսկ այլքն՝ կամ անթուականք և կամ նորագոյնք. Եօթներորդն՝ որ Հրաշափառ տօնախմբան անունը կը կրէ, հետևեալ յիշատակարանն ունի. «Ցիշեցէք 'ի բարի զգերագրական հարազատն իմ զորբամնեալ վանականն, զԻգնատիոս զանխուլ խարազն, արթնական ձգնազգեացն և զՅոային բանիբուն փիլիսոփայն, և անհաս նկարող. որ երփն երփն գունով, ծաղկափթիթ զարդարեաց զհրաշափառ մեծ աշուք տօնականս, և կազմեալ զսա արար զձեռագործ սրտորուկ վսեմ հէգ փանաքիս Մատթէոսի, պատարուն լիապէս կատարելունակ. զոր գրեալ կայր սա զամս իբրև քառանից »: Ցետ յիշելոյ զԹադէոս քահանայ և զՍտեփանոս և զհարազատն Արիստակէս և Ցովսէփ, կը յաւելու. «այլ և զկուսութեամբ ձգնեալն և զընաւին պահող քոյր սոցին և սաղմոսող, օրհնութեան արժանի արարէք: Գրեցաւ հրաշափառ տօնականս 'ի վերի նորավանս թուին ՉԵ 'ի փառս Հօր և Որդւոյ »: — Ուրիշ համառօտ յիշատակարանք ալ յընթացս գրոցն. որպէս 'ի վերջ ներբողենի Ոսկեբերանին 'ի Լուսաւորիչն սուրբ. «Ով երանեալ հայր պատուական — Գրիգորիոս տիպ տիրական, — Շմաւոն պետին մեր սրբազան — Ման շնորհեա ողորմութեան. — Չի զհրաշալիս զայս տօնական, — Որ զարդարէ զտօն տէրունական — Եա օրինակ մեզ ըղձական, — Ինքն լիցի 'ի փառս հրձուական »: — Ուրիշ տեղ մ'ալ. «Ողորմեա... յագնիմաստ արփիափայլ րաբունւոյ մեծի Շմաւոնի, և հանճարամիտ համշիրաքին իւր Մարտիրոս փակակալի, որ զայս հրաշալի սուրբ գիրքս՝ հեքոյս Մատթէոսի օրինակ շնորհեցին »:

Ի մատենադարանին որ յԵրուսաղէմ կը գտնուի բոլորգիր ձառընտիր մը գրեալ 'ի ՉՀ թուին. և յիշա-

տակարանն է. «Ցեւթն հարիւրերորդի եօթանաս-
ներորդի հայկազեան տումարի՝ գրեցաւ աստուա-
ծազարդ Ճառընտիրս այս, ձեռամբ մեղսաթաւալ և
յոգնամեղ անձին Վահանայ անարժան քահանայի 'ի
վանքս Դրազարկի, 'ի մեծափառ և հռչակաւոր ա-
նապատն, 'ի դուռն տաճարի մօրս լուսոյ Աստուա-
ծածնի, 'ի թագաւորութեան աղայ արքայի Լեւոնի
որդի Աւշինթագաւորի, 'ի հայրապետութեան տեա-
ռըն Կոստանդեայ... ես ողորմելիս Վահան խաւա-
րեալ աչօք 'ի հալալ որդեանց իմոց և աշխատու-
թեամբ գրեցի զսա պաշար կենաց իմոց և յոյս հա-
մարձակութեան առ Աստուած բազմարիծ անձին
իմոյ... մանաւանդ Զապլունին դստեր Լեւոն ար-
քայի Հայոց և ամենայն եղբայրութեանս... Եւ արդ
ծանուցանեմ ձեզ սուրբ հարք մեր և եղբարք՝ բնա-
կիչք սուրբ ուխտիդ բնակչաց, երկրամերձ գիմօք
աղաչեմ, զի կամէի գալ և լինել երկրպագութեան
արժանի աստուածային գերեզմանիդ ու չյաջողե-
ցաւ... ես զինչ աղէկ գիրք գտայ 'ի վանքս... պատ-
մութիւն՝ ես ձեզ գրեցի որ ընթեռնույք, ուրախա-
նայք ու զիս յիշէք»...: — Ուրիշ գրչագիր մ'ալ
նոյնպէս բոլորգիր, 'ի թուին ՉԼԹ «ձեռամբ Բարսեղ
քահանայի 'ի թագաւորութեան քրիստոսասէրի և
բարեպաշտին Հեթմոյ՝ որդւոյ Լեւոնի»: — Բաւա-
կան հնութիւն և նիւթոց ճոխութեամբ ընտրելա-
գոյն գրչագիր մ'ալ կայ, որուն թուականը կը պակսի՝
'ի սկիզբն և 'ի վերջ քանի մը թերթ ինկած ըլլալով: Ա-
սոր նման ճոխ՝ բայց աւելի նորագոյն օրինակ մ'ալ:
Ամենէն կրնայ ընտիր սեպուիլ Մանուէլ վարդա-
պետի և Յովհաննու Երզնկացւոյ գրչութեամբ ընդ-
օրինակուած մեծագիր Ճառընտիր մը՝ 'ի չորս ըն-
դարձակ հատորս, որոյ գրչութեան սկզբնաւորու-
թիւնն եղած է 'ի ՊԿԶ (= 1417) և աւարտումն 'ի ՊԿԸ
(= 1419): — Ի մեր մատենադարանի գրեթէ երե-

տուն և աւելի օրինակք կան ճառընտիր գրոց, յորոց ոմանք նորագոյն ընդօրինակութիւնք՝ ուրիշ մատենագարանաց կամ հաւաքմանց մէջ գտնուածներուն։ Առաջինն գրուած է 'ի ՈՀԳ (=1224) Թուականին յանապատն Լուսաւորչի, այբուբենի կարգաւ՝ 'ի Թագէոս գրչէ, ունենալով նաև զայլ գործակիցս և օգնականս, որոց անուանք ալ կընշանակուին՝ գրքին մէջ տեղ տեղ գտնուած յիշատակարանաց մէջ, և են հայր Կոստանդին, Ղազար, Վարդան և այլք։ Այսպէս տեղ մը. «Տէր Աստուած, ողորմեա հայր Պետրոսի և Սարգսի նուիրակի. զի հրամանաւ սորա գրեցաւ 'ի դուռն սուրբ Լուսաւորչիս 'ի ՈՀԳ Թուականիս»։ Ուրիշ տեղ մ'ալ. «...Ողորմեա նուաստ ծառայից քոց եղբարց՝ Ղազարու վարդապետի և Գրիգորի և Աստուածատրոյ, որք են սպասաւորք եկեղեցւոյ անապատի սուրբ Լուսաւորչին»։ Դարձեալ. «... ողորմեա հայր Կոստանդեայ և Թագէոսի գրչի, և որք 'ի ծաղկելն աւժանդակեցին՝ Վարդան 'ի Կապոտոյն վանից, և Ղազար գրիչ... նաև ամենայն հաւով միաբանաց սուրբ Լուսաւորչիս գերեզմանիս»։ Ց'էջ 150 կը յիշուի Բարսեղ հայր «մեծահռչակ անապատի Կողըոյն»։ Մերթ ընդ մերթ ալ՝ 'ի ստորեւս իջից կամ 'ի լուսանցս կը յիշատակուին որք նուիրաբերք եղեր են անապատին կամ յիշատակ մը թողեր. այսպէս՝ օրինակ իմն. «Գրիգոր միայնակեաց, այր խարազնազգեաց, որ շրջէր յաշխարհի լեշկ մաշկով. նա՝ առ սէրն զոր ունէր, յիշատակեաց 'ի գամբարանս սուրբ Լուսաւորչիս նշխարս երկուս. զսկաւառակն սուրբ Վարդանայ և զմեծ բազուկն, և զմիւս բազուկն Փիլիպպոսի առաքելոյն, և միաբանեցաւ հոգւով....»։ Ճառընտիր մ'ալ գրչութիւն երկոտասաներորդ դարու, երրորդ մ'ալ Երուսաղեմի կոչուած, ճոխագոյն քան զայլս՝ ճառիւք և վկայաբանութեամբք սրբոց, և միւս այլ՝ գրեալ «Ցամի վեցհարիւրորդի վաթսուներոր-

գի և 'ի չորրորդում ամի շրջաբերութեան Հայոց տումարի, 'ի Թագաւորութեանս Հայոց Լեւոնի՝ 'ի վերջացեալ և 'ի նուաղեալ դառն ժամանակի, յաւուրս աստուածապատիւ և հոգևոր տեառն Յոհաննէսի Հայոց կաթողիկոսի, յաշխարհս Պաղեստին՝ 'ի մէջ գերութեանս Երուսաղէմի՝ ընդ հովանեաւ սուրբ Յակոբայ առաքելական աթոռոյս, 'ի Յոհաննէս գրչէ՝ 'ի խնդրոյ Յովհաննու Ճգնաւորի»: Չորեքտասաներորդ դարու գրչութեամբ ուրիշ Ճառընտիր մ'ալ «... 'ի Թուականութեան հայկազեան տումարիս ՉՂԱ (= 1342)... յԵկեղեաց գաւառս՝ 'ի մայրաքաղաքս աստուածապահ Երզնկայ՝ ընդ հովանեաւ սուրբ և երկնանման տաճարիս՝ սուրբ կաթուղիկէի. և սուրբ առաքելոցն և սրբոյն Սարգսի և սուրբ Աստուածածնին»: Կը թողունք յիշատակել ուրիշ օրինակներն որ առաջիններուն թուականի հնութիւնը չունին:*

* Հնագոյնք և ընտիրք 'ի վկայաբանութեանցս հըրատարակեալ են 'ի չորս մատենագրութեան նախնեաց՝ 'ի Ս. Ղազար Վենետիկոյ, յամի 1874:

ՎԱՀԱՆ ՆԻԿԻՈՑ (VAHAN OU JEAN DE NICÉE) որ մերթ Յովհան ալ կոչուած է, և որոյ կայ Թուղթ առ Զաքարիա կաթողիկոս, զոր Գրիգոր սկեւռացի յերեքտասաներորդ դարու թարգմանեց 'ի հայ՝ հրամանաւ Լեւոնի առաջնոյ ռուբինեան թագաւորի:

ՎՐԸՆՋԷՐ (BÈRENGER). ** «Սահման վանից սըրբոյ հօրն Բենեդիքտոսի, մանրամասն զգուշութիւն օրինաց նորին. զոր գրեաց վարդապետն Վրընջէր 'ի կողմ Իտալիոյ, 'ի վանքն Փիսկանի, և բերեալ յԱնտիոք՝ ուղղեաց ըստ այսմ օրինաց զհռչակաւոր ուխ-

տըն սրբոյն Պաւղոսի. (Statutum monasticum a S. Patris Benedicti discipulis confectum, in quo regularum suarum observatio minutim describitur: statutum hoc a magistro Berenger in Italia fuit exaratum in monasterio Fiscamense; qui inde digressus perrexit Antiochiam, ubi celebrem S. Pauli congregationem ad haec instituta direxit.) Ութգլուխք կրօնաւորական կարգաց և սահմանաց. զոր սուրբն Լամբրոնացի 'ի լատինէ փոխադրեր է 'ի հայ: Բնագիրն կորուսած է, մեր Թարգմանութիւնն ալ Թերի 'ի վերջոյ: Տես Ս. ԲԵՆԵԴԻԿՏՈՍԻ ԿԱՆՈՆՔ և ԳՐԻԳՈՐ Ա ՄԵԾՆ քահանայապետ Հռովմայ: Հայերէնն՝ լատինական նոր Թարգմանութեամբ հրատարակուած է 'ի մեր տպարանի (1880):

ՏԱՏԻԱՆՈՍ (TATIEN). Կը յիշատակուի սրբոց Ոսկեանց հին վկայաբանութեան մէջ. « Գտի միւս եւս այլ պատմագիր 'ի կողմանս Յունաց. այր մի ընԹերցասէր Տատիանոս անուն, որ լեալ է յաւուրս Վաղանգիանոսի կայսեր, բաղում ինչ պատմեաց նա մեզ 'ի յունական մատենից. որոյ գրեանն՝ անԹիւշատաբանութեամբ զրուցաց՝ և այժմ 'ի միջի մերում գտանի. զոր իմ իսկ բաղում անգամ ընԹերցեալ՝ գտի 'ի Ճառս նորա, եԹէ արք ոմանք որք յաշակերտաց գրեալ են Մծին Թադէի առաքելոյ, որոց գըլխաւորի անունն էր Քռիւսի, այր յազգէ գռիկ » (յոյն): *

* Հրատարակեալ 'ի շարս Հայկական Սոփերաց (Հատ. ԺԹ):

ՏԻՄՈԹԷՈՍ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ

(TIMOTHÉE, ÉVÊQUE D'ALEXANDRIE)

Տիմոթէոս Աղեքսանդրեայ՝ սոսկ քահանայ մ՛էր, երբ առաջիկայ գտնուեցաւ ժողովոյն գումարելոյ 'ի Տիւրոս (335), ջատագով և պաշտպան հանդիսանալով սրբոյն Աթանասի։ Իր եղբօրը Պետրոսի հայրապետին Աղեքսանդրիոյ մահուընէն ետքը՝ Եգիպտոսի եպիսկոպոսաց համաձայն հաճութեամբ և գոհութեամբ յաջորդեց յաթոռն (381), զոր և կառավարեց խոհական իմաստութեամբ մինչև ցմահն (385)։

Սոզոմենոս կ՚ըսէ թէ հօրն Ապողոնի և ուրիշ Թեբայիդայ անապատաւորաց վարքը շարագրած ըլլայ Տիմոթէոս, որ մեր ձեռքն հասած չէ։ Միայն անկորուստ մնացած են 'ի յոյնն՝ Թուղթն առ Դիոդորոս եպիսկոպոս Տարսոնի, և միւս ալ Թուղթ կանոնական, որ չեն երևիր 'ի մեր մատենագրութեան, որ նոյն Աղեքսանդրիոյ հայրապետին անուամբ պահած է և աւանդած մինչև առ մեզ հետևեալ գրուածք որ անծանօթ են առ այլս։ Ասոնք են

— ** *Տիմոթէոսի աղեքսանդրացւոյ 'ի խորհուրդ Տեառնընդառաջին.* (Sur le mystère de la presentation de N. S. au temple). « *Զայս որդի Դաւթի ընկալաւ Սիմէոն 'ի գիրկս իւր. 'ի սուրբ հոգւոյն ածեալ 'ի տաճարն՝ զի տեսցէ զաւծեալն Տեառն* »։

— ** *Ի սուրբ Կոյսն և յողջոյն Եղիսաբեթի.* (Sur la sainte Vierge, et la salutation d'Elisabeth). « *Մէ՛ արդեւք վայրապար ինչ մայր ինքեան՝ մարթեանալ*

կամելով կոչեաց զՄարիամ՝ զաղքատն, այլ և զհաւատարիմն»: — Ըստ այլ ձեռագրի. «Խաւսք Տիմոթէոսի աստուածասէր քահանայի 'ի սուրբ Աստուածածինն և 'ի Նորին ողջոյնն»:

— Ի պատմութենէ վարուց սրբոյն Աթանասի, զոր ասացեալ է Տիմոթէի աշակերտի Նորին և աթոռակցի Աղեքսանդրացւոյ. (Vie de St. Athanase). «Ի ժամանակս թագաւորութեանն Դիոկղետիանոսի՝ երանելիք ոմանք Մարկեղոս և Սողոմի, աւրինաւք Աստուծոյ հաւատացեալ յԱստուած՝ ծնանին 'ի կամս Աստուծոյ որդի մի, և նուիրեցին զնա 'ի պաշտաւն Աստուծոյ»:

ՏԻՄՈԹԷՈՍ ԱՆՏԻՈՔԱՑԻ (TIMOTHÉE D'ANTIOCHE). — Տիմոթէի Անտիոքացւոյ պատասխանիք առ հարցմունս Թագաւորին Տաճկաց:

— Պատասխանիք առ հարցմունս Ահարոնի Թագաւորին:

ՏԻՏՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՐԵՏԱՑԻՈՑ. (TITE, EVÊQUE DE CRÈTE). — Տիտոսի եպիսկոպոսի Կրետացւոյ յառակ դրամոյն. (Sur la parabole du dénier de l'évangile). «Որք առակացն լսողք են, յայտ է թէ և մեկնութեանն փափաքին»:

— *Նորին ասացեալ. «Տասն դրամօք առակաւոր բանն՝ զթիւ տասն դասուց հրեշտակացն զեկուցանէ. վասն այսորիկ մի տասն դասուց ասաց զմարդկային բնութիւն»: *

* Ի Ճառընտիրն ԻԷ ('ի մեր մատենադարանի) 'ի ստորին լուսանցսն՝ ստացողն Գրիգոր կաթուղիկոս կամ եպիսկոպոս կը գրէ. «Զայսպիսի մեկնութիւն բանիս բազում իրօք ստգտանէ մեծն Իգնատիոս, զի արտաքոյ քան զսահմանս ընթանայ, և ոչ երևի միտք բանին ըստ կարգին պատշաճի»:

ՏԻՐԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. — *Ցառաջին կիւրակէին (աղուհացից) Տիրանոսի եպիսկոպոսի ասացեալ յաւետարանին մեկնութենէ։*

ՓԵԼԻՔՍԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. (PHÉLIX, ÉVÊQUE). — *Բանք երանելւոյն Փելիքսիանոսի Ցերապօլսի եպիսկոպոսի, զոր գրեաց 'ի խնդրոյ եղբաւր որ աղաչեաց զնա ուսանել զսկիզբն ընթացից միայնակեցաց և զկատարումն որոց լաւեն 'ի սենեակ. «Քանզի տեսի զհոգի քո, ով անդրանիկ որդւոյ իմոյ, զի ընթանայ ուսանել զճանապարհ կենաց, զոր ուսոյց և հորդեաց տէրն աշակերտաց իւրոց»։**

* Ի *մատենադարանս Էջմիածնի կը յիշատակուին (Թիւ գրչ. 813) «Թուղթք Փիլիքսիանոսի եպիսկոպոսի վասն եղանելոյ յաշխարհէ»։*

ՓԻԼԱՔՍԻԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ. (PHILAXIUS), — *Փիլաքսիանոսի Նաբովկայ սրբոյ եպիսկոպոսի պատճառ հաւատոյ՝ վասն տիեզերական սուրբ ժողովոյն Եփեսոսի, և վասն անօրէն հայհոյութեանն Նեստորի, 'ի խնդրոյ տեառն Կոմիտասայ Հայոց կաթողիկոսի»։*

ՓԻԼՈՆ ՀԵԲՐԱՅԵՑԻ

(PHILON, LE JUIF)

Փիլոն՝ զոր սուրբն Հերոնիմոս կը դասէ ընդ մատենագիրս եկեղեցւոյ՝ հրէայ էր ազգաւ 'ի քահանայական ցեղէ, և յընտրելագոյն տոհմից Աղեքսանդրիոյ: Երիտասարդ հասակէն ետևէ եղաւ գեղեցիկ դպրութեանց և իմաստասիրական ուսմանց, յորս և հռչականաւոր հանդիսացաւ. և կ՚աւանդեն թէ առաւել քան զամենայն իմաստունս իր դարուն խելամուտ եղած ըլլայ 'ի հմտութիւն վարդապետութեանց Պղատոնի և Պիւթագորայ, որոց հետևող էր և զարմացող: Իր ոճոյն և կարծեաց համաձայնութեանն համար ընդ պղատոնականաց. մինչ այլ Պղատոն կոչուած է 'ի հնոց և կամ Պղատոն հրեայ. և յԱղեքսանդրիա՝ ուր փայլեցաւ, սովոր էին ըսել 'ի գովութիւն նորա թէ կամ Պղատոն կը նմանի Փիլոնի և կամ Փիլոն Պղատոնի. Սոզոմեն՝ պիւթագորեան կը կոչէ զնա, շատ տեղ 'ի գրուածս Փիլոնի հանդիպելով յոյն փիլիսոփային կարծեաց, վճռոց և իմաստից: Բայց իրեն ամենէն մեծ պարծանքն է սուրբ գրոց խորին գիտութիւնն և հմտութիւնն: Ծննդեանը թուականն յայտնի չէ. բայց ինքն իսկ կ՚ըսէ թէ արդէն հասակն առած էր՝ երբ յաւուրս կայսերութեանն Գայիոսի, Քրիստոսի քառասներորդ թուականին եկաւ 'ի Հռովմ, ուր յղեցին զնա աղեքսանդրացի հրէայք 'ի պաշտպանութիւն իրենց իրաւանց յառենի կայսեր: Բայց այդ ճանապարհորդութիւնը փափաքելի ելքը չունեցաւ, մանաւանդ թէ 'ի

պատճառս հրեշտակութեանն վտանգի մէջ ալ դնելով իր կեանքը։

Փիլոն երկրորդ անգամ դարձաւ 'ի Հռովմ առ կայսերութեամբն Կղաւդեայ. և ոմանք 'ի հնոց կարծեցին թէ այն առթիւ բարեկամացած կամ ծանօթացած ըլլայ ընդ սրբոյն Պետրոսի. Փոտ կ'ըսէ թէ այն միջոցին ընդուներ է նաև զքրիստոնէական կրօնս զոր յետոյ թողած 'ի պատճառս տժգոհութեանց կամ անհամաձայնութեանց զոր ունեցեր է ընդ քրիստոնէից։ Բայց այս կարծիք վաւերական ստուգութիւն մը չունի։ Անտարակուսելի կը սեպուի իր ծանօթութիւնն ընդ Յիսուսի փրկչի, որուն աստուածութեանն ալ հակառակամարտ կ'երևնայ Մնասոնի դէմ շարադրած գրուածոց մէջ։ Ինչպէս ծննդեանն՝ ասանկ ալ մահուան թուականն անծանօթ է։

* * *

Իր անձին և վարուց վրայ հետևեալ տեղեկութիւնները կուտան մեր նախնիք 'ի գլուխ գրոց հայկական թարգմանութեանն. «Մեծիմաստն Փիլոն՝ իսրայէլացի գոլով. այլ ոչ երևի թէ յորո՛ց ցեղից յերկոտասանիցն իցէ. զի ցիր և ցան եղեն 'ի գերչաց անտի ընդ ժամանակս ժամանակս. զի թէպէտ և դարձան յաւուրս Կիւրոսի և Դարեհի և Արտաշեսի, Զօրաբաբելիւ՝ Եզրասաւ և Նեեմիւ. սակայն 'ի թագաւորելն Անտիոքայ յաւուրս Մակաբայեցւոցն՝ վերստին ցիր և ցան եղեն. կէսք 'ի Լիբաստան և յԱղեքսանդր Եգիպտոսի, և այլք յայլեւայլ կողմանս ըստ հանդիպման. և վասն այնորիկ խառն 'ի խուռն շփոթէին կարգք ազգաց նոցա, ուր և տունս և ժառանգութիւնս ստանային 'ի գաւառսն յոր գերեցանն. զորոց և Պրակացն պատմութիւն ցուցանէ. զի ելանէին յԵրուսաղէմ 'ի գալ տաւնիցն, 'ի պար-

թեւաց, 'ի մարաց և յելիմացւոց, 'ի միջագետաց, 'ի փռիւգացւոց, 'ի պամփիւլացւոց և յայլոց եւս եկելոց անդր, 'ի մաւտաւորաց և 'ի հեռաւորաց. և որք ընդ Ստեփաննոսի յԱղեքսանդրիայ վիճէին, որք ջատագով զինքեանս աւրինացն կարծեցուցանէին. յայնցանէ իմանի և սա. քանզի քաղաքապետ էր զայնու ժամանակաւ յԱղեքսանդրիայ, և հրեշտակութեամբ չոքաւ սա 'ի Հռոմ. առ Գայիոս կայսր, և դարձաւ անդրէն անարգանաւք. և այս 'ի ժամանակի քարոզութեան Պետրոսի 'ի Հռոմ, զորմէ պատմէ Եւսեբիոս Պամփիւլեայ»։

***

Փիլոնի գրուածոց այլեւայլ թարգմանութիւններն ունինք 'ի նախնեաց, յորոց ոմանց յունական բնագիրք կորսուած են։

Ասոնց մէջ ամենէն աւելի հետաքննական են երկու ճառք ** Յաղագս Յառաջախնամութեան (περὶ τοῦ προνοίᾳ). Առաջնոյն խորագիրն է. «Փիլոնի յաղագս Յառաջախնամութեան առ Աղեքսանդրոս, բան առաջին. — Յորժամ յաղագս զնախախնամութեան բանդ կամէի քննութեամբ հարցանել, և անցեալ դիպէի զյաղագս իւրաքանչիւր ուրուք այնոցիկ»։ Իսկ երկրորդին. «Փիլոնի յաղագս Նախախնամութեան՝ բան երկրորդ. — Այդ՝ դեռ եւս խորին է, մինչ միայն ճանաչել զայնոսիկ, որ պատահենն, սիրելիք և ազգայինք. ճշգրտագոյն իմն տեսանեմ աչաւք տարածեալ»: յորոյ 'ի վերջ հետեւեալ յիշատակարանը կը գտնենք՝ մեր մատենադարանին ընտիր գրչագրի մը մէջ. «Ստացողի սորա թագաւորին Հայոց Հեթմոյ՝ որ արհամարհելով զերկրաւորս՝ փափաքանաւք փութայ զերկնայինն գտանել արքայութիւն՝ ողորմեայ տէր. և պարգեւեա նմա ըստ քոյին կամաց քաղաքա-

վարել 'ի մարմնի. և յետ աստեացս՝ մանակից լի-նել թագաւորացն որոց մշտնջենաւոր թագաւորութեանն. Վասն գրել յիշեցի յընթերցողաց սորին »:

— Փիլոնի կեանք վարուց իմաստնոց. «Տերունեան աւուրեացն 'ի հինգ գիրս վերագրելոց, առաջինն կոչի և մակագրի լինելութիւն աշխարհիս. 'ի լինելութենէ առեալ զանուանութիւն »:

— (Ի վերջ Ճառին). «Փիլոնի կեանք վարուց ըստ վարդապետութեանն կատարելեցելոյ կամ անգիր աւրինաց». և յետոյ հետևեալ յիշատակարանն. «Զառաջուղ առաքս զբարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում յիշեսջիք յաղօթս իմաստասիրաց վերծանողք, արժանանալ ողորմութեանն Աստուծոյ. զի և դուք յիշեսջիք 'ի տեառնէ Աստուծոյ մերոյ. և զանյարմար գրիչս Վասիլ՝ աղաչեմ արժանի առնել յիշման, որ 'ի բազում հոգս և 'ի ծուփ աշխարհիս սակս անբաւ յանցանաց իմոց: Գրեցաւ 'ի թու. ՉԽՍ »:

— Փիլոնի աստուածային աւրինացն այլաբանութեան:

— (Ի վերջն). «Փառք... Յամի եւթնհարիւրերորդի քառասներորդի հինգերորդի թուականիս Հայոց՝ եղեւ գրութիւն այսմ տառի, զոր է ոգեալ մեծ իմաստասիրին Փիլոնի միանգամայն եւթն գլխոյն 'ի միասին եդելոց, հրամանաւ աստուածազարդ և հանճարաշատ թագաւորին Հայոց Հեթմոյ որդւոյ Լեւոնի որդւոյ Հեթմոյ թագաւորացն Հայոց. 'ի վայելումն և 'ի մխիթարութիւն մարմնոյ իւրոյ և յիշատակ հոգւոյ:

« Արդ այս Հեթում զկնի մահուան հաւր իւրոյ թագաւորին Լեւոնի յաջորդեաց զաթոռ հայրենի և նախնի՝ այլ ոչ պսակեցաւ թագի. սակս որոյ ոչ է պատշաճ զանց առնել զպատճառաւն. զի 'ի մանկա-

կան տիոց հետէ վարժեալ կրթութեամբ յաստուածային աւրինացն ընթերցուածս, որ գիտէ լաւ սնուցանել զ'ի նա անկեալսն, քան զյանձանձուածս մարց և դայեկաց, սիրեաց զիմաստութիւն և սիրեցաւ 'ի նըմանէ. վասն որոյ լաւ քան զոսկի և զականս պատուականս համարեալ անձին իւրում, որ և քաղցրացաւ քան զմեղու խորիսխ 'ի կոկորդս նորա. ուստի բաց և համարձակահայեաց ակամբ ոգւոյ ծանեաւ զիսկապէս և զարդարև բարին, և այնուհետև սկիզբն արարեալ գործնական առաքինութեան, մի՛շտ աղաւթից և ընթերցման գրոց պարապեալ զուարթ և արթուն հայեցածով. մինչ զի բնութիւն զսովորութիւնն արարեալ, խնամ տանելով և դարմանելով զսուրբսն՝ որ են դասք աղքատաց և որբոց. պայծառացուցանելով զսուրբ եկեղեցիս Աստուծոյ և աճեցուցանելով զդասս քահանայից. հանապազ պաշտամամբք համաձայնեալք երկնայնոցն խմբից՝ աւրհնութիւնս Աստուծոյ վերառաքէին. և համանգամայն զամենայն տեսակս առաքինութեան յինքն բերելով զոր տկարանամ 'ի պատմել զբովանդակն. զի ժողովել հրամայեաց հանճարեղ արուեստաւորս յայլևայլ աշխարհաց այլալեզու արանց՝ դաղաւոսաց դասս, և կանգնեաց զսքանչարժան եկեղեցին 'ի մայրաքաղաքին Մամուեստիա. զարդարեալ ազգի ազգի նկարուք փորուածովք 'ի քարանց. կճէից յանուն մաւր տեառն մերոյ Մարիամու աստուածածնին. և կարգեաց 'ի նմա դասս պաշտաւնէից ըստ պատշաճի աւտիճանաց. որ և հրամայեաց ինձ նուաստութեանս Բասլի, որ երբեմն սարկ՟. գրել զսոյն զայս տառ. և իմ թէպէտ և թերավարժ գոլով յարուեստ դպրութեան՝ սակայն զհարկն պատշաճաւոր յանձն առնլով ձեռնարկեալ շարագրեցի զսա խոշոր գրով՝ միայն ստուգութեանն ուշունելով աւարտմամբ յանգ հանեալ՝ արգահատութեամբ և վերակացութեամբ սըր-

բերէր քահանային Կոստանդեա, որ էր քահանայից ամենայն երէց 'ի դրան արքունի.

և Թէպէտ 'ի դէպ է ոչ անտես առնել զ'իմքերն քան զքննութիւն գործն նորին Թագաւորին Հեթմոյ. զի նա ինքն որ արհամարհեաց զմարմին և որ ինչ նորա են պատուականութիւնք՝ փափագմամբ և ըղձանօք անձնա-նուէր խոկայր միշտ գտանել զերկնաւորն Թագաւո-րութիւն. զներկայ արարամագրեալն արտաքերեաց յաւարտ և յանդ հանելով. և զինչ այս. կոչեաց զեղբայրն իւր հարազատ և զամենայն իշխանսն, վարդապետելով նոցա և հաւանեցուցանելով զամենեսեան 'ի Թագա-ւորեցուցանել զմի յեղբարցն իւրոց զկայսերակերպն և զիմաստունն Սմբատ՝ որ ունէր զերրորդն դաս ըստ կարգի եղբարցն. և ինքն առնել զայդ աւելեկից զմիւս եղբայրն իւր զպարոն Թորոս՝ և մտանել 'ի նաւ չուեաց դէպ ուղիղ 'ի Թագաւորական քաղաքն, և անդր եւս յերկրպագութիւն աստուածագործելոց նշխարաց և պատկերաց սրբոց: Իսկ զկնի ոչ նակաւ աւուրց ժո-ղովեցան Թագաւորորդիքն և Թագաւորազունքն և իշխանքն և միաբանական աշխարհաժողով բազմու-թիւն ռամկաց և խառնիճաղանճ ժողովեան 'ի Հայա-կեան մայրաքաղաքն Սիս՝ 'ի տաճարն սրբոյ աստուա-ծայայտնութեանն: Իսկ սրբազան Կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ ամենայն եպիսկոպոսօք և հա-մագումար ժողովով և բոլոր ուխտիւ եկեղեցւոյն, և աջով սրբոյ լուսաւորչին մերոյ Գրիգորի և աստուա-ծային աւետարանաւն ձեռն 'ի վերայ եդեալ աւան-դեացն նմա զաշխարհն և զանծանօթ Թագաւորութեան, և համաշխարհական ժողովն պատշաճաւոր խրախու-թեամբ բարգաւաճեալք ըստ իւրաքանչիւր աշխա-տանի. զոր պահեսցէ աջ ամենազօրին Աստուծոյ անվրդով և երկայն կենդանութեամբ փառօք զթա-գաւորեն 'ի զաւրութիւնս, և հերքելով առ ոտս զԹշ-նամիսն խաչին Քրիստոսի: Վասն որոյ աղաչեմ և ա-

զերանեմ Աստուծով զատուցանէր դասս սրբազա-նից և մակացու մանկանց նորոյ Սիոնի, և ամենայն. հաւատացելոց Աստուծոյ՝ որք խրախանայք և լու-սաւորիք իմաստախոհ վերծանութեամբ սորին. և կամ աւրհնակաւ աւգտիք՝ յիշել 'ի բարին. Քրիստոս և յաղաւթս ձեր մաքուր զատայցաւզ սորա զնիրաւ-զքն ամենայն հանճարոյ իմաստութեան զպարոն Հեթում. և զնորոգ ածեալն արքայ զՍմբատ. հա-մայն եղբարբք և ծնաւղաւք և համաւրէն զարմիւք: Զի արժանասցին ամենեքեան ողորմութեանն Աս-տուծոյ և արքայութեան նորա 'ի փառս անուան իւրոյ:

« Աղաչեմ և ես Թշուառական այրս և ախմար գը-րիչս Վասիլ՝ յիշել 'ի մեղաց թողութիւն և զիմ անար-ժանութիւն».....:

— ** Փիլոնի այնոցիկ որ 'ի Լինելութեանն խընդ-րոց և լուծմանց. (Φιλόνος τῶν εν Γενέσει ξητηγάτων καὶ'' λύσεων) Բան առաջին. « Ընդէ՞ր զաշխարարու-թիւնն ընդ միտ ածելով և հաշուելով ասէ. Այս գիր լինելութեան երկնի և երկրի, յորժամ եղև »: *

* Հարիւր Թուով խնդիրք և լուծմունք: Փիլոնի այս գրքին յունական սկզբնագիրն կորուսած է, և միայն մեր հայկական թարգմանութիւնն ծանօթ: Կը յիշատակեն զայն՝ Եւսեբիոս յէկեղեցական պատմու-թեան (Բ. ԺԸ). և Փոտրիկիոս 'ի Ցուցական մատե-նագարանի (Դ. 4): Հատուածք եւեթ բնագրին պա-հուած են առ Դամասկացւոյն, Յովհաննու Մոնա-խոսի, սրբոյն Մաքսիմոսի, և առ այլս 'ի հնոց: Արև-մտեան եկեղեցւոյ հին վարդապետաց գրուածոց մէջ ալ յաճախ 'ի վկայութիւն բերուած են Փիլոնի այս երկասիրութենէն զանազան հատուածք:

— Փիլոնի այնոցիկ որ Լինելութեանն է խնդրոց և լուծմանց, բան երկրորդ. « Զի՞նչ է Նոյի կողմանն: Զապաքանս զայս եթէ կամիցի ոք բնականագոյն 'ի

հարց առնուլ, գոյցէ մարդկային մարմնոյ զկազմածն»։ Ութսունուերկու խնդիրք։

— Փիլոնի այնոցիկ... բան երրորդ. «Զի՞նչ է. Ես եմ տէր Աստուած քո որ հանի զքեզ յերկրէն քաղդէացւոց. մինչ զի տաց քեզ զերկիրս զայս ժառանգել։ Ճառիդ յայտնոյ, զայն որ 'ի կարծիս բնութիւնն՝ հաստուցանելի՛ է այսպէս»։ Վաթսունուերկու խնդիրք։

— Փիլոնի այնոցիկ... բան չորրորդ. «Ընդէ՞ր ասէ. Եւ երևեցաւ տէր աստուած Աբրահամու 'ի կաղնւոջն Մամբրէի... Ճառդ յայտնագոյն գոլ թուի ինձ. բայց ծառս միայն այլաբանեալ է... ծառ՝ ըստ Հերակլիտեայ՝ բնութիւնս մեր՝ զսուղել և թաքչել սիրէ»։ Այս վերջին խօսքը 'ի վկայութիւն կը բերուի յ'Եպիփանեայ' 'ի ճառին որ Յաղագս միանձանց. «Բնութիւնս մեր ղուզակ է սիրէ ծածկել զմերկութիւն»։ Երկու հարիւր քառասուն և հինգ խնդիրք, և 'ի վերջն. «Կատարեցաւ, Փիլոնի այնոցիկ որ 'ի լինելութեանն, խնդրոց և լուծմանց՝ բան չորս»։

— ** Փիլոնի այնոցիկ որ յ'Ելսն է խնդրոց և լուծմանց. (Philonis earum quae sunt in Exodo quaestionum solutionumque). Բան առաջին. «Ամիսս այս ձեզ՝ սկիզբն ամսոյ... Ի գարնանային հաւասարակաւորութեանէ զշրջագայս ամսոյն կարծէ պարտ թուել».* Քսանուիրեք խնդիրք։

* Այս գրուածքիս ալ սկզբնագիրը կորսուած է. յիշատակութիւնն և հատուածք կը գտնուին առ հինս և առ Դամասկացւոյն (Φιλωνος, εκ του αʹ των εν Ἐξόδῳ).

— Փիլոնի այնոցիկ որ յ'Ելսն է... բան երրորդ. «Զի՞նչ է, եթէ ձեռին գործին արկեր 'ի վերայ նորա, և պղծեալ է։ Որք 'ի բնութիւնն ձեռնարկեալ իշխեն և զգործս բնութեանն ձեռնարկութեամբ իւրեանց փոխեալ կերպարանեն, զանպիղծն»։ Հարիւր քսան

և չորս խնդիրք. և 'ի վերջն. («Կատարեցաւ») Փիլոնի այնոցիկ որ յ'Ելն է խնդրոց և լուծմանց. և յաղագս տապանակին և խորանին»։

* Երկրորդ գրքես առաւելագոյն հատուածք սկզբնագրին կը գտնուին առ Նախնիս, և որ նը-շանակուած են 'ի ստորև էջից մեր տպագրին։

— ** Փիլոնի՝ առանց պատրաստութեան 'ի Սամ-փսոնէ. (Philonis sine praeparatione in Sampson). «Այդ իբրև 'ի յորձանաց գիջութեան կործեալ հե-ղեղեցաւ, և 'ի խորխորատն ընկղմեցաւ ցանկու-թեան. ոչ ևս էր կարող 'ի վեր հայել»։ Ի վերջն. («Կատարեցաւ») առանց պատրաստութեան 'ի Սամփսոնէ) Առանց պատրաստութեան խորագրին (ἀπαρασεύος) համար կը նշանակուի 'ի գիրս Լուծմանց. – Մին՝ որ անզարդ է 'ի սկսանելն Ճառն. և երկրորդ՝ զի չէր յառաջ խորհեալ՝ 'ի խնդրել ժողովոյն յա-ւուր շաբաթու 'ի նմանէ վասն Սամփսոնի, անպա-տրաստ սկսաւ»։

— ** Փիլոնի յաղագս Յովնանու. (Philonis de Jona). «Այնոցիկ որ զմարգարէսն ընթեռնուն, ա-մանք ընդ պիտանացուն մարդկան արմանան, և ո-մանք ընդ մարգարէութիւն նորա հիանան»։ *

* Առ Եղիշէի՝ Փիլոնի այս գրոց իմաստի մը հե-տևողութիւն կը գտնենք՝ զոր կը դնէ 'ի բերան Սա-հակայ եպիսկոպոսի յառեննէն Յազկերտի։ Փիլոն կ'ը-սէ. «Ո՞չ էր բաւական արեգակն ծանուցանել զկա-ռավարն, յորժամ չափաւոր ունելով զբնութիւն՝ յաներևոյթ ուրումն յաջոյ սփռեալ տարածանի յա-մենայն աշխարհ։ Յայն որ կիզուն բնութիւն՝ 'ի ներ-քըս 'ի սկուտեղն արգել փակ. և զայն որ ջեռուցա-նէն՝ զպէտսն 'ի Ճառագայթիցն ուղղանէ։ Իսկ սա-կայն Ճառագայթքն արուեստագիտին Աստուծոյ՝ անքթթօրելի սկուտեղն, լցեալ բոլորեն՝ շուրջ զաշ-խարհաւ զՃառագայթսն ձգելով»։ Իսկ սրբոյն Սա-

հակայ խօսքերն են. «Մտան է (արեգակն) աշխարհիս արարածոց… 'ի ձեռն օդոյ հրամանաւ Աստուծոյ տարածանէ զճառագայթս իւր. և հրային մասամբ ջեռուցանէ զամենայն գոյացեալս իւրոյ կայանին… քանզի իբրև յաման արկեալ է զլոյս 'ի գունդ նորա. և 'ի վայր կոյս հեղու բերանացեալ՝ 'ի պէտս ներքնոցն վայելչութեան»։

** Փիլոնի յաղագս զԱստուած 'ի բարեգործութեան հուր ծագող անուանել՝ 'ի տեսլեան երից մանկանցն, որ առ Աբրահամ, յորժամ նստէր 'ի միջօրէին… «Քանզի այն՝ որ համեմատեալ են յլոտ Աստուծոյն, մեծ ոգւոյն աչացն տեսանի»։

— Փիլոնի յաղագս երկնատեսանեաց. «Էր երբեմն ժամանակ յորժամ իմաստասիրութեան պարապեալ էի»։

— Փիլոնի յաղագս բագնին իրաց (De Ara). «Հուր, ասէ, 'ի վերայ բագնին այրեացի հանապազորդ անշէջ։ Վայելչապէս կարծեմ և արժանապէս. վասն զի Աստուծոյ շնորհք յաւետախաղաց են և անպակասս»։

— Փիլոնի յաղագս Թէ ոչ շնայցես. «Զի կարծեմ ամենայն ուրեք յաշխարհի՝ մեծ փքահեշտ ցանկութիւն. և ոչ ինչ մասն 'ի զօրութենէ սորա ձողոպրել կարէ»։

— Փիլոնի յաղագս քահանայից (De Sacerdotibus). «Տօհմք են ազգին երկոտասան. և մին յամենեցունց որ լաւագոյնն է՝ ընտրեցաւ քահանայել»։

— ** Փիլոնի յաղագս բան ունել և անասուն կենդանեաց (ըստ Աղեքսանդրի). (ἔπι τε ὁ Ἀλέξανδρος: ἢ περὶ τοῦ λόγος ἔχειν τὰ ἄλογα ζῶα). «Ցիշես զերեկեան բանսն, ով Լիսիմաքոս, զոր Աղեքսանդրոս եղբաւրորդին մեր պատմեաց»։

Երեքտասաներորդ դարու գրչագրի մը մէջ՝ յորում կան և Լուծմունք գրոց Փիլոնի. հետևեալ յի-

շարադրածը կը կարդանք. «Մաղթանս աղաչանաց մատուցանեմք վերլուծողաց այսմ մատենի մեծ իմաստնոյն Փիլոնի։ Որք առ 'ի նմանէ ուղղութիւնս ինչ գտանէք՝ թողութիւն յանցանաց հայցեցէք յԱստուծոյ յոգնիմաստ հաւտորին, որոյ անուն կոչի Յոհաննէս բարունի, և մականուն Եզնկայեցի, և աննայն որեան մերձաւորաց իւրոց... և անարժան գըծողիս պիտականուն քահանայ Վարդան ապաստաւոր բանի »։

***

Առինք են՝ 'ի մեր նախնեաց առ մեզ հասած Փիլոնի երկասիրութիւնք՝ ընտիր թարգմանութեամբ։ Բայց անանց թարգմանչին վրայ, որ մեզի հեռաքննականն է, չենք կրնար որոշ տեղեկութիւն մը տալ՝ եթէ ոչ լոկ ենթադրութեամբ։ Քիչ յառաջ ասացինք որ կըրտսերագոյն դասու թարգմանչաց միոյն, Եղիշէի, անծանօթ չէին. նոյնպէս ալ իր ուսուցակցաց, Խորենացւոյ և Մամբրէի, ինչպէս բուն իրենց գրքերէ առնուած վկայութեամբք պիտի հաստատարմացընենք։ Հետևաբար անտարակուսելի կ'ըլլայ՝ որ ինչպէս ուրիշ բազմաթիւ յոյն գրուածոց, ասոնց ալ թարգմանութիւն՝ հինգերորդ դարու կը պատկանի։ Լեզուի ընտրութիւնն, ու հելլենականին կատարեալ նմանութիւն զայն կը հաշակեն։

Սկսինք 'ի Խորենացւոյն։ Իր պատմութեան երրորդ գրքին մէջ, 'ի գլուխն ԿԲ, Աղեքսանդրիա քաղաքին վրայ խօսած ատեն, կ'ըսէ. «Յորոց օգոյն բարեխառնութիւն փչեցեալ, որ 'ի լճէն բերանք արձակին 'ի ծովն, և ուր 'ի ծովէքն մտանելոյ՝ որ ելանեն առէզք աղախք օդոյ անարատնք, այն որ 'ի ծովէն. և թանձունք որ 'ի լճէն »։ Այս տողերը առնուած են Փիլոնի Յաղագս վարուց տեսականին կամ Յեսսեանց

կոչուած գրքէն։ Նոյնպէս Փիլոնի են. «Թոյլ փքմամբ համբարձեալք կարծեցուք, որպէս ասեն քերթողքըն, եղեալ աստուածոց մերձասերմանք և մօտասերք». և ուրիշ տեղ մ՚ալ. «Զի որպէս քերթողքն ասեն, մերձազաւակք և մօտաւորք են և նոյնասերմանք աստուածոց՝ իշխանք». զոր կ՚երկրորդէ Խորենացի ՚ի պատմութեանն. (Գ. Կէ). «Ոչ որպէս քերթողքն ասեն, մերձազաւակ և մօտաւորք գոլ և նոյնասերմանք աստուածոց՝ իշխանք»։ — Նոյն գրոց մէջ (Բ. ԻԹ) Խորենացւոյն այս խօսք. «Որդւոն վախճան միոյն՝ միւսոյն լինիլն սկզբունք» յ՚Այլաբանականացն Փիլոնի ՚ի փոխ առնուած է. «Վախճանք նոցա այլոց են սկզբունք. որպէս տուընջեան վախճան՝ գիշերոյ է սկիզբն»։ — Առ Խորենացւոյ (Գ. ԽԶ). «Հիւանդացեալ անգ՝ մաշարական ախտիւք ջերանի հիւծմամբ»։ Փիլոն ՚ի Նախախնամութեանն. «Մաշարան ախտիւ ջերանել հիւծմամբ»։ — Խորենացի. (Գ. ԾԵ) «Եղայս տասցեալ՝ քամահաբար ՚ի ձիարձակարանէն արփայագնաց լինէր». Փիլոն ՚ի գիրս Յաղագս հոգւոյ կենդանեաց. «Կարի յոյժ քամահաբար արփեգնաց լինելն»։

Նոյն պատմահօր ընծայուած Պիտոյից գրոց մէջ. «Զքաջուղէշ և զպտղէզ զՅովաքայն... անդաստան»։ Փիլոն ՚ի Լինելութեան. «Երկու են ծառոց առաքինութիւնք. քաջուղէշ գոլ և պտղէզ»։ — Պիտոյից. «Զնոյնս նուագաւոր երգ և երաժշտական զուգաբարբառ հնչմամբ պարաւորակք եղեալ՝ յերկուս բաժանէին դասս»։ Փիլոն ՚ի Տեսական կենաց. «Նուագօք զուգահնչմամբք և զուգաբարբառովք... նուագաւոր բազմաձայնութիւն կատարէր, և արդարև երաժշտական»։

Մամբրէ՝ ՚ի Ճառին Ղազարու յարութեան. «Միթէ ՚ի մանրագորայ թմրեալ իցէ, և կամ ՚ի սատափկ անապակայ զմպեալ իցէ»։ Փիլոն. «Իբրև զմանրագոր՝

զանապակն ըմպելով, Թմբրեալք և Թրջեալք և զմբրեալք »։

Ի պատմութենէ Եղիշէի օրինակ մը մէջ բերինք. յաւելունք և միւս այլ՝ զոր նոյն սուրբ վարդապետ կը դնէ 'ի բերան Ղեւոնդեայ երիցու. «Որոյ ոչ է տեսեալ զմեծ Թագաւորն, պատուաւորացն մատուցանէ զերկրպագութիւն». որ Փիլոնի խօսք է՝ 'ի Լինելութեան գիրսն. «Որք միանգամ զմեծ Թագաւորն ոչ տեսին, նախարարին՝ և որ ընդ նովաւն՝ գնեն զառաջնոյն Թագաւորին զարժանաւորութիւնն»։ Դարձեալ առ նոյն Եղիշէի. «Որպէս և ասացին իսկ ոմանք 'ի քաջ պատմագրաց. զուգութիւն է մայր բարեաց. անզուգութիւն ծնող չարեաց». որ հետևողութիւն է Փիլոնի խօսքին ('ի Լինելութեան). «Զուգութիւն արդարութիւն ծնաւ... անզոյգն աղբիւր է չարեաց»։ Այսպէս Փիլոն ըսած էր (յԱյլաբանականսն). «(Աստուած) ինքն իւր է տեղի. և ինքն ինքեամբ լի և բաւական. ինքն ինքեամբ Աստուած». և Եղիշէ. «Ոչ սկիզբն առեալ յումեքէ լինել աստուած. այլ՝ ինքն ինքեամբ մշտնջենաւոր. ոչ 'ի տեղւոջ ուրեք, այլ ինքն ինքեան տեղի»։

Ժամանակաւ իրենցմէ կրտսերագոյնք, Անանիա Շիրակացի, Յովհաննէս Իմաստասէր, Թովմա Արծրունի, Խոսրով եպիսկոպոս Անձևացեաց, Գրիգոր Մագիստրոս, Շնորհալին Ներսէս և Լամբրոնացի, Սարգիս Մեկնիչ կաթուղիկեայ Թղթոց՝ յաճախ իրենց գրուածոց մէջ վկայութիւն կը բերեն Փիլոնի խօսքերէն՝ մեզի արդէն ծանօթ Թարգմանութեամբ. իսկ յերեքտասաներորդ դարու Երզնկացին Յովհաննէս՝ Լուծմունք մ'ալ յօրինած է փիլոնեան գրոց։

Տարակոյս չիմնար, որ հինգերորդ դարու Թարգմանութիւն է, և հաւանականաբար Խորենացւոյն՝ կամ իրեն ուսմնակցաց՝ Մամբրէի կամ Անյաղթի. հանդիպելով Փիլոնի գրուածոց յԱղեքսանդրիա, ուր

այնչափ հռչակուած էր իր անունն և մեծարեալ երկասիրութիւնքն :[1]

ՓՈՏ ՊԱՏՐԻԱՐՔ

(PHOTIUS, PATRIARCHE)

Կոստանդնուպոլսոյ Փոտ պատրիարքին՝ որ այնչափ նշանաւոր եղաւ արեւելեան եկեղեցւոյ ու քաղաքական տեսչութեան մէջ, երկու թուղթ միայն ունինք առ Աշոտ թագաւոր մեր Բագրատունի և առ Զաքարիա կաթուղիկոս՝ թարգմանեալ 'ի հայ : Առաջնոյն խորագիրն է · «Պատճէն թղթոյ հայրապետին Կոստանդինուպոլսի Փոտայ առ Աշոտ իշխանաց իշխան : — Քաղցրայայտ բարեպաշտութեամբ, բարձրագոյնդ 'ի համաստեռս · Աշոտ իշխանդ Հայոց, Փոտ՝ շնորհիւն Աստուծոյ գլուխ եպիսկոպոսաց Նոր Հռովմայ, և պատրիարք հանուրց » :

Այս թղթոյն պատասխանը գրեց Սահակ վարդապետ · «Պատասխանի թղթոյն Փոտայ՝ գրեալ Սահակայ Հայոց վարդապետի, հրամանաւ Աշոտեայ իշխանաց իշխանի : — Քահանայապետ զգաւնացեալ՝ պարկեշտ և առաքինասէր որ 'ի Քրիստոս վարիւք Փոտ, վերադիտող թագաւորական մեծ քաղաքիդ Նոր Հռովմայ պատրիարք, Աշոտ իշխանաց իշխան Հայոց մեծաց : Զգիր հանճարեղ խոհականութեան ձերոյ, ձվ աստուածարեալդ, ընթերցայ · և յոյժ բարեբանեցի ուրախութեամբ զերկնաւորն զՔրիստոս զփրկիչ մեր » :

[1] Մատենախօսական տեղեկութիւնք տես 'ի ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԵԱՆ յէջ 689 :

Առ կաթողիկոսն գրած թուղթն. «Թուղթ Փոտայ պատրիարքի առ Զաքարիա կաթողիկոս Հայոց, վասն երկու միաւորեալ բնութեանց մի անձնաւորութիւն գոլոյ տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և վասն Ճշմարտախոհութեան ժողովոյ սուրբ հարցն որ 'ի Քաղկեդոն։ — Յաւերժահրաշից արանց»։

ՔՍԵՍՏՈՍ (SIXTE, LE PAPE) — Քսեստոսի պապին թուղթ։ Այսպէս կը նշանակուի 'ի ցուցակի գըրչագրաց մատենադարանին Էջմիածնի (թիւ 1688), յորում և թուղթ Կաղիստինոսի պապին։

ՔՐԵՍՏՈՍ (SIXTUS). Վրիպակաւ այսպէս նշանակուածն 'ի մեր գրչագիրս, է Քրեստոս կամ Քսեստոս անն՝ որուն ընծայուած է համառօտ գրուած մը և հայկական թարգմանութիւն մ'ալ ունեցած։ Լատինականն ալ կայ այս երկասիրութեան՝ 'ի յունականէ, որ կորսուած է. թարգմանեալ 'ի Ռուփինոսէ 'ի վեցերորդ դարու։ Խորագիրն է. Sixti *sive* Xysti *sive* Sexti Enchiridion: latine versum a Rufino: Թարգմանիչն մասնաւոր ընծայականաւ մը կ'ուղղէ զայն առ Ապրոնիանէ՝ կոչելով զնա դուստր իւր քան հոգւոյ, նոյն ընծայութեան գրոյն մէջ՝ հեղինակին համար կ'աւանդէ թէ եպիսկոպոսական աստիճանն ունեցող անձ մը ըլլայ, և վկայական մահուամբ նահատակուած։ Այդ նախաբանն՝ բնականաբար չկայ 'ի մեր թարգմանութեան, որ 'ի յունէ եղած է բաւական ընտիր ոճով և լեզուով. չենք գիտեր երբ և որու ձեռքով։ Հին իմաստասիրաց խօսքերուն հատընտիր քաղուած մ'է այս հաւաքածոյն, և որոց հետքը կ'երևնան առ Պորփիւրի, Դեմոփիլեայ, Պիւթագորայ, Դեմոկրիտեայ, Քսենոփոնի, Որոգինի և այլոց. չորս հարիւր քսան և եօթն առածք կամ վճռական խօսք

'ի լաւէն թարգմանութեան, մինչ մերն չունի անոր ամբողջութիւնն և թուի համառօտուած։

ՕՐԷՆՔ ԹԱԳԱՒՈՐԱՑ

(LIVRE DES LOIS)

Ազգային համարուած օրինաց ընտիր և հմուտ խըմբագրութիւն մը, Մխիթարայ Գոշի աշխատասիրութեամբ, արդէն մեզի ծանօթ է։ Թագաւորական օրինաց գիրքը, որուն վրայ համառօտիւ պիտի խօսինք, բոլորովին տարբեր երկ մ'էր, բիւզանդական արքունեաց մէջ յայլեայլ ժամանակս և 'ի զանազան կայսերաց, — որոց անուանք ալ յիշատակուին 'ի խորագիրս, — հաստատուած և վաւերացած օրինաց և կարգաց հաւաքումն մը, զոր յասորւոյն և 'ի յունականէ թարգմաներ է 'ի հայ, — ինչպէս պիտի կարդանք յինքնագիր յիշատակարանին, — բազմերախտ և բազմավաստակ սուրբ հայրն մեր Ներսէս Լամբրոնացի։

Այս հետաքննական հաւաքման խորագիրն է. Աւրէնք յաղորդ թագաւորաց քրիստոնէից. Կոստանդիանոսի, Թէոդոսի և Լեւոնի. թագաւորաց քրիստոնէից. և սկզբնաւորութիւնն. «Զաւրէն բարի և զճշմարիտ՝ տէր Աստուած 'ի սկզբանէ ետ»։ Հարիւր յիսուն գլուխք բանից՝ հանդերձ վերնագրովք, և կը ճառեն և կը սահմանեն քաղաքական օրինաց և կարգաց վրայ։ Անկէ ետքը՝ երկրորդ հաւաքում մը՝ Համառաւտ ժողովումն աւրինաց վերստին խորագրով, ութսուն և վեց գլուխք բանից։ Ապա Աւրէնք և գիրք 'ի ձեռն Մովսիսի, յ'Ելից գրոց. յիսուն և մի գլուխ։ Յետոյ չորրորդ օրինագիրք մը՝ քաղուած 'ի Ղեւտական գրոց, 'ի քսան և վեց գլուխս։

Այսպէս նշանակուած և դասակարգուած կը գըտնենք 'ի վերջչորեքտասաներորդ դարու գրուած օրինակի մը մէջ որ 'ի մերում մատենադարանի։ Անկէ աւելի հնագոյն մը, 'ի սկիզբն նոյն դարու՝ վասն տեառն Աւշնի գաղափարուած՝ հետևեալ դասաւորութիւնն ունի. 1). Օրէնք յ՚Եղից. ընտրութեամբ. խառն և 'ի Ղեւտականաց։ 2). Լեւոնի և Կոստանդիանոսի բարեպաշտ Թագաւորաց քաղաքական օրինագրութիւնք. զ՚որս նորոգ կարգաւորեց Յուստինիանոս Մեծն։ Իննևտասն տիտղոսք՝ բաժնուած 'ի զանազան համառօտ գլուխս. և ապա անոնց քաղուածը՝ յայլևայլ տիտղոսից։ 3). Օրինագրութիւն Երինէ Թագուհւոյ՝ մօր Կոստանդեայ։ 4). Հաւաքումն յօրինաց Յուստինիանոսի։ 5). Գլուխք օրինագրութեան կարճ 'ի կարճոյ՝ ընտրութեամբ 'ի Թագաւորական սահմանաց. 6). Համառօտ ժողովումն օրինաց։ 7). Վասն զինուորաց սահմանագրութեան։

* * *

Դնենք նախ զ՚յառաջաբան օրինաց գրոցս, և ապա զյիշատակարան Թարգմանչին։

Յառաջաբանութիւն քաղաքական աւրինադրութեանց աստուածային և մարդկային. « Տէրն և արարիչ Աստուած մեր ստեղծ զմարդն 'ի պատիւ անիշխանութեան. աւրէնս եդ նմա յաւգնականութիւն. ըստ մարգարէին, և ըստ որում՝ զամենայն ինչ վասն նորա հաստատեաց. նմանապէս և աւրինացն էած զնա 'ի գիտութիւն, որ ոմանց եղև 'ի փրկութիւն ապրընջական, և ապստամբիցն տանջանացն պատճառ. որք ոչ աւրինացն զգուշացան՝ եղեալք ապստամբք յարգարութենէ, որոց վրէժխնդիր լինի Աստուած. որ կանխաւ բացատրեաց 'ի գիտութիւն նոցին զաւրէնս և զանիրաւութիւն. քանզի նորա բանին զաւրու-

թիւն հաստատեալ կայ սահման. և իւրաքանչիւրոցն չափէ ըստ իւրոց արժանեաց. վասն զի երկինք և երկիր անցցեն, և բանք նորա ոչ անցանեն. ըստ որում և աւետարանն սուրբ հրամայէ։

« Սոյնպէս սոյն աստուածազաւրութիւն՝ Թագաւորացս հաճեցաւ ասել և իմաստնացուցանել աժանգակ իւրոց աւրինաց զհրամանս զայս ահաւորս. և մեք նորին սիրոյն հպատակ կամք ըստ գլխաւորի առաքելոյն Պետրոսի, հովուել զհաւտս զոր հաւատաց մեզ։ Եւ ոչ 'ի մէնջ իրաւունք դատաստանաց և ոչ վրէժխնդրութիւնք չարագործաց, այլ 'ի Նմանէ ամենայն անիրաւութիւնք լուծանին. և մեզ է ուղղել զիրաւունս նորա, և վրէժս և տոյժս պահանջել յանհնազանդիցն, ըստ հրամանի (կարգի) սպասաւորութեան. քանզի սուսերաւ որ ընդ մէջ ածաք՝ սպասաւորեմք Աստուծոյ. և զզաւրաւորին կապ անիրաւութեան արձակեմք, և զչարագործն դատախարակեմք. և զայս պահելով 'ի վերայ Թշնամեացն յաղթութեամբ՝ ամենակարող ձեռն պահէ զմեզ. և զհանդերձեալ պսակն բազմազան և պայծառ պատրաստէ, ըստ խոստման հրամանի իւրոյ։ Արդ խաղաղութեամբ և քաղաքավարութեամբք խոկալ մեզ արժան է՝ զոր հաճոյն է Աստուծոյ. և զմեծարանութեան վերաբերել մեզ զգեստս, և արդարութիւն՝ ամենայն աշխարհաւոր իրացս ունելով կառավար, յերկնային պատրաստեալ աւթեվանացն մտցուք 'ի հանգիստ։ Որք յառաջագոյն Թագաւորեցին, բազում գիրս գտաք՝ զի աւրինագրութիւնս արարին. զորով մանուածեալ բանսն ընդ աղաւտ իմանամք, կամ բնաւ անգիտանամք. մանաւանդ որք արտաքոյ այսմ աստուածապաշտ Թագաւորական քաղաքիս արարին զսահմանադրութիւնս. կոչեցաք զՆիկեփորոս փառաւորեալ պատրիկն, և զՄարինոն և զՄարինոս փառաւորեալ հիւպատոսքն. և հրամայեցաք զամենայն գրեանն

ժողովելոյ մեզ. և զգուշութեամբ տեսանել և քըն-
նել, և 'ի նոցանէ զուղղութիւն պարզեան մեզ ար-
տաքս հանել գրով. որք և զանհման հրամանի մեր ե-
րագապէս կատարեցին, և ընդաւրինակեցին զդա-
տաստանս և զիրաւունս Թագաւորաց, որով փառին
զքաղաքս: Եւ այսպէս զորս ծարաւի էին զովացու-
ցաք, և զնրբութիւն լուսաւորեցաք. հայելի արարաք
բարեպաշտից զդիրք աւրինացս, և որք 'ի հնոյն ըն-
թերցուածս տագնապին՝ աստ ելս գտանեն: Արդ 'ի
գայլշութիւն զընկղմեալսն՝ աւրինաւք վերականգ-
նեցաք. և զմարդկան չարչարանսն 'ի բաց քեցեցաք:
Եւ որք 'ի ձեռն առնուն զսա՝ զգուշասցին յառաջ
ածել ճշմարտութեամբ զիրաւունս և զդատաստանս:
Մի զաղքատս արհամարհել, և մի զհզաւրս անիրաւել.
յուպել զեղանակ արդարութեան, և սքանչելի առնել
զհաւասարութիւն. զգործս մախանաց մի ընդունել
միակողմանի, այլ զերկուս դատախազս հաւասար կա-
ցուցանել. և այսպէս որոշել զնոսա. ընդ որում ճա-
նաչէք՝ ուր գտանէք զթերութիւն իրաւանց իւրեւ
զկաշառաւք ապականեալսն, որք վասն շնորհակալու-
թեան տան զշնորհսն. այլ զճշմարտութիւն և զար-
դարութիւն պատուեցէք: Մի Թշնամութեամբ ընդ-
դէմ կալ դատեցելոյն, և մի բռնութեամբ յաղթել...
Արդ իմանալ արժան է զիրաւունս, և հրամայել զճըշ-
մարտութիւն հանդերձ յայտնի վկայութեամբ. ըստ
որում և սահմանեցաք աստ խոհականութեամբ, զի
զորս ենն յերկմտութեան դրունսն՝ կացուսցէ 'ի
հաստատութեան հաւասարութեամբ... Արդ մի յայս
աղարտեալ շահս զբաղիք. այլ փութացեալ բար-
ձրացէք յարդարութիւն.... Բարեխոհ Սակիլիոսի
հրամայեցաք նշանագրել և ընդաւրինակել յամենայն
դատաստանացն գլխոց, զի բարի վարձս ընկալցի 'ի
Քրիստոսէ Աստուծոյ մերմէ:....

* * *

Իսկ Թարգմանչքն՝ սրբոյ Լամբրոնեցւոյն յիշատա-կարանը հետեւեալն է․

« Զայս ծայրաքաղ աւրինագրութիւնքս տառադրեալ եպիսկոպոս Ցարսոնի Թարգմանեցի 'ի ծերացեալ հելլենացի մատենէ, Թուին ՈԽԷ․ 'ի նորաշէն ամուրն Լուլուայ, որ է գլուխ գրանն Կիւլիկոսի․ զոր 'ի բազմաժամանակեայ յամայութենէն մարգաբնակ արար մի յեղբարց իմոց Շահնշահ․ և զկործանեալ շինուածն յուսոց յիսմայէլացւոց՝ շինեաց ամրագոյն․ և ընդարձակեաց նովաւ զՀայաստանեայս՝ Թագաւորի Լեւոնի ձեռն որ 'ի Կիւլիկեայս և Ասորւոց գաւառացն տիրէ․ և նովաւ կարողացաւ երկրորդ Կապադովկիոյ, յորում մայրաքաղաք Տիանայ. արտահանեալ զնորաշէն ամուրն 'ի փառս Քրիստոսի և 'ի զաւրութիւն քրիստոնէից։ Դարձայ և 'ի մեծ եկեղեցին Ցարսոնի, յղեցի զԹարգմանեալն առ գրչութեամբ և աւանդեցի Հայոց։

« Յամս քահանայապետութեանն Հայոց Գրիգորի, որ երրորդ էր նախնեացն իւրոց 'ի Հռոմկլայն, յաջորդ աթոռոյն, Թուին ՈԽԶ․ յութեւտասներորդ ամի նորին հայրապետութեան, խնդիր եղև առ նոյն որբազանն 'ի քաղաքաց և 'ի գաւառաց բնակչաց՝ քաղաքական աւրինացն․ զի որք Իսմայելացւոցն էին իշխանք 'ի քաղաքս և դատաւորք, զդատ Հայաստանեայցս ոչ դատէին․ այլ զխնդրողսն իրաւանց՝ առ իւրեանց աւրէնս առաքէին․ զի այս էր 'ի նախագլուխ Մելիքացն հրաման առ դատաւորս քաղաքաց՝ յիւրեանց աւրինացն դատ Թողուլ զնոսին։ Եւ եկեալ ոսոխք յեկեղեցին՝ հարցանէին աւրէնս 'ի քահանայից և 'ի քահանայապետաց․ ոչ ունէին գիրս որով ընտրեսցեն զիրաւունս, զոր և այլոց ազգաց տեսանէին՝ քրիս-

դոնէից և մոլիմանաց. այս ինքն հռոմայեցոց. հելլենացոց, ասորոց, եգիպտացւոց, արաբացոց, պարսից և այժմու իշխողացս Թուրքաց: Ի խնդիր եկին ապա առ հայրապետս 'ի Հայաստանեայց՝ արթունք, կղերիկոսք և աշխարհականք. խնթկեալք յայլոց ազգաց և նախանձեալք զբարուոքն, և խուզեալք ընդ նա մեր յարկեղս գրոց կոթուղիկոսարանին՝ ոչ գտաք աւրէն. բայց միայն զկանոնականս՝ որ 'ի սուրբ հարցն ժողովելոց էր գրեալ. և որ 'ի նոյն յարեցաւ 'ի նոցանէ կանոնս զգուշաւորս եկեղեցւոյ: Իսկ քաղաքի աւրէնս ոչ գըտաք 'ի մէջ Հայոց, ոչ յեկեղեցիս և ոչ առ իշխանս: Եւ կարի վշտացեալ հայրապետն խնդիր առնէր առ այլ ազգս. և պատահեալ անգ յասորոց Թէոդոս անուն կիրթ յիմաստութեան քահանայ, յայտնեաց տեառնս զի գոյր առ ինքն այս համառաւտ աւրինագրութիւնս, և հրաման տուեալ ինձ տառապեալ իւր ձեռնասուն որդւոյ Ներսեսի յեղաշրջեցաւ 'ի հայս, նմին յիշատակ բարի, և զկնի եկելոցդ ուղղութիւն ընթացից: Յետ որոյ ապա և 'ի հելլենացւոց գրոց արարի թարգմանութիւն մովսիսական աւրինացդ և Լէոնի և Կոստանդեայ աւրինացդ, 'ի նմանէ թարգմանեցի և զզինուորական աւրէնքդ. և ընծայեցի որոց սիրեն վարիլ սովաւ և հաճոյ գտանիլ Աստուծոյ, և կառավարիչք քաղաքաց և գաւառաց»:

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԹԱԳԱՒՈՐԻ (Տես ԿԱՐԳԱՑ ԳԻՐ)

ՅԱՒԵԼՈՒԱԾ

Յ'էջ 12. Ուրիշ նոր երկասիրութիւններ ալ աբգարեան թղթոյն վրայ. Matthes (K. C. A.) Die Edesseniche Abgarsage auf ihre Fortbildung untersucht. (Leipzig, 1882) — Hall (C. P.) Syriac version of Epistle of King Abgar to Jesus (1885): — Caspari (C. P.) Iesu apokryfische Brev til den Edesssenks Konge Abgarus i udvidet mittel alderling Skikkelse bestemt til at tjene som Amulet. Theol. Tidskriftt. (1886): — Bonet Maury; La légende d'Abgar et de Taddeé, et les missions chrétiennes à Edesse (Revue de l'Histoire des Réligions) 1887. — L. J. Tixeront, Les origines de l'Eglise d'Edesse et la légende d'Abgar, étude critique suivie de deux textes orientaux inédits.

Գալղիացի աստուածաբան վարդապետն Թրոշոն, երկու տարի յառաջ հրատարակած հմուտ գրուածքի մը մէջ (La Sainte Bible, — Introduction générale, I, 496) *հետեւեալ խօսքերու մէջ կը համառօտէ արեւմտեան քննասիրութեան կարծիքը այս խնդրոյն վրայ. «Գեղասիոս քահանայապետին վճիռը ընդ անվաւեր գրութիւնս կը դասէ Քրիստոսի անուան թուղթը առ Աբգար։ Սակայն ոմանք ի նորաղանդեց՝ Գրաբ, Կավ և Պարքեր՝ անտարակուսելի համարելով անոր վաւերականութիւնն, առաջարկեցին ինչուան Նոր կտակարանաց կանոնին մէջ ալ անցընել։ Նորագոյն գիւտ մը՝ աւելի կշիռ մը տալ թուեցաւ անոնց կարծեաց։ Խորենացին կը յիշատակէ զանուն Աբգարու ժամանակակցի մը, որուն մէկ գրուա-*

ծէն մէջ պահուած էին այս նամակները. և էր Ղէւոնդեան: 1882ին, հայրն Ալիշան՝ Փարիզի ազգային ձեռագրաց մէջ գրուած մը գտաւ՝ որոյ հեղինակը Լերուբնա կը կոչուի, յորում բաց 'ի Թղթոյն Աբգարու և 'ի պատասխանւոյն Քրիստոսի՝ կ'աւանդի նաև պատմութիւն գործի եղեսացւոց քարոզութեամբ Ադդէի: Քիչ ետքը՝ Գիւրըթոն, բրիտանական թանգարանին մէջ՝ յերկու ասորական ձեռագիրս չորրորդ և հինգերորդ դարուց՝ ասորի սկզբնագրին հատուածները գտաւ, որոց թարգմանութիւն է հայկականն. իսկ 'ի Փեթրպուրգ ամբողջ գրութիւն մը գտնուեցաւ և հրատարակուեցաւ՝ նոյնպէս յասորի լեզու, 'ի Փիլիպսէ: Ըստ կարծեաց Ալիշանի, Գիւրըթոնի, Պիքէլի, Փիլիպսի՝ առաջին դարու քրիստոնէութեան կը պատկանի այս գրուած, թէպէտև կըրեր այլևայլ կերպարանափոխութիւններ 'ի յետնոց: Իսկ այլք կը համարին թէ այս թղթերը յօրինուած ու յարմարցուած ըլլան քրիստոնէի մը ձեռքով որ ուզեր է անընդմէջ փառաւոր սկզբնաւորութիւն մը տալ Եդեսիոյ եկեղեցւոյն, հաւանականաբար 'ի չորրորդ կամ 'ի հինգերորդ դարու»: — Փարիզու ազգային մատենադարանին ձեռագրաց մէջ (Mss. gr. 950, f. 341) կայ նամակ մը Յիսուսի Քրիստոսի՝ գտեալ 'ի Հռոմ 'ի տաճարի սրբոյն Պետրոսի. քննելի է թէ արդեօք ունի՞ նմանութիւն ընդ Թղթոյն առ Աբգար»:

Յ'էջ 173. Մեր թարգմանութեանց մէջ գտնուած Նախադրութեանց նման աշխատասիրութիւն մը կայ յասորի լեզու յԱմբրոսեան մատենադարանի 'ի Միլան: Թերևս փոխագրութիւն է յոյն սկզբնագիր աշխատասիրութեան մը, որ հիմայ կորսուած, կամ դեռ ձեռուընիս հասած չէ:

Յ'էջ 188. Նորագոյն հրատարակութիւն մ'ալ 'ի լատին. Oppenheim, G. *Fabulae Josephi et Asenethae*, apocrypha, ex libro syriaco latine versa. 1884 :

– Յունական օրինակն ալ գտնուեցաւ անցեալ տարի 'ի մատենադարանին Վատիկանու, և հրատարակուելու վրայ է։

Յ'էջ 202. Երանելւոյն Նիկոդիմոսի տացեալ յաղագս ննջմանն և փոխմանն Կուսին. «Սուրբ կոյսն Մարիամ աստուածածին էր յԵրուսաղէմ. և եկն հրեշտակն տեառն և ասէ ցնա. Յարուցեալ երթիցես 'ի լեառն Ձիթենեաց, և տացից քեզ զբանն տեառն, թէ որպէս առաքեաց զիս։ Եւ յարուցեալ փութանակի երանելին կոյսն՝ գնաց 'ի լեառն Ձիթենեաց. որպէս ասաց նմա»։ Կը գտնուի և առ այլս նման՝ բայց անվաւեր սեպուած գրուած մը, և կը յիշատակուի 'ի վճռագրին Գելասիոսի քահանայապետի (De dormitione vel transitu Mariae).

Յ'էջ 205 Թէոդոր Տահճն՝ որուն բազմահմուտ երկասիրութիւն յիշեցինք Պրոխորոնի վրայ խօսած ատենիս, որքոյն Յովհաննու Հանգստեան վրայ այսպէս կը գրէր. (20 ապրիլ, 1886). Vous m'avez obligé en me donnant le tître de la brochure de M. Katergian, qui jusq'alors était échappé à ma connaissance. Quoique cet homme savant n'ait pas su, que le récit de la mort de S. Jean, dont il a publié la version arménienne, était déjà imprimé en grec et en syriaque, il a bien mérité de la littérature écclesiastique.

Յ'էջ 245. Քիչ յառաջ յիշատակուածն Թրոշան 'ի նոյն գիրս. «Ի հինգերորդ դարու, սուրբն Մեսրովպ՝ բաց յայբուբենից տուաւ Հայոց նաև զթարգմանութիւն աստուածաշունչ գրոց ըստ եօթանասնից, բայց 'ի Դանիէլէ՝ որ Թէոդիտոնի թարգմանութեան վրայ եղած է։ Լաքրոզ ըսած էր թէ հայկական թարգմանութիւն՝ աղեքսանդրեան օրինակին համեմատ է. նոյնպէս իրեն համամիտ են Լաճի, Պրիւսթոն, Ակկուրու. բայց կը հակառակի Բրեգէնգամփ (Allg.

Bibliothek), Հերբոգ. (*Einleitung*). Մեարոժվը իրեն գործակից ունեցաւ զերկուս յաշակերտացն՝ զՑովհան Եկեղեցային և զՑովսէփ Պաղնացի, զորս և յղեց յԱղեքսանդրիա՝ առ առաւել եւս հմտանալ 'ի հելլէն դպրութիւն։ Իրենց աշխատասիրութիւնը կը ներկայացընէ խառն բնագիր մը (texte mêlé), բայց չունի Փեշիտտայէ 'ի փոխ առնուած յաւելուածներ։ Այս կարծեաց առիթ տուած է Բար-Հեբրեոսի մէկ ենթադրութիւնն (*Schol. ad Psalm. XVI.*) առ Ուէլթընի, 'ի Նախաբանութիւնն) և զոր հերքած են Ուայզմէն և Հաոգ. (Gregorii Bar Hebræi *Scholia in Ps. V et XVIII*). սակայն կ'ընդունի Լամի. (Ներած. Ա. 180). Հաւանական չէ, ինչպէս Լաքրոզ կը ջանայ՝ հաստատարմացընել. թէ յերեքտասաներորդ դարու՝ Վուլկաթայի վրայ սրբագրուած ըլլայ։ Հին կտակարանին հայ թարգմանութեան համար գործածուած յոյն բնագիրը՝ ուրիշ գրչագրաց հետ բաղդատուած և քննութեամբ ընդունուած օրինակ մը չերևնար. ուր նորոյն ընթերցուածք և բնագիր ամենահաւատարիմք են »։

Յ'էջ 273. ԶՀ Թուականին 'ի Գլաձոր մենաստանի Վայոյձորոյ գրչագրեալ օրինակի մը մէջ, և հիմայ 'ի մատենադարանի Ս. Երուսաղեմի (Թիւ 1414) հետեւեալ յիշատակարանը կը գտնենք. «... Թէոդոս ննջեալ և յաջորդեալ Մարկիանոս, կատարէ զժողովն 'ի Քաղկեդոն, յետ ՆԿԲ ամի յարութեան տեառն, յետ հնգետասան ամի Սահակայ պատրիարքին փոխելոյ 'ի տէր. յորում ամի Վարդանանքն պատկեցան. 'ի հայրապետութեան տեառն Մանդակունւոյ. և չէին պարապ գալ 'ի ժողովն. բայց հակառակութիւն ոչ գոյր՝ հարիւր չորս ամ. մինչ 'ի վերջին Ներսէս. 'ի սկիզբն Թուականին Հայոց 'ի չորեքտասաներորդ ամի Յուստինիանոսի և 'ի չորրորդն Խոսրովու Պարսից. որ արար ժողով 'ի Դուին, 'ի ձեռն

Արգիտայի ասորւոյ, որ եկեալ էր 'ի Սասնոյ 'ի Սա-րեփթա վանից. և այլք ընդ նմա. որ եղեն 'ի նմանէ եպիսկոպոսք. և զՓիլոքսինոսի եպիսկոպոսի Նա-բուկ քաղաքի. և զՏիմոթէոսի Աղեքսանդրու՝ Կուզն կոչեցելոյ զգրեանն Թարգմանեցին 'ի հայ, որ ունի չարափառութիւն զժողովոյն, և զսուրբ աստուածն-խաչեցար գրին, և 'ի Յունաց ողջունիւք 'ի բաց կացին. և Խոսրով Թագաւորն Պարսից խնդաց ....:

Յ'էջ 449. (Ի Համաբարբառն Եփրեմի յաւելուած)

Variae ac prorsus contrariae fuerunt eruditorum sententia tam de auctore, tam de indole Harmoniae a Vittore vulgatae, donec G. Moesinger, an 1876, ex armena lingua, in qua tantum supererat, latinitati donavit S. Ephraemi Syri Commentarium in Tatiani Diatessaron, qua versione vulgata, omnes peritiores critici in sententiam venere Victoris in Harmonia Tatiani Diatessàron contineri. — Revera opus a Moesinger editum, esse fœtus S. Ephraemi, syriace primitus exaratum super Tatiani Diatessaron, praeter argumenta permulta, quibus id evincit cl. editor, liquet in primici ex Dionysio Barsalibi, qui floruit saec. XII, quemque prae oculis habuisse S. Ephraemi Commentarium, ita ipsius verba apertissime ostendunt: « Tatianus, scribit Dionysius, discipulus Justini philosophi et martyri, elegit ex quator Evangeliis et connexit et confecit Evangelium, quod Diatessaron nuncupat; :. e. miscellaneum. Hoc scriptum interpretatus est a S. Ephraem (A. CIASCA, *Tatiani Evangelorum Harmoniae arabice*. Romae, 1888).

ԲԺՇԿԱՐԱՆՔ (յ'էջ 345)։ Բժշկական արուեստի վերաբերեալ այլեւայլ երկասիրութիւնք կան 'ի մեր լեզու, յորոց շատք՝ թարգմանաբար յօրինուած, և ընդհանրապէս մեր նոր ու աշխարհիկ լեզուի մատենագրութեան վերաբերելով, կամ թէ՝ երեքտասաներորդ դարէն վերջը։ Բայց ՉԽԳ թուականն ունեցող գրչագրի մը մէջ՝ երեք բժշկարանաց կը հանդիպինք, որ մեզի ծանօթ համանուն երկասիրութեանց մէջ՝ հնագոյնք և ընտրելագոյնք թուին։

Այս գրչագրին յիշատակարանն է (յ'էջ 14 գըրոցն)։ «Զթագաւորազունն այր՝ զքրիստոսապաշտ խոհեմ և քաջի արանց պարոն՝ զպարէհամբաւն Հեթում, տէր Կոռիկոսոյ, յիշեսջիք 'ի Քրիստոս՝ որ Քրիստոսի էք վիճակեալք, որոյ հրամանաւ սկիզբն արարի գրութեան յոգնահանճար և յամենայնի պիտանացու և հարկաւոր տասիս բժշկարանի, ես ապիկար ծերունիս Վարդ Մլրտըլշցի։ Սկիզբն 'ի թու" Հայոց ՉԽԳ յամսեանն յունուարի 'ի քաննեսութ»։

Անմիջապէս յետոյ յ'էջն 15։ «Բժշկարան զոր փոխած է 'ի տաճիկ լեզուէ 'ի հայս, 'ի ժամանակս յաղթող թագաւորին Հայոց Գագկայ»։ Երեսուն և հինգ գլուխք բանից։

Ապա արդէն մեզի ծանօթ բժշկարանն Հերացւոյն, քսաներորդ առաջներորդ գլխէն անդին այլով շարադրութեամբ, և երեսուն գլուխք ընդ ամենայն։ Իսկ յ'էջ 143 մեր տպագրին (1832) դրուած գլուխն «Վասն եթէ քանի գիմաք մարթի բժիշկն զհիւանդն սատածել և բժշկել» առնուած է 'ի բուն և Գագկայ արքայի հրամանաւ գրուած բժշկարանէն, զոր յիշեցինք, և է գլուխն չորրորդ։

Հերացւոյն բժշկարանէն առջը ու րէշ յիշատակարան. «Որ բարձեր զցաւս հոգւոց և մարմնոց հաւատացե

լոյ քոյ Քրիստոս աստուած, բժշկեա զհոգւոյ և ըզ-մարմնոյ հիւանդութիւն ծառայի քո Հեթմոյ տեառն Կաւաւիկաւսոյ՝ ստացողի բժշկարանիս, և պահեա զնա իւրովքն ամենեքումք անփորձ կրկին կենդանու-թեամբք, կենդանոյն և անկենդանեաւն՝ զերկաքան-չիւրն ըստ քում հաճոյից կառավարելով. զի միայնով նշխար յուրշնեալ նախապետէն. ուրհնաժառանգ-թոան՝ անփոփոխելի ունելով իւրայովքն ըստ Աքրաա-մու 'ի փառս քո»։

Իսկ երրորդ բժշկարանն՝ ընդարձակագոյն է քան զերկուս առաջինսն, բաժանեալ յ'իննսուն և մի գը-լուխս. և յետոյ միւս այլ յիշատակարան. «Զստա-ցող բժշկարանիս զմեծ սեւաստաւսն թագաւորազն և բարեհամբաւ զայրն զպարոն Հեթումտէր Կաւաւի-կաւսոյ, և զիւրսն ամենայն՝ զկենդանիս և զհանգու-ցեալս, յիշեսջիք ողորմութեան Աստուծոյ արժանա-նալ. և որպէս յիշէքդ՝ և ձեզ շնորհեսցի. գրեցաւ 'ի թուին ՉԽԳ 'ի թագ" Հեթմոյ և 'ի հայր" Գրի-գորի»։

Իսկ Ամիրտովլաթ, Պունիաթ, Ասար՝ և այլք, բը-ժիշկք՝ և իրենց արուեստին վրայ թարգմանաբար երկասիրողք յարաբ և 'ի տաճիկ գրոց, մեր նոր մա-տենագրութեան վերաբերելով, գրուածքիս շրջանին մէջ չեն մտներ։

Ց'էջ 559. «Թուղթ հայրապետին Հռովմայ զոր գրեաց ընդ զաւրան և ընդ թագաւորան, որք եկին յասիա-կոյս ծովու փրկել զքաղաքն Երուսաղէմ. յետ երից ամաց գերութեանն։ — Կղեմէս եպիսկոպոս՝ ծառայ ծառայիցն Աստուծոյ... Խրատն զոր յԱստուծոյ արգար գատաստանէն»։

Սուրբ համառօտ Թուղթ մ'ալ նոյն քահանայա-պետին առ. նոյն կաթուղիկոս, գրեալ 'ի նմին ամսոյ յորում և առաջինն՝ յառաջ քան զչորրորդ կաղան-դացն յունիսի. «Կղեմէս եպիսկոպոս... Հաւատամք

եթէ անմոռաց ունիս»։ Այս երկրորդիս թարգմանութիւնն ալ եղած է 'ի Լամբրոնեցւոյն։

Երրորդ թուղթ Կղեմայ քահանայապետի «ուղղեալ առ պարոն մեր Լեւոն՝ որ 'ի ժամանակին իշխող էր Կիլիկիոյ և Սուրիոյ, և լերանց նոցին։ Կղեմէս եպիսկոպոս... մեր սիրեցեալ որդւոյ մեծապատիւ իշխանի Լեւոնի Լեռնցւոյ, ողջոյն և առաքելական աւրհնութիւն։ Խրատն»։ (Թարգմանչին յիշատակարանը տես յ'էջ 500 մեր այս երկասիրութեան)։

Ց'էջ 560. ** «Թուղթ հայրապետին և պապուն Հռովմայ՝ առ տէր մեր Գրիգորիս կաթուղիկոս Հայոց. ընդ որ առաքեցաւ և այս ձեռնադրութեան գիրքս 'ի նոյն հայրապետէն առ մեզ։ Լուսիոս եպիսկոպոս... Անապական հաւատոյ խոստովանութիւն... Գրեցաւ նամակս 'ի Վրաւն ('ի Վերոնա Իտալիոյ) դեկտեմբ. գ»։

Ց'էջ 572 (յաւելլի). «Թուղթ զոր առաքեաց Յակոբոս եպիսկոպոս Երուսաղեմի առ Կոդրատոս, զի ցուցցէ նմա թէ զինչ հրաման ետ Տիբերիոս կայսր վասն Հրէիցն որ 'ի խաչ հանին զՔրիստոս։ — Յակոբոս եպիսկոպոս Երուսաղեմի, առ Կոդրատոս անունդ բարի, և հաւատացեալ 'ի տէր, ողջոյն։ Լուայ ես և ուրախ եղէ թէ քանի՜ փոյթ ունիս դու վասն քարոզութեան աւետարանին Քրիստոսի, թէ որպէս խնդութեամբ ընդունիս զայնոսիկ որ կան 'ի ստուգութեան և 'ի ճշմարտութեան »...։

Ց'էջ 584. Ի դարանս մատենից Էջմիածնի, բաց 'ի մեզի արդէն ծանօթ՝ Գործոց կամ առաքելական Պըրակաց խմբագիր մեկնութենէն, կը յիշատակուի (թիւ 1330) Ոսկեբերանի ընծայուած նաև ամբողջական մեկնութիւն մը նոյն գրոց «մեծագիր, բոլորագիր, — կ'ըսէ ցանկողն, — գրեալ 'ի թուղթ բամբակի, 'ի թագաւորութեան Միքայելի Դուկի 'ի թըւին Հայոց ՇԻԵ (= 1076). ունի վերջն զյիշատա-

կարան ստացողին և աշխատասիրաբար նորոգողին, ըստ պատշաճի վերջաւորութեան գրոցն ընդարձակ պատմաբանօրէն »։

Նոյն ցուցակին մէջ կը յիշուի յանուն Ոսկեբերանի նաև Երեմիայ մարգարէական գրոց մեկնութիւն մը (Թիւ գրչ. 1408)։

ՑԱՆԿ

ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ . — Թարգմանութիւնք ընդհանրապէս ։ — Հինգերորդ դար հայկական մատենագրութեան ։ — Ցանկախառնութիւն թարգմանութեանց ու անոր պատճառը 1

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՐ . — Ս. Գրիգոր Լուսաւորիչ, և իրմէ յառաջ ասորական մատենագրութեան ազդեցութիւն 'ի Հայաստան, ու անոր մնացորդք հասած մինչև առ մեզ ։ — Թուղթ Աբգարու ։ — Թադէի առաքելոյ վկայաբանութիւն ։ — Ուրիշ հին՝ բայց ոչ բոլորովին հարազատ գրութիւնք, ասորի մատենագրութեան դրոշմը կրող 8

Ս. ՅԱԿՈԲ ՄԾԲՆԱՅ (ԱՓՐԱԱՏ) . — Ս. Յակոբ Մծբնայ և իր ազգութիւնը ։ — Իրեն ընծայուած Զգօն գիրք ։ — Յ — Ս. Ասսեմանի և իր կարծիքը այս գրոց վրայ ։ — Ափրաատ, և եւրոպական արդի բանասիրութեան կարծիքը ։ — Իր անուամբ գտնուած ճառեր ։ — Գլխակարգութիւնք և Նիւթ ճառից ։ — Ժամանակ անոնց յօրինման ։ — Ասորի բնագիրն և հայկականն ։ — Իրարու հետ համեմատութիւնք ։ — Հայ թարգմանութեան ժամանակն և արժէք ։ — Մատենախօսական տեղեկութիւնք . 20

ԶԵՆՈԲ ԳԼԱԿ . — Փ. ԲՈՒԶԱՆԴ . — Զենոբ Գլակ և իր պատմական գրուածը ։ — Ասորի ազդեցութեան կամաց կամաց պակսիլը առ մեզ ։ — Անոր պատճառները ։ — Փաւստոս Բիւզանդ, և նորագոյն բանասիրական կարծիք և ենթադրութիւնք՝ իր արդէն ծանօթ երկասիրութեան վրայ 46

ԵՒՍԵԲԻՈՍ ԿԵՍԱՐԱՑԻ. — Եւսեբեայ Եկեղեցական պատմութիւն։ — Թարգմանութիւնն յասորւոյն։ — Թարգմանութեան ժամանակն, և հաստուածք ու Խորենացւոյն։ — Մատենախօսականք. . . . 34

ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ԳԻՐՔ. — Ա. Թարգմանութիւն Եօթանասնից։ — Պտղոմեայ Եղբայրասիրի խնդիրն առ քահանայապետն Հրէից։ — Եօթանասնից երթն յԱղեքսանդրիա Եգիպտոսի։ — Պատմութիւն թարգմանութեանն և աւանդք։ — Անոր յարգն և ազնուութիւն 59

Բ. Ասորի հին թարգմանութիւնք։ — Այլևայլ հին թարգմանութիւնք Ս. Գրոց յասորի լեզու։ — Փեշիտտա կոչուածը։ — Ժամանակ թարգմանութեանն 69

Գ. Առաջին թարգմանութիւն Ս. Գրոց յասորականէ։ — Ազգին լրութեան աղերսը առ Ս. Սահակ վասն թարգմանութեան Ս. Գրոց 'ի հայ լեզու։ — Սուրբն Սահակ ձեռք կը զարնէ այս աշխատանքին յասորականէն։ — Ո՞ր մասին թարգմանութեան նուիրեց նա իր նախկին աշխատանքը։ — Սրբոյն Մեսրովպայ և երիցագոյն աշակերտաց գործակցութիւն։ — Հանգամանք այս առաջին թարգմանութեան 82

Դ. Թարգմանչաց երթն 'ի Բիւզանդիոն։ — Ո՞յք էն թարգմանիչք Ս. Գրոց։ — Աշակերտք սրբոցն Սահակայ և Մեսրովպայ։ — Անոնց դասակարգութիւնը։ — Երիցագոյնքն՝ գործակիցք իրենց վարդապետաց՝ 'ի վաստակ թարգմանութեանն։ — Առաքումն աշակերտացն յԵդեսիա և 'ի Բիւզանդիոն։ — Պատճառք առաքման նոցա և դեգերանաց։ — Դարձ 'ի Հայաստան՝ հաստատուն և ստոյգ օրինակօք աստուածաշունչ գրոց. . . . 100

Ե. Երկրորդ թարգմանութիւն Ս. Գրոց 'ի յունականէ։ — Թարգմանչաց դարձը 'ի Բիւզանդիոնէ։ — Իրենց հետ բերուած ստոյգ և հաստատուն օրինակք աստուածաշունչ մատեանց։ — Երկրորդ թարգմանութիւն, և անոր հաւատարմութիւնը . . . 110

Զ. Հնագոյն օրինակք Ս. Գրոց 'ի յոյն լեզու: — Ա. Սինայական կոչուածը, — Բ. Աղեքսանդրեան օրինակ: — Գ. Վատիկանեանը: — Դ. Եփրեմեան գրչագիր: — Ե. Բասիլեան գրչագիր: — Ուրիշ գրչագիրք 'ի յոյն բարբառ. . . . . .

Է. Հնագոյն գրչագիրք Ս. Գրոց 'ի հայ լեզու: — Գրչագիրք 'ի մատենադարանսն որ յԷջմիածին: — Ի մատենադարանի Մխիթարեանց 'ի Սուրբ Ղազար Վենետիկոյ: — Ուրիշ տեղուանք գանուած կամ յիշատակուած հին օրինակք աստուածաշունչ գրոց: — Նոր կտակարանաց գրչագիրք. . . 121

Ը. Հայ թարգմանութեան Ս. Գրոց կարգ և դասաւորութիւն: — Նախադրութիւնք 'ի գլուխ իւրաքանչիւր գրոց որքախօս մատենից: — Նոր կտակարանի նախադրութիւնք: — Ամմոն Աղեքսանդրացի: — Եւսեբիոս Պամփիլեայ: — Եւթաղ և իւրմէ յօրինուած գլխակարգութիւնք և Ստիքերոնք: — Համաձայնութիւնք աւետարանաց կամ Համաբարբառք: — Տատիանոս. 171

— Թ. Անյայտ կամ Անվաւեր գիրք 'ի հին կտակարանի: — Կտակք երկոտասան նահապետաց: — Պատմութիւն Յովսեփայ և Ասանեթայ: — Աղօթք Յովսեփայ և Ասանեթայ՝ յիշատակեալք առ Աւրիվանեցւոյն Մխիթարայ: — Մանասէի աղօթք: — Ուրիշ անվաւեր գրքեր 'ի սարկաւագադիր ցուցակի՝ առ Աւրիվանեցւոյն. 180

— Ժ. Անվաւեր գիրք նոր կտակարանի 'ի հայ թարգմանութեան: — Գիրք Մանկութեան Քրիստոսի: — Նիկոդիմեայ աւետարանին կամ Գործոց Պիղատոսի հատուածք: — Պաւղոսի թուղթ երրորդ առ Կորնթացիս և Կորնթացւոց առ Պաւղոս: — Հանգիստ սրբոյն Յովհաննու առաքելոյ: — Թուղթ Բառնաբայ 192

— ԺԱ. Հայկական թարգմանութեան հարազատութիւն 206

— ԺԲ. Արդեօք սուրբ գիրք ամբողջ 'ի հինգերո՞րդ դարու թարգմանուած են 'ի հայ. . . . 215

— ԺԳ. Հայ Թարգմանութեան վրայ վերջին աշխատութիւն. 227

— ԺԴ. Հայկական Թարգմանութեան յարգ և ազնուութիւն նաև առ արեւմտեայս. . . . 234

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՇՏԱՄԱՆՑ ԳԻՐՔ. — Կարգաւորութիւն օրհնութիւնաբեր ցուցակի։ — Պատարագամատոյց գիրք. — Սրբոյն Յակովբայ Կրտսերոյ ընծայուած պատարագամատոյց։ — Պատարագ սրբոյն Իգնատիոսի աստուածազգեաց հայրապետի— Պատարագ սրբոյ Լուսաւորչին։ — Աստուածային պատարագ՝ զոր արարեալ է սրբոյն Սահակայ Հայոց հայրապետի։ — Սրբոյն Աթանասի։ — Սրբոյն Գրիգորի աստուածաբան հայրապետի։ — Սրբոյն Յովհաննու Ոսկեբերանի։ — Բարսղի Կեսարու հայրապետի։ — Կիւրղի Աղեքսանդրացւոյ։ — Նախարարեցելոց։ — Ժամագիրք և այլ հասարակաց աղօթից և եկեղեցական կարգաւորութեանց գիրք. . 245

Արգիսայ եպիսկոպոսի ասորւոց. — Թղթակցութիւնք ընդ մերոյն 'ի վեցերորդ դարու 272

Աբրահամ Եփեսոսի. — Ճառ յաւետիս սրբոյ Կուսին. 274

Ադուբնացի (Ս.) Թովմաս. — Յաղագս եօթն խորհրդոց եկեղեցւոյ։ — Գիրք ընտրութեանց Քրիստոսի 275

Ադադրոն. — Գուշակութիւնք. 276

Աթանաս (Ս.) Մեծն. — Յաղագս մարմնաւորութեան Որդւոյ։ — Թէ մի է Քրիստոս, ընդդէմ Պաւղոսի Սամոսատացւոյ. — Յոր Թէ Անձն իմ յոյժ խռովեալ է։— Առ Լիբերիոս եպիսկոպոս Հռովմայ։— Յաղագս փրկական յայտնութեան Յիսուսի Քրիստոսի։ — Յաղագս սրբոյ Երրորդութեան։ — Առ Փիղադելփոս եպիսկոպոս։ — Ընդդիմասացութիւն Արիոսի՝ յաղագս աստուածութեան Որդւոյ։ — Յաղագս սրբոյ Հոգւոյն։ — Առ Սրապիոն վասն սուրբ Հոգւոյն։ — Դարձեալ յաղագս Հոգւոյն ընդդէմ Արիոսի։ — Յամենասուրբ Երրորդութիւնըն։ — Ի սուրբ խաչն։ — Ի վերացումն Տեառն։—

Ի սուրբ Աստուածածինն (երկու հատք)։ — Ի սուրբ Ստեփաննոս նախավկայ։ — Թուղթ առ Աւգոստինէ յԱփրիկայ։ — Առ Եպիկտետոս եպիսկոպոս։ — Առ Յովբիանոս թագաւոր։ — Առ Արեոս՝ զի ասէր թէ կրտսեր է Որդին քան զՀայր։ — Հարցմունք Կիւրղի Երուսաղեմայ հայրապետի։ — Պատարագամատոյց։ — Դաւանութիւն ուղղափառ հաւատոյ։ — Արտադրութիւն առաքելական յաղագս աստուածայնոյն մարմնաւորութեան։ — Կանոնք։ — Պատմութիւն պատկերին որ 'ի Բիւրիտոն։ — Տեսիլ սրբոյն Աթանասի։ — Վասն ուղղափառ հաւատոյ։ — Վարք երանելւոյն Անտոնի միայնակեցի։ — Այլեւայլք 278

Ակակ Մելիտինոյ. — Թուղթք առ Ս. Սահակ. . 288

Ակակ և Պետրոս, պատրիարքունք. — Թղթակցութիւնք 289

Աղաթիղոս, սարկաւագ. — Աղերս առ Յուստինիանոս կայսր. 292

Աղեքսանդր աշխարհագիր. — Հատուածք . . 292

Աղեքսանդրի պատմութիւն. — Տես Վարք Աղեքսանդրի. . . . .

Աղեքսանդրոս, վկայագիր. 294

Ամբրոսիոս եպիսկոպոս Մեդիոլանու. — Հատուածք 294

Ամփիլոքոս Իկոնիոյ. — Հատուածք . . . 295

Անաստաս թագաւոր. — Թուղթ ընդդէմ ամենայն հերձուածողաց. 295

Անաստաս կրօնաւոր 'ի Սինեայ. — Հատուած. . 296

Անդրէաս Կրետացի. — Մեկնութիւն Յայտնութեան Յովհաննու. 299

Անտոն Հռովմայեցի, վկայագիր. 304

Անթիպատրոս Բոստրացի. — Ճառք. . . . 304

Անսիղք Անտիոքայ, թարգմ. Սմբատայ Գունդստապլի 306

Ապողինար Աղեքսանդրացի. — Հատուածք. . . 310

Առաքելոց վարդապետութիւն 325

Ասկլեպիադէս բժիշկ. — Հատուածք. . . . 316

Ատտիկոս Կոստանդնուպոլսի. — Թուղթք և հատուածք ճառից. 317
Արատոս, աստեղաբաշխ. (առ Շիրակացւոյն). . 318
Արիստիդէս Աթենացի. — Հատուած 'ի Ջատագովութեան գրոցն. 318
Արիստոտէլ Ստագիրացի. — Ստորոգութիւնք. — Պէրիարմենիաս կամ Յաղագս մեկնութեան. — Թուղթ առ Աղեքսանդր թագաւոր. — Յաղագս առաքինութեանց. — Պատճառաց գիրք. . . 321
Բաբելաս Աղեքսանդրու. — Ճառք. . . . 324
Բարսեղ Կեսարացի. — Յաղագս պահոց: — Ջարբեցողաց: — Ի բանն՝ Հայեաց 'ի քեզ: — Յաղագս ապաշխարութեան (երկու ճառք): — Առ ընչեղս: — Զվաշխողաց: — Զբարկացողաց: — Զնախանձաց: — Ի սաղմոսն (ճառք հինգ): — Յաղագս Երրորդութեան: — Յաղագս պահոց: — Ի սկզբանն էր Բանն: — Ի ծնունդ փրկչին: — Տեսութիւն 'ի մարմնաւորութիւն փրկչին: — Տեսութիւն յաղագս հաւատոյ: — Առ Ոպտիմոս եպիսկոպոս: — Առ Եւսեբիոս եպիսկոպոս: — Առ Գրիգոր աստուածաբան: — Առ Դիոդորոս երէց: — Ի վկայն Յուղիտայ: — Ի սուրբն Ստեփանոս: — Ի քառասուն վկայսն: — Ի Գորդիոս վկայ: — Յորդորակք 'ի մկրտութիւն: — Թէ չէ պատճառ չարեաց Աստուած: — Յաղագս ողորմածութեան և աղօթից: — Ի քառասնօրեայ գալուստն 'ի տաճարն: — Առ Տերենտիոս զօրապետն: — Օրհնութիւնք, աղօթք, քարոզք: — Հատուածք: — Սահմանք կրօնաւորականք: — Վեցօրեայ ճառք: — Թուղթք: — Կանոնք. 335
Գրիգոր աստուածաբան. — Ճառք. — Առ Եւնոմիացին. — Յաղագս հաւատոյ. — Յաղագս Որդւոյ, բան առաջին. — Առ այնոսիկ որ ասեն թէ Հայր մեծ է քան զՈրդին: — Յաղագս Որդւոյ, բան երկրորդ: — Յաղագս սրբոյ Հոգւոյն: — Յաղագս աստուածաբանութեանն: — Առ Արիանոսս: — Առ Կղեդոնիոս (երեք ճառք:) — Յաղագս բարեկար-

դութեան 'ի խօսս ։ — Խաղաղականք, երգք ։ — Յաղագս 'ի ձեռնադրութիւն անհաւանութեան հրաժարելոյ ։ — Յինքն և 'ի ժողովուրդն պատասխանի ։ — Պատասխանի յորժամ եպիսկոպոս ձեռնադրեցաւ ։ — Ի հայրն իւր, մերձ եղելոյ Բարսղի ։ — Ի Բասիլիոս Կեսարացի ։ — Ի Կեսարիոս յեղբայր իւր ։ — Ի քոյրն իւր ։ — ՅԱթանասիոս եպիսկոպոս ։ — Ի ծնունդն ։ — Ի յայտնութիւն տեառն ։ — Ի մկրտութիւն տեառն ։ — Ի Պասքա և 'ի հեղգութիւն ։ — Ի Նոր Պենտեկոստ և 'ի սուրբ Հոգին ։ — Ի ժողովողն ։ — Առ հայրն իւր, լռեալ և զգացեալ ։ — Յաղագս աղքատսիրութեան ։ — Ի Կիպրիանոս եպիսկոպոս և 'ի վկայ ։ — Ի Մակաբայեցիսն ։ — Առ Կեսարիոս՝ վասն Նորին խորհըրդոյ ։ — Ի մահն Մաքսիմիանոսի ուսումնակցին ։ — Ի սուրբ խաչն աստուածընկալ, — Սահմանք կանոնադրութեան ։ Առ Նաւարկութիւնն (մետասան ճառք) 346

Գրիգոր (Ա) Հռովմայ. — Վասն քաղաքավարութեան զանազան հարցն որ յԻտալիա փայլեցին ։ — Առ Պետրոս նախասարկաւագ եկեղեցւոյն Հռովմայ (չորս գիրք) 358

Գրիգոր Նիւսացի. — Յ'ինն երանութիւնս (ճառք չորեքտասան) ։ — Մեկնութիւն ժողովողին. (ութ ճառք) ։ — Յորդորումն մանկանց 'ի կուսութիւն — Թուղթ յաղագս Երգոյ երգոց ։ — Խօսք յաղագս Երգոյ երգոց. (խօսք չորեքտասան) ։ — Յաղագս բնութեան մարդոյ ։ — Տեսութիւն յաղագս մարդոյս կազմութեան ։ — Ի յիշատակ հանգուցելոց 'ի Քրիստոս ։ — Ի թաղումն տեառն և 'ի Յովսէփ Արեմաթացի ։ — Ի սուրբ վկայն Թէոդորոս ։ — Ի վարս և 'ի սքանչելիս սրբոյն Գրիգորի Սքանչելագործին ։ — Ի մանկունսն Բեթղեհեմի ։ — Ի սուրբն Ստեփանոս նախավկայ ։ — Ի սուրբ հայրն Եփրեմ ։ — Ամենայն չար տանջելի. . . . 362

Գրիգոր Սքանչելագործ. — Ի ծնունդն Քրիստոսի (երկու ճառք) ։ — Յաւետիս Աստուածածնի ։ —

Գովեստ 'ի սուրբ կոյսն Մարիամ (երեք հառք) ։—
Ցողջոյն Մարիամու առ Եղիսաբեթ ։ — Ներ-
բողեան 'ի սուրբն Ստեփանոս ։ — Երկոտասան գը-
լուխք նզովից . — Հաւատամք 374
Դանիէլ Ուռթայ . — Կեանք և քաղաքավարութիւն
Յովհաննու՝ որ կոչի Կլէմաքս ։ — Լուծմունք Կլիմա-
քայ գրոց 378
Դիոնեսիոս Աղեքսանդրու . — Ի հակաճառէն Պաւ-
ղոսի Սամոսատացւոյ ։ — Ի մեծի աւուր ուրբա-
թու ։ — Հաւատուած 379
Դիոնեսիոս Արիսպագացի . — Առ Տիմոթէոս աշա-
կերտ Պաւղոսի՝ յաղագս երկնայնոյն քահանայու-
թեան ։ — Առ նոյն՝ յաղագս եկեղեցականին քա-
հանայապետութեան ։ — Առ նոյն՝ յաղագս աս-
տուածայնոցն անուանց ։ — Թէ զինչ է աղօթից
զօրութիւն ։ — Սրբոյն Յեռոթէոսի՝ 'ի առաքակա-
նացն օրհնաբանութեանց մեկնութիւն ։ — Թուղթ
առ Յովհաննէս առաքեալ և աւետարանիչ ։ — Յա-
ղագս մահուան Պետրոսի և Պաւղոսի առ Տիմո-
թէոս ։ — Առ նոյն Տիմոթէոս՝ յաղագս խորհրդա-
կա՛ ի աստուածաբանութեան ։ — Թուղթք . . 381
Դիոնեսիոս Թրակացի . — Քերականութիւն . . 394
Դորոթէոս եպիսկոպոս . — Յաղագս եւթանասուն և
երկու աշակերտաց Քրիստոսի — Յաղագս կատար-
ման աշակերտացն . — Հաւատամք 396
Եթերիոս փիլիսոփայ . — Հաւատուած . . . 400
Եղագոն . — Պատմութիւն վարուց սրբոյն Բարսղի 401
Եպիփան Կիպրացի . — Պատմութիւն երանելւոյն Ե-
պիփանու Կիպրացւոյ ։ — Ի սկզբնագիր Արարա-
ծոց և յաւետարանական քարոզութեանց որ ըստ
Ղուկայ (տասն գլուխք) ։ — Յաղագս սրբոյ կուսին
տալ 'ի տաճարն քահանայապետին . — Ի գալ սրբոյ
կուսին առ Եղիսաբեթ ։ — Յաղագս ծնալոյն Մա-
րիամու առ Եղիսաբեթ ։ — Յաղագս Յովհաննու
կարապետին ։ — Ի սուրբ տնտեսութիւնն և 'ի ծը-
նունդն Քրիստոսի (երեք հառք) ։ — Ի դառնալն
Յիսուսի Քրիստոսի յԵգիպտոսէ և բնակել 'ի Նա-

զարէթ ։ — Ի թլփատութիւն տեառն ։ — Ի գալուստն քառասնօրեայ 'ի տաճարն ։ — Ի ծնունդն Քրիստոսի և 'ի գալ մոգուցն յերկրպագութիւն ։— Ի սուրբ մանկունս Բեթղեհեմի ։ — Ի գնալն 'ի տօն զատկին ։ — Ի մկրտութիւն տեառն (երկու հատք) ։ — Ի Յովհաննու աւետարանին մեկնութենէ (երեք հատք) ։ — Յաղագս յառաջնապարգեւ նշանին 'ի Կանա ։ — Յաղագս վերջնումն ժամանակի ։ — Յաղագս միւսանգամ գալստեան ։ — Ի գալըստն տեառն 'ի Բեթանիա ։ — Ի գալուստ տեառն յաւուր արմաւենեաց ։ — Ի մեծի աւուր երկուշաբաթի ։ — Ի մեծի երեքշաբաթի աւուր ։ — Ի մեծի չորեքշաբաթի աւուր ։ — Ի մեծի հինգշաբաթւոջ աւուր ։ — Ի մեծի աւուր ուրբաթի ։ — Ի մեծի շաբաթու աւուր ։ — Յաղագս յարութեան Քրիստոսի (չորս հատք) ։ — Վերատին կողման Թովմայի ։ — Երրորդումն կիւրակէի (երկու հատք) ։ — Յաղագս առ երկնային դասքն վերանալ Քրիստոսի ։ — Յաղագս գալստեան Հոգւոյն սրբոյ ։ — Ի փոխումն սուրբ Աստուածածնի ։ — Յաղագս սուրբ խաչին ։ — Յաղագս պատկերի սրբոյ զատատուակին ։ — Յաղագս տարագրեալ եղծեալ երեք բանից տէրունական պատկերին ։ — Յաղագս բարուախօսին ։ — Մեկնութիւն գրոցն Թագաւորութեանց ։ — Սաղմոսաց մեկնութեան այլ և այլ հատք ։ — Ճառք զանազան ։ — Ի Հաւատոյ գըրոց ։ — Այլ և այլք ։ — Մահ մարգարէից ։ — Վասն ականց պատուականաց 401

Երանոս Լուգդոնի. — Հատուածք հաւից ։ — Ի Մատթէոսի մեկնութենէն ։ — Յաղագս գնացից առաքելոց ։ — Յաղագս միաւորութեան . . . 419

Եւագր Պոնտացի. — Վարք Եւագրեայ երանելւոյ ։— Եւագրեայ նշանակ յԵզեկիէլէ ։ — Գիտնաւոր և արդիւնաւոր ։ — Վասն հանդերձից սրբոց հարցըն ։ — Վասն ութ խորհրդոց ։ — Վասն ախտիցն որոց մինչ յիշատակքն բծախառն 'ի մեզ կրին ։— Ճառ Քրատեայ ։ — Յաղագս երջանկութեան ։ —

Վասն պաշտաման ։ — Այլեւայլք ։ — Հարիւրաւորք վեցերորդք՝ յաղագս ընդդէմ բանաստեղծից արտաքնոց ։ — Թուղթք առ Մելանիա ։ — Մեկնութիւն մարգարէութեանն Եզեկիելի . . . 421
Եւկղիդէս . — Հատուածք յԵրկրաչափութեան գրոց 432
Եւսեբիոս Աղեքսանդրացի . — Ճառ 'ի համբարձումն տեառն ։ — Վասն հարցման Աղեքսանդրի վասն կիւրակէի 432
Եւսեբիոս Երուսաղեմի . — Հատուածք 'ի խմբագիր մեկնութենէ Ղեւտական գրոց 433
Եւսեբիոս Կեսարացի . — Քրոնիկոն կամ Կանոնք ժամանակաց 434
Եփրեմ Խուրի ասորի . — Յաղագս մեկնութեան Արարածոց ։ — Ելք ։ — Ղեւտացւոց ։ — Թիւք ։ — Երկրորդ օրինաց ։ — Մեկնութիւն Գրոց ազգաց ։ — Սամուէլի ։ — Թագաւորութեան ։ — Իբրամենու ։ — Համաբարբառ ։ — Թարգմանութիւն աւետարանի ։ — Ի մարգարիտն յայտնութիւն ։ — Յաղագս յարութեան ։ — Վասն հաստոյ մանանխոյ ։ — Յաղագս որ ունի զհարսն՝ փեսայ նա է ։ — Մեկնութիւն Թղթոցն Պաւղոսի ։ — Ի ծնունդն Քրիստոսի (երեք ճառք) ։ — Վասն դալստեան հրեշտակապետին ։ — Ի գալուստն փրկչին յԵրուսաղէմ ։ — Ի յարութիւն փրկչին ։ — Ի սուրբ խաչն ։ — Առ Յովսէփ ։ — Յապաշխարութիւն Նինուէացւոց ։ — Ի յիշատակի սրբոց Մակաբայեցւոցն ։ — Ներբողեան 'ի սուրբն Յովհաննէս՝ կարապետ և մկըրտիչ ։ — Ի սուրբն Ստեփանոս նախավկայ ։ — Ի գալուստն տեառն 'ի տաճարն քառասնօրեայ ։ — Յաղագս կրօնաւորութեան ։ — Այլեւայլք ։ — Յարեւելեան գրոցն ասացեալք ։ — Ի յարութիւն մեռելոց ։ — Վասն դատաստանին և միւսանգամ գալստեան ։ — Յաղագս ապաշխարութեան ։ — Հատուածք 'ի զանազան ճառից ։ — Ողբք Նիկոմիդիոյ ։ — Կտակ Եփրեմի ։ — Կցուրդք . . . 443
Զենոբ Եպիսկոպոս . — Ի մատնութիւն տեառն ։ — Ի լուացումն ոտից աշակերտացն ։ — Ի կաթուղիկէ

եկեղեցին ։ — Վկայութիւն վասն մարդեղութեանն ։ — Ի սուրբն Մելիտոս Անտիոքայ ։ — Վասն յիշատակի սրբոց մարտիրոսաց 467

Թադէոս առաքեալ. — Կանոնք ։ — Վասն յարու-թեան մեռելոց ։ — Յաղագս առաջին գիւտի սուրբ խաչին 468

Թէոտալիոս պատրիարք. — Յաղագս ընդունելոյ ըղ-գիր Յայտնութեան 469

Թէոդոս եպիսկոպոս, վկայագիր Կիւրակոսի և մօր նորա Յուղիտայ 469

Թէոդոտոս Անկիւրիոյ. — Ի ծնունդ փրկչին, (ճառք երկու) ։ . . . .

Թէոփիլոս. — Ներբողեան 'ի սուրբն Գ. Լուսաւորիչ. 471

Թէոփիլոս Աղեքսանդրու. — Յաղագս միջնոց քառասա-նորդաց պահոց ։ — Ներբողեան սրբոց քառասա-նից. — Մեծի չորեքշաբաթին 473

Թէոփիլոս աշակերտ Ոսկեբերանի. — Ճառք այլեայլ 'ի տնօրինականս ։ — Ի յղութիւն Յովհաննու Մը-կրտչի ։ — Գովեստ յաւետարանն Յովհաննու ։— Հաւատամք 475

Թովմաս առաքեալ. — Աղօթք գոհութեան . . 478

Թուղթ երկնաւոր 478

Իգնատիոս աստուածազգեաց. – Թուղթք առ Եփեսա-ցիս, առ Մագնիսացիս, առ Տրալլիանոսիացիս, առ Հռովմ քաղաք, առ Փիլադելփիացիս, առ Զմիւռնա-ցիս, առ Պաւղիկարպոս եպիսկոպոս, առ Մարիա տիկին, 'ի Տարսոն քաղաք, առ Անտիոք քաղաք, առ Ուրիոն սարկաւագ, առ Փիլիպպոս քաղաք ։ — Թուղթ Մարիայ տիկնոջ առ սուրբն Իգնատիոս . 479

Իշաւխան. — Գիրք 'ի վերայ բնութեան՝ հանրական և մասնական 483

Իսիդոր Պեղուսացի. — Պատուիրկք . . . 484

Իսիքիոս երէց. — Մեկնութիւն Յոբայ. — Հա-տուածք 'ի խմբագիր մեկնութենէ կաթողիկեայց . 485

Իսիքիոս Միլեսացի. — Ի Հայրենաջանոյն Կոստան-դնուպոլսոյ հատուած 487

Իւղոյն պատմութիւն 487

Լաբուբնիա, Թուղթ Աբգարու 488

Ղեւոնդ (Ս.) տումար. 488

Կայսերաց պատմութիւն. — Հատուածք . . 488

Կանոնագիրք. — Վարդապետութիւն առաքելոց: — Երկրորդ առաքելական եւ գլուխք կանոնք: — Կանոնք առաքելականք 'ի ձեռն Կղեմայ: — Կանոնք Թադէի առաքելոյ: — Կանոնք Փիլիպպոսի առաքելոյ: — Հարցն հետեւողաց յետ առաքելոյն: — Նիկիականք երկրորդ: — Անկիւրիոյ կանոնք: — Վասն որք ժողովեալ 'ի Կեսարիա եպիսկոպոսունք՝ սահմանեցին կանոնս: — Նէոկեսարիոյ կանոնք: — Սրբոյն Գրիգորի առաքելոյն Հայոց: — Սրբոյն Աթանասի: — Երանելւոյն Մակարայ: — Կոստանդինուպոլսի ժողովոյն: — Սահմանք երանելւոյն Գրիգորի աստուածաբանի Նազիանզու: — Գիր կանոնական սրբոյն Բարսղի: — Տեառն Եփրեմի կրօնաւորի: — Կեսարիայ կանոնք: — Նէոկեսարիայ կանոնք: — Գանգրայ կանոնք: — Անտիոքայ կանոնք: — Ղաւոդիկեայ կանոնք: — Սարդիկեայ կանոնք: — Եպիփանու: — Եփեսոսի սուրբ ժողովոյն: — Կիւրղի Աղեքսանդրացւոյ: — Անտիոքայ երկրորդ: — Նիկիայ երկրորդ: — Կանոնագիրք նոր, Թարգմանութիւն Անաւարզեցւոյն . 489

Կարգադրութիւն մայրաքաղաքաց եւ մետրապոլտաց . 500

Կարգաց գիր լատին եկեղեցւոյ 500

Կեղեստինոսի Ա. քահանայապետի Թուղթ . . 501

Կիպրիանոս (Ս.) Անկիւրիոյ. — Հատուածք . . 503

Կիւրեղ (Ս.) Աղեքսանդրու. — Արարածոց մեկնութիւն: — Յ'Ելս: — Ի յՂեւտացիս: — Յ'երկրորդ օրէնքն: — Ի Յեսու որդի Նաւեայ: — Ի Դատաւորս: — Ի Թագաւորութիւնսն: — Մեկնութիւն աւետարանին Ղուկայ: — Ի մեկնութենէն Եսայեայ մարգարէի: — Ի մեկնութենէ մարգարէին Յովելեայ: — Ի Զաքարիայ մեկնութենէ: — Յ'Եբրայեցւոց Թղթոյն մեկնութենէ: — Պարապմանց գիրք: — Լուծումն օրինականաց խնդրոց 'ի ձեռն Տիբերեայ քահանայի: — Առ Թէոդոս Թագաւոր.

յաղագս տօնի զատկին ։ — Առ Եւդոքսիա թագուհի ։ — Յաղագս հնազանդութեան Քրիստոսի ։ — Ճառք ։ — Առ Արկադեայ և Մարինեայ՝ քորս արքային Թէոդոսի ։ — Առ թագաւորն Թէոդոս ։ — Առ նոյն թագաւոր ։ — Ընդդէմ ամբարշտին Նեստորի առ Երեմիաս ։ — Առ Սուկեսոս եպիսկոպոս ։ — Առ նոյն Սուկեսոս ։ — Առ Ակակիոս եպիսկոպոս ։ — Առ Յովհաննէս եպիսկոպոս Անտիոքայ ։ — Առ Անաստասիոս, Մարտինոս և Յովհաննէս ։ — Ի սուրբ Աստուածածինն՝ ասացեալ 'ի ժողովն Եփեսոսի ։ – Դարձեալ 'ի նոյն ։ – Յ'Եբրայեցւոց թղթոյն մեկնութենէ ։ – Թուղթք (երկու) Կիւրղի առ Նեստոր. — Գանձուց գիրք ։ — Հատուածք ճառից. 503

Կիւրեղ Երուսաղեմի. — Կոչումն ընծայութեան (ուխտատան ճառք) ։ — Թուղթ առ Կոստանդիանոս թագաւոր ։ — Հատուածք ճառից. , . 524

Կիւրիոն, կաթուղիկոս Վրաց. — Թղթակցութիւնք 529

Կլիմաքոս Յովհաննէս. — Սանդուխք աստուածային ելից. 531

Կղեմէս (Գ.) քահանայապետ. — Թուղթք առ Գրիգոր կաթուղիկոս և առ Լեւոն 539

Կոստանդիանոս կայսր. — Թուղթ առ Շապուհ արքայ Պարսից. 539

Հարանց վարք. 539

Հեղարիոն. — Պատմութիւն վարուց Աթանագինեայ եպիսկոպոսի 454

Հիպպողիտոս Բոստրացի. — Ի յարութիւն Ղազարու ։ — Յերգս երգոց մեկնութենէ ։ – Հատուածք ։– Մեկնութիւն օրհնութեանցն Մովսիսի. . . 554

Հռովմոց թուղթ առ Հայս յաղագս միաբանութեան հաւատոյ. 557

Ձիթաղարմանութիւն. 558

Ղեւտական դպրոց մեկնութիւն, խմբագիր . . 558

Ղինոս կրօնաւոր. — Վասն հինգ պատրիարքական աթոռոց. 559

Ղուկիոս (Գ.) քահանայապետ. — Թուղթ առ Գրիգոր Տղայ. 560

Մակար Երուսաղեմի. — Թուղթ առ Հայս . . 560

Մարութա եպիսկոպոս. — Բանք և հարցմունք: — Վկայաբանութիւն արևելեան վկայից: — Ի սուրբ յարութիւնն Քրիստոսի 560

Մաքսիմոս եպիսկոպոս. — Յաղագս եկեղեցւոյ նշանակք 541

Մեթոդիոս եպիսկոպոս. — Յաղագս անցելոյ՝ ներկայիս և ապառնեաց ասացուածք: — Ի մեկնութենէ Դանիէլի 561

Մելիտոս Անտիոքայ. — Ի լուացումն ոտից աշակերտացն 564

Մեղիտէ. — Պատմութիւն վարուց սրբոյն Յակովբայ Մծբնայ 564

Միխայէլ ասորի. — Համառօտ գրոյցք ժամանակաց: — Ի յիշատակի սուրբ Թագաւորացն Թէոդոսի մեծի և փոքու: — Միքայելի իշխանի Վուլղարացւոց՝ վասն եօթն տիեզերական սուրբ սինհոդոսաց 564

Մովսէս երէց. — Թուղթ առ տէր Կոմիտաս կաթուղիկոս Հայոց. 571

Մովսէս Ցուրտաւայ եպիսկոպոսի. — (Երեք) թուղթք առ Վրթանէս քերթող: — Թուղթ շրջապայական: — Պատճառք չորրորդ ժողովոյ երկաբնակացն: — Թուղթ առ սրբասէր տէր Աբրահամ: — Առ Սմբատ Վրկան մարզպան. 571

Յակոբ Սրճեցի. — Ի յարութիւն Ղազարու: — Ի խաչելութիւն Քրիստոսի և յաւազակն: — Ի սուրբ զատիկն և յարութիւն Փրկչին: — Ի յարութիւն տեառն և 'ի զինուորսն: — Ի յարութիւն Քրիստոսի: — Ի համբարձումն տեառն: — Ի նոր կիւրակէն և 'ի սուրբ առաքեալն Թովմաս: — Ի ննջումն սրբոյ Աստուածածնին: — Ի Յովհաննէս մկրտիչ և 'ի կարապետ Քրիստոսի: — Վասն առաջին խորհրդոյն և 'ի վերայ նահապետաց և մարգարէից: — Յաղագս Անտիոքայ քաղաքին (հատք երկու): — Բանք վասն ուսման տապանակին 572

Յովհաննէս Դամասկացի. — Բան իմաստութեան հաւատորիցն: — Բանք վասն սուրբ հաւատոյ և ընդ-

դիմադրութիւն Նեստորիոսի ։ — Վասն դրախտին ։ — Ի ննջումն սրբոյ Կուսին ։ — Յաղագս գոյի էութեան և պատահման . — Բարաղամու և Յովասափայ պատմութիւն 575
Յովհաննէս Երուսաղեմի . — Ներբողեան 'ի սուրբ եկեղեցին տերունեան 580
Յովհան Ոսկեբերան . — Յաւետարանագիրն Մատթէոս ։ — Մեկնութիւն թղթոյն Պաւղոսի ։ — Հատուածք 'ի Գործոց մեկնութենէ — ։ Վասն Հերովդիադեայ ։ — Ի ձկնորսութիւնն Պետրոսի ։ — Ի սուրբ Աստուածածինն ։ — Յաւետիս Աստուածածնի ։ — Ի Յովսէփ ։ — Ի Շուշան ։ — Յանառակ որդին ։ – Ի Քանանացին և 'ի փարաւոն ։ – Ի հարիւրապետն ։ — Յարարածոց մեկնութենէ մինչ յաքսորսն էր ։ — Ի Զաքէոս մաքսաւոր ։ — Ի կինն մեղաւոր ։ — Ի տասն կուսանսն ։ — Ի թերահաւատութիւն Թովմայի ։ — Ի վերացումն տեառն ։ — Ի սուրբ խաչն Քրիստոսի ։ — Յաղագս չողբալոյ ըզվախճանեալսն ։ — Յաղագս հաւատոյ ։ — Ի սուրբն Գրիգոր Լուսաւորիչ (հատք կրկին երկբայականք) ։ — Այլևայլ հատք անընտրելիք ։ — Հարազատ հատք , (բազմաթիւք) ։ — Առ Աննմանսն (եօթն հատք) ։ — Անդրիականք (քսան և մի հատք) ։ — Ցուցակ հառից որ յԵրուսաղեմի մատենադարանին . (ութսուն հատք) ։ — Մեկնութիւն յաւետարանն Յովհաննու ։ — Ի մարգարէն Եսայիաս մեկնութիւն . . 581
Յովհաննու Ոսկեբերանի վարք , թարգմանութեամբ Վկայասիրին 616
Յուլիանոս Աղիկառնացի . — Նախադրութիւն 'ի վերայ անձին Յովբայ 617
Յուլիոս եպիսկոպոս Հռովմայ . — Թուղթ առ Դիոնեսիոս 618
Յուստոս Երուսաղեմի . — Յաղագս նորընծայ պատարագին և յաղագս աղօրհնեաց ։ — Օրհնութիւն Եկեղեցւոյ , խաչի , մատաղի 618
Յոբթէոս . — Յաստուածաբանականացն ատեքերանաց 618
Յովհաննէս փարանեցի . — Ութ հատք յընթերցուածոց մեկնութենէ 618

Նանա սարկաւագ ասորի. — Մեկնութիւն Յովհաննու աւետարանի 619
Նեղոս (Ս.) — Խրատք 625
Նեմեսիոս. — Յաղագս բնութեան մարդոյ . . . 629
Նեքտառիոս եպիսկոպոս. — Ի տօնի սուրբ և հզօրա- ղդեաց վկային Թէոդորոսի : — Ի նախավկայն սուրբ Ստեփաննոս 632
Նէարքոս. — Վկայաբանութիւն սրբոյն Պողիկարպոսի 633
Նիկոդիմոսի աւետարան 199
Նոննոս. — Ժողովարանք պատմութեան տառասպելեաց՝ զորս յիշատակեաց Աստուածաբան . . . 634
Շարադրութիւնք ինքնակալացն Հռովմայ : — Շարա- դրութիւն հայրապետացն Հռովմայ . . . 647
Ողոմպիանոս. — Առակք 648
Որոգինէս. — Ի խմբագիր մեկնութենէ կաթուղիկէ թղթոց : — Ի խմբագիր մեկնութենէ Ղեւտական գրոց հատուածք : — Մեկնութիւն Երգոց երգոյն : — Յառաջաբան Թագաւորութեան գրոց . . . 649
Պամփիլոս – Հիւպպողիտոս. — Հատուած . . . 653
Պատարագամատոյց 248
Պետրոս Կրետացի. — Յաղագս դրամին, և 'ի կրօնաւոր որդին 635
Պետրոս Մանկոս. Տե՛ս Ակակ . . . .
Պիսիդէս. — Վեցօրեայ 654
Պղատոն. — Ի Մինովս և յաղագս Օրինի (երկոտա- սան տրամախօսութիւնք) : — Յ'Եւթիփռոն, կամ յաղագս Սրբոյ : — Առ Տիմէոս, սակս բնութեան : — Սոկրատայ պատասխանի 636
Պոլոբիոս եպիսկոպոս. — Ի սքանչելիս Եպիփանու Կիպրացւոյ 660
Պոլոքրոն. — Հատուած 'ի Ղեւտական գրոց մեկնու- թենէ 661
Պտղոմեանք. — Վասն Պտղոմեանցն պատմութիւն թէ որչափ ժամանակս թագաւորեցին . . 661
Պրոկլոս. — Ի ծննդեանն Քրիստոսի : — Ի սուրբ աւե- տարանիչն Ղուկաս : — Թէ աստուածածին է սուրբ կոյսն Մարիամ : — Ի խորհուրդ տէրունական խա-

չին ։ — Յաւետիս սուրբ Աստուածածնի ։ — Ի մեկնութենէ Զաքարիայ ։ — Ի մկրտութիւնն Քրիստոսի ։ Ի ծնունդ Յովհաննու Մկրտչի ։ — Ի սուրբն Յովհան Ոսկեբերան ։ — Յաղագս կաղանդաց ։ — Թուղթ առ Սահակ հայրապետ և առ սուրբն Մաշտոց 662

Պրոկղ իմաստասէր . — Սահմանք կամ Հրահանգք աստուածաբանականք 666

Պրոխորոն . — Յաղագս աւետարանչին Յովհաննու և յաղագս փոխման նորա յաշխարհէ 669

Պորփիւր . — Ներածութիւնք 675

Ջաւանշիր . — Պատմութիւն Վրաց 676

Ռոմանոս կայսր . — Թուղթ առ Գագիկ թագաւոր Հայոց 678

Սահակ . — Յասացուոց մեկնութենէն վասն աստեղն երեւելոյ . . : 678

Սեւերիանոս Գաբաղու . — Վասն հաւատոց և 'ի Հօրէ ծննդեան Բանին ։ — Ի տնօրէնութիւն Փրկչին ։ — Վասն կրօնից և մկրտութեան ։ — Վասն առաքելոցն 'ի կրօնս ։ — Վասն զատկի կաթարոսաց ։ — Ի բանն թէ Դպրութիւնք բացան ։ — Ի նոյն կրօնս ։ — Ի սուրբ վկայն յԱկակ ։ — Ի բանն՝ թէ Հայր, եթէ հնար ինչ իցէ, անցցէ բաժակս ։ — Ի հրաւիրեալս 'ի մկրտութիւն ։ — Ի գալուստն տեառն յովանակաւ յԵրուսաղէմ ։ — Սեբերիանոսի ասացեալ՝ յաւետարանին մեկնութենէ ։ — Ի թզենին որ ցամաքեցաւ ։ — Ի չարչարանս Քրիստոսի ։ — Ի խորհուրդ մատնութեան ։ — Ի բանն՝ Զոր կամիցէք յերկրի ։ — Յայլակերպութիւն տեառն ։ — Ի համբարձումն ։ — Հատուածք 679

Սեկունդոս իմաստասէր . — Խօսք առ Ադրիանոս կայսր 689

Սեղբեստրոս Հռովմայ . — Վասն կիւրակէի . . 691

Սեղբիանոս՝ եպիսկոպոս Մծբնայ . — Յաղագս ճրագալուցին ։ — Կանոնական լրմունք . . . 691

Սեւերոս Անտիոքայ . — Ի Թղթոյն առ Միսայէլ ներքինի ։ — Հատուածք 'ի խմբագիր մեկնութենէ

Ղեւտական գրոց ։ — Ի Ղուկասու աւետարանին մեկնութենէ ։ — Ի ծնունդն Քրիստոսի . . . 691
Սոկրատ Սկոլաստիկոս. — Պատմութիւն ըստ Հռովմայեցւոց նահանգին եպիսկոպոսաց և թագաւորաց 693
Վահան Նիկիոյ. — Թուղթ առ Զաքարիա կաթողիկոս 730
Վստակոց գիրք 698
Վարք Աղեքսանդրի 704
Վկայաբանութիւնք և վարք սրբոց 715
Վրընջէր. — Սահմանք վանից սրբոյն Բենեդիկտոսի . 730
Տատիանոս. — Վկայաբանութիւն Ոսկեանց . . 731
Տիմոթէոս Աղեքսանդրացի. — Ի խորհուրդ Տեառնընդառաջին ։ — Ի սուրբ Կոյսն և յողջոյն Եղիսաբեթի ։ — Պատմութիւն վարուց սրբոյն Աթանասի . 732
Տիմոթէոս Անտիոքացի. — Պատասխանիք առ հարցմունս Թագաւորին Տաճկաց ։ — Առ հարցմունս Ահարոնի Թագաւորին 733
Տիտոս եպիսկոպոս Կրետացւոց. — Յառակ դրամոյն 733
Տիրանոս եպիսկոպոս. — Յառաջին կիւրակէն (աղուհացից). 734
Փելիքսիանոս եպիսկոպոս. — Բանք զոր գրեաց 'ի խնդրոյ եղբօր ոչ աղաչեաց զնա ուսանել զսկիզբն ընթացից միայնակեցաց 734
Փիլաքսիանոս եպիսկոպոս. — Վասն տիեզերական սուրբ ժողովոյն Եփեսոսի 734
Փիլոն Հեբրայեցի. — Յաղագս յառաջախնամութեան (հառք կրկին) ։ — Կեանք վարուց իմաստնոց ։ — Յաղագս աստուածային օրինակին այլաբանութեան ։ — Այնոցիկ որ 'ի Լինելութեան խնդրոց և լուծմանց (չորս գիրք) ։ — Այնոցիկ որ յ'Ելսն է խնդրոց և լուծմանց (երեք գիրք) ։ — Ի Սամփսոն ։ — Յաղագս Յովնանու ։ — Յաղագս զԱստուած 'ի բարեգործութեան հուր ծախող անուանել ։ — Յաղագս երկոտասանիցն ։ — Յաղագս բաղնին իւրաց ։ — Յաղագս թէ Ոչ չնայցես ։ — Յաղագս քահանայից ։ — Յաղագս բան ունել և անասուն կենդանեաց 735

Փոտ պատրիարք. — Թուղթ առ Աշոտ թագաւոր Բագրատունի: — Առ Զաքարիա կաթուղիկոս Հայոց 748
Քսեստոս. — Թուղթ 749
Քրեստոս. — Առձեռնականք 749
Օրէնք թագաւորաց. — Կոստանդիանոսի, Թէոդոսի, Լեւոնի: — Օրէնք և գիրք 'ի ձեռն Մովսեսի, յ'Ելից գրոց: — Օրինադրութիւն Եւրինէ թագու-հւոյ: — Հաւաքումն յօրինաց Յուստինիանոսի: — Գլուխք օրինադրութեան' 'ի թագաւորական սահ-մանաց: — Համառօտ ժողովումն օրինաց: — Վասն զինուորաց սահմանադրութեան 750
Օրհնութիւն թագաւորի. Տե» կարգաց գիր:
ՑԱՒԵԼՈՒԱԾ 756